

ԱՐԹՈՒՐ ՊԵՅԼԵՐՅԱՆ

**ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅԵՐԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ
(1914-1918)**

ՀԱՏՈՐ I

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



**ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ
(1914-1918)**



**ACADÉMIE DES SCIENCES DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE
INSTITUT D'HISTOIRE**

**LES GRANDES PUISSANCES,
L'EMPIRE OTTOMAN
ET LES ARMÉNIENS
DANS LES
ARCHIVES FRANÇAISES
(1914-1918)**

TOME I

**DOCUMENTS RÉUNIS ET PRÉSENTÉS
PAR
ARTHUR BEYLERIAN**

**Préface de
JEAN-BAPTISTE DUROSELLE**

**Traduit par
VAROUJEAN POGHOSSIAN**

ERÉVAN "HAYASTAN" 2005

ՀՏԴ 9141(479.25)

ԳՄԴ 63.3(2h)5

Մ 550

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 90-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ**

Հրատարակվել է պետական աջակցությամբ

Մ 550

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր I, աշխատասիրությամբ Ա. Պեյլերյանի, թարգմ. ֆրանս. Վ. Պուլոսյանի, - Եր.: «Հայաստան» («Գրական հայրենիք»), 2005. - 484 էջ:

Ֆրանսահայ պատմաբան Արթուր Պեյլերյանի աշխատասիրությամբ 1983 թ. Փարիզում լույս ընծայված փաստաթղթերի ժողովածուն ամփոփում է ֆրանսիական զանազան արխիվներից (մասնավորապես, Արտաքին գործերի նախարարության արխիվից) քաղված և առաջին անգամ շրջանառության մեջ դրված անտիպ փաստաթղթեր, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և Հայկական հարցին 1914-1918 թթ.:

Նախատեսված է պատմաբանների համար: Հայերեն թարգմանությամբ տպագրվում է առաջին անգամ:

Մ $\frac{0503020913}{701(01)05}$ 2005 թ. պլա

ԳՄԴ 63.3(2h)5

ISBN 5-540-01975-x

ԱՌԱՋԱԲԱՆ

«Շամանակակից պատմության չորսուկամ հարց»․ այսպիսին է Արթուր Պեյլերյանի տված գնահատականը Հայկական հարցին՝ այնպիսի տեսքով, ինչպիսին այն հառնում է դարավոր ստճանակատմների, իսկ ավելի մասնավորապես, 1915-1916 թթ. սուրստիելի ողբերգության բովից։ Այս գիրքը լույս ընծայող «Սորբոնի հրատարակչությունը», և ես ինքս, որ դրա առաջաբանն եմ գրում, նրան եմք բողնում, անշուշտ, նրա հագեցված, բովանդակակից ու հուզիկ ներածության ողջ պատասխանատվությունը։ Ունենալով հայկական ծագում՝ նա այժմ Ֆրանսիայի քաղաքացի է։ Բայց կարելի է հասկանալ, որ յոթանասուն տարուց էլ նվազ փառնություն ունեցող այն իրադարձությունների, որոնց գոհը դարձել է իր ժողովուրդը, խորաբախանց պատմաբանը լինելու և ճշմարտությունը վեր հանելու նրա ցանկությունը չի կարող միահյուսված չլինել հուրիասցող բոցի հետ։

«Սորբոնի հրատարակչությունը» վճռել է լույս ընծայել փաստաթղթերի այս ժողովածուն բազմաթիվ պատճառներով, որոնք հնարավոր է ամփոփել հետևյալ կերպ։

Նախ՝ Արթուր Պեյլերյանը, անդուլ խիզախությամբ և հետևելով ամենամեծ փորձության ենթարկված պատմագիտական մեթոդներին, դարձել է Հայկական «հարցի» լավագույն մասնագետներից մեկը համաշխարհային ասպարեգում։ Նա աշխատել է եվրոպական (ներառյալ Խորհրդային Միության) գրեթե բոլոր արխիվներում և Միացյալ Նահանգներում։ Այն ահռելի փաստագրական նյութը, որը նա ի մի է բերել, նրան բույլատրել է, ինչը վերաբերում է ֆրանսիական արխիվներին, այն վերադասավորել չափազանց ընդարձակ շրջանակում և լավագույնս ճշգրտել դրա կարևորությունը։

Բացի դրանից, այնժամ, երբ վաղուց ի վեր գոյություն ունեն մեծ պատերազմի ընթացքում Հայաստանի գործերին վերաբերող անգլիական և գերմանական ժողովածուներ, ֆրանսիական փաստաթղթերին վերաբերող համանման և ոչ մի բան գոյություն չուներ։ Թեպետ Ֆրանսիան 1914 թ. նոյեմբերից ի վեր Օսմանյան կայսրությունում դիվանագիտական ներկայացուցչություն այլևս չուներ, ակնհայտ է, որ նրա ներկայացուցիչները ծայրամասերում ծայրահեղ հետաքրքրությամբ էին հետևում այն լուրերին, որոնք նրանց մոտ էին բախանցում գերմանացի թշնամուն դաշնակից այդ երկրից, որի հետ ուղղակիորեն պատերազմ էր մղվում Դարդանեղում, Գալիպոլիում և Սիրիայում։ Անտարակոյս, ֆրանսիացի դիվանագետները բուրքերի նկատմամբ, բնականաբար, սիրալիք չէին տրամադրված։ Բայց նրանց պարտականությունը տեղեկացնելն էր և նրանք, ընդհանուր առմամբ, այն կատարում էին բարեխղճորեն ու լքջախոտությամբ։ Նման փաստաթղթերն արժանի էին դուրս ելնելու ստվերից։

Ստայինի կողմից կուլակների և ընդդիմադիրների, Հիտլերի կողմից հրեաների կոտորածները, XX դարի պատմության ընթացքում համանման բնույթի շատ այլ իրադարձություններ, շարունակում են առաջադրել մի խնդիր, որին կրքերը երբեմն խանգարում են լուսաբանել, ինչպիսի՞ն է հալածողների ուրուշակի «հանցախմբի» պատասխանատվության չափը։ Ինչպիսի՞ն է այն երկրի «ազգային» պատասխանատվության չափը, որտեղ դրանք իրագործվել են։ ՌԳ կարող է ժխտել, որ տեղի են ունեցել հայերի հսկայածավալ կոտորածներ։ Սակայն ինչպիսի՞ն է այդ գործում բուրք ժողովրդի պատասխանատվությունը (ինչպես վերը նշված պարագաներում՝ խորհրդային, գերմանացի ժողովուրդների) և անհատների ու, մասնավորապես, ՄԱԿ-ի պատասխանատվությունը, որն անընդմեջ երևան է գալիս այս էջերում, ազգային կիրքը մղելով մինչ «վերջնական լուծման» իրագործումը, միաժամանակ նողկալի և պարզամիտ այն հավատով, թե դա թույլ կտա ստեղծել մաքրագարողված ժողովուրդ՝ ազատագրված իրեն բույացնող «օտար անձանց» մահվամբ։ Ես ասում եմ «պարզամիտ», որովհետև որևէ մեկն, անկասկած, երբևէ չի դարձել լիակատար ցեղասպանության ակամատեսը։ Եվ այն միակ փաստը, որ եղել են վերապրողներ՝ ԽՍՀՄ-ի հայերը, սփյուռքի հայերը, փաստ է առ այն, որ սերունդների համար գոյություն ունի անշեղ ատելություն, որը կարող է տաս-

ճամբակներ, նույնիսկ դարեր անց, նետվել կատաղի փոխհատուցման գիրկը: Ես, իմ կողմից, ցանկություն չունեմ միջամտելու այս բանավեճին, և համոզված եմ, որ թուրքերը և հայերն այս փաստաթղթերից միևնույն եզրակացություններին չէ, որ կհանգեն: Ընդհանուր առմամբ, խմբակային կոտորածները, ինչպիսիք են 1792 թ. սեպտեմբերի կոտորածները, բնավ առաջ չեն բերում «խմբակային մեղքի» զգացողություն, որին ես անգամ հավատ չեմ ունեւորում, այլ հանգեցնում են հազարավոր մարդկանց մոլեգնությանը, որոնք, արյան իրենց ծարավը հագեցնելու համար, օգտվում են բնօրինակ բացառիկ հանգամանքներից, երե որոշ իշխանություններ երաշխավորում են նրանց անպատժելիությունը:

Ավա՛ղ, հավաստի է, որ թափված արյունը հանգեցնում է նոր արյունահեղության:



Սակայն Հայկական հարցը մեզ դրոշմ է այլ բնույթի դիտողությունների: Որոշ «երնիկական խմբերի», այն է՝ խմբերի, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ, լեզու, կրոն, երբեմն հինավուրց, հարուստ և հարգանքի արժանի քաղաքակրթություն, չի հաջողվել գտնել իրենց սեփական պետությունը կազմավորելու միջոցը և նրանք մնազել են կախյալ վիճակում, հաճախ բաժանված բազմաթիվ կառավարությունների միջև: Սա Լեհաստանի պարագան չէ, որովհետև գոյություն ունենալով նախկինում, 1795 թ. մասնատված լինելով երեք բռնակալությունների միջև, 1918 թ. կրկին դարձել է անկախ՝ 1945 թ. ի վեր գոյություն ունեցող սահմանափակություններով հանդերձ: Սա գրեթե Ուկրաինայի պարագան է, որն այժմ միասնական է, բայց դեկավարվում է ԽՍՀՄ-ի առերևույթ դաշնության կողմից: Փոխարենը, կարելի է հիշատակել քրդերին, Աֆղանստանի և Պարսկաստանի պաշտոններին և, մասնավորապես, հայերին:

Ո՛չ 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, ո՛չ 1920 թ., հայերն իրենց հույսերն իրականացված չտեսան: Բացի իրենց վրա իշխողների անմիջական շահերից, նրանք տեսան, թե ինչպես են բեմահարթակում ի հայտ գալիս մեծ տերությունների եւսասիրական շահերը, որոնք ավելի մտահոգ էին խմորումներ առաջ բերելու, քան արդարացի լուծման հանգեցնելու հարցով: Այսպիսով, հայերն իրենց հրաշալի քաղաքակրթությամբ հանդերձ, չեն օգտվել այն անկախությունից, որը հինավուրց կայսրություններից առաջացած ավելի քան հարյուր պետություններ նվաճել են 1945 թ. ի վեր:

Այն ազգը, որը մնում է հալածված, ամենևին էլ բարյացակամորեն չի տրամադրված իրեն հալածողի նկատմամբ: Ավստրո-հունգարական բանակի չեխերը բոլոր ջանքերն են գործադրել չկոպելու համար ռուսների դեմ: Թուրքիայի հայերը ռուսներին սպասել են իբրև սզատարարների: Հասկանալի է, որ բուրքերը կարող էին դրանից անհանգստացած լինել և արդյոք Պիլը Հարբուրից հետո ամերիկացիները չներկայեցի՞ն ճապոնական ծագում ունեցող իրենց մի բուռ քաղաքացիներին: Ամբողջ ողբերգությունն այն հետևանքներում է, որանց որոշ երիտաբուրք դեկավարների հանգեցրել է հայերի մեջ արմատացած թշնամական մտայնությունը: Մեռներուն խանգարող գործնական աշխատանքի միջև և այն գործնական աշխատանքի միջև, որը դրանից հետևողական է հանգում, թե պետք է խանգարել սպրելուն, գոյություն ունի մի աշխարհ:

Ժ.-Բ. Դյուրոզել,
Ինստիտուտի անդամ,
Մորթոնի պոռֆեսոր*

* Փան-Քատիստ Դյուրոզել (1917-1994) – ֆրանսիացի պատմաբան, Բարոյական և քաղաքական գիտությունների ակադեմիայի անդամ (1975), միջազգային հարաբերությունների պատմության խոշոր գիտուկ: Նրա մասին տես Դ. Н. Канниская, Жизненный путь Ж.-Б. Дюрозеля: выбор случайный, призвание навсегда // Французский ежегодник – 2002, М., 2002. Ծ. ք.:

ՆԱԽԱԲԱՆ

Երբ, գրեթե հինը տարի առաջ, մենք որոշեցինք նախասպարապետի փաստաթղթերի այս ժողովածուն, որը վերաբերում է «Մեծ տերությունների, Օսմանյան կայսրությանը և հայերին Ֆրանսիական արխիվներում (1914-1918 թթ.)», Ֆրանսիայում հանրային արխիվների ոչ բոլոր ֆոնդերն էին վերջնականապես ցուցակագրված և մի քանիսը դեռևս մատչելի չէին հասարակությանը: Ի դեպ, արդեն հրատարակված ցուցակները, հաճախ համառոտ, ամենևին էլ չէին բացահայտում փաստագրական նյութի առատությունն այս հարցում, և սկզբնական շրջանում մենք չգիտեինք, այսպիսով, թե որքա՞ն ժամանակ կարող է պահանջվել արխիվների լիակատար ուսումնասիրության համար: Բայց մեր կարծիքով, առաջադրանքն ավելի կարևոր էր, քան իրական և կարծեցյալ դժվարությունները:

XIX դարի վերջերին, Արտաքին գործերի նախարարությունը հետևողականորեն ձեռնարկել էր արդեն իր արխիվներում պահպանված պաշտոնական փաստաթղթերի հրատարակումը, որն առաջ էր ընթանում: Այդ հավաքածուի հատորները, որոնք հայտնի են նաև «Դեղին գրքեր» անվամբ, ընդհանուր առմամբ, առնչվում են խիստ սահմանափակ և մասնավոր թեմաների¹: Ի դեպ, այս «Դեղին գրքերում» միշտ չէ, որ ընտրված փաստաթղթերը տպագրվում էին ամբողջությամբ և դրանցում ամփոփված բազմաթիվ փաստաթղթեր կրկին կարտատրվեին, երբ ավելի ուշ, պատերազմից հետո, 1914 թ. պատերազմին վերաբերող փաստաթղթերի հրատարակման հանձնաժողովը կիրականացնի իր ծրագիրը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1939-1945 թթ. պատերազմի պատճառներին վերաբերող փաստաթղթերի հրատարակման հանձնաժողովը կշարունակի երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանին վերաբերող հավաքածուի իրականացումը: Այդուհանդերձ, Առաջին համաշխարհային պատերազմին վերաբերող փաստաթղթերը պատմաբանի կամ ուսումնասիրողի կողմից հետազոտման կարիք ունենալիս և իրենց հարստության ու բազմազանության պատճառով կարող էին, անկասկած, առաջնակարգ կարևորություն ունենալ Հայաստանին և հայերին առնչվող գործերի համար:

Այս ժողովածուի տարբեր փաստաթղթերը, որոնք թվով 757-ն են, մի քանիսն իրենց հավելվածներով հանդերձ, դասակարգված են հետևյալ գլխավոր թեմաների շուրջ.

1/ Անտանտի տերությունների բուն դիտավորությունները, և դաշնակիցների հաղթանակից հետո Ասիական Թուրքիայի ապագային վերաբերող նրանց միտումները:

2/ Օսմանյան կայսրության հայերի տեղահանությունը և կոտորածը, ժամանակակից դաշրաջանի առաջին ցեղասպանությունը:

3/ Ֆրանսիայում Հայկական ռեզոլյուսիայի պատվիրակության և, մասնավորապես, Պողոս Նուբար փաշայի գործունեությունը, որը ներկայացնելով ամենայն հայոց կարողիկուս, Նուրին սրբություն Գևորգ V-ին, հաստատվել էր Փարիզում, որպեսզի իր հավաժվող հայրենակիցների վիշտն ամոքելու և Հայաստանի քաղաքական ապագան հաշտության կոնֆերանսում ապահովելու համար միջոցներ որոնել:

4/ Գրեթե բացառապես՝ աշխարհի չորս անկյուններից եկած հայերից կազմված Արևելյան լեգեոնի ստեղծումը, որոնք զինվորագրման միջոցով հույս էին տածում նպաստել իրենց հայրենիքի վերածնությանն Անտանտի հաղթանակից հետո:

¹ Հայերին վերաբերող «Դեղին գիրք» յուս է տեսել հետևյալ խմբագրով. "Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman 1893-1897". Paris, 1897.

5/ Կամավոր հիմունքներով հայերի գինձառայության անցնելը Կովկասի ռազմաճակատում և իրավիճակն Անդրկովկասում, մասնավորապես, ինքնակալության անկումից և Հաստանի հանրապետության հռչակումից հետո:

*
* *

1916 թ., երբ Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի բնաջնջման լուրերը և վկայությունները դեռևս առաջ էին բերում Եվրոպայի հուզմունքը, պատմաբան Առնոլդ թոյնբլիի աջակցությամբ՝ Լոդոնի պալատի լիբերալ անդամ լորդ Բրայսը լույս ընծայեց Ֆոլին Օֆիսի արխիվներից և մասնավոր աղբյուրներից քաղված «Կասալյոտ գիրքը»²: Պատերազմի ավարտից մեկ տարի անց, «Դոյչե Օրիենտ Մախին» հիմնադիր, դժուարությամբ Յուհաննես Լեփսիուսն, իր հերթին, հրատարակեց Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության արխիվներում պահվող փաստաթղթերը³: Այս երկու ստվարածավալ ժողովածուներն առ այսօր մնացել են իբրև Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ամենակարևոր սկզբնաղբյուրներ: Ֆրանսիական հանրային արխիվների փաստաթղթերը, որոնք գրեթե անտիպ են ու նվազ հայտնի, մնում են բացառապես գիտության՝ սահմանափակ և իրազեկ մշակների տրամադրության ներքո: Այս ժողովածուի հրատարակությամբ, մենք հույս ունենք նպաստել Հայաստանի և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությանն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, որը Մերձավոր Արևելքի այս տարածաշրջանում առնչվում է միջազգային քաղաքականությանը:

Եթե այս ժողովածուն երկար տարիների համառության և անձնական ջանքերի գործադրման արդյունքն է, այդուհանդերձ, հավաստի է, որ այն լույս չէր տեսնի առանց մի քանի նշանավոր անձանց քաջալերանքի ու բարյացակամության: Մեր ջերմ շնորհակալություններն են ուղղվում նախ և առաջ հանգուցյալ դեկան Պիեռ Ռևունենին (1893-1974), որի պատմագիտական հետաքրքրությունը երբևէ չի նվազել Հայկական հարցի հանդեպ և որը եղել է այս աշխատանքի ոգեշնչողը: Այս աշխատանքն առավել ևս լույս չէր ընծայվի առանց Ինստիտուտի անդամ, Սուրբոնի պրոֆեսոր պ. Ժան-Բատիստ Դյուրոզելի մշտական քաջալերանքի: Մեզ համար պ. Դյուրոզելը եղել է բարյացակամ և անխոնջ դեկավար: Մենք նրան ի խորոց սրտի շնորհակալություն ենք հայտնում մեր հանդեպ նրա հոգածության համար:

Թող, որ մեզ բույրատրվի նաև շնորհակալություն հայտնել այն վարչությունների, արխիվների կամ գրադարանների աշխատակազմերին, որոնք հաճախ դուրսին են դարձրել մեր առաջադրանքի կատարումը և երբեմն մեզ տեղեկություններ հաղորդել, մասնավորապես, մեր ցանկի համար:

Շատ ավելի հայ, քան այս կամ այն ճամբարի յուրաքանչյուր այլ ժողովրդի համար՝ Առաջին համաշխարհային պատերազմի ունեցած ողբերգական հետևանքների պատճառով, մենք անհրաժեշտ ենք գտնում ներածության մեջ ներկայացնել պատերազմական այս շրջանում Հայկական հարցին վերաբերող մի ուսումնասիրություն՝ այս ժողովածուի փաստաթղթերի և այլ չիրապարակված արխիվային սկզբնաղբյուրների լույսի ներքո:

Փարիզ, 1983 թ.:

Արթուր Պեյերյան

² Այն տպագրվել է հետեյալ վերնագրով. "The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to Viscount Grey of Fallodon": London, 1916.

* Այստեղ և այսուհետև՝ համանուն փակագծերում բարգմանչի միջամտություններն են: -- Ե. ք.:

³ Այս հրատարակությունն ունի հետեյալ վերնագիրը. "Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke", Potsdam, 1919. .

ՃԱՆՈՒՑՈՒՄ

Այս ժողովածուի 757 փաստաթղթերը գրեթե բացառապես անտիպ են, բացի մի քանիսից՝ մասնույի հոդվածներից կամ պայմանագրերի բնագրերից և ելնում են ֆրանսիական զանազան հանրային արխիվներից: Սկզբնական շրջանում մեր նպատակն էր ժողովել հայերին վերաբերող բոլոր փաստաթղթերը: Սակայն փաստաթղթերի առատությանն ի տես, մենք հարկադրված եղանք հապճեպ հրաժարվել նման ծրագրից և ընտրություն կատարել: Այդ ընտրությունը միշտ չէ, որ դյուրին է եղել: Այսպիսով, այստեղ չեն գտնի որոշ փաստաթղթեր, որոնք թեպետ առնչվում են հայերին, հետաքրքրությունից ամբողջությամբ զուրկ են, այն-ժամ, երբ տեղ են գտել ուրիշներ, որոնք առաջին հայացքից ուղղակիորեն հայերին չեն վերաբերվում, ինչպես դաշնակիցների կողմից դեսանտի ափ դուրս բերումը Կիլիկիայում, անգլիական զորքերի մուտքն Ադրբեջան, իրավիճակն Անդրկովկասում և այլն: Մենք նույնիսկ աչքաթող չենք արել մի փաստաթուղթ¹, որը վերաբերվում է Օսմանյան կայսրության հույներին, օգնելու համար ավելի լավ լծբռնելու օսմանյան կառավարության դիրքորոշումը Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ:

Տարբեր քննաների առնչվող որոշ փաստաթղթեր մասամբ են արտատպվել միայն իրենց ծավալի պատճառով: Այս պարագայում պահպանվել է միայն հայերին վերաբերող մասը, ինչպես և այդ ճշգրտված է ծանուրագրության մեջ:

Թեպետ իբրև այս ժողովածուի ծայրագույն եզրեր սահմանել ենք պատերազմի հայտարարումը և 1918 թ. նոյեմբերի 11-ի զինադադարը, այդուհանդերձ, այստեղ դասել ենք երկու փաստաթուղթ՝ թիվ 756 և 757 փաստաթղթերը, որոնք երկուսն էլ կրում են զինադադարին հաջորդած ամսաթիվ, թիվ 756 փաստաթուղթն ունի իննգ հավելված, որոնցից չորսը թվագրված են զինադադարին նախորդած ամսաթիվով, զինադադարին հաջորդած իննգերորդ հավելվածը, ինչպես և մյուսները, առնչվում է միևնույն իրադարձություններին: Թիվ 757 փաստաթղթի հավելվածում ամփոփված է 1919 թ. ապրիլի 28-ի թվակիր մի փաստաթուղթ, որի բովանդակությամբ համահունչ է բացառապես հայերի գործունեությանն Անդրկովկասում ու Կովկասի ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

Փաստաթղթերը (ճեպագրեր, հեռագրեր, նամակներ, ծանուցագրեր կամ հուշագրեր), բոլորը դասակարգված են ժամանակագրական սկզբունքով և վերջում ունեն սկզբնաղբյուրին առնչվող նշում: Երբ փաստաթուղթը թվագրված չէ, մենք որդեգրել ենք արխիվների դասակարգման ամսաթիվը:

Մենք ձեռնարկի ենք մնացել տպագրված բնագրերի մասին որևէ անձնական կարծիք կամ մեկնաբանություն առաջադրելուց: Մենք պարզապես բավարարվել ենք, դյուրին դարձնելու համար դրանց լեկտյուրներ, ծանուրագրություններում այնպիսի բացատրություններ տալով, որոնք անհրաժեշտ ենք համարել:

Հնարավորության սահմաններում մենք պահպանել ենք բնագիրը ներկայացնելու ձև՝ ողակապիտի և հասցևատիրոջ ազգանունը, առաքման և ստացման ամսաթիվը (ինչ վերաբեր-

¹ Տես ստորև թիվ 637 փաստաթուղթը:

բում է հեռագրերին՝ հաճախ նույնիսկ ժամը), փաստաթղթի բնույթը և գրանցման համարը, խմբագիրների ծանոթագրությունները. ծանոթագրության մեջ նմանապես մատնացույց են արվել նախարարների կողմից՝ հաճախ ձեռագիր տրված գնահատականները: Եթե հնարավորություն ենք ունեցել գտնելու միաժամանակ միևնույն փաստաթղթի բնագիրը և պատճենը, բնականաբար, գերադասել ենք արտատպել բուն բնագիրը:

Մենք ջանացել ենք ճշգրտել առաքողների և հասցեատերերի պաշտոններն ու սոցիալական դիրքը: Որոշ պարագաներում չենք կարողացել դրանք հավաստիորեն վերականգնել և գերադասել ենք չտալ այնպիսի տեղեկություններ, որոնց շուրջ փտահ չենք եղել: Նմանապես, երբ առաքողի կամ հասցեատիրոջ անունը մեզ թվացել է անընթեռնելի, անհասկանալի կամ երբ չենք կարողացել այն պարզաբանել, մենք ավելի շուտ այդ հիշատակել ենք ծանոթագրության մեջ, այլ ոչ թե մտածացին ազգանուն գրել: Ընդհանուր առմամբ, բաց ենք թողել բոլոր անընթեռնելի բառերը: Փոխարենը, բացակայող այն բառերը, որոնք մենք կարողացել ենք վերականգնել, երևան են գալիս փակագծերում:

Քանի որ պաշտոնական փորակցությունները միշտ չէ, որ կրում են նախարարների ստորագրությունները, այլ հաճախ ստորագրված են ըստ հանձնարարության, մենք մնան դեպքում, ծանոթագրության մեջ, հիշատակել ենք փաստաթուղթը ստորագրողի անունը:

Ռուսական, հայկական, բուրբակյան և վրացական հատուկ անունների ուղղագրությունը մեզ բազմաթիվ անհանգստություններ է պատճառել: Արդյոք մենք պետք է դրանք արտատպելինք այն ձևով, ինչպես ի հայտ են գալիս բնագրերում, թե՞ պետք է ընտրելինք ժամանակակից տառադարձության համակարգը: Ավելի մտաչելի լինելու համար, հրաժարվել ենք այս վերջին մեթոդից, որը նախատեսված է մասնագետների համար: Սակայն, այդուհանդերձ, մենք միշտ չէ, որ պահպանել ենք հատուկ անունների ուղղագրությունն ըստ բնագրի: Հիրավի, հազվադեպ չենք հանդիպում նույն ազգանվանը տարբեր ձևերով, երբեմն միևնույն փաստաթղթում: Այսպիսով, ռուսական հատուկ անունների վերջավորությունները վերածել ենք «ովի»՝ «ովի» կամ «ուվի» փոխարեն: Հայկական, վրացական և բուրբակյան հատուկ անունները, ինչպես նաև տեղախոյրերի նախկին անվանումները, արտատպվել են առանց փոփոխության. Դիարբաքիի փոխարեն՝ Դիարբեքիլ. Իստանբուլի փոխարեն՝ Կոստանդնուպոլիս, Անդրկովկասի փոխարեն՝ Անդրկովկաս և այլն: Ինչ վերաբերում է միևնույն ազգանվան տարբերակներին, որոնք, ինչպես մեզ թվացել է, բխում են ավելի շուտ ուղղագրական սխալից, մենք դրանք ընդգծել ենք [sic]-ով* :

Պատահում է, որ որոշ փաստաթղթեր ընդգրկում են համանման բովանդակ պարագրաֆներ: Մենք նպատակահարմար ենք գտել, այդուհանդերձ, դրանք արտատպել ամբողջությամբ, խուսափելու համար խառնաշփոթից: Որոշ փաստաթղթեր իրենցից ներկայացնում են մամուլի կտրածոներ կամ հատվածներ լրագրային հոդվածներից. մենք դրանք ներկայացրել ենք կամ ամբողջությամբ, կամ մասամբ, ըստ այն հետաքրքրության, որը նրանք ունեն և ջանացել՝ ծանոթագրության մեջ նշել լրագրի ամսաթիվն ու համարը:

Մենք, անշուշտ, գիտակցում ենք, որ այս ժողովածուն գերծ չէ որոշ բացթողումներից: Այսպիսով, չնայած մեր որոնումներին, չենք կարողացել գտնել որոշ փաստաթղթերի հետքը, որոնց գոյության մասին մեզ վկայվել է:

Հատուկ անունների և քեմատիկ ցանկն ընթերցողի համար դյուրին կդարձնի փաստաթղթերի որոնումը**:

* sic (լատ.) - հենց այսպես: Ի. ք.:

** Գրքի հայերեն հրատարակության մեջ, այ Պեյերյանի համաձայնությամբ, ելնկով հայ ընթերցողի շահերից, նպատակահարմար գտանք նրա կողմից կազմված միասնական ցանկը մասնատել երկու մասի՝ անձնանունների և տեղանունների: - Ի. ք.:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

ԱԳ.Թ	Արտաքին գործողությունների քատերաբեմ
ԱԼ	Արևելյան լեզուն
Ավաա	Առանց վայրի և առանց ամսաթվի
ԲՇ	Բանակի շտաբ
ԳՀ	Գլխավոր հրամանատար
ԳՀՇ	Գլխավոր հրամանատարի շտաբ
ՋՆ	Ձինվորական ներկայացուցիչ
ՋՄՆ	Ձինվորական մշտական ներկայացուցիչ
ԸՏ	Ընդհանուր տեղեկություններ
Ժպ	Ժամանակավոր պաշտոնակատար
Ծ	Ծանուցագիր
Կաբ.	Կաբինետ
Հ	Հեռագիր
ՀԱՊԱ	Հայկական ազգային պատվիրակության արխիվ
ՀԳՏ	Հալոյրդակցությունների գլխավոր տեսուչ
Հեծ. Դ	Հեծելազորային դիվիզիա
Հետ. Դ	Հետևակային դիվիզիա
ՀԿ	Հայկական կորպուս
ՀՀԴ	Հայ հեղափոխական դաշնակցություն
ՀՃ	Հեռագրային ճեպագիր
Ճ	Ճեպագիր
ՄԱԿ	«Միություն և առաջադիմություն» կոմիտե
Ն	Նամակ
Շ	Շտաբ
ՇԿ	Շտաբի կայան
ՊՍՖՍ	Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական ստորաբաժանում
ՌՀԾ	Ռազմական հետախուզական ծառայություն
ՌՆԳ.Խ	Ռազմական նախարարության գերագույն խորհուրդ
ՍԿՁ	Սեյժանտական կազմի զինձառայող
ՌԻՕ	Ռուր Օֆիս
Քաղ. վարչ.	Քաղաքական վարչություն
ՖՕ	Ֆորին Օֆիս
A.C.M.	Archives centrales de la Marine (Ռազմածովային նախարարության կենտրոնական արխիվ)
A.M.A.E.	Archives du ministère des Affaires étrangères (Արտաքին գործերի նախարարության արխիվ)
A.M.G.	Archives du ministère de la Guerre (Ռազմական նախարարության արխիվ)
A.N.	Archives Nationales (Ազգային արխիվ)
B.N.	Bibliothèque Nationale (Ազգային գրադարան)
f.	folio (թերթ)
ff.	folios (թերթեր)
L.O.	Légion d'Orient (Արևելյան լեգեոն)
N.S.	Nouvelle série (նոր սերիա)
v.	verso (շրջերես)

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

«Հայկական հարցը», որը XIX դարում և XX դարի սկզբին մեծ անհանգստություն է պատճառել եվրոպական պետական գրասենյակներին, այս վերջին տասնամյակի ընթացքում քակվել է այժմեականության նոր փուլ: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան դեկավարների հոգածության շնորհիվ իր «վերջնական» կարգավորումից ի վեր, այսօր այլևս ո՛չ «Հայկական հարց» և ո՛չ Թուրքահայաստան պաշտոնապես գոյություն չունեն: 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագիրը հուղարկավորել է դրանք, չնայած Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերին տրված դաշնակիցների խոստումներին:

Սուրբան Աբդուլ Համիդի մեծ վեզիրներից մեկը՝ Սաիդ փաշան, 1881 թ. բացահայտորեն հայտարարել է. «Վերացնելու համար Հայկական հարցը, հարկ է վերացնել հայերին»: 1915 թ. օսմանյան կառավարությանը ներկայանում է նպատակաւոր առիթը: Պատերազմը բարենպաստ պայմաններ է ստեղծում Ասիական Թուրքիայի և նույնիսկ Թրակիայի ողջ հայ բնակչությունը մի քանի ամսում տեղահանելու կամ կոտորելու համար: Ավելի քան հիսուն տարի անց, 1973 թ. հունիսին, ՄԱԿ-ում Մարդու իրավունքների ենթահանձնաժողովի քննարկումների ընթացքում, պ. Ռուհաշիանկիկոն, վերոհիշյալ հանձնաժողովի հատուկ զեկուցողը, անդրադառնալով ցեղասպանությանն առհասարակ, բայց է տալիս անզգաշություն՝ իր զեկույցի 30-րդ պարագրաֆում ընդգրկելով հետևյալ արտահայտությունը.

«Անդրադառնալով ժամանակակից դալաշքջանին, կարելի է հիշատակել հայերի կոտորածին առնչվող բավական առատ փաստաթղթերի գոյության մասին, որը ղիտվել է իբրև XX դարի առաջին ցեղասպանություն»¹:

Այս մի քանի խոսքերը վերակենդանացրել են մագապուրծ հայերի՝ համայն աշխարհում սփռված սերունդների հույսերը, իրենց գործը միջազգային ատյանների կողմից վերջապես ճանաչված տեսնելու հարցում, բայց դրանք հարկադրել են մաս ՄԱԿ-ին կից որոշ տերությունների լիազոր ներկայացուցիչների՝ պատմական այս փաստերի հիշեցման առթիվ կողմ կամ դեմ արտահայտվելու: Թուրքիայի ներկայացուցիչը, ինչ վերաբերում է իրեն, չի երկյուղել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության մահանգներում հայ ժողովրդի բնաջնջումն իբրև «առաւայել» բնութագրելու²:

Այն փաստաթղթերը, որոնք մենք ի մի ենք բերել այս ժողովածուի մեջ, կվկայեն, թե արդյոք կոտորածները բխում են կարծեցյալ, թե իրական ակունքներից: Այդուհանդերձ, ավելի լավ ըմբռնելու համար Հայկական հարցի վճռական՝ 1915-1918 թթ. փուլը, որին դրանք առնչվում են, մենք պատրաստվում ենք դրանք վերադասավորել իրենց պատմական հենքի մեջ, սկսելով 1908 թ. երիտորութերի իշխանության գալուց:

*
**

1908 թ. գարնանը Բալկաններում տեղի ունեցած ապստամբական շարժումների մեծ տերությունների ուշադրությունը բազմիցս հրավիրել են Մակեդոնիայի վրա: Լինելով «ատատուս քվայի» կողմնակիցը, Արևմուտքը կրկին հարկադրված եղավ միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին, միջամտություն, որը Մոնաստիրի և Մալմեիկի մահմեդական ազգայնամուսուկան շրջաններում ընկալվեց իբրև ինքնամվաստացում: Եվրո-

1 Տե՛ս Nations Unies, Conseil Économique et Social. E/CN.4/Sub.2/L.583. p. 10.

2 Հմնմ. Nations Unies, Conseil Économique et Social. E/CN.4/SR.1286. p. 5.

պական տերություններին կասկածում են կայսրության այս շրջանի մասնատումը նախաձեռնելու հարցում: Վրդովմունքը մեծ է Սալոնիկում, որը մի փոքր առաջ դարձել էր երիտթուրքերի գաղտնի ժողովների կենտրոնը, որոնք հետամուտ էին օտար տերությունների մեքենայությունների ձախողմանն արագ լուծում տալուն: Մակեդոնիայում գտնվող III անակի զինվորական շրջաններն, իրենց հերքին, համակվում են դժգոհությամբ: Ապստամբած սարսերը (Նիյազլին և Էնվերը) մի քանի հարյուր զինվորների հետ մեկտեղ պատսպարվում են լեռներում՝ սուլթան Աբդուլ Համիդի բռնատիրության դեմ պայքարելու համար: Նրանց ապստամբությունը ծավալվում է քանակում, արժանանալով ազատասեր սպաների հավանությանը: Երբ ամբողջությամբ նրանց կողմն անցած III քանակը վճռում է շարժվել դեպի Կոստանդնուպոլիս, մեկուսացված և խռովարարների առջև անգոր Աբդուլ Համիդը զիջում է զինվորական շարժման կամքին: Օսմանյան II սահմանադրության հռչակմամբ, երիտթուրքերը 1908 թ. հուլիսի 24-ին անցնում են իշխանության գլուխ³:

Կոստանդնուպոլսում առանց արյունահեղության իրագործված վարչակարգի փոփոխությունը համընդհանուր գոհունակությամբ է ընդունվում եվրոպական դիվանագիտական շրջաններում, մասնավորապես, Վիեննայում, որտեղ Բալկաններում ուժերի հարաբերակցության նկատմամբ միշտ ի հայտ է բերվում մեծ նրբանկատություն⁴:

1908 թ. հեղափոխության ամենակնհայտ իրողություններից մեկը Սալոնիկի հրեական ազդեցիկ համայնքի որոշ ներկայացուցիչների ունեցած հստակ և ակտիվ դերն է: Հրեա անձինք և դեռ ավելին՝ «դենոմեները»⁵, հանուն սահմանադրական վարչակարգի հաստատման, առաջին իսկ ժամից սերտորեն համագործակցել են երիտթուրքերի հետ, նրանց հետ պահպանելով հավասարը չունեցող վստահություն ներշնչող կապեր: Դատապաշտպան, իսկ ավելի ուշ Սալոնիկի հրեա պատգամավոր Կարաստն, որը քաջ հայտնի է արևմտյան ֆրանկոմատնական շրջաններում, 1908-1918 թթ. սահմանադրական դարաշրջանի ընթացքում կղատվի, այսպիսով, ակնառու դեմքերի քվին: Երիտթուրքերի քաջալերմամբ, Կարաստն կհիմնադրի նույնիսկ բազմաթիվ մասունական օրյակներ Սալոնիկում և Կոստանդնուպոլսում⁶, անդամներին հավաքագրելով գլխավորապես «Սլուրյուն և առաջադիմություն» կոմիտեի խմբակների⁷: Անձամբ շեյխ-ու Իսլամը, Օսմանյան կայսրությունում մահմեդական կրոնի ամենաբարձրաստիճանն պաշտոնյան, կներգրավվի «Սահմանադրություն» օրյակի գործերում, որի նախագահը Ջավիդ բեյն է⁸: Թեպետ ՄԱԿ-ի կենտրոնական նստավայրը Կոստանդնուպոլսում է, մինչև 1912 թ. հունական գրավումը Սալոնիկը կմնա իբրև երիտթուրքական շարժման օջախ:

Ինչպես և կայսրության մյուս բոլոր ոչ մահմեդական ժողովուրդները, հայերը ևս կարծում են, որ իրենց վրկությունը կգտնեն նոր վարչակարգի շնորհիվ, որը վերջ է տալիս Աբդուլ Համիդի գահակալությանը բնորոշ անաբեկչությանը: Վտարանդի դարձած և արտասահմանում

3 Երիտթուրքերի մասին տե՛ս İbrahim Temo, İttihad ve Terakki Cemiyetinin tesekkülü, Mecidiye (Romanya), 1939; E. E. Ramsaur, The Young Turks. Prelude to the Revolution of 1908, Princeton, 1957; Bernard Lewis, The Emergence of Modern Turkey, London, 1961.

4 Հմնտ. "Terdjuman-i Hakikat". 13. IX. 1908, N 9878.

5 Թուրքերն այսպես են անվանում իսլամն ընդունած Սալոնիկի հրեաներին, քանի որ «դենոմեն» նշանակում է «վերադարձած» կամ «դարձած»: Ի բիվա ամենանշանավոր «դենոմենների» նշենը դժոկոտ}ր Նազըմին, Միդիսը Եյուրքու բեյին, Ջավիդ բեյին, Ռահմի բեյին, Ռենզի բեյին:

6 Տե՛ս Elie Kedourie, Young Turks, Freemasons and Jews // "Middle Eastern Studies", N 1 (1971), pp. 92-94.

7 Այստե՛տե՛ս՝ հիշատակված է ՄԱԿ ձևով, թուրքերեն՝ «Իթթիհադ վե Թերաքքի շեմիյեթի»։ Թուրքական ազգայնամոլական կուսակցության հիմնադրումը սկիզբ է առնում 1889 թ.:

8 Բոնուկարը՝ Ա իրտարին՝ գ իրձերի՝ ն իսխարարին՝, Պերս, 26-ը սպրիլի 1911 թ., ճ. բիվ 210 // A.M.A.E., N.S., Turque, tome 8.

հաստատված բազում հայեր վերադառնում են Թուրքիա՝:

Սահմանադրական վարչակարգի առաջին ամիսները, հարկ է այդ ընդունել, կայսրության հիմնադրումից ի վեր առաջին անգամ, օսմանյան տարբեր ժողովուրդների քույրատրեցին վերապրել ազատության և համերաշխության բուռն պահեր: Օսմանյան խորհրդարանում և սենատում, մահմեդական և ոչ մահմեդական պատգամավորները (ալբանացիներ, արաբներ, հայեր, բուլղարացիներ, հույներ, հրեաներ, սերբեր և քուրքեր) նիստերին մասնակցում էին կողք-կողքի: Հայ պատգամավորների թվում, մասնավորապես, առանձնանում էին Ջոհրապը, Վարդգեսը և դ[ոկտո]ր Տաղավադյանը: Հայկական «Հնչակ» կուսակցությունը⁹, որը նվազ համակրանքով էր վերաբերվում երիտթուրք դեկավարների՝ ազատությանը և հավասարությանը վերաբերող առատ խոստումներին, մնում է ընդդիմության մեջ¹¹, այնժամ, երբ ՀՀԳ-ն¹², վստահությամբ լի թուրք ազգայնամոլների անկեղծության նկատմամբ, կյքոտությամբ գորավիզ է լինում կառավարությանը, հույս տածելով այս կերպ բարելավել Թուրքիայի հայերի ճակատագիրը¹³:

Սակայն հայերը կկորցնեն իրենց լավատեսությունը, երբ առաջին իսկ առիթի դեպքում, երիտթուրքերի կառավարությունն ի հայտ կբերի իր բուն դեմքը: Իշխանությունների համաձայնությամբ իրականացված հայերի կոտորածներն Ալեքսանյում 1909 թ.¹⁴, տագնապ են հարուցում հայկական և նույնիսկ արտասահմանյան միջավայրերում. «...Երկիրը, որը կարծում էր, թե նախկին բռնապետությունը փոխարինված կտեսնի ավելի լիբերալ վարչակարգով, – մեկնաբանում է «Ռ-և-յ արաբը», – գտնվում է ավելի բռնակալական, քան նախորդն էր, վարչակարգի ներքո»¹⁵:

Հիրավի, թեպետ օսմանյան նոր դեկավարները կայսրության տարբեր հպատակների առատորեն շռայլում էին հավասարության և եղբայրության խոստումներ, նրանց նպատակը մնում է՝ Բալկաններից մինչև Մոնղոլիա ու Չինաստան, թուրքական ազգությանը պատկանող բոլոր ժողովուրդներին համախմբելը՝ ամեն գնով ամենամեծ Թուրքիային կյանքի կոչելու համար: Այս նոր ազգայնամոլական շարժման անխոնջ ոգեշնչողներն են Ջիա Գյորապիլը, Յուսուֆ Աբչուրան, Ահմեդ Աղասոլուն: Երիտթուրքերի անողորությունը Մակեդոնիան բազմիցս վերածում է ապստամբող օջախի: Ներքին գործերի նախարար Թալեթ քեյի՝ 1910 թ. օգոստոսի 6-ի արտասանած մոլեզին ելույթը, այդ ժամանակ Սալոնիկում գումարված երիտթուրքական վեհաժողովի շրջանակում տեղի ունեցած սահմանափակ և գաղտնի ժողովի ընթացքում, մատնանշում է այն քաղաքականության հիմունքները, որը կողդեցովի կայսրության տարբեր ազգությունների նկատմամբ: Մենք դրանից քաղվածաբար ներկայացնում ենք այս մի քանի տողերը.

9 Հմնտ. Salname-i Servet-i Fünun, Istanbul, 1327 [1911], p. 311.

10 Սարքսիստական, հեղափոխական միտում ունեցող «Հնչակ» կուսակցությունը հիմնադրվել է ժմնում 1887 թ.: Այս առիթով, մասնավորապես, տես «Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան», Պէյրոք, 1962, հ. 1-2; L. Nalbandian, *The Armenian Revolutionary Movement*, Berkeley and Los Angeles, 1967, 2^e ed.; A. Beylerian, *L'Impérialisme et le mouvement national armenien. (1885-1890)* // "Relations internationales", 1975, N 3, pp. 30-32.

11 Տես «Հնչակ», 1908, թիվ 6-7, էջ 49-50:

12 Հայ հեղափոխական դաշնակցությունը, որը հիմնադրվել է Թիֆլիսում 1890 թ. ամռանը, այս կուսակցության ստեղծման մասին տես Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմություն, Պարիզ, 1932, հ. 1 և Գահիրե, 1950, հ. 2; A. Beylerian, op. cit., pp. 39-41; L. Nalbandian, op. cit.

13 Հմնտ. Dr Riza Nour. Hücumlara cevaplar // Türkbilik Revüsü, Le Caire, 1937, N 7, pp. 91-92.

14 Աղանայի կոտորածների պատասխանատվությունների շուրջ տես Sir William M. Ramsay, *The Revolution in Constantinople and Turkey. A Diary*, London, 1909, p. 308; M. Philips Price, *The Problem of Asiatic Turkey* // "The Contemporary Review", 1914, N 678, p. 213.

15 "Le Reveil arabe", Paris, 16 avril 1909, N 2.

«Ներքին, ինչպես նաև արտաքին ասպարեզներում մեր վարչակարգի քաղաքականությունը պետք է լինի վճռական և առանց տատանումների: Բանգի միայն այդ հաստատական վճռականությամբ է, որ մենք կկարողանանք մեզ համար ապահովել Եվրոպայի հարգանքը և հեղինակություն՝ երկրի ներսում:

... Համաձայն սահմանադրության, բուրբական բոլոր հպատակները, ինչպես մահմեդականները, այնպես էլ ոչ մահմեդականները, հավատար են օրենքի առջև: Սակայն դուք պետք է հասկանաք, դուք ինքներդ, որ դա անհնար է: Նախ և առաջ՝ դրան հակադրվում է շաքիսթը¹⁶, դրան հակադրվում են մեր ողջ անցյալը, հայրուր հազարավոր հավատացյալների զգացմունքները: Վերջապես, և դա շատ ավելի կարևոր է, դրան հակադրվում են իրենք՝ քրիստոնյաները, որովհետև ոչ մի գնով նրանք չեն ցանկանում օսմաններ դառնալ:

... Թուրքիայում հավասարության մասին կարող է խոսք լինել: միայն այն օրը, երբ կիրականանա բոլոր տարրերի օսմանացումը, և այդ աշխատանքը կլինի երկարատև ու դժվարին: Մենք այդ բանում հաջողության կհասնենք, դրանում կսակսած չկա, սակայն սպասելով, հարկ է, որ մենք հանդարտեցնենք մեր հարևաններին»¹⁷:

Բնականաբար, միայն Թալեթ քեյը չէ այս քեզին զորավիզ, որն ընդունվում է մասնակիցների մեծամասնության կողմից: Մի բանի օր անց, մի խոմք բարեկամների առջև Ջավիդ քեյը հավաստում է միևնույն դավանանքը, իսկ ՄԱԿ-ի մեկ այլ հռետոր՝ Հալիլ քեյը, զորավիզ է լինում միևնույն վճռականությամբ.

«... Զրիստոնյաների գլխարավման իրականացումը, հրոսակախմբերի ոչնչացումը, աստիճանաբար պատրիարքականների և էքզարքականների բնաջնջումը, մահմեդական տարագիրների բնակեցումը բուն քրիստոնեական գյուղերում, հողմացրիվ կանի Մակեդոնիայի քրիստոնյա ազգությունների բոլոր պատրանքները Մեծ Բուրլարիայի, Հինավուրց Սերբիայի, Հունական Մակեդոնիայի կամ անկախ Ալբանիայի գոյության հնարավորության շուրջ:

... Մեր հարաբերությունները մահմեդական այլ պետությունների հետ աստիճանաբար դարձել են ավելի սերտ և մեզ բույատում են մեծ հույսեր տաձել իսլամի ապագայի հանդեպ»¹⁸:

Վեհաժողովի գլխավոր քարտուղար և Սալոնիկի «Իքքիհադ վե քերաքքի» լիցեյի տնօրեն Իհսան քեյի կողմից արտասանված վերջին ճառն ազդարարեց այն արդյունավետ միջոցները, որոնք, եթե հարկը լինի, կգործադրվեն ապահովելու համար կայսրության ամբողջականությունը.

«... Անդրինուպոլսի կոմիտեն պահանջում է բուրլարական տարրի նվազեցումը կամ Անդրինուպոլսի վիլայեթում, ուր բնակչության մեծամասնությունը քրիստոնեական է, մեծ քվով մահմեդական «մուհադջիբներին»¹⁹ բնակեցման, կամ Նրիտասաթղ Թուրքիային թշնամաբար տրամադրված բոլոր քրիստոնյաների բնաջնջման միջոցով: Անդրադառնալով այս նույն քեզին, Մոնաստիրի կոմիտեն պահանջում է Փոքր Ասիա տեղահանել Մակեդոնիայի քրիստոնյա տարրի մի մասը, ուր կվոխարինվի մահմեդականներով»²⁰:

Ամբողջությամբ ջանալով ամրապնդել իրենց իշխանությունը և հեղինակությունն իրենց համակրոնակիցների շրջանում, երկտրորքերը տարբեր առումներով զգուշորեն են վարվում

16 Մահմեդական կանոնական օրենքը:

17 «Սալոնիկում արտասանած Թալեթ քեյի ճառ» // A.M.A.E., N.S., *Turquie*, tome 7.

18 Ծուրբիեն՝ Պիշոնին, Սալոնիկ, 15-ր նոյեմբերի 1910 թ., ճ. քիվ 164 // A.M.A.E., N.S., *Turquie*, tome 7.

19 «Աբսարնակիչներ»:

20 Ծուրբիեն՝ Պիշոնին, Սալոնիկ, 16-ր նոյեմբերի 1910 թ., ճ. քիվ 165 // A.M.A.E., N.S., *Turquie*, tome 7.

ՀՀԳ-ի ղեկավարների հետ. որոնք նրանց բույ կտան սպառնալի իրենց ազդեցությունը հայկական տարրի նկատմամբ²¹: Եվ այդուհանդերձ, նույնիսկ հրապարակայնորեն, երիտթուրքերը չեն քաբցնում, որ սոցիալական հողի վրա իրենք երբևէ չեն ճանաչի մահ-մեղական և քրիստոնյա քաղաքացիների միջև կատարյալ հավասարությունը: ՄԱԿ-ի նշանավոր հռետոր Էռներ Նաջին, 1914 թ. մայիսին հայտարարում է Սալոնիկում.

«... Իսլամականությունը մեզ է աքվել աստվածային բարեհաճության կողմից: Աշխարհը կարող է քարուքանդ լինել, այն կարող է ամբողջությամբ տակնուվրա լինել, իսլամականությունը չի կարող անհետանալ... Օսմանիզմը դիտում է խալիֆայի և իսլամականությունից իբրև ավելի սուրբ, քան իր սեփական կյանքը: Իսլամականությունը նրա ավանդույթներից ամենասուրբն է, ամենսպաշտար»²²:

Արդյո՞ք Էռներ Նաջին այս ելույթում չկա կայսրության ոչ մահմեդական հիպոտակներին ուղղված ծանուցում և սահմանադրության հավասարության սկզբունքների մատուցում: Իրականում, երիտթուրք ղեկավարները, անընդունակ լինելով կայսրության ոչ մահմեդական հիպոտակներին անքակտելիորեն կապելու բուրբական մշակույթի և արժեքների հետ, փորձում են նրանց համախմբել օսմանյան դյուշի ներքո, ամբողջությամբ պահպանելով իրենց գերիշխող դերը:

1911 թ. Ասիական թուրքիայի հայկական մահանգներում ճնշումը և ցանկացած բնույթի բռնություններն այն աստիճանի են հասնում, որ իբրև թուրքիայի հայ ազգաբնակչության ղեկավար հանդես եկող Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը դիմում է Բարձր Դռանը «քյոլեթին զինաբափելու կամ զենքերը հայերին վերադարձնելու» համար²³:

Սակայն իրադարձություններն Արևելքում զարգանում են սրունքաց: Բալկանյան պատերազմը փոքր անց հաջողում է իտալա-թուրքական պատերազմին (1911-1912 թթ.): Պարտված թուրքիան համաձայնվում է Լոնդոնում կոնֆերանս գումարելուն: Հայկական եկեղեցու գերագույն առաջնորդ՝ կաթողիկոս Գևորգ V-ը, միջամտում է և Կովկասի փոխարքա Վարունցով-Դաշկովին խնդրում, որ կայսրական կառավարությունը հետաքրքրվի թուրքահայաստանի իր հայրենակիցների ճակատագրով²⁴: Այսպիսով, Ռուսաստանին դրոյում են կրկին պարտավորություն ստանձնել Հայկական հարցում: Հայթիսարելով օսմանյան կառավարության կողմից առաջ քաշված բազմաթիվ առարկությունները, Ռուսաստանը վերջապես ստանում է Վլիկեմշտրասսեի օգնությունը և հայկական ինդյուի շուրջ հանգում են փոխզիջման: 1914 թ. հունվարի 26-ին/փետրվարի 8-ին օսմանյան կառավարության անունից Սաիդ Հայիմ փաշան և Կոստանդնուպոլսում Ռուսաստանի գործերի հավատարմատար Գուլկևիչը ստորագրում են Ասիական թուրքիայի հայկական մահանգների ճակատագիրը ճշգրտորեն սահմանող երկկողմ համաձայնագիր, որի հիմնական ուղղությունները հետևյալներն են²⁵.

1/ Փոքր Ասիայի արևելյան մահանգները կբաժանվեն երկու գոտու: Հյուսիսային գոտին կընդգրկի Էրզրումի, Տրապիզոնի և Սվազի վիլայեթները. Հարավային գոտին՝ Վանը, Խար-

21 Տե՛ս "Terdjuman-i Hakikat", 18. VIII. 1910. N 10553.


22 "La Jeune Turquie", 31. V. 1911. N 22.

23 "La Turquie", 4. IX. 1911. N 224.

24 Հմմտ. Լևո, Թիրքահայ յեղափոխության գաղափարաբանությունը. Փարիզ, 1935, հ. Բ, էջ 83-84; E. K. Саркисян, Политика османского правительсва в Западной Армении и державы в последней четверти XIX и начала XX вв., Ереван, 1972, с. 288; Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, 1979, էջ 210:

25 Լուի Սալլենի սրբ Էդուարդ Գրեյին, Կոստանդնուպոլիս, 9-ր փետրվարի 1914 թ., Շ. րիվ 86 (հավելված) / PRO (Public Record Office, London), FO 371/2116/ 6862: Ժողովածու դիպոստալիական դոկումենտների: Բարենորոգումներ Հայաստանում: 1912 թ. նոյեմբեր 12-ից մինչև 10 մայիսի 1914 թ., Թիֆլիս, 1915, էջ 198-200; Djemal Pasa' nin hatiralari 1911-1912, Istanbul, 1339 [1923], pp. 269-272.

A 90070



բերլի, Բիրյուսի և Դիարբեքլի:

2/ Երկու գոտիներից յուրաքանչյուրը կգտնվի տաս տարով նշանակված եվրոպացի գլխավոր տեսչի հսկողության ներքո:

3/ Երկու գլխավոր տեսուչները կվերահսկեն, յուրաքանչյուրն իր գոտում, արդարապետության, ոստիկանության և ժանդարմության վարչությունները:

4/ Գլխավոր տեսուչներն իրավունք կունենան կառավարությանն առաջարկել բարձրաստիճան պաշտոնյաների նշանակումը:

5/ Օրենքները, դեկրետները և պաշտոնական ծանուցումները կիրառարակվեն յուրաքանչյուր գոտու տեղական լեզուներով:

6/ Համիդին գնդերը²⁶ կգորացրվեն և կլրտնան պահեստային հեծելազոր: Նրանց գեներալը, որոնք կարհավեն ռազմական պահեստներում, նրանց կբաժանվեն միայն զորահավաքի կամ զորաշարժերի դեպքում:

Թուրքիայի հայերը գրեթե երեսուներեք տարվա գրկանքների, հայաժամանքների և կոտորածների հարկն ունեցան 1914 թ. փետրվարի 8-ի համաձայնագիրը ձեռք բերելու համար, որը Գուլկեիչի կողմից բնութագրվեց իբրև Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ապագայի լավագույն առավաստյալ: «... Հայերը չեն կարող չբնդունել,– գրում է նա Սանկտ-Պետերբուրգ,– որ սա բուրբակյան լծից իրենց ազատագրման առաջին քայլն է»²⁷: Հիլսոլի, կասկածից վեր է, որ այս համաձայնագիրը, եթե հանգամանքներն այն այլ ձևով տնօրինված չլինեին, պարունակում էր հաշտության և բարգավաճման սաղմեր: Անմիջապես պարզվեց, որ դրա կենսագործումը լինելու է շատ դժվարին: Գլխավոր տեսուչների ընտրությանը նախորդեց բանակցությունների ավելի քան երկու ամիս: Վերջապես համաձայնության հանգեցին Հյուսիսային գոտու համար՝ Նիդերլանդական Հնդկաստանում դեսպանի նախկին տեղակալ Վեստենենկի և Հարավային գոտու համար՝ Նորվեգիայի Ռազմական նախարարության գլխավոր քարտուղար, փոխգնդապետ Հոֆֆի անունների շուրջ: 1914 թ. մայիսի առաջին օրերին, երկու գլխավոր տեսուչները ժամանում են Կոստանդնուպոլիս և արժանանում կայսրական ընտրություն: Հոֆֆին այնուհետև մեկնում է Վան, որ ժամանում է միայն օգոստոսի 4-ին, այն դեպքում, երբ նույնիսկ մինչ Վեստենենկի մեկնումը, Եվրոպայում բռնկվում է պատերազմը:

*
* *

1914 թ. հունիսի 28-ին, Մարաեոյում մի սերբի կողմից Ավստրո-Հունգարիայի րազածառանգ էրցհերցոգ Ֆրանսուա-Ֆերդինանդի և նրա կնոջ սպանությունը պատրվակ է ծառայում պատերազմի սանձազերծման համար: Վիեննայի արքունիքը Սերբիային է ներկայացնում խստաշունչ վերջնագիր, պահանջելով ինքնիշխան պետության համար հատուցումների անընդունելի պայմաններ: Բավարարում չտեսնելով, 1914 թ. հուլիսի 28-ին Ավստրո-Հունգարիան պատերազմ է հայտարարում Սերբիային: Մեկը մյուսի ետևից, Գերմանիան՝ Ավստրո-Հունգարիայի կողմից, Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան՝ հսկում Սերբիայի, ընդդեմ կենտրոնական տերությունների, շրջալակցվում են հանգամանքների ճակատագրական գուճադիսպոսիցիայի: Առճակատումից շատ առաջ, Գերմանիան ինտուսմուտ էր

²⁶ Համիդին կոչվող քրդական հեծելազորային գնդերը ստեղծվել են Աբդուլ Համիդի կողմից 1891 թ. գարնանը՝ Փոքր Ասիայում հայկական հնարավոր ապստամբությունը ճնշելու նպատակով:

²⁷ Djemal Pasa'nin hâtıraları, op. cit., p. 272: Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի սպանություն (1801-1917), Երևան, 1967, հ. 3, էջ 433:

օսմանյան ռազմական դաշինքին: Հաշվարկը պարզունակ էր. եթե Թուրքիան միանար գերմանական խմբակցությանը, Ռուսաստանը հարկադրված կլիներ իր գործերի մի մասն արևելքից տեղափոխել ղեպի Կովկասի ռազմաճակատ: Մյուս կողմից, նեղուցների փակումն ավելի դժվարին կդարձներ հաղորդակցությունները Ռուսաստանի և նրա դաշնակիցների միջև, մասնավորապես, ռազմամթերքների մատակարարման հարցում: Իր ծրագիրը հաջողությամբ պսակելու համար, Վլիկեյմ II-ի հանձին Լենվեր փաշայի ձեռք է բերում գործնական ու նվիրված գործընկերոջ: Ռ՞վ է. այսպիսով. Լենվեր փաշան, որը պատերազմի այս վճռոտ շրջանում, Արևելքի քրիստոնյաների և հատկապես հայերի ճակատագրում կկատարի գլխավոր դերը:

Ծագմամբ Կոստանդնուպոլսի համեստ քնտանիքից, Լենվեր փաշան 1908 թ. հեղափոխությունից հետո նշանակվել էր Բեռլինում Թուրքիայի ռազմական կցորդ: Նա վերադարձել էր Կոստանդնուպոլիս 1911 թ., իբրև կայսրի և գերմանական ռազմաճորտության ջերմեռանդ երկրպագու²⁸: Լինելով խանդավառված ազգայնամոլ, քախտախնդիր, համարձակ ու սնուպարձ, նույնքան խիզախ, որքան և առանց խղճմտանքի, Լենվերը մասնակցել էր խտալարուրքական և բալկանյան պատերազմներին: 1914 թ. հունվարին հասնելով փաշայի կարգավիճակի և նշանակվելով նախ՝ Ռազմական նախարար, այնուհետև՝ Գլխավոր շտաբի պետ, առանց նույնիսկ ունենալու սուլթան Մեհմեդ V-ի ստորագրության կարիքը, նա համոզված էր, որ նախախնամությունն իր համար սահմանել է արտասովոր ճակատագիր: Գաշինքին վերաբերող կայսրի առաջարկությունն այժմ նրան թվում է իբրև ասավաճային շնորհ: Թուրք-գերմանական բանակցություններն ամենագաղտնի պայմաններում ընթանում են 1914 թ. հուլիսին Կոստանդնուպոլսում, գերմանական կողմից՝ Կոստանդնուպոլսում գտնվող դեսպան Վանգենհայմի և Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար ու կայսրի անձնական բանազնաց, գեներալ Լյոման ֆոն Սանդերսի և բուրքական կողմից՝ Լենվեր փաշայի, Ներքին գործերի նախարար ու ՄԱԿ-ի ազդեցիկ գործիչ Թափեար բեյի, օսմանյան խորհրդարանի նախագահ Հալի բեյի և մեծ վեզիր, թեև կառավարության վրա ազդեցություն չունեցող, Սաիդ Հայիմ փաշայի միջև:

Թուրք-գերմանական համաձայնագիրը Սաիդ Հայիմ փաշայի և Վանգենհայմի կողմից ստորագրվում է 1914 թ. օգոստոսի 2-ի երեկոյան՝ Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելու հաջորդ օրը: Ո՛չ սուլթանի, ո՛չ էլ ՄԱԿ-ի այլ ազդեցիկ անդամների հետ, ինչպիսիք են Ֆինանսների նախարար Ջավիդ բեյը կամ Ռազմաճովային նախարար Ջեմալ փաշան, ոչ ոք չէր խորհրդակցել²⁹: Համաձայնագրի 2-րդ հոդվածը նախատեսում էր Օսմանյան կայսրության ընդգրկումը պատերազմի մեջ Գերմանիայի կողմում՝ ընդդեմ Ռուսաստանի: Փոխարենը, համաձայն 4-րդ հոդվածի, Գերմանիան պետք է գեներալ ու ժող պաշտարաններ օսմանյան տարածքի ամբողջականությունը: Քանի որ ռուս-գերմանական պատերազմը սկիզբ էր առել 1914 թ. օգոստոսի 1-ին, Թուրքիան պարտավորվելու էր անմիջապես պատերազմ հայտարարել Ռուսաստանին: Սակայն օսմանյան կառավարությունը չի կարողանում անմիջապես տեղ գրավել պատերազմող տերությունների շարքում. մի կողմից, նրա ռազմական նախապատրաստություններն ավարտին չեն հասել, մյուս կողմից, հարկ է, որ խզումը վրա հասնի Անտանտի տերությունների նախաձեռնությամբ, այն ֆինանսական պարտավորությունների պատճառով, որոնք Թուրքիային դեռևս կապում են այս վերջիններիս հետ:

Այդուհաներձ, զգացվում է, որ երկնորբերի վճիռը վերանայման ենթակա չէ: Թուրք-

28 Հմմտ. Sevket S. Aydemir, Makedonya'dan Ortaasya'ya Enver pasa, Istanbul, 2^e éd., 1976, vol. II, pp. 211-212.
29 Sletu A. B. Kur'an, Inkilâp tarihimiz ve İttihad-ı Terakki, Istanbul, 1948; S. S. Aydemir, op. cit., pp. 520-525.

գերմանական համաձայնագրի ստորագրման հաջորդ իսկ օրվանից, 1914 թ. օգոստոսի 3-ից, օսմանյան մամուլում տպագրված Ռ-ազմական նախարարության պաշտոնական հատոր-դազրությունը դրուշների ներքո է կանչում 20-ից 45 տարեկան օսմանյան բոլոր հայատակներին³⁰։ Այդպիսով համար այդ՝ նվազագույնը փութկոտ միջոցառումը, կառավարությունն ընդգծում է, որ Եվրոպայում տիրող խորին իրավիճակի պատճառով, սահմանների պաշտպանությունն անխուսափելի է դարձնում հավելյալ նախագաղաչական միջոցառումների ընդունումը։

Համընդհանուր զորակոչը վերաբերում է կայսրության ոլորան մահմեդական, նույնքան էլ ոչ մահմեդական հայատակներին և նրանց թվում՝ հայերին³¹։ Ի՞նչ է իրենից ներկայացնում Օսմանյան կայսրության հայ բնակչությունը, և Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին որքա՞ն հայեր են դեռևս մնում Ասիական Թուրքիայի հայկական մահանգներում։ Թիվը ճշգրտելը դժվար է, քանզի այն բոլոր վիճակագրությունները, որոնք մենք ունեցել ենք, կազմվել են միայն մոտավոր ձևով և այնպիսի հանգամանքներում, որոնք արատավորում են դրանց հավանականությունը։ Օսմանյան կառավարությունը, ինչպես նաև բուրջական գաճաճան իշխանությունները, որոնք նախքան Բեռլինի վեհաժողովը (1878 թ.) հայերին հաշվում էին նվազագույնը 2400000 անձանց սահմանում³², 1878 թ. Հայկական հարցի ծագումից հետո, պատրաստվում էին պարբերաբար նվազեցնել այս թիվը։ Սակայն այսօր հետաքրքրական է տեսնել, թե ինչպե՞ս են միևնույն հեղինակները մեծ վստահություն ընձայում Բեռլինի վեհաժողովին հաջորդած օսմանյան տարեգրքերից՝ «սալամնեհներից»³³, քաղված տվյալներին և ամբողջությամբ արհամարհում այդ նույն օսմանյան սկզբնաղբյուրներն այն պարագայում, երբ դրանք նախորդում են նշված վեհաժողովին³⁴։

«Դեղին գիրքը», որի անաչառությունն, ընդհանուր առմամբ, ճանաչում է գտել, 1897 թ. հաշվում է 1475011 հայերի³⁵, մի թիվ, որին նա հանգել է՝ հենվելով Ասիական Թուրքիային նվիրված Զինեի աշխատության վրա³⁶։ Բայց այդ ուսումնասիրությունը, որի վաճառագրական հենքն, ի դեպ, անբասիր է, էքնիկական վիճակագրությունների համար կրկին դիմում է օսմանյան «սալամնեհներին» աղյուսակներին, ընդգծելով դրանց անստույգությունը³⁷։

Չմոռանանք նաև 1894-1896 թթ. ընթացքում օսմանյան կառավարության հրամանով իրականացված կոտորածների գոհեղին, որոնց թիվը հավաստի սկզբնաղբյուրները նշում են

30 44 լիրայի չափով սահմանված «բեդե-ի ասկերիե» կոչվող ազատագրման հարկն, այդուհանդերձ, հնարավոր էր դարձնում վիճվորական ծառայությունից ազատվելը։ 1914 թ. բուրջական մեկ լիրան համարժեք է 23 ոսկե ֆրանկի։

31 Կայսրության ոչ մահմեդական քաղաքացիների զորակոչը սահմանող օրենքն ընդունվել է 1910 թ.։

32 Հմմտ. Almanach de l'Empire ottoman pour l'année 1849, Constantinople, 1849, p. 71; A. Ubicini, Lettres sur la Turquie, 1854, partie 2, p. 294; Salâheddin Bey, La Turquie à l'Exposition universelle de 1867, Paris, 1867, pp. 216-217. Համաձայն բարձրաստիճան սպա Ահմեդ Ջևադի, որն ավելի ուշ դառնալու է մեծ վեզիր, 1873 թ. Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի թիվը տասնամիլիոն էր 3 միլիոն անձանց սահմանում։ Sâ'u Malûmat-i el-kâfiye fi memalik-i el-Osmaniye, Istanbul, 1289 [1873], p. 85.

33 Օսմանյան պաշտոնական օրացույց։

34 Sâ'u, մասնավորապես, Sadî Koças, Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ilişkileri, Ankara, 1967, pp. 257-258; A. E. Yalman, Yakin tarihte gördüklerimiz ve geçirdiklerimiz, Istanbul, 1970, vol. I, p. 327 - 980000 հայեր՝ 1907 թ.։ S. S. Sonyel, Yeni belgelerin isigi altinda Ermeni tehcirleri // "Belleter", Ankara, 1972, N 141, pp. 32-34; S. S. Sonyel, Turkish Diplomacy 1918-1923, Mustafa Kemal and the Turkish National Movement, London, 1975, p. 5; S. S. Aydemir, op. cit., vol. I, p. 318 - 1115000 հայեր՝ 1914 թ.։ Stanford J. Shaw and Ezel Kural-Shaw, History of the Ottoman Empire and the Modern Turkey, Cambridge, London, New York, 1977, vol. II, p. 205.

35 Հմմտ. Ministère des Affaires étrangères. Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman, 1897, p. 8.

36 V. Cuinet, La Turquie d'Asie, Paris, 1892-1895, en 4 tomes.

37 Նույն տեղում, հատոր 1, էջ IV։

250000 անձի սահմանում³⁸:

Ըստ 1914 թ. պաշտոնական մարդահամարի ճշգրիտ տվյալների, Օսմանյան կայսրությունում ապրում էին 1294831 հայեր³⁹: Հեռվելով տարբեր սկզբնաղբյուրների վրա, Մարսել Լեարր⁴⁰ եզրակացնում է, որ 1913 թ. Թուրքիայում գոյություն ունեին 2100000 հայեր, որոնցից 1018000-ը՝ Ասիական Թուրքիայի հայկական նահանգներում էին⁴¹: Մենք նրա մոտավոր հաշվարկը համարում ենք ընդունելի, որովհետև համապատասխան է հեռուստա-խորյակ շրջանում յույս լինելի դեպքում օսմանյան պաշտոնական սկզբնաղբյուրները հաջորդ շրջանի հավաստի այլ սկզբնաղբյուրների հետ, 1914 թ. արտերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության հարցում հանգում ենք մի ընդհանուր թվի, որը չպետք է լիներ ավելի նվազ, քան 2100000 անձը:

Ինչ վերաբերում է ողջ Անդրկովկասի հայերին, նրանց թվը, համաձայն «Կոսովկակիյ կակնդարի», 1912 թ. հասնում էր 1636486 շնչի⁴²:

*
**

Եվրոպական պատերազմին և կառավարության կողմից հրամանագրված համընդհանուր զոլաբախման վերաբերող լուրերը Թուրքիայի տարբեր ժողովուրդների շրջանում առաջ են բերում խորին հուզումներ: Վիստրիայում և հուսալքումը շատ ուժգին են, մասնավորապես, հայերի շրջանում: Նրանց թվում ամենալավատեսները, որոնք ուրախությամբ էին ողջունել 1914 թ. փետրվարի 8-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, այժմ հստակորեն գիտակցում են, որ հայկական նահանգներում բարենորոգումների կենսագործումն այսուհետև՝ շատ ավելի մեծ չափով կախված կլինի պատերազմի ելևէջներից, քան Թուրքահայաստանում գլխավոր տեսուչների ներկայությունից: Հայկական նահանգներում, ինչպես նաև կայսրության մեծ քաղաքներում, հայերը գինակոչին պատասխանում են օրինակելի հնազանդությամբ: «Հրամանը, – գրում է դարաշրջանի վկաներից մեկը, – այնքան խստաշունչ էր և սպառնալից, որ ոչ մեկը չխորհեց դասալիք դառնալու մասին»⁴³:

1914 թ. հուլիսի վերջերին, Էրզրումում, Թուրքիայի և նույնիսկ արտասահմանի բազմաթիվ լիազոր ներկայացուցիչների ներկայությամբ, բացվեց ՀՀԴ-ի VIII համընդհանուր վեհաժողովը: Զննարկումների ընթացքում գերակշռող տեղ գրավեց փետրվարի 8-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, որը քվեարկության միջոցով հանգեցրեց հետևյալ որոշման ընդունմանը. «... Եթե օսմանյան կառավարությունը ջանա բոլոր հնարավոր միջոցներով հակադրվել այս համեստ նախագծի իրականացմանը, վեհաժողովը հայտարարում է, որ այդ սլաքագայում հայ ժողովրդի իրավունքները սլաքապանելու և կառավարության անբարյացակամությանը հակադրվելու իրավասությունը կպատկանի կուսակցությանը»⁴⁴: Մինչ այդ, Եվրոպայում բռնկվում է պատերազմը և ՄԱԼ-ը, որն առճակատման առաջին իսկ օրվանից

38 Հմմտ. P. Renouvin, E. Preclin, G. Hardy, L'Époque contemporaine. La paix armée et la Grande guerre (1871-1919), Paris, 2^e éd., 1947, p. 176.

39 Stanford J. Shaw and Ezel Kural-Shaw, op. cit., p. 240.

40 Օսմանյան խորհրդարանում Կուսանդնուպոլսի պատգամավոր Գրիգոր Ջոհրապի կեղծանունն է:

41 Հմմտ. Marcel Léart, La Question arménienne à la lumière des documents, Paris, 1913, pp. 59-63.

42 «Մշակ», Թիֆլիս, 16-ր հունվարի, 1913, թիվ 10:

43 «Նոր կենտրոն», Կոստանդնուպոլիս, 16-ր հունվարի 1919, թիվ 90: Տես նաև ստորև թիվ 3 փաստաթուղթը:

44 Տես Ս. Վրացեան, Հայաստանի հանրապետության, Փարիզ, 1928, էջ 6-7: Էսաթ Ռուսար, առանց հիշատակելու սկզբնաղբյուրները, տալիս է ՀՀԴ-ի VIII վեհաժողովի որոշման մեկ այլ տարբերակ. «ՀՀԴ-ն, – գրում է նա, բննարկելով ՄԱԼ-ի քաղաքականության խորամանկությունները հայկական բարենորոգումների առթիվ, – վճռում է մնալ ընդդիմության մեջ՝ այդ քաղաքականությունը բննադատելու և դրա հետևանքների դեմ կատաղի ձևով պայքարելու համար»: Տես Esat Uras, Tarıhte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, p. 589.

կայացրել էր իր վճիռները. Էրզրում է ուղարկում լիազորություններով օժտված իր երկու ամենագործունյա անդամների՝ կոմիտեի խոսավոր Լոմեր Ղաֆի քեյլին և ամենամոյի ազգայնամուղ ղ ինկառոյր Բեհեդդին Շաքիրին: Երբ 1914 թ. օգոստոսի 8-ին ՄԱԿ-ի բանագնացները ժամանում են Էրզրում, վեհաժողովի աշխատանքներն արդեն ավարտվել էին. մասնակիցներից ոմանք արդեն էտ էին գնացել: ՄԱԿ-ի ներկայացուցիչներին, որոնց ուղեկցում էր Էրզրումում գտնվող երիտարարական կոմիտեի պատասխանատու լիազոր ներկայացուցիչ Հիմի քեյր. այդուհանդերձ, ընդունում են ՀՀԳ-ի երևելի անձինք՝ Վառձյանը, Ռոստոմը և Ալեմունին, որոնց նրանք առաջարկում են հետևյալ առևտրական գործարար. ռուս-թուրքական պատերազմի դեպքում, հայերը կկազմակերպեն կամավորական խմբեր՝ Կովկասում Ռուսաստանի դեմ ուղղված համընդհանուր ապստամբություն նախապատրաստելու համար. պատերազմից հետո, հայերին, ինչպես և վրացիներին ու րարարներին, իրրև փոխատուցում կարվեն թուրքիայի պրոտեկտորատի ներքո գտնվող ինքնավար տարածքներ. վրացիների համար կառանձնացվեն Քուրայիսի և Թիֆլիսի մարզերը, Բարումի նահանգը և Տրապիզոնի նահանգի մի մասը. րարարները կատանան Դադստանը, մինչև Վլադիկավկազ ձգվող լեռնային շրջանները, Բարվի մարզը և Ելիզավետապոլի կառավարության մի մասը. վերջապես հայերին կվկառարձվեն Կարսի նահանգը, Երևանի կառավարությունը, Ելիզավետապոլի կառավարության արևմտյան մասը, Վանի և Բիբրիսի նահանգներն ու Էրզրումի նահանգի մի մասը⁴⁵:

Առաջարկությունը հանկարծակիի է քելում ՀՀԳ-ի դեկավարներին: Պատերազմը Ռուսաստանի հետ, րսա նրանց, կարող էր միայն հանգեցնել երկրի ամայացմանը և կարագացնեք կայսրության կործանումը: Այն պարագայում, երբ այդ պատերազմն անխոտուպիկի դառնա, թուրքիայի հայերը չեն խուսափի իրենց՝ իրրև օսմանյան րարարացիների հարկնասիրական պարտքից. քայց նրանք այժմվանից իսկ կտրակսնասպես մերժում են Կովկասում Ռուսաստանի դեմ գինված խմբերի կազմակերպման նախագիծը⁴⁶: Այն ընդդիմությունը, որին քախվում են երիտարար րանագնացները, նրանց տհաճություն է պատճառում: Գոյկտոյր Բեհեդդին Շաքիրը րացականչում է. «Սա դավադրություն է: Դձգնաժամային պահին դուք աջակցում եք ռուսներին և հրաժարվում սատարելու կառավարությանը: Գուր մոռանում եք, որ օգտվում եք նրա հյուրնկալությունից»⁴⁷:

Այս հանդիպումը, որի կարևորությունը հարկ է ըմբռնել երիտարարների և հայերի միջև կարարերությունների հետագա զարգացման համար, հաճախ է վկայակոչվել հայ հեղինակների կողմից, քայց փոխարենը ժխտվել րարքական պաշտոնական պատմագրության կողմից: Էսաք Ռուսար, մասնավորապես, կասկածի է ենքարկում դրա արժանահավատությունը: «Դա. նշում է նա.՝ համակ երևակայության արդյունք է. որն ապացույց չունի և հիմնագուրկ է»⁴⁸: Այդուհանդերձ, այդ գրույցի հավաստումը մենք գտնում ենք հենց օսմանյան «Թարվիմ-ի վարայի» լրագրում: Հաշվետվություն տարվ 1919 թ. երիտարարների դատավարության մասին, այս լրագիրը հիշատակում է. առանց մանրամասներ հարդարելու, ղ ինկառոյր Բեհեդդին Շաքիրի հեռագիրը, որը 1914 թ. օգոստոսի 15-ին տեղեկացնում էր ՄԱԿ-ի կենտրոնական արուանխտին, հայ առաջնորդների մոտ իր առարերության անհաջողության մասին⁴⁹: Միննույն սկզբնաղբյուրը նշում է, որ 1908 թ. հեղափոխությունից ի վեր՝ ՀՀԳ-ի և երիտարարների միջև այդ առաջին խզումից հետո, ՄԱԿ-ի գլխավոր րարտուղար Միդիար Շուրքյուն

45 Հմնտ. "Armenia", Marseille, 9. II 1916, N 28, Ա-ԳՕ. Սեձ դեպրեր փաստարկումնա 1914-1915 րակամներին, Արևան, 1917, էջ 73; Gr. Tchakouhian, Le Livre rouge, Paris, 1919, p. 10

46 "Armenia", 9. II 1916, N 28, Ա-ԳՕ, նշվ ախ., էջ 73:

47 "Armenia", 16. II 1916, N 29

48 Հմնտ. Esat Uras, op. cit., p. 590.

49 Տեա օսմանյան պաշտոնարարք "Takvim-i Vakayi", 12. V. 1335 [1919], N 3554

կարգադրում է Բեհեդդին Շաքիրին «այսուհետև գալտնի արսիկ այն քաղաքական ծրագիրը, որին պետք է հետամուտ լինի օսմանյան կառավարությունը»⁵¹:

Էրզրումում անհաջողությամբ պսակված փորձն, ի դեպ, մեկուսի գործողություն չէ: Էռմեր Նաջին պատրաստվում է Վանում և Մուշում ՀՀԴ-ի անդամների առջև կրկին շարադրել միևնույն գալթակիչ պայմանները: Շարունակ հետեկու է միևնույն պատասխանը. հայերը հավատարիմ են օսմանյան գահին, բայց կտրականապես հրաժարվում են մասնակցել ադետաքեր շարժումներին Կովկասի տարածաշրջանում⁵²:

Երիտրորքերի առաջարկությունն արդար անկեղծ էր: Հիշենք Ասիական Թուրքիայի հայկական նահանգներում, ինչպես մահմեդականներին, այնպես էլ հայերին. միմիայն սոցիալական բարենորոգումների արտոնող՝ 1914 թ. փետրվարի 8-ի համաձայնագրի ստորագրմանը նախորդած օսմանյան կառավարության տատանումների մասին: Ինչպես հավատ տածել, երբ այս նույն կառավարությունն այժմ իր սեփական նախաձեռնությամբ դնում է ինքնավար Հայաստանը, որը վեց ամիս առաջ, ըստ նրա, գոյություն չուներ: Պանթուրքական միևնույն առաջնորդ Բեհեդդին Շաքիրը, որը 1914 թ. ամռանը ձիթենու ճյուղը ձեռքին մերձենում է. այսպիսով, հայերին և նրանց լիտիարար առաջարկում ապստամբել ռուսների դեմ. մի բանի տարի դրանից առաջ Կովկասի մահմեդականներին խրիտուր էր տալիս. «... Դուք միացեք ձեզնից ավելի քույր հայերին. ձեր ամենահզոր թշնամիների՝ ռուսների դեմ. ազատագրվելով մեկրնդմիշտ ռուսներից, ձեզ համար դյուրին կլինի հայերին խելքի բերելը, բանզի դուք ավելի բազմաքանակ եք, քան նրանք»⁵³: Այսպիսով, ոչ մի կասկած չկա, որ Ռուսաստանի պարտությունից և Կովկասի նվաճումից հետո, երիտրորքերը վերջնականապես վերջ կտային ազատագրման յուրաքանչյուր փորձի:

Ի դեպ, միևնույն ժամանակ, երբ ՄԱԿ-ի բանագնացները ստահող խոստումներով ջանում են վերաշահել հայերի վստահությունը և նրանց մղել ռուսների դեմ, Թալեաթ բեյը խորիում է միայն 1914 թ. փետրվարի 8-ի համաձայնագրից ձերբազատվելու մասին և արդեն նախատեսում Ասիական Թուրքիայի գլխավոր տեսուչների առաքելության ձախողումը: Ներքին գործերի նախարարի՝ 1914 թ. օգոստոսի 16-ի հեռագիրը Հռֆֆին իրագել է դարձնում, որ եվրոպական պատերազմի և գորահավաքի պատճառով, կառավարությունն այլևս ի վիճակի չէ կենսագործել բարենորոգումները և մի բանի տողով վերացնում է երկու տարի տևած բանակցությունների արդյունքը⁵⁴: Ինչ վերաբերում է Վեստենենկին, որին դեռևս չէր հաջողվել հասնել Էրզրումում գտնվող իր նատավայրը, Բարձր Դուռը նրան պարզապես դրղում է քողնել երկիրը և վերադառնալ Հոլանդիա: 1914 թ. սեպտեմբերին, Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Բոմպարը դրանից հանգում է հետևյալ եզրակացությանը.

«Քանի դեռ Էվրոպան չկարողանա ալոտեղ հսկողություն սահմանել, բարենորոգումների տեսուչների առաքելությունը Հայաստանում չի ունենա որևէ գործնական արդյունք»⁵⁵:

50 Նույն տեղում.

51 Հմնա «Հորիզոն», Թիֆլիս, 29. VI. 1916, թիվ 143:

52 Yusuf H. Bayur, Türk İnkilâbı Tarihi, Ankara, 1952, vol. II, partie 4, p. 87.

53 Հմնա «Մշակ», 22. IX. 1914, թիվ 210: Ա-ԳՕ, նշվ. աշխ., էջ 72:

54 Տես սուրբ թիվ 4 փաստաթուղթը:



1914 թ. օգոստոսի 11-ին, Միջերկրական ծավում բրիտանական նավատորմի կողմից հետապնդվող գերմանական երկու ռազմանավեր՝ «Գյոթենը» և «Բրեսլաուն», անցնում են Դարդանեղր, մուտք գործում Մալմայուս ծով և խաբիսխ ծգում Բոսֆորի ակերի մոտ: Չնայած օսմանյան կառավարության վրա դաշնակիցների գործադրած ճնշումներին, գերմանական զրահանավերի անձնակազմը չի զինարափվելու և ոչ էլ նույնիսկ դուրս է կրավիլվելու օսմանյան ջրերից: Երիտրուրբերի համակրանքը կենտրոնական տերությունների հսնդեպ ակնհայտ է: Չնայած Կոստանդնուպոլսում գտնվող դաշնակիցների դեսպաններին չեզոքության շուրջ տրված խոստումներին, օսմանյան կառավարության ռազմական նախապատրաստությունները հավաստում են Կոստանդնուպոլսում գերմանական ազդեցության ուժեղացումը: 1914 թ. սեպտեմբերի 9-ին, Բարձր Դուռը տարբեր դեսպանությունների է հանձնում համանման մի ծանուցագիր, որն ազդարարում էր կասյիտուլյացիաների լուծարումը՝ սկսած հոկտեմբերի 1-ից⁵⁵: Օսմանյան կառավարությունը քայլ առ քայլ ձերբազատվում է Արևմուտքի հանդեպ իր պարտավորություններից:

Սահմանի մյուս կողմում, Կովկասի հայերն իրարամերժ զգացողություններով են հետևում ճգնաժամի զարգացմանը Կոստանդնուպոլսում: Այնժամ, երբ Կովկասի ՀՀԴ-ի ռազմածույները, մասնավորապես, Թիֆլիսում, աչքում են Ասիական Թուրքիայի հայկական նահանգներն ազատագրելու ցանկությանը, ժողովրդական զանգվածները դուրս չեն ելնում զսպվածության շրջանակներից⁵⁶: Թուրքիայում, օսմանյան կառավարության և դաշնակիցների միջև լարվածության աճին գուզնթաց, հայերին համակում է անհանգստությունն ու տագնապը: Օսմանյան կայսրությունում հայերի պատրիարք, Ն {որին սրբազնություն} ն Չավենը 1914 թ. օգոստոսի սկզբին Սվազի հայ պատգամավոր, դ {ոկտո}ր Տաղավարյանին հանձնարարում է մեկնել Թիֆլիս, Կովկասի հայրենակիցներին ավելի զգույշ և չափավոր դարձնելու համար, որովհետև նրանց անխոհեմությունը՝ Թուրքիայի իրենց իսկ եղբայրներին ենթակա է դարձնում Օսմանյան կառավարության զայրույթի ժայթքման վտանգին⁵⁷: Պատրիարքի այդ նախազգուշացումը մնում է աննետևանք. սկսած 1914 թ. սեպտեմբերից, ռուսական կառավարության քաջալերմամբ, Կովկասում կազմակերպվում են հայկական ազգային գործեր⁵⁸:

Պատերազմն անխուսափելի է: Լինելով գերմանացիների վարձկանը, Էնվեր փաշան միայն առիթ է փնտրում Ռուսաստանի դեմ պատերազմական գործողություններ սանձազերծելու համար: Քանի որ վերջինս իրեն սպասեցնել է տալիս, նա կարգադրում է քուրք-գերմանական նավատորմին ռմբակոծել Սև ծովի ռուսական նավահանգիստները⁵⁹: Հոկտեմբեր ամսի վերջերին, Ռուսաստանը, ի մեծ գոհունակություն Վիլհելմշտրասսեի, պատերազմ է հայտարարում Թուրքիային (1914 թ. նոյեմբերի 1-ին):

Կովկասի ռազմաճակատում հայերի մասնակցությունը մարտերին անխուսափելի է. հայկական կամավորական ստորաբաժանումները տեղ են գրավում ռուսական գործերի կողքին. այլ հայեր՝ կամ Կովկասում, կամ Եվրոպայում զինվորագրվում են ռուսական կանոնավոր բանակին: Բալկանյան հայերը, ծագումով Ասիական Թուրքիայից, իրենց հերթին միանում

55 Սաիդ Հալիմ փաշան Բոնպարին, Բարձր Դուռ, 9-րդ սեպտեմբերի 1914 թ., թիվ 53699/89 (պատճենը) // A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 846; "Tasvir-i Efkar", 10. IX. 1914, N 1195.

56 Հմմտ. Մ. Վ. Արզումանյան, Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 187:

57 Չավեն սրբազն., Պատրիարքական յուշերս. վառերագիրներ եւ վկայություններ, Գահիրե, 1947, էջ 50:

58 Չեզոքվում են կամավորական չորս ստորաբաժանումներ, որոնց գլխավորում են Անդրանիկը, Համազասպը, Գրոն և Քեռին: 1916 թ. ամռանն այս ստորաբաժանումների թիվը հասնում է վեցի. տե՛ս ստորև թիվ 757 փաստաթուղթը (հավելվածը):

59 Տե՛ս Sevk S. Aydemir, op. cit., vol. II, p. 563.

են կամավորական ստորաբաժանումներին՝ կռվելու համար օսմանյան զորքերի դեմ: 1914 թ. նոյեմբերի վերջերին, Թիֆլիս կատարած այցի ընթացքում, ցար Նիկոլայ II-ն ընդունելու քյուն է կազմակերպում կաթողիկոս Գևորգ V-ի համար և կայսրի այն հայտարարությունը, քն «հայերին փայլուն սպազա է սպասում»⁶⁰, միայն զարկ է տալիս նրանց խնդրախոսությանը՝ հանուն Թուրքահայաստանի ազատագրման: Մինչև իսկ՝ ներառյալ Թիֆլիսի պահպանողական շրջանները, ռուսական հաղթանակից ակնկալում են օսմանյան բռնատիրության վախճանը⁶¹:

Օսմանյան գնդերում Թուրքիայի հայերը գտնվում են Կովկասի իրենց հայրենակիցներին դեմ հանդիման: Որքա՞ն են նրանք: Մենք նրանց թվի մասին վիճակագրական տվյալներ չունենք և ոչ էլ գիտենք, թե քանի հոգի կարող էին վճարած լինել ազատագրման հարկը: Հյուսիսում առաջին ընդհանուրների ավարտը բարենպաստ է օսմանյան զորքերի համար, որոնք դյուրին ձևով քափանցում են 1877-1878 թթ. պատերազմից ի վեր ռուսական տիրույթ հանդիսացող Կարսի մահանգ: Օսմանյան զինվորների՝ քաղաք կատարած մուտքին հետևում է արական սեռի քրիստոնյա բնակչության համատարած կոտորածը: Հարավում, ռուսական զորքերն արագ գրավում են սահմանամերձ Բայազետ քաղաքը: Թուրք սպաները կարող են միայն ցնցվել հայ կամավորների համարձակությամբ, որոնք կռվում են Ռուսաստանի հաղթանակի համար: Ինչ վերաբերում է օսմանյան դրոշի ներքո առաջին անգամ զինվորագրված հայ զինվորներին, ապա նրանցից՝ Թուրքահայաստանի ազատագրման համար պայքարի մեջ մտած Կովկասի իրենց հայրենակիցների վրա է, որ պահանջում են կրակել: Ոմանք դրանից հրաժարվում են, ուրիշները դասալիք են դառնում կամ նույնիսկ անցնում ռուսական ճամբար: Թուրք սպաները, հաղորդում է դարաշրջանի մի ակնմատես, սկսում են իրենց պարտությունը վերագրել հայ զորակոչիկների դավաճանությանը⁶²:

1914 թ. նոյեմբերի սկզբից ի վեր, ուժի մեջ են մտնում քաղաքացիական հայ բնակչության դեմ ուղղված խտրական միջոցառումները: Ռազմաճակատին մոտ գտնվող Էրզրումի հարթավայրի հայ բնակիչները հրաման են ստանում քաղաքում տեղավորվելու մասին⁶³: Մուշի և Բիլիկիսի գյուղերի հայերը ևս համախմբվում են քրդական գյուղերում: Օսմանյան քաղաքացիական և զինվորական իշխանությունների կողմից այս հարածանքներն ուղեկցվում են գանազան բռնություններով, որոնք արդարացվում են բանակի կարիքներով: Հայրենիքի անույնից անամոթաբար կողոպտվում են հայերի կրպակները, խանութները կամ ազարակները⁶⁴:

Անմիջապես հետևում է հայ զինվորների զինաթափումը: 1914 թ. նոյեմբեր ամսի ընթացքում, Վանի քսան զոմարտակների հայ զինվորներից ետ են վերցնում նրանց հանդերձանքը⁶⁵. դեկտեմբերի վերջերին ռազմաճակատից ետ են կանչվում հազարավոր հայ զինվորներ: 1915 թ. փետրվարի սկզբին, Կովկասի ռազմաճակատի օսմանյան զորքերում հայ զինվորներ այլևս չեն մնում: Բոլոր հայ մարտիկներն ուղարկվում են «ամելե տաբուրո» կոչվող բանվորական զոմարտակները, որոնք այսուհետև զբաղվում են խրամատներ կառուցելով, մթերալիս ակյաքներ տեղավորելով և քաղաքացիական ու զինվորական իշխանությունների համար բազմաթիվ ծանր աշխատանքներ կատարելով⁶⁶: Վատ սնված, վատ հագնված, նրան-

60 Gr. Tchakouchian, op. cit., pp. 14-15; Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 383-384:

61 «Մշակ», 21/3. X/XI. 1914, թիվ 237:

62 Հմմտ. Ա-Գ-Օ, նշվ. աշխ., էջ 96:

63 Տե՛ս «Նոր կեսնք», 25. I. 1919, թիվ 98:

64 Ա-Գ-Օ, նշվ. աշխ., էջ 98-99, 103; Չալկեն արքեպս., նշվ. աշխ., էջ 55-64:

65 Հմմտ. Ա-Գ-Օ, նշվ. աշխ., էջ 99-100:

66 Տե՛ս ստորև թիվ 58 փաստաթուղթը (հավելվածը); Ա-Գ-Օ, նշվ. աշխ., էջ 100-104; Mémoires de l'Ambassadeur Morgenthau, Paris, 1919, p. 262; Alma Johansson, Ett Folk i Landsflykt, Stockholm, 1928, pp. 8-10.

ցից շատերը մահանում են 1914-1915 թթ. ճնշման ընթացքում. շատերը միայն առիթի են սպասում դատալիք դառնալու համար: Հայերը՝ գյուղացիներ, քեզ զինվորներ, ռուսներին սպասում են իբրև ազատարարների: Այս ստորագուցիչ կացությունը, այդուհանդերձ, Ասիական թուրքիայի արևելյան մասնագնեղում չի հրահրում և ոչ մի խռովություն կամ ապստամբություն. որովհետև երկրորդը ղեկավարների դեռևս ջանում են, 1914 թ. դեկտեմբերի կեսերին, Վանի ՀՀԳ-ի անդամների միջնորդությամբ խոչընդոտել Կովկասի հայկական կամավորական ստորաբաժանումների գործողությանը⁶⁷:

Վաղաժամ և խստաշունչ ճնշող կասեցնում է ռազմական գործողությունները Կովկասի ռազմաճակատում: Անհամբերությամբ շուտափույր հաղթանակ ակնկալող Էնվեր փաշան, դեկտեմբերի կեսերին հանդիսավարությամբ մեկնում է Էրզրում, ուր ստանձնում է III բանակի հրամանատարությունը: Նրա սնապարծությունը նրան դրդում է քերագնահատելու ավելի քան 2000 մ {ետր} բարձրության վրա գտնվող Էրզրումի ձյունածածկ հարթավայրի մրնախրտային պայմանները: Լինելով Ռազմական նախարար, նա կարծում է, քեզ կկարողանա հրաշք գործել, որն Ալեքսանդր Մեծի հետքերով, նրա համար կհարթի Հնդկաստանի և Կենտրոնական Ասիայի ճանապարհը: III բանակի հարձակումը, չնայած նրա ղեկավարի անուշարկելի խիզախությանը և 90000 վատ հանդերձավորված զինվորների քաջությանը, վերածվում է իսկական ջախջախման⁶⁸: 1915 թ. հունվարի 4-ին, երկու շաբաթ անց, երբ Էնվեր փաշան բնդում է իր պարտությունն ու Կոստանդնուպոլիս վերադառնալու համար աննկատ լքում Էրզրումը, իր ետևում բողնում է միայն 12000 կենդանի մնացողների⁶⁹: Ալլահուեքբերի լեռների վերածվում են՝ մարտերի, քայց, մասնավորապես, նաև ցրտի, սովի և տիֆի պատճառով մոտրացած օսմանյան III բանակի գերեզմանատան:

Այդ նույն 1915 թ. հունվարի 4-ին. ցարի գորքերը վերագրավում են Սարիլամձիշը և Կովկասի պատերազմի պատմության մեջ շրջում մի էջ: Այսպիսին է երիտրորքերի պատրանքների վախճանը:

*
* *

ՄԱԿ-ի ղեկավարները հույս էին տածել նվազագույն ժամանակամիջոցում նվաճել Կովկասը և այնտեղից՝ Կենտրոնական Ասիայից մինչև Հնդկաստան ձգվող համայն խաղաղական աշխարհին՝ Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի դեմ ուղղված համընդհանուր խռովության ազդանշան տալ: Մահմեդական աշխարհի կարծեցյալ ազատարարները⁷⁰, այժմ ամբողջությամբ կախման մեջ են գտնվում իրենց հավիտենական թշնամուց՝ Ռուսաստանից, որի համար, Սարիլամձիշից ի վեր, հասանելի են Կենտրոնական Անատոլիայի հարթավայրերը և Սիջուգետի ճանապարհը: Բարձր Գուռը կարողացավ օգտվել Լիբուպական պատերազմից. ետ ուղարկելու համար թուրքահայաստանում նշանակում տուցած գլխավոր տեսուչներին, քայց Լեռնապարիսի հաղթանակած ելնեն առճակատումից, հայերն արդյուր կրկին փոքճեր չէին ճեռնարկի և չէին պահանջի իրենց ինքնավարությունը, անգամ, ո՞վ գիտե, անկախությունը: Ի՞նչ տեղի կունենա այնժամ Օսմանյան կայսրության ամբողջականության սկզբունքի հետ, որի շուրջ Երիտրորքերը, ինչպես և նրանց նախորդները, չեն կարողանում

67 Հմմտ. Ա-ԳՕ, նշվ. աշխ., էջ 97-98:

68 Servet S. Aydemir, op. cit., vol. III, pp. 125-133.

69 Sbu Liman von Sanders, Cinq ans de Turquie, Paris, 1923, pp. 49-50, A. N. Kurat, Birinci Dönya Savasi sırasında Türkiye'de bulunan Alman generallerinin raporları, Ankara, 1966, pp. 18-19, S. S. Aydemir, op. cit., vol. III, pp. 133-136

70 Sbu Ushshet Uqayonni "Türkiye'nin ve İslâm âleminin kurtuluşu" hııqııadıı "Harı Mecmuası", İstanbul, I XII 1330 [1914], N 1, p. 7

համաձայնության հասնել: Կայսրության մասնատումն ածեն գնով կանխելու համար բալկանյան ժողովուրդների նկատմամբ անգիջողություն ցուցաբերելուց հետո, ՄԱԿ-ի դեկլարաներն այդպիսի այժմ կառուանվելին հայերի դեմ արդյունավետ միջոցներ կիրառելուց:

Օսմանյան կառավարությունը գիտակցում է, որ իր անձնակազմերի բույրությունն իրեն շատ երկար չի բույրատրի խոչընդոտել ռուսների առաջխաղացմանը դեպի Սիջերկյական ծով: Մյուս կողմից, նա գիտի թե ինչպես է հարկ վարվել Վախական Թուրքիայի հայերի զգացմունքների հետ, դարեր հարստեամ օսմանյան բռնատիրությունից հետո, նրանք նվաճողներին կրնալունն իբրև իրենց հայրենիքի փրկիչների⁷¹: Այս և բուրքերի առջև կրկին հառնում է Հայկական հարցի ուրվականը: Հանգամանքներն այստեղ նրանց պարտադրում են. «դրական ճանապարհական միջոցները» պետք է մեկրնդմիշտ այս հայերի վերջը տան և այդ պետք է արվի առանց այլևս հապաղելու, մինչ ռուսների ներխուժումը հայկական նահանգներ: Ի դեպ, այդտեղ կա՞ն արդյոք հնարավոր վտանգներ, որոնց, հստակ արմատական լուծման, հարկ է հանդգնել դիմելու: Եթե գեներերի ճակատագիրն Օսմանյան կայսրության համար բարենպաստ լինի, որևէ մեկի հաշվեհաշիվում տալու հարկ չի լինի, եթե, ընդհանրապես, նա պատերազմից պարտված ելնի, Անտանտի համար այդևս հնարավոր չի լինի, փաստի առջև կանգնելու հետո, առանց հայերի՝ հարություն տալ Հայկական հարցին: Ձեռնալ վաշան խտտովանում է իր հուշերում. «... Այս պատերազմում մեր միակ նպատակն էր ձեռքագաղվել մեզ ճնշող բոլոր միջազգային պայմանագրովաժողովություններից»⁷²:

Ինչպես այդ մասին մեզ է վկայում բրիտանական արխիվներում պահպանված մի փաստաթուղթ, հիրավի Մարիլանդի մարտերից հետո էր, որ 1915 թ. հունվարի սկզբներին, երիտբուրքերի միջև գոմարված խիստ զտղանի մի ժողովի շրջանակում, վճռվեց Թուրքիայի հայերի ճակատագիրը: Միակ ներկայները՝ Թալեաթը, դ իկտոյը Բեհեդլին Շարիքը, Կոստանդնուպոլիսի ոստիկանապետ Իսմայիլ Ջամիլոսթը, դ իկտոյը Նազըմը և Ռազմական նախարարության քաղաքական ենթարամնի փոխտնօրեն, գնդապետ Սեյիին, երկարատև քննարկումից հետո ընդունում են «տաս հրամաններ», որոնց՝ անգլերենից թարգմանված բնագիրը մենք ստորև ներկայացնում ենք ամբողջությամբ⁷³.

1/ Հենվելով ՄԱԿ-ի 3-րդ և 4-րդ հոդվածների վրա, արգելել հայկական բոլոր ընկերությունները, ձեռքակալել այն հայերին, ովքեր անկախ այն բանից, թե որ պահին, գործել են կառավարության դեմ, արքայի նրանց այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Բաղդադը կամ Մոսուլը և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ նշանակման վայրում:

2/ Բռնագրավել գեներերը:

3/ Համապատասխան և պատշաճ միջոցներով գրգռել մահմեդականների հասարակական կարծիքն այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Վանը, Էրզրումը կամ Ադանան, որտեղ հավաստի է, որ հայերն արդեն արժանացել են մահմեդականների ատելությանը և հրահրել կազմակերպված կոտորածներ, ինչպես ռուսներն են վարվել Բաքվում:

4/ Այդ անելու համար, հենվել բնակչության վրա այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Էրզրումը, Վանը, Մամուրեթ-ույ Ազիզն ու Բիլիլար և կոտորածները կատարելու համար՝ կարգ ու կանոնը պահպանող գլխավոր ուժերն (ինչպես ժանդարմերիսն) այդտեղ օգտագոր-

71 Հմնո. Արամ Անդրեան, Արսոթի ճամբուն վերա՝ «Անրամունք», 30 X 1919, թիվ 32, էջ 320-321:

72 Djemal Pasa'nın hatıraları, op. cit., p. 274

73 PRO., FO 371/4172/31307 «Տաս հրամաններ» կոչվող այս բնագիրը հրատարակել է Լեոն «Թիլլըքահայ յնդավիտությունն գաղափարաբանությունը» գրքում (Փարիզ, 1935, հ. 1, էջ 153-154): Իբրև բնագիր նա հիշատակում է Կոստանդնուպոլսում յուր տեսնող «Անթրին բուր» օրաթերթը: Նրա թարգմանությունը, թեպետ ելնում է միևնույն անգլերեն սկզբնաղբյուրից, փոքր-ինչ տարբերվում է սեր թարգմանությունից:

ծել միայն առերևույթ, որս փոխարեն, այս նույն ուժերին հարկադրել միջամտելու մահմեդականներին գործուն օգնություն ցուցաբերելու համար այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Ադանան, Սվազր, Բյուսան, Իզմիլը և Ջմյուռնիան:

5/ Միջոցներ ձեռնարկել 50 տարին չբոլորած բոլոր տղամարդկանց, քահանաներին և դպրոցական ուսուցիչներին բնաջնջելու համար: Ջահել աղջիկներին և երևիսաներին բույ-
 յատրել ընդունելու խախտել:

6/ Տեղահանել նրանց բնտանիքները, որոնց կարող է հաջողվել ճողոպրել և այնպես վար-
 վել, որ նրանց յուրաքանչյուր կապ իրենց հայրենի երկրի հետ խզվի:

7/ Ելնելով այն բանից, որ հայ պաշտոնյաները կարող են լրտեսներ լինել, նրանց պաշտո-
 նանկ անել և կատարելապես գրկել պետական վարչառոյսանր ենթակա յուրաքանչյուր պաշ-
 տոնից կամ ծառայությունից:

8/ Բնաջնջել բանակում գտնվող բոլոր հայերին, այնպես, ինչպես այդ պատշաճ կհամար-
 վի. այս պետք է վստահվի գլխավորականներին:

9/ Ամենուր գործողությունը ձեռնամուխ լինել միևնույն պահին, որպեսզի պաշտպանողա-
 կան միջոցների դիմելու համար ժամանակ չհատկացվի:

10/ Հոգ տանել այս հրահանգների խիստ զաղտնի բնույթի մասին, որոնք պետք է հայտ-
 նի լինեն ոչ պակի, քան երկու կամ երեք անձանց:

Կայացնելով այս վճիռը, ՄԱԿ-ը տարբեր գլխավոր կառավարիչների մոտ՝ նահանգներ է ուղարկում գրավոր հրահանգներ տանող բանագնացների, որոնց բնագրերը պետք է իրեն վերադարձվեն՝ այնուհետև ոչնչացվելու համար⁷⁴, քանի որ կառավարության հանցավոր մտադրությունների մասին որևէ հետք չպետք է գոյություն ունենալ: ՄԱԿ-ի հրամանին բոլոր գլխավոր կառավարիչները չէ, որ տալիս են իրենց միանշանակ հավանությունը: Բանի որ Դ-խաբբեքիի նահանգի գլխավոր կառավարիչ Հասնի բեյը չէր կարող որևէ բանում հանդի-
 մանել իր իրավասության տակ գտնվող հայերին, նա հրաժարվում է նախատեսված հանցա-
 գործության մեղսակիցը դառնալուց և առաջինն է ներկայացնում իր հրաժարականը⁷⁵: 1915 թ. ապրիլի սկզբին նրան կառավարիչի Մոսուլի վալի և նորաթուխ երիտթուրք Ռեշիդ բեյը, ամ-
 բողջությամբ արդարացնելով այն հույսերը, որոնք կապվում էին նրա հայրենասիրական ջա-
 նադրության և խոշտանգումների ասարթեզում բանիմացության հետ: Հայկական այլ նա-
 հանգների գլխավոր կառավարիչները՝ Էլզարումի Հասան Թահսին բեյը, Մամուրեք-ուլ Ազիզի Սաբիթ բեյը, Բիթլիսի Մուստաֆա Աբդուլ Խալիդը, Վանի Ջուլեթ բեյը և Սվազի Մուամմեր բեյն անվերապահորեն տալիս են իրենց համաձայնությունը: Ինչ վերաբերում է Տրապիզոնի վալի, Ռ-իզեի նախկին մուրասարիֆ և Թալեթ բեյի հովանավորյալ Ջեմալ Ազմի բեյին, ապա նա իրեն կողսերի իբրև հավատարիմ կատարածու:

Քուրդ լրագրող և ազգայնամոլ Մևան Ջատե Բիֆարը. 1914-1918 թթ. անցքերի ուշիմ իրագրելիչը, իր հուշերում մեկնաբանում է ՄԱԿ-ի զաղտնի գործարքները⁷⁶: Այս առիվ նա հաշվետվություն է տալիս մի զաղտնի ժողովի մասին, ՄԱԿ-ի նստավայրում, Նուրուօսմանիե փողոցում, Բարձր Գ-ռան հարևանությամբ, որին Թալեթ բեյը կառավարել էր իր կուսակցու-
 քյան որոշ անդամների: Մասնակիցներից յուրաքանչյուրը մեկը մյուսի ետևից ելույթ է ունե-
 նում հիշեցնելու համար հայ ժողովրդի բնաջնջման անհրաժեշտության մասին՝ հանուն

74 PRO., FO 371/4172/31307.

75 Տե՛ս «Նոր կենսի», 27. I. 1919, քիվ 100:

76 Հմմտ. Mevlanzadeh Rifat, Türkiye İnkilabının ıcyüzü, Alep, 1929. Աշխատությունը լույս է տեսել արաբատա
 րորբերնով. մենք կարողացել ենք օգտագործել հայերեն թարգմանությունը, որը լույս է տեսել «Օսմանեան
 յեղափոխութիւնը եւ նոր ծարերը» խորագրի ներքո (Beirut, 1938):

կայսրության փրկության: Մասնավորապես դժոխտոյն Նազըմը, Թուրքիայի ամբողջականության ջերմեռանդ պաշտպանը, մերժում է կլիսատ-պրաստ միջոցառումները. «... Եթե այս ոչնչացումը համընդհանուր և վերջնական չի լինելու, – ասում է նա վճռականությամբ լի, – շահավետության առումով, այն մեզ միայն տհաճություններ կպատճառի: Անհրաժեշտ է, որ հայ ազգն արմատախիլ արվի, որ մեր հողի վրա այլևս չմնա և ոչ մի հայ: Մենք այժմ պատերազմ ենք սկսում, մենք երբեք ավելի լավ առիթ չենք ունենա: Իրականացված փաստի շուրջ մեծ տերությունների միջամտությունները և բողոքները կարող են միայն անտեսվել և կարևորություն չեն ունենա: Այս անգամ հայերի ոչնչացումը կլինի համընդհանուր»⁷⁷:

Նվազագույնը համանման անտարբերությամբ դժոխտոյն Բեհեդդին Շաքիրը սատարում է այս առաջարկությանը և երիտթուրք առաջնորդն ավարտում է իր ելույթի եզրափակիչ մասը հետևյալ կերպ. «... Եթե մի թշվառ, ինչպիսին է Մովսեսը, մի թափառական, ինչպիսին է Հիսուսը և մի որք, ինչպիսին է Մահմեդը՝ յուրաքանչյուրը կարողացել է կրոն ստեղծել, ինչո՞ւ մեր նման մտավորականները չեն կարող ստեղծել Թուրանի կրոնը»⁷⁸: Օսմանյան կայսրության հայ ժողովրդի համատարած բնաջնջման հարցը Ջավիդ բեյի նախածեռնությամբ որվելով քվեարկության՝ արժանանում է միահամուռ հավանության: Այնժամ կազմվում է հարցին շատափույթ լուծում տալու համար համապատասխան միջոցներ որոնելու հանձնարարություն ստանձնող ժամանակավոր գործադիր կոմիտե՝ բաղկացած դժոխտոյն Բեհեդդին Շաքիրից, Ահմեդ Շուրբյուլից և դժոխտոյն Նազըմից: Որոշ ժամանակ անց, դժոխտոյն Բեհեդդին Շաքիրն այս առաջարկանքի համար կմտադրվի ներգրավել «Թեշքիլաթ-ի մահսուսեին»⁷⁹:

«Թեշքիլաթ-ի մահսուսե» հատուկ կազմակերպությունը հիմնադրվել է 1914 թ. հոկտեմբերին Էնվեր փաշայի խստաշունչ հրամանով⁸⁰: Հիլափի Ռ-ազմական նախարարից էր ելնում սպանության կամ ավազակության համար դատասպարտված քրեական կալանավորներին հավաքագրելու գաղափարը: Աթիֆ բեյից, դժոխտոյն Նազըմից և Կոստանդնուպոլսի անվտանգության կոմիտեի պետ Ազիզ բեյից կազմված մի հանձնաժողով պետք է վերահսկեր այս՝ ավելի շուտ հատուկ կորսուսի ձևավորմանը, որը դրվել էր կապիտան Սուլեյման Աքբերի բեյի հրամանատարության ներքո: Ռ-ազմական նախարարի կողմից զտտմի հրահանգներ էին ուղարկվել բանտերի վարչություններին, և սկսած 1914 թ. հոկտեմբերից, իրենց թեկնածությունը կամովին առաջադրած հազարավոր բանտարկյալներ ազատ արձակվեցին, այնուհետև՝ վերախմբավորվեցին և զինվեցին, ուղղություն վերցնելու համար դեպի պատերազմի տարբեր թատերաբեմեր: Կովկասի ռազմաճակատում իբրև առաջնորդ ունենալով դժոխտոյն Բեհեդդին Շաքիրին, չեթեներ կոչվող ավազակների այս հրոսակախմբերը, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 10-ից 15 անձից, սկսեցին ամայացնել մարտերի գոտում գտնվող հայկական գյուղերը: Սկզբնական շրջանում գործողության նպատակը վնասարարությամբ զբաղվելն էր և Ռուսական Անդրկովկասում ահաբեկչության մթնոլորտի պահպանումը⁸¹: Մակայն այս անկարգապահ «կամավորները», որոնք ծարավի էին կողոպուտի և սպանողի, գերադասում էին այդ գործողությունները կիրառել տարածաշրջանի խտրադասեր ու անպաշտպան բնակչության նկատմամբ, մի բան, որն ավելի դյուրին էր և վնասազերծ, քեև տեղական իշխանությունները դրա համար հանդիմանում էին:

77 Mevlanzadeh Rifat. op. cit., pp. 159-160.

78 Նույն տեղում, էջ 161-162:

79 Նույն տեղում, էջ 190-195:

80 Տես օսմանյան պաշտոնաթերթը՝ "Takvim-i Vakayi", 8. V. 1335 [1919], N 3543; "Takvim-i Vakayi", 13. V. 1335 [1919], N 3547.

81 "Takvim-i Vakayi", N 3543.

Չնայած դժուար էր Բեհեդիին Շաքիրը տեսել էր այն ամենը, ինչ չեթեմներն էին անում, քաջատեղյակ էր իրագործված վայրագություններին, այդուհանդերձ, այդ նա է, որ խորհուրդ է տալիս տեղահանված հայերի բնաջնջումը վստահել կողուպոլիցների այս հրոսակախմբերին: Նրա առաջարկությունն քննարկվում է առանց առարկության: Սկսած 1915 թ. փետրվարի 19-ից, քրեական կալանավորները, որոնք մինչ այդ ազատ էին արձակվում միմիայն Ռազմական նախարարի հաստիկ հրամանով, պաշտոնապես ազատվելու էին համաձայն կառավարության որոշման՝ զինվորագրվելու համար չեթեմների խմբերին, որոնց հանձնարարված է կոտորել հայ տեղահանվածներին: ՄԱԿ-ի և չեթեմների միջև կնքված գաղտնի համաձայնագիրն արգելում է վերջիններիս յուրացնել տեղահանվածներից հավիշտակված ավարը, որի մի մասը պետք է ուղարկվեր Կոստանդնուպոլսում գտնվող ՄԱԿ-ին, իսկ մյուս մասը՝ քաժանվել չեթեմների միջև⁸²:



Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի բնաջնջումը որոշ հեղինակներ վերագրում են տեղահանության վատ կազմակերպված միջոցառումների չարաբաստիկ և անխուսափելի հետևանքներին: Նրանք ժխտում են երիտթուրքերի կողմից կարգադրված և ղեկավարված, մարդկության դեմ ուղղված այս հանցանքների կանխամտածվածության գաղափարը: Այս հեղինակները, մնան ձևով պատմական փաստերի խեղաբյուրմանը նպաստելու հետ մեկտեղ, մեծ վստահությամբ են վերաբերվում քե՛ղաբաստանի օսմանյան կառավարության և քե՛ղավելի ուշ, 1919-1922 թթ. գործող իշխանությանը մոտ գտնվող ուշ շրջանների տարածած ստերին, որոնք նպատակ ունեն «փաստացիորեն» աղբարացնելու ՄԱԿ-ի հանցավոր գործողությունները: Բայց ինչպես մենք արդեն վերը հիշատակեցինք, հաճախ այնպես է պատահում, որ այս բոլոր եռանդուն քարոզիչները հակասում են միմյանց: Իրադարձությունների ինչպիսի՞ վարկած են նրանք մեզ առաջարկում:

Օսմանյան ազգային վեհաժողովից սկիզբ առնող, 1919 թ. հրատարակված մի գրքույկ, մերկացնում է օսմանյան իշխանությունների դեմ ուղղված՝ Թուրքիայի հայ ժողովրդի «համընդհանուր խռովությունը», որը սանձազերծվել է պատերազմի սկզբից ի վեր: Դրանում կարելի է, մասնավորապես, կարդալ.

«Այն բանից հետո, երբ կայսրական կառավարությունը կարգադրեց անցկացնել զուրահավաք⁸³, բազմաթիվ վայրերում հայերը, համաձայն հրահանգների և կոմիտեների ղեկավարությամբ, ապստամբեցին... Ռուսական, անգլիական և ֆրանսիական ոսկով կաշառված քաղաքային գործակալները, զուրահավաքի սկզբից ի վեր սիռվեցին նսահանգներում, որոնց հետևեցին Կոստանդնուպոլսից և արտասահմանից ուղարկված բազմաքանակ հռչակագրերն ու հրահանգները»⁸⁴:

Հրամանատար Լալշեկը, 1914 թ. պատերազմից հետո հրատարակած աշխատության

82 Տե՛ս Մարտիայի մի մասնեղական երեկի անձնավորության հայտարարությունը բուրբալեզու, տավարածավալ, Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Մարախ» օրաթերթին, որը 1918 թ. դեկտեմբերի 14-ին արտատպել է «վերջին լուր» հայկական քերթը (թիվ 1444):

83 1914 թ. օգոստոսի 3-ին:

84 Evénements insurrectionnels qui ont nécessité le déplacement des Arméniens. Constantinople, 1919, p. 3. Տե՛ս նաև Enver Bolayir (éd.), Talât Paşa'nın hatıraları, İstanbul, 1946, p. 63; The Turco-Armenian question. The Turkish point of view. Constantinople, 1919, pp. 75-76; Ahmed Rüstem Bey, La guerre mondiale et la question turco-arménienne, Berne, 1918, pp. 58-59.

մեջ⁸⁵, դրոյված, անկասկած, այն դարաշրջանի կարոտից, երբ ֆրանս-թուրքական հարաբերություններում տիրող ամուր համաձայնությունը ֆրանսիային քույրատրու՞մ էր ըստ իր հայեցողության կարգավորել Օսմանյան կայսրության ֆինանսները, պաշտպանում է միևնույն բեզը, առանց այն հիմնավորելու նվազագույն իսկ փաստով.

«... Հայ կամավորներն անցնում էին թուրքական սահմանները, զինվորագրվելու համար ռուսների կողմից կազմակերպված հայկական գումարտակներին: Պարտիզանները հաճախակի գրոհում էին գնդից ետ մնացած զինվորականներին և թուրքական գումակները⁸⁶: Աշխատանքային պարիսկից և զինձառայությունից հրաժարվելու համընդհանուր բնույթ էր կրում, երբեմն՝ զինված ճանապարհով»:

«Թուրքական հեղափոխության» պատմաբան, պիոնիերներ Յուսուֆ Հիքմեթ Բայուրը հետևում է նույն խոսքերին: Ըստ Բայուրի՝ պատերազմի սկզբից ի վեր, հայ հեղափոխականները համագործակցել են թշնամու հետ: Հայերը խողովություն են բարձրացրել ռազմաճակատի թիկունքում, խանգարելով բանակի մատակարարմանը, զրոհելով մահմեդական բնակչության վրա և սպանելով մահմեդական ժողովուրդներին⁸⁷: Բայց որտե՞ղ են պատմաբան Բայուրի արդարացուցիչ փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության հրահրիչին՝ Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին, ապա հետմահու յույս ընծայված հուշերում՝ Մուշի, Բիթլիսի և Վանի վիլայեթների հայերին նա մեղադրում է օսմանյան կառավարության դեմ զանգվածային ապստամբության մեջ՝ Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ընդգրկվելուց ի վեր⁸⁸:

«Հայկական խռովության» այս բեզը, որի ամսաբլի շուրջ հայ ժողովրդի ոչնչացման պատասխանատուները, ինչպես նաև նրանց բուն պաշտպանները, նույնիսկ համաձայնության չեն հանգում, մերսնչում է հետևյալ անհերքելի փաստերի անտեսմամբ.

1/ Հայերը, ինչպես և 20-ից 45 տարեկան օսմանյան բոլոր հպատակները, օսմանյան բանակ են զորակոչվել 1914 թ. օգոստոսի համընդհանուր զորահավաքի ընթացքում: Փոքրաթիվ են նրանք, ովքեր ի վիճակի լինելով վճարելու ազատագրման հարկը, շրջանցել են զինվորական ծառայությունը: Սյալխով, ո՞վ կարող էր իրականացնել այդ կարծեցյալ խռովությունը:

2/ Նախ և առաջ՝ օսմանյան զորքերը և դիվիզիոն Բեհեդլին Շաքիի կրոսակախմբերն էին, որոնք պատերազմի սկզբից ի վեր, առաջիններն են ասպատակել ռուսական տարածքը և այնտեղ վայրագություններ ի կատար ածել:

3/ 1914 թ. դեկտեմբերի կեսերից մինչև 1915 թ. հունվարի սկիզբը սևած Սարիղամիշի ճակատամարտը տեղի է ունեցել բուն ռուսական տարածքում: Միայն Սարիղամիշում օսմանյան պարտությունից հետո էր, որ ռուսական զորքերը Կովկասի ռազմաճակատում դառնում են դրոյության տերն ու տնօրենը:

4/ Թուրքիայի հայերի՝ Բեռլինի վեհաժողովից հետո հաճախակի խնդրու առարկա դարձած ճակատագիրը, ՄԱԿ-ի ղեկավարների կողմից վճռվել էր Սարիղամիշի պարտության հաջորդ օրվանից ի վեր:

Բացի այս պատմական խորհրդածություններից, ավելացնենք, որ Թուրքիայի դաշնակից գերմանական և ավստրիական կամ այն ժամանակ չեզոք՝ ամերիկյան դիվանագիտական գործակալների գեկուցագրերը, որոնց մենք կանդադառնանք ավելի ուշ, հայկական որևէ խռովության մասին չեն հիշատակում: Մյուս կողմից, դեռևս 1915 թ. հունվարի կեսերին, օս-

85 Հմն. M. Larcher. La Guerre turque dans la Guerre mondiale. Paris, 1926. p. 395.

86 Հրամանատար Լաշեբր ոչ մի ճշգրտում չի անում:

87 Հմն. Yusuf H. Bayur, Türk İnkilâbı tarihi, Ankara, 1957. vol. III, partie 3, p. 7.

88 Տե՛ս Falât Pasa'nin hâtırları, İstanbul, 1946, p. 63.

մանյան կառավարությունը չէր առարկում հայերի հավատարմությունն օսմանյան գահին: Հեռու լինելով նրանց որևիցե դավաճանության մեջ հանդիմանելու զաղափարից, պաշտոնական մի հաղորդագրությունում, որն արտատպվում է Կոստանդնուպոլսի մամուլում, նա ամենադրվատական արտահայտություններն էլ տեղում նրանց հասցեին.

«... Այն նվիրվածությունը, որը Թուրքիայում ապրող մեր հայ հայրենակիցները չեն զրանում ի հայտ բերել Օսմանյան կայսրության հանդեպ և զնահատելի եռանդը, որը նրանք, ի թիվս այլ օսմանյան տարրերի, դրսևորում են՝ արդարացնելու համար ընդհանուր հայրենիքն ազատագրելու նպատակով արված բոլոր անհրաժեշտ գոհաբերությունները, հայտնի են նյութական ապացույցներով»⁸⁹:

Այդուհանդերձ, Թալեաթն իր հուշերում, որոնք պետք է տպագրվեին նրա մահից հետո, գրում է նույն ժամանակաշրջանի մասին. «Գլխավոր հրամանատար Էնվերը հրավիրեց հայ պատրիարքին»⁹⁰ և կառչեց հայերի անհավատարմությունից, որոնք բուրքերի ակնկալությանը պատասխանում էին զենքի ձեռքին նրանց գյուղերը գրոհելով և պաշտոնյաներին սպանելով... Եթե այդ իրավիճակը համընդհանուր բնույթ ստանար, կառավարությունը հարկադրված կլիներ կիսատելու ամենաաղաժան միջոցները»⁹¹: Եվ այսպես, հարկ է հավատ ընծայել Թալեաթ բեյի հիշողությանը⁹², թե այն բանին, ինչը Կոնիայի հայ պրելատին է գրել անձամբ Ռ-ազմական նախարար, Գլխավոր շտաբի պետ Էնվեր փաշան մի նամակում, որն արտատպվել է Կոստանդնուպոլսի գերմաներեն ծավալուն «Օսմանիչեր յոյո» օրաթերթում⁹³:

«Ես ափսոսում եմ, որ չեմ կարողացել Ձերդ մեծության հետ գրուցել Կոնիա կատարած իմ վերջին այցելության ընթացքում: Այդուհանդերձ, ես ստացել եմ այն նամակը, որը դուք բարեհաճել եք ինձ հղել և որով ինձ պարուլում եք գովեստներով: Ես դրա համար ձեզ շնորհակալություն եմ հայտնում և օգտվում եմ առիթից, ասելու, որ պատերազմի քատերաբեմում օսմանյան հայ զինվորները բարեխղճորեն են կատարում իրենց պարտքը, որը ես կարողացել եմ հավաստել իբրև ականատես:

Ես ձեզ խնդրում եմ, այսպիսով, հայ ազգին փոխանցել իմ գոհունակության և երախտագիտության արտահայտությունը, որը բոլոր ժամանակներում հայտնի է եղել իր կատարյալ նվիրվածությամբ օսմանյան կայսրական կառավարությանը»:

(Ստորագրված է.) Էնվեր,
Ռ-ազմական նախարար,

Կայսրական բանակի գլխավոր հրամանատարի տեղակալ:

Ճշգրտենք նաև, որ Էնվեր փաշան, 1915 թ. վետրվարի վերջերին, Թուրքիայի հայերի պատրիարք Ն {որին սրբազնություն}ն Ջավենի հետ ունեցած իր միակ գրույցի ընթացքում, գովեստներ է շռայլում հայ զինվորների նվիրվածության կապակցությամբ: Ռ-ազմական նախարարը նույնիսկ պատմում է, որ Սարիղամիշի ճակատամարտում իր կյանքը փրկել է Հովհաննես անունով մի հայ սերժանտ, որին մարտի դաշտում նա շնորհել է կապիտանի աստիճան⁹⁴: Արդյոք նա այդպես կվարվե՞ր, եթե հայ զինվորներին, ինչպես այսօր որոշ իսլամավառ ազգայնամուլներ, պատասխանատու համարել III բանակի պարտության համար⁹⁵:

89 "Le Jeune Turc", 18 janvier 1915.

90 Ն {որին սրբազնություն}ն Ջավենի:

91 Tâlat Pasa'nin..., op. cit., p. 63.

92 "Osmanischer Lloyd", 26 Februar 1915, N 55.

93 Le rapport secret du Dr Johannes Lepsius sur les massacres d'Arménie. Paris, 1918, p. 184; Ջավենի արքեպս., նշվ. աշխ., էջ 96:

94 Տե՛ս Sadi Koças, op. cit., p. 174; S. R. Sonyel, Yeni belgelerin isigi altinda Ermeni tehcirleri // "Belleten", Ankara, 1972, N 141, p. 38.

Իրականում, օսմանյան կառավարությունը չէր պատրաստվում հարկադրական և բռնագրուսիկ ձևով ձեռնամուխ լինելու այն բանին, ինչը ոմանք ցանկություն կունենան ներկայացնել իբրև խառնիճադանց բռնություններ: Նա սառնասրտորեն է սպասում պատեհ տոլթի, հայերի՝ երկարատև հասունացած դատավճռի համատարած իրականացմանը ձեռնամուխ լինելու համար: Չնայած իշխանությունների զաղտնապահությանը, նահանգներում տեղ գտած վայրագություններին վերաբերող տեղեկությունները հասնում են Կոստանդնուպոլիս: Էրզրումի և Վանի նահանգներում օսմանյան գորբերի և «համալիտ» զնդերի կողմից իրագործված բռնությունները, կողոպուտները և կոտորածները հրահրում են բազմաթիվ հայերի փախուստը Կովկաս: 1915 թ. հունվարի վերջերին, կարելի էր արդեն հաշվել 40304 հայ և 8061 ասորի տարագիրները⁹⁵:

Կիլիկիայում ևս միջադեպերը բազմապատկվում են: Հայ կանանց հանդեպ բուրբ ժանդարմների գործադրած բռնությունները համբերությունից դուրս են բերում բնակիչներին⁹⁶: Իշխանություններն անում են ամեն ինչ՝ խռովություն հրահրելու համար և Ջեյթունի հայերը, որոնք միշտ կարողացել են պահպանել կիսանկախ վիճակը, 1915 թ. փետրվարին մի բանագնաց են ուղարկում Կովկասի փոխարքային, նրան տեղեկացնելու, որ «Ջեյթունի 15000 հայեր պատրաստ են ապստամբելու օսմանյան կառավարության դեմ, եթե Անտանտը կարողանա իրենց ապահովել զենքերով և ռազմամթերքներով»⁹⁷: Ջեյթունի հայերի այս վճռականությունը դաշնակիցների կողմից գրեթե հաշվի չի առնվում, որոնք բացառել են Կիլիկիայում դեսանտի Լաի դուրս բերումը:

1915 թ. մարտի սկզբի և ապրիլ ամսի միջև, արտասահմանում հաստատված հայ անձինք դաշնակիցներին են ներկայացնում համանման առաջարկություններ: Նշանավոր բանաստեղծ Չուպանյանը գնում է Ռոր Օֆիս և գրուցում շտաբի անդամներից մեկի՝ լորդ Քլոքեննեթի հետ: Երե դաշնակիցները նախատեսում են դեսանտի Լաի դուրս բերում Կիլիկիայում, վստահեցնում է նա, ապա նրանք կկարողանան հույս տաձել հայ կամավորների օգնության հետ: Չուպանյանի տարերային քայլը, որը համարվում է ժամանակավրեպ, մերժվում է: Երբ դաշնակիցների նավատորմերը Դարդանեյի առջև դժվարություններ են կրում, Արևելյան Սիջերկրականում երկրորդ ռազմաճակատ բաց անելու մասին խոսք լինել չի կարող:

1915 թ. մարտի սկզբին ՀՀԳ-ի ղեկավարներից մեկը՝ Վարանդյանը, Սոֆիայում Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի դիվանագիտական առաքելություններին է ներկայանում և ելույթ ունենում միևնույն ոգով. «Երե ֆրանսիական և անգլիական կառավարությունները վճռեն զրավել այս շրջանը (Կիլիկիան) և դեսանտի Լաի դուրս բերում իրականացնեն կամ Ադանայում, կամ Ալեքսանդրեոսի ծոցում, ինքը երջանիկ կլինի, եթե իր հայրենակիցներին բույստրվի մասնակցել ազատագրական այդ գործին»⁹⁸:

Այդուհանդերձ, նշենք, որ Սոֆիայում Մեծ Բրիտանիայի նախարար, սյր Հենրի Բաքս-Այրոնսայդի առջև Վարանդյանի կատարած քայլը, պարուրված էր փոքր-ինչ զանազանվող երանգով, ինչպես այդ ցույց է տալիս հետևյալ հատվածը.

«... Հայկական կոմիտեն սույնով հենց նոր անգլիական շտաբին առաջարկեց քսան հազար (20000) մարտից բաղկացած մի լեգեոն, այն պարսզայի դեպքում, երբ Անգլիան նպա-

95 Հմմտ. ԱԳ-Օ, նշվ. աշխ., էջ 113-114:

96 Տե՛ս The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce. New York and London, 1916, p. 480.

97 Տե՛ս ստորև թիվ 10 փաստաթուղթը:

98 Տե՛ս ստորև թիվ 16 փաստաթուղթը (հավելված 1): Սոֆիայում Ռուսաստանի նախարար Սավինսկոյն հանձնված հանրագրի մասին տե՛ս Ա. Օ. Հարությունյան, Կովկասյան ռազմաճակատը 1914-1917 թթ., Խրգվինոպոլսում ուսերենից, Թեհրան, 1977, էջ 347:

տակահարմար գտնի Կլիկիայում (Փոքր Հայք)՝ կամ Ալեքսանդրետում, կամ Մեսսինում դեսանտ ափ դուրս բերել: Այդ դեսանտը կկազմավորվի անգլիական սպաների հրամանատարության ներքո: Մեք կամավորները գտնվում են մեծ մասամբ Բոստոնում և Նյու Յորքում: Նրանցից ոմանք գտնվում են նաև Բալկաններում և Եգիպտոսում:

Հենց որ Կլիկիայան դուրս կորզվի օսմանյան տիրապետությունից, հայ ազգը կցանկանա, որ իր պատմական հայրենիքի այս շրջանը դրվի Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատի ներքո (Մեծ Հայքը հավանաբար կանցնի ռուսական պրոտեկտորատի ներքո)՝:

Վարանդյանի քայլերն ավելի մեծ հաջողությունների չեն հասել, քան մյուսներիը:

1915 թ. մարտի սկզբին, դաշնակիցների առջև այս զանազան երևելի հայ անձանց նախաձեռնությունները տարօրինակ ձևով համընկնում են, նույն շաբաթվա ընթացքում, որոշ հույների՝ Արենքում գտնվող դաշնակիցների դիվանագիտական ներկայացուցիչների առջև կատարած համանման քայլերին: Այս հույները հավաստում են, որ 1800 կամավոր հույներ արդեն պատրաստ են մեկնելու և նրանց թիվը կարող է հասնել 100000-ի, եթե դաշնակիցները դեսանտի ափ դուրս բերում նախաձեռնեն Փոքր Ասիայի ափում¹⁰⁰:

Արդյոք գոյություն ունե՞ր հայ-հունական դաշինք՝ կեղերիչի լուծը միասնաբար քորպիելու համար: Այս փաստը հավաստելու համար մենք մինչ այժմ չենք կարողացել ապացույցներ գտնել, բայց այս քայլերի համընկնումը՝ նույն շաբաթվա ընթացքում և միևնույն հիմունքներով, լիովին տեղիք է տալիս կարծելու, որ երկու ժողովուրդների որոշ ներկայացուցիչների կողմից նախապես համատեղ որոշում էր կայացվել:

Ամեն դեպքում, դաշնակիցներին արված այս առաջարկությունները հանգեցնում են հետևյալ եզրակացությունների.

1/ Չեյրունի հայերը չեն ունեցել կամ լավագույն դեպքում՝ շատ քիչ զենք են ունեցել օսմանյան իշխանությունների դեմ ապստամբելու համար:

2/ Եվրոպայում կամ Սիացյալ Նահանգներում ապրող հայերն ամեն բանից առաջ նախատեսում են Արևմուտքում հաստատված՝ հայկական ժագում ունեցող կամավորների զինվորագրումը: Թուրքիայի հայերի մասնակցությունը փոքրագույն իսկ ձևով չի հիշատակվում:

3/ Դաշնակիցները ձեռնպահ են մնում հայերին խռովության դրդելուց: Նրանք ավելի շուտ նրանց դրանից ետ կպահեն:



Այնժամ, երբ Արևելքում պատերազմի զարգացման նկատմամբ ուշիմ՝ արտասահմանի հայերն իրենց ծառայություններն են առաջարկում դաշնակիցներին, թվում է, թե Գարդանելում հաջողությունը մի ճամբարից մյուսն է անցնում: Դաշնակիցների նավատորմերին հաջողվում է բազմաթիվ ծովային միավորումներ ափ դուրս բերել Գալիպոլի թերակղզում, սակայն օսմանյան լավագույն զորքերի հետ պայքարում, որոնք ամեն ինչից գատ գտնվում էին գերմանացի սպաների հրամանատարության ներքո, նեղուցներն անցնելու նրանց բոլոր փորձերը ձախողվում են:

Կովկասի ռազմաճակատում, օսմանյան զորքերը, որոնք զգալիորեն թուլացել էին Մարի-իլամիչի պարտությունից ի վեր, դժվարությամբ են կարողանում դիմակայել ռուսական հարձակմանը: Յարի գորքերը, որոնց ուղեկցում էին հայ կամավորների ստորաբաժանումները,

99 PRO., FO, 371/2484/37609.

100 Դեկիրը՝ Դեկասեն, Արենք, 4-ր մարտի 1915 թ. Հ. քիվ 80 // Bibliothèque Nationale, Papiers de Millerand, carton 16

հյուսիսում բափանցում են Տրապիզոնի նահանգ, կենտրոնում՝ Էրզրումի նահանգ և հարավում առաջ են ընթանում դեպի Կան քաղաքը:

Անխուսափելի վտանգին ի տես, որն Արևելյան Անատոլիայում աստիճանաբար պարզորոշ է ի հայտ գալիս, Թալեսը բեյր տեղեկացնում է Վանզենհայմին, որ Հայկական հարցից վերջնականապես ազատագրվելու «նպատակահարմար պահը» վրա է հասել¹⁰¹: Նախնական կարգադրություններն այդ են ազդարարում.

1/ Կայսրության բոլոր ժողովուրդներին կոչ է արվում իշխանություններին հանձնել իրենց տրամադրության տակ գտնվող զենքերը: Բնականաբար, հրամանն ուղղված է հայերի դեմ¹⁰²:

2/ Սկսած 1915 թ. մարտից, օսմանյան յուրաքանչյուր քաղաքացի չի կարող տեղափոխվել երկրի ներքին նահանգներում. առանց նախօրոք տեղական իշխանությունների «անցագիրը» ստանալու: Այստեղ ևս, չնայած միջոցառման համընդհանուր բնույթին, այն առաջին հերթին վերաբերվում է հայերին:

3/ Նահանգների և մայրաքաղաքի միջև բոլոր հստակացությունները գրեթե ընդհատվում են. Կոստանդնուպոլիսի՝ այսուհետև մեկուսացված հայկական պատրիարքությունը կատարելապես անտեղյակ է այն ամենին, ինչ կատարվում է Ասիական Թուրքիայի նահանգներում, եթե բացառենք հազվադեպ ճանապարհորդներից ստացվող աննշան տեղեկությունները¹⁰³:

4/ Գրաքննությունը, որն ամենադժվար ձևով է բռնանում մամուլի վրա, կանոնավորապես վերահսկվում է Բարձր Դռան կողմից:

Այժմ նախագիծը կարող է ի կատար ածվել:

Սկսած 1914 թ. նոյեմբերից, ինչպես մենք վերը տեսանք, տրվել էր ռազմաճակատին սահմանամերձ Էրզրումի հայկական գյուղերից բնակչությանը դուրս բերելուն առնչվող հրաման, որին պիմել էին բուն Էրզրում քաղաքում հաստատվելու համար իրենց օջախները լքելու կոչով: Դժվար չէ պատկերացնել այս հայ գյուղացիների տառապանքը, որոնց օր-օրի, սաստիկ ծնունդը, պարտադրվում էր այս բռնի տեղահանությունը: Եվ, այդուհանդերձ, դա հայ ժողովրդի բնաջնջման ծրագրի խիստ դժգույն նախապատկերն էր, որը փոքր անց, սկսած Ջեյթունի հայերի տեղահանությունից, ընդունելու էր իր բուն տեսքը: Դրա նախապատրաստություններն արվել էին բավական գաղտնի ու ճարպիկ ձևով՝ Կոստանդնուպոլիս և այլ նահանգների հայերի կասկածները չարթնացնելու համար: 1915 թ. ապրիլի 8-ին, Ջեյթուն քաղաքը, որը հայտնի էր իր բնակիչների անսանձելի բնավորությամբ, գրավվում է օսմանյան զորքերի անսպասելի գլուխով: Դիմելով նախ՝ խորամանկության, այնուհետև՝ ուժի, հայերից հափշտակում են նրանց զենքերը, ապա՝ ձերբակալում երևելի անձանց. ոմանք անմիջապես կախվում են, ուրիշները բանտ նետվում՝ ավելի ուշ մահապատժի ենթարկվելու համար: Բոլոր կանայք և տասներկու տարեկանից փոքրահասակ երեխաներն ուղարկվում են Կոնիա՝ այնտեղ մահմեդական րադամսերում բաշխվելու համար¹⁰⁴: Ինչ վերաբերում է տղամարդկանց, նրանք արտրվում են դեպի Դեր-Էզ-Ջորի անապատային շրջան, աղետալի պայմաններում, առանց գոյության որևէ միջոցի, իվանդությունից, սովից ու հյուժվածությունից կործանման դատապարտված: 1915 թ. ապրիլի վերջերին, ամենաուշը մայիսի սկզբներին, Ջեյ-

101 Վանզենհայմը՝ Բեռլին-Հոլվեգին, Պերս, 2-ր փետրվարի 1915 թ., թիվ 269 // Politisches Archiv des Auswärtigen Amtes, Bonn (այսուհետև՝ ԱՎԱ), Türkei 183, Bd. 36.

102 Տե՛ս Գ. Կոլիս, Պալաթեան, Հայ Գողգոթան: Դրուագներ հայ մարտիրոսագրույենէն, Վիեննա, 1922, հ. 1, էջ 60; The Treatment... op. cit., N 68, 82, 94, 122.

103 Ջավեն արքեպս., նշվ. աշխ., էջ 79-80:

104 Տե՛ս ստորև թիվ 49, 51, 55 փաստաթղթերը; The Treatment of Armenians... op. cit., pp. 484-489; Dr. Johannes Lepsius, Deutschland und Armenien 1914-1918, Potsdam, 1919, pp. 42-45, 49-50.

թունը և նրա գյուղերն ամբողջությամբ դատարկվում են իրենց հայ բնակչությունից: 1915 թ. սկզբներին, կայսրական «հրովարտակի» հիման վրա, Ջեյթուն քաղաքն արդեն անվանավորվում է Սուլեյմանլի: Հայերի բոլոր հողերը և կացարանները փոքր անց վերաբաժանվելու են Մսկեդոնիայի մահմեդական տարագիրների միջև¹⁰⁵: Մյ ըսանի ամխար բավական եղավ, որպեսզի քաղաքում վերացնեն այն ամենը, ինչը կարող էր հիշեցնել նրա հայկական ծագման մասին. եկեղեցիները և վանքերը հիմնահատակ կողոպտվեցին, դպրոցները վերածվեցին գորանոցների կամ դրանցում տեղավորվեցին եկվորները: Հայերի դարավոր Ջեյթուն քաղաքն աննշան ժամանակամիջոցում վերափոխվեց մահմեդական քաղաքի:

Վանի հայերի դեմ յշնամական կտրուկ շրջադարձ է տեղի ունենում Պարսկաստանի ռազմաճակատից վաղի Ջեյթունի վերադարձից հետո: Դրա առաջին նշանն ապրիլի 16-ին, անձամբ վալիի կողմից պատրաստված ծուղակում, ՀՀԳ-ի առաջնորդներից մեկի և նրա երեք ընկերների սպանությունն է¹⁰⁶: Հաջորդ օրը, ապրիլի 17-ին Վանի հայ պատգամավոր Վաճաճյանի ձեռքակալությունը նպաստում է Վանի հայկական շրջաններում տազնապի աճին: Ջեյթունի և նրա օգնականների միջև փոխանակված գաղտնի քրթակցությունները հափշտակվում են հայերի կողմից և նրանց համար բացահայտում իշխանությունների՝ իրենց հանդեպ ունեցած մտադրությունները¹⁰⁷: Իրագեկ դառնալով այն բանին, ինչը պետք է մնար իբրև պետական գաղտնիք, հայերը հստակ պարզում են կայսրացում. նրանք պատրաստվում են, ինչպես գրում է Վանի ամերիկյան միսիոներ և իրավարձությունների ակամատես Գրեյս Քնափիլը, «որքան հնարավոր է, քանկ վաճառել իրենց կյանքը»¹⁰⁸: Եվ հենց այսպես է 1915 թ. ապրիլի 15-ին սկսվել Վանի հայերի «խռովությունը», որը ոմանց աչքերում կարդարացնի 1915 թ. մեծ հանցագործությունը:

Քաղաքի ներսում դիմադրություն կազմակերպելը շատ դժվարին չէր: Իրենց քաղամասերում բարիկադներով պատսպարված, հայերը քաջաբար պաշտպանվում էին: Բայց այլ իրավիճակ էր տիրում նահանգի գյուղերում, որտեղ օսմանյան զորքերը հայ գյուղացիներին կոտորում են հազարներով¹⁰⁹: Վենետիկացի մի սպա, որն այդ ժամանակ օսմանյան բանակում ծառայում էր իբրև Հայաստանում գտնվող օսմանյան ուժերի գլխավոր տեսուչ, հաղորդում է իր հուշերում. «... 1915 թ. ապրիլի 21-ին, «Է՛լեղիե ռեիսին»¹¹⁰ ղեկավարում է բռնությունները Վանում: Նա ինձ պատասխանեց, որ ինքը միայն ի կատար է ածում նահանգի գլխավոր կառավարչից ստացած անսքող իրամանները, այն է՝ ոչնչացնել նահանգի տասներկու տարեկանից բարձր ողջ արական բնակչությանը»¹¹¹:

Չնայած Ջեյթոն բեյի կրկնվող գրոհներին, Վանի հայերը մեկ ամիս շարունակ, մինչ 1915 թ. մայիսի 19-ին ռուսական զորքերի ժամանումը Վան, դիմադրում են: Առանց սպասելու հետևանքներին, Ջեյթոն բեյը և նրա մակալավիկներն իրենց հյուսակախմբերի հետ ճողոպտում են Բիթլիս՝ իրենց շարագործություններին այդտեղ հետամուտ լինելու համար, տանելով իրենց ետևից Վանի մահմեդական բնակչությանը: Այս մահմեդականներից ոմանք, 6000-ի սահմանում, կզնան մինչ Կենտրոնական Ամատոլիայում գտնվող Բուրդուր, որտեղ կտեղա-

105 Տես ստորև բիվ 49 փաստաթուղթը: “La Defense”, Constantinople, 18/19. V. 1916, N 431; J. Lepsius, op. cit., p. 61.

106 Խոսքը վերաբերում է ՀՀԳ-ի անդամ Իշխանին և նրա երեք ընկերներին: Տես Ա-Գ-Օ, նշվ. աշխ., էջ 272:

107 Հմմտ. Ա-Գ-Օ, նշվ. աշխ., էջ 394-403:

108 Grace H. Knapp, The Mission at Van in Turkey in War time, New Jersey, 1915, p. 14; The Treatment..., op. cit., p. 34.

109 1915 թ. մարտին, Վանի նահանգի գյուղերում ռուսական զորքերը հայտնաբերում են օսմանյան զինվորների սպանած 55000 հայ գյուղացիների մարմիններ. տես Memoires de l’Ambassadeur Morgenthau, Paris, 1919, p. 259.

110 «Քաղաքապետ»:

111 Rafael de Nogales, Four years beneath the Crescent, London, 1926, p. 60.

վորվեն տեղահանված հայերի տներում¹¹²:

Միևնույն ժամանակ, երբ Ջևդեթն էր ջանում ի կատար ածել Վանի հայերին տեղահանելուն և ոչնչացնելուն վերաբերող ՄԱԿ-ի հրամանները, Մամուրեք-ույ Ազիզ նահանգի գլխավոր կառավարիչ Սաբիթ բեյը ևս սկսել էր կենսագործել, բայց շատ ավելի ճկուն ձևով, ՄԱԿ-ի ծրագիրը: 1915 թ. փետրվարի և մայիս ամսի սկզբների միջև, նա զենք պահելու պատրվակով Խարբերդում ձեռքակալել տվեց գրեթե 400 երիտասարդ հայ մտավորականներին¹¹³: Նրանց տներում խուզարկություններ կատարվեցին, որոնք որևէ արդյունքի չհանգեցրին: Մահմեդական երևելի անձինք հայ համայնքին խոստանում են երաշխավորել ամենքի անվտանգությունը՝ զենքերը հոծարակամ իշխանություններին հանձնելու դիմաց: Առաջարկությունն ունենում է իր ազդեցությունը: Բոլոր զենքերը հավաքվում են և հանձնվում վալիին, որը շնայած այս ամենին, թվում է, քե չի բավարարվում¹¹⁴: Կալանավորներն ազատ չեն արձակվում և հաջորդ օրն անհետ կորչում են: Երեք օր անց, ողջ հայ բնակչությունը տեղահանվում է... Արդյոք դեռևս հնարավոր է, այս տարբեր օրինակներից հետո, անվարանորեն պնդել, որ «տեղահանությունը» կամ համաձայն որոշ պատմաբանների էլ ավելի նրբաճշակ մեղմասությամբ՝ «տեղավախությունը», օսմանյան կառավարությանն էր պարտադրվում որպես ռազմական անհրաժեշտություն:

ՄԱԿ-ի առաջնորդներից մեկի՝ «Թեշքիլար-ի մահսուսեյի» ղեկավար, դժոխտոյր Բեհեդյիև Շաքիլի՝ Էրզրումի վալի Թահսին բեյի միջոցով Խարբերդում ՄԱԿ-ի պատասխանատու լիազոր ներկայացուցիչ Նազլմ բեյին 1915 թ. ապրիլի 21-ին հղած ծածկագրված հեռագիրը մերկացնում է այն ոգին և մտադրությունը, որոնք իշխում էին Թուրքիայի հայ ժողովրդի տեղահանության հարցում 1915-1916 թթ.: Այս հեռագիրը, որը վերաբերում է Խարբերդի իրադարձություններին և որի արժանահավատությունը չի կարող ամենևին կասկածի ենթակա լինել¹¹⁵, օսմանյան կառավարության կանխամտածված գործունեության անառարկելի ապացույցն է: Մենք ստորև ամբողջությամբ արտատպում ենք դրա քարզմանությունը.

«Ձեր նահանգի հայերը, որոնք տեղահանվել են, արդյոք ոչնչացվել են: Այլ վտանգավոր անձինք, որոնց աքսորի և վտարման մասին դուք մեզ տեղեկացնում եք, արդյոք բնաջնջվում են: Թե՞ նրանք պարզապես տեղահանվել են մեկ այլ տարածաշրջան: Հստակորեն մեզ տեղյակ պահեք. իմ ելքայր»:

Դժոխտոյր Բեհեդյիև Շաքիլի այս հեռագիրը պարունակում է շատ այլ հայտանիշներ.

1/ Հայերի տեղահանությունն արդեն սկսվել էր շատ ավելի վաղ, քան ռուսական զորքերի մուտքը Վան (մայիսի 19-ին). սա մերկացնում է Նեյրին գործերի նախարար Թալեաթ բեյին, որն իր հանցանքներն արդարացնելու համար, ավելի ուշ կգրի. «Օսմանյան կառավարությունը վճիռ կայացրեց հայերին տեղահանելու մասին ռուսական զորքերի մուտքից հետո, որոնց ուղեկցում էին Վանի հայկական ստորաբաժանումները, որտեղ նրանք իրազորվել են մահմեդական բնակչության դեմ ուղղված ցանկացած բնույթի վայրագություններ»¹¹⁶:

2/ Նրա անմիջական և կոպիտ խոսելաճը դիմակազերծ է անում սովորական դարձած ձևակերպումների՝ «տեղահանության» կամ «տեղավախության» կեղծավորությունը, որոն-

112 Հմն. Ali Fuat Türkgeldi, Gödrüp isittiklerim, Ankara, 1951, p. 176.

113 The Treatment of Armenians... op. cit., p. 259.

114 Նույն տեղում:

115 Այն հիքավի տեղ է գտել երիտարքերի մեղադրական արձանագրության մեջ, որն ընթերցվել է նրանց դատավարության բացման ժամանակ 1919 թ. ապրիլի 27-ին. տես օսմանյան պաշտոնաթերթը՝ "Takvim-i Vakayi", 5. V. 1335 [1919], N 3540.

116 Sbu Talât Pasa'nin hatıraları, İstanbul, 1946, p. 63; Verité sur le mouvement révolutionnaire arménien et les mesures gouvernementales, Constantinople, 1916, p. 10.

ցով օսմանյան կառավարությունը ջանում է բողոքիկե հայ ժողովրդի բնաջնջումը:

*
* *

Հայերի կողմից Վանի պաշարմանը դիմակայելու լուրն ավելի արագ հասնում է Կովկաս, քան Կոստանդնուպոլիս: Հենց որ այն հայտնի է դառնում Էջմիածնում, հայոց կարողիկոս Գևորգ V-ը դաշնակից և չեզոք տերությունների ղեկավարների առջև քայլեր է ձեռնարկում, որպեսզի Թուրքիայի իր համակրոնակիցների դեմ ուղղված վայրագությունները դադարեցվեն: Ադերսելով Իտալիայի քաղաքների և նախագահ Վիստրի միջամտությունը, հայոց եկեղեցու առաջնորդը հույս է տածում, որ նրանց չեզոքությունն էլ ավելի կօժանդակի օսմանյան կառավարության որոշումներին¹¹⁷: Միաժամանակ, Գևորգ V-ը հեռագրում է Պողոս Նուբար փառային և նրան՝ իբրև Հայկական ազգային պատվիրակության նախագահի, հանձնարարում գործել լավագույն ձևով հանուն Թուրքիայի հայ ժողովրդի պաշտպանության¹¹⁸:

Ջեյրումի հայերի դեմ ուղղված հալածանքների լուրը Կոստանդնուպոլիս է հասնում 1915 թ. մարտի վերջին: Այնուհետև՝ տեղ են հասնում Մաթաշի և Լբզրումի գյուղերին վերաբերող լուրերը, քայց հստորոված փաստերն այնքան սարսափելի էին և պատումներն այս առթիվ այնքան աներևակայելի, որ դրանց արժանահավատությանը դժվարությամբ են հավատ ընծայել, մասնավորապես, իրադարձությունների ծավալին վերաբերող հարցում: Մակայն 1915 թ. գարնանը կրքերը շատ էին բոբբոբված մայրաքաղաքում, որտեղ Դարդանելի պատերազմը, որը բարենպաստ էր մերթ դաշնակիցների, մերթ բուրքերի համար, ծնունդ էր տալիս յուրաքանչյուր բնույթի լուրերի և կեղծ մեկնաբանությունների: Մայրաքաղաքի քրիստոնյաներն իրագեկ էին օսմանյան կառավարության իրարանցմանը և Լաքի-Շեհիլ տեղավորվելու նրա նախապատրաստություններին: Համայնքների պատրիարքությունները նույնիսկ հրահանգ էին ստացել պատրաստ լինել Կոնիա մեկնելու համար: Այս օրերին, գրում է Ամտոնյանը¹¹⁹, մայրաքաղաքի քրիստոնյա ժողովուրդների ցնծությունն այնքան վրովեցուցիչ էր, որ ոստիկանապետ և Թալեարի աջ ձեռք Բեդրի բեյը գրում էր.

«Թող, որ քրիստոնյաները չկարծեն, թե մենք պատրաստվում ենք բողոքել Կոստանդնուպոլիսը: Այն օրը, երբ մենք կրողները քաղաքը, նրանց համար սգի օր կլինի»¹²⁰:

«Ամենքն օրեցօր սպասում էին,– շարունակում է Ամտոնյանն իր հուշերում,– քրիստանական նավատորմի ժամանմանը Բոսֆորի ջրերը, և քրիստոնյաները նույնիսկ գրագ էին գալիս, թե արդյոք դաշնակիցների ուժերը ներս կմտնեն՝ Սուրբ գատիկից առաջ, թե հետո՝ Սուրբ-Սոֆիայի հունական մայր տաճարում հանդիսավոր պատարագ մատուցելու համար»¹²¹, որը 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավումից ի վեր, սուրբան Սեհմեղ Նվաճողի կողմից վերածվել էր մզկիթի:

Ուստի, որոշ ժամանակ անց, օսմանյան իշխանությունները փոխեցին իրենց դիրքորոշումը հայերի հանդեպ: Ապրիլի 8-ին, Թալեար բեյի կողմից հրավիրված հայ պատրիարքը մեծապես զգաց իր մեկուսացումը, չնայած այն բոլոր հավաստիացումներին, որոնք ստացավ օսմանյան կառավարության բարյացակամ մտադրությունների շուրջ¹²²: Ի դեպ, 1915 թ. գար-

117 Հմմտ. «Արարատ», մայիս, 1915, էջ 172-174:

118 Նույն տեղում, էջ 175:

119 1915 թ. կոստանդնուպոլսի փրկված հայ լրագրող:

120 Ա. Անդրեան, Արտի ճամբուն վերա // «Արամունդ», 11-ը սեպտեմբերի 1919, թիվ 25, էջ 408:

121 Նույն տեղում: Տե՛ս նաև Գ. Կոխի, Պապեան, նշվ. աշխ., էջ 63:

122 Ջավեն արքեպս., նշվ. աշխ., էջ 93-94:

նանր, հայերի դեմ ուղղված հարածանքները, թվում է, թե սովորական էին: Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանության քարգմանիչ Սերաֆիմովի՝ 1915 թ. ապրիլի 10-ի (հիվն) տ (ոմարով)) թվակիր ճեպագիրը, որն ուղղված է Սազունովին, մեզ դրանում հավաստիացնում է.

«... Իշխանությունների բռնությունները չափ ու սահման չունեն: Քրիստոնյա, մասնավորապես, հայ բնակչությունը, ենթարկվում է ցանկացած բնույթի հարածանքների, հաճախ խոշտանգումների: Չինձառայության կանչելու պատրվակով, նրանք բռնում են փողոցներում, եկեղեցիներում, խանութներում, տրամվայներում և այլուր՝ ... առանց նրանց ժամանակ տալու իրենց զործերը կարգավորելու կամ հարազատներին մախազուշացնելու համար»¹²³:

Կոստանդնուպոլսի 250 երևելի հայերի կամայական և հանկարծառու կալանքից հետո էր միայն (որոնք ձերբակալվեցին իրենց բնակարաններում, բոլորը միևնույն պահին, 1915 թ. ապրիլի 24-ից 25-ի գիշերը)¹²⁴, որ պատրիարքությունը և մայրաքաղաքի հայկական համայնքը, ցնցված ի հայտ են բերում կառավարության բացահայտ թշնամանքը, առանց կռահելու, այդուհանդերձ. նրա չարտնի դիտավորությունների: Բանտարկված անձանց թվում էին հոգևորականներ, օսմանյան խորհրդարանի պատգամավորներ, թվիչներ, պրոֆեսորներ, դատապաշտպաններ, հայ քաղաքական կուսակցությունների պատասխանատու գործիչներ, առևտրականներ, ինչպես նաև մի քանի անհայտ անձինք. որոնք, անկասկած, չարաբաստիկ սխալի գոհեր էին: ՀՀՂ-ի օրգան «Ազատամարտ» օրաթերթի շենքը, մինչ նրա վերջնական փակումը, դարձավ մանրակրկիտ խուզարկության առարկա: Հաջորդ օրը, բոլոր կալանավորները, բազմաթիվ ժանդարմների և ոստիկանների ուղեկցությամբ, գնացքով տեղափոխվում են մինչև Անգորայի մոտ գտնվող Սրճանքյո, որտեղ, համաձայն Ներքին գործերի նախարարության կողմից կազմված ցուցակի, բուժանվում են երկու խմբի: Այս խմբերից առաջինը տարվում է Ալաշի բանտ¹²⁵, երկրորդը՝ Չանդլլըլի բանտ¹²⁶:

Ներքին գործերի նախարարը որևէ բացատրություն չի տալիս այս ապօրինի ձերբակալությունների շուրջ: Մեկ գիշերվա ընթացքում այս անձանց անհետացումը ցույց է տալիս, այդուհանդերձ, որ կառավարությունն իր հարվածը նախապատրաստել էր վաղուց ի վեր:

Չավեն պատրիարքի գլխավորությամբ հայկական մի պատվիրակություն գնում է Ներքին գործերի նախարարի մոտ: Թալեսաթ բեյը համաձայնվում է, որ չկա և ոչ մի յուրջ հանցանշան, ինչպես ինքը նախապես կարծել էր, առ այն, թե ձերբակալված անձինք պետության դեմ դավադրություն են կոտրել¹²⁷: «Անմեղ» կալանավորները, ձևականորեն հավաստիացնում է նա պատրիարքին, ազատ կարձակվեն ամենակարճ ժամանակամիջոցում: Սակայն փոքր անց, Թալեսաթի մեղմացուցիչ խոսքերը վիճարկվում են Ռազմական նախարար-

123 Генцинд армян в Османской империи. Сборник документов и материалов. Пол. ред. М. Г. Персияна, Ереван, 1966, с. 248.

124 Ապրիլի 24 25-ին տեղի ունեցած ձերբակալությունների թիվը տատանվում է: Համաձայն հայր Պարսյանի, այն անցնում է 220-ից. տես «Հայ Գողգորան», Վիեննա, 1922, էջ 82: Վանգենիայք գտնում է, որ այն 400-ի սահմանում է:

Ապրիլի 24/25-ի առաջին հայ կալանավորներից՝ կոտորածներից մազապործ եղան հագիվ 30-ը. տես «Արածմունք», 1-ր փետրվարի 1919, թիվ 3, էջ 41:

125 Ալաշի բանտի խմբում կային 91 անձինք: Նրանց թվում կարելի է հիշատակել Ալմունուն, Խաժակին, Ռուբեն Զարդարյանին, Սարգիս Սրնատյանին, դիոկոտի Տաղավարյանին, Լտոմ Յարձանյանին, Գեղամ Բարսեղյանին:

126 Չանդլլըլի կալանավորների թվում էին՝ հայր Կոմիտասը, հայր Պարսյանը, Դանիել Վարուժանը, Տիրան Քեյեկյանը, Արամ Անտոնյանը, Քեչյանը:

127 Վանգենիայք՝ Բեռլին-Հոլբեյհին, Պերա, 30-ր ապրիլի 1915 թ., թիվ 267 // AwA., Türkei 183. Bd. 36.

յության՝ 1915 թ. ապրիլի 29-ի պաշտոնական հաղորդագրությամբ, այն մերկացնում է բուրքերի նկատմամբ Կովկասի և հայկական նահանգների հայերի տաժամ թշնամանքը, որն ուղակիորեն սերմանվել էր Եվրոպայում հաստատված կոմիտեների կողմից՝ իրենց համակրոնակիցների շրջանում ապստամբություն հրահրելու նպատակով¹²⁸: Օսմանյան կառավարությունն այս խորամանկ մեղադրանքով հետապնդում է երկու նպատակ. մի կողմից՝ արդարացնել, հարվածից հետո, ըստ էության, սահմանադրական հաստատությունների ոտնահարումը, մյուս կողմից՝ ի լուր ամենքի հայտնելով ոմանց դավաճանության մասին, անվանարկել հայկական տարրին ընդհանուր առմամբ և նրան ենթակա դարձնել մահմեդական ժողովրդի ատելությանն ու հետապնդմանը:

Անշուշտ, Կոստանդնուպոլսի հայկական համայնքի վերնախավի կալանավորումը մայրաքաղաքի դիվանագիտական շրջաններում տեղիք է տալիս տարբեր մեկնաբանությունների: Հանրահայտ թրքամետ Վանգենհայմը, փաստերն իր կառավարությանը հաղորդելով, ընդգծում է, որ համաձայն շրջող յուրերի, հայկական եկեղեցիներում ու տներում հայտնաբերվել են ռումբեր, պայթուցիկ նյութեր և ռազմամթերքներ, բացի դրանից, ճշգրտում է Գերմանիայի դեսպանը, «ապրիլի 27-ին, սուլթանի գահակալության տարելիցի օրը, հայերը ծրագրում էին ահաբեկչական հարձակումներ գործել Բարձր Դուռն և իսսարակական այլ շենքերի վրա»¹²⁹:

Իրենց կողմից, չեզոք երկրների՝ Միացյալ Նահանգները, Իտալիայի և Բուլղարիայի դեսպաններն օսմանյան կառավարության առջև հանդես են գալիս բուրքներով: Սաիլ Հալիմ փաշան, Էնվեր փաշան և Թալեաթ բեյը միասնաբար խոստանում են ամերիկյան դեսպան Մյուզենթաուին, որ համատարած կոտորածներ տեղի չեն ունենա և ձեռքակալված հայերից նրանք, ովքեր դաշնակցական կուսակցության անդամ չեն, կարճ ժամանակից ազատ կարձակվեն¹³⁰:

Իրականում, իրենց քաղամասերում խրամատավորված հայերի դիմադրությունը Վանում՝ երիտթուրքերին բացառիկ առիթ է տվել՝ հայերի հանդեպ կիրառված հանցագործություններին օրինականության տեսք հաղորդելու համար: Արդյոք վերջիններս չե՞ն համարձակվել զենքի դիմելու «գրասիրտ» կառավարության զինվորների դեմ: Իբրև ապստամբներ, նրանք արժանի էին պատժի:

Ասիական Թուրքիայում պաշտոնավարող ամերիկյան, հունական և գերմանական դիվանագիտական գործակալների վկայություններն ու զեկուցագրերը հակասում են օսմանյան իշխանությունների պնդումներին այս ապստամբության շուրջ, որի իրական լինելը դեռևս կարիք ունի ապացուցման: Բերենը պարզապես Օսմանյան կայսրության բուն դաշնակիցների՝ գերմանական դիվանագիտական գործակալների թղթակցություններից մի քանի քաղվածքներ:

Անձամբ Վանգենհայմը, որի թրքամետ զգացմունքներն ընդգծելու հարկն այստեղ կա, արդեն 1915 թ. մայիսի 6-ին տեղեկացնում էր Վլիխելմշտրասսեին Էրզրում քաղաքի 200 հայերի ձեռքակալության և նահանգի գյուղերում ապրող հայերի տեղահանության մասին: Իշխանությունները, նշում է նա, տեղահանվածների տներում տեղավորում են Կովկասի տարագիր մահմեդականներին¹³¹:

128 Տե՛ս ստորև թիվ 21 փաստաթուղթը:

129 Վանգենհայմը՝ Բեռլին-Հոլվեզին, Պերս, 30-ր ապրիլի 1915 թ., թիվ 267 // AwA., Türcei 183, Bd. 36.

130 Մորզենթաուն՝ պետական քարտուղարին, Կոստանդնուպոլիս, 30-ր ապրիլի 1915 թ., չ. թիվ 614, գաղտնի // National Archives, RG 59, 867.4016/59.

131 Վանգենհայմը՝ Արտաթին գործերի նախարարությանը, Պերս, 6-ր մայիսի 1915 թ., չ. թիվ 1063 / AwA., Türcei 183, Bd. 37.

«Կռռավարության նպատակը, – գրում է Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռոյսերը Վանգենհայմին 1915 թ. մայիսի 10-ին, ի դեպ, 1915 թ. մայիսի 14/27-ի տեղահանությանը վերաբերող օրենքից շատ առաջ, – հայերի ոչնչացումն է»¹³² բոլոր մարզերում: Բոլոր հարուստ, մտավոր կարողությունների տեր կամ ազդեցիկ հայերը պետք է հեռացվեն, որպեսզի այլևս և ոչ մի հոտ հովիվ չունենա»¹³³:

Էրզրումի հյուպատոս Շնոյբեր-Ռիխտերը 1915 թ. մայիսի 15-ին հեռագրում է Կոստանդնուպոլսում գտնվող Գերմանիայի դեսպանին. «Շրջակա գյուղերից հայերը վտարվել են և ուղարկվել քիկոնքային գոտի: Բնակչությունն, այսպիսով, խիստ անհանգիստ է»¹³⁴: Նույն օրը, գերմանական հյուպատոսը մի երկար ճեպագրով Վանգենհայմին իրազեկ է դարձնում Էրզրումի նահանգի հայերի տանջալից կացությանը, ոչ մի ակնարկ չանելով որևէ ապստամբության մասին¹³⁵:

1915 թ. մայիսի 18-ի հեռագրում, այն է՝ կրկին նախքան տեղահանությանը վերաբերող՝ 1915 թ. մայիսի 27-ի օրենքի երևան գալը, Ադանայում Գերմանիայի հյուպատոս դոկտոր Բյուզեն, ինչպես նաև Հալեպի ու Էրզրումի նրա գործընկերները, կայսրական դեսպանությանը նախապես տեղեկացրեց «հարյուրավոր հայկական ընտանիքների արտոման և քաղաքի մասին անձանց ձերբակալության» մասին¹³⁶: Ինչպես և իր գործընկերները, դոկտոր Բյուզեն չի հիշատակում ապստամբական գործողության մասին:

Հայկական ապստամբություն տնդի չի ունեցել, սակայն ամենայն անկողմնակալությամբ հարկ է ընդունել, որ պատերազմի սկզբից է վեր, հայերը ձգտում էին տեսնել դաշնակիցների հաղթանակը: Արդյոք դա կարո՞ղ էր այլ կերպ լինել. Հայ ժողովրդից, այնպիսի մի պետության գործի օգտին, որը գերիշխանության վեց դարերի ընթացքում նրան միայն հետապնդել է, կողոպտել և կտորել, «հավատարմություն» և «նվիրվածություն» պահանջող օսմանյան ղեկավարների այս դատողությունը խիստ տարօրինակ է: Ամեն դեպքում, Մորգենթաուի կարծիքն այսպիսին է.

«... Երեսուն տարվա ընթացքում այս դժբախտներից հարյուր հազարավորների կտորելուց, նրանց կանանց և աղջիկների անարգելուց, նրանց աներևակայելի ձևով կողոպտելուց և խոշտանգելուց հետո, բուրբերն, այնուամենայնիվ, հավակնում էին նրանց ամենանրբանկատ «հավատարմությանը»¹³⁷:

*
**

Սկսած 1915 թ. ապրիլի կեսերից, դաշնակիցները կաթողիկոս Գևորգ V-ի, արտասահմանում հաստատված հայերի և իրենց բուն տեղեկատվական ծառայությունների կողմից պարբերաբար տեղեկացվում են Թուրքիայում հայերի նկատմամբ սոսնձազերծված հալածանքների և կոտորածների նոր ալիքի մասին: Ինչպե՞ս կասեցնել օսմանյան այս նոր հանցանքները, որոնք հավելվում են պատերազմական ժամանակներին բնորոշ սարսափներին:

Ռուսաստանը, որը Կովկասի ռազմաճակատում պատերազմական գործողությունների սկզբից ի վեր օգտվել է հայկական չորս ստորաբաժանումների աջակցությունից, պատ-

132 Բնագրում՝ «Vernichtung».

133 J. Lepsius, Deutschland und Armenien 1914-1918, Potsdam, 1919, p. 66.

134 Նույն տեղում, էջ 71:

135 Նույն տեղում, էջ 68-71.

136 Նույն տեղում, էջ 73:

137 Mémoires de l'Ambassadeur Morgenthau, op. cit., pp. 255-256.

րաստվում է նախաձեռնությունն իր ձեռքը վերցնել: Ռուսական Արտաքին գործերի նախարար Սազոնովը դաշնակիցների նախադարձերի խորհուրդներին առաջարկում է մամուլում հրապարակել օսմանյան իշխանությունների այս նոր վայրագությունները խտրազանող մի համատեղ ծանուցագիր¹³⁸: Ֆրանսիայի և Անգլիայի ընդունելությունը բարեհաճ է. բայց հարկ եղավ բանակցությունների մեկ ամիս¹³⁹, մինչ վերջնական բնագրի նախապատրաստումը և Անտանտի խոշոր քերթերում դաշնակիցների կոլեկտիվ ծանուցագրի լույս ընծայումը¹⁴⁰: Մերկացնելով կոտորածները հայկական մահանգներում, դաշնակիցները նախագուշացնում են, որ իրենք վերահիշյալ հանցանքների համար պատասխանատու կհամարեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում:

Ամերիկյան կառավարության միջնորդությամբ, այս ծանուցագրի մեկ օրինակը հանձնվում է մեծ վեզիր Սալիկ Հալիմ փաշային¹⁴¹: Կոստանդնուպոլսում, կառավարական միջավայրում, դաշնակիցների նախագուշացումն ընդունվում է ծայրահեղ դժկամությամբ: Այժմ, երբ կապիտուլյացիաները չեղյալ են հայտարարվել, երիտթուրքերը ոքի է մեկի նախագուշացումների կամ խորհուրդների կարիքը չունեցող՝ կայսրության միահեծան տնօրեններն են և այսպիսով, իրենց հպատակների հետ ըստ իրենց հայեցողության վարվելու հարցում ազատ են: Ինչո՞ւ է այդքան Անտանտը դեռևս հավակնում իրենց քրիստոնյա հպատակների հովանավորի պահվածքին: Սալիկ Հալիմ փաշան չի ջանում Մորգենթաուից քաբցնել իր վրդովմունքը և զայրույթն այն հարցում, որ դաշնակիցներն անձամբ իրեն են պատասխանատու համարում հայերի հանդեպ դրսևորվող վերաբերմունքի համար, որոնք, այնուամենայնիվ, մի՞թե դա ճշմարիտ չէ, օսմանյան հպատակներ են¹⁴²: Դաշնակից տերությունների արձագանքն ի չիք է դարձնում Հայկական հարցը գաղտնի ձևով կարգավորելու շուրջ Թալեաթ բեյի հույսերը, որովհետև, եթե թուրքական իշխանությունները նահանգների և իշխանությունների միջև կտրել էին բոլոր հաղորդակցությունները, ապա այդ արվել էր. բացատրում է Մորգենթաուն, այն պարզամիտ հավատով, որ իրենք կարող էին իրենց ոճրագործությունն ավարտին հասցնել մինչ այն, երբ արտաքին աշխարհն այդ մասին որևէ բան կիմանար¹⁴³: Ներքին գործերի նախարարը, նույնիսկ եթե նրա քաղաքականությունը չի կարող այլևս գաղտնաբար շարունակվել, վճռականությամբ է լի վերջնագիծը հատելու հարցում. կշեռքի նժարին դնելով իր ողջ հեղինակությունը, նա խիզախում է պատմության առջև ստանձնելու Հայկական հարցը և հայերի ճակատագիրը մեկլնդմիշտ կարգավորելու մեծ պատասխանատվությունը: 1915 թ. մայիսի 26-ին Թալեաթ բեյը Սալիկ Հալիմ փաշայի համար պատրաստում է մի ծանուցագիր, որտեղ ՄԱԿ-ի ազդեցիկ գործիչը որոշակիորեն հանձ-

138 Հմմտ. ստորև բիվ 29, 32 փաստաթղթեր: Տե՛ս նաև *Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917*, Москва-Ленинград, 1935, том VII, часть 2, документ N 724.

139 Տե՛ս ստորև բիվ 32-38, 40 փաստաթղթեր:

140 Տե՛ս ստորև բիվ 41 փաստաթուղթը: Ինչ վերաբերում է մամուլում տպագրված այս ծանուցագրի ամբողջական բնագրին, տես "L'Écho de Paris", 25 mai 1915, N 11240: "L'Intransigeant", 25 mai 1915, N 12733: "L'Humanité", 25 mai 1915, N 4055: "Le Temps", 26 mai 1915, N 19681. 1916 թ., իրեն պաշտպանելու համար, օսմանյան կառավարությունը տպագրել է, տալիս մի Կարմիր գիրք, որտեղ ամբողջությամբ ներկայացված է դաշնակիցների ծանուցագրի բնագիրը: Հմմտ. *Ermeni komitelerinin âmâl ve harekât-i ihtilâliyesi ilân-i mesrutiyetten evvel ve sonra*, Istanbul, 1332 [1916], p. 239; Esat Uras, op. cit., pp. 617-618.

141 Տե՛ս ստորև բիվ 41 փաստաթուղթը (ծանուցագրությունը):

142 Մորգենթաունի՝ պետական քարտուղարին, Կոստանդնուպոլիս, 18-ը հունիսի 1915 թ., Հ. բիվ 778 // National Archives, RG. 59, 867.4016/70.

143 Հմմտ. *The Tragedy of Armenia by the late American Ambassador at Constantinople Henry Morgenthau*, London, 1918, pp. 7-8.

նարարում է դրակոնյան միջոցներ կիրառել՝ կարծեցյալ հայկական հեղափոխությունը մարելու համար: Ներքին գործերի նախարարը վերստին կյանքի է կոչում Ասիական թուրքիայի հայկական նահանգներում և Կիլիկիայում բնակվող հայերի դեմ ուղղված իր մեղադրանքները. «համագործակցություն թշնամու հետ, խռովություն օսմանյան իշխանությունների դեմ, մահմեդական բնակիչների սպանություններ» և, հետևաբար, առաջարկում է սպասամբնեթի, ինչպես նաև Վանի, Բիրիսի, Էրզրումի և Կիլիկիայի որոշ մարզերի հայ բնակչության տեղահանությունը դեպի Մոսկովից հարավ ու Դեր-է-գ-Ջոր¹⁴⁴:

Իրականում, հայերի տեղահանությունն արդեն սկսվել էր, բայց Թալեաթը չի ցանկանում պատասխանատվությունը վերցնել միայն իր վրա: Օրենքի մի նախագիծ է ներկայացվում նախարարների խորհրդի հաստատմանը: Որոշ դժվարություններից հետո, Թալեաթը ստանում է խորհրդի համաձայնությունը և տեղահանությանը վերաբերող օրենքի բնագիրը, մի քանի օր ուշացումով, լույս է տեսնում օսմանյան «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթում¹⁴⁵:

Տեղահանության մասին օրենքն ուժի մեջ մտնելուց ի վեր, քիլասի դարձան ինչպես Փոքր Ասիայի և նույնիսկ Եվրոպական թուրքիայի (առանց բացառության բոլոր նահանգների), այնպես էլ Կովկասի ռազմաճակատին սահմանակից նահանգների բոլոր հայերը, որոնք բնակվելով ռազմական գործողությունների գոտում՝ առաջինները վտարվեցին: Օրենքն ազատություն էր բնձնում բարձրաստիճան կամ բարձր դիրք զբաղեցնող պատերիս և քաղաքացիական պաշտոնյաներին գործելու ըստ իրենց հայեցողության բոլոր նրանց դեմ, ովքեր «հայրենիքի շահերի համար» կհամարվեն կամ կդիտվեն «վտանգավոր»: Այսպիսով, սահմանադրական վարչակարգի օրոք, օսմանյան կառավարությունն իրեն թույլ է տալիս բաց անել և շրջել ժամանակակից պատմության ամենասև էջերից մեկը:

*
**

Դաշնակիցների՝ 1915 թ. մայիսի 24-ի ծանուցումն օսմանյան կառավարությանը կարող էր, անկասկած, նպաստել միայն իրադարձությունների ծավալման արագացմանն Արևելքում: Քանի որ գործն ընթացքի մեջ էր, Թալեաթ բեյը և նրա համագործակիցները նույնիսկ հարկ չեն համարում կառավարության մտադրությունները գաղտնի պահել: «Մեր թուրքյան օրերին, Ադրինոպոլիսի վերագրավումից հետո¹⁴⁶,– 1915 թ. մայիսի 12-ին Էրզրումի հայ պատգամավոր Վարդգեսին էր հայտնում Թալեաթը,– դուք բռնեցիք մեր կսկորդից և առաջադրեցիք հայկական բարենորոգումների հարցը: Ահա թե ինչու՞ ենք մենք օգտվում այն բարենպաստ իրավիճակից, որում գտնվում ենք, այդչափ ցկրուցան անելու համար ձեր ժողովրդին, որը 50 տարով ձեր գլխից դուրս կնետի բարենորոգումների յուրաքանչյուր գաղափար»¹⁴⁷: Մերք շարքը ավելի ուշ, 1915 թ. հունիսի 2-ին, Ներքին գործերի նախարարը ձեռքակալել է տալիս այդ նույն Վարդգեսին և Ջոհանեսին՝ երկու ամենահայտնի հայ պատգամավորներին, որոնց հետ, 1908 թ. հեղափոխությունից ի վեր, նա, այդուհանդերձ, պահպանում

144 St' u Yusuf H. Bayur, op. cit., vol. III, partie 3, pp. 37-38. Հմնտ. նաև Richard G. Hovannisian, Armenia on the road to independence, Berkeley and Los Angeles, 1967, p. 50.

145 St' u "Takvim-i Vakayi", 19. V. 1331 [1^{er} juin 1915], N 2189. Ինչ վերաբերում է տեղահանության օրենքի ամբողջական բնագրին, տե՛ս ստորև բիլ 48 փաստաթղթի հավելվածը: Հմնտ. նաև Esat Uras, op. cit., p. 617; J. Lepsius, op. cit., p. 78; Ermeni komitelerinin..., op. cit., pp. 237-238.

146 1912 թ. և 1913 թ. բալկանյան պատերազմների ժամանակ:

147 Le Rapport secret du Dr Johannes Lepsius..., op. cit., p. 220.

էր լավագոյն հարաբերություններ¹⁴⁸:

Դաշնակիցների հանդեպ, օսմանյան կառավարությունը խոսելաճի և վարքագծի նման խստություն հանդես չի բերում: Մայիսի 24-ի նրանց ծանուցագրի նկատմամբ նրա պաշտոնական արձագանքը ծայրահեղ զգույշ է: Չափավոր սահմաններում, օսմանյան կառավարությունն ամենահանդուգն ձևով հերքում է ամենաաղաղակող փաստերը, որոնք չէին կարող վրիպել ամենանվագ իրագրելի դիտորդի աչքից: Այնժամ, երբ տեղահանությունը և կոտորածները որոշ նահանգներում արդեն սկսվել են, որոնց մասին հունիսի 3-ից ի վեր, հյուպատոսական բուրսի կետերից¹⁴⁹ Վանգենհայմը ստանում է ամենատագնասպալից լուրեր, օսմանյան կառավարությունը, 1915 թ. հունիսի 4-ի հաղորդագրությամբ, որը հրապարակվել է նաև եվրոպական մամուլում, դեռևս հավակնում է հայերի հանդեպ բարյացակամության դրսևորմանը¹⁵⁰:

Հիշատակենք այդ հաղորդագրության մի հատված, որն արտատպվել է նաև Կոստանդնուպոլսում լույս ընծայված «Կարմիր գրքում».

«... Օսմանյան կայսրական կառավարությունը վերոհիշյալ հռչակագրում¹⁵¹ պարունակվող պնդումների և հավակնությունների առթիվ հանդես է գալիս ամենակտրական հերքումով:

Այն, որ կայսրությունում հայերի կոտորածներ են տեղի ունեցել, կատարելապես ստահող է: Փաստերն իրենց բուն լույսի ներքո ներկայացնելու համար, տրվում են հետևյալ լուսաբանումները:

Կայսրական իշխանություններն Էրզրումի, Դերջանի (Թերջանի), Ակնի, Սասունի, Բիթլիսի, Մուշի և Կիլիկիայի հայերի նկատմամբ որևէ միջոցառում չեն կիրառել, որովհետև վերջիններս ոչ մի այնպիսի արարք չեն գործել, որն իր բնույթով խախտեր կարգն ու հասարակական անդրդրը: Այս իրողությունն, ի վերջո, հայտնի է չեզոք տերությունների հյուպատոսներին: Այսպիսով, եռյակ միության կառավարությունների մեղադրանքները ստախոջ են»¹⁵²:

Այն, ինչն աչքի է գարնում, այս ելույթի հանդգությունն է, սակայն մեր քեմալի կապակցությամբ դրա բովանդակությունն ընդգծելը ևս հետաքրքրական է, քանզի Բարձր Դուռը բացահայտորեն ընդունում է, որ մինչ 1915 թ. մայիսի վերջերը հայերի հավատարմության հանդեպ բացարձակապես կասկած չի տածել և հավաստիացնում է, որ հայկական որևէ խռովություն տեղի չի ունեցել: Հաղորդագրության շարունակության մեջ նա միայն հավաստում է Ջեյրումի միջադեպերը, դրանք, ի դեպ, ձևավոխելով, որոնց առթիվ Բարձր դուռը պնդում է, թե շնորհիվ ձեռնարկված հասարակական կարգի պահպանման միջոցառումների, Ջեյրումի հայերի հեղափոխական շարժումը ճնշվել է՝ առանց որևէ կոտորածի իրականացման:

Բայց այդժամ, երբ «խռովությունը» ճնշված է, ինչո՞ւ է օսմանյան կառավարությունն անհրաժեշտ համարում տեղահանության մասին օրենքը: Ամենահավանական բացատրու-

148 Տե՛ս ստորև թիվ 48 փաստաթուղթը:

149 Հմմտ. J. Lepsius, Deutschland und Armenien 1914-1918, Potsdam, 1919, pp. 80, 82, 86.

150 Տե՛ս "Berliner Tageblatt", 7 Juni 1915, N 235; "Kölnische Zeitung", 7 Juni 1915, N 568; "Norddeutsche Allgemeine Zeitung", 7 Juni 1915, N 156; "Neue Freie Presse", Wien, 6 Juni 1915, N 18242; "Le Journal des Balkans", 11 juin 1915, N 304.

151 1915 թ. մայիսի 24-ի:

152 Aspirations et agissements révolutionnaires des comités arméniens avant et après la proclamation de la Constitution ottomane. Constantinople, 1917, p. 319. Սա օսմանյան Կարմիր գրքի ֆրասներն արգանսությունն է, որը 1916 թ. տպագրվել է "Ermeni komitelerinin..." խորագրի ներքո:

քյունը հանգում է այն բանին, որ երիտթուրք դեկավարները, չկարողանալով այլևս շարունակել իրենց ոճիրները ստվերում, ջանում են պատսպարվել կանոնադրական բնագրի ետևում, որն արդյունքում կհանգեցնի.

1/ Հայերի տեղահանության օրինակահանգսմանը:

2/ Տեղահանության ծավալը և տեղահանվածների քիվը նվազեցնելուն:

3/ Իրենց քույրավորքուն ընձեռելուն՝ առնչությամբ չունենալու արքայի ճանապարհին տեղահանվածներին սպասվող ճակատագրի հետ:

1915 թ. հունիսի 4-ի պաշտոնական հայտարարության հետևյալ հատվածը գուլիբ հայտարարությունների կանխագուշակումն է.

«Եթե որոշ հայերի պարտադրվում է տեղահանվել, ապա այն պատճառով, որ նրանք բնակվում են պատերազմական գոտում գտնվող վայրերում, որտեղ նրանց ներկայությունն ազգային պաշտպանության տեսակետից, այն բանի հետևանքով, ինչը նախորդում է, կայսրական կառավարությանը պատճառում է օրինական անհանգստություններ»¹⁵³:

Դիմելով ավելի կատարելագործված միջոցների, քան Աբդուլ Համիդը, որը հայկական նահանգներում կոտորածներն իրագործելու համար հենվում էր տեղական ամենահեղ պաշտոնյաների իրավասության և համայնքի «հավատարիմների» կրոնական ջանադրության վրա, երիտթուրքերը պատրաստվում են հայ ժողովրդի համատարած ոչնչացման նպատակով կյանքի կոչել նրա՝ համապատասխանաբար տեղահանությունը և կոտորածը կազմակերպող ամենամարման մի ծրագիր: Հայերին ոչնչացնելու և ողջ Փոքր Ասիան քուրքացնելու համար, օսմանյան կառավարությունն ունի բոլոր անհրաժեշտ հարթաթղթերը: Նախարարների խորհրդի գրեթե բոլոր անդամներն ու նահանգների գրեթե բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները հարում են ՄԱԿ-ի պանթուրքական շարժմանը կամ բաժանում նրա տեսակետները: Կառավարությունը միայն ՄԱԿ-ի կամքի արտահայտիչն է, որի իշխանությունն էլ տարածվում է ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ նահանգներում: Իրեն հավատարիմ մարդու Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության աշխատակից, դժկտոջը Մորյոտմաննին է, որ Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, արձակելով հայերի դեմ ուղղված ծրագրի իրագործմանը վերաբերող հույժ գաղտնի վերջին հրամանները, իրեն քույրատու է անօրինակ անամորթյամբ հայտարարել.

«Դուռը ցանկանում է օգտագործել համաշխարհային պատերազմի՝ իր ներքին թշնամիներից (ծագումով քրիստոնյա) վերջնականապես ազատագրվելու համար և հակված չէ քույր տալու, որ արտասահմանից ելնող պիվանագիտական միջամտությունն իրեն տարահանգի»¹⁵⁴:

Երբ օսմանյան կառավարության անիձյալ դեկավարն է հզոր ու հարգված դաշնակցին մման արտահայտություններով հասկացնել տալիս, որ մտադիր է գործել կատարյալ ինքնուրույնությամբ, որ անլիմաստ է միջամտել ի նպաստ նախանշված զոհերի, ինչպես՝ են կարող այսօր որոշ պատմաբաններ կամ դիվանագետներ ժխտել 1915-1916 թթ. հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճիրների կանխամտածվածությունը:

¹⁵³ Aspirations et agissements.... op. cit., p. 323; Ermeni komitelerinin..., op. cit., p. 242. Տե՛ս նաև Esat Uras, op. cit., p. 621.

¹⁵⁴ «Անդեմիսայնը՝ Բեռնան-Հոլվեզին, Պերս, 17-րդ հունիսի 1915 թ., քիվ 372 // AwA., Türkei 183, Bd. 37.

Սկսած 1915 թ. հունիսից, հայերի արտաքսումը դեպի Սյրիայի և Միջագետքի անսպասարկ, որը հավասարապես իրականացվում էր կոտորածների հետ մեկտեղ, ամբողջ քաղաքականացվում է կայսրության հայկական նահանգները: Այնժամ, երբ Բիթլիսի ու Դիարբեքի վիլայեթներում երևելի անձինք անսպասելիորեն ձերբակալվում են և առանց դատ ու դատաստանի զնդակահարվում կամ կախաղան քարձրացվում¹⁵⁵ այնպիսի մեծ կենտրոններում, ինչպիսիք են Սվազը, Էրզրումը, Տրապիզոնը կամ Մամուրեք-ույ Ազիզը, Վանի՝ բոլորովին վերջերս տեղի ունեցած իրադարձությունների վերհուշը մղում է ձեռնարկելու նախազգուշական միջոցառումներ՝ կանխելու համար հայերի հնարավոր դիմադրությունը: Մունետիկները, ինչպես նաև տեղական մամուլում հրապարակված պաշտոնական ծանուցումները, նախապես հայտնում էին հայերի «ժամանակավոր» տեղահանության մասին դեպի «երկրի ներքին նահանգներում» գտնվող չճշգրտված մի վայր: Փոխարենը, այն միջոցառումները, որոնք կարգավորում են նրանց մեկնումը, շարադրված են շատ հսկայականորեն և պարտադրվող որոշ պայմաններ արդեն վկայում են տեղահանվածների հսկողության, որոնք նախապատրաստվելու համար ունեն միայն մեկից հինգ օր, կառավարության ունեցած վատար մտադրությունների մասին: Այսպիսով, Տրապիզոնում «բեյաննամեյի ռեամի» կոչվող մի պաշտոնական ծանուցում, որն արտատպվել է ՄԱԿ-ի տեղական «Տրապիզոնիզ մեշվերեք» շաբաթաթերթում¹⁵⁶, մեզ մատնացույց է անում, որ.

1/ Բոլոր հայերը, բացառությամբ հիվանդների, պետք է մեկնեն ժանդարմների հսկողությամբ:

2/ Տեղահանվածներին չի բույլատրվում վաճառել իրենց ունեցվածքները, ոչ էլ դրանք վստահել մասնավոր անձանց:

3/ Այն հայերը, ովքեր մեկնելուց խուսափելու համար կբաքնվեն հարևանների մոտ, կհայտնվեն հետապնդվելու և գնվորական դատարանին հանձնվելու սպառնալիքի տակ, այնպես, ինչպես, ի դեպ, և նրանք, ովքեր նրանց կարող են օգնություն ցուցաբերել:

4/ Յուրաքանչյուր պարտավոր է, նախքան քաղաքը բողոքելը, իշխանություններին հանձնել իր տրամադրության տակ գտնվող բոլոր հրազենները:

5/ Նրանք, ովքեր կիրաժարվեն ենթարկվել և կդիմադրեն, ժանդարմների կողմից կսպանվեն տեղում:

Հայերն, այսպիսով, ընտրություն չունեն: Եթե նրանք դիմադրեն, կդիտվեն իբրև սպաստամբներ և կզնդակահարվեն կառավարության հրամանով, որը որոշել էր «երկրի փրկության» համար «նրանց ուղարկել Միջագետք»¹⁵⁷: Եթե նրանք համաձայնվեն աքսորին, գուրկ գեներալից և անապատվեն, ապա երիտարքը ղեկավար, դ՛ուկտո՛ր Բեհլուդին Շաքիրի հրամանատարության տակ գտնվող «Թեքրիլար-ի մահսուսե» հրոսակախմբերի ելուզակների համար կդառնան դյուրին ավար: Դժվար չէ պատկերացնել այս մարդկանց վիշտը և հատկապես սարսափը, որոնք այլ մարզերի հետ հաղորդակցությունների խզումից ի վեր, անտեղյակ են Վանում, Դիարբեքիում, Բիթլիսում կամ Ջեթրոնում տիրող իրադրությանը:

1915 թ. հունիսի 15-ից հուլիսի 18-ը, Էրզրում քաղաքի 30000 հայեր, հինգ քարավաններով, ոտքով, իսկ ավելի երջանիկները՝ սայերով, լքում են իրենց օջախները, գնալու համար մինչև

155 Տես ստորև թիվ 58 փաստաթուղթը (հավերժամ D): The Treatment of Armenians.... op. cit., pp. 25-27: Dr Johannes Lepsius, Deutschland und Armenien, Potsdam, 1919, pp. 82-83, 468-470.

156 "Trabzon'da Mesveret", 14 haziran 1331 [27 juin 1915], N 676.

157 Նույն տեղում:

600 կֆիլոմետր» ր տարածության վրա գտնվող Միջագետքի անապատը, որտեղ, ինչպես նրանց ասվում է, մինչ պատերազմի ավարտը, պետք է ապրեն հաշտ ու խաղաղ, օսմանյան «գրասիրտ» կառավարության հովանու ներքո: Բայց արդյոք նրանց վերադարձն իրոք նախատեսվե՞լ էր, երբ նրանց հարստություններին էլ ավելի լավ տիրանալու համար Էրզրումի վալի Թահսին բեյը նրանց ազնվորեն խոստանում էր, որ իրենց ունեցվածքներն ու ապրանքները կարող են գետեղել Օսմանյան կայսրական բանկի կնքված փոխադրամիջոցներում¹⁵⁸: Ճամապարհին դ ձկտոյ» ր Բեհեդդին Շաքիրի չեթեների կողմից կողոպտված և կոտորված¹⁵⁹, կենդանի մնացածների մի քանի խմբեր, կրելով ամենամեծ զրկանքները, կհասնեն Հալեպ և Մոսուլ¹⁶⁰:

Տրապիզոնում՝ վալի Ջեմալ Ազմի բեյը, քաղաքում ՄԱԿ-ի պատասխանատու լիազոր ներկայացուցիչ Նայի բեյը և պաշտոնաթուղ գինվորական բժիշկ Ռիզան՝ Տրապիզոնի չեթեների առաջնորդը, եռանդագին ջանքեր են գործադրում հանուն քաղաքի հայերի ոչնչացման, մոտավորապես 15000 մարդու: 1915 թ. հուլիսի 1-ին, տեղահանության համար նախատեսված օրը, քաղաքը պաշարվում է հազարավոր գինվորներով, որոնք շրջափակում են նրա դարպասները: Հայերի համախմբմանը զուգընթաց, տղամադուլի անջատվում են իրենց ընտանիքներից, այնուհետև՝ ժանդարմների կողմից ուղևեցվում քաղաքից դուրս, որտեղ խումբ առ խումբ սպանվում են¹⁶¹: Խուսափելու համար օսմանյան գինվորներից, բազմաթիվ հայեր ինքնասպան են լինում¹⁶²: Հարգարժան ընտանիքների երիտասարդ կանայք և երեխաները բաժանվում են մահմեդական ընտանիքների միջև, այնժամ, երբ հույներին կտրականապես արգելվում է հովանավորել կամ պահել հայ երեխաներին¹⁶³: Լաստանավերը ծանրաբեռնում են հարյուրավոր երեխաներով ու կանանցով, որոնց ժանդարմները պատրաստվում են արյուհետև տախտակամածից Սև ծովը նետել¹⁶⁴: Մեկ տարի անց, ռուսների կողմից քաղաքի գրավման օրը, ամերիկյան հյուպատոս Հեյզերը պետք է նշափակեր, ասելով, որ «հայ երեխաներին ծովն են նետել, ինչպես շնիկներին» և որ տասը տարի նրանց մեջ ապրած լինելուց հետո, ինքը երբեք չէր հավատա, որ բուրբերն ընդունակ են այդպիսի վայրագությունների¹⁶⁵: Տրապիզոնը ներկայացնում է սարսափի այնպիսի տեսարան, որ բոլորը կանայք, հուսահատ հայտարարում էին, որ եթե արևալի լքել է օսմաններին, ապա՝ հայերի հսնդեպ դրսևորած նյունց դաժանության համար¹⁶⁶: Ինչ վերաբերում է կազմակերպիչներին՝ Ջեմալ Ազմի բեյին և նրա հանցակից Մուստաֆային, ապա նրանք երկուսն էլ տիրանում են տեղահանվածների քանկարժեք իրերին՝ 3-ից 400000 լիլա արժողությամբ¹⁶⁷:

Սամսունի սանջակում տեղահանությանը նախորդած ժամանակամիջոցը նվազեցվում է

158 Հմմտ. «Նոր կենսը», 25. I. 1919, թիվ 98:

159 Էրզրումի վալի Թահսին բեյը հայերի կոտորածների պատասխանատվությունը կբարդի դ ձկտոյ» ր Բեհեդդին Շաքիրի օ օսմանյան III բանակի հրամանատար Սահմուդ Բյասմի փաշայի վրա. տես «Tasvir-i Efkar», 11. II. 1335 [1919], N 2649. Հմմտ. նաև օսմանյան պաշտոնաթերթը՝ «Taksim-i Vakayi», N 3540.

160 Տես ստորև, մասնավորապես, թիվ 54, 57, 561 փաստաթղթերը:

161 Տես ստորև թիվ 483 փաստաթուղթը: Հմմտ. նաև «Taksim-i Vakayi», 5. V. 1335 [1919], N 3540: «Taksim-i Vakayi», N 3616; «Le Matin», 6 mai 1916, N 11757.

162 Հյուպատոս Հեյզերը՝ Մորգենրաուին, Տրապիզոն, 28-ը հունիսի 1915 թ. // National Archives, RG 59, 867.4016/105.

163 Տես ստորև թիվ 483 փաստաթուղթը: «Le Matin», 6 mai 1916.

164 Տես ստորև թիվ 227, 483 փաստաթղթերը: «Taksim-i Vakayi», N 3616.

165 «Le Matin», 6 mai 1916, N 11757.

166 Նույն տեղում:

167 Տրապիզոնի բուրբ առևտրական Մեհմեդ Ալի բեյի՝ Տրապիզոնի ոճրագործների դատավարության ընթացքում Ռազմական դատարանի առջև տված վկայության մասին տես «Նոր կենսը», Կոստանդնուպոլիս, 13. IV. 1919, թիվ 168:

երկու օրվա: Հրամանն այնքան խիստ է, և օսմանյան պաշտոնյաներն այն իրականացնելու հարցում այնպիսի հապճեպություն են ցուցաբերում, որ Գերմանիայի փոխխուպատոս Բուր-հոֆֆը, 1915 թ. հուլիսի 4-ին, տեղահանությունից երկու օր անց, գրում է Վանգենհայմին, թե Մամսունում հայեր այլևս չկան¹⁶⁸: Տեղահանվածների մեկնումից հետո, քուրք պաշտոնյաները և սպաները միմյանց միջև բաժանում են գոհերի ունեցվածքները¹⁶⁹, որոնց ճակատագիրը նույնպիսին է. ինչպես և այլուր. գումակները ենթարկվում են չեթեների հարձակումներին, տղամարդիկ սպանվում են, կանայք առևանգվում, իսկ երեխաները լքվում ճանապարհին: Ամենուր չեթեներն ավարից բաժին վերցնելու ագուսնչան են տալիս, ՄԱԿ-ի քողարկված քարոզչության հետևանքով չափից ավելի գրգռված խաժանութին բողոքելով մոլկայի աշխատանքն ավարտին հասցնելու հոգսը: «Մամսունից մինչև Անգորա, ճանապարհը ծածկված է դիակներով»,– Կոստանդնուպոլիս ժամանելուն ևեր հայտնում է ամերիկյան մի միսիոներ, որը հենց նոր էր անցել այդ տարածաշրջանով¹⁷⁰:

Սվազի մահանգում գտնվող Ամասիայում, գործողություններին վերահսկող մութասարի-ֆր, հանուն իսլամի վեհության, կոչում է տեղահանությունից խուսափելու ցանկություն ունեցող հայերին ընդունել մահմեդականությունը: Մահմեդական հոգևորականները, մասնավորապես, խոջաները, եռանդագին մախապատրաստում են գյավուրների¹⁷¹ կրոնափոխության գործը: Այս իրադարձություններից էլ ավելի հուզված, Հունաստանի փոխխուպատոսը հարդրում է Աթենք.

«... Նույնիսկ մահմեդականության առաջին դարում, մահմեդական կրոնն այսչափ արմատական և այսչափ անմարդկային ձևով չի պարտադրվել քրիստոնյաներին, որքան XX դարում»:

Իսլամն ընդունելու համար հատկացված ժամկետի սպառումից հետո, իրենց հավատքին հավատարիմ մնացած հայերը բռնում են հարավի ճանապարհը մինչ Հալեպ և այնտեղից հեռանում դեպի անապատի խորքերը...

Բիրիսի վիլայեթում հայերին ավելի շուտ կոտորում են, քան տեղահանում: Իսլամի մուլեգությունը տարածվում է, առանց ազգության կամ դավանանքի զանազանության, մյուս բոլոր քրիստոնյաների (խաղդեացիներ, ասորիներ) վրա: Իր սկզբնավորումից ի վեր, իսլամը երբևէ չի եղել ոչ այդչափ անողորմ մուլեռանդ, ոչ էլ այդչափ անզոր, որքան 1915-1916 թթ.: Լինելով անգոր դիմադրելու Կովկասի ռազմաճակատում իրենց երդվյալ թշնամիներին՝ ռուսներին, թուրքերն իրենց դժբախտությունների պատասխանատվությունը բարդում են գյավուրների վրա: «Սյրբազան սլատերագն» ուղղվում է ոչ թե արտաքին թշնամիներին, այլ սուրբանի «անհավատարիմ» հպատակների դեմ: 1915 թ. հունիսի 21-ին, Սդերտի քաղղեացի արքեպիսկոպոս, Նոբրին սրբազնություն յն Իբրահիմ Աղդայ Սշերն իր 12 քահանաների և 4000 հավատացյալների հետ մեկտեղ մահատակվում է աննախադեպ վայրագությամբ¹⁷²:

Դ-խարբերիրում ևս, վալին՝ դոկտո յու Ռեշլո բեյը, որն առաջիններից մեկն էր աչքի ընկել իբրև իր նահանգի քրիստոնյաներին հալածող, ավարտին է հասցնում աշխատանքը, կոտորելով, բացի հայերից, իր իրավասության տակ գտնվող բոլոր քրիստոնյաներին՝ ասորիների, քաղղեացիների կամ նեստորականների¹⁷³: Հաշվեալություն տալով իր գործունեության մա-

168 Բուրհոֆֆի՝ Վանգենհայմին. Մամսուն, 4-ր հուլիսի 1915 թ., թիվ 349 // AwA, Türkei, 183, Bd. 37. Հմտ. նստ. Dr. Johannes Lepsius, op. cit., p. 105.

169 "Rapport sur la côte d'Anatolie", 30 mai 1919 // A.C.M., SS U 11.

170 Տես ստորև թիվ 136 փաստաթուղթը:

171 Արհամարհական անվանում, որով թուրքերն լեզվով հորջորջվում են բոլոր քրիստոնյաները:

172 Տես Annuaire Pontifical Catholique. 1919, p. 854.

173 Հոհենլոհեն՝ Բեռլին-Հոլվեգին, Պերս, 31-ր հուլիսի 1915 թ., թիվ 477 // AwA., Türkei 183, Bd. 37.

սին Սիրիայում գտնվող օսմանյան IV բանակի հրամանատարին, դժուար էր Ռեշիդ բեյն «անձնական» նշումը կրող՝ 1915 թ. հուլիսի 3-ի քվակիր հեռագրում, նրա համար ճշգրտում է, որ Գլխաբեքի մահանգում «հազվադեպ են թաղում զոհերի դիակները: Դրանք նետվում են լքված բարանձավները կամ ավելի հաճախ այրվում են»¹⁷⁴:

Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյն օր-օրի հետևում է այն գոտու ընդլայնմանը, որն արևելյան նահանգներում առնչվում է տեղահանություններին: Նա չի սիրում այն գործերը, որոնք ձգձգվում են և թույլ չի տալիս, որ տեղահանվածներին տրվի շունչ քաշելու նվազագույն իսկ հնարավորություն: Հեռագրով դիմելով Մալաթիայի երիտթուրքերի ակումբին, հայերի դահլիճը բառացիորեն կարգադրում է.

«Իմ նյութական և բարոյական պատասխանատվությամբ, ոչնչացրեք ձեր սանջակ ուղարկված բոլոր հայերին, ինչպես նաև նրանց, ովքեր համախմբվել են այդտեղ»¹⁷⁵:

Թալեաթ բեյի կարգադրությունը հարգվում է, ինչպես Դուրանի տառը: Ռճիրները նողկալիորեն կրկնապատկվում են և ոչ մեկը չի խնայվելու: «Հավատացյալների» գայրոյքն իրենց վրա են հրավիրում, մասնավորապես, հոգևորականները. որոնց իշխանությունները ճարակորեն օգտագործում են: Մալաթիայի կաթոլիկ հայ եպիսկոպոս, Նֆորին սրբազնությամբ և Խաչատրյանը, կառավարչի կառքին լծվելուց հետո, դաժանորեն շնչահեղձ է արվել իր լանջախաչի շղթայով, իսկ նրա թեմի անդամները դարձել են սարսափելի կոտորածի զոհը¹⁷⁶:

«Չեթեների» կամ մահմեդական խաժամոժի ձեռքով, հյուժվածությունից կամ սովից իրենց մահկանացուն կնքած զոհերի դիակներն այնպիսի մեծ քանակությամբ են սփռված Հյուսիսային Սիրիայում գտնվող Եփրատի հովիտներում, որ բռնկվում է տիֆի համաճարակ՝ տեղահանվածներին դատապարտելով էլ ավելի հավաստի մահվան, բայց սարսնալով նաև օսմանյան բանակին և Մոհամեդի հավատարիմներին: Սանիտարական վիճակը մեծ անհանգստությամբ է քննության առնվում Մամուրեթ-ու Ազիզի վալիի և ՄԱԿ-ի գործի ամենակարգու պաշտպաններից մեկի՝ Սաբիթ բեյի կողմից, որը հեռագրում է Էրզրումի իր գործընկերոջը՝ Թահսին բեյին. «Բոլոր ճամնապարհները լի են կանանց և երեխաների դիակներով, մենք չենք հասցնում նույնիսկ նրանց թաղել»¹⁷⁷: Բազմաթիվ սկզբնաղբյուրներից ելնող տեղեկությունները, որոնցից յուրաքանչյուրը նոր մանրամասներ է ի հայտ բերում, հավաստում են այն անմարդկային վերաբերմունքը, որին իշխանությունների կողմից արժանանում են տեղահանվածները: Փոքր Ասիայի քաղաքներից մեկում պաշտոնավարող շվեյցարացի մի այրոֆետր, 1915 թ. հունիսի կեսերին իր վկայությունն է տրամադրում «Ժուրնալ դը Ժենևին».

«Թուրքերը մտադրվել էին համայն տարածաշրջաններից դուրս մղել քրիստոնյա ողջ բնակչությունը և նրա ողջ ունեցվածքը կողոպտելուց հետո, նրան ոտքով ուղարկել դեպի անապատները, որտեղ նա սովամահ է լինում»¹⁷⁸:

Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռոյսերը գաղտնաբար հաղորդում է Վիլհելմ-շտրասսերին, որ «դիակների հոսքը Եփրատի ջրերով տևել է 25 օր: Նրանք բոլորը կապկըպված են միևնույն ձևով, գույգ-գույգ, մեկը մյուսի թիկունքին»¹⁷⁹: «Այս օրինաչափությունը, ընդգծում է գերմանական հյուպատոսը,– այն բանի ցուցանիշն է, որ խոսքը վերաբերում է ոչ թե սպանդի, այլ իշխանությունների կողմից ի կատար ածվող կոտորածի»:

174 Հմմտ. "Takvim-i Vakayi", 5. V. 1335 [1919], N 3540.

175 «Քաղվածք 1918 թ. նոյեմբերի և դեկտեմբերի սկզբների բուրբակյան մամուլից» // AwA., Türkei 167, Bd. 14.

176 Հմմտ. Annuaire Pontifical Catholique, 1919, p. 856.

177 Տե՛ս "Takvim-i Vakayi", N 3540, p. 6.

178 "Journal de Genève", 10 juillet 1915, N 188.

179 Ռոյսերը՝ Գերման-Հովեգին, Հալեպ, 27-ը հուլիսի 1915 թ., թիվ 81, ծածկագրված // AwA., Türkei 183, Bd. 37.

Համաճարակի վտանգը Թալեաթ բեյին անտարբեր չի քողնում: 1915 թ. հուլիսի 21-ին, նա Դ-խարբեքիլի, Մամուրեթ-ուլ Ազիզի, Դեր-էգ-Ջոդի և Ուրֆայի կառավարիչներին կրաման է արձակում «ճանապարհներին լքված դիակները քաղելու և դրանք հովիտները կամ լճերը չնետելու, ինչպես նաև նրանց հագուստներն այրելու մասին»¹⁸⁰:



Մեկ ամիսը կարող էր բավարար լինել Ասիական Թուրքիայի հայկական նահանգներում բնակվող բոլոր հայերին վտարելու, կողոպտելու և կոտորելու համար: Վանգեներհայմը, ուր՝ օսմանյան ղեկավարների հանդեպ ունեցած ներողամտությունը ստվերում չի քողնում զգաստամտությունը, վերին աստիճանի հատակորեն է արտահայտվում Բետման-Հովվեզին հղված՝ 1915 թ. հուլիսի 7-ի հեռագրում. «... Այս գործողությունները և այն, քե ինչպես է իրականացվում այս տեղահանությունը, ապացուցում են, որ կառավարությունը հիրավի նպատակ ունի ոչնչացնելու հայ ժողովրդին Թուրքական կայսրությունում»¹⁸¹: Ի դեպ, քուրք ղեկավարներն այժմ գործում են աստիճանաբար ավելի քացահայտ ձևով: Օսմանյան «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթը 1919 թ. մայիսի 5-ին արտատպում է ղ[ոկտո]ր Բեհեդդին Շաքիլի հեռագիրն ուղղված Անթիլիասի մութասարիֆ¹⁸² Սաբուր Սամի բեյին, ուրը հայ ժողովրդի բնաջնջման հարցում օսմանյան իշխանությունների կանխամտածվածության անհերքելի ապացույցն է: «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դ-խարբեքիլի, Սվազի, Տրապիզոնի շրջանում, – հավաստում է երիտթուրք ղեկավարը, – չի մնում նույնիսկ մեկ հայ: Բոլորը տեղահանվել են Մառու ու Դեր-էգ-Ջոդ» և նա Անթիլիասի կառավարչին ազդարարում է իր մարզում «վարվելու միևնույն ձևով»:

Մորգենթաուի հետ Թալեաթ բեյն այլևս զարտուղի ճանապարհների չի դիմում: Կոստանդնուպոլսում Միսցյայ Նահանգների դեսպանն այսպիսի խոսքերով է վերհիշում Թալեաթ բեյի տված քացատություններն իր հարցին.

«Փաստարկելու կարիքն այլևս չկա, – առարկեց Թալեաթը, – մենք արդեն լուծել ենք հայերի երեք քառորդ մասի խնդիրը. նրանք այլևս չկան Բիթլիսում, Վանում, Էրզրումում: Երկու ազգությունների միջև առելությունն այնքան ուժգին է, որ մենք պետք է նրանց վերջը տանք, եթե ոչ, հարկ կլինի երկյուղել նրանց վրեժխնդրությունից»¹⁸³:

Հիրավի, սկսած 1915 թ. հուլիսից, տեղահանության միջոցառումներին առնչվող գոտին ավելի է ընդլայնվում: Նուրուօսմանիե փողոցի հյուսակախմբի ղեկավարները կուրացած են և գրեթե շաքած այդչափ հեշտությամբ ձեռք բերված այն ավարով, որն իրենց գործակալները կանոնավոր ձևով Կոստանդնուպոլսում գտնվող ՄԱԿ-ի նստավայր են ուղարկում Թուրքահայաստանից: Գլխավոր պատասխանատու Թալեաթ բեյը, «Թեշքիլար-ի մահսուսե» կոչվող տխրահռչակ «հատուկ կազմակերպության» ոգեշնչող Էնվեր փաշան և կոտորածների մոլի կողմնակից ղ[ոկտո]ր Նազըմը, կարծում են, որ կայսրության ողջ հայ բնակչության հետ իրենց վերջնական հաշիվը մարքելու պահը վերջապես վրա է հասել: Նրանք այդքան մեղայրվում են կոտորածի և կողոպուտի մեջ, այլ հայերի ոչնչացումն ի՞նչ կարող է հավելել

180 Հմմտ. օսմանյան պաշտոնաթերթը՝ "Takvim-i Vakayi", N 3540.

181 Dr Johannes Lepsius, Deutschland und Armenien, Potsdam, 1919, p. 94.

182 1914 թ. պատերասզմի նախօրեին Անթիլիասի սանջակում կային 249686 բնակիչներ. որոնցից քրիստոնյա էին միայն 13924-ը, մեծ մասամբ՝ հույներ. տես "Ikdam", 30. I. 1335 [1919], N 7892.

183 Հմմտ. Les Memoires de l'Ambassadeur Morgenthau, p. 291.

իրենց հանցապարտությանը: Միննույն հաջողությամբ կարելի է բնաջնջել բոլորին, որովհետև ինչպես Թալեաթն է այդ խոստովանել Մորգենթաուսին. «ոչ մի հայ չի կարող այլևս լինել մեր բարեկամն այն բանից հետո, ինչպես մենք ենք նրանց հետ վարվել»¹⁸⁴: Համաշխարհային պատերազմն անապատելի առիթ է ներկայացնում «հայրենասիրական» գործն իրականացնելու համար, որը երբեք հնարավոր չէր լինի խաղաղ ժամանակաշրջանում:

Պատասպարված 1915 թ. մայիսի 14/27-ի՝ տեղահանությունը սահմանող «ժամանակավոր» օրենքով, օսմանյան կառավարությունը, սկսած 1915 թ. հուլիսից, ընդլայնում է դրա կիրառման ոլորտը, ընդգրկելով Փոքր Ասիայի և նույնիսկ Թրակիայի բոլոր հայերին, բացառությամբ Կոստանդնուպոլսի հայերի: Մի երկրում, որը մեկուկես անգամ ավելի մեծ է, քան Ֆրանսիան, հենց այսպես է սկսվում ողջ հայ բնակչության՝ տղամարդկանց, կանանց և երեխաների մեծ տեղահանությունը, որոնք բնակվում են Կիլիկիայում, Կենտրոնական Անատոլիայում, Արևմտյան Փոքր Ասիայում, Եգեյան ծովի նավահանգիստներում և նույնիսկ Թրակիայում, որոնց մի քանի ժամում, լավագույն դեպքում՝ մի քանի օրում, բռնությամբ հարկադրում են, հսկում «ռազմական անհրաժեշտության» գործի, լքել իրենց օջախները, գնալու համար դեպի Սիրիայի և Միջագետքի անապատները: «... Միջոցառումների այս ընդլայնումը, գրում է, «Բյուզնդե ցայրունգլի» քրդակից դժոխտոյր Շրոյրմերը,՝ ամենանողկալի, ամենապատճառակամ և ամենաապուշտ և ամենաանհրաժեշտագույն ազգի մոլեռանդությունից բխող գործողություն է, որը մարդկության պատմությունն ի վիճակի է եղել արձանագրելու»¹⁸⁵: Կառավարությունը ոչ միայն տեղահանվածների համար որևէ մեցուկ չէ, այլև ընդհակառակը, խանգարում է օտարերկրյա կազմակերպությունների գործունեությանը, որոնք անապատում ջանում են նրանց փրկել մահից¹⁸⁶:

Թուրքահայաստանի վիլայեթներում բնակվող հայերի արքայը և կոտորածը կախում ունեն քաղաքական նպատակից, ամբողջությամբ բավարարելով օսմանյան ղեկավարների բնաջնջողությունը: Կենտրոնական Անատոլիայի, Արևմտյան Փոքր Ասիայի և Թրակիայի հայերի տեղահանությունը հետապնդում էր միայն մեկ նպատակ՝ կողոպտել տեղահանվածների ունեցվածքները: Ինչպես՝ քաղաքային, եթե ոչ Բուրսայի հայերի, որտեղ նրանք բնակչության ընդհանուր քվի 4,5%-ն են կազմում¹⁸⁷, ապա Ադրիանուպոլսի հայերի տեղահանությունը, որտեղ նրանք էլ ավելի սակավաթիվ են և որևէ առնչություն չունեն Թուրքահայաստանի իրենց հայրենակիցների սոցիալական պահանջների հետ: 1919 թ. երիտթուրքերի դատավարության ժամանակ, Հալեպի նախկին վալի Ջեբալ բեյի տված վկայությունը մեզ է ընձեռում նրանց վարքագծի բանալին: Ջեբալ բեյը հիրավի հիշեցնում է, որ հայերի տեղահանության առթիվ իր տատանումները հաղթահարելու համար, Թալեաթը և դժոխտոյր Նազըմը, երկուսն էլ իր համար ընդգծել են «այդ գործի անհրաժեշտությունը և այն օգուտը, որը հարկ է դրանից քաղել»¹⁸⁸: Դժոխտոյր Նազըմը նույնիսկ ավելացրել է, որ արևելյան հարցի լուծումը խարսխված է այդտեղ¹⁸⁹:

Հայ ժողովրդի բնաջնջման այս փուլում, երբ այլևս հնարավոր չէ, որ հայերն անտեղյակ լինելին իրենց սպասվող ճակատագրին, արդյո՞ք նրանց կողմից տեղի չի ունեցել օսմանյան

184 Նույն տեղում, էջ 292:

185 Harry Stuermer, Deux ans de guerre à Constantinople, Paris, 1917, p. 47.

186 Տե՛ս ստորև թիվ 55 փաստաթուղթը և թիվ 248, 298 փաստաթղթերի հավելվածները: Lewis Einstein, Inside Constantinople. A Diplomatist's diary during the Dardanelles expedition April-September 1915, London, 1917, p. 184; Les Mémoires de l'Ambassadeur Morgenthau, op. cit., pp. 300-301.

187 Հմմտ. Hüdavendigâr vilâyeti salnameyi resmiyesi, Bursa, 1325 [1909], p. 251.

188 Տե՛ս օսմանյան պաշտոնատերերի՝ "Takvim-i Vakayi", N 3540.

189 Նույն տեղում:

կառավարության նենգության դեմ ուղղված փոքրագույն իսկ խռովություն: Շապին-Գարա-հիսար քաղաքի հայերը հրաժարվում են Էրզրումի հայրավայրի հայերի ճակատագրին արժանանալուց և տեղահանության հրամանին ենթարկվելուց: Նրանք, գրեթե բոլորը, մի քանի շաբաթ տևած անհուսալի դիմադրությունից հետո կսպանվեն¹⁹⁰: Ուրֆայում, մարզի հայերը, ավելի քան մեկ ամսից ի վեր, դառնում են Թուրքահայաստանի հյուսիսային նահանգներից եկող իրենց հայրենակիցների գումակների անցման ականատեսը: Ինչպես՞ կարող էին նրանք, ամերիկյան միսիոներ, պատվելի՞ հիշարձանի Լեսլիի հետ մեկտեղ, չճաշակել՝ կերակուր, կացարան չունեցող, անօգնական, քույր ժանդարմների ողբամածությանը հանձնված այս տեղահանված հայերի թշվառությունը և ստորացումը, որոնց, ի տես ամենքի, նրանք բռնաքարում են փողոցում¹⁹¹: Ուրֆայի հայերը, վստահելով Լեսլիին, նրան հայտնում են, որ եթե իրենց հերքը վրա հասնի, իրենք կգերադասեն ավելի շուտ տեղում մեռնել, քան թողնել քաղաքը¹⁹²: Եվ իրոք, երբ մեկնումի կրամանը տեղ է հասնում. Ուրֆայում է, որ նրանք, կովելով օսմանյան գործերի դեմ՝ կմեռնեն մինչև վերջինը:

Մուսա սարում, Անտիոքի մոտակայքում, ավելի քան 4000 հայեր, շրջափակված իրենց գյուղերում, պատրաստվում են դիմադրել թուրքական գործերին և մահմեդական խաժամուժին ավելի քան քառասուն օրվա ընթացքում: Առանց սուափնյա շրջաններում հետախուզություն իրականացնող ֆրանսիական մավերի հանկարծահաս ժամանման, ոչ մի բան չէր կարող նրանց փրկել ոչնչացումից¹⁹³:

Այնժամ, միանգամայն բնականոն ձևով ծառանում է մի հարց. արդյոք երբևէ չի գտնվե՞լ, այսպիսով, բավականաչափ ճշմարտասեր մեկ կամ երկու թուրք պաշտոնյա, դիմադրելու համար իրենց կառավարության հրահանգներին: Երկրորդը ոճրագործների դատավարության բնագրերն օսմանյան «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթում, երևան են բերում հազվադեպ սպլոդո մի քանի անձանց անուններ, որոնց մեքը հարգանքի տուրք ենք մատուցում. դրանք են նահանգային այնպիսի կառավարիչներ, ինչպիսիք են Հալեայի վալի Ջելալ բեյը, Անգորայի վալի Մազհար բեյը, Յոզղաթի մութասարիֆ Ջեմալ բեյը կամ Կասառամունիի վալի Ռեշիդ փաշան, որոնք ավելի շուտ գերադասում են պաշտոնաթողությունը, նույնիսկ պաշտոնանկությունը, քան օսմանյան կառավարության հանցակից դառնալը¹⁹⁴. Բեշլիքի կայմակամ, արաբ Սաբիթ բեյ Էլ-Սույեդին և Լիդջեի կայմակամ Նեսսիմի բեյը, մի թուրք Կրետեից¹⁹⁵, որոնք իրենց համապատասխան շրջաններում հայերի կոտորածների մասնակիցը չդառնալու համար հատուցել են կյանքի գնով¹⁹⁶: Այս կայսրությունում, որտեղ արյան վտակներ են հորդում, միայն Կենտրոնական Անատոլիայում գտնվող Քոթահիայի կայմակամ Ֆայիկ Ալի բեյը կարողացավ մնալ իր պաշտոնում և միաժամանակ իրեն դրսևորել իբրև ազնիվ, եռանդուն ու գործունյա կառավարիչ՝ իր մարզի մի քանի հազար հայերին մինչև պատերազմի ավարտը պաշտպանելով ցանկացած վտանգից¹⁹⁷:

1915 թ. օգոստոսի կեսերին՝ կոտորված, իսլամն ընդունած կամ անհայտացած հայերի

190 Տե՛ս ստորև թիվ 58 (հավելված I), 63, 66 (հավելված II), 133 (հավելված II) փաստաթղթերը:

191 National Archives, RG 59, 867.4016/92. Տե՛ս նաև ստորև թիվ 248 և 257 փաստաթղթերի հավելվածները:

192 Հյուսիսային Ջարսոնը՝ Մորգենթաուսին. Հալեպ, 28-ր հունիսի 1915 թ. // National Archives, RG 59, 867.4016/92.

193 Տե՛ս ստորև, մասնավորապես, թիվ 67, 68, 70-75, 78, 85, 92-94, 99-101 փաստաթղթերը:

194 Տե՛ս օսմանյան պաշտոնաթերթը՝ “Takvim-i Vakayi”, N 3540.

195 Նրա մայրը հույն էր:

196 Հմմտ. Fa'iz El-Ghusein, Martyred Armenia, New York, 1918, p. 40. Տե՛ս նաև օսմանյան պաշտոնաթերթը՝ “Takvim-i Vakayi”, 5. V. 1335 [1919], N 3540. Այս երկու բարձրաստիճան պաշտոնյաներին սպանելու հրամանն արձակել է դիվանի Ռեշիդ բեյը:

197 Տե՛ս ստորև թիվ 227 փաստաթուղթը: Հմմտ. նաև “Tasvir-i Efkar”, 7 rebi-ul akher 1337 [9 janvier 1919], N 2616.

բիվն աղյեն հասնում է ավելի քան 800000-ի¹⁹⁸, մի քան, որը չի խանգարում ժնկում գտնվող օսմանյան գլխավոր հյուպատոս Զիա բեյին կատարյալ լկալորթյամբ ժխտել վայրագություններին վերաբերող լուրերը:

«... Հայերի կոտորածներ տեղի չեն ունեցել: Ողջ հայ բնակչությունը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները, գտնվում են ամենակատարյալ անվտանգության մեջ»¹⁹⁹:

Սակայն ինչպիսի՞ն է անձամբ երկտորոքների կարծիքը հայերի նկատմամբ հետևողականորեն կիրառված մեթոդի շուրջ: Այդպիսի ձեռք բերված արդյունքներն ամբողջությամբ համաձայնության մեջ են գտնվում նախագծված ծրագրի հետ: Պատասխանատուների շահակրատանքները մեզ են տրամադրում պատասխանել: Թալեաթ բեյը, որի մոտ կենտրոնանում են նահանգների բոլոր զեկուցագրերը, չի քաջցնում իր կատարյալ բավարարվածությունը: Օգոստոս ամսի վերջերին, գերմանացի դիվանագետներին նա նույնիսկ պնդում է, որ Հայկական հարց այլևս գոյություն չունի²⁰⁰: Իր մերձավորների շրջանում, Ներքին գործերի նախարարն իրեն քույր է տալիս դիմելու էլ ավելի անգգույշ գյուղացիների, պարծենում է իր «հայրենասիրական գործով» և չի գալու իր գոհունակության պոռթկումը. «Լուծելու համար հայկական խնդիրը, ես երեք ամսում արել եմ ավելին, քան Աբդուլ Համիդը երեսույտս արում»²⁰¹: Այդուհանդերձ, նրա խոսեղանձր փոխվում է, երբ ընդունություն է կազմակերպում առաքելական լիազոր ներկայացուցիչ, Ն չորին սրբազնություն և Դուլչիի, Մորգենթաուի կամ Պալլասի ինչինի՞ համապատասխանաբար Կոստանդնուպոլսում գտնվող Մյուսթայա Նահանգների և Ավստրո-Հունգարիայի դեսպանների համար: Ամենամեծ ակնածանքով նա նրանց խոստանում է խնայել կարողիկ և բողոքական հայերի կյանքը²⁰²: Նա այդ ոգով անգամ հեռագրեր է ուղարկում նահանգային իշխանություններին²⁰³: Բայց նրա գրասրտությունը նրանց հանդեպ, ովքեր հայ ժողովրդի ողջ բնակչության նույնիսկ տասներորդ մասը չեն կազմում, տևել է միայն մեկ օր: Հասցող իսկ օրվանից, Թալեաթ բեյը ծածկագրված այլ հեռագրերով անվավեր է դարձնում իր բողոք նախկին հրամանները և պահանջում, հարաճուն վճռակաճությունը, բողոք տեղահանվածների համատարած բնաջնջումը: Ներքին գործերի նախարարը նույնիսկ անձամբ ընդունում է այն բնագնացներին, որոնց հանձնարարվում է տանել իր անշեղ և անհեղաշրջելի հրահանգները՝ ոչնչացնելու համար, որքան հնարավոր է արագ, ամենավերջին հային²⁰⁴: Ահա այդ հեռագրերից մեկը, որը գաղտնի և ծածկագրված ձևով 1915 թ. սեպտեմբերի 9-ին, հենց այն օրվա նախօրյակին, երբ Բենուա XV պապը միջամտելու է²⁰⁵ Սեհմեղ V-ի առջև՝ խնդրելու համար նրանից կատեցնել տեղահանությունները, փոխանցվել է Հայեայի ոստիկանությանը:

«Թուրքիայի տարածքում հայերի ապրելու և աշխատելու իրավունքն ամբողջությամբ չեղյալ է հայտարարված. կառավարությունը, ստանձնելով բողոք պատասխանատվություն-

198 Տե՛ս ստորև բիվ 131 փաստաթուղթը (հավերժացված II):

199 «Ժոբնալ դը Ժնևին» իղված մի նամակում, անկասկած, Բարձր Դուան կարգադրությանը. "Journal de Genève", 28 août 1915, N 237.

200 Հմնս. Dr Johannes Lepsius, op. cit., pp. 146, 147.

201 Տե՛ս Mémoires de l'Ambassadeur Morgenthau, p. 294.

202 Հմնս. Souvenirs de Guerre de M. Erzberger, Paris, 1921, pp. 99-100: U. Trumpener, Germany and the Ottoman Empire 1914-18, Princeton, 1968, p. 215.

203 Հմնս. S. R. Sonyel, Ermeni tehcirı ve belgeler. Ankara, 1978, p. 1: Souvenirs de Guerre de M. Erzberger, Paris, 1921, pp. 100-101.

204 Հայեպում Թալեաթի բանագնաց Արդեկահայ Նուրի բեյն ասում է Քիլիսի նախկին կայմակաճ Իսհան բեյին. «որ անձամբ ինքը, Թալեաթ բեյից ստացել է հայերի ոչնչացմանը վերաբերող հրամաններ». տե՛ս օսմանյան պաշտոնաթերթը "Takvim-i Vakayi", N 3540, p. 5.

205 Տե՛ս Les Mémoires de Mgr Naslian, Vienne, 1955, vol. 2, p. 942.

ներն այս առթիվ. հրամայել է նրանց բվում կենդանի չորդնկ նույնիսկ օրորոցի մանուկներին: Որոշ նահանգներում այս հրամանն ի կատար է ածվել: ‘Դ-րանով հանդերձ, մեզ անհայտ պատճառներով, բացառություններ են ալում որոշ անձանց իսմար, որոնք իրենց արքորի վայրն աղարկվելու փոխարեն, մնացել են Հայկում և այս իսկ փաստի հիման վրա, կառավարությունը կանգնում է նոր դժվարության առջև: Առանց բնորոնելու այն անձանց փաստարկները՝ ովքեր էլ, որ նրանք լինեն, կանայք յե նրեխաներ, անգամ շարժվելու անբնորոնակներին, քչեք այդտեղից և բնակչությանն աղիք մի տվեք նրանց պաշտպանելու: Անգիտության պատճառով բնակչությունն իր նյութական շահերը վեր է դասում հայրենասիրական զգացմունքներից և ի վիճակի չլ. նույնիսկ գնահատելու այն մեծ քաղաքակրթությունը, որին կառավարությունը հետամուտ է այս առթիվ...»²⁰⁶:

Ո՛րն էր կանանց և երեխաների իսնդեպ Թալեայ բեյի այս ծայրահեղ վայրագության պատճառը: Միայն 1916 թ. մայիսին է, որ օսմանյան Ներքին գործերի նախարարը «Էնդլիներ րագերբարի» րիբակցի առջև հրապարակայնորեն կր.սցահայտի այդ անողոր պատավճռի դրոպատճառները.

«Մեզ հանդիմանել են մեղավոր և անմեղ հայերի միջև զանազանություն չղներու հաւար, բայց դա բացարձակապես անհնար էր, որովհետև նրանք, ովքեր այսօր անմեղ էին, վայր կարող էին մեղավոր դառնալ»²⁰⁷ և հավաստիացնելով իր անկեղծության հարցում. հայերի դախիճը լկտիարբար կավելացնի. «Մենք վայրենիներ չենք»: Էնվեր փաշան՝ Ռազմական նախարարը, Ջեմալ փաշայի առջև մեկ ամիս ավելի վաղ, 1916 թ. ապրիլին, Ալեյում՝ Լիբանանում, ելույթ է ունեցել միևնույն ոգով.

«Օսմանյան կառավարությունը կկարողանա կրկին ձեռք բերել իր ազատությունը և պատիվը միայն այն ժամանակ, երբ Թուրքական կայսրությունը մաքրագաղտվի հայերից և լիբանանցիներից: Մենք տաջիմներին ոչնչացրել ենք սրով, երկայրդներին կոչնչացնենք սովի միջոցով»²⁰⁸:

*
* *

Ինչպե՞ս գնահատել Գերմանիայի պատասխանավորությունը Թուրքիայի հայերի վերացման հարցում: Վանգենհայմը Վլիխեմշտրասսեին կատարելապես իրագեկում է Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններին, բայց նրա՝ երիտրուքերի հետ արտոնյալ հարաբերությունները պահպանելու մտահոգությունը, նրան դրդելու է մինչ իր մահի՝ 1915 թ. հոկտեմբերի 24-ը, քարոզելու և կենսագործելու չմիջամտելու քաղաքականությունը²⁰⁹: Փոխարենը, նրան հաջորդած կոմս Վոլֆ-Մետերնիխը, Կոստանդնուպոլիս ժամանումից ի վեր, խստագույն ձևով քննադատում է օսմանյան կառավարության ոճրագործ քաղաքականությունը: Նրա բազմաթիվ րայերն ի նպատակ հայ գոհերի, նրան շուտափույթ այն աստիճանին են անցանկալի դարձնում, որ Էնվեր փաշան, 1915 թ. դեկտեմբերին, զանգատվում է Գերմանիայի ռազմածովային կցորդ չումանեին. «Նոր դեսպանը խտում է միայն Հայկական հար-

206 A. Andonian (éd.), Documents officiels concernant les massacres arméniens, Paris, 1920. pp. 33-34. Տե՛ս նաև "The Daily Telegraph", 29 May 1922, N 20937.

207 Տե՛ս "Le Matin", 6 mai 1916, N 11757; "The Times", 20 June 1916, N 41198.

208 Տե՛ս ստորև թիվ 223, 224 փաստաթղթերը:

209 Իարձր Գոսանը ներկայացված Վանգենհայմի հավաստիացումների շորք տես Johannes Lepsius, op. cit., pp. 96, 128.

ցյի մասին»²¹⁰։ Լինելով խիստ անախորժ, Վոլֆ-Մեսերնիխը պետք է վերադառնա Գերմանիա, առանց Կոստանդնուպոլսում անցկացնելու մեկ ամբողջ տարի։ Պաշտոնական Գերմանիայի լռությունը, որը խուսափում է թե՛ կշտամբելուց, թե՛ հավանության արժանացնելուց, մեծապես քաջալերում է երիտթուրքերին իրենց ոճրագործ գործունեության ընթացքում և դրանով իսկ, գերմանացիներն, այսպիսով, ինքնաբերաբար դառնում են հանցակիցներ։ Արդյոք իրերի վիճակին կատարելապես տեղյակ լինելով և պարզևր ստացողի մասին ամեն ինչ գիտենալով չէ՞ր, որ 1916 թ. ապրիլին, Վիլհելմ II-ը Թալեսթին է շնորհում առաջին աստիճանի Կարմիր արծիվ շքանշան²¹¹։

Ամեն դեպքում, դաշնակից կառավարությունները շտապում են օգուտ քաղել հայ նահատակների հանդեպ գերմանական կառավարության ունեցած անտարբերությունից։ Անտանտի պետական գործիչները, քաղաքական այրերը բացահայտորեն հավանություն են տալիս հայկական ձգտումների օրինականությանը և հանդես գալիս հանուն հաշտության կոնֆերանսում Հայաստանի վերածնության²¹²։ Հրապարակելով իրենց՝ նաև ճնշված ժողովուրդների ազատագրման օգտին կռվելու հավակնությունները, դաշնակիցներն առանց դժվարության ձեռք են բերում նրանց համակրանքը, այնժամ, երբ նրանց միջև, կուլիսներում, արդեն ընթացք են ստանում՝ պատերազմից հետո Ասիական Թուրքիայի բաժանմանը վերաբերող գաղտնի քանակցությունները²¹³։

Սիրիայում օսմանյան IV բանակի հրամանատար Ջեմալ փաշան, որը չէր կարող իրագեկ լինել Անտանտի այս հեռահար գործարքներին, պատրաստվում է նույնիսկ գտնել դժվարին կացությունից դուրս գալու ելքը, առաջարկելով հայերի դժբախտությունից խղճահարված Անտանտին հետևյալ առուժախը. նա դաշնակիցներին առաջարկում է իր զինված աջակցությունը՝ դեպի Կոստանդնուպոլիս առաջանալու համար և պարտավորվում հովանավորել ու մատակարարել Սիրիա և Միջագետք տեղահանված հայերին, սակայն փոխարենը պահանջում է, որ Անտանտն իրեն ճանաչի իբրև Կիլիկիայում, Պոդեստինում, Հայաստանում, Արաբիայում, Միջագետքում և Բոսնիայում իշխող Սիրիայի սուլթան²¹⁴։

Դաշնակիցները մեծ նշանակություն չեն տալիս Ջեմալ փաշայի այս առաջարկներին, որը մխիթարվում է հայերի հանդեպ դաժանությունը կրկնապատկելով։ 1916 թ. ապրիլին, Դամասկոսի շուկայում կտրելի էր նույնիսկ տեսնել, թուրք զինվորների կողմից աճուրդի միջոցով վաճառված տեղահանված հայերի²¹⁵։

Ռուսական զորքերի մուտքն Էրզրում՝ 1916 թ. փետրվարի սկզբին և Տրապիզոն՝ ապրիլի կեսերին, կքաղախյալի հայերի տեղահանության ծավալն այս երկու մեծ քաղաքներում։ Հայ բնակչությունից, որի քանակը երկու քաղաքներում, ընդհանուր առմամբ, հասնում էր 45000 շնչի, Էրզրումում կգտնեն միայն ամերիկյան հյուպատոսությունում պատասխարված վաքսուն մաքրում²¹⁶, իսկ Տրապիզոնում՝ վերին աստիճանի թշվառ վիճակում գտնվող հազիվ 45 հայ կանանց²¹⁷։

Ռուսական հաղթանակների սրընթացությունն այն աստիճանի է սարսափեցնում օսման-

210 Հմմտ. U. Trumpener, op. cit., p. 126.

211 Տե՛ս 1916 թ. ապրիլի 21-ի «Հիլսթր», թիվ 322:

212 Տե՛ս ստորև թիվ 56, 153, 156, 164, 169, 179, 183, 281, 365, 371, 389, 657, 673 փաստաթղթերը և թիվ 195, 257 փաստաթղթերի հավելվածները:

213 Տե՛ս ստորև թիվ 12-14, 185-187, 191-193, 198, 199, 220, 334 փաստաթղթերը:

214 Տե՛ս ստորև թիվ 157-162, 166, 167 փաստաթղթերը:

215 Տե՛ս ստորև թիվ 223, 224 փաստաթղթերը:

216 Հմմտ. "Gazette de L.ansanne", 29 janvier 1918, N 28.

217 Տե՛ս "Le Matin", 6 mai 1916, N 11757; "The Times", 20 June 1916, N 41198.

յան կառավարության ղեկավարներին. որ նրանք դաշնակիցների հետ փորձում են բանակցել սեպարատ հաշտության շուրջ: Բայց երբ նրանք կտեսնեն, թե ինչպես է իրենց առաջարկը մերժվում, երիտրոպրերն առանց դրանից հրաժարվելու, կժխտեն. որ երբևէ այդ բանն արել են²¹⁸: Կոստանդնուպոլսում նույնիսկ ամիսներ շարունակ հասարակական կարծիքից թարքնում են Էրզրումի անկումը...

1916 թ. ամռանը կարճամազգրվի կայսրության չորս անկյուններից դուրս բշված և Դ-Է-Գ-Ջորի անապատային շրջանում ու Միջագետքում՝ Մուսուլից հարավ ընկած մարզում կամախմբված հազարավոր տեղահանված հայերի մահացությունը: Իշխանությունները ոչինչ չեն անում նրանց օգնելու համար և նրանց կտրակահնապես արգելվում է քաղաքներ մտնել: Առանց կացարանի, աշխատանքի, սննդի, արքայազմների դատապարտված են մահվան և նրանց վիճակված է սպասելու փոքրիշատե երկարատև վախճանի: «... Ամառում կան, – գրում է ամերիկյան մի միսիոներ, – 7000 տեղահանված հայեր, որոնցից - 3000-ը գրեթե ամբողջովին մերկ են և սնվում են մորեխներով, մյուսները բռնում են փողոցներում թափառող շներին և ուտում նրանց հում միսը»²¹⁹: Այս նույն վկան հաղորդում է, որ տեղի են ունեցել նաև «մարդակերության դեպքեր և որ մահացածների միսը վիճարանության պատճառ է դարձել»²²⁰:

Կահիրեի քաղղեսցի կարողիկ եպիսկոպոսը, որը Եգիպտոսի բրիտանական տեղեկատվական ծառայության կողմից առաքելությանը գաղտնաբար գործուղվել էր Սիրիայի և Միջագետքի անապատային շրջան, մի գեկուցագիր է հանձնում. որից Ռ-ուն Քե դ'Օրսեի համար ի մի է բերում այս մի քանի տողերը.

«... Հալիսայից սկսած մինչ Դ-Է-Գ-Ջոր, Ն {որին սրբագնություն} և Աբեյր տեսնում և դիակներ, զանգեր, մասնատված անդամներ և խեղված մարմիններ: Նա գտնում է, առանց որևէ չափազանցության, որ հայկական կորուստները հասնում են 500-ից 600000 մարդու»²²¹:

Այնժամ, երբ հայկական տարրն անհետանում է Փոքր Ասիայից, Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը խիստ մտահոգ է, հայերին ազգային և բարգավաճ անցյալի մասին հիշեցնող յուրաքանչյուր հետքի վերացման հարցով: 1916 թ. օգոստոսին, հայկական եկեղեցու բոլոր վաղնջական արտոնությունները վերացվում են²²²: Շարքային թեմի կարգավիճակի իջեցվող Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքությունը կցվում է Երուսաղեմի հայկական պատրիարքությանը, որը վերստիվում է կարադիկալության: Մի փոքր անց, հայ պատրիարք, Ն {որին սրբագնություն} և Ջավենր, ժանդարմների պահակախմբի հսկողությանը արքայվում է Բադրադ²²³:

Այս ընթացքում, Պառոս Նուբար փաշայի՝ դաշնակիցների դիվանագետների հետ Եվրոպայում (Փարիզում և Լոնդոնում) ունեցած երկարատև բանակցությունները նրան համոզել են, որ ֆրանսիական պրոտեկտորատի նեշքը ինքնավար հայկական Կիլիկիային վերաբերող խոստումը հավաստի է: Ժորժ-Պիկոն ևս, որը Լոնդոնում կայացած մի գլուխյի ընթացքում, Հանրապետության կառավարության անունից պարտավորվածություն էր ստանձնել, նրան հուշել է հայ կամավորների գումարտակի կազմավորման գաղափարը, որոնք կնար-

218 “Речи”, Петроград, 19. III. 1916, N 77.

219 “Œuvre des Ecoles d’Orient”. 1916, N 331.

220 Նույն տեղում:

221 “Mission de Mgr Adeb a travers la Mésopotamie”, annexe a la dépêche N 42 de Bassorah du 25 février 1918 (Secret et Confidentiel) // A M A E. N.S., Saint-Siège, tome 67.

222 Տե՛ս ստորև թիվ 247, 335 փաստաթղթերը:

223 Ջավեն արքեպս., նշվ. աշխ., էջ 192-220:

տրնչեն իրենց հայրենիքի ազատագրման համար²²⁴: Պողոս Նուբար փաշայի՝ Կահիրեում գտնվող իր որդուն՝ Առաքել րեյին հղած 1916 թ. նոյեմբերի 10-ի հեռագրից ի հայտ է գալիս Հայկական ազգային ազատվորակության նախագահի խորին համոզմունքը, որ հայերը կարող են փակ աչքերով հավատ բնծայել ֆրանսիական իշխանություններին²²⁵: Նոր կուրսուր ստեղծվում է ֆրանսիական Ռազմական նախարարության որոշմամբ՝ 1916 թ. նոյեմբերի 15-ին. դա Արևելյան լեզոնն է²²⁶: Կիպրոսում, Մոնարզայի մոտ գտնվող՝ բրիտանական կառավարության կողմից տրամադրված մի ռազմական ճամբար, նրա համար կծառայի իբրև հենք: Նրա վարչությունը կվստահվի հրամանատար Ռոմյոյին, որը մարզելու համար կրնողուն առաջին մարդկանց՝ Մուսա լեռան փնխստականներին²²⁷: Ինչ վերաբերում է սյուսներին, Միացյալ Նահանգներում և Հարավային Ամերիկայում Հայկական ազգային ազատվորակության բանագնացները կարագացնեն կամավորների զինվորագրումը²²⁸: Ռոմգին քարոզչությունը, որը սակայն մղվել է խորին գաղտնապահությամբ, կարճ ժամանակամիջոցում հավաքագրում է աշխարհի չորս անկյուններից եկած ավելի քան 2000 զինակոչիկների: Այնժամ, երբ սիրիացի կամ լիբանանցի կամավորների քանակը երբևէ չի գերազանցի վաշտի նշանակությանը, սլատերագմի ավարտին, հայերի թիվը կհասնի գրեթե 4000-ի:

*
* *

1917 թ. մարտն Անդրկովկասում նշանավորվում է իրավիճակի կտրուկ փոփոխությամբ, որը հետևանք է Ռուսաստանում Ռոմանովների անկմանը: Կերենսկու ժամանակավոր կառավարությունը, առաջին իսկ քայլերից, իր համակրանքն է հայտնում Ռուսաստանի կազմում գտնվող ազգությունների ձգտումների հանդեպ և վերացնում է այն արգելքը, որը մինչ այդ խանգարում էր Թուրքիայում կոտորածների ու հալածանքների ժամանակ Կովկաս գաղթած հայերին վերադառնալ՝ վերջերս թուրքերից գրավված իրենց հայրենի տարածքը²²⁹:

Ազգությունների հանդեպ Կերենսկու չափավոր և բարյացակամ քաղաքականությունը խթանում է Պողոս Նուբար փաշային: 1917 թ. հունիսին Հայկական ազգային ազատվորակության նախագահը Քե'Օրսն է հղում մի հուշագիր, որում իր հայրենակիցների անունից պահանջում է միասնական Հայաստանի ստեղծումը, այն է՝ Թուրքահայաստանի վեց վիլայետների հետ մեկտեղ Կիլիկիան՝ Մերսին և Ալեքսանդրետ մավահանգիստներով²³⁰: Հայերը, եթե նույնիսկ այս կոտորածներից հետո խնդրո առարկա վիլայետներում մահմեդականների համեմատությամբ փոքրամասնություն են կազմում, արդարանում է Պողոս Նուբար փաշան, առաջադիմության ու քաղաքակրթության նկատմամբ ունեցած հակումով, երկրի ամենակարևոր տարրերն են:

Սակայն ռուսական նոր վարչակարգը չի կարողանում երկար գոյատևել: 1917 թ. հոկտեմբերին իշխանությունը գրավում են բոլշևիկները: 1917 թ. դեկտեմբերի 5-ին Թուրքիայի պա-

224 Այս փաստաթուղթն այժմ պահվում է Երևանի պատմական արխիվում: Տե՛ս նաև ստորև թիվ 300 փաստաթուղթը:

225 Տե՛ս ստորև թիվ 293 փաստաթուղթը:

226 Տե՛ս ստորև թիվ 296 փաստաթղթի հավելվածը:

227 Տե՛ս ստորև թիվ 301, 362, 375, 379 փաստաթղթերը:

228 Տե՛ս ստորև թիվ 302, 325, 326, 328, 329, 333, 349, 357, 360, 361, 368, 400, 402 փաստաթղթերը:

229 Հմմտ. Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 12-14; Լ.Էռ, նշվ. աշխ., էջ 192-194:

230 Տե՛ս ստորև թիվ 365 փաստաթուղթը (հավելված 1):

հանջով նրանք ստորագրում են Երզնկայի գլխադաշարը²³¹: Պետրոգրյադի խորհրդային կառավարության համաձայնությամբ, Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդն առաջարկում է Հայկական) ազգային) պատվիրակությանը), որ Թուրքահայաստանի գրավված նահանգները հռչակեն իրենց անկախությունը²³², առաջարկություն, որը Հայկական) ազգային) պատվիրակությունը, ինչպես և ղաշնակիցներն իրավամբ մերժում են²³³: Եթե Օսմանյան կայսրությունը չի ճանաչում նոր պետությունը, հիյրավի, ինչպես կարող են ղաշնակիցները երաշխավորել նրա գոյությունը: Ավելի լավ չի լինի, եթե այդ տարածքների հայերի ճակատագիրը կապվի Կովկասի այլ ժողովուրդների ճակատագրի հետ:

Քաղաքական իրավիճակի փոփոխությանը Ռուսաստանում ղաշնակիցներին պարտադրում է, այսպիսով, վերանայել իրենց վարքագիծը Կովկասի տարածաշրջանում: 1917 թ. դեկտեմբերի 23-ին Ֆրանսիական և անգլիական կառավարությունների միջև ստորագրված մի համաձայնագիր Անդրկովկասը և Քրդստանը դնում է անգլիական ազդեցության գոտու ներքո²³⁴: Այնժամ, երբ Փարիզի ռազմական խորհուրդը վճռում է Կովկասի հայկական բանակի վերակազմավորման համար 20 միլիոն ռուբլի դնել գեներալ Ավերիանովի տրամադրության ներքո²³⁵, Մեծ Բրիտանիան խոստանում է Հնդկաստանից Կովկաս տեղափոխել սպաների և զինվորների, որպեսզի ամրապնդի ռազմաճակատի դիմադրողականությունը գերմանաթուրքական հարձակումներից:

Մերժելով խորհուրդների վարչակարգը, Անդրկովկասի ժողովուրդները համախմբվում են՝ կազմավորելու համար անդրկովկասյան ժամանակավոր կառավարությունը: Այդուհանդերձ, նախկին սովորություններն ու մրցակցությունները, որոնք շարունակում են ի հայտ գալ, խանգարում են նրանց սրտառույչ և ամուր ղաշինքի ամրագրմանը՝ ի մեծագույն շահ Թուրքիայի: Արևմտարիելով գլխադաշարը և ընթացքի մեջ գտնվող հաշտության բանակցությունները, նրա զորքերը 1918 թ. փետրվարի 13-ին մտնում են Երզնկա: Նահանջող ռուսական բանակի քիկունքում, առեղի զոհաբերությունների գնով ձեռք բերված տարածքները, մեկը մյուսի ետևից, արագորեն կրկին ընկնում են օսմանյան տիրապետության տակ: Կովկասի ժամանակավոր կառավարության կողմից՝ ասպատակիչների առաջխաղացումը կասեցնելու մտադրությամբ ձեռնարկված հաշտության առաջարկները ձախողվում են և միայն սաստկացնում թուրքերի ծայրահեղ պահանջները:

1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրված հաշտության պայմանագիրը դադարեցնում է ռազմական գործողությունները մի կողմից՝ Ռուսաստանի և մյուս կողմից՝ կենտրոնական տերությունների ու Օսմանյան կայսրության միջև²³⁶: Պայմանագրի 4-րդ հոդվածը նախատեսում է պատերազմի սկզբից ի վեր Ռուսաստանի կողմից գրավված ողջ տարածքի վերադարձը Թուրքիային: Դեռ ավելին, միևնույն հոդվածը պահանջում է, որ ռուսական զինված ուժերի դուրս բերումից հետո, Կարսի, Արդահանի և Բարուսի մարզերի ապագան վճռվի հանրաքվեի միջոցով: Սակայն այս մարզերը Ռուսաստանին էին բռնակցվել Բեռլինի պայմանագրով (1878 թ.) և պատերազմի սկզբից ի վեր դարձել Լին Թուրքիայից զաղրած հագարավոր հայերի ապաստարանը: Անդրկովկասի հայերն ինչպիսի՜ կիսարափություն են ապրում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանների բացահայտումից հետո: Արևմուտքում գտնվող հայերի շրջանում արձագանքը նվազ դառնալով չէ²³⁷: Այսպիսին է

231 Տե՛ս ստորև թիվ 440 փաստաթուղթը: Հմմտ. նաև Մ. Վրացեան, նշվ. տե՛ս, էջ 46:

232 Տե՛ս ստորև թիվ 441, 452, 473, փաստաթղթերը և թիվ 494 փաստաթղթի հավելվածը:

233 Տե՛ս ստորև թիվ 464, 478, 493, 496 փաստաթղթերը:

234 Տե՛ս ստորև թիվ 463 փաստաթղթի ծանուցադրությունը:

235 Տե՛ս ստորև թիվ 461, 466 փաստաթղթերը:

236 Այս պայմանագրի մասին տե՛ս թիվ 544 փաստաթուղթը:

237 Հմմտ. "Le Matin", 6 mars 1918, N 12426.

անողորաբար օսմանյան գորքերին հանձնված Ռուսահայաստանի հուղարկավորության դպանջը:

Գրավված տարածքներից ռուսական գորքերի մեկնումով, Կովկասի ռազմաճակատի պաշտպանության ամբողջ պատասխանատվությունը բարդվում է միայն Կովկասի տեղական ուժերի վրա, որոնք խիստ անբավարար էին թշնամուն դիմադրելու համար: Էրզրումն ընկնում է մարտի 15-ին: Օսմանյան III բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան խսկոյն եւթ պահանջում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածում հիշատակված մարզերը: Սակայն Անդրկովկասի ժողովուրդները հրաժարվում են ճանաչել այնպիսի մի պայմանագրի պարտավորությունները, որը ստորագրվել է առանց իրենց գլխության և բանակցությունների միջոցով որոնում են փոխզիջում: 1918 թ. ապրիլի 9-ին նրանք հռչակում են Անդրկովկասի դաշնային հանրապետության անկախությունը²³⁸: Նոր հանրապետությունն այնժամ համաձայնվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանների հետ, չհամաձայնվելով, այդուհանդերձ, զիջել Բաթումը, Կարսը և Արդահանը: Օսմանյան կառավարության հարատև անհուղողությունն Անդրկովկասը դնում է ամենադժվարին կացության մեջ: 1918 թ. ապրիլի 13-ին նա պատերազմ է հայտարարում Օսմանյան կայսրությանը, որը պարզապես հետևանքներ չունեցող հայտարարություն էր²³⁹: Հաջորդ օրը, 1918 թ. ապրիլի 14-ին, օսմանյան, բեև միջուկ, գորքերն առանց թնդանոթի համազարկ արծուկելու մտնում են Բաթում²⁴⁰: Հանրապետության արդեն երեքուն միասնությունը հույս է ցնդում: Վրացիները հայացքները շրջում են դեպի Գեորգանիա. քաթարներն իրենց փրկությունն ակնկալում են Թուրքիայի իրենց համակրոնակիցներից: Հայերը պատրաստվում են միայնակ դեմ հանդիման ելնել օսմանյան գորքերին:

Ամբողջությամբ ճանաչելով Անդրկովկասի հանրապետության անկախությունը, օսմանյան կառավարությունը, այդուհանդերձ, շարունակում է ասպատակել նրա տարածքը: Այնժամ, երբ 1918 թ. մայիսի 11-ին Բաթումում վերսկսվում են հաշտության բանակցություններն Օսմանյան կայսրության և Անդրկովկասի հանրապետության միջև, վրացիների կողմից լքված և Ադրբեջանի քաթարների կողմից դավաճանված հայերը, ռազմաճակատում մեկ-մեկնակ պաշտպանում են Ռուսահայաստանի գոյությունը: 1918 թ. մայիսի 15-ին օսմանյան գորքերը մտնում են Ալեքսանդրապոլ (Լենինական): Գեներալ Նազարբեկովի և գեներալ Սիլիկովի կողմից գլխավորվող հայկական ուժերը, որոնց աջակցում էին հայկական կամավորական ստորաբաժանումները, կատաղիորեն դիմադրում են թշնամու գրոհներին: Գեներալ Նազարբեկովի հուզիչ կոչն իր հայրենակիցներին, որը նրանց դիմադրության ու ազգային միասնության է հողողում, անարդյուն չի մնում²⁴¹: 1918 թ. մայիսի 18-ից 28-ը կատաղի մարտեր են տեղի ունենում Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Դարաքիլիսայում, Թիֆլիս-Երևան գծից ոչ հեռու և կարելի էր առաջին անգամ տեսնել, թե ինչպես են օսմանյան գորքերը ծանր կորուստներ կրում ու ճողոպրում հայկական ազգային գորքերի առջև²⁴²:

Այս մի քանի հաղթանակներն, այդուհանդերձ, բավարար չեն լինում իրադարձությունների ընթացքը փոխելու համար: Անդրկովկասի հանրապետությունն իր վերջին օրերն է ապրում: «Մենք չենք կարող սուզվել ձեզ հետ», ՀՀԳ-ի ղեկավարներից մեկին՝ Խատիսյանին է

238 Տե ս ստորև թիվ 600, 606 փաստաթղթերը:

239 Տե ս ստորև թիվ 588, 590, 592 փաստաթղթերը:

240 Տե ս ստորև թիվ 600 փաստաթուղթը:

241 Ինչ վերաբերում է գեներալ Նազարբեկովի կոչին, այդ մասին տես ստորև թիվ 613 փաստաթուղթը (հավելված II):

242 Տե ս ստորև թիվ 627-629 փաստաթղթերը և թիվ 757 փաստաթղթի հավելվածը:

պատասխանում Վրացական ազգային խորհրդի նախագահ Շորդանիան²⁴³: 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասի հանրապետության միասնությունը վերջնականապես տրոհվում է: Նույն օրը, կեսօրին, Վրաստանը հռչակում է իր անկախությունը. Ադրբեջանը նրան է հետևում մայիսի 28-ին: Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդը մնում է անորոշ վիճակում: Այդուհանդերձ, անկախ պետության լիազորությամբ է, որ նրա պատգամավորները մայիսի 28-ի երեկոյան ներկայանում են Բաքումի կոնֆերանսին, նախքան օսմանյան վեջնագրի սպառումը՝ հաջորդ օրը երեկոյան: Հայաստանի հանրապետության պաշտոնական հռչակումը տեղի կունենա միայն 1918 թ. մայիսի 30-ին²⁴⁴: Այդքան դարեր տևած հայատակությունից և հարստահարումներից հետո, հավաստում է այդ անցքերի ականատես, ՀՀԳ-ի քաղաքական գործիչ Վրացյանը. «միայն իրադարձությունների թելադրանքով էր, որ Հայաստանի հանրապետությունը դարձավ իրականություն»²⁴⁵:

Բաքումի բանակցություններն ավարտվեցին հաշտության պայմանագրով, որը Կովկասի երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև ստորագրվեց 1918 թ. հունիսի 4-ին, կենտրոնական տերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Օսմանյան լիազոր ներկայացուցիչներն իրենց պայմանների թելադրեցին վրացիներին և հայերին: Հայաստանի հանրապետության տարածքը նվազեցվում է և հասցվում 10000 կէկրոմետր քառակուս. . որը բավարար չէ Կովկասում բնակվող նրա բուն բնակիչների համար²⁴⁶:

Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրված պայմանագիրն, այդուհանդերձ, չի նշանակում Կովկասում ռազմական գործողությունների ավարտը. որտեղ շրշնակիցները շարունակում են պատերազմը գերմանա-թուրքական խմբակցության դեմ: Հայերի օգնությամբ, անգլիական ուժերը հսկում են Բաքու քաղաքը, որը դառնում է թուրքերի գլխավոր նպատակը: Այնժամ, երբ 1918 թ. հունիսի վերջերին, Գերմանիայի առաջարկությամբ Կոստանդնուպոլսում գումարվում է հաշտության մի նոր կոնֆերանս, որտեղ ներկայացված են Անդրկովկասի երեք հանրապետությունները²⁴⁷, օսմանյան գործերն արագացնում են իրենց առաջընթացը դեպի Կասպից ծով:

Հարավում, Պատեախիմի ռազմաճակատում, գրեթե քաղաքապես հայ կամավորներից բաղկացած Արևելյան լեզևոնր խանդավառությամբ մասնակցում է մարտերին, իր արժեքավոր ներդրումն ի սպաս դնելով դաշնակիցների հաղթանակի գործին Պատեախիմում և Սիբիայում²⁴⁸: Սակայն Բաքվում, օսմանյան գործերի մերձեցմամբ քաղաքի վրա քաղաքացիները, 1918 թ. կեսերին կազմակերպում են քաղաքի հայերի համընդհանուր կոտորած: Երեք օրվա ընթացքում սպանված հայերի թիվն անցնում է 15000-ից²⁴⁹:

Չնայած Կովկասում իր բանակի գերիշխող դիրքին, Օսմանյան կայսրության ընդհանուր վիճակը չի բարելավվում: Երկտթուրքերն իրազեկ են, որ անձնատրության ժամը մոտենում է և որպեսզի խուսափեն դաշնակիցների արդարադատությունից, նյութը ընդունելի են համարում բոլոր միջոցները: Գաղտնաբար հավաքվելով՝ ՍԱԿ-ի ղեկավարները որոշում են թողնել իշխանությունը՝ փախուստի դիմելու համար, նախարարների նոր խորհրդի կազմավորումը նախապես վստահելով այնպիսի տարրերի, որոնք անմնացորդ նվիրված են իրենց: 1918 թ.

243 Հմմտ. Ա. Խատիսեան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Արև.Սր., 1930, էջ 65:

244 Տե՛ս Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 130:

245 Նույն տեղում:

246 Ա. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 69-71:

247 Տե՛ս ստորև թիվ 647 փաստաթուղթը: Հմմտ. նաև Ա. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 79-88:

248 Տե՛ս ստորև թիվ 693 փաստաթուղթը (և հավելվածը), թիվ 695, 746 փաստաթղթերը:

249 Բաքվի իրադարձությունների մասին տե՛ս ստորև թիվ 688, 697, 701, 718, 756 փաստաթղթերը (և վերջինիս Է-Վ հավելվածները):

հոկտեմբերի կեսերից, Կոստանդնուպոլսում լուրեր են տարածվում ՄԱԿ-ի ղեկավարների մոտարուտ ձերբակալության մասին, որոնք մեղադրվում են քրեական հանցանքների և տեղահանվածների ունեցվածքները կողոպտելու համար²⁵⁰: Դ-իկտոյր Նազըմը և Ազիզ բեյը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Միդիաթ Շյուքրյուի օգնությամբ դիմում են նախագրուշական ծայրահեղ միջոցների, որպեսզի ՄԱԿ-ի նստավայրից և Կոստանդնուպոլսի անվտանգության կոմիտեից տեղափոխեն բոլոր վարկաբեկիչ փաստաթղթերն այն պարագայում, եթե ծառանա դաշնակցային իշխանությունների կողմից՝ դրանք հափշտակելու վտանգը²⁵¹:

1918 թ. հոկտեմբերի 30-ին, չորս տարի տևած պատերազմից հետո, Թուրքիան Մեծ Բրիտանիայից հաշտություն է խնդրում, որը և ստորագրվում է Մուդրոսում²⁵²: Համաձայնագրի հողվածները հայ ժողովրդի համար որևէ երաշխիք չեն պարունակում: Հայաստանում չի պահանջվում նույնիսկ մահմեդական բնակչության զինաքափում²⁵³ և հայերը կատարյալ ցնցում են ապրում²⁵⁴:

Նախարարների օսմանյան նոր խորհրդի առաջին մտահոգությունը՝ իր վարկի վերականգնումն է արևմտյան հասարակական կարծիքի առջև: Հայր է չքմեղացնել և արդարացնել թուրք ազգին, որը մեղադրվում է հայերի և հույների հանդեպ գործադրված հանցանքների և կողոպուտների ունեցած մեղսակցության համար²⁵⁵: Կառավարությունը և Կոստանդնուպոլսի թուրքական մամուլը ձեռնամուխ են լինում գահրնկեց եղած նախարարների խորհրդի գլխավոր անդամների հրապարակային մեղակացմանը, այնժամ, երբ ծածուկ, ՄԱԿ-ին համակրող՝ գեներալ Ահմեդ Իզզեթ փաշայի նախարարների խորհրդի անդամները թույլատրում են, որ մեղավորներն ազատ փախուստի դիմեն, խաբելով, այսպիսով, արևմտյան հասարակական կարծիքը: Այսպիսով, հայերին և հույներին հազարներով կոտորելուց, բոլոր սեփական ունեցվածքներից, ինչպես նաև համաժողովրդական սեփականությունից²⁵⁶ նրանց զրկելուց, երկիրն ավերակների վերածելուց հետո, Թալեսթ-Էնվեր-Ջեմալ նշանավոր եռյակն իր հավատարիմ հանցակիցների՝ դ-իկտոյր Նազըմի, Բեդրի բեյի, Ազմի բեյի, դ-իկտոյր Բեհեդյի Շաքիրի և Ջեմալ Ազմիլի հետ մեկտեղ հայտնվում է գերմանական Ս 17 սուզանավում և 1918 թ. նոյեմբերի 2-ի լույս 3-ի գլշերը հեռանում Բոսֆորի ափերից: Փախստական հանցագործները թաքնվում են Եվպատոլիայում՝ Դրիմում: Այդտեղից սնապարծ Էնվեր փաշան, որի դաժանությունը հավասարազոր է միայն նվաճումների ծարավին, նոր սխրանքների համար կրկին մեկնում է Կովկաս, այնուհետև՝ Կենտրոնական Ասիա: Մյուսները գնացրով Սևաստոպոլից գնում են Բեռլին, ուր թաքնվում են կեղծ անունների տակ, չիրաժարվելով, այդուհանդերձ, մեքենայություններից, որոնք՝ փոխհատուցման կարգով, նրանք այդ հույսը տաժում են, պաշտոնի ընտրության էմարավորություն կրնձեռեն Կոստանդնուպոլսում²⁵⁷:

Քանի որ մեր ժողովածուի փաստաթղթերը եզրափակվում են 1918 թ. նոյեմբերի 11-ի գինադադարով, մենք պետք է, որ մեր ուսումնասիրությունն այստեղ ավարտելինք, եթե իրադարձությունների շարունակությունը դրա յուրօրինակ վերջաբանը չհանդիսանա:

ՄԱԿ-ի գլխավոր ոճրագործների փախուստից հետո է միայն, որ Կոստանդնուպոլսում

250 Տե՛ս ստորև թիվ 711 փաստաթուղթը:

251 Հմն. «Takvim-i Vakayi», N 3554, p. 74.

252 Ինչ վերաբերում է հաշտության պայմաններին, տե՛ս ստորև թիվ 724 փաստաթուղթը:

253 Այնժամ, երբ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի զինարավումն Անտանտի պահանջներից է:

254 Տե՛ս ստորև թիվ 730, 733, 741, 750 փաստաթղթերը:

255 Հույների տեղահանությունների և կոտորածների մասին տե՛ս ստորև թիվ 637 փաստաթուղթը:

256 Ժամանակակից պատմաբաններից ոչ մեկը չի ջանում գիտենալ, թե ի՞նչ է տեղի ունեցել տեղահանված հայերի և հույների ունեցվածքների հետ:

257 Տե՛ս S. S. Aydemir, op. cit., vol. III, pp. 470-471.

ձեռնամուխ են լինում բուրբակյան ազգայնամուտական կուսակցության հանրահայտ անդամների առաջին ձեռքակալություններին²⁵⁸: Ահմեդ Իզգեթ փաշայի նախարարների խորհուրդը, համակրելով երիտրուրբերին, երկրի նախկին ղեկավարների փախուստից հետո կրածարական էր տվել: 1918 թ. ղեկտեմբերի սկզբին, հիշատակվում են արդեն ՄԱԿ-ի 130 ազդեցիկ անձանց անունները, որոնք ներգրավված են հայերի դեմ ուղղված կոտորածների և տեղահանությունների գործում²⁵⁹: Ջինադադարի հաջորդ օրը ցրված ՄԱԿ-ն արդեն ծնունդ է տվել միևնույն սկզբունքներին հալոդ բազմաթիվ կոմիտեների: Ահա թե ինչու, չնայած ապացույցների ակնհայտությանը, 1918 թ. ղեկտեմբերից մինչև 1919 թ. ապրիլ, հանցագործներին պատժելու համար, օսմանյան նախարարների խորհուրդներից և ոչ մեկը չի համարձակվելու զնալ մինչև վերջ: Ներքին գործերի նախարար Իզգեթ բեյը, լրագրողներից մեկին կհայտնի նույնիսկ այս կարծիքը.

«... Ոճրագործները բուն մահմեդականները չեն, այլ ղեկոմեները»²⁶⁰:

Ռազմական դատարանի կողմից առաջինը մահվան դատապարտվածը, նաև մյուսը, որի նկատմամբ կիրառվել է մահապատիժ, կլինի Բողազլուսնի կայմակամ և Յոզդադի նախկին մուրասարիֆի պաշտոնակատար Քյամիլ բեյը²⁶¹: 1919 թ. ապրիլի 10-ին, ժ. 19.20-ին, Կոստանդնուպոլսի Բայագետ հրապարակում ավելի քան 50000 հայերի դահճին կախաղան բարձրացնելը մայրաքաղաքի մահմեդականների շրջանում և երկրի մյուս շրջաններում գայլույթի ալիք է վեր հանում: Նրանց հուզմունքը հասկանալի է. կայսրության պատմության մեջ առաջին անգամ օսմանյան զինվորական դատարանը ոչ մահմեդական իր հպատակների նկատմամբ արդարացի լինելու համար, այսինչ էր բարձրաստիճան բուրբ պաշտոնյայի մահապատիժը:

Երիտրուրբ ղեկավարների դատավարությունը, որոնց հայց է ներկայացվում հազարավոր հայերի սպանության, կողոպուտի և հարածանքի համար, սկսվում է 1919 թ. ապրիլի 27-ին, Կոստանդնուպոլսի զինվորական դատարանում: Արտասահմանում փախուստի մեջ գտնվող ՄԱԿ-ի գլխավոր ղեկավարների բացակայության պայմաններում, դատապարտյալների արոռը զբաղեցնում են մեծ մասամբ երկրորդական դեմքերը՝ Սաիդ Հալիմ փաշան, Միդիաթ Շյուրբյուն, Կոստանդնուպոլսի զինվորական կառավարիչ Ահմեդ Ջևադը, Աթիֆը, Հալիլ բեյը, Ջիա Գյոքալիքը, քուշուր²⁶² Թալեսթը և ուրիշներ... 1919 թ. ապրիլի 12-ին գլխավոր դատախազի կողմից կազմված և 1919 թ. ապրիլի 27-ին զինվորական դատարանի առաջին նիստի ընթացքում ընթերցված մեղադրական ակտը, Հայոց ցեղասպանության կանխամտածվածության շուրջ որևէ կասկած տաժեկու տեղ չի բողոմում: Օսմանյան «Թաքվիմ-ի վաքայի» պաշտոնաթերթը դատավարության ընթացքում տպագրում է, ի դեպ, անհերքելի ապացույցներ, որոնց թվում, այնպիսիք, որոնք մենք վերև ուշադրության ենք արժանացրել: Եվ, այդուհանդերձ, չնայած այս բոլոր ծանր մեղադրանքներին, երիտրուրբերի դատավարությունը կարճ է տևելու... դաշնակիցների մրցակցության հետևանքով, որն անհապաղ կրկին կյանքի կոչվեց Օսմանյան կայսրության մասնատման պատճառով:

Եգիպտոսը և Միջագետքն իր կայսրությանը միացնելու միջոցով յուրացնելով առյուծի բաժինը, Մեծ Բրիտանիան այժմ ցանկանում է հաշտվել Թուրքիայի հետ: Ահա և երեկվա

258 Ռազմական դատարանը, որը պարտավորված է արժանին հատուցել պատերազմի՝ երիտրուրբ հանցագործներին, ի տարբերություն այն բանի, ինչ տեղի կունենա Նյուրնբերգում, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, կազմված է բացառապես բուրբ սպաններից և ղեկավարվում է դիվիզիոնային գեներալ Նազըմ փաշայի կողմից:

259 Հմմտ. "Tasvir-i Efkar", 7 rebi-ul akher 1337 [9 janvier 1919], N 2616.

260 "Tasvir-i Efkar", 3 cemad-ul evvel 1337 [3 février 1919], N 2641.

261 Տե՛ս օսմանյան պաշտոնաթերթը՝ "Takvim-i Vakayi", 12 redjed 1337 [12 avril 1919], N 3520. Հմմտ. նաև "The Times", 14 April 1919, N 42074.

262 «Քուշուր» բուրբերեն նշանակում է «գիրք»: «Քուշուր» կեղծանունով են կոչել ՄԱԿ-ի ղեկավարության անդամին, տարբերելու համար նրան երիտրուրբ պարագլու Թալեսթ բեյից:

ըշնամու համակրանքն ու վստահությունը շահելու ցանկալի առիթը: Հանկարծ, 1919 թ. մայիսի 28-ին, բրիտանական ծովակալությունը «Արքայադուստր Էնա» նավով Մալթա կղզի է տեղափոխում ՄԱԿ-ի ամենավարկաբեկված անդամներից 67-ին²⁶¹, որտեղ արդարացի և անկողմնակալ դատավարության սպասելու պատրվակի ներքո, «նենգ Ալբիոնը» պատրաստվում է նրանց ապաստանել երկու տարի շարունակ, նախքան նրանց պարզապես ազատ արձակելը:

1919 թ. հուլիսի 5-ին զինվորական դատարանը հայտնում է իր դատավճիռը: Թալեսթը, Էնվեյը, Ջեմալը և դոկտոր Նազրմը, օսմանյան քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի I պարբերության հիման վրա, հեռակա կարգով դատապարտվում են մահվան²⁶², ինչպիսի բախտի ավելի ուշ կարծանանան դոկտոր Բեհեդդին Շաքիրը, Նայիլ բեյը և Ջեմալ Ազմին²⁶³: Մյուս դատապարտյալները, ինչպիսիք են Ջավիդ բեյը, շեյխ-ուլ Իսլամ Մուսա Քյազիմ Էֆենդին, Մուստաֆա Շերեֆ բեյը, դատապարտվում են 15 տարվա հարկադրական աշխատանքների: Սակայն դա ևս միայն ձևական բնույթ է կրում. նրանք չեն հասպաղի վերստին ձեռք բերել իրենց ազատությունը: Ինչ վերաբերում է մյուս դատապարտյալներին, որոնք ամենքը ՄԱԿ-ի անդամներ են, ապա նրանք բոլորը փոքր անց ազատ են արձակվում ապացույցների բացակայության պատճառով: 1915-1918 թթ. Փոքր Ասիայի ավելի քան երկու միլիոն հայեր տեղահանվել են, կոտորվել, նրանց ունեցվածքները կողոպտվել են ու բռնագրավվել, հազարավոր հույներ անհետ կորել են և կողոպտվել, իսկ պատժվելու համար չեն գտնվել նույնիսկ տասն անձիք ...

ՄԱԿ-ի գլխավոր ոճրագործները փախուստի մեջ են գտնվում Եվրոպայում և դաշնակիցները գրեթե չեն մտահոգվում դատավճիռները կիրառելու հարցով՝ ի մեծ զոհունակությամբ օսմանյան կառավարության, որն այլևս չի ցանկանում նրանց ձեռքբերելու ու մահապատժի ենթարկել: Անտանտի անտարբերությանն ի տես, ՀՀԴ-ի անդամներն իրենք են պարտավորվում պատժել ՄԱԿ-ի ոճրագործների պարագլուխներին: 1921-1922 թթ. Թալեսթը, Սաիդ Հալիմը, Բեհեդդին Շաքիրը, Ջեմալ Ազմին և Ջեմալը կընկնեն, մեկը մյուսի ետևից, հայ ֆիդայիների զնդակներից:

*
* *

Ի սկզբանե, Հայաստանը հատել է բազում ժամանակաշրջաններ, որոնք նշանավորվել են ասպատակություններով ու աղետներով, սակայն և ոչ մեկը հնարավոր չէ համեմատել այն ողբերգության հետ, որը նա ապրեց Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Հայերի նկատմամբ երիտրույքերի որդեգրած և անողորմաբար իրականացված քաղաքականությունը, իր տեսակի մեջ, եզակի օրինակ է ժամանակակից պամության մեջ: Հիրավի, ոչ մի ժողովուրդ, այսպիսի կարճատև ժամանակաշրջանում և իր հայրենիքում, բազմաթիվ հազարամյակներից ի վեր իրեն պատկանող հայրենի հողի վրա անհետ չի կորել, ինչպես այդ պատահել է հայ ժողովրդի հետ 1915-1918 թթ.: Թալեսթ փաշան և Նուրուօսմանին փողոցի խլմբակցությունը, մի բուռ մարդիկ, բախտախնդիրներ ու նորերուկներ, հղացել են և իրականացրել «ազգային» մի նախագիծ, որին նրանց նախորդներից և ոչ մեկը, անգամ Կարմիր սուլթան Աբդուլ Համիդը, չի համարձակվել ձեռնամուխ լինել: Հալիլ բեյը, այն ժամանակվա օսմանյան խորհրդարանի նախագահը, հայ ժողովրդի ոչնչացման պատասխանատուներից մեկը, 1946 թ., մինչ ՄԱԿ-ի կողմից 1948 թ. ստորագրված ցեղասպանության համաձայնագիրը տպագրված իր հուշերում սառնասրտորեն խոստովանում է այն նպատակը, որը հե-

263 Հմմտ. "The Morning Post", 2 June 1919, N 45874; "The Daily Telegraph", 7 June 1919, N 20014.

264 Տես օսմանյան պաշտոնաթերթը՝ "Takvim-i Vakayi", 22. VII. 1337 [1919], N 3604. Հմմտ. նաև "The Daily Telegraph", 14 July 1919, N 20045; "The Times", 14 July 1919; "The Morning Post", 14 July 1919, N 45910.

265 Տրախիզոնի տեղահանության և կոտորածների դատավարության դատավճիռի մասին տես օսմանյան պաշտոնաթերթը՝ "Takvim-i Vakayi", N 3616.

տապնդվել է օսմանյան կառավարության կողմից.

«... Նթե մեր արևելյան վիլայեթները մենք չմարտազարդեինք հայ հեղափոխականներից, որոնք համազարծակցում էին ռուսների հետ, մեզ համար անհնար կլիներ հիմնադրել մեր ազգային պետությունը»²⁶⁶:

Որբա²⁶⁷ է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում զոհված հայերի քիվը: Ճշգրտորեն այն ունենալն անկասկած անհնար է: Ներկայումս հաշվարկները դեռևս խիստ տատանողական են: Ջեմալ փաշան ընդունում էր միայն 600000 մահացության դեպքեր²⁶⁷, սակայն զերմանացի մի միսիոներ Մալաթիայից, որը ևս իրադարձությունների ակամատեսն է, արդեն 1917 թ. մարտին գտնում էր, որ հայ ժողովուրդը կրել է ավելի քան մեկ միլիոնի հասնող կորուստ²⁶⁸: Օսմանյան կայսրությանը մվիլված, վերջերս լույս ընծայված աշխատություններից մեկի հեղինակները՝ Ստանֆորդ Շոուն և Էզել Քուրալ Շոուն, մատնանշում են հազիվ 200000 անհետ կորած անձանց²⁶⁹: Բայց այդ դեպքում որտե՞ղ է անհետացել հայ ժողովրդի մյուս մասը: Համաձայն Ֆորին Օֆիսի խիստ իրազեկ սկզբնաղբյուրների, զոհերի ինդիանուր քիվը հասնում է 1500000-ի²⁷⁰: 1917 թ. ապրիլին, Ալեքսանդրետում ամերիկյան դիվանագիտական գործակալ Բրեուսերը, անհետացած՝ կամ սպանված, կամ սովից, հյուծվածությունից ու համաճարակից մահացած հայերի քիվը հաշվում է երկու միլիոնի սահմանում²⁷¹:

Հավաստի է այն, որ հենց պատերազմից հետո Հայկական հարցը վերհանելն այլևս հնարավոր չէ, քանզի Թուրքահայաստանում հայեր այլևս չկան: Մտնելով Պիոլատոս Պոնտացու դերի մեջ, Անտանտն, ի վերջո, զոհունակությամբ է ընդունում օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի բնաջնջումը: Գարշելի քուրքի ձեռքերը, որոնք արդեն ողողված են Բականներլի քրիստոնյա ժողովուրդների արյունով, լուծել են Բեռլինի վեհաժողովից ի վեր Եվրոպային անհանգստություն պատճառող հարցը: 1918 թ. նոյեմբերի 11-ի զինադադարին հաջորդած շրջանին վերաբերող մեր ուսումնասիրությունները մեզ քույլատրում են համառորեն պնդել, որ դաշնակիցները երբեք լքողեն չեն նախատեսել անկախ Հայաստանի ստեղծումը Փոքր Ասիայում: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը, որն ընդունում է Հայաստանի անկախությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ չարաբաստիկ կատակերգություն և այն, ի դեպ, երբևէ հաշվի չի առնվել: Ինչպես և Աբդուլ Համիդի կոտորածների ժամանակ, բարոյական սկզբունքները մեկընդմիջտ գոհաբերվել են համուն մեծ տերությունների սեփական շահերի:

Օսմանյան կայսրությունը, Եվրոպայի՝ տարբեր ժողովուրդների այդ խճանկարի «հիվանդ մարդը», համաշխարհային պատերազմի ավարտից հետո առհավետ վերանում է քաղաքական բեմահարթակից: Մի քանի տարի անց, Լոզանում, 1923 թ. վերածնվում է ավելի համատարր և ավելի հավաք Թուրքիայի հանրապետությունը, մի բան, որը Ֆիլիպ Փրայսն ամփոփում է այսպես. «1918 թ. քուրքերը կողքին կայսրությունը, բայց նրանք շահեցին մի ազգ, վերստին առողջ մի ազգ, ինչպիսին էին օսմանները վեց դար առաջ, երբ առաջին անգամ երևան եկան Փոքր Ասիայում»²⁷²: Սենք բաժանում ենք անգլիացի պատմաբանի կարծիքը, բայց դրան կավելացնենք պարզունակ մի ճշգրտում՝ Թուրքիայի հանրապետության համատարրությունը խարսխվում է երկրի երկու ժողովուրդների՝ հայերի և հույների վերացման վրա: Հայոց ցեղասպանությունը, որի յղմաց առ այսօր չի հատուցվել որևէ ռեպարացիա՝ ոչ նյութական, ոչ քարոյական, դեռևս մնում է ժամանակակից պատմության չլուծված հարցերից մեկը:

- Ա. Պ.

266 Y. H. Bayur, op. cit., vol. II, partie 4, p. 654.

267 Հմմտ. Djemal Pasa'nin hâtirati, p. 279.

268 Sû u J. Lepsius, op. cit., p. 353.

269 Sû u Stanford Shaw and Ezel Kural-Shaw, op. cit., p. 316.

270 Հմմտ. Frank Owen, Tempestuous journey. Lloyd George his life and times, London, 1954, p. 654.

271 Sû u ստորև քիվ 356 փաստաթղթի հավելվածը:

272 Հմմտ. M. Philips Price, A History of Turkey. From Empire to Republic, London, 1956, p. 95.

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1

**Գաղութների նախարար պ. Գաստոն Գումերգը՝
Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին**

Փարիզ, 12-ը սեպտեմբերի 1914 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. սեպտեմբերի 15-ին):

Ընթացիկ սեպտեմբերի 8-ի նամակով¹, որը վերաբերում է Ջիբուտիում և Աբիսսինյում գտնվող հայերի դրսևորած՝ օսմանյան կառավարության արձակած զորահավաքի հրամանին չենթարկվելու մտադրություններին, դուք բարեհաճել էիք ինձ տեղեկացնել, որ համաձայն ձեր կարծիքի, անհրաժեշտ է այս օտարերկրացիներին գործելու ազատություն ընձեռել ըստ իրենց հայեցողության, ճիշտ այնպես, ինչպես, ի դեպ, նման գաղափար էր հղացել Սոմալիի ափի կառավարիչը²:

Ես սլատիվ ունեմ ձեզ հայտնել այդ հաղորդագրության ստացման մասին և տեղեկացնել, որ ունենալով նույնպիսի մտադրություն, ինչպիսին ունեք, ի դեպ, դուք և նախարարների խորհուրդը, մենք բացարձակապես չենք օժանդակել օտար երկրի և, մասնավորապես, Ֆրանսիայի դաշնակիցը չհանդիսացող պետության զորահավաքին: Սեպտեմբերի 7-ից ի վեր, ես Ջիբուտիի կառավարչին կոչել եմ զորակոչված հայերին, ըստ իրենց ցանկության, զազդթում մնալու հարցում գործողությունների ազատություն ընձեռել և նրանց ընդունել բարյացակամությամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 846, f. 75).

2

Պ. Պոնտալիսի հաղորդագրությունը Գեպարտամենտին

16-ը սեպտեմբերի [1914 թ.]*:

Յար Նիկոլայը Կովկասի հայագլխի բնակչությանն է հղել մի հայտարարություն. ահավա-

1 Չի հայտնաբերվել:

2 Կառավարչի պաշտոնակատար պ. Դելտելը:

«Դեպարտամենտի ծանոթագրությունը, որն արված է նույն բնագիրը պարունակող հեռագրի վրա (թ. 27-28) և որը մենք չենք արտատպում այնտեղ առկա բացթողումների պատճառով. «Այս հայտարարությանը, թվում է, թե հրապարականություն չի տրվել (եթե այն նույնիսկ իրական է): Պ. Իզվոլսկին որևէ ցուցում չունի: Դա կլինի Թուրքիային ուղղված պատերազմի բացահայտ հռչակագիր և, հավանաբար, պատրաստվել է այն պարագայի համար, երբ Թուրքիան հարձակման անցնի»:

սիկ դրա բնագիրը: Այն ընթերցվել է Կովկասի փոխարքայի¹ կողմից երևելի հայերի ժողովում, որը և արտատպում է «Ժուրնալ դը Ժնևը»:

«Հայեր!»

Իմ ձայնից, վսեմ պոռթկումով ոտքի են ելել Մեծ Ռուսիայի ժողովուրդները՝ Արևմուտքից Արևելք: Հայեր, հինգ դարերի հարստևած բռնակալական լծից հետո, որի օրոք ձեր հարազատները զոհվել են այդպիսի մեծ թվով և այնժամ, երբ շատ ուրիշները շարունակում են ենթարկվել ամենազազրելի բռնությունների, ձեզ համար վերջապես հնչել է ազատության ժամը: Ռուս ժողովուրդը ոչ առանց հպարտության է հիշում իր հայորդի նշանավոր զավակներին, ինչպիսիք են Լազարևները, Մելիքովները և ուրիշներ, որոնք իրենց սրավոն եղբայրների կողքին մարտնչել են հանուն հայրենիքի վեհության: Ձեր դարավոր հավատարմությունն ինձ համար գրավական է առ այն, որ այս հանդիսավոր օրերին դուք կկատարեք ձեր սրբաբանությանը՝ տոգորված մեր գեներլի և մեր արդար գործի վերջնական հաջողության հանդեպ ունեցած անսասան հավատով:

Հայեր, ձեր եղբայրների հետ միասին, համախմբված ցարերի զավագանի ներքո, դուք վերջապես կճաշակեք ազատության և արդարության բարիքները»:

(A.M.A.E. Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 29-30).

3

Վանում Ֆրանսիայի փոխհյուպատոս պ. Բարտ դը Սանֆորը՝ Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան պ. Բոնպարին

Ճ. թիվ 34:

Վան, 19-ը սեպտեմբերի 1914 թ.:

(*Unwgtl* է. Բաղ. վարչ. հոկտեմբերի 18-ին):

Ես պատիվ ունեմ հաստատել Ձերո գերազանցությանն ուղղված երեկվա թվակիր իմ հեռագիրը², որը վերաբերում էր Էրզրում մեկնած 33-րդ դիվիզիայի բոլոր զորքերին՝ հետևակի 97-րդ, 99-րդ, 52-րդ գնդերին, հեծելազորի 23-րդ գնդին, լեռնային հրետանու երեք և դաշտային հրետանու երկու մարտկոցներին, որոնք վերջերս կցվել են 34-րդ դիվիզիային (Մուշի) և գնդացրորդների մի գումարտակի:

Մտտ ապագայում համիդիեների երկու հեծելազորային գնդեր կմեկնեն, որոնցից մեկը կենտրոնացված է այստեղ, մյուսը՝ Արճեշում և Աբաղայի հովտում:

Այս ուժերի ընդհանուր թվաքանակը կազմում է 8-ից 10000 մարդ:

Մյուս կողմից, ընթացքի մեջ է երկու քրդական հրոսակախմբերի կազմավորումը, որոնք կուղարկվեն դեպի ռուսական սահման: Ինձ հավաստում են, որ Էրզրումում կազմավորվել են երեք այլ հրոսակախմբեր: Այն հրոսակախումբը, որին ես անդրադարձել եմ իմ վերջին զեկուցագրում, արդեն Պարսկաստան տանող ճանապարհին է:

Համաձայն համընդհանուր կարծիքի, թուրքերը փորձում են Ռուսաստանի հետ միջադե-

1 Գեներալ Վորոնցով-Դաշկովը:

2 Արտատպված չէ:

պեր հրահրել և նրան պարտադրել այս պատերազմի նախածեռնությունը, հույս տաձելով՝ այս միջոցով վանել Ֆրանսիայի ու Անգլիայի միջամտությունը:

Հայերը, որոնք մեծ մասամբ զինվորագրված են ժանդարմերիային, կտեղաբաշխվեն վիրայերում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 846, f. 138).

4

Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան պ. Բոմպարը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին

Հ. քիվ 456:

Տերապիա, 30-ը սեպտեմբերի 1914 թ., ժ. 23.30-ին:

(*Սուսցվել է* հոկտեմբերի 1-ին, ժ. 8.15-ին):

Ես պատասխանում եմ ձեր 81 հեռագրին¹:

Պ. Հոֆֆին պաշտոնանկ չեն արել, այլ կանչել են Կոստանդնուպոլիս: Նրա գործընկերոջը՝ Վեստենենկին, որը դեռևս չէր մեկնել զբաղեցնելու իր հաստիքն այն պահին, երբ բռնկվեց պատերազմը. պահել են Կոստանդնուպոլսում, այնուհետև՝ նրան վճարել են աշխատավարձի կեսի չափով: Նա վերադարձել է Հոլանդիա՝ պաշտոնանկ արվածի կարգավիճակով: ...² ակնհայտ է, որ քանի դեռ Եվրոպան չկարողանա այդտեղ հսկողություն սահմանել, բարենորոգումների տեսուչների առաքելությունը Հայաստանում չի ունենա և ոչ մի գործնական արդյունք: Բարձր Դուռը փորձում է օգտվել հսնգամանքներից, աստիճանաբար այն վերացնելու համար: Բարեբախտաբար չի կառողացել [sic] վայրագորին հաշվեհարդար տեսնել նրա հետ, ինչպես ամեն օր վարվում է այն հաստատությունների հետ, որոնք նրան խանգարում են, բայց որոնք, այդուհանդերձ, Թուրքիայի փրկության գրավականն են:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 846, f. 234).

5

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին

Հ. քիվ 844: Գաղտնի:

Պետրոգրադ, 4-ը նոյեմբերի 1914 թ., ժ. 12.39-ին:

(*Սուսցվել է* ժ. 5.20-ին):

1 Չի հայտնաբերվել:

2 Վերձաննան բացրողում:

Ըստ պ. Սազունովից ստացված գաղտնի տեղեկության, թուրքերի դեմ Ասիայում գործելու կոչված ռուսական զորքերի անձնակազմը հասնում է 160000 մարդու:

Ռուսական ռազմական շտաբի մտադրությունը նախ՝ դեպի Ադրբեջան տանող ուղիների վրա իշխող ռազմավարական դիրքերի ապահովության երաշխավորումն է, իսկ այնուհետև՝ պաշտպանության ամրապնդումը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, f. 6).

6

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 851:

Պետրոգրադ, 5-ը նոյեմբերի 1914 թ., ժ. 10.22-ին:
(*Ստացվել է* 6-ին, ժ. 6.36-ին):

Ռուսական զորքերը գլուխով գրավել են Բայազետի թուրքական կարևոր բերդամրոցը, որն իշխում է Վանի ճանապարհի վրա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, f. 7).

7

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 1174:

Պետրոգրադ, 30-ը դեկտեմբերի 1914 թ.:
(*Ստացվել է* ժ. 21.10-ին):

Ռազմական կցորդի տեղակալից՝ Ռազմական նախարարի համար:

«Համաձայն Գլխավոր շտաբ հասած տեղեկությունների, Հայաստանում -տիրում է հետևյալ իրավիճակը.

1/ Ծովափի շրջանում քուրքական անկանոն զորքերի երկու ջոկատներ, որոնք գտնվում էին Ավնի փաշայի հրամանատարության ներքո, մոտավորապես քսանից քառասուն կիլոմետր տարածության վրա կարողացել են թափանցել ռուսական տարածք, գրավել Երորխի ջրային ճանապարհը և սպառնացել են Բաթումին: Այս ջոկատները ներկայումս նահանջում

են դեպի սահմանը:

2/ Թուրքական III բանակը (Իզզեթ փաշայի), որը բաղկացած է բանակային 9-րդ, 10-րդ և 11-րդ կորպուսներից, զբաղեցնում է Էրզրում-Հասան-Կալե շրջանը: Նա հսկողության տակ է պահում Էրզրումից դեպի Օլթի և Կարս տանող ճանապարհները, որոնք կեսից հատում են մինչև ուսսական սահմանն ընկած տարածությունը:

Որոշ տեղեկություններ ազդարարում են 30-րդ դիվիզիայի տեղաշարժը հյուսիսից դեպի Օլթի:

3/ Եփրատի բարձրադիր հովտի (Ալաշկերտի հովտի) հարավ-արևմտյան ելման դիրքերը թվում է, թե պահպանվում են միայն անկանոն գործերի միավորումներով, որոնք փոխարինել են դեպի Վան ուղղություն վերցրած 37-րդ (Միջագետքի) դիվիզիային:

[4]/ Այս վերջին վայրում, անկանոն գործերի և պահեստայինների ջոկատները Սալրայի արևմուտքում հսկում են Խոյի ճանապարհի ելման դիրքերը և Բաշ-Կալեի շրջանում՝ Դիլմա-նից եկող ճանապարհները:

5/ Ավելի հարավում, արձանագրվել են քրդական անկանոն գործերի շարժումներ դեպի Ուրմիա լճի շրջանը:

6/ Երկրի լեռնային բնույթը և առատ ձյունը թվում է, թե ներկայումս պետք է խանգարեն յուրաքանչյուր կարևոր գործողության այս շրջանում»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, f. 12).

8

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 28:

Պետրոգրադ, 5-ը հունվարի 1915 թ., ժ. 14.14-ին:
(Ստացվել է ժ. 17.20-ին):

Ռուսական բանակը երեկ փայլուն հաղթանակ է տարել Սարիղամիշում: Թուրքական բանակային մի կորպուս գերի է հանձնվել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, f. 13).

9

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 106:

Պետրոգրադ, 21-ը հունվարի 1915 թ., ժ. 21.20-ին:

Ռ-ազմական կցորդի տեղակալի¹ կողմից՝ Ռ-ազմական նախարարի համար: Թիվ 123:

«Հայաստանում ռուսական զորքերը հետապնդում են թուրքական վերջապահ զորքերին և գրեթե տաս կիլոմետր տարածության վրա թափանցել են թշնամու տարածք՝ Կարս-Ուրկանի և Օլթիի հարավային կողմից: Ավելի հարավում, ռուսները վերագրավել են Արլասհանից մոտավորապես 50 կիլոմետր դեպի արևմուտք գտնվող Արլանուչը: Թշնամին շարունակում է դուրս գալ Բաթումի հարավ-արևմուտքում գտնվող Շորտխի մարզից»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, f. 24).

10

Ռ-ուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Դեսպարտամենտին

Փարիզ, 23-ը փետրվարի 1915 թ.*:

Կովկասի բանակի գլխավոր հրամանատարը² հեռագրում է Պետրոգրադից այն մասին, որ բանակի շտաբ ժամանած Ջեյրունի հայերի ներկայացուցիչը հայտարարել է, թե մոտավորապես 15000 հայեր հակված են գրոհելու թուրքերի հաղորդակցության միջոցները, բայց ունեն հրացանների և ռազմամթերքների կարիք: Քանի որ Ջեյրունը տեղադրված է Էրզրումի բանակի հաղորդակցության միջոցների գծի վրա, խիստ ցանկալի կլինի անհրաժեշտ քանակությամբ հրացաններ և ռազմամթերքներ ուղարկել Ալեքսանդրետ, որտեղ հայերը կհոգան յուրանց առաքման մասին: Քանի որ Ջեյրունի հայերի կողմից նախատեսված գործողությունն Անտանտի երկրների ընդհանուր հետաքրքրությունների շրջանակում է, հավանաբար, հմարավոր կլինի, եթե նկատի ունենանք հարցի հրատապությունը և այս գեներերն ուղղակիորեն Ռ-ուսաստանից ստանալու անհնարինությունը, հասնել ֆրանսիական և անգլիական կառավարությունների կողմից վերը նշված հրացանների ու փամփուշտների առաքման կազմակերպմանն Ալեքսանդրետի նավահանգիստ՝ ֆրանսիական և անգլիական բեռնատար նավերով:

Փարիզում և Լոնդոնում Ռ-ուսաստանի դեսպաններին հանձնարարված է վերը շարադրված առաջարկությունների առթիվ ժանոթանալ դաշնակից երկու նախարարների խորհուրդների մտադրությանը. հետևաբար, այ. Իզվոլսկին մեծապես շնորհակալ կլինի Նոյին գերագնացություն պարոն Դեկասելին, եթե վերջինս կամենա նրան ժանոթացնել Հանրապետության կառավարության տեսակետին այս հարցում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 849, f. 214).

¹ Հրամանատար Վեիրինը:

* Պ. որ Սարժերիի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Ռուսաստանը գրավոր (ինչպես արդեն բանավոր հրահանգել է նախարարը), որ ֆրանսիական կառավարությունը, համարելով այս ծանուցագիրը հետաքրքիր, ի վիճակի չէ այս պահին Ջեյրունի հայերին գեներեր և ռազմամթերքներ ուղարկել»:

² Գեներալ Կորոնցով-Գաշկովը:

11

**Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝
Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին**

Հ. քիվ 336: Գաղտնի:

Պետրոգրադ, 27-ը փետրվարի 1915 թ., ժ. 18.36-ին:
(Ստացվել է ժ. 22.15-ին):

Լոնդոնում բնակվող մի հարուստ հայ ֆինանսիստ, պ. Գյուլբերկյանը [sic]¹ կարող է առաջարկել իր աջակցությունը Փարիզի ֆինանսիստներին՝ երիտթուրքերի կուսակցության մի քանի անդամների կաշառելու և Կոստանդնուպոլսում հեղափոխություն հրահրելու համար:

Եթե Չերոյ գերագանցությունը կարծում է, որ այս նախաձեռնությանը պետք է դրամական օժանդակություն հատկացնել, ապա պ. Մազոնովը պատրաստ է դրան գորավիզ լինել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 849, f. 220).

12

**Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Ռուսաստանի
Արտաքին գործերի նախարար պ. Մազոնովին**

Հ: Չհամարակալված:

14-ը մարտի 1915 թ., ժ. 20.05-ին:

Ես երախտապարտ կլինեմ Չերոյ գերագանցությանը, եթե դուք կամենաք տեղյակ պահել Նոբին մեծություն կայսրին այն մասին, որ Հանրապետության կառավարությունը քննարկելով այն հաշտության պայմանները, որոնք հարկ կլինի պարտադրել Թուրքիային, ցանկանում է բռնագրավել Սիրիան, ներառյալ Ալեքսանդրետի ծոցի շրջանը և կիլիկյան շրջանները՝ մինչև Տավրոսի լեռնաշղթան:

Ես կրջանիկ կլինեմ, եթե կարողանամ իմ կառավարությանն անհապաղ հավաստել, որ Նոբին մեծություն կայսրը համամիտ է այս ցանկությանը:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologie*, tome 2, ff. 30-30 v).

¹ Ինձ՝ պ. Գյուլբերկյան:

**Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Հ. թիվ 422: Գաղտնի:

15-ը մարտի 1915 թ., ժ. 15.30-ին:

Ես ռուսական կառավարությանը տեղյակ եմ պահել Սիբիրայի և Կիլիկիայի նկատմամբ Հանրապետության կառավարության ունեցած նկատառումներին:

Կայսրն ինձ կանչել է ռազմական, որտեղ երեկ նրա մոտ է ժամանել պ. Սագունովը:

Ես մեկնում եմ այսօր երեկոյան: Վաղն առավոտյան Նորին մեծությունն ինձ կընդունի:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 2, f. 31).

**Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Հ. թիվ 435:

Պետրոգրադ, 18-ը մարտի 1915 թ., ժ. 14.10-ին.

(Ստացվել է ժ. 20.10-ին):

Իմ թիվ 426 հեռագրի շարունակությունը¹:

Քանի որ Սիբիրայի հարցը սկզբունքայնորեն կարգավորված է, կայսրն ինձ առաջարկեց իր հետ քննարկել այն հարցը, թե ինչպիսի՞նք կլինի Փոքր Ասիայի մյուս մասի ճակատագիրը: Բնականաբար, մենք՝ նա և ես, վերապահություն արինք այն մասին, որ այդ քննարկումը սոսկ անձնական տեսակետների փոխանակություն է:

Կայսրն ինձ հարցրեց. «Ինչպիսի՞նք կարող եմ լինել, ըստ ձեզ, Օսմանյան կայսրության սահմանները»:

«Գրեթե այնպիսին, ինչպիսիք էին XIII դարում, սելջուկյանների դարաշրջանում: Այդուհանդերձ, արդարացի կլինի լայն շառավղով ապահովել կայսրության ելքը դեպի ծով»:

«Ես ևս այդպես եմ գտնում: Ի՞նչ կասեք դուք այնպիսի մի գործառնության մասին, որը Թուրքիային կհանձնի Սև ծովի առափնյա գոտին՝ սկսած Կովկասի սահմանից մինչև Սաքարիայի գետաբերանը, այնուհետև՝ Մարմարա ծովի, Դարդանեղի և Եգեյան ծովի առափնյա գոտին՝ սկսած Իզմիրի ծոցից մինչև Ադրամիտշի [sic]² ծոցը, վերջապես, մի քանի կիլոմետր Պամֆիլիայի, Ադալիայի ափերից և Կիլիկիան:

Ես մեծ առավելություն կհամարեմ այն, որ բուրքական տարածքի մի բեկոր հառնի ռու-

¹ Արտատպելը նպատակահարմար չենք գտել:

² Իմա՝ Էդրեմիտ:

սական և հունական տարածքների միջև՝ Դարդանելի շրջանում: Ես միաժամանակ ենթադրում եմ, որ դուք կաշխատեք խուսափել անմիջական առնչություններից խտալսցիների հետ»:

«Այս գործառնությունն ինձ թվում է հնարամիտ: Ես այդ մասին կտեղեկացնեմ պ. Դելկասին»:

Ինչ վերաբերում է Հայաստանին, կայսրն ինձ վստահեց՝ հայտնելով, որ իր (մտադրությունները) դեռևս խիստ անորոշ են. «Հարկ կլինի՞ Հայաստանը վերածել Ռոմաստանի կամակատար թագավորության: Արդյոք նախընտրելի չի՞ լինի այն վերածել Թուրքիայի ձևական ենթակայության ներքո գտնվող ինքնավար պետության: Իմ նախարարների կարծիքներն այս առթիվ չեն հասնուկել: Ես կարիք ունեմ այս մասին խորհրդածելու»:

(A.M.A.E., «A» Paix, tome 128, f. 46).

15

Արևելքի դպրոցների գլխավոր տնօրեն, պ{ատվելի} հ{այր} Ֆելիքս Շարմետանը՝ Արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար պ. Ժյուլ Կամբունին

Ն: Անձնական:

Սեն-ժան-Կապ-Ֆերրա, 12-ը ապրիլի 1915 թ.:

Եթե իմ առողջական վիճակն ինձ չհարկադրեր մնալու հարավում, ես կգայի ձեզնից ընդունելություն հայցելու, որպեսզի գրուցեմ ձեր և պ. Պոլ Կամբունի հետ, երբ նա Փարիզ գա, այն մեծ անհանգստությունների շուրջ, որոնք ինձ պատճառել է Թուրքիայի հնարավոր բամբակամանր վերաբերող «Տանի» հողվածը, որը թվում է, թե ոգևորությամբ է սուզուված:

Չարզելված աղբյուրից ես հիլուսվի տեղեկանում եմ, որ որոշ պաշտոնական օղակներում հարց կծազի Կոստանդնուպոլիսը և նեղուցները Ռոմաստանին համձնելու վերաբերյալ, որն, ինչպես ասում են, դրանք պահանջում է:

Ինչո՞ւ այս կովախնձորը նախապես դարձնել քննարկման առարկա: Առանց խոսելու այս շրջանների քրիստոնյաների հովանավորությանն առնչվող մեր դարավոր իրավունքների մասին, արդյոք հայտնի՞ չէ, որ Անգլիան երբեք չի թույլատրի, որ նեղուցները և Մարմարա ծովը հանձնվեն ծովային որևէ մեծ տերության:

Մեծ Բրիտանիային բավարարվածություն տալու համար հսկված կլինեն, ինչպես ինձ վստահեցնում են, որքան էլ այդ անհեթեթ թվա, նրան զիջելու Սլովիան և Պաղեստինը, չնայած մեր պատմական իրավունքներին և մեր ներկա վիճակին, որն այդտեղ մեծ զերակշռություն է ապահովում: Եվ, այդուհանդերձ, մասնավորապես, այդտեղ է, որ մենք, դարեր ի վեր, այնպիսի ավանդական իրավունքներ ունենք, ինչպիսիք չունի Անգլիան:

Դրանց գոհաբերությունը, որոնք ճանաչվել են բոլոր միջազգային պայմանագրերով և արժանացել նախորդ վեհաժողովների հավանությանը, իրոք որ, հավասարազոր կլինի շեղման: Փոխհաստոցումը չէ, որքան էլ այն լայնածավալ լինի Արևմտյան Աֆրիկայում կամ որևէ այլ վայրում, որը կարող է մեզ բավարարել:

Թույլ տվեք ինձ հիշատակել այստեղ ձեր նշանավոր բարեկամին՝ մեծ կարդինալ Լավի-

ժերին: Ես համոզված եմ, ինչպես և անձամբ դուք, որ նա այս կնճռոտ հարցի շուրջ կունենալ միևնույն մոտեցումը, երև դեռևս ողջ լինելը: Նրա կողմից հղված ինչպիսի՞ սրտառուչ բողոքներ կհասնենին նրանց, ովքեր մտածում են անցած դարերի ժառանգությունը, Լևանտում մեր ազգային հիմնավորց սեփականությունը և Սրբավայրերի ու Լիբանանի նկատմամբ մեր պատմական իրավունքները այս կերպ մեկընդմիջա գիջելու մասին:

Ավելի լավ, քան մեր այլ պետական գործիչները, դուք և ձեր եղբայրը կարող եք պատշաճ լույսի ներքո ներկայացնել, որ մեր դարավոր պայտասկանություններից զատ, մեր առաջնային շահը պահանջում է, որ Սիրիան ու Պաղեստինը, որոնք պատմականորեն ձևավորում են Լևանտի Ֆրանսիան, անհնար է գիջել, քանի որ դրանք, ինչպես Թունիսը և Մարոկկոն, պետք է մնան մեր վաստացի պրոտեկտորատի ներքո:

Այդ պրոտեկտորատը մեզ բացարձակապես անհրաժեշտ է Միջերկրյական ծովի արևելյան այս շրջանում մեր աֆրիկյան տիրույթների միջև անհրաժեշտ հսկասարակշռությունն ապահովելու համար՝ Իտալիայի և Անգլիայի տիրույթների հալաբերակցությամբ: Թուրքիան, անշուշտ, բավականին ընդարձակ է, որպեսզի այլ վայրում մեր դաշնակիցներին, և նույնիսկ, Իտալիային ու Հունաստանին, փոխհատուցում տրամադրի, որին կրթությունը ձգտում են ամենքը:

Ի դեպ, մեր համաձայնությամբ, Անգլիան հենց նոր է վերջնականապես հաստատել իր տիրապետությունը Եգիպտոսում և Սուեզի ջրանցքում: Բացի դրանից, առանց անդրադառնալու Փոքր Ասիայի որոշ կետերում ունեցած նրա հավակնություններին, նշենք, որ նա այժմ փորձում է ապահովել իր տիրապետությունը խիստ բերրի ու իր համար մեծ սպազա ունեցող շրջաններում, որոնք ողողվում են Շատ էլ-Արաբի, Տիգրիսի և Եփրատի ջրերով, ինչպես նաև իր ձեռքը վերցնել Բաղդադի գերմանական երկարողին: Այսպիսով, նա վստում է յուրաքանչյուր մրցակցություն Հնդկաստանի հետ ունեցած իր առևտրում, որի մենաշնորհն իր ձեռքում է պահում և միաժամանակ իր առևտրի համար ապահովում նորանոր ու անհամար հարստություններ:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այն ևս, բռնագրավելով Հայաստանը և Սև ծովի հարավում գտնվող օսմանյան բոլոր տարածքներն ու, մասնավորապես, ազատ սնցում ունենալով այսուհետև՝ դելի նեղուցները, կապահովի իր համար շատ հիանալի բաժին: Այսպիսով, նա Օդեսան կդարձնի մի հիրավի ռուսական Համբուրգ, մի բան որից վախենում էր հատկապես Վիլհելմ II-ը: Բացի դրանից, նա իր վաստացի տիրապետությունը կընդարձակի դելի Գալիցիա, գերմանական Լեհաստան և Արևելյան Պրուսիա:

Ինչ վերաբերում է Կոստանդնուպոլսին ու նեղուցներին, ապա դրանք պետք է Եվրոպայի կողեկտիվ երաշխավորության ներքո կազմավորեն մի անկախ և խստագույն չեզոք պետություն: Այսպիսին է, երեք դաշնակիցների, ինչպես նաև աշխարհի մյուս բոլոր տերությունների ձգտումներին բավարարում տալու ուղիված՝ հարցի լուծման միակ միջոցը, տերություններ, որոնք երախտապարտ կլինեն, երե նրանց ևս նեղուցներով ազատ երթևեկելու հնարավորություն ընձեռվի:

Այս նոր պետության կառավարումը կարելի է վստահել քաղավոր Ալբերտին: Մա խնդրի լուծման և փառասպանմ բելգիացի ժողովուրդին փոխհատուցելու ամենաշքեղ միջոցը կլինի, որն իրավունք ունի հավակնելու դրան:

Նույնը վերաբերում է Պաղեստինին: Երե, սպասվածին հակառակ, դիվանագիտության պահանջները մերժեն Սուրբ երկրին, որտեղ այնքան շատ բշնամական շահեր են բախվում, անցնելու Ֆրանսիայի տիրապետության տակ, առնվազն հարկ է, որ այն դիտվի, ինչպես և Կոստանդնուպոլսիսը, իբրև դաշնակից տերությունների հսկողության ներքո գտնվող չեզոք ու ազատ տարածաշրջան:

Ինչու՞ դրա կառավարումը չվստահել պրապին: Վերջինս Եվրոպային առնվազն անհան-

գըստոթյուն իսկ չի պատճառի, և այդ լուծումը կարող է հաճույքով ընդունվել, մասնավորապես, Իտալիայի կողմից, որին համայն աշխարհի ամենավեհ բարոյական հզորության մշտական ներկայությունը Հռոմում, հաճախ շատ է անհանգստացնում. առանց հաշվի առնելու այն, որ եթե Իտալիան ներգրավվի ներկայիս առճակատման մեջ, ապա պապական արտաճանխտը խիստ կաշկանդված վիճակում կհայտնվի իրեն անհրաժեշտ հարաբերությունները երկրագնդի վրա ապրող բոլոր ազգերի հետ պահպանելու համար:

Պապականությունն իրականացնում է իր հոգևոր իշխանությունը երկրագնդի կեսում: Սա մի առանձին գերիշխան տերություն է, որը չի դադարի գոյություն ունենալ:

Այսպիսով, Ֆրանսիայի կողմից բարեհաճ քաղաքականության դրսևորման վկայություն կլինի, Եվրոպայի երաշխավորությամբ, Սուրբ քաղաքում նրա համար այնպիսի մի անկախ ու հավերժական տարածքի ապահովումը, ինչպիսին այն տարածքն է, որը, Իտալիայի երաշխավորությամբ, նա արդեն ունի Վատիկանում: Այսպիսով, մենք կվերսկսենք Կառլոս Մեծի գաղթը, որի բարեբար հետևանքները շարունակում են իրենց զգալ տալ հազար տարուց ի վեր:

Նման լուծումը, որը բոլոր տեսանկյուններից բավական գործնական է, կընդունվի, անտարակույս, համայն աշխարհում ավիզված երեք կամ չորս միլիոն կաթոլիկների ցնձագին ծավալահարությամբ և հավիտենական օրինանքի կարժանացնի Ֆրանսիայի անունը:

Ես բողոմ եմ այս ցուցումը Ֆրանսիայի երկու ամենանշանավոր դիվանագետներին, համոզված այն բանում, որ միայն նրանք են ի վիճակի պատշաճ լույսի ներքո ներկայացնելու այդ և գտնելու այն ուղիները, որոնք այն կողոնգրեն՝ եթե հանգամանքներն այդ թույլատրեն:

Քանի որ աշխարհի քարտեզը շուտով պետք է վերանայվի, նկատի ունեցեք, թե արդյոք պատե՞ն ու իրավացի չէ՞ պապականության վեհաշուր հաստատությանը հավիտենական անկախություն շնորհելը, որն աշխարհում, քսան դարից ի վեր, քաղաքակրթության մեծ տարածում է:

Եզրուսիակելով, ես մեծ ցանկություն ունեմ, համաձայն մի շատ վստահելի տեղեկության, իբրև գաղտնիք ձեզ հայտնել, որ Թուրքիայի այս ֆանտաստիկ բաժանման ոգեշնչողը պ. Բոմպարն է, որն անցյալում իրեն հրաշալիորեն դրսևորեց Քե-դ'Օրսետում զբաղեցրած պաշտոնում, այնպես, որ պ. Պոլ Կամբոնը ինտաքրքրվեց նրանով, և ինչպես ասում են, դարձավ նրա սրբնթաց բռնիչքի նախաձեռնողը: Դժբախտաբար, «ով փայլատակում է երկրորդ դիրքում, խամրում է առաջինում»: Այս մասին սյարգորոշ վկայում է պ. Բոմպարի օրինակը, որը ո՛չ Պետրոզբարում, ո՛չ Կոստանդնուպոլսում, հաջողության չիասավ:

Այս վերջին անհաջողությունն այն վայրում, որտեղ ձեր եղբայրը մեծ հմտությամբ հաջողության էր հասել, նրա մոտ դառնության զգացողություն է թողել, որն այսօր վտանգավոր է դարձնում այն խորհուրդները, կարծիքները և տեղեկությունները, որոնք նա՝ իբրև Թուրքիայի դեսպան, հաճույքով հայտնում է՝ շատ հաճախ այս կնճռոտ հարցերին մակերեսայնորեն տեղյակ մեր պաշտոնական անձանց և մեր պատգամավորներին:

Այսպիսով, ես իմ պարտքն եմ համարում նախագրուշացնել ձեզ, ինչպես և պ. Պոլ Կամբոնին այս մեքենայությունների մասին, որպեսզի այն դեպքում, եթե դրանք հավաստի լինեն, դուք կարողանաք չեզոքացնելու համար գործի դնել ձեր մեծ և օրինական ազդեցությունը: Դրանով են պայմանավորված Ֆրանսիայի արժանապատվության և առանցքային շահերի պահպանումը Լևանտում:

Կամեցեք ընդունել, թանկագին պարոն դեսպան, իմ հարգալից, բայց և շատ խորը հիացմունքի հավաստիքն այն ծառայությունների առթիվ, որոնք դուք արդեն մատուցել եք հայրենիքին և որոնք դուք այսուհետև ևս կմատուցեք նրան:

Արտաքին գործերի նախարարը՝ Ռազմական նախարար այ. Ալեքսանդր Միլերանին

Ճ. թիվ 1477: Գաղտնի:

Փարիզ, 14-ը ապրիլի 1915 թ.:
(Ստացել է Կաբլինետը ապրիլի 17-ին,
ԲՇ-ի Աֆրիկայի ենթաբաժինը ապրիլի 20-ին):

Ես պատիվ ունեմ, գաղտնի տեղեկատվության կարգով, ձեզ հղել սրան կից մի նամակի պատճենը, որը ես ստացել եմ Սոֆիայում գտնվող Հանրապետության նախարարից՝ Փոքր Ասիայում դաշնակիցների գործողություններին մասնակցելու համար Կիլիկիայի հայերի կողմից նրան արված առաջարկության կապակցությամբ:

Դուք այս ծրարում նմանապես կգտնեք այն պատասխանի պատճենը, որը ես ուղարկել եմ այ. դը Պանաֆիոյին:

(A.M.G., 7 N 2150).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Սոֆիայում Ֆրանսիայի նախարար այ. դը Պանաֆիոն՝ Արտաքին գործերի նախարար այ. Դելկասեին

Ճ. թիվ 20:

Սոֆիա, 3-ը մարտի 1915 թ.:

Ռուսաստանի իմ գործընկերոջ² խնդրանքով, ես այսօր ընդունեցի հայկական կոմիտեի պատգամավոր այ. Վալդանյանին³, որը եկել էր ինձ առաջարկելու ներկայումս արտասահման գաղթած իր հայրենակիցների օժանդակությունն այն դեպքում, երբ Եռյակ դաշինքը մտադրություն կունենա դեսանտ ափ դուրս բերել Փոքր Ասիայում:

Նա ինձ հայտնեց, որ արևելյան վիլայեթներից դուրս, որոնց բնակչությունը մեծ մասամբ հայկական է և որոնք պատերազմի ավարտից հետո սմենայն հավանականությամբ կանցնեն ռուսական տիրապետության ներքո, էլ ավելի հարավում՝ Կիլիկիայում, գոյություն ունեն շատ կարևոր հայկական բնակավայրեր, ընդ որում մի տարածաշրջանում, որն ավելի շուտ անգլո-ֆրանսիական ազդեցության գոտու մասն է կազմում:

1 Ստորագրել է այ. դը Մարթերին:

2 Պ. Սաֆինսկին:

3 Վրիպակ. ինձ՝ այ. Վարսնոյան:

Եթե անգլիական և ֆրանսիական կառավարությունները վճռեն գրավել այս տարածաշրջանը և իրականացնեն դեսանտի ափ դուրս բերումը կամ Ադանայում, կամ Ալեքսանդրետի ծոցում, նա երջանիկ կլինի, եթե իր հայրենակիցներին քույրատրվի մասնակցել ազատագրման այս գործին: Ըստ պ. Վարդանյանի, շուրջ քսան հազար կիլիկյան ծագում ունեցող հայեր ի վիճակի կլինեն զենքի դիմելու: Նրանք բոլորը ներկայումս բնակվում են այտասահմանում՝ կամ բալկանյան թերակղզում, կամ Եվրոպայի տարբեր երկրներում, կամ Ամերիկայում: Նրանք պետք է համախմբվեն Կիպրոսում, ասիական ափի մոտակայքում և այնտեղ ստանան ռազմական պատրաստության հրահանգներին առնչվող անհրաժեշտ նախնական տեղեկություններ: Նրանց սպառազինությունը պետք է, անշուշտ, ապահովվի Ֆրանսիայի և Անգլիայի կողմից:

Ես պատասխանեցի պ. Վարդանյանին, որ ես կարող եմ միայն նրա առաջարկությունը ներկայացնել Ձերդ գերագանցությունը, որ Թուրքիայում երկրորդական բնույթի ռազմական գործողություններն ակնհայտորեն կախված կլինեն ներուցների շրջանում այժմ ընթացքի մեջ գտնվող առաջնահերթ գործողության արդյունքից, և որ միայն դաշնակիցների շտաբներն են իրավասու քննարկելու այն հարցը, որը նա հանձնում է իմ դատին:

Կիլիկյան ծագում ունեցող հայերը կարող են օգտակար լինել ոչ միայն իբրև զինվորներ, այլև, մասնավորապես, արժեքավոր լինել իբրև տեղեկություններ ստակարարող հետախույզներ ու գործակալներ այն դեպքում, երբ նախատեսվի դեսանտ ափ դուրս բերել Կիլիկիայում:

Պ. Վարդանյանը մնան առաջարկով դիմել է Անգլիայի նախարարին¹, և վերջինս իր հերթին այդ մասին տեղյակ է պահել իր կառավարությանը:

(A.M.G., 7 N 2150).

II

Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեն՝ Սոֆիայում Ֆրանսիայի նախարար պ. դը Պանաֆիոյին

Ճ:

Փարիզ, 13-ը ապրիլի 1915 թ.:

Վերջին մարտի 3-ի զեկուցագրով դուք ինձ հաշվետվություն էիք ներկայացրել այն գրույցի առթիվ, որն ունեցել էիք հայկական կոմիտեների պատգամավոր պ. Վարդանյանի հետ² զինված աջակցության հարցի շուրջ, որը Փոքր Ասիայում դաշնակիցների գործողությունների ընթացքում, մեզ կարող են ցուցաբերել նրա կիլիկյան ծագում ունեցող հայրենակիցները: Ըստ պ. Վարդանյանի, հայկական միավորումները պետք է համախմբվեն Կիպրոսում, որտեղ նրանք կստանան ռազմական ուսուցում և ռազմամթերք:

Ի՞նչ ջանքերի շնորհիվ հայկական կոմիտեների առաջարկությունը քննարկվել է ամենայն ուշադրությամբ: Նախ՝ ակնհայտ է, որ հայկական միավորումները կարող են օգտագործվել

¹ Սրբ Հենրի Բարս-Այրոնսայդը:

² Վրիլսկ. իմա՝ պ. Վարանդյան:

զանգվածաբար և կամ առանձին խմբերով, երև դաշնակիցները, ինչպես նշում է պ. Վարդանյանը, արշավանք ձեռնարկեն Կիլիկիայում: Նրանց նախնական համակենտրոնացումը Փոքր Ասիայի ափերի մերձակայքում գտնվող ուռուզակի տեղանքում, նրանց պատրաստություն տալն իսկույն ևեք կգրավեն բուրբերի ուշադրությունը և վերջիններիս, անկասկած, կողդեն ներքին նահանգներում մնացած հայ բնակչության նկատմամբ կիրառելու կոտորածների քաղաքականություն: Սյուս կողմից, իբրև համախմբման վայր ընտրված Կիպրոս կղզու քաղաքական իրավիճակը և աշխարհագրական դիրքը չեն կարող լինել սնթերի: Այն փաստը, որ այս կղզին բրիտանական տիրույթ է, չի կարող, անկասկած, չարթնացնել մեր դուրազգացողությունը: Մակայն նրա դիրքն իսկ մատնացույց կանի բուրբերին այն կետը, որ դաշնակիցները կպատրաստվեն ներդնելու իրենց ջանքերը:

Այսպիսով, ներկա իրավիճակում գերադասելի է, որ այն հայերը, որոնք ցանկություն կունենան մասնակցելու մեր արևելյան ռազմարշավին, անհատական կարգով դիմեն գեներալ դ'Ամադին, որը կտեսնի, թե կարո՞ղ է արդյոք նրանց օգտագործել: Այն դեպքում, երբ նրանց թվաքանակը դառնա նշանակալից, հավանաբար, հնարավոր կլինի, երբ հանգամանքները դրան նպաստեն, նրանց համախմբել միևնույն խմբավորման մեջ:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք այս ոգով պատասխանեք պ. Վարդանյանի կամ հայկական կոմիտեների որևէ այլ ներկայացուցչի կողմից ձեզ արվող առաջարկներին, հավաստիացնելով ձեր գրուցակիցներին, որ Հանրապետության կառավարությունը խիստ զգացված է այն առաջարկություններից, որոնց ազնվաբար ընույթը նա գնահատում է, և որոնք ապացուցում են, որ հայ ազգը չի մոռանում այն ծառայությունները, որ Ֆրանսիան նրան արդեն մատուցել է:

(A.M.G., 7 N 2150)..

17

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը՝ Իտալիայի թագավոր Նորին մեծություն Վիկտոր-Էմմանուելին

Հ. թիվ 3004 103 102:

[Պատճենը]:

Էջմիածին, 22-ր ապրիլի [1915 թ.]:

Մեծություն,

Խորապես հուզված այն տագնապալից յուրերից, որոնք հավաստում են Թուրքահայաստանում հայ ժողովրդի հանդեպ պարբերաբար կիրառվող կոտորածների ու բռնությունների վերսկսումը, ես ինձ թույլ եմ տալիս կոչով դիմել Ձերոյ մեծության մարդասիրական վեհ զգացմունքներին, ինչպես նաև իտալացի ազնվաբարտ ազգի զգացմունքներին և բրիտանական հավատի ու մարդկության անունից խնդրել, Թուրքիայում գտնվող ձեր դիվանագիտական ներկայացուցիչների ազդեցիկ միջամտության ճանապարհով, ձեր հզոր հովանավորության ներքո վերցնել մի հինավուրց ժողովրդի, որը նման դաժանությամբ հարածվել է և հանձնվել թուրքական մոլեռանդության մույգքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 84).

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Դեպարտամենտին

Փարիզ, 26-ը ապրիլի 1915 թ.:

Հայերի կաթողիկոսը կայսրական կառավարությանը տեղեկացրել է, որ ինքը դիմել է Իտալիայի քննադատին և Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին՝ Դոնան առջև ի նպաստ հայերի հանդես գալու խնդրանքով, որոնք Ասիական Թուրքիայում տեղի ունեցող կոտորածների զոհն են: Հռոմում և Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպանները¹ հանձնարարություն են ստացել սատարելու կաթողիկոսի այս քայլին:

Մյուս կողմից, այ. Սազոնովը հեռագրում է Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպաններին² այն մասին, որ հենց հիմա ինքը նոր տվյալներ է ստացել Ասիական Թուրքիայում տիրող անիշխանության և այն կոտորածների մասին, որոնք հայկական բնակչության նկատմամբ սանձազերծել են քուրքերն ու քրդերը:

Կայսրական նախարարների խորհուրդը հետևաբար հուշում է ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարություններին՝ հրապարակելու Դոնանը հղված միացյալ հաղորդագրություն, որը հայերի հանդեպ գործադրվող բռնությունների համար անհատապես պատասխանատու կճանաչի՝ օսմանյան նախարարների խորհրդի բոլոր անդամներին, ինչպես նաև այս գործողություններին մասնակից դարձած քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաներին: Այս հաղորդագրության մեջ կարելի է հիշեցնել 1860 թ. Եվրոպայի որդեգրած այն պատժամիջոցների մասին, որոնք հաջորդեցին Սիրիայի կոտորածներին: -

Այն դեպքում, երբ այս առաջարկն արժանանա նախարարների երկու խորհուրդների հավանությանը, Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպանները՝ ստացված հանձնարարության համաձայն, պետք է պայմանավորվածություն կայացնեն Նորին գերագնացություններ այ. Դելկասեի և սրբ Էդուարդ Գրեյի հետ հաղորդագրության բնագրի բովանդակության շուրջ, որին ցանկալի կլինի հրապարակայնություն տալ երեք մայրաքաղաքներում, նույն ամսաթվով՝ հենց որ դրա իրագործումը հնարավոր դառնա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 85-85 v).

Արտաքին գործերի նախարար այ. Դելկասեն՝ Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան այ. Պոլ Կամբրոնին

Հ. թիվ 1309:

Փարիզ, 27-ը ապրիլի 1915 թ., կեսգիշերին:

¹ Համապատասխանաբար՝ պ (արոմայ)ք Գիրսը և Բախմետևը:

² Համապատասխանաբար՝ պ (արոմայ)ք Իզվոլսկին և Բենկենդորֆը:

Քանի որ Թուրքիայում հայերով բնակեցված տարածաշրջանները կրկին արեկոծվել են մեծ հուզումներով, և բուրքերն ու քրդերը ձեռնամուխ են եղել հայկական բնակչության կոտորածին, այ. Սազոնովը հույս է հայտնում, որ ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարությունները կարող են հրապարակել համաման մի հաղորդագրություն, որը նրանց կողմից կհղվի Բարձր Դռանը և հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների համար անհատապես պատասխանատու կճանաչի օսմանյան նախարարների խորհրդի բոլոր անդամներին, ինչպես նաև այս գործողություններին մասնակից դարձած քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաներին: Պ. Սազոնովը գտնում է, որ այդ հաղորդագրության մեջ կարելի է հմտորեն հիշեցնել 1860 թ. Եվրոպայի որդեգրած այն պատժամիջոցների մասին, որոնք հաջորդել են Սիրիայի կոտորածներին:

Ռուսաստանի դեսպանը երեկ ինձ տեղյակ պահեց այդ առաջարկին: Ինչ վերաբերում է այ. Սազոնովի առաջարկի ընդունմանը, ես իմ կողմից որևէ առարկություն չունեմ և խնդրում եմ ձեզ տեղեկացնել ինձ անգլիական կառավարության կարծիքին, որին ևս հարկ է տեղյակ լինել: Եթե նա կարծում է, որ մենք կարող ենք հանձնարարել ռուսական կառավարությանը մեզ առաջարկելու մի բնագիր, ես այդ ոգով կպատասխանեմ այ. Իզվոլսկու հաղորդագրությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 86).

20

Կահիրեում Ֆրանսիայի նախարար այ. Դեֆրանսը՝ Արտաքին գործերի նախարար այ. Դելկասեին

Հ. թիվ 132:

Կահիրե, 30-ը ապրիլի 1915 թ., ժ. 11.50-ին:
(Ստացվել է ժ. 13-ին):

Պողոս Նուբար փաշան Էջմիածնի կարողիկոսից¹ ստացել է մի հեռագիր, որով նրան խնդրվում է շտապ մեկնել Փարիզ և Լոնդոն՝ հայերի շահերն այնտեղ պաշտպանելու համար:

Նրան հայտնում են այս առթիվ Փարիզ ուղարկված հրահանգների մասին:

Անձամբ նա, բնականաբար, ցանկանում է ազատագրել իր բոլոր համակրոնակիցներին բուրքական լծից: Նա գտնում է, որ Թուրքիայի հայկական նահանգների մի մասը կանցնի ռուսական հովանու ներքո: Կիլիկիայի համար, Ադանայի, Մերսինի շրջանների համար և իրենց երկրի ներքին նահանգների համար, որտեղ հայ բնակչությունը բազմաքանակ է, նա ցանկանում է ապահովել դաշնակից տերություններից մեկի, և, մասնավորապես, Ֆրանսիայի հովանավորությունը. նա երջանիկ կլինի, եթե այս շրջաններն ընդգրկված տեսնի ֆրանսիական դարձող Սիրիայի կազմում, անկախ այն բանից, թե ինչ հիմունքներով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 87).

¹ Գ.Լորգ V-ը:

Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության թարգմանիչ պ. Լեդուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Ծ. թիվ 24¹:

Կոստանդնուպոլիս, 1-ը մայիսի 1915 թ.:
(Ստացել են Կաբ. մայիսի 23-ին,
Քաղ. վարչ. մայիսի 24-ին):

Կիրակի, 25-ը ապրիլի:

Երեկ գիշեր թուրքական ոստիկանությունը կատարել է հայերի բազմաթիվ՝ գրեթե հարյուրի հասնող ձերբակալություններ. դրանք բժիշկներ են, դատախազներ, լրագրողներ, պրոֆեսորներ, խոշոր առևտրականներ: Նրանց թվում են դոկտորներ Թորգոմյանը, Սվազի նախկին պատգամավոր Տաղավարյանը, «Մաբախի» նախկին գլխավոր խմբագիր Տիրան Բելկյանը, շատ հայտնի երաժշտագետ, վարդապետ² Կոմիտասը: Նրանցից ոմանք «Դաշնակց-զիում» [sic] և «Հնչակ» ընկերությունների անդամներ են:

Այս ձերբակալությունները խորը տպավորություն են գործել հայկական համայնքում և բոլոր քրիստոնյաների շրջանում առհասարակ: Ինչպի՞սի դրդապատճառների է հնարավոր վերագրել օսմանյան իշխանությունների կողմից ձեռնարկված այս միջոցառումը, որն ուղղված է համայնքի մտավորականների, ամենապատվարժան անձանց դեմ: Այս այն հարցն է, որն այսօր առաջադրում են ամենքը: Իրականում սրանք հայերի նկատմամբ կառավարության կողմից իրականացվող բռնություններ են, որոնց կառավարությունը հանդիմանում է Ջեյթունի և Կովկասի իրենց համակրոնակիցների վարքագծի համար:

Մինչ այսօր մենք անտեղյակ ենք այն անցքերին, որոնք տեղի են ունեցել Ջեյթունում: Մեզ լուրեր են հասնում այն մասին, որ Կովկասի հայերը հռչակվել են ռուսական բանակի շարքերում՝ գործելով թուրքերի դեմ և որ Էրզրումի ու հատկապես Վանի շրջաններում, հանդես գալով ռուսների կողմից, հայերը թուրքերի դեմ պետք է զինված խմբեր կազմակերպած լինեն:

Ամեն դեպքում, Կոստանդնուպոլսում հայերի դիրքորոշումը եղել է ամսահինան քաղաքավարի և մինչ այժմ օսմանյան իշխանություններն իրավասու չեն եղել նրանց կասկածելիների շարքը դասելու:

.....

Առավոտյան, բոլոր հայերը, որոնք ձերբակալվել էին շաբաթ լույս կիրակի գիշերը և որոնց թիվը հասնում է 250-ի, ուղարկվել են Անատոլիայի ներքին մահաճգները, ըստ լուրերի՝ Անգուրա: Ձերբակալությունները շարունակվել են այսօր, չնայած հայ պատրիարքի³, սենատորների և պատգամավորների՝ մեծ վեզիրին⁴ ու Ներքին գործերի նախարարին⁵ արված քայլերին:

1 Մենք արտաստպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:
2 «Քահանա»:
3 Ն (որին սրբազնություն) և Ջավեն Տեր-Եղիայանը:
4 Սաիդ Հալիմ փաշան:
5 Թալեաթ բեյը:

.....
 Երեքշաբթի, 27-ը ապրիլի:

Կարելի է ասել, որ Հայկական հարցը վերաբացվել է: Կառավարությունը, ինչպես պնդում են, Կովկասի հայերի դիրքորոշման պատճառով, բացահայտորեն բռնություններ է գործադրում այս համայնքի խաղաղասեր տարրի նկատմամբ Էրզրումի, Վանի և Ջեյրոմի տարածաշրջաններում, որտեղ այս տեղանքի հարյուրավոր հայեր ձերբակալվել են: Վերջիններիս թշվառ դեպի Կոնիա, որտեղ նրանց պետք է դատի այդ քաղաքում նիստեր գումարող զինվորական դատարանը:

.....
 Հինգշաբթի, 29-ը ապրիլի:

Այսօրվա թերթերում տպագրված զինվորական դատարանի նախագահության պաշտոնական հաղորդագրությունը ճշգրտությամբ լուսաբանում է այն ձերբակալությունների պատճառները, որոնք կատարվել էին հայկական համայնքում մի քանի օր առաջ: Օսմանյան իշխանությունները պնդում են, որ հայերի դիրքորոշմանը Կովկասում և վեց վիլայեթներում ոգեշնչել են Եվրոպայում հաստատված կոմիտեները, որոնք Թուրքիայում բնակվող իրենց համակրոնակիցների շրջանում ապստամբություն հրահրելու նպատակ են հետապնդում:

Չեռնամուխ լինելով մայրաքաղաքի մտավորականների և ամենապատվարժան անձանց ձերբակալությանը, կառավարությունը կարող էր, անկասկած, ցանկանալ հարված հասցնել և միաժամանակ իր համար պատանդներ ապահովել՝ համաձայն այն մեթոդների, որոնք երիտթուրքերը միշտ կիրառել են և որին մենք՝ մեր կողմից, ավա՞ղ, քաջատեղյակ ենք:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 901, ff. 1-6).

22

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Դեսպարտամենտին

Փարիզ, 5-ը մայիսի 1915 թ.:

Համաձայն Խոյուն գտնվող Ռուսաստանի հյուպատոսի¹ տրամադրած տեղեկությունների, Վանի և Բիթլիսի վիլայեթներից Դիման են ժամանում հայ գաղթականներ, որոնք փրկվում են՝ խուսափելով բուրքական վայրագություններից: Թուրքիայում բնակվող քրդերի ու հայերի միջև առճակատումներն ավելի սուր բնույթ են ստանում: Գյուլիստանում և Բաշ-Կալեում գրեթե ողջ քրիստոնյա արական բնակչությունը կոտորվել է: Շատախում ևս թուրքերը կոտորածներ են կազմակերպել: Քրիստոնյաների գյուղերը հրկիզվել են ու կողոպտվել:

Մյուս կողմից, Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպանը² հեռագրում է այն մասին, որ Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների դեսպանը³ համձնարարական է ստացել մշտապես

1 Փոխհյուպատոս Չիրկովը:

2 Պ. Բախմետևը:

3 Պ. Մորգենթաուն:

վերահսկելու այն իրավիճակը, որում գտնվում են Թուրքիայի քրիստոնյաներն առհասարակ: Նա հենց նոր տեղեկացրել է, որ շուրջ 100 երեկի հայեր ձերբակալվել են հեղափոխական քարոզչության պատրվակով և որ նրանց կյանքը «հավանաբար» վտանգի մեջ չէ, չնայած, որ նրանք աքսորվել են երկրի ներքին նահանգները: Իբրև այս զեկուցագրի շարունակություն, պ. Բրայանը հանձնարարել է դեսպանին հետամուտ լինել, որպեսզի օսմանյան կառավարությունն իրականացնի հայերի հովանավորությունը:

Պ. Սազոնովը հեռագրում է Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպաններին՝ որ հիմնվելով Լոնդոն Ռուսաստանի հյուպատոսից ստացված տեղեկությունների վրա և հաշվի առնելով Ամերիկայի դեսպանի միջամտության անարդյունավետությունը, որը սահմանափակվել է օսմանյան կառավարության կողմից հայերի «հովանավորության» իրականացման պահանջով, կայսրական կառավարությունն անհրաժեշտ է համարում Դռանն ուղղված կոլեկտիվ հաղորդագրության անհապաղ հրապարակումը, որը հուշել է պ. Սազոնովը և որը հայերի հանդեպ կիրառված բռնությունների պատասխանատվությունն անհատապես կբարդի օսմանյան նախարարների խորհրդի բոլոր անդամների, ինչպես նաև քաղաքացիական ու զինվորական այն պաշտոնյաների վրա, որոնք մասնակից են այդ արարքների (տե՛ս կայսրական դեսպանության վերջին ասյրիլի 26-ի թվակիր զեկույցը)²:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 851, ff. 8-8 v).

23

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝ Ռազմական նախարարությանը

Անձնական և զաղտնի:

Աթենք, 5-ը մայիսի 1915 թ.:

(Մուսցվել է մայիսի 29-ին):

Քաղվածքներ Դեղեագաչից ստացված նամակներից

Ապրիլի 26-ին Կոստանդնուպոլսի մի գործակալ հաստատեց հայերի ձերբակալության լուրը: Երեք եպիսկոպոսներ, բազմաթիվ քահանաներ և Ջոհրապ էֆենդին պետք է ուղարկվեն երկրի ներքին նահանգները:

Մեկ այլ սկզբնաղբյուրից էս տեղեկացա, որ ձերբակալությունները սկիզբ են առել ապրիլի 24-ի երեկոյան: Երկու եպիսկոպոսներ, այն է՝ Օհան վարդապետը¹ և Բ[ա]լկյան վարդապետը, ինչպես նաև «Բյուզանդիոն» թերթի տնօրենը⁴, Քեքյանը [sic]⁵ «Մաբահից», պատգամավոր Վարդգեսը, ընդհանուր առմամբ, 1800 անձինք ձերբակալվել են և կողարկվեն Անգո-

1 Համալսարանիանաբար՝ պ (արունայ) Իգլոսկին և Բենկենդորֆը:

2 Վերն արտատպված է թիվ 18 փաստաթղթում:

3 «Վարդապետ» հայերեն նշանակում է «քահանա»:

4 Պ. Քեյյանը:

5 Իմա՝ Քեյկյան:

րա: Ձերբակալվածների թվում են «Դաշնակցության» 500 կողմնակիցներ և «Հընչակյան» կուսակցության 500 կողմնակիցներ, ինչպես նաև «Ռամկավար» կուսակցության մի քանի կողմնակիցներ: Կոտորածներ են սկսվել Բիթլիսում և, ինչպես ասում են, նաև Էրզրումում, Վանում, Մուշում ու Սասունում: Ձեթյունում բռնկվել է ապստամբություն, իսկ Վանում՝ պայքար է սկսվում:

Ձերբակալվել են 180 բուրքեր, որոնց կասկածում են Շերիֆ փաշայի և արքայազն Մ[ա]րահեդդինի դավադրությանն ունեցած մասնակցության համար: Ասում են, որ Շերիֆը ևս հարաբերություններ է պահպանել «հնչակյանների» հետ:

Հայերի ձերբակալությունները շարունակվում են առ այսօր, և ասում են, որ բոլոր հայ պատգամավորներն ու Կասյի նախարարության աշխատակից Օսկան էֆենդին ձերբակալված են: Անդրինուպոլսում ևս տեղի են ունեցել բազմաթիվ ձերբակալություններ:

Պատճառներն անհայտ են: Համաձայն գերիշխող կարծիքի, հայերը հիրավի «անտանտամետ» միակ տարրն են և ըստ բուրքերի՝ նրանք լրտեսներ են եղել: Հավանաբար, բուն պատճառն այն է, որ բուրքերը ցանկանում են կորզել հայերի փողերը և նրանց ունեցվածքի բռնագրավման հարցում չունենալ յայլև որևէ խոչընդոտ:

Այժմ բուրքերը զբաղված են սիոնիստներով:

Ինչպես հայտնի է, սիոնիստներն իդեալիստներ են և ներկայացնում են հրեաների լավագույն խավը: Թուրքերը հալածել են Պաղեստինում գտնվող սիոնիստական զաղութների բնակիչներին, որոնց մեծ մասը հիմնադրել են և դրանց ծախսը հոգացել Ֆրանսիայում և Անգլիայում ապրող հրեաները, որոնք, ինչպես ես կարծում եմ, կատարելապես բարյացակամորեն են տրամադրված մեր գործի նկատմամբ: Նրանք առաջ են քերել իրենց հարևան բեդուիների շահատենչությունը և ներկայիս թուրքական կառավարությունն ակնհայտորեն ազատություն է տալիս իրեն հավատարիմ մահմեդական հպատակներին: Մի քանի սիոնիստներ կախվել են: Հրեական-թուրքական «Ժոն բուրք» թերթը, որը միշտ չարությամբ է լի Անգլիայի հանդեպ, այնքան է մոռացության տվել իր թուրքական ծագումը, որ ցանկություն է դրսևորել դժբախտ սիոնիստների օգտին մի հողված գետեղելու և անմիջապես փակվել է իր թուրք դեկավարների կողմից: Թուրքերի հանդեպ հրեաների տաժաժ համակրանքը դեռևս իրեն զգալ է տալիս:

Ես տեղեկացել եմ, որ բոլոր անգլիացիները պետք է մայիսի 6-ին ներկայանան Գալաթա-Մերայ, հավանաբար, իրենց վտարմանը վերաբերող հրամաններ ստանալու համար:

(A.M.G., 7 N 2096).

Արձանագրությունների ծառայության ղեկավարի՝ ծանուցագիրը

Ծ՝:

Փարիզ, 7-ը մայիսի 1915 թ.:

1 Պ. Վիլյամ Մարտենը:

2 Նախատեսված է սլ. դը Մարթերիի համար:

Այն հեռագրով, որի պատճենը կից ներկայացնում եմ, Էջմիածնի հոգևոր հովվապետը հենց նոր խնդրել է Հանրապետության պ. նախագահի միջամտությունը՝ այն հալածանքների վերջ տալու հարցում, որոնց գոհը դառնում են հայերը:

Արձանագրությունների ծառայության ղեկավարը խնդրում է Զաղաքական և առևտրական գործերի պ. տնօրենին բարեհաճել այս հեռագրին տալու այնպիսի ընթացք, որը ենթադրվում է և անել ամեն ինչ՝ այդ մասին պ. նախագահին տեղյակ պահելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 89).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը՝ Ֆրանսիական հանրապետության նախագահ պ. Պուանկարեին

Հ: Անթվակիր:
[Պատճենը]:

Էջմիածին, 6-ը մայիսի 1915 թ.:

Մեծություն [sic],

Համաձայն այն տազնապալից լուրերի, որոնք վերջերս ստացվել են Թուրքահայաստանից, կոտորածները վերսկսվում են և կազմակերպված բռնությունները սպառնում են հայ ժողովրդի գոյությանը: Ներկա այդչափ դժվարին պահին, մարդկության ու քրիստոնեության անուցից, ես դիմում եմ Ձերոջ մեծության [sic] մարդասիրական վեհ զգացմունքներին և ակնածանքով խնդրում Ձեզ բարեհաճել հրամաններ տալու չեզոք կառավարություններին կցված ձեր դիվանագիտական ներկայացուցիչներին, որպեսզի այդ կառավարությունների ազդեցության շնորհիվ վերջ տրվի թուրքական մոլեռանդության մոլուցքին հանձնված իմ ժողովրդի նկատմամբ Թուրքիայում կիրառվող զարհուրելի հալածանքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 90).

25

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Լոնդոն, 7-ը մայիսի 1915 թ.:

Ես հենց նոր ստացա ձեր նամակը և շտապում եմ ֆրանսիական կառավարությանն ու անձամբ ձեզ հայտնել իմ շնորհակալությունն այն բարեհաճ վերաբերմունքի առթիվ, որը ցուցաբերվել է իմ կրկնակի միջնորդության հարցում: Ես գրել եմ պ. Մինասյանին, համոզելու

համար նրան՝ ևս մեկ անգամ ուղարկելու իր անձնական խնդրանքը, բայց ես գտնում եմ, որ, հավանաբար, նա այդ արդեն արել է: Ես գրել եմ նաև ավագ քահանա Ջիբարյանին, նրան խնդրելով Սիդի-Բեյ-Աբբեսի հայերին տեղյակ պահել ֆրանսիական կառավարության ազնվաբարո որոշման մասին և նրանց հորդորել այլևս չստանալու հայերեն լեզվով թերթեր ու մամակներ:

Հայաստանից ու Կոստանդնուպոլսից ստացվել են վատ լուրեր: Հայաստանում և Կոստանդնուպոլսում կոտորածներ են սկսվել: Հայերին սպանում են զանգվածաբար: Այս պատիվ է բերում մեր ժողովրդին և վկայում այն մասին, որ թուրքերը զուլմները կորցրել են: Չնայած բոլոր կոտորածներին և բոլոր հալածանքներին, հայ ազգը կմնա կենդանի, և չնայած թուրքերի ու քրդերի գործած բոլոր հանցագործություններին, նրա գործը կհաղթանակի: Ես դրանում համոզված եմ: Ես այդ մասին ասում էի այ. Կամբոնին, որի ընդունելության պատվին արժանացա և որին ներկայացրի հայերի ցանկությունները: Քաջ գիտակցելով, որ դեռևս ժամանակավրեպ է Հայկական հարցի մասին խոսելը (գործելու ժամանակն է), ես պարզապես ցանկացա տեղեկացնել այ. Կամբոնին, և նրա միջոցով ֆրանսիական կառավարությանը, այն ամենին, ինչն ընկած է հայկական ձգտումների հիմքում: Այդ նրան հետաքրքրեց, և նա ինձ խոստացավ, մինչ իմ վերադարձը Փարիզ, կազմակերպել ինձ համար ևս մեկ ընդունելություն: Մի քանի օր առաջ ես նրան եմ ուղարկել Հայկական հարցին վերաբերող մի գրություն և խնդրել այն հղել այ. Արտաքին գործերի նախարարին: Ի դեպ, ես այ. Կամբոնին չեմ հայտնել և նրան ուղղված գրության մեջ չեմ գրել, ինչն ասել եմ ձեզ հանդիպումներից մեկի ժամանակ, որը ես այստեղ գալուց առաջ ունեցել եմ ձեզ հետ Փարիզում: Ես Փարիզ կվերադառնամ ընթացիկ ամսի 15-ի շրջանում և դրանից հետո ձեզ կխնդրեմ հատկացնել ինձ մի քանի յուպե: Ես ձեզնից նույնիսկ կխնդրեմ բարեհաճել ինձ օգնելու՝ այ. Արտաքին գործերի նախարարի ընդունելությանն արժանանալու հարցում: Այն օրը, երբ Կոստանդնուպոլիսը գրավվի (ես հույս եմ տածում, որ այդ օրը շուտով կհասնի), Ասիական Թուրքիայի առթիվ Եռյակ դաշինքի տերությունների միջև, անկասկած, տեղի կունենա կարծիքների փոխանակություն, և մենք հուսով ենք, որ Ֆրանսիան վեհորեն գորավիզ կլինի հայ ազգի սուրբ երազանքի իրականացմանը: Այն, ինչ վերաբերում է ներկա պահին տեղի ունեցող կոտորածներին և հալածանքներին, ապա ես խիստ երախտապարտ կլինեմ ֆրանսիական կառավարությանը, եթե նա բարեհաճի մի քայլով դիմել ամերիկյան և իտալական կառավարություններին, որպեսզի նրանք հովանավորեն հայ ժողովրդին ու բողոքի ձայն բարձրացնեն այս վայրագությունների առթիվ: Նման քայլի արդեն դիմել են ռուսական և անգլիական կառավարությունները: Ես շատ եմ ցանկանում, որ Ֆրանսիան ևս բարեհաճի բարեկամական քայլ կատարել: Ինձ դժբախտաբար հայտնի չէ կոտորածներին և ոչ էլ Կոստանդնուպոլսում տեղի ունեցող անցքերին վերաբերող որևէ մանրամասն, հակառակ դեպքում, ես այդ մասին ձեզ կտեղեկացնեի: Կասկածից վեր է, որ Հայաստանում կոտորածներ են տեղի ունեցել, և որ հայերի համար Կոստանդնուպոլիսը վերածվել է դոխաբի: Թուրքերը կարծում են, թե կարող են բնաջնջել հայ ազգին: Այս ազգը գոյատևել է դարեր ի վեր, անցել շատ ավելի մեծ արհավիրքների միջով. թուրքերը միայն արագացնում են իրենց նողկալի և անհեթեթ տիրապետության անկումը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 91-92 v).

Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոս պ. Սեռնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին

Հ. թիվ 59:

Սալոնիկ, 8-ը մայիսի 1915 թ., ժ. 16.15-ին:
(Ստացվել է ժ. 20.25-ին):

Կոստանդնուպոլսից ժամանող ճանապարհորդներից ես տեղեկանում եմ.

Վանում հայերը պետք է ապստամբած լինեն և կոտորած աստիճանավորներին ու մահմեդականներին: Նյանք պետք է դիմամխտով պայթեցրած լինեն իջևանատունը, որտեղ տեղակայվել էր քաղաքային ինքնավարությունը և տասնվեց օր շարունակ իրենց ձեռքում պահած քաղաքը, որից հետո Էրզրումից ուղարկված զորքերը պետք է վերագրաված լինեն քաղաքն ու կոտորած հայերին: Այս իրադարձություններին պետք է հաջորդած լինի 2800 հայերի ձերբակալությունը Կոստանդնուպոլսում, որոնց թվում կան բազմաթիվ երևելի անձինք: Տնային խուզարկությունները պետք է հանգեցրած լինեն վարկաբեկիչ փաստաթղթերի և ռումբերի հայտնաբերմանը: Ենթադրվում է, որ հայ հեղափոխական միությունը՝ մտադրություն է ունեցել դաշնակիցների առաջխաղացմանը զուգընթաց սպանել Էնվեր փաշային ու Թալեաթ բեյին և մահմեդական բնակչության շրջանում խուճապ առաջ բերելու նպատակով՝ դիմամխտով հանցափորձեր կազմակերպել: Ձերբակալված բոլոր հայերը պետք է ուղարկված լինեն Ենի-Շեհիր (Փոքր Ասիայում), որտեղից տասնյոթ հայեր (մահմեդական), որոնք ևս ձերբակալվածների թվում էին, պետք է թույլտվություն ստացած լինեն Կոստանդնուպոլիս վերադառնալու:

Կոստանդնուպոլսում բնակվող տասնհինգից մինչև հիսուն տարեկան ֆրանսիացիների ու անգլիացիների պետք է հորդորած լինեն մայիսի 1-ին իրենց իրերով ներկայանալ ոստիկանական վարչություն և ուղարկված լինեն անհայտ ուղղությամբ: Հավանաբար, քննարկվել է նրանց Գալիպոլիում համակենտրոնացնելու հարցը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 93).

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Գեպարտամենտին

Փարիզ, 8-ը մայիսի 1915 թ.:

Պ. Սազոնովը հեռագրում է, որ Վանից եկող երեք հայեր ժամանել են Ադրբեջանի բանակի շտաբ և հայտնել, որ ապրիլի 15-ից ի վեր Վանի բոլոր հայերը շրջափակված են քրդական

1 Հավանաբար՝ Դաշնակցություն կուսակցությունը:

հորդաներով պաշարված քաղաքի հայկական թաղամասում: Այս շրջաններում կանոնավոր գորքեր չկան: Ջևղեթ փաշան ռմբակոծում է քաղաքը, որի վրա նետել է 1700 արկ: Ամերիկյան գաղութը վտանգի մեջ է: Հարևանությամբ գտնվող մոտավորապես հարյուր հայկական գյուղերի բնակչությունը կոտորվել է, իսկ կանայք թշվել են սարերը: Վանում շրջափակված հայերի ուժերը սպառվում են:

Խոյուն գտնվող Ռուսաստանի փոխհյուպատոսը¹ հեռագրում է, մյուս կողմից, այն, ինչը հաջողում է. Վանի հայերի բանազնացները հենց նոր ժամանեցին Խոյ: Նրանք Ռուսաստանի փոխհյուպատոսին հանձնեցին այդ քաղաքում գտնվող Միացյալ Նահանգների հյուպատոսի ապրիլի 15/28-ի թվակիր նամակը, որը գրվել է մի շորի կտորի վրա: Այդ նամակում ասվում է. «Ապստամբությունն ընդգրկել է ողջ Վանը, կառավարությունը սպառնում է ռմբակոծել քաղաքը: Ամերիկյան գաղութը վտանգի մեջ է: Ես խնդրում եմ այդ մասին տեղեկացնել Միացյալ Նահանգների դեսպանությանը»: Այս նամակը բերել է բանազնացներից մեկը՝ կարված իր շորերին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 94).

28

Լոնդոնում Ֆրանսիայի գործերի հավատարմատար պ. դը Ֆլորիոն՝ Արտաքին գործերի նախարար պ. Դեկլասեին

Հ. թիվ 951:

Լոնդոն, 10-ը մայիսի 1915 թ., ժ. 19.05-ին:

Մի քանի օր առաջ ռուսական կառավարությունն առաջարկել է ֆրանսիական ու բրիտանական կառավարություններին պահանջել Միացյալ Նահանգների և Իտալիայի միջամտությունը Կոստանդնուպոլսում՝ ի նպաստ սպառնալիքի առջև գտնվող հայերի: Սըր Է. Գրեյը կարգադրել է Հռոմում և Վաշինգտոնում գտնվող Անգլիայի դեսպաններին² նեցուկ լինել իրենց ռուս գործընկերոջ քայլին: Ինձ հայտնել են, որ Ձերոյ գերագնացությունը հրահանգներ է տվել նույն ոգով:

Կոմս Բենկեդորֆին այսօր հարցրել է սըր Ա. Նիկոլսոնին, թե ի՞նչ արդյունքի են հանգեցրել այս քայլերը. աչքի են անցկացրել Ֆորին Օֆիսում ստացված հեռագրերը, խիստ անհետևողական բանակցությունները թվում է, թե չեն կարող հանգեցնել այն արդյունքին, որին ձգտում էր հասնել պ. Սագոնովը: Ռուսաստանի դեսպանը հարցրել է, թե սըր Է. Գրեյը կհամաձայնվի՞ դաշնակից տերությունների կողմից մի հյուվարտակի հրապարակմանը, որը թուրքական կառավարությանը վերագրի հայերի նկատմամբ կիրառվող բռնությունների պատասխանատվությունը:

Սըր Ա. Նիկոլսոնը մի կողմից նկատել է, որ հայերը, թվում է, թե ապստամբել են թուրքական կառավարության դեմ, իսկ մյուս կողմից, որ հյուվարտակի հրապարակումն անիմաստ ձեռնարկում է, որից հայերը ոլնե՛ օգուտ չեն ունենա: Այդուհանդերձ, նա սըր Է. Գրեյին կփոխանցի Ռուսաստանի դեսպանի հաղորդագրությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 95).

1 Պ. Չիրկովը:

2 Համապատասխանաբար՝ պ(արոնայ)ք սըր Ջեյմս Ռեննել Ռոդդը և սըր Սեսիլ Սփրինգ-Ռայսը:

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Դեպարտամենտին

Փարիզ, 11-ը մայիսի 1915 թ.:

Իբրև նախորդ հաղորդագրությունների շարունակություն, Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպաններին¹ հանձնարարվել է նախադարձերի երկու խորհուրդների քննարկմանը ներկայացնել ստորև բերվող հռչակագրի նախագիծը, որը հայկական կոտորածների առթիվ ուղղվում է Դռանը, և որի գաղափարը հուշել է պ. Սազոնովը.

«Գրեթե մեկ ամսից ի վեր, Հայաստանի քուրդ և քուրք բնակչությունը, հայերին կոտորելու հարցում, գործում է օսմանյան իշխանությունների թողալույթյամբ և հաճախ աջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել ն. տ.² ապրիլի կեսերին Էրզրումում, Դերչումում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ջեյքումում և համայն Կիլիկիայում: Վանի շրջակայքում գտնվող հարյուրի հասնող գյուղերի բնակիչներն ամբողջությամբ սպանվել են: Բուն քաղաքում հայկական թաղամասը պաշարված է քրդերի կողմից: Միաժամանակ Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան հայ բնակչության հետ: Զրիստոնեության* և քաղաքակրթության դեմ ուղղված՝ Թուրքիայի այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն հայկական կոտորածներում»**:

Այն դեպքում, երբ վերոհիշյալ խմբագրությունն արժանանա կառավարության հավանությանը, Ռուսաստանի դեսպանը խիստ երախտապարտ կլինի Նորին գերագանցություն պ. Դելկասեին, եթե նա բարեհաճի իրեն հայտնել հռչակագրի հրապարակման ամսաթիվը, որպեսզի կայսրական կառավարությունն իր հերթին կարողանա այն հրապարակել միևնույն ժամանակ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 98-98 v).

1 Համապատասխանաբար՝ պլարոնայթ Իզվոլսկին և Բենկենդորֆը:

2 Հարկ է կարդալ՝ նոր տոմսերով:

* Նախարարի կողմից արված ձեռագիր ուղղում. «մարդկության դեմ»:

** Նախարարի կողմից արված ձեռագիր մեկ այլ ուղղում. «համանման կոտորածներում»:

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխնսօրեն պ. Ժ-ան Գ-ուին**

Ե:

Լոնդոն, 13-ը մայիսի 1915 թ.:

Թիֆլիսի «Մշակ» թերթը ապրիլի 9/22-ի համարում տպագրում է երկու ճեպագիր, որոնք Բուլղարիայի հայերի կողմից հղված են Թիֆլիսի հայկական կենտրոնական բյուրոյին: Ահա դրանց թարգմանությունը.

1/ Էրզրումում, Ջեթսունում և շրջակայքում պարբերաբար տեղի են ունենում կոտորածներ: Բիթլիսում, Վանում և Մուշում տեղի են ունենում արյունալի ընդհարումներ: Կիլիկիայում բռնկվել է ապստամբություն: Ակնում և Փոքր Հայքում արձանագրվել են բռնությունների, կողոպուտների, սպանությունների փաստեր: Տնտեսական առումով, ողջ բնակչությունը սնանկացել է: Սուրբանը հրապարակել է մի հյուվարտակ, որով գլխաբաժնուհի է հայ գլխավորներին (օսմանյան բանակում ծառայող): «Ազատամարտ» թերթը փակվել է, և նրա խմբագիրներից մեկն՝ արքայվել է Անգորա: Դիմեք չեզոք տերություններին, որպեսզի նրանք կասեցնեն համընդհանուր կոտորածը:

2/ Տրապիզոնում կոտորածը շարունակվել է երեք օր: Այն եղել է այնքան կատաղի, որ հարկադրված գորբեր են կանչել:

Այս լուրերը, ասում է «Մշակն» իր մեկնաբանություններում, դեռևս պաշտոնապես չեն հաստատվել, և Հեռագրական գործակալությունը դեռևս ոչինչ չի հաղորդել այս առթիվ: Բայց հաշվի առնելով ներկայիս իրավիճակը Թուրքիայում, հաշվի առնելով, որ հայերն ամենուր ի հայտ են բերել իրենց համակրանքը Ռուսաստանի և նրա դաշնակիցների հանդեպ, հարկ է սպասել, որ Թուրքիան, որն անիշխան և բարբարոս պետություն է, իր գայլույթը կպարպի անպաշտպան, խաղաղասեր, քրիստոնյա բնակչության և, մասնավորապես, հայերի վրա:

Ես որևէ ստույգ տեղեկություն չունեմ այն իրադարձությունների առթիվ, որոնք տեղի են ունենում Հայաստանում: Հավանական է թվում, որ Վանում տեղի է ունեցել հայկական շարժում: Ներկա պահին ապստամբության բռնկումը Կիլիկիայում, ինչպես նաև «կոտորածը» Ջեթսունում, ինձ թվում են անհավանական: Դաշնակիցների առաջխաղացումը դեպի Կոստանդնուպոլիս, որով վայրերում բնակվող հայերին պետք է դողեր դավաճանելու իրենց անկեղծ զգացմունքներին, իսկ դրա արդյունքում պետք է լարվածություն առաջանար մահմեդականների և հայերի հարաբերություններում: Այդ լարվածությունը հանգեցրել է ընդհարումների Մեծ Հայքում, ինչպես նաև Կիլիկիայում և հալածանքների ու կոտորածների դարաշրջանը վերակալել է (և այս այն պահին, երբ հույների հանդեպ կիրառվող հալածանքները դադարել են):

Ինչպիսի ողորմելիություն է անգործունյա վիճակում տեսնելն այնպիսի պետությունների, ինչպիսիք են Ռումինիան, Հունաստանը, Բուլղարիան, այնժամ, երբ փոքրաթիվ հայ ժողովուրդը, չնայած իր թուլությանը, մեծ անզուլությանը գործում է հօգուտ դաշնակիցների:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 99-100).

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Ռեպարտամենտին

Փարիզ, 14-ը մայիսի 1915 թ.:

Պ. Սազունովը հեռագրում է պ. Իզվոլսկուն այն մասին, որ Թիֆլիսի հայերը Վանի հայկական գաղութի բանագնացի միջոցով ստացել են հետևյալ բովանդակությամբ մի նամակ, որը կալված է եղել նրա հազուստի աստառում. «Վանի նահանգում սպանվել է շուրջ վեց հազար մարդ: Վանը և Շատախը եռանդագին պաշտպանվում են: Արևերը փոքր վնաս են պատճառել Վան քաղաքին: Մենք մեր վերջին ջանքերն ենք գործադրում: Ամեն օր մենք օգնության ենք սպասում: Խնդրում ենք շտապել: Հետո շատ ուշ կլինի»:

Այս նամակը քվազրված է ապրիլի 28-ով:

Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպանները պարտավորվել են վերը նշված տեղեկությունների մասին իրազեկ դարձնել նախարարների երկու խորհուրդներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 101).

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Ռեպարտամենտին

Փարիզ, 15-ը մայիսի 1915 թ.:

Ի պատասխան կոմս Բենկենդորֆի հեռագրի, պ. Սազունովը հեռագրում է Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպաններին, որ հայկական գործերին առնչվող Մալոնիկում Ֆրանսիայի հյուպատոսի¹ ունեցած տեղեկությունները չեն կարող ներկայացնել իրենի արժանահավատ պատկերը, որն արտացոլվել է այն գեկուցագրերում, որոնք կայսրական կառավարությունը ստացել է Կովկասի իշխանությունների և Պարսկաստանում գտնվող հյուպատոսների կողմից: Կարելի է կասկածներ չտածել, որ կոտորածներն են տեղիք տվել հայերի ապստամբությանը Վանում և ոչ թե այդ կոտորածներն են հաջորդել այդ ապստամբությանը, որովհետև ողջամտությանն անհարիր կլինեի, եթե հայերը ձեռնամուխ լինեին քղերի ու թուրքերի գերակշռող ուժերի դեմ ուղղված գործողությունների, առանց նախապես հաշվի առնելու ռուսական զորքերի ժամանման հանգամանքը:

Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպանները, հետևաբար, հանձնարարություն են ստացել կրկին հրավիրելու նախարարների երկու խորհուրդների բարեհաճ ուշադրությունն այն շահագրգռվածության և հյրատապության վրա, որոնցով անհրաժեշտ կլինի ձեռնամուխ լինել Դռանն ուղղված ծրագրված հոչակագրի հրապարակմանը: Այդ քայ-

¹ Պ. Սենոնը: Խոսքը վերաբերում է 1915 թ. մայիսի 8-ի թվակիր թիվ 59 հեռագրին, որը վերն արտատպվել է թիվ 26 փաստաթղթում:

լը, եթե նույնիսկ այն ազդեցությունը չգործի թուրքերի վրա, որը մենք ակնկալում ենք, չի հապաղի բարձրացնել հայերի բարոյական ոգին, որոնք կարող են Թուրքիայի դեմ պայքարում Ռուսաստանին օգտակար լինել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 102).

33

Մեծ Բրիտանիայի դեսպանության հաղորդագրությունը Դեպարտամենտին

Փարիզ, 19-ը մայիսի 1915 թ.:
(*Ստացել է* Կաբինետը մայիսի 19-ին):

Լոնդոնում ռուսական դեսպանը՝ տեղեկացրել է սրը Էդուարդ Գրեյին, որ ռուսական կառավարությունը Ռուսաստանում հայկական հասարակական կարծիքին բավարարվածություն տալու միտումով, մտահոգված է հետևյալ բնույթի հրապարակային հռչակագրով հանդես գալու հարցով, ինչպես այդ արդեն առաջարկել է պարոն Սազոնովը.

«Գրեթե վերջին ամսվա ընթացքում, օսմանյան իշխանությունների թողվությամբ և հաճախ նրանց աջակցությամբ, Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը զբաղված էր հայերին կոտորելով: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել նոր տոմարով ապրիլի կեսերին Էրզրումում, Դերչայում [sic], Էզուիմում [sic], Բիթլիսում, Մուշում, Սամսունում², Ջեյթունում և համայն Կիլիկիայում: Վանի շրջակայքում գտնվող հարյուրի հասնող գյուղերի բնակիչներն ամբողջությամբ սպանվել են: Բուն քաղաքում հայկական թաղամասը պաշարված է քրդերի կողմից: Միաժամանակ Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան հայ բնակչության հետ:

Քրիստոնեության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն հայկական կոտորածներում»:

Սրը Ֆրենսիս Բեթթին պատիվ ունի արտաքին գործերի գծով պետական քարտուղարի միջոցով տեղեկացնելու պարոն Դելկասեին, որ սրը Էդուարդ Գրեյը հայտնել է պարոն Սազոնովին նման հռչակագրի հրապարակման հարցում իր համաձայնությունը և Լոնդոնում այն հրապարակելու իր պատրաստակամությունը: Ինչն որ ֆրանսիական կառավարությունը համաձայնվի վարվել համանման ձևով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 105-106).

1 Պ. Բենկենդորֆը:

2 Վրիպակ. իմա՝ Սասուն:

Դեպարտամենտի հաղորդագրությունը Փարիզում գտնվող Մեծ Բրիտանիայի դեսպանությանը

Փարիզ, 20-ը մայիսի 1915 թ.:

Այս ամսի 19-ի քվակիր ծանուցագրով¹, սրբ Էդուարդ Գրեյի կարգադրությամբ, բրիտանական Նորին մեծության Նորին գերագանցություն դեսպանը բարեհաճեց տեղեկացնել, որ բրիտանական կառավարությունը պատրաստ է, համաձայն ռուսական կայսրական կառավարության առաջարկության, Լոնդոնում հրապարակել Դռանն ուղղված մի հռչակագիր՝ այն հալածանքների ու կոտորածների առթիվ, որոնց զոհը կրկին դառնում են Ասիական Թուրքիայի որոշ վիլայեթների հայ բնակիչները:

Պ. Դելկասեն պատիվ ունի տեղեկացնելու Նորին գերագանցություն սրբ Ֆրենսիս Բերթին, որ ինքն իր հերթին, մտադիր է Փարիզում հրապարակելու նույն հռչակագիրը: Նա կառաջարկի, աշխուհանդերձ, որ պ. Սազոնովի կողմից առաջարկված բնագրի 2-րդ պարագրաֆում «բրիտանոնության և քաղաքակրթության դեմ» բառերը ջնջվեն: Այն շահագրգռվածությունը, որը կոչում է զգուշությամբ վերաբերվելու Ֆրանսիայի և Անգլիայի տիրապետության ներքո ապրող մահմեդական բնակիչների զգացմունքներին, կայսրադրի բրիտանական, ինչպես նաև ֆրանսիական կառավարություններին ընդունելու այն իրողությունը, որ հարկ է ձեռնպահ մնալ ճշգրտելուց, քե արդյոք երկու տերությունների շահը միայն բրիտանոնեակա՞ն տարրերի հովանավորությամբ է եզրափակվում:

Խնդրելով բրիտանական Նորին մեծության Նորին գերագանցություն դեսպանին տեղյակ պահել սրբ Էդուարդ Գրեյին այն մասին, ինչը նախորդեց, պ. Դելկասեն, որն, ի դեպ, ռուսական կառավարությանն է հղում համանման հաղորդագրություն, խիստ պարտական կլինի սրբ Ֆրենսիս Բերթին, եթե վերջինս լյուեն տեղեկացնի, քե բրիտանական կառավարությունն արդյոք հավանությո՞ւն է տալիս ծրագրված հռչակագրի փոփոխության զաղափարին այնպիսի ձևով, ինչպես այն այստեղ արտագրվել է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 117-117 v).

Դեպարտամենտի հաղորդագրությունը Փարիզում գտնվող Ռուսաստանի դեսպանությանը

Փարիզ, 20-ը մայիսի 1915 թ.:

Արտաքին գործերի նախարարն ի պատասխան այն ծանուցագրերի, որոնք Ռուսաստանի Նորին գերագանցություն պարոն դեսպանը բարեհաճել է տարբեր անգամներ իրեն հղել

¹ Տես վերը թիվ 33 փաստաթուղթը:

այն հալածանքների ու կոտորածների առթիվ, որոնց զոհը կրկին դառնում են Թուրքիայի որոշ վիլայեթների հայ բնակիչները, պատիվ ունի նրան տեղեկացնելու, որ ֆրանսիական կառավարությունը պատրաստ է Փարիզում հրապարակել այն հռչակագիրը, որի բնագիրը Նորին գերագանցություն պարոն Իզվոլսկին բարեհաճել է իրեն հաղորդել մայիսի 11-ի հաղորդագրությամբ¹:

Այդուհանդերձ, ֆրանսիական կառավարության տիրապետության ներքո ապրող մահմեդական բնակիչների զգացմունքներին հարգալից վերաբերվելու անհրաժեշտությունից ելնելով, Արտաքին գործերի նախարարը հույս ունի, որ Նորին գերագանցություն պարոն Սազոնովի կողմից առաջարկված բնագրի երկրորդ պարագրաֆի «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» բառերը կարող են առանց այլևայլության ջնջվել: Դրանք կարող են տեղիք տալ խորհրդածելու, թե Ֆրանսիան, Թուրքիային առնչվող հարցերում, շահագրգռված է միայն քրիստոնյա բնակիչների հարցով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 118-118 v).

36

Մեծ Բրիտանիայի դեսպանության հաղորդագրությունը Դեսպարտամենտին

Հրատապ:

Փարիզ, 21-ը մայիսի 1915 թ.:
(*Ստացել է* Կաբինետը մայիսի 21-ին):

Նորին մեծության դեսպանը պատիվ ունի սըր Էդուարդ Գրեյի ցուցումով, ինչպես նաև վկայակոչելով մայիսի 19-ի իր հուշագիրը², տեղեկացնել Արտաքին գործերի նախարարին այն մասին, որ սըր Էդուարդ Գրեյն առաջարկում է մայիսի 24-ն ընդունել իբրև Թուրքիայում հայերի կոտորածներին վերաբերող հաղորդագրության հրապարակման ամսաթիվ՝ Փարիզում, Պետրոգրադում և Լոնդոնում, որի հրապարակման համար նախատեսված է սըր Ֆրենսիս Բերթի վերոհիշյալ հուշագրում հաղորդված բնագիրը, որտեղ բաց են թողնված վերջին պարագրաֆի «քրիստոնեության և» բառերը, իսկ հռչակագրի վերջում՝ «հայկական» բառը փոխարինվել է «այդ» բառով:

Սըր Ֆրենսիս Բերթին խնդրում է բույլատրել իրեն ավելացնել, որ ինքը հեռագրով դիմում է սըր Էդուարդ Գրեյին ճշգրտելու համար, թե արդյոք նա համամիտ կլինի «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» արտահայտությունն ամբողջությամբ բաց թողնելու հետ, ինչպես այդ առաջարկում է պարոն Դելկասեն՝ մայիսի 20-ի հաղորդագրությամբ³:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 119-120).

1 Վերն արտատպված է թիվ 29 փաստաթղթում:

2 Տես վերը՝ թիվ 33 փաստաթուղթը:

3 Վերն արտատպված է թիվ 34 փաստաթղթում:

**Մեծ Բրիտանիայի դեսպանության
հաղորդագրությունը Գեպարտամենտին**

Հրատապ:

Փարիզ, 21-ը մայիսի 1915 թ.:
(*Սուսցել է Կաբլինետի մայիսի 22-ին*):

Սլլը Ֆրենսիս Բերքին պատիվ ունի Արտաքին գործերի գծով պետական քարտուղարի ցուցումով և իր ելեկվա թվակիր հաղորդագրության մեջ ամփոփված պարագրաֆի վկայակոչմամբ տեղեկացնել պարոն Գելկասեին, որ սրը Էդուարդ Գրեյը համամիտ է Հայաստանում տեղի ունեցող կոտորածներին առնչվող հռչակագրում «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» արտահայտությունն ամբողջությամբ բաց թողնելուն վերաբերող՝ Նորին զերազանցության առաջարկության հետ, որը երեք կառավարությունները մտադիր են հրապարակել՝ յուրաքանչյուրն իր մայրաքաղաքում, ընթացիկ ամսի 24-ին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 121-122).

**Ռուսաստանի դեսպանության
հաղորդագրությունը Գեպարտամենտին**

Փարիզ, 21-ը մայիսի 1915 թ.:

Գաշնակցություն հայկական կոմիտեն հենց նոր կայսրական Արտաքին գործերի նախարարությանը հասցեագրեց հետևյալ հեռագիրը.

«Հայաստանում վերջերս տեղի ունեցած վայրագությունները սպառնում են ոչնչացնել ազգը, դառնալով 1895 թ. կոտորածների կրկնությունը: Մենք հարկադրված ենք դիմել Նորին մեծության կառավարության միջնորդությանը՝ խոչընդոտելու այս ողբերգությանը հանուն մարդկության նկատմամբ ունեցած սիրո, անհատապես պատասխանատու ճանաչելով բուրքական կառավարության անդամներին»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 123).

Թորիսում Ֆրանսիայի հյուպատոս պ. Նիկոլան՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Ճ. թիվ 33:

Թորիս, 22-ր մայիսի 1915 թ.:
(Ստացել են Կար. հունիսի 9-ին.
Քաղ. վարչ. հունիսի 10-ին):

Մայիսի 20-ի լույս 21-ի գիշերը Ռուսաստանի հյուպատոսությունը ռուսների կողմից Վա-
նի գրավման մասին տեղեկացնող մի հեռագիր ստացավ, որը տեղիք տվեց իմ այն հեռագրի
առաքմանը, որը Ձերոյ գերագանցությունը ստացել է:

Այս լուրը, որը քաղաքում արագ տարածվեց, առաջ բերեց անկարագրելի ոգևորություն:

Մենք՝ իմ գործընկերները և ես, անմիջապես հրավեր ստացանք հայկական թեմի եկեղե-
ցում մասնակցելու Te Deum-ին: Այնտեղից դուրս գալուց հետո, կազմավորվեցին թափուրներ,
որոնց գլխավերևում թևածում էին երեք դաշնակից տերությունների դրոշները և որոնք երգում
էին հայրենասիրական երգեր: Այս թափուրները գնացին դեպի երեք հյուպատոսությունները:
Ֆրանսիական հյուպատոսությունում կային հավանաբար երկու հազար անձինք, որոնք ինձ
էին մեծարում՝ ամբողջ ձայնով մեկ ճշալով Մարսելյեզը:

Այնուհետև՝ մենք գնացինք հայկական այգի, որտեղ տեղի ունեցան ելույթներ, և որտեղ
խմեցին հայկական գաղութի կողմից հրամցված բունդ շամպայն:

Այսօր կամ վաղը սպասվում է նոր գորքերի ժամանումը: Ես կարծում եմ, որ Ռյմիայի
գրավումը ևս չի հասլաղի: Ինձ թվում է, որ մտադրություն կա, առանց նախատեսելու քե ինչ
ձևով, գրոհել այդ քաղաքը՝ Մարաղայից, Մայանդուսբից, Սաուդջ Բուլաբից [sic]¹ եկող գու-
րքերի, այնուհետև՝ հյուսիսից՝ Բուշքշիի վրայով եկող այլ գորքերի, և վերջապես լճի՝ նավակ-
ների վրա բարձրացած գորքերի միջոցով: Այսպիսով, բուրքերը նահանջելու համար կունե-
նան միայն Ռուզնուի ճանապարհը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, ff. 56-56 v).

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Դեսպարտամենտին

Հրատապ:

Փարիզ, 24-ր մայիսի 1915 թ.:

Պ. Դելկասեին ընթացիկ ամսի 20-ի ծանուցագրի² հիման վրա, Ռուսաստանի դեսպանը՝ պ.

1 Ինձ՝ Սուջ Բուլաբ:

2 Տե՛ս վերը թիվ 35 փաստաթուղթը:

3 Պ. Իզվոլսկին:

Սագոնովի կողմից շտապ հանձնարարություն է ստացել Նորին գերագանցությանը հղելու ստորև բերվող հեռագիրը.

«Կայսրական կառավարությունը համաձայն է փոխարինել «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» ձևակերպումը «մարդկության և քաղաքակրթության դեմ» բառերով և ինչպես այդ ցանկանում է սրբ Էդուարդ Գրեյը, հռչակագիրը եզրափակել «համանման կոտորածներ» բառերով՝ «հայերի կոտորածների» փոխարեն»:

Պ. Սագոնովը հույս է տածում, որ Փարիզի և Լոնդոնի նախարարների խորհուրդները հավանություն կտան այդ փոփոխությանը: Հակառակ դեպքում, նա պատրաստ է բաց թողնել այն բառերը, որոնք արժանացել են նրանց դիտողությանը, միայն թե հրապարակումը տեղի ունենա ընթացիկ ամսի 11/24-ին, ինչպես այդ առաջարկում է սրբ Էդուարդ Գրեյը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 125).

41

Գեպարտամենտի ծանուցագիրը «Հավա» գործակալությանը

Հրատապ:

Փարիզ, 24-ը մայիսի 1915 թ.*:

Գրեթե մեկ ամսից ի վեր Հայաստանի բուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել մ. տ. ապրիլի կեսերին: Էրզրումում, Դերչունում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ջեթունում և համայն Կիլիկիայում: Վանի շրջակայքում գտնվող հարյուրի հասնող գյուղերի բնակիչներն ամբողջությամբ սպանվել են: Բուն քաղաքում հայկական թաղամասը սլաշարված է քրդերի կողմից: Միաժամանակ Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան հայ բնակչության հետ:

Մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 127).

* Նախարարի ծանուցագրությունը. «Ուղարկեք պատճենը պ. Շարիին. խնդրելով նրան իր կառավարության միջոցով հազորդել դրա բովանդակությունը մեծ վեզիրին [Սաիդ Հալիմ փաշային]: Հրատապ»:

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին**

Ն:

Փարիզ, 25-ը մայիսի 1915 թ.:

Ես հենց նոր թերթերում կարդացի Հայաստանում տեղի ունեցող կոտորածներին վերաբե-
րող՝ Եռյակ դաշինքի տերությունների հռչակագիրը: Հայերը խորապես զգացված կլինեն
ազնվաբարո համակրանքի այս անգնահատելի դրսևորումից, որը Հայաստանի համար
խիստ դժվարին այս պահին, ևս մեկ անգամ ցուցաբերվում է Ֆրանսիայի և նրա դաշնակից-
ների կողմից:

Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել Նորին գերազանցություն պ. Դելկասենին հաղորդելու Փա-
րիզի հայկական կոմիտեի և մեր ողջ գաղութի երախտագիտության սրտաբուխ զգացումը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 129-130).

**Հայկական Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասենին**

Ն:

Փարիզ, 27-ը մայիսի 1915 թ.:

(Ստացել է Քաղ. վարչ. մայիսի 28-ին):

Իբրև Ն{որին} օ{ծություն} ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ և Հայկական
ազգային պատվիրակության նախագահ, ես սլարտավոր եմ Հանրապետության կառավա-
րությանը հայտնել երախտագիտության մեր խորին զգացումը՝ նույնքան համարձակ,
որքան և վեհաշուք այն հռչակագրի համար, որը ձեր կառավարությունը, անգլիական և ռու-
սական կառավարությունների հետ մեկտեղ, հենց նոր հղել է Բարձր Դռանը՝ այս պահին Հա-
յաստանում վերսկսվող կոտորածների առիթով օսմանյան նախարարներին ու նրանց գոր-
ծակալներին անհատապես պատասխանատու ճանաչելու համար:

Երեք դաշնակից ազնվաբարո տերությունները, որոնք հերոսաբար մարտնչում են իրա-
վունքի և քաղաքակրթության, արդարության և ճնշված ժողովուրդների ազատության հա-
մար, մարդասիրական այս քայլով հենց նոր հավաստեցին հայերի նկատմամբ դրսևորվող
իրենց վեհաշուք հովանավորությունը, որոնք դարեր ի վեր հարատևած ճնշումների ենթարկ-
վելուց հետո, զարթոնք են ապրում իրենց ազատագրման և ազգային յնքնավարության վե-
րակազմավորման հույսից:

Ֆրանսիան, հավատարիմ Արևելքի քրիստոնյաների հովանավորի ստանձնած իր ավան-
դական դերին, կցանկանա այս վճռական պահին կատարել այս դերը մինչև վերջ, կվերածնի
այն ժողովրդին, որը պատմության ընթացքում կենսունակության անհերքելի ապացույցներ է

դրսերը: Այս հավատը հայերին մոռացնել կտա այն տառապանքների մասին, որոնք նրանք դեռևս կրում են իրենց ազգային ձգտումների իրականացման համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 132-133).

44

Պ. Մկրտչյանը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ. թիվ 85:

Ալեքսանդրիա, 28-ը մայիսի 1915 թ., ժ. 12.35-ին:

Չցանկանալով ընդգրկվել թուրքական բանակի կազմում, Ջեյթունի հայերը հեռացել են, դեպի լեռները. նրանց դեմ ուղարկված առաջին զորամիավորումը ոչնչացվել է. այժմ նրանք մարտնչում են թուրքական քսան հազար զինվորների դեմ. նրանց դրությունը տագնապալից կլինի, եթե ճիշտ ժամանակին օգնության չհասնեն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 134).

45

Փարիզում Միացյալ Նահանգների դեսպան պ. Վիլյամ Շարփը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դեկասեին

Փարիզ, 28-ը մայիսի 1915 թ.:
(*Ստացել են* Կար. մայիսի 29-ին,
Քաղ. վարչ. մայիսի 30-ին):

Ես պատիվ ունեմ տեղեկացնել մայիսի 25-ի ծանուցագրի¹ ստացման մասին, որով Չերոզերսզյանը բարեհաճել է պաշտոնապես ինձ խնդրել օսմանյան կառավարությանը շտապ իրազեկ դարձնելու, ընդունված կարգով, այն հաղորդագրության բնագրի մասին, որը վերաբերում է բուրդ և բուրբ բնակչության կողմից իրականացվող հայերի կոտորածներին:

Ես չեմ զրացել այդ հաղորդագրությունն իսկույն եթե իմ կառավարության ուշադրությանն արժանացնելու:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 135).

¹ Այս ծանուցագրի մասին տես վերը թիվ 41 փաստաթուղթը:

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Փան Գուին**

Ն:

Փարիզ, 3-ը հունիսի 1915 թ.:

Ես եկել եմ երեկ, և քանի որ դուք մասնակցում էիք կոնֆերանսի աշխատանքներին, ուժբախտաբար, չկարողացա ձեզ այսօր տեսնել: Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք պ. Դելկասեին ուղարկել՝ կարողալուց հետո, այն նամակը, որը նրան եմ հասցեագրում: Դուք ինձ ծառայություն մատուցած կլինեք, եթե ինձ համար ընդունելություն կազմակերպեք. մի քանի րոպեները, որոնք նա կբարեհաճի ինձ հատկացնել, ապարդյուն չեն անցնի:

Ես նույնիսկ կցանկանամ, եթե դա հնարավոր է, նրան տեսնել նախքան երկուշաբթի օրը գումարվող՝ Սիրիային նվիրված կոնֆերանսը, որտեղ նախագահելու է պ. Լեյզյուն: Խիստ ցավալի կլինի, եթե այդ կոնֆերանսում առաջ քաշվի, զրեթե պաշտոնական ձևով, Սիրիական Կիլիկիայի տարօրինակ նախագիծը: Ես խնդրում եմ ֆրանսիական կառավարությանը, նման ծանր հարված չհասցնել հայերի ազգային զգացմունքներին: Ես ձեզ այդ մասին ասել եմ և կրկնում եմ. Կիլիկիայում ֆրանսիական շահերի համատեղումը հայ ժողովրդի ցանկությունների հետ, ամենևին էլ անհնարին չէ: Ես շատ եմ ցանկանում նաև տեսնել ձեզ և հնարավորին չափ՝ շտապ: Արդյոք դուք չե՞ի՞ք ցանկանա բարի գտնվել տեսակցելու ինձ հետ: Դրա համար ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 136-136 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Ն:

Փարիզ, 3-ը հունիսի 1915 թ.:
(Մտացել են Կար. հունիսի 15-ին,
Քաղ. վարչ. հունիսի 16-ին):

Երեսուն հայեր կախվել են Անգորայում: Մեր պատրիարքը՝ բռնի ուժով տարվել է Թալեաթ բեյի մոտ, և նա խիզախություն է ունեցել ընդդիմանալու գալիզելի բռնապետին: Չեյքունի հիասքանչ լեռնականները, առանց դրսից օգնություն ստանալու, մի նոր հերոսական էջ են

1 Նոթին սրբազնությունն Ջավեն Տեր-Եղիայանը:

հավելյում իրենց հերոսական քաղաքի փառապանծ պատմությանը: Նրանք ոչնչացրել են իրենց դեմ ուղարկված բազմաթիվ գումարտակներ և ըստ Սոֆիայից Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» թերթին հովված հեռագրի, անձամբ Ջեմալ փաշան է, որ բազմաքանակ զորքերի գլուխ անցած շարժվում է դեպի Ջեյրոմ:

Եվ այնժամ, երբ հայ ժողովուրդն իրեն փառքով է պատկոմ՝ ենթարկվելով բոլոր վտանգների՝ Կիլիկիայում, Հայաստանում, Կոստանդնուպոլսում, ևս մեկ անգամ ի կատար ածելով լիբերալ Եվրոպայի դաշնակցի և առաջատար ջոկատի իր պատմական դերը, մենք ամենամեծ ցավով ենք տեսնում մի խումբ ֆրանսիացիների, որոնք ցանկանում են Կիլիկիան վերածել Սլոբիայի նահանգի... Այդ պ. Ռենե Բազինն է, որի փորձեց նախ՝ «Էշո դը Պարիում» տպագրված հոլովածում սիրիականացնել Ադանայի վիլայեթը:

Հաջորդ օրը պ. աբբա Լաժիեն՝ «Արևելքի դպրոցների բարեգործական կազմակերպության» փոխտնօրենը, Ֆոյետոմ կարդացած իր դասախոսության ընթացքում խոսեց Ադանայի վիլայեթի մասին այնպես, կարծեք թե այն միշտ եղել է Սլոբիայի մի մասն ու ակնարկեց Սլոբիան արյունահեղ արած երկու կոտորածները՝ 1867 թ. կոտորածը և 1909 թ. կոտորածը... Անդրադառնալով այդ դասախոսությանը, «Էկլերի» խմբագիրը հենց նոր գրել է հետևյալը. «... 1908-ին՝ նոր կոտորածներ: Երկոթորդերը հավաստիացրին, որ իրենք ձևավորելու են լիբերալ և հանդուրժամիտ կառավարություն: Հայտնի է, թե դա ինչի հանգեցրեց: 1908 թ., 30000 սիրիացիների կոտորածի ժամանակ, նրանք տեսան, թե որքան է Դ-ուռն անգործունյա և անտարբեր» («Էկլեր», 29-ր մայիսի 1915 թ.):

Ինձ հայտնի է, պարոն նախարար, արդարության հանդեպ ունեցած ձեր բուռն սերը: Ես գիտեմ, թե ինչպիսի վեհանձն սիրալիրությամբ եք դուք միշտ մեծարել հայ ժողովրդին ու հայկական խնդիրը, և ինձ համար մտածելն իսկ անհնար է, որ դուք կարող եք հավանություն տալ նման կամայականի, որն ամենևին չի համապատասխանում Ֆրանսիայի ասպետական ավանդույթներին: Ֆրանսիան Կիլիկիայում շահեր ունի և ցանկանում է այն պահպանել: Էլ ի՞նչ հայ, որն այնքան հիմար գտնվի չհարգելու համար այդ շահերը: Էլ ի՞նչ հայ, որը չի ձգտի, անգամ կրքոտությամբ, տեսնելու այդ շահերն ապստոխվի լինելու: Բայց այդ պատճառով արդյոք անհրաժեշտ է Կիլիկիային գրկել պատմության տաս դարերի ընթացքում ձեռք բերած իր հայկական բնույթից, խորապես վիրավորել հայերի ազգային զգացմունքները և ավելոծել 30000 նահատակների անդորրը, որոնք ընկել են՝ ոլովիետև հայեր էին:

Արդյոք նույն Եվրոպա՞ն չէր, որը սկսած XI դարից Կիլիկիային տվեց Փոքր Ասիա անվանումը, երբ մեր նախահայրերը, որոնք վաղուց ի վեր այստեղ հզոր գաղութ ունենին, հիմնադրեցին բազավոլություն, որը գույատեց երեք դար և մեծապես օժանդակեց խաչակիրներին՝ սարակիմոսների* դեմ նրանց մղած պայքարում: Այդ պարաշրջանից ի վեր, թուրքերի կողմից բռնագրավված այս երկրամասը, երբեք չի դադարել հայկական լինելուց: Սա ի հայկական պատրիարքությունն առ այսօր նրա ուղեղն է, ճիշտ այնպես, ինչպես Ջեյրոմի արձիվների բույնը՝ նրա սիրտը: Համայն Կիլիկիայում հազիվ թե կան մի բուռ սիրիացիներ, իսկ այդտեղ կան ավելի քան 400000 հայեր, որոնք այս երկրի ինտելեկտուալ, առևտրական, արդյունաբերական միջուկն են՝ տգետ ու բարբարոսական մահմեդական ազգությունների միջավայրում: Ֆրանսիական և ամերիկյան դպրոցներն այստեղ հաճախում են գրեթե բացառապես հայերը: Մեզ մոտ ամենատարածված, ամենաժողովրդական հայրենասիրական երգերից մեկը նվիրված է Կիլիկիային:

* Սիցնադարյան Եվրոպայում այս անունն է տրվել մահմեդականներին: – Ծ. ր.:

Մենք ամենամեծ բարօրությունն ենք ցանկանում Սիրիայում, բուն Սիրիայում ասլրող մեր եղբայրներին: Մենք համոզված ենք, ի դեպ, որ Ֆրանսիայի հովանու ներքո նրանք կդառնան ամենաերջանիկը բոլոր ժողովուրդներից: Բայց մենք նաև համոզված ենք, որ նրանք չեն կարծում, թե Կիլիկիայի բռնի սիրիականացումն անհրաժեշտ է իրենց երջանկության համար:

Դիմելով ձեզ այս կոչով, պարոն նախարար, ես ամենևին էլ Ադանայի դաշտավայրի հարստությունները չեմ, որ նկատի ունեմ: Ես միայն հայրենասեր եմ և բանաստեղծ. ես նկատի ունեմ միմիայն այս տեղանքում մեր ազգի դարավոր գործունեության արդյունքը հանդիսացող պատմական գանձը, որը ցանկանում են մեզնից հափշտակել, և որը լքելը մեզ համար անհնար է՝ առանց մեր գործի դավաճանը դառնալու:

Ես ձեզ խնդրում եմ, պարոն նախարար, դրսևորել ծայրահեղ բարություն՝ ինձ ձեր ընդունելությանն արժանացնելու համար: Ես երջանիկ կլինեմ, եթե ձեզ հետ մի քանի լուպե գրուցելու հնարավորությունն ունենամ այս հարցի շուրջ, որը մեր ժողովրդի և մեր գործի համար կենսական նշանակություն ունի: Եվ ես համոզված եմ, որ ձեր մեծ սիրտը և ձեր մտավոր զարգացման բարձր մակարդակը դյուրությամբ կգտնեն այն ձևերը, որը կապահովի Ֆրանսիայի շահերը, ամբողջությամբ հարգելով, հնարավորության սահմաններում, հայ ժողովրդի ցանկությունները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 137-141 v).

47

Փարիզի հայկական կոմիտեի բարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 5-ը հունիսի 1915 թ.:

Ես շատ շնորհակալ եմ ձեզնից այն բարի վերաբերմունքի համար, որը դուք դրսևորեցիք գրելով ինձ այսպիսի սիրալիր և այսպիսի մանրամասն մամակ, չնայած այն գործերին, որոնցով դուք գերծանաբերեցիք եք այս պահին: Անշուշտ, ֆրանսիական մեկնակերպը շարունակվում է տարբերվել հայկական մեկնակերպից: Բայց ես բացարձակապես չեմ վիստովում, ինչպես ձեզ այդ մասին արդեն ասել եմ, համաձայնության հանգելու հարցում՝ նկատի ունենալով ֆրանսիական ժողովրդի վեհանձնությունը և հայկական խնդրի նկատմամբ նրա ունեցած մեծ համակրանքը: Ես ձեզ ուղարկում եմ հայերի ձգտումներին վերաբերող մի ծանուցագիր, որը կազմել եմ գրեթե մեկ ամիս առաջ Լոնդոնում: Ես այն ուղարկել եմ պ. Կամբոնին, նրա հետ ունեցած իմ հանդիպումից հետո և խնդրել նրան բարեհաճել՝ կարողացնելու հետո ուղարկել պ. Դելկասեին: Ես չգիտեմ, թե արդյոք պ. Դելկասեն տեսե՞լ է այս ծանուցագիրը: Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք կարողալ այդ ծանուցագիրը և այն ցույց տալ պ. Դելկասեին: Դուք դուրսնից կիմանաք, որ մեզ համար Կիլիկիայի խնդիրը՝ Հայկական հարցի անբախտելի և հիմնական մասն է կազմում: Արդյոք այս ձգտումները բնա-

կան և օրինական չե՞ն: Եթե դուք հայ լինեիք, արդյոք դուք այս հարցի շուրջ չէի՞՞ք ունենա նույն զգացողությունը և մտորումները, որոնք ունենք մենք: Արդյոք չեզոք ձևով մեր ցանկությունները ֆրանսիական կառավարությանը և նրա դաշնակիցներին ներկայացնելը մեր իրավունքների մե՞ջ չի մտնում: Կարո՞ղ ենք մենք վարվել այլ կերպ, քան մեր ազգային ծրագրին հավատարիմ լինելը, մինչ այն պահը, երբ ճակատագիրն իր վճիռը կայացնի:

Ես երջանիկ կլինեմ, եթե գրուցեմ պ. Դելկասեի հետ այս բոլոր հարցերի շուրջ և նրան ներկայացնեմ բոլոր անհրաժեշտ պարզաբանումները: Կան բազմաթիվ մանրամասներ, ոյունք վերաբերում են, մասնավորապես, Կիլիկիայի հարցին, որին ես չեմ անդրադարձել իմ ծանուցագրում և որն ընդհանուր ջանքեր է պահանջում. և ի դեպ, այն գրելիս, ես չէի կարող ենթադրել, որ Ֆրանսիան մտադրություն կունենա Կիլիկիան կցելու Սյուրիային: Այսպիսով, ես կհամարեմ այս ծանուցագիրը բանավոր բացատրություններով, որոնք կտամ պ. Դելկասեին:

Առաջիկա շաբաթվա առաջին օրերին ես ձեզմից կխնդրեմ մի քանի լուսյե և երջանիկ կլինեմ, եթե այս ամենի մասին մեկ անգամ ևս գրուցեմ ձեզ հետ:

Այս նամակի հետ մեկտեղ, ես ձեզ եմ ուղարկում նաև «Ինֆորմասիոնի» համարներից մեկը, որը պարունակում է իմ դասախոսությանը վերաբերող մի հիասքանչ և պատկառազոր հոդված (իմ դասախոսությունը մեծ հաջողություն ունեցավ, և ինձ խնդրում են ևս մեկ անգամ դրանով հանդես գալ մեծ դահլիճում). դուք, հավանաբար, արդեն տեսել եք այդ հոդվածը, բայց քանի որ չի բացատրում և այն, որ այն տեսած չլինեք, ես ձեզ եմ ուղարկում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 142-143 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

Պ. Չոպանյանի հուշագիրը

Լոնդոն, 7-ը ապրիլի 1915 թ.:

Հայերի ձգտումները

Հայերը գիտակցում են, որ իրենք հնամենի ազգ են, որն ունի սեփական մշակույթ և որը պատմության մեջ ունեցել է նշանակալից դեր: Նրանք զգում են, որ իրենք ոչ միայն դժբախտ են, այլև պատվագուրկ՝ կուպիտ, մենզ ու ամպտոդ ազգի հարկատուն, որը դարեր ի վեր իրենց ճնշում է և խոչընդոտում իրենց առաջընթացին առաջադիմության ճանապարհով: Համոզված այն բանում, որ ոչ մի լուրջ բարենորոգում հնարավոր չէ իրականացնել իրենց դժբախտ երկրում՝ մինչ այն կմնա թուրքերի տիրապետության տակ, նրանք ցանկանում են, որ հանուն արդարության հաղթանակի մղվող այս պատերազմի ավարտից հետո, գերմանաթուրքական բռնատիրությանը հնադարյան Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան բարեհաճեն վերջնական ու արդարացի լուծում տալ Հայկական հարցին՝ Օսմանյան կայսրության հայկական մահանգներում ստեղծելով ինքնավարություն:

Հայերը ցանկանում են ինքնավարություն հաստատել Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբեռլի, Սվազի մահանգներում և Կիլիկիայում:

Անշուշտ, Կովկասում գտնվում են մեծ թվով հայեր, որոնք ապրում են մի տարածքում, որը նախկինում եղել է անկախ Հայաստանի մի մասը: Բայց լինելով Ռուսաստանի հայերի

ձգտումների մեկնաբանողը, նրանց պատգամավորն էր: Պապազյանովը վերջերս հայտարարեց, որ Կովկասը ռուսական կայսրության անբաժանելի և անքակտելի մասն է, որտեղ հայերն իրենց երջանիկ են զգում այն լիքերով վարչակարգի ներքո, որը նրանց հատկացվել է, և մտածում են միայն երկրի բնդիանուր առաջադիմությանը նպաստելու մասին, և որ Ռուսաստանի, ինչպես նաև համայն աշխարհի հայերի պահանջների վերաբերում են միմիայն վեց վիլայեթներին ու Կիլիկիային:

1913 թ. ռուսական կառավարությունը մեծահոգաբար առաջարկում էր տերություններին Օսմանյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների մի նախագիծ, որը իսարսիվում էր հայ ժողովրդի ցանկությունների վրա և որն արդեն ինքնավարության ուրվագիծ էր: Ըստ այս նախագծի՝ միավորված վեց վիլայեթները պետք է կազմավորեին մի մեծ նահանգ, որին, եվրոպացի կառավարչի գլխավորությամբ, հատկացվելու էր առանձնահատուկ վարչակարգ: Հայերենը, նույն հիմունքներով, ինչ քուրդերենը, պետք է դառնար պաշտոնական լեզու: Գերմանիայի դիմադրության պատճառով այս նախագիծը ձախողվեց: Հայերը ցանկանում են տեսնել այս նախագծի կենսագործուծը ներկա պատերազմի հետևանքով ստեղծված նոր իրավիճակի պահանջներից թելադրված փոփոխություններով և ընդհայնումներով հանդերձ, որոնց թվում ամենակարևորներից մեկը Կիլիկիայի կցումն է վեց վիլայեթներին, մի բան, որը չնայած հայերի ունեցած նման ցանկությանը, 1913 թ. թվում էր անհավանական, ինչը ծագել էր Գերմանիայի կողմից Կիլիկիայի բռնագրավման պատճառով: Հայկական հարցն ամբողջ Եվրոպայի աչքում վերաբերվել է վեց վիլայեթներին, բայց Կիլիկիան, բարենորոգումների բոլոր նախագծերում հիշատակվել է միշտ հատուկ հողվածով: Հայերի ամենակարևոր և ամենահավաքական զանգվածը գտնվում է վեց վիլայեթներում ու Կիլիկիայում: Հենց այստեղ է, որ տեղի է ունեցել հայերի ողբերգությունը, հենց այստեղ է, որ հայը վտակներով իր արյունն է հեղել հանուն քաղաքակրթության և իր ազգային խնդրի պաշտպանության, հենց այստեղ է, որ հայ ժողովուրդը ցանկանում է իր երազանքն իրականացված տեսնել և այդ համարում է իրավացի:

*
* *

Չանագան պատճառներով հայերը Կիլիկիայի միավորումը համարում են անհրաժեշտություն: Հենց Կիլիկիայում է հիմնադրվել հայկական վերջին թագավորությունը, և այս մարզում, որտեղ հայերը խաչակիրների հետ միասին ձեռք-ձեռքի տված պայքարել են սարակիներին դեմ, որտեղ Սիսը, մայրաքաղաքը, արվեստի և գրականության հիասքանչ օջախ է եղել, որտեղ Պայասը մի պահ դարձել է Արևելքի ամենամեծ առևտրական նավահանգիստը, դեռևս բարձր են փառապանծ անցյալին առնչվող հուշերը: Շնորհիվ իր քաջարի լեռնականների անկախ ոգու, Չեյրումը մինչ մեր օրերը պահպանել է իր կիսաինքնավար վիճակը: Ամենից առաջ իրեն զգալի տալիս ազգային ինքնագիտակցությունը, որը հանուն ինքնավար Հայաստանի ստեղծման՝ դրոշմ է հայերին ձգտելու Կիլիկիայի կամ Փոքր Հայքի միավորմանը Մեծ Հայքի վեց նահանգներին: Բայց Կիլիկիայի միավորումը նրանց թվում է անհրաժեշտ նաև տնտեսական տեսանկյունից: Հայաստանը նավահանգիստ* չունի. շնչահեղձ եղած քարձրադիր լեռնաշղթաների օղակում, դժնդակ կլիմա ունեցող այս երկիրը, որի բազում շրջաններ աղքատ են և դար ու փոս, որը քուրդերի և քրդերի կողմից ամայացված է ու սնանկացված, կվերակառուցվի և կզարգանա ավելի դյուրին ու ավելի արագ՝ շնորհիվ բերրի Կի-

* Նախարարի ձեռագիր նշումը. «Նրա բուն նավահանգիստը Տրապիզոնն է»:

լիկիայի և Մերսինի նավահանգստի միջոցով դեպի ծով ունեցած ելքի, որն ամբողջությունն էր չունեցող առևտրական նավահանգիստ է: Այն, որ հայերը Կիլիկիայում բնակչության մեծամասնությունը չեն կազմում, ճիշտ է: Դա չի խանգարում, որ այս շրջանն ամենից առաջ հայկական լինի: Այստեղ բնակվող մահմեդականները ներկայացնում են տարբեր ազգություններ՝ բուրքմեններ, չերքեզներ, ավշարներ, քաբեր, քոլեր, քուրքեր և ուրիշներ: Այս ազգությունների միջև կրոնից բացի որևէ ընդհանրություն չկա. նրանցից և ոչ մեկը չունի մշակույթ և ազգային ինքնագիտակցություն*.

հայերն այստեղ կազմում են դեռևս ամենակարևոր էթնիկական խումբը և միակ ինտելեկտուալ ու արդյունաբերական տարրը:



Հայ ազգը կարող է արդյոք պահպանել և զարգացնել ինքնավարությունը: Հայերը Մեծ Հայքում կորցրել են իրենց քաղաքական անկախությունը հազար տարի առաջ, իսկ Փոքր Հայքում՝ վեց հարյուր տարի առաջ: Նախկինում նրանք երբեմն եղել են բացարձակապես անկախ և Տիգրան Մեծի օրոք ունեցել են, ի դեպ, Ասիայի ամենահզոր կայսրությունը, իսկ երբեմն՝ ինքնավար պետության կարգավիճակով ապրել են Հռոմի, Սասանյանների, Բյուզանդիայի և արաբների տիրապետության տակ: Նրանց մեծ քաղաքները եղել են ինտելեկտուալ և մշակութային կյանքի օջախներ, առևտրի ու արդյունաբերության կարևոր կենտրոններ: Չնայած դարեր ի վեր հարստևած դժնդակ ստրկությանը, նրանք պահպանել են իրենց ազգային ինքնությունը, լեզուն, շարունակում են լինել իրենց հայրենի երկրի հիմնական տարրը, մեծ ցանկություն ունեն ապրելու ազգային կյանքով և իրենց համարում են ընդունակ այդպես վարվելու: Հին ժամանակներում նրանք իրենց երկրում դրսևորել են ռազմական ունակությունների փայլուն ապացույցներ, որտեղ Եփրոսի համար դարերի ընթացքում խաղացել են ավանգարդային դեր ասիական հորդանների և օտարերկրացիների սրընթաց հարձակումներից դիմակայելու հարցում: Բյուզանդական կայսրությունում հայկական լեզուների արիությունը քաջ հայտնի է. բազմաթիվ հայ զորավարներ կարողացել են այստեղ գահ բարձրանալ, ինչպես նշանավոր ռազմիկ Հովհաննես Չմշկիկը, որը հաղթականորեն ետ մղեց մահմեդականների բոլոր գրոհները և հսկայական չափերով ընդարձակեց կայսրության սահմանները: Այն փաստը, որ Մեծ Հայքում Բագրատունիների հարստության տապալումից հետո հայերը կարողացան XI դարում համախմբվել Կիլիկիայում, հիմնադրել այնտեղ թագավորություն և երեք դար շարունակ այն պաշտպանել մահմեդականների անհամար զանգվածներից, հենց միայն այդ բավական է, հավաստելու համար ազգության ռազմական ունակությունները: Անկախությունը կորցնելուց հետո, Մեծ Հայքում, ի դեպ, երկար ժամանակ դեռևս կային բազմաթիվ շրջաններ, որտեղ հայ «Մելիք» (դեկավար, իշխան) գլխավորությամբ, մինչև XVII դարը պահպանվեց կիսաինքնավար վիճակը: Այն իսկ պահից, երբ Ռուսաստանի հայերին կանչեցին զինվորական ծառայության, նրանք առաջ քաշեցին օրինակելի զինվորների, որոնք և ներկայումս կազմում են Կովկասի բանակի հիմնական տարրերից մեկը: 1878 թ. պատերազմի ժամանակ նրանք ռուսական բանակին տվել են անվանի զորավարներ, ինչպես Լուիս-Մելիքովը, Լազարևը, Տեր-Ղուկասովը, Շելկովմիկովը և ուրիշներ: Պարսկական հեղափոխության առաջնորդ Եփրեմ խանը, որին՝ հերոսական մահվան կապակցությամբ անգլիական մամուլն անվանել է «Արևելքի Գարիբալդի», հայ էր: Աբդուլ Համիդի օրոք ծավալված ողբերգական իրադարձությունների ժամանակ, այս ազգությունը, որը

* Էջի վրա նախարարի կատարած ձեռագիր հաջորդ նշումը. «Այո, բայց նրանք մահմեդականներ են, իսկ Արևելքում կրոնական հարցերն ավելի կարևոր են, քան ազգության հարցերը»:

դարեր ի վեր գրկված էր գեներ օգտագործելու հնարավորությունից, պաշարված իր դեմ համախմբված խաժամուժի և կանոնավոր գորքերի կողմից, բազմաթիվ վայրերում անկարող է եղել ինքնապաշտպանվելու և այս հանգամանքն անարյարացիորեն տեղիք է տվել քաջություն չունեցող ժողովրդի համբավ ձեռք բերելուն: Նույն ազգն ակնհայտորեն ապացուցել է այս տխուր համբավի ստահողությունը ոչ միայն 1895 թ. Ջեյթունի դյուցազներգությամբ, այլև այն հաղթական դիմադրությամբ, որը 1905 թ. ցուցաբերեց թաքարների Կովկաս կատարած ներխուժման ժամանակ:

Այն ոգևորությունը, որը հայերը հանդես բերեցին ներկա պատերազմի հենց սկզբից, դաշնակիցների կողմում բռնապետության ներկայացուցիչների դեմ մղվող պայքարին մասնակից դառնալու հարցում, ևս մեկ փաստ է առ այն, որ մարտական ոգին ու հերոսության զգացողությունը, ինչպես նաև ազատության հանդեպ տաժած սերը, նրանց մոտ չեն չբացել: Ի դեպ, մի՞թե այս ազգությանը հավերժ փառք չի բերում այն, որ նա միակն էր Ասիայում, որը, չնայած այդ պահին առկա ամենամբարենայաստ պայմաններին, ոտքի ելավ համիդյան զազրեղի վարչակարգի դեմ և չնայած բոլոր հալածանքներին ու կոտորածներին, երկար տարիներ շարունակ օժանդակեց ապստամբական շարժմանը: Այս ողբերգության ընթացքում, սկզբից մինչև վերջ, հայ ժողովուրդն առաջ քաշեց քաջարի հայրենասերների մի ամբողջ համաստեղություն, որոնք արիամարիեցին բոլոր փամզները և նրանցից շատ շատերը հերոսաբար զոհվեցին Հայաստանի ազատագրման ու Արևելքի վերածնության համար:

Հայերի ունակություններն առևտրական և արդյունաբերական բնագավառներում հայտնի են. հայտնի է նաև, որ հայ ժողովրդի մեծամասնությունը կազմում են հողագործները, արհեստավորները, բանվորներն ու արդյունաբերողները: Այս ազգն աչքի է ընկել նաև իր էսթետիկական հակումներով և վարչական ասպարեզում ունեցած ունակություններով: Սկսած V դարից, հայերն իրենց լեզուն հասցրել են կատարելության ամենաբարձր աստիճանի: Մի անգամ նշանավոր ֆրանսիացի լեզվաբան Մեյեն ինձ ասաց. «Դասական հայերենը, որով V դարում թարգմանվել է Աստվածաշունչը, նույնքան գեղեցիկ է, որքան Սոֆոկլեսի հունարենը»: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ հայր Արսեն Բագրատունու կողմից կատարված «Իլիականի», «Մշակականքի», «Դրախտ կյուրսյալի» բանաստեղծական հայերեն թարգմանությունները՝ իրոք որ, հրաշքներ են, որոնցում հայ բանաստեղծը կարողացել է պահպանել այս հռչակավոր գլոխգործոցների վեհաշուք ոճն ու գեղեցկությունը: Բայրունի հանճարը հրաշալի թարգմանիչ է գտել հանձին Ղևոնդ Ալիշանի, որը թարգմանել է «Չայրլ Հարոլդի» IV երգը, իսկ Վիկտոր Հյուգոյի հանճարը ճշգրտությամբ վերարտադրվել է Պեշիկ-թաշյանի կողմից կատարված «Տեսիլքների» թարգմանության մեջ: Կոստանդնուպոլսում ծնված ողբերգակ Ադամյանը, որը հանդես է եկել գլխավորապես Ռուսաստանում, հանճարեղ ձևով հիացրել է ռուսական հասարակայնությանը, որն իր կատարմամբ ներկայացրել է Շեքսպիրի իլմնական դերերը, իսկ ռուսական քննադատությունը Մոսկվայում, Պետրոգրադում նրան համեմատել է Սալվինիի, Ռուսիի հետ և գտել, որ Համլետի դերում նա նույնիսկ գերազանցում է այս երկու նշանավոր դերասաններին: Դարերի ընթացքում հայերը ստեղծել են ուրույն դրոշմ ունեցող արվեստ և գրականություն, որն ամփոփում է բազմաթիվ գլոխգործոցներ: Նրանց ժամանակակից գրականությունը, որը ձևավորվել է իտալական, անգլիական և, մասնավորապես, ֆրանսիական գրականությունների ազդեցության ներքո, ներկայումս ամենահարուստն է, ամենակենսունակն ու ամենալիբերալն Արևելքում: Դարերի ընթացքում նրանք իրենց երկրում և արտասահմանում ունեցել են մեծ թվով ճարտարապետներ, քանդակագործներ, բեմականիչներ, երաժիշտներ, մանրանկարիչներ, առաջնակարգ ոսկերիչներ: X դարում մայրաքաղաք Անին դարձավ արվեստի փայլուն օջախ: XII-XIII դա-

րեղում մանրանկարներով ձևավորված կլիկյան ձեռագրերը երբևէ գոյություն ունեցածներից ամենագեղեցիկն են: Եվ այն, ինչն անվանում են օսմանյան ապլեստ՝ ապարանքներ, մզկիթներ, հախճապակեղեն, զորգեր, ոսկե և արծաթե զարդերի արտադրություն և այլն, մեծ մասամբ հայերի գործն է: Հայտնի է, որ թուրքական Ասիայի բոլոր ազգերի թվում հայերն այն ազգն են, որը հիմնադրել է դպրոցների ամենալայն ցանցը (որոնց ծախսերն, առանց կառավարության որևէ օգնության, հոգացել է համայնքը): Բրդերը չունեն և ոչ մի դպրոց: Օսմանյան Հայաստանում թուրքերն ունեն միայն 150 դպրոց՝ 17000 աշակերտներով, այնժամ, երբ հայերն ունեն 785 դպրոց՝ 82000 աշակերտներով: Եվ այն դպրոցները, որոնք Հայաստանում կամ Կլիկիայում հիմնադրել են Ֆյամսիացի կամ ամերիկյան միսիոներները, հաճախում են զլխավորապես հայերը:

Իրենց պատմության ընթացքում, վարչական և քաղաքական կարիերայի ասպարեզում հայերն առաջադրել են նշանավոր դեմքերի ոչ միայն իրենց հայրենի երկրում, այլև Լեհաստանում, Հունգարիայում, Թուրքիայում, Ռուսաստանում, Եգիպտոսում: Բավական է նշել այնպիսի անուններ, ինչպիսիք են Լոռիս-Սելիբովը, ինչպես նրան ռուսներն են անվանել՝ Ռուսաստանի «լիբերալ բռնակալը», որը Ռուսաստանին սահմանադրական վարչակարգ շնորհելու առաջին փորձն է կատարել, Նուբար փաշան, որը Եգիպտոսը մատչելի է դարձրել եվրոպական քաղաքակրթության համար, Մավկուլ խանը, որը ջանացել է լինել լիբերալիզմի մարգարեն Պարսկաստանում, Մյուխաթ փաշայի խորհրդական Օտյանը, որն անձամբ ինքն է մշակել օսմանյան առաջին սահմանադրության բնագիրը, և որը թուրքերն ընդունակ չեղան կենսագործելու:



Ըստ այն վիճակագրության, որը Կոստանդնուպոլսի հայ պատրիարքարանը հրատարակել է 1912 թ. և որը մոտավոր հաշվարկներով ամենաճշգրիտն է մեր ունեցածների թվում, վեց վիլայեթներում (որանցում չընդգրկելով հարևան մահմեդական մահանգների տարածքները, որոնք՝ մահմեդականների գերակշռությունը տեղում ապահովելու համար, 1876 թ. պատերազմից հետո՝ թուրքական կառավարությունը միացրել է հայկական վիլայեթներին) 1018000 հայերի հետ մեկտեղ ապրում են 123000 նեստորականներ և 42000 հույներ՝ ի հակադրություն 660000 թուրքերի, 424000 քրդերի ու 88000 չերքեզների, պարսիկների, լազերի, գնչուների: Բնակչության մյուս մասը (254000) բաղկացած է կուսայաշտ տարբեր ազգություններից (եգ-դիներ, զազաներ և այլք): Ըստ 1912 թ. պատրիարքարանի վիճակագրության, Կլիկիայում կան մոտավորապես 404350 հայեր: Հայաստանում, ինչպես նաև Կլիկիայում, մահմեդականներն ամենևին էլ համասեռ չեն. նրանք չունեն ազգային ինքնագիտակցություն, մշակույթ և նրանց մեծ մասը, ինչպես քրդական խիստ դաժան որոշ ցեղեր, դեռևս քոչվոր են ու ապրում են նախակենցաղ և վայրենի կյանքով: Հայաստանում, ինչպես նաև Կլիկիայում, թուրքերը սիրված չեն այս տարբեր ազգերից և ոչ մեկի կողմից, որոնցից ոմանք՝ եզդիները, քրդական որոշ ցեղեր և ուրիշներ, իրենց շատ ավելի հոգեհարազատ են համարում հայերին: Ի վերջո, եթե նկատի ունենանք թվաքանակի հարցը, հնարավոր չէ հաշվի չառնել այն ողբերգական պատճառները, որոնց հետևանքով հայերի շարքերը մոտրացել են իրենց իսկ հայրենիքում: Դեռևս 60 տարի առաջ վերջիններս կազմում էին հոծ մեծամասնություն: Հավածանքները, կոտորածները, բռնի կրոնավորությունները, քշվառությունը, զանգվածային տարագ-

1 Խոսքը բնականաբար վերաբերում է 1877-1878 ռուս-թուրքական պատերազմին:

րություններն էին, որ նվազեցրին հայերի քվաքանակը: Նրանց քիվը կնվազի մաև ներկայիս պատերազմի ընթացքում այն կոտորածների հետևանքով, որոնց տեղիք կտա նրանց բարեկամական դիրքորոշումը Եռյակ դաշինքի նկատմամբ (ռուս-թուրքական սահմանամերձ շրջանում արդեն տեղի են ունեցել սարսափելի կոտորածներ): Չնայած այս ամենին, նրանք միշտ կկազմեն այս ամբողջ տարածաշրջանի բնակչության հիմնական բաղկացուցիչ մասը՝ պատմական, ինտելեկտուալ և տնտեսական առումներով (Հունաստանում կային ընդամենը 300000 հույներ, երբ այնտեղ թագավորություն հիմնադրվեց): Այնուհետև՝ շնորհիվ ինքնավար վարչակարգի, նրանց քվաքանակը փոքր անց կաճի բազմաթիվ վտարանդիների վերադարձի հաշվին, որոնք գտնվում են Կովկասում, Ամերիկայում, Եգիպտոսում, Եվրոպայում: Թուրքիայի բոլոր մարզերում սփռված 5-ից 600000 հայերի մի մասը կզան, իհարկե, հաստատվելու ինքնավար Հայաստանում, և նրանք, ովքեր համիդյան կամ դեռևս ավելի վաղ տեղի ունեցած կոտորածների ժամանակ բռնությամբ կրոնափոխ են եղել ու ընդունել իսլամը (որոշ քրդական ցեղեր նախկինում իսլամն ընդունած հայեր են, որոնք մինչ այսօր պահպանել են հայկական սովորույթները և նույնիսկ անունները), կարող են վերադառնալ իրենց սկզբնական կրոնին և ազգությանը:

*
* *

Նախկինում, Աբդուլ Համիդի օրոք, հայ ազգի բշնամիները նրա համար ստեղծել են անկարգ, ցնցումների և հուզումների տեղիք տվող տարրի համբավ: Որևէ բան չի կարող ավելի նվազ հավանական լինել, քան այս մեղադրանքները, որոնք սոսկ հայ ռազմիկների գործունեության սխալ մեկնաբանության հետևանքն են: Այդ գործունեությունը նպատակ ունենալով ոչ թե քանդելու Թուրքիայում երբևէ գոյություն չունեցած կարգը, այլ նախապատրաստելու դեպի ազատության և բուն կարգի հաստատումը տանող դարաշրջանի ուղին՝ թե՛ իրենց երկրի և թե՛ ամբողջ Արևելքի համար: Հայ ազգը հիմնականում խաղաղասեր է ու կարգապահ և միայն բուրքական վարչակարգի անհանդուրժելի օրինազանցությունն է նրան դրդել դիմելու եռանդուն գործունեության: Կովկասի փոխարքա կոմս Վարոնցով-Գաշկովը, այն հանդիպման ժամանակ, որը ես պատիվ ունեցա նրա հետ ունենալ 1908 թ., ի պատասխան այն երախտագիտության, որը ես նրան հայտնում էի հայերի հանդեպ նրա կողմից ցուցաբերված արդարացի և լիբերալ դիրքորոշման համար, ինձ ասաց. «Ես նման դիրքորոշում եմ գրավել, քանզի հայերին համարում եմ Կովկասի ամենախելոք տարրը, որին օգնություն ցուցաբերելն ամենաարժեքավոր քայլն է ողջ տարածաշրջանի առաջադիմության համար: Բավարարելով նրանց արդարացի պահանջները, ես կարծում եմ, որ ծառայություն եմ մատուցում որքան իմ երկրին, նույնքան և հայերին»: Հայ ազգությունը միայն բացասական տարրի հակապատկերը չէ. Արևելքում այն գլխավորապես աշխատասեր, կստուցող, արտադրող է: Բերենք մեկ օրինակ. 1909 թ. բուրքերը և քրդերը Կիլիկիայում կոտորեցին ոչ միայն 20-ից 30000 հայերի, այլև կողոպտեցին նրանց ունեցվածքը, այրեցին նրանց տները և շուկան: Չորսից հինգ տարին բավական եղավ հայ բնակչության համար, որպեսզի վերականգնվեր այն իրավիճակը, որը գոյություն ուներ կոտորածից առաջ: Բերենք մեկ այլ օրինակ: 1605 թ. շահ Աբբասը, Պարսկաստանի շահը, հրավիրեց այն հայերին, որոնք ապրում էին նկարիչներով. արհեստավորներով, առևտրականներով հռչակված Ջուլֆա քաղաքում, և քանի որ նրանք հրաժարվեցին լքել իրենց երկիրը, նա գորքեր ուղարկեց, որոնք, սվիններով, բռնի ձևով ստիպեցին նրանց տեղափոխվել ու հաստատվել Պարսկաստանում՝ Սպահանի մերձակայքում: Սա հարգանքի տուրք էր, որը շահը բավականին կուպիտ ձևով մատուցեց հայերի շնորհներին,

որովհետև մա ցանկանում էր այս միջոցով նպաստել իր երկրի առևտրի, արդյունաբերության և տարբեր արհեստների ու արվեստների առաջընթացին, ասուպարեզներ, որտեղ վերջիններս վարպետների համբավ էին վայելում:



Հայերը ջերմորեն կապված են կրոնին ու քրիստոնեական մշակույթին. նրանք սիրում են իրենց եկեղեցին, որն ազգային հարատւոյուն է, բայց նրանց բացարձակապէս բնորոշ չէ կրոնական մոլեռանդոյությունը և նույնիսկ ատելոյությունն օտարերկրացիների նկատմամբ: Հայտնի են այն բոլոր ջանքերը, որոնք նրանք գործադրել են թուրքերի շրջանում արևմտյան քաղաքակրթոյան տարածման ուղղոյամբ: Նրանք նույնիսկ փորձել են որոշակի մշակուրային արժեքներ տարածել քրդերի շրջանում, որոնք առ այսօր պահպանում են այն ավագակային բարքերը, որոնց վրա ուշադրոյություն է դարձրել Քսենոֆոնն իր «Տաս հագարի ճահանջում»: Ն {որին սյրագնոյություն} ն Սըրիմյանը 1860 թ. սահմաններում փորձել է կոչել քրդերին ուղարկելու իրենց երեխաներին իր կողմից Վանում հիմնադրված հայկական դպրոցը: Մեկ այլ պրելատ, Ն {որին սյրագնոյություն} ն Տիգրանյանը, գրեթե նույն ժամանակաշրջանում քրդերենի է քարգմանել մի քանի գիրք և փորձել է քրդերին կարդալ սովորեցնել: Ավելի ուշ, հայկական «Դաշնակցոյություն» կուսակցոյությունը ջանացել է պայմանավորվել քուրդ դեկավայներին հետ, որպէսզի դրդի նրանց համագործակցելու հայերի հետ՝ նրանց ազատագրական գործունեոյան հարցում: Այս բոլոր փորձերը ձախողվել են թուրքական կառավարոյան հրահրած խոչընդոտների պատճառով: Առաջին բանը, որ հայերը կանեն ինքնավար Հայաստանում քրդերին անմիջապէս զինաբափելուց հետո, նրանց համար դպրոցներ հիմնադրելն է, որպէսզի նրանց մղեն դէպի քաղաքակրթոյան ուղին:



Հայերը լավ գիտեն, որ ինքնավար Հայաստանի կազմավորումը չի կարող բարոյոյություններ չհարուցել: Բայց նրանք համոզված են նաև, որ Նոյակ դաշինքի տերոյությունների ազնվաբարո կամքն ու նրանց համագործակցված օգնոյությունը կարող են հաղթահարել բոլոր դժվարոյությունները: Այս ազգոյան համար դա կլինի ասիական բարբարոսոյան դեմ մղած դարավոր պայքարի, արևմտյան աշխարհի և նրա միտումների նկատմամբ ունեցած անսասան նվիրվածոյան հետևանքով կրած անհամար տառապանքների արդարացի փոխատոցում: Ինքնավար Հայաստանը ստեղծված նոր իրավիճակում կշառնա եվրոպական կյանքի օջախ Փոքր Ասիայում, արևմտյան քաղաքակրթոյան և մահմեդական ազգոյությունների միջև մի միջնորդ և հավասարակշռող օղակ, որը կփոխարինի Օսմանյան կայսրոյանը: Ինքնավար Հայաստանում հայ ժողովորդը կանի ամեն ինչ, մեկ անգամ ևս սրժանանալու համար անմահ Գլադստոնի խոսքերին. «Մառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթոյանը»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 144-159).

Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության թարգմանիչ պ. Լեդուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեի

Ծ. թիվ 29 ¹:

Պերա, 5-ը հունիսի 1915 թ.:
(Ստացել են Կաբլինետոյ և
Քաղ. վարչ. հուլիսի 17-ին):
Հինգշաբթի, 3-ը հունիսի:

Հայկական հարց. Երեկ զիշեր Կոստանդնուպոլսի պատգամավոր Ջոհրապ էֆենդին և Էրզրումի պատգամավոր Վարդգես էֆենդին ձերբակալվել են: Նրանց բնակարանները մանրակրկիտ ձևով խուզարկվել են և բոլոր փաստաթղթերը հավիշտակվել:

Այսօր առավոտյան պատգամավորներին ուղարկել են ներքին նահանգները, ինչպես ենթադրում են՝ Կոնիա:

Հայկական համայնքի երկու երևելի անձանց ձերբակալություններն, անկասկած, օսմանյան կառավարության պատասխանն է դաշնակից տերությունների այն հաղորդագրությանը, որով Հայաստանում տեղի ունեցած կոտորածների և Կոստանդնուպոլսում հայերի նկատմամբ կիրառված դաժան միջոցների համար պատասխանատու են ճանաչվում նախարարները և թուրքական բանակային կորպուսների հրամանատարները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 903, f. 5).

ՀԱՎԵԼՎԱԾ

Նախնական օրենք²

«Օֆիսիելը» տպագրում է մի նախնական օրենք, որը նախատեսում են կիրառել նրանց նկատմամբ, ովքեր այնժամ, երբ երկիրը գտնվում է պատերազմական իրավիճակում, կխոչընդոտեն կամ կջանան խոչընդոտել իշխանությունների գործունեությանը.

Հոդ. 1. Պատերազմական իրավիճակի ընթացքում բանակի, բանակային կորպուսների ու դիվիզիաների հրամանատարներին և նրանց փոխարինողներին, ինչպես նաև անկախ խմբերի հրամանատարներին թույլատրվում է, դիմելով զինված ուժի, ամենաեռանդազին ձևով անմիջապես խստագույնս պատժել ու հիմնավորապես արմատախիլ անել բնակչության կողմից ի հայտ բերվող յուրաքանչյուր ընդդիմություն, զինված հարձակում կամ դիմադրություն, անկախ դրսևորման ձևից, որոնք նպատակ կհետապնդեն խոչընդոտելու կառավարության հրամաններին կամ նրա կողմից ընդունված՝ ազգային պաշտպանությանը և հասարակական կարգին վերաբերող միջոցառումների կատարմանը:

Հոդ. 2. Բանակի, անկախ բանակային կորպուսների և դիվիզիաների հրամանատարները

¹ Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

² Լույս է տեսել «Լա Թուրքիում» 1915 թ. հունիսի 2-ին:

ուզման անհրաժեշտության դեպքում և կամ այն պարագայում, երբ լրտեսության կամ դավաճանության մեջ կասկածեն գյուղերի կամ փոքր քաղաքների բնակիչներին. կարող են անհատական կարգով կամ զանգվածաբար նրանց վտարել ու տեղավորել այլ վայրերում:

Հոլ. 3. Այս օրենքն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 903, f. 28).

49

Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության թարգմանիչ պ. Լեդուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Ծ. քիվ 30 ¹:

Պերա, 12-ը հունիսի 1915 թ.:
(*Ստացել են* Կաբինետը
և Զաղ. վարչ. հուլիսի 17-ին):
Երեքշաբթի, 8-ը հունիսի:

Սուլեյմանլի անունը կրող Ջեյթունը. Այսօր առավոտյան պաշտոնական թերթում տպագրված կայսրական հրովարտակի հիման վրա, Ջեյթունի սանջակը կկրի «Սուլեյմանլի» անվանումը:

Այսօր մենք ստույգ գիտենք, որ Ջեյթունի շրջանի բոլոր հայ բնակիչներն ամբողջությամբ վտարվել են իրենց գյուղերից: Ոմանք ուղարկվել են Կոնիայի շրջան, մյուսները՝ Տարսուսի: Ըստ անաչառ սկզբնաղբյուրից բխող տեղեկությունների, այս ամբողջ բնակչության տեղահանությունն ի կատար է ածվել ողբալի պայմաններում: Բնակչությունը լքել է ամեն ինչ՝ իր ունեցվածքը, կահույքը, անշարժ կայքը, որոնք մնացել են մահմեդական վտարանդիների տնօրինության ներքո, համաձայն այն մեթոդի, որը վերջին հունիս ամսին օսմանյան իշխանությունները կիրառել են Եգեյան ծովի՝ հույներով բնակեցված առափնյա շրջանում:

Յուզանակները փոփոխելուց հետո, Երիտասարդ Թուրքիայի պարագլուխները միևնույն հաջողությամբ փոխում են նաև աշխարհագրական տերմինները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 903, f. 53).

50

Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության թարգմանիչ պ. Լեդուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Ծ. քիվ 31 ²:

1 Մենք արտասպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

2 Մենք արտասպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

Պերա, 19-ը հունիսի 1915 թ.:
 (Ստացել են Կաթինետը և
 Քաղ. վարչ. հուլիսի 17-ին):
 Չորեքշաբթի, 8-ը հունիսի:

Հայերի մահապատիժը. Ըստ ոչ առանց դժվարությունների ի մի բերված տեղեկությունների, երեկ առավոտյան մահապատժի ենթարկված քսան հայերից մի մասն՝ արտասահմանյան ծագում ունի, մյուս մասը՝ Կոստանդնուպոլսից է: Նրանք մասնակցել են մի դավադրության, որը հյուսել էր Շերիֆ փաշան և նպատակ ուներ սպանելու Ներքին գործերի և Ռազմական նախարարներին² ու փոփոխելու կառավարման ձևը:

Այս դավադրության պատմությունը շարադրվել է «Թանինում» լույս ընծայված «Քաղաքական կատակերգություն» վերնագիրը կրող մի հուղվածաշարում, որի քարգմանությունը գետնողված է մեր նախորդ հաղորդագրությունների հավելվածներում³: Ցավալի է, որ այս հրապարակումն ընդհատվեց հենց այն պահին, երբ թվում էր, թե որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Երեկ չէ առաջին օրվա գիշերը ոստիկանությունն արթնացրել է մի հայ քահանայի⁴ և ուղեկցել զինվորական դատարանի բանտ: Այս հոգևորականը, որը շատ էր վախեցել, չզիտեր իր ձերբակալության պատճառը: Բանտ հասնելուց հետո, մի գործակալ նրան տեղեկացրել է, որ պատրաստվում են մահապատժի ենթարկել քսան դատապարտյալների, որոնք նրա համայնքից են և քահանային կանչել են նրանց կրոնական ծառայություններ մատուցելու համար: Քահանան նշել է, որ ինքը չի կարող կատարել իր ծառայությունն առանց պատրիարքի թույլտվության: Նրան պատասխանել են, որ նա իրավասու չէ ընդունելու և ոչ մեկի, բացի այն անձանցից, որոնց նրան կներկայացնեն կառավարության գործակալները:

Այս պայմաններում, հոգևորականը դատապարտյալների համար կատարել է իր ծառայողական պարտականությունները:

Հավաստիացնում են, որ դատապարտյալներից մի քանիսը բողոքել են՝ հայտնելով իրենց անմեղության մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 904, f. 4).

51

Պօլարոնայք Կամսարականը և Մուտաֆուլը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ. թիվ 76:

Պատճենը:

1 Հնչակյան կոմիտեի անդամներ են:

2 Համապատասխանաբար՝ Թալեաթ բեյը և Էնվեր փաշան:

3 Արտատպված չէ:

4 Քահանա Գարուստ Պողոսյանը:

Կացությունն անհուսալի է. հալածանքները Կիլիկիայում համընդհանուր բնույթ են կրում. Ջեյրունը, Դ-յոթ-Յուլը, Հասան-Բեյլին ավերված են. զանգվածաբար Մոսուլ, Ջուր [sic]¹, Կոնիա այտաքսված բնակչությանը փոխարինել են մակենողամական «մուհադջիբները»². Ադանան, Այնթաբը, Սիսը, Հաճընը գտնվում են անխուսափելի կոտորածների սպառնալիքի ներքո, հրոսակախմբերին դիմադրություն ցուցաբերվում է միայն առանձին դիրքերում. այն նպատակը, որը հետապնդվում է՝ հայկական տարրի համատարած ոչնչացումն է: Այս բոլոր տեղեկությունները ստացվել են պաշտոնական անձանցից, որոնք ժամանել են երեկ և որոնք այս փաստերը վերագրում են դաշնակիցների հանդեպ հայերի դրսևորած խորին համակրանքին. այստեղ հույզերը խիստ շիկացած են. առկա է դաշնակիցների և հայազգի կամավորների համագործակցված, ռազմական հրատապ միջամտության բացահայտ անհրաժեշտությունը. համառոտն խնդրում ենք գործել համապատասխան ձևով, հեռագրի միջոցով մեզ հայտնելով ձեր հրահանգները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 160).

52

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին**

Ն:

• Փարիզ, 9-ը հուլիսի 1915 թ.:

Ես խիստ զգացված էի այն սիրալիք վերաբերմունքի առթիվ, որը դուք ցուցաբերեցիք իմ կոնֆերանսին ձեր ներկայացուցիչ պ. Վիետին մասնակից դարձնելով: Դրա համար ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում:

Հայկական ինքնավարության սկզբունքը բարեհաճ ընդունելություն է գտնում բոլոր շրջաններում և էականը հենց այդ է: Ինքնավար Հայաստանի սահմանների շուրջ համաձայնության կայացումը դժվարություններ չի հարուցի Ֆրանսիայի և մեր ժողովրդի միջև, որում ես համոզված եմ: Մեզ հայտնի է Ֆրանսիայի վեհանձնությունը, իսկ ձեզ՝ այն նվիրվածությունը և հարգանքը, որը մենք տաժում ենք Ֆրանսիայի հանդեպ:

Եթե դուք այդպիսի հնարավորություն ունենաք, ես ձեզ խնդրում եմ սիրալիք գտնվել ինձ հատկացնելու մի քանի լուպեններ, որոնք ձեզնից խնդրել եմ. ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 161-161 v).

1 Իմա՝ Դեր-Էզ-Ջուր:

2 «Վտարանդիներ»:

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝
Ռազմական նախարարությանը**

Գաղտնի¹:

Աթենք, 11-ը հուլիսի 1915 թ.:

Դեղեկագաչից սկիզբ առած հուլիսի 2-ի թվակիր մամակ

Թուրքիայի ներքին նահանգներից ժամանած մի հեղինակավոր անձ հայտարարում է, որ քրիստոնյաների և, մասնավորապես, հայերի դրությունն այնքան վատթար է, որպիսին երբևէ չի եղել մեկ դարից ի վեր:

Չեյթունում և Ադանայում բնակիչները մահացել են փողոցներում, իսկ բոլոր գյուղերի բնակչությունը վտարվել է: Բիթլիսի նահանգում հալածանքը եղել է այնքան դաժան, որ շատերը, վիատության գիրկն ընկած, բռնությամբ ընդունել են իսլամը: Երիտթուրքերը որևէ ուշադրություն չեն դարձրել Անտանտի սպառնալիքին²: Սկսած մայիսի 10-ից մինչև հունիսի 25-ը տեղեկացնողը բանտարկված է եղել Անգորայում:

Մեծ թվով քրեական տարրեր ազատ են արձակվել թուրքական բանտերից, հանդերձավորվել և հրոսակախմբեր ձևավորել, որոնք Անգորայով կուղարկվեն Էրզրումի ռազմաճակատ:

Ոչ ամրակազմ քրիստոնյա բանվորները կառուցում են Բաղչեջիկ-Իզմիլ ճանապարհը:

(A.M.G., 7 N 2096).

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝
Ռազմական նախարարությանը**

Գաղտնի և խորհրդապահորեն:

Աթենք, 11-ը հուլիսի 1915 թ.:

Տեղեկություն՝ ստացված բրիտանական միսիոներից, որը վերջերս վառարվել է
Թուրքիայից և լքել Կոստանդնուպոլիսը հուլիսի 3-ին

Տեղեկացնողը նշել է հայերի՝ պարբերական բնույթ կրող հալածանքների մասին: Նա գտնում է, որ դրանք կանխամտածված ձևով հրահրել են գերմանացիները՝ բնակչության ուխտադրուժ տարրի ոչնչացման նպատակով:

¹ Մենք արտասպասում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

² Այս սպառնալիքի մասին տե՛ս վերը թիվ 41 փաստաթուղթը:

Մարդիկնում տեղի են ունեցել կոտորածներ, Լբրբումում՝ խաշտանգումների ենթարկվելու սպառնալիքի տակ բռնի կրոնափոխություններ և, ընդհանրապես, տեղահանություններ ու փոքրաթիվ խմբերով հայերի վերաբնակեցումներ Մուսեմի [sic] գյուղերում: Փողոցների երկայնքով, մեծ խմբերով հայերին հարկադրել են քայլել, որոնց մեծ մասը ճանապարհին մահացել է: Հասնելով նպատակակետ, նրանք նորից են տեղահանվել, այնպես, որ խզվել են նրանց ընտանեկան և մյուս բոլոր կապերը: Տեղեկացնողը գտնում է, որ որևէ դիվանագիտական միջամտություն ոչ մի արդյունքի չի հանգեցնի: Կոմիտեն, ասում է նա, այն հետևություններ է հանգել, որ եթե զերմանացիները հաջողության հասնեն, ապա՝ անգամ Անտանտին քելադրողի դերում հանդես կգան, իսկ եթե տանուլ տան, որևէ բան չի կարող բարդացնել իրավիճակը: Հետևաբար, նրանք որևէ ձևով ձեռնպահ չեն մնա հետևելու այն ուղուն, որն իրենք նպատակահարմար կհամարեն:

(A.M.G., 7 N 2096).

55

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 24-ը հուլիսի 1915 թ.:

Ձեյթունն ընկավ: Հերոսական քաղաքը, որը երբևէ պարտություն չի կրել այս անգամ ևս թուրքերից չէ, որ պարտություն է կրել: Այն դարձել է թուրքերի և զերմանացիների ստորաբար հյուսած մեքենայության զուռը: Բանի որ Ձեյթունի դեմ ուղարկված բոլոր թուրքական զուժարտակները մեծաքանակ կորուստներ կրելով ետ են մղվել, կենտրոնական կառավարությունը, ինչպես նաև Կլիկիայի թուրքական իշխանությունները, դիմել են Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին, Սսի կաթողիկոսին ու Մարաշի հայ բողոքականների քահանա, պատ {վելի} Ահարոնին և հայտարարել նրանց, որ եթե զեյթունցիները զենքերը վայր չդնեն, ապա տեղի կունենա հայերի համընդհանուր կոտորած, իսկ եթե նրանք հպատակվեն, որևէ խիստ միջոցներ նրանց նկատմամբ չեն կիրառվի: Մասնակի կոտորածներն արդեն սկսվել էին: Համընդհանուր բնաջնջման հեռանկարը սարսափի է մատնել հոգևորական ղեկավարներին, որոնք և հեռագրով խնդրել են զեյթունցիներին անձնատուր լինել: Բողոքական քահանա Ահարոնն անձամբ մեկնել է Ձեյթուն, որպեսզի այս առաջարկությունները և Ձեմալ փաշայի տեղակալ Ֆահրի փաշայի պարտավորվածությունները կոփողներին հաղորդի: Ձեյթունցիները զիջել են, կարծելով, թե ծառայություն են մատուցում իրենց ժողովրդին և միամտորեն վստահել են թուրքերի խոստումին: Այդուհանդերձ, տեղի են ունեցել կոտորածներ. ավելի դաժան, քան երբևէ, հալածանքները մղեցնում են ամենուր, իսկ Ձեյթունն ավերվել է: Այս ամբողջ դավադրությունը հյուսվել է Հալեպում գտնվող զերմանական հյուպատոսի՝ աջակցությամբ և նրա ղեկավարությամբ: Ներխուժելով քաղաք, թուրքերը ձեռնամուխ են

եղել բնակչության կոտորածին. կովոդները մի մասն ընկրկել է դեպի լեռները, բնակչության մյուս մասը թուրքերի կողմից տեղահանվել է դեպի Սուլթանիե՝ ճահճոտ ու առողջության համար անբարենպաստ տեղանք և դեպի Միջագետքում գտնվող Չոր [sic]¹: Մահմեդական 900 վտարանդիներ Այնթափից Ջեթյուն են ուղարկվել՝ այնտեղ հաստատվելու համար: Ջեթյունն այսուհետև կկոչվի Սուլեյմանիե [sic]²: Այս ամենը տեղի է ունեցել ապրիլ ամսին, բայց մամրամասները մեզ են հասնում այժմ: Խեղճ Ջեթյուն: Նրա հետ միասին անկում է ապրում քրիստոնեության պատվարներից մեկը:

Այդուհանդերձ, թուրքերը կարող են վստահ լինել, որ Ջեթյունն ինչպես հարկն է վրեժխնդիր կլինի և վաղը կվերածնվի, որովհետև անհնար է, որ Ջեթյունը թուրքական դառնա:

Սպասելով, հայ ազգությանը բնաջնջելու համար, թուրքերը նոր միջոցի են դիմել: Ինչպես Մեծ, այնպես էլ Փոքր Հայքի բազմաթիվ շրջաններից նրանք զանգվածաբար տեղահանում են հայերին, բշում դեպի Չոր [sic] անապատը և նրանց փոխարեն այդ վայրերն են բերում մահմեդականների: «Ժուրնալ դը Ժնևը» վերջերս տպագրել է ժնևցի պրոֆեսորի մի նամակ, որը հենց նոր է մեկնել Թուրքիայից և որը մանրամասներ է հաղորդում, թե ինչպիսի դաժանությամբ են տեղի ունեցել այս տեղահանությունները (որոնք քողարկված կոտորածներ են): Ես ձեզ են ուղարկում լրագրից կտրված հատվածը:

Թիֆլիսի «Հորիզոն» թերթը տպագրում է միևնույն հարցին առնչվող երկու նամակ, որոնցից մեկն ուղարկվել է Մարաշից, մյուսը՝ Կոստանդնուպոլսից: Ես դրանցից թարգմանում եմ մի քանի հատվածներ.

Հատված Մարաշից ուղարկված 10/23-ը ապրիլի թվակիր նամակից. «Ամեն օր այստեղ են բերում 2-ից 300 զեթյունցիների և մի զիշեր նրանց պահելուց հետո, տեղահանում են անհայտ վայրեր: Պանդուկները, դպրոցները լեցուն են Ջեթյունից, Զուրնուզից եկած ընտանիքներով, որոնց շատ արագ են հարկադրել բռնելու արքայի ճանապարհը:

Թշվառությունն աննկարագրելի է: Կանայք, ծերունիներ, 4-ից 5 տարեկան երեխաներ ոտքով գալիս են այստեղ և գնում՝ կրելով ծայրահեղ զրկանքներ, ոտաբոբիկ: Այստեղ գտնվող մինչև 37 տարեկան տղամարդիկ՝ բոլորն ուղարկվել են ճանապարհների վրա աշխատելու: Ջեթյունցի մարտիկները քաշվել են դեպի լեռները: Երկու օր առաջ այստեղ են բերել 50 զեթյունցիների, որոնց մտադիր են խառնամբոխին բավարարվածություն պատճառելու նպատակով կախաղան բարձրացնել: Մեկ շաբաթ առաջ 900 վտարանդի մահմեդականների Այնթափից ուղարկվել են Ջեթյուն: Նրանց պատրաստվում են տեղավորել Ջեթյունում և նրա շրջակայքում: Դ-յութ-Յոլից բնակչությունն ամբողջությամբ դուրս է բերվել. 17-ից 20 տարեկան տղամարդիկ ծանր աշխատանքներ կատարելու համար տարվել են մեկ օրվա հեռավորության վրա գտնվող մի վայր՝ ենթարկվելով ցանկացած բնույթի վիրավորանքների և բռնությունների: Այնտեղ մնացել են միայն կանայք և երեխաները: Հալելու 30 հայեր հենց նոր են կախվել. 70-ին դատել է մի հարբած գերմանացի: 30-ը, որոնց թվում երկու քահանաներ, դատապարտվել են մահվան, մյուսները՝ տարբեր պատիժների»:

Հատված Կոստանդնուպոլսից ուղարկված 18/31-ը մայիսի թվակիր նամակից. «Ջեթյունցիների մի մասն ուղարկվել է Սուլթանիե, որը ճահճոտ ու առողջության համար անբարենպաստ տեղանք է, մյուս մասը՝ Դեռ Չոր [sic]: Ամերիկյան դեսպանության միջնորդությամբ պատրիարքությունը նրանց համար դեղանյութեր և պաշտամունքի առարկաներ ուղարկելու թույլտվություն է խնդրել կառավարությունից. Թրալեսք բեյը մերժել է: Թուրք երևելի անձանցից բաղկացած հանձնաժողովը զբաղվում է Ռոբբախի նախագծի կենսագործմամբ, որի

1 Իմա՝ Դեռ-Էզ-Չոր:

2 Իմա՝ Սուլեյմանի:

իմաստը հայերին Հայաստանից Միջագետք տեղահանելն ու նրանց փոխարեն այդ տեղանքը մահմեդականներով բնակեցնելն է»:

Թիֆլիսի «Հորիզոն» թերթը տպագրում է Կոստանդնուպոլսից ստացված 30-ը մայիսի (12-ը հունիսի) թվակիր մի նամակ. ահա դրանից մի հատված. «Էրզինգհիանի՝ հայերին ուղարկել են Խարբերոյ, այնուհետև՝ Ալն: Սկսել են արտոլել նաև Էրզրումի հայերին: Նույնը վերաբերում է Այնթաբի, Հաճնի հայերին: Նրանց ուղարկում են Միջագետքի խորքերը:

Լուրեր են տարածվում, որ շուտով տեղահանելու են նաև Կոստանդնուպոլսի հայերին: Այնթաբից մեզ գրում են, որ ապրիլ ամսի սկզբից ի վեր, երկու օրը մեկ քարավաններ են տեղ հասնում, որոնք Այնթաբում կանգ չեն առնում և ուղղությամբ են վերցնում դեպի Միջագետքի ճահիճները: Ճանապարհին տեղահանվողների նկատմամբ կիրառվող բռնության փաստերը, վայրագություններն աննկարագրելի են: Կամայք բռնաբարվում են, երիտասարդ աղջիկները՝ առևանգվում, բռնի ձևով ընդունում իսլամը և այլն...»:

Այն պահին, երբ ես գրում եմ այս նամակը, երեկվա «Օմ անշենե» թերթում տեսնում եմ Պետրոգրադից ստացված մի հեռագիր, որը սարսափելի մամրամասներ է հաղորդում հենց նոր Բիթլիսի գյուղերում տեղի ունեցած կոտորածների մասին. ողջ արական բնակչությունը սպանվել է, 9000 կամայք և երեխաներ գնդակահարվել են ու նետվել Տիգրիսը: Ես ձեռք եմ ուղարկում լրագրից կտրված հատվածը:

Ֆրանսիական կառավարությունն, անկասկած, տեղյակ է այս բոլոր փաստերին: Այդուհանդերձ, ես ձեռք երախտապարտ կլինեմ, թանկագին պարոն, եթե դուք բարեհաճեք այս տեղեկությունները հայտնել Արտաթին գործերի պարոն նախարարին: Ինձ հայտնի է պ. Դելկասեի վեհանձն բարյացակամությունը մեր ժողովրդի հանդեպ և եթե հնարավոր է ինչ-որ բան անել խաղաղասեր և անզեն բնակիչների նկատմամբ կիրառվող այս վայրագություններին վերջ տալու համար՝ ես չեմ կասկածում, որ նա կբարեհաճի փորձել այդ անել: Ինձ թվում է, որ թուրք ստոր մարդասպանի ճանապարհն առնելու ամենաձեռնարկ միջոցներից մեկը, նույնիսկ ամենաձեռնարկն է: Ես ամբողջ սրտով ցանկանում եմ, որ պ. Դելկասեն և դաշնակից կառավարությունների նրա գործընկերները հաջողության հասնեն բուլղարացիներին և ռումինացիներին ամենաարագ ձևով գործի դնելու հարցում: Կոստանդնուպոլիսը շուտով կընկնի և իրեշի վախճանը վրա կհասնի: Եվ եթե այնուհետև՝ հասնի պահը, երբ Ֆրանսիան ու նրա դաշնակիցները վճռեն արշավանք ձեռնարկել դեպի Կիլիկիա, այնտեղ կգտնվեն բավական թվով հայեր, որոնք իրենց հնարավորության սահմաններում նրանց կօգնեն:

Սպասելով, մեր քաջ կամավորները, որոնք մարտնչում են Կովկասի բանակում և որոնց թիվն աճում է, մի հրաշալի գործ են անում. ազատագրված Վանից նրանք ուղղությամբ են վերցրել դեպի Բիթլիս և Մուշ, որոնք ևս, շուտով դուրս կկորզվեն թուրքական զազրելի լծից: Նրանք ամոքում են այն մեծ վիշտը, որը մեզ պատճառում են մեր դժբախտ եղբայրների տառապանքները: Նրանք նախապատրաստում են վաղվա հատուցումները, որոնք արդեն սկսում են իրականանալ: Համաձայն փոխարքա Վարդնուվ-Դաշկովի ազնվաբար որոշման՝ Վանի ապստամբների ղեկավար Արամը նշանակվել է Վանի նահանգի կառավարիչ:

Թուրքերը, թող համոզված լինեն, չեն ոչնչացնի մեր ժողովրդին: Իրենց իսկ գործած հանցանքներով, որոնք նույնքան անեզր են, որքան և նրանց հիմարությունը, նրանք միայն կործանում են իրենց կայսրությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 162-167 v).

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխտնօրեն պ. ժան Գուին**

Ե:

Փարիզ, 30-ը հուլիսի 1915 թ.:

Ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում այն քաջալերական խոսքերի համար, որոնք դուք քարենհաճում եք ինձ ուղղել՝ ի պատասխան իմ նամակի: Ֆրանսիական կառավարության և ժողովրդի համակրանքն ու հարգանքը մեզ համար խիստ արժեքավոր են և մեզ քաջալերում են մեր կրած զրկանքներում ու մեր դժվարին պայքարում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 169).

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝
Ռազմական նախարարությանը**

Գաղտնի:

Աթենք, 31-ը հուլիսի 1915 թ.:

(Ստացվել է օգոստոսի 6-ին):

Հատված Դեյեագաչից ստացված 1915 թ.

հուլիսի 22-ի քվակիր նամակից

Կոստանդնուպոլսից ժամանած և վստահության արժանի անձինք հայերի վիճակը Փոքր Ասիայի ներքին նահանգներում ներկայացնում են բացարձակապես ողբալի ձևով: Կարելի է ասել, որ պատկերը համընդհանուր է. Էրզրումի, Մերզիֆոնի, Դիարբեքլիի, Խարբեռլի և Բիթլիսի նահանգներում բոլոր հայերը վտարվել են իրենց գյուղերից և ուղարկվել հարավային ուղղությամբ, անապատի միջով դեպի Մոսուլ ու Դ-եր [sic]: Ճանապարհին շատերը մահացել են, իսկ մյուսների ճակատագիրն անհայտ է: Կանայք մեծ մասամբ ընդգրկվել են քուրքական հարեմներում: Թվում է, թե երիտրուրբերը որևէ այլ բանի չեն ձգտում, քան ոչնչացնելու հայերին: Մերզիֆոնի շրջանում մարդկանց խոշտանգել են: Հարկադրելու համար ընդունել մահմեդականությունը, նրանց քթանցքերը հալած արճիճ են լցրել. բերանները՝ կեղտ և այլն: Ջեյթունի շրջանում արական սեռին պատկանող անձինք գրեթե բոլորը ոչնչացվել են:

Անտանտի տերությունների սպառնալիքները երիտրուրբերի վրա բացարձակապես չեն ազդում: Անտանտի տերությունների պաշտոնական ծանուցագրի ստացումից երկու օր անց՝ 20 հայեր Կոստանդնուպոլսում կախաղան են բարձրացվել: Գերմանիայի և Ավստրիայի

ղեսպանները¹ բուրքներին որևէ ուշադրություն չի դարձվում. ի դեպ, այդ բուրքներն ուժգին չեն: Ասում են, որ Ավստրիայի դեսպանը հետաքրքրվում է միմիայն ավստրիական հայատակների գանգատներով, և որ ներքին գործերը նա թողնում է բուրքերի հայեցողությանը:

(A.M.G., 7 N 2096).

58

Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության արխիվապահներ պաշտոնայք Ռոբեր դյու Գարդիեն և Բոդուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Ծ. քիվ 38²:

Պերս, 7-ը օգոստոսի 1915 թ.*:
(Ստացել է Քաղ. վարչ. օգոստոսի 26-ին):
Չորեքշաբթի, 4-ը օգոստոսի:

Մի քանի օր առաջ մենք հայտնում էինք պաշտոնաթող հյուպատոս պ. Ա. Գյուլի ժամանման մասին Հալեայից: Պ. Գյուլին խիստ ընդարձակ կապեր ուներ Սիրիայում ու Անատոլիայում, և մեզ թվում է, որ նա հրաշալիորեն իրագեկ է այս շրջաններում «ռայա» կոչվող, ինչպես նաև հայ բնակչության ներկայիս կացությանը: Մեր խորհրդով նա մի զեկուցագիր գրեց, և մենք երջանիկ ենք այն՝ այս նշումներին կցելու հնարավորությունն ունենալու համար (հավելված քիվ 19)³: Խստագույնս փաստարկված այս փաստաթուղթը կհետաքրքրի, անշուշտ, քաղաքական վարչությանը: Կարելի է նկատել, որ այստեղ խոսքը վերաբերում է Դիարբեքի-յում թարգմանչի օգնական պ. Քասապյանին:

Մի փոքր ավելի վաղ պ. Լեդուն հայտնում էր Կոստանդնուպոլսի պատգամավոր Ջոհրապ էֆենդու և Էրզրումի պատգամավոր Վարդգես էֆենդու Դիարբեքի արքայովելու մասին՝ զինվորական դատարանի կողմից դատվելու համար: Մյուս կողմից, պ. Գյուլին ժամանելով Հալեպ, մեզ հավաստիացնում էր, որ իր մեկնումի պահին երկու հայ պատգամավորները գտնվում էին տեղի բանում:

Հեռախոսագանգով և առանց այլ մանրամասներ հաղորդելու, Թալեաք բեյը հենց նոր տիկին Ջոհրապին հայտնեց նրա ամուսնու մահվան մասին Ուրֆայում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 906, ff. 3-3 v).

1 Համապատասխանաբար՝ պաշտոնայք Վանգենհայմը և Պալլավիչինին:

2 Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

* Պ. Գյուլի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Պ. Գյուլի զեկուցագրից ջնջել այն ամենն, ինչը կարող է նարատել նրա անձի բացահայտմանը և փոխանցել պ. Պոնսոյին: Այն կարելի է լույս բնծայել նախ ամերիկյան, այնուհետև՝ մեր մամուլում: Հարկ է այն ներկայացնել ինչպես Ասիայից վերադարձած չեզոք ճանապարհորդի արած պատմություն»:

3 Ստորև արտատպված է քիվ I հավելվածում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Ֆրանսիայի դեսպանությանը հանձնված պ. Գյուրիի գեկուցագիրը

Կոստանդնուպոլիս, 24-ր հուլիսի 1915 թ.:

Իբրև Ֆրանսիայի պաշտոնաթող հյուպատոս, ես պատիվ ունեմ Կոստանդնուպոլսով անցնելու պահին, ձեզ հղել հետևյալ գեկուցագիրն այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել և շարունակում են տեղի ունենալ Ասիական Թուրքիայում և, մասնավորապես, Ադանայի, Հալեպի ու Քրդստանի նահանգներում, որտեղ ես ապրել եմ երկար ու ձիգ տարիներ: Այս իրադարձություններն առնչվում են քրիստոնեական բնակչության հալածանքներին և հայկական տարրի բնաջնջմանը՝ Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև պատերազմական գործողությունների սկզբնավորման շարագուշակ պահից ի վեր:

Նախ և առաջ՝ ես հարկ եմ համարում ձեզ տեղեկացնել, որ Ալեքսանդրետի գերմանական երկաթուղային կայարանի ոմբակոծումը և կամուրջների ու մասամբ այդ անունը կրող ծոցի երկայնքով մինչև Դյուրք-Յոլ ձգվող երկաթգծի ավերումը՝ ֆրանսիական ու անգլիական հաժանավերի կողմից, այս վերջին փոքր քաղաքում բնակվող մի քանի հայերի մահապատիժը, որոնց ձեռքակալել էին իբրև Ալեքսանդրետի երևելի օտարերկյա վաճառականներին (այդ թվում պ{արոնայ}ք Բելֆանտին ու Կատտոնին) հղված՝ Կիպրոսում գտնվող անգլիական ծովակալից ելնող, ինչպես ասում են, վարկաբեկիչ [ուղերձներ?] տանողների՝ Ադանայի շրջանում հայերի հանդեպ կիրառվող հալածանքների ու նրանց բնաջնջման գործընթացի սկզբնավորման հիմնական պատճառներն են:

Այս փաստերն ի հայտ են եկել ապրիլ ամսի վերջերին և սկսած այդ պահից, իբրև դրա շարունակություն, օսմանյան զինվորական ու քաղաքացիական իշխանություններն առանց խղճմտանքի մոլեցնել են, մասնավորապես, Դյուրք-Յոլի հայ բնակիչների դեմ, նրանց կասկածելով անգլո-ֆրանսիական դեսանտի ափ դուրս բերմանը ձեռք մեկնելու կամ օժանդակելու հարցում ի հայտ բերած ցանկության համար, իսկ այնուհետև՝ Ադանայի նահանգում, Ջեյհան և Սեյիուն գետերի երկայնքով Հաճնից մինչև Ջեթյուն ձգվող բոլոր գյուղերի ու քաղաքների հայ բնակչության դեմ: Ինչպես և Դյուրք-Յոլում, Ջեթյունի բնակիչների նկատմամբ ևս, որոնք բոլորը հայեր են և որոնց անուններն արդեն հանրահայտ են այն զինված դիմադրության պատճառով, որ բազմաթիվ առիթներով ցուցաբերել են թուրքական զինվորներին, զինվորական իշխանությունները գործել են դաժանորեն ու բիրտ ձևով: Բայց այս անգամ, նրանք բավական արագ են սանձահարվել, որովհետև նախքան հանուն իրենց պաշտպանության զենքի դիմելը, շրջափակվել են Հալեպից շտապ ուղարկված բազմաթիվ զումարտակներով, ընդ որում այն պահին, երբ այդտեղ նրանց բացարձակապես չէին սպասում: Այս տեղի է ունեցել, եթե ես չեմ սխալվում, մայիս ամսի կեսերին, որովհետև մի քանի օր անց Հալեպում տեղեկանում էին, որ բոլոր զեթյունցիները՝ կամայք, աղջիկները, երեխաները և մի քանի ծերունիներ ու տղաներ տեղահանվել են դեպի Հալեպի շրջան, իսկ տղամարդիկ՝ դեպի Ուրֆայի կողմերում գտնվող Մոսուլի անապատ, մի բան, որը կիրառվել էր նաև Դյուրք-Յոլի արական տեղի բնակիչների նկատմամբ:

Ընդհանրապես, կարծում են, որ նրանց հանդեպ ճանապարհին ժանդարմների դրսևորած վատթար վերաբերմունքի ու դաժանությունների հետևանքով՝ նրանցից շատ քչերին է հա-

ջողվել խուսափել մահից: Ինձ նույնիսկ հավաստիացրել են, որ բազմաթիվ օրեր շարունակ տեսել են, թե ինչպես են՝ ինչպես Բիրեջիկում, Ջերաբլուսում, այնպես էլ այլ վայրերում, Եփրատ գետի մակերեսի վրայով լողում այս դժբախտների՝ մեկը մյուսին կապկպված դիակները, ինչպես նաև մարդկային մարմինների մասեր ու առանձին կտորներ:

Այն նույն ժամանակ, երբ այս վայրագությունները տեղի էին ունենում Ադանայի ու Ջեյբունի շրջանում, Հալեպում շշուկներ էին տարածվում, որ կոտորածներ են տեղի ունեցել՝ այսօր ռուսների կողմից գրավված Վանում, Բիթլիսում, Սդերտում և Դիարբեքլիում:

Ահա այն տեղեկությունները, որոնք ես կարողացել եմ ի մի բերել այս վերջին քաղաքում տեղի ունեցած դեպքերի մասին, որտեղ, իբրև Ֆրանսիայի փոխխուսափող, ես բնակվել եմ ինը տարիների ընթացքում: Այս տեղեկություններն ինձ է հաղորդել Դիարբեքլիի մի բնակիչ, ովը չորս տարուց ի վեր հաստատվել էր Հալեպում իբրև ցրիչ:

Վերջին ապրիլ ամսի կեսերին այս քաղաք ժամանած նոր վալին¹, մունետիկների միջոցով կոչ է արել քրիստոնյա բնակիչներին իշխանություններին հանձնել այն զենքերը, որոնք, ինչպես իրեն հայտնի էր, գտնվում էին նրանց տրամադրության ներքո: Բացառությամբ մահմեդականների, որոնց որևէ անհանգստություն չի պատճառվել, բոլոր քրիստոնյաները, ինչպիսիք են առաքելական հայերը, կաթոլիկ հայերը, հակոբիկյանները, կաթոլիկ ասորիները, քաղղեականները, շտապել են զինվորական իշխանություններին հանձնել այն փոքրաքանակ զենքերը, որոնք ունեցել են և որոնք ձեռք էին բերել Հալեպի շուկայում կամ միջնորդների օգնությամբ, թուրքական սահմանադրության հռչակումից մի փոքր անց, սրանից յոթ տարի առաջ, մի բան, որն արվել էր նոր կոտորածների դեպքում պաշտպանվելու նպատակով:

Սի քանի օր անց սկսվել են քրիստոնյաների զանգվածային ձերբկալությունները, այնպես որ հարեմի բանտերում պահվում էին ավելի քան հազար վեց հարյուր մարդ, որոնք մեկը մյուսի ետևից ծեծի են ենթարկվել և որոնցից շատերը նույնիսկ սպանվել են ու խոշտանգվել. նրանց մարմիններն ամեն օր նետում էին քաղաքի պարիսպներից դուրս, քանի որ Դիարբեքլի, հավանաբար, Օսմանյան կայսրության միակ քաղաքն է, որն անվնաս պահպանում է Հուստինիանոս IV-ի տիրապետության օրոք հռոմեացիների կառուցած պարիսպները: Հետաքննությունը, որը նոր զենքեր հայտնաբերելու նպատակով իշխանությունները վարում էին նույնքան դաժան, որքան և բարբարոսական պայմաններում, շարունակվել է ավելի քան վեց շաբաթ: Դժվար է այստեղ մանրամասնորեն նկարագրելն իսկ այն տանջանքները և խոշտանգումները, որոնց այս դժբախտները ենթարկվել են բանտում այս ամբողջ ժամանակահատվածում: Ես կբավարարվեմ ասելով, որ հարյուրի հասնող մարդկանց թվում, որոնք սպանվել են, կարելի է հիշատակել բազմաթիվ երևելի ու մեծահարուստ առևտրականների անուններ, ինչպիսիք են Մաթոսյանը, Սիրիքջյանը, Գազազյանը, Թիրփանջյանը և շատ ուրիշներ, որոնց անունները ես մոռացել եմ: Ապացուցված է նաև, որ դաժանորեն և բարբարոսաբար տանջանքների ենթարկվելուց հետո բանտում սպանվել է հայ առաքելական վարդապետը. նրա մատներից մի քանի եղունգներ են հանել, աչքերի մեջ շիկացած երկաթներ մխրճել և վերջապես, մինչև հոգին ավանդելը՝ ենթարկել են դաժան ծեծի: Այս նահատակությանը մա արժանացել է նախապես պատրաստված մի վկայության տակ ստորագրելուց հրաժարվելու պատճառով, այնպես, ինչպես բանտերում խոշտանգված ու սպանված բոլոր անձինք էին կնքել իրենց մահկանացուն: Անհայտ կորածների թվում են (որոնց մասին դեռևս չկա որևէ տեղեկություն), երկար տարիներ ի վեր Կոստանդնուպոլսում հաստատված և իր գործերով Դիարբեքլիում գտնվող կաթոլիկ հայ երևելի առևտրական պ.

¹ Ռեշիդ բեյը:

Օճիկ Գազազյանն ու Ֆրանսիայի փոխհյուպատոսության քարգմանիչ և այս պաշտոնը տնօրինող պ. Ղասաբյանը (Արքիմ), որը լրջախոսություն է ունեցել տեղափոխելու արխիվները պաշտոնաթող եղած պաշտոնյաների համար իբրև բնակության վայր ծառայող իր սեփական տուն. այս արվել է դրանք փրկելու համար և այդ այն դեպքում, երբ իշխանությունները ցանկանում էին դրանք հափշտակել, նույն ձևով, ինչպես այդ տեղի է ունեցել Թուրքիայում գտնվող բոլոր հյուպատոսական կետերում: Հալեպում բնակվող մեկ տասնյակ դիաքրեքիդցիներ ևս ձեռքակալվել են ու զինվորական զստարանի կողմից դատվելու համար ետ ուղարկվել իրենց հայրենի քաղաքը, քանի որ կասկածվում էին իրենց հայրենակիցների ունեցած զենքերն առաքելու համար, որը թվում է անհավանական: Ի վերջո, Դիաքրեքիդում բանտ նետված 1600 անձանցից գրեթե 680 ամենաերևելիներն ու մեծահարուստները, որոնք վճարել էին զինվորական ծառայությունից ազատվելու համար, ձեռնաշղթաներով բռնվել են դեպի Մոսուլ՝ անապատ, և այժմ որևէ մեկի բացարձակապես հայտնի չէ նրանց տեղահանության վայրը: Ինչ վերաբերում է մյուսներին, երև նրանց ժամանակավորապես ազատություն է շնորհվել, ապա այդ արվել է միայն աշխատեցնելու համար՝ 18-ից 35 տարեկան զինապարտներին տաժանակիր աշխատանքների պարտադրելուն զուգընթաց, ինչպես մենք արդեն վերը նշել ենք և այնպիսի ձևով, որ ամեն օր նրանցից մեկը կամ երկուսը սպանվի, որը և հավաստել են Բիթլիսից, Խարբերդից և Մեզիբեից եկող ու Հալեպ մեկնող ամերիկյան միսիոներները: Թվում է, թե ժամդարմներն ամենամեծ թշնամանքը տաժում են երիտասարդների հանդեպ, որովհետև այս միսիոներներն իրենց ճանապարհի ողջ ընթացքում տեսել են գետնին սփռված շատերի դիակները:

Ընդհանուր առմամբ, կարծում են, որ Բիթլիսի և, մասնավորապես, Մարդինի քրիստոնյա բնակիչները, որոնց զերսկչոող մասն, ի դեպ, կազմում են կաթոլիկ հայերը, ինչպես նաև հակոբիկյանները, քաղղեականները, կաթոլիկ ասորիները, արժանացել են Դիաքրեքիդի բնակիչների միևնույն սարսափելի ճակատագրին, որովհետև մայրաքաղաքի կաթոլիկ հայկական սրտքիարքությունը՝ Մարդինի իր արքեպիսկոպոսին՝ հղած հեռագրի պատասխանից պետք է տեղեկացած լինի, որ վերջինս այլևս կենդանի չէ. ոչինչ հայտնի չէ նաև Դիաքրեքիդի արևելյան ծխակատարություններ իրականացնող բոլոր եպիսկոպոսների և կաթոլիկ հայ միանձնուհիների ճակատագրերի վերաբերյալ: Ես հարկադրված եմ ավելացնել, որ Մամուրեք-ուլ-Ազիզի կաթոլիկ հայ եպիսկոպոս Ն {որին սրբազնություն} և Իսրայելյանն իր մերձավորների և իր ենթակայության ներքո գտնվող մի քանի միանձնուհիների հետ պետք է վտարված լինի մի ուղղությամբ, որը որոշակիորեն հայտնի չէ: Ինչ վերաբերում է Դիաքրեքիդ, Բիթլիս, Խարբերդ քաղաքների անմիջական հարևանությամբ գտնվող գյուղերին, ապա դրանք պետք է կողոպտված ու թալանված լինեն, իսկ դրանցում բնակվող քրիստոնյա բնակիչները մասամբ՝ կոտորված, մասամբ՝ արտաքսված տարբեր ուղղություններով, ինչպես այդ տեղի է ունեցել Տրապիզոնի, Վանի, Սամսունի, Էրզրումի և ամբողջ Անատոլիայի վիլայեթներում, որի մասին հայտնի դարձավ ավելի ուշ:

Վերջապես, վերստին անդրադառնալով Ադանայի ու Հալեպի վիլայեթներին, ես պարտավոր եմ նշել Ադանայի վիլայեթի տարբեր տեղանքներից եկած, տառապանքներ և զրկանքներ կրած, աղետալի վիճակում գտնվող հազարավոր անձանց (բոլորն էլ առաքելական հայեր) անցումը նույն Հալեպ քաղաքի միջով՝ սկսած վերջին մայիս ամսից: Երկու կամ երեք օր իրենց համար նախատեսված վայրերում մնալուց հետո, այս դժբախտները, որոնց մեծ մա-

1 Ն {որին սրբազնություն} և Իգնատ Մալոյանը:

սը տղաներ, աղջիկներ, կանայք և ծերունիներ են (երիտասարդներն ուղարկվել են այլ վայրեր, իրենց, այսպես կոչված, ռազմական ծառայությունն ի կատար ածելու համար) հրաման են ստանում մեկնելու Իդլիբ, Մադարա, Ռաքքա, Դեր-Էզ-Չուր, Ռաս Էլ-Այն կամ Միջագետքի անապատ, վայրեր, որոնք համաձայն համընդհանուր կարծիքի, նախատեսված են դառնալու նրանց գերեզմանը, որովհետև, առանց անդրադառնալու նրանց, ովքեր ճանապարհի ընթացքում կսպանվեն իրենց ուղեկցող ժամդարմների կողմից, ի՞նչ բախտի կարժանանան նրանք, ովքեր կլքվեն կատարելապես անմարդաբնակ և զոյության միջոցներից զուրկ վայրերում: Նրանք, այս պահից արդեն դատապարտված են մահվան՝ սովից, հիվանդություններից և ցանկացած բնույթի զրկանքներից, եթե, իհարկե, մի քանի տերություններ ժամանակին չմիջամտեն փրկելու համար նրանց [sic], ովքեր արդեն գտնվում են այդ անիծյալ վայրերում և նրանց [sic], ովքեր ամեն օր այդտեղ են հասնում՝ քիչ անց արդեն՝ վեց ամսից ի վեր:

Ամբողջ ճանապարհի երկայնքով, որն անցել են կամ ավտոմեքենայով, կամ երկաթուղով, իմ սեփական աչքերով տեսել են դեպի Հալեպ քայրող այս դժբախտ մարդկանց բազմաթիվ քարավաններ, թե՛ Ռաջուում, թե՛ Իսլահիեում, թե՛ Օսմանիեում, թե՛ Թուրակ-Կալեում և թե՛ Ջեյհանում, ինչպես նաև այլ վայրերում: Այն ինչն ի գորու է իմ կողմից արդեն հիշատակված շրջաններում և, մասնավորապես, Հալեպի շրջանում հավաստելու առաքելական հայերի նկատմամբ կիրառված վայրագությունները՝ դրանք ներքին նահանգներից եկած ակամատեսների պատմություններն են, ինչպես նաև Ուրֆա վտարված անգլիախալատակ պ. Վրաթիսաուլի պատմությունը, որն ավտոմեքենայով Հալեպ վերադառնալիս, որպեսզի միևնույն ժամանակ, ինչպես և ես, Կոստանդնուպոլիս գնալու թույլտվություն ստանաք, հարկադրված է եղել իր ճանապարհը գնացքով շարունակելու համար երեք օր կանգ առնել իջևանատանը, քանզի օտարերկրացիների և առհասարակ քրիստոնյաների համար առկա անասլահովության պատճառով ավտոմեքենայով ճանապարհորդելը դարձել էր խիստ վտանգավոր:

Բոլոր դեպքերում, նախ և առաջ՝ կարելի է հավաստել, որ մայրաքաղաքում բացահայտված դավադրությունը, անգլո-ֆրանսիական նավատորմի կողմից Ալեքսանդրետի ծոցի առափնյա երկայնքի ռմբակոծումը և Ադանայի շրջանի հայ բնակչության հանդեպ տածած կասկածները, ինչպես նաև Ջմյունիսյի ծոցից մինչև Այվալի ընկած շրջանում բազմաթիվ կետերի ու Սիրիայի ափերի ռմբակոծումը և Վանի շրջանում հայերի ապստամբական շարժումը՝ քրիստոնյաների նկատմամբ ընդհանրապես և հայերի նկատմամբ մասնավորապես, տեղիք են տվել անվստահության, որն աստիճանաբար վերածել է օսմանյան կառավարության կողմից կիրառվող այնպիսի բռնությունների, որոնք հավասարազոր են միայն Փոքր Ասիայում և Արևելյան Եվրոպայի մի մասում թուրքական նվաճման կամ ներխուժման ժամանակ «ռայայի» բոլոր տարրերի հանդեպ կիրառված բռնություններին:

Իրականում, բոլոր քրիստոնյա «ռայաները», որոնց պարտադրվել էր զինվորական ծառայության կատարումը և օսմանյան բանակի կազմում ընդգրկվելը, սրանից հինգ ամիս առաջ, թուրքական սահմանադրության հռչակումից մի փոքր անց, առաջին հերթին մեկուսացվեցին ու բանվորական զումարտակների մեջ ընդգրկվելու համար զինաթափվեցին և դատապարտված էին այնպիսի հարկադիր աշխատանքներ կատարելու, ինչպիսիք են ճանապարհների ու ամբարտակների կառուցումը, երկաթգծերի համար հողաթմբերի պատրաստումը, փողոցների ավելումը կամ քարերի փշրումը: Նրանցից շատերին օգտագործել են նաև խրամատներ փորելու համար բազմաթիվ շրջաններում, որոնք զինվորական իշխանությունների կողմից դիտվել են իբրև թշնամու սպառնալիքի ենթակա: Նույնիսկ այսօր, կարելի է գրեթե ամենուր հանդիպել այս դատապարտվածներին, որոնք ունեն տարօրինակ հագուստ, որովհետև նրանցից ոմանք հագնված են իբրև զինվոր, մյուսները կրում են իրենց երկրների

զգեստները (վերջիններս հանդիպում են ավելի հաճախ), իսկ մեծամասնությունը ցնցոտիներին մեջ է ու առանց կոշիկների՝ ստիպված բավարարվելու օրվա հացի փոքր բաժնով, որը նրանց բաժանում են ամեն օր, մի բան, որի հետևանքով նրանք հարկադրված են վազելու ճանապարհորդների ետևից՝ նրանցից ուղորմություն խնդրելու մտադրությամբ: Ես նրանցից շատերին եմ հանդիպել Տարսուսից Բոզանտի ընկած իմ ճանապարհին, որոնք բոլորը հույներ էին, ծագումով Ջնյունիայի մերձակա շրջաններից՝ Վուրլայից, Չեսմեից, որոնց ես բաժանել եմ մի փոքր նպաստ, որովհետև ինձ ասել էին, որ արդեն վեց ամսից ի վեր նրանք գտնվում են այս ծովափնյա շրջանում և ստացել են միմիայն իրենց հասանելիք հացի բաժինը, քանի որ գինվորական իշխանությունները հայտարարել են, որ նրանց պետք չէ տալ ո՛չ հագուստ, ո՛չ կոշիկ, ո՛չ գլխարկ:

Երկրորդ հերթին՝ «ռայա» քրիստոնյաների դեմ ուղղված կատաղի հալածանքներն Անատոլիայի բոլոր գավառներում սկսեցին տեղի ունենալ այնպիսի ձևով, որ Բալկանյան պատերազմի շրջանում, Եգեյան ծովի ափերի ամբողջ երկայնքով սփռված «ռայայի» մեջ ընդգրկված հազարավոր հունական ընտանիքների հարկադրեցին արտաքսվել և տեղահանվել դեպի Կիլիկիայի կղզիներ, ինչպիսիք են Քիոսը, Մեթրինը, Սամոսը և այլն. իսկ ներքին նահանգներում ապրողները, արդեն վեց ամիս է, ինչ սփռվել են ամենուր ու այնպիսի հետապնդումների են ենթարկվել, որ նրանցից ոմանք, հանում փրկության, հարկադրված են եղել ընդունել իսլամը: Իրադարձությունների հետագա ընթացքն ապացուցեց, ի դեպ, որ այս նույն ճակատագրին արժանացավ նաև հայկական տարրը:

Երրորդ հերթին՝ ամբողջ Փոքր Ասիայում հայ բնակչության ոչնչացումը կամ ավելի ստույգ բնաջնջումը, տեղի ունեցավ միևնույն ժամանակաշրջանում, գրեթե հինգ ամիս առաջ: Մասնավորապես, հենց Տրապիզոնի, Էրզրումի, Բիլլիսի, Սամսունի, Սվազի, Մամուրեթ-ուլ Ազիզի, Դիարբեքիի, Ադանայի և Հալեպի նահանգներում և նույնիսկ Կոստանդնուպոլսում էր, որ այն տեղի ունեցավ քարբարոսական և անմարդկային եղանակներով, որոնք նկարագրության ենթակա չեն և որոնք օսմանյան՝ ինչպես քաղաքացիական, այնպես էլ գինվորական իշխանությունները կշարունակեն կիրառել ներկայիս համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում:

Եզրափակելով, նշենք, որ այսպիսին է այն ողբալի և հոգեճնլիկ իրավիճակը, որում գտնվում են Օսմանյան կայսրության «ռայա» քրիստոնյաները, չնայած սահմանադրության հրապարակման շրջանում երիտթուրքերի կոմիտեի կողմից հորինված հեզնական նշանաբանին, որը գերմանական ռազմական դիկտատուրայի պատճառով այսօր մեկնաբանվում է հետևյալ խոսքերով՝ անողոք հալածանք «ռայա» քրիստոնյաների նկատմամբ, հայ բնակչության ոչնչացում և արատերազմ օտարերկրացիներին: Խիստ տանջալից է հավաստելն այն ամենը, ինչ ես հենց նոր նշեցի ներկա զեկուցագրում, որովհետև մենք թևակոխել ենք քսաներորդ դար, և հեռու չէ այն պահը, երբ օսմանյան կառավարությունը, որը պատրաստվում է տեղ գրավել քաղաքակիրթ երկրների կառավարությունների շարքում, կլուծարի կապիտուլյացիաները:

Հ. Գ. - Այսօր, ես հենց նոր տեղեկացա, որ Սվազի վիլայեթում գտնվող Կարահիսար քաղաքը կարող է ամբողջությամբ իրկիզված լինել, իսկ տասնմեկ հազարի հասնող հայ բնակիչները՝ կոտորված բուրբակյան բանակի հետ ընդհարման մեջ մտնելու պատճառով:

II

Չինվորական ծառայություն՝
1310 կարգի մարդկանց համար

Մեկիմիեի զինակոչման բյուրոյից. Գրեթե մեկ ամիս առաջ 1310 կարգի մարդկանց գորակոչել են. մենք մեծ ցավով ենք հավաստում, որ, մասնավորապես, ոչ մահմեդական ժողովուրդներն են, որ պատրաստակամություն չեն դրսևորել արձագանքելու այդ կոչին: 1310 կարգի շարքը դասվող երիտասարդները, անկախ այն բանից մահմեդական, թե՛ ոչ, որոնք այս ծանուցման հաջորդ օրը չեն ներկայանա, ավելի, քան այլ կարգերի շարքը դասվող մարդիկ, արժանի կլինեն օրենքով նախատեսվող մահապատժի: Նրանք անմիջապես կներկայացվեն ռազմական խորհուրդներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 906, f. 34).

59

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝
Ռազմական նախարարությանը

Թիվ 165:

Աթենք, 12-ը օգոստոսի 1915 թ.:

Հուլիսի 31-ին մի հայ գործակալից ստացված տեղեկություն

Այն տեղեկությունները, որոնք հաջորդում են, ինձ է հաղորդել Մարզվանի¹ (Սվազի վիլայեթ) ամերիկյան միախոնների կիևը, որն անձնական գործերով, ինչպես նաև ներքին նահանգներում տեղի ունեցող ամեն ինչի մասին ամերիկյան դեսպանին² տեղեկություններ հաղորդելու նպատակով Կոստանդնույալյուս էր գնացել, և որին թուրքական իշխանությունները հարկադրել էին շտապ ետ վերադառնալ:

Այն ժամանակ, երբ այս անձնավորությունը թողել է Մարզվանը, կոտորածներ էին նախապատրաստվում: Այս տեղանքի բոլոր հայերը կամ բանտ էին նետվել, կամ արտաքսվել. հայերի տներում խուզարկություններ էին կատարվում, իսկ թուրք բնակչությանը գրգռում էին հայկական տարրի դեմ, մի բան որը համընդհանուր բնույթ էր կրում: Շուրջ տաս օր առաջ, հատուկ բանագնացի միջոցով հավաստի աղբյուրից ելնող լուրեր հասան Մարզվանից Կոստանդնույալյուս: 400 հայ երևելիներ Չորումով ուղարկվել են ներքին նահանգներ: Նրանց մասին դեռևս որևէ տեղեկություն չկա: Դեռ ավելին, թուրքական իշխանությունները փորձել են ձերբակալել ամերիկյան քուլեջի հայ ուսուցիչներին:

¹ Տպագրվել է «Հիլալում» 1915 թ. օգոստոսի 4-ին:

² Մերգի:թոնի հայկական անվանումը:

³ Պ. Մորգենթաուն:

Այնուհետև՝ ծառայության ենթակա բոլոր հայերը, հայտնի չէ, թե ինչ ուղղությամբ, վտարվել են քաղաքից: Բնականաբար, տեղի է ունեցել դիմադրություն, որին հաջորդել է արյունահեղությունը: Մյի քանի օր անց կանայք և երեխաները ևս դուրս են բերվել և ուղարկվել այլ ուղղությամբ:

Ըստ վստահելի սկզբնաղբյուրից ստացված տեղեկությունների, իրավիճակը նույնպիսին է Տրապիզոնի և Սվազլի տարածաշրջաններում: Կոտորածներ են տեղի ունեցել Սվազում և Գեմերեք գյուղում: Ամբողջ բնակչությունը՝ գրեթե 5000 բնակիչ, որոնք բոլորը հայեր են, կոտորվել են, քանի որ հրաժարվել են թողնել իրենց տները:

Ամերիկյան առաքելությունների վարչական խորհրդի ներկայացուցիչը խորհուրդ է տվել այս տեղեկություններն ինձ հաղորդող անձնավորությանը թողնել Թուրքիան, քանի որ Ամերիկայի և Գերմանիայի միջև ներկայումս առաջ եկած լարվածության պատճառով, թուրքերի վերաբերմունքն ամերիկացիների հանդեպ դարձել է թշնամական:

(A.M.G., 7 N 2096).

60

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝ Ռազմական նախարարությանը

Թիվ 174:

Արեմք, 13-ը օգոստոսի 1915 թ.:

Ստացված՝ մի ամերիկացու կողմից, որը թողել է Սվազլը 1915 թ. հուլիսի 13-ին

Սվազում կան միայն պահեստային որոշ զորքեր և մի քանի հայեր, որոնք ճանապարհների կառուցման գործում ընդգրկված ծառայողներ են: Նրանք Կովկասից ստանում են մեծ մասամբ վիատեցուցիչ տեղեկություններ: Թվում է, թե այնտեղ գտնվող բոլոր միավորումները թույլ անձնակազմ ունեն, և բոլոր հիմքերը կան կարծելու, որ Սև ծովից դեպի Էրզրում և Մուշ ձգվող գծի վրա տեղաբաշխված ուժերի թվաքանակը չի գերազանցում 40000 մարդուն:

Մինչև վերջին մարտ ամիսը, սննդամթերքներով և ռազմամթերքներով լի մատակարարման վագոններից բաղկացած երկար փոխադրագնացքները շարունակաբար Սվազից դեպի Էրզրում էին ընթանում: Սկսած ապրիլից՝ այլևս ոչինչ, բացի փոքր քանակությամբ նավթից և փամփուշտներից: Ահա թե ինչու, ներկայումս Էրզրումում գրկված են ամեն ինչից:

Սվազլի բոլոր պահեստայինները և «նիզամը»¹ գտնվում են Էրզրումի ճակատային գծում: Սվազից և ոչ մի զինվոր չի ուղարկվել Դարդանեղ: Էրզրումի հրամանատարությունը վստահված է Մահմուդ Բյամիլին. Ջիա փաշան մեկնել է Կոստանդնուպոլիս:

Տեղեկացնողը Սվազից մեկնել է Կայսերի. իսկ այնտեղից՝ Էրեզլի. դա դեպի Կոստանդնուպոլիս տանող լավագույն կառանցի ճանապարհն է: Գնալով դեպի Կայսերի, նա առաջ է անցել դաշտային թնդանոթների գումակներից: Վեցից յոթ ոտնաչափ երկարություն, գրեթե երեք մետրանչափի հասնող տրամաչափ ունեցող այս թնդանոթներից յուրաքանչյուրն իրենց

¹ «Գործող բանակ»:

ետևից քարշ են տվել երեք կամ չորս զույգ եզներ: Այնտեղ կային 50-ից 60 բնդանոթ, բայց ռազմասնթերքներով բեռնված որևէ սայլ դրանց չէր ուղեկցում. չորս բնդանոթի պարզապես հետևել են մեկ զինվոր և չորս գյուղացիներից բաղկացած խումբ: Բոլոր բնդանոթները եղել են միևնույն տեսակի: Մեզ ասում են, որ դրանք բերվում էին Էրզրամից և ուղարկվում Դար-դանել:

Երգնկայում սկսվել է հայերի տեղահանությունը: Տղամարդկանց ձերբակալել են կամ ընդգրկել «աշխատանքային» գումարտակներում: Կանանց և երեխաներին ուղարկել են դե-պի Խալքերդ, ուր նրանք հասել են ողջ և առողջ: Սվազի հայ բնակչությունը քիչ անց արժա-նացել է միևնույն ճակատագրին. բացառությամբ 2000 տղամարդկանց, որոնք պահվել են Սվազի բանտում: Էրզրումի հայերին ուղարկում են դեպի Մոսսոլի և Մարդինի միջև գտնվող կետերը:

(A.M.G., 7 N 2096).

61

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չուպանյանը՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 16-ը օգոստոսի 1915 թ.:

Ես Թուրքիայում բնակվող հայերի վիճակին վերաբերող նոր մանրամասներ են գտնում այն մի քանի նամակներում, որոնք հենց նոր ինձ հասան և մի քանի հայկական թերթերում: Ես շտապում եմ ձեզ հաղորդել մի քանի քաղվածքներ դրանցից, խնդրելով կցել այս մանրա-մասները հայերի նահատակությանը վերաբերող այն գործին, որը գտնվում է Արտաքին գոր-ծերի նախարարությունում:

Վերջերս Կոստանդնուպոլսից Սոֆիա ժամանած մի անձնավորության հուլիսի 12-ի թվա-կիր նամակը.

«... Հայերի վիճակը Թուրքիայում սարսափելի է: Կառավարությունը գտնվում է գերմա-նացիների ձեռքին... Գերմանացիները խիստ գրգռված են հայերի դեմ... մայիսի 1-ին 300 հայեր ձերբակալվել են Կոստանդնուպոլսում և հաջորդ օրն ուղարկվել Ջոնգուլդակ. կուսակ-ցությունների (Հնչակյան և Դաշնակցական) անդամներն ուղարկվել են Այաշ: Այս 300 ան-ձանց թվում են գրեթե բոլոր նշանավոր հայերը՝ գրողներ, դատապաշտպաններ, հրապարա-կախոսներ, առևտրականներ և հանրահայտ հոգևորականներ, Ազգային ժողովի անդամներ, կուսակցությունների ղեկավարներ և ուրիշներ: Նրանք բոլորը կամ խառնամբոխի կողմից կոտորվելու են, կամ կախաղան են բարձրացվելու:

...Եթե. ինչպես և դեկտեմբեր ամսին, ռուսները կրկին հարկադրված լինեն նահանջելու, երե վանի վիլայերից նրանք մտահանջեն՝ ապա հայերի համար դա կլինի կատարյալ արիա-վիրք, որովհետև դա այն միակ տարածաշրջանն է, որտեղ հայերը գտնվում են անվտանգու-թյան մեջ»:

Մեկ այլ՝ Կոստանդնուպոլսից Բուդղարիա ուղարկված ավելի երկար և ավելի մանրամասն մամակ, հանձնվել է Պողոս Նուրբար փաշային, որն, անշուշտ, այն արդեն փոխանցել է Արտաբին գործերի պ. նախարարին. այն մասնամասերը է հաղորդում, մասնավորապես, տեղահանության վերաբերյալ. ես դրանից առանձնացնում եմ այս հատվածը.

«Տեղահանվածները պետք է ոտքով անցնեն մի տարածություն, որն անցնելու համար պահանջվում է քայլել մեկից երկու ամիս, իսկ երբեմն նույնիսկ ավելի՝ հասնելու համար անապատի այն անկյունը, որը նրանց հատկացվել է իբրև բնակության վայր և որը նախատեսված է դառնալու նրանց գերեզմանը: Ի դեպ, մենք տեղեկանում ենք, որ ճանապարհները և Եփրատը սփռված են արտաքսվածների դիակներով, իսկ կենդանի մնացածները որոշակիորեն դատապարտված են մահվան, որովհետև նրանք անապատում չեն գտնի ո՛չ տուն, ո՛չ աշխատանք, ո՛չ ուտելիքի պաշարներ»:

Նյու Յորքի «Կոչնակ» հանդեսից (հուլիսի 31-ի համարից), որն իր տեղեկությունները քաղել է արժանահավատ սկզբնաղբյուրներից (հավանաբար Կիլիկիայի ամերիկյան միսիոներներից).

«Համաձայն կառավարության հյամանի, Չեթունից և Մալաշից, ինչպես նաև շրջակայքի ավաններից ու գյուղերից 4300-ից 5000 ընտանիքներ արտաքսվել են դեպի հեռավոր շրջաններ (Կոնիա, Կեսարիա, Կաստամունի, Դեր-է-Ջուր, Բաղդադ և այլուր): Այս դժբախտների թվառությունն աննկարագրելի է: Նրանք հարկադրված են, հյամանի տեղ հասնելուն պես թողնել իրենց տներն ու ունեցվածքը և մեկնել: Նախապատրաստվելու համար նրանց տրվում է միայն մի քանի ժամ: Մեկնելուն պես, կառավարությունը նրանց տեղը հատկացնում է մահմեդականների և բռնազրավում նրանց ողջ ունեցվածքը: Հարուստներ ու աղքատներ, առաքելականներ ու կաթոլիկներ, ամենքն արժանանում են միևնույն թախտին:

Նրանք քայլում են ոտքով: Նրանց հագվածքն է բուրբուրված ունեցած անասուն (եզ կամ էշ): Հիվանդներին լքում են ճանապարհներին: Ծանոթություն պատրաստ կանանց լսելու ունեն են կամ ջրասույգ անում գետերն անցնելիս:

Բնտանիքի հայրերն ու մայրերն իրենց երեխաներով հանդերձ՝ բաժանված մեկը մյուսից, ուղարկվել են տարբեր վայրեր:

Ավելի սարսափելի բան չի կարող լինել, քան այս դժբախտ կանանց և ջահել աղջիկների տանջալից վիճակը, որոնք ճանապարհորդության ընթացքում ենթարկվում էին իրենց ողբեցուցող բիրտ անձանց բռնություններին և վիրավորանքներին»:

Այդ գերմանացիներն են հուշել թուրքերին՝ դիմելու տեղահանությունների ներկա համակարգին, քայց միայն թուրքերն էին, որ ընդունակ էին այդ իրագործել նման ստորոքյաճք ու դաժանությամբ:

Հատված Վանից Թիֆլիսի «Մշակ» լրագրին հղված հուլիսի 6-ի քվակլիք մամակից.

«... Այստեղ հասնող հայ գաղթականները պատմում են, որ Բիրլիսի և շրջակայքի հայ բնակչությունը կոտորվել է: Հենց որ ռուսական բանակը լքել է Սուրպ գյուղը և սկսել առաջխաղացումը, իշխանությունները Բիրլիսի հայերին հավաքել են մի իրապարակում և այնտեղ նրանց գնդակահարել, ինչպես նման ձևով վարվել էին Արճեշում: Նրանք կոտորել են նաև շրջակայքում գտնվող գյուղերի հայերին: Ասում են, որ այլան այս հեղեղը կազմակերպել է Վանի նախկին վայի Ջեղեթ բեյը: Այդուհանդերձ, թուրքական կառավարությունը Բիրլիսում չունեի նույնիսկ այն առիթը, որն ունեցել է Վանում, որտեղ զուրակոչի ենթակա որոշ թվով հայեր դարձել էին դասալիքներ:

Բիրլիսում 18-ից 50 տարեկան բոլոր հայերն արձագանքել են կոչին և ինչպես սևագործ բանվորներ կամ բանվորներ աշխատում են բանակում: Նրիտթուրքերի կառավարության

նշանաբանը միանշանականորեն եղել է հետևյալը՝ կոտորել բոլոր հայերին: Վանի հարթավայրում մոլեգնամ կոտորածի մախօրյակին հեծյալ բանագնացներ են կտրել անցել հեռագրագծերից հեռու գտնվող քրդական բոլոր գյուղերը, ուր տարել են սուլթան Մեհմեդի, այն է՝ «Մլորթյուն և առաջադիմություն» կոմիտեի հրովարտակը, որով բոլոր հայերին կոտորելու հրաման էր արձակվում:

... Բիթլիսի վիլայեթի մարզերը՝ Խիզանը, Սպարբերտը, Մամերբենդը և Օզիմը մնացել են անվնաս: Այս վայրերում բնակվող զինված հայերի խմբերին հաջողվել է Խիզանի և Շենիժոքի հայերին տեղափոխել Սպարբերտ, որտեղ նրանք սարերում գրավել են ամուր դիրքեր, արժանացել տեղի քրդերի համակրանքին, իսկ այստեղից անցնող հայ կամավորների մի ջուկատ, նրանց ուղեկցել է Գավաշ, որտեղ նրանք սպասում են ռուսների կողմից Բիթլիսի վիլայեթի գրավմանը, որպեսզի կարողանան վերադառնալ իրենց օջախները»:

Հատված Սոֆիայի «Հայաստան» լրագրից.

«Այն հայերը, որոնք պահվում էին Դիարբեքիի բանտում, սպանվել են¹: Իշխանությունները եպիսկոպոսից պահանջել են ստորագրել մի փաստաթուղթ՝ հավաստելու համար, որ այս գերիները մահացել են բնական մահով: Եպիսկոպոսը մերժել է ու ինքնասպան եղել՝ իր վրա նավթ լցնելով և իրեն հրկիզելով:

Վերջին պահին մենք տեղեկանում ենք, որ 2000 հայեր կոտորվել են Դիարբեքիում: Չաբազուշակ լուրեր են հասնում նաև Խարբեքիից ու Հուսնի-Մանսուրից: Թուրքերը ներխուժել են Հուսնի-Մանսուրի եկեղեցի, հաղորդակցության սկիզբ նետել արտաքնոց, այնուհետև՝ հագնելով քահանաների փորուրարները, նմանակել են պատսուրագ՝ անարգելով քրիստոնյաների կրոնը»:

Ես դեռ կարող էի շարունակել այս չարագուշակ շարքը, բայց ի վիճակի չեմ այդ անել:

Ոչ մի տեղ, այսպիսով, բացառությամբ Թուրքիայի, չենք հանդիպել, որևէ մեկ այլ կառավարության, որը հետևողականորեն ոչնչացներ իր անգն բնակիչներին: Քանի որ ամրակազմ տղամարդիկ գորակոչվել էին, դիմադրության կազմակերպումը հնարավոր դարձավ միայն որոշ վայրերում, որոնք բնականաբար ամրացված էին, որտեղ մի քանի բուռ մարդիկ խրամատավորվել էին պայքարելու նպատակով: Շապին-Գարահիսարում, օրինակ, ըստ բոլորովին վերջերս Թիֆլիսի «Հորիզոն» թերթի ստացած տեղեկությունների, մայիս ամսի վերջերին հայերին հաջողվել է ետ մղել թուրքական զորքերին ու գրավել բերդամրոցը: Թուրքերը բազմաթիվ անգամներ փորձել են նրանց գրոհել: Նրանք քնդանոթներով ոմբակոծել են այն դիրքերը, որտեղ հայերը խրամատավորվել էին, բայց մատնվել են անհաջողության: Այս վայրերից Բաբում հասած հույները հաղորդում են, որ հայերը լավ զինված են և որ նրանց ունեցած ռազմամթերքները հնարավորություն կընձեռեն բավական երկար դիմադրելու: Նկատի ունենալով ռուսական բանակի առաջխաղացման դանդաղ ընթացքը, կարելի է ասել, որ դիմադրության այս բոլոր փորձերը, ավա՞ղ, դատապարտված են ջախջախիչ վախճանի: Բայց այս քաջարի անձինք, ամեն դեպքում, վաստակ ունեն որոշակի բանակությամբ թուրքերի ոչնչացնելու գործում:

Մա մեկն է այն ամենամեծ ճգնաժամերից, որը մեր ժողովուրդը վերապրել է իր ողբերգական պատմության ընթացքում: Եթե նույնիսկ ենթադրենք, որ կոտորածներին վերաբերող պատմությունների մի մասն ակամայից չափազանցված է (այդ մասին հաղորդող խելահեղ դարձած գաղթականները, բնականաբար, այն սպավորություն են ստացել, որ իրենց մոտ ամեն ինչ ավելվել է), որ նույնիսկ այդ պատմությունների միայն կեսն է ճշմարիտ (և ես շատ

¹ Փաստաթղթի ծանոթագրությունը. «Հենց Դիարբեքիի բանտում էր գտնվում Կոստանդնուպոլսում ձերբակալված հայ մտավորականների մի մասը»:

կցանկանայի, որ դա այդպես էլ լիներ), այդուհանդերձ, այդ ամենը բարսափելի է:

Չնայած այս բոլոր արհավիրքներին, ես շարունակում եմ մնալ այն համոզմանը, որ բուրքերը, գերմանացիները և քրդերը, սիավորված լինելով հանդերձ, չեն կարողանա հասնել իրենց նպատակի իրագործմանը, որը կհանգեցնի մեր ազգության ապագայի խորտակմանը, չեն կարողանա անհնարին դարձնել ինքնավարությունը, ինչպես նաև Ասիական Թուրքիան վերածել բացառապես մահմեդական երկրի՝ գերմանական հովանու ներքո: Օսմանյան կայսրությունը կկործանվի, իսկ հայ ազգն առհավետ կգոյատևի: Սա կայուն համոզմունք է:

Այն, ինչն ավելի է ամրապնդում իմ հավատը՝ հայրենասիրական ոգևորության աճն է, որը բոլոր գաղութների և հատկապես Կովկասի հայերը, ցուցաբերում են բուրքական բռնակալության դեմ ուղղված պայքարին հետամուտ լինելու գործում: Բոլոր կողմերից հանգանակություններն անձրևի նման հողդում են Կովկաս, երիտասարդները պատրաստվում են համալրել կամավորների թիվը (Ամերիկայից մեկնած բազում հայրյուրներ հենց նոր ժամանեցին Թիֆլիս՝ անմիջապես ռազմաճակատ գնալու համար): Մյուս կողմից, քրդական որոշ ցեղեր սկսել են մերձենալ ռուսներին ու հայերին և նրանց հետ մեկտեղ մարտնչել բուրքերի դեմ: Դրանք ոչ այնքան վստահելի, հարմարվողական, հեղինակույթ մարդիկ են, բայց այդ արդեն լավ նշան է: Բուրդ նշանավոր առաջնորդ Աբդուրրեֆիկ քեյ Բեդերիսանը մեկնել է Վան, խնդրելու կառավարիչ Արամին՝ թույլատրել Վանի որոշ գյուղերի քրդերին վերադառնալ իրենց օջախները (բոլոր բուրքերը և քրդերը, ռուսների առաջխաղացմանը զուգընթաց, նահանջել են Վանի վիլայեթից): Արամը համաձայնվել է, քրդերը վերադարձել են: Ես ցանկանում եմ, որ հայերը մի փոքր անց չզոջան այս ազնվաբարտ արարքի պատճառով:

Թուրքիայի հայ բնակչության վարքագծում դեռևս հիսցնունքի է արժանի այն, որ նա տառապում է առանց հուսալքվելու: Կովկաս ժամանող գաղթականները սարսափահար են այն ամենից, ինչ տեսել են, բայց նրանք բոլորը հույս ունեն, որ այս ճգնաժամը վերջինն է, որ բուրքին պատժելու և հայի ազատագրման ժամը մոտալուտ է:

Ինձ ցավալիության աստիճանի զարմանք պատճառեց, երբ օրերս տեսա, թե ինչպես է այլերկրյան ուշադրության արժանացնում «խեղճ» բուրքերի հետ «պատվավոր հաշտություն» կնքելու հնարավորությունը... Ինձ անհնարին է թվում, որ դաշնակիցների կառավարությունները, որոնք ներկայացնում են եվրոպական ամենաերևելի ազգությունները, և որոնց զլուխ կանգնած են մեծ սրտի ու լայն գիտելիքների տեր մարդիկ, գեթ մեկ պահ մտածում են պատվավոր հաշտություն կնքելու մասին պատվազուրկ մարդկանց հետ, չարագործների և ստախոսների հետ (դուք կարդացել եք այն լկտի հերքումը, որը նրանք՝ ի պատասխան հայերի կոտորածներին վերաբերող՝ Շոյակ դաշինքի հռչակագրի, տպագրել են չեզոք երկրների լրագրերում): Դաշնակիցները պետք է մուտք գործեն Կոստանդնուպոլիս իբրև հաղթանակած կողմ և բուրքերին ենթարկեն օրինակելի պատժի: Առանց դրա, բուրք դեկավարները նրանց հիմար վիճակի մեջ կդնեն. դաշնակիցները կկորցնեն փոքր-իսկ հեղինակությունն իսլամական աշխարհի աչքում: Բրիտանոնությունը կունենա սուրբանի, խալիֆի կողմից պարտություն կրածի տեսք:

Ես հսկված եմ կարծելու, որ արդարության գործն ամբողջությամբ կհաղթանակի: Այդ օրը, որը թվում է, թե հեռու չէ, կլինի ամենագեղեցիկը մարդկության պատմության մեջ:

Հ. Գ. - Այս նամակն ավարտելու պահին, ես «Ժուրնալ դը Ժնևում» կարդացի Թիֆլիսից ստացված մի հեռագիր, որտեղ ասվում է Վանից ռուսների կատարած նահանջի, և այս տարածաշրջանի՝ թվով 250000 հայերի (այն է՝ Վանի վիլայեթի հայերի և հարակից մարզերից՝ ազատագրված Հայաստանի այդ հողակտորում ապաստանած բոլոր դժբախտների) Կովկասում փրկություն գտնելու մասին...

Դա մեծ արհավիրք է: Կովկասում կային արդեն 100000 գաղթականներ, դրանով հանդերձ այս թիվը կհասնի 350000-ի: Ինչպի՛սի ահռելի դժբախտություն: Եվ ինչպի՛սի հեռանկար: Թուրքերը և քրդերը ևս մեկ անգամ առաջ կընթանան դեպի Պարսկահայաստան ու Կովկաս, մեկ անգամ ևս ասպատակելով մեր երկիրը...

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 171-178).

62

Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոս պ. Սեռնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 110:

Սալոնիկ, 20-ը օգոստոսի 1915 թ., ժ. 18.30-ին:
(*Մտացվել է ժ. 20.55-ին*):

Հաղորդվել է ռիվանագիտական առաքելությանը:

Տեղեկություններով հագեցված տարբեր սկզբնաղբյուրներից ես իրազեկ եմ դառնում, որ հայերի դեմ ուղղված կատաղի հալածանքներ են մոլեգնում ոչ միայն Կոստանդնուպոլսում, այլև նահանգներում: Կարծում եմ, որ կայսրության տարածքում կտոռված հայերի թիվը հասնում է գրեթե երկու հարյուր հազարի և երկյուղում եմ, որ նման իրավիճակի ևս մի փոքր հարատևման դեպքում, այս բնակչությունն ամբողջությամբ կբնաջնջվի:

Իմ 109 հեռագիրը հաղորդվել է այն ծովակալին, որը Եգեյան ծովում գործող ուժերի հրամանատարն է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 179).

63

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝ Ռազմական նախարարությանը

Գաղտնի:

Աթենք, 20-ը օգոստոսի 1915 թ.:
(*Մտացվել է օգոստոսի 31-ին*):

Հատված Կոստանդնուպոլսից ստացված 1915 թ.
օգոստոսի 2-ի թվակիր նամակից

Շապին-Գարահիսարում (Անատոլիայի արևելքում), հունիսի 15-ին, հայերը գրավել են քաղաքը: Չորերի տեղ հասնելուն պես, հայերը նահանջել են դեպի բերդը և որոշ ժամանակ պաշտպանվել, այնուհետև՝ վերջնականապես ցարուցրիվ եղել գյուղերում: Թուրքերն այն-

Ժամ հավաքել են կանանց և երեխաներին, այրել հայերի տներն ու քուրքերի բազմաթիվ տներ, հունական մսյր տաճարը և հունական մեկ այլ եկեղեցի: Առում են, որ Սամսունում մեծ հյղեհ է բռնկվել:

Սև ծովի ափերից հայտնում են, որ այն բոլոր հայերը, որոնք չեն համաձայնվում հրաժարվել իրենց հավատքից, ուղարկվում են ներքին նահանգներ:

(A.M.G., 7 N 2096).

64

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝ Ռազմական նախարարությանը

Թիվ 200: Գաղտնի¹:

Աքենք, 20-ը օգոստոսի 1915 թ.:

(Ստացվել է օգոստոսի 31-ին):

Կոստանդնուպոլսից ստացված հաղորդագրություն:

Թիվ 1 գործակալի օգոստոսի 11-ի թվակիր տեղեկությունը

Հաշտության մասին լրջորեն չեն խոսում:

Հայերի վիճակը շատ ավելի ծանր է, քան եղել է երբևէ: Թուրքերը նրանց արտաքսում են ամբողջ Անատոլիայից: Թուրքական հրոսակախմբերը նրանց գրոհում են ճամապարհներին: Նրանք նրանց կոլոպտում են, սպանում և առևանգում են կանանց ու երեխաներին: Մինչ այժմ և ոչ մի որոշում չի կայացվել այն մասին, թե ինչպես է պետք վերաբերվել հայերին մայրաքաղաքում: Հայ ազգությանն ամբողջությամբ ոչնչացնելու համար, քուրքերը գործում են դաժանորեն և հետևողականորեն:

(A.M.G., 7 N 2096).

65

Սալոնիկում Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսս պ. Սեռնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին

Ճ. թիվ 75:

Սալոնիկ, 30-ը օգոստոսի 1915 թ.:

(Ստացել են Կաբլինետը և

Քաղ. վարչ. սեպտեմբերի 11-ին):

Այսօր Սալոնիկի հայկական համայնքը մատուցել է Թուրքիայում կոտորածների գոհը դարձած իր համակրոնակիցներին նվիրված հոգեհանգստի պատարագ: Քանի որ ինձ, ինչպես նաև Քառյակ դաշինքի* և չեզոք տերությունների իմ գործընկերներին, պաշտոնապես հրավիրել էին մասնակցելու այդ արարողությանը, ես՝ իբրև ինձ ներկայացնող պատգամավոր ուղարկեցի փոխիյուպատոսս պ. Բարս օր Սանդֆորին, որն այդ պաշտոնում նշանակում է ստացել:

Սգո արարողությունից հետո, ելույթներ են տեղի ունեցել հայերեն լեզվով, իսկ դրանցից մեկը՝ ֆրանսերեն լեզվով: Այդ վերջինի բնագիրը, որի պատճենը Չերոզ գերագանցությունը կգտնի կյից, հանձնվել է արարողությանը մասնակցող տերությունների ներկայացուցիչներին, որոնք են, պ. օր Սանդֆորի հետ մեկտեղ, Ռուսաստանի փոխիյուպատոսը և Իտալիայի կյուպատոսության գործերի կառավարիչ փոխիյուպատոսը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 180).

ՀԱՎԵԼՎԱԾ

Սալոնիկի հայկական եկեղեցում արտասանված ելույթ

30-ը օգոստոսի 1915 թ.:

Պարոնայք,

Սալոնիկի հայկական գաղութը ձեզ իր ջերմագին շնորհակալություններն է հայտնում այն բանի համար, որ բարեհաճել եք մասնակցել հայկական ազգային սգին, Փոքր Ասիայում բուրբական հալածանքների գոհերի և նահատակների սգին:

Հայերը Թուրքիայում բնաջնջվում են: Մի ողջ ժողովրդի հետևողականորեն իրագործվող ոչնչացման համար, չորս ամսից ի վեր տեղի են ունենում խմբակային կոտորածներ, մարդկանց առևանգումներ, տեղահանություններ, կախսողան բարձրացնելու միջոցով մահապատիժներ, արտաքսումներ, ձերբակալություններ, ընտանիքների տարանջատում և շատ այլ բարբարոսական, միջնադարյան արարքներ. մի ժողովրդի, որը կարողացել է գոյատևել բազում դարեր շարունակ: Բայց ներկայումս նրան սպառնում է կատարյալ ոչնչացումը:

Իզմիլից մինչև Վան, Սև ծովից մինչև Միջերկրական ծով, ողջ Փոքր Ասիայում և ոչ մի քաղաք կամ գյուղ չի խնայվել. ընչազորկներն ու հարուստները, առանց խտրականության, տեղահանվել են և ցլիուցան եղել. հայերը հափշտակվել են իրենց օջախներից, ուղարկվել անհայտ ուղղությամբ, որտեղ նրանց մեծամասնությունը կոտորվել է ճանապարհին, յուշտեքում ու լեռներում. մայրերը և երեխաները բաժանվել են մեկը մյուսից և ցլիուցան եղել տարբեր ուղղություններով:

Թուրքական քաղաքացիական և զինվորական իշխանությունների հովանու ներքո գործող զինված մահմեդական ժողովուրդը որդեգրել է հանցագործության, սպանության, առևանգման. բռնաբարության, կողոպուտի, բողոք ձևերով դրսևորվող անարգանքի միջոցները:

Այս պահին ոչ ոք չի կարող ասել, թե Թուրքիայի երկու միլիոն հայերից ուրբանն է ողջ մնացել:

* Նկատի ունի 1915 թ. սեպտեմբերի 6-ին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև կնքված դաշինքը: – Ծ. ք.:

Բացառապես մահմեդականներով բնակեցված Թուրքիա ստեղծելու երիտրուրքերի ծրագիրն իրականացվում է «Մլուքյուն և առաջադիմություն» կոմիտեի գործակալների միջոցով, որոնք ձեռնամուխ են եղել հայ ազգության բնաջնջմանը: Բոլոր շարագործություններն իրագործվել են աներկյուղ և անհողողոջ ձևով, քանի որ քաղաքակիրթ Եվրոպան այլևս իր լիազոր ներկայացուցիչները չունի այս դժբախտ երկրում, որոնք կարող էին սուզմասպահար անել այս հանցագործներին և հրավիրել իրենց Խարզարժան կառավարությունների ուշադրությունը: Այսպիսով, այսօր բողոքի ձայն բարձրացնելով այս վայրագությունների առթիվ, Մալմիկի հայ գաղութը խնդրում է ձեզ, պարոնայք, իր վշտալից զգացմունքներով ձեր կառավարություններին հաղորդողի դերում հանդես գալու՝ այս ժողովրդի նշանազանը վերջ դնելու նպատակով, որն արդեն շատ է տառապել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 181-181 v).

66

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Ճ. թիվ 270:

Կահիրե. 3-ը սեպտեմբերի 1915 թ.:
(*Մտացել են* Կար. սեպտեմբերի 13-ին.
Քաղ. վարչ. սեպտեմբերի 14-ին):

Իր նամակում, որի պատճենը Ձերոզ զերագանցությունը կզտնի սրան կից, Ն {որին} շ {նոր-
հույություն}, Ն {որին սրբազնություն} և Թորգոմն ինձ է փոխանցել մի հաղորդագրության քարգ-
մանությունը, որը պետք է հղված լինի Բուլղարիայի հայ արքեպիսկոպոսությանը և որը վե-
րաբերում է հայերի կացությանը թուրքական նահանգներում:

Ես պատիվ ունեմ այս ծրարում ձեզ փոխանցել այն փաստաթղթի բնագիրը, որին վերա-
բերում է խոսքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 182).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Եգիպտահայերի պրեկատ, Ն {որին սրբազնություն} և Թորգոմն՝ Կահիրեում Ֆրանսիայի
նախարար պ. Ա. Դեֆրանսին

[Պատճենը]:

Կահիրե. 28-ը օգոստոսի 1915 թ.:

Ես պատիլ ունեմ սույնի հետ մեկտեղ Չերդ գերագանցությունը համձնել 1915 թ. {հունիսի} 30-ի/հուլիսի 13-ի թվակիր մի մամակի քարգմանությունը, որը Կոստանդնուպոլսում գտնվող շատ վստահելի սկզբնաղբյուրից է հղվել Բուլղարիայի հայ արքեպիսկոպոսությանը և ուրը հիշատակված մատավայրի արքեպիսկոպոս, Ն {որին} գ {երապատվություն}, Ն {որին սրբազնություն} և Տուրյանը հենց նոր ինձ է փոխանցել վերջին հուլիսի 22-ի իր մամակի հետ մեկտեղ:

Չերդ գերագանցության տրամադրության ներքո դնելով վերոհիշյալ մամակը, ես առաջին հերթին կատարում եմ իմ պարտականությունը և իրականացնում ոչ միայն այն համայնքի, որին ես այստեղ ներկայացնում եմ, այլև ողջ ազգի բաղձանքը, որը եվրոպական տերությունների քարեհաճ ուշադրությունն անցկարագրելի բռնությունները ենթարկվող մեր խեղճ Հայաստանի ճակատագրի վրա հրավիրելն է, բռնություններ, որոնց զոհը նա առ այսօր դարձել է և որոնք հենց նոր շատ յուրջ ընթացք են ստացել՝ սպառնալիքի տակ դնելով նրա ալոդեն իսկ երեքուն գոյությունը:

Գուր կբարեհաճեք, գերագանցություն, փոխանցելով խնդրո առարկա մամակն ում որ հարկն է, հրավիրել Հանրապետության կառավարության ուշադրությունը ներկա կացության վրա, որը դարձել է վերին աստիճանի ճգնաժամային և վերջակետ կղմեք մի իրավիճակի, որն օր-օրի վատթարանում է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 183).

II

Կոստանդնուպոլսից Ն {որին սրբազնություն} և Ղևոնդ Տուրյանին հղված մամակ, որը վերջինս փոխանցել է Եգիպտոսի հայկական արքեպիսկոպոսությանը

Ն¹:

[Պատճենը]:

Կոստանդնուպոլիս, 30-ը {հունիսի}/13-ը հուլիսի 1915 թ.:

Սկսած մայիսի 25-ից իրադարձությունները բուռն զարգացում են ապրել և ազգի կացությունը քակոխել է թշվառության ու լարվածության իր ամենաձայնահեղ փուլը: Մինչ նշված ամսաթիվը մենք տեղյակ էինք, որ բռնի արտաքսման գործընթացն ուժի մեջ է եղել միայն Կլիկիայի մի քանի քաղաքներում և գյուղերում, իսկ ինչ վերաբերում է Էրզրումին, մեզ առանձին շշուկներ էին հասնում. այսօր սակայն, մենք որոշակի սկզբնաղբյուրից գիտենք, որ Կլիկիայի քաղաքների ու գյուղերի ամբողջ հայ բնակչությունն արդեն գանգվածաբար արտաքսվել է դեպի Հալեպի հարավային կողմում գտնվող անասլատային տարածաշրջանները:

Սկսած Մամսունից ու Կեսարիայից մինչև Գիարբեքի ու Եղեսիա² ձգվող բոլոր վայրերում՝ ներառյալ Տրսպիզոնը, Սվազը, Խարբեղը³, Բիրլիսը, Վանն ու Գիարբեքիլը, քաղաք-

1 Թարգմանված է հայերենից:

2 Ռոֆայի հայկական անվանումը:

3 Խարպուտի հայկական անվանումը:

ների և այնուհետև նահանգների հայ բնակիչները, մեծ:սիասակ ու փոքր:սիասակ բոլոր հայերը, առանց որևէ բացառության, զանգվածաբար տեղահանվել են դեպի Միջագետքի անապատները, որոնք ձգվում են Հալեայի հարավային կողմի. Մեսոպոտի և Բաղդադի միջև ընկած շրջանում:

«Հայաստանը առանց հայերի»՝ այսպիսին է օսմանյան կառավարության ծրագիրը:

Ի դեպ, արդեն սկսել են մահմեդականներին տեղավորել հայերի կողմից այս ձևով լքված թե՛ հողերում և թե՛ տներում:

Բնավ կարիք չկա նշելու, որ այս առթիվ կառավարության տված հրահանգների համաձայն, նրանք, ովքեր այս ձևով են տեղահանվել, անկարող էին որևէ բան վերցնել իրենց հետ: Բացի դրանից, հիշատակված վայրերում չկա հստակացությունների կողմից:

Այսպիսով, հայ գաղթականները, մեկից երկու ամիս շարունակ, հարկադրված են ճանապարհորդել ոտքով՝ հստակ: համար անսպաստի այն անկյունը, որը նրանց հատկացվել է իբրև գերեզման: Մեզ արդեն լուրեր են հասնում, որ ճանապարհի ողջ երկայնքով սփռված են դիակներ, և որ Եփրատի ջրերն իրենց հետ տանում են խեղճ գաղթականների մարմինները: Նրանց մյուս մասը՝ անապատան, առանց ծածկի, գորկ աշխատանք ունենալու հնարավորությունից, որը փախուստի պահին յի վիճակի չի եղել որևէ բան վերցնելու իր հետ և գտնվելով ամենակատարյալ զրկանքների մեջ՝ անսպաստում դատապարտված է աղետալի կործանման:

Եթե այս ծրագիրն արտաքուստ չի ընդգրկում իր մեջ կոտորածին հատուկ տարրեր, այդուհանդերձ, այն սարսափելի և չտեսնված կոտորած է:

Հարկ է գիտենալ, որ գորակույցելով 20-ից 45 տարեկան տղամարդկանց, 15-ից 20 և 45-ից 60 տարեկան տղամարդկանց հավաքագրել են ռազմական փոխադրումներն իրականացնելու համար:

Նրանք, ովքեր վճարում էին փրկագնի հարկ («բեղեյ»), արտաքսվել են կամ տարբեր առիթներով բանտարկվել, այնպես որ, տարագրյալների թվում միայն ձերուհիներն են, կանայք և երեխաները, որոնք պետք է անցնեն այնպիսի վայրերով, որտեղից նույնիսկ խաղաղ ժամանակներում անհնար էր անցնել առանց կողոպտվելու կամ նույնիսկ սպանվելու: Բացի դրանից, չեթեմերը (թուրքական հրոսակախմբերը)՝ մեծ ճանապարհի գողերը և նույնիսկ ժանդարմներն ու կառավարության պաշտոնյաներն իրենց պարտքն են համարում նրանց կողոպտել, առևանգել և անպատիժ բռնաբարել աղջիկներին: Որոշ տեղերից մեզ անգամ լուրեր են հասել այն մասին, որ նրանց բռնի ձևով հարկադրել են ընդունել իսլամը: Թվում է, թե բնակիչները որևէ այլ ելք չունեն իրենց կյանքը փրկելու համար:

Այդուհանդերձ, ռազմական խորհուրդները գործում են անողորմաբար: Չեզ, անկասկած, հայտնի է դարձել, որ Կոստանդնուպոլսում 20 հնչակյանների կախաղան են բարձրացրել: Ընդունված որոշման նրանց վերաբերող հատվածը չի համապատասխանում պետական օրենքներից և ոչ մեկին: Նույն օրը Կեսարիայում 12 այլ անձանց ևս կախաղան են բարձրացնում՝ այն հրահանգներին հետևելու պատճառաբանությամբ, որոնք նրանք ստացել էին Տաշևակցական [sic]՝ և Հնչակյան կուսակցությունների՝ Բոխարեստում գամարսած գաղտնի ժողովի կողմից: Այս ճանապարհով մահվան դատապարտվածներից բացի, 32 անձինք դատապարտվել են տարբեր պնտիժների. այն է՝ 10-ից 15 տարվա միջև տատանվող տաժանակիչ աշխատանքների: Վերջիններս երևելի և ազնիվ առևտրականներ էին, որոնք անդամագրված չէին որևէ կուսակցության: Կիլիկիայում նույնպես 12 անձինք են կախվել: Ամեն օր

կայացվում են դատավճիռներ: Ձեռքերը, գրքերը, պատկերները և այլն՝ բավարար դրդապատճառներ են, որպեսզի հանգեցնեն բանտարկության մի քանի տարով:

Անհամար են նրանք, ովքեր մահանում են հարվածներից ու բռնություններից. այսպես, 13 մարդ գոհվել է Դիարբեքիում, 6-ը՝ Կեսարիայում և այլն: Կան մաս այնպիսիք, որոնք առանց ռազմական խորհուրդներին ներկայանալու, սպանվել են ճանապարհին: այս ձևով են գոհվել Շապին-Գարահիսարից Սվազ տեղավոյսվող 13 անձինք, այսպես են կնքել իրենց մահկանացուն նաև հայ քահանաները, որոնց Սու Շեհրկից [sic]¹ Սվազ էին տեղափոխում ձեռքերը մեջքներին կապած՝ ծագումով Պուրկ գյուղից հիմզ այլ մարդկանց հետ մեկտեղ և այլն:

Ես այլևս չեմ հիշատակում այլ վայրագություններ, որոնք ամենուր տեղի են ունեցել զենքեր փնտրելու և հեղափոխականներ հայտնաբերելու նպատակով: Ո՛չ մի տուն, ո՛չ մի պրե-լատուրյուն, ո՛չ մի եկեղեցի, ո՛չ մի դպրոց գերծ չի մնացել խուզարկություններից:

Հարյուրավոր կահայք, աղջիկներ և մույնիսկ երեխաներ տառապում են բանտերում: Եկեղեցիները և վանքերը կողոպտվել են, ավերվել ու ասպատակվել: Նույնիսկ պրելատներին չեն խնայել: Բրուսայի պրելատ, Նոբին սրբազնություն}ն Պարզ Դանիելյանը, Տրապիզոնի պրելատ, Նոբին սրբազնություն}ն Գևորգ Տուրյանը, Կեսարիայի պրելատ, Նոբին սրբազնություն}ն Խոսրով Բեհրիզյանը, Շապին-Գարահիսարի պրելատ, Նոբին սրբազնություն}ն Վաղինակ Թորիկյանը, Չարսանջակի պրելատ, Նոբին սրբազնություն}ն Գևորգ Նաբանդյանը և ուրիշներ ձերբակալվել են ու հանձնվել ռազմական խորհուրդներին: Դիարբեքիի պրելատ, Նոբին սրբազնություն}ն Սկրտիչը ավանդել է հոգին բանտում ստացած հարվածներից: Որևէ այլ տեղեկություն մյուս պրելատների մասին չկա: Շատ հավանական է, որ նրանց մեծ մասը բանտ է նետվել: Ներկայումս Թուրքիայում բոլոր հայերը պահվում են բերդամրոցներում. ամեն մի թղթակցություն և յուրաքանչյուր հեռագրային հաղորդակցություն նրանց հետ դադարել է:

Վանի և Բիրիսի շրջակայքում գտնվող հայկական գյուղերը կողոպտվել են, իսկ բնակիչները կոտորվել: Ընթացիկ ամսի սկզբին կոտորածը Շապին-Գարահիսարում այնքան էլ ծավալվել, որ այնտեղ, ինչպես ասում են, հազիվ մի քանի երեխաներ են փրկվել: Դժբախտաբար տեղեկությունները մեզ են հասնում կամ մեծ ուշացումներով, կամ մեծ դժվարություններով:

Այսպիսով, ինչպես դուք տեսնում եք, Թուրքիայում հայերն իրենց վերջին օրերն են ապրում: Մենք գուրկ ենք որևէ միջոցից մնան ճակատագրի վախճանը հետաձգելու համար: Եթե արտասահմանի հայերին չհաջողվի մաս չեզոք պետությունների շրջանում մեր ճակատագրի նկատմամբ կարեկցանք առաջ բերել, մի քանի ամիս անց, մեկ և կես միլիոն հայերից շատ քչերը կփրկվեն: Բնաջնջումն անխուսափելի է:

(Ստորագրություն):

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 184-187).

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գեկլասեին

Հ. թիվ 214:

¹ Իմն՝ Մուշեհրի:

Կահիրե, 10-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 16.30-ին:
(Մտացվել է ժ. 16.45-ին):

Մուսա լեռան վրա, որը հարավում է՝ Ալեքսանդրետի ծոցի և Անտիոքի մոտ, վեց հազար հայեր կոտորածներից խուսափելու համար ապստամբել են. նրանք մեր ռազմանավերից խնդրում են իրենց զենքեր տալ պաշտպանվելու համար և կանանց ու երեխաներին տեղափոխել ապահով վայր:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870, f. 90).

68

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 217:

Կահիրե, 11-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 1.30-ին:
(Մտացվել է ժ. 3.20-ին):

Իմ թիվ 214 հեռագրի շարունակությունը¹:

3-րդ էսկադրան գլխավորող ծովակալը² Մուսա լեռան հայերի և նրանց կանանց համար ապաստան է խնդրել Կիպրոսից:

Քանի որ Կիպրոսը մերժել է, ծովակալն ապաստան է խնդրում Եգիպտոսում: Անձամբ գեներալ Մաքսուելլը, որը բարեհաճ է տրամադրված, զեկուցել է այդ մասին (Գերագույն կոմիսարին)³, որը հրահանգներ է խնդրել Լոնդոնից: Այս դժբախտների թիվն անցնում է երեք հազարից: Չնայած այն բանին, որ այստեղ Սիրիայի և Պաղեստինի զաղթականներն արդեն մեծ թիվ են կազմում, ցանկալի կլինի, որ նրանք իյուրընկալվեն Եգիպտոսում, որը թվում է, թե մնում է իբրև միակ հնարավոր ապաստարան:

Ես երախտապարտ կլինեմ, եթե Չերդ գերազանցությունն այս ոգով միջնորդությամբ հանդես գա Լոնդոնում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870, f. 93).

1 Սեպտեմբերի 10-ի. վերը հրապարակվել է թիվ 67 փաստաթղթում:

2 Փոխծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեն:

3 Սրբ Հենրի Մակ Սահունը:

**Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության արխիվապահներ
պլարոնայք Ռ-ոբեր դյու Գարդին և Բոդուն՝
Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին**

Ծ. թիվ 43¹:

Պերա, 11-ը սեպտեմբերի 1915 թ.:
(*Ստացել է* .Քաղ. վարչ. 1918 թ. դեկտեմբերի 12-ին):

Հինգշաբթի, 10-ը սեպտեմբերի 1915 թ.:

Մենք պետք է Հայկական հարցին վերաբերող մի հատուկ ծանուցագիր կազմեինք: Այս պահին ճշգրիտ տեղեկություններ չի մի բերելու անհնարինությունը հարկադրում է մեզ հրաժարվել դրանից: Մեր բարեկամներից մի քանի հայեր, որոնք հավանաբար ի վիճակի են մեզ փաստաթղթեր ներկայացնելու, գտնվում են այնպիսի սևեռում հսկողության ներքո, ապրում այնպիսի տագնապալից պայմաններում, որ հարկ է երկյուղել, ինչպես իրենք են մեզ ասում, նրանց այցելելու կամ ժամադրվելու միջոցով՝ նրանց վարկաբեկելուց: Ոմանք մեզ են փոխանցել մի քանի ծանուցագրեր, բայց առանց անհրաժեշտ ճշգրտումների, և այս պահից ի վեր անհնար է խորհել, թե կարելի է ճշգրիտ ու լիարժեք պատկերացում կազմել վերջին ամիսներին կայսրության բոլոր շրջաններում հայ բնակչության նկատմամբ կիրառված վայրագությունների մասին:

Հալեայում պաշտոնաթող հյուպատոս պ. Գյուլի հաղորդագրությունը², որը մենք ուղարկել ենք մի քանի շաբաթ առաջ, կացությանն առնչվող առաջին ակնարկն է: Մենք կարծում ենք, որ այն, ասելու չէ, թե որքան է ծանր: Այսօր ևս, տեղեկանում ենք նոր կոտորածների մասին, որոնք վերջերս են կազմակերպվել Խարբերդում (որտեղ խոսում են 40000 սպանվածների մասին), Անգորայում (10000), Իզմիլում, Բրուսայում:

Կոստանդնուպոլսում հայկական ծագում ունեցող բոլոր ռուսահպատակներն անցած գիշերվա ընթացքում ձերբակալվել են: Կարծում են, որ հայերի թիվը, որոնց նկատմամբ ներքին նահանգներում արտաքսման միջոցներ են կիրառվել, հասնում է 700000-ի, իսկ նրանց թիվը, ովքեր կենդանի չեն մնացել՝ ավելի քան 400000-ի:

Իշխանություններն ամենուր գործում են հետևյալ ձևով. էական չէ, թե որ շրջանի կամ տեղանքի հայերը՝ որևէ ամսաթվի և որևէ հեռավոր ուղղությամբ մեկնելու հրաման են ստանում: Նրանց համախմբում են քարավաններում և ճանապարհ դնում: Ճանապարհին նախօրոք առաջ անցած հյուսակախմբերը գլոտում են շարասյունը, կողոպտում և կոտորում մարդկանց մեծ մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 907, ff. 39 v-40).

¹ Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

² Տե՛ս վերը թիվ 58 փաստաթուղթը (հավելված 1):

**Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի շտաբի պետ, նավի կապիտան
Շամոնարը՝ Պորտ-Սաիդում բրիտանական զինված
ուժերի հրամանատար, փոխգնդապետ Էլզուդին**

Պորտ-Սաիդ, 12-ը սեպտեմբերի 1915 թ.:

Ես շտապում եմ պատասխանել գեներալ Մաքսուելլի տված հարցերին:

1/ Հայերը, որոնց վերաբերում է խոսքը, նրանք են, ովքեր բնակվում էին Անտիոքի ծոցի հյուսիսում վեր խոյացող Մուսա լեռան շրջանի գյուղերում, այն է՝ Յոդուն-Օլուբուն, Բեզտխասուն [sic]¹, Հաջի-Հաբիբլիում, Քարուսիում, Քադուբեյում [sic] և այլն...

Այս շրջանի հայերը վերջին հուլիս ամսի 30-ին երկիրը լքելուն վերաբերող հրաման են ստացել: Իմաստնացած այն փորձից, որն առնչվում է այն ամենին, ինչ տեղի էր ունեցել Ջեյթունում և Դ-խարբեբլիում, նրանք ավելի շուտ գերադասել են փորձել դիմադրելու երիտարյր-բերին, քան լքելու իրենց ունեցվածքը:

Նրանց՝ թվով շուրջ 5-ից 6000 հոգու, ներառյալ կանայք, երեխաները և ծերունիները, հաջողվել է պահպանել իրենց դիրքերը Մուսա լեռան լեռնային գանգավածում:

Հետևյալ խնդրագիրը (պատճենը)², որը դիմադրության ղեկավարներից մեկի՝ Պիեռ Դ-իմլաքյանի կողմից հանձնվել է անձամբ ծովակալին, ձեզ իրագել կդարձնի հարցի էությունը:

2/ Հայերին շրջափակող թուրքերը կանոնավոր գործերն են, որոնք, ինչպես ասում են հայերի առաջնորդները, գտնվում են գերմանացի սպաների հրամանատարության ներքո: Սկզբում նրանց թիվը հասնում էր 1000-ից 1500-ի, բայց ի պատասխան հայերի դիմադրության, նրանց թիվը հսկայական չափերով աճել է:

Ամսի 5-ին ֆրանսիական «Գ-յուիշեն» հաժամավը, որն այս հայերի հետ հաղորդակցվելու համար, որոնց օգնության կանչի ազդանշանը նկատել էր, ափ էր ուղարկել մի նավակ, հարկադրված է եղել կրակ բաց անել՝ պաշտպանության ներքո վերցնելու համար այդ նավակը, որն աշխույժ հրաձգության տեսիլք էր տվել թուրքերի մի մասի կողմից, որոնց հաջողվել էր մերձենալ ափից: Քանի որ «Գ-յուիշենը» շատ էր մոտեցել ցամաքին՝ օգնություն ցուցաբերելու համար նավակին, որում գտնվող հայերից մեկը ծանր վիրավորվել էր, նավակողին զնդակներ էին դիպել:

3/ Ամսի 6-ին ծովակալն անձամբ տեսել է առաջնորդներից Պիեռ Դ-իմլաքյանին, որը նրան խնդրել է դուրս բերել կանանց, երեխաներին, ծերունիներին, ավելացնելով, որ մարտունակ տղամարդիկ կդիմադրեն շատ երկար, եթե հնարավոր լինի նրանց տրամադրել 200 կամ 300 հրացան, ռազմամթերքներ և հարյուրի հասնող այրուրի սլաք:

Ամսի 7-ին ծովակալը մեկնել է Ֆրանսիական զորքերի ուղղելու համար կղզու Գերագույն կոմիսարին³, որպեսզի տեղեկանա, թե արդյոք նա ի վիճակի՞ է ընդունել այս գաղթականներին Կիպրոս կղզում: Հետևել է ժխտական պատասխան:

Ամսի 8-ին ծովակալը տեսել է բոլոր հայ առաջնորդներին: Նրանք նրան տեղեկացրել են, որ ուժերը զգալիորեն ավելացել են:

1 Իմա՝ Բիբիաս:

2 Արտատպված չէ:

3 Սրբ Ջոն Քլոսոնը:

Ամսի 10-ին «Դեզեն», որը մնացել էր Մուսա լեռան առջև հսկողությունն ապահովելու համար, ռադիոգրով ծովակալին ազդարարում էր, որ քուրքերը գրոհում են, որ լսելի է հրաձգության ձայնը և բույլտվություն էր խնդրում ոմբակոծելու քուրքերի կողմից գրավված Ջաբուսի գյուղն ու նրա շրջակայքը: Նա ավելացնում էր, որ թվում է, թե ծառացել է մարդկանց դուրս բերումը կարճ ժամկետում իրականացնելու անհրաժեշտությունը, և որ մարտնչողների ռազմամթերքները կբավականացնեն միայն երկու օր:

Ծովակալը նրան պատասխանում է, որ մարդկանց դուրս բերումը հնարավոր չէ իրականացնել Կիսրոսում, որ ինքը բանակցություններ է վարում Եգիպտոսի անգլիական իշխանությունների հետ, իրավիճակի մասին տեղեկացրել է ֆրանսիական կառավարությանը և հարկ է ձեռնարկել մարդկանց նավ տեղափոխելը միայն այն դեպքում, եթե վտանգն անխուսափելի քվա:

Ամսի 11-ին «Դեզեն» հրամանատարը հեռագրում էր այն մասին, որ մարդկանց դուրս բերումը նրան թվում է իբրև կատարյալ անհրաժեշտություն, և որ ինքը մարդկանց նավ տեղափոխելուն ձեռնամուխ կլինի ամսի 12-ի առավոտյան: Ֆրանսիական 5 նավեր գտնվում են դեպքի վայրում:

Մարտնչողները ևս նավ կբարձրանան. առկա է ռազմամթերքների պլակաս:

4/ Համաձայն հայերի խոսքերի, թվում է, թե պաշարող քուրքերը ստացել են կարևոր օժանդակ ուժեր և ներկայումս նրանց թիվը հասնում է բազում հազարների:

(A.C.M., SS S 5).

71

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 220:

Կահիրե, 14-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 10.35-ին:
(Ստացվել է ժ. 14.10-ին):

Երեկ և այսօր առավոտյան մեր հաժանավերով Պորտ-Սաիդ ժամանեցին Մուսա լեռան երեք հազար չորս հարյուր հիսուն հայեր: Այս նավերը պետք է անհապաղ կրկին ձեռնամուխ լինեն իրենց նավարկությանը: Սպասելով վերջնական լուծմանը, ծովակալ Դարրիոն, տեղական իշխանությունների համաձայնությամբ, գաղթականներին տեղավորելու և կերակրելու համար, ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 3).

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին

Հ. քիվ 2069:

Լոնդոն, 14-ր սեպտեմբերի 1915 թ., ժ. 19.30-ին:

Պատասխան ձեր քիվ 2850 հեռագրին¹:

Ի պատասխան իմ նախորդ հաղորդագրության, որը վերաբերում էր 3000 հայ գաղթականներին, սըր Ա. Նիկոլսոնն այսօր ինձ ասաց, որ Շգիպտոսի և Կիպրոսի անգլիական իշխանությունները հայտարարում են, թե հնարավոր չէ նրանց ընդունել կացարանների տարբյան պատճառով: Սըր Ա. Նիկոլսոնը հանգում է այն հետևությունը, թե հարկ է դիմել Իստալիայի օգնությանը, որը, հավանաբար, կկարողանա նրանց ընդունել Ռոդոսում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 4).

Մեծ Բրիտանիայի դեսպանության հաղորդագրությունը Գեպարտամենտին

Հրատապ:

Փարիզ, 14-ը սեպտեմբերի 1915 թ.:
(Ստացել են Կաբինետը և
Քաղ. վարչ. սեպտեմբերի 15-ին):

Նորին մեծության կառավարությունը գիտակցում է, որ Անտիոքի գրեթե 4000 հայ գաղթականները նավ են տեղափոխվում կամ տեղափոխվել ֆրանսիական երրորդ էսկադրայի միջոցով և որ առաջարկվել է նրանց ափ դուրս բերել կամ Շգիպտոսում, կամ Կիպրոս կղզում:

Նորին մեծության կառավարությունը բացարձակապես անտեղյակ է այն հանգամանքներին, որոնց առկայությանը ֆրանսիացի ծովակալը ձեռնարկել է խնդրո առարկա գաղթականների նավ տեղափոխումը և ցանկություն ունի ֆրանսիական կառավարության ուշադրությունը հրավիրել այն հարցի վրա, որ թե՛ Շգիպտոսը և թե՛ Կիպրոսն արդեն լեռն լեռն են գաղթականներով, և որ այդտեղ ապաստարաններ չկան հավելյալ մեծաքանակ խմբերի համար: Բացի դրանից, եթե նկատի ունենանք տրամադրովածությունների ներկա վիճակն այս երկու վայրերում, խիստ անցանկալի կլինի, որ բուրբերի և քրիստոնյաների միջև տեղի ունեցած ապստամբական պայքարի զոհերն ափ հանվեն այդտեղ:

Հետևաբար, Նորին մեծության կառավարությունը չի կարող տալ իր համաձայնությունը՝ գաղթականներին ո՛չ Շգիպտոսում, ո՛չ Կիպրոսում ընդունելու հարցում և հույս է հայտնում,

¹ Արտատպված չէ:

որ ֆրանսիական կառավարությունն ի վիճակի կլինի կազմակերպել կամ նրանց ժամանակավոր տեղավորումը Ռուդանում, կամ նրանց տեղավախումն Ալժիր:

Լորդ Բերքին՝ Թեյմից, սրբ Էդուարդ Գրեյի կողմից հանձնարարություն է ստացել Նորին զերազանցություն Արտաքին գործերի նախարարին խնդրանքով դիմելու մասին, որպեսզի նա, որքան հնարավոր է արագ, իրեն տեղեկացնի ֆրանսիական կառավարության ձեռնարկած միջոցառումներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 5-7).

74

2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Գարրիոն՝ Պորտ-Սաիդի բրիտանական զինված ուժերի հրամանատար, փոխզնդապետ Էլզուդին

Ը. քիվ 271:

«Ժորեգյուիբերիի» տախտակամածից,
Պորտ-Սաիդ, 14-ը սեպտեմբերի 1915 թ.:

Համաձայն ինձ հասած տեղեկությունների, «Սուֆուկում» կան դեռևս հազարի հասնող ազատ տեղեր: Եթե դուք ինձ կարողանայիք հնարավորություն տալ տնօրինելու զաղթականների ճակատագիրը, ես այն կօգտագործեի այս նավ տեղավախելու՝

1/ այն 457 զաղթականներին, որոնց «Ճովակալ Շարները» կբերի այստեղ այսօր կեսօրին. այդ հաձանավը պետք է ետ վերադառնա վաղը՝ սեպտեմբերի 15-ին.

2/ այն 500 զաղթականներին, որոնք ներկայումս գտնվում են «Գյուլչենի» վրա, որն ակնհայտորեն զերծանրաբեռնված է:

«Գյուլչենն» իր տախտակամածի վրա ունի 8 ծանր վիրավոր հայեր: Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել ինձ տեղեկացնելու, թե կարո՞ղ եք դուք արդյոք, եթե առիթը ներկայանա, ընդունել նրանց հիվանդանոցում. ո՞ր է նրանց տեղավախելու «Գյուլչենը» և ո՞ր ժամին:

(A.C.M., SS S 4).

75

**Մեծ Բրիտանիայի դեսպանության
հաղորդագրությունը Դեսպարտամենտին**

Հրատապ:

Փարիզ, 15-ը սեպտեմբերի 1915 թ.:
(*Umuցել է Կաբինետը սեպտեմբերի 15-ին*):

Նորին մեծության դեսպանը՝ պատիվ ունի Նորին գերագանցություն Արտաքին գործերի նախարարի քննությանը հանձնել Եզիպտոսում կամ Կիպրոսում ափ դուրս չհանված հայ զաղթականներին վերաբերող երեկվա քվակիր հուշագիրը²:

Նորին մեծության կառավարությունը նույն բովանդակության՝ երեկվա քվակիր հեռագիր է ստացել Եզիպտոսի Գերագույն կոմիսարից, համսձայն ուրի 5000 (հինգ հազար) հայ զաղթականներ ափ էին դուրս բերվում: Եզիպտական կառավարությունը ժամանակավոր միջոցներ է ձեռնարկում նրանց ծածկով ապահովելու և Պորտ-Սախում պահելու համար, բայց նրանց ժամանումը մեծապես բարդացնում է ծառայողական անձնակազմի վիճակը և հարվածում դրամական միջոցներին:

Նորին մեծության դեսպանը Նորին մեծության կառավարությունից հանձնարարություն է ստացել համոզելու ֆրանսիական կառավարությանը զաղթականներին, որքան հնարավոր է արագ, տեղափոխելու այլ վայրեր:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 190).

76

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին

Հ. թիվ 2075:

Լոնդոն, անբավակիր³:

(*Ստացվել է* 1915 թ. սեպտեմբերի 15-ին, ժ. 19.20-ին):

Պատասխան թիվ 2868 հեռագրին⁴:

Ես կրկին խոսեցի սրբ Էդուարդ Գ-րեյի հետ Միսսս լեռան հայերի մասին: Նա ինձ ասաց, որ Եզիպտոսում և Կիպրոսում գտնվող բրիտանական ներկայացուցիչները համառոտ են պնդում են, որ իրենց ազատագրեն այդ դժբախտներին ափ դուրս բերելու հույսով, քանի որ իրենց ունեցած տարբեր բնույթի միջոցները հատկացվել են Դարպանեղի հիվանդներին ու վիրավորներին: Նա ավելացրեց, որ Կահիրեի դիվանագիտական գործակալի՝ մերժումն արդարացվում էր նաև քաղաքական պատճառներով: Եզիպտոսի մահմեդականները, որոնց վրա զգալի է սենուսիների ազդեցությունը, խիստ գրոզված են և սուլթանի դեմ ապստամբած հայերին ևս պատան հատկացնելու խնդրումների պատճառ կդառնա: Թվում է, թե հնարավոր չէ ստանալ անգլիական կառավարության օժանդակությունը: Մենք կարող ենք դիմել Իտալիային՝ Ռոդոսի համար, իսկ անհաջողության պարագայում՝ վճիռ կայացնել հայերին թուրքի տեղափոխելու մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 8).

1 Սրբ Ֆրանսիա Բերբին:

2 Վերն արտատպված է թիվ 73 փաստաթղթում:

3 Փոստով, ատանց ծածկագրի:

4 Արտատպված չէ:

5 Սրբ Հենրի Մակ Մահոնը:

**Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեն՝
Հռոմում Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերին**

Հ. թիվ 1354:

Փարիզ, 15-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 20.15-ին¹:

Սիրիայում նավարկող ֆրանսիական նավերն ընդունել են և ժամանակավորապես Ալեքսանդրիայում ափ դուրս բերել 3000 հայերի, որոնք մագապուրծ էին եղել թուրքական կոտորածներից ու ապաստանել Մուսա լեռան կարկառուն, որտեղ փորձել էին դիմադրել թուրքական զորքերին: Եզիպտոսում և Կիպրոսում գտնվող անգլիական իշխանությունները, որոնք արդեն հիվանդանոցներում տեղավորել են մեծ թվով հայերի, կացարանների սղոթյան պատճառով, հնարավորություն չունեն ընդունել այս գաղթականներին: Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք հարցնեք իտալական կառավարությանը, թե արդյո՞ք նա կկարողանա նրանց ապաստան իստակացնել Ռոդոսում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 9).

**2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի
հրամանատարի ժպ, դերժովակալ Դարրիոն՝ Սուեզի ծովային ջրանցքի
Համաշխարհային ընկերության տարանցումային
գլխավոր գործակալ պ. Մ. Դյումոնին**

Ճ. թիվ 279:

«Շուրեգյուլիբերիլի» տախտակամածից,
Պորտ-Սաիդ, 15-ը սեպտեմբերի 1915 թ.:

Տեղական զինվորական իշխանությունների հետ ձեռք բերված համաձայնությունից հետո որոշում է կայացվել հայ գաղթականներին, որոնց հանգամանքները մեզ հարկադրել են դուրս բերել Մուսա լեռան զանգվածից, համախմբել Սուեզի ջրանցքի ասիական ափում գտնվող համակենտրոնացման ճամբարում:

Պ. գնդապետ Էլզուդյը, Ինթելիջենս Օֆիսի տնօրենը, որը սկսած առաջիկա հինգշաբթի օրվանից կստանձնի հայ բնակչությանը կերակրելու պարտականությունների կատարումը, գուրկ է 4000 անձանց համար նախատեսված սննդամթերքներ տեղավորվելու անհրաժեշտ միջոցներից: Նա ինձ խնդրել է անձամբ միջնորդել «Սուեզի ջրանցքի ընկերությանը», որպեսզի վերջինս ստան օր նրան տրամադրվի այն միջոցները, որոնց կարիքն ունի: Դրանք են՝

¹ Փոստով, ւսանց ծածկագրի:

բուքսիրային նավը և տափանավը, որոնք ունենան մոտավորապես 4000 մրեբաբաժիններ պարունակելու հնադավորություն:

Այս բուքսիրային նավն օրական կկատարի երկու ճանապարհորդություն և մաքսատան ափին պետք է դրվի զինվորական իշխանությունների ենթակայության ներքո՝ առավոտյան ժամը 9-ին և երեկոյան ժամը 4-ին: Նրա ծառայությունը կսկսվի հինգշաբթի օրը՝ ամսի 17-ին: Ես ինձ թույլ եմ տալիս ձեզ պնդելու, առավել ևս համառ ճևով, որ ամենից առաջ խոսքը վերաբերում է վերին աստիճանի մարդասիրական և հասարակական գործի, որին մասնակցելու հնադավորությունը «Մուեզի չրանցքի ընկերությունը» չի ցանկանա բաց թողնել:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք տեղեկացնել, եթե այդ հնադավոր է մինչ վաղը երեկո, այն որոշմանը, որը կընդունվի:

(A.C.M., SS S 4).

79

Հռոմում Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 731:

Հռոմ, 16-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 20 40-ին:

Պատասխան Ձեր թիվ 1354¹ հեռագրին:

Թագավորական կառավարությունն ինձ տեղեկացրել է, որ Ռոդոս կղզին արդեն ընդունել է բազմաթիվ գաղթականների, և տեղի գլխավոր հրամանատարը խնդրել է գաղթականներ այլևս չուղարկել: Այս պայմաններում, ամհմար է այնտեղ ընդունել այն հայերին, որոնց վերաբերում է խոսքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918. *Turquie*, tome 887, f. 191).

80

Դեպարտամենտի ծանուցագիրը²

Փարիզ, 16-ը սեպտեմբերի 1915 թ.:

Կասկածելի է թվում, որ Ալժիրում, Թունիսում կամ Մալդիվյուում հնադավոր լինի տեղաբաշխել Անտիոքից եկած չորսից հինգ հազար հայ գաղթականներին:

Իրականում, չի թվում, թե այս երկրներում իրեն զգալ է տալու աշխատուժի պակասը, բայց դրա փոխարեն՝ վտանգավոր կլինի այս հայերին մահմեդական բնակչության հետ հա-

¹ Տես վերը թիվ 77 փաստաթուղթը:

² Հասցեագրված է պ. Գ ուրին:

ուրյակցության մեջ դնելը, որը կդառնա բրիտանյանների նկատմամբ թուրքական զենքի տարած հաջողությունների տպավորիչ վկայությունը:

Այդուհանդերձ, պատրաստվել են հեռագրեր, որոնք կից ներկայացնում են:

(A.M.A.E., Guerre 1914-1918. *Turquie*, tome 887, f. 192).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Արտաքին գործերի նախարար պ. Գեկլասեն՝
պ(արոնայ)ք Ալժիրի գլխավոր նահանգապետ Լյուտոյին,
Թունիսում դիվանագիտական գլխավոր ներկայացուցիչ Ալապտիտին,
Մարոկկոյում դիվանագիտական գլխավոր գործակալ, գեներալ Լիուտեյին**

Հ. թիվ 92, 205, 264:

Փարիզ, 16-ր սեպտեմբերի 1915 թ., ժ. 22.40-ին:

Սիրիայի ելնգ հազար հայեր, որոնք օսմանյան կոտորածներից անմիջապես հետո գեներալի էին դիմել և փորձել դիմադրել թուրքական զորքերին, բարեբախտաբար իրենց օգնության հասած ֆրանսիական էսկադրայի կողմից վերջնականապես նավ են բարձրացվել Սիրիայի սպին՝ Մուսս լեռան մոտ:

Այս դժբախտներին էսկադրան ավի է դուրս բերել Պորտ-Սաիդում: Անգլիական իշխանությունները չեն կարող ոչ նրանց ընդունել, ոչ էլ տեղավորել Եգիպտոսում, որտեղ տարբեր ծագում ունեցող և զանազան կրոն դավանող զաղրականների թիվն արդեն ահռելի է:

Ես կցանկանայի իմանալ, թե այն երկրում, որտեղ դուք գտնվում եք, հնարավոր կլինի՞ արդյոք ընդունել որոշ թվով զաղրականների և նրանց համար աշխատանք գտնել: Դուք միաժամանակ բարեհաճեք ինձ տեղեկացնել, թե քաղաքական տեսանկյունից, արդյոք դուք որևէ անհարմարություն ենք տեսնում այս բրիտանյա օսմանյան հպատակների և Օսմանյան կայսրությունից զաղրածների տեղավորման գործում:

(A.M.A.E., Guerre 1914-1918. *Turquie*, tome 890, f. 11).

**Սուեզի ծովային ջրանցքի Համաշխարհային ընկերության Եգիպտոսում
գտնվող գերագույն գործակալը՝ 2-րդ դիվիզիայի հրամանատար և
Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի
Ժպ, դերժովակալ Գարրիոյին**

Ն. թիվ 106:

Իսմայիլիա, 16-ր սեպտեմբերի 1915 թ.:

Տարանցումի գլխավոր գործակալ պ. Գյունոնը, ինձ հանձնեց ընթացիկ ամսի 15-ի պլա-

կիր ձեր նամակը¹, որը վերաբերում էր գնդապետ Էլզուրի ձեզ հղած խնդրանքին, այն է՝ հետամուտ լինել, որ մեր ընկերությունը բարեհաճի ապահովել, այն պայմաններով, որը դուք կճշգրտեք, Պորտ-Սաիդ գաղթած հայերի համար նախատեսված 4000 մթերաբաժինների փոխադրումը:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ մարդասիրական մղումներից ելնելով, ինչպես նաև խուսափելու համար, որ այս բնակչությունը տառապանքներ չկրի, մենք կարող ենք ապահովել, բայց միայն ժամանակավորապես, այդ փոխադրումը, սպասելով, մինչ իրավասու իշխանությունները ժամանակ կունենան վերջնականապես կառչելու որևէ կազմակերպության:

(A.C.M., SS S 8).

Արտաքին գործերի նախարարը² Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնին

Հ. թիվ 2909:

Փարիզ, 17-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 22.05-ին:

Մտավորապես ինձ հազար՝ կոտորածներից ու հալածանքներից մազապուրծ հայեր, ապաստանել էին Սիրիայի ափին, Մուսս լեռ կոչվող տեղանքում: Նրանք այստեղ փորձել են զենքով դիմադրել թուրքական զորքերին: Բարեբախտաբար, ֆրանսիական նավատորմը ժամանակին միջամտել է՝ փրկելով նրանց լիակատար կոտորածից: Այն նրանց նավ է բարձրացրել և տեղափոխել Պորտ-Սաիդ:

Անգլո-եգիպտական կառավարությունը, անհանգստացած տարբեր կրոններ դավանող օսմանյան գաղթականների խճուղուց և երկյուղելով այս հայերի ու Եգիպտոսի մահմեդական բնակչության շփումների հետևանքներից, չի կարող նրանց մշտական ապաստան հատկացնել: Միևնույն պատճառով, անհնար է նրանց ընդունել Ռուդոսում կամ Կիպրոսում:

Այս պայմաններում, ես հույս եմ տածում. որ հարկ կլինի հարցնել ռուսական կառավարությունը, թե արդյո՞ք նա հնարավոր չի համարի այս հայերի վերաբնակեցումը Կովկասում, ուր իրենց համակրոնակիցների շրջանում նրանք կգտնեն օգնություն և աջակցություն:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք հարցնեք սըր Էդուարդ Գրեյին, թե արդյո՞ք նա կցանկանա՞ միանալ այն առաջարկությանը, որով ես հանդես կգամ Պետրոգրադում այս կապակցությամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 12).

1 Տես վերը թիվ 78 փաստաթուղթը:

2 Մտորագրել է պ. դը Մարթերին:

Ռ-ազմաժողովային նախարարը¹
Լոնդոնում գտնվող Ֆրանսիայի ծովային կցորդին²

Հ. քիվ 823:

Փարիզ, 17-ը սեպտեմբերի 1915 թ.:

3-րդ էսկադրան տեղեկացնում է, որ հենց այսօր, թշնամու գոյքողությունների պատճառով, ձեռնամուխ է լինում Մուսա լեռան հայերի դուրս բերմանը: Այս գաղթականներն ուղղություն են վերցրել դեպի Պորտ-Սալի: Եզիպտոսում նրանց ընդունելու ուղղությամբ կազմակերպչական քայլերն ընթացքի մեջ են և Լոնդոնից հրամանների են սպասում: Տեղեկացրեք ծովակալությանն ազատ նավելը մեզ վերադարձնելու համար շուտավույթ որոշում կայացնելու հարցում մեր շահագրգռվածությանը:

(A.C.M., SS Ed 121).

Արտաքին գործերի նախարարը³
Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Ռեֆրանսին

Հ. քիվ 135:

Փարիզ, 17-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 22.05-ին:

Կարո՞ղ եք դուք ինձ հաղորդել ճշգրիտ տեղեկություններ, որոնք վերաբերում են Մուսա լեռան հայերին, մասնավորապես, նրանց թվաքանակին, նրանց առանձնացմանը տղամարդկանց՝ (ա) չափահաս, (բ) ծերունի, կանանց և երեխաների, նրանց հակումներին աշխատանքի և աշխատանքի որ տեսակի նկատմամբ. վերջապես, հնարավոր կլինի՞՞ նրանցից հավաքագրել ոմանց՝ Արևելքում գործող արտասահմանյան գումարտակի համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 13).

1 Ստորագրել է փոխծովակալ Ժոնքիերը:

2 Նավի կապիտան Լո Գու դը Սեն-Սենը:

3 Ստորագրել է պ. դը Մարթերին:

**2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ
էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Գարբիոն՝
Ռ-ազմածովային նախարար պ. Վիկտոր Օզանյորին**

ԴՆ. թիվ 286: Գաղտնի:

«Շիրեգյուլբերիի» տախտակամածից.
Պորտ-Սալոյի նավակայան, 17-ը սեպտեմբերի 1915 թ.
(Սուսցի կն Կար. սեպտեմբերի 27-ին,
Գ-իլավոր) շխտաբի} 3-րդ ենթաբաժինը
սեպտեմբերի 29-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հղել իմ գեկուցագիրը ժամանակավոր բնույթի այն որոշումների մասին. որոնք Պորտ-Սալոյի տեղական զինվորական իշխանությունների համաձայնությամբ կայացրել եմ հենց նոր մեր համաձայնեցրած Եզիպտոսից բերված Մուսա լեռան հայ գաղթականներին բնակարաններով և սննդամթերքով ապահովելու համար: Ես առ այսօր չեմ կարողացել ի մի բերել անհրաժեշտ փաստաթղթերի և ամբողջությունը, ձեզ տեղյակ պահելու համար այն շարժառիթներին, որոնք՝ 3-րդ էսկադրան գլխավորող փոխծովակալի՝ րոյ-լովորքյամբ «Դեզեի» հրամանատարին դրդել են կարգադրել հայ բնակչության շտապ դուրս բերման իրականացումը, ինչպես նաև ի կատար անցրած գործողությունների մանրամասններին:

Այս հարցերին առնչվող գեկուցագիրը ձեզ կողարկվի որքան հնարավոր է արագ:

Բայց ես նախատեսահարմար գտա իսկույն եք ձեր առջև հաշվետու լինել այն միջոցների համար, որոնք առ այսօր որդեգրվել են:

Սեպտեմբերի 10-ին, 3-րդ էսկադրան գլխավորող փոխծովակալի հեռագիրը ստանալուն պես, որով ինձ կոչ էր արվում ամենահամառ խնդրանքներով դիմել անգլիական իշխանություններին և պ. Դեֆյուանսին, որպեսզի հայ գաղթականներն ընդունվեն Եզիպտոսում. ես հեռախոսային կապ հաստատեցի Կահիրեում գտնվող մեր նախարարի հետ: Վերջինս, նախ և առաջ՝ ինձ հուսադրեց, որ կարճ ժամկետում հնարավոր է գտնել լուծումը: Բայց անգլիական իշխանություններին տեղյակ պահելուց հետո, պ. Դեֆյուանսն այս գեկուցագրին կցվող հեռագրերի՝ մի ամբողջ շարքով, ինձ տեղեկացնում էր, որ գեներալ Մաքսուելլն այդ մասին գեկուցել է Եզիպտոսի Գերագույն կոմիսարին՝ և որ վերջինս, կարծելով, թե չի կարող ստանձնել այդչափ գաղթականների (4088) ապաստան տալու պատասխանատվությունը, սպասել էր Լոնդոնից հեռագրով ստացվող հրահանգների: Պ. Դեֆյուանսը, իր կողմից, տեղեկացնում էր Արտաքին գործերի նախարարին իրադարձությունների ընթացքին, խնդրելով նրան միջամտությամբ հանդես գալ Լոնդոնում՝ այս դժբախտներին ապաստանով ապահովելու համար:

Սեպտեմբերի 11-ի առավոտյան, «Դեզեի» հրամանատարն ինձ տեղեկացնում էր, որ քանզի Մուսա լեռան հայերի դուրս բերումը դառնում է միանգամայն հրատապ, այդ բնակիչ-

1 Փոխծովակալ Դարաինգ դյու Ֆուրսեն:
2 Արտատպված չեն:
3 Սըր Հենրի Մակ Մահոնը:

նեղը հաջող օրն առավոտյան կտեղափոխվեն այդ վայրերում գտնվող 3-րդ էսկադրայի հաժմանավերի վրա:

Այս պայմաններում, հարկ էր գործել ամենաարագ ձևով, որովհետև հնարավոր չէր մտածել Լոնդոնի և Փարիզի միջև սկիզբ առած երկխոսության արդյունքների մասին:

Ես զգուշացնում էի իրավիճակի բարդության մասին Կախիբեում գտնվող Ֆրանսիայի պ. նախարարին. խնդրելով նրան՝ մեր գլխավոր հյուպատոսի միջնորդությամբ փնտրել տալ Ալեքսանդրետի նավահանգստում գտնվող նավերը, որոնք հնարավորություն ունեն ընդունելու հայ գաղթականների մի մասին:

Ես ինքս բանակցությունների մեջ էի բնօրրկվում պ. փոխծովակալ սրբ Ռիչարդ Փեյրսի՝ «Էսք Ինդիսի» գլխավոր հրամանատարի և տեղական զինվորական իշխանությունների հետ. խնդրելու: համար նրանցից, կարճ ժամանակով մեզ տրամադրել, առանց մեծ վնասներ կրելու, այն նավերը, որոնք կարող էին ունենալ բրիտանական ծովակալությունը և Ինթելիջենս Օֆիսի վարչությունը:

Նույն երեկոյան պ. Դեֆրանսն ինձ հայտնում էր իր ստացած տպավորության մասին, համաձայն որի անգլո-եգիպտական իշխանությունները թվում է, թե այնքան էլ բարյացակամորեն չեն տրամադրված և տեղեկացնում էր, որ ծովակալ Ռոբինզոնը՝ Ալեքսանդրիայում ավագ ծովային սպան, չի բացառվում, որ Պորտ-Սաիդում ունենար մեկ նավ՝ «Սուֆուկը». որն ի վիճակի լինել ընդունել 1000 գաղթականների և Ալեքսանդրիայում խարխախ ճգած չորս այլ նավեր, որոնք կարող էին տեղավորել. ընդհանուր առմամբ, 2000 գաղթականների: Փոխծովակալ Փեյրսը, որը պետք է հավաստել ծովակալ Ռոբինզոնի առաջարկությունները, այս հարցի շուրջ ինձ ոչինչ չհաղորդեց:

Մյուս կողմից, Ալեքսանդրիայում գտնվող մեր գլխավոր հյուպատոսը կարողացել է գտնել երկու բեռնանավ, որոնք կարելի էր շտապ օգտագործել և որոնք, անհրաժեշտության դեպքում, հնարավորություն կունենային ընդունել գաղթականներին:

Այն լուծումը, որը հանգում էր փոքրաքանակ նավերի վրա 4000-ից ավելի մարդ տեղափոխելուն, կրում էր վերին աստիճանի նախնական բնույթ և ուներ բազմաթիվ խոցելի կողմեր: Դրանցից ամենացավոտը մարդկանց մեծան կուտակման դեպքում՝ նրանց առողջության համար անհրաժեշտ հիգիենիկ միջոցառումների իրականացման ավաճավման հետ կապված դժվարությունն էր: Բայց, ըստ իս, այն ունի մեծ առավելություն, որը Մյուրիայի և Կարսմանլիի ափերի շրջափակումը վերսկսելու համար որոշ թվով համանավերի շուտափույթ ազատություն ընձեռեղն է:

Ամսի 12-ին գնդապետ Էլզուրը՝ Պորտ-Սաիդի գլխավոր հրամանատարը և Ինթելիջենս Օֆիսի տնօրենը, որն արդեն բարեհաճել էր Մուսա լեռան հայերին դուրս բերելու համար իմ տրամադրության տակ դնել «Աննա» փոխադրանավը, առաջարկեց ինձ Սուեզի ջրանցքի ստիական ափին, հիվանդանոցի մոտակայությամբ, հիմնադրել համակենտրոնացման ճամբար. որը հնարավորություն կունենա տեղավորելու բոլոր գաղթականներին:

Այս առաջարկությունը խիստ շահեկան էր չընդունելու համար: Ռազմական տեսանկյունից բույրաստորում էր ավաճավել մեր համանավերի շուտափույթ դուրս բերումը, որոնց սանիտարական վիճակն ինձ մտահոգում էր, և անմիջապես դրանք գործածական դարձնել շրջափակումն իրականացնելու համար: Մյուս կողմից, անժխտելիորեն մատչելի էր դարձնում հայ բնակչության տեղավորումը. նրան սննդամթերքով ավաճավելը, բժշկական օգնության համար նախատեսված նպաստների բուժանումը բազմաթիվ երեխաների, կանանց և ծերունիների, որոնք, մասնավորապես, տառապել էին բուրբակյան զինվորների դեմ մղված պայքարի ընթացքում իրենց կրած դառը գրկանքներից:

Սեպտեմբերի 10-ից առ այսօր հովամ իմ հեռագրերը, որոնց պատճենը, ի դեպ, կցված է ներկա գեկուցագրին, ճշգրտորեն ձեզ իրագրել են դարձրել 3-րդ էսկադրայի համահավերի քվին և գաղթականների տեղաշարժերին, որոնց՝ դրանցից յուրաքանչյուրն ապաստան էր հատկացրել:

Սեպտեմբերի 13-ին ժամանեց «Ֆուլյոր», ունենալով 1042 գաղթականներ, որոնք անմիջապես տեղափոխվեցին «Սուֆուլկի» վրա: Հաջորդ օրվանից «Ֆուլյոր» կրկին կառող էր մեկնել՝ շարունակելու իր նավարկումը: Նույն օրը «Գլ'Էստրեն» տեղ հասցրեց 459 գաղթականների, որոնցից 300-ը ժամանման իսկ պահից «Տոմիսիենի» տախտակամած ելան, որպեսզի նվազեցնեն «Գլ'Էստրենի» ծանրաբեռնվածությունը:

Ամսի 14-ին «Գլ'ուիլենը» բերում էր 1941 հայերի, որոնց մեծ մասը հարկադրված էր մնալ տախտակամածի վրա. սպասելով համակենտրոնացման ճամբարի հիմնադրմանը:

«Շովակալ Շարները» ժամանեց ամսի 15-ի երեկոյան և վերջապես «Աննա» փոխադրանավոր ժամանեց 15-ի՝ յույս 16-ի գիշերը, տեղափոխելով վերջին հայերին, ովանց ապաստան էր հատկացրել «Գեզեն»:

Սեպտեմբերի 14-ի երեկոյան Կահիրեից ստացվեցին առաջին ճամբարային վրանները, որոնք, շնորհիվ «Ժորեգյուլբերիի» ու «Գլ'ուիլենի» տրամադրած և լստ կարգազրումների աշխատող կարևոր քրիզադների, խոյացան ամսի 15-ի առավոտյան: Նավերից մարդկանց դուրս բերումը սկսվեց իսկույն ներ՝ առաջին հերթին հանձնին «Շարները» գաղթականների. որը նույն երեկոյան կրկին մեկնեց շարունակելու նավարկումը: «Գլ'ուիլենը» և «Գլ'Էստրեն» դուրս բերվեցին նույն օրը ժամը 16-ին: Երեկ, ամսի 16-ին, ակն յզան «Տոմիսիենի» և «Սուֆուլկի» գաղթականները, իսկ այսօր՝ «Աննայի»:

Համակենտրոնացման ճամբարի հիմնադրման աշխատանքները շարունակվում են աշխուժորեն, և ես բոլոր հիմքերն ունեմ կարծելու, որ ամենաուշը մի քանի օր անց, հայ բնակչությունը կունենա հարմարավետ, առողջության համար նպաստավոր և ջրով առատորեն մատակարարվող ճամբար:

Հայ գաղթականներին կերակրելու հարցն առաջ է քաշվել առաջին իսկ պահից, այն նույն հիման վրա, ինչ նրանց տեղափոխելու հարցը: Ակնհայտ էր, որ գաղթականներին ուտելիքի պաշարներ պետք է մատակարարել 3-րդ էսկադրան, այդ նավատորմի նավերի վրա նրանց գտնվելու ամբողջ ընթացքում: Բայց միաժամանակ անհրաժեշտ էր հոգալ նրանց կարիքները, մինչ ցամաքային իշխանություններն ի վիճակի կլինեին այդ իրենք անել: Ես պատիվ ունեմ ձեզ հաղորդել, որ զնդապետ Էլզուդի հետ կայացված համաձայնությունից հետո, որը Պորտ-Սաիդի գերագույն հրամանատարն է. որոշվել է, որ 3-րդ էսկադրայի նավերը հայերին սննդամթերք տրամադրեն մինչ ուրբաք օրը՝ սեպտեմբերի 17-ը ներառյալ, և որ անգլիական իշխանությունները նրանց պատասխանատվությունն իրենց վրա կվերցնեն շաբաթ օրը՝ ամսի 18-ի առավոտյան:

Այս համաձայնության կայացումից հետո, սեպտեմբերի 16-ին, ես նամակ ստացա գնդապետ Էլզուդից, որն ինձ տեղեկացնում էր, քե հեռախոսային գրույցի ընթացքում, գեներալ Մաքսուելլն իրեն ասել էր, որ նախագուշացրել է Կահիրեում գտնվող Ֆրանսիայի մեր նախարարին, և որ ինքը (գեներալ Մաքսուելլը) պատասխանատվություն կկրի միայն Պորտ-Սաիդի զինվորական իշխանությունների ծառայությունների, վրանների ու բժշկական ծառայությունների փոխատվության համար. իսկ սննդի, ջրի և այլ ծառայությունների ֆինանսական պատասխանատվությունը պետք է կրեն ֆրանսիական իշխանությունները:

Սակայն հանգամանքները կարող են սուկ հարկադրել 3-րդ էսկադրայի բոլոր նավերին նավարկելու միաժամանակ. իսկ. ընդհանուր առմամբ, Պորտ-Սաիդում մնում են միայն եր-

կու նավեր, որոնք, ի դեպ, մշտապես մի տեղից մյուսն են տեղափոխվում: Այսպիսով, էսկադրայի համար վերջնականապես անհնար է նյութապես հոգալ հայ բնակչությանը կերակրելու հարցը:

Այս պայմաններում, ես խնդրում էի գնդապետ Էլզուդին պահպանել մեր միջև կայացած համաձայնությունը, իսկ Կահիրեում Ֆրանսիայի նախարարի քննարկմանն էի ներկայացնում այս խնդիրը, հարցնելով, թե այդպեք այս հարցի շուրջ նա հրահանգներ¹ էր ստացել:

Նույն երևկոյան, գեներալ Մաքսուելլի հետ ունեցած զրույցից հետո, պ. Դեֆրանսն ինձ պատասխանում էր, որ վերջինս կհոգա հայերի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ սպասելով երկու կառավարությունների միջև վերջնական որոշման կայացմանը:

Այսպիսով, ես պատրաստվում եմ թողնել Պորտ-Սաիդն առաջնահերթ բոլոր դժվարությունները լուծելուց և այնպիսի գոհացուցիչ որոշում կայացնելուց հետո, որը հանգում է սպասելուն:

Հայերի բազմությունը կրում է թշվառության, տառապանքի և կատարյալ ընչազրկության դրոշմ, որն այն բոլոր մարդկանց վրա, ովքեր նրանց տեսել են, թողել է տանջալից և խորին տալափություն: Ակնհայտ է, որ այս դժբախտները, որոնց հաջողվել էր խույս տալ թուրքական զնդակներից և որոնցից շատերը վիրավոր են կամ հիվանդ, դատապարտված են մահվան սովից կամ տառապանքից և որ ինքնըստիմքյան առաջադրվում էր նրանց շտապ դուրս բերելու խնդիրը:

Ավարտելով, ես կարևոր եմ համարում տեղեկացնել, պ. նախարար, Ֆրանսիայի հանդեպ տածվող երախտագիտության այն խորը զգացմունքների և ոգևորության մասին, որն ամբողջ հայ ժողովրդի շրջանում առաջ է բերել Մուսա լեռան գաղթականների փրկությունը:

Բացի երախտագիտության և ուրախության զգացումներից, որոնք դուրս բերված բնակիչները հաղորդել են հրամանատարներին, սպաներին և իրենց ընդունած նավերի անձնակազմներին, ես ստացել եմ Պորտ-Սաիդի հայկական գաղութից մի հեռագիր, որը հետևում է.

«Պորտ-Սաիդի հայկական գաղութը հայտնում է ձեզ իր ջերմագին շնորհակալությունները և երախտագիտության խորին զգացումը՝ հայ գաղթականների փրկության համար:

Կեցցե՛ Ֆրանսիան:

Մասրաֆֆ:

Ես պետք է ավելացնեմ, որ Կահիրեի հայ արքեպիսկոպոսը¹, Եզիպտոսի հայկական հարստ գաղութի երկու սեռի մի քանի ամենագորեղ և երևելի անձանց ուղեկցությամբ, երեկ Պորտ-Սաիդ եկավ մեկ նպատակով՝ Հանրապետության կառավարությանը և ֆրանսիական Ռազմածովային նախարարությանն ուղղված իր շնորհակալություններն ինձ հայտնելու համար:

Հակիրճ ելույթում արքեպիսկոպոսն արտահայտեց բոլոր հայերի խորին երախտագիտությունն այն մեծ բարերարության առթիվ, որը նրանց էին մատուցել ֆրանսիացի նավաստիները: Նա ավելացրեց, որ ինքը դրանից չի զարմացել, քանի որ տեղյակ է մարդասիրության և արդարամտության այն գաղափարներին, որոնք Ֆրանսիան բոլոր ժամանակներում տարածել է ամբողջ աշխարհում: Նա եզրափակեց, ինձ խնդրելով Եզիպտոսի հայկական գաղութի ամենաջերմագին շնորհակալությունները հղել Հանրապետության պ. նախագահին:

Ես նրան պատասխանեցի, որ խիստ զգացված եմ թե՛ անձամբ նրա, թե՛ երևելի հայերի վարքագծից և այն շնորհակալություններից, որոնք նա բարեհաճեց հղել Հանրապետության նախագահին և Ռազմածովային նախարարությանը: Ի դեպ, այս շնորհակալությունները չա-

1 Ն խորին սրբազնություն } ն Թորգոմ Քուշադյանը:

փազանցնելու հարկը չկար. քանզի Ֆրանսիացի նավաստիները տվյալ պարագայում հնազանդվել են Ֆրանսիայի և Ռ-ազմածովային նախարարության հնագույն ավանդույթներին. քանզի Արևելքի քրիստոնյաների անառարկելի հովանավոր Ֆրանսիան, հսնուն վերջին շորս դարերի ընթացքում քազմիցս վերանայված հանդիսավոր պայմանագրերի, պարտավոր էր կատարել մարդասիրական այս վեհ պարտականությունը. և քանզի մեր նավաստիները մեկ անգամ չէ, որ հետևել են իրենց մախկին ավանդույթներին և փրկել ճնշված ժողովուրդներին:

Ես անկեղծորեն համոզված եմ, որ այս մարդասիրական պարտականության կատարումն ամբողջի վրա կգործի բարոյական այնպիսի տպավորություն, որը կդասվի ամենանշանակալիցների թվում և հսկայական նեղգործություն կունենա Սիլիայում մեր ազդեցության և նույնիսկ ԼԼանտի ժողովրդի վրա: «Մորատտամում»՝ այդ խիստ անգումեա ուղղվածություն ունեցող թերթում տպագրված և կյից ներկայացվող հողվածի քարզմանությունը¹, թվում է. թե դրա փայլուն ապացույցն է:

Գործողություններին վերաբերող զեկուցագրում, որը ես ձեզ կփոխանցեմ հնարավորին չափ ամենասեղմ ժամկետում, կջանամ քննարկել քաղաքական բնույթի հարցեր, որոնք բխում են այս գործից և Սիլիայի մյուս մասում դրանց ունեցած արձագանքից:

Իմ պարտականությունների մեջ է մտնում, այս պահից ի վեր, ձեր ուշադրությունը հրավիրել մեր հրամանատարների, սպաների և անձնակազմի հիանալի վարքագծի վրա. գաղթականների՝ մասնավորապես, բարդ պայմաններում տեղի ունեցող դուրս բերման ընթացքում, հստկապես դրա սկզբնական շրջանում:

(A.C.M., SS Ed 125).

86

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գեկասեին

Հ. թիվ 2103:

Լոնդոն, 18-ր սեպտեմբերի 1915 թ., ժ. 12.15-ին:

Պատասխան ձեր թիվ 2909 հեռագրին²:

Նախքան Պեսարգրադում արվելիք քայլին միանալուն վերաբերող խնդրանքով սրբ Էդուարդ Գ-րեյին դիմելը՝ կապված Մուսա լեռան հայերի հայրենադարձության հետ Կովկաս. ես ցանկանում եմ խմանալ, թե ոուսական կառավարությունն ի՞նչ ճանապարհով է ի վիճակի իրականացնել նրանց հայրենադարձությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*. tome 890, f. 14).

¹ Արտատպված չէ:

² Սեպտեմբերի 17-ի. տես վերը թիվ 82 փաստաթուղթը:

**Թունիսում դիվանագիտական գլխավոր ներկայացուցիչ պ. Ալապտիտը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Հ. թիվ 217:

Թունիս, 18-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 18.45-ին:
(Ստացվել է ժ. 20-ին):

Թունիսի կառավարությունը խորհրդակցելուց հետո գտնում է, որ մահմեդականների և հայերի միջև թշնամանքն այստեղ այնպիսին կլինի, որ անհրաժեշտություն կծառանա հայերին պաշտպանելու զինված ուժերի օգնությամբ: Վտանգավոր կլինի այս բարդ իրավիճակը հավելել այն բարդություններին, որոնք բխում են հարավում տեղի ունեցած վերջին իրադարձություններից:

Թվում է, թե հատկապես Կորսիկայում կամ Ֆրանսիայի հարավում է, որ այս մարդիկ կարող են ընդգրկվել իրենց ֆիզիկական բույլ տոկոմությանը համապատասխանող աշխատանքներում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 15).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Հ. թիվ 224:

Կահիրե, 19-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 11.45-ին:
(Ստացվել է սեպտեմբերի 20-ին, ժ. 0.05-ին):

Պատասխան ձեր ...¹ հեռագրին:

Մուսա լեռան ապստամբների ղեկավարը, որին կանչել էր զեներալ Մաքսուելլը, ժամանել է Կահիրե: Ես դժբախտաբար գտնվում էի Ալեքսանդրիայում, ուր գործեր ունեի: Նա տեսել է լեյտենանտ դը Սեն-Քոնենտինին, որին ասել է, որ Պորտ-Սաիզ գաղթած և զենքեր կրելու ունակ՝ 15-ից 60 տարեկան հայերի թիվը հասնում է 869-ի: Նրանցից 500-ը կարող են դառնալ լավ զինվորներ:

Նա ավելացրել է, որ զեներալ Մաքսուելլն իրեն առաջարկել է մնալ Եգիպտոսում՝ իր 500 լնկերներից և 500 հայ կամավորներից, որոնց հարկ էր հավաքագրել տեղում, կազմավորելու հայկական լեզեոն, ուրը կարող էր...² Ամերիկայի հայերի օգնությամբ և օգտագործվել թուրքական ափերի մոտ, մասնավորապես, Ալեքսանդրետի շրջանում՝ հարձակումներ և ասպա-

¹ Վերձանման բացրողում:

² Վերձանման բացրողում:

տակություններ կազմակերպելու համար: Հայ առաջնորդն ասել է, որ բավական կաշկանդվել է այդ առաջարկությունների պատճառով, որովհետև շատ ավելի կցանկանար մարտնչել մեզ հետ միասին:

Ես ինքս վաղը չեմ մյուս օրը գնալու եմ Պորտ-Սաիդ, որպեսզի տեղյակ լինեմ, քե ինչպե՛ս եմ տեղավորել գաղթականներին և հավաքեմ ձեր պահանջած տեղեկությունները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 16).

89

Մարոկկոյում դիվանագիտական գլխավոր գործակալ, գեներալ Լիոտեյը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 3632:

Ռաբատ, 20-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 19.30-ին:
(*Ստացվել է* սեպտեմբերի 21-ին, ժ. 1.45-ին):

Ես պատասխանում եմ սեպտեմբերի 17-ի ձեր թիվ 264 հեռագրին¹, որը վերաբերում է օսմանյան կոտորածներից փրկված և ներկայումս Պորտ-Սաիդ գաղթած Սլովիայի հիմն գաղ զարի հայերին:

Դժբախտաբար, ինձ անհնար է թվում այս գաղթականների մի մասին Մարոկկոյում ընդունելը: Սոսկ նրանց ներկայությունը խորը տպավորություն կգործի այստեղ բնիկների վրա, որոնք, արտասահմանյան քարոզչության ինտենսիվով, խիստ գրգռված են և չեն զլանա դրանում տեսնել Արևելքում կրած մեր անհաջողության և յաշնակիցների բանակների նկատմամբ բոլորքերի տարած հաղթանակի որոշակի ապացույցը:

Այսպիսով, ես ջգովում եմ, որ հստակորեն արտահայտում եմ այնպիսի կարծիք, ըստ որի նրանք այստեղ հյուրընկալության չեն արժանանա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 17).

90

Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին

Հ. թիվ 137:

Փարիզ, 20-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 20.45-ին:

Ես հիմնվում եմ ձեր թիվ 224 հեռագրի² վրա:

¹ Կերն արտատպված է թիվ 80 փաստաթղթի հավելվածում:

² Սեպտեմբերի 19-ի. տես վերը թիվ 88 փաստաթուղթը:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք քննության առնեք. քե որբանո՞վ է հիմնավոր-ված դեպի Ալեքսանդրետ ասպատակություններ կազմակերպելու նախագիծը, որը հայ ասպտամբների դեկավարի կողմից օգտագործման համար տրվել է զեներալ Մաքսուելին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 18).

91

**Արտաքին գործերի նախարար պ. Դեկասեն՝
Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնին**

Հ. քիվ 2976:

Փարիզ, 21-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 21.45-ին:

Ես պատասխանում եմ ձեր քիվ 2103 հեռագրին¹:

Եթե ռուսական կառավարությունը կարողանա ընդունել հայ գաղթականներին, հնարավոր կլինի, անկասկած, կազմակերպել նրանց անցումը Սերբիայի և Ռումինիայի տարածքով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 20).

92

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դեկասենին**

Հ. քիվ 226:

Կահիրե, 22-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 4.25-ին:

(*Ստուգվել է* ժ. 8.10-ին):

Երևել առավոտյան ես այցելեցի Մուսա լեռան հայերին հատկացված ճամբարը Պորտ-Սաիդում, որն ասիական ափին է, կարամտինի մեջ, քրիտանական զինվորական իշխանությունների հատկացրած վրանների ներքո: Հենց այդ իշխանություններն են, որ նրանց կերակրում են. ճամբարի հրամանատարն անգլիացի մայոր է: Մեր ծովային իշխանություններն այդ հարցով այլևս չեն զբաղվում:

Նրանց ընդհանուր քիվը հասնում է 4083-ի, որոնցից՝ 912-ը տղամարդիկ են, 1296-ը՝ կանայք, 697-ը՝ տղաներ, 547-ը՝ աղջիկներ, 631-ը՝ փոքրահասակ երեխաներ: Տղամարդկանցից 500-ը ամրակազմ են և մարտունակ: 300-ն ունակ են աշխատելու, մյուսները՝ ծերունիներ են: 300 մարտունակ տղամարդիկ և հավասար թվով կանայք կարող են օգտագործվել մե-

¹ Սեպտեմբերի 18-ի. տես վերջ քիվ 86 փաստաթուղթը:

տաքսագործության համար և փայտե ու ոսկրե սամբրի, գդալների արտադրության ոլորտում: Երկտասարդ աղջիկները կարող են օգնել այս աշխատանքներին կամ օգտագործվել ծխախոտի մշակման ասպարեզում և կամ տեղավորվել ծխախոտի որոշ հայկական մանուֆակտուրաներում:

Հայ մարտիկներն ավելի քան 40 օր դիմադրել են թուրքերին, մինչ այն պահը, երբ մեր հստակապետից մեկը եկել է նրանց փրկելու: Շարունակելու համար նրանք զենքեր և ռազմամթերքներ էին ցանկանում: Քանի որ ծովակալը չի կարողացել նրանց ապահովել պահանջով, նրանք համաձայնվել են նավ բարձրանալ: Ես տեսել եմ և հարցաքննել նրանց ղեկավարներից շատերին: Բոլորի խնդրանքը հանգում է զինվելուն և մեկնելուն՝ թուրքերից վրեժ լուծելու համար:

(Շարունակելի):

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 21).

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Հ. թիվ 227:

Կահիրե, 22-րդ սեպտեմբերի 1915 թ., ժ. 4.25-ին:
(Ստացվել է ժ. 8.10-ին):

Նախորդ համարի շարունակությունը:

Գլխավոր առաջնորդը խելացի է և գործունյա: Նա ինձ հավաստել է, որ գեներալ Մաքսուելը իրեն ընդունելուց հետո, երաշխավորել է իրեն Ինքնիջենս Օֆիսի սպաների շրջանում: Վերջիններս նրա հետ խոսել են Ալեքսանդրետի շրջանում կայանալիք մի գործողության մասին. դեսանտ ավի դուրս բերել Թուփուսկ-Կալեի և Օրոնտի գետաբերանի միջև ու քանդել Բադչեի թունելը, որը նախատեսված է Հալեայի տարածաշրջանն Ադանայի տարածաշրջանի հետ հաղորդակցելու համար, ինչպես նաև ավերել այն էլեկտրական գործարանները, որոնք կիլիմնադրվեն այս տեղանքում:

Պորտ-Սալոյի անգլիացի հրամանատարը¹ ևս ինքնաբերաբար խոսել է ինձ հետ այդ գործողության մասին. որդ պետք է իրագործեն հայերը:

Բացի դրանից, նկատի ունենալով այն գալափարը, որը վարդոց ի վեր ունի գեներալ Մաքսուելը և համաձայն որի, Ալեքսանդրետի ավի կողմից ծավալված գործողությունը Եգիպտոսի անվտանգությունն ապահովող լավագույն միջոցը կլինի, (կասկածի) ենթակա չէ, որ այս նախագծի իրականացումն ուղիմորեն քննարկել է անգլիական շտաբը:

Պորտ-Սալոյի հրամանատարը, որը գեներալ Մաքսուելի վստահելի անձն է, ինձ ասել է, ի դեպ, որ ինքը պատրաստվում է ուսումնասիրել այդ գործողության նախագիծը, բայց որ մինչ ծովակալ Դարբիոյի հետ գրուցելը, որը բացակայում է և պետք է Պորտ-Սալո վերադառնա սեպտեմբերի 28-ին, գեներալին տեղյակ չի պահի այդ մասին:

¹ Փոխգնդապետ Էլզուրը:

(Շարունակելի):

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 22).

94

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝
Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին**

Հ. քիվ 228:

Կահիրե, 22-ր սեպտեմբերի 1915 թ., ժ. 4.25-ին:
(*Ստացվել է ժ. 8-ին*):

Նախորդ համարի շարունակությունը:

Հայերի առաջնորդն ինձ ասաց, որ ամենքի ցանկությունը հանգում է ֆրանսիացիների հետ համատեղ գործելուն, բայց երե անգլիացիներն իրենց օգնություն առաջարկեն, հատկացնեն զենք, ռազմամթերքներ և սպաներ, իրենք չեն կարողանա նրանց մերժել: Առաջնորդն ինձ հետ նույնիսկ խորհրդակցեց այն մասին, թե ինքն ինչպե՞ս պատասխանի անհողորդի հարցումին: Ես նրան ասացի, որ ֆրանսիական և անգլիական կառավարությունները համաձայնության են հանգում հայերի հարցում և նրան խորհուրդ տվեցի լինել համբերատար ու սպասել կայացվող որոշմանը:

Այս հայերը լեռնային երկրից են: Նրանք անշուշտ զերազանց պարտիզաններ են: Ես կասկածում եմ, որ նրանք կարող են կանոնավոր բանակի որակյալ զինվորներ լինել: Ունենալով զենքեր և իրենց դեկավարող սպաներ, նրանք կարող են համարձակ հարձակումների դիմել և ոտքի հանել հայ բնակչությանը: Այն, ինչից ես հարկ եմ համարում, մասնավորապես, խուսափել և հենց հանուն դրա կգործադրեն ողջ ուժերս, սպասելով ձեր հրահանգներին, հանգում է նրան, որ հարկ չկա տպավորություն թողնել, թե մենք անգլիական զինվորական իշխանությունների հանդեպ բշտամանք ենք տաժում այս հայ մարտիկներին, առանց որևէ մեկի կարծիքը իշխելի առնելու. օգտագործելու հարցում: Եթե այդ օգտագործումը դիտվում է նպատակահարմար, հարկ է, որ այն քիսի համաձայնությունից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 23).

95

**Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝
Արտաքին գործերի նախարար պ. Գելկասեին**

Հ. քիվ 2140:

Լոնդոն, [անթվակիր]¹:

¹ Առանց ծածկագրի:

Պատասխան քիվ 2976 հեռագրին¹:

Ես ինձ բույ էմ տալիս ձեր ուշադրությունը կլավիրել այն բանի վրա. որ այս պահին անհնար է մտածել 5000 հայերի՝ Սերբիայով և Ռումինիայով տեղափոխելու մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 24).

96

**Փարիզի հայկական կոմիտեի քաբտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Արտաքին գործերի նախարարությունում
Ասիայի փոխնօրեն պ. Ժան Գուլին**

Ն:

Ռոյան, 22-ր սեպտեմբերի 1915 թ.:

Ես հենց նոր ստացա ձեր նամակը: Դրա համար ես ձեզ շնորհակալ եմ: Դ-ա, իրոք որ, փրկություն է: Թող օրհնվի ֆրանսիական Ռազմածովային նախարարությունը:

Ես անմիջապես գրել եմ Պոլոս փաշային, խնդրելով նրան հեռագրով դիմել եգիպտական կառավարությանը, որը, հավանաբար, կարեկցաբար կընդունի այս դժբախտ «մազապուրճներին»: Այդ դեպքում Եգիպտոսի հայկական գաղութները կհոգան հրսնց ծախսերը մինչ նոր կարգի հաստատումը, այն է՝ մինչ Կոստանդնուպոլսի և Կիլիկիայի գրավումը: Որքան եմ ես ցանկանում, որ ֆրանսիական կամ դաշնակիցների գործերի ուղարկումը Կիլիկիա համընկնի այն վճռական հարձակմանը, որի պետք է ուղղված լինի Կոստանդնուպոլսի դեմ: Ոչ միայն Եգիպտոսի գաղութականները, կկարողանան վերադառնալ, այլ հավանաբար Ֆրանսիան և նրա դաշնակիցներն այնքան կգտնեն Միջագետք տեղահանված՝ ամենասարսափելի ճակատագրի արժանացած հայերին Կիլիկիա ուղարկելու միջոցը:

Ես կվերադառնամ շաբաթ օրը և իմ վերադարձի պահից, Պոլոս փաշային տեսնելուց հետո, ձեզ կխնդրեմ հասկացնել ինձ մի բանի յուպե, որպեսզի զբաղեցնեմ այս հարցերով:

Եթե եգիպտական կառավարությունը բացարձակապես ի վիճակի չէ ընդունելու գաղթականներին, մենք կգտնենք մեկ այլ լուծում:

Ինչ վերաբերում է չեզոքներին, ապա նրանք, հավանաբար, բոլորը չէ. որ արժանի են այն հանդիմանությանը. որը դուք ուղղում եք նրանց, բայց մեծ մասը, իրոք որ, դրան արժանի է: Շվեյցարիան կարող է և շատ կցանկանա, ես հույս եմ տածում (ելնելով «Ժուրնալ դը Ժենևում» տպագրված մի հոդվածից, որը ես հենց նոր ընթերցեցի), ինչ-որ բան անել նույնիսկ այն ուղիով, որը դուք կմատնանշեք: Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգներին, ապա այնտեղ գտնվող իմ հայրենակիցներն արել են և անում են հնարավոր ամեն ինչ, որպեսզի կառավարությունը գործի ավելի եռանդուն: Ես ինքս գրել եմ նախագահ Վիլսոնին: Բայց, այդուհանդերձ, ես կարծում եմ, որ պ. Գելկասսի մեկ խոսքը Միացյալ Նահանգների դեսպանին, ավելի մեծ ազդեցություն կունենա, քան մեր բոլոր քայլերը:

¹ Սեպտեմբերի 21-ի. տես վերը քիվ 91 փաստաթուղթը:

97

**Ռ-ազմական նախարար պ. Ալեքսանդր Միլլերանը՝
Եզիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն
գործուղված լեյտենանտ Դոյնել դը Սեմ-Քուեհուիմին**

Հ:

Փարիզ, 22-ր սեպտեմբերի 1915 թ., ժ. 17.30-ին:

Ի պատասխան սեպտեմբերի 18-ի ձեր հեռագրի¹:

Դ-արդյունելում հունական անկանոն գործերի միավորումների ուժբախտ փորձից հետո, ես նպատակահարմար չեմ համարում ջանալու ձեռնամուխ լինել համանման փորձի իրականացմանը հսկայի մասնակցությամբ, որոնք բվառ է. բե ի վիճակի չեն հասնելու շոշափելի արդյունքների. էթե նրանց չօժանդակի կանոնավոր բանակի դեասնուային կորպուսը: Մյուս կողմից, քանի որ գեներալ Համիլտոնը հակադրվել էր այն բանին, որ մեր հունական անկանոն գործերն ասիական ափում հարձակումներ գործեն ավելի վաղ, քան Սուվայի մոտ դեսանտի ափ դուրս բերումը, հավանական է, որ գեներալ Մաքսուելլը համանման գործողություն չկազմակերպի բուրբակյան ափում՝ առանց այդ մասին նախապես գեկուցելու Դ-արդյունելի գլխավոր հրամանատարին, որն իր համաձայնությամբ չի խլիզախի բացահայտել մեր մտադրությունները:

Այսպիսով, հայ ապստամբները ֆրանսիական բանակում կարող են ծառայել միայն պատերազմի հարատևության ընթացքում պարտավորություն ստանձնելու հիման վրա. Արտասահմանյան լեգեոնի հիմունքներով, Դ-արդյունելի արտասահմանյան գումարտակում ծառայելու համար, այն պայմանով, որ լինեն օսմանյան հպատակներ և համատեղեն պիտանի լինելու ամենաբարձր պայմանները:

Եթե այդպիսիք ներկայանան այս պայմաններով ծառայելու, Ալեքսանդրիայում գտնվող գործերի հրամանատարը մինչ նրանց պարտավորություններին իր համաձայնությունը տալու հարկ կունենա ստանալ գեներալ Բելուի հրահանգները:

(A.M.G., 7 N 2150).

98

**Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. ժյուստերանը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Ճ. քիվ 790:

Վաշինգտոն, 22-ր սեպտեմբերի 1915 թ.*:

¹ Չի հայտնաբերվել:

* Նախարարի ձեռագիր ծանուցադրությունը. «Հաղորդեք պ. ժյուստերանին այն ամենը, ինչ մենք ունենք հայերի վերաբերյալ, մասնավորապես, պ. Դեֆրանսի գեկուցազրնրը Մոսսս լեռան հայերի մասին»:

(Ստացել են Կար. Խույտենքերի 6-ին.
Քաղ. վարչ. Խույտենքերի 7-ին):

Ես հենց նոր ստացա Հայաստանի պաշտպանության ամերիկյան ազգային միության՝ նամակը, որը ծանուցում է խնդրո առարկա երկրում քույրերի ի կատար ածած կողոպուտին. կոտորածներին և տեղահանությանը վերաբերող փաստեր: Միացյալ Նահանգների կտուավարությանը մի կոչ է արվել, որպեսզի տուգորվելով մարդասիրական զգացումներով, նա Օսմանյան Դռանը հղի կշտամբանքներ, որոնց արժանի են նման դաժան գործությունները: Հայտնվել է այնպիսի կարծիք, ըստ որի Ֆրանսիայի դեսպանությունը և, հավանաբար, դաշնակից այլ երկրների դեսպանություններն ամերիկյան ժողովրդի և կառավարության առջև իրենց գործողությունը ծավալում են միևնույն ոգով:

Ես մտադիր եմ բոլոր հնարավոր միջոցներով Հայաստանի ողբալի վիճակի վրա հյավիրել, հենց որ դրա առիթը ներկայանա, պետական քարտուղարի ուշադրությունը, որը ներկայումս բացակայում է:

Սպասելով, ես սույն նամակին եմ կցում, այն հաղորդագրության պատճենը, որը ստացել եմ միևնույն ժամանակ, ինչ տպագիր ծանուցագրի բնագիրը, որը հավելվում է դրան²:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 887, ff. 197-197 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ամերիկայի Հայկական ազգային պաշտպանության միությունը՝ Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուսսերանին

Բոստոն, [անթվակիր]:

Թանկագին սրբ,

Մենք մեր պարտքն ենք համարում ձեր մանրագնին քննարկմանը կից ներկայացնել Նորին սրբազնություն ամենայն հայոց կաթողիկոսի կամ արքեպիսկոպոսի զեկուցագիրը, որը վերաբերում է հայ ժողովրդի վիճակին Թուրքիայի տարածքում: Պատմական ազգության բնաջնջումն Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում անողորմաբար իրականացվում է էնվեր բեյի և Երիտասարդ Թուրքիա [sic] կուսակցության մյուս պարագլուխների ղեկավարությամբ, որոնք Կոստանդնուպոլսում իշխանության գլուխ են կանգնած և որոյեզրել են կողոպուտի, տեղահանությունների, զանգվածային մահապատիժների ու կոտորածների կազմակերպված մի համակարգ: Ջեկուցագիրը վկայում է այդ մասին:

Միացյալ Նահանգները միակ չեզոք մեծ տերությունն է, որը կարող է գործադրել իր մեծ ազդեցությունը սանձառարելու այն անձանց արյունոտ գործունեությունը, ովքեր իրենց մահնինների հողում գտնվող մի ողջ ժողովրդի բնաջնջմանը վերաբերող վճիռներ են կայացրել: Մենք կարծում ենք, որ եթե ազատատենչ երկիրն այս հանգամանքներում իր ձայնը

1 Հայաստանի պաշտպանության ամերիկյան ազգային միության կողմից համանման բովանդակության նամակներ են հղվել պ[արոնայ]ք Պոստակարին, Վիվիանուն և Սիլվերանին:

2 Արտատպված չէ:

բարձրացնի այնպիսի ազդեցիկ ձևով, որ նրա գործունեությունն ավելի արդյունավետ դառնա, ապա այդ համահունչ կլինի նրա ազնվաբարո ավանդույթների հետ: Մենք համարձակվում ենք հուսալ և համոզված ենք, որ դուք ձեր ազդեցության շրջանակներում կանեք անհրաժեշտն ու ձեր տրամադրության ներքո եղած յուրաքանչյուր միջոցով կհզույցանեք մեր նշանավոր նախագահի և Պետական Դեպարտամենտի ձեռքերը՝ որոշակի շոշափելի արդյունքների հասնելու նպատակով, քանի որ խնդիրը խիստ հրատապ է: Համաձայն գեկուցաբրի տվյալների, հայերը վերջին շնչումն են, և եթե դուք կարողանաք ինչ-որ բան անել մի ուրջ ազգության բնաջնջումը կանխելու համար, ապա այն կընդունվի երախտագիտությամբ: Մեր նախագահը և Պետական Դեպարտամենտն իրավիճակն արդեն ուշադրության կենտրոնում են պահում և բացարձակապես որևէ ցանկություն չկա նրանց խոչընդոտելու որևէ քայլում, որի նրանք կարող են նպատակահարմար գտնել ձեռնարկելու: Այն ամենը, ինչում մենք փորձում ենք ձեզ համոզել, հանգում է այն բանին, որ նրանց ուղղված ձեր դիմումներով՝ մամուլի միջոցով և հասարակական ժողովներում, Կոնգրեսում և դրանից դուրս, դուք կարող եք արագացնել երկար տառապած ու նահատակված ժողովրդի փրկության օրվա գալուստը: Մենք մնում ենք, բանկազին սյր,

ձեզ շատ հարգող

(Ստորագրել են՝) Նախագահ՝ Մ. Սևակալի
Քարտուղար՝ Ա. Նազար
Գամձապահ՝ Կ. Մ. Կիրակոսյան

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 198-198 v).

99

**2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ
էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Դարրինոն՝
Ռազմածովային նախարար պ. Վիկտոր Օգանյորին**

Մ. թիվ 293: Գաղտնի:

«Ժողեգյուլիբերիլի» տախտակամածից,
բաց ծովում, 22-ը սեպտեմբերի 1915 թ.:
(Ստացել են Կար. հոկտեմբերի 5-ին,
Գ. {խավոր} 2 {տաբլի} 3-րդ ենթաբաժինը
հոկտեմբերի 8-ին):

Ես պատյով ունեն մտորև ձեզ հաշվետվություն ներկայացնել այն գործողությունների մասին, որոնք 3-րդ էսկադրայի հրամանավերն իրականացրել են սեպտեմբերի 5-ից 13-ը՝ Մուսա լեռան հայ բնակչությանը դուրս բերելու ուղղությամբ:

Մուսա լեռան լեռնային զանգվածը գտնվում է Ռաս էլ-Մյունայի գագաթի մոտակայքում (որն Անտիոքի ծովածոցի հյուսիսային գագաթն է), Օլունտի գետաբերանի հյուսիսում: Այն գրեթե բացառապես բնակեցված է, ինչպես և Հարավային Կասսիուս սարի զանգվածը, հայ բնակիչներով, որոնք Փոքր Հայք թագավորության վերջին ճյուղավորումներն էին:

Դուրս բերված բնակիչները, որոնց թիվը փոքր-ինչ գերազանցում է 4000-ը, հետևյալ ութ գյուղերից են՝ Վակիֆ, Ռագե, Յուրուն-Ռուր [sic]¹, Քարուսի, Կարակլի, Հաջի Հաբաբեն [sic]², Բիթիաս, Յուրյուզ-Քյուրի, որոնք զբաղեցնում են մոտավորապես 15 քառակուսի կիլոմետրի հասնող մակերես՝

Հայերի ապստամբական շարժումը ծնունդ է առել օսմանյան իշխանությունների կիրառած բազմաթիվ կեղեքումների հետևանքով, որոնք որոշ ժամանակից ի վեր իրենց զգալ էին տալիս: Եթե պատերազմի սկզբում քուրքերը հայերին համեմատաբար հանգիստ վիճակում էին բողել, ապա նրանք նույն ձևով չեն վարվել վերջին վեց ամիսների ընթացքում:

Նախ և առաջ՝ պահանջվել են նշանակալից կարգախմբեր խրամատների կառուցման համար, այնուհետև՝ զինվորական իշխանությունները, առաջին անգամ, զինվորական ծառայությունից խուսափելու համար բոլոր մարտունակ տղամարդկանցից պահանջել են քուրքական երկու լիվրի հասնող գլխահարկ: Մյ փոքր անց, այս հարկին հաջորդել է երկրորդ՝ քուրքական 5 լիվրի սահմաններում: Այս ծայրահեղ հարկերի գանձումից կիսամանակացած բնակչությունն ամբողջությամբ սնանկացել է ջրիմերի, էշերի և անասունների հետևողականորեն իրականացվող բռնագրավումների արդյունքում, որոնք, ինչպես, երբևէ չեն փոխհատուցվել: Օգտվելով այս իրավիճակից, քուրքերը, շնայած իրենց խստամտներին, բռնությամբ զինակոչել են որոշ քվով հայերի:

Օգոստոսի սկզբին, Բիթիասի բնակիչները, որտեղից քուրքերն առևանգել էին զրեթե 60 կանանց և երիտասարդ աղջիկների, հեռացան դեպի լեռը: Նույն ժամանակաշրջանում Մուսա լեռան բնակիչները հրաման ստացան վաճառելու իրենց ամբողջ ունեցվածքն ու անասունները և համախմբվելու՝ դեպի Դամասկոսի կողմերը գնալու համար: Անտիոքի կայմակամին հղված նրանց բողբոքների առթիվ, վերջինս պատասխանել է, որ այդ անբեկանելի հրամանը տվել է Ջեմալ փաշան:

Իրականում, Թրակիայից և Մակեդոնիայից սերող 900 քուրքական ընտանիքներ մի քանի շաբաթից ի վեր ժամանել էին Սուեդիե և օսմանյան իշխանությունները ծրագրում էին նրանց տեղափոխել հայերին պատկանող գյուղերում ու տիրույթներում: Չվստահելով քուրքերի առաջարկություններին և իրավամբ երկյուղելով մինչ Դամասկոս հասնելու կոտորվելուց, բոլոր մարտունակ հայերը զինվեցին և հեռացան դեպի լեռը, տանելով իրենց հետ ձերուցիներին, կանանց, երեխաներին ու իրենց հոտերը:

Սկզբում կռվող հայերն իրենց շարքերում ունեին մոտավորապես 700 մարտունակ, ամբարակազմ տղամարդ: Նրանք ունեին 140 հզոր հրացան, քուրքերից զավթված 8 ատրճանակ և մոտավորապես 300 որսորդական հրացան, որոնց մեծ մասը գտնվում էր վատ վիճակում: Նրանք իրենք էին պատրաստում իրենց փամփուշտները սև վառույցից, որը պատերազմի ծագման պահից ի վեր, համբերատարությամբ կուտակել էին:

Հայերի դեմ ուղարկված քուրքական կանոնավոր բանակի գործերի ունեցած հզորությամբ վերաբերող՝ քարզմանիչ սարսերի ի մի բերած վկայությունները խիստ հակասական են: Հաշվի առնելով չափազանցությունները, կարելի է ընդունել, որ կանոնավոր բանակի քուրք զինվորների թիվը երբևէ չի գերազանցել հիվազ կամ վեց հարյուրը: Այս զինվորները զինված էին մեծ մասամբ մարդեր տեսակի հրացաններով, իսկ մի քանիսն ունեին հզոր հրացաններ:

Օսմանյան զորքերին միացել էին Հալեպի և Բեյլանի շրջաններում հավաքագրված բազմաթիվ մոլեռանդ մահմեդականներ, որոնք գայթակղվել էին կողոպուտի խայծով, և որոնց հավաստիացրել էին, թե հայերը որևէ դիմադրություն չեն ցուցաբերի: Անկանոն բանակի այս

1 Իմա՝ Յոլուն-Օլուր:

2 Իմա՝ Հաջի-Հաբիթի:

զինվորներն, ընդհանուր առմամբ, զինված էին միայն մահակներով:

Սկսած օգոստոսի 7-ից, իսայերը ստիպված են եղել ետ մղել բազմաթիվ գրուհներ, որոնց ընթացքում թե՛ մեկ և թե՛ մյուս կողմերը դիմել են վայրագությունների և ոչոնց արժանահավատության մասին են վկայում «Գ՛ւսարեի» հրամանատարի օրագրում ի մի բերված՝ մի հայ քահանային վերաբերող քաղվածքները:

Ապստամբները զբաղեցնում էին Մուսա լեռան շրջայն մի ճասը և մի հովտի վրայով կարողացել էին անարգել հաղորդակցություն պահպանել ծովի հետ: Բայց նրանք ամբողջությամբ սեղծված էին ցամաքի կողմից: Նրանց ռազմամթերքները և սննդամթերքներն արագուբին սպառվում էին:

Նման իրադրության պայմաններում էր, որ նրանք, սեպտեմբերի 5-ին, նկատեցին Սյւրիայի հյուսիսային ափի մոտակայքում նավարկող «Գյուլչենիս» և նրանց հաջողվեց հրավիրել այդ նավի հրամանատարի ուշադրությունը, որն անմիջապես հաղորդակցության մեջ մտավ նրանց հետ:

3-րդ էսկադրայի գործողություններին վերաբերող սեպտեմբերի 11-ի թիվ 261 նամակով, անձամբ պարոն փոխծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեն ձեզ հաշվետվություն է ներկայացրել սկիզբ առած առաջին բանակցությունների մասին: Այստեղ ես միայն ամփոփում եմ խնդրո առարկա նամակի բովանդակությունը, խնդրելով ձեզ, անհրաժեշտության դեպքում, բարեհաճել անդրադառնալու դրան:

Սեպտեմբերի 5-ին, կեսօրին, «Գյուլչենի» հրամանատարը կապ է հաստատում երիտասարդ առաջնորդ Պիեռ Դիմիաքյանի հետ, որը նրան իրազեկ է դարձնում ստեղծված բարդ, եթե ոչ հուսակտուր կացությանը, որում գտնվում էին ինքն ու իր գործընկերները: Ճանապարհորդության ընթացքում գլոռի է ենթարկվել մի նավակ, որը համառ դիմադրություն է ցուցաբերել, այնժամ, երբ «Գյուլչենը» քնդանոթի կրակոցներով ցրել է բշմամու բազմաթիվ խմբավորումները:

Սեպտեմբերի 6-ին, ռադիոգրի միջոցով գործերի ընթացքին տեղյակ դարձած «Ժաննա դ'Արկլը» տեղ է հասնում «Դեզել» հետ մեկտեղ: Դիմիաքյանը ևս մեկ անգամ ծովակալ Դարտինգ դյու Ֆուրնիեին է ներկայացնում «Գյուլչենի» հրամանատարին արդեն ներկայացված խնդրանքները. այն է՝ գրեթե 300-ի հասնող կանանց, երեխաների և ծերունիների տեղափոխում Կիպրոս, 2-ից 300 հրացանների և ռազմամթերքների, ինչպես նաև ալյուրի 100 պարկի ու աղի 50 պարկի հատկացում այն մարտիկներին, որոնք կշարունակեն պահպանել դիրքերը լեռան վրա:

Նույն օրը թիվ 1000 հեռագրով (առանց ծածկագրի թիվ 1) փոխծովակալը նախարարին հաշվետվություն է ներկայացնում ստեղծված իրադրության վերաբերյալ և նրանից հրահանգներ ստանում:

«Ծովակալ Շարմերի» սպաներից մեկի քույր տված սխալի հետևանքով, այս հեռագիրը փոխանցվել է միայն սեպտեմբերի 15-ին «Ժորբեգյուլիբերիլի» միջոցով: Որքան էլ ցավալի լինի այս սխալը, ես կարծում եմ, որ հայերի վիճակն այնպիսի օրհասական կետի էր հասել, որ ծառանում էր նրանց դուրս բերման հարցը, քանզի որևէ այլ լուծման համար անհրաժեշտ ժամանակը չէր բավականացնում:

Ամսի 7-ին «Ժաննա դ'Արկլը» մեկնում է Ֆամագուստա, որտեղ փոխծովակալը կապի մեջ է մտնում Կիպրոսի Գերագույն կոմիսարի՝ հետ: Քանի որ այս բանակցությունները որևէ արդյունքի չեն հանգեցրել, ծովակալն ինձ կոչեց բրիտանական իշխանություններին և Կալիբրեում գտնվող Ֆրանսիայի նախարարին ամենահամառ քայլերն անել, որպեսզի հայ զաղ-

քականներն ընդունվեն Եգիպտոսում: «Շահնուսի Ղարկն» ամսի 16-ին վերադառնում է Պորտ-Սաիդ, ուր հատուկ հանձնարարությամբ պատրաստվում է սեկնել ծովակարը:

Մյուս կողմից, սեպտեմբերի 17-ի թիվ 286 նամակով, ես ձեզ հաշվետվություն եմ ներկայացրել՝ գաղթականների տեղավորման ու կերակրման համար որդեգրված ժամանակավոր միջոցառումների վերաբերյալ: Սույն զեկուցագրում ես դրան չեմ անդրադառնա:

Սեպտեմբերի 10-ին Պիեռ Դիմարյանը «Դեզել» հրամանատարին անում է շատ հաստատակամ մի քայլ, հաղորդում է, որ հայ ապստամբների ունեցած ռազմաճեղքները կալող են բավականացնել միայն 48 ժամ և որ քուրքերի համար զբոխը, որը կարող է հարկադրել իրենց նահանջելու լեռնաշղթայից, պատճառ կդառնա գաղթական կանանց, երեխաների և ծերունիների կտորածին հովիտներում:

Հրամանատար Վերգոսը փոխծովակալին տեղեկացնում է իրավիճակի մասին. երաման արձակում «Գյուիչենին», որը հանդերձանքի համար պետք է վերադառնա Պորտ-Սաիդ. իր տեղում մնալու և քույրավորյուն խնդրում ավելելու Սուեյիեի զինանոցն ու հեռազրատունը, ինչպես նաև Զաբուսիի ու Կարակլիի ռազմաճեղքների երկու պահեստները՝ օսմանյան գործերին բարոյական հարված հասցնելու և նրանց առաջընթացին դիմակայելու նպատակով:

Ծովակալ Դարտինգը դուր Ֆուրնեն քույրատրում է կատարել այն ավերածությունները, որի համար խնդրանք էր ներկայացվել և «Դեզել» հրամանատարին կարգադրում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերի դուրս բերումն իրականացնելու համար, եթե հանգամանքներն այդ պարտադրեն: Նա «Դեզել» և «Ծովակալ Շարները» դնում է նրա տրամադրության տակ: Միաժամանակ կարգադրում է «Ֆուրյին» թողնել Պորտ-Սաիդը և ստեղծել Ռաս է-Մինային:

Ուրբաթ օրը երեկոյան, «Դեզեն» ոմբակոծում է և ավերում Սուեյիեի զինանոցն ու հեռազրատունը, այնժամ, երբ «Գյուիչենը» պայքեցնում է ռազմաճեղքների պահեստները: Բացի դրանից, երկու նավերն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում գաղթականներին նավ քարձրացնելու համար, սպասելով, եթե հնարավոր է, նախաբարի հրահանգներին:

Շաբաթ օրը, ամսի 11-ին, հայ առաջնորդները տեղեկացնում են, որ իրենց ռազմաճեղքները գտնվում են ապստամբ եզրին: Նրանց հետ կայացված համաձայնությունից հետո, հրամանատար Վերգոսը հայտնում է 3-րդ էսկադրայի հրամանատարին, որ իրեն քվում է, քե մարդկանց դուրս բերումը պետք է անհսպող իրականացվի և եթե բացառենք իր կողմից հակառակ հրամանի արձակումը, այդ գործողությունը կսկսվի հաջորդ օրը լույսը բացվելուն պես. նավ տեղափոխելով նախ և առաջ՝ կանանց, երեխաներին ու ծերունիներին և ավարտելով մարտունակ տղամարդկանցով:

Էսկադրայի հրամանատար փոխծովակալը կարգադրում է դուրս բերել հայ բնակիչներին և ուղարկել նրանց Պորտ-Սաիդ:

Կիրակի օրը, սեպտեմբերի 12-ին, լույսը բացվելուն պես, «Դեզեն», «Գյուիչենը», «Ծովակալ Շարները», «Ֆուրյին», և «Դեզել» իսամխմբվում են ծովեզրի առջև, որտեղ համախմբվել էին հայերը: Նավերը գաղթականներին պետք է ընդունեին հետևյալ հերթականությամբ՝ «Ֆուրյին», «Դեզել», «Գյուիչենը», «Ծովակալ Շարները» և «Դեզեն»:

«Դեզեն» և «Ծովակալ Շարները» հյուսիսում, «Գյուիչենը» և «Դեզել» հարավում կազմ ու պատրաստ էին բուրքական գործերի յուրաքանչյուր գլուխ ետ մղելու համար:

Նավերի նախօրոք պատրաստած ռաստերը, ինչպես նաև մոտորանավակներն ու քիսնավակներն իջեցվում են ջրի վրա: Պարոն լեյտենանտ Սազոնը՝ «Դեզել» տեղաշարժերը ղեկավարող սպան, նշանակվում է իբրև ծովեզրի սպա և պարտավորվում ղեկավարել նավ տեղափոխումը. իսկ յուրաքանչյուր համանավի նավակների դասակները դրվում են միջման-

ների հրամանատարության ներքո: Թարգմանիչ սպաներին հսնձնարարվում է հրամանները: հաղորդել գաղթականներին:

15 զինված մարդկանցից բազկացած դասակը՝ հրաձիգների ավազի հրամանատարությանը, ապահովում է ծովեզրի և, մասնավորապես, հովտի հսկողությունը, որի ելուստը պահպանում էին հայերը:

Վառար եղանակ է, ծովն անհանգիստ է, և երկու մետրի հասնող պայուրածն ալիքները փշուր-փշուր են լինում՝ դիպչելով ծովափին, որն անհասանելի է ամենափոքր նավակների համար: Մի սլահ վախեցան, որ գործողությունը կհետաձգվի:

Բայց հինգ նավերի նավատիրները, որոնց զերազանց դեկավարում էին սարները և ենթասպաները, ցուցաբերեցին հրաշալի եռանդ ու ամեն մի գովեստից վեր կանգնած նախանձախնդրություն: Չնայած գործողության հետ կապված դժվարություններին, նրանց հաջողվեց լաստերը կառնել ծովեզրին և անսիջական կապ հաստատել մոտ տարածության վրա խարխիս ձգած նավակների հետ:

Սկզբում այն անձանց, ովքեր մարտիկներ չէին, նավ տեղափոխելը շատ դանդաղ էր ընթանում ավերախության հետևանքով, որի վախեցնում էր կանանց և երեխաներին ու տեղիք տալիս ահռելի դժվարությունների:

Ժամը 9-ի շրջանում իրադրությունը բարելավվում է, ծովը հանդարտվում և կեսօրին, 1042 գաղթականներով, «Պոլոս» ճանապարհի է ընկնում դեպի «Պորտ-Սաիդ, ժամը 14-ին «Դ՛ստրեն» մեկնում է իր հերթին, ունենալով 459 մարդ: Մինչ գիշեր «Գյուլշենի» վրա են բարձրանում 1320 գաղթականներ: Այս նավն ամբողջ զիջելիս ընթացքում խարխիսը չբարձրացնելու հրաման է ստանում՝ հովտի և ծովափի, ինչպես նաև ցամաքում բուլած ունեցվածքի վրա հսկողությունը շարունակելու համար, որպեսզի հաջորդ օրը խուսափեն ավերող ժամանակ կորցնելուց:

Ամբողջ զիջելի «Դեզեն» և «Ճովակալ Շարները» դանդաղորեն նավարկում են մոտակայքում և այգաբացին միանում «Գյուլշենին»:

Ամսի 13-ին, շատ լավ եղանակի, բույլ ալեկոծության պայմաններում, երեք նավերը շարունակում են մարդկանց տեղափոխությունը: Նախ՝ համարվում է «Գյուլշենը» և ունենալով 1941 հայեր՝ 16 հանգույց արագությանը ճանապարհի է ընկնում դեպի «Պորտ-Սաիդ»:

Քանի որ լավ եղանակը պահպանվում էր, «Դեզեն» հրամանատարը վճռում է անմիջապես ձեռնամուխ լինել մարտիկների տեղափոխությանը, որն, ըստ էության, պետք է տեղի ունենար միայն հաջորդ օրը:

Նախօրոք զգուշացված հայ առաջնորդները ետ են տանում իրենց փոքր հենակետերը՝ մեկ լեռնագագաթից դեպի մյուսը: Ճովափին հավաքված ողջ անձնակազմը մինչև կեսօր տեղափոխվում է մասամբ «Ճովակալ Շարներին» վրա (347 մարդ), մասամբ էլ՝ «Դեզեն» (303 մարդ):

Գյուրս բերման այս վերջին փուլում, «Դեզեն» հյուսիսից և «Շարները» հարավից, հսկում են լեռնագագաթներն ու ծովեզրը, պատրաստ կրակ բաց անելու թշնամու յուրաքանչյուր ջրկատի վրա, որը կփորձեր խոչընդոտել նավ բարձրացողներին:

«Ճովակալ Շարները» Պորտ-Սաիդ է հասնում գործողության ավարտին, այնժամ, երբ «Դեզեն» շարունակում էր նավարկումը Ռաս էլ-Մինայի առջև, ուր այս գաղթականները և վիճարկները, որոնց նա ընդունել էր, ամսի 14-ին տեղափոխվում են «Աննա» ավիակրի վրա, որը 3-րդ էսկադրայի տրամադրության ներքո էր դրել բրիտանական խշխանությունը:

Ի վերջո, ավելի քան 4000 մարդուց բաղկացած հայ բնակչության դուրս բերման գործը, որոնց զերակշռող մասը բաղկացած էր կանանցից, երեխաներից և ծերունիներից, հնարա-

վոր եղավ իրականացնել, չնայած եղանակի և նավ տեղափոխումը կազմակերպող հատուկ անձնակազմի հարուցած բարդություններին, կիրակի օրը՝ ամսի 12-ին և երկուշաբթի առավոտյան՝ ամսի 13-ին: Այս հաջողությունը պայմանավորված է «Դեզեի» և «Գյուլչենի» կողմից իրականացված ռմբակոծություններով, որոնք մեծապես ազդեցին թուրքական զորքերի բարոյական վիճակի վրա, ինչպես նաև ամբողջ անձնակազմի ցուցաբերած էռանդով և հրաշալի նախանձախնդրությամբ, «Դեզեի» հրամանատարի արձակած խելացի կարգադրություններով, որն իր վրա դրված բարդ առաջադրանքի կատարման ընթացքում ի հայտ բերեց որոշումներ կայացնելու հաստատակամության ամենաբարձր հատկանիշներ:

Հետագայում ես գլխավոր հրամանատար փոխծովակալին կհանձնեմ անձնակազմի բոլոր կոչումներն ունեցող անդամների պարզատրամներին վերաբերող միջնորդագրեր, որն ինչպես ինձ է թվում, գործողությունը բույլատրում է:

Այս կարևոր միջադեպի նշանակությունը մեծապես կզերազանցի Մուսա լեռան բնակիչների սովորական դուրս բերման նշանակությամբ:

Ըստ հանգամանքների՝ նման ձևով պարտադրվելու լուծումը մարդասիրական և մասնակի միջոց է: Քաղաքական խնդիրը հիմնարար լուծման կարիք ունի: Օրակարգում, հիլավի, Սիրիայի հարցն է: Այն դուրս է մնում այս զեկուցագրի սահմաններից և արդարացնում համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը, որը հատուկ նամակի մյուս է:

(A.C.M., SS Ed 125).

160

2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Գարրիոն՝ Ռ-ազմածովային նախարար պ. Վիկտոր Օզանյորին

Ճ. քիվ 294: Գաղտնի:

«Ժողրեգյուլիբերիի» տալիտակամածից,
բաց ծովում, 22-ր սեպտեմբերի 1915 թ.:
(Մուսգել եմ Կաթ. հուկտեմբերի 5-ին,
Գ-իլավի) 2 {տաբի} 3-րդ ենթաբաժինը
հուկտեմբերի 12-ին):

Ավարտելով Մուսա լեռան հայերի դուրս բերմանը վերաբերող իմ զեկուցագիրը, ես ձեզ ասում էի. «Ըստ հանգամանքների՝ նման ձևով պարտադրվող լուծումը մարդասիրական և մասնակի միջոց է: Քաղաքական խնդիրը հիմնարար լուծման կարիք ունի»:

Սիրիայի հարցն իրականում ամբողջությամբ հյուսալարակ է հանվել շնորհիվ այս միջադեպի: Այսպիսով, ես պարտավոր եմ ձեզ տեղեկացնել այն տեսակետներին, որոնց ես հանգեղ եմ բազմաթիվ ամիսների փորձի շնորհիվ և միզուցե արդարացնելու համար այն վստահությունը, որը դուք բարեհաճեցիք դրսևորել իմ նկատմամբ ժամանակավորապես ինձ հանձնելով 3-րդ էսկադրայի հրամանատարությունը, մի բան, որի ամբողջ կարևորությունը ես զգում եմ: Մյուս կողմից, ես գտնվել եմ կարծիքների լայն փոխանակության մեջ պ. փոխ-

ծովակալ Դարտինգ որս Գորնեի հետ, շնորհիվ նրա կողմից մշտապես դրսևորվող բարյացակամության և այս իսկ պատճառով համոզված եմ, որ բնդիանույ բնույթի խորհրդածությունների իմաստը, ոչոնք հետևում են, կարժանանա նրա հավանությանը:

Հայերի դուրս բերման առաջադրած խնդրի բնդիանություն բնույթը. Մուսս լեռան հայերի հետ կապված դեպքն իր տեսակի մեջ եզակի չէ: Այն ներկայացնում է Սյրիայում տիրող բնդիանույ տրամադրվածությունների տեղական դրսևորումը:

Հավերժ կամայական և անհերքելի բուրբական բռնատիրությունից զրգոված, ինչպես նաև փոքրիշատե մոտալուտ ազատագրման հույսի բերումով ավելի՛ նվազ հնազանդ, քան առհասարակ, դարձած՝ այս երկրի միանգամայն տարբեր ժողովուրդներն իրենց իշխողների պահանջներին այն չենքարկվելու միտում են դրսևորում, որն օր-օրի արտահայտվում է էլ ավելի՛ ընդգծված ձևով: Միաժամանակ, վերջիններս՝ պատերազմի պատճառած հարստուն անհրաժեշտություններից դրվված, որի ավարտը նրանք չեն կանխատեսում, բռնի ուժի տիրապետության դարավոր ավանդույթներով հագեցած, հարկերով խեղդամահ էին անում իրենց ենթականերին, նրանցից անընդմեջ նորանոր ռեսուրսներ ստանալու համար: Մյուս կողմից, զրգոված ծածուկ դիմադրությունից, որի հաջողությունները նրանք կռահում էին, մինչ այդ կատարյալ հնազանդության մեջ եղած ժողովրդի բոլոր խավերի շրջաններում, նրանք գործում են շնչահեղձ լինող կտռավարությունների վերջին սխալը՝ դիմելով ամենաբարբարոսական բռնությանը և հավելում հուզումների պատճառները:

Հայերի կոտորածները, երևելի մահմեդականներին կախաղան բարձրացնելը, քրիստոնյաներին հասցեագրվող յուրաքանչյուր բնույթի վիշտավորանքները հատկանշական են ստեղծված՝ մասամբ երկակի կացության համար: Այս պահին Սյրիան գտնվում է այնպիսի գերլարված վիճակում, որ պայքերու համար սպասում է միայն նպաստավոր հանգամանքի:

Սույն շարադրանքը պատճառաբանող ամենավերջին գործը՝ հարցն յստ արժանվույն բնություն աններու անհրաժեշտությունն է և իրադարձություններից հանկարծակիի գալու հնարավորությունը կանխելու մտահոգությունը:

Մուսս լեռան հայերի միակ բնակիչները չեն, որոնք ձգտում են ազատագրվել թուրքական բռնություններից: Հագարավոր հայեր կան նաև Մերսինում, Դյուբ-Յուրում, Ալեքսանդրետի հարևանությամբ գտնվող լեռնային գանգվածում, ինչպես նաև Կասսիոս լեռան վրա: Ես խոսում եմ միայն ծովամերձ շրջանների մասին: Անսարիները, մասնավորապես, նրանք, ովքեր բնակվում են Տորտոսի հյուսիսում, գրեթե մեր նոր տիրույթի՝ Ռուսդի դեմ հանդիման, չեն քաջցնում օսմանյան իշխանությունների նկատմամբ ունեցած թշնամանքը, որի արձագանքը մեզ է հասել: Հազիվ թե ես կարիք ունենամ հիշատակելու լիբանանցիներին, որոնց կյանքը հասել է հուսահատության եզրին և որոնք մշտապես լարված հարաբերությունների մեջ են թուրքական կայսրության ներկայացուցիչների հետ: Հատուկ արտոնությունների վերացումն ի նպաստ ռազմական գործողությունների, նրանց շրջանում մեծ չավերելով զարկ է տվել ապստամբական ոգու վերելքին:

Անգամ դրուզներն այժմ դժվարությամբ են հանդուրժում նվաճողների խմբակցությունը, որի՝ բառի բուն իմաստով եվրոպական, միասնական հիմունքներով կառավարություն ձևավորելու անկարողությունը, ավելի քան ակնհայտ է:

Արաբ մետուախաների հարցաբնությունները, որոնցից են կազմված վերջերս բռնագրավված երկկայմ առազաստանավերի անձնակազմերը, որևէ կասկած չեն բողմում վերջապես, իրենց կողմից բացահայտորեն դրսևորվող զգացմունքների հարցում այն կառավարության նկատմամբ, որը նրանց ճնշում է ու կողոպտում: Ռոշիմ ականջը կարող է ունկնդրել ամբողջ Սյրիայից ելնող՝ բռնակալ և դաժան թուրքի դեմ ուղղված անեծքի քողարկված շու-

կը, ինչպես նաև ազատագրվելու համարձակ ցանկությունը:

Հարկ է տեսադաշտից բաց չբողնել, որ 3-րդ էսկադրայի նավերի կողմից անջելուրեն իրականացվող շրջափակումն ամենքի համար մեծուպես սաստկացրել է ստեղծված դժվարին կացությունը և շատերի թշվառությունը, որն առաջ է եկել պատերազմական իրավիճակի հետևանքով: Այսօր ծովային յուրաքանչյուր տեղաշարժ արգելված է, և նախկինում շատ աշխույժ Լևանտի սահմաններում առաջ եկած ներկայիս լճացումը, իրոք որ տուգավորիչ է:

Հանգամանքներն ինձ նույնիսկ հարկադրել են մի քանի ամիս առաջ մասնակցել Պորտ-Սալիում գումարված ոչ հասարակական բնույթ կրող մի ժողովի, որի էկլեկտիզմը, ավելի լավ, քան երկար ու ծիգ դատողությունները, ի հայտ է բերում այս պահին առկա իրավիճակը Սյրիայում: Ժողովը կայացավ մի դրուզ բժշկի մոտ, որը ծնվել է Մոքիտարայում: Ծագումով Դեբ էլ-Կամարից մարոնիտ մի քահանայից բացի, դրան մասնակցում էին տարբեր դավանանքներ ունեցող սիրիացիներ, ներառյալ Ամերիկացից և Եվրոպայից վերադարձած վտարանդիները, որոնք, ամենաճարձակ քաղաքակրթությունների հետ ունեցած շփման հետևանքով, կրում էին ժամանակակից փիլիսոփայական ուսմունքների դրոշմը:

Հոգեպես այսչափ տարուտեստկ միջավայրում, որտեղ մասնակիցների ունեցած ծագման շնորհիվ, թեև մեծ էին ուրբերգական հուշերը կապված 1860 թ. կոտորածների հետ, որոնց վերջիններիս հարազատ ծնողներն ակտիվորեն մասնակցել էին, մի համընդհանուր մտազբաղություն էր տիրում. «Սիսանական համաձայնության անհրաժեշտությունը, դարավոր ստեղծությունները մոռացության տալը՝ համուն այն նպատակի իրագործման, որին բուռն ձևով տեմչում էին բուրբը և ուրը հսնգում է թուրքական ատելի լծից ազատագրվելուն»:

Նողկալի ձևով ճնշված այս ժողովուրդների ազատագրման՝ նման միահառու իղձերի առջև, ևս մեկ անգամ ամբողջ սրությամբ ծառայում է մի խնդիր: Մուսա լեռան հայերի օրինակը վարակիչ է: Հավանաբար, միևնույն ձևով, ավի երկայնքով պարեկություն իրականացնող մեր նավերից մեկը խիզախում է թուրքերի: կողմից հետապնդվող և արյունալի կոտորածի սպառնալիքի տակ գտնվող դժբախտների մի նույն խառնամբուխի աղետալի ազդամշաններին արձագանքելու: Գրանսիացի նավաստիները չէին կարող լռակյսց մնալ կամ կույր ձևանալ, մարդասիրական ու թախանձագին նման պարտականության կատարման առջև: Դուր կարող եք վստահ լինել, որ 3-րդ էսկադրայի նավաստիներն այդպիսի սխալ չեն գործի: Նման դեպքում նրանք միայն կհետևեն, ինչպես և ես ասել եմ Կահիրեի հայ վարդապետին, մեր ժողովրդի ամենաազնվաբարո և հնագույն ավանդույթներին:

Բայց արդյոք մենք պատրաստվո՞ւմ ենք այսպիսի ձևով, փոքր խմբերով, հավաքագրել բոլոր այն բնակիչներին, որոնց՝ թուրքական կառավարության անձնական դրոշմի կողմ գրկանքները, թշվառությունը, հանցանքների սարսափը դրոշմ են հետամուտ լինել փրկության:

Մեր ռազմանավերը դրա համար բավարար չեն լինի: Ի դեպ, դեպի ո՞ր վայրը նրանց դուրս տանել: Այն դժվարությունները, որոնք անձամբ ես հաղթահարելու հարկն ունեցա Պորտ-Սալիում հարզի լուծմանը ուղասելիս, ինձ ապացուցեցին, իբրև առաջին փորձ, որ կրկին դրան անդրադարձնալու մասին մտածելն անհնար է: Գաղթականների մի նոր խմբի դեպի Եգիպտոս ուղղելու մասին խոսք չի կարող: Բայց մարդկանց՝ ռազմանավերով տեղի ունեցած դուրս բերման հետևանքով, այդքան առաջ եկած շատ մեծ բարություններն անհետելի չափերով կավելանան և նյութական տեսակետից կհանգեցնեն անկանելի կացության, եթե այն վայրը, դեպի ուր մարդկանց այդ դուրս բերումը տեղի ունենա, ավելի հեռու գտնվի, քան Եգիպտոսը:

Առանց մոռացության տալու տնտեսական այն ծանր բեռը, որը դուրս արդյունքում ի հայտ

կգա, այդ անիրագործելիությունը շատ ավելի մեծ է թվում, երբ նկատի ենք ունենում զաղթականների մտավոր թիվը, որը կայող է հասնել բազում հարյուր հազարների: Մյայն այս դիտարկումը բավական կլինի նման լուծումը վանելու համար:

Մյուս կողմից, այդպիսի մենք շահագրգռվածություն ունենք նպաստելու այս տեղահանությանը, որում այս դժբախտները հարևանցիորեն տեսնում են իրենց թշվառությունների հրատապ մեղմացումը, բայց որը կդատարկի Միրիան՝ ամենամեծ չափով նպաստելով թուրքերին և ամենամեծ վնասը պատճառելով մեր ազդեցությանը: Ամենայն հավանականությամբ՝ ոչ:

Այսպիսով, ինչ վերաբերում է սիրիական հարցին, հարկ է որդեգրել հստակ և ամուր վարքագիծ, որը լինի նույնքան շրջահայաց, որքան և իրագործելի, որպեսզի այն իրադարձություններին, որոնք տեսլի կունենան, անմիջապես տրվի համապատասխան լուծում: Մի խոսքով, հարկ է իմանալ, թե ի՞նչ ենք ցանկանում և անհույսություններն ձգտել դրան:

Հանուն Ֆրանսիայի գործելու անհրաժեշտությունը. Ծառանում է գործելու անհրաժեշտությունը: Մշտապես խստալ ծովափի երկայնքով ձգվող ռազմաճակատի շարանը՝ իրական ուժին երկրպագելու ոգով դաստիարակված բնակիչների աչքում այլևս իբրև արդյունավետ միջամտության միջոց չի ներկայանում, որի հետ նրանք իրենց փրկությունն էին կապում:

Անկասկած, զերմանական, ավստրիական և օսմանյան դրոշմներն ամբողջությամբ անհետացել են Միրիան ողորդ ծովերից, սակայն այս ստույգ հավաստումը, որը ճարպկորեն մեկնաբանվում է գերմանա-թուրքական ձևով, սկսում է կորցնել իր գերակշռությունն այն անգործության առջև, որն օգտագործում են մեր թշնամիները, իբրև անգործության որոշակի առհավատչյա:

Շատ ջանքեր են գործադրվել նաև մեր հավատարիմ հովանավորչալներին համոզելու համար, որ Միրիայի ճակատագիրը վճռվում է Շամպայնի հարթավայրերում: Սակայն ես արդեն նշել եմ 1915 թ. մայիսի 7-ի իմ ուսումնասիրության մեջ, որը 3-րդ էսկադրայի հրամանատար պ. փոխծովակալը բարեհաճել է ձեզ ուղարկել, որ ռազմական վարդապետությանն անշեղորեն համապատասխանող նման մեկնակերպը հասու չէ զանգվածներին:

«Շատ ավելի տեսանելի է, – ասել է Նապոլեոնը, – հատկապես սեփական, քան հարևանի աղետը»: Գրեթե ամեն օր Միրիան տառապում է, Շամպայնը շատ է հեռու, իսկ պատերազմը բավական երկարատև է:

Ռուսիի գրավումը մտրակի հարված էր, որը վերակենդանացրեց հուշերը: Դրանում, ցանկացան առհասարակ տեսնել, ամենաընդարձակ կտրվածքով, մոտալուտ միջամտության հայտանիշ: Էթե ժամանակն անցնի առանց նոր իրադարձությունների միջամտության, կասկածից վեր է, որ այդ նոր և խիստ կարևոր հիասթափությունը, տրամադրություններում առաջ կբերի ուժգին փատություն:

Ապագա գործողությունը պատկանում է Ֆրանսիային: Անտեոյակ լինելով պետական գրասենյակների գաղտնիքներին, ես իրագեկ չեմ դաշնակից կառավարությունների մտադրություններին այն հարցում, թե ո՞ւմ է ապագայում շնորհվելու Միրիան: Իմ դերը և պարտականությունը հանգում են փաստերի հիման վրա առաջ եկած տպավորությունները ձեզ հայտնելուն:

Սակայն կատարելապես հավաստի է, որ 3-րդ էսկադրայի վերակազմավորումը մեկնաբանվել է, իբրև Ֆրանսիայի անառարկելի ազդեցության ճանաչումն այս տարածաշրջանում: ‘Դրա նախնական’ որոշակիորեն ֆրանսիական գերակշռություն ունեցող դաշնակցային ռազմածովային բնույթը փոփոխություն կրեց հազիվ մի քանի շաբաթվա ընթացքում: «Դորիսի» և «Ասքոլի» վերջնական մեկնումից ի վեր, երեք փառապանծ գույներին հաջողվում է լիջխել, բացառելով մյուս բոլորին, ափերի ամբողջ երկայնքով՝ Ռաֆայից մինչ Մերսին, այն է՝

պատմական, աշխարհագրական. տնտեսական Սիբիրայի ծովափնյա գոտում, որպես զալիք ազատագրման նշան.

Այսպիսով, այդ միայն պատվավոր պայմանագրերի հուշերի պատճառով չէ. որոնք չորս դարից ի վեր հաճախ վերանայվել են և համաձայն որոնց Ֆրանսիան որոշակի իրավունքներ ունի Սիբիրայում, որ այս բնակիչները տազնապահար շրջվում են դեպի նա: Միսսամանակ այդ այն պատճառով է, որ Սիբիրայի դարպասները միայնակ հսկող նրա նախատորմը, հստանում է իբրև նրա իրավունքներն ակնհայտորեն վավերացնող:

Այսպիսով, նույնիսկ բարոյական անկման գնով, որը կարող է ամբողջ Արևելքում հսկայական աղմուկ առաջ բերել, Ֆրանսիայի հեղինակությունն էամար վերին աստիճանի կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր գործողություն Սիբիրայում իրեն վստահիլի և կամ. եթե այդ գործողությունը դաշնակիցների կողմից ընդհանուր բնույթ կլի, առնվազն գերազույն հրամանատարությունը, առանց որևէ վերապահության, միանշանակորեն իրեն վստահիլի:

Ի դեպ, իմ անձնական տպավորությունն այնպիսին է, որ բացի Եզիպտոսում բրիտանական մի քանի կարևոր անձանց շուրջ համախմբված այսպիսիների մի փոքր կենտրոնից, որոնց ախորժակները ելքե է չեն բավարարվել է որոնց մեքենայությունների մասին 3-րդ Էսկադրայի հրամանատար փոխծովակալը ձեզ տեղեկացրել է 1915 թ. հուլիսի 21-ի և օգոստոսի 8-ի նամակներով, մեր դաշնակիցների ճնշող մեծամասնությունն անվերապահորեն ընդունում է մեր գերազանցության օրինակաւորությունը Սիբիրայում:

Այն հիմնական կռվանք, որի վրա հենվում են այս անկախականները, դյուրի ձեռով կարելի է հերքել: Ամեն անգամ, անգլիացիների հետ ունեցած գրույցների ընթացքում, երբ դրա առիթը ներկայացել է. ես չեմ զրացել այդ անել: Եզիպտոսի պաշտպանության տեսակետից, այն խարսխվում է Սիբիրայի ունեցած պատմական կարևորության վրա: Այս առիթով ևս պատրաստակամությամբ վկայակոչվում է Նապոլեոնի խոսքը. «Սիբիրան Եզիպտոսի բանալին է»:

Կես դարից ի վեր մի նոր եղևություն է ալեկոծել խնդրի պայմանները: Մուեզի ջրանցքը, որը պաշտպանվում է ռազմականների կողմից, վերամվել է, ներխուժման պատրաստ բանակին դիմակայող անանցանելի սլատնեշի: Այս փաստարկը մեռելածին է:

Հաշվի չառնելով սիբիրական ժողովուրդների կարծիքը, որոնք ծարավի իններով ազատագրության, վաղն այն ուրախությամբ կընդունեն, անկախ այն բանից, թե որ տեղությունների կողմից այդ նրանց կհատկացվի անգլիական, ֆրանսիական, իտալական կամ ռուսական, նրանց համակրանքներն այսօր բացահայտորեն Ֆրանսիայի կողմն են. Գրանց Ֆրանսիային թելադրում են գործելու պարտականությունը:

Գործելակերպը. Կործողությունն ընդգրկում է կրկու լուծում:

Առաջինը՝ ռազմական տեսանկյունից ամենարնոգրկունը և ամենագոհացուցիչը, արշավանքի կազմակերպումն է: Երկարատե փորձը փոփոխության չի ենթարկել այն սկզբունքը, որը ներկայացված է 1915 թ. մայիսի 7-ի իմ գրության մեջ, որին ես ձեզ խնդրում եմ բարեհաճել դիմելու: Ես շատ ավելի անստասն ձեռով, քան այն պահին, երբ այն գրում էի, գտնում եմ, որ Սիբիրան նվաճելու հարցի իսկաւատար լուծումը խարսխվում է Ալեքսանդրետաի ծոցի խորքում՝ Իստոսի հարթավայրի առջև դեհանախի ավի դուրս բերման գործողության վրա, որը թույլ կտա արագորեն գրավել Թովուսկ-Կալեի երկարությունների հանգույցը և Տավրոսից դեպի Բոզանտի ձգվող տարածության դարպասները: Եթե ռազմավարական այս կետերը գտնվեն մեր տրամադրության ներքո, մեծ համերաշխությամբ իրականացվող ռազմական և ծովային գործողությունների միջոցով աստիճանական առաջխաղացումը դեպի հարավ տեղի կունենա առանց յուրջ դժվարությունների: Սկսած մայիս ամսից, նոր իրադարձություններն, այդու-

հանդերձ, բարենպաստ ձևով փոփոխել են յուժման կարիք ունեցող խնդրի պայմանները:

Ռազմարշավային կորպուսի նշանակալիությունը, որն ակնհայտորեն կախում ունի հակամարտ ուժերի կարևորությունից, կարելի է այսօր զգալիորեն նվազեցնել: Ես այն հասցրել եմ գրեթե հարյուր հազար մարդու, քանի որ Սիրիան գրաված բուրքական կորպուսի անդամների թիվը, դեռևս 5 կամ 6 ամիս առաջ, հասնում էր մոտավորապես 80000-ի:

Քանի որ այս վերջինիս թիվն այս պահին հազիվ հասնում է 20000 մարդու, ռազմարշավային կորպուսի գործող անձնակազմը, ինչպես այդ ինձ թվում է, կարելի է անվարանդորեն նվազեցնել և հավասարեցնել քանակային կորպուսի անձնակազմի թվին: Ամբողջ խորությունը յոթնեկուսու ռազմական սկզբունքների նշանակությունը, որը հսկում գլխավոր նպատակի: հստակության ապահովման թելադրում է բոլոր հնարավոր ջանքերի գործադրումը, ես միևնույն ժամանակ ոչ մի իրավասություն չունեմ արտահայտվելու Ֆլանդրիայի, Շամպայնի և Վոզգեզների ռազմաճակատներից. ինչպես նաև երկրորդական գործողությունների՝ Դարդանեյի թատերաբեմից գործող անձնակազմերը, որքան էլ դրանք համեստ լինեն, առանձնացնելու հնարավորության օգտին, որոնք սնհրսժեշտ կլինեն նոր ռազմարշավի համար:

Ես նմանապես առաջինը կլինեմ, որը կբացառի եզակի արդյունավետ ջանքերը ցարուցրիվ անելը:

Եթե, այնուամենայնիվ, մեկ կամ մյուս գլխավոր քառերաբեմերում կամ միաժամանակ թե՛ մեկում և թե՛ մյուսում, հարաբերական անգործության ժամանակահատվածը բույրատրի նախատեսել հնարավոր պահեստային ուժեր, ես աներեդրորեն գտնում եմ, որ դրանց օգտագործումը Սիրիայում ձեռնարկվելիք ռազմարշավի ընթացքում կհանգեցնի արգասավոր արդյունքների: Այն կդատարկի Դարդանեյը, հրահրելով, հավանաբար, բուրքական գործերի մասնակի նահանջ, ինչպես նաև բազմաթիվ գորակոչիկների դասալքություն, որոնց օջախներն ադդակիորեն ենթարկվելու են նոր ռազմարշավի հարվածներին:

Ժողովուրդների զինուժը. Բայց հարկ է նախատեսել այն պարագան, երբ կառավարությունն անկարող կգտնվի այս վերջնական յուժմանն իր համաձայնությունը տալ, քանի որ անհրաժեշտ միջոցները կարող են գրեթե սպառված լինել:

Երկրորդ յուժումը բուրքական տիրապետությանը թշնամաբար արամադրված բնակիչներին զինելն է, որոնք համակրանքով են վերաբերվում մեր գործին:

Պ. փոխնավակալ Դարտինգ դյու Ֆորնեն այն արդեն մասամբ ձեզ է ներկայացրել սեպտեմբերի 6-ի իր հեռագրում, որը վերաբերում է Մուսա լեռան հայերին: Իրադարձությունների արբնթացությունը հնարավորություն չընձեռեց այն որդեգրելու համար, որը սակայն հարկ է նկատի ունենալ ապագայի համար:

Ես արդեն խիստ մտախոգված եմ այն կացությամբ, որում կհայտնվեն 7 կամ 800 այն մարտունակ հայերը, որոնց՝ բուրքերին ցուցաբերած կատաղի դիմադրությունը, հնարավորություն ընձեռեց դուրս բերել նրանց ընտանիքները դեպի Մուսա լեռ:

Ինձ անհնար է թվում ընդունել, որ այս մարդիկ, որոնց մեծ մասն ամրակազմ է, եռանդուն և մարտունակ, համակենտրոնացման ճամբարի անգործության և պարսպության պայմաններում տրվեն փափկակեցության: Ես մեծ առավելություն կտեսնեմ այն քանում, որ նրանց զինեն և մարզեն զինվորական վարժություններով: Եթե հնարավոր լիներ, մասնավորապես, մեր աֆրիկյան քանակից հրավիրված սարսերից և ենթասպաներից նրանց տրամադրել արաբերեն խոսող մի քանի հրամանատարական կադրեր, ապա կարճ ժամկետում նրանք ձեռք կբերեին հսկայական հավելյալ արժեք, որը պարտիզանական ջոկատը վեր կստեր ռազմական ուժի, ինչն արհամարհելն անհնար կլիներ: Բանակային հրամանատարական

կադրերի բացակայության պատճառով, նրանք, ովքեր կրնարվեն ծովային նավատորմում հրսձգային մասնագիտացում ունեցողների թվից, ծայրահեղ դեպքում բավարար կլինեն: Պ. փոխծովակալ Դարտլինգ դյու Ֆուրնեն վերջին սեպտեմբերի 11-ի քվակիր իր նամակում, նախքան մարդկանց դուրս բերումը, ձեզնից խնդրում էր մի քանի հարյուր հյուսցան և անհրաժեշտ ռազմամթերքներ՝ Մուսս լեռան հայերին զինելու համար:

Թույլ տվեք ինձ համառոտեն այնպե՛ս հանուն այն բանի, որպեսզի դուք բավարարեք այս խնդրանքը, ուղարկելով ինձ, հնարավորության սահմաններում ամենակարճ ժամկետում, 800 հյուսցան՝ դրանց անհրաժեշտ ռազմամթերքների հետ մեկտեղ: Այս ձևով զինված ու լավ մարզված մարտունակ հայերը կարճ ժամկետում վեր կառվեն անհարկու ուժի, որը խիստ կարգապահության վարժվելուն ենթ, հնարավոր կլինի մուտ ապագայում կրկին վերադարձնել ցամաք, լավագույն ձևով օգտագործելով ի նպաստ մեր ռազմական գործողության:

Բայց այսպիսի լուծումը, ևս մեկ անգամ մասնակի է ու հարմարեցված հանգամանքներին: Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել նախատեսելու դրա ընդլայնումը, որն անխուսափելի է: Միայն Անտիոքի ծոցի հայերին զինելը չէ, որ շահավետ է: Մասնավորապես լիբանանցիները սպասում են միայն զենքի և նշանաբանի, որպեսզի ձեռնամուխ լինեն համընդհանուր ապստամբության: Թուրքական ռազմակալող կորպուսի անձնակազմերի նվազեցումը և դրանում ընդգրկված գորքերի ոգու անկումը, առիթը դարձնում են խիստ բարենպաստ:

Այսպիսով, հարկ կլինի, որ 3-րդ էսկադրան կարողանա Պորտ-Սալիդում իր տրուսմադրության տակ ունենալ մոտավորապես 20000 հյուսցան և դրա համար անհրաժեշտ ռազմամթերքներ պարունակող մի պահեստ, որպեսզի ի վիճակի լինի իրականացնելու դրանց բաշխումն առափնյա շրջանի որոշակի կետերում, հասկանալի է, բոլոր անհրաժեշտ երաշխիքներն ապահովելով հանդերձ՝ դրանք պատշաճ իրմունքներով հունձնելու համար:

Կարելի է կարծել, որ համընդհանուր ապստամբությունը, որը հասումանում է Սիրիայի ողջ տարածքում և բռնկման համար սպասում է միայն բնակչության զինմանը, այսօր ջրասույզ կանի իշխող կուսակցության անբավարար ուժերը:

Սալոնիկի և Սկյուտարի ձևով կախացված լուծում. Ես խոսում եմ սուկ իշատակելու համար երրորդ լուծման մասին, որը Սալոնիկի և Սկյուտարի նախադեպերի օրինակով, առանց ճակատամարտի, մեր ձեռքերի մեջ կնետի Սյրիան: Հնարավոր է, որ Ջեմալ փաշան ցանկանա մտնել Էսսադ փաշայի դերի մեջ, որի մասին է վկայում նրա Խեղճվածային դիրքորոշումը. սակայն այդ բնույթի լուծումներն անհարկի են բանականությանը և չեն կտրող հաշվի առնվել, քանի որ դեռևս ինքնաբերաբար ի հայտ չեն եկել հստակ և կոնկրետ ձևով:

Առաջին երկու նախադեպերից գալի, որոնք միակն են, որ բոլոր կտան հուսալի ձևով լուծել ծառացած խնդիրը, մնում է միայն շարունակել ներկա պատիվությունը. որի հետևանքով Ֆրանսիան, ինհարկե, օրեցօր կորցնում է այստեղ իր ազդեցությունը, թեպետև այն դժվարությունները, որոնց նա պետք է դիմակայեր, դրանից չեն վերանում:

(A.C.M., SS Ed 125).

2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժյ. դերժովակյալ Գարրիոն Ռ-ազնաժովային I բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Բուե դը Լապեյրերին

Ճ. թիվ 295: Գ-ադմինի:

«Շոռեգյուլբերիլի» տախտակամածից,
բաց ծովում, 22-ը սեպտեմբերի 1915 թ.:

Ես պատիվ ունեն ձեզ աղաքիկ սրան կից նախարարին հղած իմ զեկուցագրերի պատճենները¹, որոնք վերաբերում են Մուսա շեռան հայ բնակիչներին դուրս բերելու գործում 3-րդ էսկադրայի հստանափերի գործողություններին և Սիրիայում ախրող բնդիանուր իրադրությանը:

Միսժամանակ, վերջին նամակով ես ձեզ եմ հղել մի հաղորդագրություն, որը վերաբերում է քրիտանական իշխանությունների համաձայնությանը՝ Պորտ-Սախյում այս բնակչությանը կացարաններով և սննդով ապահովելու համար ընդունված կարգադրություններին: «Շորեգյուլբերիլի» մեկնելու հետևանքով, իմ տրամադրության ներքո եղած ժամանակն ինձ չբավականացավ, որպեսզի դրան կցեմ ուղեկցող մի նամակ: Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել դրա համար ներողամիտ գտնվել իմ նկատմամբ:

Այն առաջարկությունները, որոնք. ինչպես ինձ թվում է, պետք է այս գործողությունից բխեն անձնակազմի բոլոր աստիճանավորների համար, առանձին նամակի նյութ կձառայեն, որը ես ձեզ կհղեմ Պորտ-Սախյ վերադառնալուց հետո:

(A.C.M., SS A 164).

**Կահիրեում Զրանսիայի նախարար պ. Գեֆրանը²
Արտաքին գործերի նախարար պ. Գեկլասեին**

Հ. թիվ 231:

Կահիրե, 23-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 18.50-ին:
(Ստացվել է ժ. 19.35-ին):

Գեներալ Մարսուելլն ինձ հարցրեց այս առավոտյան. թե ո՞վ է ի վերջո հոգալու Մուսա լեռան հայերի պատճառած ծախսերը: Ես նրան պատասխանեցի, որ չգիտեմ: Նա ինձ հարցրեց մանապես, թե արդյոք մենք չե՞նք պատրաստվում օգտագործել այն 500 տղամարդկանց, որոնք պիտանի են և հավելած են մարտնչելու թուրքերի դեմ: Ես պատասխանեցի, որ ինձ ուսյտնի չեն ֆրսնսիական կառավարության մտադրություններն այդ հարցում և որ ինձ թվում է, անձաժր ինձ, որ այս գորախումբը ծովափի ինչ-որ մի կետում, առանց որոշակի նպատակի ափ դուրս բերելը հավասարագոր է այն դատապարտելու դանդաղ կամ արագ, բայց անառարկելի ոչնչացման, որ եթե, ընդհակառակը, շտաբները նպատակահարմար գտնեն նշանակված պահին որևէ հստակ գործողություն ձեռնարկել այն տարածաշրջանում, որտեղից նրանք ծագում են, ապա այս հայերը, որոնց կարելի է անհրաժեշտության դեպքում աստարել, գորեղացնել և դեկավարել, կարող են լինել շատ օգտակար:

¹ Տե՛ս վերը թիվ 99 և 100 փաստաթղթերը:

Գեներալն ինձ ասաց, որ համաձայն է այս կարծիքին:

Սակայն նա հայտարարել է միաժամանակ այ. ղը Սեն-Բուենտոնին, որ ինքը Լոնդոնին խորհուրդ է տալիս Ֆրանսիական կառավարությանը թողնելու հայ գաղթականների ողջ հոգսը և պատասխանատվությունը, որ մենք պետք է զենք տայինք 500 մարտունակ տղամարդկանց և նրանց վերադարձնելիք իրենց լեռները, որտեղ նրանք կստեղծելին ապստամբական օջախ, որը հավանաբար կհրատարեր ողջ երկրի հայ կամավորներին:

Այդ հնարավոր է և նույնիսկ հավանական, բայց ինձ քվում է, որ մենք կարող էինք հավանություն տալ այդ ապստամբությանը միայն այն դեպքում, եթե վճռած լինեինք, լստ էության, դրան օժանդակել և դրանից օգուտ քաղել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 25).

103

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Արուաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Ճ. թիվ 292:

Լուսիլլոն, 23-ը սեպտեմբերի 1915 թ.*:
(*Ստացել են* Կաբինետը հոկտեմբերի 4-ին,
Քաղ. վարչ. հոկտեմբերի 5-ին):

Համալրելու համար Մուսա լեռան հայերին վերաբերող այն տեղեկությունները, որոնք արդեն Ձերդ գերագնացությանն են հաղորդել հեռագրով և, մասնավորապես, իմ թիվ 226, 227 և 228 հեռագրերով¹, ես չեմ կարող վարվել ավելի լավ, քան սույնին կից նրան ուղարկել այն երկու նամակների պատճենները, որոնք ստացել են ծովակալ Դարլիայից² և այն հաղորդագրության պատճենը, որով ծովակալը պ. Ռազմածովային նախարարին հաշվետվություն է ներկայացնում այն գործողությունների մասին, որոնք հանգեցրել են այս ղժբախտների փրկությանը և Պարտ-Սաիդում նրանց տեղավորելու համար որդեգրված միջոցներին³:

Երեկ չէ առաջին օրը ևս այցելեցի նրանց ճամբարը: Նրանք, հնարավորության սահմաններում արագ, ապահովվել են ծածկով՝ շնորհիվ մեր 3-րդ էսկադրայի նավաստիների գործունեությանն ու նվիրվածությանը, որոնք ավելի սեղմ ժամկետում, քան 24 ժամը, ավելի քան 4000 գաղթականների անհրաժեշտ կացարաններով ապահովելու համար վրաններ էին ամրացրել: Անգլիական զինվորական լեյտենանտներն այնուհետև՝ իրենց պատասխանատվության ներքո են վերցրել այս խեղճ մարդկանց: Նրանք նրանց կերակրում են և ավարտին հասցնում տեղավորման գործը, այս առաջադրանքի կատարման հարցում ցուցաբերելով

* Նախարարի նախնական ձեռագիր ծանուցագրությունը. «Արայոր գրե՛լ են Լոնդոն, Նսելու համար, որ ներկա հանգամանքներում մենք հավանություն չենք տալիս որևէ ապստամբության, որին ոչ անգլիացիները և ոչ մենք ի վիճակի չենք լինելու օժանդակել: Հարկ կլինի այդ անել. փոխանցելով սույն նամակը և այդ մասին զգուշացնելով պ. Դեֆրանսին: Հիշեցրեք այն ծանուցագրի մասին, որն ինձ տվել էր Գրենվիլլը: Նրանք քարոզում են օգուտգործել հայերին Մուղոսի նավահանգստում: Այս պահին հարկ է հենց այդ անել, որովհետև այս քաղաքի ապստամբներին Եգիպտոսում պահելը կարող է միայն ըստվելիք արկածախնդրությունների սիրահարներին»:

1 Վերն արտատպված են թիվ 92, 93, 94 փաստաթղթերում:

2 Սենք արտատպում ենք միայն դերձովակալ Դարլիայի նամակներից մեկը:

3 Տես վերը թիվ 85 փաստաթուղթը:

մեծ քարյացակամություն և իրազեկություն:

Դադրականները հարկադրված են եղել բողոքել այն ամենն, ինչ ունեցել են և կատարյալ գրկանքներ են կրում: Տիկին Դեֆրանսը, որն այս այցելության ընթացքում ուղեկցում էր ինձ ճամբարում, աեղեկացավ, թե շատ ավելի հրատապ ի՞նչ անելու հարկը կար բազմաթիվ կանանց ու երեխաների օգնության հասնելու և նրանց հանդիպել անհրաժեշտ հոգածություն դրսևորելու համար, որոնցից շատերն ուժասպառությունից և կյուծվելուց հիվանդացել են, իսկ այնուհետև՝ հայցեց Կահիրեի ու Ալեքսանդրիայի նշանավոր հայ անձանց օգնությունը:

Ինչպես արդեն ես երեկ հեռագրել եմ Ձերոյ գերագանցությանը (թիվ 231)¹, գլներալ Մաքսուելլն ինձ կրկին հարցրեց, թե ո՞վ է ի վերջո հոգարու գաղթականներին տեղավորելու և պահելու ծախսերը: Ես նրան պատասխանեցի, որ մենք միայն իրավասու ենք այդ հարցում որոշում կայացնելու հոգսը բողոքել մեր համապատասխան կառավարություններին:

Միևնույն հեռագրով ես Ձերոյ գերագանցությանը նաև տեղյակ եմ պահել մասամբ զանազանվող այն կարծիքներին, որոնք գեներալ Մաքսուելլը հայտնել էր մեզ՝ լեյտենանտ դը Սեն-Քոնտենտինին և ինձ, գեներ կրելու ունակ 500 գաղթականների, հնարավորության սահմաններում, օգտագործելու հարցի շուրջ:

Այս ապստամբների ղեկավարները միայն մեկ գաղափար ունեն. մեկնել թուրքերի դեմ մարտնչելու և վրեժխնդիր լինելու: Նրանք մեզմից խնդրում են իրենց գլինել և առաջնորդել: Նրանք կմեկնեն այնտեղ, ուր մենք կցանկանանք նրանց տանել: Գլխավոր առաջնորդը, որին մի քանի ամիս առաջ գեներալ Մաքսուելլը Կահիրե կանչեց, և որի մասին ես արդեն հաշվետվություն եմ ներկայացրել, ինձ ասաց. «Անգլիացի գեներալը խոսեց ինձ հետ Ալեքսանդրետի շրջանում հնարավոր գործողության մասին: Մենք ամեն ինչի պատրաստ ենք: Մենք այստեղ ունենք 500 մարդ: Մի քանի օր անց կարող ենք 500 այլ հայ մարտիկների հավաքագրել Եգիպտոսում: Տասնհինգ օր անց մենք կարող էինք ունենալ Եվրոպայում գտնվող մեր եղբայրներից 1000-ին, որոնք ափ դուրս կելնեն Դեղեազաչում կամ Սալոնիկում: Մեկ ամիս անց մեր կանչով 2000 այլ անձինք կարող են մեզ մոտ ժամանել Ամերիկայից: Այսպիսով, մեր թիվը կհասնի 4000-ի: 1000 ֆրանսիացիների և մեզ ղեկավարելու համար անհրաժեշտ սպաների հետ, մեզ համար դյուրին կլինի ափ դուրս գալ ծովամերձ որևէ կետում, մխրձվել լեռների մեջ, որոնց բոլոր ճանապարհները մեզ ծանոթ են և գրավել Բեյլանը: Երբեք չեն կարողանա մեզ այնտեղից դուրս քշել և նա, ով տիրում է Բեյլանին, տիրում է Ալեքսանդրետին և ամբողջ տարածաշրջանին: Մենք կարող ենք գործել, կարևոր չէ, թե որ ուղղությամբ, և ամբողջ երկիրը կապտամբի ու կմիանա մեզ»:

Բեյլանի և Բաղչեի անցումները, որոնք պետք է հատվեն Բաղդադի երկաթգծի կողմից և որոնց՝ իբրև հայերին առաջարկելու հնարավոր նպատակակետի մասին, ինձ հետ խոսել է Պուրտ-Սալոյի հրամանատարը², իրականում Ամանուսի վրայով ձգվող և Ալաբանյի ու Հալեալի շրջանների միջև գտնվող հաղորդակցության միակ անցուղիներն են:

Այս երկու կետերում գործողության իրականացումն, անշուշտ, մեծապես դյուրին կդառնա այս քաջարի հայերի օգնությամբ, որոնք հիմնավորապես ծանոթ են տարածաշրջանին: Նման գործողության օգտակարության խնդրի քննարկումը մեր շտաբի, կամ անգլիական շտաբի, կամ միացյալ երկու շտաբների գործն է: Գեներալ Մաքսուելլը և նրա սպաներն այն վաղուց ի վեր դիտում են իբրև անհրաժեշտություն, ապահովելու համար Եգիպտոսի անվտանգությունը և ինձ րվում է, որ նրանք չեն սխալվում: Նրանք, անկասկած, այն արդեն ձեռնարկած կլինեին, եթև այն բոլոր ուժերը, որոնք կարող էին նրանց տրամադրության ներքո

¹ Տես վերը թիվ 102 փաստաթուղթը:

² Փոխգնդապետ Էլզուրը:

գտնվել, ընդգրկված չլինեին Դ-արյանելի գործողության մեջ: Ինչ վերաբերում է մեզ, ապա խիստ նպատակահարմար կլինի, եթե մենք վճռելինք գործել Սիրիայում: Ամեն դեպքում, ես գտնում եմ, որ եթե Պորտ-Սալոյի հայերի աջակցությամբ օրերից մի օր այս տարածաշրջաններում որևէ նշանակության ինչ-որ մի գործողություն ենք ձեռնարկելու, չավ կլինի, որ մեր դաշնակիցներն այդ մասին տեղյակ պահվեն, ճիշտ այնպես, ինչպես անգլիացիները, ես հույս եմ տածում, առանց մեզ նախագոյուցացնելու ոչինչ չեն ձեռնարկի այս գոտում, որը հսկում են և շրջափակում մեր էսկադրաները:

Ամեն դեպքում, մեր նավաստիների ի կատար ածած մարդասիրական գործն ունեցել է հսկայական արձագանք: Ամերիկացիների կոտորածից փրկված հայերը, հոգմունքով են արտահայտել իրենց երախտագիտությունը մեր սպաներին, մեր նավաստիներին, անձամբ ինձ, երբ ես նրանց այցելության էի գնացել: Եգիպտոսի իսրայելական համայնքի ղեկավարներն իրենց երախտագիտության հավաստիքն են հայտնել Հանրապետության պ. նախագահին: Եգիպտոսի բոլոր թեյթերը, առանց բացառության, նշել են Ֆրանսիայի դրսևորած մեծահոգության և մարդասիրության վկայությունը:

Կից ես Ձերո՞ղ գերազանցությանն եմ ուղարկում տեղական մամուլում այս առթիվ լույս տեսած հոդվածներից մի քանիսի բնագիրը կամ քարզմանությունը¹:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870, ff. 108-109 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Գարրիոն² Կահիրեում Ֆրանսիայի դեսպան պ. Գեֆրանսին

«Ժորեգյուիքերիի» տախտակամածից,
Պորտ-Սալոյի նավակայան,
17-ր սեպտեմբերի 1915 թ.:

Իբրև սեպտեմբերի 16-ի ձեր երկու հեռագրերի² շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ իրագեկ դարձնել այն ժամանակավոր միջոցառումներին, որոնք ընդունվել են հայ գաղթականներին կացարաններով և սննդով ապահովելու համար:

Մուսա լեռան ամբողջ հայ բնակչությունն այժմ իջեցվել է նավերից, որոնց վրա նրանք համախմբվել էին և ուղարկվել Սուեզի ջրանցքի ասիական ափին գտնվող կարսնտիմի կետի շուրջը տեղակայված համակենտրոնացման ճամբար: Շնորհիվ «Ժորեգյուիքերիի» և «Գյուլչենի» հատկացրած կարևոր կարգախմբերի, ճամբարի բոլոր վրաններն այսօր երկույան կտեղադրվեն:

Ես մեծ հույսեր ունեմ, որ մի քանի օր անց տեղադրումն ամբողջությամբ կավարտվի. և գաղթականներն այնտեղ կգտնեն հարմարավետ, առողջարար ու ջրով առատուրեն մատակարարվող կացարան:

Ինչ վերաբերում է գաղթականների սննդին, ես կարողացա, ձեր վերջին հեռագիրը ստա-

¹ Արտատպված չեն: Խոսքը վերաբերում է 1915 թ. սեպտեմբերի 17-ին Կահիրեում արարական «Սիրատտամ» թերթում և հայկական «Արև» օրաթերթում տպագրված հոդվածներին:

² Արտատպված չեն:

նախոն պես Պորտ-Սաիդի գերագույն հրամանատար, պ. գնդապետ Էլզուրի հետ կայացնել վերջնական համաձայնություն: Պայմանավորվածություն ունենք, որ 3-րդ էսկադրայի նավերն այս երեկոյան կոստայան զաղթականներին անհրաժեշտ սննդամթերքներ մատակարարել: Սկսած վաղվանից՝ սեպտեմբերի 18-ից, տեղական զինվորական իշխանությունը կպարտավորվի ամբողջությամբ ապահովել սնունդը և կիռզա դրա հետ կապված վճարման բոլոր ծախսերը՝ սպասելով երկու կառավարությունների միջև վերջնական համաձայնության կայացմանը:

Այսօր երեկոյան ես պատրաստվում եմ մեկնել նավարկելու՝ մի ժամանակավոր լուծման հանգեցնուց հետո, որն ինձ բավարար է թվում և բույստրում է սպասել Փարիզի ու Լոնդոնի միջև ծայր առած զրույցի արդյունքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870, ff. 112-112 v).

104

Լիագոր ներկայացուցիչ, լեյտենանտ Շատոմինուան՝ 2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Գարրիոյին

Պորտ-Սաիդ, 23-ը սեպտեմբերի 1915 թ.:

Երկու զինագործ վարպետների միջոցով («Դեզելի» և «Շարների») ես ստուգել տվեցի այն հայերին պատկանող զենքերը: Ես ձեզ եմ ներկայացնում այն պատկերը, որը ստացել եմ այդ բնության արդյունքում:

Դրանից հետևում է, որ 502 հրացանից և 110 ատրճանակից կան միայն 70 հրացան (որոնցից 59-ը 1874 մոդելի կարաբիններ են) և 8 ատրճանակ, որոնք պիտանի են ռազմական գործածության համար: Այդ 70 հրացաններից 31-ը շատ հիմնավոր վերանորոգման կարիք ունեն, մյուս բոլորն անհրաժեշտ է զննել ու մաքրել:

Վերանորոգումները ես սկսել տվեցի անձնակազմերի օգնությամբ: Այցելությունները կատարվեցին «Մոնտկալմ-Աննեքսի» հրաձիգները: Մյուս զենքերը բաղկացած են որսորդական հրացաններից (350-ը հրապատիճով) և փոքր ատրճանակներից, որոնք, գրեթե բոլորը գտնվում են կարեկցանքի արժանի վիճակում: 17 հրարձակ հրացան և 17 կարաբին, ինչպես նաև 16 փոքր ատրճանակ կարող են կարգի բերվել:

1881 մոդելի հրացանի մոտավորապես 1500 փամփուշտ և թուրքական հրացանների 300 փամփուշտ կարող են գործածվել: Յուրաքանչյուր զենքի հսկիվ բաժին կհասնի երեսնական փամփուշտ:

Պ. 1-ին կարգի կապիտանի, գլխավոր հրամանատարի («Դեզելի» հրամանատարի) հրամաններն ստանալուն պես, ես ծով նետել տվեցի որսորդական հրացանների համար եղած ամբողջ վառարկ և որոշ փամփուշտներ, որոնք պահելը մենք վտանգավոր համարեցինք:

(A.C.M., SS S 6).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Ղեֆրանսը՝ 2-րդ դիվիզիայի
հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի
հրամանատարի ժպ, դերժովակալ Ղարրիոյին**

Պորտ-Սաիդ, 23-սեպտեմբերի 1915 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել ինձ հղված՝ այս ամսի 17-ի ձեր երկու նամակների¹ և դրանց կից, Մուսա լեռան հայերին վերաբերող՝ Ռազմածովային պ. նախարարին հղած ձեր գեկուցագրի պատճեննի ստացման մասին²:

Ես ձեզ խիստ երախտաշարտ եմ այդ շատ հետաքրքիր հաղորդագրության համար և խնդրում եմ ընդունել անձամբ ձեզ և 3-րդ էսկադրային ուղղված իմ շնորհավորանքներն այն անձնագրի գործի առթիվ, որը դուք ի կատար եք ածել, հավաստելով ֆրանսիական Ռազմածովային նախարարության ազնվաբարտ ավանդույթները և էլ ավելի խորացնելով սիրիական ավի ժողովուրդների՝ Ֆրանսիայի համդեպ տաժած համակրանքը:

(A.C.M., SS S 8).

**Պորտ-Սաիդի բրիտանական ռազմական ուժերի հրամանատար,
փոխգնդապետ Էլզուդը՝ Եգիպտոսում բրիտանական
բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Մաքսուելլին**

[Պատճենը: Թարգմանություն]:

Կահիրե, 23-ը սեպտեմբերի 1915 թ.:

Ես գտնում եմ, որ ներկա պահին ճամբարում կա զենք կրելու տարիք ունեցող 500-ից 600 մարդ: Ամենքն էլ հայտնում են իրենց երկիր վերադառնալու և իրենց պապենական թշնամու դեմ մարտնչելու ամենաբուռն ցանկություն:

Մյուս կողմից, ամենահավաստի սկզբնաղբյուրից ինձ տեղեկացրել են, որ Եգիպտոսում կան շատ երիտասարդ հայեր, որոնք մշտապես այս երկրում են գտնվում և որոնք ցանկություն կունենան ծառայելու նույն նպատակներին: Խիստ բազմապիսի այլ պատճառներով, ցանկալի է օգտագործել ամենահարմար առիթը՝ ճամբարը զենք կրելու ունակ բոլոր գաղթականների ներկայությունից ձերբազատելու համար: Եթե այս մարդիկ զինվեն և ավի դուրս բերվեն Մուսա լեռան շրջակայքում, նրանք անխուսափելիորեն կբաժանվեն փոքր ջոկատների, կսփռվեն հարևան շրջաններում ու իրենց ուժերը կօգտագործեն տարակցված գործողությունների և կողոպուտի համար: Նման գործելակերպը ցավալի է բվում, եթե հաշվի ենք առնում հետևյալ տեսակետները. 1/ որ պատերազմելու այդ գործելակերպը չի կարող ունենալ որևէ որոշակի արդյունք. 2/ որ հայերի իրականացրած բռնությունները կարող են միայն սաստկացնել գոյություն ունեցող ատելությունները և էլ ավելի դժվարին դարձնել Ալեքսանդրիտի հարևանությամբ գտնվող տարածաշրջանի կռուտվարումը նրանց համար, որոնց, անհրաժեշտության դեպքում, այդ խնդիրը կվստահվի:

¹ Սենք արտատպել ենք այս նամակներից միայն մեկը. տես վերը թիվ 103 փաստաթղթի հավելվածը:

² Այս թղթակցության մասին տես վերը թիվ 85 փաստաթուղթը:

Բազմաթիվ տատանումներից հետո, ես ինձ բույլ եմ տալիս ձեր դատին հանձնելու այն, թե ի՞նչ է կարելի անել. երե այս մարտիկներին հնարավոր չլինի օգտագործել կարևոր և խիստ որոշակի ռազմական խնդրի խրականացման համար:

Այն է՝ քանուղե Բաղչեի թունելի արևմտյան ծայրամասում գտնվող մեքենաշինական արհեստանոցները, իսկ այնուհետև՝ մասնատել նրա հարավային կողմի ուղեկամուրջը:

Երե այս առաջարկությունները հավանության արժանանան, գաղթականներն ափ դուրս կբերվեն Դյորք-Յոլում ռազմաճակատից մեկի բնդանոթների պաշտպանությամբ:

Ջոկասը երկրի տարածքով կշարժվի ուղղակիորեն (45-ից 50 միլ) դեպի Բաղչեի թունելը:

Դյորք-Յոլը և հարևան գյուղերը բնակեցված են կամ վերջերս բնակեցված էին հայերով: Այսպիսով, դժվար չի լինի երկրի տարածքով անցնելու համար գտնել ուղեկցողների, ընդունելով, որ ջոկասի մարդկանցից և ոչ մեկը ծանոթ չէ տարածաշրջանին, որը թվում է խիստ անհավանական:

Պարտիզանակաճ պատերազմի վարժված հայերի մասնակցությամբ նման բնույթի ռազմարշավը թվում է, թե կրնձեռի հաջողության հասնելու հնարավորություններ:

Թունելի աշխատանքներում ընդգրկված բանվորների գերակշռող մասը պետք է լինեն, համաձայն իմ կարծիքի, քրիստոնյաներ և համակյուն հայերին:

Թշնամու գործերը մարտունակ չեն, մի բան, որին ես հավատում եմ: Բաղչեի թունելը հետո չէ ավարտին հասնելուց և այնժամ Փոքր Ասիան ուղղակիորեն կհաղորդակցվի Հալեպ-Դամասկոսի և հարավային Սիրիայի հետ:

Այս պատճառներն ընդգծում են այն շահագրգռվածությունը, որն առնչվում է թունելի վրա արագ և մոտակա հարձակման գործում հայերին օգտագործելու հետ:

Կարելի է կարծել, որ այս անբույր ավերումը կարող է ռազմավարական ազդեցություն ունենալ այն գործողությունների վրա, որոնք հետագայում կարող են ձեռնարկվել Եգիպտոսի դեմ:

Այս պարագայում, առևտուրն իրոք որ կրկին հարկադրված կլինի անցուղի փնտրելու Բասսան-Բեյլիի [sic]՝ դժվարին ճանապարհով. անցուղի, որը բռնությամբ հատելը, փոքրիշատե կազմակերպված հայկական գործի ներկայությամբ, կարող է գործերի և գումակների կողմից լինել հանդուգն գործողություն:

Եթե, խորհրդածելուց հետո, հարձակումը Բաղչեի թունելի վրա ժամանակավրեպ թվա, գաղթականները, հավանաբար, կկարողանան ափ դուրս բերվել Արսուգում և ուղարկվել դեպի Բեյլանի անցուղի: Նման գործողությունը թվում է, թե ունի միայն ռազմական նվազ նշանակություն. երե նույնիսկ ընդունենք, որ այն հաջողությամբ կպսակվի: Այս ռազմարշավներից թե՛ մեկի և թե՛ մյուսի համար հաջողությունը մեծապես կախված կլինի հրամանատարի ունակություններից:

Թվում է, թե ներկա պահին ճամբարում չկա ոչ մի հիյրավի երևելի անձնավորություն և հնարավոր է, որ հարկ լինի օգտվել մեկ կամ երկու եվրոպացի սպաների ծառայություններից:

(A.C.M., SS A 164).

**Ռազմական նախարարը՝ Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի
հրամանատարություն գործուղված լեյտենանտ
Դոյնել դը Սեն-Քուենտինին**

Հ. Գ. թիվ 138:

Փարիզ, 24-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 22.10-ին:

Թիվ 5510-9/11: - Պատասխան 133 հեռագրին և իմ 5456-9/11-ի շարունակությունը:

Անկանոն զորքերի միավորումների համարձակ գրոհն Ալեքսանդրետի և Թուփուսկ-Կալեի ուղղությամբ կունենա շատ ծանր հետևանք՝ հրավիրելով թուրքերի ուշադրությունն այս տարածաշրջանի վրա: Այսպիսով, խիստ ժամանակավրեպ կլինի դրան ձեռնամուխ լինելը, քանի դեռ դաշնակիցները վերջնականապես չեն հրաժարվել այս ուղղությամբ ունեցած ցանկացած նախագծից:

Այսպիսով, եթե թվում է, թե Ինքելիջենս Օֆիսն ընթացք է տվել այս նախագծին, անհրաժեշտ կլինի, որ սույն հեռագիրը դուք պարոն Դեֆրանսին հաղորդեք, խնդրելով նրան անզիլական իշխանությունների ուշադրությունը հրավիրել հարցը երկու դաշնակից կառավարությունների առջև բարձրացնելու անհրաժեշտության վրա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 26).

**Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեն
Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին**

Հ. թիվ 140:

Փարիզ, 26-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 10.40-ին:

Ես պատասխանում եմ ձեր թիվ 226 և 231 հեռագրերին¹:

Ըստ այն ամենի, ինչում ինձ վստահեցնում են Փարիզում բնակվող որոշ հայ անձինք, Եգիպտոսի հայերն ի վիճակի կլինեն օգնության հասնել իրենց գաղթական հայրենակիցներին: Ամեն դեպքում նրանք կկարողանան ձեզ օգնել աշխատանք գտնելու հարցում նրանց համար, ովքեր աշխատուճակ են: Ես կարծում եմ, որ ձեզ համար դժվար չի լինի, անզիլական իշխանությունների հետ համատեղ, ձևավորել տալ հայկական կոմիտե, որը գրադվի գաղթականներով և կոչով դիմի տարբեր երկրների և, մասնավորապես, Ամերիկայի հայերին:

Ես հավանություն եմ տալիս այն դիրքորոշմանը, որը դուք գրավել եք գեներալ Մաքսուելլի նկատմամբ՝ հայ մարտիկներին անհրաժեշտության դեպքում օգտագործելու հարցում: Մեր կարծիքը, որը բաժանում է բրիտանական կառավարությունը, հանգում է այն բանին, որ ասպետամբական շարժումը Թուրքիայում կարելի է քաջալերել միայն այն պայմանով, եթե ի վիճակի լինենք էականորեն օժանդակել ասպետամբներին: Ներկա հանգամանքներում ո՛չ Անգլիան, ո՛չ մենք չենք կարող մտածել որևէ բան ձեռնարկելու մասին՝ ներկա պատերազմական թատերաբեմերից դուրս: Այսպիսով, հարկ է խուսափել համարձակ նախաձեռնություն-

¹ Տես վերը՝ համապատասխանաբար թիվ 92 և 102 փաստաթղթերը:

ներից, որոնք կոչված են անարդյունավետ լինելու: Եթե գեներալ Մաքսուելլը կրկին անդրադառնա այս հարցին, դուք կարող եք նրան հիշեցնել, որ այս ոգով որևէ բան կարող է արվել միմիայն երկու կառավարությունների կայացրած որոշումից հետո:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 27-27 v).

109

Ասիա-Օվկիանիայի փոխաֆորենի՝ ծանուցագիրը

Պ. Չոպանյանի այցը

Ծ՞:

Փարիզ, 27-ը սեպտեմբերի 1915 թ.:

Պ. Չոպանյանը եկել էր ինձ հետ գրուցելու Եգիպտոս գաղթած հայերի հարցի շուրջ: Պողոս փաշայի հետ այդ մասին գրուցելուց հետո, մա հույս է տածում, որ Եգիպտոսի հայկական գաղափարը պետք է իր վրա վերցնի այս գաղթականների հոգսը և որ այն ի վիճակի է նրանց օգնության ձեռք մեկնելու՝ կամ նրանց աշխատանքով ապահովելու, կամ ամաշխատունակներին ապաստան հատկացնելու միջոցով:

Պ. Չոպանյանն ինձ հավաստիացրեց, որ Պողոս փաշան այս ոգով գրել է Կահիրե, և որ ինքը տեսադաշտից ոչ մի բան բաց չի թողնի իր հայրենակիցների միջոցով օգնություններ կազմակերպելու համար:

Այդուհանդերձ, պ. Չոպանյանը խնդրում է, որ եթե մենք դրան հակված ենք, ապա համաձայնվենք խորհուրդ տալ բրիտանական կառավարությանն արագացնել ամենաերիտասարդ հայերին և ամենաշխատունակներին՝ Եգիպտոսում գտնվող անգլիական բանակի համար աշխատող գործարաններում կամ արհեստանոցներում աշխատանքի ներգրավելու գործընթացը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 28).

110

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին

Ճ. թիվ 813:

Վաշինգտոն, 28-ը սեպտեմբերի 1915 թ.*:
(*Ստացել են* Կաբինետը հոկտեմբերի 16-ին,
Զադ. վարչ. հոկտեմբերի 17-ին):

Այս վերջին օրերի հանգամանակից նորությունները մերկացրել են Հայաստանի կոտորածների՝ մասնավորապես դաժան բնույթը, իսկ արհավիրքի լայնաժապավոտությունը հավաստել են

1 Պ. Գուն:

2 Նախատեսված է պ. դր Մարժերիի համար:

* Նախարարի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Հաղորդեք սամուխն, որ կարելի է մի փոքր ավելի լայն տարածում տալ «հայերի դեմ բուրբերի գործած վարյագություններին, որոնք հավանության են արժանացել և ղեկավարվել գերմանացիների կողմից»:

լորդ Բրայսի կոչերն ու բողոքները, որի խոսքն այս երկրում խիստ հեղինակավոր է:

Օգնության գալով դաշնակցին և չցանկանալով, որ հմարավոր լինի ասել, թե իշխանությունների օգնությանը դիմելն ընդունված է երեք կայսրություններում, գերմանական դեսպանը¹, հենց նոր մի մամակ պատրաստեց՝ այն հրապարակելու մտադրությամբ, որով հավաստիացնում է, թե դեսպանության ստացած «արժանահավատ և պաշտոնական զեկուցագրերից» բխում է, որ այս պատմությունները զուտ երևակայության արդյունք են, և որ բուրքերը, կարևոր չէ, թե ինչպիսի՝ և ոչ մի վայրագություն չեն գործել: Կարողիկոսը կարող է ասել հակառակը և նույնիսկ լինել անկեղծ: Բայց մա միայն կրկնում է այն, ինչ ռուսական գրաքննությունն է նրան հայտնում: Այդ մամակի բնագիրը կցվում է²:

Հ. Գ. - Բեռնստորֆի մամակը հազիվ էր լույս տեսել, իսկ բողոքները և վրդովեցուցիչ հերքումները բազմապատկվում էին, ցույց տալով ճիշտ հակառակը՝ թե որքան են հավաստի հայկական կոտորածները: Այդ հրապարակումների մի օրինակը կցվում է³:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 204-204 v).

111

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 29-ը սեպտեմբերի 1915 թ.:

Ես կրկին տեսա Պողոս փաշային: Նա Եզիպտոսից մի մամակ է ստացել, որով նրան հայտնում են, որ բրիտանական իշխանությունները վճռել են պահել 4000 հայ գաղթականներին և նրանց միջոցներ տրամադրել մինչև պատերազմի սովարտը, դիտելով նրանց իբրև ռազմագերիների: Այնուամենայնիվ, ես գրել եմ Լ.ոնդոն, խնդրելով, որ բարեհաճեն աշխատանքով ապահովել նրանց, ովքեր դրան ընդունակ են:

«Տանի» միջոցով ես իրագել եմ դառնում, որ ֆրանսիական նավերով 8000 հայեր ևս տեղափոխվել են Պորտ-Սաիդ, և որ նրանք պետք է ուղարկվեն Ալժիր կամ Թունիս:

Որևէ խոսքեր չեն կարող արտահայտել հայ ժողովրդի երախտագիտությունը Կիլիկիայի հայ բնակչության այս բոլոր բեկորների փրկության առթիվ, որով մենք պարտական ենք Ֆրանսիային: Այս բոլոր բեկորները վաղը կվերակազմավորեն ժողովրդին, որին բուրքերը ցանկանում են և կարծում են, թե կարող են սպանել:

Եթե այս նոր գաղթականները պետք է ուղարկվեն Ալժիր կամ Թունիս, ես նույն խնդրանքն եմ ուղղում ֆրանսիական կառավարությանը, որպեսզի մա բարեհաճի աշխատանքով ապահովել նրանց, ովքեր դրան ընդունակ են:

Ինչ վերաբերում է Եզիպտոսում մնացողներին, ինչպես նաև Ալժիր կամ Թունիս գնացողների մեջ եղած մարտունակ տղամարդկանց, ովքեր ունակ են կռվելու, ես շատ եմ ցանկանում, որ ֆրանսիացիներն ու անգլիացիները բարեհաճեն նրանց մարզել և նրանցից կազմեն հայկական լեգեոններ, որոնք կօժանդակեն դաշնակիցների գործողություններին Կիլիկիա-

1 Պ. Բեռնստորֆը:

2 «Վաշինգտոն փոսթում» 1915 թ. սեպտեմբերի 28-ին լույս տեսած հոդված, որն այստեղ չի արտատպվում:

3 Արտատպված չէ:

յում, երբ վրա հասնի այդ գործողությունները ձեռնարկելու պահը: Նրանք կարող են շատ օգտակար լինել և հենց իրենք է, որ պետք է կրքոտաբայամբ դրան ձգտեն:

Ինչ վերաբերում է ինձ, ես կրկնում եմ, որ եթե հայկական մեկուսացված շարժումն այս պահին ինձ անշրջահասց է քվում, շատ ցանկալի եմ համարում, որ հայերի համագործակցությամբ՝ դաշնակիցների գործողությունը չհապաղի, որ այն նույնիսկ համընկնի այն մեծ ջանքերին, որոնք պետք է գործադրվեն Կոստանդնուպոլսի մատույցներում: Ես չեմ կարծում, որ բուրբերն այս պահին մեծ ուժեր ունենան Կիլիկիայում: Կոստանդնուպոլսի գաղտնի՝ նախապատրաստված անսպասելի ներխուժումը, հայկական կազմավորումների հետ մեկտեղ, որոնք ճանաչում են երկիրը և ոտքի կհանեն այնտեղ մնացած բոլոր մարտիկներին (անկասկած, այնտեղ մնացող մարտիկներ կան, որոնք ամբացված են լեռներում), կարող է շատ մեծ հուշողությամբ պատկվել, լինել շեղելու լավ միջոց և ավարտվել ամբողջ Կիլիկիայի արագ գրավմամբ:

Հ. Գ. - Այս պահին ես ստանում եմ Թիֆլիսի «Հորիզոն» քերթը, որտեղ քրթակցություններից մեկում կարդում եմ այս տողերը. «Մասունի և Ջեյթունի զսգարներում շարունակում է ընթանալ պայքարը հանուն ազատության»: Ջեյթունի և Հաճնի, իհարկե, բոլոր մարտիկները չէ, որ գոհվել են կամ արտաքսվել: Մի մասը դեռևս մնում է այնտեղ՝ լեռներում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 890, ff. 29-30 v).

112

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Արտաքին գործերի նախարար պ. Գեյկասեին

Դ. քիվ 298:

Կահիրե, 29-ը սեպտեմբերի 1915 թ.*:

(Ստացել են Կաբինետը և

Քաղ. վարչ. հոկտեմբերի 11-ին):

Հայագրի պ. Մալեգյանը, որի դատապաշտպան է Կահիրեում և Հայկական ընդհանուր միության ու Հայկական պաշտպանության ազգային կոմիտեի գլխավոր քարտուղարն է, վերջերս եկել էր ինձ տեսնելու, որպեսզի գրուցի ներկայումս Պոլս-Մաիդում ապաստանած Մուսա լեռան հայերին վերաբերող տարբեր հարցերի շուրջ:

Նա ինձ հետ խոսեց հատկապես իր այն հայրենակիցների մասին, որոնք ընդունակ են գենը կրելու և ցանկություն ունեն ետ ուղարկվել Կիլիկիա՝ այնտեղ բուրբերի դեմ կռվելու համար, համաձայն որոշ ժամանակ առաջ կազմված մի նախագծի, որը ներկայացվել է քրիստոնական զինվորական իշխանությանը:

Իմ խնդրանքով, պ. Մալեգյանն ինձ ուղարկեց կից ներկայացվող երկու ծանուցագրերի պատճենները, որոնք այս առթիվ հղվել էին գեներալ Մաքսուելլին:

Այս երկու ծանուցագրերը կազմվել են հուլիսի 20-ին և 24-ին: Հետևաբար, դրանք քվագրված են ավելի քան երկու ամիս առաջ և առաջինը հիմնվում է մեկ այլ՝ նախորդ ծանուցագրի վրա, իսկ վերջինը հիշատակում, որ կազմվել է գեներալ Մաքսուելլի խնդրանքով:

* Նախարարի նախնական ձեռագիր ծանուցագրությունը. «Հաղորդեք Լոնդոն, Նշելով, որ մենք հավանություն ենք տալիս պ. Գեֆրանի զսգարնությանը, և որ այս պայմաններում ձեռնարկված ավստամբությունը կհանգեցնի միայն համընդհանուր կոտորածների, որի պատասխանատվությունը կրելու են դաշնակիցները»:

Այդ վկայում է այն մասին, որ Մուսա լեռան հայերին մեր հաճանավերի միջոցով փրկելուց շատ առաջ, անգլիական զինվորական իշխանությունները նկատի էին ունեցել Ալեքսանդրետի շրջանում հայկական ապստամբական շարժումը քաջալերելու և դրան նեցուկ լինելու նպատակահարմարությունը:

Քացի դրանից, հետաքրքրական է նշել, որ համաձայն հայկական կոմիտեի ծրագրի, հիշյալ գործողության իմաստը, քանի որ այն պետք է լորսգործվեր իբրև առաջին քայլ, Սուեդիեն և Մուսա լեռը, ինչպես նաև Քեսաբն ու Ակրան սալը գրավելն է և այնտեղ դիմադրական շարժում կազմակերպելը: Սակայն Սուեդիեի տարածաշրջանն այն տարածաշրջանն է, որտեղից ծագում են Պորտ-Սաիդ գաղթած հայերը, իսկ Մուսա լեռը Մուսա սարն է, այն լեռը, որտեղ հայերը բուրբերին դիմադրել են քառասուն օրվա լնրացքում և գտնվելով ռազմամթերքների սպառման եզրին՝ բողբել են այն, ապավինելով միայն մեր հաճանավերի տախտակամածին:

Այսպիսով, այս առաջին գործողությունը սանձագերծվել է տարերայնորեն, քայց առանց արտաքին օգնության գործուցի, որը կարող էր այն հաջողությամբ պսակել: Այն երկարատև դիմադրությունը, որը Մուսա լեռան 500 հայերի կողմից ցուցաբերվել է, չնայած գեներլ պաշարների (միայն 260 հրացան) և ռազմամթերքների սակավությանը, որը նրանք կրում էին և այն մեկուսացմանը, որում նրանք գտնվում էին, վկայում է, այդուհանդերձ, որ Հայկական պաշտպանության կոմիտեի ծրագիրը յավ էր մտահողացված և որ Կիլիկիայում ու Սիրիայի հյուսիսում բուրբերի համար ահռելի դժվարությունների հարուցումը դաշնակիցների համար կարող էր դուրսին լինել, եթե նրանք այդ նպատակահարմար գտնեին:

Նկատի ունենալով տարվա՝ վրա հասած ուշ եղանակը, հայերի կոտորածները և զանգվածային տեղահանությունները, նման բնույթի շարժումը հենց այս կետում, ներկայումս, անկասկած, տեղի կունենա նվազ բարենպաստ պայմաններում:

Ամեն դեպքում, 500 մարտունակ հայերին անմիջապես օգտագործելու շուրջ ինձ հարցաքննող պ. Մալեգյանին ես պատասխանեցի, որ այս մարդկանց նավով ափ դուրս բերելը և մեն-մենակ բողբելը, հավանաբար, հավասարազոր կլինի նրանց ջախջախման և մահվան դատապարտելուն, որ նրանք, ինչպես ինձ է քվում, չեն կարող ձեռնարկել որևէ նպաստավոր գործողություն առանց կանոնավոր բանակի ուժերի աջակցության, քայց որ այդ բնույթի հատուկ գործողությունն անտարակուսելիորեն կախված է ընդհանուր գործողություններից և որ իմ կարծիքով, դաշնակիցների համար անհնար է այս պահին կրկին որևէ բան ձեռնարկելը, որը շրջանցի ներկա ռազմական թատերաբեմը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870, ff. 126-127).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Հայկական պաշտպանության ազգային կոմիտեի Ժանուցագիրը Կիլիկիայի վերաբերյալ¹

Կահիրե, 20-ր հուլիսի 1915 թ.:

Հիմնվելով Կիլիկիայում ռազմական գործողություն ծավալելու հնարավորությանը վերա-

¹ Նախատեսված է գեներալ Սաքսուելլի համար:

բերող մեր նախորդ ծանուցագրի վրա, մենք պատիվ ունենք Եզիպտոսում քրիտանական Նորին մեծության գինված ուժերի գլխավոր հրամանատար, Նորին գերագանցություն գեներալին ներկայացնել այս հարցին առնչվող մեր ազգային տեսակետները:

Քանի որ մենք գտնում ենք, որ Դալուանելի ռազմարշավից հետո Կիլիկիայի ափերում դաշնակիցների անձնակազմի ափ դուրս բերմանը վերաբերող մեր առաջին խնդրանքը ներկայումս բարեհաճութեւն ընդունվելու հավանականություն չունի. բայց քանի որ մյուս կողմից, արտասահմանում բնակվող հայերը չեն կարող այլևս երկար ժամանակ անտարբեր մնալ և անգործություն հանդես բերել այն սարսափելի կացության կապակցությամբ, որն առաջ է եկել այս վայրում բնակվող իրենց դժբախտ հայրենակիցների համար, մեր կոմիտեն իրեն բույլ է տալիս ճշգրտել և ինչ-որ շափով ձևափոխել այն ծրագրեր, որն արդեն պատիվ է ունեցել ներկայացնելու Ձերոյ գերագանցության հաստատմանը:

Իրոք որ, ամեն օր մենք ստանում ենք ամենատագնապալից լուրեր Կիլիկիայում հայերի կոտորածների և նրանց նկատմամբ տարբեր ձևերով կիրառվող հալածանքների վերաբերյալ. որը դրսևորվում է, մասնավորապես, նրանց զանգվածային տեղահանությամբ և ավարտին կհասնի այս տարածաշրջանի սմբողջ հայ բնակչության բնաջնջմամբ, եթե անհասպաղ որևէ լուրջ պաշտպանություն չկազմակերպվի:

Հենց նոր արդեն սյդ նպատակով հայկական կամավորական շարժում է սկիզբ առել Ամերիկայում, Բուրլարիայում, Ռոմինիայում և հայկական այլ գաղութներում: Մեր կոմիտեն վճիռ է կայացրել դրա ղեկավարումը ստանձնելու վերաբերյալ: Բայց նախքան ազգային պաշտպանության մեր ծրագիրն իրագործելը, մենք մեր առաջնահերթ պարտքն ենք համարում ստանալ քրիտանական Նորին մեծության կառավարության բույլտվությունը: Մենք որևէ կասկած չունենք. որ Ձերոյ գերագանցությունը կբարեհաճի այս հարցում մեզ սատարել, ըստ արժանվույն գնահատելով թուրքերի կողմից ջախջախված փոքր ժողովրդի այս հայրենասիրական նախաձեռնությունը, որի հավատն ազատության նկատմամբ անսասան է և որը վճռել է կատարել իր պարտքը՝ իր ունեցած շատ համեստ հնարավորությունների սահմաններում պաշտպանելով փաստության մեջ գտնվող իր եղբայրներին:

Մեր առաջադրանքի կատարման հարցում հաջողության հասնելու համար, մեզ պետք չէ մեծ եռանդով աղերսել քրիտանական կառավարության օժանդակությունը: Մեր կարծիքով այս օգնությունը գինվորական իշխանությունների կողմից կարող է դրսևորվել մեր կամավորներին որոշակի արտոնություններ շնորհելու ձևով՝ կամ բույլատրելով նրանց համախմբվելու Կիպրոսում, որը նրանց համար Կիլիկիայում գործողությունների հենակետ կծառայի, կամ ծրագրված վայրերում դեսանտի ափ դուրս բերման համար նրանց երթուղային միջոցներ հստկացնելով, կամ վերջապես, ռազմամթերքներ և դաշնակիցների մի փոքր միավորում սրամադրելով՝ ապահովելու համար այդ շարժման հաջողությունը, որը սատարվելով արդեն հուսալքության պատճառով արարտիզանական շարժմանը դիմած Կիլիկիայի քրիստոնյա բնակիչների կողմից, հնարավորություն կունենա պաշտպանել հայերին թուրքերի վայրագություններից և նույնիսկ գրավել ռազմավարական բավական կարևոր դիրքեր:

Նույնիսկ անօգուտ կլինի ավելացնել, որ այս սմբողջ շարժումը կընթանա քրիտանական գինվորական իշխանությունների ղեկավարության կամ հսկողության ներքո:

Այս ծայրահեղ ճգնաժամային պահին, որն ի մեծ փաստություն մեր ազգի, ստեղծվել է Կիլիկիայի հայերի համար, մենք համոզված ենք, որ քրիտանական Նորին մեծության կառավարությունը, հավատարիմ իր լիբերալ ավանդույթներին, այս դժբախտ ժողովրդին չի բողմի նրա տխուր ճակատագրի ճիրաններում, գերմանա-թուրքական դաշինքների ձեռքբերում՝ առանց որևէ պաշտպանության, առավել ևս, որ այն օգնությունը, որը մենք շատ համատարեն

ենք խնայում և որը հեռու է նրա ռազմական ծրագրերում, կարևոր չէ. քե ինչպիսի փոփոխության հանգեցնելուց, ավելի շուտ քննաձուգ շեղելու բարենպաստ հնարավորությունն ընձեռելու, քուրբական կառավարության ուշադրությունը խտտորելու և նրան՝ հատույնակցության բուլը անմիջական միջոցներից կտրելու առավելությունը կունենա:

Այս առթիվ, քող մեզ քույլ տրվի վկայակոչել Վանի օրինակը, որտեղ մի քանի հազար ապստամբների և կամավորների հերոսությունը բավական եղավ ապահովելու մի ողջ նահանգի ռազմակալումը ոռոսների կողմից և դրանով իսկ՝ շրդերի սպառնալիքի տակ գտնվող հարևան տարածաշրջանների հայ բնակչության պաշտպանությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870, ff. 128-129).

II

Կիլիկիայում ռազմական գործողությանը վերաբերող ծանուցագիր¹

Կահիրե, 24-ը հուլիսի 1915 թ.:

Իբրև հուլիսի 20-ի քվակիր մեր ծանուցագրի շարունակություն և Եգիպտոսում բրիտանական Նորին մեծության զինված ուժերի գլխավոր հրամանատար, Նորին գերագանցություն սրը Ջոն Մաքսուելլի խնդրանքով, մենք պատիվ ունենք ստորև ներկայացնել Հայկական ազգային պաշտպանության կոմիտեի ծրագիրը:

Այդ գործողությունը նվազեցվում է փոքրածավալ ռազմական գործողության և կայող է հանգեցնել բավարար արդյունքների՝ մինչ սպասենք, որ մեր նախագահ, Նորին գերագանցություն Պողոս փաշա Նուբարի՝ Կիլիկիայի ծովեզրին դեսանտի ափ դուրս բերմանը վերաբերող խնդրանքն ընդունվի ավելի նպատակահարմար ժամանակ: Թող մեզ քույլ տրվի ավելացնել, որ դեսանտի ափ դուրս բերումը կպահանջի դաշնակիցների միայն 10-ից 12000 զինվորներից բաղկացած ուժի օգտագործումը, որը կապահովի Ալեքսանդրետի, Մերսինի և Ադանայի ռազմակալումը (կլորճերի հետ մեկտեղ), մոտավորապես 10000-ից բաղկացած հայ կամավորների կորպուսի համախմբումը, ինչպես նաև այս տարածաշրջանի ամբողջ հայ բնակչության արդյունավետ օգնությունը, որովհետև նման հնարավորության դեպքում, մենք կկարողանանք ապավինել Կիլիկիայի 25000 հայ ապստամբներին և հարևան նահանգներից շտապ օգնության հասած 15000 ապստամբներին: Նվազագույնը 50000-ի հասնող այդ ահռելի ուժին կհաջողվի առաջ ընթանալ մույնիսկ կիլիկյան սահմաններից դուրս, որն, իհարկե, դաշնակիցների համար կլինի կարևոր հանգամանք: Մենք ցանկանում ենք անել բազմաթիվ անգամներ արձանագրված մի պարզ հավաստում, ասելով, որ Թուրքիայում՝ քուրբական վարչակարգի դեմ խիստ ընդգծված ապստամբական հակումներ ունեն միայն Հայաստանի և Կիլիկիայի հայ բնակիչները:

Այս նախագիծը մեր ազգային խղեպն է ու շարունակում է մնալ որպես այդպիսին և մեր հայրենակիցների հետ մեկտեղ մենք հաճույքով ապավինում ենք դրա իրագործման հարցում բրիտանական Նորին մեծության զինվորական իշխանությունների բարեհաճությանը:

Մեր սույն խնդրանքը, որը փոփոխության է ենթարկվել դաշնակիցների անհուսալ ափ դուրս բերմանը հակադրվող խորհրդածությունների հետևանքով, հանգում է Կիլիկիայում հալածվող մեր եղբայրներին օգնություն ցուցաբերելու նպատակահարմարությանը: Այսպիսով, խոսքն իրականում վերաբերում է միայն մի քանի նախնական գործողությունների,

¹ Նախատեսված է գեներալ Մաքսուելլի համար:

ոյունք բադերար հող կնախապատրաստեն այն պահի համար, երբ, հավանաբար, կարճ ժամանակից, դենսնտի ավի դուրս բերումը տեղի կունենա դաշնակիցների համար ամենաբարձր պայմաններում:

Այդ գործողությունները կարելի է ամփոփել հետևյալ ձևով.

1/ Օգտագործել Կիպրոս կղզին իբրև գործողությունների հենակետ: Հայ կամավորներն այնտեղ կհամախմբվեն և զինվորական իշխանությունները կբարեհաճեն անցազրեր հանձնել մեր կոմիտեի նշած անձանց:

2/ Թույլատրել մեզ Կիպրոսում զաղտնաբար հաղորդակցություններ հաստատել Կլիպիայի ավերի հետ՝ կամ այս երկրամասի քաղաքական և ռազմական իրավիճակին ծանոթանալու, կամ այնտեղ ապստամբական շարժում կազմակերպելու, կամ զենքեր և փող փոխադրելու համար:

3/ Հատկացնել սպաների հայ կամավորներին ուսուցանելու համար:

4/ Կիպրոսի զինվորական իշխանությունները կբարեհաճեն դյուրին դարձնել կամավորական զորքերի տեղափոխումը Կլիպիայ:

5/ Ըստ էության, մենք ինքնեյս կիզանք մեր կամավորների կարիքները: Բրիտանական Նորին մեծության կառավարությունը որոշում կկայացնի, եթե այդ նպատակահարմար գտնի, կամավորներին ուղեկցող սպաներ կցալու, օգնության կարգով զենքեր և ռազմամթերքների հատկացնելու, ծովային կամ զինվորական փոքրաքանակ միավորումներով գործողությանը սատարելու և այլ հարցերի շուրջ: Այդ շուշափելի օգնությունը կախված կլինի միայն բրիտանական կառավարության բարեհաճությունից:

6/ Ռազմական իշխանությունները կունենան, եթե այդ ցանկանան, այս բոլոր գործողությունների զերագույն հսկողության և նույնիսկ ղեկավարման իրավունքը:

7/ Բրիտանական զինվորական իշխանությունները և Հայկական պաշտպանության կոմիտեն կլինեն ուղղակի հարաբերությունների մեջ: Իշխանությունները հրահանգներ կտան և կոմիտեն նրանց կհաղորդի այն բոլոր տեղեկությունները, որոնք կկարողանա ի մի բերել Կլիպիայի մասին:

Եթե հարկ է, որ մեր գործողությունները սահմանափակվեն ամենասեղմ շրջանակներում, մեր կամավորների թիվը կարող է ամսիջապես հասնել 5000-ի, բայց առաջին իսկ հաջողություններից ի վեր, և կամ դաշնակիցների կողմից դենսնտի ավի դուրս բերման պարագայում, այդ թիվը կարող է հասնել 10000-ի:

Այս ուժերով մենք կարող ենք իրականացնել հետևյալ գործողությունները.

1/ Գրավել Մուեդիեն կամ Մուսա լեռը և Ջեսաբը կամ Ակրան սարն ու այդ վայրերում դիմադրական շարժում սկզբնավորել: Այս երկու տեղանքները, ինչպես նաև Օրոնտ գետի երկու ավերիին տարածված գյուղերը, բնակեցված են 25000 հայերով:

2/ Գրավել Ալեքսանդրետի ծոցում գտնվող Գյոյր-Յուլը և համախմբելով շրջակայքի հայ բնակիչներին, կազմակերպել լուրջ դիմադրություն:

3/ Այն դեպքում, եթե առաջին երկու գործողությունները հաջողությամբ պսակվեն, մենք կարող ենք Ալեքսանդրետը և Բեյլամի կիրճը գրավելու փորձ կատարել:

4/ Ամեն դեպքում, մենք կարող ենք կենտրոնացնել ապստամբներին լեռներում և պարտիզանական շարժման համակարգը տարածել ամբողջ Կլիպիայում: Եթե հանգամանքները մեզ օգնեն, մենք կկարողանանք գրավել հայերով բնակեցված տեղանքներում մի քանի ռազմավարական դիրքեր, ինչպես Հաճնը, Սիսը և ուրիշներ:

5/ Մենք կարող ենք մաս մեծ մակերեսի վրա կտրել հեռագրալարերը, ավերել երկաթուղային գծերը, պայթեցնել կամուրջները և, այսպիսով, խափանել թշնամու հաղորդակցության

միջոցները:

Մենք պետք է անհապաղ գործի անցնենք այս համետ ծրագիրն իրականացնելու համար, ոչ միայն այն պատճառով, որ մեր դժբախտ հայրենակիցները հույսում են մեր շուտափույթ օգնությունը, այլև այն, որ երկու ամիս անց լեռներում անձրևներ կսկսվեն տեղալ, գետերն ափերից դուրս կգան և ճանապարհներն անանցանելի կդառնան: Եթե մեր կամավորներին և ապստամբներին հաջողվի գրավել մի քանի կարևոր դիրքեր, քուրքերը չեն կայտուհանա օգտագործել իրենց ուժերը ողջ ձմռան ընթացքում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870. ff. 130-131 v).

113

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չուպանյանը Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ման Գուլին

Ն:

Փարիզ, 30-ը սեպտեմբերի 1915 թ.:

Եզիպտոսի հայկական քերթերում ես գտնում եմ նոր տեղեկություններ Պորտ-Սափդի գաղթականների մասին: Ես շտապում եմ ձեզ ուղարկել դրանց ամփոփումը:

«Այս գաղթականներն Անտիոքի շրջակայքի գյուղերից են՝ Սուեդիեից, Բիքիասից, Քելեր-Բեյիից, Յոդուն-Օլուքից և այլն: Քանի որ քուրքական կառավարությունը ցանկացել է նրանց տեղահանել, նրանք պատսպարվել են Մուսա լեռան բարձունքներում իրենց 150 մարտիկներով և մի քանի որսորդական կրացաններով 55 օր շարունակ դիմադրել 3500 զինվորների (կանոնավոր բանակի և բաշիբազուկների): Նրանք տվել են 15-20 սպանված և ոչնչացրել հազարի հասնող քուրքերի: Քանի որ նրանց ռազմամթերքները սպառման եզրին էին, նրանք ազդանշաններ են ուղարկել անցնող ֆրանսիական հաճախավորին: Վերջիններս մոտեցել են ափին, ունջակոծել քուրքերի դիրքերը, հնարավորություն ընձեռելով հայերին նավ տեղափոխվելու: Երկու շաբթից բողկացած ցանկաշար կազմելով, մարտիկները շարունակել են կրակել մինչ այն պահը, երբ կանայք, երեխաները և ծերունիները նավ են բարձրացել, իսկ իրենք նավ են բարձրացել վերջում: Ֆրանսիացի նավաստիներն այդ մասին խառում են հիացմունքով. «Նրանք հերոսներ են, նրանք կռվում են առյուծների նման, ասել են նավաստիները: Նրանք հրաշքներ կգործելին, եթե մեծ քանակով զենքեր և ռազմամթերքներ ունենային»:

Երբ բոլորը նավ են բարձրացել, տախտակամածի վրա տեղի է ունեցել շատ հուզիչ տեսարան: Ֆրանսիացի նավաստիները խորապես հուզված էին, հայերն ու ֆրանսիացիները գրկախառնվում էին, բազմաթիվ ֆրանսիացի նավաստիներ լալիս էին: Ֆրանսիական հաճախավոր անձնակազմը ճանապարհորդության ողջ ընթացքում՝ մինչ Պորտ-Սափդ, գաղթականների նկատմամբ դրսևորել է բարյացակամ վերաբերմունք, ցանկացած գովեստից վեր կանգնած նվիրվածություն: Նավաստիներն իրենց զրկում էին այն բոլոր ուտելիքներից, որ ունեին՝ գաղթականներին հատկացնելու համար:

Պորտ-Սափդում ափ դուրս գալուց հետո, մի հիվանդ կին մահացել է հիվանդանոցում, որ նրան տեղափոխել էին: Հաճախավոր կրամանատարը դիմել է Պորտ-Սափդի վանականներին

և որոշել այդ հայ կնոջը հուղարկավորել մեծ հանդիսությամբ, այն նույն արարողությամբ, որով հուղարկավորում են ֆրանսուհի միանձնուհիներին: Բոլոր գաղթականները չէ, որ Անտիոքի շրջակայքից են: Նրանց թվում կան Ջեյթունից, Մարաշից, Ուրֆայից, Ադանայից, Մերսինից եկած մարդիկ: Դիմադրություն հրահրողը և դրա կազմակերպիչը եղել է Յողուն-Օրթի քահանա Աբրահամ Գալստյանը: Նրանց հետ է գտնվում նաև Ջեյթունի բողոքական հայերի քահանան:

Պատմում են, որ Զենաքի հայերը նույնպես որոշել են դիմադրել տեղահանության միջոցառումներին, բայց որ 20-25 օրից ի վեր, նրանցից այլևս լուրեր չկան: Կիլիկիայի ներքին շրջանների բազմաթիվ այլ տեղանքներում [հայերը] լեռներում դեռևս պաշտպանվում են թուրքերից:

Ֆրանսիական հաժանավի հրամանապարհ իր հոգածության ներքո է վերցրել գաղթականների ծախսերը մինչ այն պահը, երբ անգլիական իշխանությունները նրանց նկատմամբ որոշում կկայացնեն և վերջնական միջոցներ կձեռնարկեն: Եզիպտոսի հայկական գաղութները շտապել են նրանց հատկացնել տարբեր բնույթի օգնություններ և վճռել են մասնակցել նրանց ծախսերը հոգալուն:

*
* *

Բողոքարիայից երկրորդ զեկուցագիրն է հղվել Պողոս փաշային, որն այն հաղորդել է պ. Դեկլասեին: Դրանում տեղ գտած մանրամասները ճշգրիտ են, բայց եզրակացությունը, համաձայն որի վեց նահանգներում և Կիլիկիայում այլևս չի մնացել և ոչ մի հայ՝ անընդունելի է, անհավանական: Այն 4000 հայերը, որոնք հենց նոր են ժամանել Պորտ-Սաիդ և 8000-ը, որոնք հենց նոր են մագապուրծ եղել կրկին Կիլիկիայից (Ալեքսանդրետից և Բեյլամից՝ ըստ Եզիպտոսի թերթերի), պարզապես վկայում են, որ երկրում դեռևս հայեր կան:

Արենքի «Պատրի» թերթը սեպտեմբերի 14-ին տպագրում էր հետևյալ ճեպագիրը. «Արժանահավատ սկզբնաղբյուրից ելնող մեր տեղեկությունների համաձայն, հայերի տեղահանությունն այս վերջին օրերին հասել է գարիորելի չափերի: Շնի-Շեհիթի և Աֆիոն-Գարահիսարի միջև (Անգոբայի նահանգում) գտնվում են 150000 հայեր, որոնք, լքելով իրենց քաղաքները և գյուղերը, գաղթել են լեռները՝ խուսափելու համար մահմեդականների բռնություններից»:

Ալեքսանդրիայի «Արև» թերթն իր վերջին համարում տպագրում է հետևյալ ճեպագիրը. «Մենք արժանահավատ սկզբնաղբյուրից տեղեկանում ենք, որ այստեղ, բողոքական հյուպատոսությունը ստուգել է մի լուր, ըստ որի 140000 հայեր օգոստոսի 30-ին (հի՛ն) տ՛հոմաբով), բողոքական կառավարության թույլտվությամբ քողել են Կոստանդնուպոլիսը և զնացել Բուլղարիա: Յուրաքանչյուր հայի թույլատրվել է իր հետ տանել միայն 10 լիւրայի հասնող գումար»: Ես դժվարությամբ եմ հավատում այս բանին: Նման փաստի մասին Սոֆիայից կարող էին հեռագրել ուղղակիորեն եվրոպական թերթերին:

Հ. Գ. - Ես այս մամուլն ալդեն գրել էի, երբ ստացա ձեր նամակը:

Մտ ապագայում 8000 նոր գաղթականների ժամանման լուրը պետք է, որ ստույգ լինի, որովհետև Եզիպտոսի հայկական թերթերը խոսում են այդ մասին: Եթե այս լուրը պաշտոնապես հաստատվի, ես ձեզ խնդրում եմ ծայրահեղ բարություն ունենալ ինձ այդ մասին տեղյակ պահելու և ինձ հանդիպում նշանակելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 207-210 v).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝
Արտաքին գործերի նախարար պ. Դելկասեին**

Ճ. թիվ 300:

Կահիրե, 1-ը հոկտեմբերի 1915 թ.:

(Ստացել են Կաբինետը և

Քաղ. վարչ. հոկտեմբերի 11-ին):

3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Դարբիոն բարեհաճել է ինձ իրագեկ դարձնել երկու զեկուցագրերի¹, որոնք նա հենց նոր է հղել պ. Ռազմաճովային նախարարին: Իմ հերթին, ես պարտավորված եմ զգում կից Ձերոյ գերազանցությանն ուղարկել այդ երկու զեկուցագրերի պատճենները:

Առաջինը մանրամասն հաշվետվություն է տալիս այն պատճառների մասին, որոնք դրոյել են Օրոնտի հյուսիսային ափի հայերին փախչելու լեռները, այն կացության մասին, որում նրանք գտնվում էին Մուսա լեռան վրա, երբ մեր էսկադրան նրանց օգնության է հասել և այս դժբախտ ժողովրդի փրկության ու դուրս բերման գործողությունների մասին:

Երկրորդ զեկուցագրում ծովակալ Դարբիոն ներկայացնում է սիրիական հարցն ընդհանուր առմամբ և այն այլընտրանքային լուծումները, որոնք այդ հարցը, ինչպես նրան բվում է, պահանջում է կարճ ժամկետում:

Հնարավոր լուծումները, ըստ ծովակալի, հանգում են երկուսի. ֆրանսիական կամ ֆրանսիական ճնշող գերակշռություն ունեցող ֆրանս-անգլիական ռազմարշավի և թուրքական տիրապետությանը թշնամաբար տրամադրված ժողովուրդների զինման:

Ծովակալ Դարբիոն գտնում է, որ Սիրիա կազմակերպվելիք ռազմարշավի համար, պակի երբևէ այնքան բարենպաստ չի եղել, որքան այժմ: Ես գտնում եմ, որ նա իրավացի է: Սիրիական ռազմարշավը հնարավոր էր առանց դժվարության իրականացնել վերջին նոյեմբեր ամսին: Այդ պահին, սիրիական ժողովուրդները, Թուրքիայի պատերազմի մեջ ընդգրկվելն ընդունելով իբրև իրենց ազատագրության ազդանշան, ապստամբելու համար սպասում էին շուտափույթ զինված միջամտության: Սիրիայում օսմանյան գործերն անհամեմատ փոքրաթիվ էին, ծովափի շրջանում կամ երկրի ներսում դեռևս ոչ մի պաշտպանողական նախապատրաստություններ չէին արվել:

Երկու ամիս անց բարենպաստ պակիլ ետևում էր մնացել: Թուրքերը դեպի Սուեզի ջրանցք ռազմարշավի նախապատրաստվելիս, Սիրիա տարան նշանակալից ուժեր, երկրում ստեղծվեց փոքրիշատե պաշտպանողական իրավիճակ, առաջին հույսերից հուսախաբ եղած ժողովուրդները մնացին անտարբեր:

Բայց ներկայումս, Տավրոսի և Ամանոսի հարավում գտնվող ամբողջ տարածաշրջանը կրկին անայացված է, քանի որ գործերի առավել մեծ մասն ուղարկվել է դեպի Դարդանեկ և Կոստանդնուպոլիս, մատակարարումները հազվադեպ են, և իշխանության պատճառած տհաճություններից, բռնագրավումներից, բռնի գործառնություններից, կոռուպցիայից տանջահար սիրիացի ու հայ ժողովուրդները պատրաստ են ապստամբել և իբրև ազատարարների ընդունել նրանց, ովքեր կներկայանան:

Իբրև գործողությունների ծրագիր, ծովակալ Դարբիոն առաջարկում է այն, ինչը Հայկա-

¹ Վերն արտատպված են թիվ 99 և 100 փաստաթղթերում:

կան պաշտպանության կոմիտեն առաջադրել է զեներալ Մարտուելյին հղված ծանուցագրում՝ որի պատճենն այս նամակով էս ուղարկում եմ 'Դեպարտամենտին' դեսանտի ափ դուրս բերում Ալեքսանդրետի շրջանում, անսպասելի հարձակումով Տավրուսի և Ամանոսի անցուղիների գրավում, Սիրիայի մեկուսացում կայսրության մյուս մասից և առաջխաղացում դեպի հարավ:

Բայց ծովակալը չի քարցնում ներկայումս պատերազմական գործադրությունների գլխավոր ռազմաճակատից՝ սիրիական ռազմարշավի համար անհրաժեշտ անձնակազմերի, որքան էլ դրանք համեստ լինեն, դուրս բերման դժվարությունը կամ նույնիսկ անհնարիմությունը մեզ համար:

Այնժամ նա չի զլանում համառորեն խորհուրդ տալ իայ և սիրիացի ժողովուրդներին ձեռնամուխ լինել զինվելու, որոնց մենք այս ձևով կողոզենք ապստամբելու: Նախ և առաջ՝ նա պահանջում է 800 հրացան՝ ռազմամթերքների հետ մեկտեղ, Պորտ-Սախո գաղթած մարտունակ հայերին զինելու համար, որոնք կմարզվեն և ափ կհանվեն ծովափին: Նա նաև պահանջում է, որ 20000 հրացան և դրանց համար անհրաժեշտ ռազմամթերքները պարունակող մի պահեստ դրվի 3-րդ Էսկադրայի տրամադրության ներքո, որպեսզի այդ ամենը բաժանվի ծովափնյա շրջանի որոշակի կետերում:

Ես չեմ կասկածում, որ մեզ համար դյուրին կլինի բավարար քանակով զենք բաժանելու միջոցով ապստամբություն հրահրել Կիլիկիայի հայերի կամ այնտեղ մնացածների շրջանում, ինչպես նաև սիրիացիների ու, մասնավորապես, լիբանանցիների շրջանում: Հավանական է, որ ապստամբների թիվն արագորեն կաճի և դրա հետևանքով թուրքերի համար կառաջանան շատ մեծ բարչություններ: Նույնիսկ, հավանաբար, շատ հնարավոր կլինի, եթե նկատի ունենանք թուրքական անձնակազմերի նվազ քանակը և գորքերի ողբալի վիճակը, որ այս ժողովուրդները հասնեն օսմանյան իշխանությունների վտարմանը և դառնան Սիրիայի տեր ու տնօրենները:

Այդուհանդերձ, ինձ թվում է, որ վտանգավոր կլինի նպաստել ապստամբության բռնկմանը Սիրիայում՝ մինչ կանոնավոր բանակի բավականաչափ ուժերի հետ համաձայնության հանգելու շուրջ ցանկություն դրսևորելը կամ այդ կայացնելը: Եթե շարժումը որևէ կետում ձախողվի՝ բախտի քմահաճույթին մատնված ժողովուրդների մոտ նվազ վճռականության կամ այս ժողովուրդների ու ապստամբ խմբավորումների միջև համաձայնության բացակայության պատճառով, դրան, իհարկե, կհաջողդեն սարսափելի բռնությունները, մեր կողմնակիցների շրջանում ծայրահեղ բարոյալքվածությունը և մեր հեղինակությանն ուժգին հարված կհասցվի: Եվ այն դեպքում, որն, ի դեպ, հավանական է, երբ ապստամբությունը հաղթանակի ու թուրքական իշխանությունների հզորությունն ի չիք դառնա կամ նրանք վտարվեն Սիրիայից, մենք ոչ պակաս պարտավորված կլինենք ձեռնամուխ լինելու երկրի գրավմանը, առանց մեր կողմից այն ազատագրելու գերապատվությունն ունենալու, թուրքերի՝ նվաճողական նպատակներ հետապնդող հնարավոր վերադարձից այն պաշտպանելու և վարչական կարգ հաստատելու համար՝ այնտեղ անհամար բանասարկությունների և անիշխանության ծնունդ առնելու մտավախությունից դղոված, որը ոչ մի տեղական իշխանություն չի կարողանա նույնիսկ սանձահարել:

Ես վերադառնում եմ, այսպիսով, այն գաղափարներին, որոնք այդքան շարադրել եմ բազմաթիվ առիթներով: Միակ ճիշտ լուծումը ռազմարշավի կազմակերպումն է դեպի Սիրիա և երկրի գրավումը, գործողություններ, որոնք անհամեմատ դյուրին կլինեն, մասնավորապես, ներկայումս, շնորհիվ այն կացության, որում գտնվում են թուրքերը և բնակչության օգնու-

թյան: Եթե ռազմարշավային կորստու ուղարկելն անհնար է, մի բան, որն այս պահին, երբ մեր բանակները պատրաստվում են իրենց համագործակցությամբ օժանդակել եվրոպական հակամարտության նոր ռազմաճակատին, թվում է հավանական, Սիլիալայում համընդհանուր ապստամբություն հրահրող յուրաքանչյուր գործողություն, առանց մեր աջակցության և դեկավարության, վտանգավոր կլինի որքան մեզ, նույնքան և ժողովուրդների համար: Վերջապես, անկանոն բանակի զինված անձնակազմերը, ինչպես այն զինված անձնակազմը, որը կարող է կազմավորվել Պորտ-Սախլիի հայ գաղթականներից, առանց մեր օժանդակության (բացառությամբ համդերձանքին և երբուղային միջոցներին վերաբերող հարցերի) կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ նախատեսված լինի խիստ սրուշակի նպատակ, ինչպիսին է, օրինակ, ավերման նպատակ հետապնդող սրընթաց հարձակումը որևէ կառույցի, կամրջի, բունելի, ռազմամթերքի պահեստի և այլնի վրա: Չորքը պետք է ասի դուրս բերվի և նպատակին հասնելուց անմիջապես հետո ետ վերադարձվի:

Եզրափակելով, ես կնշնմ գեներալ Մաքսուելի բոլորովին վերջերս հայտնած ավստուսները, որը, վաղուց ի վեր կցանկանար, ինչպես այդ մասին տեղեկացրել են Ձերդ գերագանությունը, գործել Սիլիալի հյուսիսում՝ Եգիպտոսի դեմ հարձակման վտանգը վերացնելու համար: «Այո», ասել է գեներալն ինչ-որ մեկի, որն այդ ինձ է հաղորդել, «հարկ էր գործել Ալեքսանդրետի տարածաշրջանում: Բայց ֆրանսիացիներն ազատ ուժեր չունեն այդ վայրերում գործողություն իրականացնելու համար, իսկ մենք չենք համարձակվում գնալ այնտեղ՝ ֆրանսիացիներին տհաճություն չպատճառելու համար»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 870, ff. 132-134 v).

115

Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանության արխիվապահներ պֆարոնայք Ռորեր դյու Գարդին և Բողուն՝ Արտաքին գործերի նախարար պ. Գեկասեին

Ծ. թիվ 46¹:

Պերու, 2-ր հոկտեմբերի 1915 թ.:

(*Unuglet* է Զադ. վարչ. 1918 թ. դեկտեմբերի 12-ին):

«Հիլալն» այսօր տայագրում է² (հավելված թիվ 20) նախնական օրենքի մի բնագիր, որը վերաբերում է «այլ վայրեր տեղափոխված անձանց» (?) ունեցվածքներին, պարտքերին և հավատարմագրերին: Եթե այդ հրամանագրի արտահայտություններն ընդունենք ամենայն ճշգրտությամբ, ապա կտեսնենք, որ այն հանգում է բացակայողների կատարյալ և պարզունակ կողոպուտին: Ասում են, որ խնդրո առարկա օրենքը կուղղվի միայն հայերի դեմ, բայց իր բովանդակությամբ այնպիսին է, որ վարչական և այլ միջոցներով կարող է կիրառվել՝ նվազագույնը դեպի ներքին նահանգները տեղափոխված բոլոր անձանց նկատմամբ: Մեր նախաձեռնությամբ և մեր իտալացի ու բելգիացի գործընկերների նախաձեռնությամբ, Ամերիկայի դեսպանությունը բանավոր ծանուցագիր է հղել Բարձր Դռանը՝ իր հովանավորության տակ գտնվող անհատների իրավունքները, անհրաժեշտության դեպքում, պաշտպանելու նպատակով:

¹ Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

² «Հիլալ», 29-ը սեպտեմբերի 1915 թ., թիվ 117:

ՀԱՎԵԼՎԱԾ

Այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքներին, պարտքերին և հավատարմագրերին վերաբերող նախնական օրենք

Հոդ. I/ Այլ վայրեր տեղափոխված անհատների և իրավաբանական անձանց ունեցվածքները, պարտքերը և հավատարմագրերը, ըստ 1331 ր*. մայիսի 14-ի նախնական օրենքի, լուծարվում են և չեղյալ համարվում դատարանների կողմից՝ յուրաքանչյուր անձի հասնար հատուկ կազմված հաշվեկշիռների հիման վրա, որոնք ներկայացրել է այդ առթիվ ստեղծված հանձնաժողովը:

Հոդ. II/ Թիվ I հոդվածում նշված անձանց պատկանող՝ կառուցված անշարժ գույքերը (vakk-i idjare-teinli) և վակուֆային հողակտորները գրանցված են Աստվածահաճո հաստատությունների՝ նախարարության դրամարկղի անունով: Մյուս անշարժ գույքերը գրանցված են Ֆինանսների նախարարության կողմից: Սեփականատիրոջ կացության հարցում հատակություն մտցնելուց հետո, նրան կվերադարձվի նրա սեփականության արժեքի ընդհանուր գումարի պարտքի մնացորդը, որը կվճարի այս երկու նախարարություններից մեկը:

Դատական այն գործերում, որոնք վերաբերում են անշարժ գույքերին կամ առնչվում սեփականության դիմաց վճարումին. կամ այլ խնդիրների, հակառակ կողմը ներկայացվում է կադաստրի պաշտոնական անձանց կողմից: Սեփականությունը հնարավոր է հիմնավորել այլ ապացույցների միջոցով, ինչսլիսիք են Կադաստրների նախարարության տված սեփականության ակտերը, միայն թե խոսքը չվերաբերի կեղծ ակտի: Եթե հանձնման ու վաճառքի ակտերում, որոնք կազմել են վերը նշված անձինք իրենց տեղափոխությանը նախորդած 15 օրվա ընթացքում, դատավարության միջոցով հաստատվել է կեղծիքի կամ բացարձակ խաբեության իրողությունը, կնքված ակտը լուծարվում է:

Հոդ. III/ Վերը նշված անձանց առձեռն փողը, լքված կահույքի հանրագումարը, հավատարմագրերն ու ներդրումները ժողովվել են, կնքվել և պահանջվել հատուկ այդ առթիվ ստեղծված հանձնաժողովների նախագահների կողմից, որոնք միաժամանակ իրականացնում են լքված կարվածքների վաճառքը, որոնց համար վիճարկումներ լինել չեն կարող: Այս ձևով ձեռք բերված փողերն իրենց սեփականատերերի անունով պահպանության են հանձնվում Ֆինանսների նախարարության դրամարկղերին:

Հոդ. IV/ Երկու ամսով երկարաձգվել է այն անձանց ժամկետը, ովքեր հավակնում են լքված գույքերի նկատմամբ իրավունքներ ունենալուն կամ ովքեր ասում են, որ տեղափոխված անձանց կողմից տրված պարտադրքեր ունեն, որպեսզի անձամբ կամ վստահված անձանց միջնորդությամբ դիմեն հանձնաժողովներին և գրանցել տան իրենց պահանջները: Արտասահմանում բնակվող անձանց համար սահմանվում է չորսամսյա ժամկետ: Բացի դրանից, նրանց պարտադրվում է բնակության վայր ընտրել այն քաղաքը, որը հանձնաժողովի նստավայրն է, որպեսզի կարողանան ապահովել հաղորդակցվելու բոլոր միջոցները: Այս ժամկետի լրանալուց հետո հարուցված գործերը կիետևեն ավանդական դատական ընթացակարգին, և այն անձինք, ովքեր այս դատավարությունների ընթացքում կշահեն գործը, հա-

* Շատ մահմեդականների բվագրության, որը սկիզբ է առնում 622 ր.: Մեքքայից Մեդինա կատարած Մուհամեդի փախուստից. Հիջրայի 1331 րվականը համապատասխանում է 1915 ր.: – Ծ. ր.:

1 Թուրքերեն՝ “Evkal”:

մածայն սույն օրենքի, չեն կարող հավակնել իրացված ունեցվածքներին:

Հոդ. V/ Հանձնաժողովները յուրաքանչյուր հավատարմագրի ու պարտքի համար ապացույցներ են փնտրում, նրանք ընդունում են և գրանցում այնպիսիք, որոնք համարում են հիմնավորված և հավատարմագրերն ուղարկում իրավասու դատարաններին՝ լրված ունեցվածքներին վերաբերող առարկելի դատական գործերը գրանցելուց հետո: Այնուհետև՝ հանձնաժողովը կազմում է յուրաքանչյուր անձի պարտքի և կանխիկ փողի հանրագումարն ու այդ մասին տեղեկացնում շահագրգիռ անձանց, այս հանրագումարի ձևակերպված պատճենները կախելով հարկ եղած վայրերում. դրանց բնօրինակները նրանք ուղարկում են գլխավոր դատախազին, որոնց կցում են օժանդակ փաստաթղթեր:

Դատախազն այդ փաստաթղթերն ուղարկում է առաջին ատյանի այն դատարան, որի տարածքում էր գտնվում պարտավանի օրինական բնակարանը՝ մինչ նրա տեղավորումը և պահանջում այդ դատարանից գրանցել խնդրո առարկա փաստաթղթերը: Այդ արձանագրությունների առիթով իրավասու դատարաններում վարկատուները կարող են դիտորդություններ առաջադրել 15 օրվա ընթացքում, որոնք կհաջորդեն հայտարարությունները փակցնելու օրվան:

Այս ժամկետն ավարտվելուն պես, գլխավոր դատախազի ներկայությամբ, դատարանը քննություն է առնում հաշվետվությունները և եթե դրանցում դիտորդություններ են լինում, նա շտապ հրավիրում է այն անձնավորությանը, ուր դրանք ձևակերպել է ու հանձնաժողովի նախագահին կամ նրան փոխարինողին, ծանոթանալու միջնորդությամբ և պաշտպանությամբ: Դրանից հետո, խնդրո առարկա հաշվեկշիռներում դատարանը Վտցնում է հարկ եղած փոփոխությունները և գրանցելուց հետո, որոշման ձևով դրանք հանձնում հանձնաժողովներին, որպեսզի կենսագործվեն համաձայն հաջորդ հողվածի դրույթների: Այս որոշումները ենթակա չեն ո՛չ առարկության, ո՛չ ետ տրվելու, ո՛չ բողոքարկման, ո՛չ վճռաբեկության:

Հոդ. VI/ Համաձայն դատարանի վերջնական դատավճռի, պարտավանի արտոնյալ և սովորական պարտքերի վճարման հոգսը դրվում է լուծարող հանձնաժողովներին և գործադիր գրասենյակների վրա, այն դեպքում, եթե այս հանձնաժողովները նիստեր այլևս չեն գումարելու: Եթե պարտավանի ամբողջ ունեցվածքը չի բավարարում նրա սովորական և արտոնյալ պարտքերն ամբողջությամբ մարելու համար, ապա շրջանք վճարվում են պարտատուի գումարին համապատասխան չափով:

Հոդ. VII/ Քաղաքացիական հայցի ապահովման համար՝ կամ դատարանի, կամ պետական վարչությունների կողմից տեղավորված անձանց ունեցվածքների և աճուրդի միջոցով վաճառքի հանելու նպատակով նրանց անշարժ գույքի վրա դրված կախնքները վերացվում են և նրանք, ովքեր այդ կախնքների հեղինակներն են, պետք է համակերպվեն սույն օրենքի հետ: Նրանք, ովքեր տեղավորված անձանց դեմ ուղղված՝ ընթացքի մեջ գտնվող դատավարություններ են վարում, կարող են անկաշկանդ դիմել հանձնաժողովներին կամ բողոքել, որ գործն ընթանա իր բնականոն հունով, ընդհանուր դրույթներին համապատասխան:

Նրանց նկատմամբ, ովքեր չեն դիմում հանձնաժողովներին, կիրառվում է IV հոդվածի վերջին պարագրաֆը: Այս անձանց օգտին ընթացքի մեջ գտնվող դատավարությունները կվարվեն հանձնաժողովի նախագահի կամ նրա հանձնարարությունները կատարողի կողմից:

Հոդ. VIII/ Հանձնաժողովների մոտալուտ հիմնադրման ձևը և սույն օրենքի տարբեր դրույթների կիրառումը կճշգրտվեն համաձայն կանոնակարգի:

Հոդ. IX/ Կառուցված այն անշարժ գույքը, որը պատկանում է vakfs idjarèteinli կատեգորիային, ինչպես նաև վակուֆային հողակտորները և անշարժ գույքերը, որոնք գրանցված են «էվկաֆի» և Ֆինանսների նախարարությունների հաշվին, կարող են, համաձայն վտարան-

դիմենրին վերաբերող կանոնակարգի, բաժանվել վտարանդիներին:

Հող. X/ «Վկաֆի», Ներքին գործերի, Արդարադատության և Ֆինանսների նախարարները պարտավորվել են կենսագործել սույն օրենքը:

Հող. XI/ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում իր հաստատման պահից:

13-ր սեպտեմբերի 1331 թ.¹:

116

2-րդ դիվիզիայի հրամանատար և Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժայ, դերժովակալ Գարրիոն՝ Ռ-ազմաժողովին նախարար պ. Վիկտոր Օգանյորին

Ճ. քիվ 318:

«Ժորեգյուիբերիի» տախտակամածից,
Պորտ-Սաիդի նավակայան, 2-ր հոկտեմբերի 1915 թ.:
(Ստացել են Կար. հոկտեմբերի 14-ին,
Գ. {լխավոր} շ {տարբի} 3-րդ ենթաբաժինը
հոկտեմբերի 16-ին):

Թիվ 1235 հեռագրով ես պատիվ ունեցա ձեզ համառոտակի իրազեկ դարձնել այն պատճառներին, որոնք ինձ դրդել էին սեպտեմբերի 22-ի իմ թիվ 294 նամակում² հանրագումարի բերված՝ Պորտ-Սաիդ գաղթած Մուսա լեռան հայ բնակիչներից բոլոր մարտունակ տղամարդկանց զինելու, հրամանատարական կազմով ապահովելու և ռազմական ուսուցում տալու շուրջ առաջարկությունները հավաստելու: Ես գտնում եմ, որ պարտավոր եմ այսօր դրանք ձեզ ներկայացնել ավելի ամբողջական տեսքով:

Ռ-ազմական և քաղաքական բնույթի պատճառներով՝ առաջարկվող միջոցն ինձ անհրաժեշտ է թվում և, հնարավորության դեպքում, հայ գաղթականներին օգտագործելու շուրջ կարծիքների այն փոխանակությունը, որը ես ունեցել եմ բրիտանական տեղական գլխավորական իշխանությունների հետ, միայն հաստատել եմ իմ այս կարծիքը: Այն հետապնդում է եռակի նպատակ.

1/ Բավարարել զենք կրելու ունակ բոլոր տղամարդկանց խիստ հաստատակամորեն դասկորած ցանկությունը, համաձայն որի նրանք ցանկանում են վերադառնալ իրենց երկիրը՝ իրենց դարավոր թշնամու հետ այնտեղ մարտնչելու համար:

2/ Վտանգավոր անգործությունից ձերբազատել բազմաթիվ մարտունակ տղամարդկանց, որոնք գուր տեղը հեղելում են համակենտրոնացման ճամբարը:

3/ Ալեքսանդրետի ծոցի շրջակայքում ձեռնարկել ռազմական գործողություններ, որոնց ազդեցությունը Սիրիայում և Օսմանյան կայսրությունում հնարավոր չի լինի անտեսել:

Պորտ-Սաիդ վերադառնալուց ի վեր, ես հարաբերություններ եմ հաստատել հայերի հետ, նրանց ամենաերիտասարդ առաջնորդներից մեկի՝ Պիեռ Դյուլաքյանի միջնորդությամբ: Այդ նա է ինձ ներկայացրել իր գործընկերների՝ կրկին զենքի դիմելու և, որքան հնարավոր է

¹ 26-ը սեպտեմբերի 1915 թ.:

² Վերն արատուպված է քիվ 100 փաստաթղթում:

արագ, Մուսա լեռան բարձունքները հասնելու և այնտեղ օսմանյան իշխանությունների դեմ պայքարը վերսկսելու շատ մեծ ցանկությունը:

Ի դեպ, ես հավաստի սկզբնաղբյուրից իրագեկ եմ, որ ներկայումս Կահիրեում համախմբված նույն ազգության գրեթե 400 կամավորներ անմիջապես կմիավորվեն Պորտ-Սալիի խառնամբոյի 600 կամ 700 մարտունակ տղամարդկանց հետ: Մերսինի, Դյոդե-Յույի և ամբողջ Անատոլիայի կոտորածները, որոնք տեղիք են տվել ոչ պակաս, քան 200 կամ 300000 զոհերի, հայտնի են Եգիպտոսի ողջ հայկական զաղութում և բուրբերի դեմ հարուցել են խորին ատելություն:

Բացի դրանից, ինձ հավաստիացրել են, որ Ամերիկայի բազմաթիվ հայեր, վրոյվված իրենց համակրոնակիցների կոտորածներից, ապստամբներին միանալու համար միայն ազդանշանի են սպասում: Ես չեմ կարող ճշգրտորեն հաշվել այն երիտասարդների թիվը, որոնք ցանկություն ունեն մեկնել մարտնչելու, բայց կարելի է, առանց որևէ լավատեսության տուրք տալու, նրանց ընդհանուր թիվը հաշվել բազում հազարներով: Վերջերս կայացած գրույցի ընթացքում, Դիմլաքյանն ինձնից նույնիսկ մի հեռագիր ուղարկելու թույլտվություն խնդրեց, որը կարող էր նրանց համախմբել: Ես նրան կարգադրեցի հետաձգել մնա՞ն բնույթի յուրաքանչյուր բայլ մինչ այն պահը, երբ 3-րդ էսկադրայի հրամանատարը ստանա նրանց վերաբերող ձեռնարկները:

Երկրորդ հերթին՝ ցանկալի է, մասնավորապես, օգտվել առաջին բարենպաստ առիթից, համակենտրոնացման ճամբարից հեռացնելու համար զենք կրելու ունակ բոլոր տղամարդկանց և նրանց փրկել վտանգավոր անգործությունից, որին նրանք ներկայումս մատնվել են: Բազմաթիվ կանանց և աղջիկների ներկայությունը կարող է միայն հաճախակի տեղի ունեցող ծեծկոտորքի կամ նույնիսկ խառնակությունների պատճառ դառնալ, որոնք Պորտ-Սալի-դի հսկայական շափերով նվազեցված ոստիկանական ուժերն անհրաժեշտության դեպքում անգոր կլինեն սանձահարելու:



Սուեզի ջրանցքի գրոհի ժամանակ բուրբական բանակից բռնագրավված՝ ներկայումս Պորտ-Սալիում գտնվող մառուի տեսակի հրացանները և համասլատսլիան ռազմամթերքները բավական շատ են, որպեսզի թույլատրեն անմիջապես գլխել՝ զենք կրելու ունակ 1000 կամ 1100 հայերի: Նրանց զինելու հարցն, այսպիսով, կարող է շտապ լուծվել: Նույնը չի կարելի ասել նրանց հրամանատարական կազմի և ռազմական կազմավորման մասին: Մուսա սալում ափ դուրս բերված հայերը մեզ անառարկելիորեն կմատուցեն արժեքավոր ծառայություններ: Նրանց ներկայությունը մշտապես վտանգավոր կլինի թուրքերի համար և մեզ թույլ կտա, գործակալների միջնորդության շնորհիվ, բազմաթիվ տեղեկություններ ստանալ Անտալիի, Ալեքսանդրիայի, Բեյրութի և Հալեպի շրջանում օսմանյան գործերի տեղաշարժերի մասին:

Մյուս կողմից, կարելի է նախատեսել, նավատորմի աջակցությունն ունեցող՝ ուշադրության արժանի այս գիմոժի օգտագործումն ավելի մեծ նշանակություն ունեցող ռազմական գործողություններ ձեռնարկելու համար, ինչպիսին է այն գործողությունը, որին վերաբերում է խոսքը գնդապետ Էլզուդի՝ զեներալ Մաքսուելլին հուլիս 1915-ին նամակում, որի պատճենը ես կցում եմ ներկա զեկուցագրին¹:

Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում, հարկ է վախենալ, որ իրենց սեփական միջոցներին ապավի-

¹ Տե՛ս վերը թիվ 106 փաստաթուղթը:

նամ հայերը՝ չունենալով որևէ հիրավի նշանավոր դեկավար դեմք, մի քանի օր անց կարող են տրտիել իրենց ուժերը ցարուցրիվ գործողությունների, հավանաբար, նույնիսկ՝ կողոպուտի ձեռնամուխ լինելու համար: Նրանց հրամանատարական կազմով ապահովելն, այսպիսով, ծառայում է այն նույն հիման վրա, ինչ և նրանց զինելը: Հարցը համակողմանիորեն ուսումնասիրելուց հետո, ես գտնում եմ, որ 15 սպան և 40 ենթասպան բավական կլինեն մարտունակ հայերին հավաք պահելու և նրանց գործին համախմբվածություն ու հզորություն հաղորդելու համար, մի քան, որն այն, իրոք, կդարձնի ահագոյու: Լեռներում մղվող պատերազմին վարժված և արաբերեն խոսող, Աֆրիկայի մեր գործերում ծառայող սպաներից ու ենթասպաններից կատարված քնտրությունը մեծ օգուտ կտա:

Եթե հնարավոր լինի ուղարկել, ի դեպ, չորս լեռնային բնդանոթ՝ նշանառուների և ռազմամթերքների հետ մեկտեղ, ապա այս օգնությունը մեծապես կնպաստի զինված ուժի հզորացմանն այս անհարթ տարածաշրջանում:

Գեներալ Մաքսուելին հղված վերոհիշյալ մամսկում, Ինթելիջենս Օֆիսի տնօրեն, զննարկեա Էլզուդը նկատի է ունենում հայերի գործողությունն Ալեքսանդրետի ծոցում՝ դեպի Թուրակ-Կալե և Բաղչե, եվրոպացի սպաների դեկավարությանը, որոնց ազգությունը նշելուց նա ձեռնպահ է մնում:

Հարգանքի տուրք մատուցելով զննարկեա Էլզուդի շատ մեծ հավատարմությանը, որը մեզ տարատեսակ հանգամանքներում անգնահատելի ծառայություններ է մատուցել և որն իր կամքով պատրաստակամորեն ինձ է փոխանցել խնդրո առարկա մամակը, որին *ես ձեզ խնդրում եմ պաշտոնապես նշանակություն չտալ*, չեմ կարող ինձ քույ չտալ կրկին չանդրադառնալու այն ջանքերին, որոնք անզու-եզուպտական զինվորական իշխանությունների գրեթե բացահայտ հովանու ներքո, գործադրել են որոշակի շրջաններ՝ Սիրիայում և Պաղեստինում անզուպտական ազդեցությունն ի վնաս մեզ ամրապնդելու համար:

Չնայած այն հիմնավոր փոփոխություններին, որոնց հանգեցրեց վերջին դարը համապատասխանաբար՝ Եգիպտոսի և Սիրիայի իրավիճակներում, անզուպտացի սպաները շարունակում են ճշմարիտ համարել Նապոլեոնի խոսքերը. «Սիրիան Եգիպտոսի բանալին է»:

Լոնդոնի կառավարությունը երկու անգամ հրաժարվել է Սիրիայում բրիտանական ազդեցությունը խիստ ջերմեռանդորեն տաքսադոնելից, բայց, այդուհանդերձ, ես մնում եմ համոզված, որ որոշ զինվորական իշխանություններ շարունակում են ջանքեր գործադրել այս ոգով:

Ալեքսանդրետի հիասքանչ նավակայանի նշանակությունը երեք՝ քաղաքական, տնտեսական և ռազմական տեսանկյուններից չի վրիպել, անշուշտ, մեր դաշնակիցների գործնական նկատառումներից, և ես վախենում եմ. որ անզուպտացի սպաներից ուսուցում ստացած և հրամանատարական կազմով ապահովված հայերի ափ դուրս բերումը ծոցի շրջակայքում, կարող է մեզ կանգնեցնել գրավումը սկզբնավորելու փառալի առջև, որը երկու կառավարությունների միջև հետագայում կստեղծի անհաղթահարելի դժվարություններ:

Մյուս կողմից, մինչ վերջնական լուծման կայացումը, բրիտանական իշխանություններին շատ մեծ հոգսեր է պատճառում հայերին կացարաններով և սննդով ապահովելու խնդիրը: Իրենց հերթին, անզուպտացի գաղութի կանայք իրենց վրա են վերցրել հայկական գաղութի կանանց և հիվանդ երեխաներին խնամելու ծանր գործը: Ի դեպ, բուրբ դրսևորում են անսահման նվիրվածություն:

Բայց հնարավոր է, որ մեր դաշնակիցները ձգտում են՝ կրած դառնությունների համար փոքրիշատե մոտալուտ ապագայում վարձահատույց լինելու, իսկ այդ ինձ դրողում է երկյուղել, որ կարող ենք դառնալ հայ բնակչության՝ կատարելապես նրանց ենթակայության ներքո անցնելու սկանառեսը:



Այս պայմաններում, ինձ անհրաժեշտ է քվում Փարիզի և Լոնդոնի կառավարությունների միջև վերջնական համաձայնության կայացումը, մինչև ռազմական գործողությունների որևէ իրականացմանը ձեռնամուխ լինելը, Սիբիրայում գոյծողությունների ղեկավարման շուրջ հետագայում առիթ չտալով և ոչ մի հնարավոր բանավեճի: Եվ եթե, ինչպես ես այդ գտնում եմ, մեր ազդեցության գերակշռությունը Սիբիրայում ճանաչում գտնի, ապա ֆրանսիացի սպանելիքն է պատկանելու գերագույն հրահանատարությունը ստանձնելու իրավունքը:



Վերջին սեպտեմբերի 22-ի նամակում, ես ընդգծում էի, որ Մուսա լեռան գործը գերագանցում է մարդկանց սովորական դուրս բերման նշանակությանը և որ այն որոշակի արձագանքներ կունենա այլ տարածաշրջաններում: Ինձ արդեն տեղեկացրել եմ, որ հայերի այլ խմբավորումների և, մասնավորապես, Կասսիուս սարի և Դյորթ-Յոլի խմբավորումներին, սպառնում է կոտորած, և թե՛ Դիմլաքյանը, թե՛ Կահիրեի ազդեցիկ հայերը բազմաթիվ անգամներ ինձ հարցափորձ են արել մի փաստի շուրջ, որպեսզի իմանամ, թե արդյոք 3-րդ էսկադրայի նավերը կօժանդակե՞ն նոր վոյսադրումների ղեկքում:

Մինչ այժմ ես լռություն եմ պահպանել, կարծելով, որ եթե ուժերի և միջոցների հատման եզրին գտնվող և ամեն կողմից հետապնդվող բնակչությանը համընդհանուր կոտորածից փրկելը մեզ համար մարդասիրական պարտականություն էր, ապա մենք ոչ մի շահագրգռվածություն չունենք քաջալերելու Սիբիրայից կատարվող բուն մի տեղահանության և նրա բնակչության նշանակալից մասը Եզիպտոս տեղափոխելու հարցում, ի դեպ, կասկածելի է, որ այն արժանանա լավ ընդունելության:



Ի վերջո, հայերի զինման խնդիրը, որն այսօր ես ձեզ եմ ներկայացնում, սուկ այն հարցի զբաղակցումն է և բնականոն շարունակությունը, որն առաջ է քաշել պ. փոխծովակալ Դարտինգը 1910 թվականին իր թիվ 1000 (առանց ծածկագրի թիվ 1)՝ դժբախտաբար մեծ ուշացումով ձեզ հասած հեռագրում, բայց որին սյատշահ չուծում տալու համար ժամանակը չի բավականացրել:

Վերին աստիճանի ցավալի է, որ հենց սկզբից չեն կարողացել զենքեր և ռազմամթերքներ տալ Մուսա լեռան հայերին: Ես հույս ունեմ, որ ֆրանսիական կառավարությունը շատ մեծ շահագրգռվածություն ունի նրանց զինելու և լավագույն ձևով օգտագործելու հարցում՝ հոգուտ Սիբիրայում մեր ազդեցության, և որ ծառանում է հարցի հրատապ լուծման խնդիրը:

Հ. Գ.- Այս գեկուցագիրն արդեն ավարտված էր, երբ Կահիրեից վերադառնալուց հետո, ինձ կրկին այցելեց Դիմլաքյանը, որտեղ այս վերջին օրերին նրան ընդունել է գեներալ Մաքսուդը: Վերջինս, գլուխը ընրագրում, նրան հասկացրել է, որ եզիպտական իշխանությունները մտադիր են զինելու հայերին և անհրաժեշտության դեպքում նրանց օգտագործելու Ալեքսանդրետի շրջակայքում ռազմական գործողությունների իրականացնելու համար:

Առանց բացարձակապես հավատ ընծայելու Պիեռ Դիմլաքյանի խոսքերին, որին մարտընչելու բուռն ցանկությունը, հավանաբար, դրոյում է իր ցանկություններն ընկալել իբրև իրական փաստեր, այս գլուխը, որը հաստատում է արդեն ստացված տպավորությունները.

այդուհանդերձ, ընդգծում է անգլիական ինտերվենտների մեքենայությունների շարունակական քնույրը Սիրիայում:

Ջրույցների և հայերի գործելաձևի միջոցով, որոնք հավատարմաբար ինձ տեղյակ են պահում անգլիական առաջարկություններին, ես կարողացա կռահել, որ ներկայումս նրանք որոշակիորեն ֆրանսիաձեռ տրամադրվածություն ունեն: Նրանք ակնկալում են միայն Ֆրանսիայի օգնությունն ու միջամտությունը, բայց կասկածից վեր է, որ շտապելով վերադառնալ Սիրիա, կընդունեն այն օգնությունը, որը նրանց կառաջարկեն անգլո-եգիպտական իշխանությունները, եթե ֆրանսիական միջամտությունն իրեն շատ երկար սպասել տա:

(A.C.M., SS Ed 125).

117

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսը՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Գարրիոյին

Կահիրե, 3-ը հոկտեմբերի 1915 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հայտնել վերջին սեպտեմբերի 22-ի թվակիր նամակի¹ ստացման մասին, որով դուք բարեհաճել էիք փոխանցել պ. Ռ-ազմածովային նախարարին հղված երկու զեկուցագրերի² պատճենները, որոնցից առաջինը հաշվետվություն է տալիս Մուսա լեռան հայերին փրկելու գործողությունների մասին, այնժամ, երբ երկրորդը ներկայացնում է Սիրիայի հարցն իր ամբողջության մեջ:

Ես ձեզ խիստ երախտապարտ եմ այս հետաքրքիր հաղորդագրությունների համար, որոնց ծանոթացա ամենամեծ հետաքրքրությամբ:

Ես ամբողջությամբ բաժանում եմ ձեր կարծիքն այն լուծման շուրջ, որը ձեր երկրորդ զեկուցագրում դուք առաջադրում եք իբրև ամենանպատակահարմարն ու ամենաազդեցիկը, որն իրագործելը, հատկապես ներկայումս, դեռևս անհամեմատ դյուրին կլինի. դեսանտ ավիուրս բերել Ալեքսանդրետի շրջանում և բնակիչներին օգնությամբ գրավել երկիրը՝ դեպի հարավ առաջխաղացմամբ:

Դժբախտաբար, պատերազմի զլխավոր քատերաքեմելում տիրող գործողությունների ներկայիս վիճակում և այնժամ, երբ մի նոր ռազմաճակատում մեկ այլ գործողություն են պատրաստվում ձեռնարկել, ինձ թվում է, որ մեր շտաբների համար խիստ դժվարին է սիրիական ռազմաքաղաքական համար իրենց տրամադրության ներքո ունենալ անհրաժեշտ զինված անձնակազմեր:

Մյուս կողմից, ինչ վերաբերում է ձեր առաջարկած երկրորդ լուծմանը, ես ինձ հարց եմ տալիս, թե արդյոք խելացի³ կլինի սիրիական և հայ բնակչությանը զինելը և նրանց նման ձևով ապստամբելու դրդելն այն դեպքում, երբ մենք ի վիճակի չենք լինելու նրանց արդյունավետորեն օգնել, կանոնավոր ուժեր տրամադրելու միջոցով նրանց գորավիչ լինել, անհրաժեշտության դեպքում և անհաջողության պարագայում՝ ապահովագրել նրանց բռնություններից և ճնշումից, որն, անտարակույս, սարսափելի կլինի:

Ուստի, չնայած այն ցանկությանը, որը ես ունեմ բազմաթիվ ամիսներ ի վեր մեր կողմից Սիրիայում լուրջ գործողություն ձեռնարկելու հարցում, ես շարունակում եմ երկյուղել այն հիմնավոր պատճառներից, որոնք մեզ դրդում են դեռևս ձեռնպահ մնալ սիրիական բնակչու-

1 Արտատպված չէ:

2 Տե՛ս վերը թիվ 99 և 100 փաստաթղթերը:

քյան ձգտումներին և կոչին պատասխանելուց:

Այն հստակ զեկուցագիրը, որը դուք հղել եք Ռ-ազմածովային պ. նախարարին և բարեհաճել ինձ փոխանցել, կհարկադրի, ի դեպ, Հանրապետության կառավարությանը բանիմացությամբ կայացնել այնպիսի որոշումներ, որոնք նա նպատակահարմար կհամարի:

(A.C.M., SS S 8).

118

Ռ-ազմածովային նախարարը՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար փոխծովակալին

Փարիզ, 8-ը հոկտեմբերի 1915 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ փոխանցել սրան կից Փարիզի և Բելգիայի հայկական զաղութի ավագ քահանայից հենց նոր ստացած նամակը, որն իր հայրենակիցների անունից ամենախորին երախտագիտությունն է հայտնում 3-րդ էսկադրայի վեհապանձ միջամտության առթիվ՝ հօգուտ Մուսա սարի հայերի:

(A.C.M., SS S 6).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ֆրանսիայի և Բելգիայի հայերի պրեզատ, հայր Վռամշապուհ Քիբարյանը՝ Ռ-ազմածովային նախարար պ. Վիկտոր Օգանյոբին

Փարիզ, 6-ը հոկտեմբերի 1915 թ.:

(Սուսցել են Կաբ. հոկտեմբերի 6-ին,
Գ. {լիսավոր} շ {տաբլի} 1-ին ենթաբաժինը
հոկտեմբերի 7-ին):

Թույլ տվեք ինձ Փարիզի ամբողջ հայկական զաղութի և անձամբ իմ անունից ձեզ հայտնել մեր խորին երախտագիտությունը և մեր մեծ հիացմունքն այն վեհապանձ ու մարդասիրական գործի առթիվ, որն իրականացրել են ձեր փառապանձ նավաստիները՝ փրկելով Կիլիկիայի հազարավոր դժբախտ և քաջակորով հայ զաղրականների կյանքը և տանելով նրանց Պորտ-Սաիդ:

Հավանաբար, զուր կլինի ձեզ հիշեցնել, պարոն նախարար, որ հայ ժողովուրդը, քեպետ ձեռքերը կապված հանձնվում է դահիճների և մարդասպանների մասնագիտություն ունեցողներին, չի կորցնում հույսը վերանվաճելու իր ազատությունը՝ իր ազգային պատմության տխուր էջերում ոսկե տառերով գրանցելու համար հավատարիմ գործերը և ֆրանսիական իսկական բարեկամության վկայությունը:

(A.C.M., SS S 6).

**Ալժիրի գլխավոր նահանգապետ պ. Լյուտոն՝
Արտաքին գործերի նախարար պ. Գեկասեին**

Հ: Չհամարակալված:

Ալժիր, 9-ը հոկտեմբերի 1915 թ., ժ. 7.15-ին:
(Ստացվել է ժ. 21.25-ին):

Պատասխան սեպտեմբերի 17-ի ձեռագրին¹, որը վերաբերում է Պորտ-Սաիդում ափ դուրս բերված Սիրիայի հայերին: Ալժիրի պրեֆեկտները հայտարարում են, որ իրենց դեպարտամենտներում չեն կարողանում նրանց համար որևէ զբաղմունք գտնել: Եթե նրանց թվում որոշ անձինք ընդունակ են լըբրե բեռնակիր աշխատելու, ռազմական նախարարը կկարողանա հավանաբար նրանց օգտագործել որպես այդպիսիք Մուդրոսում, ուր տվյալ աշխատուժի սլահանջը կա: Մայր երկրի արդյունաբերական հաստատությունները, որոնք ռազմամթերքներ են արտադրում ու բանվորական աշխատակազմ պահանջում, արդյոք չե՞ն կարող ընդունել նաև այս աշխատանքը կատարելու ունակ հայերին, աշխատանք, որի համար այստեղ, բնիկների շրջանում, արդեն աշխատուժ ենք հավաքագրել, բայց որն այսօր գրեթե սպառվել է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 37).

**Մեծ Բրիտանիայի դեսպանության
հաղորդագրությունը Գեպարտամենտին**

Հրատապ:

Փարիզ, 11-ը հոկտեմբերի 1915 թ.:

Նորին մեծության դեսպանը սլատիվ ունի Արտաքին գործերի նախարարի ուշադրությունը հրավիրել նախորդ ամսի 15-ի թվակիր հուշագրի վրա², որը վերաբերում էր ֆրանսիական ռազմանավերի միջոցով Եգիպտոսում ափ դուրս բերված հայ գաղթականներին:

Այս մարդիկ այժմ Պորտ-Սաիդում են և նրանց մեջ կան որոշ աշխատունակ անձինք, որոնց համար հնարավոր չէ աշխատանք գտնել և եգիպտական իշխանությունները հուզումներ են կանխատեսում այն դեպքում, եթե նրանց որևէ բնույթի աշխատանք չտրամադրվի:

Բրիտանական զինվորական իշխանությունները Եգիպտոսում հետաքրքրվում են, թե արդյոք ֆրանսիական իշխանությունները մտադի³ են ինչ-որ ձևով օգտագործել այս հայերին կամ արդյոք նրանց հետ կապված որևէ ծրագրեր ունեն: Ինչպես բրիտանական Ուոր Օֆիսն է տեղեկացրել բրիտանական զինվորական իշխանություններին, ֆրանսիական իշխանությունների համար հարցի ողջ էությունը նրանց տեղավորելն է:

Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատարը գտնում է, որ այն մարդիկ, որոնց վերաբերում է խոսքը, պետք է աշխատելու ուղարկվեն Գալիպոլի ծովափ,

¹ Տես վերը թիվ 80 փաստաթղթի հավելվածը:

² Վերն արտատպված է թիվ 75 փաստաթղթում:

որտեղ նրանց կարիքը մեծապես զգացվում է:

Լորդ Բերքին Թեյմից, երախտապարտ կլիներ, որքան հնաբավոր է կարճ ժամկետում, քանզի խնդիրը հրատապ է. ֆրանսիական կառավարության տեսակետներից տեղեկանալու համար:
(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 39-40).

121

**Ռազմածովային նախարար պ. Վիկտոր Օգանյորը՝
Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար փոխծովակալին**

Ճ. քիվ 338: Գաղտնի:

Փարիզ, 11-ը հոկտեմբերի 1915 թ.:
(*Ստացել է* 3-րդ էսկադրայի Ծ-ը հոկտեմբերի 23-ին):

Ես հետաքրքրությամբ տեղեկացա դերծովակալ Դարրիոյի զեկուցագրին, որը վերաբերում է 3-րդ էսկադրայի նավերի իրականացրած գործողություններին՝ Մուսս լեռան հայերին դուրս բերելու համար¹:

«Դեզել» հրամանատարը, որը ղեկավարել է հանգամանքների բերումով դժվարին դարձած գործողությունները, ի հայտ է բերել, ինչպես դրա վրա ուշադրություն է հրավիրում դերծովակալ Դարրիոն, ծովայինի զգացողություն և վճիռներ կայացնելու լավ հատկանիշներ ու ճշտապահություն:

Մյուս կողմից, նավերի սպաներն ու անձնակազմերը, որոնք մասնակցել են դրա իրականացման տարբեր փուլերին, դրսևորել են եռանդ և հրաշալի փութաջանություն:

Ես հաճույքով եմ այդ ընդունում, և դուք կբարեհաճեք հաղորդել վերոհիշյալ նավերի հրամանատարներին, սպաներին և անձնակազմերին իմ գոհումակության հավաստիքը:

Ի դեպ, ես ամբողջությամբ հակված եմ բարեհաճությամբ քննարկելու պարզատրամենքին վերաբերող առաջարկությունները, որոնք հիշատակված են դերծովակալ Դարրիոյի զեկուցագրում:

(A.C.M., SS S 6).

122

**Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն
գործուղված լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինը՝
Ռազմական նախարար պ. Ալեքսանդր Միլլերանին**

Հ. քիվ 161:

Կահիրե, 11-ը հոկտեմբերի 1915 թ., ժ. 23.25-ին:
(*Ստացվել է* 12-ին, ժ. 0.50-ին):

158 հեռագրի շարունակությունը²:

¹ Այս եղելության մասին տես վերը քիվ 99 փաստաթուղթը:

² Հոկտեմբերի 11-ի, որն արտատպված չէ, և որով լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինը Ռազմական նախարարին տեղեկացնում է, որ բրիտանական ռազմական իշխանությունները մտածում են Պորտ-Սաֆոի հայ գաղթականների աշխատանքն օգտագործելու մասին, եթե ֆրանսիական կառավարությունը դրան չընդդիմանա:

Եւ հարցովորձ արեցի հայերի առաջնորդներին: Թեպետ նրանք կրքոտությամբ ձգտում են կրկին գենքի դիմել և Պորտ-Սախլում, տարբեր կողմերից նրանց քաջալերել են այս գաղափարների ոգով, նրանք հայտնում են, որ պարապությանը չտրվելու և իրենց երախտագիտությունը մեզ հավաստելու համար պատրաստ են համաձայնվել այն աշխատանքին, որը մենք նրանց առաջարկում ենք: Ընամբարում կան մուտավորապես 400 հասուն և ամրակազմ տղամարդիկ: 2-ից 300-ը կնեքկայանան իբրև կամավոր: Հարկ կլինի մյուսների վրա որոշ ճնշում գործադրել: Ոմանք իրենց ընկերների շրջանում բավական մեծ հեղինակություն են վայելում և կարող են ծառայել իբրև ավագ վարպետներ: Կարելի կլինի նրանց հատկացնել ցածր աստիճան և փոքր-ինչ ավելի բարձր աշխատավարձ: Գաղթականները հայերեն խոսում են տեղական քարքառով և, ընդհանուր առմամբ, հասկանում են թուրքերեն: Միայն երեքը կամ չորսն են մի փոքր հասկանում ֆրանսերեն: Դիմլաքյանը միակն է, որը կրթություն ունի: Նա կկարողանա ծառայությունների մատուցել իբրև թարգմանիչ: Ի դեպ, ոչ թանկ վարձատրվող թարգմանիչներ կգտնվեն Եգիպտոսում բնակվող հայերի շրջանում:

(A.M.G., 5 N 76).

123

**Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն
գործողված լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինը՝
Ռ-ազմական նախարար պ. Ալեքսանդր Միլլերանին**

Հ. թիվ 162:

Կահիրե, 12-ը հոկտեմբերի 1915 թ., ժ. 0.25-ին:
(Ստացվել է ժ. 6-ին):

Իբրև նախորդ համարի շարունակություն:

Այս մարդիկ, որոնք հովիվներ և որսորդներ են, անկասկած, կլինեն միջակ բեռնակիրներ: Բացի դրանից, զինվորական կարգապահությունը նրանց հանկարծակիի կբերի: Հարկ է նրանց վերաբերվել որոշակի հոգատարությամբ, որպեսզի չբարոյալքվեն և նրանց չմիախառնել սեմալներին և, մասնավորապես, թուրք գեյսիների հետ: Մտքերի այս շարանում գենեյալ Մաքսուելլի կողմից առաջադրված կարևոր միջոցը հանգում է Պորտ-Սախլ սպաներ ուղարկելուն, որոնք կստանձնեն նրանց հրամանատարությունը, որպեսզի...¹ նրանց հետ մի քանի օր շարունակ մինչ նրանց նավ բարձրանալը...²: Ես անմիջապես ձեռնամուխ կլինեմ մարդահամարի մանրագին անցկացմանը և աշխատանքի անցնելու ցանկություն ունեցողների ընտրությանը: Այս աշխատանքը կարող է իրականացվել ճամբարի անգլիացի (սպաների?) հետ համատեղ, որոնց գործուն օգնությունը մեզ ապահովվել է շնորհիվ Պորտ-Սախլում շտաբի ներկայացուցիչ գնդապետ Էլ(վիթչի) և «Դեզեի» ժամանակավոր թարգմանիչ պ. Քեքեյանի [sic]³, որը մասնակցություն ունենալով Մուսա լեռան բանակցություններին՝ արժանացել է գաղթականների վստահությանը: Պ. Քեքեյանը [sic], որն իբրև թարգմանիչ երեկ ինձ ծառայություն մատուցեց, այն ընթացքում, երբ իր նավը Պորտ-Սախլում կգտնվի, հակված է գբաղվել այս կազմակերպության հարցով, եթե, իհարկե, էսկադրայի հրամանատար

1 Վերձանման բացթողում:

2 Վերձանման բացթողում:

3 Իմա՝ Թեքեյան:

ծովակալն այդ թույլատրի:

(A.M.G., 5 N 76).

124

**Խորհրդի նախագահի, Արտաքին գործերի նախարարի ժպ, պ. Վիվիանին՝
Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին**

Հ. թիվ 152:

Փարիզ, 12-ը հոկտեմբերի 1915 թ., ժ. 22.40-ին:

Բրիտանական դեսպանությունն ինձ տեղյակ է պահել, որ քաղավորական կառավարությունը հաճույքով կընդունի Մուսա լեռան մարտունակ և ամրակազմ հայերին՝ Մուղլուսի մավակայանի աշխատանքների համար հավաքագրելուն վերաբերող ֆրանսիական զինվորական իշխանության նախաձեռնությունը: Քանի որ Ռազմական նախարարն այս ոգով կրահանգներ է ուղարկել պ. դը Սեն-Քուենտինին, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե Եգիպտոսի անգլիական իշխանությունների համաձայնությամբ, դուք դուրսին դարձնեք այս միջոցառման իրականացումը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 41).

125

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահի,
Արտաքին գործերի նախարարի ժպ, պ. Վիվիանին**

Հ. թիվ 254:

Կահիրե, 13-ը սեպտեմբերի 1915 թ., ժ. 13.20-ին*:

(*Ստուգվել է ժ. 14.30-ին*):

Պ. դը Սեն-Քուենտինի հետ մեկտեղ ես արդեն զբաղվում եմ այն հարցով, որը դուք առաջադրել եք ձեր 152 հեռագրում՝: Մարտունակ հայերը միայն ափսոսանքով կհամաձայնվեն իրենց՝ իբրև բանվորների ռազմագործմանը: Նրանց թվում շատերն, այդուհանդերձ, հայտարարել են, որ դրան համաձայն են, որովհետև մեր հանդեպ պարտքի զգացողություն չունեն և ցանկանում են մեզ օգտակար լինել: Բայց հարկ կլինի նրանց առնչվող որոշակի անհրաժեշտ նախագաղաղական միջոցներ ձեռնարկել, մասնավորապես, պետք չէ, որ նրանց վերաբերվեն այնպես, ինչպես Մուղլուսի: Թուրք գերիներին կամ սոմալ նեգր ժառանգողներին:

Այս առթիվ պ. դը Սեն-Քուենտինը մանրամասն հեռագիր է հղել Ռազմական նախարարին:

Անգլիական իշխանությունների հետ համաձայնությունը որևէ բարդություն, ես կարծում եմ, չի հարուցի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 43).

* Նախարարի ծանոթագրությունը. «Հաղորդել բանավոր՝ Գրանվիլին»:

1 Տե՛ս վերը թիվ 124 փաստաթուղթը:

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանը՝ Խորհրդի նախագահի, Արտաքին գործերի նախարարի Ժպ, պ. Վիվիանին

Ը. թիվ 853:

Վաշինգտոն, 14-ը հոկտեմբերի 1915 թ.*:
(Ստացել են Կար. նոյեմբերի 1-ին,
Քաղ. վարչ. նոյեմբերի 2-ին):

Ի պատասխան Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների դեսպան պ. Մորգենթաուի՝ ի նպատակ հայերի արված անհուղողող կոչի, Նյու Յորքում կազմվել է ամենապատվաթան և ճանաչված աներիկացիներից, ինչպիսիք են պ{արոնայ}ք Չառլզ Ռ. Քրեյնը, Սաճուել Ե. Դյուքսոնը, Օսկար Շարաուսը և ուրիշներ, բաղկացած մի կոմիտե՝ այս դժբախտ ազգության նկատմամբ ցուցաբերված բարբարոսական վերաբերմունքին իրագեկ դարձնելու և նրան օգնության ձեռք մեկնելու նպատակով:

Հղելով վերջին սեպտեմբեր ամսի իմ թիվ 813 հեռագիրը¹, ես պատիվ ունեմ Ձերոյ գերագնացությանն ուղղել սրան կից այն գեկուցագրի² օրինակը, որը վերոհիշյալ կոմիտեն, ամենաբազմապիսի սկզբնաղբյուրներից ելնող թղթակցությունների օգնությամբ, նոր է հրապարակել և որն ակնհայտ է դարձնում, որ բազում ամիսներ լի վեր հայ ժողովրդի հանդեպ գազարելի միջոցների կիրառումը բնաջնջման ծրագրի հետևողական կենսագործումն է:

Ներկա հանգամանքները բույլ չեն տվել նշելու թղթակցների ո՛չ անունները, ո՛չ պաշտոնները, բայց կոմիտեն հայտարարում է, որ ճանաչում է բոլորին և երաշխավորում նրանց պատվաթանությունն ու հաղորդած տեղեկությունների ճշմարտացիությունը:

Ինչպես թվում է, այդ թղթակցությունների մեծ մասը ելնում է Թուրքիայում Միացյալ Նահանգների դիվանագիտական ու հյուպատոսական գործակալներից կամ իրենց գործերով և ամերիկյան հաստատությունների ու թերթերի ծառայության բերումով այս երկրում գտնվող ամերիկյան քաղաքացիներից:

Բոլորի պատմածները համընկնում են այն աննախադեպ բռնությունները բացահայտելու հարցում, որոնք գործադրվել են հայերի նկատմամբ: Այնժամ, երբ երիտասարդները գորակոչվել են, տարեց մարդիկ՝ դավաղությունների, զենքեր բաքցնելու և այլ պատրվակներով դուրս են բերվել իրենց տներից և սպանվել քաղաքից դուրս: Կանանց՝ մանկահասակ երեխաների հետ վռնդել են իրենց բնակարաններից և օրեր ու գիշերներ շարունակ, ամենակատարյալ զրկանքների պայմաններում, քշել ճանապարհներով, գրեթե առանց կերակրելու, որպեսզի այնուհետև՝ բռնությամբ ամուսնացնեն բուրքերի հետ կամ կտտորեն: Նրանցից ամենաներիտասարդները հանձնվել են քյոյեթին կամ նույնիսկ օսմանյան սպաներին ու պաշտոնյաներին, որոնք նրանց ծաղրածանակի են ենթարկում ու գայթակղում:

Այս սարսափելի տեսարանների մի վկա, այդ ամենի համար մեծապես պատասխանատու է համարում գերմանացիներին, ոչ այն բանի համար, ասում է նա, որ նրանք անմիջականորեն կարգադրել են իրականացնել այս համընդհանուր կոտորածը (որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայ ժողովրդի բնաջնջում), այլ այն լռակյաց համաձայնության համար, որը նրանք այդ

* Նախարարի ծանուրագրությունը. «Հաղորդել մամուլին: Այս վայրագությունները կարող են վերագրվել գերմանացիներին»:

¹ Տես վերը թիվ 110 փաստաթուղթը:

² Report of Committee on Armenian Atrocities. Արտատպված չէ:

առթիվ տվել են:

Այսպիսի կարծիքը չի կարող զարմանք հարուցել Միացյալ Նահանգներում, որտեղ ամբողջ մամուլն արտատպել է նախ՝ կոմս Բեռնստոքֆի նամակը, որը կցված է իմ վերջին ամսի 28-ի հաղորդագրությանը¹ և որտեղ ասվում է, որ այս հարցում անհանգստանալու ոչինչ չկա և որ ոչ մի կոտորած տեղի չի ունեցել, այնուհետև՝ կոմս Ռևենտլոուի հողվածը, որը «Թագես ցայթունգում» հայտարարել է, թե հայերի նկատմամբ բուլղերի ձեռնարկած «բռնի» միջոցներն իրական են, բայց արդարացված ու անհրաժեշտ և որ կայսրության, ինչպես և ամեն մի գերմանացի հպատակի, պարտքն է իր օսմանյան դաշնակցի կողմն անցնել. առանց ընդունելու որևէ քննադատություն նրա հասցեին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 211-212).

127

Ռ-ազնական նախարար պ. Ալեքսանդր Միլլերանը՝ Ռ-ազնաժողպային նախարար պ. Վիկտոր Օգանյորին

Ճ. թիվ 6111-9/11: Հրատապ:

Փարիզ, 15-ը հոկտեմբերի 1915 թ.:

(Մտացել են Կաբլինետը հոկտեմբերի 15-ին,

Գ-իսավուր} շտաբի} 1-ին ենթաբաժինը

հոկտեմբերի 16-ին):

Արտաքին գործերի նախարարության մեր գործընկերոջ խնդրանքով, ես հակված էի Պոլտ-Սաիդի գաղթականներից օգտագործել ամենամարակազմ հայ կամավորներին՝ նրանցից բանվորների մի խումբ կազմելու համար, որոնք կարող էին իբրև բեռնակիրներ օգտագործվել Մուդրոսի բազայում, երբ տեղեկացա նրանցից անկանոն գործերի կոտորած կազմավորելուն վերաբերող ձեռնարկությանը, որը դուք կլնեք Սիրիայում գործող մեր էսկադրայի հրամանատարի տրամադրության ներքո:

Այսպիսով, ես հետաձգում եմ կազմակերպության ստեղծման իմ նախագծի իրականացումը, բայց ձեզ երախտալարտ կլինեմ, եթե ինձ տեղյակ պահեք այն վճռին, որը դուք նկատի ունեք կայացնելու և այն օգնությանը, որը պահանջվում է իմ Դեպարտամենտից:

(A.C.M., SS Ed 125).

128

Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ Գարրիոն Ռ-ազնաժողպային նախարար պ. Վիկտոր Օգանյորին

Ճ. թիվ 352: Գաղտնի²:

«Ժպրեզյուլիբերիլի» տախտակամածից,

¹ Տես վերը թիվ 110 փաստաթուղթը:

² Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

Պորտ-Սախլի նավակայան, 15-ը հոկտեմբերի 1915 թ.:
 (Ստացել են Կարբինետը հոկտեմբերի 26-ին,
 Գ-իլսավոր} շտաբի} 4-րդ ենթաբաժինը
 հոկտեմբերի 31-ին):

Ես ստացա ձեր թիվ 1235 հեռագիրը¹, որով ինձ կարգադրվում էր սպասել ձեր հրահանգներին՝ նախքան առաջարկությունների ոգով ուրև քայլ ձեռնարկելու փորձ կատարելը, որոնք պատիվ էլ ունեցել ձեզ ներկայացնել Մուսա լեռան հայ գաղթականներին վերաբերող իմ թիվ 318 նամակում²:

Ես դրանցից և ոչ մեկով հանդես չեմ եկել, բացառությամբ այն առաջարկությունների, որոնց մասին ձեզ հաշվետվություն եմ ներկայացրել, բայց հանգամանքների բերումով, գտնվում եմ այնպիսի միջավայրում, որտեղ անհնար է անտեսել իմ կողքին որոշակիորեն նշմարվող շարժումները:

Այսպիսով, հայերի այս գործը չի կոծկվել, ճիշտ հակառակը, այն շարունակում է ծավալվել:

Կոստանտնուպոլիսի Ֆրանսիայի նախարարի հրահանգներին համապատասխան՝ Պորտ-Սախլի եկած լեյտենանտ դը Սեն-Քոնստանտին միջոցով ես տեղեկացա Ռ-ազմական նախարարի հեռագրին, որը վերաբերում էր մարտունակ հայերին հնարավորության սահմաններում Մուղլոսում օգտագործելուն, բայց ոչ իբրև կռիվների, այլ իբրև հողափորների կամ սևագործ բանվորների:

Ռ-ազմական նախարարի ներկայացուցչից, ես չքաքցյի, որ նրա քայլն, իմ կարծիքով, որոշակիորեն դատապարտված է անհաջողության և որ այն կարող է, բացի այդ, ստանալ հակայական բարոյական հակահարված, որը կարող է լինել խիստ տևաճ:

Հայերը, որոնց մենք նավ ենք տեղափոխել, և ես ինձ թույլ եմ տալիս, պարոն նախարար, հարգալից ձևով ձեզ մերկայացնել այս գաղթականների բնավորության՝ շատ մանրազնիմ ուսումնասիրության վրա հիմնված զննատեսականը, այս հայերը, ասում եմ ես, ամենևին էլ պատշաճ մարդիկ չեն, որոնք, և Եվրոպան գրեթե անտրտունջ ձևով վարժվել է այդ բանի ակամատեսը լինելուն, հանդուրժում են ամենասարսափելի օրը³:

Ես չգիտեմ, թե արդյոք այդ բխում է այս վայրի բնակչության բնավորությունից կամ թե թուրքերի կողմից գործադրված բռնությունների հետևանքով նրանց բնածին խառնվածքն է փոփոխություն կրել՝ առաջ բերելով խիստ գրգռված վիճակ և հասցրել նրանց ծայրահեղության, բայց այս մարդիկ ռազմատենչ են և ունեն միայն մեկ ցանկություն՝ նետվել դարավոր թշնամու դեմ, վրեժխնդիր լինել այնտեղ, որտեղ իրենց կողոպտել են, հետապնդել, ենթարկել ցանկացած բնույթի բռնությունների:

Ծայրահեղ դեպքում կարելի է դիմել փորձի՝ փոխել այս բուռն հոսանքի հունը, ուղղելով այն դեպի Արտասահմանյան լեզեոն, որովհետև այս հայերը սրտի խորքում Ֆրանսիային ծառայելու շատ ուժգին, շատ անկեղծ ցանկություն ունեն:

Բայց ես չեմ կարծում, որ հնարավոր կլինի հարկադրել նրանց ընդունել իբրև հողափորներ և բեռնակիրներ աշխատելու գաղափարը, նույնիսկ զինվորական իշխանության օրոք:

Այն ստորագումբ, որը նրանք կճաշակեն, տեսնելով, թե ինչպե՞ս են իրենց վերաբերվում, ծանր հետևանքներ կունենան, քանզի մեր առաջարկությունները նրանք կմեկնաբանեն իբրև՝ պայքարի ընթացքում իրենց օգնությունն ընդունելու հարցում Ֆրանսիայի կողմից արհա-

1 Արտատպված չէ:

2 Հոկտեմբերի 2-ի. վերն արտատպված է թիվ 116 փաստաթղթում:

3 Սխալ է. իմա՝ ճակատագիր: [Ի՞նչպե՞ս յour՝ իմա՝ sort: - Ն. թ.]:

մարհական մերժում և այդ վիրավորված ինքնասխլությունը շատ արագ ծնունդ կտա անբարյացակամության:

Ես հասկանում եմ բոլոր ջանքերը հիմնական նպատակներին նվիրաբերելու անհրաժեշտությունը, որոնք Սիրիայի հարցը ետին պլան են մղում և այս պահին, նույնիսկ թույլ չեն տալիս այլևս կանխատեսել ռազմարշավի սկիզբը:

Ես հասկանում եմ, որ ցանկալի չէ վարկաբեկել մեր զենքի վարկը՝ ընդգրկելով ֆրանսիացի սպաներ և հրամանատարական կազմ ունեցող՝ մոր կենսաձևի տեր գորակոչիկներ:

Հրամանատարական այդ կադրերը ես խնդրել էի, մասնավորապես, Պուրտ-Սախլի հայերի համար զինվորական կազմավորում ստեղծելու նպատակով, որը կարող էր նրանց գործունեության հզորությանը հաղորդել ծայրահեղ կարևոր հավելյալ արժեք:

Բայց, հանձին կատարելապես զինված, ռազմամբերքներով լիովին ապահովված մի քանի խմբերի ափ դուրս բերման, ես որևէ խոչընդոտ չեմ տեսնում, որոնք թուրքերի դեմ անողորմ պայքար մղելով այնպիսի մի երկրամասում, որի բոլոր արահետներին են ծանոթ, անխուսափելիորեն առաջ կբերեն ուշադրության խիստ բարենպաստ շեղում, որն արյույնավետ կլինի:

Ընդհանուր առմամբ, այդ նշանակում է իրերը վերստին դնել այնպիսի վիճակում, որում նրանք գտնվում էին մեր միջամտության պահին, բայց այն տարբերությամբ, որ ապստամբները կլինեն ավելի լավ զինված, ավելի լավ նախապատրաստված և հավաստիացած, որ իրենց կանանց ու երեխաների ճակատագրին ոչինչ չի սպառնում. իրագեկ լինելով, որ նրանք զերծ են վտանգից ու կարիքից, նրանց մարտունակությունը մեծապես կաճի:

(A.C.M., SS Ed 125).

129

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը՝ Խորհրդի նախագահի, Արտաքին գործերի նախարարի ժպ, պ. Վիվիանիին

Ն՛:

Վաղարշապատ, 5/18-ը հոկտեմբերի 1915 թ.:
(*Ստուգել է* Քաղ. վարչ. 1916 թ. մարտի 18-ին):

Մենք, Գևորգ հինգերորդս, Հիսուս Քրիստոսի ծառան, Աստծո ողորմածությամբ, եպիսկոպոսապետս և ամենայն հայոց կաթողիկոսս, Ս {ուր}բ Էջմիածնում Արարատյան ազգային առաքելական կաթողիկեի նախամեծար աթոռի ծայրագույն պատրիարքս, հաղորդում ենք Ֆրանսիայի Նորին զերագանցություն Արտաքին գործերի նախարարին՝

Մեր ողջույնն ու մեր հայրական օրհնանքը և նրան հայտնում, որ Թուրքահայաստանում մեր հոտի վիատության ու սարսափի ճիշերից դառնացած և հուզված, որը դարեր ի վեր, բայց հատկապես Թուրքիայի՝ եվրոպական հակամարտության մեջ ընդգրկվելու պահից ի վեր, դարձել է պատմության մեջ երբևէ չարձանագրված ամենավայրագ ու ամենադաժան հալածանքների գոհը, մենք մեր հայացքը հանել ենք դեպի քրիստոնյա պեսությունները, որոնք, ավելի քան մեկ տարի այսքարում են հանում իրավունքի և արդարության հաղթանակի, հանում թույլերի և ճնշվածների ազատագրման, այն անսասանելի հույսով, որ դաշնակից պետություններն իրենց բնորոշ արդարամիտ ոգով և այն մարլապարական զգացումներով,

1 Այս նամակի բնագիրը ստորագրել է ամձամբ կաթողիկոսը և կրում է Էջմիածնի հայկական կաթողիկոսության կնիքը:

որոնցով տոգորվում են, կբարեհաճեն մեր նահատակված ժողովրդի համար ապահովել, այն պահից եւք, երբ հանգամանքներն այդ նրանց թույլատրեն, խաղաղ և հաջողություններով լի կյանք:

Եվ դաշնակից տերություններին մեր զանգատները, ցանկություններն ու համեստ խղճերը ներկայացնելու համար, մենք մեր կողմից Հանրապետության կառավարության մոտ ենք ուղարկել մեր որդի Պողոս Նուբար փաշային, նրան տարով Հայկական հարցը սատարելու մանդատը և լիակատար իրավունքներ: Միայն նա է, որը լիազորություններ ունի մեզ ներկայացնելու և ձեր կառավարությանը փոխանցելու մեր ժողովրդի ցանկությունները:

Թող Ամենագործն իր անսահման իմաստունությամբ և անձայրածիլ բարությանբ օրինի դաշնակիցների վերին աստիճանի քաղաքակրթչական գործը և հանուն մարդկության ամենամեծ բարիքի այն շոտափույթ պսակի կատարյալ ու անսասան հաջողությամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 218-218 v).

130

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝ Ռ-ազմական նախարարությանը

Թիվ 362: Գաղտնի¹:

Արևնք, 19-ը հոկտեմբերի 1915 թ.:

Հայերի հալածանքներին վերաբերող՝ Ադանայից ելնող,
հոկտեմբերի 3-ի տեղեկություն

Չմայած, որ Կիլիկայում հայերի նկատմամբ դրսևորված վերաբերմունքը սարսուռ էր հարուցում, այն նման չէր այն վերաբերմունքին, որին նրանք արժանացել էին Սվազում, Կեսարիայում, Մարզվանում և այլ վայրերում: Թվում է, թե այստեղ կոտորածներ կամ բռնի կրոնափոխություններ տեղի չեն ունեցել, և Հայեայց արևմուտք տեղի ունեցած համաման որևէ բանի մասին չեն լսել: Այդուհանդերձ, հնարավոր է, որ կոտորածներ են տեղի ունեցել Սուեյից արևելք:

Կիլիկիայում սահմանափակվել են հայերին արտաքսելով և նրանց տները կողոպտելով: Համակենտրոնացման ճամբարներ կային տարբեր երկաթուղային գծերի վերջին կանգառներում և տեղի է ունեցել հայերի անընդմեջ զաղթ արևմուտքից արևելք: Ադանայի հայերը մեծ զումարներ են վճարել փրկվելու և արտաքսումից խուսափելու համար:

Քայց երբ Լիբանանի կառավարչի պաշտոնավայրը գնալիս ժամանել է Ներքին գործերի նախարարի նախկին օգնական Ալի Մունիֆի բեյը, տեղական իշխանությունների կողմից չեղյալ են հայտարարվել ընդունված կարգադրությունները: Փողը ետ չեն վերադարձրել, իսկ հայերին արտաքսել են և սլարտադրել միանալ դեպի արևմուտք տեղի ունեցող համընդհանուր փախուստին: Փախստականները թափառում էին տեղից տեղ: Նրանք, ովքեր չեն մահացել սովից, հյուժվածությունից, հասել են Սիրիա: Հայտնի չէ, թե նրանց հետ ինչ է տեղի ունեցել: Նրանց նկատմամբ դրսևորվել է լավագույն վերաբերմունք, այն առումով, որ տեղում սպանելու փոխարեն, նրանց ուղարկել են մի փոքր ավելի հեռվում սովամահ լինելու կամ ճանապարհի երկայնքով մեկ վայր ընկնելու:

¹ Սենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

Օսմանյան բանկն ու Ռեժիի ծխախոտի վարչությունը հարկադրված են եղել վտարել իրենց հայ ծառայողներին: Գերմանացի ինժեներները հրաժարվել են բաժանվել գումարտակներում ընդգրկված հայ բանվորներից և նրանց տարել են լեռները: Առաջին կոտորածների ժամանակ միսիոներներին բույլատրել էին մեղմացնել հայերի տառապանքները: Այս անգամ նրանց արգելվել է միջամտել: Գերմանացի տարաբնակիչները հաճախ հայերի հանդեպ համակրանք են դրսևորել և թվում է, թե նրանց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի ամբողջ պատասխանատվությունը բարդում էին բուրբերի վրա:

(A.M.G., 7 N 2096).

131

Խորհրդի նախագահի, Արտաքին գործերի նախարարի ժպ, պ. Վիլիանին՝ Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Մյուսսերանին

Ճ. թիվ 400:

Փարիզ, 22-ը հոկտեմբերի 1915 թ.:

Հիմնվելով սեպտեմբերի 22-ի ձեռք բերված 790 նամակի¹ վրա, ես պատիվ ունեմ այս ծրարում ձեզ փոխանցել փաստաթղթեր, որոնք հանձնվել են իմ 'Ի-եպարտամենտին և վերաբերում են հայերի վիճակին Թուրքիայում:

Այս գեկուցագրերը ձեզ հնարավորություն են ընձեռում, գործին իրագրել լինելով, դիմելու քայլերի, որոնց մասին ինձ տեղեկացնում է ձեր գեկուցագիրը: Այդուհանդերձ, ես ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն բանի վրա, որ դուք, հնարավորության դեպքում, չհրապարակեք այս փաստաթղթերն ուղարկողների և դրանց հասցեատերերի անունները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 220).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

['Կոստանդնուպոլսից ուղարկված նամակ]' Բուլղարիայի հայերի պրեզատ, Նիոբին սրբազնություն}ն Շևրոն Տուրյանին՝

[Պատճենը]:

Ավաա:

Իմ վերջին նամակից հետո, որի ստացման մասին դուք ինձ հաղորդել եք, մենք կարողացանք ավելի ճշգրիտ տեղեկություններ ձեռք բերել ներքին նահանգներից: Այն տեղեկությունները, որոնք սույնով մենք ձեզ ենք հայտնում, մեզ են հաղորդել բռնությամբ իսլամն ընդունած, մի քուրք սպայի կողմից առևանգված և չնախատեսված պատահախնամությամբ Կոստանդնուպոլիս եկած՝ 9-ից 10 տարեկան մի հայ աղջիկ (ուրը Չիլեից էր), Խարբերոլից եկած մի քուրք ճանապարհորդ, Երզնկայից՝ եկած արտասահմանյան ճանապարհորդներ և այլք, և այլք...

1 Տես վերը թիվ 98 փաստաթուղթը:

2 Նիոբին սրբազնություն}ն Ղևոնդ Տուրյանը:

3 Էրզնկացանի հայկական անվանումը:

Այսպիսով, այս տեղեկությունները մեզ են հաղորդել ականատեսներն ու զոհերը:

Այսօր հավաստի է, որ այլևս ոչ մի հայ չի մնացել Էրզրումի, Տրապիզոնի, Սվազի, Խարբերդի, Բիթլիսի և Դիարբեքիլի նահանգներում: Գրեթե մեկ միլիոն հայեր, որոնք բնակվում էին այս նահանգներում, տեղահանվել են իրենց հայրենիքից և արտաքսվել դեպի հարավ: Այս տեղահանությունները, ապրիլի սկզբից ի վեր, մեծ հետևողականությամբ կազմակերպել են տեղական իշխանությունները: Նախ և առաջ՝ բոլոր գյուղերում և բոլոր քաղաքներում բնակչությանը զինաթափել են ժանդարմները և այդ նպատակով բանտերից ազատ արձակված քրեական տարրերը, որոնք և զինաթափման պատրվակի տակ սպանություններ էին գործում և մարդկանց ենթարկում սարսափելի խոշտանգումների:

Այնուհետև՝ զանգվածաբար ձերբակալել են հայերին՝ նրանց մաս: զենքերի, գրքերի, որևէ քաղաքական կուսակցության անվան և այլնի հայտնաբերման պատրվակով, իսկ դրա բացակայության դեպքում, որևէ մեկի հարստությունը կամ սոցիալական դրությունը բավարար է եղել իբրև պատրվակ օգտագործելու համար: Եվ վերջապես, ձեռնամուխ են եղել տեղահանությանը: Նախ՝ արքայազնի պատրվակով, հայրենիքից վտարել են նրանց, որոնց չէին ձերբակալել կամ նրանց, որոնց ազատ էին արձակել մեղադրանքի բացակայության պատճառով: Այնուհետև՝ նրանց կոտորել են: Նրանցից որևէ մեկը չի խուսափել մահից: Նախքան նրանց մեկնումը, իշխանությունը պաշտոնապես խուզարկել է նրանց և հափշտակել ամբողջ փողը կամ արժեքավոր իրերը: Սովորաբար նրանք կապկպվում էին առանձին-առանձին կամ 5-ից 10 հոգուց բաղկացած խմբերով: Մյուս մասը՝ ձերունիներ, կանայք և երեխաներ, Խարբերդի նահանգում դիտվել է իբրև իր և հանձնվել մահմեդական ժողովրդի ողորմածությանը: Ամենաբարձր պաշտոնյան, ինչպես և ամենահասարակ գյուղացին, ընտրում էր այն կնոջը կամ աղջկան, որն իրեն դուր էր գալիս և տիրում նրան իբրև կնոջ, բռնությամբ ընդունել տալիս իսլամը: Ինչ վերաբերում է փոքրահասակներին, ապա նրանցից վերցրել են այնքան երեխաներ, որքան ցանկացել են, իսկ մյուսներին բողբոջ են ճանապարհին, սոված ու առանց պարենի՝ սովի, եթե ոչ հրոսակախմբերի դաժանության զոհը դառնալու համար: Դիարբեքիլի նահանգում, մասնավորապես, Մարդինում սեղի է ունեցել կոտորած և բնակչության նկատմամբ կիրառվել են միևնույն վայրագությունները:

Էրզրումի, Բիթլիսի, Սվազի և Դիարբեքիլի նահանգներում տեղական իշխանությունները տեղահանվածներին արտոնություններ են ընձեռել՝ հինգից տասնօրյա ժամկետ, ունեցվածքի մասնակի վաճառքի քույրտություն, իսկ մի քանի ընտանիքների՝ սայլակ վարձելու հնարավորություն: Բայց մի քանի օր անց սայլապանները նրանց քողնում էին կես ճանապարհին և վերադառնում քաղաք: Այս ձևով կազմավորված քարավանները, հաջորդ օրը կամ երբեմն մի քանի օր անց, հանդիպում էին հրոսակախմբերի կամ մահմեդական գյուղացիների, որոնք նրանց հիմնավորապես կողոպտում էին: Հրոսակախմբերը միանում էին ժանդարմներին և սպանում այն եզակի տղամարդկանց կամ երիտասարդներին, որոնք գտնվում էին քարավաններում: Նրանք առևանգում էին կանանց, երիտասարդ աղջիկներին և երեխաներին, քողմեղով միայն ձեր կանանց, որոնց ժանդարմներն առաջ էին հրում թափահարելով և որոնք կես ճանապարհին սովամահ էին լինում: Մի ականատես մեզ պատմում է, որ Էրզրումի նահանգից տեղահանված կանանց մի քանի օր շարունակ բողբոջ են Խարբերդի հարթավայրում, որտեղ բոլորը սովից մահացել են (օրական 50-ից 60-ը), և որ իշխանությունը նրանց քաղելու համար միայն մի քանի մարդ է ուղարկել, որպեսզի մահմեդական բնակչության առողջությունը վտանգի չենթարկվի:

Փոքրահասակ աղջնակը Զիլեից մեզ պատմում է, որ երբ Մարզվանի¹, Ամասիայի և Թու-

¹ Մերզիֆոնի հայկական ամբանումը:

խաթի բնակիչները ժամանել են Սարի-Քիշլա (Սվազի և Կեսարիայի միջև), հենց կառավարչապետարանի առջև մայրերից խել են երկու սեռի պատկանող երեխաներին, նրանց քաքքերը շենքերում և քարավանին հարկադրել են շարունակել ճանապարհը: Այնուհետև՝ հարևան գյուղերին հայտնել են, որ կարող են, ըստ իրենց հայեցողության, առևանգել երեխաներին: Նրան և նրա ընկերուհուն (Նվարդին՝ Ամասիայից) առևանգել և Կոստանդնուպոլիս է տարել մի բուրք սպա: Կանանց և երեխաների քարավանները ցուցադրվում են յուրաքանչյուր քաղաքի կամ յուրաքանչյուր գյուղի կառավարչապետարանի առջև, ուր նրանք հասնում են, որպեսզի մահնեղականները կարողանան ընտրությամբ կատարել:

Պապերտից¹ մեկնած քարավանն այս ձևով կիսով չափ կրճատվել է, իսկ դրանում մնացած կանայք ու երեխաները Երզնկայի² դեմ հանդիման գտնվող Կամախ-Բողազի կոչվող վայրում նետվել են Եփրատը: Օլբիորի Ֆլորա Ա. Վեդել Յարլեսբերգը³, որը սերում է նույն գեղական արիստոկրատական ընտանիքից և որը գերմանական Կարմիր խաչի հիվանդանոցում բուժքույր էր, ինչպես նաև մեկ այլ գերմանուհի բուժքույր, խորապես հուզված այս բարբարոսություններից և համանման այլ արարքներից, հրաժարական են տվել, վերադարձել Կոստանդնուպոլիս և անձամբ ներկայացել մի քանի դեսպանություններ՝ պատմելու համար այս փաստերի մասին:

Այսպիսի բարբարոսություններ տեղի են ունեցել ամենուր և այսօր ճանապարհորդներն այս նահանգների բոլոր ճանապարհներին հանդիպում են միայն հազարավոր հայերի դիակների: Մի մահնեղական ճանապարհորդ, Մալաթիայից Սվազ կատարած իր ուղևորության ընթացքում, որը տևել է 9 ժամ, հանդիպել է միայն տղամարդկանց և կանանց դիակների: Մալաթիայի բոլոր տղամարդիկ տարվել են այնտեղ ու կոտորվել: Բոլոր կանայք և երեխաներն ընդունել են իսլամը: Այս կողմերում և ոչ մեկը չի կարող ճանապարհորդել, քանի որ բոլոր մահնեղականները, հատկապես հրոսակախմբերը և ժանդարմները, քվում է, թե իրենց պարտքն են համարում նրանց անմիջապես սպանել: Վերջերս, օսմանյան խորհրդարանի հայ սյատգամավորներ Ջոհրապը և Վարդգեսը, որոնց զինվորական խորհրդի կողմից դատվելու մտադրությամբ ուղարկել էին Դիարբեքի, մինչ այնտեղ հասնելը սպանվել են Հալեպի մոտակայքում: Այս նահանգներում հնարավոր է ճանապարհորդել միայն մահնեղականի անվան տակ և ծպտված: Ինչ վերաբերում է կանանց, մենք արդեն վերը խոսել ենք նրանց մասին և անիմաստ ենք գտնում այդ մասին խոսել ավելի մանրամասն, երբ տեսնում ենք, թե մարդկային կյանքի հանդեպ ինչպիսի արհամարհական վերաբերմունք է դրսևորվում:

Հայ զինվորները ևս արժանացել են միևնույն ճակատագրին: Ի դեպ, բոլորը զինաթափվել են և աշխատում են իբրև ճանապարհաշինարարներ: Մենք արժանահավատ սկզբնաղբյուրից գիտենք, որ Էրզրումի նահանգի հայ զինվորները, որոնք աշխատում էին Էրզրում-Երզնիկա [sic] ճանապարհահատվածում, բոլորը կոտորվել են: Դիարբեքիյի նահանգի զինվորները ևս, բոլորը կոտորվել են՝ Դիարբեքի-Ուրֆա և Դիարբեքի-Խարբեթո ճանապարհին: Միայն Խարբեթոյից՝ 1800 երիտասարդ հայերի՝ իբրև զինվորների ուղարկել են Դիարբեքի՝ այնտեղ աշխատելու համար: Բոլորը կոտորվել են Արևելի [sic]⁴ արվարձաններում: Մենք որևէ այլ լուրեր չունենք ուրիշ վայրերից, բայց դրանք, անշուշտ, արժանացել են միևնույն ճակատագրին:

Տարբեր քաղաքներում, բանտերի խորքերում մռռացված հայերը մեկը մյուսի ետևից

1 Բաբերդի հայկական անվանումը:

2 Էրզնիզանի հայկական անվանումը:

3 Հարկ է կարդալ՝ օլբիորի Ֆլորա Ա. Վեդել-ժարլեսբերգ:

4 Իմա՝ Արդանա:

կախվել են: Միայն անցած ամսվա ընթացքում մի քանի տասնյակ հայեր են կախվել Կեսա-
րիայում: Բազմաթիվ վայրերում հայ բնակչությունը կյանքը փրկելու համար ցանկացել է ըն-
դունել իսլամը, բայց այս անգամ այդ քայլերը բարյացակամությամբ չեն ընդունվել, ինչպես
նախորդ լայնածավալ կոտորածների ժամանակ: Սվազում հետևյալ առաջարկություններն
են արվել նրանց, ովքեր ցանկացել են ընդունել իսլամը. մինչ 12 տարեկան իրենց երեխանե-
րին հանձնել կառավարությանը, որը կպարտավորվի նրանց տեղավորել որբանոցներում և
տալ հայրենիքը լքելու համաձայնություն՝ գնալ հաստատվելու այնտեղ, ուր մատնացույց
կանի կառավարությունը:

Խարբերվում չեն համաձայնվել տղամարդկանց կրոնափոխությանը. ինչ վերաբերում է
կանանց, ապա նրանց կրոնափոխության ժամանակ պահանջվել է այն մահմեդականի ներ-
կայությունը, որը կցանկանա նրա [sic] հետ ամուսնանալ: Հայ կանանցից շատերը գերադա-
սել են իրենց ծծկեր երեխաների հետ նետվել Եփրատը կամ իրենց տներում դիմել են ինք-
նասպանության: Եփրատը և Տիգրիսը դարձել են հազարավոր հայերի գերեզմանը:

Նրանք, ովքեր Սև ծովի քաղաքներում, ինչպիսիք են Տրապիզոնը, Սամսունը, Կիրասունը
և ուրիշներ, կրոնափոխ են եղել, ուղարկվել են ներքին նահանգներ, այնպիսի քաղաքներ,
որոնք ամբողջությամբ բնակեցված են մահմեդականներով: Քանի որ Շապին-Գարահիսա-
րը հակադրվել էր զինաբափմանը և տեղահանությանը, այն ոմբակոծվել է և ամբողջ բնակ-
չությունը, ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղերի, ինչպես նաև եպիսկոպոսը¹, անողորքաբար
կոտորվել են:

Վերջապես, Սամսունից մինչև Սդերտ² և Դիարբեքիյ, ոչ մի հայ ներկայումս գոյություն
չունի, մեծ մասը կոտորվել է, մի մասն առևանգվել և մի փոքր մասն ընդունել է իսլամը:

Պատմության մեջ երբևէ չի արձանագրվել, չի հիշատակվել նման կոտորած: Մենք հակ-
ված ենք կարծելու, որ սուլթան Աբդուլ Համիդի գահակալության օրոք մենք շատ երջանիկ
էինք: Մենք հենց նոր իմացանք, որ նահանգների մեր եպիսկոպոսները՝ Պապերտի եպիսկո-
պոս, Ն {որին սրբազնություն} ն Անանիա Հազարապետյանը կախվել է, չնայած դատավճիռը
կենտրոնական կառավարության կողմից չի հաստատվել: Խարբերողի եպիսկոպոս, Ն {որին
սրբազնություն} և Բեսակ Տեր-Խորենյանը մայիս ամսին ճանապարհ է ընկել դեպի արքայա-
վայր, բայց հազիվ է հեռացել քաղաքից, երբ դաժանորեն սպանվել է: Մենք դեռևս որևէ տե-
ղեկություն չունենք Սդերտի, Բիթլիսի և Տրապիզոնի եպիսկոպոսների մասին և ավելի քան
մեկ ամիս՝ Սվազի և Էրզրումի եպիսկոպոսների մասին: Անիմաստ է խոսելն իսկ նահատակ-
ված քահանաների մասին: Երբ բնակչությունը տեղահանվել է՝ եկեղեցիները կողոպտվել են
ու վերածվել մզկիթների, ախոռների կամ այլ բաների: Ի դեպ, Կոստանդնուպոլսում սկսել են
վաճառել հայկական եկեղեցիների պաշտամունքի առարկաները և կահույքը, ինչպես և թուր-
քերն են սկսել Կոստանդնուպոլիս տանել դժբախտ հայ կանանց երեխաներին:

Թվում է, թե կոտորածները Կիլիկիայում նվազ դաժան են եղել կամ, համենայն դեպս,
մենք այդ մասին լուրեր դեռևս չունենք: Այն բնակչությունը, որն արքայրվել է Հալեպի նահանգ՝
Դեր Ջոր [sic]³ կամ Դամասկոս, անկասկած, սովամահ կլինի: Համաձայն այն տվյալների, ո-
րոնց մենք հենց նոր տեղեկացանք, կառավարությունը չի ցանկացել նույնիսկ Հալեպի և Ուր-
ֆայի փոքրաքանակ հայ գաղութները թողնել այդ քաղաքներում, որպեսզի նրանք դեպի հա-
րավ ըշվող իրենց դժբախտ եղբայրներին օգնելու հնարավորություն չունենան: Կիլիկիայի

1 Ն {որին սրբազնություն} ն Վաղինակ Թորիկյանը:

2 Մենքտի հայկական անվանումը:

3 Իմա՝ Դեր էգ- Ջոր:

կարողիկուսը¹, որը դեռևս մնում է տեղում, զբաղված է օգնություններ բաժանելով, որը մենք ենք նրան հասցնում:

Մենք կարծում ենք, որ Հայկական հարցին մեկընդմիջտ լուծում տալուն վերաբերող կառավարության ծրագիրը հանգում է հայերի դուրս բերմանը հայկական վեց նահանգներից և հայ բնակչության վտարմանը Կիլիկիայից՝ առաջիկայում մեկ այլ վտանգ ի չլիք դարձնելու նպատակով: Դժբախտաբար այս ծրագիրն ավելի ընդարձակ էր և ավելի հիմնավոր: Այն հանգում էր Թուրքիայի ամբողջ տարածքում ամբողջ հայ բնակչության ոչնչացմանը: Այսպիսով, յոթ նահանգներում, ուր պետք է բարենորոգումներ իրականացվեին, հանձին հայ բնակչության՝ հարյուրից մեկը կենդանի չէ: Մինչ այժմ մենք չգիտենք, թե արդյոք գեթ մեկ հայ հասե՞լ է Մոսուլ կամ նրա արվարձանները: Եվ այս ծրագիրը հենց նոր է սկսվել իրականացվել նույնիսկ Կոստանդնուպոլսի արվարձաններում: Իզմիդի շրջանի և Բյուսայի նահանգի հայերի մեծամասնությունը, լքելով իր օջախը և ունեցվածքը, բռնությամբ ուղարկվել է Միջագետք: Ի դեպ, Ադա-Բագարի, Իզմիդի, Գյուեզլեի [sic]², Արմաշի և նրա արվարձանների, վերջապես Իզմիդի շրջանի բոլոր գյուղերի (քաղաքությամբ Բաղչեջիկի, որը մի քանի օրվա ժամանակամիջոց է ունեցել), բնակչությունը քշվել է: Արմաշի սեմինարիայի վանահայրը ևս քշվել է իր կրոնակիցների և սեմինարիատների հետ մեկտեղ, ամեն ինչ թողնելով տեղում, չկարողանալով որևէ բան տանել:

Վեց լացակումամ մայրեր Կենիշի հայերի հոգածությանն են հանձնել իրենց փոքրահասակ երեխաներին, որպեսզի նրանց կյանքը փրկվի, բայց տեղական խշխանությունը խլել է նրանց հայերից և հանձնել մահմեդականների հոգածությանը: Այսպիսով, հերթը հասել է Կոստանդնուպոլսին: Ի դեպ, մեծ տագնապով լի, բնակչությունը ժամ առ ժամ սպասում է իր դատավճռի իրականացմանը: Ձերբակալություններն անսահման են և ձերբակալված անձանց, որոնց մեծ մասն, անկասկած, չի ապրելու, անմիջապես հեռացնում են մայրաքաղաքից: Դրանք աչքի ընկած առևտրականներ են, որոնք ծնվել են նահանգներում, բայց հաստատվել Կոստանդնուպոլսում և որոնց ներկայումս քշել են: Դրանց թվում են Մարութ Ինգյուրանասիյանը [sic]³, Կարսպետ Քերեկյանն Էրզրումից, Ադամյան Գարեգինը, Գրիգորյան Սմբատը Բիթլիսից, և ուրիշներ... Հայերի այս սարսափելի բնաջնջումից ջանում են փրկել գոնե Կոստանդնուպոլսի հայ բնակչությանը, որպեսզի հետագայում Հայկական հարցի հաճար Թուրքիայում հնարավոր լինի հենակետ ունենալ:

Հա՞րկ է արդյոք այս զեկուցագրին որևէ այլ բան հավելել: Թուրքիայի ամբողջ հայ բնակչությունը դատապարտված է մահվան և այս վճիռը, եվրոպական տերությունների աչքերի առջև, ամբողջ թափով իրականացվում է կայսրության բոլոր անկյուններում ու մինչ այսօր, ո՛չ Գերմանիան, ո՛չ Ավստրիան չեն կարողացել կաշկանդել իրենց դաշնակցի ձեռքերը՝ միաժամանակ իրենց իսկ դեմքի վրայից ջնջելու համար բարբառությունների այս բծերը: Մեր բոլոր ջանքերն այստեղ մնացել են անարդյունավետ: Մեր հույսը կապված է արտասահմանում հաստատված հայերի հետ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 221-225).

1 Ն {որին սրբազնություն} ն Սահակ Քարայանը:

2 Իմա՝ Գեյզել:

3 Իմա՝ Մարութ Իբրանոսյան:

II

**Քուղարիայի հայերի պրելատ, Ն{որին սրբազնությու}ն Ղևոնդ Տուրյանը՝
Հայկական ազգային պատվիրակության նախագահ
Պողոս Նուբար փաշային**

Ն:

Ֆիլիպպոպոլիս, 12/25-ը օգոստոսի 1915 թ.:

[Պատճենը]:

Ձերոյ գերեզանցության հուլիսի 21-ի նամակից մենք ափսոսանքով իմացանք, որ ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարություններին արված քայլերը, ներկա հանգամանքներում չեն հանգեցրել ցանկալի արդյունքների: Բայց մենք նաև իրազեկ դարձանք, և ոչ առանց երախտագիտության, այն անձնվեր ջանքերին, որոնք դուք գործադրել եք Եվրոպայի ուշադրությունը և կարեկցանքը մեր դժբախտ հայրենակիցների վրա հրավիրելու համար:

Մեր երրորդ գեկուցագրով, մենք մեր վրա ենք վերցնում տանջալից մի պարտականություն՝ Ձերոյ գերազանցությանը ներկայացնել Հայաստանի ավերումը: Ամենուր ավերածություն է և մահ: Մենք արցունքներով ենք Ձերոյ գերազանցությանը հղում Կոստանդնուպոլսի արժանահավատ սկզբնաղբյուրներից ստացված նամակի պատճենը: Ամենակարծի սիրտը չի կարող անկարեկից մնալ այստեղ ներկայացված թուրքական բարբարոսությունների նկատմամբ: Պատանությունը երբևէ չի վկայել նման դաժանությունների մասին:

Կարողանալու համար Ձերոյ գերազանցությանը ներկայացնել մեր կորուստների ամբողջական պատկերը, մենք ստորև արտատարում ենք այն հայերի քանակը, որոնք՝ Հայաստանի և Փոքր Ասիայի տարբեր նահանգներում տեղի ունեցած հայ բնակչության զանգվածային տեղահանությունների ընթացքում սպանվել են, անհետացել կամ բռնությամբ ընդունել իսլամը, կամ առևանգվել:

Հալեպ	15800
Սիս.....	9500
Հաճն	20800
Ձեյուն [sic իմա՝ Ձեյթուն]	21000
Ֆարնուզ [sic իմա՝ Ֆուրնուզ].....	7000
Դիվրիկ	11300
Բիրբլիս-Մուշ.....	51500
Իզմիլ	65000
Արմաշ.....	5000
Բյուսսա	25000
Պանդերնիա [sic իմա՝ Բանդիրմա]	15000
Կեսարիա	40000
Սվազ	61500
Թոլսաք	23000
Ամասիա	25000
Շապին-Գարահիսար.....	25000
Սամսուն	20000
Տրապիզոն	32700

Էրզրում	75000
Երզնկա [Էրզինջան]	25500
Պապերտ [Բաբերդ].....	17000
Բասեն	10500
Թերշան [sic իմա՝ Թերջան].....	15000
Կամախ	10000
Խարբերդ	45000
Քրդի	24000
Սղերտ [Սեերա]	25000
Դիարբեքիլ	55000
Ակն	10200
Արաբկիլ	19500
Չիմիչգաղզազ [Չեմիչքեզեք].....	<u>9000</u>
Ամբողջը.....	835600

Այս կորուստների ընդհանուր թիվը՝ սարսափելի է և սուսկալի: Այս բնաջնջումից ցնցված՝ արտասահմանում հաստատված հայերն իրենց դժբախտ հայրենակիցներին օգնության հասնելու համար դիմել են բոլոր միջոցների: Հենց այսօր, մենք բուլղարական կայսրական կառավարությանը մի ծանուցագիր ենք ներկայացրել, որտեղ մանրամասներ ենք հայտնել զանգվածային տեղահանությունների, կոտորածների, առևանգումների, բռնաբարությունների, բռնի կրոնափոխության և սովամահության մասին ու նրանից խնդրել ենք իր միջամտության շնորհիվ փրկել Կոստանդնուպոլսում և մի քանի նահանգներում դեռևս գտնվող հայ ժողովրդի մի քանի բեկորները:

Մենք ձեզ երախտապարտ կլինենք, գերազանցություն, եթե դուք բարեհաճեք մեզ տեղյակ պահել այն քայլերի արդյունքներին, որոնք դուք ձեռնարկում եք եվրոպական տեղությունների առջև:

(A.M.A.E., Guerre 1914-1918. *Turquie*, tome 887, ff. 226-228).

132

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝ Ռազմական նախարարությանը

Թիվ 363: Գաղտնի:

Արենք, 29-ը հոկտեմբերի 1915 թ.:

(Ստացվել է նոյեմբերի 6-ին):

Ինչպես են վերաբերվում հայերին Կոստանդնուպոլսում

Այստեղ մի գեկուցագիր է ստացվել, որի արժեքն անգնահատելի է և հայտնում է, թե վերջերս Կոստանդնույսիլի ոստիկանությանը ծրարված հյամաններ են տրվել, որոնք պետք

1 Արտատված ցուցակը հավաստում է 835600 գոների ընդհանուր թիվը: Այդուհանդերձ, րվում է, թե հայկական նահանգներից մեկի կրած կորուստները բնագրից դուրս են մնացել, քանզի նշված թվերի ամբողջական գումարը հասնում է միայն 814000-ի:

է բացվեին կիրակի օրն առավոտյան: Հայերն իմացել են այդ մասին և կանխագգալով հուզումներ՝ դիմել են գերմանացի մի սպայի: Սպան այդ մասին տեղեկացրել է Գերմանիայի դեսպանին Բեռլինում: Ի վերջո, կայսրից մի հեռագիր է ստացվել, որն արգելում էր հայերի դեմ ուղղված յուրաքանչյուր գործողություն, և շաբաթ օրը երեկոյան ոստիկանական բոլոր կետերից ծրարված կրամանները շտապ ետ են վերցվել: Կիրակի օրը ոչինչ տեղի չի ունեցել: (A.M.G., 7 N 2096).

133

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսը՝ Խորհրդի նախագահի, Արտաքին գործերի նախարարի ժպ, պ. Վիվիանին

Ճ. թիվ 336:

Կահիրե, 29-ը հոկտեմբերի 1915 թ.*:
(Ստացել են Կաթ. նոյեմբերի 10-ին,
Զաղ. վարչ. նոյեմբերի 12-ին):

Չնայած իմ կրկնվող կոչերին, Եգիպտոսի հայերի շրջանում ես չեմ հանդիպել՝ Պորտ-Սաիդ գաղթած իրենց հայրենակիցներին օգնության հասնելու խիստ զնահատելի աջակցության: Այդ պայմանավորված է բազմաթիվ պատճառներով, որոնք, ի դեպ, անհաջող արդարացումներ են:

Առաջին հերթին այդ կապված է Պոլոս փաշա Նուբարի բացակայության հետ, որը բազում ամիսներ ի վեր գտնվում է Ֆրանսիայում և ամենից աչքի ընկած, ամենահարգված և ամենագործունյա հայ գործիչն է Եգիպտոսում:

Ես փորձեցի ի նսրաստ Պորտ-Սաիդում գտնվող հայերի սկսված շարժման գլուխ կանգնեցնել Արքին փաշա Դ-ալյանին¹, որը Եգիպտոսի հայերի շրջանում Պոլոս փաշա Նուբարից հետո ամենաբարձր վարկն ունի և վայելում է ամենախորին հարգանքը: Բայց Արքին փաշան տարեց է, նա այլևս շատ գործնական չէ: Համաձայն իմ խնդրանքի, նա մի կոմիտե է կազմավորել և նշանակվել է դրա նախագահը, որը կազմակերպել է հանգանակություններ ի հավաք, որոնք շուշափելի արդյունքի չեն հանգեցրել:

Ես ջանացի գործելու դրդել նաև ուղղափառ հայերի եպիսկոպոս, Ն {որին սրբազնություն} Թորգոմին, որը բազմաթիվ առիթներով Պորտ-Սաիդ է գնացել և մանապես մի կոմիտե է կազմավորել պատրիարքարանում:

Ես փորձեցի միավորել ջանքերը, բայց կաթոլիկների և ուղղափառների միջև տարածայնություններ կան և ամենքն ինձ պատասխանեցին, որ Եգիպտոսի հայերը հարուստ չեն ու արդեն շատ բան են հատկացրել Թուրքիայի հայերին:

Արքին փաշային և եպիսկոպոսին ես հուշեցի եգիպտական մեծ կոմիտեի պատվավոր նախագահ նշանակել Պոլոս փաշա Նուբարին և հեռագրով նրան խնդրել՝ Ֆրանսիայի, Անգլիայի ու Ամերիկայի հայերի շրջանում կարևոր հանգանակություններ հավաքել, որպեսզի ապահովվի Պորտ-Սաիդի գաղթականների գոյությունը:

Արքին փաշան մամակով դիմել է Պոլոս փաշային: Վերջինս նրան պատասխանել է, որ Եվրոպայում և Ամերիկայում ինքն արդեն կոչով դիմել է ամենքին, ներառյալ նախագահ Վիվ-

* Նախարարի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Պ. Վիետ. իմ կողմից պ. Չոպանյանին հղվող մամակի համար ամփոփել 1 մասը»:

1 Սիսլ է. իմա՝ հավանաբար, Յաղոբ Արքին փաշա:

սանը, Թուրքիայում կոտորածներին վերջ դնելու և իրենց հայրենի երկրում աղետի մեջ գտնվող բյուրավոր հայերի օգնության ձեռք մեկնելու համար: Նա ավերացնում էր, որ ինքը չէր կարող, հետևաբար, անել ավելին:

Կարճ ասած, Եգիպտոսում ժուր:վված գումարները շատ ավելի նվազ կարևոր են և օգտագործվել են գաղթականներին հագուստներ, վերմակներ, ներքնակներ և այլն տրամադրելու համար: 5000 գաղթականների պահելու և կերակրելու ծախսերն ամբողջությամբ հանձնվում են, այսպիսով, անգլիական իշխանությունների հոգածությանը, որոնք մինչև հոր կարգի սահմանումը, հոգում են անհրաժեշտ ծախսերը:

Ինչ վերաբերում է մարտունակ տղամարդկանց օգտագործելուն, ապա 3-րդ էսկադրայի հրամանատարի ժյ դերժովակյալն¹ այս առթիվ մի զեկուցագիր է հղել պ. Ռազմածովային նախարարին, որի պատճենը ես փոխանցել եմ Դեպարտամենտին: Բացի դրանից, ինչպես և ես այդ մասին տեղեկացրել էի Ձերո՞ գերագնացությանն իմ թիվ 254 հեռագրով², Ռազմական նախարարը կոչել է լեյտենանտ դը Սեն-Քուենտինին քննարկել այս մարդկանց՝ իբրև սևագործ բանվորների Դարդանելում օգտագործելու հնարավորությունը: Պ. դը Սեն-Քուենտինը հաղորդել է իրենից պահանջվող տեղեկությունները և իր անձնական դիտողությունները, որոնց ամփոփումը ներկայացված էր իմ վերոհիշյալ հեռագրում: Նա հրահանգների է սպասում, իմանալու համար, թե ինքը շարունակելու՞ է իր քայլերը, թե ոչ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 45-46).

134

Ռազմական նախարարը՝ Ռազմածովային նախարար, դերժովակյալ Լակազին

Ծ. թիվ 6541-9/11: Հրատապ:

Փարիզ, 30-ը հոկտեմբերի 1915 թ.:
(*Ստուգել են* Կարլինետը և Գ. լլսավոր} 2 {տաբլի}
1-ին ենթաբաժինը հոկտեմբերի 30-ին):

Հոկտեմբերի 15-ի թիվ 6111-9/11 հեռագրով³ ես պատիվ ունեցա ձեզ տեղեկացնել իմ մտադրությանը, որը վերաբերում էր Մուսթոսում, Դարդանելի ռազմարշավային կորպուսի բազայում, Պուրտ-Սաիդ գաղթած հայերից ընտրված որոշ մարդկանց իբրև օժանդակ բանվորներ օգտագործելուն:

Ես հետաձգել եմ այս նախագծի իրականացումն այն պատճառով, որ դուք, ձեր կողմից, նախատեսել եք այս զաղթականների օգնությամբ կազմավորել անկանոն զորքերի մի կորպուս, որը կտնօրինի Սիլիայի մեր էսկադրայի հրամանատարը:

Սակայն Դարդանելի ռազմարշավային կորպուսը դեկավարող գեներալն⁴ իմ քննարկմանն է ներկայացրել Մուսթոսի բազայում նավերի բարձելու, բեռնելու և բեռնաթափելու աշխատանքները համար լրացուցիչ անձնակազմին վերաբերող համառ խնդրանքներ: Այն

1 Դերժովակյալ Դարրին:

2 Հոկտեմբերի 13-ի. տես վերը թիվ 125 փաստաթուղթը:

3 Մուսթոս գրել է գեներալ Գլայսիանին:

4 Վերն արտատպված է թիվ 127 փաստաթղթում:

5 Գեներալ Գուրոն:

դեպքում, եթե դուք չօգտագործեք այն հայերին, որոնց վերաբերում է խոսքը, կանոնավոր գործերի կորստի կազմավորման համար, ես ուրեմն շահագրգռված կլինեմ նրանց օգտագործել վերը նշված պայմաններով:

Հետևաբար, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարիաճեք ինձ տեղյակ պահել, հնարավորության սահմաններում պրագ, այն շարունակությամբ, որը մտադիր եք տալ հայ գաղթականների օգտագործմանը վերաբերող ձեր նախագծին:

(A.C.M., SS Ed 125).

135

Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերծովակալ Դարրիոն՝ Ռ-ազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեին

Ճ. քիվ 383: Գ-ադմիրալ:

«Ժորեգյուիբերիլի» տախտակամածից,
Պորտ-Սալոյի նավակայան, 30-ը հոկտեմբերի 1915 թ.:
(*Սուսցել են Շ-ն, I Ռ-ազմածովային
բանակը նոյեմբերի 8-ին*):

Ես պատիվ ունեմ ձեզ ողորկել այն նամակի պատճենը, որը հղում եմ Ռ-ազմածովային նախարարին, փոխանցելով Պորտ-Սալոյի Ինքնիջենս միլիարարի դեփարթմենթի ուսումնասիրությունը՝ դեպի Սուեզի ջրանցք նոր հարձակման հնարավորությունների վերաբերյալ:

(A.C.M., SS A 164).

ՀԱՎԵԼՎԱԾ

Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերծովակալ Դարրիոն՝ Ռ-ազմածովային նախարար պ. Վիկտոր Օգանյորին

Ճ. քիվ 381: Գ-ադմիրալ:

«Ժորեգյուիբերիլի» տախտակամածից,
Պորտ-Սալոյի նավակայան, 28-ը հոկտեմբերի 1915 թ.:

Ես ինքս ինձնից ներողություն խնդրելուց հետո, կարծում եմ, որ պարտավոր եմ կրկին ձեզ հետ գրուցել հայերի զինման շուրջ, որի համար ներողություն եմ խնդրում մասն ձեզնից, և պնդել առաջին հայացքից այդ երկրորդական հարցի վրա:

Ժամանակակից սոսկալի ճգնաժամի պայմաններում, երբ բոլորի հայացքները, առանց շրջանցելու Ֆրանսիայի և Ռուսաստանի գլխավոր ուզմանակատները, հատվում են դեպի Բալկաններում տեղի ունեցող իրադարձությունները, կարող է անհարկի քվալ ուշադրության հրավիրումը, գուցե և սոսկ մի պահ, Սիրիայի այդքան հեռավոր տարածաշրջանի վրա:

Այդուհանդերձ, ես չեմ գտնում, որ ծայրամասում գտնվող այս կետը կարող էր ուշադրու-

քյունից վրիպել՝ առանց վնասներ պատճառելու: Գոյություն ունի միայն մեկ ռազմաճակատ, որի բոլոր՝ միմյանց հետ սերտորեն կապված կետերը հետաքրքրություն են ներկայացնում և եթե այս պնդումը հավաստելու համար անհրաժեշտ լինի նոր փաստարկ, բավական կլինի ձեզ հայտնել, որ գերմանացիները ելքեւ չեն դադարել նախապատրաստվել Սուեզի ջրանցքի և Եգիպտոսի դեմ ուղղված ռազմարշավի:

Այս առթիվ, ես ձեզ եմ հղում Պորտ-Սաիդի Ինթելիջենս միլիթարի դեփարթմենթի պատրաստած կատարելապես ամբողջական և լուրջ մի ուսումնասիրություն, որի մանրամասնեցող քաղվել են ոչ միայն բազմաթիվ գործակալների կողմից տրամադրված տեղեկություններից, այլև մեր օդանավերից արված հետախուզումների տվյալներից:

Դա հաշվետվություն է տալիս այն մասին, որ երկարուղին երկարաձգվել է մինչ Բիր-էս-Սաբահ՝ ծայրագույն կետը, մինչ ուր այն կարող էր տարվել անապատում, և որ ջրափոսերը բազմապատկվել են ու կարգի բերվել:

Կատարված ահռելի աշխատանքների իրականացման հարցում անընդմիջելիությունը ցույց է տալիս, որ մոտալուտ բարենպաստ եղանակի պայմաններում հարկ է սպասել ջրանցքի և Եգիպտոսի դեմ ուղղված մի նոր հարձակման, որն, անկասկած, մտնում է գերմանական Գլխավոր շտաբի ծրագրերի մեջ:

Միանգամայն ակնհայտ է, որ այս հարձակման հաջողությունը կամ նույնիսկ այն իրականացնելու հնարավորությունը, սերտորեն առնչվում է Բալկաններում տեղի ունեցող գործողություններին: Կասկածից վեր է, որ դա կարող է հաջողությամբ պսակվել միայն այն դեպքում, եթե ավստրիացիները և գերմանացիները, բուլղարացիների օգնությամբ, սերբական ու թուրքական ռազմաճակատներում հաղթանակներ տանեն, որոնք նրանց թույլ կտան վերջին ռազմաճակատից առանձնացնել ռազմարշավի համար անհրաժեշտ զորքեր: Բայց, այդուհանդերձ, ճշմարիտ է և այն, որ Եգիպտոսի դեմ հարձակում կազմակերպելու սկզբունքը միշտ առաջադրվել է թերևս միայն բարոյական նշանակության պատճառով. որն այն կարող է ունենալ: Ամեն դեպքում, վատթարագույն քաղաքականությունն այն քաղաքականությունն է, որը հանգում է չլիմացության: Այսպիսով, հարկ է այս իսկ պահից վնասել այնպիսի միջոցներ, որոնք ընդունակ լինեն խաչընդոտելու գերմանա-թուրքական ծրագրի իրականացմանը:

Այս պահին չի կարող խոսք լինել այնպիսի մի ռազմարշավի մասին, որի համար մեր մարդկային ուժերը և մեր տրամադրության ներքո եղած նյութական միջոցներն, անշուշտ, անբավարար են և հենց այստեղ է, որ միջամտում է պարտիզանական պատերազմին դիմելու հնարավորությունը:

Սեպտեմբերի 22-ի թիվ 294 մամակում¹ ես ձեզ տեղյակ եմ պահել ներկա իրադրությանը Միլիայում և հայտնել հանուն Ֆրանսիայի գործերու անհրաժեշտության մասին կամ ուղղակիորեն՝ ռազմարշավային կորպուսի միջոցով, կամ մեր գործին համակող ու թուրքական տիրապետությանը թշնամի ազգություններին զինելու ճանապարհով:

Հոկտեմբերի 2-ի իմ թիվ 318 մամակում² ես վեր եմ հանել այն բոլոր պատճառները, որոնք վկայում են հայերին զինելու և համախմբելու օգտին: Ես հայտնել եմ, որ հայ գաղթականների անմիջապես կմիանան այժմ Եգիպտոսում գտնվող մեծ թվով հայեր և որ կարելի է հույսեր տաժել Ամերիկայում ապրող նրանց համակրունակիցների ավելի կարևոր օժանդակ ուժերի նկատմամբ, որոնք իրենց հայրենակիցների կոտորածներից ցնցված, սպասում են միայն ազդանշանի՝ դարավոր թշնամու դեմ պայքարի ելնելու համար:

Վերջապես, հոկտեմբերի 15-ի թիվ 352 մամակում³ ես պնդել եմ հայերին զինելու և Ալեք-

1 Վերն արտատպված է թիվ 100 փաստաթղթում:

2 Տե՛ս վերը թիվ 116 փաստաթուղթը:

3 Վերն արտատպված է թիվ 128 փաստաթղթում:

սանդղետի շրջակայքում ռազմական գործողությունների ընթացքում նրանց օգտագործելու շուրջ, որն ամբողջ Սիբիրայում հսկայական արձագանք կունենա:

Այսօր ես կարող եմ պնդել, որ շատ կարևոր պարտիզանական ջոկատներ, որոնց հավաքագրումն ապահովված է, կարող են օսմանյան գոյքերի դեմ խիստ արդյունավետ պատերազմ մղել նախատեսված ամբողջ տարածաշրջանում:

Ես գտնում եմ, որ պարտավոր եմ այս կապակցությամբ սկզբից ևեթ հերքել հնարավոր մի առարկություն: Իրոք որ, կարող են վախենալ այն բարություններից, որոնցով հոլի է հայկական բնակչության զինումը: Այս փաստարկը հաշվի առնելու հարկը չկա, քանի որ դաշնակիցները Պորտ-Սախլում պահում են ամենաարժեքավոր գրավականները՝ հենց այս հայերի ընտանիքները, որոնք նրանց մվիրվածության ամենաանառարկելի երաշխիքներն են, չբացառելով և այն, որ հնարավոր է տարակուսանքով վերաբերվել նրանց բացառապես ֆրանսիամետ զգացմունքներին:

Ի շարս այն գործողությունների, որոնց իրականացումը կարելի է վստահել հայերին, դասվում են հարձակումները Բաղչեի բունելի և Ռաջուի ուղեկամքի վրա: Ես այստեղ կարող եմ միայն հիշեցնել արվեստի այս երկու գործերի ռազմավարական ծայրահեղ կարևորության մասին, որոնց ավերումը կապահովի Թուրքիայի և Սիբիրայում գործող նրա բանակների միջև եղած հաղորդակցության սլոնթաց միջոցների խզումը: Հենց դա էլ կլինի ջրանցքի դեմ ուղղված գերմանա-թուրքական ծրագրերի գլխավոր խոչընդոտը:

Եթե հայերին ուսուցանելու համար անհնար է անհրաժեշտ հրամանատարական կադրեր ներգրավել Ֆրանսիայից կամ ֆրանսիական հյուսիս-արևելյան տիրույթներից, որի մասին ես ձեզ տեղեկացրել եմ իմ թիվ 318 վերոհիշյալ մամակում, ապա նախապատրաստական այդ աշխատանքը կարելի է ապահովել, հնարավորության որոշակի սահմաններում, 3-րդ էսկադրայի անձնակազմի միջոցով:

Իմ թիվ 294 մամակում ես արդեն շարադրել եմ այն բազում պատճառները, որոնք Ֆրանսիային պարտադրում են Սիբիրայում գործելու անհրաժեշտությունը: Այդ պատճառներն այժմ շատ ավելի հրամայական ձևով են իրենց զգալ տալիս, քան երբևէ: Ես չեմ կարող շատ համառել այս հարցի շուրջ:

Եզրափակելով, ես պետք է ձեզ տեղեկացնեմ, որ բրիտանական զինվորական իշխանությունները Պորտ-Սախլի ճամբարի հայերին արդեն հնարավորություն են ընձեռել վարժություններ անելու, որոնք առողջապահության պատրվակի ներքո, ճանապարհ են հարթում շատ ավելի ռազմական բնույթի ուսուցման համար և թույլատրելի սկզբնադրյալից իրազեկ եմ, որ նրանք հաստատականորեն վճռել են նրանց օգտագործել որքան հնարավոր է արագ:

(A.C.M., SS A 164).

136

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիր՝ Ռազմական նախարարությանը

Թիվ 379: Գաղտնի¹:

Աքեմբ, 5-ը նոյեմբերի 1915 թ.:

1915 թ. հոկտեմբերի 27-ին Սամսունից Գեղեագաչ ժամանած

մի ամերիկացու գեկուցագիր

¹ Սենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

Մեզ տեղեկացնողը Մամսունի և Անգոռայի միջև տեղակայված գյուղերի մեծ մասում տեսել է բրիտանական հպատակների:

Մամսունի բոլոր հայերը տեղահանվել են: Մամսունի և Անգոռայի միջև՝ ճանապարհի ամբողջ երկայնքով, կարելի է հանդիպել հայերի բազմաթիվ դիակներին:

(A.M.G., 7 N 2096).

137

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝ Ռազմական նախարարությանը

Թիվ 380: Գաղտնի¹:

Աթենք, 5-ը նոյեմբերի 1915 թ.:

Հայերի արտաքսմանը վերաբերող՝ Ադանայի գործակալի զեկուցագիրը,
որը թողել է Մերսինը 1915 թ. հոկտեմբերի 12-ին

Ադանայի վիլայեթից արտաքսվել են գրեթե բոլոր հայերը (100000-ից 300000): Արտաքսումը տեղի է ունեցել օգոստոս ամսին: Դրան նախորդել է որոշ թվով հայերի մահապատիժը հուլիս ամսին Դ-յորթ-Յոլում և այլուր: Գերմանական, ավստրիական և ամերիկյան հյուպատոսները ոչինչ չեն արել նրանց հովանավորելու համար: Կոտորածներ չէ, որ տեղի են ունեցել, կոտորածը կարող էր ավելի մարդասիրական արարք լինել: Հաճում, Սսում, Դ-յորթ-Յոլում, Այասում և բազմաթիվ հայկական գյուղերում չի մնացել և ոչ մի հայ: Ադանա քաղաքում մնում են հավանաբար 2000 հայեր:

Հալեայի ուղղությամբ հայերին ուղարկել են Դ-եր Զոր [sic]²: Նրանցից 150-ից 300-ը սովից և արնալժից ամեն օր մահանում էին ճանապարհին: Նրանց մեկնելուց հետո, նրանց ունեցվածքը բռնագրավվել է և վաճառվել:

Բոլոր ֆրանսիական դպրոցները և եկեղեցիները, ինչպես նաև բոլոր հայկական եկեղեցիները բռնագրավվել են:

(A.M.G., 7 N 2096).

138

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնին

Ճ. թիվ 1825: Գաղտնի:

Փարիզ, 9-ը նոյեմբերի 1915 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից երեք նամակների պատճենները, որոնցով Կահիրեում գտնվող Հանրապետության նախարարն ինձ տեղեկացնում է Մուսա լեռան հայերի փրկության, Կիլիկիայում հայկական ապստամբություն հրահրելու³ և Սիրիայում ռազմական

1 Մենք արտասույուն ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

2 Իմա՝ Դ-եր-էզ-Չոր:

3 Տես վերը թիվ 112 փաստաթուղթը (և հավելվածները):

գործողության հաջողության հավանականությունների մասին: Այս մամուլներից վերջինին կցվում են այն երկու զեկուցագրերի պատճենները, որոնք ծովակալ Դարրիոն հղել էր ուղղակիորեն Ռազմածովային նախարարությանը, և նա ձեռք երախտապարտ կլինեմ, եթե դրանք ինձ վերադարձնեք ընթերցելուց հետո: Դուք բարեհաճեք նաև ինձ վերադարձնել Կահիրեից ստացված թիվ 292 զեկուցագրին՝ կլից հավելվածները:

Ես կարող եմ միայն հավանություն տալ այ. Դեֆրանսի դրսևորած զգուշությանը՝ Կլիկիայում ապստամբություն հրահրելու առաջարկության հարցում, որն արել է Հայկական ազգային պաշտպանության կոմիտեն: Նշված պայմաններում ձեռնարկված մնան մի ապստամբություն, որին ֆրանս-անգլիական ուժերը չէին կարող էականորեն աջակցել, կհանգեցնեի միայն համատարած կոտորածների, որոնց պատասխանատվությունը կբարդվեր դաշնակից տերությունների վրա: Լավագույն լուծումը մեզ առաջարկել է անգլիական կառավարությունը՝ քրիտանական դեսպանի միջոցով իմ Դեպարտամենտին հանձնված ծանուցագրում: Այն հանգում է մարտունակ հայերին Մուդրոսի՝ բազայի աշխատանքներում ընդգրկելուն, հոգավոր նրանց այնպիսի աշխատավարձ հատկացնելու մասին, որը տարբերվի սոմալների կամ բուրբ գերիների աշխատավարձից: Այսպիսով, կարելի է ունենալ կրկնակի առավելություն՝ ապահովել նրանց աշխատանքով և հեռացնել Եգիպտոսից, որտեղ նրանց ներկայությունը կարող է միայն ոգևորել արկածախնդիրներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 54-54 v).

139

Հաագայում Ֆրանսիայի նախարար այ. Ալլիզեն՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար այ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 1447:

Հաագա, 9-ը նոյեմբերի 1915 թ.:
(*Ստացել են* Կար. նոյեմբերի 18-ին,
Քաղ. վարչ. նոյեմբերի 19-ին):

«Նյունն ռոտերդամյե քարանթը» բոլորովին վերջերս տպագրել է Նյու Յորքից ստացված մի լուր, համաձայն որի «հայկական ջարդերը կրկին ուրվագծվում են միջազգային հորիզոնում, և կարծեք, բեմական մի մեծ տեղորոշման մասն են կազմում, որը Թուրքիայի դեմ ուղղված գրգռվածություն է առաջացնում»:

«Զյուլնիչե ֆոլկսցայտունգն» արտատպելով այս կողմնակալ տեղեկությունը, թուրքական կառավարության վարքագիծն արդարացնելու նպատակով մի հոդված է տպագրում Հայաստանում տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ, որն, ըստ էության, ստեղծում է առարկություններ չհանդուրժող կարծիք: Գերմանական թերթն իրականում չի ժխտում, որ հայերի դեմ կիրառված միջոցները եղել են դժնդակ, «ըստ մեր ըմբռնման՝ հավանաբար, նույնիսկ խիստ դժնդակ», բայց մա հայտարարում է, որ դրանք հետևանք են Կովկասում թուրքական հարձակման պահին թուրքերի դեմ ուղղված հայերի ապստամբության և որ Թուրքիան, ելնելով իր սեփական անվտանգության շահագրգռվածությունից, «պետք է միջամտեի այնպիսի ձևով, որ վստահ լինեի, թե այդ արարքներն այլևս տեղի չեն ունենա՝ առնվազն ներկայիս

այատերագրելի ընթացքում»: «Չեն կարող մեզնից պահանջել, – ավելացնում է Քյուլմի թերքը, – որ մենք հայերի այս սպանությունները դատապարտենք ավելի խիստ ձեռքով, քան բուրքերի սպանությունները»: Հայերի նկատմամբ կիրառելի են նմանապես վարչապետի խոսքերը. «Մենք մոռացել ենք զգայուն լինելու մասին»:

Հավելվածի ձևով Ձերդ գերագանցությանը փոխանցելով սրան կյոց մերձհունուսյան օլ-գանի հողվածի պատճենը¹, ես գտնում եմ, որ հարկ է իբրև գաղտնիք ավելացնել, որ Հայաստանում գործող հողանրական տեսչության ծառայության մեջ գտնվող և մի քանի շաբաթ առաջ հենց Կոստանդնուպոլսից ժամանած մի հողանրացի գործակալ հայտարարել է, որ հայերի սպանություններն Օսմանյան կայսրությունում տեղի են ունենում պարբերաբար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 232-232 v).

140

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը Ռազմածովային նախարար, դերծովակալ Լակազին

Ճ². թիվ 1819: Գաղտնի:

Փայլիզ, 10-ը նոյեմբերի 1915 թ.:
(*Ստացել են* Կաբինետը նոյեմբերի 12-ին,
Գ. {լիստի} 2 {տարի} I ենթաբաժինը
նոյեմբերի 21-ին):

Երկու նամակներով, որոնց պատճենները կցվում են, Կահիրեում Հանրապետության նախարարն ինձ տեղեկացնում է Կլիկիայում հայկական ապստամբություն հրահրելու և Սիրիայում գործողություն ձեռնարկելու հնարավորության մասին³: Այս նամակներից երկուորդին կցված են այն երկու զեկուցագրերի պատճենները⁴, որոնք ծովակալ Դարրիոն հղել է ուղղակիորեն ձեր վարչությանը:

Ինչ վերաբերում է Կլիկիայում ապստամբության առաջարկությանը, որն արել է Հայկական ազգային պաշտպանության կոմիտեն⁵, ապա ես կարող եմ միայն հավանություն տալ պ. Դեֆրանսի զգուշությանը: Նշված պայմաններում ձեռնարկված ապստամբությունը կարող էր հանգեցնել միայն համընդհանուր կոտորածների, որի պատասխանատվությունը կբարդվեր դաշնակից տերությունների վրա:

(A.C.M., SS Ed 125).

1 Արտատպված չէ:

2 Համանման բովանդակության մի ճեպագիր ուղարկվել է Ռազմական նախարար, գեներալ Գալլիենիին:

3 Վերն արտատպված են թիվ 103 և 112 փաստաթղթերում:

4 Տես վերը թիվ 99 և 100 փաստաթղթերը:

5 Այդ առաջարկության մասին տես վերը թիվ 112 փաստաթուղթը (հավելվածներ I, II):

**Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսովը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. թիվ 92181:

Թիֆլիս, 12-ը նոյեմբերի 1915 թ., ժ. 21.31-ին:
(Մտացվել է նոյեմբերի 14-ին, ժ. 7.30-ին):

Կովկասի հայերը, հուզված Մուսա լեռան բարձունքներում գտնվող Հայաստանի մեր դժբախտ եղբայրներին ցուցաբերված օգնության սրտառուչ լուրից, ֆրանսիացի քաջարի նսովաստիներին են հայտնում ելախտագիտության իրենց խորին զգացումը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 233).

**Ռազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի
նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ա. թիվ 7058-9/11:

Փարիզ, 13-ը նոյեմբերի 1915 թ.:

Իբրև 1915 թ. հոկտեմբերի 12-ի թվակիր՝ ձեր թիվ 5156 ճեպագրի² շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ հրաժարվում եմ Եզիպտոս գաղթած հայերից՝ մեր Արևելյան բանակի համար նախատեսված մշակների ջոկատներ կազմավորելու իմ ծրագրից, այդ աշխատանքին նրանց նվազ պիտանելիության և իբրև մարտիկներ ծառայելու նրանց ունեցած ցանկության սխառմանով:

Մյուս կողմից, նոյեմբերի 2-ի թվակիր ճեպագրով, որի պատճենը կցվում է¹, Ռազմածովային նախարարն ինձ տեղեկացրել է, որ հայերից անկանոն զորքերի կորպուսի կազմավորումն այլևս չի նախատեսում: Այս որոշումները պատասխանում են Փարիզում բրիտանական դեսպանի⁴ առաջադրած հարցին:

Հեռագրով ես դրանց մասին ուղղակիորեն տեղեկացնում եմ Կահիրեում գտնվող լեյտենանտ դը Սեն-Բունտիլինին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 56).

1 Ստորագրել է գնդապետ Վալանտինը:

2 Արտատպված չէ:

3 Արտատպված չէ: Ռազմածովային նախարարը հրաժարվում է կազմավորել հայերից բաղկացած անկանոն զորքերի կորպուս: Դրա փոխարեն, նա որևէ խոչընդոտ չի տեսնում Մուղոսի բազայում Պորտ-Սաիդ գաղթած հայերին օգտագործելու հարցում:

4 Սըր Ֆրանսիս Բերթին:

**Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբրոնը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. թիվ 2663:

Լոնդոն, 15-ը նոյեմբերի 1915 թ., ժ. 18.45-ին:

Սրբ Էդուարդ Գրեյն այսօր կրկին անդրադարձավ Ալեքսանդրետում դեսանտի ւսի դուրս քերմանը վերաբերող լորդ Բիթչեների առաջարկություններին: Նա ինձ ասաց, որ դուք կառավարության և զինվորական իշխանությունների միջև բնության առարկա են դառնալու, որ դուք, թվում է, թե չեն արժանացել ո՛չ Ռուր Օֆիսի շտաբի, ո՛չ ծովակալության հավանությանը, որ անձամբ իր համար դյուրին չէ ռազմական բնույթի հարցի շուրջ կարծիք հայտնելը, բայց ձեռնարկումը նրան դժվարին է թվում, [որ] Անգլիան, որը մարտի է նետել զորքերը Բալկաններում, Դարդանելում, Եգիպտոսում և Հնդկաստանում (քանզի Պարսկաստանը գտնվում է գերմանական ազդեցության ներքո [և] դարձել է անհամագտության լուրջ պատճառ) չի կարող էլ ավելի ցրել իր ուժերը, որ, ի դեպ, հարկ է գտնել նոր գործադրություններ և որ հայտնի չէ, թե որտեղից է կարելի դուք առանձնացնել...

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 871, f. 58).

Քրդական առաջարկությանը վերաբերող հուշագիր¹

[Ստացել է Քաղ. վարչ. 1915 թ. նոյեմբերի 16-ին]:

1914 թ. դեկտեմբերի առաջին օրերին պ. Ժունգը գնացել է Արտաքին գործերի նախարարություն՝ նախարարին փոխանցելու գեներալ Շերիֆ փաշայի արած հետևյալ առաջարկությունը.

Գեներալն առաջարկում է քրդերով բնակեցված երկրամասերի աջակցությունը, որոնք այժմ ի վիճակի են զինելու բազում հարյուր հազարավոր մարդկանց: Այդ նրա երկիրն է, և ամենազոհեցիկ պարագլուխները նրա բարեկամներն են:

Հայերի հետ համաձայնության եկած քրդերը դուրս կբերվեն Հայաստանի այն շրջաններին, որտեղ բնակվում են: Հայերը նույն ձևով կվարվեն Քրդստանում:

Քրդստանը չի ցանկանում գտնվել ռուսական հսկողության ներքո: Նա համաձայն է, որ իր գլուխ կանգնի նույն կրոնական աղանդին պատկանող մի հնդիկ արքայազն: Նա ցանկանում է, որ դաշնակիցների որոշակի հավաստիքներով երաշխավորվեն իր ինքնավարությունը, լեզու, կրոնը, սովորույթները: Նա ցանկանում է, որ պատերազմից հետո դպրոցներ բացվեն:

Քրդերը ձանձրացել են բուրբերից: Երև դաշնակիցները համաձայնվին՝ գեներալը կմեկնի Բաստրահ, որ նրան կսպասեն երկրի բոլոր շրջաններից եկած քուրդ հեծյալները: Այս առաջարկությունն արվել է 1914 թ. դեկտեմբերի 12-ին գրավոր ձևով և դեկտեմբերի 28-ին պ. Ժունգն ի պաշտոնն հանդիպում է ունեցել նախարարների խորհրդի տնօրեն պ. Գրեյնայի հետ:

Մինչ այդ, պ. Ժունգը ուղղակի խորհրդով գնացել է տեսնելու պ. Լորենին՝ Անգլիայի դես-

¹ Պ. Էժեն Ժունգի՝ պ. Պուանկարեին հղած 1915 թ. նոյեմբերի 10-ի բվակիր նամակին կից հավելված: Ստացել է Հանրապետության նախագահությունը նոյեմբերի 13-ին և փոխանցել Քե-դ՝Օրսե՝ նոյեմբերի 16-ին:

սանոթյունում և Ռուսաստանի դեսպանության առաջին քարտուղարին՝

Նրան չեն հասկացել կամ չեն ցանկացել հասկանալ: Եթե առաջարկն ընդունվեր, Հայաստանը կփրկվեր, Կովկասը կխնայվեր, Պարսկաստանը չէր ասպատակվի, վերջապես մենք կունենայինք մեզ հետ 5-ից 600000 մարդ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 852, f. 209).

145

Ռազմական նախարար, գեներալ Գալլիենին՝ Արևելյան բանակի ռազմարշավային ուժերի շտաբի պետ, գնդապետ Ժիրոդոնին

Հ. քիվ 4738: Գալտնի:

[Պատճենը]:

Փարիզ, 16-ը նոյեմբերի 1915 թ.:

Ձեր հեռագրերից այնպիսի մի տպավորություն է առաջանում, որ լորդ Քիթչեները հակված է կարծելու, թե այն առարկումները, որոնք մենք հակադրում ենք Ալեքսանդրետի ծրագրին, հիմնվում են ռազմական շահագրգռվածությամբ խորք նկատառումների վրա:

Կամեցեք նրան ասել, որ ես բացարձակապես չեմ վրդովվի, եթե տեսնեմ, թե ինչպես են անգլիացիները գործում Ալեքսանդրետի շրջանում, որ ոչ մի քաղաքական անվստահություն չի ազդել արտահայտված կարծիքի վրա, և որ ես առաջնորդվել եմ միայն ռազմական կամ ռազմածովային նկատառումներով, որոնց նշանակությունը նա անհնար է, որ չգնահատի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 871, f. 61).

146

Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուն՝ Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանին

Ն:

Փարիզ, 27-ը նոյեմբերի 1915 թ.:

Անս այն վերջին տեղեկությունները, որոնք մենք ստանում ենք Եգիպտոսում գտնվող հայ գաղթականների վերաբերյալ:

Չնայած իր կրկնվող կոչերին, այս գաղթականներին օգնության հասնելու հարցում Ֆրանսիայի նախարարը² Եգիպտոսի հայերի շրջանում չի հանդիպել էական աջակցության: Այդ պայմանավորված է բազմաթիվ պատճառներով: Առաջին հերթին այդ կապված է Պողոս Նուբար փառալուսի բացակայության հետ, որը բազում ամիսներ ի վեր գտնվում է Ֆրանսիայում և որը Եգիպտոսում ամենաաչքի ընկնող, ամենահարգված և ամենագործունյա հայագրի գործիչն է:

Մեր դիվանագիտական գործակալը փորձել է Պորտ-Սալոյում ի նպաստ հայերի սկսված

1 Պ. Տատիշչևը:

2 Պ. Դեֆրանսը:

շարժման գլուխ կանգնեցնել Արքին փաշա Դադյանին¹, որը Եզիպտոսի հայերի շրջանում, Պողոս փաշայից հետո գրավում է ամենաբարձր դիրքն ու վայելում ամենախորին հարգանքը: Բայց Արքին փաշան տարեց է, շատ գործունյա չէ: Պ. Դեֆրանսի խնդրանքով, նա մի կոմիտե է ստեղծել և նշանակվել դրա նախագահը, որը կազմակերպել է ամենշան արդյունքի հասցրած հանգանակությունների հավաք: Նմանապես օգնության կոչ է արվել ուղղափառ հայերի առաջնորդ, Ն {որին սրբազնություն} Թորգոմին, որը բազմաթիվ առիթներով Պորտ-Սաիդ է գնացել և որը նույնպես մի կոմիտե է ստեղծել պատրիարքությունում:

Ֆրանսիայի նախարարը փորձել է համակցել ջանքերը, բայց տարածայնություններ է արձանագրել կաթոլիկների և ուղղափառների միջև, որոնք բոլորը նրան պատասխանել են, որ Եզիպտոսի հայերը հարուստ չեն և Թուրքիայի հայերին արդեն շատ քան են հատկացրել:

Ես գտնում եմ, որ պարտավոր եմ անկեղծորեն ձեզ ներկայացնել այն կացությունը, որում գտնվում են ձեր գաղթականները Եզիպտոսում, որովհետև ինձ թվում է, որ բոլոր յշնամություններից վեր կանգնած մի պարտականություն է պարտադրվում փոսնգի մեջ գտնվող բոլոր հայերին, այն է՝ օգնել մի քանի քաջերի, որոնք չեն խնայել ո՛չ իրենց կյանքը, ո՛չ ջանքերը՝ իրենց կանանց և զավակների ազատությունն ապահովելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 234-235 v).

147

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝ Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուին

Ն:

Փարիզ, 29-ը նոյեմբերի 1915 թ.:

Ես հենց նոր ստացա ձեր նամակը: Ես այն ցույց կտամ Պողոս փաշային և մեկ անգամ ևս կպնդեմ, որ նա վճռական կոչով դիմի Եզիպտոսի հայերին: Ես նրա հետ բազմաթիվ անգամներ խոսել եմ Պորտ-Սաիդի գաղթականների մասին, որոնց նկատմամբ մեր ժողովուրդը պետք է վերաբերվի հարգանքով, հիացմունքով և երախտագիտությամբ:

Ես չգիտեմ, թե ինչո՞ւ են Եզիպտոսից անստույգ տեղեկություններ հաղորդում Պողոս փաշային: Նա ինքը գտնում է, որ այն, ինչ անհրաժեշտ է, այնտեղ արվել է: Եզիպտոսի թերթերից ես գիտեմ, որ հայերն այնտեղ ինչ-որ քան արել են, բայց քանի որ պ. Դեֆրանսն ասում է, որ այդ բավարար չէ (և այնտեղի մեր թերթերի ուրոշ հոդվածներ վկայում էին միևնույն բանը), հարկ է, որ նրանք ավելին անեն: Ես կխոսեմ, որքան հնարավոր է շտապ, Պողոս փաշային հետ: Բայց ես խիստ երախտապարտ կլինեմ պ. Դեֆրանսին, եթե նա բարեհաճի անձամբ գրելու Պողոս փաշային (Հայկական բարեգործական համասլարփակ ընկերության նախագահ, Հայկական ազգային պատվիրակության նախագահ, Տրուկալերոյի պողոտա, 12) գաղթականների ստույգ վիճակը նրան ներկայացնելու և նրան մատնացույց անելու կամ հուշելու համար, թե ի՞նչ անելու հարկը կա: Վերջերս այստեղ հայերի շրջանում մի գումար է հավաքվել Միջագետքի գաղթականների համար: Այդ գումարը դեռևս չի առաքվել (դեռևս մեծ դժվարություններ կան): Ավելի քան մեկ ամիս առաջ ես առաջարկել եմ Պողոս փաշային դրա մի մասն ուղարկել Եզիպտոսի գաղթականներին: Նա ամբողջությամբ հակված էր դրան,

¹ Միսալ է. իմա՝ Յաղոբ Արքին փաշա:

բայց կրկին ստանալով «հանգստացնող» տեղեկություններ Եգիպտոսից՝ դրանից ձեռնպահ է մնացել: Ես պատրաստվում եմ ևս մեկ անգամ հիշեցնել իմ առաջարկության մասին: Ես կոչով դիմել եմ Փարիզի Հայ կանանց միությանը, որն իրեր է ուղարկում Կովկասի գաղթականներին: Ես նրանց խնդրել եմ մի մասն ուղարկել Եգիպտոս: Նրանք այդ կանեն: Մարսափելին այն է, որ ամորձան կարիք ունեցող քշվառություններն անսահման են...

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 236-237 v).

148

Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխտնօրեն պ. Ժան Գուն՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին

Ն: Անձնական:

Փարիզ, 1-ը դեկտեմբերի 1915 թ.:

Ես չեմ զլացել հոկտեմբերի 29-ի ձեր թիվ 336 նամակի¹ ընդհանուր բովանդակությանը ծանոթացնելու Փարիզում բնակվող մի հայ մարդու՝ պ. Չոպանյանին, որի նվիրվածությունը և խելացիությունը կարողացել եմ գնահատել: Նա հենց նոր ինձ պատասխանեց, որ չի հասկացել Պողոս փաշային տեղյակ պահել այն իրավիճակին, որը դուք ներկայացրել եք, մեկ անգամ ևս համառորեն դիմելով նրան՝ Եգիպտոսի հայերին կտրուկ կոչ արելու հարցով:

Համաձայն ի մի բերված տեղեկությունների, Պողոս փաշան Եգիպտոսից պետք է, որ ամստույգ լուրեր ստացած լինի հայ գաղթականների ներկա կացության վերաբերյալ, որոնք, ինչպես նրան են ներկայացրել, իբրև թե ստացել են ցանկացած անհրաժեշտ օգնություն: Ըստ պ. Չոպանյանի, պետք է, որ շահավետ լինի Պողոս փաշային այն բոլոր տեղեկությունները տրամադրելը, որոնք կարող են նրան քույրատրել գնահատելու փաստերի արժանահավատությունը և խորհելու, այսպիսով, այն միջոցների շուրջ, որոնք ավելի են համապատասխանում այնպիսի որոշման կայացմանը նպաստելուն, որը կհամընկնի իրադրության պահանջներին: Նա կարծում է, որ այս գաղափարներով հագեցված՝ Պողոս փաշային հղված ձեր անձնական նամակը խիստ նպատակահարմար կլինի: «Հայկական բարեգործական համապարփակ ընկերության» նախագահ, «Հայկական ազգային պատվիրակության» նախագահ Պողոս փաշան բնակվում է Փարիզում (Տրոկադերոյի պողոտա, 12):

Այստեղ, հայերի շրջանում, վերջերս հանգանակություն է կազմակերպվել Միջազգետքի գաղթականների համար: Մինչ այս պահը, դժվարությունները հետաձգել են հավաքված միջոցների առաքումը: Պողոս փաշան մեկ ամիս առաջ կարծել է, թե պետք չէ ընթացք տալ այն առաջարկությանը, որի իմաստը դրանց մի մասը Եգիպտոսի գաղթականների համար առանձնացնելն է, որոնց ճակատագրի վերաբերյալ նա ստացել էր մխիթարող տեղեկություններ:

Այս տեղեկություններն, անկասկած, ձեզ օգտակար կլինեն կողմնորոշվելու, թե անհրաժեշտության դեպքում, ինչպիսի՞ արտահայտություններով հարկ կլինի գրել Պողոս փաշային:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 239-240).

¹ Վերն արտատպված է թիվ 133 փաստաթղթում:

**Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. ժյուստերանը՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. թիվ 996:

Վաշինգտոն, 3-ը դեկտեմբերի 1915 թ.:
(Ստացել են Կաթ. դեկտեմբերի 21-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 22-ին):

Պ. Ռուզվելտը հենց նոր մի մամակ ուղարկեց Հայաստանի և Սլլիլայի ամերիկյան օգնության կոմիտեի քարտուղար դոկտոր Ռոբերտ Մայքրոնին, որը հրապարակայնություն ստացավ, և որտեղ նախկին նախագահը հաստատական ոճով, որը նրան հատուկ է, նշում է իր դառնագին ակտուսանքն այն կապակցությամբ, որ իր երկիրը չի արել ավելին՝ դաժանությամբ և ծավալով աննախադեպ այն հանցագործության առիթով, ինչպիսիք են հայկական կոտորածները:

Ես պատիվ ունեմ Ձերոյ գերազանցությանը հղել սրան կից այդ մամակի բնագիրը¹, որպեսզի այն կազմի հոկտեմբերի 14-ի թիվ 853 իմ հաղորդագրության² շարունակությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, f. 241).

**Միջերկրական ծովի 3-րդ եսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոն՝
Ֆրեզատի կապիտան Բենուա դ'Ազիին**

Ճ. թիվ 61:

«Ժամնա դ'Արևիկ» տախտակամածից,
4-ը դեկտեմբերի 1915 թ.:

Ինչպես ես ձեզ այդ մասին ասել էի, և չնայած այն բանին, որ «Ժորեգյուլբերին» այլևս 3-րդ եսկադրայի կազմում չի գտնվում, դուք, բնականաբար, շարունակում եք պարտավորված լինել, մինչ նոր հրամանը, ուսուցանել հայերին ռազմական գործը:

Քանի որ ձեր մավը, որն իր վերանորոգումների պատճառով, անհրաժեշտությունից դյուրված հարկադրված է բավական երկար կանգ առնել Պորտ-Սաիդում, դուք, ի դեպ, պարտավորվում եք ապահովել այս հատուկ ծառայությունը:

Գնդապետ Էլզուրը, զինվորական հրամանատարը, հենց նոր ինձ տեղեկացրեց, որ 25 մարտի տեսակի հրացան է հասել Պորտ-Սաիդ: Այդ զենքերը գտնվում են ձեր տրամադրության ներքո և դրանք ձեզ կծառայեն ուսուցանելու համար ձեր սեփական հրահանգիչներին, այնուհետև՝ այն հայերին, որոնք նախատեսված են հավաքագրելու իրենց հայրենակիցներին: Բայց դուք չեք սկսի ուսուցանել հայերի հիմնական ուժերին, քանի դեռ անգլիական իշխանությունները մեզ չեն հավաստիացրել, որ հետագայում կարող են բոլորին զինելու համար անհրաժեշտ քանակությամբ հրացաններ, ռազմամթերքներ և հանդերձանքներ ձեզ տրամադրել:

¹ Տպագրվել է «Նյու Յորք Թայմսում» 1915 թ. դեկտեմբերի 1-ին. այստեղ արտատպված չէ:

² Տե՛ս վերը թիվ 126 փաստաթուղթը:

Այդ դեպքում, դուք տեսադաշտից բաց չեք բողմի, որ խոսքը վերաբերում է ոչ թե կանոնավոր բանակի զորախումբ կազմավորելուն, որը նախատեսված է գործելու իբրև կազմավորված ստորաբաժանում, այլ այն բանին, որ հարկ է հայերին ուսուցանել հրաձգություն և տալ տեղանքն օգտագործելուն վերաբերող գիտելիքներ:

Հարկ կլինի, որ դուք մտաւոզվեք կոշիկների հարցով, որոնց համար բրիտանական իշխանությունները պետք է կաշի մատակարարեն, քանի որ հայերը կոշիկները պատրաստել են ըստ այն մոտի, որը նրանց համար գործնական է քայլելու ժամանակ:

Ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք ինձ տեղյակ պահեք, թե ինչպե՞ս է ընթացում ուսուցումը: Ես, իբրք որ, ձեռնպահ եմ մնում այս նոր գործի օգտագործման համար առաջարկություններ անելուց, երբ դուք հնարավոր կհամարեք այն օգտագործել մարտում:

(A.C.M., SS S 4).

151

Եգիպտոսում բրիտանական բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Մաքսուելլը՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոյին

Կահիրե, 4-ը դեկտեմբերի 1915 թ.:

Ես հեռագրով հայերի համար զենքեր և ռազմամթերքներ եմ պահանջել, նկատի ունենալով այն պարագան, երբ մենք կկարողանանք զինված խմբեր կազմակերպել, իսկ այդ միջանկյալ շրջանում նրանք կարող են շարունակել, հնարավորության սահմաններում, լավագույն ձևով, մարզվել Պորտ-Սալոնում:

Ես ձեզ խիստ երախտապարտներից մեկը կլինեմ, եթե դուք, իմ շտաբի հետ համաձայնեցված, կարողանաք Ռ-ուսդ կղզուց մինչ Սիլիա՝ գործակալների մի ցանց կազմակերպել, նկատի ունենալով Սիլիայում թուրքական զորքերի յուրաքանչյուր տեղաշարժին առնչվող, որքան հնարավոր է արագ, տեղեկություններ ստանալու իմ ցանկությունը: Եթե ես կարողանայի իբրև կապ հաստատող սպայի ձեր շտաբին կցել այ. Վուլեյին, ես գտնում եմ, որ այդ դյուրին կդարձնեք իրավիճակը:

Ես հույս եմ տածում, որ ձեզ համար հնարավոր կլինի կարգավորել իրադրությունը և խնդրում եմ ձեզ ընդունել, իմ թանկագին ծովակալ, ամենամիլիտական զգացմունքներիս հավաստիքը:

(A.C.M., SS S 8).

152

Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոն՝ Եգիպտոսում բրիտանական բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Մաքսուելլին

Ճ. քիվ 69¹:

«Շաննա դ'Արևիկ» տախտակամածից,
6-ը դեկտեմբերի 1915 թ.:

Ես ձեզ հայտնում եմ հեռագրային պահանջին վերաբերող դեկտեմբերի 4-ի ձեր նամակի՝ ստացման մասին, որը դուք ներկայացրել էիք հայերի համար զենքեր և ռազմամթերքներ ստանալու նպատակով:

Ես միջոցներ եմ ձեռնարկում ծառայությանը պիտանի անձանց ուսուցումն այն խսկ պահից սկսելու համար, երբ իրագել դառնում այն պատասխանին, որին դուք սպասում եք:

Իրոք որ, բացարձակապես անօգուտ կլինի այս մարդկանց գործնականում ուսուցանել մատուցել տեսակի իրացանով, եթե նրանց հատկացվելու է այլ տեսակի զենք:

Բայց այսօրվանից ի վեր, մատուցել տեսակի այն 24 հրացանով, որոնք ներկայումս գտնվում են իմ տրամադրության տակ, ես ձեռնամուխ եմ լինում հրամանատարական կադրերի ուսուցմանը:

Հենց որ հայերն ինձ անհրաժեշտ չափով մարզված թվան, ես չեմ զլանա այդ մասին ձեզ տեղեկացնել, որպեսզի մեզ համար հնարավոր լինի նկատի ունենալ նրանց, հնարավորության պարագայում, օգտագործելու հանգամանքը:

(A.C.M., SS S 4).

153

Սենի պատգամավոր պ. Մարսել Կաշենը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն:

Փարիզ, 19-ը դեկտեմբերի 1915 թ.:

Համաձայն ականատեսների արժանահավատ պատմությունների, ներկա 1915 թվականի ընթացքում, 1894 թ. և 1895 թ. կոտորածների սարսափները գերազանցող կոտորածներ են կրկին այրումնաներկ արել Հայաստանը:

Քսան տարի առաջ, Վիլհելմ II-ի հովանավորյալ Աբդուլ Համիդի օրոք, 300000 հայեր՝ անպաշտպան տղամարդիկ, կանայք, երեխաներ սպանվել են իրենց օսմանյան հարևանների, չերքեզների և քրդերի կողմից: Այս պահին, պ. Դենի Կոշենի և մեր հանգուցյալ Շան Շորեսի հիասքանչ ելույթներից հետո, ֆրանսիական պալատը միահամուռ խարազանում է դահիճներին:

1915 թ., Բեռլինի Ռազմական ակադեմիայի նախկին աշակերտ Էնվեր փաշայի ղեկավարությամբ, այս դժբախտներից մեկ միլիոնը, ինչպես պնդում են, բնաջնջվել է՝ գերմանական հյուպատոսների և սպաների մեղսակցությամբ, որն ապացուցված է: Պալատի արտաքին գործերի մեր հանձնաժողովին մի համայն ժողովրդի բնաջնջման փորձին տեղյակ է պահել հարգարժան պ. Ահարոնյանը: Այս նշանավոր հայի ողբերգական պատմությունը, ավա՛ղ, հավաստել են հիմնականում ամերիկյան և շվեյցարական հյուպատոսների և միսիոներների հաղորդագրությունները, որոնք ամփոփված են վերջերս լույս ընծայված հարգարժան լուրջ Բրայսի գրքում²:

Ոչ ոք չի կարող անտարբեր մնալ ոչնչացման դատապարտված այս ժողովրդի նահատա-

¹ Տես նախորդ փաստաթուղթը:

² Խոսքը վերաբերում է Առնոլդ Թոյնթի հետևյալ գրքին՝ *Armenian Atrocities. The Murder of a Nation, London, 1915*. Առաջաբանը՝ լորդ Բրայսի:

կուրքյան առջև: Համաձայն մեր երկրի ազնվաբարո և առաքինի ավանդույթների, Ֆրանսիան պարտավոր է, չնայած ներկա սեփական դժբախտություններին, ևս մեկ անգամ բողոքի իր ձայնը բարձրացնել այս զազրելի հանցագործությունների կապակցությամբ:

Բայց դուք, սլարոն նախարար, անկասկած, հույս կտածեք, ինչպես և մենք, որ մեկ բողոքը, որքան էլ հանդիսավոր, չի կարող բավարար լինել: Մահից խուսափելու համար, հարյուր հազարավոր հայեր, դիմելով ողբալի գաղթի, փախել են ահաբեկչության ենթարկված ու ավերված իրենց հայրենիքից: Ոմանք գաղթել են Ռուսաստան, մյուսները՝ շնորհիվ Լևանտի մեր էսկադրայի, համախմբվել են Ալեքսանդրետում: Ուրիշները, վերջապես, չեն կարողացել լքել Թուրքիան, որտեղ ենթակա են սովի, ահաբեկչության, ահավոր սարսափների: Այս բոլոր դժբախտ գոհների համար մենք պահանջում ենք Հանրապետության կառավարության նյութական օգնությունը և գործուն օժանդակությունը: Գտնվելով անեզր վիստուրյան մեջ, հայերը հույսը կապում են Ֆրանսիայի հետ, քանզի նրանք վստահ են, որ նա կջարդի իրենց դարավոր շղթաները և իրենց վերջնականապես կազատագրի ճնշողների լծից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 244-245).

154

Կուպենհագենում Ֆրանսիայի նախարար պ. Բապստը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 253:

Կուպենհագեն, 22-ը դեկտեմբերի 1915 թ.:
(*Մտացել են* Կար. 1916 թ. հունվարի 5-ին,
Քաղ. վարչ. հունվարի 6-ին):

Կոստանդնուպոլսում Դանիայի գործերի հավատարմատարը՝ հենց նոր իր կառավարությանն է հղել թուրքական կառավարությունից ելնող մի պաշտոնական փաստաթուղթ, որը հասցեագրված է դանիական վաճառականներին՝ ի գիտություն: Այդ փաստաթուղթը վերաբերում է Օսմանյան կայսրության ներքին մահանգները տեղափոխվելու դատապարտված անձանց վարկատուներին և նրանց կոչում է ներկայացնել իրենց փաստաթղթերը չորս ամսվա ժամկետում:

Ես պատիվ ունեմ փոխանցել այդ փաստաթուղթը Ձերո՞ գերագանցությանը:

Ըստ Դանիայի գործերի հավատարմատարի, ավելի քան երկու տարվա վաղեմություն ունեցող օրենքի կիրառմանը վերաբերող՝ վերջերս ընդունված այս որոշումը հայերի հանդեպ այս տարվա ընթացքում այդչափ դաժանորեն իրագործված հալածանքի մի նոր դրսևորում է: Մեծ թվով հայեր, իրոք որ, աննշան դրոպապատճառներով դատապարտվել են տեղահանության դեպի իրենց գործերից ու օջախներից հեռավոր վայրեր, և այդ տեղահանությունը շուտով արդեն կհանգեցնի նրանց ունեցվածքների բռնագրավմանը: Հայտնի է, թե ի՞նչ է իրականում նշանակում, համաձայն թուրքերի լեզվի, «հաշիվների մաքրումը»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 248-248 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

Այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքները և պարտքերը

Հաշիվների մաքրման հանձնաժողովները ստեղծվել են 1331 թ. սեպտեմբերի 13-ի օրենքի¹ դրույթներին համապատասխան՝ կառավարության որոշմամբ այլ վայրեր տեղափոխված անձանց պատկանած ունեցվածքների համար:

Նրանք, ովքեր հավակնում են այդ ունեցվածքների նկատմամբ իրավունքներ ունենալուն կամ իրենց հայտարարում են իբրև այլ վայրեր տեղափոխված անձանց վարկատուներ, պետք է դիմեն այդ հանձնաժողովներին՝ սկսած ներկա ծանուցման հրապարակման օրվանից երկու ամսվա ընթացքում՝ եթե ապրում են կայսրության ներքին նահանգներում կամ չորս ամսվա ընթացքում՝ եթե բնակվում են արտասահմանում: Բացի դրանից, նրանք պետք է ընտրեն բնակության վայր, որպեսզի հանձնաժողովը կարողանա ապահովել անհրաժեշտ կապերը:

Այսպիսով, շահագրգիռ անձինք պետք է ուշադիր կարդան 1331 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը, ինչպես նաև 1331 թ. հոկտեմբերի 26-ի կանոնադրությունը, որը ճշգրտում է դրա կիրառման ձևը:

Ահա այն քաղաքների անունները, որտեղ ստեղծվել են հանձնաժողովներ.

Ադանայի վիլայեթ. Ադանա, Մերսին, Ջեբել-ի Բերբեթ, Խոզան:

Բրուսայի վիլայեթ. Մուղանին [sic]², Քարաջե-Բեյ [sic]³, Քերմուստի [sic], Շեմիր, Օրխան-Գազի, Էրթոզնուլ [sic]⁴ իր հարակից շրջաններով:

Անգորայի վիլայեթ. Յոզղաթ, Չորում, Բենգազլիան [sic]⁵, Անգորա, Քեսքիմ [sic], Բրի-Շեքա [sic]⁶:

Տրապիզոնի վիլայեթ. Բաֆրա, Չարշամբա, Թերմեն, Ունիա, Ֆատսա, Տիրե-Բուլի, Տրապիզոն:

Սվազի վիլայեթ. Ամասիա, Գյումուշ Հաջի-բյոյ, Մերզիֆոն, Հավգե, Թոխսաթ:

Իզմիրի սանջակ. Իզմիր, Կարա-Մուրսեյ, Յալովա, Ադա-Բազար, Քանդեր [sic]⁷, Շեիվե [sic]⁸:

Էսքի-Շեհիրի սանջակ. Սիվրիհիսար, Միշալիջիկ [sic]⁹:

Կեսարիայի սանջակ. Կեսարիա, Դ-Լելի:

Հալեպի վիլայեթ. Հալեպ, Մարաշ, Անթաքիա:

Էրզրումի, Դիարբեքիի, Մամուրեթ-ուլ Ազիզի, Կոնիայի, Բիթլիսի վիլայեթներ, Նիզուլի [sic]¹⁰ և Կարա-Հիսար-Մահիբի սանջակներ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 249-249 v).

1 Այս օրենքի մասին տես ս վերը՝ թիվ 115 փաստաթղթի հավելվածը:

2 Իմա՝ Մուղանիա:

3 Իմա՝ Կարաջաթեյ:

4 Իմա՝ Էրթոզնուլ:

5 Իմա՝ Բողազլիան:

6 Իմա՝ Քիր-Շեհիր:

7 Իմա՝ Կանդեր:

8 Իմա՝ Գեյլե:

9 Իմա՝ Միհալիջիկ:

10 Իմա՝ Նիզոն:

155

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած զեկուցագիրը՝
Ռազմական մախարարությանը**

Թիվ 505: Գաղտնի և կոնֆիդենցիալ¹:

Աթենք, 24-ը դեկտեմբերի 1915 թ.:
(Մտացվել է 1916 թ. հունվարի 5-ին):

Իզմիլի հայերի տեղահանությունը

Հայկական կոտորածներ. Մի հույն պատգամավոր Չմյունհիայից հաստատում է կոտորածներին վերաբերող մեր տեղեկությունները: Ըստ հաշվարկների՝ օգոստոս ամսին, մոտավորապես 180000 հայեր վտարվել են Իզմիլից և թշվել դեպի հարավ՝ Կարսամանլիի ուղղությամբ:

(A.M.G., 7 N 2096).

156

**Հայերի կոտորածներին վերաբերող
Դեպարտամենտի ծանուցագիրը²**

(?-ը դեկտեմբերի 1915 թ.):

Թե՛ մի քանի հայերի կամ օսմանյան հույների, որոնք կարողացել են փախչել Թուրքիայից, թե՛ չեզոք վկաների կողմից արված և ի մի բերված պատմությունները հավաստում են, որ Էրզրումի, Տրապիզոնի, Սվազի, Խարբերդի, Բիթլիսի և Դիարբեքիի մահանգներում հայեր այլևս գրեթե չկան: Կարծում են, որ այս մահանգներից տեղահանված և դեպի հարավ արտաքսված հայերի թիվը հասնում է մեկ միլիոնի: Այս տեղահանությունները հետևողականորեն կազմակերպվել են տեղական իշխանությունների կողմից՝ 1915 թ. ապրիլ ամսի սկզբից ի վեր: Նախ և առաջ՝ բոլոր գյուղերում և բոլոր քաղաքներում բնակչությունը զինաթափվել է ժանդարմների կողմից, որոնց օգնում էին այդ նպատակով բանտերից ազատ արձակված քրեական տարիերը, որոնք զինաթափման պատրվակով սպանություններ էին գործում և խոշտանգումների ենթարկում իրենց գոհերին: Այնուհետև՝ զանգվածաբար ձերբակալել են հայերին՝ նրանց մոտ զենքերի, գրքերի, քաղաքական կուսակցության անվանում հիշատակող որևէ փաստաթղթի և այլնի հայտնաբերման պատրվակով. դրանց բացակայության դեպքում, իբրև պատրվակ բավարարում էր հարստությունը կամ աչքի զարնոդ սոցիալական դրությունը: Եվ վերջապես, ձեռնամուխ են եղել տեղահանությանը: Նախ՝ արքայազն պատրվակով հայրենիքից վտարել են նրանց, որոնց չէին ձերբակալել կամ նրանց, որոնց ազատ էին արձակել, քանի որ ոչ մի բանում չէին կարողացել հանդիմանել: Այնուհետև՝ նրանց կոտորել են: Դրանցից որևէ մեկը չի խուսափել մահից: Նախքան նրանց մեկնումը, իշխանությունը պաշտոնապես խուզարկել է նրանց և հափշտակել ամբողջ փողը կամ արժե-

¹ Մենք արտասույում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

² Նախատեսված է մախարարի համար: Մեկ այլ օրինակ ուղարկվել է պ. Անատոլ Ֆրանսին: Այս ծանուցագիրը պատրաստվել է ըստ թիվ 66, 131 փաստաթղթերի և հավելվածների:

քաղիոր իրերը: Մովորաբար նրանց կապկպում էին առանձին-առանձին, կամ 5-ից 10 հոգուց բաղկացած խմբերով: Մյուս մասը՝ ծերունիներ, կանայք և երեխաներ, Խարբերդի նահանգում դիտվել է իբրև իր և հանձնվել մահմեդական խաժամուժի ողորմածությամբ: Ամենաբարձր պաշտոնյան, ինչպես նաև ամենահասարակ գյուղացին, ընտրում էր այն կնոջը կամ աղջկան, որն իրեն դուր էր գալիս և բռնությամբ նրան ընդունել էր տալիս իսլամը: Ինչ վերաբերում է փոքրահասակներին, ապա նրանցից վերցրել են այնքան երեխաների, որքան որ ցանկացել են, իսկ մյուսներին բողբել են ճանապարհին, սոված ու առանց պաղենի՝ սովի, եթե ոչ հրոսակախմբերի դաժանության զոհը դառնալու համար:

Էրզրումի, Բիթլիսի, Սվազի և Դ-խարբերդի նահանգներում տեղական իշխանությունները տեղահանվածներին արտոնություններ են ընձեռել՝ 5-ից 10 օրյա ժամկետ, ունեցվածքի մասնակի վաճառքի քույրտվություն և մի քանի ընտանիքների՝ սալյակ վարձելու հնարավորություն: Բայց մի քանի օր անց, սալյակացիները նրանց լքում էին ճանապարհին և վերադառնում քաղաք: Այս ձևով կազմավորված քարավանները, հաջորդ օրը կամ երբեմն մի քանի օր անց, հանդիպում էին մահմեդական գյուղացիներից բաղկացած հրոսակախմբերի, որոնք նրանց հիմնավորապես կողոպտում էին: Հրոսակախմբերը միանում էին ժանդարմներին և սպանում այն եզակի տղամարդկանց կամ երիտասարդներին, որոնք գտնվում էին քարավաններում: Նրանք առևանգում էին կանանց, երիտասարդ աղջիկներին և երեխաներին, բողբելով միայն ծեր կանանց, որոնց ժանդարմներն առաջ էին հրում թափահարելով և որոնք ճանապարհներին սովամահ էին լինում: Մի չեզոք ականատես պատմում է, որ Էրզրումի նահանգից տեղահանված կանանց մի քանի օր շարունակ բողբել են Խարբերդի հարթավայրում, որտեղ բոլորը սովից մահացել են (օրական 50-ից 60-ը), և որ իշխանությունը նրանց քաղելու համար մի քանի մարդ է ուղարկել, «որպեսզի մահմեդական բնակչության առողջությունը վտանգի չենթարկվի»:

Մեկ ուրիշը պատմում է, որ երբ Մարզիֆունի [sic]¹, Ամասիայի և Թոխաթի բնակիչները հասել են Սարի-Քիչևա (Սվազի և Կեսարիայի միջև), հենց կատարչապետարանի առջև մայրերից խել են երկու սեռի պատկանող երեխաներին, նրանց թաքցրել շենքերում և քարավանին հարկադրել են շարունակել ճանապարհը: Այնուհետև՝ հարևան գյուղերին հայտնել են, որ կարող են, ըստ իրենց հայեցողության, առևանգել երեխաներին: Կանանց և երեխաների քարավանները ցուցադրվել են յուրաքանչյուր քաղաքի կամ յուրաքանչյուր գյուղի կառավարչապետարանի առջև, ուր հասել են, որպեսզի մահմեդականները կատարեն իրենց ընտրությունը:

Պապերտից մեկնած քարավանն այս ձևով կիսով չափ կրճատվել է, իսկ դրանում մնացած կանայք և երեխաները, Երզնկայի դեմ հանդիման գտնվող Կամախ-Բողազի կոչվող վայրում նետվել են Նփրատը: Մի օրիորդ, որը սերում է նուրվեզական արխատուկրատական ընտանիքից* և գերմանական Կարմիր-խաչի հիվանդանոցի բուժբույրն էր, ինչպես նաև մեկ այլ գերմանուհի բուժբույր, խորապես հուզված այս բարբարոսություններից և համանման այլ արարքներից, հրաժարական են ներկայացրել, վերադարձել Կոստանդնուպոլիս և անձամբ ներկայացել մի քանի դեսպանություններ՝ այս վայրագ վատտերի մասին պատմելու համար:

Համանման բարբարոսություններ տեղի են ունեցել ամենուր և այսօր ճանապարհորդներն այս նահանգների բոլոր ճանապարհներին հանդիպում են միայն հագարավոր հայերի դիակների: Մի մահմեդական ճանապարհորդ Մարաթիայից Սվազ կատարած իր ուղևորու-

¹ Իմա՝ Մերզիֆուն:

* Օ (րիորդ) և Կեղեկ-ժարլաբերգր:

քյան ընթացքում, որը տևել է ինը ժամ, հանդիպել է միայն տղամարդկանց և կանանց դիակներին: Մապաթայի բոլոր տղամարդիկ տարվել են այնտեղ ու կոտորվել: Բոլոր կանայք և երեխաները բռնությամբ ընդունել են իսլամը:

Չորակույզված երիտասարդ հայերն արժանացել են համանման ճակատագրի: Ի դեպ, բոլորը զինարարվել են և աշխատում են իբրև ճանապարհաշինարարներ: Հայտնի է, որ Էրզրումի նահանգի հայ զինվորները, որոնք աշխատում են Էրզրում-Երզնիզ [sic]¹ ճանապարհահատվածում, բոլորը կոտորվել են: Դ-խաբբեքիլի նահանգի հայ զինվորները ևս, բոլորը սպանվել են՝ Դ-խաբբեքիլ-Ուրֆա և Դ-խաբբեքիլ-Խարբերդ ճանապարհին: Խարբերդից 1800 երիտասարդ հայերի՝ իբրև զինվորների, Դ-խաբբեքիլ են ուղարկել՝ այնտեղ աշխատելու համար: Բոլորը կոտորվել են Արիենի [sic]² արվարձաններում:

Դ-խաբբեքիլի նոր վային՝ ժամանել է 1915 թ. ապրիլ ամսի սահմաններում: Տեղավորվելում պես. նա մոնետիկների միջոցով կոչ է արել քրիստոնյա բնակիչներին իշխանություններին հանձնել այն գեները, որոնք, ինչպես իրեն հայտնի էր, գտնվում էին նրանց սրամաղյուքյան ներքո: Բոլոր քրիստոնյաները՝ առաքելական հայերը, կաթոլիկ հայերը, հակոբիկյանները, կաթոլիկ ասորիները, քաղղեսականները, շտապել են զինվորական իշխանություններին հանձնել այն ցաքուցրիվ գեները, որոնք ունեցել են: Մի քանի օր անց սկսվել են քրիստոնյաների զանգվածային ձերբակալությունները, այնպես որ, հարեմի բանտերում պահվում էին ավելի քան հազար վեց հարյուր մարդ, որոնք մեկը մյուսի ետևից ծեծի են ենթարկվել և որոնցից շատերը նույնիսկ խոշտանգվել են, այնուհետև՝ սպանվել: Նրանց մարմիններն ամեն օր նետում էին քաղաքի պարիսպներից դուրս: Հետաքննությունը, որը նոր գեները հայտնաբերելու նպատակով իշխանությունները վարում էին նույնքան դաժան, որքան և բարբարոսական պայմաններում, շարունակվել է ավելի քան վեց շաբաթ: Դ-ժվար է այստեղ մանրամասնորեն նկարագրելն իսկ այն տանջանքները և խոշտանգումները, որոնց այս դժբախտները ենթարկվել են բանտում այս ամբողջ ժամանակահատվածում: Հարյուրի հասնող մարդիկ կոտորվել են: Ապացուցված է նաև, որ տանջանքների ենթարկվելուց հետո բանտում սպանվել է հայ առաքելական վարդապետը (կրոնական առաջնորդը). նրա մատներից մի քանի երունգներ են հանել, աչքերի մեջ շիկացած երկաթներ մխրճել և վերջսպես, մինչև հոգին ավանդելը՝ ենթարկել դաժան ծեծի: Այս նահատակությանը մա արժանացել է նախապես պատրաստված մի վկայության տակ ստորագրելուց հրաժարվելու պատճառով, այնպես, ինչպես բանտերում խոշտանգված և սպանված բոլոր անձինք էին կնքել իրենց մահկանացուն:

Ի վերջո, Դ-խաբբեքիլում բանտ նետված 1600 անձանցից գրեթե 680 ամենատեղիներն ու մեծահարուստները, որոնք վճարել էին զինվորական ծառայությունից ազատվելու համար, ձեռնաշղթաներով քշվել են դեպի Մոսուլ: անապատ և այժմ որևէ մեկի հայտնի չէ, թե որտեղ և ինչպես կավարտվի նրանց տեղահանությունը: Ինչ վերաբերում է մյուսներին, եթե նրանց ժամանակավորապես ազատություն է շնորհվել, ապա այդ արվել է միայն նրանց աշխատեցնելու համար՝ 18-ից 35 տարեկան զինապարտներին տաժանակիլի աշխատանքների պարտադրելուն գուզընթաց, ինչպես մենք արդեն վերը նշել ենք և այնպիսի ձևով, որ ամեն օր նրանցից մեկը կամ երկուսը սպանվի, որը հավաստել են Բիթլիսից, Խարբերդից և Մեզիբից եկող և Հալեպ մեկնող ամերիկյան միսիոներները: Թվում է, թե ժանդարմներն ամենամեծ բշտամանքը տաժում են երիտասարդների հանդեպ, որովհետև այս միսիոներներն իրենց ճա-

1 Ինա՝ Երզնիզ. որն Էրզնիզանի հայկական անվանումն է:

2 Ինա՝ Արիանա:

3 Ռեշիդ բեյ:

նապարհի ողջ ընթացքում տեսել են զեռնին սփռված երիտասարդ մարդկանց դիակներ:

Տարբեր քաղաքներում բանտերի խորքերում մուռացված հայերն իրենք իրենց կախել են անօգնական վիճակի կամ հուսահատության պատճառով: Բազմաթիվ վայրերում հայ բնակչությունը կյանքը վրկելու համար ցանկացել է ընդունել իսլամը, քայց այս անգամ այդ քայլերը բարյացակամությամբ չեն ընդունվել, ինչպես նախորդ լայնածավալ կոտորածների ժամանակ: Սվազում հետևյալ առաջարկություններն են արվել նրանց, ովքեր ցանկացել են ընդունել իսլամը. մինչ տասներկու տարեկան հասակի իրենց երեխաներին հանձնել կառավարությանը, որը կպարտավորվի նրանց տեղափոխել ուրբանոցներում և տալ հայրենիքը լքելու համաձայնություն՝ զնալ հաստատվելու այնտեղ, ուր մատնացույց կանի կառավարությունը:

Խարբերյալում չեն համաձայնվել տղամարդկանց կրոնափոխությանը. ինչ վերաբերում է կանանց, ապա նրանց կրոնափոխության ժամանակ պահանջվել է այն մահմեդականի ներկայությամբ, որը համաձայն է ամուսնանալ նրանց հետ: Հայ կանանցից շատերը գերադասել են իրենց ծծկեր երեխաների հետ մետվել Եփրատը կամ իրենց տներում դիմել են ինքնասպանության: Եփրատը և Տիգրիսը դարձել են հազարավոր հայերի գերեզմանը:

Նրանք, ովքեր Սև ծովի քաղաքներում, ինչպիսիք են Տրապիզոնը, Սամսունը, Կիրազոնը [sic]¹ և ուրիշներ, կրոնափոխ են եղել, ուղարկվել են ներքին նահանգներ, այնպիսի քաղաքներ, որոնք ամբողջությամբ բնակեցված են մահմեդականներով: Այն վայրերը, որտեղ ընդդիմացել են զինաթափմանը և տեղահանությանը, ռմբակոծվել են և ամբողջ բնակչությունը, ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղերի, անողորաբար կոտորվել է: Գարահիսարում՝ Սվազի վիլայեթում, տասնմեկ հազար հայ է սպանվել:

Վերջապես, Սամսունից մինչև Մդերտ և Դիարբեքիը. կարելի է ասել, որ այժմ ոչ մի հայ գոյություն այլևս չունի, մեծ մասը կոտորվել է, մի մասն առևանգվել և մի փոքր մասն ընդունել է իսլամը: Ո՛չ մի տուն, ո՛չ մի պրեկատություն, ո՛չ մի եկեղեցի, ո՛չ մի դպրոց չի խուսափել խուզարկությունից:

Պատմության մեջ երբևէ չի արձանագրվել, չի հիշատակվել մման կոտորած: Փրկվածները միահամուռ ձևով հայտարարում են, որ եթե դիմենք համեմատության, ապա իրենք երջանիկ են եղել սուլթան Աբդուլ Համիդի գահակալության օրոք: Հայտնի է դարձել, որ Պապեթաի եպիսկոպոս, Ն {ոբին սրբազնություն} ն Անանիա Հազարապետյանը կախվել է, չնայած դատավճիռը կենտրոնական կառավարության կողմից չի հաստատվել: Խարբերդի եպիսկոպոս, Ն {ոբին սրբազնություն} ն Բեսակ Տեր-Խորենյանը մայիս ամսին ճանապարհ է ընկել դեպի արսորավայր և հազիվ է հեռացել քաղաքից, երբ սպանվել է: Բյուսայի պրեկատ, Ն {ոբին սրբազնություն} ն Դանիելյանը, Տրապիզոնի պրեկատ, Ն {ոբին սրբազնություն} ն Գևորգ Տուրյանը, Կեսարիայի պրեկատ, Ն {ոբին սրբազնություն} ն Խոսրով Բեհրիյանը, Շապին-Գարահիսարի պրեկատ, Ն {ոբին սրբազնություն} ն Վաղինակ Թոբիկյանը, Չարսանջակի պրեկատ, Ն {ոբին սրբազնություն} ն Գևորգ Նալբանդյանը և ուրիշներ ձերբակալվել են ու հանձնվել ռազմական խորհուրդներին: Դիարբեքիի պրեկատ, Ն {ոբին սրբազնություն} ն Մկրտիչն ավանդել է հոգին այն հարվածներից, որոնք նրա վրա են տեղացել բանտում: Որևէ այլ տեղեկություն մյուս պրեկատների մասին չկա: Շատ հավանական է, որ նրանց մեծ մասը բանտ է նետվել: Անիմատ է խուսել իսկ նահատակված քահանաների մասին: Երբ բնակչությունը տեղահանվել է՝ եկեղեցիները կողպատվել են ու վերածվել մզկիթների, ախոռների կամ սրբապղծվել են: Ի դեպ, Կոստանդնուպոլսում վաճառել են հայկական եկեղեցիների պաշտամունքի առարկաները և կահույքը, ինչպես և թուրքերն են դժբախտ հայ կանանց երեխաներին այնտեղ տարել վաճառելու համար:

¹ Իմա՝ Կիրասուն:

Հայաստանի և Փոքր Ասիայի տարբեր նահանգներում սպանված, անհետացած, բռնությամբ իսլամն ընդունած կամ հայ բնակչության զանգվածային տեղահանությունների ընթացքում առևանգված հայերի քիվը գերազանցում է 500000-ը:

Կոստանդնուպոլսում պարբերաբար ձերբակալություններ են կատարվում և ձերբակալված անձանց իսկույն ենք հեռացնում են մայրաքաղաքից, առանց ընդունելու որևէ միջոցների՝ նրանց գոյությունն ապահովելու համար: Նրանք, ովքեր թշվել են, նահանգներում ծնված, բայց վաղուց ի վեր Կոստանդնուպոլսում հաստատված աչքի ընկած առևտրականներ են: Մի քանի հայերի այստեղ հաջողվել է ստանալ օսմանյան տարածքից հեռանալու քույրտություն՝ բուրք և նույնիսկ գերմանացի պաշտոնյաներին մեծ գումարներ վճարելու միջոցով, որոնք որոշ դեպքերում գերազանցել են 100000 ֆրանկը:

Թուրքիայի ամբողջ հայ բնակչությունը մեկընդմիջտ դատապարտված է մահվան և ամբողջ կայսրությունում այս վճիռն իրականացվում է բացառապես գերմանական եղանակով: Ոչ Գերմանիան, ոչ Ավստրիան որևէ քայլի չեն դիմել զսպելու համար իրենց դաշնակցին: Կոստանդնուպոլսում նրանց դեսպանները՝ սահմանափակվել են մի հուշագիր ընդունելով, որն ինչպես թվում է, չի ուղեկցվել որևէ քայլով և սոսկ դատարկ քղթի կտոր է, որը նրանք, ինքնապաշտպանության ակնկալությամբ, ի հայտ կբերեն հաշիվների կարգավորման օրը: Նահանգներում, այս երկու տերությունների հյուպատոսները ձևացրել են, թե չեն հետաքրքրվում «բուրքական ներքին քաղաքականությամբ»: Դեռ ավելին, գերմանացի սպաները, որոնք այսօր օսմանյան ամբողջ տարածքում բուրքական շտաբների գործել տեղ ու տնօրեններն են, իրագել են եղել քաղաքացիական և զինվորական իշխանությունների կիրառած միջոցների: Ժանդարմներին և գործին դահիճների այդ գործին մասնակից դարձնելու դեմ նրանք ոչինչ չեն ունեցել:

Մարդկության դեմ ուղղված այս ոտնձգությունները 1895 թ. սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածների լայնածավալ կրկնությունն են, որն իր վայրագ սխարանքների հաջորդ օրը միայն մեկ միապետի՝ Վիլհելմ II-ի՝ իր կողմը պարզված ձեռքն է տեսել:

Սուլթանի և գերմանական կայսրի միջև այն ժամանակ կայացված համաձայնությունը շուրժարվեց այն մարդկանց կողմից, ովքեր ազատության պաշտամունքի քողի ներքո զավթել են իշխանությունը Թուրքիայում: Իրենց հերթին, համոզված այն բանում, որ իրենց գերմանացի դաշնակիցների կողմից միայն քաջալերանքի կարժամանան, նրանք հայարտանում են, որ բարբարոսության հարցում գերազանցել են սուլթան Աբդուլ Համիդին: Նրանց վայրագությունը մոլեգնել է քրիստոնյաների հանդեպ՝ առհասարակ, իսկ հայերի նկատմամբ՝ մասնավորապես:

Այս կոտորածների և նողկալի հալածանքների հետևանքով առաջացած դժգոհությունը Ֆրանսիայում համընդհանուր բնույթ է կրում: Մոռանալով իր սեփական վշտերը, ամբողջ ազգը մտովին կենտրոնացել է մշտապես տանջահար հայ ժողովրդի շուրջը և սպասելով օրինական հատուցումների որոշակի ժամի, նրան է մատուցում իր վշտալից կարեկցանքի հարգալից տուրքը:

Ֆրանսիայի վաղնջական փառքը ճնշվածներին մխիթարելու, ազատագրելու և նրանց համար վրեժխնդիր լինելն է: Դարերի ընթացքում Արևելքի ժողովուրդները, մերթ մեկը, մեյք մյուսը, շոջվել են դեպի մա՝ նրան պայքարի կոչելով բռնակալների դեմ: Նա միշտ կատարել է իր առաքելությունը և այն հիասթափեց էր նրան, որպեսզի նրանց հերոս զինվորները գերմանացիների ընչաքաղցության պատճառով մեզ պարտադրված այս պատերազմում,

1 «Դարունայ» Վանգենհայնը և Պալլավիչինին. համապատասխանաբար՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպանները:

մեզ համար այն բանի վստահելի երաշխիքն է, որ Ֆրանսիան այս անգամ ևս կկարողանա այն իրագործել իր դաշնակիցների՝ քաղաքակրթության ասպարեզում իր մրցակիցների խանդավառ օգնությամբ:

Հանրապետության կառավարությունը մոռացկոտություն չի ցուցաբերի իր պարտականության հանդեպ: Նա Ֆրանսիայում գտնվող հայերի կամ նրանց նկատմամբ, ովքեր կարողացել են այստեղ գաղթել, կազմակերպել է սրտառուչ հյուրընկալություն: Լևանտի մեր էսկադրան շտապել է օգնության հասնել մի խումբ հայերի, որոնք կատաղի պայքար էին մղում սիրիական ափի մոտ: Այսպիսով, այն կարողացել է ողջ և առողջ Եգիպտոս տանել 5000 մարդու: Այն բոլոր գաղթականները, որոնց հաջողվել է մեր տարածք հասնել, այնտեղ արժանացել են ամենասրտառուչ հյուրընկալության: Հայ ժողովուրդն իր կողմից ընկունել է Ֆրանսիայի վսեմ օգնությունը: Նորին զերազանցություն Պողոս փաշան՝ Էջմիածնի կարողիկոսի ներկայացուցիչը, իր պաշտոնական շնորհակալությունն է հղել Հանրապետության կառավարությանը, որը վերջնական կարգավորման պահին, չի մոռանա հատուցումների մասին, որոնց հավակնելու իրավունք հայերին տալիս են նրանց կրած տառապանքները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 887, ff. 250-254 v).

157

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Դեսպարտամենտին

Փարիզ, 26-ը դեկտեմբերի 1915 թ.*:

Պ. Սազոնովը Փարիզում, Լոնդոնում և Հռոմում գտնվող Ռուսաստանի դեսպաններին՝ հեռագրել է այն մասին, որ համաձայն Կոստանդնուպոլսի հայկական շրջաններից ելնող տեղեկությունների, թվում է, թե հնարավոր կլինի դրդել Ջեմալ փաշային բացահայտորեն սպստամբել Կոստանդնուպոլսի կառավարության և զերմանացիների դեմ, եթե տերությունները նրան առաջարկեն հետևյալ գործարքը.

1/ Տերությունները երաշխավորում են Ասիական Թուրքիայի անկախությունն ու ամբողջականությունը, որը բաղկացած կլինի սուլթանի հովանու ներքո գտնվող ինքնավար մահանգներից, ինչպիսիք են Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Արաբիան, Հայաստանը՝ Կիլիկիայի հետ մեկտեղ և Բրդստանը:

2/ Ջեմալ փաշան կհռչակվի սուլթան, և գաևր ժառանգաբար կսնցնի նրա սերնդին՝ հորից ավագ որդուն:

3/ Ջեմալ փաշան պարտավորվում է Կոստանդնուպոլսի կառավարությանը և սուլթանին՝ հաշվի առնելով, որ նրանք գերմանացիների գերիներն են, տապալված հայտարարել, ինչպես նաև նրանց դեմ ռազմարշավ ձեռնարկել:

4/ Կոստանդնուպոլսի դեմ ձեռնարկված նրա ռազմարշավի ընթացքում տերությունները նրան ռազմամթերքներ և իրետանի կտրամադրեն:

* Պ. Ժյուլ Կամբոնի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Այն պահին, երբ Ռուսաստանի դեսպանն ինձ համար կարդաց այս ծանուցագիրը, ես նշեցի, որ այն այնպես է շարադրված, կարծեք նախազգուս է ոռուսական կառավարության մի դիրքորոշում, որը եկնում է այլ տղբորից, քան շարքային տեղեկությունները: Կառավարությունն այնտեղ որոշ փորձեր է կատարել Ջեմալի հետ: Դեսպանն ինձ պատասխանեց, որ այդ հնարավոր է»:

1 Պ (արոնայ)ը Բենկենդորֆի և Գիրսը:

5/ Պատերազմի ավարտի պահին տերություններն իրենց կողմից Ջեմալ փաշային կցուցաբերեն ֆինանսական օգնություն:

6/ Ջեմալ փաշան համաձայնվում է հրաժարվել նեղուցներից և Կոստանդնուպոլսից:

7/ Ջեմալ փաշան պարտավորվում է այս պահից յի վեր միջոցներ ձեռնարկել հայ բնակչությանը փրկելու համար և մինչ պատերազմի ավարտն օժանդակել սննդամթերքներով նրան ապահովելու գործին:

Պ. Սագոնովն ավելացնում է, որ ցանկացած ներքին բարդություններ Թուրքիայում կարող են միայն նրան բուլացնել և առաջ բերել դաշնակիցների համար նպաստավոր պայմաններ: Կայսրական կառավարությունը հույս է հայտնում, հետևաբար, որ դաշնակիցների գործին նվիրված հայերի միջնորդությամբ Ջեմալ փաշայի հետ գաղտնի բանակցությունները վարելը շահավետ կլինի: Եթե նույնիսկ Ջեմալ փաշային չհաջողվի վռնդել գերմանացիներին և տապալել Կոստանդնուպոլսի կառավարությունը, այդուհանդերձ, Օսմանյան կայսրությունում հուզումներ հրահրելն օգտակար կլինի:

Այն հարցի կապակցությամբ, որը նախորդում է, պ. Իզվոլսկուն հանձնարարվել է գաղտնաբար տեղեկանալ, թե ինչպիսի՞ն է ֆրանսիական կառավարության վերաբերմունքը:

(A.M.A.E., Guerre.1914-1918, *Turquie*, tome 871, ff. 125-125 v)

158

Խորհրդի նախագահ, Արուսեփն գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Հոմոնում, Լոնդոնում և Պետրոգրադում գտնվող Ֆրանսիայի դեսպաններին՝

Հ. թիվ 2245, 2246, 4569, 4570, 2262, 2263:

Փարիզ, 28-ը դեկտեմբերի 1915 թ., ժ. 10-ին:

Պ. Սագոնովի հրահանգով, պ. Իզվոլսկին ինձ հանձնեց մի ծանուցազիյ, որն ըստ հայկական տեղեկությունների, բացահայտում է, որ Ջեմալ փաշան պատրաստ կլինի ապստամբել Կոստանդնուպոլսի կառավարության դեմ, եթե տերությունները նրան երաշխավորեն. 1/ սուլթանի գերիշխանության ներքո գտնվող ինքնավար մահանգներից բաղկացած (Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Արաբիա, Հայաստան, Կիլիկիա, Քրդստան) Ասիական Թուրքիայի անկախությունը և ամբողջականությունը. 2/ Ջեմալի հռչակումն իբրև ժառանգական սուլթան՝ անդրանիկության սկզբունքով: -

Ի պատասխան՝ Ջեմալը կպարտավորվի. 1/ հրաժարվել նեղուցներից և Կոստանդնուպոլսից. 2/ դաշնակիցների ուսգմական օգնությամբ և նրանց ֆինանսական օժանդակությամբ պատերազմից հետո ուսգմարշավ ձեռնարկել Կոստանդնուպոլսի և ներկայիս սուլթանի դեմ, որին նա տապալված կհայտարարի. 3/ այս իսկ պահից հովանավորել և սննդամթերքներով ապահովել հայ բնակչությանը:

Պ. Սագոնովը մտադիր է հայերի միջնորդությամբ բանակցությունների մեջ ընդգրկվել Ջեմալի հետ, ելնելով այն շահագրգռվածությունից, որը մենք, ամեն պարագայում, ունենք Թուրքիայում հուզումներ հրահրելու հարցում:

Պ. Իզվոլսկին ավելացրեց, որ պ. Սոմնիևոն համակրանքով կվեաբերվի այս նախագծին

1 Համապատասխանաբար՝ պ (արունայ)բ Բարբերը, Կամբոնը, Պալեոլոգը:

և ըստ նրա հայտնած կարծիքի՝ այս նախագիծը կհետաքրքրի անգլիացիներին, քանի որ հենացնում է վտանգը Եգիպտոսից և խոչընդոտում Փոքր Ասիայիում բուրբ զինվորների հավաքագրմանը, որին ձգտում են գերմանացիները:

Պ. Սագունովի արած առաջարկությունը զարմացրեց ֆրանսիական կառավարությանը, որը չի հասկանում, թե ինչպե՞ս կարելի է այն համատեղել Ֆրանսիայի և Անգլիայի նկատմամբ ռուսական կառավարության ընդունած պարտավորությունների հետ, երբ դրվել էր Կոստանդնուպոլիսը Ռուսաստանին հանձնելու հարցը, որին երկու տերությունները տվել են իրենց կատարյալ հավանությունը: Մասնավորապես մեզ վերաբերող հարցում, ես կարիք չունեն ձեզ հիշեցնելու այն խոստումը, որը ցարը մեզ տվել է 1915 թ. մարտի 17-ին՝ հայտնելով իր համաձայնությունն ամբողջ Սիրիայի (որտեղ նա վերապահություն էր անում միայն Սրբավայրերի հարցի շուրջ) և Կիլիկիայի հանդեպ ֆրանսիական կառավարության ունեցած դիտավորությունների առիթով: Անգլիական կառավարությունն իր հերթին ստացել է ցարի հավանությունն Ասիական Թուրքիայում ունեցած իր հավակնությունների հարցում: Նա ամենայն հավանականությամբ նպատակահարմար չի գտնի հավանության արժանացնել բուրբական այնպիսի կայսրության ստեղծումը, որն ընդգրկի Արաբիան և Միջագետքը: Կոստանդնուպոլիսի գրավման համար Գալլիպոլի թերակղզում Անգլիայի և Ֆրանսիայի զինվորների թափած արյունն ավարտին հասցրեց Ռուսաստանի հետ մեր համաձայնության վավերացումը:

Ես Ջեմալի անունից արված հայկական առաջարկությունների հավաստության շուրջ տեղեկություններ չունեն և ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք ինձ հայտնեք թե ինչպիսի՞ պայմաններում են դրանք արվել, որպեսզի կարողանամ գնահատել դրանց նշանակությունը:

Ես այ. Իզվոլսկուն եմ ներկայացրել այն առաջին մտորումները, որոնք ինձ հուշել է ռուսական ծանուցագիրը: Ես նրան մնամապես տեղեկացրել եմ, որ մենք, վեց ամսից ի վեր, բազմաթիվ անգամներ դարձել ենք բուրբական երևելի անձանց անուղակի քայլերի նպատակակետը, որոնք պատրաստ էին մեզ հետ զորույցի մեջ ընդգրկվել՝ բուրբական գերիշխանության ներքո Կոստանդնուպոլիսի պախլասման հիմնահարցի շուրջ, նույնիսկ հատուկ վարչակարգով: Հանրապետության կառավարությունը կարող էր դրժել իր խոսքը՝ համաձայնվելով հարել այս դիտավորություններին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 871, ff. 128-129).

159

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 1570:

Պետրոգրադ, 30-ը դեկտեմբերի 1915 թ.:

Պատասխան ձեր թիվ 2263 հեռագրին:

Ռուսաստանի դեսպանի՝ Չերյո գերագանցությանը հանձնած ծանուցագրի՞՝ Հանրապետության կառավարությանն, ինձ հասկանալի, պատճառաւ զարմանքը, բացատրվում է պե-

1 Պ. Իզվոլսկին:

2 Դեկտեմբերի 26-ի. տես վերը՝ թիվ 157 փաստաթուղթը:

տական գրասենյակում թույլ տրված սխալով:

Երկար նախաբանը բաց թողնելու արդյունքում, Ջեմալ փաշայի արած առաջարկություններին առնչվող ընթացիկ հաղորդագրությունը ներկայացվել է իբրև ռուսական կառավարության առաջարկություն:

Պ. Սազոնովը կարծել է և դեռևս կարծում է, որ այդ առաջարկությունները պետք չէ արհամարհել, քանզի դրանք մեզ են ընձեռում Թուրքիայում երկպառակություններ հարուցելու հնարավորություն: Բայց նա երբևէ տուրք չի տվել Կոստանդնուպոլսին և Սիբիային վերաբերող համաձայնությունը կրկին հարցականի ներքո դնելու գաղափարին:

Ռուսական կառավարությունը Ջեմալ փաշայի առաջարկություններին իրագել է դարձել Հայաստանում գտնվող իր գաղտնի գործակալներից մեկի միջոցով, որը մասնագիտությամբ բժիշկ է՝ և այժմ բնակվում է Բուխարեստում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 871, f. 132).

160

Ռուսաստանի դեսպանության հաղորդագրությունը Պեպարտամենտին

Փարիզ, 31-ը դեկտեմբերի 1915 թ.:

Պ. Սազոնովը հեռագրում է պ. Իզվոլսկուն, որ դիտելով Ջեմալ փաշայի հետ ընթացող բանակցություններն իբրև Թուրքիայում հուզումներ հրահրելու և Եգիպտոսի դեմ ռազմերթի խափանման միջոց, ինքը հարկ է համարել դաշնակիցների քննարկմանը ներկայացնել հայկական ծրագիրն այն տեսքով, ինչպես այն ընդունվել է, առանց անդրադառնալու դրա մանրամասների գնահատմանը և առանց հավանության արժանացնելու Ջեմալի նկրտումները:

Պ. Սազոնովի ընթրնմամբ, խոսքը վերաբերում էր այն բանին, որ ձեռնամուխ լինեն այդ նկրտումների քննությանը Ջեմալի հետ բանակցություններ սկսելու գաղափարն ընդունելուց հետո միայն, որն ամենևին էլ չի ենթադրի հայերի առաջադրած բոլոր կետերի ընդունումը: Շատ հնարավոր է, որ կարելի լինի Ջեմալի հավակնություններից օգուտ քաղել միանգամայն տարբեր ասպարեզներում:

Ռուսաստանի դեսպանը պարտավորվել է Նորին գերագանցություն պարոն Բրիանին հավաստիացնել, որ պ. Սազոնովը վստում է Ֆրանսիայի իրավունքների դեմ ուղղված որևէ ոտնձգության վերաբերող յուրաքանչյուր գաղափար, մի դաշնակցի, որը, ինչպես և Ռուսաստանը, նման ինքնազոհությամբ կրում է պատերազմի ծանրությունը:

Այն բարեհաճ ընդունելության պայմաններում, որին Ջեմալի հետ բանակցությունների սկզբունքն իսկ արժանացել է Հանրապետության կառավարության կողմից, պ. Իզվոլսկին հանձնարարություն է ստացել խնդրելու Նորին գերագանցություն պարոն Բրիանին՝ բարեհաճել տեղեկացնելու իրեն այն պայմաններին, որոնք ընդունելի կհամարի Ֆրանսիան:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 871, ff. 134-134 v).

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 1572: Գաղտնի:

Պետրոգրադ, 31-ը դեկտեմբերի 1915 թ., ժ. 22.15-ին:
(Ստացել է Կաբինետը 1916 թ.
հունվարի 1-ին, ժ. 11.45-ին):

Իմ գործընկեր սրբ Ջորջ Բուշանանը հենց նոր հայտնեց պ. Սազոնովին, որ բրիտանական կառավարությունն առարկություններ չունի ուսական կառավարության՝ Ջեմալ փաշայի հետ գրույց ունենալու կապակցությամբ, վերջինիս նշած հիմունքներով: Բրիտանական կառավարությունն, այդուամենայնիվ, իրեն է վերապահում հետագայում Բասսորահի հատկացումն Անգլիային և ֆրանսիական շահերի պաշտպանությունը Սիրիայում:

Այս հայտարարությանը պ. Սազոնովը պատասխանել է, որ իր կարծիքով բանակցությունը պետք է նախ՝ համաձայնեցվի չորս դաշնակիցների միջև, այնուհետև՝ ղեկավարվի այն տերությունների կողմից, որոնք, ավելի քան Ռուսաստանը, ուղղակիորեն շահագրգռված են արաբական աշխարհի ապագա վարչակարգով: Այդուհանդերձ, նա առաջարկում է այդ բանակցության համար դոկտոր Ջաբրիելի [sic]՝ միջնորդությունը, որը մինչ այդ բնակվում էր Մուշում (Էրզրումի նահանգ) և որը գաղթել է (Բուխարեստ):

(A.M.A.E., Papiers d'Agents, Jules Cambon, tome 18, f. 22 bis).

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 14:

Լոնդոն, [անբավակիր]:
(Ստացվել է 1916 թ. հունվարի 4-ին, ժ. 20.21-ին):

Պատասխան ձեր թիվ 27 հեռագրին:

Սրբ Ա. Նիկոլտոնն ինձ համար ընթերցեց սրբ Ջ. Բուշանանի հեռագիրը, համաձայն որի, պ. Սազոնովը հուշում է Ֆրանսիային և Անգլիային իրենց ձեռքում կենտրոնացնել, հայազգի դոկտոր Ջավրիելի միջնորդությամբ, Ջեմալ փաշայի հետ սկսված բանակցությունները: Նա ավելացրեց, որ սրբ Էդուարդ Գրեյը ցանկանում է տեղեկանալ Ձերոյ գերագանցության կարծիքին այս հարցում:

(A.M.A.E., Papiers d'Agents, Jules Cambon, tome 18, f. 24).

**Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ
Մորոն Պորտ-Սաիդում բրիտանական զինված ուժերի հրամանատար,
փոխգնդապետ Էլզուդին**

Ճ. թիվ 14:

«Ժամնա դ'Արկի» տախտակամածից,
11-ը հունվարի 1916 թ.:

Դուք ինձ հաղորդում եք 500 հայ կամավորների մոտալուտ ժամանման մասին Ալեք-սանդլիայից: Մյուս կողմից, Պորտ-Սաիդի հայերի ճամբարում անցկացված զինվորագրումները տվել են զնահատելի արդյունքներ:

Այս պայմաններում, խիստ ցանկալի է, որ նրանց համար նախատեսված զենքերի ու ռազմամթերքների առաքումն այլևս չհասկալի, և ես շատ երջանիկ կլինեմ, եթե դուք հնարավորություն ունենաք ճշգրտելու ինձ համար, հենց այս պահին, թե դրանք ուրտեղ կդրվե՞ն իմ տրամադրության ներքո:

(A.C.M., SS S 5).

**Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը՝
Փարիզի հայկական կոմիտեի նախագահ պ. Ներսիսյանին**

Ն:

Փարիզ, 18-ը հունվարի 1916 թ.:

Ես զգացված էի այն ցանկություններից, որոնք ֆրանսիական բանակների հաղթանակի առթիվ դուք բարեհաճել եք ինձ հղել: Այն գործը, որը դաշմակիցների հերոսական գործերի հետ մեկտեղ նրանք պաշտպանում են՝ իրավունքի, արդարության և քաղաքակրթության գործն է: Դուք այդ մասին հիշեցրել եք այնպիսի արտահայտություններով, որոնք ելնելով Փարիզի հայկական կոմիտեի նախագահից, կարող են ինձ համար միայն արժեքավոր լինել: Հանրապետության կառավարությունը մոռացության չի տա այն դառնագին փորձությունները, որոնց կրկին ենթարկվել է հայ ժողովուրդը: Նա կկարողանա այդ մասին հիշել, երբ հնչի օրինական հատուցումների ժամը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 2).

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝
Ռազմական նախարար, գեներալ Գալլիենիին**

Ճ. թիվ 1800:

Լոնդոն, 18-ը հունվարի 1916 թ.:

Համաձայն Կովկասի ռուսական բանակ գործողված անգլիացի մայոր Մարշի հեռագրի, դեպի Էրզրումից արևելք գտնվող Հասան-Կալե շարժվող ռուսական մի զորասյուն, այս վայրից դեպի հյուսիս արևմուտք, պետք է, որ հանդիսյաժ լինի 20 հազարանոց թուրքական ուժերի և նրանց պարտության մատնած լինի, որտեղ նրանք պետք է, որ կորցրած լինեն 3500-ից 4000 մարդ: Գերիները թվում պետք է լինեն թուրքական 17-րդ դիվիզիայի մարտիկ և կարելի է կարծել, որ այս ամբողջ դիվիզիան պետք է գտնվի կովկասյան ռազմաճակատում:

Հասան-Կալեի մոտ տեղի ունեցած մարտում ռուսները պետք է գրաված լինեն 2500000 փամփուշտ և 3000 հրետանային արկ:

(A.M.G., 7 N 2178).

**Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը՝
Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնին**

Հ. թիվ 301:

Փարիզ, 25-ը հունվարի 1916 թ., ժ. 20.30-ին:

Համաձայն պ. Իզվոլսկու, սըր Արթուր Նիկոլսոնը, հավանաբար, հայտարարել է կոմս Բենկենդորֆին, որ Անգլիան չի ցանկանում որևէ մասնակցություն ունենալ այն զրույցներին, որոնք պետք է տեղի ունենան որոշ հայ պատվիրակների հետ Բուխարեստում և Ալեքսանդրիայում՝ Ջեմալ փաշայի և Կոստանդնուպոլսի կառավարության միջև սեպ խորելու համար, քանի որ այս զրույցները կարող են անգլիական կառավարությանն անհանգստություն պատճառել Մեքքայի շերիֆի հետ նրա բանակցությունների ընթացքում: Բրիտանական կառավարությունը մեզ կթողնի զրույցները վարելու հոգսը, որոնց նա, ընդհանուր առմամբ, թշնամաբար չի տրամադրված:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք տեղեկանաք սըր Ա. Նիկոլսոնից այն հայտարարությունների ստույգ կարևորությանը, որոնք նա արել է կոմս Բենկենդորֆին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 871, f. 200).

**Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. քիվ 81:

Լոնդոն, 26-ը հունվարի 1916 թ., ժ. 11.10-ին:

Սըր Ա. Նիկոլսոնը երեկ ինձ ասաց, որ բրիտանական կառավարությունը չի ցանկանում որևէ մասնակցություն ունենալ այն գրույցին, որն սկսվել է հայ պատվիրակի¹ հետ: Նա ինձ շատաց, որ մեզ է թողնում բանակցություններին հետևելու հոգսը:

Ձերդ գերազանցությունը կկողմնորոշվի, թե արդյո՞ք մման բնույթի գրույցները համատեղելի են այն գրույցներին, որոնք մենք այս պահին վարում ենք բրիտանական կառավարության հետ²:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 871, f. 201).

**Ռուսաստանի դեսպանության
հաղորդագրությունը Դեպարտամենտին**

Փարիզ, 31-ը հունվարի 1916 թ.:

Պ. Սագոնովը Փարիզում և Լոնդոնում գտնվող Ռուսաստանի դեսպաններին հեռագրով հայտնում է իր կարծիքն այն մասին, որ դաշնակիցների ընդհանուր քաղաքական շահերի տեսանկյունից կարևոր կլինի, եթե վերջիններս նախաձեռնեն Դոան կողմից Հալեպ-Մոսուլ երկաթգծի տարածաշրջան, իսկ այնտեղից՝ դեպի Բաղդադ ըջված Թուրքիայի հայերին նյութական օգնության հատկացումը:

Հետևաբար պ. Իզվոլսկուն և կոմս Բենկենդորֆին հանձնարարվել է տեղեկանալ, թե արդյոք ֆրանսիական և անգլիական կառավարությունները կհամաձայնվե՞ն Ռուսաստանի հետ մասնակցել նախապես պայմանավորված մի գումարի մոծմանը՝ հավասար բաժիններով, որը հասնում է մեկ միլիոն ֆրանկի և նախատեսված է հայերին օգնելու համար: Այդ գումարը կարող է փոխանցվել Կոստանդնուպոլսում Մյացյալ Նահանգների դեսպանին³՝ այն հայ պատրիարքի⁴ և Սսի (Կիլիկիա) կաթողիկոսի⁵ տրամադրության ներքո դնելու խնդրանքով: Եթե այս գործելաձևը խոչընդոտներ հարուցի, խնդրո առարկա փողը հայերի շրջանում կարող է բաշխվել ամերիկյան գործակալների միջոցով: Հասկանալի է, որ այս նյութական օժանդակության աղբյուրը պետք է գաղտնի պահվի, թուրքերի կողմից՝ հայերի նկատմամբ նոր բռնությունների կիրառումից խուսափելու նպատակով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 7).

1 Խոսքն, անկասկած, վերաբերում է դոկտոր Չավրիևին:

2 Խոսքը վերաբերում է Անտանտի հաղթանակի դեպքում՝ Ասիական Թուրքիայի բաժանման շուրջ ընթացքի մեջ գտնվող անգլո-ֆրանս-ուսական բանակցություններին: 1916 թ. մարտի 22-ին պ. դը Մարթերին դոկտոր Չավրիևին տեղյակ կպահի, որ նա կարող է կրկին իրեն ազատություններ տալ:

3 Պ. Մորգենթաուն:

4 Ն իորին սրբազնություն յն Չավեն Տեր-Նեփայանը:

5 Ն իորին սրբազնություն յն Սահակ Քարաջանը:

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ
Բրիանը՝ Նյու Յորքում գովազդի կոմիտեի նախագահ պ. Ջոն Մոֆֆաթին**

Հ. թիվ 2284:

Փարիզ, 1-ը փետրվարի 1916 թ.¹:

Ֆրանսիական կառավարության ցանկությունները ձեր, ինչպես նաև Հայերի օգնության ամերիկյան կոմիտեի ձեր գործընկերների ուղեկիցներն են այն ազնվաբար գործում, որը դուք ձեռնարկել եք: Բոլոր քաղաքակիրք երկրներն ի սրտե ամերիկյան մեծ ազգի հետ են՝ վկայելու համար հայերին, նրանց նոր փորձություններում, այն համակրանքն ու աջակցությունը, որին նրանք արժանի են:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 8).

**Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ
Մորոն՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին**

Ն:

Պորտ-Սաիդ, 5-ը փետրվարի [1916 թ.]:

Փոստն այնքան վատ է աշխատում և գտնվում է այնպիսի հսկողության ներքո, որից ես աշխատում եմ խուսափել. ուստի, ձեզ գրելու համար սպասեցի մի առիթի: Պ. դը Ռիբեն, միաժամանակ տիկին Դեֆրանսի իրեղեն վիճակախաղի համար, որին ես մեծ հաջողություններ եմ մաղթում, նրան կհանձնի հավաքված որոշ հանգանակություններ (ես հույս ունեմ, որ էսկադրայում այլ հանգանակություններ ևս կհավաքվեն):

Մեր վերջին նավարկումը նշանավորվեց Կաստելլորիզոյի հարևանությամբ գտնվող Անտիփիլոյի փոքր նավահանգստի վրա կատարված հարձակումով, որի թուրքական կայազորի մեծ մասը գերի ընկավ (35 զինվոր և 1 կապիտան). թշնամին ունեցավ միայն 3 սպանված և 3 վիրավոր, մենք՝ և ոչ մի: Այդ առաջին անգամ է, երբ մենք գործում էինք ցամաքում. այն, ինչն ինձ դրդեց դրան, այստեղ գտնվող հեռագրային կայանն էր, որտեղից և հետևում էին մեր բոլոր տեղաշարժերին Կաստելլորիզոյում, որը և մենք ավերեցինք: Երկու քաղաքները գտնվում են դեմ հանդիման, հիրավի, միայն երեք միլ տարածության վրա: Նույն երեկոյան մենք հեռացանք, տանելով այն մի քանի հույներին, որոնք ցանկացան մեզ հետևել և, մասնավորապես, տեղափոխելով կաստելլորիզոյիների շարժական գույքը, որը գտնվում էր թուրքերի ձեռքում: Անտիփիլոն, իրոք որ, կաստելլորիզոյիների գաղութն է, որոնք տների մեծ մասի սեփականատերերն են. մի քանի թուրքական ընտանիքների, որոնք մնացել էին, անհանգստություն չի պատճառվել: Այս փոքր գործի համար օգտագործել ենք հիսունի հասնող կամավորների Կաստելլորիզոյից, որոնք զգալով մեր մարդկանց և մեր երկու տրալերների աջակցությունը՝ իրենց լավ են դրսևորել:

Հույն կամավորների օգտագործումն ինձ, բնականաբար, մղում է ձեզ հետ խոսելու հա-

¹ Փոստով, առանց ծածկագրի:

յերի մասին, որոնց մենք շարունակում ենք ուսուցանել, որոնք ներկայումս գեները և ռազմամերթրքներ ունեն և որոնց օգտագործելու հարցով հարկ կլինի վճիռ կայացնել: Ես կցանկանայի մինչ նախարարին իմ առաջարկությունները ներկայացնելու միջոցով նրանից կարգադրություններ հայցելը, քաջատեղյակ լինել տարբեր հարցերի:

Նախ՝ քանի որ մենք համաձայնություն ունենք անգլիական իշխանությունների հետ, ես գրեցի գեներալ Մաքսուելլին, հարցնելու նրա կարծիքը մեր ծրագրերի մասին (և նա ինձ ոչինչ չպատասխանեց), այնուհետև՝ այն ընդդիմությունների մասին, որոնց մենք կարող էինք հանդիպել հենց իրենց՝ հայերի կամ նրանց հովանավորների շրջանում: Ինձ առավելապես չի զարմացնում ձեր հանդեպ Առաքել բեյի կատարած քայլը, քանի որ նրա հայրը, որին ես տեսել եմ Փարիզում իմ մեկնումից առաջ, այս պահին կորակասնապես դեմ է կամավորներին, և ես ունեմ լռող Բրայսի նամակի պատճենը, որը միևնույն միտքն է հայտնում: Մյուս կողմից, այն դրդապատճառները, որոնք այնժամ գոյություն ունեին և որոնք թվում է, թե շարունակում են պահպանել ազդեցությունը դոկտոր Գլիքբոնսի վրա, ամբողջությամբ կորցրել են իրենց նշանակությունը: Ամերիկացիների կամ այլ չեզոքների միջամտությունը կամ քայլերը՝ ուղղված հայերի հանդեպ Թուրքիայում լավագույն վերաբերմունքի դրսևորմանը հասնելուն, նրանց նկատմամբ նոր դատան միջոցների գործադրման մտավախությունը, նման բնույթի բոլոր խորհրդածությունները, թվում է, թե այժմ պետք է մի կողմ դրվեն, քանի որ բնաջնջումը ներկայումս մոտենում է իր վերջնագծին:

Այսպիսին է, համենայն դեպս, հայազգի ներկայացուցիչների կարծիքը, որոնք եկել էին այստեղ, ոչ միայն ինձ խնայրելու կամավորներին գործի դնելու, այլև իրենց նյութական նպաստներն իբրև աշխատավարձ նրանց հատկացնելու համար: Այս պարոնայք՝ «Հնչակի» խմբագիր Սապահգույանը, Աբահ Պետրոսյանը, որն աշխատում է «Լեչիփիան սթեյք ռելուեյում», ասում էին, որ իրենք «Հնչակ» հայկական հեղափոխական կոմիտեի մոնետիկներն են, որոնց աջակցում է Պողոս փաշան: Ես նրանցից պահանջեցի գրավոր ձևով հաստատել իրենց առաջարկությունները, որոնք ինձ տեղիք էին տվել կարծելու, թե Պողոս փաշան այժմ ընդունում է, որ այլևս որևէ քանի գգուշությամբ վերաբերվելու հարկը չկա: Ես սպասում եմ նրանց պատասխանին, ես սպասում եմ Մաքսուելլի պատասխանին և շատ կցանկանայի ունենալ նաև պատրիարքի կարծիքը: Հենց որ կարողանամ ի մի բերել տեղեկատվության այս տարբեր մանրամասները, ես գտնում եմ, որ ի վիճակի կլինեմ մի հեռագիր ուղարկել Փարիզ, որը նախարարին թույլ կտա բանիմաց որոշում կայացնել: Այսպիսի՞ն է այդպեք նաև ձեր կարծիքը:

Խիստ հավանական է, որ Կովկասի ռուսական զորքերում ներկայումս ծառայում են 8-ից 10000 հայ կամավորներ: Նրանց աջակցում են միևնույն հայկական կոմիտեները, որոնք մեզ խնդրում են օգտագործել Կիլիկիայի կամավորներին: Պահանջելով «Հնչակից» հաստատել ինձ համար իր իսկ առաջարկությունները, ես հոգացի ընդգծել, որ մեզ համար խոսքը վերաբերվելու է միայն գաղթական հայերին իրենց երկիր վերադառնալու հարցում նյութապես աջակցելուն՝ զենքեր և ռազմամթերքներ տրամադրելու միջոցով:

Ես, հավանաբար, կհասնեմ այն քանին, որ զամ ձեզ տեսնելու՝ խնդրելու համար օգնել ինձ պարգություն մտցնելու այս խրափճակում, ինչպես նաև կգնամ թե՛ գեներալ Մաքսուելլի, թե՛ կոմիտեների և պատրիարքի մոտ: Սպասելով, ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, երե դուք, այն տեղեկությունների հետ մեկտեղ, որոնք կկարողանաք հավաքել, ինձ հաղորդեք ձեր սևփական կարծիքը:

(A.M.A.E., Papiers d'Agents, Defrance, carton 2).

**Եզիպտոսում բրիտանական բանակների գլխավոր
հրամանատար, գեներալ Մաքսուելը՝ Միջերկրական ծովի 3-րդ
էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոյին**

Պորտ-Սաիդ, 5-ը փետրվարի 1916 թ.:

Փետրվարի 2-ի ձեր նամակն՝ անհանգստացրեց Եզիպտոսի հայերին, որոնք վախենում են, որ եթե այդ մտադրությունն իրականանա, ապա բուրբական տարածքում իրենց հայրենակիցների նկատմամբ, անկասկած, բռնություններ կգործադրվեն: Ես նրանց հետ համաձայն եմ և երբևէ մտադրություն չեմ ունեցել նրանցից ցուցադրական կորսուս ձևավորել կամ նրանց օգտագործել իբրև «հայերի»:

Ես համաձայնվել եմ, որ նրանք զինվեն, մարզվեն և ստանան որոշակի ռազմական ուսուցում, որովհետև ընդունում եմ, որ հանձինս նրանց մենք ունենք արժեքավոր օժանդակ ուժեր, որոնք կարող են մեզ ծառայել իբրև տեղեկություններ հաղորդող գործակալներ, և որ մենք կարող էինք օգտագործել նրանց, եթե այդ ցանկանայինք, թուրքական հաղորդակցությունները խափանելու, կամուրջները պայթեցնելու և այլնի համար, քանզի հիմնավորապես ճանաչելով երկիրը՝ նրանք իրենց ծառայությունները, բնականաբար, դրա համար էին առաջարկել: Ես կցանկանայի, հնարավորության սահմաններում, այս ևս պահել իբրև գաղտնիք, որպեսզի խուսափենք քաղաքական հուզումներից: Այդուհանդերձ, ես վախենում եմ, որ գործը դառնա հանրության սեփականություն, և այդ իսկ պատճառով համակարծիք եմ, որ ոչինչ ավելի պետք չէ անել:

Ես հրահանգներ կտամ այն մասին, որ նրանց ռազմական ուսուցումը շարունակվի, բայց կտեղեկացնեմ հայկական կոմիտեին, որ նրանց՝ իբրև «հայկական կամավորական կորսուս» օգտագործելու գաղափարից հրաժարվել են:

Ես սույնի պատճենն ուղարկում եմ գեներալ սրբ Ա. Մուրբեյին, որն այժմ դեկավարում է Եզիպտոսի արևելյան սահմանի պաշտպանությունը:

(A.C.M., SS-S 8).

Փոխգնդապետ Քլայթոնը՝ լեյտենանտ Վուլեյին

Գաղտնի:

Կահիրե, 5-ը փետրվարի 1916 թ.:

Հիմնվելով ձեր 0134 նամակի վրա, որով դուք ինձ տեղեկացնում եք ֆրանսիացի ծովակալի² այն մտահոգությանը, թե արդյոք Գ-Հ-ը հավանություն է տալիս այժմ իր մոտ գտնվող՝ ծովակալի նամակում գետեղված ծրագրին (որը դուք ստացել եք հունվարի 23-ին), ես այդ խնդրի մասին հայտնել եմ Գ-Հ-ին, և ըստ իս, նա անձամբ կգրի ծովակալին այդ հարցի շուրջ:

Գ-Հ-ը տեսել է նաև այն նամակի պատճենը, որը ձեզ առաջարկվել է ֆրանսիացի ծովա-

1 Մենք չկարողացանք գտնել այս նամակի սրտճենը:

2 Փոխծովակալ Մորոն:

կալի անունից ուղարկել Հայկական կոմիտե, և նա ֆրանսիացի ծովակալին հղած իր նամակում, անկասկած, կանխ իր առաջարկներն այդ կապակցությամբ:

Ես արդեն գրել եմ ձեզ պ. Գլիքբոնսի հետ կապված հարցի առնչությամբ, ինչպես նաև տեղեկացրել եմ ԳՀ-ին, թե ի՞նչ է ձեզ ասել ծովակալը նրա մասին:

Մայրը Ինգլեյյուն փորձում է պատ{վելի} պ{արոն} Թրուբրիջից ստանալ հայ կամավորների լուսանկարները:

Ես հրահանգներ եմ տվել, որ հայ կամավորներին վերաբերող բոլոր հղումները հանվեն եզրադասական մամուլից: Չեր մամակի այլ կետերի մասին ես արդեն գրել եմ:

(A.C.M., SS S 8).

173

Գեպարտամենտի հաղորդագրությունը Փարիզում Ռուսաստանի դեսպանությանը

Փարիզ, 7-ը փետրվարի 1916 թ.:

Վերջին հունվարի 31-ի ծանուցագրով¹, Ռուսաստանի կայսրական դեսպանությունը բարեհաճել է հարցնել Արտաքին գործերի նախարարությանը, թե արդյոք, ֆրանսիական կառավարությունը, Ռուսաստանի և Անգլիայի հետ մեկտեղ կարո՞ղ է հակված լինել մասնակցելու պայմանավորված մի գումարի մուծմանը հավասար բաժիններով, որը հասնում է մեկ միլիոն ֆրանկի և նախատեսված է հայերին օգնելու համար:

Ֆրանսիական կառավարությունը, չերաշխավորելով այն կարծիքը, որը հարցի շուրջ կկայացնի բրիտանական կառավարությունը, ընդհանուր առմամբ, տալիս է իր հավանությունն այն ներդրումին, որն իրենից պահանջվում է:

Այն ինչ վերաբերում է փողերը հանձնելու եղանակներին, Արտաքին գործերի նախարարությունը հույս է տածում, որ գերադասելի է բաժանումը կատարել Թուրքիայում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանի² միջնորդությամբ: Այս պայմաններում, տեղին կլինի այդ բաժանման ընթացքում՝ Ռուսաստանում, Անգլիայում և Ֆրանսիայում գտնվող հայ առաջնորդներին զաղտնաբար տեղեկացնել այդ օգնության աղբյուրի մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 9-9 v).

174

Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոն՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին

Ն:

Պորտ-Սալո, 8-ը փետրվարի [1916 թ.]:

¹ Տե՛ս վերը թիվ 168 փաստաթուղթը:

² Պ. Մորգենթաուն թողնում է Կոստանդնուպոլիսը 1916 թ. փետրվարի սկզբին: Մինչ նրա հաջորդի՝ պ. Էլբուսի ժամանումը 1916 թ. հուլիսին, գործերի հավատարմատարի կարգավիճակով՝ Միացյալ Նահանգները Կոստանդնուպոլիսում կներկայացնի դեսպանության առաջին քարտուղար պ. Ֆիլիպը:

Ես ձեզ շատ շնորհակալ եմ, որ դուք մեղություն եք կրել այս երկար մամակն ինձ գրելու համար, որը մասնակիորեն լույս է սփռում հայերի մեքենայությունների վրա: Այսօր ես ստացա ձեր երկրորդ մամակը, որը գրվել է այն բանից հետո, երբ դուք տեսել եք գեներալ Մաքսուելլին, որի մամակն ինձ հասավ միևնույն ժամանակ: Ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում նրա հետ ունեցած հարաբերություններում որոշակիություն մտցնելու ուղղությամբ կատարած փորձի համար, որովհետև լավ եմ տեսնում, թե ինչպիսի ազդեցության ներքո էր նա ինձ գրում, բայց այժմ, երբ տեսնում եմ, թե իմ գործունեությունը որքան է խեղաթյուրվել, անհրաժեշտ եմ համարում ձեզ տրամադրել տեղեկատվության ավելի ծավալուն մանրամասներ:

Նախ և առաջ, ես երբեք չեմ տեսել այն երկու հայերին, որոնք եկել են Պորտ-Սալոյ և որոնց անունները ձեզ հայտնել եմ: Այս պարոնայք, Ինքելիջենս Օֆիսում հայտնելուց հետո, որ իրենք լիազորված են հայկական կոմիտեի կողմից և վկայակոչելով Պողոս փաշային, առաջարկել են հոգալ որոշ ծախսեր, եթե հայ կամավորների կուրալսը, որը մենք մարզում ենք, վերջնականապես կազմավորվի և օգտագործվի թուրքերի դեմ: Այնուհետև՝ այս պարոնայք ներկայացել են տախտակամած. ես նրանց չեմ ընդունել, բայց կարգադրել եմ իմ շտաբի պետին՝ ընդունել նրանց, որն ինձ է հաղորդել նրանց կարծեցյալ առաքելության նպատակը և այն առաջարկությունները, որոնցով նրանք հանդես գալու հանձնարարություն ունենին:

Այդ պահից, այս առաքելությունն ինձ *խիստ կասկածելի* թվաց. ոչ այն բանի համար, որ ես պատճառներ ունեի կասկածի ներքո դնելու այս լիազոր ներկայացուցիչների կարգավիճակը, այլ որովհետև պատճառներ ունեի կարծելու, թե Պողոս փաշան ամենևին էլ այնպիսի մտադրությունների չէր հակված, որոնց մասին նրանք վկայում էին: Հետևաբար, ես կարգադրեցի սահմանափակվել՝ պահանջելով այս պարոններից գրավոր վավերացնել այն առաջարկությունները, որոնցով նրանք եկել էին հանդես գալու, գրավոր մատնանշելով, թե ո՞ւմ կողմից էին դրանք արվել: Լեյտենանտ Վուլեյը՝ Ինքելիջենս Օֆիսից, հանձնարարություն ստացավ հայտնել նրանց այդ մասին: Այս սպան, որին անձամբ գեներալ Մաքսուելլն էր մատնացույց արել իմ շտաբին կցելու և իբրև կապի սպա ծառայելու համար. ինձ քվում էր խիստ նպատակահարմար այդ առաքելության համար: Ի դեպ, ես նրան ամբողջությամբ վստահում էի և մինչ այժմ միայն գովաբանել էի նրա խնայողությունը և ծառայությունները: Նա, ի դեպ, այս հանգամանքներում շատ մեծ անփութություն է դրսևորել՝ գրելով ձեզ հայտնի մամակը, այնժամ, երբ մամակ գրելու փոխարեն, նրան հանձնարարվել էր միայն մամակ պահանջել:

Երբ հաջորդ օրն այդ մամակն ինձ մոտ բերվեց, ես զարմացա նրա ցուցաբերած մախաճեռնությունից, որը շտաբի ծառայությանն ավելի իրազեկ սպան, կասկածից վեր է, որ չէր անի: Բայց հանդիմանելուց զատ, որևէ այլ բան այլևս չէր մնում անել, և ես սահմանափակվեցի լեյտենանտ Վուլեյին ասելով, որ իր մամակի մասին անմիջապես հաղորդագրություն ուղարկի գեներալ Մաքսուելլին: Ինձ վրդովեցնում էր այն, որ իմ կրահանգները լավ չէին ընկալվել, բայց ես կասկածներ չէի տածում, որ իմ դիտավորությունները կարող էին խելարարված լինել գիտակցաբար, որովհետև այդ մամակում, եթե՝ նրանք անկեղծ են եղել, պարզապես ասվում էր. «Կամեցեք գրավոր ձևով հաստատել հաջորդող առաջարկությունները, որոնք դուք մեզ հայտնել եք բանավոր»:

Հենց որ ձեր մամակների և գեներալի մամակի միջոցով ես տեսա, թե իրավիճակն ինչպես է ներկայացվել, կանչեցի լեյտենանտ Վուլեյին, ի հայտ բերի նրա անզգուշության

հետևանքները և խնդրելի մեկնել 'Կահիրե' անձամբ գեներալ Մլաքսուելյին] ամենայն ազնվությամբ ներկայացնելու. որ առանց իմ գիտության զրված և առաքված այդ նամակը, տակ իր կողմից բոլոր տրված սխալի արդյունքն է: Եփեսո ցավալի է, որ հենց այն սպայի անվտուրությունը, որին գեներալ Մլաքսուելյին էր մատնացույց արել մեր միջև կատարյալ համաձայնությունն ապահովելու համար, պատճառ դարձավ այս բյուրիմացությունը: Մյուս կողմից, ես փոքր-ինչ զարմացած եմ, որ գեներալը երբևէ, չպատասխանեց այն անձնական նամակին, որտեղ նրան էի ներկայացնում հայերի հնարավոր օգտագործման հետ կապված իմ մտքերը, հարցներով նրա կարծիքը և ասելով նրան, որ չեմ ցանկանում իմ կառավարությանը և ոչ մի բան առաջարկել՝ առանց նրա նախնական հավանության և առանց համոզված լինելու, որ նրա հետ զամբով եմ կատարյալ համաձայնության մեջ: Այս նամակը, որը նրան է հանձնել լեյտենանտ Վլուդեյը, երբ ես չեմ սխալվում, հունվարի 20-ի շրջանում, չի արժանացել որևէ պատասխանի, այն դեպքում, երբ այսօր իմ ստացած նամակը պատասխանում է լեյտենանտ Վլուդեյի փետրվարի 2-ի նամակին, որն ուղարկվել է ձեզ հայտնի պայմաններում:

Այս ամենի խրատական կողմը հենց այն է, որ երբ գործ ունենք հայերի հետ, սովորաբար, խաբվում ենք, ես այդ ամենի նկատմամբ անտարբեր կլինեի, երբ իմ հարաբերություններն անգլիական իշխանությունների հետ դրանով իսկ չխոցվեին: Այս պայմաններում, ես պատրաստվում եմ առաջարկել գեներալին հրաժարվել հայերին ռազմական ուսուցում տալուց, որն իմ կարծիքով միայն անպատեհություններ է պայտնակում և ինձ միայն անհանգստություններ է պատճառում:

Ես ցանկանում եմ գնալ Իսմայիլիա ուլթաթ, շաբաթ և կիրակի օրերին, քանի որ բազմաթիվ հարցեր ունեմ քննարկելու ծովակալ Վեմիալի հետ և երբ կարողանամ, կգնամ մինչ Կահիրե: Ես ձեզ հեռագրով կնախագրուչացնեմ, բայց դեռևս չգիտեմ, քե ո՞ր օրը կկարողանամ տեսնել ծովակալ Վեմիասին: Այն դեպքում, երբ ինձ համար անհնար լինի գնալ մինչև Կահիրե, ես այդ մասին ձեզ կասեմ, միաժամանակ այն հույսով, որ դուք հավանաբար կկարողանար իրագործել ձեր այնքան բարեկամ առաջարկությունը՝ ճանապարհի կեսն անցնելու վերաբերյալ:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Defrance*, carton 1).

175

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արխատիդ Բրիանին

Ռ. քիվ 50:

Կահիրե, 10-ր փետրվարի 1916 թ.:
(*Unugety* է.Քաղ. վարչ. փետրվարի 24-ին):

Մուսա լեռից տեղափոխված և Պոլսո-Սաֆիում տեղավորված մարտունակ հայերին իբրև մարտիկների օգտագործելու հարցը շարունակում է մնալ չլուծված:

Վերջերս Առաքել քեյ Նուբարը՝ Պոլսո փաշա Նուբարի որդին, եկավ ինձ տեսնելու և հայտնեց, որ Եզիպտոս ժամանած «Նյու Յորք հերալդի» խմբագիր դոկտոր Գիլբերտը՝ իր, Թուրքիայի հայերի ճակատագրով հետաքրքրվող ամերիկյան կոմիտեների և ներկայումս Փարիզում գտնվող Պոլսո փաշա Նուբարի ամուսնից իրեն հայտնել է, քե որքան ցավալի և

վտանգավոր կլինի ֆրանսիական և անգլիական զինվորական իշխանությունների օգնությամբ Պորտ-Սախո գաղթած հայերին զինվորագրելը և Ասիայում քուրթերի դեմ կռվելու համար օգտագործելը: Ըստ դոկտոր Գլիքբոնսի, այդ զինվորագրումը և օգտագործումը՝ թշնամու կողմից, հավանաբար, տեղիք կտա բռնությունների և որոշակի անհաջողության կդատապարտի հայ բնակչության բեկորների փրկության ուղղությամբ Կոստանդնուպոլսում գտնվող Միացյալ Նահանգների դեսպանության գործադրած ջանքերը:

Ես սահմանափակվեցի Առաքել բեյի ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, որ Պորտ-Սախոյի մարտունակ հայերի հանդերձավորումն ու, հնարավորության դեպքում, օգտագործումն ուսումնասիրվել է և նախատեսվել ի պատասխան այն ցանկության, որը համառորեն դրսևորվել է գաղթականների, Եգիպտոսի հայերի և անձամբ իր կողմից, որ դուկտոր Գլիքբոնսի խորհրդածությունները, թվում է, թե դժբախտաբար այսօր արժեքավոր չեն, քանզի Թուրքիայում հայերի ոչնչացումը, ըստ ամենայնի, հասել է ծայրահեղության աստիճանի և, ամեն դեպքում, հարցն այժմ գտնվում է զինվորական իշխանությունների իրավասության ներքո:

Սակայն, մի քանի օր անց, երկու հայ անձինք ներկայացել են Պորտ-Սախոյում Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի շտաբի պետին¹ և «Հնչակ» կոմիտեի ու Պորտ փաշա Նուբարի անունից խնդրել նրան բարեհաճել արագացնելու Պորտ-Սախո գաղթած հայերի ուսուցումը, զինումը և օգտագործումն Ասիայում, առաջարկելով, ի դեպ, օժանդակել այդ հայերին հանդերձավորելու և կերակրելու ծախսերին: Ծովակալ Մորոն հանձնարարել է իր շտաբին կցված կապի անգլիացի սպային² կոչ անել այս պատգամավորներին ձևակերպելու իրենց խնդրանքը գրավոր, հայտնել նրանց, որ հայերին օգտագործելու դեպքում, հետևանքների ողջ պատասխանատվությունը կկրեն բացառապես իրենք՝ հայերը և մատնացույց անել նրանց, թե ի՞նչ սահմաններում է հնարավոր ընդունել օգնության նրանց առաջարկը մարդկանց հանդերձավորելու հարցում: Կապի սպան երկու լիազոր ներկայացուցիչներին մի նամակ է գրել, որն, ի դեպ, այնքան էլ չէր համապատասխանում ծովակալի հրահանգներին, որոնք առանց բացատրության այն ուղարկել են Առաքել բեյ Նուբարին: Առաքել բեյն իսկույն եկավ ինձ տեսության և իր զարմանքը հայտնեց այդ նամակի ստացման առթիվ, որն ինչպես նրան է թվացել, բխել է ծովակալի տարերային նախաձեռնությունից և իրենից ներկայացրել հայերի հարցում նրա ընդունած որոշումների շարադրանքը: Նամակի ուշադիր ընթերցումից և հապճեպ քննությունից հետո, ես պարզեցի իրականությունը, այն է՝ խնդրո առարկա նամակը եղել է սոսկ պատասխանն այն խնդրանքին, որով Պորտ-Սախոյում դիմել են 3-րդ էսկադրայի շտաբի պետին և Առաքել բեյը, խիստ զարմացած, հայտնեց ինձ, որ ո՛չ ինքը և ո՛չ «Հայերի շահերի պաշտպանության կոմիտեի» որևէ անդամ, որի նախագահն իր հայրն է, ծովակալ Մորոյի մոտ լիազոր ներկայացուցիչներ չեն ուղարկել:

Այս երկու՝ այսպես կոչված լիազոր ներկայացուցիչներից մեկը «Հայերի շահերի պաշտպանության կոմիտեի» անդամն է, որը հավակնություն ունի միայն ինքը խոսելու համուն հայերի, ինչը, համենայն դեպս, մասնակիորեն արդարացվում է, քանի որ նրա նախագահը Էջմիածնի կաթողիկոսի ներկայացուցիչն է Եփրոսյայում, մյուսը՝ թե՛ «Հնչակ» հեղափոխական կոմիտեի և թե՛ միաժամանակ այն կոմիտեի անդամն է, որի նախագահը Պորտ փաշա Նուբարն է:

«Հնչակին» համանման հայկական հեղափոխական տարբեր կոմիտեներ Եգիպտոսում

1 Նավի կապիտան Շամոնարր:

2 Լեյտենանտ Վոլերը:

ներկայացուցիչներ ունեն և այդ կոմիտեների բազմաթիվ անդամներ՝ բոլոր հայերի ջանքերը՝ հանուն իրենց շահերի և այն ամենի պաշտպանության, ինչը դիտում են իբրև իրենց իրավունքներ, միավորելու նպատակով, Թուրքիայի հետ պատերազմի սկզբում, նմանապես գրանցվել են «Հայերի շահերի պաշտպանության կոմիտեում»: Բայց այն դեպքում, երբ այս վերջին կոմիտեի անդամները ձգտում են, ընդհանուր առմամբ, հետամուտ լինել իրենց պահանջներին միայն հնարավորությունների ընձեռած օրինական գործունեության սահմաններում և հիմնվելով Անտանտի տերությունների հետագա որոշումների վրա, ապա հեղափոխական կոմիտեների անդամները մշտապես միտում ունեն անմիջական գործողության, միշտ հակված են տերությունների վրա ճնշում գործադրելու և գտնում են, որ հայերը պետք է մարտնչեն, նույնիսկ առանց մոտալուտ օգուտի հույսի ակնկալության, որպեսզի կարգավորման ժամը հասնելուն ևե՞ք՝ հատուցման և փոխհատուցումների իրավունքներ ձեռք բերեն:

Հարկ է ընդունել, որ մի քանի ամիս առաջ, Մուսա լեռան հայերի Եզիպտոս ժամանման շրջանում, «Հայերի շահերի պաշտպանության կոմիտեն» կամ համեմայն դեպս, նրա այն անդամները, որոնք Կահիրեում են, բաժանում էին հեղափոխական կոմիտեների տեսակետն այս հարցում: Անկասկած, Պողոս փաշա Նուբարի խորհուրդներով, «Հայերի շահերի պաշտպանության կոմիտեի» անդամները վերանայեցին իրենց դիրքորոշումը և վերափոխեցին կարծիքը Պորտ-Սալոյի գաղթականներին թուրքերի դեմ կռվելու ուղարկելու հնարավորության հարցի շուրջ: Այլ կոմիտեների անդամների ուշադրությունից դա չի վրիպել և նրանք, հավանաբար, 3-րդ էսկադրայի հրամանատար ծովակալի առջև՝ իբրև թե «Հնչակի» ու Պողոս փաշա Նուբարի անունից արված քայլով ցանկացել են «Հայերի շահերի պաշտպանության կոմիտեին» կանգնեցնել կատարված փաստի առջև: Սրանով է բացատրվում 3-րդ էսկադրայի շտաբին կցված կապի անգլիացի սպայի գրած նամակի հանձնումը Առաքել բեյին, նամակ, որը հղված էր «Հայկական կոմիտեի ներկայացուցիչներին» և որը «Հայերի շահերի պաշտպանության կոմիտեն» դիտել է իբրև ծովակալի նախաձեռնությունից ելնող, այնժամ, երբ դա ընդամենը կոմիտեին անհայտ մի քայլի պատասխանն էր:

Ես ծովակալ Մորոյին տեղեկացրի այս թյուրիմացությանը, որը ծագել էր կանխամտածված ձևով: Նա ինձ խիստ շնորհակալ եղավ դրա համար, բայց մնաց ոչ այնքան գոհ հայերի դիրքորոշումից, որոնք, բնականաբար, բրիտանական զորքերի գլխավոր հրամանատարին ավելի լավ չէին իրագրել դարձրել այդ հարցին, քան Առաքել բեյը, դրանով իսկ խիզախելով վտանգի ենթարկել ֆրանսիական և անգլիական բարձր հրամանատարությունների միջև առկա ներդաշնակությունը և համաձայնությունը: Ես, ի դեպ, իրավիճակը պարզաբանել եմ նաև զեներալ Մաքսուելլի համար:

Այս եղելությունների հետևանքով ծովակալն այնքան էլ հակված չէր շարունակելու Պորտ-Սալոյի հայերի ռազմական ուսուցումը՝ նրանց հետագայում օգտագործելու նպատակով: Այդուհանդերձ, ինձ թվում է, մենք չպետք է հրաժարվենք օգտագործել այս մարդկանց, եթե նրանց օգտագործելն օրերից մի օր մեզ համար կարող է օգտակար լինել: Բայց սա այնպիսի մի հարց է, որն, ըստ իս, վերաբերում է բացառապես շտաբներին: Վերջիններս, եթե Պորտ-Սալոյի հայերին օգտագործելու հարցում շահագրգռվածություն ունենան, պետք է նրանց օգտագործեն և ոչ այն բանի համար, որ նրանց օգտագործելը կարող է ունենալ (որն, ի դեպ, առարկելի է) որևէ քաղաքական կարևորություն հայերի համար: Նրանք պետք է Պորտ-Սալոյի գաղթականներին օգտագործեն, եթե այդ նպատակահարմար են գտնում, ոչ թե այն բանի համար, որ այս մարդիկ հայեր են, այլ, որ այս մարդիկ քա-

ջարի են, լավ ծանոթ են որոշակի շրջանների և սերտ կապեր ունեն բնակիչների հետ, այնպես, ինչպես կօգտագործեն մեկ այլ ժողովրդի կամ ուրիշ ազգության մարդկանց, որոնց օգտագործումը կունենա համանման առավելություններ:

Ես հայտնել եմ այս կարծիքը ծովակալ Մորոյին և փաստագրական կարգով այս հաղորդագրությանն են հավելում 3-րդ էսկադրայի շտաբին կցված կապի անգլիացի սպայի՝ Հայկական կոմիտեի ներկայացուցիչներին հղված նամակի պատճենը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 60-62 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

Ռազմական հետախուզության վարչություն
Շտաբ, Պորտ-Սալո

2-ը փետրվարի 1916 թ.:

Հայկական կոմիտեի ներկայացուցիչներին

Պարոնայք,

Երբորդ ֆրանսիական էսկադրայի հրամանատար ծովակալն ինձ կարգադրել է տեղեկացնել ձեզ հայ կամավորների օգտագործմանը վերաբերող իր որոշմանը, որը հետևյալն է.

Շտաբայության համար պիտանի հայերի քիվմ այնքան փոքրաքանակ է, որ ներկայումս դաշնակից տերությունների համար հետաքրքրություն չի ներկայացնում: Նրանց օգտագործելու միակ նպատակն այն է, որ հայերին՝ իրենց հայրենի երկրում վերահաստատվելու համար իրավունքներ ներկայացնելու հնարավորություն տրվի: Ուստի, այդ զուտ հայերի շահերից բխող խնդիր է: Հասկանալի է, որ նրանց օգտագործումը հավանության է արժանացել Կոմիտեի և հայ ժողովրդի ղեկավարների կողմից և քանի որ դա այդպես է, դաշնակից կառավարությունները գերծ են մնում բուրքերի կողմից ճնշումների կամ բռնի միջոցների գործադրման որևէ բարոյական պատասխանատվությունից, որոնք կարող են դիտվել իբրև այդ կամավորների օգտագործման պատճառով կիրառվող բռնություններ:

Համաձայն Կոմիտեի արտահայտած ցանկության և իրենց իսկ՝ գաղթականների համաձայնությամբ, դաշնակից կառավարությունները պատրաստ են կազմավորելու կամավորների զինված ջոկատ՝ բաղկացած Մուսա լեռան հայ գաղթականներից և համանման այլ հայ կամավորներից, որոնց կարող է ուղարկել Կոմիտեն. բացի դրանից, նրանք համաձայնվում են.

1/ Տեղավորել այս կամավորներին առանձին ճամբարում, մյուս գաղթականներից մեկուսի, որտեղ նրանք, ցանկացած առումով, պետք է ենթարկվեն զինվորական կարգապահությանը:

2/ Ապահովել համապատասխան ռազմական ուսուցմամբ:

3/ Ապահովել կամավորներին այնքան գեներելով, ռազմամթերքներով, հանդերձանքներով և կոշիկներով, որքան դրանց կարիքը կզգացվի:

4/ Օգտագործել այս կամավորներին միայն Կիլիկիայի և Փոքր Հայքի շրջաններում (որոնց հայերն իբրև տեղացիներ քաջածանոթ են) և առաջին իսկ հնարավորության պարագայում, որը ռազմական տեսանկյունից կարող է նպատակահարմար թվալ:

Կարծում են, որ այժմ Պորտ-Սալոյում գտնվող հայ գաղթականները պետք է ապահովվեն մոտավորապես 400 մարդուց բաղկացած զինված ջոկատ: Երբ սրանք զինվորագրվեն, այլ կամավորներ կընդունվեն Եգիպտոսում մշտապես բնակվող հայերից:

Հանուն այս ուսգմարշավի նպատակների հայերի կոմիտեից պահանջվում է ապահովել.

1/ Յուրաքանչյուր զինվորագրված մարդու համար ԱՄՏ-ի* սահմանում 2 օրապահիկ՝ սննդամթերքի համար և ԱՄՏ-ի սահմանում 1 օրապահիկ՝ վճարելու համար. յուրաքանչյուր կամավորի համար ընդամենը՝ ԱՄՏ-ի սահմանում 3 օրապահիկ:

2/ Ըստ կոմիտեի և ենթասպաների միջև կայացված համաձայնության, կոմիտեն պետք է վճարի վեց մարզված մարդկանց՝ իբրև ենթասպաների:

3/ Օրական 2 ԱՄՏ-ի սահմանում հավելյալ վճարում՝ պատասխանատու պաշտոններում առաջադրված կամավորների, այսինքն զինագործների և այլոց համար:

4/ Անհրաժեշտ բոլոր տեսակի հագուստների համար կտրեղեն, որոնք կարող են պահանջարկ ունենալ: Առաջարկված չէ բոլոր մարդկանց համազգեստ հագցնել, քանի որ նրանք պետք է կազմավորեն անկանոն զորքեր, բայց որոշ դեպքերում հանդերձանքը պետք է անհրաժեշտություն լինի, և այդ պետք է մատակարարի կոմիտեն:

Կոմիտեից պահանջվում է երրորդ ֆրանսիական էսկադրայի հրամանատար ծովակալին ներկայացնել մի փաստաթուղթ, ստորագրված լիազոր ներկայացուցիչների կողմից, որոնք ստանձնում են վերոհիշյալ պատասխանատվությունը: Առաջարկված ծրագիրն անմիջապես պետք է ուժի մեջ մտնի, սույն ստորագրված համաձայնության ընդունման պահից:

Երրորդ ֆրանսիական էսկադրայի հրամանատար
ծովակալի փոխարեն՝ կապի սպա՝:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 63-64).

176

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն:

Փարիզ, 14-ը փետրվարի 1916 թ.:
(Մտացել են Կաբ. փետրվարի 16-ին,
Բադ. վարչ. փետրվարի 17-ին):

Ես պատիվ ունեմ և իմ պարտքն եմ համարում համայն հայերի անունից, որոնց ես ներկայացնում եմ, ինչպես նաև անձամբ իմ անունից, Ձերոյ գերազանցությունը հայտնել ամենախորին հրախտագիտության մեր հուզումնալից արտահայտությունը՝ համակրանքի այն նոր վկայության առթիվ, որը Ֆրանսիական հանրապետության կառավարության անունից Ձերոյ գերազանցությունը բարեհաճել է դրսևորել հայ ժողովրդի նկատմամբ, պաշտոնապես ներկայանալով այն կոնֆերանսին, որն «Արևելքի բարեգործական կազմակերպության» նախաձեռնությամբ տեղի ունեցավ վերջին կիրակի օրը Մադլեն եկեղեցում:

Բոլոր ժամանակներում՝ բոլոր ճնշված ժողովուրդների վեհանձն հովանավոր Ֆրանսիան մեզ է հրամցրել իր բարյացակամության և մեծահոգության ասպացույցները: Ուստի,

* Արտոնյալ մարտային տարի: - Ծ. ք.:

1 Լեյտենանտ Կոլեյը:

սգի այս օրերին, որոնք ակեկիծում են Հայաստանը, նրա կառավարության նշանավոր դեկավարի ցուցաբերած հետաքրքրության այս նոր առիավատչյան բազմապատկում է, եթե այդ հնարավոր է, երախտագիտության մեր զգացումը և միաժամանակ մեր սրտերում վերակենդանացնում հույսն ու հավատն առ այն, որ երբ ժամը հասնի, մեր դժբախտ երկիրն իրեն հարստահարողներից ազատագրվելու համար կկարողանա ապավինել Ֆրանսիայի հովանավորությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 11).

177

**Պետրոգրադում Ֆրանսիայի ռազմական կցորդի տեղակալ,
փոխգնդապետ Վեիրլինը՝ Ռազմական նախարար, գեներալ Գալլիենիին**

Հ. թիվ 140:

Պետրոգրադ, 16-ը փետրվարի 1916 թ., ժ. 19.57-ին:
(*Ստացել է* Կաբինետը փետրվարի 17-ին):

Էրզրումը գրավվել է հինգ օր տևած անընդմեջ զրոհներից հետո:

(A.M.G., 7 N 2178).

178

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝
Ռազմական նախարար, գեներալ Գալլիենիին**

Ճ: Չհամարակալված:

[Պատճենը]:

Լոնդոն, 17-ը փետրվարի 1916 թ.:

Ես առիթ ունեցա հանդիպելու բրիտանական խորհրդարանի անդամ սըր Մարկ Սայքսին, որին բազում տարիներ ի վեր, երկարատև այցելությունները հնարավորություն են ընձեռել հիանալիորեն ճանաչել Փոքր Ասիան և այդ տարածաշրջանի ժողովուրդներին:

Ըստ նրա, ռուսների կողմից Էրզրումի գրավումն Օսմանյան կայսրության ժողովուրդների վրա մեծ ազդեցություն չի գործի այն անտեղյակության պատճառով, որում գտնվում է նրա բնակիչների գերակշռող մասը: Դրա փոխարեն, ազդեցությունը շատ մեծ կլինի մահմեդականների վրա, բայց պետք է ակնկալել, որ օսմանյան կառավարությունը կփորձի, որքան հնարավոր է երկար, թաքցնել այս լուրը:

Երբ Էրզրումի գրավումը սրողեն արդեն անհնար դառնա, հարկ կլինի պատրաստ լինել տեսնելու, թե իսլամական երկրներում ինչպե՞ս է սկիզբ առնում մի կամպանիա, որը կմերկացնի հայերի կատարած վայրագությունները, մզկիթների պղծումը և այլն... Կամպանիա, որը կհետապնդի իսլամի երկրներում խմորումներ հրահրելու նպատակ:

Իրոք, կասկածից վեր է, որ ռուսական բանակների առաջխաղացումը կուղեկցվի Կովկասի հայերի կողմից մահմեդական ժողովուրդների կոտորածներով, որոնք ցանկություն կունենան վրեժխնդիր լինել Օսմանյան կայսրության իրենց եղբայրների համար, բայց,

բնականաբար, իրավիճակը փութաջանությամբ կչափազանցվի այնպիսի ձևով, որպեսզի խորը տպավորություն գործի դաշնակից տերություններից կախում ունեցող արաբական ժողովուրդների վրա: Մլր Մարկ Մայքսը միաժամանակ գտնում է, որ Էրզրումի գրավումը կուժեղացնի «Մլուրթյուն և առաջադիմություն» կոմիտեին ընդդիմադիր թուրք տարրերին, որ այն ազդեցություն կգործի քուրդ և արաբ սպաների վրա և, հետևաբար, կթուլացնի Էնվեր փաշայի իշխանությունը: Մլր Մարկ Մայքսի կարծիքով, Էրզրումի գրավումը շատ լավ ռազմական գործողություն է, եթե նկատի ունենանք այն պայմանները, որոնցում այն իրականացվել է և Հայաստանի տարածքով անցնելու հետ կապված տարվա այս եղանակին բնորոշ դժվարությունները, որտեղ գետինը ծածկված է ձյան հաստ շերտով: Այն կարող էր իրականացվել միայն անհամեմատ սահմանափակ անձնակազմերի միջոցով:

Էրզրում քաղաքը պաշտպանված էր գործնականում ռազմական արժեք չներկայացնող և միջակ սպառազինություններ ունեցող ամրություններով: Նրա կայազորը, հավանաբար, բազմաքանակ չէր և կարծում են, որ ռուսական հաջողությունը մասամբ պայմանավորված էր գուցե այն ծանոթություններով, որոնք շտաբը կարողացավ հաստատել բերդում:

Անհավանական է թվում, որ թուրքերը կարողանային այս իսկ պահին ուղարկել մեծաքանակ օժանդակ ուժեր. նրանք այդպիսիք, իհարկե, չեն վերցնի Միջագետքից՝ Տիգրիսով վեր լողալու և հայկական Տավրոսն անցնելու դժվարության պատճառով:

Հավանական է, որ հենց Կոստանդնուպոլսի շրջանից կամ Արևմտյան Անատոլիայից եկող զորքերն Անգորայի և Սվազի վրայով կողարկվեն Հայաստանի ուղղությամբ, որտեղ նրանք կարող են կենտրոնանալ Էրզինգյումանի [sic] մոտերքում, բայց խստաշունչ կլինայի, ձմռանը տեղի ունեցող առաջխաղացմանը՝ տեղանքի դիմակայող խոչընդոտների պատճառով, նվազ հավանական է, որ Էրզրումը վերագրավելու նպատակով թուրքական ուժերը կարողանան մինչև հունիսի սկիզբը ձեռնարկել լուրջ հարձակում:

Միջագետքում անգլիական գործողությունների տեսանկյունից, Էրզրումի գրավումը կունենա, հավանաբար, ներկայումս դեպի Բաղդադ շարժվող որոշ օժանդակ ուժերին կանգնեցնելու առավելությունը, որոնք Սիրիայից կամ Անատոլիայից ուղղություն կվերցնեն դեպի Հայաստան:

Վերջապես, այն կարևոր ազդեցություն կգործի Պարսկաստանում տիրող իրավիճակի վրա: Ներկայումս, Աֆղանստանի էմիրը չեզոք դիրքորոշում ունի անգլիացիների նկատմամբ և կարողացել է մինչև այժմ խափանել այն հուզումները, որ ջանում էին հրահրել այս երկիր ուղարկված թուրքական գործակալները:

Համաձայն Ուոր Օֆիսի ստացած տեղեկությունների, Էրզրումի բուն կայազորը կազմված էր թուրքական 17-րդ դիվիզիայից և պահեստի 5-ից 10 զումարտակներից, ընդհանուր առմամբ՝ մոտավորապես 10000 մարդուց:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, ff. 145-146).

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ
Բրիանը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ
Պողոս Նուբար փաշային**

Ն:

Փարիզ, 19-ը փետրվարի 1916 թ.:

Դուք բարեհաճել եք վերջին կիրակի օրը, Մադլեն եկեղեցում՝ «Արևելքի բարեգործա-

կան կազմակերպության» նախաձեռնությանը տեղի ունեցած կոնֆերանսի առթիվ՝ համայն հայության, որը դուր անկախացում էք, ինչպես նաև անձամբ ձեր անունից, Հանրապետության կառավարության նկատմամբ զգացմունքների արտահայտել, որոնք ես չեմ զլացել գնահատել:

Պաշտոնապես ներկա գտնվելով այդ արարողությանը, ես կարևոր եմ համարել հայ ժողովրդին հավաստել ֆրանսիական կառավարության կարեկցանքի և խորին համակրանքի մի նոր վկայությունը: Այս կառավարությունը մոռացության չի տա, երբ հնչի օրինական հատուցումների ժամը, այն տառապալից փորձությունները, որոնց կրկին ենթարկվել են ձեր հայրենակիցները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 12-12 v).

180

Եգիպտոսում բրիտանական ռազմարշավային ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Մուրրեյը՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոյին

Իսմայիլիա, 23-ը փետրվարի 1916 թ.:

Ինչ վերաբերում է հայերին, որոնց դուք մարզում եք Պուրտ-Սաիդի գալթականների ճամբարում, արդյոք դուք գտնո՞ւմ եք, որ այժմ նրանցից ոմանք կամ բոլորն են պիտանի օգտագործվելու համար: Եթե դա այդպես է, կարո՞ղ եմ արդյոք ես ակնկալել, որ ռազմական տեսակետից դուք որևէ առարկություն չեք ունենա ծովափում սուզանավերի կայանները հետախուզելու և այլնի, ինչպես նաև թշնամու երկաթուղային գործողությունները (ինչպես օրինակ՝ Ռաջուի ուղեկամրջի շրջանում) խափանելու համար նրանց օգտագործելուն առնչվող իմ հոգածության հարցում:

(A.C.M., SS S 8).

181

I Ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեն՝ Ռազմածովային նախարար, դերծովակալ Լակագին

Ճ. թիվ 29: Գաղտնի²:

«Ֆյուսսիայի» տախտակամածից,
Մալթա, 25-ը փետրվարի 1916 թ.:
(*Մտացել է* Կաթինետը մայրտի 8-ին):

Հայերի օգտագործումը. Ես հասկանում եմ և բաժանում այն մտավախությունները,

1 Այս կոնֆերանսի մասին տե՛ս վերջ թիվ 176 փաստաթուղթը:

2 Սենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

որոնք զինված հայերին օգտագործելու շուրջ հայտնել են ծովակալ Մորոյին: Եթե նրանց օգտագործեն իրենց հայրենի երկրում, ապա այդ կարող է հանգեցնել դեռևս Թուրքիայում մնացող ընտանիքների դեմ կիրառվող բռնությունների և կոտորածների: Դա հակադարձ ազդեցություն կգործի չեզոքների գործունեության վրա, որոնք ջանում են վերջ դնել այդ քնաջնջմանը:

Եթե, ընդհակառակը, այս հայերին օգտագործեն այլ հակառակորդների դեմ, քան բուրքերը, նրանց կողմից, անկասկած, հեռավոր կլինի հանդիպել մերժումի: Աջակցությունը կլինի, ի դեպ, ողորմելի: Նրանց թշնամին բուրքն է, նրանք այլոց չեն ճանաչում, և մենք կգրկվենք այն ծառայություններից, որոնք նրանք կարող են մատուցել լեզվի և երկրի իրենց իմացության շնորհիվ: Հարցն ակնհայտորեն բավական բարդ է և պահանջում է մանրագին քննություն, որպեսզի տուրք չտանք մի արկածախնդրության, որը կարող է թանկ նստել մեր կողմնակիցների վրա և շրջվել նրանց դեմ: Բայց օրերից մի օր հայերը մեզ կցուցաբերեն մեծ աջակցություն:

(A.C.M., SS Ed 84).

182

Ֆրանսիայի հայերի պրեկատ, հայր Վռամշապուհ Քիբարյանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն:

Փարիզ, 2-ը մարտի 1916 թ.:
(*Ստացել են* Կաթ. մարտի 3-ին,
Ջադ. վարչ. մարտի 4-ին):

Այսօր, մեր ազգային հերոս Վարդանի տոնի օրը, որն իր զինակիցների հետ պաշտպանելով հայրենիքը և քրիստոնեությունը սասանյան բռնապետությունից ընկավ V դարում, մեր եկեղեցում հանդիսավոր պատարագ է մատուցվել, փառք տալու համար Աստծուն՝ ուսական փառապանծ գործերի միջոցով մեր հնամենի Էրզրում, Մուշ և Ախլատ քաղաքների ազատագրման առթիվ և ֆրանսիական հերոսական բանակին աստվածային օրհնանքներ ուղղելու համար, որը վսեմ աշխույժամբ պաշտպանում է Ֆրանսիան և քաղաքակրթությունը քարքարոտության հարձակումից:

Մենք ձեզ խնդրում ենք, պարոն նախագահ, բարեհաճել ընդունելու մեր երախտապարտ հիացմունքի հավաստիքը ֆրանսիական բանակի գործողությունների առթիվ և մեր ամենաջերմ ցանկությունները հանուն Ֆրանսիայի՝ մեր հոգևոր հայրենիքի ու իրավունքի վեհանձն մարտիկի վճռորոշ հաղթանակի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 13-14).

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ
Քրիանը՝ Ֆրանսիայի հայերի պրելատ,
հայր Վռամշապուհ Քիրարյանին**

Ն:

Փարիզ, 9-ը մարտի 1916 թ.:

Այս ամսի 2-ի ձեր նամակով² ինձ հաշվետվություն տալով այն հանդիսության մասին, որը հայկական եկեղեցում տեղի է ունեցել ձեր ազգային հերոս Վարդանի տոնի օրը, դուք ինձ իրազեկ եք դարձրել այն ցանկություններին, որոնցով այդ ալարողության ընթացքում Փարիզի հայկական համայնքը հանդես է եկել համուն ֆրանսիական բանակների հաղթանակի:

Տեղեկացնելով ձեզ այդ հաղորդագրության ստացման մասին, ես շատ եմ ցանկանում շնորհակալ լինել այն զգացմունքների համար, որոնց հաղորդուլի դերը դուք ստանձնել եք: Ես զգացված եմ դաշնակիցների գործին՝ ձեր համայնքի նվիրվածության այս նոր վկայության համար և ձեզմից գոհ կլինեմ, եթե դուք նրան հաղորդեք մեր երախտագիտությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 15).

**«Լա Ֆեդերալ» ապահովագրական բաժնետիրական ընկերությունը՝
պ. Գառնիկ Աստվածատուրին՝**

Ն:

Պատճենը:

Յուրիխ, 10-ը մարտի 1916 թ.:

Մենք պատահաբար իրազեկ ենք դառնում, որ օսմանյան կառավարությունը մի շրջաբերական է հրապարակել, որի պատճենը, տեղեկատվության կարգով, ստորև հանձնում ենք ձեզ.

«Թուրքիայում գործող բոլոր ապահովագրական ընկերություններին և այլ վայրեր տեղափոխված հայերի ընթացիկ հաշիվներին վերաբերող Օսմանյան առևտրի նախարարության հրապարակած շրջաբերական:

Ներքին գործերի նախարարության հրահանով, դուք պարտավորվում եք մեզ հանձնել մի ցուցակ, որտեղ նշված կլինեն ձեր ընկերությանը կցված հայերի ներդրումները, լիազորագրերը և ավանդները, որոնք վերաբերում են Ռուդոսթոյի, Ադանայի, Ջեբելի Բերեբելի [sic]⁴, Խոզանի, Ջոզգատի [sic]⁵, Անգուրայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեբի [sic]⁶, Անթալիայի,

1 Ստորագրել է պ. Ժյուլ Կամբոնը:

2 Տես վերը բիվ 182 փաստաթուղթը:

3 Մարսելում բնակվող (33, փողոց Տիվոլի):

4 Իմա՝ Ջեբելի Բերեբե:

5 Իմա՝ Յոզգատ:

6 Իմա՝ Հալեպ:

Գյուեմլերի [sic]¹, Բիլզեյի, Սվազի, Մերգուֆունի [sic]², Թոխաթի, Սամսունի, Անդուի [sic]³, Տրապիզոնի, Կոնիայի, Մամուրեթ-ուլ Ազիսի [sic]⁴, Իզմիլի [sic]⁵, Ադապազարի, Սիվրի-Հիսարի, Էզհոսչեհիլի [sic]⁶, Կեսարեսի [sic]⁷, Դևելի, Նիզդեի, Աֆիոն-Գարահիսարի, Ուրֆայի նահանգներին:

Այդ ցուցակները ձեր գործակալների միջոցով կտրվեն նշված նահանգներում լուծարմամբ զբաղվող հանձնաժողովներին, իսկ այդ հանձնաժողովների բացակայության դեպքում ցուցակները պետք է հանձնվեն քաղաքացիական իշխանություններին: Այն նահանգներում, որտեղ դուք գործակալներ չունեք, ցուցակները պետք է հանձնեք ուղղակիորեն մեր նախարարությանը:

Առևտրի և գյուղատնտեսության նախարարության անունից

Խորհրդատու,
Ստորագրված է՝ Մուստաֆա»:

Կոստանդնուպոլիս,

29-ը դեկտեմբերի 1915 թ.:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 16).

185

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 203:

Պետրոգրադ, 11-ը մարտի 1916 թ.:

Պ. Ժորժ-Պիկոն ինձ խնդրում է Ձերդ գերազանցությանը փոխանցել հետևյալ հեռագիրը.

«Պ. Պալեոլոգը և սըր Ջորջ Բուշանանը երեկ մեզ՝ սըր Մարկ Սալյեսին և ինձ ներկայացրին պ. Սազոնովին: Նախարարի հետ մնալով մեն մենակ, այն զրույցի ընթացքում, որը հետևեց, մենք նրան ներկայացրինք Լոնդոնում տեղի ունեցած բանակցությունների հիմնական ուղղությունները և այն սկզբունքները, որոնց շուրջ երկու կառավարությունները համաձայնության են հանգել: Ձեռք բերված արդյունքներն էլ ավելի լավ ճշգրտելու համար, մենք նրան հանձնեցինք անգլերեն և ֆրանսերեն լեզուներով կազմված մի պաշտոնագիր, ինչպես նաև նախատեսվող սահմանները ճշգրտող քարտեզ:

Պ. Սազոնովն այդ առթիվ հայտնեց իր ծայրահեղ զարմանքը: Նա երբևէ չէր կանխատեսել Ֆրանսիայի հիմնավորումը Պարսկաստանի սահմանների մոտակայքում: Նա ցանկացավ այդ մասին խորհրդածել՝ դրա հետևանքները հստակորեն պատկերացնելու համար: Այնուհետև՝ նա սկսեց քննարկել այդ հարցում Կովկասի կառավարության, Գլխավոր շտաբի, նրա հատուկ նշանակության ենթաբաժինների ոչ պաշտոնական տեսակետների մանրամասները և հանգեց դրանք հեթեթականությամբ ուսումնասիրելու անհրաժեշ-

1 Իմա՝ Գեմլիք:

2 Իմա՝ Մերգիֆոն:

3 Իմա՝ Օրդու:

4 Իմա՝ Մամուրեթ-ուլ Ազիզ:

5 Իմա՝ Իզմիլ:

6 Իմա՝ Էսքի-Շեհիր:

7 Իմա՝ Կեսարիա:

տությանը: Կարելի է կանխատեսել, թե ինչպիսի մանրամասներ է պարունակում մնաց գործելաձևը:

Առանց ավելի մեծ նշանակություն տալու, քան անհրաժեշտ է, այն խոսելաոճին, որն արդյունք է ծայրահեղ զգացմունքայնությանը և համապատաստից փաստարկմանը, այն հուզմունքի ազդեցության տակ, որը նախարարին պատճառեց նրան համձմված նախագիծը, մենք երկուսս էլ ապշեցինք այն ընդունելությունից, որին արժանացանք, քանզի վերջին հայտարարությունները մեզ քույլ էին տալիս հուսալու բողբոլվին այլ ընդունելության: Ըստ իս՝ ակնհայտ է, որ եթե գործեն այ. Սազունովի մատնացույց արած ձևով, հատուկ նշանակության ենթաբաժինների հետ մեկտեղ ձեռնամուխ լինելով մանրագին քննարկմանը, ապա բանակցությունը ենթակա կլինի ձգձգվելու վտանգին՝ առանց օգտավետ արդյունքների: Մյուս կողմից, իմ անգլիացի գործընկերը խիստ զաղտնաբար ինձ խոստովանել է, որ թվում է, թե իր դեսպանը հակված չէ ռուսների հետ քննարկումներ սկսելու այնպիսի եռանդով, որն անհրաժեշտ է և որոշակիորեն վկայակոչելու այն համաձայնությունը, որը կայացվել է Լոնդոնում: Այսպիսով, անհրաժեշտ կլինի հասնել այն բանին, որ սրբ Ջորջ Բուշանանին ուղարկվեն ավելի ճշգրիտ հրահանգներ, եթե ցանկություն կա շահավետորեն օգտվել, ինչպես երեկ մենք վարվել ենք, 1915 թ. մարտի 4-ին կայսրական կառավարության տված խոստումից և այդ միջոցով հասնել ռուսների հավանությանն այն նախագծին, որը մենք պարտավորվել ենք նրանց ներկայագնել»:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, ff. 18-18 v).

186

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան այ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար այ. Արխատի Բրիանին

Հ. թիվ 204:

Պետրոգրադ, 11-ը մարտի 1916 թ., ժ. 17-ին:

Այն գրույցից հետո, որը Փոքր Ասիայի հարցի շուրջ Արտաքին գործերի նախարարի հետ երեկ ունեցան ֆրանսիական և բրիտանական կառավարությունների լիազոր ներկայացուցիչները¹, ես համառորեն դիմեցի այ. Սազունովին, որպեսզի շուտափույթ և բարեհաճ պատասխան ստանամ:

Նախ՝ այ. Սազունովը հայտնեց իր մեծ զարմանքը, որը նրան համակել էր, երբ իրագել էր դարձել, թե Ֆրանսիան խորհրդածում է Դիլիբրեքի շրջանում և Քրդստանում իր գերիշխանությունը հաստատելու շուրջ:

«Նոր Հանրապետության կառավարությունը, ասաց նա ինձ, մեզ տեղյակ պահեց այն առավելություններին, որոնք ցանկանում էր իր համար ապահովել՝ փոխաբերել տալով իր համաձայնությունը, որ մենք առավելությունների ձեռք բերենք Կոստանդնուպոլսում, խոսքը վերաբերում էր միայն Սիրիային և Կիլիկիային: Ձեր նոր միջնորդությունն ինձ հանկարծակի բերեց: Ես չեմ խոսում ձեր նախագծերի մասին, որոնք վերաբերում են արաբական կայսրության կազմավորմանը: Ես հավանություն եմ տալիս այդ նախագծերին ասլիորի, որովհետև խոսքը վերաբերում է այնպիսի տարածաշրջանների, որտեղ Ռուսաստանն ան-

1 Պ. Ժորժ-Պիկոն և սրբ Մարկ Սայքս:

միջական հետաքրքրություններ չունի: Բայց պահանջելով Դիարբեքիի և Քրդստանի զավթումը, դուք առաջադրում եք բացառապես հայկական խնդիր: Դուք գիտեք, թե դա որքան բարդ խնդիր է մեզ համար, քանի որ Կովկասում կան ոչ պակաս, քան 1200000 հայեր և որ մեր բոլոր տարատեսակ ժողովուրդներից՝ դա, հավանաբար, ամենադժվար կառավարելի ժողովուրդն է: Սակայն կայսրական կառավարությունը դեռևս չի քննարկել Հայաստանի ապագա ճակատագրի հարցը և դա այնպիսի մի քննարկում չէ, որը կարող է ավարտվել այսօր կամ վաղը: Ծայրահեղ անհրաժեշտ է խորհրդակցել Կովկասի Գլխավոր շտաբի և վարչության հետ: Այսբանը, ես չեմ կարող հայտնել իմ կարծիքը»:

Այդուհանդերձ, նա ինձ հասկացնել տվեց, որ անձամբ ինքը հակված է թողնելու Հայաստանը բուլղարական գերիշխանության ներքո՝ առանձնացնելով Էրզրումը և Տրապիզոնը՝ Ռուսաստանի, իսկ Դիարբեքիը՝ Ֆրանսիայի համար: Նույնպես անձնական հողի վրա, նա հայտնեց, որ հակված է Պաղեստինը մեզ զիջելու, այն միակ վերապահությամբ, որ Սրբավայրերում հաստատվի միջազգային վարչակարգ:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, ff. 19-20).

187

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 206: Խիստ զաղտնի:

Պետրոգրադ, 12-ը մարտի 1916 թ., ժ. 14.30-ին:

Համաձայն մասնավոր զաղտնի տեղեկության, ես հավաստի եմ համարում, որ պ. Սազոնովն ուսումնասիրում է Քրդստանի փոխարեն Սվազի շրջանը Ֆրանսիային առաջարկելու հնարավորությունը:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, f. 22).

188

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ պ. Երվանդ Աղաթոնին

Ն:

[Պատճենը]:

Փարիզ, 12-ը մարտի 1916 թ.:

Ես ստացա ընթացիկ ամսի 8-ի ձեր նամակը, ինչպես նաև Ամերիկայի նախարարի՝ 75000 ֆրանկի հանձնարարագիրը և այն նամակի պատճենը, որը դուք գրել եք նախարարին:

Դուք ինձ ասում եք, որ խնդրել եք նախարարին փողը փոխանցել հեռագրով և ավելացնում եք, որ նրան խնդրել եք նամակն ուղարկել դիվանագիտական գրագրություններն առաքող փոստով, որը դժբախտաբար Կոստանդնուպոլսի հետ չի գործում, և որ դուք վախենում եք, թե նամակը կարող է հափշտակվել: Դժբախտաբար դա ստույգ է և այդ վտան-

գից կարելի կլիներ, անկասկած, խուսափել, եթե դուք անտեղի չգրելիք այդ մանրամասն երկար նամակը, որի բովանդակությունը հնարավոր չէր հաղորդել հեռագրով: Այն պահին, երբ նախարարը փողը փոխանցել է հեռագրով, նրան բավական կլիներ ծածկագրված ճեպագրում (քանզի նա պետք է, անտարակույս, ծածկագիր ունենա) արտացոլել իմ անձնական ճեպագրի էական մասը և ասել, որ գումարի մեկ երրորդ մասը պետք է բաշխվի Հալեպում Ամերիկայի հյուպատոսի¹ միջոցով, իսկ երկու երրորդը՝ հանձնվի Կոստանդնուպոլսի պատրիարքին²: Ինչ վերաբերում է իրավիճակին ընդհանուր առմամբ առնչվող տեղեկություններին, որոնք դուք պահանջել եք, դրանք իհարկե մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեզ համար, բայց կարող են դառնալ մեկ այլ մամակի մյուս, առանց այդ հարցն առնչելու փողի առաքմանը. որը մենք հենց նոր ենք արել: Ես կարծում եմ, ի դեպ, որ Ամերիկայի նախարարը պետք է վարվի հենց այս ձևով, այն է՝ փողի հանձնմանը վերաբերող իր ճեպագրում ճշգրտի դրա գործածությունն ու բաշխումը Հալեպի հյուպատոսի և պատրիարքի միջև:

Ես շնորհակալական նամակ կգրեմ Ամերիկայի նախարարին, որը ձեզ կուղարկեմ երկու կամ երեք օրից, որպեսզի դուք կարողանաք այն նրան հանձնել անձամբ:

Ես Ամերիկայի մեր հայրենակիցներից մի շատ հետաքրքիր նամակ ստացա, որով ինձ հայտնում էին, որ Վաշինգտոնի պետական Դեպարտամենտի միջնոլորտյամբ իրենց հաջողվել է հաղորդակցվել Կոստանդնուպոլսի պատրիարքի հետ, և որ պատրիարքը գաղտնաբար նրանց է ուղարկել իր հանձնարարությունները, որոնց պատճենը ես ձեզ եմ հանձնում սրան կից և որն, անկասկած, դուք կընթերցեք հետաքրքրությամբ: Դուք կտեսնեք, որ նա մեզ, մասնավորապես, խորհուրդ է տալիս ձեռնպահ մնալ որևէ ցուցադրական քայլից, որը կարող է թուրքերի համար նոր վրեժխնդրությունների առիթ ծառայել, մի բան, որից մենք, ի դեպ, միշտ խուսափել ենք: Դժբախտաբար մեր բոլոր հայրենակիցները չէ, որ այդ հասկանում են և շարունակում են անգողաշրթուններ բոլոր տալ, որոնց համար ես միայն զղջում եմ: Ես վստահ եմ, որ նրանց խանգարելու համար դուք ձեր կողմից կգործադրեք բոլոր ջանքերը: Ահա թե ինչու ես ցանկություն ունեցա ձեզ հաղորդել մեր պատրիարքի հանձնարարությունները, որպեսզի դուք կարողանաք հիմնվել դրանց վրա, պահելով դրանք, բնականաբար, գաղտնի, ինչպես պատրիարքն է իր հեռագրում հանձնարարում:

Հավատ տածեք, իմ թանկագին Աղաթոն, իմ լավագույն զգացմունքների հանդեպ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 17-17 v).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Պետական Դեպարտամենտը՝ Վորքեստերի հայերի պրելատ, պատվելի հայր Արսեն Վեհունուն

Ն: Պատճենը:

Վաշինգտոն, 8-ը փետրվարի [1916 թ.]:

Սըր,

սույնով ձեզ է փոխանցվում Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպանի այնպիսի մի տե-

1 Պ. Ջաքսոնը:

2 Նոբին սրբազնություն Ջավեն Տեր-Եղիայանը:

ղեկութիւնն պարունակող հեռագրի վերաշարադրանքը, որը հայոց պատրիարքը¹ պահանջում է ձեռնարկի վիճակում: Թուրքիայից դուրս ապրող հայերի համար: Հեռագրի վրա նշված է՝ «խիստ զաղտնի», որը, հավանաբար, նշանակում է, թե հայոց պատրիարքը ցանկութիւնն ունի հանրութիւնից զաղտնի պահել, որ այդ կրահանգներն անձամբ իրենից են ելնում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 18).

II

Պ. Մորզենթաուի հեռագրի ամփոփումը

Պատճենը:

Ավաա:

1916 թ. հունվարի 26-ի թվակիր հեռագրով, Թուրքիայում ամբիկյան դեսպանը հավատում է, որ համաձայն հայոց պատրիարքի պահանջի՝ Միացյալ Նահանգներում ապրող հայերին հարկ է հաղորդել հետևյալը.

1/ Նրանք պետք է, հնարավորության սահմաններում, առատաձեռնորեն աջակցեն օգնության այն դրամական միջոցներին, որոնք բաշխվելու են միսիոներների միջոցով և այն դրամական միջոցներին, որոնք բաշխվելու են պատրիարքարանի միջոցով՝ պատրիարքարանի և հայ ժողովրդի միջև ներքին կապերը պահպանելու նպատակով: Դրամական միջոցները կարելի է պատրիարքարանին հանձնել՝ Կոստանդնուպոլսում ամբիկյան դեսպանության միջոցով:

2/ Այլ երկրներում բնակվող հայերը պետք է ձեռնպահ մնան Թուրքիայի հայերի ապահովությունը և կյանքը վտանգի ենթարկելու բնույթ կրող հրապարակային հայտարարություններից ու ցույցերից:

3/ Աշխարհում ցրված հայերը պետք է մշտապես դիմեն Թուրքիայի դաշնակիցների և չեզոք երկրների մարդասիրական զգացմունքներին՝ Թուրքիայի հայերի կյանքն ապահովելու աջակցելու համար, մինչ կրկին վրա հասնեն խաղաղ ժամանակները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 19).

189

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արխստիդ Բրիանին

Հ. թիվ 210: Գաղտնի:

Պետրոգրադ, 13-ը մարտի 1916 թ., ժ. 17-ին:

Կայսրն ինձ ընդունեց կեսօրին Ցարսկոյե Սելյույում: Նա ինձ հայտնեց Վերդենի ճակատամարտի հետ կապված իր «բռն հետաքրքրության» և մեր բանակի հանդեպ տածած հիացմունքի մասին: Էրզրումում գրավված թուրքական դրոշները, որոնք հենց այդ նույն պահին նրան ներկայացրին, ինձ առիթ տվեցին նրան հավաստելու, որ ֆրանսիական հա-

¹ Ն (որին սրբազնություն) ն Ջավեն Տեր-Եղիայանը:

սարակական կարծիքն, իր հերքին, գնահատում է այն հաջողությունների ամբողջ կարևորությունը, որոնց ռուսական բանակը հասել է Ասիայում:

Կրկին անդրադառնալով Վերդենի ճակատամարտին, նա ինձ ասաց.

«Գեներալ Շաֆրի ստեղծարարությունը և ճարակությունը, ինչպես ինձ հավաստում են, նրան բոլոր են տվել խնայել իր պահեստային ուժերը: Այսպիսով, ես կարծում եմ, որ այս պահից հինգ կամ վեց շաբաթ անց մենք կկարողանանք գրոհ ձեռնարկել բոլոր ռազմաճակատներում միաժամանակ: Դժբախտաբար ձյունը, որը մի քանի օրից ի վեր անընդմեջ քափվում է, բոլոր չի տալիս ապավինել ավելի սեղմ ժամկետի: Բայց այն օրը, երբ իմ բանակը կարողանա տեղից շարժվել, վստահ եղեք, որ նա հարձակման կանցնի, հնարավորության սահմաններում, ամենամոլեգին ձևով»:

Ես պատասխանեցի, որ Վերդենի ճակատամարտն, իմ կարծիքով, պատերազմի ընթացքում նշանավորում է ճգնաժամային պահ, և որ գործողությունների վճռորոշ փուլը չի հապաղի հասնել: Ես դրանից եզրակացրի, որ դաշնակից կառավարությունները պետք է շտապեն կարգավորել միմյանց միջև դիվանագիտական նշանակալից հարցերը, որոնց լուծումը նրանք մտադիր են պարտադրել այն ժամանակ, երբ հնչի հաշտության ժամը:

«Ահա թե ինչո՞ւ.– շարունակեցի ես.– Չեղզ մեծության ամբողջ ուշադրությունը ես երավիրում եմ այն համաձայնության վրա, որը ֆրանսիական ու բրիտանական կառավարությունները հենց նոր են կայացրել Փոքր Ասիայի շուրջ և որի մասին պ. Սազոնովը վաղը ձեզ հաղորդելու է: Ես չեմ կասկածում, որ Հանրապետության կառավարության օրինական պահանջները ձեր կառավարության կողմից քննարկվելու են ամենալիբերալ ոգով»:

Եվ ես նրան ներկայացրի համաձայնության ընդհանուր գծերը: Նա ինձ իսկույն ևեք առարկեց Հայաստանի ապագա կազմավորման հարցում:

«Սա ամենաբարդ խնդիրներից է.– ավելացրեց նա.– որը ես դեռևս չեմ քննարկել իմ նախարարների հետ: Անձամբ ես չեմ երազում որևէ նվաճման մասին Հայաստանում, բացի Էրզրումից և Տրապիզոնից, որոնց տիրանալը Կովկասի համար ռազմավարական անհրաժեշտություն է: Ի դեպ, ես չեմ վարանում ձեզ խուսափելու, որ քննարկման ընթացքում հարցին կմոտենան լիբերալ դիպրերից, մոտեցում, որը Ֆրանսիան պետք է Ռուսաստանի նկատմամբ նրան զիջելով Կոստանդնուպոլիսը, և որի համար ես նրան խիստ երախտապարտ եմ»:

Ես կրկին համառեցի վճռի հրատապության հարցում.

«Հաշտության պահին դաշնակիցները վերին աստիճանի գորեղ կլինեն Գերմանիայի համեմատությամբ, եթե նրանք նախօրոք վճռեն բոլոր հարցերը, որոնք իդի են նրանց տարանջատելու հեռանկարով: Կոստանդնուպոլիսի հարցը, Պարսկաստանի հարցը, Տրանսիլվանիայի հարցը, Ադրիատիկի հարցը՝ այս պահից ի վեր լուծված են: Շտապենք լուծել Փոքր Ասիայի հարցը»:

Ինձ քվսց, որ կայսրը զգայուն գտնվեց այս դատողության նկատմամբ և ինձ վստահեցրեց, որ հաջորդ օրն ինքը դրանով կառաջնորդվի պ. Սազոնովի հետ իր գրույցի ընթացքում: Նա երկարաձեղ ընդունելությունը մի փոքր ավելի, վերիիշելով այս պատերազմի ծանր ժամերը: Նրա վերջին բառերից էին.

«Ես կարծում եմ, որ Ֆրանսիան չի վարանի մեծ փոխհատուցումներ ստանալ գերմանական տարածքից»:

(A.M.A E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, ff. 23-24 v).

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ
Քրիանը՝ Ռ-ազմածովային նախարար, դերծովակալ Լակագին**

Ճ. քիվ 638:

Փարիզ, 15-ը մարտի 1916 թ.:

(Ստացել են Կաբ. մարտի 19-ին,
Գ-իլիսավոր} 2 {տաքի} 4-րդ ենթաբաժինը
մարտի 23-ին):

Ես պատիվ ունեմ այս ծրարով ձեզ փոխանցել այն նամակի պատճենը¹, որն իմ Դե-պարտամենտին է հղել Կահիրեում Ֆրանսիայի նախարարը՝ Մուսա լեռից տեղափոխված և Պորտ-Սալդում տեղափոխված մարտունակ հայերին իբրև մարտիկների օգտագործելու հարցի առնչությամբ:

Ինձ թվում է, որ պ. Դեֆրանսի եզրակացություններն արժանի են մեր հավանությանը, քանզի լավագույն ձևով են պատասխանում այն հնարավոր դիպվածներին, որոնք կարելի է կանխատեսել մտքերի այս շարանում: Իմ կարծիքով, իրոք որ, բարձր հրամանատարության իրավասությունների շրջանակներում է, եթե նա այդ նպատակահարմար է գտնում, հայերի արիությունը և ընդունակությունները՝ հանուն ընդհանուր շահերի լավագույն ձևով օգտագործելը, առանց կանգ առնելու այն բանասարկությունների առջև, որոնց այս դժբախտ մարդիկ միշտ հակված են տրվելու:

(A.C.M., SS Ed 125).

191

**Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Քրիանին**

Հ. քիվ 214: Գաղտնի:

Պետրոգրադ, 15-ը մարտի 1916 թ., ժ. 14.30-ին:

Պատասխան ձեր քիվ 436 և 438 հեռագրերին²:

Արտաքին գործերի նախարարը հենց նոր ինձ հայտնեց, որ կայսրական կառավարու-թյունը հավանություն է տալիս այն համաձայնությանը, որը կայացվել է Փարիզի և Լոնդո-նի նախարարների խորհուրդների միջև Փոքր Ասիայի հարցի շուրջ, բացառությամբ Բրդստանի հարցի, որը, ինչպես նաև Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի տարածաշրջանները, Ռուսստանը ցանկանում է զավթել: Դրա փոխարեն, պ. Սազոնովը Հանրապետության կառավարությանն առաջարկում է ֆրանսիական գերիշխանության ներքո դնել Դիարբեքիլի, Խարբեռլի, Սվազի և Ազիզիեի տարածաշրջանները:

Ստանալով այս առաջարկությունը, ես պարզորոշ մատնացույց արեցի Հանրապետու-թյան կառավարության նախնական պահանջը:

¹ Փետրվարի 10-ի. վերև արտատպվել է քիվ 175 փաստաթղթում:

² Արտատպված չեն:

Ես վստահելի սկզբնաղբյուրից գիտեմ, որ կայսրական կառավարությանը մի անգլիացի լիազոր ներկայացուցիչ է դրդել դեպի այն նոր համակցությունը, որի վրա նա կանգ է առել: Այն քարտեզի վրա, որը պ. Սազոնովն ինձ ցույց տվեց, և որը նա երեկ կայսրին է հանձնել, կային սըր Մարկ Սայքսի ձեռագիր ծանոթագրությունները: Բրիտանական կառավարությունն այսպես է ըմբռնել իր պարտականությունը, որը հանգում է ռուսական կառավարության առջև՝ Հանրապետության կառավարության հետ իր կատարյալ համաձայնությունը հավաստելուն:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, ff. 25-25 v).

192

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանություն գործուղված պ. Ժորժ-Պիկոն՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին

Ն:

Պետրոգրադ, 17-ը մարտի 1916 թ.:

Մեր բանակցություններն անգլիացիների հետ զոհացուցիչ նախապայմաններով զրեթե ավարտին հասցնելուց հետո, Խորհրդի նախագահը խնդրեց ինձ մեկնել Պետրոգրադ՝ ռուսների համաձայնությունը ձեռք բերելու համար: Եվ ահա թե ինչպես է ընթանում իմ այցը Ռուսաստանում: Բանակցություններն, ի դեպ, առաջ ընթացան գերազանց ձեռք և եթե Փարիզից ինձ ուղարկեն այն պատասխանը, որն ակնկալում եմ, ես կկարողանամ հաջորդ շաբաթ վերադառնալ Լոնդոն, զոհ լինելով ձեռք բերված արդյունքներից: Կոնա ստանալ արաբների համաձայնությունը կայացված գործարքին և համոզել նրանց գործելու բուրբերի դեմ: Ինձ չի թվում, որ այդ ամենամիակ բարությունն առաջադրանք է և մինչ նպատակին հասնելը, ես կանխատեսում եմ դեռևս շատ դժվարություններ: Բայց այս գործում կառավարությունն իմ նկատմամբ ցուցաբերել է այնպիսի վստահություն և ընձեռել այնպիսի ազատություն, որ ես հաջողության հասնելու մեծ հույսեր ունեմ:

Նախքան Լոնդոնը թողնելը, ես առաջադրեցի այնպիսի մի նախագիծ, որը կազմավորում էր երկու տարածաշրջաններ ընդգրկող ընդարձակ Ֆրանսիական Սիրիա: Դրանցից մեկն ամբողջությամբ զիջվում էր Ֆրանսիային իբրև տիրույթ, մյուսը՝ մնում իբրև արաբական կայսրության անքակտելի մաս, էմիրների մոտ գտնվող ֆրանսիացի գործակալներով հանդերձ և մեր տնտեսական ու ֆինանսական մենաշնորհի հաստատմամբ: Առաջին տարածաշրջանը սկսվում էր Սեն-ժան-դ'Ակրի հյուսիսից, ընդգրկելով Լիբանանը, Անդրլիբանանը*, Կիլիկիան՝ մինչ Անամուրի իրվանդանը: Այնուհետև՝ սահմանները ձգվում էին Տավրոսով և Անդրտավրոսով, անցնում Դարբենդի հարավով, մասամբ՝ Արլանա-Մադենի հյուսիսով և Բիրլիսի ու Վանի հարավով՝ մինչ Պարսկաստանի սահմանը: Սահմանները թողնում էին Պարսկաստանն արևմտյան կողմում՝ Մերգա-Վարի գծի վրա, ձգվում Ամադիայով, Մարլինով, Ուրֆայով, Բիրջիկով, Քիլիսով և հասնում Լիբանանին:

Երկրորդ գոտին սկսվում էր Ալ Դադի հյուսիսից: Նրա սահմանը ձգվում էր Փոքր Զաբով, կտրում անցնում Եփրատը Վերդիի [sic] մոտ, հարավից շրջանցում Հարանը՝ վարելահողերի սահմանագծում և վերջնակետին հասնում Տիբերիաղ լճի մոտ:

Անգլիացիները ձեռք կբերեն Իրաքը՝ Բասսորահով և Բաղդադով հանդերձ, ինչպես նաև

* Նկատի ունի Սիրիայի հարավ-արևմտյան ստրաջանը: - Ծ. թ.:

մեր գոտուց հարավ գտնվող պատսպարման գոտին և Կալֆան* իբրև ռազմավարական գծի վերջնակետ: Պաղեստինը դրվում էր միջազգային վարչակարգի ենթակայության ներքո, որը պետք է հաստատվեր: Ի՞նչ կարծիքով, այստեղ գումարված կոնֆերանսների ընթացքում այս նախագիծը ենթարկվել է հիմնարար փոփոխության և բարելավման:

Եթե ռուսները, ընդհանուր առմամբ, հավանություն են տվել Լոնդոնում կայացված համաձայնությանը, նրանք անողոր ղիմադրություն են ցուցաբերել մեր հաստատմանը Բիթլիսի ու Վանի հարավում և Քրդստանի նեստոլյան շրջանում: Այսպիսով, մենք պետք է զիջենք: Բայց դրա փոխարեն, մեզ մեծ փոխհատուցումներ են հատկացվել Ռոմանական Հայաստանում** և մեր տիրույթները կարող են ձգվել մինչ գրեթե Կեսարիա՝ ընդգրկելով Սվազը և Խարբերդը: Քանի որ այս ամենն արվել է առանց Փարիզից ստացված որևէ հրահանգի, ես, ի դեպ, չգիտեմ, թե այդ մասին ի՞նչ կմտածեն: Հավանություն ստանալու համար, ես հարկ կունենամ, հավանաբար, համառելու: Ի դեպ, ես վճռել եմ դիմել դրան: Ստիպված կլինենք վավերացնել այս փոփոխությունները Լոնդոնում և պաշտոնական ստորագրություններ փոխանակել: Այս ամենը դեռևս մախնական բնույթ է կրում և կարևոր է, որ ոչ մեկը Եզիպտոսում, մասնավորապես, հայերի շրջանում, չկարողանա այդ մասին կասկածներ տածել:

Դուք կռահում եք, թե ես ինչպիսի շահագրգռվածություն եմ դրսևորել այս գործում, որի պատճառով ուղղակիորեն առնչվել եմ Հանրապետության նախագահի և նախարարների հետ: Այժմ, իմ երազած Սլիլիան սկսում է ձևավորվել, և ես կանխատեսում եմ այն պահը, երբ այն կգտնվի իրականության վերածվելու ուղու վրա:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Defrance*, carton 1).

193

Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության հաղորդագրությունը Ֆրանսիայի դեսպանությանը

Հունիսի

[Պատճենը]:

Պետրոգրադ, 4/17-ը մարտի 1916 թ.:

Քանի որ Փոքր Ասիայում և Արաբիայում տարբեր գոտիներ ստեղծելուն վերաբերող անգլո-ֆրանսիական նախագիծը հանձնվել է այդ նպատակով գործող հանձնաժողովի քննարկմանը, դրան առնչվող կարծիքների փոխանակությունը ներկայումս պետք է հանգի ընդհանուր սկզբունքների քննարկմանը:

Այսպիսով.

1/ Ռուսական կառավարությունը պետք է պատրաստ լինի հայտարարել իր կատարյալ անշահախնդրությունը՝ Ամաղիա-Իբն Օմար-Դիարբեքիլ-Սամսատ-Մարաշ-Աղանայով անցնող գծից հարավ ընկած տարածաշրջանի նկատմամբ և առանց դժվարության ընդունել յուրաքանչյուր համաձայնություն, որն այս առթիվ կարող են կայացնել Ֆրանսիան և Անգլիան:

* Իսրայելում գտնվող Հայֆա քաղաքի նախկին անվանումը: – Ծ. ք.:

** Խոսքը վերաբերում է Կիլիկիային: – Ծ. ք.:

2/ Նա համառորեն պնդում է Բիթլիսի անցումները և Ուրմիա լճի տարածաշրջանը ուսական գոտում ընդգրկելու անհրաժեշտության վրա և դրա փոխարեն առաջարկում Ֆրանսիային զիջել՝ Սվազ-Խարբերդ-Կեսարիայի միջև ընկած Փոքր Հայքի տարածքը:

3/ Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա ռուսական կառավարությունը կհարի յուրաքանչյուր նախագծի, որն ընդունակ է Սուրբ հողում գտնվող բոլոր ուղղափառ հաստատությունների համար ապահովել ժամերգության անարգել կատարումը, ինչպես նաև ձեռք բերված իրավունքների և արտոնությունների պահպանումը և որևէ սկզբունքային առարկությամբ հանդես չի գա երկրում իսրայելցի նորաբնակների ներթափանցման դեմ:

4/ Առանց ասելու պարզ է, որ Ռուսաստանի համաձայնությունը նախորդ կետերին պայմանավորված է Կոստանդնուպոլսին և նեղուցներին վերաբերող՝ Ֆրանսիայի և Անգլիայի հետ նրա համաձայնագրի կենսագործումով:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologie*, tome 3, f. 27)

194

Եգիպտոսի հայերի պրելատ, Ն{որին սրբազնություն}ն Թորգոմ Քուշադյանը՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոյին

Ն. քիվ 3010:

Կահիրե, 17-ը մարտի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ ներկայացնել սրան կից այն նամակը, որը Հայկական պատվիրակության նախագահ, Նորին գերագանցություն Պողոս Նուբար փաշան իմ միջնորդությամբ ձեզ է հղում, որը ես հենց այսօր եմ ստացել:

Ինչպես ձեզ խոստացել էի իմ վերջին այցելության ժամանակ, որը պատիվ ունեցա անել Պորտ-Սալդում, ես նրան այնուհետև գրեցի, հարցնելով, թե ի՞նչ է այժմ նա մտածում Պորտ-Սալդում գտնվող և զենք կրելու ունակ մեր գաղթականներին օգտագործելու մասին, այն է՝ արդյոք նա պետք է կազմավորի առանձին հայկական ջոկատներ, թե կգերադասի նրանցով համարել դաշնակիցների զորքերը:

Նա հենց մոր աղյսի էլ վարվել է, ինչը բխում է իմ հիշատակած նամակի առթիվ գրված նրա պատասխանից, ձեզ ուղղակիորեն ներկայացնելով իր կարծիքն այդ հարցում, որը միաժամանակ համընկնում է իմ կարծիքին [sic]:

(A.C.M., SS S a 47).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար,
փոխծովակալ Մորոյին

Ն.:

Փարիզ, 8-ը մարտի 1916 թ.:

Ն{որին} շ{նորհություն}, Ն{որին} սրբազնություն, Եգիպտոսի հայերի եպիսկոպոս

Թորգոմն ինձ գրում է, որ այն այցելության ընթացքում, որը մտ Պորտ-Սախոյում ձեզ է կատարել, դուք ցանկություն եք հայտնել իմանալու նրա և մեր ազգային կոմիտեի կարծիքն այն մասին, թե ինչպե՞ս պետք է օգտագործվեն ձեր հրամանատարության ներքո գտնվող սպաների բարեհաճ և ազնվաբար օգնության շնորհիվ ռազմական ուսուցում ստացող հայերը, գիտենալու, թե արդյոք նրանք պետք է կազմավորեն հատուկ ջոկատներ, թե՞ գերադասելի է նրանց ցրել Ֆրանսիական գնդերում:

Ինչպես ես ձեզ պատիվ եմ ունեցել ներկայացնել, պարոն ծովակալ, մենք՝ հայերս, այժմ մեծ անզգասություն կգործենք, կրկին կազմավորելով հայ կամավորների մոր տարանջատ ջոկատներ, երբ մենք տեսել ենք այն հետևանքները, որոնց հանգեցրել է Հայաստանում մման ջոկատների առաջին կազմավորումը, որը թուրք կառավարիչներն օգտագործել են դաժան վրեժխնդրությունների համար: Նրանք չեն զլանա ևս մեկ անգամ միևնույն ձևով գործել, և մենք դրանով ամենասարսափելի վտանգների կենթարկենք կենդանի մնացած դժբախտ հայերին, որոնք՝ Թուրքիայի հայկական մահանգներում սոսկ իբրև պատանդների, դեռևս գտնվում են նրանց տիրապետության ներքո: Միակ վճիռը, որը հարկ է կայացնել, միակը, որը պարտադրվում է. այն է, որ բոլոր զենք կրելու ունակ հայերն ընդգրկվեն դաշնակիցների գործերի կազմում և նրանց ռազմարշավային կորպուսների մասը կազմեն: Ի դեպ, սա նրանցից մեծ օգուտ քաղելու լավագույն եղանակն է, և եթե օրերից մի օր Փոքր Ասիայում դեսանտ ափ դուրս բերվի, նրանք կայող են խիստ օգտակար լինել լեզվի և երկրի իրենց իմացությամբ:

Ես բաժանում եմ. այսպիսով, Նորին սրբազնություն Թորգոմի կարծիքը, և ինչպես նա ձեզ այդ մասին իրազեկ է դարձրել, Նորին սրբազնություն կաթողիկոսի և իմ այն բոլոր հայրենակիցների համաձայնությամբ, որոնք իրենց երկրի բուն շահերի համար պատասխանատվություն են կրում և մտևս հոգված են դրանցով, ես չեմ վարանում ձեզ հայտնել, որ մենք ցանկանում ենք ձեր հոգածությամբ ուսուցում ստացած բոլոր հայերին տեսնել ձեր դրոշների ներքո ծառայելիս, ցրված ձեր գնդերում, բայց ոչ մի դեպքում՝ առանձին հայկական ջոկատներ կազմավորելիս:

Շտապ օգուտվելով ներկայացված առիթից՝ ևս մեկ անգամ ձեզ վկայելու համար մեր ամենախորին և անհողողող երախտագիտության հավաստիքն այն ամենի համար, ինչ որք արել եք և շարունակում եք անել ի նպաստ հայերի, ես ձեզ խնդրում եմ ընդունել, պարոն ծովակալ, իմ շատ խորին հարգանքի մասին վկայող զգացմունքների մոր դրսևորումը: (A.C.M., SS S a 47).

195

**Եգիպտոսում բրիտանական ռազմարշավային ուժերի գլխավոր
հրամանատար, գեներալ Մուրրեյը՝ Միջերկրական ծովի
3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերծովակալ դը Սպիտզին**

Ճ. քիվ I.168/16: Գաղանի:

Իսմայիլիս, 22-ր մարտի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ կատարելապես համաձայն եմ այն նախագծի ազնվաբար սկզբունքների հետ, որը կազմվել է ու ներկայացվել Ֆրանսիական և անգլիական տեղեկատվական բյուրոների սպաների կողմից և նպատակ ունի Միլիայում ափ

դուրս բերել մի խումբ հայերի: Պայմանագրի մանրամասները, որոնք հարկ է նախապատ-
րաստել և համաձայնեցնել խմբի ղեկավարի հետ, որքան ես հասկանում եմ, դեռևս ենթա-
կա են այնպիսի փոփոխությունների, որոնք դուք նպատակահարմար կգտնեք:

Երբ դուք ի վիճակի լինեք իրականացնելու այս նախագիծը, ես ձեզ խիստ երախտա-
պարտ կլինեմ, եթե բարեհաճեք ինձ տեղեկացնել այդ մասին:

(A.C.M., SS S 8).

196

Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը՝ Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգին

Ճ. թիվ 118:

Փարիզ, 23-ը մարտի 1916 թ.:

Հայերի՝ Էջմիածնի (Վաղարշապատի) կաթողիկոսն ինձ է հղել մի նամակ², որի պատ-
ճենը դուք կգտե՞նք սրան կից, և որտեղ մա ինձ է հայտնում այն ցանկությունները, որոնք
փայփայում է հանուն դաշնակից տերությունների բանակների հաղթանակի:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք ապահովեք սրան կից Նորին սրբազնություն
Գևորգ V-ին ուղարկվող ծրարի փոխանցումը, որը պարունակում է իմ պատասխանը նրա
հաղորդագրությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 22).

ՀԱՎԵԼՎԱԾ

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Ամենայն հայոց գերագույն պատրիարք և կաթողիկոս, Նորին սրբություն, Նորին սրբազնություն Գևորգ V-ին

Ն:

Փարիզ, 21-ը մարտի 1916 թ.:

1915 թ. հոկտեմբերի 5/18-ի յո նամակով ինձ տեղյակ պահելով, որ ինքը բարեհաճել է
լիազորել Պողոս Նուբար փաշային՝ հայ ժողովուրդի շահերի պաշտպանության համար
Հանրապետության կառավարությանը ներկայացնելու իրեն, Չերդ սրբությունը կամեցել է
ինձ հայտնել այն ցանկությունները, որոնք տաժում է դաշնակից տերությունների բանակ-
ների հաղթանակի համար:

Հանրապետության կառավարությունը երախտագիտությամբ է ընդունել մեծ համակ-
րանքի այս վկայությունը, որի դրսևորումն այն պահին, երբ Սուրբ Էջմիածնի առաքելա-
կան մատավայրը ենթարկվել է մեծաթիվ դաժան փորձությունների, կարող է միայն առա-
վելագույնս գնահատվել այն երկրների կողմից, որոնք այս պահին միասնաբար պայքա-

1 Ստորագրել է պ. դր Մարժերին:

2 Տես վերը թիվ 129 փաստաթուղթը:

րում են հանուն իրավունքի, արդարության և մարդկության պատվի գործի:

Չերո սրբությանը հայտնի է, թե ինչպիսի վշտալից հուզմունքով է Ֆրանսիան բաժանել քաղաքակիրթ ժողովուրդների դժգոհությունը, երբ մեզ է հասել այն հալածանքների լուրը, որոնց նոր զոհերն էին դարձել Թուրքիայում ապրող հայերը: Ամեն անգամ, երբ ներկա հանգամանքներում Հանրապետության կառավարությունը հնարավորություն է ունեցել արգասավոր ձևով նրանց վկայել իր հոգատարությունը, նա ջանացել է նրանց օգնության հասնել և նրանց դժբախտ ճակատագրի դաժանությունը մեղմացնել: Չերո սրբությունը կարող է վստահ լինել, որ իր դաշնակիցների համաձայնությամբ, ելնելով միևնույն զգացմունքներից, նա կքննարկի, այն օրինական հատուցումների հարցը, որոնք պետք է հատկացվեն հայ ժողովրդին, երբ իրավարձությունները բույլատրեն այդ անել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 20-21).

197

Եգիպտոսի հայերի պրելատ, Ն{որին սրբազնություն}ն Թորգոմ Քուշաղյանը՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ դը Սպիտզին

Ն. քիվ 3128:

Կահիրե, 25-ը մարտի 1916 թ.:

Ես հենց նոր ստացա այ. ծովակալ Մորոյի մարտի 20-ի Բվակիր նամակը, որով նա ինձ տեղեկացնում է, որ իր մեկնելու պատճառով, ձեզ է փոխանցել Հայկական ազգային պատվիրակության նախագահ, Ն{որին} զ{երազանցություն} Պողոս Նուբար փաշայի՝ Պորտ-Սալոյի հայ կամավորների օգտագործմանը վերաբերող նամակը:

Ես օգտագործում եմ այս առիթը ձեզ հայտնելու իմ ամենաանկեղծ ցանկությունները հանուն ձեր նոր առաքելության ի կատար ածման և ելնելով մեր դժբախտ հայրենակիցների շահերից, որոնք շատ դաժանորեն են տառապել, ինձ քույր եմ տալիս ձեր բարեհաճ ուշադրությունը իրավիճել ձեզ հղված հաղորդագրության արտահայտությունների վրա:

Ինձ հայտնել են, որ նախատեսվում է այս կամավորների մոտալուտ մեկնումը, և ես համարձակվում եմ մեծապես հուսալ, որ նրանք կօգտագործվեն միայն այնպես, ինչպես այդ ներկայացվել է Ազգային պատվիրակության նախագահի նամակում, այն է՝ կընդգրկվեն դաշնակիցների գործերում և ոչ թե կամավորական առանձին ջոկատներում, մի բան, որը կհանգեցնի ծանր և սարսափելի հետևանքների՝ դեռևս Թուրքիայում գտնվող կենդանի մնացած դժբախտ հայերի համար, որոնք, քուրբերի ձեռքում իսկական պատանդներ են:

Այսպիսով, ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, երե դուք ինձ տեղյակ պահեք այն շարունակությանը, որը կտրվի օրինական երկյուղներից ծնունդ առած այս խնդրանքին:

Ես կրթությունս օրհնում եմ. պարոն ծովակալ, ձեր և բոլոր նրանց ազնվաբարտ ջանքերը, ովքեր հանուն իրավունքի և ազատության գործի հաղթանակի աշխատում են ձեր ենթակայությամբ ու խնդրում են ձեզ ընդունել հարգանքի իմ խորին հավաստիքը:

(A.C.M., SS S a 47).

**Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. թիվ 254: Գաղտնի:

Պետրոգրադ, 26-ր մարտի 1916 թ., ժ. 18.30-ին:

Պատասխան ձեր թիվ 484 հեռագրին:

Կատարյալ բարեկամական գրույցի ընթացքում ես Արտաքին գործերի նախարարին ներկայացրի այն տարբեր նկատառումները, որոնք ձեզ դրդել են ցանկություն հայտնել ընդգրկելու Պաղեստինը Ֆրանսիական Սիրիայի կազմում:

Որոշ տարակուսանքներ հայտնելով Անգլիայի հանդեպ՝ նա համաձայնվեց դրան, իբրև վերջերս սիրիական տարածաշրջանի հարցում՝ ֆրանս-անգլիական համաձայնության պայմաններին տրված հավանության շարունակություն: Այդժամ, ես նրան առաջարկեցի հետևյալ բանաձևը.

«Եթե Հանրապետության կառավարությունը Պաղեստինը Ֆրանսիական Սիրիայի կազմում ընդգրկելու շուրջ ստանա բրիտանական կառավարության համաձայնությունը, ապա ռուսական կառավարությունն այդ հարցում առարկություն չի ունենա»:

Պ. Սալոնովն ընդունեց այդ բանաձևն այն միակ պայմանով, որ Սրբավայրերի համար հաստատվի միջազգային վարչակարգ:

Նա ինձ խոստացավ, վերջապես, գաղտնի պահել մեր համաձայնությունը:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, ff. 30-30 v).

**Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. թիվ 276: Գաղտնի:

Պետրոգրադ, 1-ը ապրիլի 1916 թ., ժ. 16.30-ին:

Կայսրության զինվորական և ծովային իշխանությունները ներկայումս քննարկում են բռնագրավումների հարցը, որոնք Ռուսաստանը պետք է իրականացնի Փոքր Ասիայում:

Հավաստի սկզբնաղբյուրից ես տեղյակ եմ, որ նրանք համառորեն ձգտում են, որպեսզի Սև ծովի առափնյա շրջանը բռնագրավվի ներսոյալ Սիմոպլը, այն է՝ մինչ Դրիմի բարձունքը, մինչ այն կետը, ուր Սև ծովը շատ ավելի է նեղանում:

Այսպիսով, մեր՝ Դիարբեքիր-Սվազ-Սամսուն երկաթուղին վերջնակետին կհասնի ռուսական տարածքում և Թուրքիան ելք կունենա դեպի Սև ծով միմիայն 400 կիլոմետրի հասնող երկաթուղյամբ՝ Ինջե հրվանդանի և Սաքարիայի գետաբերանի միջև:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, f. 31).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը Ռ-ազմական նախարար, գեներալ Ռ-ոքին

Հ. քիվ 231: Գաղտնի:

6-ը ապրիլի 1916 թ.:

Դեպքանության խորհրդական պ. դը Ֆլորիոն իբրև գաղտնիք տեղեկացել է, որ մտա-
հոգված Հայաստանում բուրբերի կուտակումից՝ ռուսական կառավարությունը բրիտանա-
կան կառավարությունից պետք է պահանջում լինի Ալեքսանդրետում կազմակերպել ու-
շաղրությունը շեղող գործողություն, որպեսզի օսմանյան բանակների մի ստորաբաժանում
այս կողմում պահվի:

Մեծ դուքս Նիկոլայը պետք է հայտնում լինի իր երկյուղն այն առիթով, որ եթե այդ գոր-
ծողությունը տեղի չունենա, ապա՝ իր գործերը չեն կարողանա պահպանել իրենց գրաված
տեղանքը¹:

(A.M.G., 7 N 1282).

Ռուսաստանի դեպքանության հաշորդագրությունը Դեպարտամենտին

Փարիզ, 6-ը ապրիլի 1916 թ.:

Պ. Սագոնովը հեռագրում է, որ ըստ գեներալ Ալեքսեևի կարծիքի, Փոքր Ասիայում Ռու-
սաստանի ձեռք բերած ռազմավարական հաջողությունները շահավետ դարձնելու նպա-
տակով, հարկ է, մասնավորապես, խոչընդոտել բուրբերին, որպեսզի նրանք չկարողանան
գերազանցող ուժեր կուտակել և Կովկասի բանակի դեմ հարձակում կազմակերպել ու հա-
ջողության հասնել:

Ռուսական բարձր հրամանատարությունն արդեն մտածում է սեփական միջոցներով
այդ հնարավորությանը դիմակայելու մասին, բայց գտնում է, որ ռուսական բանակի հա-
մար դաշնակիցների օգնությունը կարող է խիստ գնահատելի լինել: Այդ օգնությունը կա-
րող է, մասնավորապես, հանգել Սալոնիկի կամ Եգիպտոսի խմբավորումներից դաշնակից-
ների ուժերի մի մասին Անատոլիայի կամ Սյրիայի ծովափնյա որևէ կետ, օրինակ, Ալեք-
սանդրետ կամ Յուսուպիլիք ուղարկելուն՝ իբրև դեսանտ ափ դուրս բերելու մտասաղրու-
թյամբ: Թվում է, թե այդ գործողությունը կարող է իրականացվել առանց Սալոնիկում կամ
Եգիպտոսում գտնվող դաշնակիցների բանակների գործին վնաս պատճառելու, եթե նկա-
տի ունենանք, որ սերբական բանակը տեղափոխվել է քաղկանյան թատերաբեմ, իսկ Թուր-
քիան հրաժարվել է եգիպտական ռազմալքավից: Ռուսական բանակների գլխավոր հրա-
մանատարի շտաբի պետը մեծ կարևորություն է տալիս վերը շարադրված ծրագրի իրա-
կանացմանը:

Պ. Սագոնովն ամբողջությամբ բաժանում է այս տեսակետը և հանձնարարում Փարի-
զում ու Լոնդոնում գտնվող ռուսական դեսպաններին դաշնակից երկու նախարարների
խորհուրդների ուշաղրությունն ամենայն լրջությամբ հրավիրել նշված նախագծի կարևո-

¹ Այս հարցի մասին, մասնավորապես, տես ստորև քիվ 207 փաստաթուղթը:

րության և այն շահավետության վրա, որը նրանք դրանից կարող են քաղել քե՛ր դաշնակիցների ռազմական ընդհանուր դրության տեսակետից և քե՛ր այն խնդիրների (այն ձևով, ինչպես դրանք արտացոլվել են նրանց համաձայնության մեջ) լուծումն արագացնելու առումով, որոնց դաշնակիցները հետամուտ են Ասիական Թուրքիայում:

Պ. Իզվոլսկին մեծապես երախտապարտ կլինի Հանրապետության Խորհրդի Նորին գերագանցությունն այ. նախագահին, Արտաքին գործերի նախարարին, եթե նա բարեհաճի իրեն տեղեկացնել ֆրանսիական կառավարության դիրքադրմանն այն հարցի շուրջ, որը նախարարում է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, ff. 158-158 v).

202

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը Հասարակական կրթության և գեղարվեստի նախարարությունում կաբինետի պետի տեղակալ պ. Ժան Բուրգուլինյոնին

Ն:

Փարիզ, 6-ը ապրիլի 1916 թ.:

Ես ձեզ եմ հանձնում «Էշո դը Պարիլի» համարը, որն ամփոփում է Հայաստանում կատարված վայրագություններին վերաբերող գերմանական մի փաստաթուղթ: Ես ձեզ եմ հանձնում նաև մեկ այլ զեկուցագրի՝ քարգմանությունը, ուրի հեղինակը Պաուլա Շաֆերն է (հավանաբար, ամերիկոսի միսիոներ): Երեկ ես ձեզ հանձնեցի տեղահանվածների ողբալի վիճակին վերաբերող մույն ամերիկոսու մեկ այլ զեկուցագրի քարգմանությունը: Ես այդ քարգմանությունը կատարել եմ հայերեն տարբերակից, որը լույս է տեսել Նյու Յորքի «Կոչնակ» շաբաթաթերթում: Վերջապես, ես ձեզ եմ հանձնում մի փոքր ծանուցագիր այն մասին, քե ճգնաժամի սկզբից ի վեր ի՞նչ եմ արել դաշնակիցներն ի նպաստ հայ ժողովրդի: Ձեր փաստաթղթերն, այսպիսով, ամբողջանում են: Այս բոլոր փաստաթղթերի քվում կան չորսը, որոնք ես կցանկանայի, որ այ. նախարարն ընթերցեր ամբողջությամբ: Դա «Հայաստանի ողբերգությունը» խորագիրը կրող մեքենագիր մի ծանուցագիր է, մեքենագիր և ձեռագիր մի փոքր գրություն, որը ես այսօր եմ բերում, «Էշո դը Պարիլի» փաստաթուղթը և «Պտի ժուրնալի» փաստաթուղթը (քուրք գինվորի վկայությունը):

Հ. Գ. - Երեկ երեկոյան լույս տեսած «Տանում» ես գտա խիստ հետաքրքիր մի նոր փաստաթուղթ, որը վերաբերում է հույների դեմ կիրառված հալածանքներին: Այն հավաստում է երիտթուրքերի վաղօրոք մշակած՝ քրիստոնյաների բնաջնջմանը վերաբերող ծրագիրը, որի մասին ես երեկ երեկոյան խոսել եմ այ. նախարարի հետ: Նամակի հետ մեկտեղ, ես այդ փոքրիկ հոդվածն ուղարկում եմ այ. նախարարին՝ խնդրելով ձեզ նրան հանձնել այդ նամակը:

(A.N., 313 AP 111).

ՀԱՎԵԼՎԱԾ

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝ Հասարակական կրթության և գեղարվեստի նախարար պ. Պենկեին

Ն:

Փարիզ, 6-ը ապրիլի 1916 թ.:

Երեկ երեկոյան ես ձեզ ասում էի, որ երիտթուրքերն իշխանության գալու պահից ի վեր հողացել են ոչ քույր տարրերին ոչնչացնելու միջոցով կայսրությունը թուրքացնելու նախագիծ: Դուք այդ մասին հստակորեն նշված կգտնեք այն ծանուցագրում, որը ես հանձնում եմ պ. Բուրգյուլինյունին: Ադանայի կոտորածը դարձավ այս գաղտնի նախագծի իրագործման առաջին քայլը: Բայց երեկ երեկոյան լույս տեսած «Տանում», ես գտա վաղօրոք մշակված ծրագրի մի նոր և փայլուն ապացույց: Դրանք հույների դեմ կիրառված միջոցներն են (ես ձեզ եմ ուղարկում այդ փոքրիկ հոդվածը): Հույներն այնուամենայնիվ չեն ապստամբել թուրքական կառավարության դեմ և ոչնչով չեն օգնել «Թշնամուն»:

Թուրքը պարզապես ցանկանում է մաքրագարդել կայսրությունը քրիստոնյաներից:

(A.N., 313 AP 111).

203

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեղապետ դը Լա Պանուսը՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոքին

Հ. թիվ 233:

7-ը ապրիլի 1916 թ.:

Ես հենց նոր գրուցեցի լորդ Քլիքեների հետ այն քայլի շուրջ, որը բրիտանական կառավարությանն է արել Ռուսաստանը՝ թուրքական ուժերն այս կողմում զամելու և Կովկասի ռուսական բանակների վիճակը բարելավելու նպատակով գործերի տեղափոխումն Ալեքսանդրետ ապահովելու համար¹:

Լորդ Քլիքեներն ինձ ասաց, որ պատասխանում Ֆորին Օֆիսը հայտնել է, թե իր տրամադրության ներքո գտնվող գործերի սակավության պատճառով, նման բնույթի գործողությունն անհնար է: Ի դեպ, այն կհանգեցնի միայն ուժերի ցրմանը և այս պահին, երբ արևմտյան ռազմաճակատի դեմ կատաղի գրոհներ են կազմակերպվում, անհրաժեշտ է համախմբել դաշնակիցների բոլոր ուժերը. դաշնակիցների վերջին կոնֆերանսի ժամանակ Ռուսաստանի խնդրանքով վճիռ է կայացվել Սալոնիկում գտնվող անգլո-ֆրանսիական ուժերն այդտեղ պահելու մասին, և ռուսական լիազոր ներկայացուցիչներն այդ կոնֆերանսում որևէ խնդրանքով հանդես չեն եկել, որը վերաբերվեր Ալեքսանդրետում գործերի Իսթրաբերմանը՝ մեծ դուքս Նիկոլայի բանակների դեմ գործող թուրքական ուժերի կուտակմանը խանգարելու նպատակով:

(A.M.G., 7 N 1282).

¹ Այդ քայլի մասին տես վերը թիվ 200 վիստարությունը:

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Միջերկրական
ծովի 3-րդ էսկադրայի հրամանատարի ժպ, դերժովակալ դը Մայիտզին**

Կահիրե, 9-ր ապրիլի 1916 թ.:

Ներկայումս Փարիզում գտնվող Առաքել բեյ Նուբարը՝ Պողոս փաշա Նուբարի որդին, ինձ հանձնեց փոխժովակալ Մորոյին հղված նամակը¹, որը դուք կգտնեք սրան կից:

Այս նամակը, վերաբերվելով հայերի օգտագործմանն ընդհանրապես և գաղթական հայերի օգտագործմանը մասնավորապես, հետաքրքրություն է ներկայացնում հատկապես 3-րդ էսկադրայի հրամանատարի համար:

Այսպիսով, ես նամակը ձեզ եմ հղում, ձեզ քողմեղով ծանոթանալուց հետո այն իր հասցեատիրոջն առաքելու հոգսը:

(A.C.M., SS S 8).

205

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. քիվ 121:

Կահիրե, 9-ր ապրիլի 1916 թ.:
(Ստացել են Կաթ. մայիսի 3-ին,
Քաղ. վարչ. մայիսի 5-ին):

Իբրև Պորտ-Սաիդ գաղթած հայերի հնարավոր օգտագործմանը վերաբերող լից նախորդ քրթակցությունների շարունակություն, ես պատիվ ունեմ Ձերոյ գերագահությանը հղել սրան կից այն նամակի պատճենը, որը Փարիզից Պողոս փաշա Նուբարը հղել է 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխժովակալ Մորոյին:

Այդ նամակն ինձ է հանձնել Պողոս փաշայի որդին՝ Առաքել բեյը: Քանի որ փոխժովակալ Մորոն նշանակվել է 4-րդ էսկադրայի հրամանատար, ես նամակը հղել եմ Պորտ-Սաիդում նրան հաջորդած դերժովակալ դը Մայիտզին, խնդրելով նրան, ծանոթանալուց հետո, ուղարկել հասցեատիրոջը:

Այս նամակում Պողոս փաշան հստակորեն արտահայտվել է ոչ ի նպաստ որևէ ձևով Թուրքիայում հայերին օգտագործելուն: Նա պնդում է, որ այս կարծիքը, որը խարսխվում է բռնությունների մտավախության վրա, բաժանում է Կոստանդնուպոլսի պատրիարքը:

Բողոքովին վերջերս, անգլիական զինվորական իշխանությունը վճիռ էր կայացրել Պորտ-Սաիդի հարյուր հայերի՝ Ալեքսանդրետի շրջանում մի առաքելության իրականացման համար օգտագործելու մասին: Խոսքը վերաբերում էր Բաղդադի երկաթուղու բազմաթիվ կամուրջների պայթեցմանը և այդ հարձակումն անխուսափելի էր:

Վերջին պահին Կահիրեի հայ ուղղափառ եպիսկոպոսն՝ այս նախագծի կապակցությամբ բողոք է ներկայացրել զինվորական իշխանություններին, որը դրա

¹ 1916 թ. մարտի 22-ի. ստորև արտատպվել է քիվ 205 փաստաթղթի հավելվածում:

² Ն. խորին սրբազնություն } ն Թուրքում Քուշադյանը:

հետևանքով շրջանցվել է: Անգլիացիները, որոնք զինել ու մարզել էին Պորտ-Սաիդի մարտունակ հայերին և նրանցից շատերին ուսուցանել պայքուցիկ նյութերի գործածությունը, բավական դժգոհ են եպիսկոպոսի միջամտությունից, որի առջև նրանք, այդուհանդերձ, խոնարհվել են:

Այսպիսով, ռազմական նպատակով Պորտ-Սաիդի հայերին օգտագործելու հարցն այսօր ստացել է բացասական լուծում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 66-66 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Մորոյին

[Պատճենը]:

Փարիզ, 22-ը մարտի 1916 թ.:

Միայն այսօր ես ստացա վերջին փետրվարի 2-ի թվակիր այն նամակը, որը դուք բարեհաճել էիք հղել Կահիրեի հայկական կոմիտեին և որի առաքման մասին իմ որդին¹ հեռագրով ինձ էր հաղորդել: Քանի որ այս նամակը, որն ուղարկվել էր բրիտանական դեսպանության միջնորդությամբ, ինձ չէր հասել սահմանված ժամկետում և վախենալով, որ այն անհետացել է, ես հեռագրեցի իմ որդուն՝ խնդրելով ինձ ուղարկել դրա կրկնօրինակը: Այս կրկնօրինակն ինձ հասավ 24 ժամ ավելի վաղ, քան բնագիրը: Բարեբախտաբար այս հապադումը չհանգեցրեց որևէ խտրաշփոթի, քանի որ այն նամակում, որը ես պատիվ եմ ունեցել ձեզ գրել լմթացիկ մարտի 8-ին և որը Նորին սրբազնություն Թորգոմը, հավանաբար, ձեզ է հանձնել, նախապես պատասխանել էի այն հարցերին, որոնցով դուք մեր եպիսկոպոսին էիք դիմել և որոնց մասին վերջինս ինձ տեղեկացրել էր:

Ես ձեզ շնորհակալություն եմ հայտնում հարցն այսպիսի հստակությամբ բարձրացնելու համար, որով ինձ տեղեկացնում եք, որ կամավորների թիվը լինելով ոչ այնքան նշանակալից, չէր կարող որևէ հետաքրքրություն ներկայացնել դաշնակից տերությունների համար և քանի որ վերջիններս չեն կարողանում ստանձնել որևէ բարոյական պատասխանատվություն, նախընտրելի կլինի, որ այն ամբողջությամբ ստանձնելին հայ առաջնորդները՝ նկատի ունենալով այն պարագան, երբ հայ կամավորներից բաղկացած դեսանտի ավի դուրս բերումը թուրքերի կողմից տեղիք տա նահանգների հայ բնակչության նկատմամբ բռնությունների:

Այսպիսով, ես այսօր կարող եմ միայն հաստատել այն, ինչը պատիվ եմ ունեցել ձեզ գրել մարտի 8-ի վերոնիշյալ նամակում, առավել ևս, որ ավելի եմ համոզվել իմ կարծիքում, եթե դրա կարիքը կար, շնորհիվ մի հաղորդագրության, որին վերջերս ծանոթացա անողդակի ճանապարհով և որը Նորին երանություն Կոստանդնուպոլսի պատրիարքը² հղել է արտասահմանի բոլոր հայկական համայնքներին: Նորին երանությունը դրանով մեր հայրենակիցների ուշադրությունն է հրավիրում այն վտանգների վրա, որոնց ենթակա են կեն-

1 Առաքել բեյ Նուբարը:

2 Ն {որին սրբազնություն}ն Չավեն Տեր-Եղիսյանը:

դանի մնացածները և դեռևս թուրքական լծի ներքո հեծող հայերը, քանի որ ամեն մի գործողություն կարող է առլիք ծառայել նոր բռնությունների համար: Այսպիսով, ամենաբախանձազին խնդրանքով նա նրանց խորհուրդ է տալիս ձեռնպահ մնալ բանավոր կամ գրավոր ձևով քաղաքական գործողության դրող յուրաքանչյուր բնույթի նախաձեռնությունից և կարևոր չէ, թե ինչպիսի ցույցից: Այս հանձնարարություններն ամբողջությամբ համահունչ են իմ կարծիքին: Ուստի, այն հարցի շուրջ, որը մեզ զբաղեցնում է, արդյոք ես չե՞մ կարող կրկին այնդել, որ մենք պետք է թողնենք հայ կամավորների ջոկատներին առնչվող ամեն մի գաղափար և եթե կան հայեր, որոնք զենք կրելու ցանկություն ունեն և դրան ունակ են, ապա նրանք պետք է համախմբվեն դաշնակիցների դրոշների ներքո և նրանց կանոնավոր գնդերի մասը կազմեն:

Ես համոզված եմ, որ դուք հավանություն կտաք վարքագծի այն զգուշությանը, որը մեզ թելադրում են հանգամանքները և կրկին ձեզ հայտնելով իմ խորին երախտագիտությունը, խնդրում եմ ընդունել, պարոն ծովակալ, իմ խորին հարգանքի նոր հավաստիքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 67-67 v).

206

Պորտ-Սաիդում բրիտանական զինված ուժերի հրամանատար, փոխգնդապետ Էլզուրը՝ Միջերկրական ծովի 3-րդ էսկադրայի շտաբի պետին¹

Թիվ 4398/0:

Պորտ-Սաիդ, 10-ը ապրիլի 1916 թ.:

Անդրադառնալով ներկայումս ռազմական ուսուցում ստացող հայերին վերաբերող՝ մի քանի օր առաջ տեղի ունեցած մեր խոսակցությանը, կարո՞ղ եմ ես հարցնել, թե արդյոք դերժովակալ դը Սալիտգն այս հարցի կապակցությամբ կայացրել է որևէ պոշում: Ինչ վերաբերում է պատասխանին, ես չեմ ցանկանում ձեր վրա ճնշում գործադրել, բայց համոզված եմ, որ դուք ինձ կներեք, եթե հանդգնեմ ձեր վրա ազդել հայերի հարցում իմ կրած դժվարության պատճառով և այն պատասխանատվությամբ, որն ունեմ: Ես ձեզ մանրամասնորեն բացատրել եմ այդ պատասխանատվության իմաստը և չեմ կարող ասել, թե ժամանակի հետ այն նվազել է: Ճամբարում զենքերի առկայությունը ևս ինձ մտահոգության ոլորտ առիթ է տալիս:

Գոյություն ունի նաև ճամբարում մարդկանց շարունակաբար պահելու հետ կապված ծախսերի երկրորդական խնդիրը: Պարզ չէ, թե ո՞վ է ի վերջո հատուցելու այս ծախսը, բայց այդ ծանրությունը, հավանաբար, պետք է կրեն կամ Ֆրանսիան, կամ Մեծ Բրիտանիան: Ուստի, մեր բոլորի շահերին է համապատասխանում, եթե ռազմական կամ ռազմածովային պայմանները բույաատրեն, այդ ծախսի, հնարավորության սահմաններում, ավելի մեծ չափով կրճատուճի:

Թերևս դուք քարի կգտնվեք, որքան հնարավոր է արագ, որևէ ձևով ինձ պատասխանել:

(A.C.M., SS S 8).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝ Ռազմական նախարար, գեներալ Ռ-ոքին

Ճ. քիվ 2101:

Լոնդոն, 14-ը ապրիլի 1916 թ.:
(Ստացել է Կաբինետն ապրիլի 19-ին):

Բոլորովին վերջերս ես առիթ ունեցա հանդիպելու սրբ Մարկ Սայքսին, որը հենց նոր է վերադարձել Պետրոգրադից, ուր նա ուղեկցել է պ. Ժորժ-Պիլյոյին՝ ռուսական կառավարության հավանությանն արժանացնելու համար այն համաձայնագիրը, որը Սիլիայում և Միջագետքում ազդեցությունների ոլորտների վերաբերյալ կայացվել է ֆրանսիական ու անգլիական կառավարությունների միջև:

Սրբ Մարկ Սայքսը, որն ինչպես դուք գիտեք, և ես դրանում համոզված եմ, իր կյանքի մեծ մասն անց է կացրել Փոքր Ասիայում և սքանչելիորեն ճանաչում է այս տարածաշրջանի ժողովուրդներին, Պետրոգրադ կատարած իր այցելությունն օգտագործել է Կովկասի ռուսական բանակում՝ մեծ դուքս Նիկոլայի շտաբ գնալու և չորսից հինգ օր այնտեղ անցկացնելու համար:

Նա իր ճանապարհորդությունից վերադարձել է խիստ բարեհաճորեն տրամադրված այն խնդրանքների մկատմամբ, որոնք մեծ դուքսը, գեներալ Ալեքսեևի միջնորդությամբ, վերջերս հղել էր ֆրանսիական շտաբին՝ հասնելու համար այն բանին, որ դաշնակիցները դեսանտ ափ դուրս բերեն Ալեքսանդրետի շրջանում, որպեսզի թուրքական կարևոր ուժերը հեռացնեն այս կողմից և խանգարեն քանակով խիստ գերազանցող ուժերի կողմից՝ ռուսական բանակների հարձակման ենթարկվելու հնարավորությանը:

Ահա թե ինչպիսին են այն մտքերը, որոնք ինձ է ներկայացրել սրբ Մարկ Սայքսը: Մայիսի կամ հունիսի ընթացքում թուրքերը կկարողանան Երզնկա-Դիարբեքի շրջանում կենտրոնացնել խիստ կարևոր ուժեր, որոնց քանակը, ըստ սրբ Մարկ Սայքսի, հասնում է 350 կամ 400000 մարդու և որոնցով նրանք կկարողանան գրոհ ձեռնարկել շատ ավելի փոքրաքանակ ռուսական բանակների դեմ. վերջիններս ի վիճակի կլինեն նրանց ցուցաբերելու միայն թույլ դիմադրություն:

Թվում է, թե մեծ դուքսը կերկյուղի, որ չի կարողանա կանգնեցնել այդ բանակի առաջ-խաղացումը և ամռան ընթացքում ետ կնետվի ոչ միայն դեպի Թիֆլիս, այլև Կովկասից դուրս:

Օսմանյան բանակների այս հաղթարշավը կարելի կլինի խափանել միայն մեկ միջոցով՝ հարկադրելով նրանց հեռացնել իրենց ուժերի մի մասը՝ որևէ այլ կետում հարձակման դիմակայելու համար:

Ըստ գեներալ Ալեքսեևի միջնորդությամբ հաղորդված խնդրանքների, դաշնակիցների համար խոսքը կվերաբերվի Ալեքսանդրետում դեսանտ ափ դուրս բերելու փորձի: Բայց սրբ Մարկ Սայքսը, որը վերջին աշնանը Կիլիկիայում գործողություններ կազմակերպելու ջրմեռանդ կողմնակիցներից էր, գտնում է, որ այդ ռազմարշավը չի կարող ձեռնարկվել այս պահին, նախ՝ այն պատճառով, որ դաշնակիցներն իրենց տրամադրության ներքո չունեն ծովային անհրաժեշտ փոխադրամիջոցներ, այնուհետև՝ այն, որ ամռան շրջանում դեսանտային կորպուսը նուսաացած կլինի հիվանդությունների հետևանքով: Նման գործողության համար լավագույն պահը կարող է լինել հոկտեմբեր ամիսը:

Դրա փոխարեն, սրբ Մարկ Սայքսն այն կարծիքին է, որ Եգիպտոսի ներկայիս անգլիա-

կան կայագործի մի մասը պետք է օգտագործվի Մուեզի ջրանցքից դեպի Պաղեստին հարձակողական ռազմարշավ իրականացնելու համար, որպեսզի այս կողմից լուրջ սպառնալիք ստեղծվի, որը թուրքերին կհարկադրի դրան դիմակայել կարևոր անձնակազմերով: Այս ծրագրի հաջողության հիմնական պայմանները հանգում են այն բանին, որ այս իսկ պահից Եգիպտոսում նախապատրաստական աշխատանքներ իրականացվեն և որ այդ նախապատրաստությունները լուրջ բնույթ կրեն, այլապես թուրքերը, որոնք, ընդհանուր առմամբ, հիանալի տեղեկատվություն են ստանում, հանկարծակիի չեն գա:

Ես պատասխանեցի սրբ Մարկ Սայբսին, որ նրա նախագծի իրագործումը կհանգեցնի անգլիական կարևոր անձնակազմեր Եգիպտոսում պահելուն, որոնք, ընդհակառակը, անհրաժեշտ կլինեն գործողությունների գլխավոր քառերաբեմում:

Ես նրան ներկայացրի ֆրանսիական կառավարության և գլխավոր հրամանատարի տեսակետն այն խաչընդոտների վերաբերյալ, որոնք կծառանան դաշնակիցների առջև, եթե նրանք, ցրելով իրենց ուժերը, գործողությունների նոր թատերաբեմ ստեղծեն, որը կթուլացնի ուժերի կենտրոնացումն արևմտյան ռազմաճակատում, միայն ուրտեղ և որոշումը կարող է կայացվել: Ես ավելացրի, որ ըստ Ուոր Օֆիսի տեղեկությունների, թուրքերն այս ամռանը կկարողանան, հավանաբար, Հայաստանում կենտրոնացնել հարձակողական միջին կարողության տեր ոչ ավելի քան 200000 մարդ, առավելագույնը՝ 250000, և որ ես չեմ կարծում, թե Կովկասի ռուսական բանակը չի կարողանա պաշտպանության համար խիստ նախընտրելի մի երկրում պարտության մատնել թուրքական բանակներին կամ զգալիորեն կասեցնել դրանց առաջխաղացումը:

Շահագրգռվածությունը, որով սրբ Մարկ Սայբսը հոգ է տանում Պաղեստինում դաշնակիցների՝ ուշադրություն շեղող գործողությունների նկատմամբ, պայմանավորված է այն մտավախությամբ, որ մեծ դքսի նահանջը և Կովկասի ասպատակումը կարող են տհաճ հետևանքներ բողբել Ռուսաստանի ներքին իրադրության վրա, որը նրա կարծիքով վատթար վիճակում է:

«Եթե մեծ դուքսը,– ասում է նա,– վտարվի Կովկասից, դուք չեք խանգարի, որ ռուսական կառավարությունն օժանդակ ուժեր ուղարկի այս կողմից և անհրաժեշտության դեպքում, դրանք վերցնի արևմտյան ռազմաճակատի ռուսական բանակների հիմնական ուժերից, որոնց հարձակողական կարողությունը դրանով իսկ մեծապես կրուլանա»:

Այսպիսին են այն մտքերը, որոնք սրբ Մարկ Սայբսը հաղորդել է Ռուսաստան կատարած իր այցելությունից հետո: Ես դեռևս տեղյակ չեմ, թե արդյոք նա դրանք ներկայացրե՞լ է Ուոր Օֆիսին և ոչ էլ այն բանին, թե վերջինս ի՞նչ կարծիք ունի այդ մասին: Իմ իմացության շրջանակներում, ես կարծում եմ, որ Ուոր Օֆիսը չի բաժանելու ո՛չ մեծ դքսի մտավախությունները, ո՛չ էլ սրբ Մարկ Սայբսի մտքերը Պաղեստինում հարձակողական գործողության վերաբերյալ:

Ամեն դեպքում, թվում է, թե վերջինս ամբողջությամբ գտնվում է մեծ դուքս Նիկոլայի ազդեցության ներքո:

(A.M.G., 7 N 1253).

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը՝ Ռազմական նախարարությանը¹

Գաղտնի:

Գլխավոր հրամանատարի շտաբ,
Կահիրե, 16-ը ապրիլի 1916 թ.:

Հայկական կոտորածներ. Համաձայն Ամստերդամի «Թի» [sic]² թերթի, Զյուլմի կաթոլիկ առաքելությունը տեղեկացրել է գերմանական եկեղեցական իշխանություններին, որ բուրբերը սովի և բռնության միջոցով պատճառ են դարձել ավելի քան մեկ միլիոն հայերի մահվան, ներառյալ հարյուր հազար կաթոլիկների, որոնց թվում կային չորս եպիսկոպոսներ:

Ծանուցագիր Կահիրեից. Քսան տարի առաջ տեղի ունեցած հայկական կոտորածների ժամանակ միշտ հոգ էր տարվում գրիգորյան և ազգային եկեղեցու հայերի, ինչպես նաև հայ կաթոլիկների և հայ բողոքականների միջև խտրականություն դնելու մասին: Առաջիններն անխնա կոտորվում էին, իսկ վերջինները, որոնք, հավանաբար, ազգի մեկ տասներորդ մասն էլ չէին կազմում, խնայվում էին, իբրև հայկական ազգայնամուլական քարոզչությանն անհամեմատ անհաղորդ մնացողներ: Կարծում էին նաև, որ այս ավելի բարեհաճ վերաբերմունքը հսկում կունենա խորացնելու այն անդունդը, որը բաժանում էր կաթոլիկ և բողոքական համայնքները գրիգորյան համայնքից: Սա մի սխալ հաշվարկ էր և վերջին տարիներին տարբեր կրոնական դավանանքների միջև շատ ավելի մեծ քաղաքական համերաշխություն ի հայտ եկավ, քան նախկինում: Հետևաբար, ներկայիս քաղաքականությունը խտրականություն չհանդուրժող բնաջնջում է, որի ընթացքում «Միություն և անաջադիմություն» կոմիտեի դահիճները ոչ միայն ներվում են, այլև խրախուսվում Գերմանիայի հրեական մամուլի կողմից:

(A.M.G., 7 N 1283).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Իսպանիայի թագավոր Նորին մեծություն Ալֆոնս XIII-ին

Հ. թիվ 434/120:

[Պատճենը]:

Փարիզ, 17-ը ապրիլի [1916 թ.], ժ. 17.40-ին:

Քաջալերված Ձերդ մեծության ազնվաբար միջնորդություններից, որոնց շնորհիվ արդեն փրկվել են համայն մարդկությանը տառապանքների պատճառող այս պատերազմի բազմաթիվ անմեղ զոհեր, թուրքական հալածանքների նահատակները դարձած հայերը, խորին ակնածանքով խնդրում են Ձերդ մեծությանը բարեհաճել իրենց հատկացնել ձեր վեհ հովանավորությունը և միջնորդել սույբանին՝ փրկելու համար անարդարացիորեն ձերբակալված հայ մտավորականներին, որոնք Կոստանդնուպոլսում շուտով կանգնելու են

¹ Մենք արտաստում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

² Ինն՝ «Թիզդ»:

ռազմական դատարանի առջև և որոնց միակ հանցանքն այն է, որ հայ են: Դիմելով Չերոկաթոլիկական մեծության քրիստոնեական զգացմունքներին, համայն հայության անունից ես խնդրում եմ ընդունել մեր խորին և անեզր երախտագիտության հավաստիքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 26).

210

Իսպանիայի թագավորի քարտուղար պ. Տորրեսը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ. թիվ 3019:

[Պատճենը]:

Մադրիդ, 18-ը ապրիլի 1916 թ., ժ. 8.45-ին:

Նորին մեծության հրամանով խնդրում եմ ուղարկել Կոստանդնուպոլսում ձերբակալված հայ մտավորականների ազգանունները և նրանց դատապարտման շարժառիթների մեկնությունը այնքան մանրամասներ, որքան հնարավոր է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 27).

211

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արխատիդ Բրիանին

Հ. թիվ 341:

Պետրոգրադ, 18-ը ապրիլի 1916 թ., ժ. 13-ին:

(*Ստացվել է* 19-ին, ժ. 12-ին):

Ռազմածովային նախարարության համար՝ ծովային կցորդից¹:

Բանակի և նավատորմի զուգակցված գործողության հետևանքով, Տրապիզոնը հենց նոր գրավվեց ռուսների կողմից:

(Իմ թիվ 337 հեռագրի շարունակությունը):

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, f. 164).

212

Պ. Երվանդ Աղաթոնը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ. թիվ 066/34:

[Պատճենը]:

Ժնև, 19-ը ապրիլի [1916 թ.], ժ. 3.10-ին:

¹ Ֆրեզատի կապիտան Գալոն:

Ահա այն հայ մտավորականների անունները, որոնք, համաձայն ստույգ տեղեկության, կրատապարտվեն ռազմական դատարանում. Մալումյան, Մինասյան, Յարճանյան, Կալֆայան, Սարգիս Նիկողոսյան, Շահրիկյան, Ջարդարյան, Վարուժան, Շահբազ, Հայկ Տիրյաբյան, Պարթևյան:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 28).

213

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արխատիդ Բրիանին

Հ. թիվ 346, 347:

Պետրոգրադ, 19-ը ապրիլի 1916 թ.:

Պ. Ժորժ-Պիկոն ինձ խնդրում է Չերի գերագանցությանն ուղարկել հետևյալ հեռագիրը.

«Պ. Սագունովը համաձայն է իր նամակում գետեղել մի ձևակերպում, որն, ըստ էության, ընդունում է այն պետություններից յուրաքանչյուրի մասնակցությունն օսմանյան պարտքի մարմանը, որոնք կբռնագրավեն թուրքական տարածքները, բայց ինչ վերաբերում է երկաթուղիների կոնցեսիաներին, ապա նա պահանջում է, որ ձեր թիվ 580 հեռագրում առաջադրված բանաձևը վերափոխվի, ընդհանուր առմամբ, հետևյալ ձևով. «...այդ փոփոխությունը տեղի կունենա Հանրապետության կառավարության համաձայնությամբ»:

Ես կարծում եմ, որ պարտավոր եմ Չերի գերագանցությանը տեղեկացնել այն լուրջ խոչընդոտներին, որոնք երևան կզան, եթե համաձայնության ստորագրումն այսուհետև՝ էլ ավելի հետաձգվի: Պ. Սագունովի առաջարկած ձևակերպումը որքան էլ դեռևս անկատար թվա, այդուհանդերձ, նախարդի համեմատությամբ ենթարկվել է լուրջ բարեփոխության: Ես հիմքեր ունեմ երկյուղելու, որ հետամտելով դրա վերամայմանը, մենք կընդգրկվենք, առանց հանգելու շոշափելի արդյունքների, անարդյունավետ և անեզր բանավեճի մեջ:

Ռուսաստանում երկարատև բնակվելու հարկն ամենևին չկա, իմանալու համար, որ վարչությունն այստեղ հազմարավոր միջոցներ ունի գործնականում անխրադործելի դարձնելու ամենարդյունակի ձևով ճանաչում գտած կոնցեսիան: Այսպիսով, զուր են թվում կայսրական կառավարության հետ բանակցելուց խույս տալու փորձերը, որը կպարտադրի նոր իրադրությունը, անկախ այն բանից, թե մենք այդ կամենում ենք, թե ոչ: Մեր նախագծերին զուգընթաց, ռուսներն արդեն հղացել են երկաթուղիների նոր նախագծեր և այս պայմաններում, նախկին ծրագրերի վերափոխմանը, կասկածից վեր է, որ կայող են հետամուտ լինել միայն իրենք՝ կոնցեսիոներները:

Առաջնահերթ խնդիրը, որքան հնարավոր է արագ, մի այնպիսի լուծման հանգելն է, որը Միրիային և Հայաստանին վերաբերող մեր գործարքներին հաղորդի վերջնական տեսք: Յուրաքանչյուր անցնող օր թույլատրում է ռուսական բանակներին էլ ավելի առաջանալ Փոքր Ասիայում և, այսպիսով, նրանց համար փաստորեն ստեղծում անզուգական իրավիճակ, որից՝ թե՛ այստեղ և թե՛ Լոնդոնում, չեն վարանի օգտվել համաձայնության նկատմամբ խիստ անբարյացակամորեն տրամադրված ռազմական և ռազմածովային տարրերը: Մյուս կողմից, հարկ է տեսադաշտից բաց չթողնել, որ մինչ պատերազմի ավարտն անգլիացիների հետ կայացված դաշինքն ամբողջությամբ կախված է այն գործողություններից, որոնք կձեռնարկեն արաբները: Մենք, այսպիսով, պետք է գործադրենք բոլոր ջանքերը, որ-

պեսզի վերջիններիս մղենք ամենաարագ ձևով գործելու:

Այսպիսով, ես գտնում եմ, որ հարկ է շատ համառորեն պնդել Չերոյ գերազանցության առջև՝ հանուն հրատապ պատասխանի ստացման, որը կբույլատրի ավարտին հասցնել բանակցություններն այստեղ՝ առանց ևս մեկ անգամ Դեպարտամենտին դիմելու և այնուհետև՝ վերջնականապես կապ հաստատել անգլիական կառավարության և արաբների միջև:

Ժորժ-Պիկո»:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Paléologue*, tome 3, ff. 49-49 v).

214

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Իսպանիայի թագավորի քարտուղար պ. Տորեսին

Հ. թիվ 5734/256:

Փարիզ, 19-ը ապրիլի 1916 թ., ժ. 13.25-ին:

Ձեզ խնդրվում է Նորին մեծությանը հաղորդել իմ հուզմունսից երախտագիտության հավաստիքն այն բարեհամբույր վերաբերմունքի առթիվ, որով նա բարեհաճել է վերաբերվել իմ խնդրանքին: Ի վիճակի չլինելով ո՛չ հեռագրելու Կոստանդնուպոլիս և ո՛չ հաղորդակցվելու նրա հետ, մենք դժբախտաբար ստույգ տեղեկություններ չունենք այն ձեռքակալվածների թվի վերաբերյալ, որոնք շուտով կանգնելու են ռազմական դատարանի առջև: Մենք գիտենք, որ նրանց թվում են՝ 1/ Մալումյան Ակնունին, բարձր մակարդակի տեղ մտավորական, գրող, 2/ Խաժակը, պատմության և քաղաքական գիտությունների պրոֆեսոր: Հավանաբար, նաև Դանիել Վարուժանը և Ատոմ Յարճանյանը՝ մեծ տաղանդի տեղ բանաստեղծներ և գուցե նաև ուրիշներ: Մենք չգիտենք, թե նրանց վրա ի՞նչ հանցանք է բաղդվում և որի հետ նրանք, իհարկե, որևէ առնչություն չունեն: Ենթադրվում է, որ նրանց մեղադրում են խռովություն հրահրելու համար և այդ հեճնց այն ստահող պատրվակն է, որը, համաձայն հայ բնակչությանը բնաջնջելու հաստատակամորեն ընդունված ծրագրի, վկայակոչվել է Հայաստանի 800000 անմեղ զոհերին կործանելու համար, որոնց գերակշռող մասը բաղկացած է եղել ծերունիներից, կանանցից և երեխաներից: Այս մտավորականները նույնքան անմեղ են, որքան և մյուսները:

Կոստանդնուպոլսի ձեր դեսպանը՝ կարող է լրացնել այս տեղեկությունները: Կամեցեք միայն խնդրել Նորին մեծությանը, որ եթե նա բարեհաճում է որևէ քայլ կատարել, ապա՝ հարկ է այդ անել իր ազնվաբարո, մարդասիրական, քրիստոնեական զգացմունքներից դրդված՝ առանց նշելու իմ անունը, որովհետև Հայկական ազգային պատվիրակության նախագահի և մեր ազգային եկեղեցու գերագույն առաջնորդ, Նորին սրբություն կաթողիկոսի ներկայացուցչի կարգավիճակով, իմ միջամտությունը կարող է միայն վնասել Դ-նան կողմից դատապարտվածներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 29).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ պ. ժողեֆ Ռեյնաշին

Ն:

Փարիզ, 20-ը ապրիլի 1916 թ.:

Ես «Ֆիզարյուն»՝ կարդացի այսօր լույս տեսած «Տրասլիզոնի գրավումը և Հայաստանի հարությունը» ձեր շատ լավ հոդվածը և հաճույքով ձեզ եմ հայտնում իմ ամենաբուռն շնորհակալությունները:

Ես ձեզ շնորհակալ եմ հատկապես այն բանի համար, որ այդչափ լավ ձևով ցույց եք տվել, թե հայ ազգն առհավետ չի բնաջնջվել, և հավաստել եք նրա գալիք հարությունը:

Հայերի այս պաշտպանությունը, որը տպագրվել է «Ֆիզարյուն» նման կարևոր թերթում և ստորագրված է ձեր կողմից, չի կարող բարերար ազդեցություն չբողմել շահագրգիռ անձանց վրա, և ես ի սրտե ձեզ եմ հայտնում իմ և բոլոր հայերի, որոնց ներկայացնում եմ, երախտագիտությունը:

Ես հույս ունեմ, որ դուք կբարեհաճեք ինձ առիթ ընձեռել՝ ձեր քննությանը մի ծանուցագիր հանձնելու, որը կազմել եմ մեր շատ համեստ ցանկությունները ներկայացնելու նպատակով և որոտեղ կանխատեսել եմ այն լուծումները, որոնք Հայկական հարցը կարող է ունենալ, այն տարբեր հիպոթեզների համապատասխան, որոնք կարող են արվել իրավիճակը բուրբակաճ կայսրությունում կարգավորելու նպատակով:

Ես շատ բարձր գնահատականի կարժանացնեի ձեր կարծիքն այս ծանուցագրի մասին, նախքան դրա վերջնական բնագիրն ավարտին հասցնելը և ձեզ երախտապարտ կլինեի, եթե դուք բարեհաճեիք ինձ ընդունել և հատկացնել, ըստ ձեր հայեցողության, մի քանի լուպե գրուցելու համար:

(B.N., Mss., N.a.Fr. 24883, ff. 55-56).

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոզը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 349:

Պետրոգրադ, 20-ը ապրիլի 1916 թ., ժ. 4-ին:
(Ստացվել է 21-ին, ժ. 6.30-ին):

Ահա Հայաստանում ոռոտական առաջավոր դիրքերի մոտավոր գիծը. Տրասլիզոն, Կադմիլը (Շարոխի վրա), Արևմտյան Եփրատի ոլորանում գտնվող Թեքերիջ, Մելիխան, Գլոզուո (Արևելյան Եփրատի վրա), Բիթլիսից 40 կիլոմետրի վրա գտնվող Կուֆր:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations stratégiques*, tome 1027, f. 165).

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
պ. Ժոզեֆ Ռեյնաշին**

Ե:

Փարիզ, 20-ը ապրիլի 1916 թ.:

Ես հենց նոր կարդացի այսօր առավոտյան լույս տեսած ձեր հրաշալի հոդվածը՝ և շտապում եմ ձեզ հայտնել իմ խորին երախտագիտությունը: Երիտթուրքերի և նրանց չարագույժ կատակերգության, Հայաստանի նահատակության և նրա հարության մասին դուք այս կարևոր դարաշրջանում ասել եք էականը և դա մեծ ծառայություն է, որը մատուցում եք իմ դժբախտ հայրենիքի գործին:

(B.N., Mss., N.a.Fr. 13559, ff. 13-13 v).

**Ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Ժոֆրը՝
Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար
պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. թիվ 16390: Գաղտնի:

ԳՀԸ, 25-ը ապրիլի 1916 թ.:

Ապրիլի 16-ի նամակով, որի պատճենը դուք բարեհաճել եք ինձ հղել, Հանրապետության գործերի հավատարմատարը Լոնդոնում² հաշվետվություն է ներկայացնում այն գրույցի մասին, որն ունեցել է Ռուսաստան (Պետրոգրադ և Կովկաս) կատարած ճանապարհորդությունից վերադարձած անգլիական բանակի գնդապետ սըր Մարկ Սալքսի հետ³:

Ես չգիտեմ, քե անգլիացի այս բարձրաստիճան սպային ինչ պայմաններ են հարկադրել Փոքր Ասիայի համար պատերազմական ծրագրերի մշակել և առաջարկել, բայց, այդուհանդերձ, գտնում եմ, որ պարտավոր եմ ուշադրություն հրավիրել հետևյալ երկու միջոցների վրա, որոնց ընդունման համար նա պայքարում է.

1/ Անգլիական բանակի միջամտությունը Եգիպտոսի սահմանում:

2/ Հայկական ջոկատների գործողությունները Կիլիկիայում:

Այս երկու գործողություններից առաջինի պարագայում ակնկալված արդյունքի հասնելու համար (այն է՝ դուրս բերել Հայաստանում տեղակայված ռուսական բանակը շրջափակումից), հարկ կլինի, որ անգլիացիներն ի վիճակի լինեն հունիս մասին հարձակվելու Սինայ անապատի վրա արևելյան կողմից: Սակայն անհրաժեշտ փոխադրամիջոցների սակավության հետևանքով, նրանք հարկադրված եղան հրաժարվել Էլ-Արիշի գրավումից

1 Այդ նույն հոդվածի մասին տես նաև վերը թիվ 215 փաստաթուղթը:

2 Պ. դը Ֆլորիոն:

3 Ապրիլի 16-ի թիվ 381 ճեպագիրը, որն արտատպված չէ, և որտեղ սըր Մարկ Սալքսը բնութագրում է դաշնակիցների բանակների համատարած գրոհը Եգիպտոսի ռազմաճակատում, Կովկասում և դեսանտի ափ դուրս բերումը Կիլիկիայում՝ բուրբ-գերմանական գործերի հակահարձակումը Կովկասի ռազմաճակատում կանխելու համար: «... [ռուսական] բանակի պարտությունը, - կանխագուշակում է նա, - կարող է առաջ բերել խմորումների, որոնք առանց դժվարության կվերաճեն հեղափոխության [Ռուսաստանում]:»:

մարտ ամսի վերջերին: Առաջիկա հունիս ամսին ի վիճակի լինելու: համար որևէ նշանակությամբ ունեցող սպառնալիքով հանդես գալու Պաղեստինում, հարկ կլինի ենթադրել, որ նրանք, մինչ այդ ժամկետը, կունենան անապատային տեղանքում 140 կիլոմետր երկարությամբ երկաթգծի կառուցման անհրաժեշտությունը: Այս պայմանի ձևակերպումն իսկ մատնացույց է անում, որ նախատեսված նախագիծը բացարձակապես անիրագործելի է:

Ինչ վերաբերում է երկրորդ գործողությանը, ապա Կիլիկիայի երկարությունների վրա հարձակման գաղափարից, որն ապրիլ ամսի սկզբներին պետք է ձեռնարկվեր Պուրտ-Սաիդի հայերի միջոցով, հրաժարվել են հայ պատվիարքի համառ խնդրանքներով՝ Թուրքիայի հայերի նկատմամբ արյունալի բռնությունների գործադրման մտավախությունից դրդված: Թվում է, թե այս պայմաններում մնան բնույթի գործողություններին որոշակի ընթացք տալուն վերաբերող՝ սրբ Մարկ Սայբսի առաջարկը չի կարող ուշադրության արժանանալ:

Հանրագումարում՝ ես կարծում եմ, որ այն մամակում, որը դուք բարեհաճել եք ինձ փոխանցել, չկա որևէ բան, որը հնարավոր լինի հաշվի առնել, եթե հարցին մոտենանք ռազմական տեսանկյունից: Փոքր Ասիայի ափերի շրջանում մենք պետք է սահմանափակվենք ծովային գործողության շրջանակներում: Եթե այնուամենայնիվ որոշում կայացվի ցամաքում հարձակումների մասին, հարկ կլինի, որ դրանք վստահվեն ոչ թե բացառապես բախտի քմահաճույքին բողմված հայկական ջոկատներին, որոնք կալող են թուրքերի կողմից դիտվել իբրև անկանոն ջոկատներ, այլ դաշնակից զորքերի ստորաբաժանումներին, որոնց հետ կարող են գործել կազմակերպված հայկական տարրերը:

(A.C.M., SS Ed 125).

219

Պ. Սազոնովի հաղորդագրությունը Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգին

Պետրոգրադ, 13/26-ը ապրիլի 1916 թ.:

Հիմնվելով կայսրական Արտաքին գործերի նախարարության կողմից Ֆրանսիայի դեսպանությանը հղված մարտի 4/17-ի¹ և 8/21-ի² թվակիր, ն {ախբան} Ք. {լիստոսը}, հուշագրերի վրա, ես պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը տեղեկացնել, որ այն զրույցների արդյունքում, որոնք Ֆրանսիական կառավարության հատուկ լիազոր ներկայացուցիչ պ. Ժորժ-Պիկոյի հետ ունեցել են Ֆրանսիայի և Անգլիայի միջև կայանալիք՝ արաբական պետության կամ պետությունների դաշնության կազմավորմանը վերաբերող համաձայնության ճանաչման և Սիրիայի, Կիլիկիայի ու Միջագետքի տարածքների բռնագրավման շուրջ, կայսրական կառավարությունը պատրաստ է իրեն հաղորդված հիմունքներով վավերացնել սահմանված գործարքը՝ հետևյալ պայմաններով:

1/ Ռուսաստանը կբռնագրավի Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի տարածաշրջանները մինչ այն կետը, որը կճշգրտվի Սև ծովի առափնյա շրջանում՝ Տրապիզոնից դեպի արևմուտք:

2/ Վանից և Բիթլիսից հարավ ընկած՝ Մուշի, Սդերտի, Տիգրիսի հոսանքի, Ջիզրե-բեն-Օմարի, Ամադիայի վրա իշխող լեռնաշղթայի և Մերզա-Վարի տարածաշրջանի միջև

¹ Տե՛ս վերը թիվ 193 փաստաթուղթը:

² Արտատպված չէ:

գտնվող Քրդստանի տարածաշրջանը կզիջվի Ռուսաստանին, որը դրա փոխարեն կճանաչի Ֆրանսիայի իրավունքը Ալա-Ղադի, Կեսարիայի, Ալ-Ղադի, Յիլդիզ-Ղադի, Ջարայի, Ակնի և Խարբերդի միջև գտնվող տարածքի նկատմամբ: Բացի դրանից, սկսած Մերզա-Վարի տարածաշրջանից, Արաբիայի սահմանը կծօզվի այն լեռնաշղթայով, որը ներկայումս սահմանում է օսմանյան և պարսկական տարածքների սահմանը: Այս սահմանները նշվում են ընդհանուր ձևով և մանրամասների փոփոխության վերապահությամբ, որը հետագայում կառաջարկի տեղում գործող՝ սահմաններ հաստատող համաձայնությամբ:

Բացի դրանից, կայսրական կառավարությունը համաձայնվում է ընդունել, որ այս ձևով Ռուսաստանին զիջված օսմանյան տարածքի բոլոր մասերում՝ օսմանյան կառավարության կողմից ֆրանսիացիներին տրված երկաթուղիների, ինչպես նաև այլ կոնցեսիաները կախապահվեն: Եթե կայսրական կառավարությունը ցանկություն հայտնի, որ դրանք հետագայում փոփոխության ենթարկվեն՝ կայսրության օրենքների հետ ներդաշնակության մեջ դրվելու մտադրությամբ, ապա այդ փոփոխությունը տեղի կունենա Հանրապետության կառավարության համաձայնությամբ:

Ինչ վերաբերում է երկու ազգերի ենթակայության ներքո գտնվող հիմնարկներին, վարչություններին, կրոնական, դպրոցական, հիվանդանոցային հաստատություններին և այլնի, ապա դրանք կշարունակեն օգտվել այն արտոնություններից, որոնք մինչ այժմ նրանց են ընձեռել օսմանյան կառավարության հետ կնքված պայմանագրերը, համաձայնությունները և համաձայնագրերը: Այնուամենայնիվ, կասկածից վեր է, որ նախատեսելով մնան վերապահություն, երկու կառավարությունները ցանկացել են ոչ թե ավագայի համար իրավասության, կրոնական հովանավորության և կապիտուլյացիաների իրավունքների սպառնալու պահանջել այն տարածաշրջաններում, որոնք այս ձևով կրոնագրավվեն Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից, այլ միայն ապահովել ներկայումս գոյություն ունեցող հիմնարկների ու հաստատությունների հարատևությունը և ճանապարհի հարթել՝ հաշտության կնքումից հետո, երկու տերությունների միջև բանակցությունների համար: Վերջապես, երկու կառավարություններն, ըստ էության, ընդունում են, որ այն պետություններից յուրաքանչյուրը, որը կրոնագրավի թուրքական տարածքները՝ պետք է մասնակցի օսմանյան պարտքի մարմանը:

(A.M.A.E., "A" Paix, tome 129 bis, ff. 9-11).

Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպանության հաղորդագրությունը Ռուսաստանի Արտաքին գործերի նախարար սյ. Սազոնովին

Ծ՛:

Պետրոգրադ, 13/26-ը ապրիլի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ հայտնել այն հաղորդագրության ստացման մասին. յուր Ձերոյ գերագանցությունն ինձ է հղել այսօրվա ամսաթվով և որը վերաբերում է կայսրական կառավարության՝ այն համաձայնության ճանաչմանը (հետևյալ պայմաններով), որը Ֆրանսիայի

1 Մենք արտատպել ենք նախորդին գրեթե համանման այս փաստաթուղիը՝ Փոքր Ասիայի ապագայի համար ունեցած հույժ կարևորության պատճառով, այն պարագայում, եթե Անտանտի տերությունները պատերազմից հաղթանակած ելնեն:

և Անգլիայի միջև կկայանա արաբական պետություն կամ պետությունների դաշնություն կազմավորելու և Սլլիլայի, Կլիլկլայի ու Մլիջագետքի տարածքների բռնագրավումն ապահովելու համար այնպիսի հիմունքներով, որոնք նրան են հաղորդվել ֆրանսիական կառավարության հատուկ լիազոր ներկայացուցչի կողմից: Իր կողմից, Հանրապետության կառավարությունն ինձ հանձնարարել է տեղեկացնել ձեզ, որ վճռել է վավերացնել այն գործարքը, որին վերաբերում է խոսքը:

1/ Ռուսաստանը կբռնագրավի Էրզրումի, Տրասպիզոնի, Վանի և Բիթլիսի տարածաշրջանները մինչ այն կետը, որը կճշգրտվի Սև ծովի առափնյա շրջանում՝ Տրասպիզոնից դեպի արևմուտք:

2/ Վանից և Բիթլիսից հարավ ընկած՝ Մուշի, Սդերտի, Տիգրիսի հոսանքի, Ջիզրե-բեն-Օմարի, Ամաղիայի վրա իշխող լեռնաշղթայի և Մերգա-Վարի տարածաշրջանի միջև գտնվող Քրդստանի տարածաշրջանը կզիջվի Ռուսաստանին, որը դրա փոխարեն Ֆրանսիային կհատկացնի այն տարածքները, որոնք գտնվում են Ալա-Դաղի, Կեսարիայի, Ակ-Դաղի, Յիլիզ-Դաղի, Ջարայի, Ակնի և Խարբերդի միջև: Բացի դրանից, սկսած Մերգա-Վարի տարածաշրջանից, Արաբիայի սահմանը կձգվի այն լեռնաշղթայով, որը ներկայումս սահմանում է օսմանյան և պարսկական տարածքների սահմանը¹: Այս սահմանները նշվում են ընդհանուր ձևով և մանրամասների փոփոխության վերապահությամբ, որը հետագայում կառաջարկի հետագայում տեղում գործող՝ սահմաններ հաստատող հանձնաժողովը:

Հանրապետության կառավարությունը բավարարվածության զգացումով է հավաստում, որ բացի դրանից, կայսրական կառավարությունը համաձայնվում է ընդունել, որ այս ձևով Ռուսաստանին զիջված օսմանյան տարածքի բոլոր մասերում՝ օսմանյան կառավարության կողմից ֆրանսիացիներին տրված երկաթուղիների, ինչպես նաև այլ կոնցեսիաները կպահպանվեն: Եթե կայսրական կառավարությունը ցանկություն հայտնի, որ դրանք հետագայում փոփոխության ենթարկվեն՝ կայսրության օրենքների հետ ներդաշնակության մեջ դրվելու մտադրությամբ, ապա այդ փոփոխությունը տեղի կունենա Հանրապետության կառավարության համաձայնությամբ:


Ինչ վերաբերում է երկու ազգերի ենթակայության ներքո գտնվող հիմնարկներին, վարչություններին, կրոնական, դպրոցական, հիվանդանոցային հաստատություններին և այլնի, ապա դրանք կշարունակեն օգտվել այն արտոնություններից, որոնք մինչ այժմ նրանց են ընձեռել օսմանյան կառավարության հետ կնքված պայմանագրերը, համաձայնությունները և համաձայնագրերը: Այնուամենայնիվ, կասկածից վեր է, որ նախատեսելով նման վերապահություն, երկու կառավարությունները ցանկացել են ոչ թե ապագայի համար իրավասության, կրոնական հովանավորության և կապիտուլյացիաների իրավունքների պահպանում պահանջել այն տարածաշրջաններում, որոնք այս ձևով կբռնագրավվեն Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից, այլ միայն սուպահովել ներկայումս գոյություն ունեցող հիմնարկների ու հաստատությունների հարստությունը և ճանապարհի հարթել՝ հաշտության կնքումից հետո, երկու տերությունների միջև բանակցությունների համար, որոնց բարեհաջող ավարտը թույլ չի տա երկու երկրների բարեկամությունը կասկածի ենթարկել:

Վերջապես, երկու կառավարություններն, ըստ էության, ընդունում են, որ այն պետություններից յուրաքանչյուրը, որը կբռնագրավի թուրքական տարածքները՝ պետք է մասնակցի օսմանյան պարտքի մարմանը:

(A.M.A.E., "A" Paix, tome 129 bis, ff. 12-14).

¹ Տե՛ս հավելվածում բերված քարտեզը:

ՀԱՎԵԼՎԱԾ



**Ռ-ազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. քիվ 2766-9/11:

Փարիզ, 29-ը ապրիլի 1916 թ.:
(Ստացել է՝ Բաղ. վարչ. ապրիլի 30-ին):

Լեյտենանտ Գոյնել դը Սեն-Քուենտինի ապրիլի 2-ի քիվ 20 ծանուցագրի առաքումը, որը վերաբերում է Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպանության առաջին քարզմանչի հաղորդած՝ Թուրքիայում տիրող կացությանն առնչվող տեղեկություններին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 976, f. 130).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն
գործուղված լեյտենանտ Գոյնել դը Սեն-Քուենտինը՝
Ռ-ազմական նախարար, գեներալ Ռ-ոքին**

Թիվ 20²:

Կահիրե, 2-ը ապրիլի 1916 թ.:

Հայկական կոտորածներ. Չոհերի քիվը հասնում է 500000-ի: Դիարբեքիում, Մարդի-նում և Մարաշում ոչ մեկը չի խնայվել: Կոտորածը շատ է ծավալվել նաև Բիթլիսում. Էրզ-րումում որան որոշ չափով խոչընդոտել է հենց մահմեդական բնակչության մոտ առաջացած խորշանքը:

Համաձայն վերջերս ընդունված օրենքի՝ «տեղահանվածների» (կոտորվածների կամ փախուստի մեջ գտնվողների) ունեցվածքը հանձնաժողովի կողմից բռնագրավվում է և օտարվում հոգուտ պետության՝ եթե դրանց նախկին սեփականատերերը չպահանջեն դրանք նշված ժամկետում: Այս ձևով բռնագրավված ողջ անշարժ գույքը հանձնվել է «Էվ-կաֆի» (Աստվածահաճո հաստատությունների) վարչությանը: Շնորհիվ այս օրենքի հրեա-ներն անսահման օգուտներ են ունեցել:

Այն բոլոր օտարերկրացիները, որոնք ապրանքներ էին ուղարկել «տեղահանվածնե-րին», կորցրել են իրենց իրավունքները, որովհետև իրենց պարտապանների անհետացման մասին իմացել են միայն 60-օրյա ժամկետի ավարտից շատ ավելի ուշ: Միայն Էրզրումում եղած Մանչեսթերի ապրանքները բռնագրավվել է մի արժողությամբ, որը գերազանցում էր 2 միլիոն ֆրանկը: Աֆիոն-Գարահիսարում բռնագրավված աֆիոնի արժեքը հասնում էր, հավանաբար, էլ ավելի մեծ գումարի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 976, ff. 132-133).

1 Ստորագրել է գնդապետ Վալանտինը:

2 Սենը արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

**Ֆրանսիայի դեսպանության արխիվապահ պ. Բոդուն՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արխատիդ Բրիանին**

Ծ. թիվ 9¹:

Պեյա, 1-ը մայիսի 1916 թ.:
(Ստացել է Զադ. վարչ.
1918 թ. դեկտեմբերի 12-ին):

Ն {որին սրբազնություն} ն Ռուչին ինձ տեղեկացրեց այն քայլին, որով դիմել է Գերմանիայի և Ավստրիայի դեսպաններին՝ հայցելով նրանց միջամտությունը թուրքական կառավարության գործերին՝ հանուն հայերի դեմ ուղղված հալածանքների դադարեցման, որոնք որոշ չափով ընդհատվել են, բայց շուտով վերսկսվելու են նոր թափով:

Պ. դը Մետերնիխը խոստացել է կատարել այդպիսի քայլ, իսկ մարկիզ դը Պալլավիչին, այն արդեն արել է:

Պատվիրակն ինձ ասաց, որ հենց այսօր ինքը և կիրավիրի Արտաքին գործերի նախարարի ուշադրությունն այդ բարդ հարցի վրա:

Համաձայն այն տեղեկությունների, որոնք ինձ են հասել, հայերի դրությանը վերաբերող՝ ներքին մահանգներից ստացվող լուրերը խիստ վատթար են և, ըստ տարածվող աղմուկի՝ Անգորայում կարծեք թե կոտորածներ են տեղի ունեցել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 913, f. 62).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արխատիդ Բրիանին**

Հ. թիվ 165:

Կահիրե, 19-ը մայիսի 1916 թ., ժ. 1.30-ին:
(Ստացվել է ժ. 3.40-ին):

Իմ թիվ 157 հեռագրի² շարունակությունը:

Ես տեսա և հարցաքննեցի մարոնիտ քահանային: Ես դիվանագիտական գրագրություններն առաքող փոստով ուղարկում եմ այն հետաքրքիր տեղեկությունները, որոնք նա հաղորդում է: Բեյրութում տաքելական պատվիրակ Ն {որին սրբազնություն} ն Ջիանինին իր եպիսկոպոսական նստավայրում գտնվում է ոստիկանության հսկողության ներքո: Նա կարող է ընդունել, բայց չի կարող պարզապես: Նրան մտահոգում է իր անձնական անվտանգության հարցը: Մահմեդականի զգեստ հագած մի քահանա ապրիլի 15-ին Գամասկոսում էր: Հասարակական մի վայրում նա մասնակցել է 3-400 հայ կանանց ու ջահել աղջիկների վաճառքին: Երբ նա եկել է [Ա]լեյ, էնվեր փաշան հրապարակայնորեն ասել է. «Կոստյուրները պետք է մաքրագարդվի հայերից և լիբանանցիներից: Մենք առաջիններին ոչնչաց-

1 Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

2 Մայիսի 13-ի. արտատպված չէ:

րել ենք սրով, մենք երկրորդներին կոչնչացնենք սովի միջոցով»:

Գերմանացիների կողմից Սերբիայի գրավումից և դաշնակիցների կողմից Դարդանե-
լից գոյքերը դուրս բերելուց ի վեր, Ջեմալ փաշայի վարքագիծը փոխվել է. նա դարձել է կո-
ալիտ, դաժան, անգութ և յուրաքանչյուր առիթով հրապարակում է իր գերմանաձեռ զգա-
ցումները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 872, ff. 216-216 v).

224

Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը Ռազմական նախարարությանը¹

Գաղտնի:

Գլխավոր հրամանատարի շտաբ,
Կահիրե, 20-ը մայիսի 1916 թ.:

Վերջերս Սլովիա այցելած մի գործակալ հաղորդում է հետևյալը.

Շանուցագիր Պորտ-Սալոնից. Գործակալը Դամասկոսում էր գտնվում ապրիլի 15-ին և
իջևանել էր գուրանոցների մոտ գտնվող հյուրանոցում: Լսելով Սլովանից եկող մեծ ամբոխի
աղմուկը, նա դուրս է ելել, տեսնելու, թե ի՞նչ է կատարվում: Նա տեսել է, թե ինչպես են զին-
վորներն իրենց առջևից հրում 300 կամ 400 մերկ հայ աղջիկների և կանանց: Նրանց ցու-
ցադրում էին աճուրդի համար և ամբողջ ապրանքը վաճառել են, իսկ ոմանց՝ 2, 3 և 4 ֆրան-
կի դիմաց: Գնելու թույլտվություն ունեին միայն մահմեդականները: Վաճառողները շարու-
նակ բացականում էին. «Ձեզ՝ ուղղահավատներիդ, քրիստոնյաների խայտառակությունը
թող զվարճանք պատճառի»:

Ոչ մի հայ տղամարդ Դամասկոս չէր բերվել, կային միայն կանայք:

Շանուցագիր Կահիրեից. Հիմքեր կան ենթադրելու, որ այս զարհուրանքի համար պա-
տասխանատու է Ջեմալ փաշան, քանի որ Դամասկոսում ամեն ինչ նա է ղեկավարում:
Ըստ գործակալի՝ պատասխանատվություն կրող գոյքերը թուրքեր էին և ոչ թե արաբներ:

Ասել են, որ երբ էնվեր փաշան Ալեյում էր, Ջեմալ փաշայի ներկայությամբ հայտնել է.
«Օսմանյան կառավարությունը կարող է կրկին վերանվաճել իր ազատությունը և իր պա-
տիվը, երբ թուրքական կայսրությունը մաքրագարդի հայերից ու լիբանանցիներից: Մենք
հայերին ոչնչացրել ենք սրով, մենք լիբանանցիներին կոչնչացնենք սովի միջոցով»: Գրեթե
այն տպավորությունն է ստեղծվում, որ սպառնալիքը հաջողությամբ իրականացվում է:

Թալեսթր թեյը և հայերը. Զաղվածք «Արևից» . - Բեռն, 5-ը մայիսի: «Բեռլինեյ րագբերա-
թի» բալկանյան հատուկ թղթակիցը հարցազրույց է ունեցել Ներքին գործերի նախարար
Թալեսթր թեյի հետ: Խոսելով հայերի մասին, նա ասել է.

«Հայերի տեղահանությունը ռազմական անհրաժեշտություն էր: Մինչդեռ, Միջագետք
տեղահանվելու ընթացքում նրանք հարձակման են ենթարկվել քրդերի կողմից և մասամբ
կոտորվել: Նույնպիսի անհրաժեշտություն էր նաև մեկ տարի առաջ, մարտին, Դարդանե-
լի ռազմարշավի ժամանակ՝ Կոստանդնուպոլսից և նրա շրջակայքից հայերին դեպի հեռա-
վոր շրջաններ տեղափոխելը: Կառավարությունը կարգադրել էր տեղահանել նրանց դեպի
Չով [sic]: Դժբախտաբար ստահակ պաշտոնյաները, որոնց հանձնարարվել էր այս հրա-

¹ Մենք արտասպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

2 Իմա՝ Դեր-Էզ-Չոր:

մանների կենսագործումը, իրենց պարտականությունը կատարելիս դիմել են անխոհեմ ծայրահեղությունների»:

Այնուհետև՝ քրթակիցն ավելացնում է. «Այստեղ, Թալեաք բեյը մի պահ կանգ առավ, ձեռքը դեպի աչքերը տարավ, կարծեք ցանկանալով վանել վատ տեսիլքը և հետո շարունակեց: Մենք վայրենիներ չենք: Այս ողբերգական իրադարձությունների մասին հալաբ-դումներն ինձ պատճառել են ավելի քան մեկ անքուն գիշեր»:

Ծանուցագիր Կահիրեից. Փոքր Ասիայում գտնվող ամերիկյան և գերմանական միախոհներների վկայությունները հիմնավորապես ցույց են տալիս, որ հայերի այսպես կոչված տեղահանությունը Միջագետք, իրականացվել է տեղական իշխանությունների կողմից, ի կատարումն անձամբ Թալեաք բեյի՝ իբրև Ներքին գործերի նախարարի հրամանների: Այն բանից հետո, երբ մարտունակ տղամարդիկ մորթվել են ժանդարմների և զինվորների կողմից, ծերունիները, կանայք և երեխաներն անասունների հոտի նման բայում էին Միջագետքի ուղղությամբ: Բազում հազարավորներ ընկել են ճանապարհին, շատերը խեղդվել մոտակա գետերում և բազմաթիվ աղջիկներ ու երիտասարդ կանայք բաժանվել մահմեդական բնակչությանը: Այս արարքներին համանման մի բան, բայց նվազ դաժան ձևով իրագործված, հնարավոր է տեսնել 1910 թ. Կոստանդնուպոլսի շների տեղահանության պարագայում դեպի մի անմարդաբնակ [sic] կղզի Մարմարա ծովում, որտեղ քուրբական իշխանությունները դրսևորելով չափից ավելի բարյացակամություն, բացահայտորեն սպանելու փոխարեն, լքել են դրանց, որպեսզի վերջիններս սատկեն սովից ու ծարավից: Թալեաք բեյը հանդիմանում է ստահակ պաշտոնյաներին, որոնք դիմել են ծայրահեղությունների՝ իրենց տրված հրամանների իրականացման ընթացքում, բայց մենք չենք լսել, որ այդպիսի որևէ մեկը պատժի ենթարկված լինի չարագործությունների համար: Նա դատապարտում է նաև քոյերին՝ տեղահանված հայերի վրա ճանապարհին հարձակվելու և նրանց կոտորելու համար, բայց չի հիշատակում այն փաստը, որ Ջորի [sic]՝ բեդուին ցեղերը միջամտել են՝ պաշտպանելու համար իրենց երկիր հասած հայերի թշվառ մնացորդներին՝ նրանց հալածող քուրբերից:

Հազիվ թե այս հանգամանքը Թալեաք բեյի կողմից լավ ընտրված միջոց է քուրբերին՝ վայրագաբարո լինելու մեղադրանքից պաշտպանելու համար, մի բան, որի հանդեպ քուրբերը հատկապես զգայուն են: Ինչ վերաբերում է անքուն գիշերներին, որը նրան պատճառել են հայկական կոտորածներին վերաբերող հաղորդումները, ապա դրանք հիշեցնում են կայսրի կոկորդիլոսի արցունքները Լիեժում և Լուվենում՝ բելգիացիների տառապանքներին ի տես*:

(A.M.G., 7 N 1283).

225

Ռազմական նախարար, գեներալ Ռոքը Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 3221-9/11:

Փարիզ, 21-ը մայիսի 1916 թ.:

1 Իմա՝ Դեր-Էզ-Ջոր:

* Նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմի տուաջին իսկ օրերին խաղաղ բնակչության նկատմամբ գերմանական գործերի գործած վայրագությունները (զանգվածային սպանություններ, գյուղերի հրկիզում և այլն) Բելգիայում: - Ճ. թ.:

(Ստացել է Քաղ. վարչ. մայիսի 22-ին):

Ի պատասխան մայիսի 14-ի թիվ 2008 ցուցակի, որով դուք ինձ եք փոխանցում Կահիրեում Ֆրանսիայի նախարարի ապրիլի 9-ի թիվ 121 ճեպագրի¹ և Պողոս Նուբար փաշայի՝ ծովակալ Մորոյին հղած մարտի 22-ի թվակիր նամակի² պատճենները, ես պատիվ ունեմ ձեզ հիշեցնել, որ մայիսի 1-ից ի վեր, թիվ 2808-9/11 ճեպագրով³ ձեզ տեղյակ եմ պահել իմ կարծիքին, որը հանգում է Պորտ-Սալոյի հայ գաղթականներին ռազմական ոլորտում օգտագործելուց ձեռնարկի մնալուն:

Մյուս կողմից, քանի որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքն արգելում է թշնամու հպատակներին զինվորագրել ֆրանսիական ուղջ տարածքում, հնարավոր չէ ընդունել Պողոս Նուբար փաշայի առաջարկությունը, համաձայն որի «եթե կան հայեր, որոնք զենք կրելու ցանկություն ունեն և դրան ունակ են, ապա պետք է համախմբվեն դաշնակիցների դրոշմերի ներքո և նրանց կանոնավոր գնդերի մասը կազմեն»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 72).

226

**Պետրոգրադում հայկական վեհաժողովի նախագահ
պ. Ստեփան Մամիկոնյանը՝ Հայկական ազգային
պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային**

Հ. թիվ 17/90:

Պետրոգրադ, 26-ը մայիսի 1916 թ., ժ. 18.45-ին:

(Ստացվել է մայիսի 27-ին, ժ. 9.15-ին):

Թուրքիայի հայ փախստականների ճակատագրի բարելավման համար անհրաժեշտ միջոցներ համադասող և դրանց խթանող հայկական վեհաժողովը, որը կայսրական կառավարության բույլտվությամբ գումարվել է Պետրոգրադում, խնդրում է ձեզ բարեհաճել այս վեհաժողովի կողմից շնորհակալություն հայտնել դաշնակիցների և չեզոքների բոլոր կոմիտեներին ու հաստատություններին, որոնք մարդկության ամենասուրբ սկզբունքների անունից շռայլորեն օժանդակություն և օգնություն են ցուցաբերում պատմությանը հայտնի ամենամեծ հանցագործության հարյուր հազարավոր դժբախտ զոհերին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 34).

227

**Անգլիական տեղեկատվական ծառայության հղած գեկուցագիրը
Ռազմական նախարարությանը⁴**

Գաղտնի:

1 Տե՛ս վերը թիվ 205 փաստաթուղթը:

2 Վերն արտատպվել է թիվ 205 փաստաթղթում (հավելվածում):

3 Արտատպված չէ:

4 Մենք արտատպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

Հայկական կոտորածներ. - Տեղեկություններ հաղորդողը, որն ի դեպ դարձել է Ուրֆայի կոտորածների ակամատեսը և տեղեկություններ քաղելու առումով գտնվել է մեծ առավելություններ ընձեռող վիճակում, հավաստում է, թե բոլոր թուրքերը համաձայն են, որ մինչ 1915 թ. ավարտը սպանվածների նվազագույն թիվը պետք է հասնի առնվազը 500000-ի: Դիարբեքիում նախքան հայ արքեպիսկոպոսին սպանելը, հանել են նրա աչքերը և եղունգները: 600 հոգուց բաղկացած խմբերով տղամարդկանց տարել են և սպանել քաղաքի մոտակայքում գտնվող հովիտներից մեկում:

Ուրֆայում տեղի ունեցած նախնական կոտորածներից հետո, հայերը բազմաթիվ տնե-րում ոտքի են ելել և դիմադրել թուրքերին, մինչ Ջենալ բեյի տեղակալ Ֆահրի բեյի ժամանումը, որը ոմբակոծել է քաղաքը և կոտորել հայերին մինչև վերջին մարտը: Ուրֆան օգտագործվել է իբրև Փոքր Ասիայի այլ քաղաքներից եկող հայերի հավաքակայան: Նրանց ուղարկում էին երկարուղով և ոտքով, իսկ տեղ հասնելուց հետո բաժանում էրեք խմբի: Առաջին խումբը, որն ընդգրկում էր ծերունիներին, ծեր կանանց և փոքրահասակ երեխաների՝ ժանդարմների հսկողությամբ անապատի միջով, հարյուրավոր միլերով, ուղարկվում էր դեպի Ռաքքա ու Դեր-էզ-Ջուր, որտեղ նրանք հանձնվում էին բեդուիներին: Բչերն էին, եթե այդպիսիք կային, կենդանի մնում:

1915 թ. հուլիսին, մի առիթով, իրենք՝ բեդուիներն են ըմբոստացել հայ կանանց նկատմամբ դրսևորվող սարսափելի դաժանությունների պատճառով և հարձակվել Բաղդադի գծի վրա գտնվող Թել-Աբիաղ կայարանի ռազմական շտեմարանների վրա՝ սովահար հայերի համար ուտելիք ձեռք բերելու նպատակով: Ամրակազմ տղամարդկանցից բաղկացած երկրորդ խմբին մաս-մաս տանում էին և սպանում Ուրֆայի մերձակայքում: Կարիք չկա նկարագրել, թե ինչպիսի ճակատագրի արժանացավ երիտասարդ, ամուսնական տարիքի հասած աղջիկներից բաղկացած երրորդ խումբը:

Ուրֆան այն բազմաթիվ վայրերից էր, որոնք օգտագործվում էին իբրև հավաքագրման կենտրոններ:

Երկու հայ պատգամավորներ՝ Ջոհրապը և Վարդգեսը սպանվել են Ուրֆայում, այն վայրի մոտակայքում, որտեղ տեղեկություններ հաղորդողը կանգնած է եղել: Նրանց Կուստանդնուպոլսից բերել են այդ նպատակով և ճանապարհորդության ընթացքում վերաբերվել են ինչպես թուրքական կառավարության պատվավոր հյուրերի:

Իզմիլի, Անգորայի և Դիարբեքիի կառավարիչներն՝ իրենց տարածաշրջաններում ամբողջությամբ ոչնչացրել են բոլոր հայերին, չնայած այն բանին, որ Անգորայի պարս-գայում՝ առաջին կառավարիչը² մերժել էր և հեռացվել պաշտոնից:

Կոնիայում Ջելալ փաշան մերժել է և նրա հեռացումից հետո, նոր կառավարիչի՝ օրոք, հայերը տեղահանվել են, ավելի ստույգ՝ կոտորվել:

Քոթահիայում կառավարիչը⁴ կտրականապես հրաժարվել է իր ստացած հրահանգները կատարելուց և սպառնացել ձեռքակալել ու մահապատժի ենթարկել յուրաքանչյուր մարդու, որը ձեռք կբարձրացնի հայերի վրա:

Սիրիայում Ջենալն, ի դեպ, կախել է Էնվերի կողմից իբրև կոտորածների պարագլուխ-

1 Համապատասխանաբար՝ Իբրահիմ Աբիֆ, Ռեշիդ բեյերը:

2 Մսգիար բեյը:

3 Մուսմներ բեյը:

4 Ֆայիկ Ալի բեյը:

ներ ուղարկված տասներկու վատթարագույն մարդասպանների, մինչդեռ Հալեպում, Բեքիյի Սամին պաշտպանում է 50000 հայերի, որոնց հավաքագրել էր սպառնալիքի ներքո գտնվող հարևան վայրերից:

Ինչ վերաբերում է գերմանացիների մասնակցությանն այս կոտորածներին, ապա հայտնի է, որ գերմանական դեսպան Մետերնիխը, երբ հաջորդեց Վանգենհայմին, Բեռլինում մի ելույթ էր պատրաստել, որը կայսրի հրամանով պետք է կարդար՝ սուլթանին ներկայանալու պահին: Այն ամփոփում էր մի նախադասություն, որն ակնարկում էր [sic], թե Գերմանիան անկարող է եղել դադարեցնել հայկական կոտորածները: Թալեաքը մերժել է ելույթի իրավունքը և Մետերնիխը վերադարձել է Արքայազների կոլլիներ, ասելով, որ գերմանական կառավարությունը նախ՝ պետք է համաձայնության հանգի Բարձր Դռան հետ այն հարցում, թե ինքն ինչ է ասելու: Ի վերջո, փոխգլխումը կայացել է և ելույթն ընթերցվել է, ըստ էության, գաղտնաբար, իսկ Հայկական հարցին վերաբերող մասը, մնացել է անտիպ:

Չկա որևէ բարձրաստիճան քուրք, որը պատրաստական չլինի հայտարարելու, թե Գերմանիայի համար միանգամայն հնարավոր կլիներ կանխել կոտորածները, եթե նա այդպես վարվելու ցանկություն ունենար: Այնուամենայնիվ, որոշ թուրքեր պարզորոշ հայտարարում են, որ կոտորածների հարցում հենց գերմանացիներն էին, որ Թալեաքի հետ փոխհամաձայնության են հանգել:

Կովկաս և Միջագետք: - Հույն դասալիքից ստացված տեղեկություն:

Հայկական կոտորածների մասին՝ «Ռոյթերի» գրաքննությանը ենթարկված ուղիով ստացված լուրեր:

«Պետրոգրադից հաղորդում են, որ Տրապիզոնի հայերին բաժին հասած քուրքական վայրագությունները գերազանցում են այն դաժանությունները, որոնք որևէ այլ վայրից են հաղորդվել: Տրապիզոնի հայերի արտաքսումը սկսվել է 1915 թ. հուլիսին, երբ դավաճանության և ռուսներին օգնելու: Մեղադրանքով հարյուրավոր երիտասարդ, ազդեցիկ հայեր են ձերբակալվել ու նավակներով տարվել և ջրասույգ արվել ծովում, մինչդեռ մյուսներն ուղարկվել են հարևանությամբ գտնվող մի գյուղ, որտեղ կանայք բռնաբարվել են և սպանվել, իսկ երեխաները սվինահար եղել: Թուրքերն օգտագործում էին երեխաների գլուխներն իբրև քիլախ: Կենդանի մնացածներն ուղարկվել են Էրզրում: Ամբողջ ճանապարհի երկայնքով սփռված էին երեխաների ու մեծահասակների մարմիններ: Կենդանի մնացածները, որոնց համախմբում են ռուսական բարեգործական ընկերությունները, ներկայացնում են սարսափելի տեսարան. ծածկված ցնցոտիներով, հիվանդոտ և տանջահար, նրանք շարունակ հարցնում են, թե արդյոք իրենց կոտորելու են:

Տրապիզոնի հույները հավաստում են, որ այս կոտորածները կազմակերպել է քուրքական կառավարությունը, որն անողորմաբար հարստում է բոլոր նրանց, ովքեր աջակցում են հայերին»:
(A.M.G., 7 N 1283).

**Հանրապետության նախագահության քաղաքացիական գործերի
գլխավոր քարտուղար պ. Սանիսերը՝ Խորհրդի նախագահ,
Արաաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ն: Հրատապ:

Փարիզ, 12-ը հունիսի 1916 թ.:

Պ. Արշակ Չոպանյանը, որը բնակվում է Լա Բրույերի փողոցում (քիվ 17), դիմել է Հանրապետության պարոն նախագահին, խնդրելով նրան մասնակցել գրական և դերասանական ցերեկույթի, որը «Փարիզի հայ մտավորականները» կազմակերպելու են առաջիկա կիրակի օրը, հունիսի 18-ին, Գալվո դահլիճում:

Պարոն նախագահը հանձնարարում է ինձ խնդրել ձեզ բարեհաճելու որոշ գաղտնի տեղեկություններ հաղորդել իրեն պ. Չոպանյանի անձնավորության, ինչպես նաև խնդրո՞ւ առարկա միության մասին. բացի դրանից՝ հայտնել ձեր կարծիքը, թե ինչպիսի ընթացք հարկ կլինի տալ այս խնդրանքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 36).

229

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ
Պողոս Նուբար փաշան՝ պ. Սպենդիարյանին**

Հ. քիվ 32734/19:

[Պատճենը]:

Փարիզ, 14-ը հունիսի 1916 թ., ժ. 16.50-ին:

Ես հեռագրել եմ նախագահ Վիլսոնին՝ համատրեն խնդրելու համար նրա միջամտությունը: Ես ձեզ տեղյակ կպահեմ ընթացքին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 37).

230

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար
պ. Արիստիդ Բրիանը՝ Հանրապետության նախագահության
քաղաքացիական գործերի գլխավոր քարտուղար պ. Սանխտերին**

Ն: Հրատապ:

Փարիզ, 15-ը հունիսի 1916 թ.:

Պ. Արշակ Չոպանյանը, որին նվիրված է այս ամսի 12-ի ձեր նամակը¹, Փարիզի հայկական գաղութի ամենանշանավոր անձնավորությունն է: Նրա հայրենակիցները նրան համարում են բարձր մակարդակի գրող, իսկ իրենց ազգային պոեզիայից ու պատմական աշխատություններից կատարած քարզամոթյունները ֆրանսերենի, որոնք նա կրատարակել է, նրա համար ապահովել են բազմազիտակ մարդու համբավ: Բնագու՞մ տարիներ ի վեր Փարիզում հաստատված պ. Չոպանյանը՝ հանուն թուրքական բարբարոսության գոյը դարձած իր դժբախտ համակրոնակիցների գործի պաշտպանության հանդես է բերել այնպիսի նվիրվածություն, որը նրան պատիվ է բերում: Այս վերջին ամիսներին իմ Դեպարտա-

¹ Տե՛ս վերը քիվ 228 փաստաթուղթը:

մենտը բազմիցս առիթ է ունեցել զնահատելու թե՛ վեհ զգացմունքները և թե՛ միաժամանակ դիվանագիտական ու՝ քաղաքացիական շափի զուսպ զգացողությունը, որոնք երբևէ նա չի շրջանցել այդ ազնվաբարո առաքելության կատարման ընթացքում: Փարիզի որոշ թվով այլ «հայ մտավորականների» հետ մեկտեղ, նա կազմավորել է խմբակցության նման ինչ-որ մի բան, որը նպատակ ունի ֆրանսիական հասարակայնությանը ծանոթացնել հայ գրականությանը և մյուս կողմից, նրան հնարավորություն ընձեռել՝ զնահատելու որոշ հայ Օդերասանների տաղանդը:

Այս նկատառումներից ելնելով է, որ առաջիկա կիրակի օրը, հունիսի 18-ին, Գավո դահլիճում կազմակերպվելու է գրական և դերասանական ցերեկույթ, և ես երջանիկ կլինեմ, եթե Հանրապետության պարոն մախազախը, ներկայանալով այդ հավաքույթին, բարեհաճի Փարիզի հայ համայնքին հավաստել իր համակրանքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 38-38 v).

231

Ռազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Թիվ 12196. 10/11:

Փարիզ, 16-ը հունիսի 1916 թ.:

Անճեմասի հատուկ թղթակցի հաղորդագրությունը՝ Ժնև գաղթած հայերի մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 976, f. 179).

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաղորդագրություն Ժնևի հայկական համայնքի մասին

Թիվ 3176:

Անճեմաս, 9-ը հունիսի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հաղորդել հետևյալ տեղեկությունները, որոնք ստացել են Ժնևում գտնվող՝ ինձ տեղեկություններ հաղորդողներից մեկից.

«Ժնևի օտար գաղութների շարքում հայերն իրենց թվով գրավում են առաջին տեղը: Այս փաստը նորույթ չէ: Դեռևս նախքան եվրոպական պատերազմը, հայերը զանգվածաբար գաղթում էին Շվեյցարիա, նախապատվությունը տալով Ժնևին, որտեղ նրանք գտնվում էին իրենց հզոր «Դաշնակցություն» կազմակերպության հովանու ներքո:

Պատերազմում Թուրքիայի ընդգրկվելուց ի վեր, մեծ թվով հայեր թողել են Կոստանդնուպոլիսը, նմանապես այստեղ գալու և ապաստանելու համար: Նրանց թվում կան բժիշկներ, պատվավոր առևտրականներ, քաղաքական գործիչներ, ուսանողներ: Բոլոր այս գաղթականները բացահայտորեն հայտնում են Ֆրանսիայի հանդեպ տաժվող իրենց համակրանքը և Հայաստանի փրկությունն ակնկալում նրանից և Անգլիայից:

Ընդհանուր առմամբ, հայերն իրենցից փտանգավոր տալիս չեն ներկայացնում, բայց

իննարավոր է, որ այս ազնիվ մարդկանց մեջ սողոսկեն կասկածելի անձինք՝ հայեր, որոնք քուրքեր են դարձել մահմեդական կյանքն ընդունելու միջոցով: Նման դեպքում նրանց ազգանունները սովորաբար «յան»-ով չի ավարտվում: «Դաշնակցություն» կազմակերպության նպատակը քաջ հայտնի է՝ կազմակերպել «Պրո Արմենիա» շարժումը, նպաստել հայրենիքի ազատագրմանը, օժանդակել արտասահմանում գտնվող հայերին:

Բայց իր մարդասիրական գործին հետամուտ լինելու հարցում այս կազմակերպությունը միջոցների ընտրության առջև կանգ չի առնում: Եթե անհրաժեշտ է, օրինակ, որ անդամներից որևէ մեկն անցնի Ֆրանսիա կամ որևէ այլ երկիր, նրա համար կեղծ անձնագիր հայթայթելու ձևը նա կգտնի՝ այն փոխ առնելու կամ նույնիսկ պատրաստելու միջոցով: Այսպիսով, այս կազմակերպությունը, առանց այդ ցանկանալու, կարող է դառնալ կասկածելի գործերի մասնակիցը»:

Հատուկ կոմիսար,
ստորագրություն անընթեռնելի է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 976, ff. 180-180 v).

232

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. քիվ 806:

Լոնդոն, 28-ը հունիսի 1916 թ., ժ. 18.30-ին:
(*Մտացվել է ժ. 20-ին*):

Ֆորին Օֆիսն խնձ տեղեկացրել է, որ իրագել է դարձել Ամերիկայի հայերի մի խնդրագրի, որոնք ձգտում են ազատագրել Միջագետքի ռազմարշավի արդյունքում՝ Հնդկաստանում անգլիացիներին գերի բնկած իրենց հայրենակիցներին: Այս հայերը կցանկանային ծառայել քուրքերի դեմ դաշնակիցների բանակներում, բայց վերջերս Ֆրանսիայի հետ կայացված՝ Հայաստանին վերաբերող համաձայնության պատճառով, նախքան նրանց խնդրանքը քննարկելը, բրիտանական կառավարությունը կցանկանար իմանալ, թե արդյոք մենք ինքներս չենք պատրաստվում օգտվել նրանց ծառայություններից՝ հետագայում Ասիայում գործելու ակնկալությամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 73).

233

Ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Ժոնիլը Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. քիվ 1588: Գաղտնի:

Գ.ՀՇ, 3-ր հուլիսի 1916 թ.:

(Ստացել են Կաթ. հուլիսի 3-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 4-ին):

Համաձայն պ. Պոլ Կամբոնի հեռագրի (հունիսի 28-ի, թիվ 806)¹, որը դուք բարեհաճել եք ինձ հաղորդել, բրիտանական կառավարությունը կցանկանար խմանալ, թե արդյոք մենք կարող ենք, հետագայում Ասիայում գործելու ակնկալությամբ, օգտագործել անգլիացիներին գերի ընկած հայերին, որոնք կցանականային ծառայել դաշնակիցների բանակներում՝ բուրքերի դեմ:

Այս պահին բուրքերի դեմ որևէ ռազմական գործողություն չի նախատեսվում և բացի դրանից, ֆրանսիական օրենսդրության ներկա վիճակում, մենք չենք կարող մեր շարքերում ընդունել թշնամու հպատակությունն ունեցող որևէ մեկի:

Բայց ես հույս ունեմ, որ եթե այդ հայերը համաձայնվեն զալ Ֆրանսիայում աշխատելու, նրանք ի վիճակի կլինեն մեզ մատակարարելու օժանդակ բանվորական ուժ, որը մենք չենք կարողանա անուշադրության մատնել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 74).

234

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 837:

Լոնդոն, 4-ը հուլիսի 1916 թ., ժ. 19.15-ին:

Իմ թիվ 806 հեռագրի շարունակությունը²:

Գեներալ Քլայթոնի հետ քննարկված հարցերի թվում առաջ քաշվեց հայերին օգտագործելու խնդիրը: Թվում է, թե ներկա պայմաններում շահավետ կլինի Կիպրոսում համախմբել նրանց, ովքեր պիտանի կլինեն զինվորագրվելու և զորաբանակ կազմելու, որի սոսկ ներկայությունն անհանգստություն կստանառի բուրքերին: Վերջին համաձայնության պատճառով, որը Ֆրանսիային է հատկացնում Հայաստանի մեծ մասը, նրանց հրահանգիչները պետք է, բնականաբար, ֆրանսիացի սպաներ լինեն, իսկ անհրաժեշտ գունդները կտրամադրվեն մեր կողմից: Այս նախագծին շարունակություն տալն ինձ առավել հետաքրքիր է թվում, քանի որ Լոնդոն հասած վկայությունները միտում ունեն ասպացուցել, որ արաբների հեղափոխական շարժումն (ընդգրկել է) Սլիլում: (Այն դեպքում), երբ այս տեղեկությունները հաստատվեն, հնարավոր կլինի կանխատեսել այն պահը, երբ մեր ջանքերով Լիբանանի մատակարարման գործողությունները հնարավոր կդառնան, գործողություններ, որոնց համար կարելի է, հնարավորության դեպքում, օգտագործել այդ ուժը: Ընձեռված հնարավորությունը շրջանցելու հարկը չկա, քանզի սիրիացիները հաճույքով մեզ մեղադրում են մինչ այժմ իրենց վշտերն ամոքելու համար որևէ ջանք չգործադրելուն՝ այն տանջալից ճգնաժամի ընթացքում, որում զոհվում են:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք, մեր զինվորական վարչության հետ համաձայնություն կայացնելուց հետո, որքան հնարավոր է արագ, ինձ տեղյակ պահեք, թե ինչ-

¹ Տես վերը թիվ 232 փաստաթուղթը:

² Հունիսի 28-ի. վերն արտատպվել է թիվ 232 փաստաթղթում:

պիսի ընդունելության է պետք արժանացնել այս առաջարկությունը, քանզի գեներալ Քլայթոնն ուր օր անց մեկնելու է Եգիպտոս:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 75).

235

Մադրիդում Ֆրանսիայի դեսպան պ. Գեոֆրեյը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 513: Գաղտնի:

Մադրիդ, 10-ը հուլիսի 1916 թ.:
(*Մուսցել են* Կաթ. հուլիսի 13-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 16-ին):

Պետական նախարարը՝ վերջերս ինձ պատմել է, որ ըստ վստահելի սկզբնաղբյուրներին քաղված տեղեկությունների, թուրքերն այնպիսի վայրագություններ են գործել հայերի նկատմամբ, որ գերմանական և ավստրո-հունգարական կառավարություններն անորաժեշտ են համարել կշտամբանքներ հղել օսմանյան կառավարությանը: Այդ կշտամբանքները շատ վատ են ընդունվել և այն պատասխանում, որը հետևել է, պետք է հասկացնել տված լինեն, որ իր երկրում տեղ ու տնօրենը Բարձր Դուռն ինքն է և ցանկանում է մնալ այդպիսին:

Նվիրակը², որին ես պետական նախարարությունում հանդիպելու առիթն ունեցա, հայերի ճակատագրի մասին ինձ հետ խոսեց գրեթե միևնույն ոգով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 53).

236

Ռազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 3407-10/11:

Փարիզ, 11-ը հուլիսի 1916 թ.:
(*Մուսցել են* Կաթինետր հուլիսի 12-ին,
Քաղ. վարչ. հուլիսի 13-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից մի ծանուցագիր, որը կազմվել է փոստային գին-փորական գրաքննության տրամադրած փաստաթղթերի օգնությամբ և վերաբերում է թուրքերի կողմից իրականացված հայերի կոտորածներին:

Այս հաղորդագրությունը հետաքրքրություն է ներկայացնում այն առումով, որ վկայություններ է տալիս Հայաստանում Գերմանիայի վարած երկլիմի խաղի մասին, որը ցան-

1 Պ. Գիմենո ի Կոսթանսաք:

2 Նիտին սրբագնությունն Ռազմնեզին:

3 Մտորագրել է գեղապետ Վալանտինը:

կանում է միաժամանակ լինել Արևելքի քրիստոնյաների հովանավորը և նրանց կոտորող բուրքերի դաշնակիցը:

Կից ներկայացվող պրոֆեսոր Ռիխտերի մամակը¹ հետաքրքրական է այս տեսակետից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 54).

ՀԱՎԵԼՎԱԾ

Գերմանիան և հայերի կոտորածները

Հայերի կոտորածները, որոնք նախորդել են ռուսների առաջխաղացմանը Կովկասի այն կողմից, այս վայրագությունների հեղինակների՝ բուրքերի դեմ, առաջ են բերել վրդովմունքի արդարացի ակիբ. դատապարտությամբ հանդես եկող բազմաթիվ ձայներ Գերմանիան միախուսել են Թուրքիայի հետ: Մասնավորապես Նյու Յորքի «Լա Միսիոների ռևյուն» շատ բուռն ձևով է հանդես եկել գերմանական կառավարության դեմ, մեղադրելով նրան եթե ոչ կոտորածներ կազմակերպելու, ապա նվազագույնը դրանց նպաստելու համար՝ հավանություն տալուն հավասարազոր լուրջան պահպանությանը:

Միսիոներները, ինչպես և գերմանական կառավարությունը, թվում է, թե շատ են ազդվել այս մեղադրանքներից: Կայսրը, եթե Թուրքիայի դաշնակիցն է, սիրում է իրեն ներկայացնել իբրև Արևելքի քրիստոնյաների հովանավորի: Այսպիսով, այս դերը կատարելու համար հարկ էր ցույց տալ, որ հայերի նկատմամբ անտարբեր չէին, բայց պետք չէր տուրք տալ խանդավառությանը, հասնելով մինչ Թուրքիայի ներքին քաղաքականությանը միջամտելուն: Գերմանական դիվանագիտությունը բավական մեծ հմտությամբ է դուրս եկել դժվարին կացությունից: Թուրքերին հաճոյանալու համար նա փորձել է վարկաբեկել հայերին, նրանցից տարանջատելով հեղափոխական տարրին և նրան դարձնելով կոտորածի միակ պատասխանատուն: Այս առթիվ նա վերատույլ է և մեծաքանակ օրինակներով բազմացրել Վանում, իսկ այնուհետև՝ Էրզրումում Ռուսաստանի նախկին գլխավոր հյուպատոս, գեներալ Մակսիմովի գեներալից, որտեղ, Անգլիայի աջակցությամբ քաջալերված կատաղի կուսակցությունը մերկացվել է՝ իր ծայրահեղությունների պատճառով բուրքական բռնությունները պայմանավորելու հարցում: «Հայերի կոտորածները» խորագիրը կրող այս գրքույկը (1916), որի միտումնավոր լինելու հարցում կասկածներ տածելու համար, թվում է, թե շատ ավելի նվազ հիմքեր կան, քանզի նրա հեղինակը ռուս է, տպագրվել է ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով ու լայն տարածում գտել (հրատարակության միտումնավոր նպատակը բողոքելու համար ձեռնպահ են մնացել կազմի վրա, ինչպես նաև ներսի մասում, նշելու այն վայրի անունը, որտեղ այն հրատարակվել է):

Մյուս կողմից, գերմանական կառավարությունը մեծապես քաջալերել է իր միսիոներներին. եթե ոչ իրական, ապա նվազագույնը՝ բավական շինծու ոգևորություն դրսևորելու համար, որոնք քաղաքակիրթ աշխարհի առջև ինչ-որ մի գործողության պատրանք են ստեղծում: Այն նամակը, որի թարգմանությունը² մենք ուղարկում ենք սրան կից, հիանալիորեն բացահայտում է տվյալ պարագայում Բեռլինի առաքելությունների ցանցի ունեցած դերը: Ներկայիս միտումը հանգում է ամերիկյան օգնության կոմիտեներին սիրաշահելուն,

¹ Խոսքը վերաբերում է Բեռլինից ուղարկված՝ 1916 թ. հունիսի 9-ի թվակիր այդ նամակի գերմաներեն պատճենին, որը մենք չենք արտատպում:

² Չի հայտնաբերվել:

դրդեալուն նրանց՝ փող և պարենային գումակներ ուղարկելու, որոնց առաքումը հասցեատեղերին՝ Գերմանիան իբրև Թուրքիայի դաշնակից, երաշխավորում է. բավականաչափ օգնելով նրանց՝ դրանց բաշխման հարցում, [ոչպեսզի] հայերի շրջանում բարձրացնի իր վարկը՝ ամբողջությամբ ապահովելով իր համար այնպիսի մի երաշխիք, որն ուղղված է բուրքերի դեմ:

Մենք արդեն հիշատակել ենք Բեռլինից ստացված դժուկոտ}ը Կարլ Աքսենֆելդի (1916 թ. ապրիլի 22-ի) նամակը՝ հղված պատվելի դժուկոտ}ը Ջոն Ռ. Մոքքին (124, Արևելյան քաղամաս, 28-րդ փողոց, Նյու Յորք), որտեղ հայերի կոտորածներին ունեցած յուրաքանչյուր մասնակցություն եռանդորեն ժխտվում է և Գերմանիայի դերն այս գործում համեմատվում Ռուսաստանի հանդեպ Անգլիայի ունեցած վարքագծի հետ այն ժամանակաշրջանում, երբ Լեհաստանի և Գալիցիայի իրենները տանջահար են եղել և տեղահանվել:

Երբ պատվելի Շառլ Ս. Մակ Ֆարլանդն իբրև «Ամերիկայի քրիստոնեական եկեղեցիների դաշնակցային խորհուրդի» պատվիրակ, 1915 թ. դեկտեմբերին եկավ Եվրոպայի շուրջ շրջագայություն կատարելու, նա Բեռլինում հրաշալի ընդունելության արժանացավ իր նախկին պրոֆեսոր Ադոլֆ Դեյմաննի՝ «Փոքրեսքանք ուխտի լեթերի» հեղինակի կողմից, որը նրան ներկայացրեց բոլոր ամենապատկառելի անձանց: Մյապես նա ծանոթացավ դժուկոտ}ը Յոհաննես] Լեփսիուսի հետ, որը զբաղվում է, մասնավորապես, Թուրքիայում գործող առաքելությունների հարցով: Ջուրջի ընթացքում դժուկոտ}ը Լեփսիուսն այնպիսի հմտությամբ է համագործակցության դրդել «Գերմանական առաքելությունների համձնաժողովին» և «Հայկական բարեգործական կոմիտեին», որ Մակ Ֆարլանդն անմիջապես հեռագրել է պատվելի Ջեյմս Լ. Բարթոնին՝ ամերիկյան կոմիտեի նախագահին, կոչելով նրան նամակագրություն պահպանել պրոֆեսոր Ջուլիուս Ռիխտերի՝ գերմանական օտարերկրյա առաքելությունների կազմակերպության նախագահի և դժուկոտ}ը Լեփսիուսի հետ (տե՛ս այս առթիվ՝ Rev. Charles S. MacFarland, *Report of mission to Europe December 1915 - January 1916*, S.I.n.d., In 8^o, 28 p.):

Մույն նամակը ցույց է տալիս, որ դրա հեղինակ դժուկոտ}ը Ջուլիուս Ռիխտերն Ամերիկայում չի սահմանափակվել հարաբերություններ հաստատելով միայն պատվելի Բարթոնի հետ և ունի, անկասկած, նաև այլ քրթակիցներ, (որոնց՝ նրա համար գտել է, ի դեպ, պատվելի Մակ Ֆարլանդը): Նա պատասխանում է մի նամակի, որը դժուկոտ}ը Վ. Վ. Ռոբուերը (419, Արևմտյան քաղամաս, 117-րդ փողոց), Նյու Յորք) նրան է հղել «Հայկական և սիրիական բարեգործական կոմիտեի» անունից, մարտի 3-ի ամսաթվով: Նա նրանից շնորհակալություն է հայտնում քաղաքական նկատառումների ազդեցությանը տուրք չտալու, բայց և հայերի համար դրան ու նպաստներ հավաքելու համար: Առաքելություններում ընդգրկված գերմանացի քույրերն իրենց հերթին անում են այն ամենն, ինչ իրավիճակը թույլատրում է: «Գերմանական առաքելությունների համձնաժողովի» շրջանակում ստեղծվել է «Արևելքի և իսլամի» հանձնաժողովը: Այս հանձնաժողովը, որի անունից և գրում է դժուկոտ}ը Ջ. Ռիխտերը, փետրվարին համաձայնության է հանգել գերմանական ավետարանական առաքելության և բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ հայերին Լական օգնություն ցուցաբերելու հարցում: «Դուք կհասկանաք, - գրում է դժուկոտ}ը Ռիխտերը, - որ մենք բացահայտորեն չէինք խոսում այն մասին, ինչ գերմանացի միսիոներներն են անում տեղահանված հայերի տառապանքը մեղմացնելու համար, ելնելով այն մտավախությունից, որ նրանց ցուցաբերվող աջակցությունը դրանով իսկ, կարող է դառնալ նվազ արդյունավետ»: Ըստ նրա, իրոք որ, հարկ է զգույշ վերաբերվել քույրերի դյուրագագացությանը: Ճշմարտությունը պետք է հանգի այն բանին, որ այժմ գերմանացիներն այլևս հայերին օգնություն չեն ցուցաբերում և որ նրանց լուրջությունը շատ ավելի

պայմանավորված է անճշտություններ բոլոր տալու մտավախությամբ, որոնք հեշտությամբ կհերքվեն, քան քաղաքական նկատառումներով: Այլ աշխատությունների բացակայության պատճառով, դ {ոկտո}ր Ջ. Ռիխտերն իր թղթակցին է ուղարկում գերմանացիների տպագրած հողվածների և գրքույկների մի ցուցակ, նրան ցույց տալու համար, թե որքան է Հայկական հարցը Գերմանիայում հուզել առաքելությունների հասարակությանը: Գերմանական կառավարությունն իր կողմից արել է այն ամենը, ինչը կարող էր օգտակար լինել բաղձալի ձևով թուրքական կառավարության վրա ներգործելու համար: Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանը¹, ինչպես այդ մասին կարող է վկայել ամերիկյան դեսպան Մորգենթաուն, գործադրել է բոլոր ուժերը ցանկացած միջոցով հայերի բնաջնջումը կանխելու: Գերմանացիների բայի կամքի նման ապացույցներին ի տես՝ կարելի է հուսալ, որ ամերիկացիները կհամոզվեն, որ «գերմանացիների ազնվաբար կայսրը, նրա հարգարժան և ազնիվ վարչապետը, ինչպես նաև նրա կառավարությունը, բացարձակապես մեղավոր չեն հայերի դժբախտ ճակատագրի հարցում, որ իրենց դեմ ուղղված բոլոր մեղադրանքները՝ բացահայտ գրպարտություններ և ստեր են»:

Հարկ է երկյուղել այն բանից, որ բարեգործական քողի ներքո, առաքելությունները չնպաստեն ամերիկյան փողերը Գերմանիային տրամադրելուն և մեզ թշնամի քարոզչության ծախսերը հոգալուն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 55-88).

237

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոքին

Ճ. թիվ 2892:

Փարիզ, 19-ը հուլիսի 1916 թ.:

Այս ամսի 4-ի քվակիր հեռագրով², որի պատճենը ներկայացվում է սյան կից, Լոնդոնում Հանրապետության դեսպանն³ ինձ տեղյակ է պահում Եգիպտոս գաղթած, ինչպես նաև Հնդկաստանում գտնվող հայերին, հնարավորության սահմաններում, օգտագործելուն վերաբերող անգլիական առաջարկին: Գեներալ Զլայթոնը գտնում է, որ հարկ է Կիպրոսում համախմբել նրանց, ովքեր պիտանի կլինեն իբրև զինվոր ծառայելու և նրանցից գործերի կորստու կազմակերպել, որի ներկայությունն իսկ այս վայրերում՝ թուրքերին անհանգստություն կպատճառի ու կհարկադրի նրանց չամայացնել Արևմտյան Սիրիան: Այն պահին, երբ արաբների ապստամբությունը սպառնում է թուրքական տիրապետությանը ոչ միայն քերակզում, այլև Պաղեստինում ու Սիրիայում, կասկածից վեր է, որ Աղանայի և Ալեքսանդրետի շրջակայքում պարտիզանական կորպուսի կազմավորումը և մարզումը կխանգարի թուրքերին իրենց բոլոր ուժերը տանելու հարավ՝ Մեքքայի շերիֆին ջախջախելու համար:

Անգլիացիները չեզոքաբար առաջարկում են մեզ ֆրանսիացի սպաներին վստահել այս հայերին զինելու և վարժեցնելու հոգսը:

1 Պ. Կանգենիայնը:

2 Տե՛ս վերը թիվ 234 փաստաթուղթը:

3 Պ. Պոլ Կամբոնը:

Ես գտնում եմ, որ այսպիսի շրջանակներում սահմանափակվող անգլիական առաջարկարյուն ընդունելի է: Այս պահին, մեզ համար չի կարող, իրոք որ, խոսք լինել Սլովիայում գործողությունների նոր քատերաքեմ բաց անելու մասին, բայց մենք մեր ներկայությունն այն տարածքի մոտակայքում զգալ տալու առավելությունը կունենանք. որի նկատմամբ ցանկանում ենք ընդգծել մեր իրավունքները: Բացի դրանից, եթե արաբական ասպտամբական շարժման հաջողությունը կայունանա, մեզ համար շահեկան կլինի, հնարավորության սահմաններում, ապստամբներին կցել, մինչ նրանք կգիտակցեն իրենց ուժի և լատ այդ կկամենան ստեղծել խառնակությունն ու անիշխանությունը հավերժացնող անկախ իշխանություններ, ֆրանսիացի սպաներից բաղկացած հրամանատարական կազմ ունեցող կարգապահ մի կորպուս՝ Հյուսիսային Սլովիայի վարչական կազմակերպումն իր ձեռքում կենտրոնացնելու համար:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք ինձ շտապ տեղեկացնեք, թե արդյոք դուք ի վիճակի՞ եք տրամադրել ֆրանսիական հրամանատարական կազմ և զենքեր, որոնք անհրաժեշտ [կլինեն]՝ առավելագույնը 5000 հայերից բաղկացած կորպուսի համար:

Եզրափակելով, ես գտնում եմ, որ պատասխանելու համար հուլիսի 3-ին գլխավոր հրամանատար զեներալի ալած դիտողությունը¹, պարտավոր եմ ձեզ հիշեցնել, որ Եզրապտուսի հայերը, եթե հակված են զինվորագրվելու և զենք կրելու, ապա մշտապես հրաժարվել են իբրև բանվորներ ծառայելու յուրաքանչյուր հավաքագրումից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 76-77 v).

238

Ռազմական նախարար, զեներալ Ռոբըլ՝ ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար, զեներալ Ժոֆրին

Ճ. թիվ 4825-9/11:

Փարիզ, 27-ը հուլիսի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից Լոնդոնում ֆրանսիական հանրապետության դեսպանի հուլիսի 4-ի թվակիր հեռագրի² և Արտաքին գործերի նախարարի հուլիսի 19-ի թիվ 2892 ճեպագրի³ պատճենները, որոնք վերաբերում են Թուրքիայի դեմ մարտնչելու ցանկություն ունեցող օսմանյան հայ հպատակների հնարավոր համախմբմանը Կիպրոսում՝ ֆրանսիայի հոգաձուռյամբ հրամանատարական կազմով նրանց այդտեղ ապահովելու և կազմակերպելու համար:

Կիպրոսում հայկական զինված անձնակազմերի համախմբումը և ուսուցանումը՝ Կլիկիայում դրանք օգտագործելու նպատակով, առաջարկել է Սոֆիայում հայկական կոմիտեների ներկայացուցիչ պ. Վարդանյանը⁴, 1915 թ. մարտ ամսից ի վեր:

Բայց այդ ժամանակ կառավարությունը գտավ, որ «մեծ քանակով հայերի նախնական կուտակումը, նրանց ուսուցանումը որոշակի վայրերում, Փոքր Ասիայի ափերի մոտակայքում, չի հասլուղի անմիջապես զրավել թուրքերի ուշադրությունը և, անկասկած, նրանց

1 Տե՛ս վերը թիվ 233 փաստաթուղթը:

2 Վերն արտատպվել է թիվ 234 փաստաթղթում:

3 Տե՛ս վերը թիվ 237 փաստաթուղթը:

4 Սխալ է. իմա՝ պ. Վարանյան. տե՛ս վերը թիվ 16 փաստաթուղթը (հավելված I, II):

կորոյի՝ ներքին նահանգներում ապրող հայ բնակչության նկատմամբ կիրառել կոտորածների քաղաքականությունը»։ Նման հանգամանքներում, նախընտրելի էր թվացել Արևելքի ռազմարշավային բանակը ղեկավարող գեներալի մոտ ուղարկել այն հայերին, որոնք կցանկանային անհատական կարգով՝ իրենց միևնույն խմբավորման մեջ ընդգրկելու պայմանով՝ համագործակցել մեր նախածեղնությանը Դարդաներում, երե իհարկե նրանց քանակը դառնար հսկայական և երե հանգամանքները դրան նպաստեին:

Այդ ժամանակ Թուրքիայի նկատմամբ Ֆրանսիայի վարած քաղաքականությունը, առափնյա շրջանում ապստամբների խմբավորումներին զինելու և քաջալերելու դժվարությունը՝ առանց նրանց աջակցելու կամ, անհրաժեշտության պարագայում, ապաստան հատկացնելու պարտավորությունը ստանձնելու, ի վնաս մեր ուժերի խնայողության՝ երկրորդական գործողությունների բատերաբեմ ստեղծելու աննպատակահարմարությունը, վերջապես, Թուրքիայի քրիստոնյա բնակիչների նկատմամբ արյունալի բռնությունների սանձազերծումից խույս տալու անհրաժեշտությունը, հարկադրեցին հրաժարվել, ըստ էության, անկանոն խմբերի կազմավորումից:

Այսօր հարցը հառնում է բոլորովին այլ լույսի ներքո. խոսքը վերաբերում է Մեծ Բրիտանիայի առաջարկությամբ հայերին Կիպրոսում համախմբելուն՝ նրանցից կազմակերպված ուժ ստեղծելու նպատակով, որը կսպառնա օսմանյան ուժերի ավի դուրս բերմանը և հետագայում, արաբական ապստամբության ծավալման դեպքում, պիտանի կլինի սլրիական շարժմանը գորավիզ լինելու համար:

Հայկական կորպուսի կենտրոնացումն Ալեքսանդրետի ծոցի մոտակայքում, այն վայրում, որտեղ թուրքական հաղորդակցությունների գիծը դեպի Կովկաս, Միջագետք, Միդիա և Հեջազ վերին աստիճանի խոցելի է, անկասկած, հայտարարում կհանգեցնի՝ Փոքր Ասիայում գործող օսմանյան ուժերի մի կարևոր մասը Սիրիայի հյուսիսում գամելուն, ինչպես մեր կողմից Միթիդենի գրավումը, հանուն որի ես համառորեն պնդել եմ բազմաթիվ առիթներով, նպաստեց վերջին ամիսներին Ջմյուռնիայում ոչ պակաս, քան չորս դիվիզիաներ պահելուն¹:

Մյուս կողմից, կասկածից վեր է, որ հետևելով պ. Կամբոնի առաջարկությանը, որն արժանացել է Խորհրդի պ. նախագահի² հավանությանը, մեզ համար օգտակար կլինի կախողանալ, երե արաբական ապստամբությանը հաջողվի ծավալվել, սիրիական ժողովուրդներին կցել ֆրանսիական սպաների կողմից մարզված և հրամանատարական կազմով համալրված մի կորպուս, որն ընդունակ լինի իր ձեռքում կենտրոնացնել Սիրիայի վարչական կազմակերպումը, որի նկատմամբ մեր իրավունքները ճանաչել են մեր դաշնակիցները:

Բայց ինչպիսին էլ որ լինեն այդ կորպուսի կազմավորման հիմունքները, այն չի կարելի թողնել իր իսկ տնօրինությանը: Հավանաբար, մենք հարկադրված կլինենք դրան գորավիզ լինել ֆրանսիական գործերի հիմնական ուժերով և պարտավոր կլինենք ապաստան հատկացնել՝ անհաջողության պարագայում:

Այս հնարավորությունը հետաքրքրություն է ներկայացնում մեր գործողությունների ընդհանուր ուրվագծի համար, ուստի՝ ես տեղեկացրել եմ Խորհրդի նախագահին, որ այն չի կարող նախատեսվել, մինչ դուր չհայտնեք ձեր կարծիքը հարցի վերաբերյալ:

Մտքերի միևնույն շարանում, Կահիրեում Ֆրանսիայի նախարարի և գլխավոր հյուպա-

1 Փաստարթի ծանոթագրությունը. «Բայց քանի որ այս սպառնալիքը հայտարարում պետք է մտնի թուրքերին դրոյի նավելու Կիլիկիայի պաշտպանության միջոցները, այն չի կարող իրագործվել, երե այս շրջանը ռազմական գործողությունների գոտի դարձնելու խնդիրը հետագայում ընդգրկվի մեր մտադրություններում»:

2 Պ. Արխսոփ Լեբանը:

տուսի հուլիսի 15-ի հեռագիրը, որի պատճենը դուք կգտնեք սրան կից¹, տեղեկացնում է, որ անասրիները, Տրիպոլիի հյուսիսում գտնվող՝ Օրոնտի և ծովի միջև ընկած լեռնային շրջանի բնակիչները, Սիրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող փոխծովակալին² են հայտնել իրենց և միաժամանակ իրենց մոտ ապաստանած օսմանյան բնակի 3-ից 4000 դասալիքների՝ օսմանյան կառավարության դեմ ապստամբելու պատրաստակամությունը՝ զենքեր և ռազմամթերքներ իրենց առաքելու պայմանով:

Այս աջակցությունն այն առավելությունը կունենա, որ ներկա պահից սկսած զգալ կտաներ ազդեցությունն այն տարածքներում, որոնց նկատմամբ մենք ցանկանում ենք ընդգծել մեր իրավունքները: Թվում է, թե ներկայումս Սիրիան ավելի, քան երբևէ գորքերի ներկայության կարիք ունի և այդ Ջեմալ փաշայի բանակի պահեստայիններից է, որ պետք է առանձնացվեն, դրանում կարելի է չկասկածել, Հեջազում բուրքերի դիպրերը վերսկանգնելու համար նախատեսված օժանդակ ուժերը, եթե ի լրումն, դրա ժամանակը հասել է: Այսպիսով, մասնավորապես, շահավետ կլինի, եթե Մեքքայի շերիֆին օգնության հասնելու համար Սիրիայում ապստամբական օջախ ստեղծվի: Այս ոգով գործելու համար անսարիները գտնվում են բավական լավ տեղանքում և այն փաստը, ըստ որի նրանք պաշտոնապես մահմեդականներ են համարվում, օսմանյան կառավարության համար որևէ պատրվակ չի ծառայի Լիբանանի կամ այլ վայրերի քրիստոնյաների նկատմամբ բռնությունների գործադրելու համար:

Արտաքին գործերի և Ռազմածովային նախարարներից թիվ 4824 է. թիվ 4823-9/11 ճեպագրերով³, որոնց պատճենը դուք կգտնեք սրան կից, ես խնդրել եմ ինձ տեղյակ պահել այդ Դեֆիրանսի առաջարկության շուրջ ունեցած իրենց կարծիքներին և խնդրում եմ ձեզ բարեհաճել ինձ հայտնելու մաս ձեր կարծիքն այս հարցի շուրջ:

Ի վերջո, բարեհաճեք ինձ տեղյակ պահել ձեր կարծիքին՝ Կիպրոսում ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող հայկական կորպուս կազմավորելու և անասրիներին զինելու բուն սկզբունքի մասին:

Եթե պատեհ՝ առիթը ներկայանա, հրատապ կլինի ձևավորել այս օժանդակ գորքերի հրամանատարական կազմը, որը կարող է կցվել Արևելքի բնակիչին և որի կարգավիճակը (հավաքագրման պայմանները, աշխատավարձը, մրերային նպաստները և այլն) անհրաժեշտ կլինի սահմանել:

Ինչ վերաբերում է անսարիների զինմանը, ապա այն կարող է սահմանափակվել գերմանական հրացաններով, որոնց գործածությունն Արևելքի բնակիչներին ավելի հատուկ է: (A.C.M., SS S a 42).

Ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Ժոֆրը՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոբին

Ծ. թիվ 150: Գաղտնի:

ԳՀԾ, 1-ը օգոստոսի 1916 թ.:

¹ Արտատպված չէ:

² Դերծովակալ դր Սալտզը:

³ Արտատպված չեն:

Հուլիսի 27-ի թիվ 4825-9/11 նամակով¹, դուք ինձնից հարցրել եք իմ կարծիքը Կիպրոսում ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող 5000 հայերից բաղկացած կորպուսի կազմավորման և Թուրքիայի դեմ ապստամբելու պատրաստ անսարիենների զինելու սկզբունքի մասին:

1/ Ես համամիտ եմ ձեր տեսակետին հայկական կորպուսի կազմավորման հնարավորության շուրջ, որի ներկայությունը Կիպրոսում Թուրքիայի համար սպառնալիք կստեղծի և մեզ հնարավորություն կընձեռի, անհրաժեշտության դեպքում, օգտագործել արաբական ապստամբության ծավալումը՝ նեցուկ դառնալով սիրիական շարժմանը կամ այն ժողովուրդների յուրաքանչյուր այլ խռովությանը, որոնք կրքոտությամբ ցանկանում են թոթափել օսմանյան լուծը:

Չորս գումարտակներից բաղկացած և պահեստ ունեցող գունդը հրամանատարական կազմով ապահովելը, Մաթնիկում բունիական գումարտակը հրամանատարական կազմով ապահովելու շուրջ ընդունված միջոցների համամանությունը, կպահանջի ընդհանուր առմամբ երեսուն սպա և կարող է հսգողությամբ պսակվել: Հարկ կլինի կորպուսի հրամանատարի տեղակալ նշանակել խիստ համապատասխան սպայի²:

Այս պահին չի կարող խոսք լինել հայկական կորպուսի ֆրանսիական գործերով հզորացնելու մասին՝ գլխավոր ռազմաճակատից որևէ ուժ դուրս բերելու անհնարինության պատճառով: Ի դեպ, դրանով մենք կհայտնվենք շատ ավելի վտանգավոր կացության մեջ, քանի որ մեր պահեստային ուժերը, որոնք Սոմի և Վերդենի երկու ճակատամարտերի հետևանքով նվազել են, արդեն անբավարար են Արևելքի բանակը մարդկանցով համալրելու համար և, իհարկե, հնարավորություն չեն ընձեռի ապահովել գործողության իրականացումը Փոքր Ասիայում: Առավելագույնը, Կիպրոսի հայկական կորպուսին կարելի կլինի հատկացնել Հյուսիսային Աֆրիկայի գումարտակներից մեկի հնարավոր աջակցությունը:

Մյուս կողմից, ես չեմ տեսնում հայկական կորպուսն Արևելքի բանակին կցելու օգտակարությունը, քանզի այդ բանակի գործողությունների թատերաբեմը և առաքելությունը որևէ առնչություն չունեն այն գործողությունների հետ, որոնք կարող են ի կատար ածվել ասիական ափի շրջանում:

Կիպրոսի հայկական կորպուսը պետք է պատրաստ լինի օգտագործել յուրաքանչյուր քաղաքական իրավիճակ, որն Օսմանյան կայսրությանը կբխի այս տարածաշրջանում առկա անհետքահարկի դժվարությունների:

Սակայն, քանի որ խոսքը վերաբերում է, հնարավորության դեպքում, խռովությանն աջակցելուն կամ ասիական ափի շրջանում օժանդակ ուժեր օգտագործելուն, որոնք վճռոյուշ նշանակություն կունենան, ապա Արևելքի բանակի հրամանատարից չէ, որ կարելի է պահանջել Ասիայում արդյունավետ միջամտության համար արագասահ պահի ընտրությունը: Իմ կարծիքով, այդ առաքելությունը պետք է բողոքել արդեն տեղում գտնվող դեկավարի հայեցողությանը, որն օսմանյան լուծը թոթափելու պատրաստ ժողովուրդների շրջանում տեղի ունեցող տեղաշարժերին հետևում է շատ մոտ տարածությունից: Ինձ թվում է, որ Սիրիայում գործող ռազմածովային դիվիզիան գլխավորող դերժովակալը միակ բանիմաց

¹ Տես վերը թիվ 238 փաստաթուղթը:

² Փաստաթղթի ծանոթագրությունը. «Հունաստանում տեղեկատվական ծառայության աշխատակից կապիտան Շամպոթր, ինչպես ինձ հարորդել են, շատ պատրաստված է»:

դեկավարն է գլխավորելու համար այն զինված ուժերի հնարավոր գործունեությունը, որոնք մենք պետք է ստեղծենք և որոնց պետք է աջակցենք Փոքր Ասիայի ափի մոտակայքում:

2/ Ես այն կարծիքին եմ, որ հարկ է քաջալերել Թուրքիայի դեմ ուղղված անսարիենների ապստամբական շարժմանը և հանձնարարել Սիրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող դերձովակալին՝ առաքել նրանց զենքեր և ռազմամթերքներ, որոնք պահանջվել են: Ինչպիսին էլ որ լինի այս ապստամբության արդյունքը, մենք շահագրգռված ենք բուրբակյան ուժերն Ասիայում ցրված և մասնատված պահելու հարցում, այնժամ, երբ գլխավոր ռազմաճակատներում ծավալվում են գործողություններ, որոնք, մենք սպասում ենք, վճռելու են պատերազմի ելքը:

Հանրագումարում.

Ես գտնում եմ, որ Օսմանյան կայսրությանը սպառնացող քաղաքական մեծ դժվարություններն ի նպաստ մեզ օգտագործելու համար, հարկ է, որքան հնարավոր է արագ, Կիսրոսում կազմավորել ֆրանսիական սպաներով համալրված հյուսնանատարական կազմ ունեցող և Սիրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող դերձովակալի ենթակայության ներքո գտնվող՝ 5000 հայերից բաղկացած կորպուս:

Նմանապես հենց այդ զեներային է, որ պետք է հանձնարարվի զենքերի և ռազմամթերքների առաքումն անսարիեններին, որոնք այս բնակիչները նրանից պահանջում են Թուրքիայի դեմ ապստամբելու համար:

(A.M.G., 7 N 2150).

240

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանություն գործուղված պ. Ժորժ-Պիկոն՝ հրամանատար Ռ-ոմիոյին

Ն:

Լոնդոն, 8-ը օգոստոսի 1916 թ.:

Այն պահին, երբ ես բողոքում էի Փարիզը, ինձ տեղեկացրին այն պատասխանին, որը գլխավոր հրամանատարը տվել է հուլիսի 27-ի ձեռնարկին¹: Չնայած այս պահից լուրջ այն մեզ չի զուհացնում, այդուհանդերձ, նշանավորում է առաջին հաջողությունը:

Գեներալ Ժորժն իրաք ընդունում է, որ հայկական կորպուսի կազմավորումը Կիսրոսում օգտակար է², որը կբույստրի աջակցել սիրիական շարժմանը, և կարծեք թե, հակված է համաձայնվելու, որ նրան Հյուսիսային Աֆրիկայի գումարտակներից մեկի հնարավոր օժանդակությունը ցուցաբերվի: Հարկ է անհասպող օգտագործել այդ բարյացակամ տրամադրվածությունը: Դրա համար ես շահագրգռվածություն եմ տեսնում այն բանում, ինչը հանձնարարվել է մեր ռազմական կցորդին, այն է՝ որքան հնարավոր է արագ մերձենալ Ուոր Օֆիսին, հայցելու համար նրա համաձայնությունը Կիսրոսում այդ ռազմական կազմակերպության և զենքերի պահեստի տեղավորման գործում: Ի դեպ, ես ոչ մի դժվարություն չեմ կանխատեսում, բայց հարցին մնան ձևով, ավելի շուտ Ֆորին Օֆիսի միջոցով մոտենալու մեջ, շատ ավելի մեծ առավելություն եմ տեսնում, որը, հավանաբար, մեզ կկասկածի բուն կղզու նկատմամբ քաղաքական նկրտումներ ունենալու հարցում:

¹ Չի գտնվել:

² Այս առիվ տես վերը բիլ 238 և 239 փաստաթղթերը:

Հենց որ անգլիացիների համաձայնությունը ստացվի, կարող են որդեգրվել իրականացման միջոցները. հայկական գնդի, Աֆրիկայի գումարտակի հրամանատարական կադրերի և 60000 հրացանների՝ իրենց ռազմաժողովների հետ մեկտեղ, առաքում Կիպրոս: Այնուամենայնիվ, այդ վերջինները չպետք է բաժանվեն անսարիեններին մինչ նոր ծանուցումը: Ամեն դեպքում, հարկ է գործել արագ, որովհետև ներկա պահին, ժամերը քսակարծեք են:

Ծովակալ դը Բոնը, որին ես տեսել եմ, ինձ ասաց, որ կարող է տնօրինել միայն այն ծովային հետևակայիններին, որոնք գտնվում են Դյունկերկում (1500 մ[արոյ]): Բայց եթե գլխավոր հրամանատարը համաձայնվեր նրանց զոհաբերել, ինքը պատրաստ է նրանց անձնակազմը հասցնել 2500 մարդու և ուղարկել Սիրիա:

(A.M.G., 7 N 2150).

241

Ռազմական նախարար, գեներալ Ռոբը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 5140-9/11: Գաղտնի:

Փարիզ, 10-ը օգոստոսի 1916 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. օգոստոսի 13-ին):

Պատասխանելով օգոստոսի 5-ի ձեռք բերված 3165 ճեպագրին¹ և իբրև հուլիսի 27-ի իմ թիվ 4824-9/11 ճեպագրի² շարունակություն, ես ընդունում եմ, ինչպես և դուք, ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող հայկական կորպուսի համախմբման և կազմավորման հնարավորությունը Կիպրոսում և ամբողջությամբ հակված եմ անձնակազմ, զենք և անհրաժեշտ մթերային սպառարների տրամադրելու: Այդ կազմակերպությունը կարող է ենթադրել կամ ֆրանսիական փոքրաթիվ հրամանատարական կադրեր ունեցող պարտիզանական կորպուսի ձևավորում, որոնք կապահովեն զինված անձնակազմերի ուսուցումը, կարգապահությունը և ծախսերը, կամ մեկ, գուցե և բազմաթիվ, օտարերկրյա գումարտակների ձևավորում, որոնք կունենան նույն կառուցվածքն ինչ բունիական գումարտակը, այն է՝ բաղկացած կլինեն կանոնավոր զինվորական ստորաբաժանումներից, որի անդամներն օգտվում են նույն նպաստներից, ինչ ֆրանսիացի զինվորականները:

Այս երկրորդ լուծումն, ի դեպ, այնպիսին է, որ զինվորական ստորաբաժանումները կդարձնի ամենամարտունակը, լինելով կատարելապես ամենաշահավետը: Հենց այս լուծումն է մատնանշել ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատարը:

Բայց նախքան իրականացնելու միջոցներին անցնելը, որոնք այն ենթադրում է, ես ձեռք բերում եմ ինձ տեղյակ պահել, քե արդյոք դուք ստացել եք Ֆորին Օֆիսի անհրաժեշտ համաձայնությունն այս առթիվ:

Համաձայն պ. Կամբոնի հուլիսի 4-ի թվակիր հեռագրի³, իրականում, խոսքը վերաբերում է միայն գեներալ Զլաթոնի առաջարկին և լստ պ. Պիկոյի՝ իմ Դեպարտամենտին տված տեղեկությունների, Ուոր Օֆիսի հետ նախնական համաձայնության կայացումն

1 Արտատված չէ: Օգոստոսի 5-ի այս ճեպագրով Դեպարտամենտը շտապ հայցում է Ռազմական նախարարության կարծիքը՝ Կիպրոսում հայ զաղրականների կորպուսի ձևավորման նախագծի առթիվ:

2 Արտատված չէ:

3 Տես վերը թիվ 234 փաստաթուղթը:

անհրաժեշտ կլինի:

Մյուս կողմից, այն միակ հայերը, որոնց վրա այժմ կարելի է հենվել, Եզրիպտոս գաղթածներն են: Եթե խոսքը վերաբերում է նրանց, ովքեր արդեն համախմբվել են Պոլտ-Սաիդում, ես ձեզ հիշեցնում եմ, որ 1916 թ. մայիսի 1-ի դրությամբ, նրանց թիվն արդեն չէր գերազանցում 250-ը և որ նրանց միջակ մարտունակությունը դրդել է իմ Դեպարտամենտին, ինչպես նաև Ռազմածովային դեպարտամենտին, հրաժարվել նրանց օգտագործելու մտքից:

Հավաքագրման ենթակա զինված անձնակազմերի քանակն, այսպիսով, կնվազեցվի և հարկ կլինի դասը ընտրել Եզրիպտոսի և Հնդկաստանի հայ բնակիչների ու այն անհատների թվից, որոնց հնարավոր կլինի հավաքագրել Փոքր Ասիայում՝ Սիրիայում գործող մեր ռազմածովային դիվիզիայի միջոցով:

Ուստի, դուք, անկասկած, պետք է ընդունեք, որ նախքան հայկական կորպուսի կազմավորման համար անհրաժեշտ անձնակազմը և զույքը Կիպրոս ուղարկելը, անհրաժեշտ է հրամանատարական կազմի առաջին ատյանից բաղկացած առաքելության միջոցով հետախուզել այն պայմանները, որոնցում հառնում է ստեղծվող կազմակերպությունը, այն հայ գաղթականների բնավորությունը և քանակը, որոնք պետք է հրավիրվեն առաջին զինված անձնակազմերը կազմավորելու համար: Այդ առաքելության ղեկավարը, որը կստուղ է լինել հայկական կորպուսի ապագա հրամանատարը, պետք է տեղական բրիտանական իշխանությունների ու Սիրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող դերժովակալի հետ գործի համաձայնեցված և այնուհետև՝ ինձ ուղարկի յուրաքանչյուր շահեկան առաջարկություն, որը կառնչվի կորպուսին հատկացվելիք առաջին կառուցվածքին, այն կարգավիճակին ու հանգուցակետին, որոնք հարկ կլինի նախընտրել այն կազմակերպելու համար:

Եթե դուք ընդունում եք իմ տեսակետը, ես այդ առաքելությունը, իմ ռազմածովային գործընկերոջ հետ համաձայնություն կայացնելուց հետո, Կիպրոս կուղարկեմ. հենց այն պահից, երբ ինձ տեղեկացնեք, որ բրիտանական կառավարության հետ անհրաժեշտ համաձայնության եք հանգել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 93-93 v).

242

Ռազմական նախարար, գեներալ Ռոբըր Ռազմածովային նախարար, դերժովակալ Լակազին

Ճ. թիվ 5174-9/11: Գաղտնի:

• Փարիզ, 12-ը օգոստոսի 1916 թ.:
(*Ստուգել են* Կարթինետոն օգոստոսի 16-ին,
Գլխավոր} 2 {տաբի} 4-րդ ենթաբաժնին
օգոստոսի 17-ին):

Քաղաքական իրադրությունն Օսմանյան կայսրությունում, իսկ էլ ավելի մասնավորապես արաբական երկրներում և Սիրիայում, դրդել է Արտաքին գործերի նախարարին նախատեսել ֆրանսիացի սպաներից բաղկացած հրամանատարական կազմ ունեցող հայ գաղթականների կորպուսի կազմավորում Կիպրոսում՝ սոսկ իր ներկայությամբ այս տարածաշրջանում թուրքերին անհանգստություն պատճառելու և, անհրաժեշտության դեպքում,

Փոքր Ասիայի ժողովուրդների շրջանում կանխատեսվող ապստամբական շարժումներին աջակցելու համար օգտագործելու նպատակով:

Կազմավորման ենթակա միավորումը կհավաքագրվի Հնդկաստանի և Եգիպտոսի այն հայերից, որոնք ցանկությամբ ունեն ֆյունսիական դրոշի ներքո նպաստել իրենց հայրենիքի ազատագրմանը, ինչպես նաև ձեռք վարվել են նրանց մեծաթիվ հայրենակիցները Կովկասում՝ ընդգրկվելով ուսուսկան քանակներում. այն, մասնավորապես, կընդգրկվի Պորտ-Սալոյի գաղթականներին, որոնք արդեն ստացել են առաջին ռազմական ուսուցումը Սյրիայում գտնվող ծովային դիվիզիայի ջանքերի շնորհիվ:

Ի դեպ, գլխավոր հրամանատարի հետ համաձայնության հանգեցվել, ես գտնում եմ, որ այն ուժերը, որոնք մենք կարող էինք այս ձևով կազմակերպել Կիպրոսում, պետք է քողմել արդեն տեղում գտնվող ղեկավարի: Այն է՝ Սյրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող դերժովակալի տնօրինության ներքո, որը մոտ տարածությունից հետևում է օսմանյան լուծի քրթափելու պատրաստ ժողովուրդների շրջանում ընթացող տեղաշարժերին:

Այս ծրագրին բարեհաջող ընթացք տալու համար ես առաջարկում եմ իմ ծառայություններն այս իսկ պահից մի քանի շաբաթներից բաղկացած հրամանատարական կազմի առաջին խմբի ստեղծման ուղղությամբ, որը Կիպրոս կմեկնի, հենց որ Արտաքին գործերի դեպարտամենտը բրիտանական կառավարության հետ կայացնի անհրաժեշտ նախնական համաձայնությունը:

Այս առաքելության ղեկավարը կհետախուզի այն կազմակերպության պայմանները, որը պետք է ստեղծվի, կհավաքագրի այդտեղ առաջին պահեստայիններին և Սյրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող դերժովակալի հետ կայացված համաձայնությունից հետո, ինձ կողմնակի բոլոր շահեկան առաջարկությունները:

Ի դեպ, դուք կգտնեք սրան կից թիվ 5140-9/11՝ ճեպագրի պատճենը, որն այս առթիվ ես հղել եմ Խորհրդի նախագահին:

Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել ինձ տեղեկացնելու, թե արդյոք դուք համամիտ եք իմ տեսակետին՝ այ. Բրիտանի առաջարկությունների իրագործման եղանակի հարցում:

Դրական պատասխանի դեպքում, բարեհաճեք ինձ մատնացույց անել, թե ինչպիսի՞ պայմաններով եք հաշվարկում ապահովել առաքելության տեղափոխումը, որը բաղկացած կլինի ընդամենը երեք սպաներից և մի քանի զինվորներից, ափ դուրս բերման վայրը և այն հանգուցակետը, որն, ըստ ձեզ, հարկ է Կիպրոսում ընտրել հայկական կորպուսի կազմավորման համար:

Հենց որ այս կորպուսը ձևավորվի պարտիզանական խմբերի կամ կանոնավոր զինվորական ստորաբաժանումների տեսքով, իմ Դեպարտամենտն իր վրա կվերցնի դրամական և մթերային նպաստները, որոնք նրան կհատկացվեն:

Այդուհանդերձ, շահավետ կլինի խուսափել նրանց կարիքները հոգալու համար նոր հիմունքներով մատակարարում, ինչպես նաև հատուկ ծառայություններ կազմակերպելուց: Այդ ձևով կխնայենք անձնակազմ, գույք և փոխադրամիջոցներ:

Ուստի, ես գտնում եմ, որ այն ռեսուրսների հիման վրա, որոնք Կիպրոս կղզին կարող է ընձեռել և որի բնակչությունը գերազանցում է 250000-ը և այն օգնությամբ, որն անգլիացիները չեն զրկում ցուցաբերել մեր ռազմածովային դիվիզիային, վերջինս կկարողանա Ռազմական դեպարտամենտի հաշվին, ստանձնել հայկական կորպուսն ու նրա հրամանատարական կազմը դրամական ու մթերային նպաստներով ապահովելու խնդիրը:

Ես ձեզ խնդրում եմ բարեհաճել ինձ տեղյակ պահել, թե արդյոք նման լիտարկումները

ձեր կողմից առարկություն չե՞ն հարուցի:
(A.C.M., SS Ed 125).

243

**Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանություն գործուղված պ. Ժորժ-Պիկոն՝
հրամանատար Ռոմիոյին**

Ն:

[Լոնդոն], 12-ը օգոստոսի 1916 թ.:

Կիպրոսում հայկական կորպուսի կազմավորման շուրջ որևէ համաձայնություն Ֆորին Օֆիսի հետ չի կայացվել: Մյուս կողմից, ես առավելություն եմ տեսնում, ինչպես ձեզ հաղորդել եմ ամսի 8-ի նամակով¹, որ հարցը քննարկվի Ռոյ Օֆիսի հետ՝ զննապետ դը Լա Պանոսի միջնորդությամբ: Ժամանակի նոր կորուստից խուսափելու համար, կարելի է նրան հրահանգներ ուղարկել հեռագրով, սկսած երկուշաբթի օրվանից, և մենք իսկույն կանենք անհրաժեշտը, հարթելու համար այստեղ յուրաքանչյուր խոչընդոտ:

Ինչ վերաբերում է անսարիեններին և հնարավոր այլ ապստամբների զենք մատակարարելու հարցին, այս համաձայն գեներալ Ժորժի օգոստոսի 1-ի նամակի, թվում է, որ այս առթիվ Ռ-ազմական {նախարարը} նրան հարցեր է ուղղել վերջին հուլիսի 27-ի նամակում²: Գլխավոր հրամանատարն, ի դեպ, այդ հարցում բարյացակամորեն է տրամադրված: Ես, այսպիսով, անհրաժեշտություն չեմ տեսնում, որ ձեր Դեպարտամենտին գոյծ հարուցվի, որպեսզի այդ հարցը հսկողության ներքո վերցվի և դրան այնպիսի լուծում տրվի, որը ոչուրին դարձնի մեր հետագա գործունեությունը Լ.Լ.անտում:

Ես լավ գիտեմ, թե ինչպիսի մեծ շահագրգռվածությամբ եք դուք վերաբերվում այս հարցին, ուստի՝ կարիք չկա ձեզ ասել, թե շտապելը որքան կարևոր է և չեմ կարող ավելի լավ վարվել, քան իրերի ընթացքն արագացնելու հարցում ապավինել ձեզ:

(A.M.G., 7 N 2150).

244

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ
Բրիանը՝ Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնին**

Հ. թիվ 2606:

Փարիզ, 14-ը օգոստոսի 1916 թ., ժ. 23.30-ին:

Ես հիմնվում եմ ձեր թիվ 837 հեռագրի՝ վրա:

Ռ-ազմական նախարարությունը պատրաստ է նախատեսել մի առաքելություն, որը հետևելով գեներալ Քլայթոնի առաջարկություններին, կողարկվի Կիպրոս և կկազմակերպի հայկական կորպուս: Մինչ իրագործման միջոցներին անցնելը, անհրաժեշտ է, որ այս

¹ Վերն արտատպվել է թիվ 240 փաստաթղթում:

² Տե՛ս վերը թիվ 238 փաստաթուղթը:

³ Հուլիսի 4-ի. տե՛ս վերը թիվ 234 փաստաթուղթը:

հարցում մեր դաշնակիցների հետ կատարյալ համաձայնության հանգեցրեք:

Այսպիսով, ես ձեզ խնդրում եմ այս հարցի շուրջ շտապ գրուցել բրիտանական կառավարության հետ:

Ռազմական նախարարի կարծիքով, հիմքեր կան ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող մեկ կամ մի քանի հայկական գումարտակներ կազմակերպելու համար: Այսպիսով, անհրաժեշտ կլինի, որ համաձայնվելով աջակցել այս կորպուսի կազմակերպմանը Կիպրոսում, բրիտանական կառավարությունը կարողանա մեզ հաղորդել՝ առնվազն հավարագրման ենթակա հայերի մոտավոր քվաքանակը՝ թե՛ նրանցից, ովքեր բնակվում են Եգիպտոսում և թե՛ նրանցից, ովքեր գտնվում են Հնդկաստանում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 94-94 v).

245

Ռազմական նախարար, գեներալ Ռոբըր Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսին

Հ.Ճ. թիվ 5262-9/11:

Փարիզ, 15-ը օգոստոսի 1916 թ., ժ. 18.40-ին:

Առաջին. Մի գրույցի ժամանակ, որը պ. Կամբոնն Արտաքին գործերի նախարարությանն է հաղորդել հուլիսի 4-ին¹, գեներալ Զլաթոնը գտնում էր, որ շահավետ կլիներ Եգիպտոս գաղթած՝ զինվորագրման պիտանի հայերին համախմբել Կիպրոսում, որոնց ներկայությունն իսկ այս տարածաշրջանում Թուրքիային անհանգստություն պատճառելու նպատակ կհետապնդի և ցանկալի կլինի, որ Ֆրանսիան նրանց ապահովի հրամանատարական կազմով ու հոգա նրանց ծախսերը:

Երկրորդ. Ինչպես և Արտաքին գործերի նախարարն ու գլխավոր հրամանատար գեներալը, ես ընդունում եմ Կիպրոսում հայկական կորպուսի կազմավորման պատեհությունը և ամբողջությամբ հակված եմ տրամադրելու ֆրանսիական հրամանատարական կազմ ու հոգալու այն զինվորական ստորաբաժանումների ծախսերը, որոնք պետք է ստեղծվեն:

Երրորդ. Այդպիսի հնարավորության դեպքում, ես նախատեսում եմ մի գումարտակի, իսկ եթե ընդունվողների թիվը բուլղարի՝ բազմաթիվ գումարտակներից կազմված գնդի ստեղծումը, որը կկազմակերպվի բրիտանական իշխանության ընտրած վայրում: Ռազմական մի առաքելություն նախօրոք կմեկնի Կիպրոս՝ տեղական հրամանատարության հետ համաձայնության հանգելու և իրականացման հնարավորությունները գնահատելու համար:

Չորրորդ. Առանց սպասելու Ֆորին Օֆիսի և Արտաքին գործերի նախարարության միջև այս առթիվ ծայր առած խոսակցությունների արդյունքին, ես ձեզ խնդրում եմ ինձ տեղյակ պահել Ուոր Օֆիսի կարծիքին՝ վերոհիշյալ պայմաններով Կիպրոսում հայկական կորպուսի կազմավորման հնարավորության և առաքելություն ուղարկելու վերաբերյալ:

(A.M.G., 7 N 2150).

¹ Տես վերը թիվ 234 փաստաթուղթը:

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝
Ուոր Օֆիսի զինվորական հետախուզության տնօրեն,
գեներալ Մակ Դ-ոնոգիին**

Թիվ 2637:

16-ը օգոստոսի 1916 թ.:

Գեներալ Զլայրոնի և պարոն Ժորժ-Պիլոյի միջև տեղի ունեցած զրույցների ընթացքում հարց է բարձրացվել ֆրանսիական «ժրամանատարական» կադրերով համալրված հայկական կորպուսի կազմակերպման մասին, որը պետք է համալրվի մասամբ Եզիպտոսում գտնվող հայ զաղթականներով, իսկ մասամբ՝ ներկայումս Հնդկաստան ներկայված գերիններով:

Ֆրանսիական կառավարությունը հավանություն է տվել այդ կորպուսի կազմավորմանը:

Որպեսզի ի վիճակի լինեն «ժրամանատարական» կադրերի սլատարաստելու, նրանք ուրախ կլինեն, եթե իմանան հավաքագրման ենթակա տարիքի՝ ներկայումս Եզիպտոսում կամ Հնդկաստանում գտնվող հայերի թվաքանակը:

Բացի դրանից, ֆրանսիական կառավարությունը քննարկում է, թե որն է այս նոր հայկական կորպուսը կազմակերպելու և վարժեցնելու համար լավագույն վայրը ու նրանց թվում է, թե Կիպրոս կղզին ամենահարմար կետն է, քանզի զորքերն այդտեղից կարող են ամենադյուրին ձևով տեղափոխվել Սիրիա, երբ հարմար պահը հասնի:

Նախագիծը, որի գաղափարն առաջին անգամ քննարկման է դրվել Փոքր Ասիայի գործերին քաջատեղյակ անգլիացիների կողմից, բնականաբար, կարող է իրագործվել միայն անգլիական և ֆրանսիական կառավարությունների միջև կայանալիք համաձայնությունից հետո: Այս պատճառով, ես ձեզ երախտապարտ կլինեի, եթե դուք կարողանալիք յնձ տեղեկացնել, թե արդյոք Ուոր Օֆիսը որևէ առարկություն ո՞ւնի Կիպրոս կղզու՝ իբրև հայկական կորպուսի համար ուսուցման վայրի ընտրության և այս կղզի ֆրանսիական զինվորական առաքելություն ուղարկելու շուրջ, որը պետք է հարցն ուսումնասիրի տեղում:

(A.M.G., 7 N 1283).

**Ֆրանսիական դեսպանության արխիվապահ պ. Բոդուն՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ծ. թիվ 16՝:

Կոստանդնուպոլիս, 16-ը օգոստոսի 1916 թ.:
(Ստացել է Զաղ. վարչ. 1918 թ. դեկտեմբերի 12-ին):

Այսօր առավոտյան թերթերը տպագրում են կիսապաշտոնական բնույթ ունեցող մի հարողագրություն, որը վերաբերում է հայ գրիգորյան համայնքի շրջանում թուրքական կա-

ուսմանը և կողմնակից պարտադրվող բարենորոգումներին, ինչպես նաև «Ժուրնալ օֆիսիելում» արձանագրված նոր կարգավիճակին:

Կոստանդնուպոլսի պատրիարքության նստավայրը տեղափոխվում է Երուսաղեմ¹, որտեղ այն կախման մեջ կլինի Սսի և Էդիսամարի [sic]² կաթողիկոսից:

Յուրաքանչյուր հարաբերություն էջմիածնի կաթողիկոսի հետ խզված է. էջմիածնի ղեկավարը մինչ այժմ ընտրվել է բոլոր հայ հոգևորականների լիազոր ներկայացուցիչների կողմից, ներառյալ նրանց, ովքեր գտնվում էին Թուրքիայում:

Վերջապես, բարենորոգումը նշանակում է ազգային ժողովի վերացում, մի բան, որն ամենատանջալիցը կլինի հայ ժողովրդի համար: Այն ճակատագրական հարված է հասցնում ղեկավարման միասնականությանը, որն այս ժողովրդի ոգին էր: Գնչելուց, տեղահանելուց, կոտորելուց հետո, երիտթուրքերի կառավարությունը նրանց, ովքեր գոյատևում են, պարտադրում է մի նոր վարչակարգ, որի օրոք նրանց արտոնությունների վերջին մնացորդներն ամբողջությամբ վերացվում են:

Հայկական պատրիարքության նստավայրի տեղափոխումը մայրաքաղաքից հեռավոր մի վայր, կխոչընդոտի, որ հայերի զանգատները դեսպանություններին հասնեն: Սա, իհարկե, տեղափոխությունը հիմնավորող պատճառներից է, որովհետև ամեն անգամ, երբ հայերը տառապանքներ էին կրում, պատրիարքությունը չէր զլանում նրանց բողոքները եվրոպական կառավարություններին հասցնել՝ Կոստանդնուպոլսում գտնվող նրանց ներկայացուցիչների միջոցով: Ի դեպ, հարկ է հավաստել, որ վերջերս, գլխավոր տերությունների դեսպանները, որոնք միջամտել են ի նպաստ հայերի, որևէ արդյունքի չեն հասել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 915, f. 54 v).

248

Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Բոն Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 1059:

Բեռն, 25-ը օգոստոսի 1916 թ.:

(*Ստացել են* Կար. օգոստոսի 29-ին,

Քաղ. վարչ. օգոստոսի 30-ին):

Համաձայն շվեյցարական «Բասլեր նախախտեն» բերքի, Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունն ստացել է Սիրիայում հիմնավորված մի խումբ գերմանացի պրոֆեսորների նամակը, որի մասին այս բերքը հաղորդագրություն է տպագրել և որը հայերի նկատմամբ կիրառված վայրագություններին ի տես, մտավախություն է ի հայտ բերում՝ Արևելքում նախադեպը չունեցող այդ դաժանություններից՝ Գերմանիայի վարկը խոցված տեսնելու հարցում:

Ես անհրաժեշտ եմ համարում այս ծրարով Գեպարտամենտին հղել խնդրո առարկա քրթակցությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 63).

¹ Կոստանդնուպոլսի պատրիարքության վերացման մասին տես ստորև թիվ 335 փաստաթուղթը (և հավելվածները):

² Իմա՝ Ադրամար:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական վայրագություններին վերաբերող գերմանական վկայություն¹

«Բասլեր նախարիստենը» տպագրում է հետևյալ նամակը, որը Սիլիայում (Հալեպում) գտնվող գերմանական դպրոցի մի քանի պրոֆեսորներ հղել են Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությանը Բեռլինում:

«Մեզ թվում է, որ մենք պարտավոր ենք Արտաքին գործերի նախարարության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ մեր ուսումնական գործն այսուհետև կգրկվի քարոշական օժանդակությունից և կկուրցնի իր հեղինակությունը տեղաբնակների աչքում, եթե գերմանական կառավարությունն ի վիճակի չլինի էականորեն ազդելու այն կուպիտ վերաբերմունքի վրա, որն այստեղ ցուցաբերվում է սպանված հայերի՝ արտաքսված կանանց և երեխաների հանդեպ:

Սարսափի տեսարանները, որոնք մեր դպրոցի հարևանությամբ ամեն օր ծավալվում են մեր աչքի առջև, ուսուցչի մեր աշխատանքը վերածում են մարդկությանն ուղղված մարտակոչի: Կարո՞ղ ենք մենք արդյոք մեր հայ աշակերտներին հանձնարարել ընթերցելու յոթ գաճաճների հեքիաթը, կարո՞ղ ենք մենք արդյոք նրանց սովորեցնել խոնարհում և հողվում, երբ մեր դպրոցի հարևանությամբ գտնվող բակերում մահը հնձում է սովից մեռնող նրանց հայրենակիցներին, երբ գրեթե մերկ՝ երիտասարդ աղջիկները, կանայք, երեխաները՝ ոմանք գետնի վրա տարածված, մյուսները՝ մեռնողների և արդեն պատրաստ դազադների միջև պառկած, իրենց վերջին շունչն են փչում:

Բարձր Հայքից այստեղ բերված 2000-ից 3000 առողջական բարվոր վիճակում գտնվող գյուղացի կանանցից մնում են 40-ից 50 կմախքներ: Ամենագեղեցիկներն իրենց վերակացուների ցանկասիրության զոհն են դառնում: Տղեղները ձսհամում են հարվածներից, սովից ու ծարավից, որովհետև՝ ջրի ափով մեկ ձգված, նրանք բույլտվություն չունեն հագեցնելու իրենց ծարավը: Եվրոպացիներին արգելված է սովահարներին հաց բաժանել: Ամեն օր Հալեպից տանում են ավելի քան հարյուր դիակ:

Եվ այս ամենը տեղի է ունենում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների աչքի առջև: 40-ից 50 կմախքանման տեսիլքներ կիտված են մեր դպրոցի հանդիպակաց բակում: Նրանք խելակորույսներ են. նրանք այլևս չեն կարող ուտել, երբ նրանց հաց են տալիս, նրանք այն անտարբերությամբ մի կողմ են նետում: Նրանք տնքում են՝ սպասելով մահվան:

Ահա թե ինչ է, ասում են տեղաբնակները, “Ta-â-lim”-ը (գերմանացիների ուսուցումը):

Գերմանական գերբը ենթակա է Արևելքի ժողովուրդների հիշողության մեջ անդառնալիորեն արատավորված մնալու վտանգին: Հալեպի մի քանի բնակիչներ, որոնք ավելի կրքված են, քան մյուսները, ասում են. «Գերմանացիներն այսպիսի սարսափներ չեն ցանկանում տեսնել: Հավանաբար, գերմանացի ժողովուրդը դրանց տեղյակ չէ: Այլապես, ինչպե՞ս կարող էին ճշմարտության բարեկամները հանդիսացող գերմանական քերթերը վկայել մարդասիրության մասին, որը դրսևորվել է մեծ դավաճանության մեջ մեղադրվող հայերի հանդեպ: Հավանաբար, գերմանական կառավարության ձեռքերը կապված են մահ ինչ-որ պայմանագրով, որը կարգավորում է պետությունների փոխադարձ իրավասությունները»:

Ո՛չ, երբ խոսքը վերաբերում է սովի միջոցով հազարավոր կանանց և երեխաների մահ-

¹ Հոդվածը լույս է տեսել «Ժողովուրդի ժենում» 1916 թ. օգոստոսի 17-ին (թիվ 227):

վան դատապարտելուն, «օսյորտունիզմ» և «խրավասություն» բառերն այլևս իմաստից զրկվում են: Նման պարագայում յուրաքանչյուր քաղաքակիրթ մարդ իրավագոր է և միջամտելու սրբազան պարտականություն ունի: Արևելքում խաղահարթակի վրա է դրված մեր վարկը: Նույնիսկ բարեգթությունը չկորցրած թուրքերն ու արաբները տխրությամբ գլուխներն են քափահարում, երբ տեսնում են, թե քաղաքով անցնող շարասյան մեջ ինչպես են մտրակի հարվածներով կոպիտ զինվորներն ու ժառապառ անում հողի կանանց, որոնք այլևս չեն կարողանում առաջ ընթանալ:

Ի լրումն, համաձայն Ջենալ փաշայի հրապարակած շրջաբերականի, կարող ենք նախապատրաստվել ավելի սարսափելի մարդկային կոտորածի (Բաղդադի երկաթուղու ինժեներներին արգելված է յուսանկարել հայերի շարասյունները, իսկ օգտագործված ժայլավենակոճերը, պետք է հանձնվեն 24 ժամվա ընթացքում՝ ռազմական խորհրդին հայցի հարուցման սպառնալիքի ներքո): Սա վկայում է այն մասին, որ ազդեցիկ իշխանությունները վախենում են բացահայտումից, բայց չեն ցանկանում վերջ տալ մարդկության համար անպատվաբեր այս տեսարաններին:

Մյուս կողմից, մենք գիտենք, որ Արտաքին գործերի նախարարությունն արդեն ստացել է այն ամենի մանրամասն նկարագրությունները, ինչն այստեղ տեղի է ունենում: Բայց, քանի որ տեղահանությունների համակարգում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել, մենք կրկնակի անգամ պարտավոր ենք գրել այս զեկուցագիրը, առավել ևս, որ արտասահմանում գտնվելու հանգամանքը մեզ թույլատրում է ավելի պարզորոշ տեսնել այն անսահման վտանգը, որն այստեղ սպառնում է գերմանացու անվանը»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 64).

249

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպանություն գործուղված պ. Ժորժ-Պիկոն՝ Քաղաքական գործերի տնօրեն պ. դը Մարժերիին

Ն:

Լոնդոն, 25-ը օգոստոսի 1916 թ.:

Շենց այժմ Ֆորին Օֆիսում ես մի նոր քայլի դիմեցի հայերի հարցի աղիթով: Ինձ հաստիացրին, որ սպասվող պատասխանի հասպողումը պայմանավորված է միայն գաղութային վարչության դանդաղաշարժությամբ: Բայց ես տեղեկացել եմ գաղտնի սկզբնաղբյուրից, որ բացի դրանից, նշանակություն է ունեցել որոշ պաշտոնյաների չկամությունը, որոնք հուզվել են շերիֆի՝ մոտ գտնվող առաքելությանն առնչվող՝ Եգիպտոսից ստացված մեր վերջին հաղորդագրություններից:

Ի դեպ, ես հույս եմ տածում, որ խոսքը վերաբերում է միայն ուշացմանը և արագացնում են պատասխանը: Ես այն իսկույն ձեզ կհաղորդեմ:

Այն, ինչ դուք ինձ ասում եք Սիրիայի նորությունների մասին, ինձ հիասթափություն է պատճառում, չնայած ես այլևս զարմանալու ոչինչ չունեմ՝ հավաստելու համար մեր ծովայինների երկչոտությունը: Պատերազմի սկզբից ի վեր մենք բավական հաճախ ենք դարձել դրա հետևանքների ականատեսը: Նրանք չափից ավելի քաջարի են, բայց նախաձեռնու-

քյուն նրանցից մի պահանջեր:

Ինչպես և դուք, ես գտնում եմ, որ եթե մենք դիմենք լիբանանցիներին, առանց դժվարության կունենանք 6000 մարդ և ավելի: Բայց ես գերադասելի եմ համարում սկսել հայերից ելնող եռանդով, որոնց մենք կարիք ունենք համախմբելու մեր գույների շուրջ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 102-103 v).

250

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոբին

Հ. թիվ 476: Գաղտնի:

[Պատճենը]:

Լոնդոն, 25-ը օգոստոսի 1916 թ., ժ. 18.35-ին:

Ռուսական զորայունը, որը գլավել է Մուսըլ [sic]¹ շարժվում է դեպի Բիթլիս: Այն արդեն հաղորդակցության մեջ է մտել թուրքական 5-րդ դիվիզիայի հետ, որի մի քանի անդամների գերեվարել է:

Գեներալ Բարաթովը շարունակում է մնալ նույն դիրքերում: Չորս շնեյդեր տեսակի թնդանոթներ նրան են ուղարկվել՝ Թեիրանից Ղազվին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Opérations strategiques*, tome 1027, f. 223).

251

Ռազմական նախարարը՝ Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսին

Ճ. թիվ 5726-9/11:

Փարիզ, 4-ը սեպտեմբերի 1916 թ.:

Վերջին օգոստոսի 15-ի թիվ 5262-9/11 հեռագրով², ես ձեզնից հարցրել եմ Ռուր Օֆիսի կարծիքը գեներալ Քլայթոնի առաջարկության մասին, որը վերաբերում է Կիպրոսում ֆրանսիական հրամանատարական կազմի դեկավարության ներքո գործող հայկական կորպուսի հնարավոր կազմավորմանը:

Ես ձեզ խնդրում եմ, բարեհաճել ինձ հայտնել, քե Ռուր Օֆիսում կատարած ձեր քայլն ինչպիսիսի արդյունքի է հանգեցրել, ինչպես նաև յուրաքանչյուր տեղեկություն, որը դուք ի մի կրեքնք այն անձնակազմերի կարևորության վերաբերյալ, որոնց հնարավոր կլինի հավաքագրել:

(A.M.G., 7 N 1283).

1 Իմա՝ Մուշ:

2 Ստորագրել է գնդապետ Համելինը:

3 Տես ստորև թիվ 245 փաստաթուղթը:

**Եզիպտոսում բրիտանական ռազմարշավային ուժերի
գլխավոր հրամանատար, գեներալ Մուրրեյը՝ Սիրիայի ռազմածովային
դիվիզիայի հրամանատար, դերժովակալ դը Սպիտզին**

Թիվ Գ {ադտնի} ծ {առայություն} 281:

Գլխավոր հրամանատարի շտաբ,
7-ը սեպտեմբերի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ հավաստել գնդապետ Էլզոլի ուղարկած սեպտեմբերի 6-ի ձեր հաղորդագրության ստացումը և ինձ թույլատրում եմ պատասխանում մատնանշել, որ ստացել եմ սեպտեմբերի 2-ի ձեր նախնական ծանուցագիրը: Ես դրան պատասխանել էի սեպտեմբերի 2-ի իմ Գ {ադտնի} ծ {առայություն} 281 հաղորդագրությամբ¹:

Իմ հաղորդագրության մեջ ես ցավով հայտնում էի, որ ձեր Ռազմածովային նախարարության իղձերը չեն կարող իրականացնել, քանի որ արդեն համաձայնություններ են կայացվել բոլոր մարտունակ հայերին՝ դաշնակիցների հետ միասին Մուսուլիում ծառայելու համար զինվորագրելու վերաբերյալ:

Նրանց կազմկերպման գործն այժմ փաստորեն ավարտված է:

Ես խիստ ցավում եմ, որ այս քայլը պետք է կատարվեր հենց այն պահին, երբ ֆրանսիական իշխանությունները ևս վճռել են օգտագործել այս հայերի ծառայությունները, բայց այդ մարդիկ եզիպտական կառավարության կողմից 12 ամսից ի վեր անգործության են մատնվել, և ես չեմ գտնում, որ կարելի էր հանդուրժել դրանական միջոցների նման վատնումը:

(A.C.M., SS S a 42).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. թիվ 318:

Կահիրե, 9-ը սեպտեմբերի 1916 թ., ժ. 14-ին:
(Ստացվել է ժ. 17-ին):

Փոխգնդապետ Բրեմոնն ինձ խնդրում է ձեզ փոխանցել հետևյալ հեռագիրը.

«Պորտ-Սաիդի հայ գաղթականները կարող են անմիջապես տրամադրել 200 մարդ, որոնց թիվը կարճ ժամկետում կարող է կրկնապատկվել: Նրանց ռազմական ուսուցումը մեծապես առաջ է ընթացել լեյտենանտ Պիկարի շնորհիվ: Նրանք ընդունակ են և հմուտ: Այս ուժերը, որոնց անտեսելու հարկը չկա, արժանի են մեծ ուշադրության: Հետևում է հաղորդումը:

Անհրաժեշտ է նախապես պայմանավորվել բրիտանական կառավարության հետ,

¹ Արտատպված չէ:

որովհետև (ներկայումս) Եզիպտոսի անգլիական իշխանությունները պատրաստվում են նրանցից (200-ին) ուղարկել Սարոնիկ՝ իբրև ջորի քշողների և ...՝ ի վեր, բանակատեղիի համար ամսական ծախսում են երեսուն հազար ֆրանկ: Մոտալուտ մեկնումը հետաձգվել է մեր խնդրանքով, մինչ միջամտելու մասին որոշման կայացումը:

Դուք պահանջել եք շտապ քայլերի ձեռնարկել այս առթիվ: Եթե ֆրանսիական կառավարությունը կարգադրություն չի անելու նրանց օգտագործելու շուրջ, ինձ այդ մասին անմիջապես տեղյակ պահեք, որպեսզի ջորի քշողների մեկնումը չհետաձգեմ: Մակայն ես գտնում եմ, որ հարկ է այդ աղբյուրն օգտագործել: Խնդրվում է այս հեռագիրը հաղորդել Ռ-ազմական նախարարությանը:

Բրեմոն»:

Պորտ-Սախլի հայերին օգտագործելու այս հարցը, թվում էր, թե մեր ռազմական և ռազմա-ծովային իշխանությունները զանց են առել ապրիլ ամսից ի վեր: Այն, ինչին, մասնավորապես, ձգտում են անգլիացիները՝ նյուանցից ձերբազատվելն է: Եթե մենք վճռենք օգտագործել նրանց, ակնհայտ է, որ պետք է փոխհատուցենք այն ծախսերը, որոնք ամսական 30000 ֆրանկի սահմանում մեկ տարուց ի վեր արվել են և պարտավորվենք հոգալ թե՛ տղամարդկանց, որոնց կօգտագործենք և թե՛ Պորտ-Սախլում մնացող ընտանիքների հետագա ծախսերը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 105).

254

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի՝ ծանուցագիրը

Ծ՝:

Փարիզ, 10-ը սեպտեմբերի 1916 թ.:

Գնդապետ Համելինն ինձ հայտնում է, որ ղը Լա Պամուսից տեղեկացել է, թե անգլիացիները հակադրվել են Կիպրոսն օգտագործելուն: Այս պայմաններում, հարկ կլինի հրաժարվել հայերին օգտագործելու նախագծից, որոնք արժանի չեն այն 360000 ֆրանկին, որը պետք է վճարել անգլիացիներին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 106).

255

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. քիվ 356:

Կահիրե, 10-ը սեպտեմբերի 1916 թ.:
(*Ստացել են* Կաթ. սեպտեմբերի 25-ին,
Քաղ. վարչ. սեպտեմբերի 26-ին):

1 Վերձանման բացթողում:

2 Պ. Գոմն:

3 Կցված է Կահիրեից ստացված 1916 թ. սեպտեմբերի 9-ի բվակիր քիվ 318 հեռագրին: Տես նախորդ փաստաթուղթը:

Երեկվա թվակիր իմ թիվ 318 հեռագրին՝ շարունակություն տալով՝ ես պատիվ ունեմ սրան կյիջ Ձերդ գերագանցությանը փոխանցել Պորտ-Սաիդ գաղթած հայերի հնարավոր օգտագործմանը վերաբերող այն ծանուցագրի պատճենը, որը ֆրանսիական առաքելությանն ղեկավար, փոխգնդապետ Բրենոնն ինձ է հղել այս ամսի 7-ին:

Ես միաժամանակ սույն ճեպագրին եմ կցում սեպտեմբերի 9-ի թվակիր՝ փոխգնդապետ Բրենոնին ուղղված իմ պատասխանի պատճենը²:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 107).

ՀԱՎԵԼՎԱԾ

Պորտ-Սաիդ գաղթած հայերին վերաբերող՝ փոխգնդապետ Բրենոնի ծանուցագիրը

Կահիրե, 7-ը սեպտեմբերի 1916 թ.:

Պորտ-Սաիդի հայկական ճամբարն ընդգրկում է մոտավորապես 4500 անձանց, որոնցից 400-ը տղամարդիկ են: Նրանցից զինծառայության համար պիտանի են 300-ից 350 տղամարդիկ:

Ճամբարի հիմնադրման համար ծախսվել է 16000 ֆրանկ: Պահպանության ամսական ծախսը հասնում է մոտավորապես 30000 ֆրանկի: Մինչ այժմ, տասներկու ամսից ի վեր, ծախսերը հոգացվել են բացառապես եզիպտական բյուջեից:

Ճամբարի հրամանատարն անգլիացի լեյտենանտ է:

Հայերին ուսուցանելու համար ֆրանսիական Ռ-ազմածովային նախարարությունն առանձնացրել է լեյտենանտ Պիլյարին: Շուրջ 200 մարդկանց հետ նա հասել է բարձր արդյունքների: Նրանք ինչպես են, հրաշալի հրաձիգներ են, ուշիմ են, նրանց խորթ է դյուրաբորբորությունը: Բայց, բնականաբար, շատ են հեռու մեր մտածելակերպից:

Գեներալ ...³ պահանջել է Եզիպտոսից իր մոտ ուղարկել ջորի ջշողներին: Գերագույն կոմիսարը⁴ հավանություն է տվել հայ կամավորներին այդտեղ ընդգրկելուն վերաբերող նախագծին: Պորտ-Սաիդի բերդի հրամանատար, գնդապետ Էլզուրը բավականաչափ ճնշում գործադրելով, գտել է նրանցից մոտավորապես 180 հոգու:

Ես խնդրեցի գնդապետ Էլզուրից ժամանակավորապես հետսձգել գործողությունը, ասելով նրան, որ ֆրանսիական կառավարությունը մտածում է հայերին օգտագործելու մասին, որ ինչպես ինձ է թվում, 1915 թ. հոկտեմբերին կայացած անգլո-ֆրանսիական համաձայնությունը նրանց որևէ է ֆրանսիական կառավարության տրամադրության ներքո և որ այս պայմաններում, ես պատրաստվում եմ հարցը ներկայացնել Փարիզի քննարկմանը:

Ամսի 7-ի առավոտյան ես տեսա այս առթիվ գեներալ Ալքամին (Մ{իջդաշնակցային} վ{եյրահսկողության} իս{ումը}): Նա ինձ ասաց, որ գործել է համաձայն Գերագույն կոմիսարի հրամանի. ես նրան ղիմեցի միևնույն խնդրանքով, ինչ գնդապետ Էլզուրին, ավելացնելով, որ քանզի միջամտել է Գերագույն կոմիսարը, արդարացի եմ համարում, որ ֆրան-

1 Տես վերը թիվ 253 փաստաթուղթը:

2 Արտատպելը նպատակահարմար չենք գտել:

3 Անունը բացակայում է:

4 Սըր Հենրի Մակ Մահոնը:

սիայի նախարարն այդ հարցի շուրջ խոսի նրա հետ, մինչ այն անգլիական ու ֆրանսիական կառավարությունների բննառկմանը ներկայացնելը: Ես պատիվ ունեմ ձեզ հաշվետվություն տալ, խնդրելով ձեզ բարեհաճել՝ Գերագույն կոմիտային դիմելուց հետո, հայտնել ինձ, թե ի՞նչ ճանապարհով է պետք ընթանալ համուն այս հարցի կարգավորման: Ինձ թվացել է, որ անգլիացիները ցանկանում են ազատվել թե՛ այն ծախսից, որն անում են [և] թե՛ հունից դուրս բերված ժողովրդի շրջանում ոստիկանություն պահելու հոգսից:

Ես հույս ունեմ առաջարկել ֆրանսիական կառավարությանը Կիպրոսում հիմնադրել ուսուցման կենտրոն, որը բաղկացած լինի ջոկատի մեկ հրամանատարից (գումարտակի ղեկավարից), երեք սպաներից (որոնցից մեկը՝ հաշվապահ), հինգ ենթասպաներից (որոնցից մեկը՝ հաշվապահ): Այս հրահանգիչների թվում կլինեն բազմաթիվ ուսուցիչներ, այնպես որ ֆրանսերենի դասավանդումը կկատարվի արդյունավետ ձևով, մի բան, որն անելը դժվարին չէ: այս ժողովրդի շրջանում:

Ես հույս ունեմ, որ աշխատանքները կսկսվեն 200 մարտի հետ և որ կարելի կլինի նրանց թիվը կրկնապատկել: Դասակ ղեկավարելու համար նրանցից շատերն, այս պահից իսկ, ունեն բավարար ռազմական կրթություն:

Սա այն նախապատրաստման սկիզբն է, որը կարող է հսկվեցնել կարևոր արդյունքների: (A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 108-108 v).

256

Սալոնիկ մեկնելուց առաջ հայերին ստորագրելու համար պարտադրված պայմանագիր

Թարգմանություն:

11-ը սեպտեմբերի 1916 թ.:

Ես, ներքոստորագրյալս՝, վիլայեթի գյուղից, սույն պայմանագրով պարտավորվում եմ ծառայել անգլիական բանակում իբրև կամավոր, սկսած այս պահից մինչ պատերազմի ավարտը:

Ես պարտավորվում եմ կրել զինվորական կարգապահություն պահանջող բոլոր զրկանքները և բոլոր այն նոր զրկանքները, որոնք կարող են պահանջվել իմ անձից և նույնիսկ պարտավորվում եմ, իմ անհնազանդության պարագայում՝ ենթարկվել ռազմական խորհուրդների դատաստանին:

Ես պարտավորվում եմ ծառայության անցնել հետևյալ պայմաններով.

1/ Ամենօրյա աշխատավարձ 8 պիաստրի սահմանում, որից 2 պիաստրը կգանձվի ճամբարում գտնվող գաղթականների ընտանիքների համար:

2/ Անվճար սնունդ, ինչպիսին տրվում է անգլիացի զինվորներին:

3/ Ջինվորական կանոններին համապատասխանող հագուստ:

4/ Եռամսյա ծառայությունից հետո՝ տասնօրյա արձակուրդ, ամբողջ աշխատավարձի պահպանմամբ (եթե զինվորական ծառայության պայմաններն այդ բույստորում են):

5/ Եռամսյա ծառայությունից հետո, պարգևատրում՝ մեկ շաբաթվա աշխատավարձով:

6/ Աներկբայելիորեն համաձայնություն է կայացվում այն մասին, որ ռազմական իշխանությունն իրավունք ունի ինձ ազատ արձակել մինչ վերոհիշյալ ժամկետները, եթե այդ նպատակահարմար գտնի:

7/ Սպառազինությունը, ապրուստը և հանդերձանքը մնան կլինեն անգլիական բանակի զինվորների սպառազինությանը, ապրուստին և հանդերձանքին:

8/ Ես երդվում եմ պատվովս և Աստուծո անունով՝ հավատարիմ մնալ Անգլիային և իբրև զինվոր կատարել իմ բոլոր պարտականությունները:

Ամսաթիվ համաձայնություն տվող ստորագրություն:
(A.M.G., 7 N 2150).

257

**Վարի սենատոր պ. Լուի Մարտենը՝
Քաղաքական գործերի տնօրեն պ. դը Մարժերիին**

Ն:

Ավաս¹:

Ես պատիվ ունեմ սրան կից ձեզ ուղարկել մի մամակ Հայաստանի մասին՝ Խորհրդի պ. նախագահի համար: Պ. նախագահը գերադասել է այս, և ոչ թե հարցն ատյանին ներկայացնելու ընթացակարգը, քանի որ այս մամակը և պատասխանն այնուհետև պետք է հարողովեն մամուլին այնպիսի արտահայտություններով, որոնք շուրջ մենք համաձայնության կհանգենք: Ես ցանկացա պ. նախագահին ժամանակ հատկացնել (որովհետև մեր խոսակցությունը վաղուց է տեղի ունեցել)՝ մինչ իմ վերադարձն այլ շտապ հարցեր կարգավորելու համար:

Ջերմագին զգացումներով և խորին հարգանքով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 67).

ՀԱՎԵԼՎԱԾ

**Վարի սենատոր Լուի Մարտենը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ն:

Ավաս:

Այնժամ, երբ քաղաքակրթության մեծ գործի համար դիվանագիտական և քաղաքական միջոցներով բոլոր ճակատներում ամենաբարեհաճ իրադարձություններն են ծավալվում, մարդկության համար ամենավշտալի անցքեր են շարունակաբար տեղի ունենում դեռևս թուրքերի տիրապետության ներքո գտնվող Հայաստանի բոլոր շրջաններում:

Հայերի կոտորածները, որոնք այդչափ երկար ժամանակ համիլյան քաղաքականության հիմքն էին կազմում, և որոնք, ինչպես լիբերալ Եվրոպային էր թվում, վերացել էին 1913-թ. բարենորոգման նախագծի շնորհիվ, կրկնապատկվել են: Երիտթուրքերի տիրապետության ներքո գտնվող հայերի տառապանքները, մասնավորապես, ընթացիկ պատերազմից ի վեր, հասել են զագաթնակետին. հայկական արյան հեղեղներ են հոսել. բարբա-

¹ Մենք պահպանում ենք արխիվների դե Էնկարգման ամսաթիվը՝ 1916 թ. սեպտեմբերի 12-ը:

րոտությունը երբևէ չի հասել սարսափի այսպիսի աստիճանի: Երիտրուրբերը՝ մուրցքի մեջ, երդվել են բնաջնջել շատ հնամենի քաղաքակրթություն ունեցող այս ժողովուրդին և անողորքաբար հետամուտ են իրենց նպատակին:

Հայաստանը չի կործանվի: Դաշնակիցների հաղթանակը փշուր-փշուր կանի երկաթե լուծը, որով ցանկանում են նրան ոչնչացնել: Մարդկությանը պատիվ բերող այս ժողովուրդը, սկսած առաջին դարերից տվել է պատմաբաններ, բանաստեղծներ, նշանավոր գրականագետներ, Բյուզանդիային՝ նրա ամենահրաշալի կայսրերից մի քանիսին, մեծ թվով պետական գործիչներ ու երևելի գեներալներ, Վրաստանի Շամխրամ (Թամարա) թագուհուն՝ նրա ամենամեծ զորավարներին, ցար Ալեքսանդր II-ին՝ առաջնակարգ պետական գործիչներ, ինչպիսին է Լուիս-Մեյիթովը ու փայլուն գեներալներ, ինչպես Լազարևը և Տեր-Դուկասովը, Եգիպտոսին՝ նրա մեծ բարենորոգիչ Նուբար փաշային, ժամանակակից աշխարհին՝ մեծ թվով ամեն կարգի հռչակավոր մարդկանց: Այս բնարական Հայաստանը՝ մարդկության տարբեր դարաշրջանները հմայած հնագույն և սրբացված լեգենդների օրրանը, որը խաչակիրների համար այդչափ պիտանի դաշնակից է եղել, որը մեծ տոկոսով պայմանավորված էր հայտ է բերել իր կենսամակությունը և որի ոգին հաղթանակ է տարել ժամանակի ու հալածանքների նկատմամբ, կփայլատակի աշխարհում դեռևս դարեդար: Բայց մենք չենք կարող անգոր ու անտարբեր ձևով ներկա գտնվել այն նողկալի տեսարաններին, որոնց մշտական թատերաբեմը Թուրքահայաստանն է, որոնց զոհն անընդմեջ դառնում են նրա բնակիչները և որոնք այս հրաշալի երկիրը վերածել են սարսափների, արյան ու արցունքների անձայրածիր օվկիանոսի: *Այստեղից բուրբերն են անցել:*

Տեղի են ունեցել անհամար կոտորածներ, որոնք խաղաղասեր և անպաշտպան բնակիչների նկատմամբ իրագործվել են ամենազագրելի հնարամտությամբ, ուղեկցվել մարդկային արժանապատվության հանդեպ կիրառվող ամենանորկալի ոտնձգություններով. կանայք, երեխաները վաճառվել են իբրև ստրուկներ, լավագույն ընտանիքների երիտասարդ աղջիկները փակվել տներում և մի քանի պլաստիկ դիմաց հանձնվել իրենց դասիճների բարեկամների ու հաճախողների ցանկասիրությանը: Մեծաքանակ բնակիչներ հազարներով հեռացվել են իրենց հայրենի երկրի բարձր լեռներից և ստվերածածկ ու կանաչապատ մուրք հովիտներից, տեղափոխվել Միջագետքի անապատները, ուր տապը երբեմն գերազանցում է 60 աստիճանը և մտրակների հարվածներով, ինչպես անասուններ թշվել մեկ վայրից մյուսը: Ըստ «Տանի» կողմից բերված վերջին մանրամասների, որն արտատպում է Հայերի օգնության շվեյցարական կոմիտեի վերջին հաղորդագրությունը, կանանց բաժանել են ամուսիններից, մայրերին՝ երեխաներից. ապրուստի միջոցների հայրաքայքման համար անհրաժեշտ յուրաքանչյուր աշխատանք կտրականապես արգելվում է. հազվադեպ վայրերում սև հաց բաժանելու մի քանի դեպքերից զատ, համընդհանուր ձևով պարտադրվում է ապրել ողորմություն հավաքելով կամ Եվրոպայի ու Ամերիկայի մարդասերների կողմից ուղարկված օգնությամբ, բայց մեծ մասամբ, ժամանակակից պատմության մեջ տեղ գտած աննկարագրելի ու անօրինակ այս արհավիրքի շրջանակներում, սովից և հիվանդություններից հյուծված դժբախտ հայերն ամեն օր հարյուրներով ընկնում էին, այնժամ, երբ նրանց կողքին գոյություն պահպանողները, համաձայն Հայերի օգնության ամերիկյան կոմիտեի վերջին հաղորդագրության, հասել էին ուժասպառությունից մահացած իրենց ուղեկիցների դիակներն ուտելու աստիճանի:

1916 թ. օգոստոսի 17-ի «Մուրմալ դը Ժնևից» ես քաղում են «Բասելը նախընտանում» տպագրված նամակի՝ հետևյալ հատվածները, որը Սիրիայում Հալեպի գերմանական

դպրոցի մի քանի պրոֆեսորներ հղել են Բեռլին՝ Արտաքին գործերի նախարարությանը:

«Մարտավի տեսարանները,– գրում են նրանք,– որոնք մեր դպրոցի հարևանությամբ ամեն օր ծավալվում են մեր աչքի առջև, ուսուցչի մեր աշխատանքը վերածում են մարդկությանն ուղղված մարտակոչի... Բարձր Հայքից այստեղ բերված 2000-ից 3000 առողջական բարվոք վիճակում գտնվող գյուղացի կանանցից մնում են 40-ից 50 կմախքներ: Ամենագեղեցիկներն իրենց վերակացուների ցանկասիրության զոհն են դառնում: Տգեղները մահանում են հարվածներից, սովից ու ծարավից, որովհետև, ջրի ափով մեկ ձգված, նրանք բույստվորյուն չունեն հագեցնելու իրենց ծարավը: Եվրոպացիներին արգելված է սովահարներին հաց բաժանել: Ամեն օր Հայելից տանում են ավելի քան հարյուր դիակ: Եվ այս ամենը տեղի է ունենում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների աչքի առջև: 40-ից 50 կմախքանման տեսիլքներ կիսված են մեր դպրոցի հսնողապակաց բակում: Նրանք խելակորույսներ են. նրանք այլևս չեն կարող ուտել, երբ նրանց հաց են տալիս, նրանք անտարբերությամբ այն մի կողմ են մետում: Նրանք տնքում են՝ սպասելով մահվան: Ահա քե ինչ է, ասում են տեղաբնակները, «*Te-â-him*»-ը (զերմասնացիների ուսուցումը) ... Ի լրումն, համաձայն Ջեմալ փաշայի հրապարակած շրջաբերականի, կարող ենք նախապատրաստվել ավելի սարսափելի մարդկային կոտորածի (Բաղդադի երկաթուղու ինժեներներին արգելված է լուսանկարել հայերի շարասյուները, իսկ օգտագործված ժապավենակոճերը պետք է հանձնվեն 24 ժամվա ընթացքում՝ ռազմական խորհրդին հայցի հարուցման սպառնալիքի ներքո): Սա վկայում է այն մասին, որ ազդեցիկ իշխանությունները վախենում են բացահայտումից, բայց չեն ցանկանում վերջ տալ մարդկության համար անպատվաբեր այս տեսարաններին»:

Նրանք, ովքեր այսպես են արտահայտվում (և նրանց վկայությունը շատ ավելի անառարկելի է) պատկանում են, ես այդ կրկնում եմ, այն ազգին, որը երիտթուրքերի արյունոտ ձեռքով միահեծանորեն կառավարում է Օսմանյան կայսրությունը:

Սակայն, «այժմ հաստատված է,– ասում է Հայերի օգնության շվեյցարական կոմիտեն,– որ հայերի նկատմամբ թուրքերի վարքագիծը որևէ ձևով կախված չէր ռազմական այն իրավիճակից, որում նրանք գտնվում էին. խոսքը վերաբերում էր բացառապես այս խեղճ ազգի ոչնչացմանը»:

Այսպիսով, դա նույնքան արդարացում չունեցող, որքան և պատմության մեջ աննախադեպ մի ոճրագործություն է, որի դեմ պետք է ոտքի կանգնեն այն բոլոր ազգերը, որոնք մարդկության պատվի զգացողություն ունեն: Թույլատրել նման հանցափորձ, *առանց անեյու հնարավոր ամեն ինչ, դրա իրականացմանը խանգարելու համար*, նշանակում է դառնալ դրա հանցակիցը:

Միացյալ Նահանգների կառավարությունը, ապարդյուն անցած այդչափ ջանքերից հետո, հասել է այն քանին, որ այս հավաժվողներին դրամական օգնություն ուղարկվի, որը հավաքվել է հանգստակությանը և բաժանվել ամերիկյան հյուպատոսների ու միսիոներների միջոցով: Բայց երկրում չկան մթերային պաշարներ, թուրքական կառավարությունը եռանդուն ձևով հակադրվում է ամերիկացիների կողմից՝ չեզոքներից կազմված առաքելությունների ուղարկմանը, որոնք գալիս են, բերելով հագուստ, մթերքներ ու դեղամիջոցներ՝ դժբախտ հայերին մթերքներով ապահովելու և նրանց համար աշխատանք ստեղծելու համար: Եվ միշտ առկա է հնարավոր կոտորածների սարսափելի սպառնալիքը, որը մի վայրում ավարտվում է միայն այն քանի համար, որպեսզի նվազագույն իսկ առիթի դեպքում վերսկսվի մեկ այլ վայրում:

Ֆրանսիայի համակրանքները, որոնք ավելի խորն են, քան երբևէ, ի դերն են եկել հասա-

րակական կարծիքի հավատարիմ աջակցի՝ մաճուլի և Սորբոնում վերջերս տեղի ունեցած վիթխարի ցույցի միջոցով: Ես լիովին վստահ եմ, որ իմ խնդրանքն այն մասին, թե արդյոք դուք չե՞ք գտնում, որ վրա է հասել ձեր՝ իբրև կառավարության ղեկավարի և Արտաքին գործերի նախարարի՝ քաջալերող խոսքեր ասելու պահը, որոնք հալածվող հայերին կհայտնեն նրանց մոտալուրտ ազատագրման և նրանց դաժիճներին պատժի ենթարկելու օրը, ինչպես նման ձևով արդեն վարվել է Անգլիան, համապատասխանում է ձեր սրտից բխող զգացմունքներին: Այդ խոսքերն առավել հզոր կհնչեն ձեր կողմից, քանի որ դուք դրանք կասեք, պարոն նախագահ, այն Վեժ ազգի վարկին վայել, որը դուք ներկայացնում եք և այն անձնական հեղինակությամբ, որը դուք ձեռք եք քերել Եվրոպայում: Դուք խարսգանել եք հյուսիսային երկրների և Բելգիայի ժողովուրդների տեղահանությունները, և ողջ աշխարհը հուզվել է: Երբ ձեր ձայնը կրկին հնչի ի նպաստ բարբարոսների այս և այլ գոհերի, ո՞վ գիտե, թե չե՞զրք ազգերը, ոյունցից ամենահզորն արդեն ի հայտ է բերել իր գագսմունքները, արդյոք չե՞ն կարծի, որ հասել է այն ժամը, նրբ իտարկ է քուրբական կառավարությանը հասկացնել տալ, որ ճնշված ժողովրդին հարստահարողների կողմից սպարբերաբար ի կատար ածվող կոտորածը՝ լույսն էր ևս դիտում են իբրև խայտառակություն մարդկության համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 68-71).

258

Ծանուցագիր Պորտ-Սաիդում գտնվող ֆրանսիական ռազմաժողովային նավատորմի համար¹

Գալտնի:

[Պորտ-Սաիդ, 12-ր սեպտեմբերի 1916 թ.]:

Այսօր առավոտյան, սեպտեմբերի 12-ին, անգլիացի կապիտան Ջ. Հայլը, որը Պորտ-Սաիդ է եկել այ. Հորմբլոուերի հետ հայերին մավ բարձրացնելու համար, ինձ ասաց, որ հայերը կտրականապես հրաժարվել են Սալոնիկ մեկնելուց: Նա վերագրում է այս որոշումը տեղական՝ արաբական և հայկական մեքենայություններին:

(A.C.M., SS S a 42).

259

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոբին

Հ. թիվ 518:

Լոնդոն, 13-ր սեպտեմբերի 1916 թ., ժ. 16.15-ին:

Ի պատասխան սեպտեմբերի 4-ի ձեր թիվ 5726-9/11 ճեպագրի²:

¹ Պ (ատվելի) հ (այր) Ժոսսենի կողմից:

² Վերն արտատպված է թիվ 251 փաստաթղթում:

Չեր հրահանգներին համապատասխան, ես հարցրի Ուոր Օֆիսի կարծիքը Կիպրոսում ֆրանսիական հրամանատարական կազմի ղեկավարության ներքո գործող հայկական կորպուսի հնարավոր կազմակերպման մասին:

Ես պատիվ ունեմ ձեզ հաշվետու լինել, որ բրիտանական կառավարությունը հենց նոր իր համաձայնությունը տվեց այս նախագծին: Հայկական կորպուսը կարող է համախմբվել և կազմակերպվել կղզու հյուսիսային կամ արևելյան մասերում ընտրված վայրերից մեկում:

(A.M.G., 5 N 157).

260

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 1203:

Լոնդոն, 13-ը սեպտեմբերի 1916 թ., ժ. 19.45-ին:

Ես պատասխանում եմ ձեր թիվ 2606 հեռագրին¹:

Ֆորին Օֆիսը հենց նոր ինձ տեղեկացրեց, որ ոչինչ չի կարող դիմակայել Կիպրոսում հայկական զնդի ստեղծմանը: Այդուհանդերձ, այն հուզումների պատճառով, որոնց կարող է դրա կազմավորումը տեղիք տալ կիպրոսաբնակ մահմեդականների շրջանում, Գերագույն կոմիսարն² առաջարկում է այն տեղակայել կղզու հյուսիսային կամ արևելյան մասերում, որտեղ այդ տարրերը փոքրաթիվ են, չնայած՝ դրանով մատակարարումը կդառնա ավելի դժվարին:

Եզիպտոսում գտնվող զինվորական տարիքի հայերի թիվը հասնում է չորսից հինգ հարյուրի, իսկ Հնդկաստանում գտնվող գերիների թիվը՝ հարյուր յոթանասուն հինգի:

(A.M.A.E., Guerre 1914-1918. *Turquie*, tome 890, f. 114).

261

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի³ ծանուցագիրը, որն ամփոփում է փոխզնդապետ Բրեմոնի նամակը

14-ը սեպտեմբերի 1916 թ.:

Ես ձեզ գրել եմ Մուսա լեռան հայերի հարցի շուրջ⁴: Ինչպես ընդունված է մեզանում, հարկ կլինի նրանց ծախսերը վճարել պատերազմի ավարտին (ամսական 30000 ֆրանկ): Եվ կստացվի, որ մենք նրանց թույլատրել ենք մեր ծախսերով տրվելու անգլիանոլության, ամերիկանոլության, հայանոլության: Անհրաժեշտ է այս ուղուց ետ կանգնել: Մինչդեռ այս

1 Օգոստոսի 14-ի. տես վերը թիվ 244 փաստաթուղթը:

2 Սրբ Ջոն Քլոսոնը:

3 Պ. Գուն:

4 Տես ստորև թիվ 263 փաստաթղթի ծանուցագրությունը:

պահին նրանք կկատարեն այն ամենը, ինչ մենք ցանկանանք: Բայց պետք է կցել մի մարդու, որը մշտապես նրանցով զբաղվի, միայն այդ անի և ուղղակիորեն կախման մեջ լինի Փարիզից:

Նրանց պատճառով ներկայումս մեկը մյուսին վնասներ են պատճառում: Մեր Ռ-ազմածովային նախարարության և Պորտ-Սաիդի անգլիական իշխանությունների միջև շատ ուժեղ քաշքշուկ կա: Հարկ է ամբողջությամբ լքել Մուսա լեռան հայերին կամ նրանց ամբողջությամբ վերցնել մեր հոգածության ներքո: Առաջին լուծումը ցավալի կլինի, որովհետև այս մարդիկ խաղաղ կյանքի կվերադառնան իրենց տարածքում, որը մերը կլինի: Նրանք այնտեղ կվերադառնան մեր կողմից լքված լինելու հետևանքով խոցված, անզլերեն սովորած, հայկական կենտրոնական կոմիտեների հետ սերտորեն դաշնակցած, յուրաքանչյուր բնույթի դիմադրությունների պատրաստ: Իսկ եթե այժմվանից մենք նրանց ղեկավարենք, նրանք կդառնան մեր հրաշալի գործիքը: Ամենահետաքրքրականն այն է, որ մենք այնուամենայնիվ ստիպված կլինենք հատուցել անգլիացիներին: Եվ դա արդեն կազմում է 360000 ֆրանկ: (A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 115-115 v).

262

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար
պ. Արիստիդ Բրիանին**

Ն:

Ռոյան, 14-ը սեպտեմբերի 1916 թ.:
(*Ստացել են* Կաթ. սեպտեմբերի 17-ին,
Քաղ. վարչ. սեպտեմբերի 18-ին):

Պ. Լուի Մարտենը՝ անչափ հուզված այն մանրամասներից, որոնք Միջագետք տեղահանված հայերի վերաբերյալ վերջերս հաղորդել են «Տանը» և «Ժուրնալ դը Ժնև», հենց նոր ձեզ է հղել մի նամակ՝ չեզոք ազգերին ձեր միջամտությունը հայցելու մտադրությամբ, որպեսզի նրանք եռանդուն ջանքեր գործադրեն այս աննախադեպ հրեշայնությունը վերջ տալու համար: Ես միանում եմ նշանավոր սեմատորի կոչին և խնդրում ձեզ, պարոն նախագահ, բարեհաճել բարձրացնելու ձեր ազնվաբարո և հզոր ձայնն ի նպաստ քաղաքակրթության ու քրիստոնեության այս նահատակների:

Անըմբռնելի է, որ չեզոք ազգերի ներկայացուցիչներն անհուղողող ձևով Կոստանդնուպոլսում հանդուրժեն այս չտեսնված հանցագործության ավարտը, որը հանգում է մի ամբողջ համայնքի ծրագրված սպանությանը: Ամերիկյան կառավարությունը ձեռնարկել է մի քանի քայլեր և տեղահանվածներին դրամական օգնություն ուղարկելու քույրություն ստացել: Բայց չեզոք այլ ազգերի կառավարությունները դեռևս որևէ փորձ չեն կատարել վերջ տալու կամ նվազագույնը՝ մեղմացնելու համար այն սարսափելի տառապանքները, որոնք կրում են իրենց օջախներից և հայրենի երկրից վտարված, Միջագետքի անապատները քշված այս դժբախտ, անպաշտպան էակները:

Համաձայն ստոր և դաժան այս գործելաձևերի, որոնցով թուրքերը տանջում են, վիրա-

վորում, սպանում Հայկի հնագույն երկրի հայ բնակչության այս խեղճ բեկորներին, արատավորվել է և ոտնահարվել այն, ինչը մարդկության համար ամենասուրբն էր: Թուրքական կառավարությանը բոլոր չեզոք ազգերի կատարած կոլեկտիվ և եռանդուն քայլն անարդյունավետ չի մնա: Խոսքը վերաբերում է այն բանին, որ այդ կառավարությունից հարկ է պահանջել. 1/ դադարեցնել դեռևս Թուրքիայում մնացած հայերի և, մասնավորապես, դժբախտ տեղահանվածների նկատմամբ գործադրվող յուրաքանչյուր հալածանք ու վայրագություն. Գուրանը, ինչպես նաև Ավետարանը, արգելում է հարվածել թշվառության մման գազաֆնակետի հասած էակներին. 2/ բույլատրել չեզոքներից բաղկացած առաքելություններին օգնության հասնելու տեղահանվածներին, խնամելու հիվանդներին, աշխատանք գտնելու նրանց համար, ովքեր անկախ սեռից ցանկանում են և կարող են աշխատանքով ապահովել իրենց կյանքը:

Հայերը համոզված են իրենց գործի հաղթանակում, քանզի Ֆրանսիայի և դաշնակիցների հաղթանակը որոշակի է: Հայ ազգը չի կարող կործանվել: Եթե նույնիսկ թուրքերին հաջողվի ոչնչացնել Օսմանյան կայսրությունում դեռևս գտնվող բոլոր հայերին (բայց նրանք այդ հարցում հաջողության չեն հասնի), կշարունակեն գոյատևել այն երկու միլիոն հայերը, որոնք բնակվում են Կովկասում, Ռուսաստանի և Ագերբեղջանի [sic] տարբեր շրջաններում և այն մի քանի հարյուր հազարավոր հայերը, որոնք գաղթել են Եվրոպա, Ամերիկա, Եգիպտոս: Այն օրը, երբ դաշնակիցներն արդարության պայմանագիրը կպարտադրեն բարբարոսներին, կարելի կլինի տեսնել, թե ինչպես են հայերը, որոնցից յուրաքանչյուրն իր սրտում կրում է անխորտակելի Հայաստանը, բոլոր կողմերից նետվում դեպի մեր վաղնջական հայրենիքը՝ վերակազմավորելու համար ազգը: Նա՛ մեր հնամենի ազգը կվերածնվի, մենք դրանում համոզված ենք, այն կվերածնվի դաշնակիցների հովանու ներքո և, մասնավորապես, ազնվաբարո Ֆրանսիայի հովանավորության շնորհիվ: Բայց հիշումս շատ դաժան, շատ անարդարացի կլինի, եթե մեր եղբայրներից և քույրերից նրանք, ովքեր այնտեղ, բուն երկրում, չնայած այդչափ տառապանքներին, համառորեն մնալով հայրենի հողին գամված, դժոխսային պայմաններում վառ են պահել կյանքի և ազգային հույսի բոցը, ոչնչացվեն նախքան արդարության օրվա գալուստը, նրանք, ովքեր ավելի, քան մենք, արժանի են այդ տեսնելու...

Կամեցեք հիշեցնել, պարոն նախագահ, բոլոր չեզոք ազգերին իրենց պարտականության մասին: Բարձրացրեք ձեր հզոր ձայնը, որն անշուշտ կլսեն բոլոր ազգերը: Այդ կլինի մի քայլ, որն արժանի է ազնվաբարո Ֆրանսիային և մեծ սրտի ու պայծառ հանճարի տեր մարդուն, որն այս էպիկական ժամին տնօրինում է նրա վեհապանծ ճակատագիրը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 79-82 v).

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. քիվ 377:

Կահիրե, 15-ը սեպտեմբերի 1916 թ.:
(Ստացել են Կար. սեպտեմբերի 25-ին,
Քաղ. վարչ. սեպտեմբերի 26-ին):

Իբրև իմ թիվ 318 հեռագրի¹ և այս ամսի 10-ի իմ թիվ 356 նամակի² շարունակություն, ես սլառիվ ունեմ Ձերո գերագանցությանը հղել սրան կից փոխգնդապետ Բրեմոնի մի նոր գեկուցագիրը, որը վերաբերում է ներկա իրավիճակին և Պորտ-Սալիդում գտնվող հայ գաղթականների հնարավոր օգտագործմանը³:

Այդ գեկուցագրի երկրորդ օրինակը դիվանագիտական գրագրություններն առաքող փոստով ուղարկվել է սլ. Ռ-ազմական նախարարին:

Մեր էսկադրայի միջոցով Մուսս լեռից բերված հայերի օգտագործումը մինչ այժմ նախատեսվել է միմիայն ռազմական տեսանկյունից և որոշակի նպատակով. նույնիսկ թվում է, թե մեր ռազմածովային և ռազմական իշխանությունները, սկսած վերջին ապրիլ ամսից, այս հարցի նկատմամբ հետաքրքրություն չեն դրսևորում:

Փոխգնդապետ Բրեմոնն, ընդհակառակը, Եգիպտոս ժամանելուց ի վեր, շատ աշխուժորեն հետաքրքրվել է հայերով, բայց նա այդ հարցի շուրջ մտորում է շատ ավելի բարձր և ավելի ընդհանուր դիրքերից: Ըստ նրա, խոսքն այլևս չի վերաբերում Սիբիայի ափի մոտակայքում մեկուսի գործողության ընթացքում՝ Պորտ-Սալիդ գաղթած 3 կամ 400 մարտունակ տղամարդկանց փոքրիշատե արդյունավետ ձևով օգտագործելուն: Խոսքը վերաբերում է ոչ միայն Պորտ-Սալիդում, այլև այլուր գտնվող հայերից, որոնց հնարավոր կլինի հավաքագրել, բուն գործնասի կազմավորմանը, որը նախատեսված կլինի այն ռազմարշավային կորպուսին արդյունավետ օգնություն ցուցաբերելու համար և որը, փոխգնդապետի կարծիքով, վաղ թե ուշ ափ դուրս կբերվի և կգրավի Սիբիան: Մարտունակ տղամարդկանցից բացի, խոսքը նմանապես վերաբերում է կանանց և երեխաներին տեղավորելուն, դեկավարելուն և ուսուցանելուն, այնպես, որ հնարավոր լինի ձևավորել ֆրանսիական ազդեցության ներքո՝ գտնվող՝ օգտագործելու համար պիտանի միջուկ, երբ մենք վարչական առումով կազմակերպենք ֆրանսիական դարձած Սիբիան կամ ֆրանսիական պրոտեկտորատը:

Ծրագիրն, այսպիսով, դառնում է շատ ավելի ընդարձակ, և ես չզիտեմ, թե արդյոք դրա իրագործումը Ձերո գերագանցության նպատակների թվում է դասվում:

Ամեն դեպքում, դրա իրագործմանը ձեռնամուխ լինելն ինձ թվում է դժվարին թե՛ եզրվատական հողի վրա, այն է՝ Պորտ-Սալիդում և թե՛ Կիպրոս կղզում, ինչպես այդ առաջարկում է փոխգնդապետ Բրեմոնը: Չարքնացնելու համար անգլիացիների ոլորագագացողությունը և խուսափելու համար բրիտանական ռազմական ու քաղաքացիական իշխանությունների հետ դժվարությունների կամ տարածայնությունների տեղիք տվող բոլոր պատճառներից, հարկ կլինի Պորտ-Սալիդից դուրս բերել բոլոր հայերին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին ու նրանց տեղավորել ֆրանսիական կամ մեր հսկողության ներքո գտնվող տարածքում: Այդ գործողությունը կլինի տանջալից ու երկարատև: Ես գտնում եմ, այսպիսով, որ այդ կարող է ձեռնարկվել միայն այն դեպքում, եթե մենք հետապնդենք կարևոր մի նպատակ, ինչպիսին կարող է լինել, օրինակ, ես այդ ընդունում եմ, Պորտ-Սալիդի մարդկանցից և նրանցից, ովքեր նրանց կմիանան, մի բնակչության ձևավորումը, որը նախապես նվիր-

1 Սեպտեմբերի 9-ի. տե՛ս վերը թիվ 253 փաստաթուղթը:

2 Վերն արտատպված է թիվ 255 փաստաթուղթում:

3 Արտատպված չէ: Սեպտեմբերի 10-ի իր ծավալուն գեկուցագրում փոխգնդապետ Բրեմոնը հուշում է ֆրանսիական կառավարությանն իր հոգածության ներքո վերցնել Եգիպտոսի հայ գաղթականների բոլոր ծախսերը, նրանց տեղավորել Կիպրոսում և նրանց կազմակերպել՝ Սիբիայում ձեռնարկվելիք ռազմարշավի համար: Փոխգնդապետ Բրեմոնը կարծում է, որ ձեռնարկված միջոցների համար հայերը երախտապարտ կլինեն Ֆրանսիային և կնպաստեն ֆրանսիական ազդեցության տարածմանը Սիբիայում: Նա հույս է տածում, որ հնարավոր է Կիպրոսում ուսուցանել հայ կամավորներին ֆրանսիական սպաների հրամանատարության ներքո: Հետևաբար, նա առաջարկում է Կիպրոս կղզում ստեղծել ռազմական ճամբար:

ված կլինի մեր կողմից Սլովիայի գրավմանը և դրա վարչական կազմակերպմանը:

Համաձայն անգլիացիների հայեցակետի, առկա է հետևյալ իրավիճակը. մենք գտնում ենք, որ իրավունք ունենք տնօրինել այս զաղրականքներին, որովհետև նրանց փրկել ենք այն պահին, երբ թուրքերը պատրաստվում էին նրանց կոտորել և քանզի նրանք այն երկրամասի բնիկներն են, որն ամենայն հավանականությամբ, պետք է մեզ վերադարձվի: Անգլիացիները կարծում են, որ այս բնակիչներին փրկելուց հետո, մենք նրանց լքել ենք, և որ նրանց տեղավորելով, հովանավորելով, կերակրելով ու նրանց համար կարևոր ծախսեր անելով, նրանց նկատմամբ իրենք իրավունքներ են ձեռք բերել:

Մակայն, ինչպես և այդ մասին ես նախապես հաղորդել եմ, անգլիացիները գտնում են կամ համենայն դեպս Գերագույն կոմիսարը գտնում է, որ այս հայերն իրենց պատճառում են բազմաթիվ անհամգատություններ և բազմաթիվ ծախսեր, առանց մինչ այժմ՝ օգուտ տալու: Ուստի, սլըր Մակ Մահոնն ամբողջությամբ հակված է նրանց մեզ հանձնելու: «Եթե դուք ցանկանում եք ընդունել նրանց,– ասաց նա ինձ,– դուք ինձ ծառայություն կմատուցեք: Բայց ընդունեք նրանց արագ և բոլորին»:

Եթե մենք մտադրություն ունենք որևէ ձևով օգտագործելու այս հայերին, հարկ է, այսպիսով, անհապաղ որոշում կայացնել: Այն է՝ վճարել այն ծախսերը, որոնք բրիտանական իշխանություններն արել են նրանց համար՝ վերադարձնելով այն գրավը, որն անգլիացիները դրել էին այս բնակչության վրա և նրանց տեղավորել մի որոշակի վայր:

Եթե մենք շարունակենք սպասել, անգլիացիները կկարծեն, թե հրաժարվել ենք հայերին օգտագործելու ամեն մի նախագծից և նրանց կթվա, որ իրավասու են օգտագործել հայերին, առանց մեր համաձայնությունը հայցելու:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 116-117).

264

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 337: Գ.աղտմի:

Կահիրե, 22-ը սեպտեմբերի 1916 թ., ժ. 17.10-ին:

(Մտացվել է ժ. 19.05-ին):

Ես հիմնվում եմ իմ թիվ 318 հեռագրի¹ և այս ամսի 10-ի իմ թիվ 356 նամակի² վրա:

Պորտ-Սալոյի հայերին օգտագործելու հարցը մեր ռազմածովային և բրիտանական ռազմական իշխանությունների միջև տեղիք է տվել որոշակի տարաձայնությունների: Անհրաժեշտ կլինի, հետևաբար, որքան հնարավոր է արագ, հստակ ու վերջնական որոշում կայացնել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 151).

¹ Սեպտեմբերի 9-ի. տես վերը թիվ 253 փաստաթուղթը:

² Տես վերը թիվ 255 փաստաթուղթը:

**Սիրիայում ռազմածովային դիվիզիայի հրամանատար, դերժովակալ
դը Սպիտզը՝ Ռ-ազմածովային նախարար, դերժովակալ Լակազին**

Ճ. քիվ 210:

«Պոտյոտյի» տախտակամածից, 22-ը սեպտեմբերի 1916 թ.:
(Ստացել են Կաբինետը հոկտեմբերի 3-ին,
Գ-լխավոր} շ {տաբլ} 4-րդ ենթաբաժինը
հոկտեմբերի 4-ին):

Իբրև սեպտեմբերի 21-ի իմ քիվ 1681 հեռագրի շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ հղել պետական նախարար պ. Դենի Կոշենին՝ Մուսա լեռան մոտ փրկված հայերից մի քանիսի գրած նամակի պատճենը¹, որոնց այժմ բնակեցրել են բրիտանական իշխանությունների կողմից Պորտ-Սալիում տեղադրված ճամբարում: Այս նամակը պետք է ուղարկված լինի «Լոտոսով», որը բողել է Ալեքսանդրիան այս աճախի 17-ին:

Չորս ստորագրողներից երկրորդը և չորրորդը (Ղազանջյանը և Անտոնյանը) այս պահին իրենց համազարթվածների շրջանում մեծ ազդեցություն ունեցողի համբավ են վայելում: Մյուս երկուսը (Բոյաջյանը և Քաբադյանը) հետևել են զինվորական հրահանգին և ենթաբաժնի ղեկավարին համապատասխանող ուսուցում են ստացել:

(A.C.M., SS Ed 125).

**Ռ-ազմական նախարարը՝ Ռ-ազմածովային նախարար,
դերժովակալ Լակազին**

Ճ. քիվ 6172-9/11: Գ-աղտնի:

Փարիզ, 23-ը սեպտեմբերի 1916 թ.:
(Ստացել են Կաբինետը սեպտեմբերի 25-ին,
Գ-լխավոր} շ {տաբլ} 4-րդ ենթաբաժինը
սեպտեմբերի 26-ին):

Իբրև օգոստոսի 12-ի իմ քիվ 5174-9/11 ճեպագրի³ շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից սեպտեմբերի 13-ի քիվ 518 հեռագրի պատճենը⁴, որով Լոնդոնում գտնվող ռազմական կցորդն⁵ ինձ տեղեկացնում է բրիտանական կառավարության տված համաձայնությանը՝ ֆրանսիական հրամանատարական կազմի ղեկավարության ներքո գտնվող հայկական կուրպուսի հնարավոր կազմակերպմանը Կիպրոս կղզու հյուսիսում կամ արևելքում բնտրված որևէ վայրում:

1 Տես ստորև քիվ 280 փաստաթղթի հավելվածը:

2 Ստորագրել է գեներալ Դյուպորը:

3 Վերև արտատպված է քիվ 242 փաստաթղթում:

4 Տես վերը քիվ 259 փաստաթուղթը:

5 Գնդապետ դը Լա Պանուսը:

Բայց այս կազմակերպության համար անհրաժեշտ հաշվեգրումների թվին առնչվող մինչ այժմ ի մի բերված տեղեկությունները վերաբերում են միայն 200 հայերի համախմբմանը, որոնք առանձնացվել են Պորտ-Սալոյի զաղրականներից և մասամբ արդեն ուսուցանվել Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հոգաձուրյամբ:

Մյուս կողմից, կից ուղարկվող հեռագրի պատճենը¹, որի մասին դուք ինձ հաղորդել էիք, ինձ տեղեկացրեց, որ գլխավոր հրամանատար փոխծովակալը վերջերս իր համաձայնությունն է տվել անգլիացիների կողմից Պորտ-Սալոյի հայերի օգտագործմանը:

Այս պայմաններում, վաղաժամ կլինի նախապատրաստել նախատեսվող կազմակերպությունը: Հետևաբար, ես որոշել եմ Եգիպտոս և Կիպրոս ուղարկել հետևակային գումարտակի հրամանատար Ռոմիոյին, որի առաքելությունը կհանգի խնդրո առարկա նախագծի նպատակահարմարության և դրա իրականացման պայմանների շուրջ բրիտանական տեղական իշխանությունների հետ պայմանավորվածություն կայացնելուն: Նա կուսումնասիրի զինվորագրման ենթակա ուժերը, որոնց հնարավոր կլինի ապավինել: Նա կտեղեկանա Սիրիայում գործող մեր ռազմածովային դիվիզիայի հրամանատարի² կարծիքներին և կհետազոտի Կիպրոսում հայկական կորպուսի կազմավորման համար ամենահարմարավետ վայրերը, այնուհետև՝ ինձ առաջարկություններ կներկայացնի այն մասին, թե ինչպիսի շարունակություն է պետք տալ այդ կազմակերպությանը:

Ես ձեզ, այսպիսով, երախտապարտ կլինեմ, եթե մեր ռազմածովային դիվիզիայի հրամանատարին դուք խնդրեք պահել՝ մինչ մեր երկու Դեպարտամենտների միջև համաձայնությունից հետո միջամտության մասին որոշման կայացումը, Պորտ-Սալոյի այն հայերին, որոնց կարելի է օգտագործել, եթե, իհարկե, նա նրանց դեռևս չի տնօրինել:

Բարեհաճեք մեծնապես նրա մոտ լիազորել հրամանատար Ռոմիոյին, որն իր առաջարկություններում հարկ կունենա մկատի ունենալ այն հայկական անձնակազմերը, որոնց ռազմածովային դիվիզիան ի վիճակի կլինի հավաքագրել Փոքր Ասիայի ափերի շրջակայքում և հատկապես դերծովակալի կարծիքը, որի տնօրինության ներքո, անհրաժեշտության դեպքում, կդրվի իմ հոգաձուրյան շնորհիվ կազմակերպված կորպուսը:

Վերջապես, ես ձեզ խնդրում եմ բարեհաճել ինձ տեղեկացնել, ինչպես այդ մասին ձեզ խնդրել եմ իմ թիվ 5174-9/11 վերոհիշյալ ճեպագրում, թե արդյոք դուք կհամաձայնվե՞ք Սիրիայում գործող ռազմածովային դիվիզիայի միջոցով, իմ Դեպարտամենտի հաշվին, դրամով ու մքերային մատակարարումներով ապահովել Կիպրոսի առաքելությունը և, անհրաժեշտության դեպքում, հայկական կորպուսը:

Բարեհաճեք սրան կից գտնել այն հեռագրի պատճենը³, որը ես հղում եմ Կահիրեում գտնվող բրիտանական շտաբ առաքելությանը գործողված լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինին՝ տեղեկացնելու համար Ռոմիոյի առաքելության մուտալուտ մեկնումի մասին: (A.C.M., SS Ed 125).

1 Արտատպված չէ:

2 Դերծովակալ դը Սպիտգը:

3 Տես ստորև թիվ 267 փաստաթղթի հավելվածը:

**Ռազմական նախարար, գեներալ Ռոբըրտ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. թիվ 6173-9/11: Գաղտնի:

Փարիզ, 23-ր սեպտեմբերի 1916 թ.:

Իբրև օգոստոսի 10-ի թիվ 5140-9/11 իմ վերջին ճեպագրի¹ շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից սեպտեմբերի 13-ի թիվ 518 հեռագրի պատճենը², որով Լոնդոնում գտնվող ռազմական կցորդն³ ինձ տեղեկացնում է քրիտանական կառավարության տված համաձայնությանը՝ ֆրանսիական հրամանատարական լրագմի ղեկավարության ներքո գտնվող հայկական կորպուսի հնարավոր կազմակերպմանը Կիպրոս կղզու հյուսիսում կամ արևելքում ընտրված որևէ վայրում: Բայց այս կազմակերպության համար անհրաժեշտ հաշվեգրումների թվին առնչվող մինչ այժմ ի մի բերված տեղեկությունները վերսբերում են միայն 200 հայերի համախմբմանը, որոնք առանձնացվել են Պորտ-Սալոյի գաղթականներից և ուսուցանվել ֆրանսիական Ռազմածովային նախարարության միջոցով, որը նրանց օգտագործելու առիթը չի ունեցել: Գլխավոր հրամանատար փոխծովակալը վերջերս նույնիսկ իր համաձայնությունն է տվել անգլիացիների կողմից՝ կամ Եգիպտոսում, կամ Սալոնիկում, նրանց իբրև ջորի բշտիկների օգտագործմանը:

Այս պայմաններում, վաղաժամ կլինի այսօրվանից սկսած նախապատրաստել նախատեսված կազմակերպությունը: Հետևաբար, ես որոշել եմ Եգիպտոս և Կիպրոս ուղարկել հետևակային գումարտակի հրամանատար Ռոմիոյին, որի առաքելությունը կհանգի նախատեսված նախագծի նպատակահարմարության և՛ դրա իրականացման պայմանների շուրջ քրիտանական տեղական իշխանությունների հետ պայմանավորվածություն կայացնելուն: Նա կուսումնասիրի զինվորագրման ենթակա ուժերը, որոնց հնարավոր կլինի ապավինել: Նա կտեղեկանա Սիրիայում գործող մեր ռազմածովային դիվիզիայի հրամանատարի կարծիքներին և կհետազոտի Կիպրոսում հայկական կորպուսի կազմավորման համար ամենահարմարավետ վայրերը, այնուհետև՝ ինձ առաջարկություններ կներկայացնի այն մասին, թե ինչպիսի շարունակություն է պետք տալ այդ կազմակերպությանը:

Այս նախագծի իրականացման պարագայում, ես նկատի ունեմ օգտագործել գնդապետ Տուշարյան, որը կներգրավվի հրամանատարական առաջին խմբի կազմում:

Դուք կից կգտնեք այն հեռագրի պատճենը, որը ես հղում եմ Կահիրե՝ լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քունտինին՝ տեղեկացնելու համար Ռոմիոյի առաքելության մոտարտ մեկնումի մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 152-152 v).

1 Վերև արտատպված է թիվ 241 փաստաթղթում:

2 Տես վերը թիվ 259 փաստաթուղթը:

3 Գնդապետ դը Լա Պանուրը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ռազմական նախարար, գեներալ Ռոբըլ Եգիպտոսում քրիտանական զինված ուժերի հրամանատարություն գործուղված լեյտենանտ Գոյնել դը Սեն-Քուենտինին

Ճ. քիվ 6169-9/11: Գաղտնի:

Փարիզ, 23-ը սեպտեմբերի 1916 թ.:

Առաջին. Ընդունելով գեներալ Քլայթոնի՝ պ. Կամբոնին արած առաջարկը և քննարկելով փոխգնդապետ Բրեմոնի՝ սեպտեմբերի 9-ի հեռագրով՝ հայտնած կարծիքը, ես որոշեցի ուսումնասիրել հայերին (որոնց հնարավոր կլինի հավաքագրել Եգիպտոս գաղթածներից, Հնդկաստանում և, անհրաժեշտության դեպքում, Սիրիայում գտնվողներից)՝ ռազմական ուսուցում տալու համար Կիպրոսում համախմբելու նպատակահարմարությունը և պայմանները: Բրիտանական կառավարությունը համաձայնվում է, որ ֆրանսիական հրամանատարական կազմի ներքո՝ այդ զինված անձնակազմերը տեղավորվեն կղզու հյուսիսում կամ արևելքում բնտրված ոչևե՛ վայրում:

Երկրորդ. Հրամանատար Ռոմիոն առաջիկայում կմեկնի Եգիպտոս, այնուհետև՝ Կիպրոս, որպեսզի տեղում ուսումնասիրի հավաքագրման հնարավորությունները և Կիպրոսում տեղավորվելու նյութական պայմանները:

Երրորդ. Հետևաբար, ինձ կարևոր է քվում Պորտ-Սալոյի հայերի՝ իբրև կազմավորման ենթակա կորպուսի առաջին միջուկի պահպանումը, չնայած, որ զլխավոր հրամանատար ծովակալն իր համաձայնությունն է տվել՝ քրիտանական իշխանությունների կողմից կամ Սալոնիկում, կամ Եգիպտոսում նրանց օգտագործմանը: Ես ձեզ խնդրում եմ պ. Գեֆրանսի ու Սիրիայում գտնվող էսկադրայի ռազմածովային իշխանությունների հետ պայմանավորվածություն կայացնել անգլիական հրամանատարին միջամտելու շուրջ, որպեսզի հայերի օգտագործումը հետաձգվի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 154-154 v).

268

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսին

Հ. քիվ 325:

Փարիզ, 24-ը սեպտեմբերի 1916 թ., ժ. 21.15-ին:

Ես պատասխանում եմ ձեր քիվ 337 հեռագրին²:

Ռազմական նախարարը հեռագրով պ. դը Սեն-Քուենտինին է ուղարկել Պորտ-Սալոյի հայերին վերաբերող հրահանգներ: Հրամանատար Ռոմիոն մեկնում է Եգիպտոս, որպեսզի ուսումնասիրի նրանց համախմբման հնարավորությունը Կիպրոսում:

Հետաքրքիր կլինի իմանալ, թե արդյոք մենք կկարողանա՞նք հավաքագրել նաև սիրիա-

¹ Տե՛ս՝ վերը քիվ 253 փաստաթուղթը:

² Սեպտեմբերի 22-ի. տե՛ս վերը քիվ 264 փաստաթուղթը:

ցիներին ու լիբանանցիներին: Կամեցեք ինձ տեղեկացնել այդ մասին:
(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 155).

**Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի հրամանատարություն
գործուղված լեյտենանտ Գոյնել դը Սեն-Քուենտինը՝
Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսին**

Ն:

Կահիրե, 24-ը սեպտեմբերի 1916 թ.:

Ռազմական նախարարն ինձ հեռագրել է այն մասին¹, որ ինքը վճռել է հանձնարարել ուսումնասիրելու Եգիպտոս գաղթածներից Հնդկաստանում և, սահմանափակության դեպքում, Սիրիայում գտնվողներից հավաքագրված հայ կամավորների համար Կիպրոս կղզում ռազմական ուսուցման ճամբարի հիմնադրման հարցը: Դրա հիմնադրման առաջարկով պարոն Կամբոնի մոտ հանդես է եկել գեներալ Քլայթոնը և բրիտանական կառավարությունը կտա իր համաձայնությունը, որ ֆրանսիական հրամանատարական կազմի ղեկավարության ներքո՝ այս զինված անձնակազմերը տեղավորվեն կղզու հյուսիսում կամ արևելքում:

Հրամանատար Ռոմիոն առաջիկայում կմեկնի Եգիպտոս և Կիպրոս, որպեսզի տեղում ուսումնասիրի հավաքագրման հնարավորություններն ու տեղավորվելու հետ կապված նյութական պայմանները: Ռազմական նախարարն ավելացնում է, որ «Պորտ-Սալոյի հայերի՝ իբրև կազմավորման ենթակա կորպուսի առաջին միջուկի պահպանումն իրեն կարևոր է քվում, շնայած գլխավոր հրամանատար ծովակալն իր համաձայնությունն է տվել բրիտանական իշխանությունների կողմից՝ կամ Սալոնիկում, կամ Եգիպտոսում նրանց օգտագործմանը»: Նա ինձ կոչում է անգլիական հրամանատարությանը միջամտելու շուրջ պայմանավորվածություն կայացնել Ֆրանսիայի նախարարի և Սիրիայի էսկադրայի ռազմածովային իշխանությունների հետ, որպեսզի այս հայերի օգտագործումը հետաձգվի:

Ես պատասխանեցի, որ ձեզ տեղյակ կպահեմ հեռագրին, որ անգլիական ռազմական իշխանությունները հայերին հավաքագրել են առանց մեր ծովակալի իմացության, որ նրանց նավ տեղափոխումը հետաձգվել է շնորհիվ մեր համառ քայլերի և ի պատասխան մեր՝ հարցի կարգավորումն ուղղակիորեն Փարիզին և Լոնդոնին թողնելու մասին առաջարկության, որ նրանք, հավանաբար, նրանց մեզ կզիջեն՝ Եգիպտոսից նրանց հեռացնելու և Պորտ-Սալոյում գտնվող կանանց, երեխաների և ծերունիների ծախսերը՝ նվազագույնը մաս-մաս, ամսական 30000 ֆրանկի սահմանում մեր հոգածության ներքո վերցնելու պայմանով:

Գեներալ Մուրյեյին ուղղված ձեր մեկ խոսքն, անկասկած, բավական կլինի նվազագույնը՝ դեռևս որոշ ժամանակ ամեն ինչ նախկին ձևով թողնելու համար:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Defrance*, carton 1).

¹ Տես վերը թիվ 267 փաստաթղթի հավելվածը:

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ: Չհամարակալված:

Պոլտ-Սալոյ, 26-ը սեպտեմբերի 1916 թ., ժ. 18-ին:
(Ստացվել է ժ. 21.30-ին):

Երեկ Իսմայիլիայում գեներալ Մուրբեյն ինձ ասաց, որ այլևս չի քննարկվում Պոլտ-Սալոյի այն հայերին Սալոնիկ ուղարկելու հարցը, որոնց բրիտանական ռազմական իշխանությունները ցանկանում են օգտագործել իբրև ջուրի քշողների. այս հայերը, իրոք որ, մերժել են: Գեներալն ավելացրեց, որ նրանց մնանապես փորձել են օգտագործել այստեղ իբրև մշակների, բայց նրանք դրանից դժգոհ են մնացել:

Ես նրան հայտնեցի հրամանատար Ռոմիոյի առաջիկա ժամանման մասին, որին հանձնարարված է ուսումնասիրել այս հայերին օգտագործելու հարցը: Նա դրանից բավարարված է, բայց հույս ունի, որ մենք իրեն կծեբբազատենք ոչ միայն տղամարդկանցից, այլև կանանցից ու երեխաներից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 157).

**«Միութուն և առաջադիմություն» կոմիտեի կողմից համընդհանուր
վեհաժողովի 1916 թ. սեպտեմբերի 28-ի նիստին
ներկայացված տարեկան հաղորդագրություն¹**

Հայկական հարց

Այն դրամական և նյութական գոհաբերությունները, որոնց համաձայնվել են դիմել օսմանյան տարրերն ազգային փրկության համար մղվող մարտերում, վեր են յուրաքանչյուր գովեստից: Դժբախտաբար, մենք պետք է հայտարարենք, որ պատերազմական որոշ գոտիներում, բնակիչները տուրք են տվել հակահայրենասիրական գործողությունների, և պատճառ են դարձել ռազմական անհրաժեշտություններից պարտադրվող դաժան վերաբերմունքին:

Ռուսական կառավարությունը, որն Արևելքի բրիտոնյաներին հովանավորելու պատրվակով հետապնդում էր միայն Օսմանյան կայսրությունը մասնատելու նպատակ, Բեռլինի պայմանագրում, ի նպաստ հայերի, զետեղել է տվել մի հողված: Այն պահից, ինչ հայերի կացությունն ու ճակատագիրը քաղաքական հարթության վրա տեղադրվեցին այս ձևով, ռուսները և անգլիացիները տարբեր քաղաքական նպատակներով այն ծգտագործեցին, որպես Թուրքիայի վրա կախված դամոկլյան մի սուր: Այն դեպքում, երբ պահը հասնելուն պես, ռուսները, հետամուտ լինելով իրենց նվաճողական քաղաքականության իրա-

¹ Հատված: Մենք արտասպում ենք միայն Հայկական հարցին վերաբերող մասը: Այս հաղորդագրությունը, որը բարգմանել է գաղտնի գործակալ X-ը, 1916 թ. հոկտեմբերի 18-ին Բեռլնում հանձնվել է Ֆրանսիայի դեսպա- նությանը:

կանացմանը, ցանկանում էին Հայկական հարցը վերածել պատերազմական սպառնալիքի, անգլիացիները՝ անկախ Հայաստան ստեղծելու միջոցով հավակնում էին խանգարել Ռուսաստանի առաջընթացին դեպի Իրաք ու Ալեքսանդրետ:

Հայերի ապստամբությունը Ռուսաստանի և Անգլիայի հրահրմամբ. Այս երկակի նպատակից ելնելով, երկու պետությունների հյուպատոսները հայկական բնակիչներով բնակեցված մեր նահանգներում դիմեցին ամենաաներևակայելի խորամանկությունների՝ հեղինակավոր հայերին ապստամբության կոչելու և բնակչությանը զինելու համար: Հյուպատոսները, որոնք ամենուր քաղաքականության հետ կապ չունեցող պաշտոնական անձինք են ու պարտավոր են պահպանել այն համապատասխան երկրների առևտրական շահերը, որոնց ներկայացնում են, շնորհիվ կապիտուլյացիաների, մեր մոտ վերածվել են բուն դեսպանների և նրանց գործողությունները, ինչպես նաև նրանց բնակարանները, դուրս են մնացել կառավարության հսկողությունից: Այնպես որ, այս հյուպատոսների ջանքերը, որոնք իրենց քայքայիչ քարոզչության ասպարեզում բացարձակապես ազատ են, պտուղներ տվեցին բազմաթիվ վայրերում և բազում ժամանակաշրջաններում՝ հրահրելով փոքրիշատե նշանակալից ապստամբություններ: Բայց, քանի որ անգլիացիները հսկողություն էին ռուսների սաղյանքների հետևանքով ի հայտ եկած հուզումներին, իսկ ռուսները լավ չէին տրամադրված նրանց հանդեպ, ովքեր հնազանդվում էին անգլիացիների ծայրահեղ հրահրումներին, օսմանյան կառավարությանը հաջողվեց առանց դժվարության ճնշել այդ ապստամբությունները: Վերջապես, երբ վերականգնվեց սահմանադրական վարչակարգը, որին արտաքուստ ձգտում էին հայ «կոմիտեականները» և որի օրոք այլևս ոչ մի կարիք չկար շարունակել հեղափոխական գործունեությունը, կոմիտեներն ընդհակառակը՝ բազմապատկվեցին նոր անուններով, ընդլայնեցին իրենց ճյուղավորումները և քաղկանյան պատերազմի ընթացքում իրենց լիազոր ներկայացուցիչներին ուղարկեցին Եփրատի անկախության հասնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար: Այն դեպքում, երբ քաղաքական խնդրանքն նման դրսևորումը՝ կառավարության համար ճգնաժամային այսպիսի մի պահի և այնպիսի մի տարրի կողմից, որի ունեցվածքը, կյանքը և բոլոր սրբությունները մենք պաշտպանել ենք վեց դար շարունակ, արժանի էր մեր արդարացի գայրույթին, հնազանդվելով միայն մեր կրոնական դաստիարակությանն ու ի սկզբանե մեզ հատուկ մտայնությանը և այս վիրավորանքները դիտելով իբրև մի խումբ խառնակիչների ձեռքի գործ, տուրք չտալով մեր հայրենակիցների շարքերից նրանց վտարելու ցանկությանը, մենք նրանց, դրա փոխարեն, հատկացրինք տեղական ժողովների մեջ ներթափանցելու և պատգամավորներ ուղարկելու թույլտվության ուղղամտությունը:

Հայերի դավանամտության սպառնալիքը. Չորսհավաքի ժամանակ որոշ երիտասարդ հայեր, անցնելով սահմանը կամ բողոքելով Եգիպտոսը, Բուլղարիան, Ռումինիան, գնացին Ռուսաստան և իբրև կամավորներ գինձառայության անցան ռուսական բանակներում կամ ձևավորեցին Ռուսաստանին օժանդակող զինված խմբեր:

Միաժամանակ Դաշնակցական, Հնչակյան, Ռամկավար և բարեփոխված Հնչակյան կոմիտեները, մի կողմ բողոքելով իրենց անջրպետող տարածայնությունները, միավորվեցին և՛ որոշեցին պատերազմին Թուրքիայի մասնակցության դեպքում հետևել իրադարձությունների ընթացքին և օսմանյան բանակների հաղթանակած լինելու պարագայում, հուզումներ հրահրել, կոտորածներ իրականացնել և ռազմաճակատի քիկունքում գտնվող քաղաքներում հրդեհներ բռնկել, քաջալերել հայ զինվորներին՝ զենքը ձեռքին դասալիք դառնալու հարցում և համախմբելով նրանց հրոսակախմբերում՝ կտրել մեր գործերի նահանջի ճանապարհը: Էջմիածնի կաթողիկոսը, որը Ռուսաստանի ցարին «հայերի հովանավոր» է

անվանում, իր պաշտոնական օրգանի՝ «Արարատ» թերթի 1914 թ. օգոստոսի համալրում տպագրված կրոնական հրովարտակով պարտադրում է բոլոր հայերին իրենց ունեցվածքն ու անձն ի սպաս դնել ռուսական բանակներին: Իրոք որ, օսմանյան բանակից հայ զինվորների դասալքությունը բազմապատկվեց, և ընդունված որոշումները՝ սկսեցին կենսագործվել: Այդուհանդերձ, օսմանյան կառավարությունը ձեռնարկելով նախագուշական միջոցներ, չէր կորցրել դեռևս իր հույսն առ այն, որ հայերի մեծամասնությունը կլիմադրի այս կործանիչ մեքենայություններին:

Հայ հեղափոխականների կողոպուտները. Մակայն իրադարձությունները, համաձայն նախագծված ծրագրի, միայնաց հաջորդեցին այնպես, ինչպես հետևում է.

1/ Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց անմիջապես հետո, հրոսակախմբի առաջնորդ Անդրանիկը, ինչպես նաև Էրզրումի պատգամավոր Գարեգին Պաստերմաջյանը, անցնելով սահմանը Բայազետում, Արմեն Գարոյի գյուղացիների հետ միասին ամայացրել են այս գոտու գյուղերը և կոտորել մահմեդական բնակչությանը:

2/ 1330 թ. (1914 թ.) փետրվարի սկզբին հայկական զինված հրոսակախմբերը գրոհել են գյուհավաքի համար Խիզան ուղարկված մեր ստորաբաժանումները: Գրավելով Վանի ու Բլիթի ճանապարհները, նրանք կտրել են հեռախոսային գծերը և շաբաթներ շարունակ պայքարել մեր ստորաբաժանումների դեմ: Մուշում կրակ են բացել ժանդարմների վրա: Կումում հրկիզել են Ական կանտոնի մյուղիլի տունը, որն ինը զինվորների հետ միասին սպանվել է: Մուշում հրոսակախմբերը, որոնք միավորվել էին Արևում, սպանել են ժանդարմերիայի հրամանատարին, ինչպես նաև նրան ուղեկցող ժանդարմներին:

3/ Փետրվարի 16/29-ին, Ջեյրունում դասալիքները և հրոսակախմբերը պաշարել են կառավարության նստավայրը և զենքի պահեստը, հավիշտակել հրացաններ, կտրել հեռագրալարերը, կոտորել մահմեդական պաշտոնյաներին ու մահմեդականների ընտանիքները և գրոհ ձեռնարկելով ապստամբությունը ճնշելու համար ուղարկված ստորաբաժանման վրա՝ սպանել են դրա մի քանի անդամներին:

4/ Հենց նույն փետրվարին, Դեելի քաղաքում մի ռումբ է պայթել Կիզորի Համբարձումյանի [sic]՝ տանը, որը վերջերս է ժամանել Ամերիկայից: Հայկական դպրոցներում և զենքեզանաատանը կատարված խուզարկության ընթացքում հայտնաբերվել են ավելի քան իննսուն ռումբ, հարյուրավոր մանլիչեր և մաուզեր տեսակի հրացաններ, բենզինի, վառողի մետաղե տափաշներ, ֆրանսերեն, ռուսերեն և հայերեն ծածկագրված թղթակցության բանալիներ, հեղափոխական փաստաթղթեր, յոթանասուն հողված ամփոփող հրահանգ, որը վերաբերում է հրոսակախմբերի պարտականություններին, ինչպես նաև ընդարձակ թղթակցություն: Ձեռքակալված անձինք լկտիաբար խոստովանել են, որ պայքարի այս բոլոր միջոցները նախապատրաստել էին հայկական անկախությանը հասնելու նպատակով:

5/ 1331 թ. մարտի 11-ին (24-3-1915), Ջեյրունի վանքում համախմբված հինգ հարյուր զինված ելուզակներ գրոհել են իրենց դեմ ուղղված ստորաբաժանումը և սպանել ժանդարմերիայի հրամանատար Սուլեյմանին, ինչպես նաև նրան ուղեկցող ժանդարմներին:

6/ Թշնամական նավատորմի միջոցով Ադանայում, Դյուրք-Յուլում ու Ալեքսանդրետի շրջակայքում հետախուզությամբ և երկաթուղիներն ավերելով՝ զբաղվելու համար ափ դուրս բերված անձինք, որոնք ձեռքակալվել են իբրև հրահանգներ կրողներ՝ օսմանյան հայեր էին:

7/ Տիմար կանտոնի գլխավոր քաղաքում (Վանում), ոչխարներին հաշվելու ժամանակ, հայերը կրակ են բաց արել կառավարական պաշտոնյաների վրա: Իսկույն եեթ հա-

մախմբվել են ավելի քան հազար զինված ելուզակներ: Գլավաշում և Շատախում շարժում է ծավալվել: Ապստամբները կտրել են հեռագրալարերը, դարաններում սպանել ժանդարմներին, ինչպես նաև Գլավաշի դատավորին:

8/ Այնուհետև՝ ապստամբությունն ընդգրկել է Վանը: Մահմեդականների տների, Օսմանյան բանկի, Հանրային պարտքի վարչության, Հարկերի գանձման և եկամուտների վարչության ու փոստի շենքի վրա ռումբեր են նետվել: Ապրիլի 7/26-ին հրացաններով, ռումբերով և նռնակներով զինված ելուզակների թիվը գերազանցում էր երկու հազար հինգ հարյուրը: Մահմեդական զինվորները և բնակիչները, որոնք փակվել էին Վանի բերդում, պաշտպանել են քաղաքը մինչև ապրիլի վերջը: Երբ այն անցել է ելուզակների ձեռքը, նրանք այնտեղ հռչակել են ժամանակավոր կառավարություն: Բիթլիսի և Վանի շրջակայքում գտնվող ապստամբների խրամատներում հայտնաբերվել են ռուսական և ֆրանսիական զինարկներ: .

9/ Միայն Դիարբեքլի քաղաքի եկեղեցիներում և դպրոցներում ապրիլի 12/25-ին կատարված խուզարկության ընթացքում հայտնաբերվել են վաքսուն դինամիտային ռումբ, դինամիտի տուփեր և հրապատիճներ, վառողի բազմաթիվ արկղեր, մեծ թվով մատուցերներ, մանիշերներ, շենդերներ, ինչպես նաև հազարավոր դասալրքներ:

10/ Արված խոստովանություններից հետևում է, որ Սվազի վիլայեթում երեսուն հազար մարդուց բաղկացած մի ուժ է համախմբվել՝ Կովկասի բանակի նահանջին սպառնալու համար: Այս խոստովանությունները միայն ռումբերի, կանխամտածված ձևով պատրաստված ժանդարմական համազգեստների, Սվազում, Սու-Շեհիրում, Մերզիֆոնում և Ամասիայում հայտնաբերված շեփորների ու բազմաթիվ զենքերի (որոնք կրելն արգելված էր) միջոցով չէ, որ հաստատվել են. բացի դրանից, ակնհայտ է, որ Սու-Շեհիրի շրջակայքում բազում անգամներ դեպի Էրզրում գնացող զինվորական գումակների վրա կատարված հարձակումները՝ ապստամբության նախերգանքն էին:

11/ Հունիսի 11/25-ին, մի խուզարկության ժամանակ Կարահիսար-ի Շաքրիի հայերն ապստամբել են և հրկիզել քաղաքը: Ուր հարյուր ապստամբներ սպանել են մեծ թվով զինվորների, բնակիչների, ժանդարմների և ոստիկանական գործակալների, որոնք փակվել էին բերդում: Ժանդարմերիայի հրամանատարը մահկանացուն կնքածների թվում է:

12/ Իզմիդում, Բաղչեջիկում և Աղա-Բազարում տեղի ունեցած խուզարկության ընթացքում ևս հայտնաբերվել են հարյուրավոր ռումբեր և զենքեր, որոնք կրելն արգելված էր, իսկ Արմաշի վանքի դպրոցում՝ պայթյունային առեղի հզորության փոքր ու մեծ բազմաթիվ ռումբեր:

13/ Բրուսայի վիլայեթում, բազմաթիվ վայրերում ևս հայտնաբերվել են ռումբեր ու զենքեր, և զինված հրոսակախմբերը սկսել են խախտել կարգ ու կանոնը:

14/ Մարաշում, հինգ հարյուր անձից բաղկացած հրոսակախմբը, Ֆինդիջիկ գյուղում փորել է խրամատներ, ոլիմայրել իր դեմ ուղարկված զինված ուժին և սպանել դրա ամուսններից շատերին:

15/ Նույն ժամանակաշրջանում մեծաքանակ հայկական հրոսակախմբեր գրոհել են Անգորայի վիլայեթի Բողազլիան քաղաքում գտնվող բնակչության և զինվորների վրա:

16/ Համանման զինված ապստամբություններ տեղի են ունեցել նաև Ուրֆայում:

Որդեգրված միջոցներ. Բանի որ այս իրադարձություններն ամբողջությամբ ի չիք էին դարձնում ռուսական սահմանի շրջանում գտնվող մեր զորքերի անվտանգությունը և սպառնում պաշտպանության միջոցներից գուրկ մատակարարման մեր գումակներին և քանի որ ապստամբական շարժման ծավալումը կարող էր դառնալ այնքան հզոր, որ մեր

բանակին պարտության մատնելը, հարկադրված են եղել պատերազմական գոտիներից, բանակատեղիներից և երկարողիներից հեռացնել բոլոր հայերին, որպեսզի մեր գոյքերը երկու կրակի միջև հայտնվելու վտանգին չենթարկվեն:

Այդ տեղահանության ընթացքում տեղ գտած որոշ չարաշահումներին վերաբերող լուրերն ստանալուն պես, ուղարկվել են հետաքննիչ հանձնաժողովներ և քվեարկությամբ մի հատուկ օրենք է ընդունվել՝ այլ վայրեր տեղափոխված մարդկանց ունեցվածքը և հողերը յուրաքանչյուր չարաշահումից պաշտպանելու համար: Համաձայն այդ օրենքի, ձևավորված հանձնաժողովները կազմել են լքված ունեցվածքների ցուցակը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 855, ff. 208-212).

272

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգին

Հ. թիվ 1515:

Փարիզ, 30-ը սեպտեմբերի 1916 թ., ժ. 20.30-ին:

Գեներալ Լազյուիշի զեկուցագիրն իմ ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ ֆրանսիական շահերը Տրապիզոնում և գրավված Հայաստանում աչքաթող են արված: Քանի որ Տրապիզոնում դեռևս ամերիկյան հյուպատոս կա, քվում է, քե ոչինչ չի խանգարի, որ Ֆրանսիայի հյուպատոսությունը կրկին գործի: Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք հայցեք կայսրական կառավարության համաձայնությունը՝ այդ քաղաքում ֆրանսիական հյուպատոսության հաստատման հարցում, որը կայսրական իշխանությունների կատարյալ համաձայնությամբ, կարող է հոգալ Ֆրանսիայի նյութական շահերը ռազմակալված Հայաստանում: Այն դեպքում, եթե ռուսական կառավարությունը համաձայնվի, ես Տրապիզոն կուղարկեմ ոչ քե պ. Վիետին, որն այդ պաշտոնը զբաղեցնում էր նախքան պատերազմը, այլ պ. դը Ռետտելին, որին նկատի ունեմ իբրև նրա հաջորդի և որն այս պահին ժամանակավոր առաքելությամբ գտնվում է Ջեդդահում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 83-83 v).

273

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեղապետ դը Լա Պանուսը՝ ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Ժոֆրին

Գ. թիվ 2939: Գաղտնի:

Լոնդոն, 30-ը սեպտեմբերի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ ուղարկել սրան կից այն հայտարարությունների պատճենը, որոնցով սրը Մարկ Մայքսի առջև հանդես են եկել Ջերմանշահից և Կովկասից հենց նոր Անգլիա ժամանած երկու արսք սպաներ:

(A.M.G., 16 N 2946).

ՀԱՎԵԼՎԱԾ

Վերջերս Քերմանշահից (Կովկասով) Անգլիա ժամանած երկու արաբ սպաներից ստացված և սըր Մարկ Սայքսի կողմից քննարկված հաղորդում

Թիվ M.I. 2.b.¹:

Ուոլ Օֆիս, 25-ը սեպտեմբերի 1916 թ.:

Սույն պատմությունը երկու սպաների տեղեկությունների հանրագումարն է:

Գումարտակը թողեց Հալեայը փետրվարի 3-ին և տասներկու ժամում հասավ Ռ-աս-էլ-Այն՝ անցնելով Եփրատի վրայի լավ պահպանվող մեծ կամրջով: Ռ-աս-էլ-Այնում մտտավորապես 12000 հայեր էին համախմբված՝ մի քանի հարյուր քրդերի հսկողության ներքո, որոնց հավաքագրել էին ոչ միայն տեղական ցեղերից, այլև Մոսուլի, Բիթլիսի և Դիարբեքիի քաղաքային թափփուկներից: Այս քրդերին անվանում էին ժանդարմներ, բայց իրականում դրանք բացահայտ ջարդարարներ էին: Նրանցից կազմված կրոսակախմբերին հրապարակայնորեն կարգադրվել էր երկու սեռից բաղկացած հայերի խմբերը տեղափոխել տարբեր ուղղություններով, բայց նրանք գաղտնի հրահանգներ ունեին տղամարդկանց, երեխաներին ու ծեր կանանց ոչնչացնելու, իսկ երիտասարդ կանանց Ուրֆայի կարթավայրի գյուղացիների միջև բաժանելու և այդ ձևով նրանցից ձերբազատվելու մասին: Այսպիսի արշավներից քրդերը միշտ վերադառնում էին երեքից չորս օր բացակայելուց հետո: Այս ժանդարմներից մեկը խոստովանել է, որ անձամբ ինքը, այն տարբեր ճանապարհորդությունների ընթացքում, որոնց մասնակցել է՝ սպանել է 100 հայ տղամարդ:

Հայերը մահանում էին տիֆից և դիզենտերիայից, իսկ ճանապարհները սփռված էին նրանց նեխող մարմիններով: Անմարդաբնակ անապատի ջրամբարները և խորշերը ևս լի էին դիակներով: Երկու սպաները համաձայն են, որ սա ամենասարսափելի երևույթն էր և այն երևակայելն անգամ հնարավոր չէր լինի, եթե աչքով տեսած չլինեին: Գումարտակի թուրք սպաները սարսափել էին այն տեսարաններից, որոնց ականատեսն էին դարձել, իսկ գումարտակի քահանան, հանդիպելով մեծ թվով դիակների, վայր էր իջել իր ձիուց և հրապարակայնորեն աղոթել, որ մահմեդականները զերծ մնան այս հանցագործությունների աստվածային պատժից և որպես քավություն, անձամբ ինքն աշխատանքի է անցել՝ դիակների համար գերեզմաններ փորելով: Ռ-աս-էլ-Այնից դեպի Էր-Ռ-ադի քայելիս, գումարտակի զինվորները հաճախ ձեռքերն էին բարձրացնում ճանապարհի եզրին պատկած բազմաթիվ մահացած կանանց մեղկ, ուռած մարմինների տեսարանի ականատեսը չլստնալու համար: Շարքային զինվորների շրջանում տարածված էին երկու ասացվածք. «Ռ-աս-էլ-Այնը սպանողանոց է» և «Ռ-աս-էլ-Այնից հետո յուրաքանչյուր տղամարդ կնուջ մարմնի մասին կարող է մտածել միայն իբրև սարսափագրու, բայց ոչ իբրև գրավիչ երևույթի մասին»: Ռ-աս-էլ-Այնն օգտագործվել է իբրև հայերի համակենտրոնացման վայր և 12000-ն այն թիվն է, որը սովորաբար մեզ հայտնի էր. ներս եկող խմբերի և դուրս ելնող խմբերի (այն է՝ նրանց, ովքեր գնում էին ուղղակիորեն մեռնելու) ընդհանուր թիվը ճշգրտորեն սահմանելն անհնար է:

(A.M.G., 16 N 2946).

¹ Մենք արտասպում ենք միայն մի հատված, որը վերաբերում է հայերին:

**Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատարը¹
I Ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար փոխծովակալին²**

«Պոնտյունյի» տախտակամածից, 30-ը սեպտեմբերի 1916 թ.:
(Ստացել է I Ռազմածովային բանակի
Շ-ը հոկտեմբերի 8-ին):

Եգիպտոսի հայկական կազմակերպություններին վերաբերող զեկուցագիր:
(A.C.M., SS A 165).

ՀԱՎԵԼՎԱԾ

Եգիպտոսի հայկական կազմակերպություններին վերաբերող զեկուցագիր

Քաղաքական կազմակերպություններ

Եգիպտոսում գործող հայկական քաղաքական կուսակցությունները թվով երեքն են. ըստ վաղեմության կարգի՝ դրանք են.

1/ Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցություն.

Այս կուսակցությունը բոլոր հայկական կուսակցություններից ամենահիններին է: Այն հիմնադրել է 1886 թ¹. Նազարբեկ անունով մի ռուսահայ:

Հնչակյաններն իբրև առաջնահերթ նպատակ հետապնդել են Հայաստանի ազատագրումը բուրժական լծից և իբրև ավելի հեռավոր նպատակ՝ սոցիալիզմի հաղթանակը բուրժուազիայի նկատմամբ⁴:

Թուրքիայում սահմանադրական վարչակարգի վերահաստատումից հետո, նրանք «հավանաբար» հրաժարվել են Հայաստանի ազատագրումից և Թուրքիայում նրանց հանդուրժել են իբրև օրինականորեն հիմնադրված քաղաքական կուսակցության, որի նպատակը սոցիալիզմի հաղթանակն է կամ աշխատավոր դասակարգերի սոցիալական զարթոնքը:

1894-1895 թթ. ի վեր, հնչակյանները հաստատվել են Եգիպտոսում: Նրանք ունեն մի կոմիտե Կահիրեում, մեկ ուրիշը՝ Ալեքսանդրիայում և մի քանի համախոհներ մահանգներում:

Կուսակցության ամենահեղինակավոր ղեկավարներից մեկը՝ պ. Սապահյոյունը, մի քանի տարուց ի վեր գտնվում է Եգիպտոսում և քնակություն է հաստատել Հելիոպոլիսում: Հնչակյանների ընդհանուր թիվը Եգիպտոսում չի գերազանցում 50-ը և նրանք որևէ կարևոր դեր չեն կատարում: Կուսակցության կառուցվածքը ենթարկվում է կենտրոնացված համակարգի: Նրա հասարակական մտավայրը հաջորդաբար գտնվել է Աթենքում, Լոնդոնում և Փարիզում:

1 Դերծովակալ դը Սալտզը:

2 Փոխծովակալ Դարախնգ դյու Ֆուրնեն:

3 Սխալ է. «Հնչակ» կուսակցությունը հիմնադրվել է ժնևում 1887 թ.:

4 Հնչակյան կուսակցության ծրագրի մասին տես «Ծրագիր Հնչակեան կուսակցութեան», Լոնդոն, 1897, 2-րդ հրատարակություն:

Եվրոպական պատերազմից և Թուրքիայի բեմ ելնելուց հետո, հնչակյան ղեկավարների մեծ մասը Կոստանդնուպոլսում մահապատժի է ենթարկվել¹: Կուսակցությունը մեկ օրգան ունի Ամերիկայում, մեկ ուրիշը՝ Փարիզում և մեկ այլը՝ Բուխարեստում:

2/ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն, «Դաշնակցություն» կամ «Դրոշակ».

Հնչակյան կուսակցության մի բանի այլադավաններ 1888 թ². հիմնադեցին Դաշնակցություն կամ Դրոշակյան կուսակցությունը, ըստ իրենց օրգան «Դրոշակի» անվան, որը հրատարակվում է Ժնևում:

Թուրքիայում սահմանադրական վարչակարգի վերահաստատումից առաջ և հետո, նրանք հետապնդել են միևնույն նպատակը, ինչ հնչակյանները, այն տարբերությամբ, որ իրենց կառուցվածքը տեսականորեն ենթարկվել է ապակենտրոնացված համակարգի, այն դեպքում. երբ հնչակյանները որսեցրել են կենտրոնացված համակարգը: Դործմականում, այդուհանդերձ, նրանք՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը կենտրոնացվածության համոզված կողմնակիցներ են: Երկուսի միջև կա մեկ այլ տարբերություն ևս՝ դրոշակականները հեղափոխական սոցիալիստներ են, այնժամ, երբ հնչակյանները՝ դեմոկրատական սոցիալիստներ:

Բացի «Դրոշակից», նրանք ունեն մեկ օրգան Ամերիկայում, բազմաթիվ ուրիշներ և իրենց հիմնական ուժը՝ Ռուսաստանում: Կահիրեում նրանք հրատարակում են «Հուսարեքը»:

1897 թ. ի վեր նրանք ունեն մի ենթակոմիտե Կահիրեում, որը վերջերս մարգային կոմիտեի կարգավիճակ է ստացել և մի ենթակոմիտե՝ Ալեքսանդրիայում:

Նրանք բավական մեծ բովոլ համախոհներ ունեն զավառական քաղաքներում:

Դրոշակ կուսակցությունն ունի երկու բյուրո. Արևելյան բյուրոն, որը տեղակայված է Թիֆլիսում, Արևմտյան բյուրոն, որը տեղակայված է Ժնևում: Դրոշակյանների համախոհների ընդհանուր թիվը Եգիպտոսում հասնում է մոտավորապես 150-ի: Նրանք բավական ազդեցիկ են Կահիրեի և Ալեքսանդրիայի համայնքներում:

3/ Դեմոկրատական սահմանադրական կուսակցություն կամ ռամկավարներ.

Հիմնադրվել է Թուրքիայում սահմանադրական վարչակարգի վերահաստատումից հետո, սոցիալիստական տեսությունների, որոնց համարում է չարաբաստիկ. տարածմանը դիմակայելու և այդ քարոզչության հետևանքով ի հայտ եկած անարխիստական հոսանքը կանգնեցնելու նպատակով: Այս կուսակցությունը, այսպիսով, միաժամանակ հակահնչակյան է և հակադրոշակյան: Նա ազգային հաստատությունների և ավանդույթների պահպանման բացահայտ կողմնակիցն է:

Նախքան պատերազմը նրա հասարակական նստավայրը Կոստանդնուպոլսում էր, բայց ներկայումս կուսակցությունը ղեկավարում են Եգիպտոսում գտնվող պարագլուխները:

Նա պաշտոնական օրգաններ ունի Ամերիկայում և Ռուսաստանում: Նրա պաշտոնական օրգանը Եգիպտոսում՝ «Արևն» է, որը հրատարակվում է Ալեքսանդրիայում:

Կուսակցությունը Եգիպտոսում գործել է իր սկզբնավորումից, այն է՝ 1908 թ. ի վեր: Նա մի ակումբ ունի Կահիրեում, մի ակումբ և մի ժամանակավոր կենտրոնական կոմիտե Ալեքսանդրիայում ու համախոհներ մահանգներում: Նրա մշտական համախոհների թիվը չի գերազանցում հարյուր հիսունը, բայց կուսակցությունն իբրև յուրայինի է դիտում բոլոր նրանց, ովքեր հետևում են նույն զաղավարներին և այդ հիման վրա իրեն անվանում է «Ազգային կուսակցություն»: Ի հակադրություն այդ, այն ղեկավարվում է և աջակցվում հայ

1 Հնչակյան կուսակցության անդամագրված հայերին մահապատժի ենթարկելու մասին տես վերը թիվ 50 փաստաթուղթը:

2 Դաշնակցություն կուսակցությունը հիմնադրվել է Թիֆլիսում 1890 թ.:

լուսավորյալների և մտավորականների գերակշռող մասի կողմից, որոնք հայկական ազգային շահը վեր են դասում կուսակցական պայքարից: Ռամկավար կուսակցությունն աշխատում է Բարեգործական հայկական ընդհանուր միության և Փարիզի հայկական պատվիրակության հետ համագործակցված: Մյուս կողմից, մա փորձում է ներդաշնակորեն քայլել մյուս կուսակցությունների հետ այն խաղը ճգնաժամի ընթացքում, որը համակել է հայ ժողովրդին:

Հայկական քաղաքական կուսակցությունների այս քվարկումից զատ, որոնց կարևորությունը պետք չէ չափազանցնել, հարկ է հիշատակել Հայկական բարեգործական համընդհանուր միությունը և Փարիզի պատվիրակությունը, որոնց մասին վերը խոսք եղավ և որոնք ներկայումս հայկական գործերում հիմնարար դեր են կատարում:

1/ Հայկական բարեգործական համընդհանուր միություն [sic].

Բարեգործական այս կազմակերպությունը հիմնադրվել է 1906 թ. Կահիրեում, որը նրա կենտրոնական նստավայրն է: Նա կոմիտեներ և ենթակոմիտեներ ունի բոլոր այն երկրներում, որտեղ հայեր կան: Նրա նպատակն է նյութական և բարոյական օգնություն ցուցաբերել բոլոր հայերին, որոնք հավատարիմ են մնացել ազգային հողին:

Նրա կենտրոնական վարչության խորհուրդը կազմված է հետևյալ հայ անձանցից.

Յմահ նախագահ՝ Ն {որին} գեղազանցություն} Պողոս Նուբար փաշա:

Փոխնախագահներ՝ Ն {որին} գեղազանցություն} Յաղուբ Ալթին փաշա, Աղաթոն բեյ:

Գանձապահ՝ պ. Անդրանիկյան: Բարտուղար՝ Վ. Մալեգյան:

Խորհրդատուներ՝ պ. Առաքել բեյ Նուբար, Շեքիդյան բեյ¹, Փիլիպոսյան, Ն {որին} գեղազանցություն} Քելեկյան խան (Փարիզում), պ. Լազարոսյան:

Բարեգործական միության ադրեցությունը շատ մեծ է և նրա միջոցներն աստիճանաբար ընդլայնվում են: Նա մի օրգան-բյուլետեն ունի, որը լույս է ընծայվում Կահիրեում («Միություն»): Նրա անդամների քիվը հասնում է հազարների՝ անկախ կրոնական կամ կուսակցական տարբերությունից: Այդ Բարեգործական համընդհանուր միությունն է, որն իր հոգածության ներքո է վերցրել Պոլոտ-Սալդի հայկական ճամբարի 1200 երեխաների կրթությունը և ուսուցումը:

2/ Փարիզի հայկական պատվիրակություն.

Հայկական ազգային բոլոր գործերի տնօրինությունը ներկայումս պաշտոնապես վստահված է Փարիզի հայկական պատվիրակությանը, որը նշանակվել է գերագույն հայոց պատրիարքի կողմից: Պատվիրակը՝ հայ ժողովրդի միակ պաշտոնական մունետիկը, Ն {որին} գեղազանցություն} Պողոս Նուբար փաշան է, որն այս պահին այդ առիթով բնակվում է Փարիզում և որպես այդպիսին ճանաչվել է բոլոր պետական գրասենյակների կողմից: Նրանից բացի և ոչ մեկն իրավունք չունի խոսել հայ ժողովրդի անունից: Եզրապտոսում Պողոս Նուբար փաշայի կողմից լիազորված են Կահիրեում դատապաշտայան, Բարեգործական միության գլխավոր քարտուղար պ. Մալեգյանը և պ. Մկրտչյանը՝ Ալեքսանդրիայում (պ. Մալեգյանի բացակայության պարագայում):

Հայկական կրոնական կազմակերպություններին վերաբերող համառոտ տեղեկություններ.

Գերագույն հայոց պատրիարքը (կաթողիկոսը) ապրում է Էջմիածնում (Ռուսահայաստան), Արարատի ստորոտի մոտ:

Այնուհետև՝ հարկ է նկատի ունենալ. Կոստանդնուպոլսի, Երուսաղեմի և Սսի (Կիլիկիայում) պատրիարքներին. վերջինս մեծ կարևորություն է ունեցել միջնադարում կիլիկյան հայկական քաղաքային հիմնադրման ժամանակ: Եզրապտոսում կա մի եպիսկոպոս:

¹ Sic. Իմար՝ Շեքիդյան բեյ:

պոս (Եզիպտոսի հայերի գահերեց նախաքոռ արքեպիսկոպոսը) և տեղական իշխանությունների հետ ունեցած հարաբերություններում նրան տրվող պատրիարքի տիտղոսը կրում է «ձևական բնույթ»: Նա ենթարկվում է Էջմիածնի և Կոստանդնուպոլսի պատրիարքություններին, ունենալով որոշակի առանձնահատուկ արտոնություններ եզիպտական իշխանությունների նկատմամբ: Նա բնակվում է Կահիրեում, ուր հայկական 2 եկեղեցի կա: Ալեքսանդրիայում ևս կան մեկ եպիսկոպոսական պալատ և մեկ եկեղեցի: Եզիպտոսի ուղղափառ կամ գրիգորյան հայ եպիսկոպոսը Ն {որին սրբազնություն } ն թորգոմն է: Նա հս-ճախ էր այցելում Պորտ-Սախլի գաղթականներին և նրանց համար ճամբարում կառուցել է տվել մի մատուռ:

Հայկական (գրիգորյան կամ ուղղափառ) համայնքից բացի գոյություն ունի հայկական կաթոլիկ համայնք, որի եպիսկոպոսական նստավայրը Կահիրեում է: Հայ կաթոլիկ եպիսկոպոսը՝ Ն {որին սրբազնություն } ն Ժան Կուզյանն է:

Վերջապես կա հայկական բողոքական համայնք, որն ունի մի քանի քահանա և կողմ-նակիցներ Կահիրեում ու Ալեքսանդրիայում:

Իբրև Եզիպտոսում հայկական հատուկ կազմակերպություն, հարկ է հիշատակել նաև Եզիպտոսի հայկական Կարմիր խաչի տիկնանց ընկերությունը (Կահիրեի և Ալեքսանդրիայի միությունները), որը հիմնադրվելով պատերազմի սկզբից ի վեր, արդեն կարևոր դեր է կատարել Կովկասի սանիտարական կազմակերպությունների համար և որը, սկզբից ևեթ, ղեկավարում է բազմաթիվ բժիշկներ, սանիտարներ և սանիտարուհիներ ունեցող Պորտ-Սախլի ճամբարի հիվանդանոցը: Այդ միության անդամներին բազում առիթներով ընդունել են ծովակալներ Դ-արտինգ դյու Ֆորմեն և Դ-արրին: Կահիրեում միության նախագահը տ {իկի} ն Աննա Նեգիբ փաշա Ղալին՝ է, Ալեքսանդրիայի միության նախագահը՝ տ {իկի} ն Միշել Ռ-այիզիան բեյը:

Կոմիսար-թարգմանիչ
(Ստորագրված է.) Թեբեյան

Տեսած.
Դերծովակալ
Սիրիայի դիվիզիայի կրամանատար
(Ստորագրված է.) Սալտզ:

(A.C.M., SS A 165).

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանը՝ Խորհրդի նախագահ, Արուաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 742:

Վաշինգտոն, 1-ը հոկտեմբերի 1916 թ.*:

1 S {իկի} ն Աննա Նագյուիբ փաշա Ղալին:

* Նախարարի ձեռագիր ծանուցագրությունը. «Պ. Վիետ. խնդրել մամուլին արտասպառել այս կոչը, որը չեզոքների և Ս[իացյալ] Ն[ահանգների] նախագահի կողմից այն վարչագրությունների հավաստումն է, որոնց՝ գերմանացիների բողոքությունները տուրք են տվել նրանց դաշնակից երիտարքերը (քննարկված համար փշոտ բեմա է)»:

(Մտացել են Կաթ. հոկտեմբերի 21-ին,
Քաղ. վարչ. հոկտեմբերի 23-ին):

Այսօրվա թիվ 669 իմ հեռագրին շարունակություն տալով, ես պատիվ ունեմ Ձերոյ գերազանցությանը հղել սրան կից՝ Սիրիացիների և հայերի օգնության ամերիկյան կոմիտեի անդամների ցուցակը¹:

Այս կոմիտեն, որն աշխատում է ամերիկյան Կարմիր խաչի և որոշ թվով բողոքական եկեղեցիներից կախում ունեցող երրորդ խմբավորման հետ կատարյալ համաձայնությամբ, օգնության իր գործի համար անհրաժեշտ միջոցներ հայրաքերու հարցում հույսը գլխավորապես կապում է այն նվիրատվությունների հետ, որոնք, համաձայն Կոնգրեսի որոշման և նախագահ Վիլսոնի հայտարարության, այս ամսի 22-ին կկատարվեն Միացյալ բոլոր նահանգներում ի նպաստ սիրիացիների և հայերի: Այս առթիվ ես հիմնվում եմ վերջին սեպտեմբերի 13-ի իմ հեռագրի վրա:

Ձերոյ գերազանցությունը կգտնի սրան կից այն շրջաբերականի օրինակը², որը վերսիշյալ խմբավորումը հենց նոր հղեց այս առթիվ «Միացյալ Նահանգների բոլոր քրիստոնյաներին»:

Հ. Գ. - Համաձայն այսօր առավոտյան տպագրված մի կարծիքի, նվիրատվությունները կկատարվեն 120000 եկեղեցիներում: Ցանկություն կա հավաքել 5 միլիոն դոլլար՝ հայերի և սիրիացիների համար միաժամանակ: Բայց ինչ վերաբերում է առաջիններին, Դուռը դեռևս ոչ մի բանի չի համաձայնվել, ուստի, եթե որևէ միջամտություն տեղի չունենա, հնարավոր կլինի օգնել միայն թուրքական տիրապետությունից դուրս գտնվող հայ գաղթականներին:

4-ը հոկտեմբերի 1916 թ.:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 84-84 v).

276

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի³ ծանուցագիրը

Հանդիպում Պողոս Նուբար փաշայի հետ

Ծ⁴:

Փարիզ, [?-ը] հոկտեմբերի 1916 թ.⁵:

Պողոս փաշան այս առիթով եկավ ինձ տեսնելու: Նա կարծում է, որ եթե կոչ արվի հայ կամավորներին, որոնց բույատրվել է ընդգրկվել ֆրանսիական կորպուսի կազմում, հնարավոր կլինի հավաքագրել որոշակի թվով այրպիսիների Եգիպտոսում: Եթե նրանք միավորվեն Մուսա լեռան կամավորների հետ, կարելի կլինի հասնել այն բանին, որ կազմավորվի գրեթե մեկ գումարտակ (800 մարդ):

Շարունակելով հիշեցնել, որ հարկ է գոյուշ լինել զինվորագրումների հարցում, որպեսզի թուրքերին կոտորածներն արդարացնելու առիթներ չտրվեն, Պողոս փաշան այլևս խո-

1 Արտատպված չէ:

2 Արտատպված չէ:

3 Պ. Գ. ուն:

4 Նախատեսված է նախարարի համար:

5 Հ.Լ.ՊԱ.-ն մեկ րոպե է տալիս քվարթել Պողոս Նուբար փաշայի և պ. Գ. ուի հանդիպումը 1916 թ. հոկտեմբերի

չընդատող առարկումներ չի անում՝ ֆրանսիացիների կողմից հայերի ռազմական նախնական ուսուցման շուրջ: Նա ինձ հստակորեն ասաց, որ Մեծ Հայքում ռուսների գործողությունների պատճառով սթափվում է իր նախկին սխալներից (ռուսական զերիշխանության ներքո գտնվող ինքնավար, սիավորված Հայաստանի կազմավորում) և ցանկանում, որ միայն Ֆրանսիան իր հովանու ներքո վերցնի, հնարավորության սահմաններում, ամենամեծ քվով հայերի: Նա ինձ խնդրեց իրեն հավաստիացնել, որ մեր կողմից Կիլիկիան կանջատվի Սիրիայից՝ ձևավորելու համար առանձին նահանգ, որտեղ հայերը կունենան իրենց կրոնի և սովորույթների երաշխիք: Ես նրան պատասխանեցի, որ իրավասու չեմ քննարկել համանման հարցեր և որ, ի դեպ, վաղաժամ է սահմանել կասկածելի տիրույթների վարչական բաժանումը: Բայց նա զիտեր, քե ինչպիսի անշահախնդիր հոգատարությամբ է միշտ գործել Ֆրանսիան իր հոգաժողովանը վստահված ժողովուրդների նկատմամբ, և կարող էր վստահ լինել, որ նրա դրոշի ներքո հայերը կունենան խաղաղություն, բարեկեցիկ կյանք և պատիվ:

Թվում է, որ հարկ է ներկա պահին առանց տատանումների ստանձնել Մուսա լեռան հայերի հոգաժողովունը և նրանց նախապատրաստել մեր ազդեցության ռահվիրաները լինելու համար: Հայերն աշխատասեր են, վաստակյին հետամուտ, խելացի: Եթե մենք կարողանանք նրանց մեր կողմը գրավել, լավ մտածված հրահանգով և կայուն ղեկավարությամբ ձերբազատել ճորտության օրոք ձեռք բերած արատներից, նրանք Փոքր Ասիայում կստեղծեն մեր տիրապետության համար լավագույն միջավայրը: Այն քայլը, որը մենք կանենք այս պահին, հաջողությամբ կնախապատրաստի մեր ապագա գործունեությունը նրանց շրջանում:

Այսպիսով, ես առաջարկում եմ պատասխանել Ռ-ազմական նախարարությանն այս ոգով, մատնացույց անելով նրան, որ հրամանատար Ռ-ոմին պետք է իր կողմը գրավի Եգիպտոսի հայ կամավորներին, միավորելու համար Մուսա լեռան 400 հայերի և նրանց հետ, ովքեր կարող են լինել Հնդկաստանում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 159-160 v).

277

Ռ-ազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. քիվ 6436-9/11:

Փարիզ, 2-ը հոկտեմբերի 1916 թ.:
(*Մուսցել է. Քաղ. վարչ. հոկտեմբերի 3-ին*):

Իբրև օգոստոսի 10-ի քիվ 5140-9/11 և սեպտեմբերի 23-ի քիվ 6173-9/11 իմ ճնայագրերի² շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել հոկտեմբերի 4-ին Մալթայից՝ Ալեքսանդրիայի վոստային նավով գումարտակի հրամանատար Ռ-ոմինյի մեկնումի մասին, որը Եգիպտոսում և Կիպրոսում ուսումնասիրելու է գլխավորազորման հնարավորությունները և ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող՝ հայերի ու սիրիացիների կորպուսի

¹ Ստորագրել է գեներալ Դյուպորր:

² Կերն արտատպված են համապատասխանաբար քիվ 241 և 267 փաստաթղթերում:

կազմակերպման պայմանները:

Փոխզնդապետ Բրենմոնի սեպտեմբերի 10-ի քվակիր զեկուցագրից¹, որի պատճենը դուք կգտնեք սրան կից, հետևում է, որ Սիլիայի ռազմածովային դիվիզիայի հոգաժողովան շնորհիվ Պորտ-Սաիդ գաղթած հայերից միայն 208-ն են ստացել ռազմական ուսուցում (որոնցից 172-ն ունակ կլինեն բոլոր առաքելությունների համար): Մյուսներն իբրև կամավոր ցուցակագրվելու հարցում ցուցաբերել են որոշ անվճարականություն, քանի որ ռազմական վարժությունների օրերը, բնականաբար, նրանց զրկում են այն դրամական օգուտներից, որոնք կարող է ապահովել ճամբարից դուրս կատարվող աշխատանքը: Սակայն փոխզնդապետ Բրենմոնը հույս ունի, որ այս մարդկանց աշխատավարձ տալու և պատշաճ ձևով կազմակերպելու դեպքում, դյուրին ձևով կարելի կլինի նրանց թվում գտնել 350-ից 400 և հավանաբար էլ ավելի զինակոչիկ:

Մյուս կողմից, սեպտեմբերի 9-ի հեռագրով² մեր նախարարը Կահիրեում ձեզ է հայտնել իր կարծիքը. ըստ որի, եթե մենք վճռենք օգտագործել Պորտ-Սաիդի գաղթականների ճամբարի մարտունակ տղամարդկանց, ակնհայտ է, որ ֆրանսիական կառավարությունը պետք է վճարի ճամբարի պահպանման համար մեկ տարուց ի վեր անգլիացիների կողմից արված ծախսերը, այն է՝ ամսական 30000 ֆրանկ, և այսուհետև՝ իր հոգաժողովան ներքու վերջնի այնտեղ գտնվող 4000 կանանց, ծերունիներին և երեխաներին:

Թվում է, թե գեներալ Մուրրեյը հակված է, առանց դժվարության, մեզ զիջելու այն հայերին, որոնք ի վիճակի են իրականացնելու զինվորական ծառայությունը, և վերջերս, ի դեպ, հրաժարվել են իբրև ջոյի բշտիկներ ծառայության մեկնելու Սարմիկի անգլիական բանակ, բայց նա կցանկանա, ինչպես այդ մասին տեղեկացնում է լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քունտինի սեպտեմբերի 26-ի թիվ 420 հեռագիրը, որի պատճենը³ կից ներկայացվում է, ձեռքագատվել կանանցից. երեխաներից և անդամալույծներից:

Եթե մոտավորապես 200 զինված մարդկանց օգտագործումը, որոնք թվում է, թե ի վիճակի են զինվորագրվելու Պորտ-Սաիդի գաղթականներից, հիշավի հանգեցնի ֆրանսիական կառավարության պարտավորվածությանը՝ ճամբարի ողջ հայերին իր հոգաժողովան ներքու վերջնելու և մինչ այսօր նրանց պահելու համար անգլիական կառավարության կողմից իրականացված ծախսերը վճարելու հարցում, ևսպես ես նրանց ընդունումը ծառայության նկատի կունենամ միայն այն դեպքում, եթե դուք այդ առթիվ առարկություններ չունենաք:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե այս հարցի շուրջ ինձ տեղյակ պահեք ձեր կարծիքին: (A.M.A.E., Guerre 1914-1918. *Turquie*, tome 890, ff. 161-161 v).

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Ռ-ազմական նախարար, գեներալ Ռ-ոքին

Ճ. թիվ 4070:

1 Տես վերը թիվ 255 փաստաթղթի հավելվածը:

2 Վերն արտատպված է թիվ 253 փաստաթղթում:

3 Խնդրո առարկա փաստաթուղթն արտատպված չէ: Գեներալ Մուրրեյը լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քունտինի հայտնում է իր գոհունակությունը՝ հայ գաղթականների հարցը կարգավորելու համար հրամանատար Ռ-ոքինի Պորտ-Սաիդ ժամանելու առթիվ:

Փարիզ, 6-ը հոկտեմբերի 1916 թ.:
(Մտացել է Կաթինեստր հոկտեմբերի 8-ին):

Ես հետաքրքրությամբ տեղեկացա այս ամսի 2-ի քվակիր ձեր նամակին՝ և այն հավելվածներին, որոնք դրան կցված էին:

Հավաստի է քվում, որ անգլիացիները, որոնք դժկամությամբ են համաձայնվել հյուրընկալել մեր ջանքերով Եգիպտոսում կենտրոնացված Մուսա լեռան հայերին, երջանիկ կլինեն, եթե նրանցից ձերբազատվեն և քաղաքական տեսանկյունից մեզ համար շահավետ կլինեն նրանց այսպիսի ծառայություն մատուցելը՝ պայմանով, աշխուհանդերձ, որ կարողանանք հավաքագրված տղամարդկանց հետ միասին Կիպրոս տեղափոխել նաև նրանց ընտանիքները:

Այն էվոյուցիան, որը տեղի է ունենում կրթված հայերի գիտակցության մեջ, խիստ զգալի է: Մի քանի ամիս առաջ, նախքան Կովկասում ռուսական բանակի հաջողությունները, նրանք ձգտում էին ինքնավար Հայաստանի նման մի քանի կազմավորման, որը ցարի գերիշխանության ներքո կընդգրկեր Անատոլիայի այն բոլոր տարածաշրջանները, որտեղ հայեր են բնակվում՝ սկսած Արարատ սարից մինչ Ալեքսանդրետի ծոցը: Հաղորդակցությունը ռուսական բանակի հետ, որի ղեկավարները հոգ տարան նվաճված տարածքներում բազմաթիվ էքնիկական այլ տարրերին խնամելու մասին և երբեմն արհամարհեցին հայկական շահերը, հողմացրիվ արին հայկական մտքի այս ղեկավարների վստիպացած երազանքները: Նրանք այսօր հասկանում են, որ որքան մեծ քվով հայեր գտնվեն Ֆրանսիայի հովանու ներքո, նրանց հայրենակիցներն այնքան ավելի հույս կունենան արժանանալու ընդունելի ճակատագրի: Այն պահին, երբ մենք կարող ենք մեր կողմը գրավել մի ժողովրդի, որը չնայած իր թերություններին, Արևելքում, իրոք որ, միակ աշխատասեր ժողովուրդն է, ինձ քաղաքական անհեռատեսություն կրվա հովանավորության քայլից ձեռնարկի մնալը, որից մենք ապագայում օգուտ կբաղենք:

Ի դեպ, ես չեմ կասկածում, որ զինվորագրման ենթակա Մուսա լեռան 200 հայերին միավորելով այն հայ գերիների հետ, որոնք կարող են լինել Հնդկաստանում և այն հայերի հետ, որոնք հսկված են կամավորական հիմունքներով զինվորագրվելու, մենք կկարողանանք կազմավորել բավական մեծաքանակ առաջին խմբավորումը: Ես համոզված եմ, որ այսօր Պողոս փաշա Նուբարը և Եգիպտոսի նրա բարեկամները կաջակցեն այն ջանքերին, որոնք հրամանատար Ռոմիոն կարող է ներդնել Մուսա լեռան մարդկանցից գատ այլ կամավորների զինվորագրելու համար: Նպատակահարմար կլինի, ի դեպ, որ բուն Եգիպտոսում այս զինվորագրումներին հայկական կամավորական կորպուսի կազմավորման տեսք չտրվի, այլ կատարվեն անհատական զինվորագրումներ՝ Կիպրոսում ֆրանսիական կորպուս կազմավորելու համար:

Նման ձևով որոշակի կարևորություն ունեցող միջուկի ձևավորումից հետո, արտասահմանի տարբեր հայկական գաղութներում կամավորների զինվորագրում հրահրելն ավելի պարզ կլինի: Արևելքի ժողովուրդները, որոնք, իրոք որ, սովորույթ են դարձրել խիստ պարփակված էքնիկական խմբերով ապրելը և թշնամաբար են տրամադրված նույնիսկ հարևան խմբերին, հաճույքով կհարեն միայն այն խմբավորումներին, երբ համոզված լինեն, որ դրանց կազմում խառնված չեն լինի այլ տարրերի հետ: Ես կարծում եմ, այսպիսով, որ Արևելքի բնակիչներից բաղկացած կամավորական կորպուսների կազմավորման հաջողությունը կախված է տարբեր կազմավորումներում ըստ ազգությունների բաշխում կատա-

րելուց, որը հարկ է նախատեսել:

(A.M.G., 7 N 2150).

279

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
պ. Ժոզեֆ Ռեյնաշին**

Ն:

Փարիզ, 9-ը հոկտեմբերի 1916 թ.:

Ես հենց նոր փոստին հանձնեցի իմ նամակը, երբ «Ֆիզարյոյում»¹ տեսա տեղահանվածներին վերաբերող «Արևի» հողվածի քարգմանությունը: Ես ձեզ ի սրտե շնորհակալությամբ եմ հայտնում այդ գետեղման և այն ամենի համար, ինչ դուք բարություն կունենաք անելու՝ այս տանջալից հարցի լուծմանը նպաստելու մտադրությամբ: Իմ բոլոր հայրենակիցները, և, մասնավորապես, Պողոս փաշան, որն ինքն այդ առթիվ բազում քայլեր է կատարել, դրա համար ձեզ երախտապարտ կլինեն: Նա վերջերս պրոֆեսոր Հ. Ա. Գիբբոնսին մույնիսկ ուղարկել է Ամերիկա՝ տեղահանվածների գործին այնտեղ սատարելու համար (այս մասին ես ձեզ ասում եմ գաղտնաբար): Ինչպես դուք տեսնում եք, այն հեռագրի միջոցով, որի քարգմանությունը ես հենց նոր ձեզ ուղարկեցի², ամերիկյան կառավարությունը քայլեր է ձեռնարկել հայերի և սիրիացիների համար միաժամանակ, բայց հայ գաղթականներին վերաբերող նյութ խնդրանքը չի ընդունվել: Նա շարունակում է բանակցությունները: Եթե ֆրանսիական հասարակական կարծիքը և կառավարությունն այս հարցում նրան քաջալերեն և եթե բոլոր անդամակից ազգերի ներկայացուցիչները նրան գորավիզ լինեն Կոստանդնուպոլսում, ես կարծում եմ, որ տեղահանված հայերի համար, որոնց սարսափելի կացությունն ամոթաբեր է մարդկության համար, նա կստանա միևնույն թույլտվությունը:

(B.N., Mss., N.a.Fr. 13559, ff. 18-19).

280

**Պետական նախարար պ. Գենի Կոշենը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ն:

Փարիզ, 11-ը հոկտեմբերի 1916 թ.:

(*Ստացել են* Կաբ. հոկտեմբերի 14-ին,

Քաղ. վարչ. հոկտեմբերի 15-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ փոխանցել սրան կից մի նամակ³, որի ներքո ստորագրել են

1 1916 թ. հոկտեմբերի 9-ի. թիվ 283:

2 Չի հայտնաբերվել:

3 Այդ խնդրագրի մասին տե՛ս նաև վերը թիվ 265 փաստաթուղթը:

Պորտ-Սախլում Մուսա սարի գաղթականների ճամբարի հայ երիտասարդության մի քանի ներկայացուցիչներ՝ ձեզ բողոքելով դրան այնպիսի շարունակություն տալու հոգսը, ինչպիսին դրա բնույթը, ըստ ձեզ, կարող է բույրատրել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 91).

ՀԱՎԵԼՎԱԾ

Պֆարոնայք Մարտիրոս Բոյաջյանը, Չաբրա Ղազանջյանը, Սերոբ Քաբաղյանը, Սարգիս Անտոնյանը՝ պետական նախարար պ. Դեմի Կոչեհին

Ն: Թարգմանություն¹:

Ավաս:

1915 թ. սեպտեմբերի 12-ին ֆրանսիական էսկադրայի միջոցով փրկվելով բուրքերի ճիւղաններից, գտնվելով Ֆրանսիայի հանդեպ տաժվող երախտագիտության մեր անասան զգացմունքների ազդեցության ներքո և քաջատեղյակ այն շահագրգռվածությամբ, որը դուք բոլոր ժամանակներում տաժել եք մեր դժբախտ հայրենիքի գործի հանդեպ, մենք պատրաստվում ենք սույնով անկողմնակալ ձևով ձեզ ներկայացնել այն դժվարին կացությունը, որում ներկայումս գտնվում ենք:

Մեր փրկության օրվանից (այն ժամանակ Պորտ-Սախլուի էսկադրան ղեկավարում էր ծովակալ Դարտինգ դյու Ֆուրնեն), մենք մեզ դիտում էինք իբրև Ֆրանսիայի հովանու ներքո գտնվողների: Ծովակալ Դարտինգից հետո ծովակալ Դարբինոն մեզ տվել է միևնույն հավաստիացումները և համակրանքի այնչափ վկայություններ, որ մենք երբևէ չենք կարողանա մոռանալ նրա հայրական հողատարությունը մեր նկատմամբ: Դուք պետք է իրագրել լինեք, որ պսևը հասնելուն պես, մեզնից շատերը՝ «Ժորեզյուիլերիի» սպաների աշախուրջ ղեկավարությամբ, ի կատարյալ գոհունակություն նրանց ղեկավարների, ձեռնամուխ եղանակով ռազմական ուսուցման: Այդ ուսուցումը, սակայն, հանկարծ ընդհատվեց, որի պատճառներին մեզ տեղյակ չարահեցիմ, և մենք հայտնվեցինք, այս մասին ևս չգիտենք թե ինչու, անհանդուրժելի փոխհարաբերության մեջ այստեղ գտնվող անգլիական իշխանությունների հետ, որոնք ցանկացան մեզ օգտագործել մեր հույսերին և մեր՝ նախապես ստացված հավաստիացումներին ամենևին չառնչվող հատուկ առաքելությունների համար: Անգլիական իշխանությունների այս ծրագրերը ձախողվեցին, ի դեպ, ինչպես մեզ թվում է, հայկական պատրիարքության միջամտության շնորհիվ, որն իրագրել դարձրեց, թե նման բնույթի գործողությունները կարող են թուրքիայում բնակվող հայերի հանդեպ բռնությունների տեղիք տալ: Այդժամ, Պորտ-Սախլում մեզ օգտագործեցին իբրև բանակային բանվորների, բայց անգլիական իշխանություններն այժմ կրկին որոնեցինք են իրենց նախկին ծրագրերը: Նրանք ցանկանում են առանց որոշակի նպատակի մեզ Սալոնիկ ուղարկել և հարկադրել ստորագրելու զինվորական պայմանագիր, որը մեզ վերջնականապես կվանի Ֆրանսիայից և որի թարգմանությունն իբրև փաստաթուղթ՝ մենք ձեզ ենք հանձնում սրան կից²:

Մենք գիտենք, թե ծովակալ դը Սալիստը և հրամանատար Բենուա դ'Ազին ինչպիսի

1 Արտաքին գործերի նախարարության արխիվում կա այս նամակի բուրքերեն, բայց հայատառ բնագիրը:

2 Խոսքը վերաբերում է այն փաստաթղթին, որն արտատպված է վերը. տե՛ս թիվ 256:

զգացմունքներն են տաժում մեր հանդես, բայց մենք ցավում ենք, տեսնելով, որ չնայած այդ զգացմունքներին, նրանք չեն կարողանում խիստ բացահայտ ձևով հանդես գալ հանուն մեզ՝ այս իրադրությունն ի տես, որը հակասում է մեզ տրված այն հավաստիացումներին և ամենաբանկ հույսերին, որոնք ձեզ հայտնի են: Մենք ցանկանում ենք, որ ռազմական ասպարեզում մեր ուսուցումը շարունակվի Ֆրանսիայի կողմից և այնպիսի ձևով, որ այն օրը, երբ նա մեզ կոչով դիմի՝ պատրաստ լինենք ողբեկցելու նրա զինվորներին և զտնվելով նրանց կողքին՝ ի վիճակի լինենք վերանվաճելու մեր գյուղերն ու հայրենիքը Կիլիկիայում, որը հարկադրված եղանք լքել հիսուն օր տևած կատաղի ոլորտությունից հետո:

Ժամանակը շտապեցնում է և, երբ այս նամակը ձեզ հասնի, հավանաբար, մեր մեծ մասը, բանի որ հրաժարվել է ստորագրել Սալոնիկի պայմանագիրը, կուղարկվի Եգիպտոսի ներքին նահանգները՝ այնտեղ ճանապարհներ կառուցելու համար: Այսպիսին է նվազագույն սպաննալիքը, որը մեզ է ուղղել Պորտ-Սալոնի բազայի հրամանատար անգլիացի գեղապետը¹:

Այսպիսով, մենք ձեզ աղերսում ենք, Գերագանցություն, միջամտել, որքան հնարավոր է արագ, մեկընդմիջտ կարգավորելու համար մեր դժբախտ ճակատագիրը: Մենք չենք ցանկանում անհամաձայնության մեջ զտնվել, որովհետև գիտենք, թե որքան ենք պարտական նաև անգլիացի մեծ ժողովրդին, բայց բանի որ փրկվել ենք Ֆրանսիայի կողմից, ի խորոց սրտի կապված ենք նրա հետ և շարունակելով վստահություն տաժել նրա ավանդական հովանավորության նկատմամբ, լինելով քրիստոնյա հայրենասերներ և հայեր, մենք խնդրում ենք հետամուտ լինելով այն հավաստիացումներին, որոնք մենք արդեն ստացել էինք, իրազործել մեր հույսերը նրա հովանու ներքո և նրա աջակցությամբ:

Պորտ-Սալոնում Մուսա սարի գաղթականների
ճամբարի հայ երիտասարդության անունից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 94-96).

281

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Վարի սենատոր պ. Լուի Մարտենին

Ն:

Փարիզ, 14-ը հոկտեմբերի 1916 թ.:

Այնպես, ինչպես այդ մասին դուք հայտարարում եք ձեր նամակում², որը բարեհաճել եք ինձ հղել հայերի վիճակի առիթով, Ֆրանսիան, մոռանալով իր սեփական փորձությունները, բաժանել է քաղաքակիրթ ժողովուրդների հուզմունքային վիշտը՝ հայերի նկատմամբ կիրառված սարսափազդու դաժանությունների կապակցությամբ: Նա մի պահ շրջեց հայացքն իր տարածքում քաղաքացիական բնակչության նկատմամբ իրագործված հանցագործություններից՝ կարեկցանքի տուրք մատուցելու համար իրավունքի և արդարության այլ նահատակներին: Հանրապետության կառավարությունը մեծ ցանկություն ունի հանդիսավոր հանգամանքներում խարսզանել երիտթուրքերի հանցանքները և մարդկային խղճի դատաստանին հանձնել մի ողջ ժողովրդի ոչնչացման նրանց հրեշավոր ծրագիրը,

¹ Գնդապետ Էլզուրը:

² Վերն արտաստված է թիվ 257 փաստաթղթի հավելվածում:

որը, համաձայն նրանց կարծիքի, մեղավոր էր, քանզի սեր էր տաճել առաջադիմության և քաղաքակրթության հանդեպ: Չեզոք տերություններում գտնվող Ֆրանսիայի ներկայացուցիչների տրամադրության ներքո են դրվել բոլոր փաստաթղթերը, որոնք պետք է նրանց հնարավորություն ընձեռեն իրենց շրջապատին իրագրել դարձնելու տեղի ունեցած իրադարձություններին: Համոռ մարդկության պատվի, մենք պետք է պահպանենք հույսը, որ այն վրդովեցուցիչ բողոքները, որոնք այս տերությունների որոշ մասն արդեն լսելի է դարձրել Կոստանդնուպոլսում, կնայաստեն հայ ժողովրդի ձեռքբաղած մեր նոր հանցավորձեռից:

Առաջին անգամն է, որ մեր երկիրն անգոր է գտնվել Թուրքիայում իր քաղաքակրթական առաքելությանը հետամուտ լինելու և այնտեղ նրա կառավարիչների բարբարոսությանը դիմակայելու հարցում: Այդուհանդերձ, նա և ոչ մի առիթ բաց չի բողել հայ ժողովրդի նկատմամբ կարեկցանքի և խորը համակրանքի իր վկայությունը ցուցաբերելու համար: Նրա էսկադրաները կարողացել են Սիրիայի ափերի մոտ մահվան ճիւղաններից դուրս կորզել ավելի քան 5000 փախստականների, որոնց ողնկցել են Եգիպտոս, որտեղ նրանք արժանացել են այնպիսի ընդունելության, որը կարող է մեղմացնել նրանց դժբախտ ճակատագրի դաժանությունը: Հանրապետության կառավարությունն արդեն հոգ է տարել Բարձր Դռանը պաշտոնապես հաղորդելու, որ իրագործված հանցանքների համար դաշնակից տերություններն անհատապես սխառասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրանց այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն կոտորածներում: Երբ հնչի օրինական հատուցումների ժամը, նա մոռացության չի տա հայ ժողովրդի վշտալից փորձությունները և իր դաշնակիցների համաձայնությամբ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի հանուն այն բանի, որ նրա համար ելաշխավորի առաջադիմություն ապահովող խաղաղ կյանք:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 97-97 v).

282

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. քիվ 411:

Կահիրե, 15-ը հոկտեմբերի 1916 թ., ժ. 19.10-ին:
(*Մտացվել է ժ. 20.05-ին*):

Համաձայն հրամանատար Ռոմիոյի հրահանգների և ձեր քիվ 356 հեռագրի¹, քվում է, թե ֆրանսիական և անգլիական կառավարությունները պայմանավորվածություն ունեն, որ հայերի ուսուցման ճամբարը կարող է տեղակայվել Կիպրոսում:

Մակայն Գերագույն կոմիսարն այդ մասին չգիտի, և գեներալ Քլայթոնը հրամանատարին տեղեկացրել է գեներալ Մուրբեյի նամակին, որն առանց հիմնավորելու իր կարծիքը, հայտարարում է, թե տեղակայումը Կիպրոսում իրեն ցանկալի չի քվում: Այդ նամակը գրվել է սեպտեմբերի 21-ին և բրիտանական արտաքինադի միջոցով փոխանցվել Լոնդոն 29-ին:

Սրբ Հենրի Մակ Մա[իո]նը, որը միշտ մեծ ցանկություն է ունեցել ձեռքբաղատավելու մարտունակ հայերից և հակված է եղել Պորտ-Սաիդում պահելու կանանց, ձերունիներին

¹ Արտատպված չէ:

և երեխաներին, մեզ՝ հրամանատարին և ինձ, ի դեպ, ասաց, որ առարկություններ չունի Կիպրոսի (համար), բայց որ այդ կղզուն վերաբերող վճիռը պետք է կախված լինի Գաղութների նախարարից՝ և գեներալ Մուրբեյից:

Հրամանատար Ռոմիոն շուտով կմեկնի Պորտ-Սալո, որտեղ կտեսնի ծովակալ Սալիտզին և այնուհետև՝ Իսմայիլյայում կհանդիպի գեներալ Մուրբեյի հետ, (որի) տեսակետին այնժամ՝ ուղղակիորեն կձանոթանա: Բայց ինձ, հրամանատարի համաձայնությամբ, անհրաժեշտ քվաց այժմվանից իսկ ձեզ տեղյակ պահել:

Խնդրվում է հաղորդել Ռազմական նախարարությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 167).

283

Ի Ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Գարսիմը դյու Ֆուրնեն՝ Ռազմածովային նախարար, դերծովակալ Լակազին

Ճ. թիվ 135: Գաղտնի:

«Պրովանսի» տախտակամածից, 15-ը հոկտեմբերի 1916 թ.:
(*Ստացել են* Կաբլինետը և Գ-լխավոր} 2 {տաբլի}
4-րդ ենթաբաժինը հոկտեմբերի 25-ին):

Ես պատիվ ունեմ հավաստել 1916 թ. սեպտեմբերի 28-ի ձեր ճեպագրի² ստացումը (Գ-լխավոր} 2 {տաբլ}, 4-րդ ենթաբաժին), նվիրված հրամանատար Ռոմիոյի ուսումնասիրություն իրականացնող առաքելությանը, որը հետապնդում է Կիպրոսում հայ գաղթականների կորպուսն ընդունելու համար նախատեսված ճամբար կազմակերպելու նպատակ, ինչպես նաև Ռազմական նախարարի նամակի պատճենի և հեռագրի ստացումը, որոնք վերաբերում են այս ծրագրի իրականացման շուրջ ձեռնարկվելիք միջոցներին:

Ես կարգադրել եմ դերծովակալ դը Սալիտզին դարձնել այն հետախուզումը, որին պետք է ձեռնամուխ լինեն հրամանատար Ռոմիոն ու նրա առաքելությունը և նրան ցուցաբերել յուրաքանչյուր բնույթի աջակցություն:

Ես վստահում եմ, որ այս առթիվ ընդունված վճիռները, կարող են, դժբախտաբար, շատ ուշացած լինել: Այնպես, ինչպես այդ մասին հաշվետվություն է ներկայացվել օգոստոսի 18-ի թիվ 121 իմ գեկուցագրում, այնուհետև՝ սեպտեմբերի 3-ի թիվ 9238-Ա. 222 և սեպտեմբերի 11-ի թիվ 9658-Ա. 242 իմ հեռագրերում³, անգլիացիների՝ Սալոնիկում և Եգիպտոսում հայերին օգտագործելու հետ կապված խիստ որոշակի մտադրություններին, որոնց հոգածությունը նրանք մեկ տարուց ի վեր ստանձնել են, ես հակադրվել եմ այնքան երկար, որքան ի վիճակի եմ եղել: Իմ համառությունը նույնիսկ դրդել է անգլիական իշխանություններին՝ առանց վերջիններիս կարծիքը հաշվի առնելու, նրանց օգտագործելու փոխարեն՝ հետամուտ լինել նրանց համախմբմանը՝ կամավոր զինվորագրման պայմանագրի⁴ միջոցով:

1 Պ. Բոնար Լոուն:

2 Չի հայտնաբերվել:

3 Չեն հայտնաբերվել:

4 Տե՛ս վերը թիվ 256 փաստաթուղթը:

Այն համաձայնությունը, որն ակնարկում է Ռազմական նախարարը իրամանատար Ռոյ-նել դը Սեն-Զուենտինին հղած իր հեռագրում և որի պատճենը դուք բարեհաճել եք ինձ ուղարկել, վերաբերում է վերջին կարգադրություններին, որոնց ես չեի կարող հակադրվել. միաժամանակ դերժովակալ դը Սալիտզի միջոցով ես հայերին գաղտնաբալու խորհուրդ եմ տվել կողմնորոշվելու համար ժամկետ պահանջել:

Ես չգիտեմ, թե արդյոք այս հապաղումները կարող էին թույլատրել իրամանատար Ռոմիոյին ժամանելու պատեհաժամ:

(A.C.M., SS Ed 125).

284

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Միացյալ Նահանգների նախագահ պ. Վուդրո Վիլսոնին

Հ. թիվ 834/113:

[Պատճենը]:

Փարիզ, 17-ը հոկտեմբերի 1916 թ.:

Այն շռայլ օգնություններից հետո, որոնք մինչ այժմ Միացյալ Նահանգները չեն խնայել Հայաստանի իրադարձությունների զուեռի տառապանքներն ամոքելու համար, համակրանքի այն նոր ասպարեցը, որը Ձերո գերազանցությունն ու կառավարությունը հենց նոր դրսևորեցին հայերի հանդեպ՝ նվիրաբերելով հոկտեմբերի քսանմեկը և քսաներկուսը՝ Թուրքիայի մեր հայրենակիցների համար օգնություններ հավաքելուն, մեզ հուզել է, և ես՝ իբրև Հայկական ազգային պատվիրակության նախագահ, խորին հուզմունքով է, որ Ձերո գերազանցությունը, ինչպես նաև Սենատին ու Ներկայացուցիչների պալատին խնդրում եմ ընդունել բոլոր հայերի երախտագիտության անսասան հավաստիքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 171).

285

Եգիպտոս և Կիպրոս գործուղված իրամանատար Ռոմիոն՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոքին

Հ. թիվ 1: Գաղտնի:

Իսմայիլիա, 18-ը հոկտեմբերի 1916 թ., ժ. 19.10-ին:

Գեներալ Մուրբեյի հետ ունեցած բանակցության հետևությունները՝ դերժովակալ դը Սալիտզի հետ համաձայնություն կայացնելուց հետո:

1/ Առարկություններ չեղան ո՛չ Պորտ-Սալիդի մարտունակ հայերի (շուրջ 500 մարդու) զինվորագրման, ո՛չ էլ Կիպրոսի՝ իբրև նրանց համախմբման վայրի հետ կապված:

2/ Կանայք, երեխաները, ծերունիները կմնան Պորտ-Սալիում: Այս ճամբարը հոգածության ներքո վերցնելը երկրորդական հարց է քվում:

3/ Եզիպոսի բանակի զլխավոր հրամանատարը հակված է մեզ օգնելու, սակայն նա սպասում է նախ՝ Ուոր Օֆիսի կողմից այն համաձայնության վավերացմանը, որը Կիպրոսի առթիվ հայցվել է հեռագրով:

Վաղը Պորտ-Սաիդի զնդապետ կառավարչի՝ հետ մեկտեղ, որը ևս քարյացակամորեն է տրամադարված, ես կտեսնեմ զաղթականների ճամբարը: Կմնա ապահովել Կիպրոսի Գերագույն կոմիսարի² համաձայնությունը: Ես կգնամ իսկույն ևեթ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 172).

286

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 421:

Կահիրե, 19-ը հոկտեմբերի 1916 թ., ժ. 12.20-ին:
(Ստացվել է ժ. 12.50-ին):

Ես տեսա ռազմածովային դիվիզիայի հրամանատար դերժովակալին³ և գեներալ Մուրբեյին՝ հրամանատար Ռոմիոյի հետ միասին, որն Իսմայիլիայից հեռագրում է Ռազմական նախարարությանը: Գեներալը մեզ ասաց, որ չի դիմակայի Կիպրոսում հայերի տեղավորմանը, բայց պետք է հեռագրի Լոնդոն՝ ստանալու համար այն համաձայնության վավերացումը, որը գոյություն ունի ֆրանսիական և անգլիական կառավարությունների միջև: Այսպիսով, շահեկան կլինի, որ Լոնդոնում մեր կողմից քայլ կատարվի, որպեսզի այդ վավերացումը նրան տրվի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 173).

287

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 1402:

Լոնդոն, 19-ը հոկտեմբերի 1916 թ., ժ. 13.55-ին:

Պատասխան ձեր թիվ 3447 հեռագրին⁴:

Եզիպոսի անգլիական իշխանություններին հեռագրով հրահանգներ են ուղարկվել, որպեսզի դուրին դարձվի հայերի մեկնումը Կիպրոս, նկատի ունենալով, որ նրանց փոխադրելու, հանդերձավորելու և կերակրելու հետ կապված բոլոր անհրաժեշտ կարգադրություններն անելը մեր իրավասությունների մեջ է մտնում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 174).

1 Գնդապետ Էլզուրը:

2 Սըր Ջոն Բլոսոնը:

3 Գերժովակալ դը Սպիտզը:

4 Հոկտեմբերի 17-ի. արտաստպված չէ:

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. քիվ 430:

Կահիրե, 21-ը հոկտեմբերի 1916 թ., ժ. 18.30-ին:

(Ստացվել է ժ. 20-ին):

Գերագույն կոմիսարն՝ ինձ տեղեկացնում է, որ Ֆուրին Օֆիսը նրան հեռագրել է այն մասին, թե հայերը պետք է Կիպրոս գնան, հենց որ ֆրանսիական կառավարությունը կարողանա իրականացնել նրանց կղզի փոխադրելու գործողությունները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 179).

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը²

Ծ:

Փարիզ, 27-ը հոկտեմբերի 1916 թ.:

Վերջին հոկտեմբերի 22-ին, համաձայն Կոնգրեսի որոշման և նախագահ Վիլսոնի հայտարարության, ի նպաստ սիրիացիների և հայերի նվիրատվություններ կատարվեցին Միացյալ բոլոր Նահանգներում: Համաձայն թերթերում տպագրված կարծիքներից մեկի, այդ նվիրատվությունները պետք է կատարվեն 120000 եկեղեցիներում, իսկ Սիրիացիների ու հայերի ամերիկյան օգնության կոմիտեն ցանկություն է ունեցել հավաքել հինգ միլիոն դոլար:

Հանրապետության դեսպանը Վաշինգտոնում¹ Դեպարտամենտին է հաղորդել Միացյալ Նահանգների նախագահի հրապարակած հայտարարության բնագիրը, որով նա իր հայրենակիցներին հորդորում է այս կոմիտեի համար անհրաժեշտ միջոցներ ձեռք բերել՝ իր իսկ նախատեսած օգնության գործի շրջանակում: Այս կոմիտեն աշխատում է ամերիկյան Կարմիր խաչի և որոշակի թվով բողոքական եկեղեցիներից կախում ունեցող երբորդ խմբավորման հետ կատարյալ համաձայնությամբ⁴:

Քաղաքական և առևտրական գործերի վարչությունը պատիվ ունի այս ծրարում մամուլի բյուրոյին փոխանցել այդ հայտարարության բնագիրը: Իրոք որ, նպատակահարմար կլինի մամուլում արտատպել այդ կոչը, որը չեզոքների և Միացյալ Նահանգների նախագահի կողմից այն վայրագությունների հավաստումն է, որոնց գերմանացիների թույլատրությամբ տուրք են տվել նրանց դաշնակից թուրքերը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 107-107 v).

1 Սրբ Հենրի Մակ Սահոնը:

2 Մամուլի բյուրոյի համար:

3 Պ. Ժյուսերանը:

4 Այս գործի մասին տե ս վերը՝ քիվ 275 փաստաթուղթը:

**Կիպրոսում բրիտանական Գերագույն կոմիսար սըր Չոն Քլոսոնը՝
Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատար,
դերձովակալ դը Սպիտզին**

7-ը նոյեմբերի 1916 թ.:

Հիմնվելով հոկտեմբերի 21-ի ձեռնարկի վրա, որը ներկայացնում է հրամանատար պ. Ռոմիոյին, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ մեծ հաճույք ստացա օգնություն ցուցաբերելով այդ սպային՝ ֆրանսիական զինվորական կազմակերպության հսկողության ներքո գտնվող հայկական կորպուսի համար տեղանքի ընտրության հարցում՝ Մոնարքա նավահանգստի մոտակայքում, Ֆամագուստա ծոցից դեպի հյուսիս:

Քաղաքական բարդությունները, որոնք կարող են ուղեկցել Կիպրոսում հայ գաղթականների ընդունելությանը, նվազագույնի կհասցվեն, այն դեպքում, եթե գործ ունենանք կայուն կարգապահությամբ և ընտանիքներից տարանջատված զինվորական կորպուսի հետ:

(A.C.M., SS S a 42).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. քիվ 497:

Կահիրե, 8-ը նոյեմբերի 1916 թ., ժ. 19.20-ին:
(*Սուսլեյ է Քաղ. վարչ. նոյեմբերի 9-ին*):

Կիպրոսում լինելուց հետո, հրամանատար Ռոմիոն այցելություն կատարեց Ալեքսանդրիա. նա վերադարձավ Կահիրե և կրկին մեկնեց Պորտ-Սաիդ:

Հայկական բոլոր խմբերը, սկսած Թորգոմ եպիսկոպոսի խմբից մինչև հեղափոխականների խմբերը, նրան են ցուցաբերում իրենց օգնությունը:

Ըստ անցկացված հաշվառման, Պորտ-Սաիդում Մուսա լեռան գաղթականները կհատկացնեն 450-ից 500 մարտունակ տղամարդկանցից բաղկացած խմբավորում:

Նրանց կկարողանան միանալ և ուրիշները:

Սիրիացիների շրջանում կլինեն, անկասկած, փոքրաթիվ կամավորներ: Այս պահին առանց սպասելու այլ արյունքների, հարկ կլինի, որքան հնարավոր է արագ, ձեռնամուխ լինել մեկնելու պատրաստ և նույնիսկ անհամբերությամբ դրան սպասող՝ առաջին խումբը Կիպրոս տեղափոխելուն և տեղավորելուն:

Այսպիսով, ցանկալի կլինի, որ հրամանատար Ռոմիոն անհապաղ իմանա, թե ինչպիսի ընդունելության են արժանացել իրագործման միջոցներին վերաբերող իր առաջարկները և հարցումները, որոնք շարադրված են Ռազմական նախարարությանը հղած նրա զեկուցագրում, որն ուղարկվել է հոկտեմբերի 30-ի փոստով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 189).

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն:

Փարիզ, 8-ը նոյեմբերի 1916 թ.:

(*Ստացել է* Քաղ. վարչ. նոյեմբերի 11-ին):

Ես հենց նոր ընթերցեցի այն հիասքանչ մամակը, որը դուք Հայաստանի առթիվ հղել եք պարոն սենատոր Լուի Մարտենին՝, և պատիվ ունեմ՝ Նորին սրբազնություն ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցչի ու Ազգային պատվիրակության նախագահի իմ կարգավիճակով, Չերդ գերազանցությանն արտահայտել մեր ամենախորին, ամենաազնուամնալից երախտիքը՝ համակրանքի այն նոր վկայության առթիվ, որն իբրև Հանրապետության կառավարության ղեկավար, դուք բարեհաճել եք դրսևորել մեր նկատմամբ:

Դուք մեկ անգամ ևս մեզ եք տալիս հուժկու հավաստիացումն առ այն, որ երբ հնչի օրինական հատուցումների ժամը, Ֆրանսիան մոռացության չի տա հայ ազգի վշտալից փորձությունները և որ իր դաշնակիցների համսձայնությամբ նա անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի, որպեսզի նրա համար երաշխավորի առաջադիմություն ապահովող խաղաղ կյանք: Եվ այդ, իրոք որ, Ֆրանսիային ու նրա դաշնակիցներին է, որոնք, ինչպես և Ֆրանսիան, կռվում են իրավունքի, արդարության և ազգությունների սկզբունքի համար, որ Հայաստանն ապավինել է իր ճակատագիրը:

Մենք անասանելի վստահություն ենք տածում Ֆրանսիայի՝ հարստահարվածների ավանդական հովանավորի նկատմամբ: Մեր սրտերում մենք հաստատակամորեն հույս ենք տածում, որ նա կվերհիշի, որ մեր հայրենի հողի վրա, դարեր առաջ, իր երեխաներն իրենց արյունն են խառնել մեր նախնիների արյանը՝ կողք-կողքի մարտնչելով հանուն միևնույն նպատակի, նույն բարբարոսության և նույն թշնամու դեմ, որը հենց նոր սարսափեցրեց աշխարհն իր չլաված ոճրագործություններով: Ֆրանսիան չի զլանա իր հովանու ներքո վերցնել այս ճնշված ժողովրդին, որպեսզի նրան հնարավորություն ընձեռի իր իսկ հովանավորությամբ վերածնվելու ու անկաշկանդ բարգալիանելու, վերակազմավորելու իր ազգությունը, որն ի գորու չեղան ոչնչացնել դարեր շարունակ հարստաժբ բռնությունները, և նրա համար ապահովելու այն տեղն ու դերը, որոնք քաղաքակիրթ աշխարհում նրա համար ուրվագծում են նրա անցյալն ու սեփական ունակությունները: Ֆրանսիայի քաղաքակրթչական և տնտեսական գործունեության համար, Հայաստանն Արևելքում կդառնա, այսպիսով, հզոր գործոն:

Ես ձեզ խնդրում եմ, պարոն նախագահ, բարեհաճել ընդունելու բոլոր հայերի անասան երախտագիտության զգացումը, որի մասին, մասնավորապես, երջանիկ եմ կրկին ձեզ հիշեցնելու այս առթիվ՝ իմ ամենախորին հարգանքի նոր հավաստիացումների հետ մեկտեղ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 128-129).

**Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը՝ Կահիրեում
Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին**

Հ. թիվ 392:

Փարիզ, 10-ը նոյեմբերի 1916 թ., ժ. 23.35-ին:

Պողոս Նուբար վաշտան խնդրել է Լուդուվիգ Լանրապետոթյան դեսպանին՝ ձեռք փոխանցել կից հեռագիրը՝ այն Առաքել բեյ Նուբարին հանձնելու համար:

«Հիմնվելով կամավորների հարցին վերաբերող հոկտեմբերի 6-ի իմ նամակի վրա, ստանալով դրանից հետո որոշակի հավաստիացում, որ դաշնակիցների հաղթանակի պարագայում մեր ազգային իղծերը կիրականանան, ես ձեռք պարտավորեցնում եմ միջոցներ ձեռնարկել քաջալերելու և դյուրին դարձնելու համար, հնարավորության սահմաններում, ամենամեծ թվով կամավորների զինվորագրումը, վերոհիշյալ իմ նամակում նշված նախազգուշական միջոցների և տարատեսակ այլ նախազգուշությունների պայմանով, որոնք անհրաժեշտ կհամարվեն: Կվերադառնամ Փարիզ հաջորդ շաբաթ:

Պողոս Նուբար»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 191).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ա. թիվ 468:

Կահիրե, 19-ը նոյեմբերի 1916 թ.:
(*Ստացել են* Կաթ. նոյեմբերի 30-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 1-ին):

Ես պատիվ ունեմ Ձերո՞ղ գերագանցությանը հղել սրան կից երկու զեկուցագրերի պատճենները, որոնք հոկտեմբերի 28-ի՝ և նոյեմբերի 10-ին՝ հրամանատար Ռոմիոն հղել է պ. Ռազմական նախարարին՝ Պորտ-Սաիդ գաղթած Մուսա լեռան հայերին օգտագործելու, նրանց տեղափոխելու և Կիպրոսում տեղավորելու շուրջ:

Իմ հեռագրային քրթակցության միջոցով Դեպարտամենտը տեղյակ է պահվել առաջին դժվարություններին, որոնք փորձել է հաղթահարել. համաձայնությունն անգլիական իշխանությունների հետ կայունացվել է. սրան կից զեկուցագրերը մանրամասնորեն ներկայացնում են հրամանատար Ռոմիոյի կշռադատված և գործնական առաջարկությունները, որոնց՝ պ. Ռազմական նախարարը հենց նոր է տվել իր համաձայնությունը. ես ոչինչ չունեմ հավելելու այս զեկուցագրին, բացառությամբ այն աշխուժության, ճարավորության և

1 Ստորագրել է պ. դը Սյարժերին:

2 Պ. Պոլ Կամբոնը:

3 Արտասուված չէ: Այս զեկուցագրի մասին տես ստորև թիվ 296 փաստաթղթի ծանոթագրությունը:

4 Տես ստորև հավելվածում:

նվիրվածության հավաստումը, որոնցով հրամանատարը ձեռնամուխ է եղել իրեն վստահված նույր առաքելությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 193-193 v).

ՀԱՎԵԼՎԱԾ

Եգիպտոս և Կիպրոս գործուղված հրամանատար Ռոմինո՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոբին

Պատճենը¹:

Ավաա²:

Հոկտեմբերի 28-ի իմ թիվ 1 զեկուցագիրն³ առաջարկում էր առաջնությունը տալ Պորտ-Սաիդի հայկական ճամբարի զինվորագրման ենթականերին, քանի որ այս առաջին խմբավորումը դիտվել է իբրև հայ և սիրիացի կամավորների զինվորագրման հոսանքի սկիզբ:

Մնում էր փաստերով հիմնավորված տվյալներով ուսումնասիրել այդ տարրերի հզորությունը և հնարավոր քանակը:

Հոկտեմբերի 9-ի թիվ 6 և 7 իմ հեռագրերը ձեզ տեղեկացրել են այն հետաքննության համեստ խոստումներին, որտեղ ես ամբողջացրել եմ, առանց կանխակալ մոտեցման, ինձ արժանահավատ թվացող բոլոր ցուցումները:

Ահա դրանց ամփոփումը:

I. Հայեր

1/ Կանխատեսելի նոր ռեսուրսներ: Հայ առաջնորդների տրամադրվածությունը:

Պորոս Նուբար փաշան, որը կաթողիկոսի լիազորությամբ հայ ժողովրդի ներկայացուցիչն է Եվրոպայում, Փարիզից հանձնարարել է իր որդուն՝ Առաքել բեյ Նուբարին և իր նախկին քարտուղար պ. Մկրտչյանին ինձ հետ այստեղ հաղորդակցության մեջ մտնել: Ես տեսել եմ թե՛ մեկին և թե՛ մյուսին: Նրանց հետ էին «Հայկական համընդհանուր միության» քարտուղարն ու զանձապահը, որը բարեգործական կազմակերպություն է և իր միջոցների կարևորության պատճառով հսկայական ազդեցություն ունի և որի նախագահը Պորոս Նուբար փաշան է: Վեյջինիս նամակը, որի պատճենը ես ստացել եմ (Կովկասում ռուսների հակահայկական դիրքորոշմանը վերաբերող հատվածի կրճատումով), ամփոփում է հայ պահպանողական սահմանադրական կուսակցության կարծիքը և մոտեցումը. մի կողմից հայկական ազգային շահախնդրությունն ամեն առումով հակված է ապահովելու Ֆրանսիայի օգնությունը և հիմքեր կան օժանդակելու նրա ջանքերին՝ ոչ միայն իրենց փրկության պահից ի վեր նրա իրավասության ներքո գտնվող Մուսա լեռան զաղրականներին կազմակերպելու, այլև ուրիշ հայ կամավորների զինվորագրելու համար: Մյուս կողմից, այնուամենայնիվ, Միջագետք տեղահանված հայկական ընտանիքները բուրբակաճրճություններին ենթարկելու մտավախությունը պահանջում է այդ կազմակերպումն իրականացնել զգուշությամբ, առանց աչքի գարնվելու և գրավոր քարոզչության ու որբան հնա-

1 Մենք արտասպում ենք միայն մի հստակած, որը վերաբերում է հայերին:

2 Ըստ պ. Դեֆրանսի ճեպագրի, հավաստի է, որ խոսքը վերաբերում է 1916 թ. նոյեմբերի 10-ի զեկուցագրին:

3 Արտատպված չէ: Այս զեկուցագրի մասին տե՛ս ստորև թիվ 296 փաստաթղթի ծանոթագրությունը:

լավեր է երկար մնալ քուրքերի և գերմանացիների տեսալաշտից դուրս:

Միննույն միասնամուռ համաձայնությունն է տիրում, բայց միևնույն երկչուտ զսպվածուրյան առկայությամբ, Եզիպտոսի «Հայկական ազգային խորհրդում», որն, ի դեպ, սոսկ եկեղեցական խորհուրդ է՝ կազմված բարգավաճող առևտրականներից և որի նախագահը Ն չորին սրբազնությունն է՝ Թորգոմ եպիսկոպոսն է:

Այս երկու խմբերին հակադրվում են բռնի գործողության կողմնակիցները՝ հեղափոխական կոմիտեները: Ներկայումս նրանք ձևավորել են երկու կազմակերպություն, որոնք կրում են իրենց հանդեսների անունները. մեկը՝ «Դ-րոշակ» (որը տպագրվում է Ժնևում), կուսակցություն, որը հիմնադրվել է Կովկասում 1890 թ., մյուսը՝ «Էնչակ»¹ (որը լույս է տեսնում Ամերիկայում), նախկին մի կուսակցություն, որը ռուսների և քուրքերի դեմ ահաբեկչական պայքար է մղել, բայց որը ներկայումս կազմալուծված է և ձգտում է ձուլվել առաջինի հետ, որի ազդեցությունը մեծապես աճել է պատերազմից ի վեր՝ ռուսներին ցուցաբերած ռազմական օգնության հետևանքով:

«Դ-րոշակը», որն անվանվում է նաև «Դ-աշակցություն» («Հեղափոխական դաշակցություն»), Եզիպտոսում ունի կարևոր և կարգապահ կոմիտե, որի նախագահը դոկտոր Նևրուզն է: Վերջինս, անտեղյակ ինձ հանձնարարված առաքելությանը, եկել էր Կահիրե, որպեսզի գտնի մեր նախարարին, առաջարկելու համար նրան՝ զինվորագրել կամավորներին, որոնք կծառայեն մեր պրոչի ներքո: Պ. Դ-եֆրանսը նրան ինձ մոտ ուղարկեց. ես նրան ընդունել եմ բազմաթիվ առիթներով: Նրան ուղեկցում էր կոմիտեի գլխավոր քարտուղար պ. Անիսյանը², որը Կահիրեի Մանկավարժական ինստիտուտում քիմիայի դասախոս է: Նրանք ինձ հետ հակիրճ գրույց ունեցան, ինձ վրա բողոքելով կշռադատված որոշում կայացրած անձանց տպավորություն և պատասխանելով իմ ճշգրտող հարցերին ու դիտողություններին, համառոտակի ասացին:

«Այժմ մենք կարծում ենք, որ միայն Ֆյանսիան է ի վիճակի մեզ դուրս բերել այն խորը ճգնաժամից, որում գտնվում է մեր ժողովուրդը: Մեր համախոհները պետք է ֆրանսիացի զինվորները լինեն: Միայն Ամերիկյան կարող էր տրամադրել նվազագույնը 10000 մարդու, եթե չափավոր կուսակցությունները չխափանելին այս շարժումը: Թուրքերի դեմ ուղղված մեր ազգային պայքարի ընթացքում նրանք կարողացան՝ միջոցների կիրառման հարցում մեզնից զատվել այն ժամերին, երբ կարելի էր հուսալ քուրքերին զինաթափելու կամ նույնիսկ օրինական ձևով նրանց վրա իշխելու մասին՝ տնտեսական և անգամ քաղաքական այն գերաճող ազդեցությամբ, որը մեր շափավոր հայացքների տեր առաջնորդները թվում է, թե ձեռք էին բերել Թուրքիայում:

Այժմ չի կարող խոսք լինել հանդարտ և հնազանդ գործելաձևով որևէ բան ակնկալելու մասին: Թուրքական քաղաքական դավանանքը հանգում է Հայաստանի կործանմանը: Ներկա պատերազմը քույրատրում է այն կիրառելի առանց հսկողության: Երիտթուրքերի մտածողության ոլորտում այստեղ կարող է լինել կոտորածների հրամաններին վերաբերող միայն մեկ սահմանափակում. այդ նրանց սեփական պարտության վախի զգացողությունն է: Նրանց՝ իբրև հաղորդների, ո՞վ կկարողանա խանգարել կոտորելու կենդանի մնացածներին, Միջագետք տեղահանվածներին: Գերմանացիների կողմից պատասպարված լինելն այստեղ ոչինչ չի կարողանա անել. քուրքական մոլեռանդությունը կխուսափի նրանց հրամաններից, եթե ենթադրենք, որ նրանք կամենան դա սանձահարել: Մենք ունենք, այսպիսով, միայն մեկ հավանականություն, որը հանգում է գերմանացիների և քուրքերի պարտու-

1 Տե. Իմա՝ «Էնչակ»:

2 Հավանաբար սխալ է. իմա՝ պ. Հանեմյան:

քյանը և որին նպաստելը մեր ազգային պարտքն է, որպեսզի մեր հերոսին ունենանք հայ-բողի պաշտպանությունը»:

Երեկվա հեղափոխականները ներկայումս դատում են ինչպես զինվորներ: Միայն նրանք են, որ ի վիճակի են գործողությունների դրդելու այն հայերին, որոնք չեն դասվում իբրև կամավորներ զինվորագրվելու ունակների շարքը: Այսպիսին է Հայկական միության ղեկավարների շատ հատակ կարծիքը, որոնք պահանջում են միայն խուսափել աղմկոտ և վաղաժամ յուրաքանչյուր քարոզությունից: Բոլոր կարծում են, որ Ամերիկայի կամավորների՝ 1500-ի հասնող թիվը նվազագույնն է, նույնիսկ առաջին շարժման համար, որը կկառուցանու կյանքի կոչվել երկու ամսում: Միայն Մուսա լեռան տարածաշրջանից Ամերիկայում կան 800 մարդ, որոնք ի վիճակի են գեղք կրելու: Կիսլոտսում նրանց հայրենակիցների համախմբման լուրն իսկ կարող է նպաստել այս մարդկանց մեծ մասի վերադարձի հրահրմանը:

Ես ձեզ մատնացույց արի կամավորների 1500-ի հասնող թիվը, որը կարելի է գտնել Ամերիկայում:

Եզիպտոսում, մասնավորապես, Վերին Եզիպտոսում, կան տարրեր, որոնց այս կոմիտեները, համաձայն իրենց ասածի, ի վիճակի են համախմբելու: Դոկտոր Ներուզն ինձ հայտնել է 1000-ի հասնող թվի մասին, որպեսզի ես կարողանամ այն հսկողության ներքո պահել: Ես այն նվազեցրել եմ 500-ի, դրանում ընդգրկելով այն հայ գերիներին կամ դասալիքներին, որոնց մեզ կհանձնեն անգլիացիները՝ մոտավորապես 200 մարդու:

Ամփոփելով, ես կարծում եմ, որ կարող եմ հույս տա՞նք բոլոր կուսակցություններից պատկանող հայերի օգնության հետ: Նօրին սրբազնություն թորգոմից, ինչպես նաև դոկտոր Ներուզից, ես ստացել եմ, այս առթիվ, գրավոր խոստումներ: Եռանդը, վստահությունը, վճռակամությունը իվստ անհավասար են, բայց չափավոր խմբին պատկանողներից մեկը չէ, որն առանց չարախնդության և անձնական բնագոյային համակրանքով է խոստում դրոշակյանների եռանդի մասին: Ես այդ զգացողությունը նկատել եմ Նօրին սրբազնություն թորգոմի մոտ: Այն է՝ բոլորի մոտ կա անասելի ատելություն բուրքերի նկատմամբ: Եթե այս շրջաններում գոյություն ունեն մի քանի անձինք, որոնց կասկածում եմ գերմանամետ միտումներ ունենալու համար, որոնք կարող են վտանգավոր լինել, ինչպես ինձ հավաստում են, նրանք կդիմակազեղծվեն և կհայտնաբերվեն: Բայց վախը բռնությունների հանդեպ մնում է փոքրիշատե խորին և բացահայտ: Այն ի գորտ է ատելությունը դարձնելու պատիվ և անտարբեր: Հարկ է բորբոքել այդ ատելությունն ու մեղմացնել այդ վախը՝ եզրափակելով, նույնիսկ առանց քարոզության կամ նախնական հրապարակայնության, հայ զինվորների առաջին խմբի ստեղծմամբ, որը և կլինի լավագույն քարոզությունը: Այսպիսով, հենց դեպի առաջին նպատակն է, որին հարկ է ձգտել:

2/ Պորտ-Սաիդի ճամբարի կացությունը:

Իմ բացակայության ընթացքում, Պորտ-Սաիդի ճամբարում, սպա Շերպիանինի միջոցով մարտահամար եմ անցկացրել: Դժամբարը բաժանված է 18 ենթաբաժինների: Դրանք կանչվել են հերթականությամբ և մարտիկ հարցաքննվել մեկ առ մեկ:

Այս հարցաքննության արդյունքներն ինձ հնարավորություն են տալիս ավելի լավ ճանաչելու ճամբարի ռեսուրսները և հսկողներին են միանգամայն բարեհաճ կարծիքի: Այն արդեն ձեզ է ներկայացվել նույնների 6-ի իմ թիվ 5 հեռագրում¹: Այսօր ես կարող եմ

¹ Արտատպված չէ:

ճշգրտել: Ներկայումս ճամբարն ընդգրկում է 450 մարդու, որոնք ծառայելու ցանկություն ունեն և որոնց կարելի է առաջադրել զինժառայության համար:

Նրանք տրոհվում են հետևյալ ձևով.

16-ից 17 տարեկան 70 երիտասարդ, որոնք իրենց տարիքի համեմատ ճարպիկ են, աչքաբաց ու ամրակազմ և որոնք մի քանի ամսվա նախապատրաստության արդյունքում կդառնան զինվորներ. ուժերի ծաղկման շրջանում գտնվող 18-ից 35 տարեկան 300 տղամարդ, որոնք գրեթե բոլորը ֆրանսիական Ռ-ազմածովային նախարարության կողմից ուսուցանված են կամ թուրքական բանակի նախկին զինվորներ են:

35 տարեկանից բարձր 80 տղամարդ՝ նվազ ամրակազմ, բայց տակավին ընդունակ լավ զինվոր լինելու համար: Բացի դրանից, ճամբարը կտրամադրի զինվորական ծառայության համար ոչ պիտանի 100-ից 120 տղամարդ (Մուսա լեռան պաշտպանության կամ բականյան պատերազմների ժամանակ վիրավորված, տարեց կամ տարբեր հիվանդություններ ունեցող մարդիկ), որոնց սակայն, ես նկատի ունեմ օգտագործել իբրև ոչ շարքայինների՝ Կիպրոսում ճամբարի տեղադրման համար: Ավելի ուշ, նրանց կարելի կլինի օգտագործել քիչուցքի ծառայության համար:

Այս քվերին հարկ է հավելել սրոշ քվով երիտասարդների, որոնք նախկինում գտնվել են ճամբարում և այն թողել են Կահիրեում, Ալեքսանդրիայում, Մանսուրահում և այլուր աշխատելու համար: Նրանք կվերադառնան առաջին իսկ կանչով:

Բոլոր այս մարդիկ, անկասկած, բարի կամքի տեր են: Ծամբարում մարդահամարի ժամանակ չեն հայտնաբերվել այսպես կոչված տատանվողներ: Ես չեմ խոսում այն խանդավառության մասին, որը դրսևորվեց. ասում են, որ այն կարող է միայն անցողիկ լինել, և այս մարդիկ հանդես կբերեն վճռականության կայունություն այն պահին, երբ գործի անցելու ժամանակը հասնի:

Այս պահին նրանք չգիտեն, թե ինչ ձևով են իրենց հաշվեգրելու և օգտագործելու: Հանուն հայրենի հողի գրավման՝ ընդհանուր թշնամու դեմ մեզ հետ մեկտեղ կռվելու հույսը միայն, բավական է նրանց մոտ բարոյական գերազանց մթնոլորտ առաջ բերելու համար:

Բայց հարկ է, որ ամենատրոշակի իրավիճակում անգործությունը չհարատևի: Հեշտությամբ ոգևորվող այս մարդիկ՝ հեշտությամբ էլ վիատվում են: Արդեն բազմաթիվ անգամներ նրանք տեսել են, թե ինչպես են չքացել՝ նրանց կողմից այսօր իսկ տածվող հույսերին համանման հույսեր: Եթե կենսագործումներն իրենց երկար սպասեցնել տան, կարելի կլինի երկյուղել այն բանից, որ նրանք կրկին տուրք կտան անվստահությանը:

Որպեսզի նրանք համբերությամբ զինվեն, ես ավելի մանրազնին ուսումնասիրել կտամ յուրաքանչյուրի կարողությունները: Սակայն արդեն հարկ է արձանագրել նրանց խիստ բարեհաճ բարոյական ոգին:

Այս հավաստումն ինձ դրդում է վավերացնելու այն պահանջները, որոնք իմ նախկին զեկուցագրում ես առաջադրել եմ այս առաջին խմբավորումը տեղավորելու, հյրամանատարական կազմով ապահովելու և զինելու համար:

Եզրահանգում:

Կայացման կարիք ունեցող վճիռը կախված է այն նպատակից, որին հարկ է հասնել: Եթե նկատի ունենանք միայն սպառնալից խառնամբոխի ստեղծումը կամ հապշտապ և անհեռանկարային, առիթն օգտագործելու պիտանի ռազմական դիվերսիայի իրականացումը, գլխավորապես Ալեքսանդրետում, հարկ է սահմանափակվել Մուսա լեռան մեր մա-

գապուրծ եղածներով: Նրանց համախմբումը չի կարող բռնությունների տեղիք տալ կամ ծառայել իբրև դրանց արդարացում: Չունենալով այլևս երկիր, պատասպարված մեր դրոշի ներքո, ապավինելով մեր հովանավորությանը, նրանք, բնականաբար, կարող են ռազմականացվել մեր կողմից: Որոշ օժանդակ ուժեր օգնության կհասնեն տարերայնորեն. դրանցից կկազմվի փոքրաթիվ, բայց լավ արժանիքներ ունեցող, ֆրանսիական համազգեստ կրող և ֆրանսիական ղեկավար կազմի ենթակայության ներքո գտնվող գումարտակ, որը կհավաքագրվի տեղում և պատահական տարրերից:

Եթե, դրա փոխարեն, խոսքը վերաբերում է Սիլիհայում կամ Կիլիկիայում բուն ռազմական համագործակցված գործողության համար նախատեսված մի ավանգարդի և միաժամանակ քաղաքական նպատակի, «հովանավորության լայնածավալ քայլի» (Խորհրդի պ. նախագահի) հոկտեմբերի 6-ի թիվ 4070 նամակը¹, ուր պատճենը դուր ինձ եք փոխանցել թիվ 6756 ցուցակով), հայ և սիրիացի առաջնորդների հետ համագործակցելը, թվում է տրամաբանական՝ ջանալու համար, եթե այդ նպատակահարմար է, ստեղծել կամավորների ռազմական կազմակերպություն, որը կպատասխանի Ֆրանսիայի այդ քայլին: Այդ ջանադրությունը պետք է լինի երկարատև, շարունակական և լիակատար: Ֆրանսիայի վարկը ռազմական ասպարեզում աճել է Արևելքում, բայց ակնհայտ է, որ նա հրաժարվում է ուղղակի գործողությունից Ասիական Թուրքիայում: Ամենաջերմ համակրանքները լուրջ անձնական զոհաբերությունների ձևով կարտահայտվեն միայն այն դեպքում, երբ շնորհիվ հաջողակ ձեռքբերումների այս կասկածները փարատվեն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 203-212).

295

Ռ-ազմական նախարարը² Ռ-ազմաժողովային նախարար, դերժովակալ Լակազին

Ճ. թիվ 7728-9/11: Գաղտնի: Խիստ հրատապ:

Փարիզ, 20-ը նոյեմբերի 1916 թ.:

(*Ստացել է* Կաթինետը նոյեմբերի 20-ին):

Իբրև վերջին օգոստոսի 12-ի³, սեպտեմբերի 23-ի⁴ և հոկտեմբերի 21-ի⁵ իմ թիվ 5174-9/11, 6172-9/11 և 6970-9/11 ճեպագրերի շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից Կիլիկիայում հայկական կորպուսի կազմակերպմանը վերաբերող՝ գումարտակի ղեկավար Ռ-ոմիոյի թիվ 3 հեռագրի և հոկտեմբերի 28-ի թվակիր թիվ 1 զեկուցագրի պատճենը⁶: Եզիպտոսում և Կիլիկիայում հրամանատար Ռ-ոմիոյի կողմից իրականացված առաջին ուսումնասիրություններից բխում է, որ նա կարող է այս պահից ի վեր Պորտ-Սաիդում ունենալ շուրջ 500 հայերից բաղկացած առաջին խումբը, որոնք հակված են կամավոր հիմունքներով զին-ծառայության ընդունվելու և Կիլիկոս մեկնելու:

1 Վերն արտատպված է թիվ 278 փաստաթղթում:

2 Ստորագրել է գեներալ Դյուպոր:

3 Տե՛ս վերը թիվ 242 փաստաթուղթը:

4 Տե՛ս վերը թիվ 266 փաստաթուղթը:

5 Արտատպված չէ:

6 Արտատպված չէ: Այդ զեկուցագրի մասին տե՛ս ստորև թիվ 296 փաստաթղթի ծանոթագրությունը:

Հրամանատար Ռոմիոն, Կիպրոսի Գերագույն կոմիսարի¹ հետ մեկտեղ, զննել է ճամբարի հիմնադրման համար հարմարավետ մի տեղանք, կղզու արևելյան ափին՝ Ֆամագուստայից մոտավորապես 24 կիլոմետր դեպի հյուսիս:

Միաժամանակ հայկական կոմիտեները ձեռնամուխ են եղել գրեթե երկամսյա ժամկետում Ամերիկայում, Եգիպտոսում և Հնդկաստանում հավաքագրելու 2000 կամավորների: Որքան էլ, որ այս կանխատեսումները չափազանցված թվան, կարելի է հուսալ, որ Կիպրոսում կորպուսի կազմավորումը կիրահարի նոր զինվորագրումներ:

Վերջապես, այս կորպուսում են նախատեսում եմ օգտագործել օսմանյան ծագում ունեցող սիրիացիների, որոնք վաղուց ի վեր դիմում են Թուրքիայի դեմ մարտնչելու հարցով:

Կարելի է, այսպիսով, կանխատեսել սիրիացի կամավորների աջակցությունը, որոնց հարկ է զինվորագրել կամ Ֆրանսիայում, կամ Եգիպտոսում, կամ Բրազիլիայում, որտեղ Սառ-Պաուլոյի «Լիբանանյան վերածնության» կոմիտեն կարող է այդեն հավաքագրած լինել երկու հարյուր անդամագրվածների, չնայած այն բանին, որ հաստատում որոշման բացակայությունը խանգարել է մինչ այժմ զինվորագրման կանսյանիայի սկզբնավորմանը:

Այս պայմաններում, ես որոշել եմ Կիպրոսում անհասպաղ ստեղծել² օսմանյան ծագում ունեցող կամավորներից բաղկացած «Արևելյան լեգեոն», որոնք կպարտավորվեն պատերազմի հարատևության ընթացքում Ֆրանսիական դրոշների ներքո ծառայել իբրև օժանդակ ուժեր՝ Ասիական Թուրքիայում օգտագործվելու համար:

Դուք կբարեհաճեք գտնել սրան կից այն որոշման պատճենը, որն այս առթիվ ես կայացրել եմ նոյեմբերի 15-ին²:

Դրան կհաջորդի Արևելյան լեգեոնի կազմավորման հրահանգը, որը ես չեմ զլանա ձեզ փոխանցել:

Հետևակային գումարտակի ղեկավար Ռոմիոյին հանձնարարվել է «Արևելյան լեգեոնի» նախնական կազմակերպումը և դրա հրամանատարության ի կատար ածումը: Ֆրանսիական հրամանատարական կազմի և սպառազինության առաջին շարանը նրա մոտ, Պորտ-Սաիդ կուղարկվի ամենակարճատև ժամկետում և, հնարավորության դեպքում, ընթացիկ նոյեմբերի 29-ին՝ «Ծովային բեռների» փոխադրանակով: Համաձայն ծովակալ դը Սալիտոյի կարծիքի, անձնակազմի և սպառազինության փոխադրումը Պորտ-Սաիդից Կիպրոս՝ հրամանատար Ռոմիոյի խնդրանքով կապահովվի կամ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջոցներով, կամ անգլիական առևտրական նավերով:

Կիպրոսում ճամբարի հիմնադրման նպատակով ես հրամանատար Ռոմիոյի համար 10000 ֆրանկի սահմաններում վարկ եմ բաց արել, որը հարկ է վերագրել Ռազմական նախարարության բյուջեի օրինակարգի 26-րդ հոդվածին:

Մեր Դեպարտամենտների միջև արդեն կայացված պայմանավորվածության համաձայն, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք հրահանգներ տալ Սիրիայի ռազմածովային դիվիզիային այն գումարների հատկացման վերաբերյալ, որոնք, իբրև վարկ, կխնդրի հրամանատար Ռոմիոն, ինչպես նաև այն բոլոր գումարների՝ որոնց կարիքը, կանոնադրությամբ նախատեսվող օգնության սահմաններում, Արևելյան լեգեոնը կունենա (աշխատավարձ, փոխհատուցում, տարբեր ծախսեր):

Տեղաբնակ աձնակազմի աշխատավարձի չափերը կամփոփվեն պատրաստման ընթացքում գտնվող հրահանգում:

Միաժամանակ Գլխավոր շտաբի 4-րդ ենթաբաժնի կնիքը կրող՝ նոյեմբերի 10-ի ձեռնամակով դուք ինձ տեղեկացրել եք Ռուադ և Կաստելլոնիզո գաղթած օսմանյան հպատակներին Ֆրանսիա տեղափոխելու հարցին, որոնք ցանկություն ունեն ծառայել «իբրև ռազմագետի բանվորներ»:

1 Սրբ Ջոն Քլոստեր:

2 Այս որոշման մասին տե՛ս ստորև՝ բիվ 296 փաստաթղթի հավելվածում:

Երբ Սիրիայի մեր ռազմածովային դիվիզիայի հրամանատարն այս գաղթականներին իրագեկ դարձնի, որ Կիպրոսում կազմավորման ընթացքի մեջ գտնվող Արևելյան լեզեոնը տարբեր զինվորական ստորաբաժանումներում կընդգրկի հայերի, քրիստոնյա սիրիացիների ու սիրիացի արաբների, հավանական է, որ նրանք կհամաձայնվեն ներգրավվել իրենց մտահոգմանը համապատասխանող այդ կորպուսի մեջ: Դրանք կպատասխանի դեպքում, կամավորների զինվորագրման շուրջ պետք է ձեռք բերել կորպուսի հրամանատարի համաձայնությունը և գաղթականների տեղափոխումը Ֆրանսիա կղաղնա աննպատակ:

(A.C.M., SS Ed 125).

296

Ռազմական նախարար, գեներալ Ռոբըլ՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիաննի

Ճ. քիվ 7919-9/11: Խիստ հրատապ: Գաղտնի:

Փարիզ, 25-ը նոյեմբերի 1916 թ.:
(Սուսցեկ են Կաբ. նոյեմբերի 25-ին,
Քաղ. վարչ. նոյեմբերի 27-ին):

Հիմնվելով մեր երկու Դեպարտամենտների միջև նախօրոք փոխանակված թղթակցության վրա և վերջապես, նոյեմբերի 10-ի ձեռք քիվ 4580 (Ասիա) ճեպագրի¹ վրա՝ Արևելքում հայ կամավորների կորպուսի կազմավորման առթիվ, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ հրամանատար Ռոմիայի կողմից իրականացված առաջին իսկ հետախույզումներից հետո, վճռեցի՝ նոյեմբերի 15-ին անհապաղ ձեռնամուխ լինել «Արևելյան լեզեոնի» ստեղծմանը Կիպրոս կղզում, որը բաղկացած կլինի օսմանյան ծագում ունեցող ռազմական օժանդակ ուժերից և կգտնվի Ֆրանսիացի սպաների և ենթասպաների հրամանատարության ներքո:

Այն հայերը և սիրիացիները, որոնք զինվորագրվելու ցանկություն կունենան, կպարտավորվեն ծառայել Ֆրանսիական դրոշմների ներքո, պատերազմի հարատևության ընթացքում Թուրքիայում օգտագործվելու համար. նրանք ստորաբաժանումներում կբաշխվեն ըստ իրենց ազգության և կրոնի, ինչպես արդեն դրա անհրաժեշտությունը դուք ընդունել էիք: Ի դեպ, ես ձեզ եմ ուղարկում սրան կից նոյեմբերի 15-ի իմ որոշման պատճենը:

Գումարտակի ղեկավար Ռոմիոն նշանակվել է Արևելյան լեզեոնի հրամանատար. նրան թույլատրվել է Կիպրոս տեղափոխել հայերի առաջին խմբերը, որոնք պատրաստ են Պորտ-Սալիում և նախատեսված են ճամբարի շահագործումը կազմակերպելու համար:

Այս ճամբարը կհիմնադրվի Կիպրոսի Գերագույն կոմիսարի² համաձայնությամբ, կղզու արևելյան ափին՝ Ֆամագուստայից 24 կ (չլուներտ) ընդհանուր դեպի հյուսիս: մի վայրում, որը հարմարավետ է ճանաչվել:

Հրամանատարական կազմի առաջին խումբը, որը պատշաճ է երկու վաշտերի կազմավորմանը և ռազմամթերքը, հանդերձանքն ու ճամբարային տեղավորման համար անհրա-

¹ Արտատպված չէ:

² Սըր Ջոն Բրոուսը:

ժեշտ միջոցները Մարտելից դեպի Պորտ-Սալիո՝ իբրև առաջին նշանակման վայր կուղարկվեն ընթացիկ ամսի 29-ին:

Արևելյան լեզեռնի կազմավորումը բույլատրում է ընթացք տալ սիրիացի կամավորների զինվորագրման ծրագրերին, որոնք բազում աշխերով ներկայացրել են Փարիզի և Ամերիկայի կոմիտեները:

Այս առիվ դուք ինձ եք փոխանցել երկու հեռագիր, որոնք պ. Շեքրի Գանեմին են ուղարկվել համապատասխանաբար՝ Բրազիլիայից և արգենտինյան հանրապետությունից՝ Մաո-Պաուլոյի «Լիբանանյան վերածնության» նախագահ պ. Ֆարես Նաժտուի ու դրուզական էմիր Աբուլամի կողմից և վերաբերում են Հարավային Ամերիկայի սիրիական գաղութների շրջանում զինվորագրման հնարավորություններին: Մաո-Պաուլոյում նախնական ժողովների ընթացքում ցուցակագրվել է 200 կամավոր. էմիր Աբուլամը կարծում է, որ արգենտինյան հանրապետությունում անգզուշտյուն կլինի կամավորական խմբեր կազմավորելը, բայց նա խոստանում է դյուրին դարձնել անհատ անձանց մեկնումը:

Դուք, անկասկած, կրնոյունք, որ հասել է այս բարի ցանկություններն օգտագործելու պահը. կարելի է ենթադրել, որ այս ամրակազմ ու երիտասարդ տղամարդկանց շրջանում, որոնք կազմում են Ամերիկայի սիրիական գաղութների մեծամասնությունը և որոնց գերակշռող մասը բողե է իր երկիրն օսմանյան տիրապետության կամայականությունից ձանձրացած, մեծ թիվ կկազմեն նրանք, ովքեր կպատասխանեն կոմիտեների կոչին, հենց որ վերջիններս կարողանան նրանց իրագել դարձնել Ֆրանսիայի կուլմից՝ իրենց երկրի հարևանությամբ, Արևելյան լեզեռնի ստեղծման մասին:

Մյուս կողմից, հրամանատար Բոմին ինձ հաշվետվություն ներկայացրեց, համաձայն որի, հայկական կոմիտեները, որոնց ներկայացուցիչներին նա տեսել է Եգիպտոսում, խոստանում են Արևելյան լեզեռնի համար կամավորներ զինվորագրել ի քիվս իրենց հայրենակիցների և, մասնավորապես, հանձինս Ամերիկայում բնակվողների:

Այսպես ես հակվեցի նախատեսելու՝ նկատի ունենալով այս կամավորների զինվորագրումը, հեռելյալ ընդհանուր բնույթի կարգադրությունները.

1/ Սիրիական և հայկական կոմիտեները հանձնարարություն կստանան կամավոր հիմունքներով զինվորագրում սկսելու մասին: Կարևոր է, որ դիվանագիտական բնույթի դժվարություններ չհարուցելու համար, կոմիտեների կողմից զինվորագրման կամպանիա մղվի առանց արտասահմանում մեր գործակալների որևէ միջամտության: Բացի դրանից, ցանկալի կլինի, որ մեր թշնամիների ուշադրությունը չգրավելու և Թուրքիայում մնացող հայերի ու սիրիացիների հանդեպ նրանց բռնությունների չդրողելու համար, կամպանիան տարվի ծայրաստիճան զգուշությամբ և, հնարավորության սահմաններում, առանց գրավի: քաղաքացիական:

2/ Կոմիտեները կասրսհովեն Ամերիկայում զինվորագրված կամավորների տեղավորումը Ֆրանսիա (Բորդո կամ Մարսել) և այն կամավորների տեղավորումը Պորտ-Սալիո, ովքեր կզան Եգիպտոսից կամ Հնդկաստանից, քանի որ ֆրանսիական պետությունը պարտավորվում է արդարացուցիչ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա կոմիտեներին հատուցել, եթե վերջիններս այդ խնդրեն, այն կամավորների ճանապարհաձախները, ովքեր ծառայության համար պիտանի կճանաչվեն և վերջնականապես ծառայության կրննյունվեն:

3/ Կամավորները կներկայանան. - զինվորագրման բյուրոներին Փարիզում (կենտրոնական բյուրո), Բորդոյում կամ Մարսելում՝ եթե ներկայումս ապրում են Ֆրանսիայում:

- Բորդոյի կամ Մարսելի զինվորագրման բյուրոներին՝ եթե ժամանեն Ամերիկայից:

- Պորտ-Սախլի հյուպատոսությանը կամ Կիպրոսում գտնվող Արևելյան լեգեոնի հրամանատարի բյուրոյին՝ եթե բնակվում են Արևելքում:

Նրանք պետք է ներկայացնեն. եթե բնակվում են Ֆրանսիայում՝ պարկեշտ կյանքի և բարքերի վկայական, եթե գալիս են արտասահմանից, ապա իրենց պատվարժանությունը հավաստող՝ այն երկրի ֆրանսիական հյուպատոսի համձնարարագրումը, որը եղել է իրենց բնակության վերջին վայրը կամ, որտեղ բացակայության դեպքում, ֆրանսիական կառավարությանը հավատարմագրված հայկազուն և սիրիական կոմիտեներից մեկի նախագահի կողմից տրված համագործի փաստաթուղթ:

4/ Պատերազմի հարատևության ընթացքում կամավոր զինվորագրումները կընդունվեն Փարիզի, Բուրյոյի և Մարսելի իրագել զինվորական փոխկառավարիչների կողմից կամ Պորտ-Սախլի ֆրանսիական հյուպատոսի կողմից, կամ Արևելյան լեգեոնի հրամանատարի կողմից:

5/ Զինվորագրված կամավորների՝ 3-րդ և 4-րդ կարգով կատարված ճանապարհաձախսերն իմ Դեպարտամենտի կողմից կվճարվեն զինվորագրող կոմիտեի նախագահին կամ, որտեղ բացակայության դեպքում, շահագրգիռ անձին:

6/ Զինվորագրված կամավորների ծախսերը, սկսած նշանց ծառայության ընդունման պահից, կհոգա պետությունը և նրանց անվճար կտեղավորվախ Կիպրոս:

Եթե դուք բարեհաճեք հավանություն տալ այս կարգադրություններին, ձեր իրավասության շրջանակում կլինի այդ մասին հայկական և սիրիական կոմիտեներին տեղեկացնելը՝ զինվորագրման կամայանիսն սկսելու ակնկալությամբ, որը նրանք ձեզ առաջարկել են ձեռնարկել բազմաթիվ առիթներով: Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե ինձ տեղյակ պահեք, հենց որ հնարավոր լինի, այն համաձայնությանը, որը դուք այս հարցի շուրջ պետք է կայացնեք այս կոմիտեների հետ, որպեսզի ինձ հնարավորություն ընձեռեք, ցանկացած պահի, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես, այն հարցում, որը վերաբերում է արտասահմանից ժամանող կամավորների ընդունմանը:

Նմանապես կգա այն նախագիծը կենսագործելու պահը, որը Կահիրեի մեր նախարարին հղված հուկտեմբերի 13-ի ձեր հեռագրի ուշադրության կենտրոնում է, և որով բրիտանական կառավարությանը խնդրվում է մեր տրամադրության ներքո դնել ներկայումս Եգիպտոսում գտնվող սիրիական ծագում ունեցող այն քուրդ գերիներին, որոնք ցանկություն կունենան պայմանավորվածություն կայացնել Արևելյան լեգեոնում կամավոր զինվորագրության ընդունվելու շուրջ և որոնք, այդ հիմունքներով, կընդունվեն հրամանատար Ռոմիոյի կողմից:

Մյաժամանակ այդ կլինի այն առիթը, որով կհայցվի անգլիական կառավարության համաձայնությունը՝ Եգիպտոսում բնակվող այն սիրիացիներին ու լիբանանցիներին ընդգրկելու համար, որոնք հանդես կգան Կիպրոսում սիրիական ստորաբաժանումներում ծառայելու խնդրանքով:

Հիմնվելով վերջապես սեպտեմբերի 28-ի և նոյեմբերի 10-ի ձեր թիվ 3984 և 4580 ճեպագրերի¹ վրա, ես ձեզ եմ հղում, բայի նկատառումներով, հրամանատար Ռոմիոյի գեկուցագրից² մի քաղվածք, որը վերաբերում է Պորտ-Սախլի գաղթականների ճամբարի կացության

1 Արտատպված չեն:

2 Խոսքը վերաբերում է 1916 թ. հուկտեմբերի 28-ի թիվ 1 գեկուցագրին, որն արտատպված չէ: Հրամանատար Ռոմիոն այս գեկուցագրում յոթ կետերով վեր է հանում Պորտ-Սախլում գտնվող Մուսա լեռան հայ գաղթականների բարոյական ու սոցիալական դրությունը: Նա համառոտ է պահանջում է նրանց ընտանիքների անվտանգության երաշխավորումը, որոնք՝ նրանց Կիպրոս մեկնելուց հետո կմնան Եգիպտոսում: Ըստ առիթվ ձեռնարկված միջոցները, հույս է հայտնում նա, կունենան որոշակի ազդեցություն հայ կամավորների բարոյական փճակի վրա: Հրամանատար Ռոմիոն հույս է տածում նաև ակնկալել ֆրանսիացի միսիոներների օգնությունը հայ երեսնների կրթության գործում:

նը:

Եւ գտնում եմ, որ քանի դեռ անգլիական իշխանությունները Ֆրանսիայից համառորեն չեն պահանջի Կիպրոսի այս ճամբարի հարկը և անհրաժեշտության դեպքում՝ դրա տեղափոխումը, շահավետ է պահպանել առկա իրավիճակը:

Ի դեպ, ծերունիների, կանանց և երեխաների տեղափոխումը Կիպրոս, կհանգեցնի մեծ անհարմարավետության՝ խոչընդոտելով Արևելյան լեգեոնի հնարավոր տեղաշարժերի դյուրինությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 216-218).

ՀԱՎԵԼՎԱԾ

1916 թ. նոյեմբերի 15-ին նախարարի ընդունած որոշումը

Թիվ 7549-9/11:

Փարիզ, 15-ը նոյեմբերի 1916 թ.:

1/ Կիպրոսում ստեղծվելու է «Արևելյան լեգեոն», որը համալրվելու է ի թիվս օսմանյան ծագում ունեցող կամավորների, որոնք պատերազմի հարատևության ընթացքում ֆրանսիական դրոշմների ներքո Ասիական Թուրքիայում օգտագործվելու համար ծառայության կընդունվեն իբրև օժանդակ ուժեր:

2/ Վաշտերի քանակը համապատասխան կլինի կամավոր զինծառայության անցնելուն համաձայնություն տվածների թվին: Դրանք կդրվեն ֆրանսիական սպաների և ենթասպաների հրամանատարության ներքո:

3/ Արևելյան լեգեոնականները կվարձատրվեն ֆրանսիական ռազմական Դեպարտամենտի կողմից, որը կապահովի մահ նրանց ապրուստի ծախսը և զինումը: Հատուկ մի հրահանգ կսահմանի նրանց նպաստների չափը, որոնք, ըստ էության, հավասարագոր կլինեն ֆրանսիացի զինվորի նպաստներին:

4/ Ֆրանսիական հրամանատարական կազմը կունենա միևնույն աշխատավարձը, ինչ Արևելյան քանակի զինվորականները:

5/ Հետևակի գումարտակի պարոն հրամանատար Ռոմիոն պատասխանատվություն կկրի «Արևելյան լեգեոնի» առաջին կազմակերպության համար և կստանձնի դրա հրամանատարությունը:

6/ Ամենակարճ ժամկետում նրա տրամադրության ներքո կդրվեն ֆրանսիական հրամանատարական կազմի հետևյալ անդամները.

հետևակի 1 կապիտան,

վաշտի 2 լեյտենանտ,

վարչատնտեսական մասի 1 սպա, որը կստանձնի ֆինանսները,

հետևակի 1 լիազորված սպա,

4 սերժանտ, որոնցից մեկը կլինի ֆինանսները ստանձնած սպայի տեղակալը, և

1 զինվորագրող ենթասպա,

1 ինժեներական ենթասպա:

Այն սպաների կամ օժանդակ աստիճանավորների, որոնց հարկ է նշանակել լեգեոնականներից, ընդունելությունը կկարգավորվի նախարարական հրահանգով:

7/ 10000 ֆրանկի սահմաններում վարկը, որը հարկ է վերագրել Ռազմական նախարար-

րուրյան բյուջեի օրինակարգի 26-րդ հոդվածի ծախսերին, ճամբարների հիմնադրման համար պետք է տրվի Արևելյան լեգեոնի հրամանատարին՝ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջնորդությամբ:

8/ Հայկական և սիրիական կոմիտեների միջոցով Ամերիկայում գինվորագրված օսմանյան հայատակները կընդունվեն ռազմական իշխանության կողմից Բոլորոյում և Մալսեյում: Ջինվորագրման կոմիտեներին կվճարվեն Ամերիկայից Ֆրանսիա եկած այն անձանց ճանապարհածախսերը, որոնց կամավոր գինվորագրմանը հավանություն կտրվի:

Ստորագրված է՝ Լակագ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 220-220 v).

297

Ռազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 8219-9/11: Գաղտնի:

Փարիզ, 4-ը դեկտեմբերի 1916 թ.:
(*Ստացել են* Կաբ. դեկտեմբերի 4-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 5-ին):

Իբրև նոյեմբերի 25-ի իմ թիվ 7919-9/11 ճեպագրի՝ շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից նոյեմբերի 26-ի թվակիր թիվ 7966-9/11 հրահանգի՝ երկու օրինակ (որոնցից մեկը նախատեսված է Եվրոպայի փոխվարչության համար), որով ես սահմանել եմ Արևելյան լեգեոնի կազմավորման մանրամասները:

Այս հրահանգում ես նախատեսել եմ, որ հրամանատար Ռոմիոյի Կիպրոս մեկնելուց հետո, Արևելքում բնակվող հայ և սիրիացի կամավորների զինծառայության ընդունումը Եզիպտոսում, կարող է տեղի ունենալ Պորտ-Սաիլում գտնվող ֆրանսիացի հյուպատոսի կողմից: Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք դիվանագիտական այս գործակալին տալ այնպիսի հրահանգներ, որոնք օգտակար կհամարեք այդ առթիվ: Նրա աշխատանքը դյուրին դարձնելու նպատակով՝ հրամանատար Ռոմիոյի խնդրանքով, ես Պորտ-Սաիլ եմ ուղարկել սերժանտ Ռ-իշարին, որը երկար ժամանակ բնակվել է Եզիպտոսում և խոսում է արաբերեն: Այս ենթասպան կօգտագործվի գինվորագրման գործողությունների ընթացքում, ամբողջությամբ ապահովելով, եթե սպաների բացակայության պատճառով հարկ լինի, տարանցումային ծառայությունը և անցումային փոքր հավաքակալանի ծառայությունը, որը հրամանատար Ռոմիոն կարող է հարկադրված լինել կազմակերպելու Պորտ-Սաիլում:

Մյուս կողմից, հրամանատար Ռոմիոն նոյեմբերի 23-ի թիվ 12 հեռագրով՝, որի պատճենը կցվում է, ինձ տեղեկացնում է, որ հայկական տարբեր կուսակցությունների երեք լիսգոր ներկայացուցիչներ շուտով ափ դուրս կգան Հյուսիսային Ամերիկայում, որպեսզի այն-

1 Ստորագրել է գեներալ Ղյուպորը:

2 Տե՛ս վերը թիվ 296 փաստաթուղթը (և հավելվածը):

3 Տե՛ս ստորև թիվ I հավելվածը:

4 Տե՛ս ստորև թիվ II հավելվածը:

տեղ զինվորագրեն Արևելյան լեգեոնի համար նախատեսվող կամավորներին, և որ ժամանման իսկ պահից, նրանք կներկայանան մեր դիվանագիտական գործակալներին: Ն {որին սրբազնություն} Դ-այլանը ևս մտադիր է լիազոր ներկայացուցիչ ուղարկել Հարավային Ամերիկա՝ սիրիացիների զինվորագրումն այնտեղ կազմակերպելու համար:

Ուժի մեջ է մնում այն պայմանավորվածությունը, ըստ որի արևելյան կոմիտեների պատգամավորների կողմից զինվորագրման կամպանիան պետք է մոլի ամենամեծ զուշուրքամբ, առանց մեր գործակալների միջամտության: Այնուամենայնիվ, ցանկալի է թվում, որ հայ և սիրիացի լիազոր ներկայացուցիչների առաքելության մասին մեր ներկայացուցիչներն Ամերիկայում, ձեր ջանքերի շնորհիվ, զուշացվեն: Նրանց կարելի է, մասնավորապես, կոչ անել կամավորներին տալ բարոյական դիմագծին վերաբերող վկայականներ և դյուրին դարձնել նրանց համար այն փաստաթղթերի ձեռք բերումը, որոնք անհրաժեշտ կլինեն՝ դեպի Ֆրանսիա ուղղություն վերցնող նավ տեղափոխվելու համար:

Այսպիսով, ևս ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք մեր դիվանագիտական գործակալներին երկու Ամերիկաներում տեղյակ պահեք, թե ի՞նչ պայմաններով է Կիպրոսում կազմակերպվել Արևելյան լեգեոնը և նրանց՝ ձեր կողմից նպատակահարմար դիտվող հրահանգներ տաք այն վարքագծի վերաբերյալ, որին նրանք հարկ կունենան հետևելու զինվորագրվող գործակալների և կամավորների հետ առնչվելիս:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 227-227 v).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Հրահանգ Արևելյան լեգեոնի կազմավորման մասին¹

Թիվ 7966-9/11: Գաղտնի:

Փարիզ, 26-ը նոյեմբերի 1916 թ.:

I. *Կազմակերպման սկզբունքը:*

Ֆրանսիական կառավարությունը վճռել է իր օգնությունը ցուցաբերել հայ և սիրիացի ժողովուրդներին, որոնք ցանկություն ունեն մարտնչել թուրքերի դեմ: Հետևաբար, 1916 թ. նոյեմբերի 15-ին Ռազմական նախարարությունը վճռել է ստեղծել «Արևելյան լեգեոնը»², որը բաղկացած է օժանդակ գորքերին պատկանող, կամավոր զինվորագրման միջոցով հավաքագրված օսմանյան ծագում ունեցող մարդկանցից:

Այս լեգեոնը գտնվելու է Ֆրանսիական կառավարության դրամական հոգաժողովաներից: Այդուհանդերձ, քանի որ լեգեոնականները լինելու են օժանդակ զինվորականներ՝ չեն ընդգրկվելու Ֆրանսիական բանակում, իրավունք չեն ունենալու վերքերի, հիվանդության կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում հավակներու ծերության կամ որևէ այլ թոշակի կամ ծառայությունից ազատ արձակման հետ կապված պարգևատրման:

«Արևելյան լեգեոնի» իրամանատարական կազմը կհամալրվի Ֆրանսիական սպանե-

¹ Պատճեններից մեկը փոխանցվել է Հայկական ազգային պատվիրակությանը:

² Տե՛ս վերը թիվ 296 փաստաթղթի հավելվածը:

րով և ենթասպաներով կամ արտասահմանցու կարգավիճակ ունեցող ծառայողներով, որոնց տեղակալներ կարող են նշանակվել լեգեոնականներից ներգրավված օժանդակ հրամանատարական կադրերը:

Այն կկազմակերպվի Կիպրոսում:

Այն նախատեսված է Ասիական Թուրքիայում հունարավոր գործողությունների համար և օգտագործման դեպքում կողմի Սիլիսիայի ռազմածովային դիվիզիայի դեյոնովակալ հրամանատարի՝ գերագույն հրամանատարության ներքո:

Լեգեոնը կարող է կազմալուծվել Ռազմական նախարարի կողմից:

II. Կազմակերպման ընդհանուր հիմունքները:

Արևելյան լեգեոնն ընդգրկում է.

Ա. Շտաբ, որին կցվում է հաշվապահական բյուրո:

Բ. Հետևակային ստորաբաժանումներ, որոնք բաժանված կլինեն զինվորագրված լեգեոնականների թվին համապատասխան վաշտերի:

Այս վաշտերի կազմը կլինի այնպիսին, ինչպիսին նախատեսվել է անձնակազմերի ցուցակում, որը կցված է սույն հրահանգին (հավելված թիվ 1): Ֆրանսիական և օժանդակ հրամանատարական կազմը կձևավորվի աստիճանաբար:

Լեգեոնականները կխմբավորվեն հատուկ ստորաբաժանումներում՝ ըստ իրենց ազգության և իրենց կրոնի:

Վաշտերը կմիավորվեն, երբ նրանց քանակը թույլ տա՝ 3, 4 կամ 6 վաշտից բաղկացած գումարտակներում: Դրանց հրամանատար կնշանակվի Ֆրանսիացի կապիտան կամ լեյտենանտ:

Գ. Առողջապահական ծառայություն, որի անձնակազմը համամասնության մեջ կլինի լեգեոնի անձնակազմի հետ և կհաշվարկվի Ֆրանսիայում զինվորագրված հետևակային ստորաբաժանումների համար սահմանված դոտացիայի հիման վրա:

Դ. Գումակ, որը լեգեոնի Կիպրոսում գտնվելու ընթացքում կսահմանափակվի միայն տնտեսական բնույթի անհրաժեշտ փոխադրամիջոցներով (արաբների):

III. Զինվորագրում:

Արևելյան լեգեոնականների զինվորագրումը տեղի կունենա միայն հայերին, սիրիացիներին կամ արաբներին՝ կամավոր զինձառայության ընդունելու միջոցով:

Կամավոր զինձառայության ընդունման պայմանավորվածությունները կկայացվեն պատերազմի հարատևության ընթացքում և Թուրքիայի դեմ մարտնչելու համար:

Այն կամավորները, որոնք ցանկություն կունենան պայմանագիր կնքելու կամավոր զինձառայության ընդունվելու համար, պետք է ներկայանան. 1/ Փարիզի (կենտրոնական բյուրո), Բուդոյի և Մարսելի զինվորագրման բյուրոներին՝ եթե ապրում են Ֆրանսիայում. Բուդոյի և Մարսելի բյուրոներին՝ եթե ժամանեն Ամերիկայից:

2/ Ֆրանսիայի հյուպատոսությանը Պորտ-Սաիդում կամ Կիպրոսում գտնվող լեգեոնի հրամանատարի բյուրոյին՝ եթե արևելյան ծագում ունեն:

Նրանք պարտավոր կլինեն.

- եթե բնակվում են Ֆրանսիայում՝ ներկայացնել պարկեշտ կյանքի և բարքերի վկայական.

- եթե գալիս են արտասահմանից՝ ներկայացնել իրենց պատվարժանությունը հավաստող՝ այն երկրի ֆրանսիական հյուպատոսի հանձնարարագրումը, որը եղել է իրենց բնակության վերջին վայրը կամ, դրա բացակայության դեպքում, ֆրանսիական կառավարությանը հավատարմագրված հայկական և սիրիական կոմիտեներից մեկի նախագահի կողմից տրված համագործակցության փաստաթուղթ:

Ուղղակիորեն Կիպրոսում կամավոր զինծառայության ընդունման շուրջ պայմանավորվածությանը համաձայնություն տալը թողնվում է լեզեոնի հրամանատարի կայացողությանը:

Չինվորագրումները կրնողունվեն կամ վերը նշված վայրերի իրազեկ փոխկառավարիչների կողմից, կամ Պորտ-Սալիի ֆրանսիական հյուպատոսի կողմից, կամ Արևելյան լեզեոնի հրամանատարի կողմից:

Չինվորագրման ակտը կհամապատասխանի սույն հրահանգին կցված նմուշին (հավելված թիվ 2):

Չինվորագրման ընդունման պայմանագրերը շեղյալ կհայտարարվեն կամ լեզեոնի լուծարման դեպքում, կամ ուղղիչ միջոցների կիրառման պարագայում, կամ ֆիզիկապես պիտանի չլինելու դեպքում՝ նույնիսկ, եթե այդ պայմանավորված է հիվանդությամբ, վերջ ստանալով կամ պատահաբար:

Հայ, սիրիացի կամ արաբ ենթասպաները, որոնք ներկայումս ծառայում են Արտասահմանյան լեզեոնում, կարող են իբրև իրենց կորպուսից գործողվածներ ընդունվել Արևելյան լեզեոն:

IV. Ֆրանսիական հրամանատարական կազմի և իբրև արտասահմանցի ծառայող կայրերի կարգավիճակը:

Ա/ Վարչական իրավիճակը:

Արևելյան լեզեոնին կցված ֆրանսիացի սպաները, ենթասպաները, կապրալները և զինվորներն ազատ կարձակվեն իրենց կորպուսներից:

Բ/ Առաջընթացը:

Ինչ վերաբերում է առաջընթացին, լեզեոնի հրամանատարն այս անձնակազմի նկատմամբ ունի կորպուսի ղեկավարի արտոնություններ: Նա կազմում է շարքային ամբողջ անձնակազմի առաջընթացի աղյուսակը և նշանակումներ կատարում թափուր պաշտոններում:

Սպայական կազմի օգտին արվող առաջարկությունները հղվում են նախարարին (Աֆրիկայի և Արևելքի ենթարևմտին):

Գ/ Աշխատավարձերը և փոխհատուցումները (հավելված թիվ 3):

Եզիպտոսում կամ Կիպրոսում ափ դուրս գալու շրջանից ի վեր, ֆրանսիական զորքի սպաները և ճարտիկներն իրավունք կունենան օգտվել այն նպաստներից, որոնք հատկացվել են Արևելյան բանակի միևնույն աստիճանն ունեցող օժանդակ ուժերին:

Իբրև ֆրանսիացի ծառայող այն զինվորականները (անկախ ունեցած կոչումներից), որոնք կցուցաբերեն Սիրիայի արաբներն, հայերեն և թուրքերեն լեզուների խորին իմացության ապացույց, կունենան ամսական պարզև՝ 15 ֆրանկի սահմաններում, այնպիսի պայմաններով, որոնք սահմանվելու են Արևելյան լեզեոնի հրամանատարի կողմից: Այս փոխհատուցումը չի տրվի այն զինվորականներին, որոնք ներգրավված են թարգմանիչների անձնակազմերում:

Աշխատավարձը և փոխհատուցումները կվճարվեն յուրաքանչյուր ամիս. սպաներին՝

ժամկետը լրանալուց հետո, գործին՝ նախօրոք և երկու շաբաթվա կտրվածքով:

Դ/ Ծառայության և բյուրոյի ծախսերը:

Ծառայության կամ գրասենյակային ծախսեր ստանալու իրավունք ունեն այն սպաները, որոնք հիշատակված են սույն հրահանգի 4-րդ հավելվածում և համաձայն այն սակագուցակների, որոնք այդտեղ նշված են:

V. Արևելյան լեզեոնի օժանդակ ուժերի կարգավիճակը:

Ա/ Հարչական իրավիճակը:

Արևելյան լեզեոնի կամավորները ուղղակի օժանդակ ուժեր են. նրանք կարող են հասնել տարբեր կոչումների՝ մինչ օժանդակ վաշտի հրամանատարի կոչումը ներառյալ:

Անկախ այն բանից, թե ինչպիսի՞ն է նրանց կոչումը, նրանք չեն կարող մույնացվել միևնույն կոչումն ունեցող ո՛չ ֆրանսիացի զինվորականների, ո՛չ իբրև արտասահմանցի ծառայող զինվորականների հետ և հետևաբար կարող են իրականացնել իրենց հրամանատարությունը միայն օժանդակ լեզեոնականների նկատմամբ:

Բ/ Առաջընթացը:

Արևելյան լեզեոնի հրամանատարը կազմում է շարքային անձնակազմի առաջընթացի աղյուսակը և նշանակումներ կատարում քափուր պաշտոններում՝ մինչ սերժանտի աստիճանը ներառյալ:

Լիազորված սպայի, կրտսեր լեյտենանտի, լեյտենանտի և կապիտանի կոչումները տրվում են նախարարի կողմից, համաձայն Արևելյան լեզեոնի հրամանատարի առաջարկության:

Մինչ նոր հրամանը չի պահանջվի վաղեմության ոչ մի պայման:

Գ/ Աշխատավարձը և փոխհատուցումները:

Սպաները. նրանց աշխատավարձը կլինի նույնը, ինչ միևնույն կոչումն ունեցող ֆրանսիացի սպաների աշխատավարձը (ստորադաս աստիճանավորների), առանց փոխհատուցումների, բացառությամբ, անհրաժեշտության դեպքում, ուտելիքի պաշարների առանձնահատուկ փոխհատուցումից:

Սպաների աշխատավարձը վճարվելու է ամեն ամիս՝ ժամկետը լրանալուց հետո:

Շարքայիները. Աշխատավարձի սակագուցակները նշված են սույն հրահանգի թիվ 5 հավելվածում: Դրանք տարբերվում են որևէ այլ փոխհատուցումից: Շարքայիների աշխատավարձը վճարվում է նախօրոք՝ ամեն ամսի 1-ին, 6-ին, 11-ին, 16-ին, 21-ին և 26-ին: Օժանդակ ուժերի անձնակազմի (սպաներ և շարքայիներ) աշխատավարձը սահմանված է ֆրանսիական դրամով: Դրա վճարումը չի կարող տեղիք տալ փոխանակման տատանումների հետ կապված ոչ մի գեղջի:

VI. Մնումը:

Ա/ Իբրև արտասահմանցիներ ծառայող ֆրանսիական գործի սպաները և շարքայիները:

Նրանք իրավունք ունեն հավակնել դաշտային բնամթերային նպաստների (կանոնավոր մթերաբաժին) կամ, հսկառակ դեպքում, ուտելիքին համապատասխանող փոխհատուցման՝ սույն հրահանգի 3-րդ հավելվածում նշված հիմունքներով:

Արևելյան լեզեոնի հրամանատարը կկարողանա ապահովել զինվորների համար մեկ

կամ բազմաթիվ օրապահիկներ: Նրանք, ովքեր բույլտվություն կստանան ապրելու առանձին, կժողովեն ուտելիքին համապատասխանող փոխհատուցումները, որոնց տոկոսը կսահմանվի Սիրիայի ռազմածովային դիվիզիան գլխավորող ծովակալի կողմից՝ Արևելյան լեգեոնի հրամանատարի առաջարկությամբ:

Բ/ Օժանդակ ուժերի գործի սպաները և շարքայինները:

1/ Օժանդակ ուժերի սպաներն իրավունք ունեն հավակնելու միևնույն բնամթերային նպաստներին, ինչ ֆրանսիացի սպաները կամ, անհրաժեշտության դեպքում, ուտելիքին համապատասխանող փոխհատուցման:

2/ Սկզբունքայնորեն, օժանդակ ուժերի լեգեոնականներն ապահովում են իրենց սնունդը՝ ամենօրյա աշխատավարձի միջոցով: Այդուհանդերձ, Արևելյան լեգեոնի հրամանատարի գործառնությունների ազատություն ունի օրապահիկների մեջ դրանք միավորելու հարցում և սահմանելու այն պահումները, որոնք հարկ է այս առթիվ առանձնացնել նրանց աշխատավարձից:

Գ/ Հիեր և ջորիներ:

Նրանց մերերաբաժինն այնպիսին է, ինչպիսին սահմանված է 1887 թ. սակացուցակով, որը նախատեսված է 1912 թ. հուլիսի 25-ի շրջաբերականով. այն է՝

Հետևակի ծիեր

Մքերաբաժին II	խոտ 3 կ {իլոգրա}մ 500 վարսակ 5 կ {իլոգրա}մ 500
<i>Ջորիներ</i>	խոտ 3 կ {իլոգրա}մ 500
Մքերաբաժին IV կամ մքերաբաժին V	վարսակ 5 կ {իլոգրա}մ կամ գարի 4 կ {իլոգրա}մ 500

Գ/ Վճարման ենթակա ուտելիքները:

Վճարման ենթակա հիմունքներով ուտելիքներ կարող են տրվել սպաներին և լեգեոնականներին օրվա մքերաբաժնի սահմաններում՝ կամ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջոցով, կամ գորքերի վարչության ծառայության միջոցով, որը կգործի լեգեոնի հետ կապի մեջ լինելով, և երբ մատակարարումների վիճակն այդ բույլատրի:

VII. Ձգեստափորումը, հանդերձափորումը, ճամբարային տեղափորումը, գինումը, լծասարքը:

Ա/ Արևելյան լեգեոնին կցված ֆրանսիացի սպաներ, որոնք ծառայում են իբրև արտասահմանցիներ:

Սպաների և լիագորված սպաների համազգեստը միևնույնն է. ինչ աթիլիցի հետևակայիններին (մահող և կանաչ-շագանակագույն քաթան). կարմիր գինանշանի վրա համարները կփոխարինվեն ոսկեգույն խորիլայանշաններով:

Ծառայության մեջ գտնվող սպաները կպահպանեն իրենց ծառայությունը գանազանող նշանները:

Կորպուսի հրամանատարի կողմից սահմանված պայմաններում, քե՛ առաջիններին և քե՛ մյուսներին կբույլատրվի օգտագործել իրենց սկզբնական կորպուսների համազգեստը:

Բ/ Արևելյան լեգեոն գործողված ֆրանսիացի շարքայիններ կամ արտասահմանցու կար-

գամիճակով ծառայողներ:

Աֆրիկայի կամպանիայի ալժիրյան հետևակայինների համազգեստ՝ մահուղից և կանաչ-շագանակագույն քաթանից:

Դեղին բրոյա խորհրդանշան՝ կարմիր զինանշանի վրա:

Ծառայության մեջ գտնվող շարքայինները կպահպանեն իրենց ծառայության համազգեստը:

Գ/ Սպաները և օժանդակ լեգեոնականները:

Աֆրիկայի կամպանիայի ալժիրյան հետևակայինների կանաչ-շագանակագույն համազգեստ, որ բաղկացած է.

- մահուղե շինելից,
- մահուղե վերնաշապիկից,
- մահուղե կարճ ու լայն շալվարից,
- քաթանե վերնաշապիկից և քաթանե կարճ ու լայն շալվարից,
- կարմիր բրոյա գոտուց,
- ոտքի պաճիճից,
- կոշիկներից:

Կարմիր մահուղե զինանշանները կունենան դեղին, բրոյա 5 թևանոց աստղեր:

Օժանդակ ուժերի սպաների համար այդ աստղը կլինի ոսկեգույն: Գլխի ծածկոցը քրիստոնյա լեգեոնականների համար կլինի սաղավարտից և ոստիկանի կանաչ-շագանակագույն գոկից, մահմեդական լեգեոնականների համար՝ ֆեսից:

Օժանդակ ուժերի սպաների կոչումների նշանները միևնույնն են, ինչ ֆրանսիացի սպաների նշանները: Օժանդակ ուժերի զգեստը, հանդերձանքը և զենքը նրանց կտրամադրվի անվճար՝ իբրև Ռազմական նախարարության կողմից կատարված առաջին մուծում: Դրանք նորով կփոխարինվեն նրանց հաշվին:

Դ/ Ձորքի անհատական և կոլեկտիվ զինամր, զգեստավորումը, հանդերձավորումը, ճամբարային տեղավորումը գտնվում են Ռազմական նախարարության դրամական հոգածության ներքո:

VIII. Կարգապահությունը:

Լեգեոնականների նկատմամբ կկիրառվեն ֆրանսիական զորքի կորպուսներում ուժի մեջ գտնվող կարգապահական կանոնակարգերն ու պատժամիջոցները:

Բանտում անցկացրած օրերը կհանգեցնեն օժանդակ ուժերի լեգեոնականների աշխատավարձի քառորդի պահումին. մի տեղանոց խցիկում անցկացրած օրերը կհանգեցնեն աշխատավարձի կեսի պահումին: Այս պահումներից առաջացած գումարը կօգտագործվի այն ստորաբաժանման սննդի բարելավման համար, որում ընդգրկված է պատժի ենթարկված լեգեոնականը: Լեգեոնի հրամանատարն իրավասու է լիազորված սպայի աստիճանին ստորադաս՝ օժանդակ ուժերի աստիճանավորներին աստիճանազրկելու կամ շարքայինի աստիճանի փոխադրելու: Օժանդակ ուժերի լիազորված սպաների և սպաների աստիճանափոխման կամ աստիճանազրկման շուրջ վճիռներ կկայացվեն նախարարի կողմից՝ Արևելյան լեգեոնի հրամանատարի առաջարկության հիման վրա:

Ծանր շարժառիթների պատճառով, Արևելյան լեգեոնի հրամանատարը կկարողանա օժանդակ ուժերի լեգեոնականների զինվորագրման անհատական ակտը լուծարելուն վե-

ուսերնող վճիռ կայացնել:

Օժանդակ ուժերի լեգեոնականները ենթակա կլինեն ռազմական խորհուրդների դատապարտությանը, ըստ զինվորական արդարադատության օրենսգրքում սահմանված ընթացակարգի:

IX. Սննդամթերքների, անասնակերերի և գոյքի մատակարարումը:

Հրամանատարական կազմի սննդամթերքները, կենդանիների անասնակերերը և Արևելյան լեգեոնին անհրաժեշտ գոյքի բոլոր տեսակները գտնվում են Ռ-ազմական նախարարության դրամական հոգաժողովան ներքո:

Սլրիայի ռազմածովային դիվիզիան ապահովում է նրա սննդամթերքը և լիազորում լեգեոնի հրամանատարին, եթե հարկ լինի, տեղում գնումներ կատարելու:

Ապրուստի տարբեր ծախսերը, որոնք նախատեսված չեն սույն հրահանգով, կարող են կատարվել լեգեոնի հրամանատարի կողմից՝ ռազմածովային դիվիզիայի հրամանատարի քույտվությամբ:

X. Վարչությունը:

Վարչական և հաշվապահական աշխատանքները կիրականացվեն համաձայն 1911 թ. սեպտեմբերի 19-ի հրահանգում (Շ {տաբի} պ {աշտոնական} տ {եղեկագիր}, հատ {որ} 1) սահմանված ընդհանուր սկզբունքների:

Այնուամենայնիվ, կատեղծվի միայն մեկ հաշվապահական բյուրո, անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի լեգեոնի անձնակազմը և ողջ Արևելյան լեգեոնի համար վարվող գործարարությունը կսահմանափակվի՝ գումարտակի համար վերոհիշյալ հրահանգի 5-րդ հոդվածով նախատեսված գործարարությամբ: Այդուհանդերձ, օժանդակ անձնակազմի համար քաղաքացիական կացությանը վերաբերող մատյան և անհատական հաշվեգրքայիններ չեն պահվի:

Ծախսերը կհրամանագրվեն և կվճարվեն Սլրիայի ռազմածովային դիվիզիայի կողմից՝ Ռ-ազմական նախարարության դեպարտամենտի հաշվին, Արևելյան լեգեոնի հրամանատարի կողմից տրված և վավերացված ցուցակների հիման վրա:

Ծախսերն արդարացնող փաստաթղթերը վերադաս ծառայությունների կողմից կհղվեն Ռ-ազմական նախարարությանը՝ վերահսկողության վարչություն (արժեթղթերի և կարգադրությունների բյուրո):

[Ստորագրված է] գեներալ Ռ-որ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 228-238).

II

Եգիպտոս և Սիրիա գործուղված հրամանատար Ռ-ոմիոն Ռ-ազմական նախարար, գեներալ Ռ-ոքին

Հ. թիվ 12:

Պորտ-Սաիդ, 23-ը նոյեմբերի 1916 թ., ժ. 17.10-ին:
(*Ստացել է* Կաբիներտո նոյեմբերի 24-ին, ժ. 10.30-ին):

Ներկա իրավիճակը. առաջին ջոկատը պատրաստ կլինի Կիպրոս մեկնելու, հենց որ

անգլիական բանակից փոխարինարար վերցված կամ նրա կողմից զիջված՝ առաջին կարիքների համար անհրաժեշտ գույքը նույնքերի 30-ի սահմաններում նավից բեռնարտավիլի:

2/ Անգլիական վարչությունը շատ հարմարավետ գնով կզիջի սննդամթերքի պաշարների մեծ մասը, ինչպես Մուեզի ստորաբաժանման համար: Ես խնդրում եմ այս գնումներն անհապաղ վճարելու թույլտվություն՝ ամենօրյա ընդհանուր աշխատավարձի հաշվին, այլապես վճարման ենթակա այս սննդամթերքների հանուրդը հարկադրված կլինեք անել դուք՝ այդ աշխատավարձից:

3/ Պորտ-Սալոյի և Եզիպտոսի հայկական անձնակազմերը կկազմեն 3 վաշտ՝ պահեստային զորամասի տրոհման միջոցով, որտեղից և սպասվում են հրամանատարական կադրեր: Այսպիսով, անհրաժեշտ է նշանակել երկու նոր զորամասի հրամանատարական կադրեր:

4/ Հայկական բոլոր կուսակցությունները ներկայացնող 3 զինվորագրող լիազոր ներկայացուցիչներ կմեկնեն Հյուսիսային Ամերիկա և կներկայանան մեր դիվանագիտական գործակալներին: Խնդրվում է նրանց զուշացնել:

5/ Ես չեմ ստացել գաղթականների ճամբարի ֆրանսիական վարչությանը վերաբերող ձեր որոշումը: Անգլիական վարչության պայմաններում, ներկա կացությունը, որն անորոշ է և խիստ նորբ բնույթ ունի, չի կարող շարունակվել անվտանգ՝ ռազմական և քաղաքական արդյունավետության տեսակետից:

6/ Ոչ մահմեդական սիրիացիներ. Ն {որին սրբազնություն} և Դարյանը, որն անառարկելի հեղինակություն ունի, խոստանում է 500 մարդ Եզիպտոսից, 1500-ը՝ Հարավային Ամերիկայից, ուր լիազոր ներկայացուցիչներ է ուղարկելու: Այսպիսով, հարկ է լիքանսման պահեստային զորամասի համար իբրև հրամանատարական կադրեր նախատեսել Բեյրութի նախկին փոխնուպատոս, լեյտենանտ Կուրնուրին՝ Սալոնիկի գումարտակի շտաբից և լիբանանցի սերժանտ Բուստանիին՝ Աֆրիկայի հետևակային 2-րդ գնդից, որոնք շատ օգտակար կլինեն առաջին այս փուլում:

7/ Մահմեդական սիրիացիներին հարկ է հավաքագրել գլխավորապես Ամերիկայում: Հարցը մնում է հետաձգված:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, f. 247).

III

Ընդհանուր բնույթի կարգադրություններ

Որոշվել է ձեռնամուխ լինել «Արևելյան լեգեոնի» ստեղծմանը, որը բաղկացած կլինի օսմանյան ծագում ունեցող ռազմական օժանդակ ուժերից և կզտնվի ֆրանսիացի սպաների և ենթասպաների հրամանատարության ներքո:

Զինվորագրվելու ցանկություն ունեցող հայերը և սիրիացիները կպարտավորվեն թուրքիայում օգտագործվելու համար ֆրանսիական դրոշների ներքո ծառայել պատերազմի հարատևության ընթացքում: Նրանք ստորաբաժանումներում կբաշխվեն ըստ իրենց ազգության և կրոնի:

1/ Սիրիական և հայկական կոմիտեները հանձնարարություն կատանան կամավոր հիմունքներով զինվորագրում սկսելու մասին: Կարևոր է, որ դիվանագիտական բնույթի դժվարություններ չհարուցելու համար, կոմիտեների կողմից զինվորագրման կամավանիստ տարվի առանց ֆրանսիական հյուպատոսական և դիվանագիտական գործակալների

որևէ միջանորոյն: Բացի դրանից, ցանկալի կլինի, որ մեր թշնամիների ուշադրությունը չգրավելու և Թուրքիայում մնացող հայերի ու սիրիացիների հանդեպ նրանց բռնությունների չդրվելու համար, կամպանիան տարվի ծայրաստիճան զգուշությամբ և, հնարավորության սահմաններում, առանց որևէ քարոզչության:

2/ Կոմիտեները կապահովեն Ամերիկայում զինվորագրված կամավորների տեղափոխումը Ֆրանսիա (Բորյո կամ Մարսել) և այն կամավորների տեղափոխումը Պորտ-Սաիդ՝ ովքեր կզան Եգիպտոսից կամ Հնդկաստանից, քանի որ Ֆրանսիական պետությունը պարտավորվում է արդարացուցիչ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա կոմիտեներին հատուցել, եթե վերջիններս այդ խնդրեն, այն կամավորների ճանապարհածախսերը, ովքեր ծառայության համար պլտանի կճանաչվեն և վերջնականապես ծառայության կընդունվեն:

3/ Կամավորները կներկայանան.

- Բորյոյի կամ Մարսելի զինվորագրման բյուրոներին՝ եթե ժամանեն Ամերիկայից:

- Պորտ-Սաիդի հյուպատոսությանը կամ Կիպրոսում գտնվող Արևելյան լեգեոնի հրամանատարի բյուրոյին՝ եթե բնակվում են Արևելքում:

Նրանք պետք է ներկայացնեն.

- եթե բնակվում են Ֆրանսիայում՝ պարկեշտ կյանքի և բարքերի վկայական.

- եթե գալիս են արտասահմանից, ապա իրենց պատվարժանությունը հավաստող՝ այն երկրի ֆրանսիական հյուպատոսի հանձնարարագրումը, որը եղել է իրենց բնակության վերջին վայրը կամ դրա բացակայության դեպքում, ֆրանսիական կառավարությանը հավատարմագրված հայկական և սիրիական կոմիտեներից մեկի նախագահի կողմից տրված համագոր մի փաստաթուղթ:

4/ Պատերազմի հարատևության ընթացքում կամավոր զինվորագրումները կընդունվեն կամ Փարիզի, Բորյոյի և Մարսելի իրագեկ զինվորական փոխկառավարիչների կողմից, կամ Պորտ-Սաիդի ֆրանսիական հյուպատոսի կողմից, կամ Արևելյան լեգեոնի հրամանատարի կողմից:

5/ Չինվորագրված կամավորների՝ 3-րդ և 4-րդ կարգով կատարված ճանապարհածախսերն իմ Դեպարտամենտի կողմից կվճարվեն զինվորագրող կոմիտեի նախագահին կամ, դրա բացակայության դեպքում, շահագրգիռ անձին:

6/ Չինվորագրված կամավորների ծախսերը, սկսած նրանց ծառայության ընդունման պահից, կհոգա պետությունը և նրանց անվճար կտեղափոխի Կիպրոս:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 890, ff. 248-248 v).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝ ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար, գեներալ Ժոֆրին

Ճ. քիվ 3405: Գաղտնի:

Լոնդոն, 1-ը դեկտեմբերի 1916 թ.:
(Սուսցել են Կաբ. դեկտեմբերի 5-ին,
ԲՇ-ի Աֆրիկայի ենթաբաժինը դեկտեմբերի 6-ին):

Ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից Սիրիայում՝ Կարմել լեռան շրջանում գտնվող Աք-
լիտի բնակիչներից մեկի գեկուցագիրը, որը հենց նոր ինձ հանձնեց Ուոր Օֆիսը:

Դա այն գեկուցագրի շարունակությունն է, որը ես ձեզ եմ հղել 1916 թ. նոյեմբերի 3-ի քիվ
3205 իմ ճեպագրով¹:

ՀԱՎԵԼՎԱԾ

Կարմել լեռան շրջանում գտնվող (Սիրիա) Աքլիտի բնակիչներից մեկի գեկուցագիրը՝ հայկական կոտորածների վերաբերյալ

Թարգմանություն:

27-ը նոյեմբերի 1916 թ.:

Այս գեկուցագրի հեղինակը երկյուղում է, որ պատերազմի սկզբից ի վեր հայերի նկատ-
մամբ քուրքերի դրսևորած վատ վերաբերմունքին առնչվող պատկերը, որը ներկայացնում
է, կարող է չափազանցված թվալ: Հենց այսպիսի տրամադրվածությամբ է մա նկարագրում
այն վայրագությունները, որոնց մեղավոր ճանաչվում են քուրքերը:

Հեղինակը բուն Հայաստանում չի եղել, բայց պատերազմական գործողությունների
սկզբնավորումից ի վեր բնակվել է Սիրիայում: Նա այցելել է Կոնիս և Կոստանդնուպոլիս
ու ճանաչում է շատ մարդկանց, նույնիսկ գերմանացիների շրջանում:

Կոտորածներին վերաբերող առաջին տեղեկությունները. 1915 թ. հոկտեմբերի և դեկ-
տեմբերի լինթացքում, Պաղեստինում իբրև ֆերմերներ հաստատված գերմանացիներն
այնտեղից եկան Հայֆա ու Յաֆֆա և առաջիններն էին, որ տեղ հասցրին հայերի՝ ընթաց-
քի մեջ գտնվող զանգվածային կոտորածների բոքը: Սիրիայի և Պաղեստինի քերքերն այդ
մասին չէին խոսում: Այս գերմանացիները նախ՝ պնդեցին, որ սակավաթիվ տեղեկություն-
ներ ունեն, ասելով, թե իրենք պարզապես լսել են փաստերին վերաբերող պատմություններ,
որոնք իրենց խիստ չափազանցված են թվացել:

Թուրքական ծրագիրը. Այնուամենայնիվ, այդ հայտարարություններից և այնպիսի
հայտարարություններից, որոնք նրան էին արել Դամասկոսում հանդիպած այլ գերմանա-
ցիներ, հեղինակը կարողացել է եզրակացնել, որ ըստ այդ մարդկանց՝ քուրքերը վճռել էին
ռչնչացնել բոլոր հայերին, բացառությամբ՝ շուրջ կես միլիոնի:

Տարածաշրջանում ապրող գերմանացիների կարծիքը. Հարկ է գերմանացիներին
պատշաճը մատուցել, այն է՝ նման կոտորածի գաղափարն այս պահին, նրանց սարսափով

¹ Արտատպված չէ:

էր համակում: Այդուհանդերձ, հարկ է բացառություն անել նրանցից մեկի համար. ասում են, թե ոմն մայրո Պոլ հայտարարում էր, թե ցավալի է, որ 500000 հայեր խնայվել են: Այդ քիվը նրան չափազանցված էր քվում: Պաղեստինի գերմանացիները ետ են ուղարկել իրենց ընտանիքները, բացահայտորեն ասելով, որ թուրքերը կարող են հաջողությամբ, այսօր չէ վաղը, իրենց հանդեպ կիրառել այն մեթոդները, որոնք գործադրել էին հայերի նկատմամբ:

Երկայնորոտ երկայնքով սփռված հայերի դիակներ. Նմանապես տարածվում էին այնպիսի ասեկոսներ, համաձայն որոնց, կարելի էր Անատոլիա-Սիրիա գծի երկայնքով տարածված տեսնել հազարավոր դիակներ: Անձամբ հեղինակը կարող է հավաստել այդ լուրերը շնորհիվ այն տեղեկությունների, որոնք ստացել է 1915 թ. դեկտեմբերին Կոստանդնուպոլսից Պաղեստին ճանապարհորդած իր քյոջից: Նա տեսել է ճանապարհի երկու կողմերին տարածված հազարավոր հայերի՝ տղամարդկանց, կանանց և երեխաների: Որոշ վայրերում թուրք կանայք շրջմթջում էին դիակները՝ կողոպտելու համար այն ամենն, ինչը կարող էր որոշ արժեք ներկայացնել: Մեկ այլ վայրում՝ մարմինները հոշոտվում էին շների կողմից: Ամենուր հարյուրավոր կմախքներ էին սպիտակին տալիս:

Գլուխբերում, եթե ոչ Օսմանիեում, այդ նույն անձնավորությունը տեսել է հազարավոր տենդոտ և սովից մահացող հայերի: Հրաման էր տրվել նրանց դեպի հարավ տանելու մասին, բայց քանի որ փոխադրամիջոցները չէին բավականացնում, նրանք շաբաթներ շարունակ սպասում էին այդտեղ, պառկած կայարանի շրջակայքում, կառամատույցների վրա, իսկ մի քանիսը՝ նույնիսկ գծի վրա: Երբ ժամանել է գնացքը, շատերին դրա վրա են հրել և լոկոմոտիվն անցել է նրանց վրայով, ի մեծ ուրախություն մեքենավարի, որը դիմելով իր բարեկամներին գոչելիս է եղել. «Դուք տեսա՞ք: Ես հենց նոր ջարդուխտրոյ արեցի այս կեղտոտ հայերից մոտ հիսունին»:

Թուրք սպաների դիրքորոշումը. Այս տեսարանի առջև հեղինակի բույրն ուշաքափվել է: Երբ նա ուշքի է եկել, ֆրանսերեն խոսող երկու սպա նրան հանդիմանել են հայրենասիրության բացակայության համար, վկայակոչելով, որ հայերը Թուրքիայի թշնամիներն են: Նա նաև մանրամասներ է հաղորդում այս դժբախտների շրջանում թշվառության և մահացության մասին, որոնց պատճառ էր դարձել մարդատար և ապրանքատար վագոններում նրանց կիտելու եղանակը, երբ մեյթ ընդ մեյթ նրանց գնացք էր տրամադրվում:

Տիֆը. Տիֆը պատճառել է ամենամեծ ամայությունները: Դիակները բազում օրեր մնում էին անքաղ. մի բարձրաստիճան թուրք սպա այդ առթիվ հեղինակին տվել է հետևյալ բացատրությունը. այս ձևով ցանկանում են զարկ տալ վարակի օջախին և հավելել զոհերի թիվը՝ կենդանի մնացածների շրջանում: Այդուհանդերձ, հայերը ճաշակել են վրեժխնդրության հաճույքը, որովհետև արիավիրքը միայն նրանց շրջանում չէր մոլեգնում. ողջ նահանգը, որով անցել են այս գաղթականները, ամայացված է եղել. տասնյակ սիրիական գյուղեր, համաձայն տեղեկացնողի խոսքերի, դատարկ են եղել բնակիչներից, որոնք բոլորը դարձել էին տիֆի զոհերը: Որևէ սանիտարական միջոց չի ձեռնարկվել համաճարակը դիմակայելու համար:

Ունեցվածքի կողոպուտը. Հայերը մեկնելու հրաման են ստացել առանց նախապես զգուշացվելու: Նրանց որևէ ժամկետ չի տրվել, որը և նրանց կարող էր թույլատրել իրենց հետ տանելու այն, ինչն իրենց էր պատկանում կամ որևէ ձևով տնօրինելու ունեցվածքը: Թուրքերը բռնագրավել են ամեն ինչ և նույնիսկ աղքատ մարդկանցից խլել այն մի քանի իրերը, որոնք նրանք ցանկություն են հայտնել տանելու իրենց հետ:

Փոխադրամիջոցների բացակայությունը. Փոխադրամիջոցների անթիվ-անհամար պա-

հանջարկը մի փոքր անց գնելը դարձրել է անմատչելի: Հասան Բեյուտի [sic] մոտ՝ Տավրոսի լեռներում, հեղինակը տեսել է ձյան մեջ պատկած և փոխադրամիջոցների սպասող հագաբավոր հայերի: Նույնպիսի վիճակ էր տիրում Հալեպում և այլ կայաքաղաքներում: Ոչ մի որոշում չէր ընդունվել դիմակայելու այն կացությանը, որը ստեղծվել էր հայ ժողովրդի տեղահանության հրամանի պատճառով, մի բան, որը հարկ է վերագրել որքան բուրբերի կողմից բույլ տրված անփութությանը, նույնքան էլ նրանց անկարողությանը:

Օտարերկրյա հասարակական կարծիքը. Որոշ ժամանակ անց, հասարակական կարծիքը Եվրոպայում և, մասնավորապես, Ամերիկայում սկսել է հուզվել:

Ջեմալ փաշան. Ջեմալ փաշան այնժամ մեկնել է Կոստանդնուպոլիս և պնդել, որ կոտորածները դադարեցվեն, նշելով, որ այդ ոչ միայն հանցագործություն է, այլև սխալմունք: Ի դեպ, նա նախատեսում էր բոլոր այս մարդկանց օգտագործել իբրև աշխատուժ, որոնց կարելի էր հավաքագրել հասարակական այն օգտավետ աշխատանքների համար, որոնք նա իրականացնում էր Սիրիայում և Պաղեստինում: Ասում են, որ Թալեաթը սկզբնական շրջանում տրամադրված չի եղել զիջելու, բայց Ջեմալը բավական հզոր է գտնվել՝ շրջանցելու համար յուրաքանչյուր ընդդիմություն և այս ձևով է, որ ավելի քան 100000 հայեր փրկվել են, այն որոշակի պայմանով, աշրուհանդերձ, որ ուղարկվեն Սիրիա: Այդ միջամտությամբ Ջեմալը ձեռք է բերել «Հայաստանի փաշա» մականունը, որը նրան տրվել է Կոստանդնուպոլսում: Աշրուհանդերձ, դրա շնորհիվ նա միաժամանակ արժանացել է հայերի երախտագիտությանը և դրական տպավորություն գործել չեզոք երկրների դեսպանների վրա:

Ցանկություն ունենալով նրան հավաստել իրենց երախտագիտությունը, բայց չկարողանալով հայտնել այդ մասին բարձրաձայն, հայերը վճռել են մեկը մյուսի ետևից լուրջամբ անցնել նրա տան առջևից Կոստանդնուպոլսում: Այսպիսով, նրանցից 40000-ը, հանդիսավոր շքերթի ձևով, անցել են Ջեմալի տան առջևից, որը 3 ժամ շարունակ կանգնած է մնացել պատշգամբում, ձեռքերը խաչաձևած՝ ինչպես Նապոլեոն Մեծը: Այն զննցքը, որը նրան Սիրիա էր տանում, կանգ էր առնում բազմաթիվ առիթներով, նրան հնարավորություն ընձեռելով ընդունելու հայերի շնորհակալությունները: Համաձայն մեզ տեղեկացնողի խոսքերի, հավաստի է, որ այդ շնորհակալությունները նրան են հղվել կարգ ու կանոնով: Ըստ նրա, Ջեմալի կողմից կատարված քայլն իրականում սոսկ կատակերգություն էր, որը նախատեսված էր օտարերկրյա հասարակայնության վրա տպավորություն գործելու և անհատի դերը բարձրացնելու համար: Այս կարծիքին նա հանգել էր ելնելով այն բանից, թե ինչպես էին նրա վարչության օրոք վերաբերվում տեղահանվածներին:

Հայերը Ջեմալի վարչության օրոք. Այսպիսով, իր տնօրինության ներքո ունենալով հսկայական քանակությամբ հայերի, Ջեմալը որոշել է նրանց ուղարկել Սիրիայի և Պաղեստինի ամենահեռավոր շրջանները: Հեղինակը գտնում է, որ վարվելով այսպես, նա ունեցել է երկու նպատակ. տեղաբնակ ժողովրդի համար՝ աղետալի իրավիճակի պահպանման նպատակը և չեզոքների համար՝ տեղահանվածների նկատմամբ իր կողմից դրսևորվող վերաբերմունքի մասին դատելու հնարավորությունը նվազագույնի հասցնելու նպատակը:

Նրանց ուղարկել են տարբեր ճամբարներ, որտեղ նրանց թվից 3-ից 5000-ի տեղավորում էին միասին: Հեղինակն այսպիսի ճամբարներ է տեսել Հորսնում, Աջլունում և Մեռյալ ծովի հայրավ՝ ա իրևելքում}:

Հայկական ճամբարները. Այս ճամբարների բնակչությունն սպյում էր միայն այն սննդով և ջրով, որը նրան էր տրամադրում վարչությունը. նրան արգելված էր մտնել քաղաքներ կամ գյուղեր և իր աշխատանքի դիմաց աշխատավարձ խնդրել: Նա պետք է ապ-

րեր անապատում: Տղամարդկանց, կանանց և երեխաներին պարտադրում էին հարկադրական աշխատանքներ. յուրաքանչյուր բանվոր, տղամարդ կամ կին, ստանում էր օրական 4 սու: Դ-ա այն միակ եկամուտն էր, որով նա պետք է ապրեր:

Երբեմն ջուր լինում էր նվազագույնը՝ 6 միլ հեռավորության վրա և հարկ էր լինում այն ճամբար բերել երկաթուղով: Հաճախ գնացքների կանգնած էին մնում, իսկ պատերազմական իրադրությունը բավարար արդարացում էր առ այս փաստը և պատրվակ էր ծառայում ցանկալի անհոգության համար:

Մեզ տեղեկացնողը տեսել է մի օր, թե ինչպես է ուշացումով ժամանում ջուր բերող գնացքը: Ծարավից տառապող հայերը նետովել են դեպի այն վայրը, որտեղ գնացքը պետք է կանգ առներ, տանելով իրենց հետ կավե կոժ կամ մի քանի մետաղյա աման: Հենց որ գնացքը կանգ է առել, այն շրջապատվել է բազմությամբ, որին թուրք վերակացուները ետ են մղել հրացանի կոթի հարվածներով: Երբ այս ձևով բազմությանը հեռացրել են, ցիստերների ծորակները բաց են արել և թողել, որ ծարավից տանջահար եղող հարյուրավոր դժբախտների աչքի առջև ջուրը հոսի: Վարչությունն ուղարկում էր, ըստ իր պարտավորվածության, անապատի այս բնակիչներին անհրաժեշտ ջուրը. բացի դրանից, ոչինչ այլևս Ջեմալ փաշայի և նրա բարեկամների իրավասությունների ներքո չէր գտնվում, և եթե որևէ մի պատահար տեղի ունենար, նրանք չէին կարող դրա համար պատասխանատու ճանաչվել:

Այսպես է խոսել Ջեմալը, համաձայն հեղինակին հասած տեղեկության, երբ իրազեկ է դարձել այն պատահարին, որը մենք հենց նոր պատմեցինք:

Մի քանի շաբաթվա ընթացքում ճամբարների բնակչության կեսը մահացել է սովից ու ծարավից: Կենդանի մնացածները պահպանում էին թշվառ գոյություն: Ընտանեկան կյանքի որևէ նշույլ գոյություն չունեի: Ամուսինները, կանայք և երեխաներն ապրում էին միմյանցից կտրված և չունեին ոչ մի միջոց տեղեկանալու բացակասների ճակատագրին: Բարգաշվածում էր անբարոյականությունը, իսկ հիզիենայի ամենատարրական կանոններն արհամարհվում էին:

Այս ընթացքում Ջեմալը հպարտորեն հայտարարում էր, որ ինքն անմշակ տարածություններում տնտեսող հայերի համար հիմնադրում էր գաղութներ և կենտրոնական կայսրությունների պաշտոնական մասնովն իսկույն ևեթ հայտնում էր ի լուր աշխարհի, որ վերջին երկու տարիների ընթացքում և Ջեմալի վարչության օրոք՝ Սիրիան ու Պաղեստինն ունեցել են այնպիսի մի բարգաշվածում, որը գերազանցում է նախորդ 50 տարիների բարգալիսմանը:

Բայց տարբեր՝ չեզոք երկրների ներկայացուցիչների, որոնք թույլտվություն էին խնդրել Սիրիա գնալու՝ այնտեղ ապրող հայերի կյանքին իրազեկ դառնալու համար, պատասխանել են կտրական մերժումով:

Ստրկախաճառական շուկաները. Ճանապարհի երկայնքով, որին հետևում էին արտաքսվածները, կանանց համար հիմնադրվել են ստրկավաճառական շուկաներ, որտեղ 12-ից 14 տարեկան երիտասարդ հայուհու գինը տատանվում էր մոտավորապես 8-ից 23 ֆրանկի սահմանում: Հեղինակն այս շուկաներից մեկը տեսել է Դ-ամասկոսում: Հալեպում իր բարեկամներից ու ամերիկյան միսիոներներից նա լսել է, որ հազարավոր երիտասարդ աղջիկներ հրապարակայնորեն վաճառվել են շուկայում: Մահմեդական աշխարհի այսպես կոչված ինտելեկտուալները՝ խոջաները, ուլեմները, դադիները և մուֆտիները կարողացել են արագորեն օգտվել այն առիթներից, որոնք այս շուկաները նրանց ընձեռել են: Նրանք կարողացել են փոքր ծախսերով ավելացնել իրենց ստրուկների քանակը՝ պնդելով, որ գբաղվում են կրոնափոխությամբ: Այդ պարագայում, նրանք, հիրավի, վճարելու հարկը

չեն ունեցել:

Կրոնափոխություն՝ մահմեդական կրոնն ընդունելու միջոցով. Այս կարծեցյալ կրոնափոխվածներն, ընդհանուր առմամբ, երիտասարդ կանայք էին, որոնց ստանում էին հարեմներ՝ «խկական կրոնի» ոգով կրթելու պատրվակով: Մահմեդականությունն ընդունելու հետ առնչվող կրոնափոխության այս նախաձեռնությունը, ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց հանդեպ լայն ծավալով և ոչ առանց հաջողության կիրառվել է այն հայերի շրջանում, որոնք գալիս էին Կովկասից, ուր նրանք յուրացրել էին բուրքական որոշ սովորույթներ և որոնց մոտ քրիստոնեական հավատը խորն արմատներ չէր ձգել: Այդուհանդերձ, հեղինակը ճանաչում էր Կոստանդնուպոլսի և նրա շրջակա քաղաքների կիրթ և հարուստ հայերի, որոնք հրապարակայնորեն հայտնում էին իրենց կրոնափոխության մասին: Այնուամենայնիվ, թվում է, որ նրանք այդ բանին դիմել էին ունեցվածքների նվազագույն մասը փրկելու հույսով:

Ձանգվածային կոտորածը. Մինչ այժմ սահմանափակվեցինք նկարագրելով, թե ինչպես էին փորձում ոչնչացնել հայ ժողովրդին տեղահանությամբ, որն ավելի էր զարկ տալու բուրքերի անփութությանը և հիվանդության պատճառած արհավիրքներին, որի դեմ պայքարելու ցանկություն չէր դրսևորվում: Սրան հարկ է ավելացնել տղամարդկանց և երեխաների պարբերական կոտորածը: Սովորաբար գործում էին այսպես. կազմակերպում էին բանվորական գումարտակներ, որոնցում տղամարդիկ և երեխաներն ընդգրկվում էին միասին: Այնուհետև՝ մոտավորապես քսան բուրք զինվորի հսկողության ներքո, նրանց ուղարկում էին դեպի որևէ մոռացված վայր, որն ամբողջությամբ գուրկ է սննդամթերքից և ջրից: Հսկիչները հրաման ունեին գործի դնելու, առանց այլևայլության, իրենց հրացանները՝ փախուստի նվազագույն իսկ վործի կամ ապստամբելու փորձագույն նշանի դրսևորման դեպքում նրանց կողմից, որոնց պատասխանատվությունն իրենք կրում էին: Մեկ կամ երկու օր անց կարելի էր տեսնել, թե ինչպես են նրանք միայնակ վերադառնում: Այնժամ նրանք պատմում էին, որ կամ հայերն են զանգվածային փախուստի փորձ կատարել, կամ ապստամբություն է տեղի ունեցել և որ հարկ է եղել բուրքին կոտորել՝ իրենց իսկ փրկության համար: Ծիշտն ասած, անձամբ հեղինակը համանման տեսարանների ակնհաստեսը երբևէ չի եղել, բայց այս առթիվ ունեցել է արժանահավատ տեղեկություններ: Դրանք նրան հարյուրդոներից մեկը եղել է հայ, որը բուրքերին խոսելով և օսմանյան ճաշակով հազնված գնալիս է եղել Հայաստանից Յաֆթա: Այսպես, նա հայտնվել է բուրք զինվորների մի խմբի մեջ, որը պատրաստվում էր կոտորել իր հայրենակիցներից մոտավորապես 400-ի և այն ձևով, որը մենք հենց նոր նկարագրեցինք, որոնք էլ նրանից չեն թաքցրել նողկալի մանրամասները: Հաջորդ օրը միևնույն անձը պատահաբար հայտնվել է հայերի դիակների կույտի առջև: Շարունակելով ճանապարհը, նա Հալեպ հասնելուն ևեթ Ամերիկայի հյուպատոսին¹ է ներկայացրել մի մանրամասն զեկուցագիր այն մասին, ինչ տեսել է:

Գերմանացիների կարծիքը. Կոստանդնուպոլսում նա առիթ է ունեցել այս կոտորածի մասին խոսելու գերմանացի սպաների հետ, որոնք ընդունել են, որ այդ փաստերը դժբախտաբար հավաստի են:

Հայերը Կոստանդնուպոլսում. Հրամաններ են հրապարակվում, համաձայն որոնց, Կոստանդնուպոլսում մնալ թույլատրվում է միայն այն հայերին, որոնք այդտեղ են ծնվել: Ռատիկանության համար դա տները խողարկելու և փողոցում մարդկանց ձեռքակալելու առիթ է եղել: Ականատեսը տեսել է, թե ինչպես են, այսպիսով, խմբերով տանում հայերի, որոնք տրված հրամաններն իրականացնող ոստիկանների դրսևորած ջանադրության գո-

1 Պ. Ջաքսոնը:

հերն են եղել: Ոստիկանության այս հարձակումները սովորաբար տեղի են ունեցել զիջելու, քեպետ մեզ տեղեկացնողը տեսել է, թե ինչպես են փողոցում ձերբակալում և տանում մի հարուստ և ազդեցիկ 'հայի': Հենց որ ձերբակալությունները կատարվել են, զոհերի մասին այլևս չի լավել: Հարկ է դժբախտաբար ավելացնել, որ որոշ հայեր ծառայում էին յբրև ոստիկանական լուսններ և մատնում իրենց հայրենակիցներին:

Հեղինակը տեղեկություններ ունի նաև հայրյուրավոր երիտասարդ աղջիկների մասին, որոնք Կոստանդնուպոլսում հարկադրված են եղել տրվելու պողոնկության, չունենալով որևէ այլ միջոց իրենց ծնողներին օգնության հասնելու համար: Նա, մասնավորապես, հիշատակում է լավ դաստիարակություն ստացած նրանցից մեկի պարագայի մասին, որն ամուսնացել էր դրանից մի փոքր առաջ և իր աչքի առջև տեսել, թե ինչպես են սպանում իր ամուսնուն ու անձնատուր է եղել՝ ամիսներ շարունակ բոլոր ջանքերն ազնվորեն ապրելու համար գործադրելուց հետո միայն:

Կոտորածները շարունակվում են. Վերջերս ավելի քիչ են խոսում կոտորածների մասին: Այդուհանդերձ, դրանք շարունակվում են: Միակ տարբերությունն այն է, որ տեղեկանալու հարցում արտասահմանցիկն ավելի մեծ դժվարություն է ունենում:

Ըստ հեղինակի, այս հավածանքների պատճառն այն է, որ հայերը դժվարամատչելի ավար չեն, և որ մահմեդականները՝ հարուստ թե աղքատ, բարձր թե ցածր դասակարգի պատկանող, բնականաբար, հակված են սպանության և առևանգման: Բացի դրանից, բուրքերը պահպանել են իրենց տիրապետության ներքո գտնվող մարդկանց՝ իբրև ենթակա ժողովրդի վերաբերվելու սովորույթը:

Բարոյական և տնտեսական առումներով Հայաստանը կատարելապես կործանվել է: Թուրքական կայսրության՝ հավանաբար ամենաձեռներեց և ամենատնտեսող ժողովուրդը (այսպես է նրան բնութագրել մի իրեա) դադարել է գոյություն ունենալուց:

(A.M.G., 16 N 2946).

Արևելյան լեգեոնի հայ կամավորների զինծառայության ընդունման ակտի անձնական թերթիկ¹

Անուն.

Ազգանուն.

Հայրանուն.

Մոր անունը.

Տարիքը.

Ծննդավայրը. նահանգը.

քաղաքը.

գյուղը.

Հպատակությունը.

Ամուսնացա՞ծ է, թե ոչ.

երեխաների քանակը.

Մասնագիտությունը.

Հասցեն.

Ընտանիքի հասցեն.

¹ Եյս անթվակիր փաստաթուղթը մենք դասել ենք 1916 թ. դեկտեմբերի սկզբներին, ելնելով դրա բովանդակությունից:

Ջինժառայությունը.

Օտար լեզուներ.

Մանրագրություններ.

Ես, ներքոստորագրյալս իմ հոժար կամքով, իբրև կամավոր զինժառայության եմ ընդունվում՝ իմ կյանքի գնով ծառայելու համար իմ հայրենիքի ազատագրմանը: Ես երդվում եմ հավատարիմ մնալ իմ երդմանը, հնազանդվել տրված հրամաններին՝ ենթարկվելով զինվորական կարգապահությանը և իմ վարչագծով բարձր պահել իմ ժողովրդի պատիվն ու ազգային ազատագրության դրոշը:

Լրացված է՝

Ստորագրություն

Ամսաթիվ

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Syrie-Liban-Cilicie*, tome 134, f. 1).

300

Արևելյան լեզեոնի հայ կամավորների զինժառայության ընդունման պայմանները¹

Ծ:

[1916 թ. դեկտեմբեր]:

Իբրև Արտաքին գործերի նախարարության և Հայկական ազգային պատվիրակության նախագահի միջև կայացված համաձայնության շարունակություն, ֆրանսիական մի առաքելություն՝ հրամանատար Ռոմիոյի գլխավորությամբ ուղարկվել է Եգիպտոս: Այն ժամանակ է Կահիրե 1916 թ. նոյեմբերին և կապ հաստատել հայկական տարբեր կազմակերպությունների առաջնորդների հետ՝ բազմաթիվ գումարտակներով հզորացված «Արևելյան լեզեոն» կոչվող մի լեզեոնի կազմավորման համար:

Ըստ կայացված համաձայնության, պայմանավորվածություն է ձեռք բերվել.

1/ որ Արևելյան լեզեոնի կազմավորումը նպատակ ունի օժանդակել հայերին Կիլիկիայի ազատագրման հարցում և այս ձևով նրանց նոր իրավունքներ ընձեռել նրանց ազգային իղձերի իրականացման համար.

2/ որ հայ լեզեոնականները մարտնչեն միայն թուրքի դեմ և միայն Կիլիկիայում.

3/ որ Հայկական լեզեոնն ապագայում կազմի հայկական բանակի միջուկը:

(A.M.A.E., E-Levant 1918-1929, *Syrie-Liban-Cilicie*, tome 134, f. 2).

1 Այս փաստաթուղթը ծագման մասին որևէ ստույգ տվյալ չունի: Այդուհանդերձ, բնագրից բխում է, որ այն սկիզբ է առնում Ասիա-Օվկիանիայի փոխվարչությունից:

2 Փաստաթուղթն ամսաթիվ չունի: Մեզ, այդուհանդերձ, ըստ բնագրի, բվաց, որ այն կարելի է դասել 1916 թ. դեկտեմբերի սկզբներին:

Ասիա-Օվկիանիայի փոխտնօրենի¹ ծանուցագիրը

Խիստ հրատապ²:

Փարիզ, 7-ը դեկտեմբերի 1916 թ.:

Ըստ Ռ-ազմական նախարարության դեպարտամենտի և Արտաքին գործերի նախարարության միջև կայացված համաձայնության, հրամանատար Ռոմլոն գործուղվել է Եգիպտոս և Կիպրոս: Նրա առաքելությունը հետապնդում է երկու նպատակ:

1/ Ստանձնել Մուսա լեռան հայերի կազմակերպումը և ռազմական ուսուցում տալու համար նրանց տեղավորել Կիպրոսում՝ իբրև օգնական ուժեր նրանց այդտեղ կցելով, հնարավորության դեպքում, Եգիպտոսում և այլուր զինվորագրված հայ կամավորներին:

2/ Կողմնորոշվել նաև սիրիացիների զինվորագրման հնարավորության հարցում, որոնք, միավորված հայերին, կկազմավորեն մի կորպուս, որը պատրաստ կլինի յուրաքանչյուր հնարավոր դիպվածի՝ հարձակումների Սիրիայում կամ Կիլիկիայում, աջակցություն ցուցաբերելու տեղական խռովություններին, երբ Սիմայի անգլիական զորքերի առաջխաղացումը մահմեդական կամ քրիստոնյա սիրիացիներին կթույլատրի բացահայտորեն խզել կապերն օսմանյան իշխանության հետ և քոթափել լուծը:

Առաջին նպատակն իրագործվել է. կղզու անգլիական իշխանությունների համաձայնությամբ, հրամանատար Ռոմլոն Կիպրոսում կատարել է վայրի ընտրությունը և պատրաստվում է այնտեղ տեղափոխել Մուսա լեռան հայերին, մոտավորապես 500 մարդու, որոնց հետ աստիճանաբար կմիավորվեն հայկական հայրենասիրական կազմակերպությունների կողմից Եգիպտոսում, Եվրոպայում և Ամերիկայում զինվորագրված կամավորները: Կարելի է հուսալ, որ այսպես հնարավոր կլինի համախմբել մոտավորապես 2500 մարդու:

Ինչ վերաբերում է երկրորդ նպատակին՝ «Արևելյան լեզեռնին» համալրման նպատակով սիրիացիների զինվորագրմանը, որը Ռ-ազմական նախարարը որոշել է ստեղծել, ապա այն իրագործելի է թվում Հարավային Ամերիկայում՝ Բրազիլիայի և Արգենտինայի սիրիական բազմաթիվ գաղութներում, այդուհանդերձ, զինվորագրում անցկացնելու պայմանով: Համաձայն այն տվյալների, որոնք ժողովվել են ինչպես Սիրիայում ֆրանսիական գործողության կոմիտեի, այնպես էլ Դեպարտամենտի գործակալների կողմից, այդ զինվորագրումը հնարավոր է, եթե այն նրբանկատորեն զլխավորի մի մարդ, որն ունենա պահանջվող արժանիքները: Այս առաքելության իրականացման համար իր ծառայություններն է առաջարկում բժիշկ Լակկատը, որն այժմ նշանակում է ստացել ռազմա-դաշտային հիվանդանոցում՝ 5/20, բաժանմունք 195:

Բժիշկը ծագումով սիրիացի է, բայց բազում տարիներ ի վեր հաստատվել է Ֆրանսիայում: Նա մեծ համբավ ունեցող ակնաբույժ է, օժտված է ֆրանսիական մտածողությամբ, հավասարակշռված է և ամբարտավան չէ: Ֆրանսիային ծառայելու համար նա գործողությունների հենց սկզբից կամավոր զինվորագրվել է՝ քողնելով աշխատասենյակը և բարգավաճող կլինիկան, որից մեծ օգուտներ էր ստանում: Կարելի կլինի շեյխ Յուսուֆ Խազեմին՝ Կահիրեից կցել նրան, որպեսզի նա ներկայացնի մարոնիտ տարրին:

Ամերիկայի սիրիական շրջաններ նրան ուղարկելը հնարավորություն կընձեռի բանի-

1 Պ. Գուն:

2 Նախարարների խորհրդի համար է:

մացորեն զինվորագրել զինճառայության համար պիտանի կամավորների: Սիրիայում ֆրանսիական գործունեության կոմիտեն, պ. Ֆլանդինը, պատրաստ է նրան հանձնարարել այդ առաքելությունը, բայց նա Դեպարտամենտից խնդրում է հոգալ մոտավորապես 10000 ֆրանկի հասնող՝ դրա հետ կապված ծախսերը: Իր կողմից Սիրիական ազգային հանձնաժողովը (Արևելյան կոմիտեն) կներդնի գրեթե հինգ հազար ֆրանկ:

Քաղաքական գործերի տնօրենը՝ հույս ունի, որ պ. Լակկատի ընտրությունը պետք է մեզ մղի օգտվելու այդ առիթից՝ ֆրանսիացի սպաների հրամանատարության ներքո համախմբելու սիրիացիների (քե՛րքիստոնյա և քե՛ մահմեդական) զինված անձնակազմ, որը մարզվելուց հետո մեր տրամադրության ներքո կլինի՝ դիմակայելու համար Սիրիայում յուրաքանչյուր հնարավոր կանխատեսելի դիպված: Այդ կորպուսը, եթե նույնիսկ չկարողանա մասնակցել գործողություններին պատերազմի ընթացքում, հետագայում կկազմի ֆրանս-սիրիական զորքի միջուկը՝ վերականգնելու համար կարգ ու կանոնը Փոքր Ասիայի տարածքներում, որոնք մեր ազդեցության տակ կանցնեն ռազմական գործողությունների ավարտից հետո: Հարկ է իրոք, կանխատեսել, որ այս պահին մեր վրա կդրվի ժանդարմական և ոստիկանական շատ ծանր մի առաքելություն և որ մեզ համար անհրաժեշտ կլինի ձեռքի տակ ունենալ լավ մարզված ու հավատարիմ տեղացիների՝ դյուրին դարձնելու համար մեր գործողությունը: Հետևաբար, պ. դը Մարթերին երախտապարտ կլինի պ. Խորհրդի նախագահին, եթե նա բարեհաճի կարգադրել, չի հատուկ ֆոնդերից ...² հասնող մի գումար դրվի պ. սենատոր Ֆլանդինի տրամադրության ներքո՝ օժանդակելու համար բժիշկ Լակկատի առաքելությանը Հարավային Ամերիկայում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 3-4 v).

302

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 600:

Կահիրե, 10-ը դեկտեմբերի 1916 թ., ժ. 11.40-ին:
(*Ստացել է* Քաղ. վարչ. դեկտեմբերի 11-ին):

Պատասխան ձեր թիվ 431 հեռագրին¹:

Հայերի շրջանում զինվորագրումներ հրահրելու նպատակով Ամերիկա գնալու համար մատնանշվել են պ{արոնայ}ք Թեքեյանը՝ դեմոկրատական կուսակցությունից, Հնչակյան կուսակցության ղեկավար Սապահյոյլյանը, պրոֆեսոր Հանեմյանը՝ Դրոշակ կոմիտեից: Ես ձեզ հեռագրով կհայտնեմ նրանց մեկնումի օրը, հենց որ այն պարզ դառնա:

Այս պահին սիրիական պատվիրակներ ուղարկելու մասին խոսք չկա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 6).

1 Պ. դը Մարթերին:

2 Թիվը բացակայում է:

3 Դեկտեմբերի 7-ի. արտատպված չէ: Այդ հեռագրով Դեպարտամենտը պ. Դեֆրանսին տեղեկացնում է, որ հայ պատվիրակները պատրաստվում են մեկնել Ամերիկա՝ հայ կամավորների զինվորագրման Արևելյան լեզեռնում խրանելու նպատակով:

**Եգիպտոսում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. քիվ 601:

Կահիրե, 10-ը դեկտեմբերի 1916 թ., ժ. 13.05-ին:
(Ստացել է Քաղ. վարչ. դեկտեմբերի 11-ին):

Հրամանատար Ռոմիոն Ռ-ագմական նախարարությունից ստացել է «Արևելյան լեզոն-նի կազմավորմանը վերաբերող նախագիծ և հրահանգներ»:

Ըստ այդ նախագծի ...¹ լեզոնականներն իբրև աշխատավարձ և սննդի ծախսեր օրական կստանան 2 ֆրանկ. այս վերջինը հաշվարկված է խաղաղ ժամանակների օրապահիկի չափով: Այդ աշխատավարձը, կապված հատկապես փողի կուրսի կորստի հետ, իրոք ոչ, անբավարար է:

Դեռ ավելին, կամավոր զինվորագրվածներն «փրավունք չեն ունենա վերքերի, հիվանդությունների կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում ստանալ ծեղրության ոքիէ թոշակ կամ արձակուրդային պարգև»:

Վերջապես, զինվորագրվածների կարիքավոր ընտանիքները չեն ունենա ուրև նպաստ ստանալու իրավունք:

Հրամանատար Ռոմիոն հեռագրով Ռ-ագմական նախարարության դատին է հանձնել իր դիտողությունները, բայց հարկ է, որ ես ձեզ նախօրոք իրազեկ դարձնեմ այն ցավալի հետևանքին, որին չեն հասպտղի հանգեցնել նրա նկատառումները: Դրանք սկզբից ևեթ լեզոնի համալրումը կասեցնող բնույթ են կրում: Այն պայմանների համեմատությամբ, որոնցով բրիտանական ռազմական իշխանությունները հավաքագրում են կամավորների և նույնիսկ հասարակ բանվորների, դրանք կրկան խիստ աննշան և աննպատակահարմար: Մենք խիզախում ենք բոլոր բարի կամք ունեցողներին մեզնից վանել: Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ պետք է Արևելյան լեզոնում ընդգրկված կամավորներին մերժեն օգտվելու այն առավելություններից, որոնք հատկացվել են Արտասահմանյան լեզոնում ընդգրկվածներին: Եթե մենք ցանկանում ենք Կիպրոսում ինչ-որ լուրջ և օգտակար բան անել, հարկ է ընդունել անհրաժեշտ զոհաբերությունները, այլապես ավելի լավ կլինի ոչինչ չձեռնարկել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 7).

Պ. Չոպանյանի ծանուցագիրը Դեպարտամենտին²

[10-ը դեկտեմբերի 1916 թ.]:

Խնդրել պ. Սևասլիից, որ կամավորներին ընտրի ոչ միայն ամրակազմ, քաջատոջ և անհողողող հայրենասեր երիտասարդներից, այլ, մասնավորապես, կիլիկյան և սիրիական ծագում ունեցող հայերից, որոնք ճանաչում են երկիրը և լեզուներ գիտեն, որովհետև

¹ Վերձանման բացրոլում:

² Պ (արոնայք Սևասլին և Դամադյանին հղվող ուղերձի նյութեր սրամադրելու համար:

կարևորը ոչ թե քանակն է, այլ որակը: Նույնիսկ ավելի լավ կլինի, որ Ամերիկայում զինվորագրվող կամավորների քիվը շատ մեծ չլինի, որովհետև գործը հրապարակայնություն կստանա, բայց անհրաժեշտ է, որ այս զինվորագրումը կատարվի բացարձակապես գաղտնի, հակառակ դեպքում այն հայերը, որոնք Կիլիկիայում և Սիրիայում կենդանի են մնացել՝ կկոտորվեն (Ամերիկայում կան մի քուրք դեսպան¹ և մի հյուպատոս² և գերմանացիներ ու գերմանա-ավստրիացիներ):

Հավանական չէ, որ ֆրանսիական ռազմակալող կորպուսի ներկայությունը հրահրի հայկական ապստամբություններ, քանզի ինչ վերաբերում է հայերին Կիլիկիայում և Սիրիայում, ապա և ոչ մի մարտունակ տղամարդ այլևս չկա... պատերազմի սկզբում դեպքերն այլ ընթացք կարող էին ստանալ: Կիլիկիայում և Սիրիայում կան միայն բնակչության և տեղահանվածների բեկորներ, բայց հնարավոր է, որ զեյթունցիների մի մասը, որոնք ինչպես կարծում են, ամրացել են լեռներում, կմիանան ռազմակալող կորպուսին:

Գաղտնիքն ավելի խորը պահելու համար, նախընտրելի կլինի, որ Ամերիկայից եկած կամավորներն ավի ելնեն ոչ թե Մարսելում, այլ Ալժիրում և այնտեղից գնան Կիպրոս:

Նույն հանձնարարականները տալ կամավորների զինվորագրման համար Եգիպտոսում:

Ոչինչ, բացարձակապես ոչինչ, նույնիսկ և ոչ մի նվազագույն ակնարկ չպետք է ի հայտ գա այս առթիվ Ամերիկայի կամ Եգիպտոսի հայկական կամ այլ քերթերում: Ավելի լավ կլինի, որ հայ առաջնորդներն այս զինվորագրումը կատարեն ոչ թե քրդակցության հիման վրա, այլ անձնական և բանավոր քայլերի միջոցով: Հասարակական ժողովներում արտասանված ճառերում ևս ոչինչ պետք չէ ասել:

Այս կամավորները կլիտվեն իբրև Ֆրանսիայի զինվորներ: Յանկլայի է, որ նրանք ունենան փաստաթղթեր, որոնք վկայեն նրանց ֆրանսիացի լինելու մասին, որպեսզի քուրքերին գերի ընկնելու դեպքում՝ նրանց չվերաբերվեն իբրև օսմանյան հպատակների:

Հնարավոր կլինի՞ արդյոք այս կամավորներին կցել այն հայերին, որոնք ֆրանսիական բանակում են և կռվում են Ֆրանսիայում:

Ամերիկայում, Եգիպտոսում կզտնվեն, անկասկած, հայեր, որոնք կպատասխանեն Ֆրանսիայի կոչին՝ իրենց երախտագիտությունը Ֆրանսիային հայտնելու, իրենց նահատակների վրեժը լուծելու և իրենց համեստ ուժերի սահմաններում նպաստելու համար իրավունքի ջատագովների հաղթանակին, և իրենց ազգային երազանքի իրականացմանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 9-12).

305

Եգիպտոս և Կիպրոս գործուղված հրամանատար Ռ-ոմիոն՝ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի շտաբի պետին

Հրատապ:

Պորտ-Սաիդ, 11-ը դեկտեմբերի 1916 թ.:

Չինվոր Դ-իմլաքյանը, որն ԱԼ-ում ընդգրկված կամավոր է, վաղը ընդգրկվելու է Մոնար-գա մեկնող ստորաբաժանման մեջ:

Նա այժմ «Ժյուլ Ֆերրիի» վրա է քարձրացել իբրև ոչ զինվորական քարգմանիչ:

1 Ահմեդ Ռուստեմ բեյը:

2 Ջեկալ բեյը:

Ես պատիվ ունեմ խնդրել, որ նրան այսօր, կեսօրից հետո թուրքատրվի նավից ցած իջնել՝ հայերի ճամբար գնալու համար:

(A.C.M., SS S a 42).

306

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ գնդապետ ղը Լա Պանուսը՝ Ուոր Օֆիսում ռազմական գործողությունների տնօրեն, գեներալ Ֆրեդերիկ Մորիսին

Թիվ 3468:

11-ը դեկտեմբերի 1916 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ Ֆրանսիայի Ռ-ազմական նախարարը հենց նոր ինձ է հաղորդել Կիպրոսում՝ ըստ բրիտանական և ֆրանսիական կառավարությունների միջև կայացված համաձայնության հաստատված Հայկական կորպուսի ուսուցմանը և կազմավորմանը վերաբերող մանրամասներ և կցում են, ձեզ տեղյակ պահելու համար, հրահանգների պատճենը¹:

Այս կորպուսը, որը կազմված է օսմանյան ծագում ունեցող կամավորներից, պետք է կոչվի «Արևելյան լեգեոն», և նրա ճամբարը պետք է տեղակայվի Ֆամագուստայից 25 կիլոմետր դեպի հյուսիս:

Ճամբարի տեղակայման աշխատանքը պետք է անմիջապես սկսվի և այնուհետև կամավորների ստորաբաժանումները պետք է միմյանց հաջորդեն մեծ արագությամբ:

Այդ հաշվի առնելով, ֆրանսիական կառավարությունն ինձ խնդրել է, որ ձեր ուշադրությունը հրավիրեմ հետևյալ կետերի վրա.

«Գործը մեծապես կշահի, եթե ներկայումս, երբ Կիպրոսում «Արևելյան լեգեոնը» կազմավորման ընթացքում է, բրիտանական իշխանությունները կողմ հատկացմանը վերաբերող բոլորակցության վրա խիստ հսկողություն սահմանեն, որպեսզի մեր ծրագրերին առնչվող որևէ նախագուշացում թուրքերը չստանան:

Մասնավորապես կարևոր է, որ օսմանյան կառավարությանը հնարավորություն չընձեռվի իմանալ մեր «Արևելյան լեգեոնականների» անունները, քանի որ նրանց ընտանիքների անդամները, որոնք մնում են Թուրքիայում, կարող են ենթարկվել բռնությունների»:

Ես հույս ունեմ, որ տեսնելով այս դիտողության կարևորությունը, դուք բավական բարի կգտնվեք, անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու՝ այն ճշգրտորեն կենսագործելու համար:

(A.M.G., 7 N 1283).

307

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնին

Ճ. թիվ 3703:

¹ Տես վերը թիվ 297 փաստաթուղթը (հավելվածներ I և III):

Եգիպտոս գաղթած հայերին օգտագործելու ուղղությամբ բազում ամիսներ ի վեր ձեռնարկված քայլերը հենց նոր ավարտին հասան՝ մեր ջանքերով Կիպրոս կղզում «Արևելյան լեզեոնի» ստեղծմամբ, որը կազմված է օսմանյան ծագում ունեցող օսմանդակ զինվորականներից, որոնց հրամանատարական կազմը բաղկացած է Ֆրանսիացի սպաներից և ենթասպաներից:

Այն հայերը և սիրիացիները, որոնք ցանկություն կունենան զինվորագրվել, կարարավորվեն ծառայել ֆրանսիական դրոշմերի ներքո՝ պատերազմի հարատևության ընթացքում Թուրքիայում օգտագործվելու համար: Ջորամասերում նրանց կցրեն ըստ իրենց ազգության և կրոնի, որի անհրաժեշտությունն ընդունվել է: Դուք, ի դեպ, այս ծրագրում կգտնեք նոր զինվորական կազմավորմանը վերաբերող հրահանգներ:

Ինչպես դուք այդ կիսավաստեք, Ռազմական նախարարությունն իմ Դեպարտամենտի հետ համաձայնություն կայացնելուց հետո մի ցանկություն է հայտնել, ըստ որի միայն այն հայ գաղթականներին չէ, որոնց մասին ակնարկվում է այս քեմային վերաբերող՝ սրան նախարդած թղթակցության մեջ և, մասնավորապես, ձեր թիվ 1492 հեռագրում¹, որ հարկ կլինի հմարավորություն ընձեռել ընդգրկվելու «Արևելյան լեզեոնի» կազմում: Քանի որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքը ֆրանսիական բանակում ծառայության ընդունվելու շուրջ պայմանավորվածություն կայացնելու իրավունքից զրկում էր այն արտասահմանցիներին, որոնք Ֆրանսիայի կամ նրա դաշնակիցների հետ պատերազմական վիճակում գտնվող երկրների հպատակներն են, արդարացված թվաց Եգիպտոս գաղթած հայերի օգտագործմանը վերաբերող հարցին տալ այնպիսի մի լուծում, որն այսուհետև կթույլատրի ոչ միայն ուրիշ հայերին, այլև թուրքերի դեմ կռվելու ցանկություն ունեցող բոլոր սիրիացիներին ընդգրկվելու մի հատուկ կորպուսում, անկախ այն բանից, թե նրանք որտեղ են հաստատվել՝ Եգիպտոսում, Ֆրանսիայում, թե արտասահմանում: Հայկական, իբրևանյան և սիրիական կոմիտեների կողմից ընդունված հռչակագրերից, որոնք, ի դեպ, նախատակ են հետապնդում Ամերիկայում լիազոր ներկայացուցիչներին վստահել, պահանջված ամենայն զուշության պահպանությանը և առանց մեր գործակալների որևէ միջամտության, զինվորագրման կամ պահպանության կազմակերպման առաքելությունը, հիրավի հետևում է, որ կամավոր հիմունքներով զինվորագրվող նրանց համակրանակիցների քանակը թույլ կտուս հույս տաձել բավարար թվով գործաձաներ կազմավորելու: Այսպիսով, նրանց միավորումը Կիպրոսում գտնվող հայկական գործաձաներին կարելի է նախատեսել փոքրիշատե մոտարուտ ժամկետում և, հետևաբար, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք այն ձևով, որն ամենանպատակահարմարը կհամարեք, այդ մասին հայտնեք բրիտանական կառավարությանը՝ ստանալու համար նրա կավանդությունն այն հիմունքներին, որոնք կիրառվել են «Արևելյան լեզեոնի» ստեղծման համար: Նմանապես հասել է պահին անգլիական իշխանություններից պահանջելու մեր տրամադրության ներքո ղեկ ներկայումս Եգիպտոսում գտնվող սիրիական ծագում ունեցող բոլոր զինվորներին, որոնք ցանկություն կունենան Խամաձայնություն կայացնել՝ «Արևելյան լեզեոնում» իբրև կամավոր զինվորագրվելու համար և որոնք այդ հիման վրա կընդունվեն նոր գործաձանավորումի կազմակերպման հարցերը-հոգացող հրամանատարի կողմից: Դուք բարեհաճեք ինձ շտապ տեղեկացնել ձեր քայլերի մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 14-15).

¹ Հոկտեմբերի 19-ի վերև արտատպված է թիվ 287 փաստաթղթում:

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝
Վաշինգտոնում, Ռիո դը ժանեյրոյում, Մոնտեվիդեոյում,
Բուենոս Այրեսում, Կարակասում գտնվող Ֆրանսիայի
ղիվանագիտական ներկայացուցիչներին**

Ը. թիվ 643, 94, 52, 109, 76: Գաղտնի:

Փարիզ, 13-ը դեկտեմբերի 1916 թ.:

Իմ Դեպարտամենտի հետ համաձայնություն կայացնելուց հետո, Ռազմական նախարարը որոշել է ձեռնամուխ լինել «Արևելյան լեզոնի» ստեղծմանը Կիպրոս կղզում՝ բաղկացած օսմանյան ծագում ունեցող և ֆրանսիացի սպաների ու ենթասպաների հրամանատարության տակ գտնվող օժանդակ ռազմական ուժերից:

Այն հայերը, լիբանանցիները և սիրիացիները, որոնք կցանկանան զինվորագրվել, կպարտավորվեն մինչ պատերազմի ավարտը ծառայել ֆրանսիական դրոշմերի ներքո այն պահանգով, որ իրենց օգտագործեն Թուրքիայում: Նրանք կցրվեն զորամասերում ըստ իրենց ազգության և կրոնի, բանի որ դրա անհրաժեշտությունը հավանության է արժանացել: Ի դեպ, ես ձեզ եմ հղում սրան կից հրահանգների՝ մի օրինակ, որը վերաբերում է նոր զինվորական կազմավորում կազմակերպելուն:

Հայկական և սիրիական կոմիտեների կողմից Ամերիկայում հավաքագրված հայերը, լիբանանցիներն ու սիրիացիները կընդունվեն ռազմական վարչության կողմից Բորդոյում և Մարսելում: Ջինվորագրման կոմիտեներին կվճարվեն Ամերիկայից Ֆրանսիա կատարած այն անձանց ճանապարհածախսերը, որոնց՝ կամավոր հիմունքներով զինծառայության ընդունմանը համաձայնություն կտրվի: Քանի որ ես լմ համաձայնությունն եմ տվել այս դրույթներին, ձեր իրավասությունների մեջ է մտնում հայկական և սիրիական կոմիտեներին այդ ամենին տեղեկացնելը՝ զինվորագրման կամայանիս սկզբնավորելու դիտավորությամբ, որին ձեռնամուխ լինել նրանք առաջարկել են բազմաթիվ առիթներով: Այդուհանդերձ, ուժի մեջ է մնում այն պայմանավորվածությունը, համաձայն որի արևելյան կոմիտեների ներկայացուցիչների կողմից այս կամայանիսն պետք է մղվի ամենամեծ զգուշությամբ, առանց մեր գործակալների ուրև: միջամտության; որոնք պարտավորված կլինեն շատ զգույն լինել, որը պարտադրվում է այն երկրի չեզոքության պատճառով, որտեղ իրենք գտնվում են: Ես հրավիրում եմ ձեր ուշադրությունը, մասնավորապես, այս կետի վրա, խնդրելով ձեզ հաստատականորեն խորհուրդ տալ կոմիտեների անդամներին և ներկայացուցիչներին ձեռնպահ մնալ ամեն մի հրապարակումից և յուրաքանչյուր հրապարակային ցույցից, որոնք կարող են հայտնի դառնալ մեր թշնամիներին և որոնք Կոստանդնուպոլսի կառավարությանը նոր վնասներ պատճառել հայ և սիրիացի ժողովուրդներին Թուրքիայում:

Կահիրեում Ֆրանսիայի նախարարն¹ ինձ անմիջապես տեղեկացնում է, որ պ. Թեբեյանին՝ դեմոկրատական կուսակցությունից, Սապահյույանին՝ Հնչակ կուսակցության դեկավարին և պրոֆեսոր Հանեմյանին՝ Դրոշակ կոմիտեից, ուղարկել են Ամերիկա՝ հայերի շրջանում զինվորագրումներ հրահրելու նպատակով: Ես ձեզ հեռագրով կտեղեկացնեմ նրանց մեկնումի ամսաթիվը, հենց որ այն ճշգրտվի և միաժամանակ ձեզ կհայտնեմ, հենց

1 Տե՛ս վերը թիվ 297 փաստաթուղթը (հավելված 1):

2 Պ. Դեֆրանսը:

որ այդ առթիվ համաձայնություն կայացվի, սիրիացի պատվիրակների անունները, որոնք, անհրաժեշտության դեպքում, պետք է համանման առաքելություն ստանձնեն սիրիացիների համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 16-16 v).

309

Խորհրդի նախագահ, Արաաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան պ. Պալեոլոգին

Ճ. թիվ 787: Գաղտնի:

Փարիզ, 17-ը դեկտեմբերի 1916 թ.:

Իմ Դեպարտամենտի հետ համաձայնություն կայացնելուց հետո, Ռ-ազմական նախարարը որոշել է ձեռնամուխ լինել «Արևելյան լեզոնի» ստեղծմանը Կիպրոս կղզում, որտեղ կընդգրկվեն օսմանյան ծագում ունեցող և ֆրանսիացի սպաներից ու ենթասպաններից բաղկացած հրամանատարական կազմի ներքո գտնվող օժանդակ ռազմական ուժեր:

Այն հայերը, լիբանանցիներն ու սիրիացիները, որոնք կցանկանան զինվորագրվել, կպարտավորվեն մինչ պատերազմի ավարտը ծառայել ֆրանսիական դրոշների ներքո այն պայմանով, որ իրենց օգտագործեն Թուրքիայում: Նրանք կցրվեն զորամասերում ըստ իրենց ազգության և կրոնի, քանի որ դրա անհրաժեշտությունը հավանության է արժանացել: Ի դեպ, ես ձեզ եմ հղում սրան կից հրահանգների՝ մի օրինակ, որը վերաբերում է նոր զինվորական կազմավորում կազմակերպելուն:

Արտասահմանում բնակվող հայերը, լիբանանցիներն ու սիրիացիները կընդունվեն ռազմական վարչության կողմից Բորդոյում և Մարսելում: Ջինվորագրման կոմիտեներին, որոնք կկարողանան հայկական և սիրիական խմբավորումներ կազմավորել արտասահմանում, կվճարվեն Ֆրանսիա կատարած այն անձանց ճանապարհածախսերը, որոնց՝ կամավոր հիմունքներով զինծառայության ընդունմանը համաձայնություն կտրվի:

Ես իմ համաձայնությունն եմ տվել այս դրույթներին, որոնց մասին Պողոս Նուբար փաշան՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահը, պարտավորվել է տեղեկացնել հայկական կոմիտեներին՝ զինվորագրման կամպանիա սկզբնավորելու մտադրությամբ, որին ձեռնամուխ լինել նրանք առաջարկել են բազմաթիվ առիթներով: Այդուհանդերձ, ուժի մեջ է մնում այն պայմանավորվածությունը, համաձայն որի արևելյան կոմիտեների ներկայացուցիչների կողմից այս կամպանիան պետք է մղվի ամենամեծ զգուշությամբ, առանց մեր գործակալների որևէ միջամտության: Այս կոմիտեները պետք է ձեռնպահ մնան ամեն մի հրապարակումից և յուրաքանչյուր հրապարակային ցույցից, որոնք կարող են հայտնի դառնալ մեր թշնամիներին և դրդել Կոստանդնուպոլսի կառավարությանը նոր վնասներ պատճառել հայ ժողովրդին Թուրքիայում:

Պողոս Նուբար փաշան իմ Դեպարտամենտին է հայտնել իր ցանկությունը՝ ձեր դեսպանության միջնորդությամբ, սրան կից նամակը Դումայի պատգամավոր պ. Միշել Պապաջանովին փոխանցելու մասին, նրան նոր կազմավորումի մասին տեղեկություններ հաղորդելու համար: Խնդրելով ձեզ ապահովել այդ ծրարի փոխանցումը, ես, այնուամենայն-

նիվ, հրավիրում են ձեր ուշադրությունը Հայկական ազգային պատվիրակության նախագահի խնդրանքի շուրջ՝ կայսրական կառավարության հետ նախօրոք խոսելու նպատակահարմարության վրա: Քանի որ այդ քայլը հետապնդում է Ռուսաստանում հայկական խմբավորում ստեղծելու՝ համար համեստ կամպանիայի կազմակերպման նպատակ, որը կնպաստի «Արևելյան լեզոնի» զինվորագրումներին, ես հիրավի գտնում եմ, որ մեր պարտականությունների մեջ է մտնում ռուսական իշխանություններին այդ հնարավորության մասին տեղեկացնելը: Հետևաբար, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք մտքերի այս շարանում նրանց հաղորդել այն տեղեկությունները, որոնք ձեզ անհրաժեշտ կթվան: Այս առթիվ հարկ կլինի նրանց հայտնել, որ վճռելով ստեղծել նոր զինվորական կազմավորում, մեր նպատակը եղել է ոչ թե զինվորագրումներին նպաստելը, այլ միայն օսմանյան ծագում ունեցող հայերին, որոնք ցանկություն ունեն, անհրաժեշտության դեպքում, մեր դրոշմների ներքո Թուրքիայի դեմ մարտնչել, հնարավորություններ ընձեռելն այդ նպատակով պայմանավորվածություն կայացնել հատուկ նշանակության կամավոր զինվորագրումների շուրջ, քանի որ նրանք հենց այդ են խնդրում: Այդ հնարավորությունը կարելի կլինի նախատեսել նաև Ռուսաստանում ազատագրված՝ օսմանյան ծագում ունեցող հայ գերիների համար, այն դեպքում, եթե կայսրական կառավարությունը հակված լինի նրանց այդպիսի հնարավորություն ընձեռելու:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 17-17 v).

310

Եգիպտոսում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 526:

Կահիրե, 18-ը դեկտեմբերի 1916 թ.:
(*Սուսցել են* Կար. դեկտեմբերի 29-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 31-ին):

Շարունակություն տալու համար վերջին նոյեմբերի 19-ի իմ թիվ 468 մամակին¹, ես պատիվ ունեմ Ձերոյ գերազանցությանը հղել սրան կյո Արևելյան լեզոնի կազմավորման հարցին վերաբերող այն զեկուցագրի պատճենը, որը հրամանատար Ռոմինո դեկտեմբերի 4-ին ուղարկել է պ. Ռազմական նախարարին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 20).

ՀԱՎԵԼՎԱԾ

Եգիպտոս և Կիպրոս գործուղված հրամանատար Ռոմինո՝ Ռազմական նախարար, գեներալ Ռոբին

Թիվ 3²:

[Պատճենը]:

¹ Տե՛ս վերը թիվ 294 փաստաթուղթը:

² Սիրիացիներին վերաբերող մասն այստեղ արտատպված չէ:

Նոյեմբերի 10-ի րվակիր իմ վերջին գեկուցագրից՝ ի վեր, ես ձեզ գործերին տեղյակ եմ պահել միմյանց հաջորդած իմ հեռագրերով:

Ահա այն մտորումները, որոնք պայմանավորել են այդ եզրակացությունները և այն սուաջարկությունները, որոնք ես ձեզ եմ ներկայացրել:

I. Հայեր

1/ Մուսա լեռան գորակոչիկներ: Հոկտեմբերի 28-ին իմ թիվ 1 գեկուցագրում որդեգրված ծրագիրը թվում է, թե կարելի է իրագործել առանց բարդությունների: «Ընակարանապետերին» խումբը, որը պատրաստվում է Կիպրոսի ճամբարի հիմնադրել Մոնարզայում՝ արևելյան ափում, Ֆամագուստայից 24 կիլոմետր դեպի հյուսիս և Տրիկիոմոնայից 2 կիլոմետր դեպի հարավ-արևելք (ըստ Բանդերերի* բարաեզի), 3-րդ կարգի թարգմանիչ սպա որ ժերպահանիումի հրամանատարությամբ մեկնել է նոյեմբերի 30-ին ժամը 16-ին «Մարոկկո» տրալերով:

Ստորաբաժանումն քննարկում էր 54 հայերի, որոնք բոլորը մարտունակ են և զինձառայության համար պիտանի են ճանաչվել այն բժշկական քննության արդյունքում, որն անց է կացրել բժիշկ Արշարունին՝ մի հայ բժիշկ, որն այստեղ կառավարության պաշտոնակատարն է: Այս մարդիկ, որոնց մեծ մասը որմնադիրներ, ատաղձագործներ, հյուսներ են, կարողացել են ստանալ համանման համագգեստներ, որի մի մասը (կարճ շափարներ, պանձիճներ, կոշիկներ) հատկացրել է անգլիական ապրանքային պահեստը, իսկ մյուս մասը (կանաչ-շագանակագույն կտորից պատմուճան, ամառային գլխարկ) հատկացվել է շնորհիվ Ֆրանսիայի հյուպատոսի նախաձեռնության՝ այստեղ գործող «Ջինվորի կտորեղեն» ֆրանսիական բարեգործական ընկերության կողմից:

Այս ստորաբաժանմանը մերթային ապրանքներ (մեկ ամսվա համար) և ցանկացած բնույթի անհրաժեշտ գույք ու գործիքներ են հատկացվել նաև Պորտ-Սաիդի և Իսմայիլիայի անգլիական ապրանքային պահեստներից:

Գեկտեմբերի 2-ին ժամը 9-ին շրջանում ափ դուրս գալն ինչ-որ չափով խափանվեց ծովի չափուզանց անհանգիստ վիճակի հետևանքով, քանի որ հյուսիս-արևելյան քամու պատճառով Մոնարզայի կառանատեղին մոտենալը դժվար էր: Այդուհանդերձ, այդտեղ հաջողվեց ափ դուրս բերել անձնակազմը և գույքի մեծ մասը: Արագ վաչացող մերթային ապրանքները պետք է տարվեին Ֆամագուստա, որի նավահանգստից հնարավոր է օգտվել ցանկացած եղանակի պարագայում:

Ծովի կողմից մոտենալու նման անհուսալիությունն ավելի անհրաժեշտ է դարձնում Ֆամագուստայի հետ կապի հաստատումը ցամաքային ճանապարհով: Ուստի, ես գտնում եմ, որ պարտավոր եմ ստորաբաժանման համար վաղը՝ դեկտեմբերի 5-ին մեկնող տրալերի միջոցով ուղարկել մի հեծանիվ և մի մոտոցիկլետ, որոնք ինձ է տվել Իսմայիլիայում գտնվող անգլիական Գլխավոր շտաբը:

Ընդհանուր առմամբ, ամեն շաբաթ մի տրալեր կմեկնի ուղղակիորեն Պորտ-Սաիդից Մոնարզա, իսկ Կաստելլորիզոյից Պորտ-Սաիդ վերադարձող տրալերն ամսական երկու անգամ կանգ կառնի Մոնարզայի նավահանգստում: Ճամբարն, այսպիսով, Պորտ-Սաիդի

1 Վերն արտասույված է թիվ 294 փաստաթղթի հավելվածում:

* Բանդերեր Կարլ (1801-1859) – գերմանացի գրող և գրավաճառ, որը հայտնի էր իբրև ճանապարհորդական ուղեցույցների հեղինակ: – Կ. ք.:

հետ հաղորդակցություն կունենա ամսական 6 անգամ: Պորտ-Սախիդից Մոնարգա անցումն այդ տրալերներին կապահանջի մոտավորապես 30-ից 40 ժամ:

Ճամբարը կարող է հեռագրային կապ հաստատել 2 կ{լլոմետ}ր տարածության վրա գտնվող Տրիկիոմոյի բյուրոյից Ֆամագոստայի անգլիական կաբելի հետ, որը նրան կապում է Պորտ-Սախիդի հետ:

Ստորաբաժանումը, որը սպասում է խրճիթների կառուցմանը, իր տրամադրության ներքո ունի անգլիացիների կողմից գիջված 6 կոնաձև վրան: Բացի դրանից, կղզու անտառների վարչությունն իմ տրամադրության ներքո է դրել Մոնարգայում գոյություն ունեցող միակ կացարանը՝ այգեպանի տնակը: Այն կժառայի ֆրանսիական հրամանատարական կազմին: Այդ հրամանատարական կազմն այժմ բաղկացած է միայն 3-րդ կարգի քարզմանիչ սպա ղը Ժերայիանիոնից: Նա տարել է մի քարտուղարի՝ քարզմանիչ զինվոր Վատինանին, որը նաև մոտովարտող է: Ինչ վերաբերում է Մոնարգայի նավահանգստին, ծովակալ ղը Սպիտոզն իմ տրամադրության ներքո է դրել մեկ ավիազ նավաստու և երկու դեկակալի:

Մեկնումի պահին այս ստորաբաժանումը սպառազինվելու համար վերցրել է միայն երեք հրացան, որոնք հատկացրել էր «Ժյուլ Ֆերիին»: Պատասխանելու համար այս մարտկանց ցանկությանը, երեկվա տրալերով ես ուղարկել եմ 600 հրացան պարունակող արկղերից մեկը, որը հենց նոր էր բերել «Իսպահանը»:

Չնայած հրամանատարական կազմի բացակայությանը, այս խմբի կարգապահությունը, իրոք որ, ներշնչում է կատարյալ վստահություն: Թարգմանիչ սպա ղը Ժերայիանիոնը կարողացել է նրանց շրջանում ձեռք բերել ազդեցություն և հեղինակություն՝ իր օրինակելի ջանասիրությամբ և անհողողող հաստատակամությամբ: Կուպիտ, գրգռված պահվածքը չէր կարող, իհարկե, հանգեցնել այսպիսի դրական արդյունքի: Դա հայկական վաշտերի համար հրամանատարական կադրերի ընտրության ցուցանիշ է:

Նրանց կազմակերպումը կսկսվի առաջին անձնակազմի ժամանման պահից սկսած, որը մեկնել է Մարսելից նոյեմբերի 28-ին: Այդ գործը կարգավորելու համար ջրանցքի ընկերությունն իմ տրամադրության ներքո է դրել մի շենք և մի պահեստ: Ըստ գյուղերի հաշվառված զորակոչիկները՝ առանց լքելու կարանտինի կետի ճամբարը, կստանան հանդերձանք և սպառազինություն: Նրանց ուսուցումը կսկսվի միայն այն ժամանակ, երբ կապիտանը կունենա ֆրանսիական հրամանատարական անձնակազմ՝ սպաներ կամ ենթասպաներ: Վանի նախկին միսիոներ, հիվանդներին տեղափոխող զինվոր Նասսը, որը հենց նոր է ժամանել «Իսպահանով», կկարողանա մի փոքր անց այս մարդկանց ուսուցանել մեր լեզվի հիմունքները, որի գործածությունը կարող է պարտադրվել բոլոր նրանց, ովքեր գտնվում են ծառայության մեջ:

Տեղափոխումը Կիպրոսի ճամբար տեղի կունենա աստիճանաբար ստվարացող խմբերով, նոր ժամանողների աջակցությամբ, ճամբարի աստիճանական կազմակերպմանը զուգընթաց: Բայց դա ենթադրում է հրամանատարական կազմ թե՛ այդ օժանդակ ուժերին ուղեկցելու և թե՛ նրանցից տեղում վաշտեր կազմավորելու համար, այնժամ, երբ հավաքակայանն այստեղ կշարունակի զինվորագրել, հագցնել, հանդերձավորել, զինել, վարժեցնել քաղաքավարության:

Սերժանտ Սկրատովուզասը, որի մասին ինձ հայտնել էիք նոյեմբերի 28-ի ձեր թիվ 8011-9/11 ճեպագրով¹, Կիպրոսում կղառնա, այսպիսով, այդպես լավ հիմքերի վրա դրված տեղափոխման ակնամտեսք: Ինչպես ձեզ այդ մասին հաշվետվություն եմ ներկայացրել այսօրվա՝ դեկտեմբերի 4-ի իմ հեռագրով, անգլիացիներից ես կարողացա հայթայթել

¹ Արտատպված չէ:

անհրաժեշտ գործիքներ: Այս աշխատանքները սկսելու համար ես անհրաժեշտ չեմ համարել սպասել այն գույքին, որի մասին դուք ինձ հայտնել եք, քայց որի՝ Մարտիկից առաքման մասին դեռևս չեք նշել:

Այս հավելյալ ծախսերը (հանդերձանքի, ճամբարում տեղավորվելու, անհրաժեշտ գործիքների՝ մինչ գույքի տեղ հասնելը) արդարացնում են տաս հազար ֆրանկի սահմաններում երկրորդ վարկին վերաբերող իմ խնդրանքը: Առաջին վարկը քույրատրեց ոչ միայն նյութեր գնել և հոգալ չնախատեսված կարիքները Կիպրոսում, այլև ստեղծել, մասնավորապես, անգլիական սրահետների ապրանքներից բաղկացած առաջին պաշարները: Այս վարկի մեծ մասն, այսպիսով, կհատուցվի ամենօրյա փոխհատուցումների հաշվին: Ես ինձ պարտավոր եմ համարում տեղեկացնել, որ ֆրանսիական արժեքուղքը և փողը՝ փոխանակության ժամանակ շատ ավելի մեծ անկում են ապրում Կիպրոսում, քան Եգիպտոսում: Նույնիսկ ֆրանսիական ոսկին, Կիպրոսի արժեթղթի կամ դրամի հարաբերակցությամբ, ավելի ցածր արժեք ունի: Այսպիսով, շահավետ կլինի մեր վճարումներն անել անգլիական ոսկով: Այստեղ ես կարողացա, ընդունելի տոկոսով, դրանից ստանալ այն ստույաբաժանման համար, որը մեկնել է նոյեմբերի 30-ին:

2/ Եգիպտոսի և Ամերիկայի տարրերը: Իմ թիվ 2 գեկուցագրում ես ձեզ հաշվետվություն էի ներկայացրել այն պլանմանների մասին, որոնցով հաղորդակցվել էի Եգիպտոսի հայկական քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ: Նրանց օգնությունը, իսկ նվազագույնը՝ բարի կամքը, ինձ թվում էին անհրաժեշտ երաշխիք:

Համագործակցության այն ծրագրի հիման վրա, որն ուժերը կենտրոնացնում է Ֆրանսիայի կողմից ձեռնարկված հայկական զինվորական կազմակերպության ստեղծման շուրջ, այս ղեկավարները կազմակերպել են միասնական կոմիտե:

Ես այս կոմիտեի անդամներին ընդունել եմ Կահիրեում. բժիշկ Նևրուզի հետ մեկտեղ, որի մասին ես ձեզ հետ խոսել եմ, այն ընդգրկում է պ. Թեքեյանին՝ դեմոկրատական կուսակցությունից (չավավոր մի խումբ, որը նվիրված է Պոլոս փաշա Նուբարին) և մեր հնչակյան խմբակցությունների ղեկավարներին՝ պլանայից Ասլանյանին և Սապահյույանին: Վերջին երկուսը, որոնց մինչ այժմ ես խուսափել եմ տեսնել, սերտորեն կապված են եղել հայերի ահաբեկչական գործողությունների հետ, մասնավորապես, 1895 թ.: Նրանք կապեր են պահպանում այս խռովությունների համարձակ և եռանդուն կազմակերպիչների հետ, որոնց մեծ մասն Ամերիկա գաղթած գեյրոնցիներ են: Համաձայն համընդհանուր կարծիքի, այս մարդկանց համախմբումը մեր գործի կողմը կգրավի լավագույն կամավորներին:

Ինձ համար դժվար է այդ մասին դատելը: Միացյալ կոմիտեն ցանկանում է Հյուսիսային Ամերիկա ուղարկել իր անդամներից երեքին՝ կազմակերպելու համար, առանց աղմուկի, զինվորագրվածների հոսքը դեպի Կիպրոս: Հետաքրքիր է նշել, որ այդ պատվիրակությունն ընդգրկում է բացի Սուրբանիեի մանկավարժական ուսումնարանի պրոֆեսոր պ. Հանենյանից, որի մասին ես խոսել եմ իմ թիվ 2 գեկուցագրում, երկու մարդու՝ պլանայից Թեքեյանին և Սապահյույանին, որոնք դեռևս երեկ կատաղի թշնամիներ էին, որովհետև առաջինի աչքը հանեցին մի հարձակման ժամանակ, որը կազմակերպել էին մյուսի կողմնակիցները: Նրանց հաշտեցումը հարատևում է արդեն ավելի քան 3 շաբաթ, որը կարող է հուսադրել կարծելու, որ Ամերիկայի ճանապարհորդությունն այն չի փյուզի: Խոսքը վերաբերում է մի շրջագայության դեպի հայ վտարանդիների գլխավոր կենտրոնները՝ Բոստոն, Նյու Յորք, Պրովիդենս (Ռոդ Այլենդ), Չիկագո, Կալիֆոռնիա, Կանադա: Ես անհրաժեշտ համարեցի ձեզ խնդրել, որ այս քարոզչությունը դրվի մեր դիվանագիտական ներկայացուցիչների հսկողության ներքո: Հայ լիազոր ներկայացուցիչներն ինձ խոստացել են դիմել

ամենուր՝ ստանալու համար ֆրանսիական կառավարության հրահանգները:

Կոմիտեն մաս պաշտոնապես դրվել է Պողոս փաշա Նուբարի ենթակայության ներքո, որպեսզի ընդգծվի ազգային ղեկավարության ներքո գտնվելուն հանգող նրա միակ մտահոգությունը: Ընդդիմադիր երկու լրագրեր՝ «Արևը» և «Հուսաբերը», այդ ենթակայությունը բոլորին պարտադրելու համար տպագրել են միևնույն հրովարտակը:

Մնում է սպասել դրա արդյունքներին ռազմական ասպարեզում: Ես չեմ կարող, հրամանատարական կադրերի բացակայության պայմաններում, որևէ մեկի զինծառայության ընդունել: Կահիրեի, Ալեքսանդրիայի, Պորտ-Սալոյի մեր հյուպատոսություններում ես միայն տեղեկատվական քարտ եմ կազմել տալիս՝ այդտեղ ներկայացողների համար: Կոմիտեն հավաքագրում է միևնույն տեղեկությունները: Ի դեպ, լավ կլինի, որ մախբան Եզիպտոսի այս կամավորներին հավաքագրելը, հասնենք Մուսա լեռան գորակոչի արդյունքին:

.....

III. Եզրահանգում-խնդրանքներ

1/ Ես, այսպիսով, հետամուտ եմ կազմակերպմանը.

ա. Մուսա լեռան հայերից բաղկացած 2 վաշտի.

բ. 3-րդ հայկական վաշտի, որը բաղկացած կլինի Եզիպտոսի կամավորներից և թուրք դասալիքներից, որոնք ծագումով Փոքր Հայքից են և պահվում են Բոմբեյի բանտում. Ն {ո-րին սրբազնություն} և Թուրգունը, որը շրջագայության է մեկնել Հնդկաստան, ինձ խոստացել է տեսնել նրանց և մեր ծրագրի կողմը գրավել: Ես պ. Գեֆրանսին խնդրել եմ մաս բարեհաճել հարցնելու բրիտանական իշխանություններին, թե որքա՞ն են այն գերիները, որոնք կարող են ուղարկվել Կիպրոս:

գ. Լիբանանյան մի վաշտի՝ բաղկացած Եզիպտոսի կամավորներից:

Թվում է, թե դժվարին է այստեղ դրանց կողքին մահմեդականների մի ջոկ տեղավորելը:

Անհրաժեշտության դեպքում, ես կատեղծեմ այդ վաշտից առանձնացված մահմեդականների հատուկ խումբ: Ռուադի գաղթականները գրեթե բացառապես քրիստոնյաներ են:

Ես չեմ կարող համախմբել այս 4 ստորաբաժանումներում ընդգրկված որևէ տարրի, մինչ հրամանատարական կադրեր ունենալը: Լիբանանյան վաշտի համար ես մատնանշել եմ լեյտենանտ Կուլոնդրին: Ն {որին սրբազնություն} և Գարյանը մնան խնդրանքով ինձ է դիմել ամենահամար ձևով, և ես նշում եմ, հավանություն տալով այս պրելատի լիբերալիզմին, որ պ. Կուլոնդրը դավանում է բողոքական կրոն: Մերժանտ Բուստանին, որին ես ես եմ պահանջել, Սիրիական միության խիստ ազդեցիկ անդամներից մեկի որդին է և պատկանում է Լիբանանի ամենբազմաճյուղ ընտանեկան ցեղերից մեկին:

Ես մատնանշում եմ, բացի դրանից, իբրև բանիմացների. հայերի համար (որոնք, ընդհանուր առմամբ, հասկանում են բուրքերեն)՝ այսպես եզերների 27-րդ գումարտակի 111-րդ ենթաբաժնից փոխլեյտենանտ Շառլ Մարեշալին, որը խոսում է բուրքերեն, հունարեն, անգլերեն. լիբանանցիների համար՝ հետևակային 372-րդ գումարտակից լեյտենանտ Վիետին, որն արաբերենի պրոֆեսոր է Լիոնի բժշկական համալսարանում:

Հետևակային 112-րդ գումարտակից սերժանտ Պորտալիսին, որը ներկայումս, հավանաբար, գտնվում է Տուրնի հավաքակայանում, 25-րդ վաշտում, Յաֆֆայի սեփականատերերից մեկի որդին է, խոսում է արաբերեն:

Բեյրութում ծնված սերժանտ Պիլիբերտին, որի զինվորագրման հասցեն ինձ հայտնի չէ, բայց որի ընտանիքը բնակվում է Մարսելում, Մելիսնի ծառուղի 44 հասցեով:

2/ Ես խնդրում եմ, բացառության կարգով, նշանակել.

ա/ 1-ին կարգի վիրաբույժի հաստիքում՝ (պատերազմի հարստության ընթացքում)

բժիշկ Դ-Լեթյան Օհանեսին [sic]¹, որը ռազմադաշտային բժիշկ է և ցանկանում է իբրև զին-
վորական բժիշկ կամավոր ծառայության ընդունվել հայկական գումարտակում, և որի մա-
սին ես ձեզ հայտնել եմ իմ քիվ 1 զեկուցագրում:

բ/ Հայկական գրիգորյան քահանայի պաշտոնում՝ հավասարեցնելով այդ փոխլեյտե-
նանտի աստիճանի, քահանա Տեր Աբրահամ Տեր-Գալստյանին, որը եղել է Մուսա լեռան
համայնքի գյուղերի պաշտպանության կազմակերպիչներից մեկը: Նա մի ամրակազմ և
եռանդուն մարդ է, շատ սիրված այդ լեռնականների կողմից, որոնց երբևէ չի լքել: Նրա որ-
դին ճամբարի ամենախելացի երիտասարդներից է և կարող է մեծ ծառայություններ մա-
տուցել, եթե նրան մեր կողմը գրավենք:

3/ Այս լեռնականները կորստ հրաձիգներ են: Ես ցանկությամբ ունեմ նրանցից ձևավո-
րել զնդացրորդների ջոկատներ: Գնդապետ Բրեմունն ինձ խոստացել է Մուեզից մի զնդա-
ցի որդարկել ուսուցանող անձնակազմի հետ մեկտեղ՝ այն տեղակայելու և գործածելու
համար: Ես հարցնում եմ, քե արդյոք Մուեզի հավաքակալայանի զնդացրորդների ֆրանսիա-
կան ջոկերից մեկը, որոնք այդտեղ են գտնվում միայն ուսուցանելու համար և շուտով այդ-
տեղ դառնալու են անօգտավետ, չի կարող միևնույն նպատակով ինձ հատկացվել Կիպրոս-
սում: Նմանապես, ես գտնում եմ, որ հայերը շատ ընդունակ կլինեն զնդացրորդի պարտա-
կանության կատարման համար, եթե այդ զենքերի մի մասն ինձ ուղարկվի:

4/ Անհրաժեշտ կլինի նաև, որ ես ունենամ 2 կամ 3 փողիար-ուսուցիչ և գործիքներ:

5/ Ես Կորֆուում ինձ հաջողաձեղ փոխզնդապետ դր Ստալլին եմ բողել երկու ձի, որոն-
ցից նվազագույնը մեկի կարիքը, հավանաբար, անհրաժեշտ չի լինի: Ես խնդրում եմ, որ
ինձ վերադարձվի՝ անձամբ ինձ համար Սալոնիկում ընտրված Կոստուրինո ձին, քանի որ
աջ ձեռքիս տկարության պատճառով դժվարություններ ունեմ սանձերն օգտագործելիս:
Կիպրոսում ես ձիու կարիք կունենամ:

IV. Պորտ-Սալոյի ճամբարի վարչությունը:

Ի կատարումն ձեր հրամանների (հեռագիր 8182 փոքրածավալ), ես դրան չեմ միջա-
մտում: Այն օբստրուկցիան, որին այստեղ արժանացավ մեր աշխատանքը, աստիճանա-
բար կնվազի՝ չեզոք համաձայնության և նույնիսկ բարյացակամ հակվածության հրահան-
գի շնորհիվ, որը ես պարտադրում եմ ամենքին: Արդյունքում այդ հանգեցրել է ամենին էլ
ուչ միայն նվազագույնը՝ հայկական շրջաններին, այլև բրիտանական ռազմական իշխա-
նություններին մեր կողմը գրավելուն, որոնք կարողացել են հստակ պատկերացում կազմել
ճամբարի՝ մի քանի անգլիացի կառավարիչների մանրախնդիր տրամադրվածության մա-
սին: Հարկ է, ի դեպ, ճշգրտել, որ նրանցից շատերը իսրայելցիներ են Սիրիայից:

Պորտ-Սալո, 6-րդ դեկտեմբերի 1916 թ.:

Հ. Գ. - Ես ձեզ եմ ուղարկում, մեկ այլ փոստով, երեկ առաքված այս զեկուցագրի նոր
պատճենը: Ես այդտեղ բաց եմ բողել ձիուն վերաբերող խնդրանքը (էջ 11, պարագրաֆ 5),
որի կարիքը, ինչպես ինձ քվում է, համարժեք չէ այն դժվարություններին, որոնց կհանգեց-
նի այդ տեղափոխությունը:

Ամսի 5-ի երեկոյան ես ստացա ձեր քիվ 7675-9/11 հեռագիրը: Հենց որ անձնակազմը
ժամանի, որն անխուսափելի է («Լոտուսը» շուտով կհայտնվի Ալեքսանդրիայում), ես ձեռ-
նամուխ կլինեմ հաշվապահական բյուրոյի (1-ին կարգի վարչական սպա Գոնտիե), զին-

¹ Իմա՝ բժիշկ Դ-Լեթյան Հովհաննես:

վորագրման բյուրոյի (սերժանտ Ռիշար) և Պորտ-Սախլում ԱԼ-ի պահեստային վաշաի (կապիտան Բուֆֆե) կազմակերպանք: Առաջին երկու կազմակերպությունների համար ջրանցքի լքնկերությունը և հյուպատոսությունն ինձ են հասկացրել մի շենք, որը համենայն դեպս սկզբնական շրջանի համար բավարար կլինի:

Հավաքակալանի համար. բրիտանական իշխանություններից ես տարածք եմ խնդրում «ուղևորների ճամբար» հիմնադրելու նպատակով, որը նախատեսվում է կամավորների համար, նախքան նրանց Կիպրոս մեկնելը: Այդ տարածքը գտնվում է Հ {արավի} ո {ազմածովային} ո {իվիզիայի} («Մոնտկալմ-Աններս») պահեստի մոտակայքում: Չի կարող խոսք լինել ԱԼ-ի այս հավաքակալանի տեղադրման մասին կարսնտինի կետի ճամբարում, գաղթականների հարևանությամբ և ասիական ափին, առանց հաղորդակցության միջոցների:

Անգլիական բազայի հրամանատար գեղապետ Էլզուդն իր համաձայնությունը հայկական այս ճամբարի հիմնադրմանը բերում տալիս է միայն այն պայմանով, որ այդտեղ հսկողություն սահմանեն և դրա պատասխանատվությունն անընդմեջ կրեն ֆրանսիական ոչ շարքային զինվորականները: Այդ պայմանը ծառանում է, քանի որ Պորտ-Սախլը գտնվում է ռազմական գոտում: Չեր թիվ 7668-9/11 հեռագիրը նախատեսում է, ի դեպ, ֆրանսիացի ենթասպաների: Այժմ, երբ ես շատ ավելի մոտ տարածությունից եմ հետազոտել տեղական հրամանատարական կազմով ապահովելու հնարավորությունը, որի իրագործումը դժվարին է. նրանք ինձ թվում են մույնքան անհրաժեշտ, որքան և սպանելը:

Ֆրանսիացի ենթասպաների կարիքն այսօրվանից իսկ խիստ զգալի է: Կարևոր չէ, թե նրանք կլինեն գործող բանակից, թե պահեստայիններից: Այդ լքնությունը պետք է կատարվի ըստ նրանց ծառայության որակի: Մասնավորապես, խմելու սովորույթը՝ այստեղ սնուղղելի թերություն է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 21-33).

311

Հայաստանի անկախության կոմիտեի քարտուղար պ. Ռ. Հ. Ղազանջյանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն՛:

Սան Դիեգո, Կալիֆոռնիա, 20-ը դեկտեմբերի 1916 թ*.:
(*Ստացել է* Կաթինետը 1917 թ. հունվարի 12-ին):

Մենք հանդգնում ենք աղերսել ձեր ներողամտությունը և բարյացակամությունը մահացու վիրավոր մի երկրի համար:

Մենք ձեզ դիմում ենք երախտագիտությամբ լեցուն սրտով, որովհետև անցյալում Ֆրանսիան՝ բոլոր ժողովուրդներից ամենաազնվաբարյուն և ամենամեծահոգին, երբևէ լռության չի մատնել հայերի զանգատները:

1 Համանման բովանդակության մամակներ են ուղարկվել պ {արոնայ} ք Պուանկարեին, Ժյուսսերանին և գեներալ Լիտտեյին:

* Նախարարի նախնական ձեռագիր ծանոթագրությունը. «Արդյո՞ք դուր Ղազանջյանի և նրա կոմիտեի մասին տեղեկություններ եք քաղեք»:

Իհարկե անվճար է այն հանցագործությունների և անմարդկային վայրագությունների մեջ թափանցելը, որոնք Մեծ և Փոքր Հայքի ժողովուրդների նկատմամբ կիրառել են բուրբեքը և այլ բարբարոս ժողովուրդները: Մենք նաև հաճույքով ենք կարծում, որ մեր՝ իբրև ձեռներեց, խելացի ու հնարամիտ ժողովուրդի համբավը տարածում է գտել և համոզված ենք, որ դուք անտեղյակ չեք, որ Ֆրանսիացի ժողովուրդի հետ մեկտեղ, մենք հետամուտ ենք այն սկզբունքին, լրատ որի, յուրաքանչյուր օտար բռնատիրության ներքո՝ յուրաքանչյուր ազգի գոյության հիմքում պետք է ընկած լինեն հավասարությունն ու ազատությունը:

Այս պատճառների բերումով և այն մեծ արժանիքների հիման վրա, որոնք հայերն ի հայտ են բերել իբրև համայն աշխարհի քաղաքացիներ, նրանք իրավասու են հավակնելու անկախության և ինքնավարության: Նրանք ընդունակ են կառավարելու իրենց և ամենաբարձր մակարդակով զարկ տալու իրենց հայրենիքի հիասքանչ ռեսուրսներին:

Մենք գիտենք, որ մեր բյուրավոր հայրենակիցները, որոնք ցրված են, ինչպես այդ մասին ձեզ հայտնի է, աշխարհով մեկ, միանում են այս կոչին, որով մենք դիմում ենք ձեզ և խնդրում անել հնարավոր ամեն ինչ՝ ազատագրելու համար Հայաստանն անողորք քջամուտ իրապետությունից: Առանց պարծենալու և առանց սնապարծության, մենք Ձերո գերազանցության ուշադրություն ենք հրավիրում այն ծառայությունների վրա, որոնք մենք հաճույքով մատուցել ենք դաշնակիցներին այս պատերազմի ընթացքում: Դուք կարող եք իրազեկ դառնալ, թե ինչպես ենք մենք Ֆրանսիայի քաջարի զավակների հետ մեկտեղ բաժանել և՛ ռազմերթի դժվարությունները, և՛ ճակատամարտի վտանգները: Ռուսաստանն իր շարքերում ունի ավելի քան երեք հարյուր հազար հայերի: Անգլիան, չնայած անցյալում մեր հանդեպ ցուցաբերած անտարբերությանը, իր դրոշի ներքո ունի բազմահազար հայերի: Չունենալով սեփական բանակ, հայերն իրենց ծառայությունները մատուցում են իրենց բարեկամներին:

Հենց այս փաստն է, որ պատճառ է դարձել բուրբեքի՝ մեզ պատճառած շատ ավելի մեծ տառապանքներին, որոնց նախկինում մենք երբևէ չէինք արժանացել: Բռնությունների միջոցով և սուլթանի արյունոտ դրոշի ներքո համախմբվելու փոխարեն՝ դաշնակիցներին օգնելու պատճառով, Կոստանդնուսուլիսը մեկ տարի կամ դրանից էլ ավելի առաջ հրամաններ է արձակել [sic] հայերի համընդհանուր կոտորածների վերաբերյալ:

Ինչպի՞սի արդյունքի հանգեցրեց այդ հրամանագիրը:

Չուհաբերվեց ավելի քան ութ հարյուր հազար կյանք: Աստծո և մարդկության անունից, պարոն, հասել է այն պահը, երբ տիեզերքն այլևս չի կարող մնալ իբրև անզեն ու շատ երկար ժամանակ ճնշված մի անմեղ ժողովուրդի սառնասրտորեն իրականացվող կոտորածի անհողորդ դիտորդը:

Ահա թե ինչո՞ւ ենք մենք դիմում Ֆրանսիային, այն նույն ազնվաբար ֆրանսիային, որն իր վերկարար ձեռքն օվկիանոսի վրայով բարեկամաբար Ամերիկային պարզեց այն ժամին, երբ նա պայքարում էր իր անկախության համար. այն Ֆրանսիային, որն օգնել է Հունաստանին ձեռք բերելու իր ազատությունը և որն այս վերջին տարիներին այդքան շատ բան է արել բավանյան ժողովուրդների համար: Խնդրանքը շրթներին և հույսի փայլը մեր աչքերում ու սրտերում, մենք դիմում ենք ձեզ՝ ձեր մեծ ազդեցությունն օգտագործելու միջոցով Կիլիկիայի, երև ոչ ամբողջ Հայաստանի համար կատարյալ ազգային անկախություն ձեռք բերելու խնդրանքով, որը չի խանգարի Ռուսաստանին բողոքելու մեր երկրի այն տարածաշրջանները, որոնք արդեն գտնվում են նրա տիրապետության ներքո: Եթե այդ անկախության հարատևությունն ապահովելու համար ծագի որևէ պրոտեկտորատի անհրաժեշտություն, ապա մենք կգերադասեինք գտնվել միմյույն Ֆրանսիայի և նրա եռա-

գույն դրոշի հովանու ներքո: Բայց Հայաստանը պետք է անկախություն ձեռք բերեր, այն-պիսի մի տարածքում, որը Միջերկրական ծովում մավահանգիստ ունենար: Եթե այսօր այդ ամենն այդպես լիներ, ողջ աշխարհում սփռված հայ գաղթականները բոլոր կողմերից այդտեղ կշտապեին, հրատապ վերածնելու և ծաղկեցնելու համար այն երկիրը, որն իրավամբ իրենց է պատկանում:

Ի դեպ, դժվար չէ ըմբռնել այն առավելությունները, որոնք դաշնակիցները կարող էին իրենց համար ապահովել, եթե քսան կամ երեսուն տարի առաջ Անգլիան ցուցաբերեր փոքր-ինչ հաստատակամություն և պարտադրեր Թուրքիային իրականացնելու բարենորոգումներ, որոնք, այն ժամանակ հնարավոր էին: Ամենայն հավանականությամբ, Հայաստանն այսօր ազատ և անկախ կլիներ, ունենարով տասից տասներկու միլիոնի հասնող բնակչություն և գրեթե մեկ միլիոն մարդուց բաղկացած բանակ: Դրանով իսկ պատերազմի բնույթն Արևելքում ամբողջությամբ կփոխվեր, որովհետև հայկական ուժերը, օգնության շտապելով իրենց բարերարներին և ազատարարներին, բոլոր կողմերից կարող էին ջլատել թուրքերին:

Ներկա իրադրության պայմաններում, մենք ամեն օր նուսրանում ենք: Ի՞նչ տեղի կունենա երկրագնդի ամենաքաղաքակիրթ ժողովուրդներից մեկի հետ, եթե մոտալուտ ապագայում արմատական փոփոխության միջոցով շուտվի նրան հովանավորելու հարցը:

Ձերդ գերագանցություն, հայ ժողովուրդը երախտագիտության նկատմամբ պաշտամունք ունի: Եթե դուք, անկախ այն բանից, թե ինչ ձևով, կարողանաք նրան օգտակար լինել նրա ներկա ձգտումների հարցում, ո՛չ դուք, ո՛չ ձեր երկիրը զուր աշխատանք չեք թափի:

Մենք ձեզ մաղթում ենք հաղթանակներ: Թո՛ղ որ պատերազմի ավարտին դրանք պսակվեն փայլուն տրիումֆով:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 130-131).

312

Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն:

Փարիզ, 23-ը դեկտեմբերի 1916 թ.:
(*Ստացել են* Կաթ. դեկտեմբերի 27-ին,
Քաղ. վարչ. դեկտեմբերի 28-ին):

Ֆրանսիական կառավարությանը հղած իր ծանուցագրում նախագահ Վիլսոնը հայտարարում է, որ «ամեն կողմից ցանկություն է հայտնվել թույլ ժողովուրդների իրավունքները և արտոնությունները ոտնձգություններից կամ անարդարությունից ապագայում երաշխավորելու մասին» և այլն: Ես ձեզ եմ ուղարկում մի փոքր գրքույկ¹, որը Շվեյցարական կոմիտեն վերջերս է լույս ընծայել Ժնևում և ամփոփում է երկու փաստաթուղթ՝ ամենասարսափելիները, որոնք կարող են աշխարհում լինել, գրված Հայաստանի վայրագու-

¹ Խոսքը վերաբերում է այն գրքույկին, որը լույս է տեսել Հայերի օգնության շվեյցարական կոմիտեի կողմից՝ «Quelques documents sur le sort des Arméniens en 1915-16, Genève, 1916, fascicule III».

թյունների ականատեսը դարձած գերմանացիների կողմից: Այդտեղ կարելի է տեսնել, թե գերմանացի և թուրք «ազատարարներն» ինչպես են գործել հանուն հայ ժողովրդի իրավունքների երաշխավորության, որը բոլորից թույլն է և ճնշվածը:

Դա գերմանական և թուրքական կառավարությունների դեմ ուղղված ամենասարսափելի մեղադրական փաստաթուղթն է, որը կազմված է երկու ազնիվ գերմանացիների կողմից:

Հանուն Ֆրանսիայի (միայն որը և կերպաշխավորի թույլ ժողովուրդների իրավունքները) և նրա դաշնակիցների հատրանակի տաժվող իմ ամենաջերմագին ցանկությունների հետ մեկտեղ, ես ձեզ խնդրում եմ, պարոն նախագահ, բարեհաճել ընդունելու իմ հարգալից և նվիրական զգացումների հավաստիքը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 132-133 v).

313

Փարիզում Սիրիական կենտրոնական կոմիտեի նախագահ պ. Շեքրի Պանենը՝ Հանրապետության նախագահ պ. Պուանկարեին

Ն՛:

Կահիրե, 30-ր դեկտեմբերի 1916 թ.:

Հայկական զինվորագրում.

Հայերը ցուցաբերել են հրաշալի եռանդ: Մի բանի հանդիպումները բավական են եղել խիստ տարանջատված կուսակցությունները միավորելու և հրամանատար Ռամիոյին մի վաշտի անձնակազմ տրամադրելու համար: Այլը դեռևս զալիս են և ցանկություն կունենան այդտեղ գալու: Ռ՞ւմ մտքով կանցներ: Հրամանատարը պետք է չափավորի նրանց եռանդը, որովհետև չնայած բոլոր հավաստիացումներին, չի ստանում անհրաժեշտ գույք: Չունենալով այս մարդկանց զինելու և հանդերձավորելու հնարավորություն, չի բացատրում, որ նա կորցնի նրանց: Ինքնին հասկանալի է, որ նույն բնույթի ղեկավարություն է ծագում սիրիացիների հարցում: Եթե նրանք ժամանեն նշանակալից բլով, ինչպե՞ս կվարվեն նրանց հետ: Ջինվորների հետ, որոնք երկու մասի են բաժանված ըստ բաճկոնների և գլխարկների: Այդուհանդերձ, հարկ կլինի ընդունել և, մասնավորապես, խմանալ, թե նրանք ի՞նչ են ցանկանում:

Հայկական զինվորագրման դյուրինությունը և կամավորների քաղաքացիությունն այնպիսի ցուցանիշներ են, որոնք, ինչպես ինձ է թվում, պետք չէ շրջանցել: Ռուսաստանը գրեթե ամբողջությամբ վտարել է իր բանակների շարքերից հայերին: Ռազմական դրդապատճառներով: Ամենևին ո՛չ, այլ քաղաքական դրդապատճառներով: Ռուսական բյուրակրատիան պարզապես երկյուղում է այս լեռնականների ոգուց, որոնք գրեթե բոլորը հարում են հեղափոխական կոմիտեներին և որոնց պասսիվությունը շատ հեռու է հուսադրող լինելուց: Սակայն շատ սպաներ այդ առթիվ վշտացած են և այդ չեն քաբցնում: Ռուսական գերագույն հրամանատարության հետ համաձայնության հանգեցնելով, մենք որոշակի առավելություն կունենալինք, եթե հայերի հետ վարվելինք այնպես, ինչպես ջանում ենք վարվել սիրիացիների հետ: Եթե այս բոլոր մարդկանց իրենց երկյուղած օգտագործեն, ապա նրանք արժեքավոր ծառայություններ կմատուցեն: Մի բան է, նրանց կարծիքով, լեգեոնի մեջ քափանցելը և Վերդենում կամ Սոմի մոտ կռվելը, մի բան է իրենց անհատականությունը կորց-

1 Հատված, այս նամակից մենք արտատպում ենք միայն այն մասը, որը վերաբերում է հայերին:

ները, այլ բան՝ կատարելապես հստակ ամբողջություն ձևավորելը, որը նախատեսված է գործելու անատոլիական հողի վրա: Այն պահից իսկ, ինչ այդ նրանց հասկացնել են տվել, հայերը և սիրիացիները խորապես այդ գիտակցում են, բայց հերթական անգամ, գերակշռող մասը դրան անտեղյակ է, որը հետևանք է ճշգրտման և բավական արդյունավետ գործողության բացակայության:

(A.M.G., 16 N 3199).

314

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 25:

Կահիրե, 8-ը հունվարի 1917 թ., ժ. 18.20-ին:
(Ստացել է Զաղ. վարչ. հունվարի 9-ին):

Դեկտեմբերի (10-ի) իմ թիվ 600 հեռագրի շարունակությունը¹:

Արևելյան լեզեոնի համար կամավորներ զինվորագրելու նպատակով Ամերիկա ուղարկված պ. Հանեմյանը և պ. Սապահյուլյանը, հունվարի 2-ին «Պոլիտեխնիկ» Պորտ-Սալոնից մեկնել են Մարսել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 45).

315

Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը² Ռազմական նախարար, գեներալ Լիոտեյին

Ա. թիվ 122:

Փարիզ, 10-ը հունվարի 1917 թ.:

Հիմնվելով այս ամսի 2-ի ձեր նամակի վրա³, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ մինչ այժմ Վաշինգտոնում, Ռիո դը Շանեյրոյում, Մոնտեվիդեոյում, Բուենոս Այրեսում, Կարալասում և Պետրոգրադում գտնվող մեր առաքելությունների ղեկավարները⁴, որոնք իմ ջանքերի շնորհիվ ղեկտեմբերի կեսերին տեղյակ են պահվել «Արևելյան լեզեոնի» ստեղծմանը⁵, դեռևս ի վիճակի չեն եղել ինձ տեղեկություններ հաղորդելու հայերի և սիրիացիների զինվորագրման հարցի շուրջ այն երկրներում, որտեղ գտնվում են:

1 Տես վերը թիվ 302 փաստաթուղթը:

2 Ստորագրել է պ. դը Մարժերին:

3 Արտատպված չէ: Այս նամակի մասին տես ստորև թիվ 317 փաստաթղթի ծանոթագրությունը:

4 Համապատասխանաբար՝ պ (արոնայ)ք Ժյուսեբրանը, Կյոդելը, Լեֆերը, Ժյուլիենին, Ֆարրը և Պալեոլոզը:

5 Խոսքը վերաբերում է 1916 թ. դեկտեմբերի 13-ի ճեպագրին, որը վերն արտատպվել է թիվ 308 փաստաթղթում:

Ես հենց նոր տեղեկացա շաբաթվա վերջերին այ. Հանենյանի և այ. Սապահգյուլյանի Մարսել ժամանմանը. առաջինը Հնչակ կուսակցության ղեկավարն է, իսկ երկրորդը՝ Դրոշակ կուսակցության ղեկավարը Եզիպտոսում¹: Այս երկու հայերը պետք է մեկնեն Հյուսիսային Ամերիկա՝ Արևելյան լեգեոնի համար կամավորներ զինվորագրելու նպատակով: Միաժամանակ ձեր վարչության մոտ՝ իբրև Ամերիկայի հայկական կոմիտեների ներկայացուցիչը Ֆրանսիայում լիազորվելու համար մատնանշվել է Փարիզի հայկական գաղութի պատվարժան անձանցից մեկը՝ ուղղակի գործողությունների սկզբնական շրջանում Փարիզում ստեղծված Հայ կամավորների կոմիտեի նախագահ այ. Ս. Սևաջյանը, որը պարտավորված կլինի դրանց հաշվին մուծելու այն կամավորների բոլոր ճանապարհաժախսերը, որոնց զինվորագրումը վերջնականապես հաստատվել է: Պ. Սևաջյանը բնակվում է Ռապայի փողոց} 19 հասցեում, նրա հեռախոսի համարն է՝ Սաքս 43-56:

Ես հոգ եմ տարել կրկին հեռագրելու Հանրապետության ղեսպանին Լոնդոնում², հիշեցնելու համար նրան այն կենսական շահագրգռվածության մասին, որը մենք կունենանք, եթե անգլիական կառավարությունն ընդունի մեր առաջարկությունները, որոնք վերաբերում են Եզիպտոսում գտնվող հայերին և սիրիացիներին «Արևելյան լեգեոնի» կազմում զինվորագրելու հնարավորությանը և ներկայումս Եզիպտոսում ու Կիպրոսում գտնվող սիրիական ծագում ունեցող այն թուրք գերիներին մեր տրամադրության ներքո դնելուն, որոնք ցանկություն կունենան այդ լեգեոնում կամավոր ծառայության անցնելու շուրջ պայմանավորվածություն կայացնելու:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 62-62 v).

316

Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը³ Վաշինգտոնում Ֆրանսիայի ղեսպան այ. Ժյուսսերանին

Ճ. թիվ 24:

Փարիզ, 11-ը հունվարի 1917 թ.:

Հիմնվելով 1916 թ. դեկտեմբերի 13-ի իմ թիվ 643 մամակի վրա⁴, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ Եզիպտոսից եկող այ. Հանենյանը և այ. Սապահգյուլյանը, որոնք ուղարկվել են Հյուսիսային Ամերիկա «Արևելյան լեգեոնի» համար կամավորներ զինվորագրելու, այս շաբաթ սպասվում են Ֆրանսիայում: Ես ձեզ կհեռագրեմ նրանց մեկնելու ամսաթիվը, հենց որ այն ճշգրտվի:

Համաձայն այն տեղեկությունների, որոնք ինձ են տրամադրվել, այ. Սապահգյուլյանը Հնչակ կուսակցության ղեկավարն է, որը հիմնադրվել է մոտավորապես 25 տարի առաջ՝ Թուրքիայում հայերի շահերի պաշտպանության համար: Լինելով նշանավոր հոեետոր, նա պաշտպանել է հայկական գործն արտասահմանյան կոնֆերանսներում: Պ. Հանենյանն անդամակցում է Դրոշակ կոմիտեին, որը հետապնդում է միևնույն նպատակը, ինչ Հնչակ

1 Նախարարը բոլը է տախ սխալ: Գիշտ հսկատակը, այ. Հանենյանը Դրոշակ կուսակցության ղեկավարն է, իսկ այ. Սապահգյուլյանը՝ Հնչակ կուսակցության:

2 Պ. Պոլ Կամբոնը:

3 Ստորագրել է այ. դը Մարտերին:

4 Վերն արտատպված է թիվ 308 փաստաթղթում:

կուսակցությունը և որի հիմնադրումը քսան տարվա պատմություն ունի: Այս երկու կուսակցությունները, ինչպես նաև Ռ-ամկավար կոչվող դեմոկրատական կուսակցությունը, ոչ հեռավոր անցյալում համաձայնության են հանգել օսմանյան լծից հայերին ազատագրելու նպատակով Եգիպտոսում իրենց գործառնությունները միավորելու և իրենց ջանքերը համալսելու համար:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք պ. Հանենյանի և պ. Սապահյանի մոտալուտ ժամանման մասին տեղեկացնել Ֆրանսիայի հյուպատոսին Նյու Յորքում, տրամադրելով պ. Լիբերին այն գաղտնի տեղեկությունները, որոնք իմ Դեպարտամենտը ձեզ է հաղորդել «Արևելյան լեզեոնի» կազմավորման մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 65-65 v).

317

Ռ-ազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 422-9/11: Գաղտնի:

Փարիզ, 17-ը հունվարի 1917 թ.:

Իբրև հունվարի 2-ի իմ թիվ 15-9/11 ճեպագրի² շարունակություն, ես պատիվ ունեմ ձեզ հղել սրան կից, անիրաժեշտության դեպքում օգտագործելու նպատակով, զումարտակի հրամանատար Ռոմիոյի վերջին դեկտեմբերի 18-ի թվակիր, թիվ 6 զեկուցագրից մի քաղվածք³, որն ինձ հաշվետվության է ներկայացնում Արևելյան լեզեոնի համար կամավորների զինվորագրման հարցում Եգիպտոսի հայերի և սիրիացիների շրջանում նրա քայլերի մասին:

Մյուս կողմից, ի պատասխան հունվարի 10-ի ձեր թիվ 122 ճեպագրի⁴, ես պատիվ ունեմ ձեզ խնդրել բարեհաճելու այժմվանից իսկ Ամերիկայում գտնվող մեր գործակալներին տեղեկացնել հայ լիազոր ներկայացուցիչների ժամանման մասին, որոնց Մարսելում ափ դուրս գալու մասին դուք ինձ հաղորդում եք: Շահեկան կլինի այդ լիազոր ներկայացուցիչներին տեղեկացնել, որ համաձայն հունվարի 6-ի թիվ 122-9/11 հրահանգի դրույթների, որի պատճենը կցվում է⁵, ժամանելով Ֆրանսիա, կամավորները պետք է ներկայանան այն նավահանգստի (Հավր, Բորդո կամ Մարսել) կայազորի բյուրոյին, որտեղ ափ դուրս կգան, որպեսզի այդտեղ Արևելյան լեզեոնում կամավոր հիմունքներով հատուկ զինվորագրման շուրջ պայմանավորվածություն կայացնեն: Նրանք պետք է ունենան ինքնությունը հաս-

1 Ստորագրել է գեներալ Վալանտինը:

2 Այս ճեպագրում, որն արտատպված չէ, Ռ-ազմական նախարարը հարցնում է Դեպարտամենտին, թե արդյո՞ր Ամերիկայում արևելյան կոմիտեների հետ համաձայնություն է կայացվել Արևելյան լեզեոնում հայերի և սիրիացիների զինվորագրման հարցի շուրջ:

3 Արտատպված չէ: Հրամանատար Ռոմիոն տեղեկացնում է Ռ-ազմական նախարարությանը, որ Եգիպտոսի հայկական կոմիտեները վճռել են Ամերիկա ուղարկել երեք պատգամավորի՝ պ(արոմայ)ք Հանենյանին, Սապահյանյանին և Դամասյանին, որոնց հանձնարարվել է համեստ բարոզություն իրականացնել հայ կամավորներ զինվորագրելու նպատակով:

4 Տե՛ս վերը թիվ 315 փաստաթուղթը:

5 «Հրահանգներ Արևելյան լեզեոնի համար նախատեսված օսմանյան ժառանգ կամավորներին Ֆրանսիայում ընդունելու պայմանների մասին». արտատպված չէ:

տատող փաստաթղթեր, հնարավորության սահմաններում՝ բարոյական նկարագիրը հավաստող վկայական՝ տրված կամ այն երկրում գտնվող Ֆրանսիայի հյուպատոսի կողմից, որտեղ նրանք բնակվել են, կամ ձեռնարկում հավատարմագրված արևելյան կոմիտեներից մեկի նախագահի կողմից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 72-72 v).

318

Բեռնում Ֆրանսիայի դեսպան պ. Բոն՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. քիվ 121:

Բեռն, 17-ը հունվարի 1917 թ.:
(*Մտացել էն* Կար. հունվարի 18-ին,
Քաղ. վարչ. հունվարի 19-ին):

Ես պատիվ ունեմ Ձերոյ գերագանցությանը հղել օսմանյան սկզբնաղբյուրներից քաղված հետևյալ տեղեկատվական քարտերը¹:

Անտանտի պատասխանը կենտրոնական տերությունների ծանուցագրին և նախագահ Վիլսոնի հայտագրին²: Հայկական հարց:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 141).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

Հայկական հարց

15-ը հունվարի 1917 թ.*:

Բեռնում գտնվող Թուրքիայի նախարարը¹ որոշ ժամանակից ի վեր զբաղվում է հայերով: Նա քուրքական գործակալներին ոչ միայն խորհուրդ է տալիս Շվեյցարիայում հոգատարությամբ վերաբերվել նրանց և թվում է, թե խոչընդոտել է Ժճճի Նազիֆի ջանադրությանը (տե ս քիվ 234), որը հատուկ համձնարարություն էր ստացել նրանց գործունեության և արարքների մասին Կոստանդնուպոլսին հաղորդելու շուրջ, այլև մասնավոր գլուխներում հաճախ իր խղճահարությունն է հայտնում նրանց դեմ կիրառված վայրագությունների առիթով: Վերջապես, մի քանի շաբաթ առաջ նա ցանկություն է հայտնել մամուլում ներկայացնելու իր տեսակետն այս հարցի շուրջ:

Մյուս կողմից, քանի որ վերջին դեկտեմբերի 21-ին Ցյուրիխի «Բլեթեր ֆյուր դիպլոմաթի» լրագրի խմբագիր պ. Վեյնզինգերն այդ հարցին նվիրված հոդված էր խնդրել Շվեյցա-

1 Տեղեկությունները ժողովել է գաղտնի գործակալ X-ը:

2 Տպագրված չէ:

* Դեպարտամենտի ծանոթագրությունը. «Հաղորդել պ. Չոպանյանին»:

3 Ֆուսդ Սելիմ բեյը:

րիայում գտնվող քուրքական կառավարության գործակալներից մեկից՝ «ջանալու համար մեղմացնել շեզոք հասարակական կարծիքի վրա Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների տևած լուրջությունը», շատ ավելի մտահոգված թվալով, մասնավորապես, Գերմանիային, քան Թուրքիային արդարացնելու հարցով, այդ գործակալը հենց նոր գրել է սրան կից հոդվածը, որը հանձնել է նշված թերթին այն քանից հետո, երբ այն ընթերցել է և խմբագրել անձամբ Սելիմ Ֆուադը: Այդ հոդվածը մի քանի օր անց, անկասկած, կտպագրվի կամ «Բլեթերի ֆյուր յիպլոմաթիում», կամ «Ռումուշաու դես աուվերթինգեն դինստեսում», որի մի քանի համար են ձեռք կբերեն և կդառնա բուն մի պաշտոնական հարդազրույթուն, քանի որ այն մտահոգացվել է Բեռնում գտնվող օսմանյան դիվանագիտական առաքելության ներշնչմամբ և արժանացել նրա հավանությանը: Ես հենց նոր ձեռագիրն իմ տրամադրության ներքո ունեցա մի քանի ժամով և այն արտատպում եմ բառացիորեն, այնպես որ, եթե գերմանական օրգանն այնտեղ որոշ կրճատումներ անի կամ որոշ փոփոխություններ կատարի, այդպիսի կլինի հավաստել քուրքական նախարարի ու գերմանացի լրագրողի տեսակետների միջև առկա սարքերությունը:

Առաջին էջի 5-րդ սարքերության առաջին երեք տողերը, ինչպես նաև երկրորդ էջի վերջին երկուսը՝ ակնարկում են գերմանացի ուսուցիչների՝ վայրագությունների մասին պատմությունները, որոնք արտատպվել են ֆրանսիական զանազան օրգաններում և որոնց առթիվ Սելիմ Ֆուադը հատուկ գեկուցագրով մոլեզմաբար բողոքել է Կոստանդնուպոլսում:

(Ստորագրված Բ) X:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 142).

II

Հայկական հարցը

15-ր հունվարի 1917 թ.:

Ազգությունների հարցը Թուրքիայում բոլոր ժամանակներում եղել է եվրոպացի այն կրապարակախոսների թույլ կողմը, որոնք զբաղվել են Արևելքի գործերով: Անիրազեկությունը և թեթևամտությունը եղել են նրանց թերություններից նվազագույնները, նույնիսկ այն դեպքում, եթե նրանք գործնականում համակված են եղել անկողմնակալ դատավճռի կայացման ցանկությանը, մի բան, որը նրանց մեծամասնությանը բնորոշ չէ:

Ամեն անգամ, երբ խոսքը վերաբերվել է Թուրքիայի ներքին վարչակարգին, եվրոպական մամուլի կողմից բարեհաճորեն ընդունվել են երկու բանաձևեր կամ ավելի ստույգ երկու աքսիոմաներ՝ քրիստոնյաների ճնշումը և ազգությունների ճնշումը: Այս աքսիոմաներն այնպիսի հզորություն են ունեցել, որ նույնիսկ նեղություն չեն կրել դրանց կարևորությունը յուրջ բնության ենթարկելու: Նույնիսկ նրանք, ովքեր շահադիտական նպատակով են ձեռնամուխ եղել Թուրքիայի պաշտպանությանը, չէին համարձակվում բացահայտորեն գրոհել այս աքսիոմաները և միշտ փորձում էին բացատրել, մեղմացնել ու անգամ լուրջամբ շրջանցել այն, ինչն, ինչպես իրենք էին կարծում, պաշտպանության ենթակա չէր:

Այսպիսին էր պատերազմից առաջ եվրոպական մամուլում արտյացող՝ գրեթե համընդհանուր բնույթ կրող մտայնությունը: Թուրքը ճնշողն էր, քրիստոնյաները, նրանք, ովքեր թուրքեր չէին՝ ճնշվողները և եթե երբեմն հարկ էր լինում պաշտպանել ճնշողին, ապա նման

դիրքորոշումը պայմանավորված էր լինում բացառապես քաղաքական եսասիրությամբ, բայց ոչ թուրքերի հանդեպ տածվող համակրանքով:

Պատերազմն էական փոփոխության չի ենթարկել իրավիճակի նկատմամբ դրսևորվող մնան վերաբերմունքը: Նրանք, ովքեր Թուրքիան դասում են իրենց թշնամիների շարքում, չեզոքներից նրանք, ովքեր այս կամ այն պատճառով արտահայտվել են Անտանտի օգտին, բնականաբար, շահագրգռված են էլ ավելի զարկ տալու նախապատերազմական տեսություններին, գուշելու Թուրքիայում ճնշումների, ժողովուրդներին հետևողականորեն ոչնչացնելու մասին: Ծիծաղելի կլինի հավաստել այդ մարտավարության ճարակությունը, մասնավորապես, այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ այն ողբերգական անցքերը, որոնք տեղի են ունեցել Թուրքիայում, թվում է, թե ավելի քան երբևէ նրանց իրավունք են ընձեռում:

Սակայն անբացատրելիս այն մարտավարությունն է, որը սովորաբար ոլղեզովում է ընդդիմադիր ճամբարի հրապարակախոսների կողմից, նրանց կողմից, ովքեր դասվում են Թուրքիայի դաշնակիցների և բարեկամների շարքում: Նրանցից որևէ մեկը մինչ այսօր քաջություն չի ունեցել արձաթծելու հարցն իր ամբողջությամբ, քննության առնելու անցյալը, խորամուխ լինելու այն անողոր պատճառների մեջ, որոնք պայմանավորել են հայերի հանդեպ Թուրքիայի, հակառակ նրա ցանկության, ոլղեզում կոշտ քաղաքականությունը: Նրանք տուրք են տվել խորամանկության, կիսատ-պուստ մեկնաբանությունների ծուռու-մուռ ուղում: Ամենաշրջահայացները լուրջում են պահպանել: Ուրիշները վերջապես, յուրացնելով որոշ պետական գործիչների բանաձևը, կարծել են, թե կարող են լուծել հարցը, հայտարարելով, որ իրենք իրավասու չեն միջամտելու մի երկրի ներքին գործերի, որի հետ կապված են միայն քաղաքական դաշինքով, արտաքուստ ընդունելով, այսպիսով, որ Թուրքիան արդարացի է, բայց որ իրենք այդտեղ ոչինչ անել չեն կարող:

Մենք չենք գտնում, թե շատ կախավենք պնդելով, որ եթե Թուրքիան ներկայումս չեզոք աշխարհի մասնավոր արժանանում է բացասական կարծիքների (ալիսբար հարկ է բնորո-նել, որ դա իրոք այդպես է), ապա այդ պայմանավորված է ոչ այնքան նրա թշնամիների քայտզությամբ, որքան նրա բազմաթիվ բարեկամների անխուհեմ և ոչ այնքան պարզորոշ դիրքորոշմամբ:

Մենք չենք հավակնում Հայկական հարցի քննարկմանն այստեղ իր ողջ խորությամբ: Դա օբյեկտիվորեն անհնար կլինի, քանի որ այդ հարցը կարող է սպառվել միայն բովանդակ հատորներում: Մենք պարզապես բավարարվում ենք մի քանի բառերով ընդգծելով, թե ինչպիսիք են այն ողբերգական և անողոր հանգամանքները, որոնք թուրք կառավարիչներին հարկադրել են դիմել Հայկական հարցի բռնի լուծմանը, որի մասին բարի կամքի տեր որևէ մարդ Թուրքիայում դրանից երկու տարի առաջ չէր կարող խոսիել:

Մենք չենք պատրաստվում թույլատրել ծիծաղելի անխուհեմություն՝ ժխտելով այն ցավալի փաստերը, որոնք վիճարկման ենթակա չեն: Ծիշտ հակառակը, մենք պատրաստվում ենք դեմ հանդիման ելնել այդ անողոր հարցին, շեշտը դնելով ամենատանջալից իրադարձություններին վրա, կարողանալու համար շատ ավելի ցայտուն ձևով ընդգծելու անցյալին հակադրվող պատկերը և ցույց տալ մեր ընթերցողներին, որ միայն գոյության համար մղվող անգիջում պայքարի անողոր անհրաժեշտությունն է պարտադրել թուրքական կառավարությանն այն միջոցառումները, որոնք նրան նողկանք էին պատճառում և որ միայն երկու դարից ի վեր թշնամիների խառնամբոխի կողմից հետապնդվող ժողովրդի՝ երկարա-ձիգ քաղաքական Գողգոթայի ամենաողբերգական սահմանագծին հասած մոլեգնու-թյունն էր ի գործու նրան դրդել ծայրահեղությունների, որոնք հավելվել էին կառավարական

միջոցառումներին և ծնունդ տվել Արևելյան Անատոլիայում տեղի ունեցած սարսափելի ողբերգությանը:

Ազգային համախմբման տեսակետից՝ ի թիվս Թուրքիայի ենթակայության ներքո գտնվող բոլոր ժողովուրդների, հայ ժողովուրդը գտնվել է ամենաարտոնյալ վիճակում:

Կարելի է տարբեր կարծիքներ ունենալ ժողովրդի ձգտումների օրինական եզրագծերի շուրջ: Կարելի է համառել, որ ժողովուրդը կարող է անկաշկանդ զարգանալ միայն քաղաքական անկախության հովանու ներքո: Սակայն նյսնց համար, ովքեր ընդունում են, որ ժողովրդի զարգացման համար անկախություն ունեցող տարածքն անխուսափելի պայման չէ, նրանց համար, ովքեր էլ ավելի հեռուն գնալով, ոչ առանց փաստարկի, գտնում են, որ տարածքային ինքնավարությունը, որն օբյեկտիվորեն չի կարող ընդգրկել միևնույն ժողովրդի բոլոր անդամներին, շատ ավելի խոչընդոտ է այդ զարգացման համար, վերջիններիս համար այն վարչակարգը, որը բաժին էր ընկել հայերին Թուրքիայում տասնիններորդ դարի վերջին կեսին և քսաներորդի սկզբին, կարող է բնութագրվել իբրև իդեալական, եթե մի կողմ քողենք 1896 թ. և 1909 թ. ջղածությունները, ոյունց պատճառները հարկ է որոնել ցանկացած այլ ասպարեզում, բայց ոչ բուրբակյան պետության հակահայկական քաղաքականության ոլորտում:

Պատկերացում կազմելու համար այն արտոնությունների ծավալի մասին, որոնցից հայ ժողովուրդն օգտվում էր Թուրքիայում, բավական է բաց անել Օսմանյան կայսրության օրենքների ժողովածուի՝ պատրիարքությունների կազմավորմանը վերաբերող գլուխը. հոգևոր իշխանության հանգուցակետում և նրանից վեր, որը մարմնավորում էր պատրիարքը և կենսագործում հոգևորականությունը, գտնվում էր կայսրության բոլոր հայերի կողմից հավասար ընտրական իրավունքի հիման վրա ընտրված աշխարհիկ ազգային ժողովը, որը լուծում էր ժողովրդի բոլոր ներքին հարցերը, հոգում նրա բոլոր շահերի մասին, կարգավորում կրթությունը, սահմանում հարկերը, վերահսկում պատրիարքին, անհրաժեշտության դեպքում՝ նրան հեռացնում պաշտոնից և նրա ընտրությանը վճարող մասնակցություն ունենում: Այս ժողովի կողմից ընտրված աշխարհիկ խորհուրդը ղեկավարում էր ազգային բոլոր հաստատությունները, հիմնադրում դպրոցներ, հիվանդանոցներ, զանձում հարկերը, հսկողության ներքո վերցնում վանքերը:

Օսմանյան կառավարությունը, որի կայսրության օրենքներով և կայսրական հրովարտակներով երաշխավորել էր հայերի ազգային վարչական կառուցվածքը, վերահսկողության այնպիսի նվազագույն իրավունք ուներ, որը կարող էր վրդովել ժամանակակից եվրոպական ամենալիբերալ պետության կողմնակցին, իսկ Ռուսաստանի հեղափոխական կուսակցություններն իրենց ծրագրերում ժողովուրդների համար չեն նախատեսում ավելի լիբերալ վարչակարգ, քան այն, որը նախքան 1915 թ. ողբերգությունը գործում էր Թուրքիայում:

Ահա այն, ինչը կարելի է ասել տեսական կողմի մասին: Գործնական կողմը՝ կենսագործման կողմը, հարկ է ընդգծել, մի փոքր ավելի մշուշապատ է: Եթե մի կողմից անառարկելի է, որ բուրբակյան կառավարությունը հայերին հատկացրել էր շատ ավելի մեծ ազատություններ, քան դրանք նրանց համար նախատեսվում էին օրենքով, եթե նա երբևէ չի կիրառել հայկական դպրոցները վերահսկելու իր իրավունքը, մյուս կողմից, հարկ է ընդունել, որ հայ ժողովուրդը տառապել է, ահռելի չափերով է տառապել նահանգների հողի վարչություններից և բյուրոկրատական անիշխանությունից, որոնք բոլոր ժամանակներում իշխել են Թուրքիայում: Մենք ասում ենք, որ հայ ժողովուրդը տառապել է, օգտագործելու համար Արևմուտքի հրապարակախոսների կողմից գերադասված արտահայտությունը: Ըստ էության, Թուրքիայի ողջ բնակչությունը, անկախ դավանանքի կամ ազգության տարբերու-

թյունից, տառապել է փաստորեն արատավոր վարչության, նույնիսկ՝ վարչության բացակայության պատճառով: Թուրքերը, քրդերը և հայերը, մահմեդականներն ու քրիստոնյաները, յուրաքանչյուրն ունեցել են շահագործման, կեղեքման իրենց բաժինը: Նրանք՝ թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները տառապել են ֆեոդալների հասցրած վնասներից ու աստիճանավորների բռնություններից: Նրանք հավասարապես ճաշակել են դատարանների զսգրելի արդարադատությունը, աստիճանավորների կաշառվածությունը, տիրույթների կողոպուտը հարուստների կողմից, անվտանգության կատարյալ բացակայությունը: Նրանց համար, ովքեր իրազեկ են այս շրջանների կացությանը, այն պնդումը, համաձայն որի մահմեդականներն ավելի լավ վիճակում են գտնվել, քան հայերը, ի հայտ է գալիս իր ողջ ստահողությամբ:

Ակնհայտ է, որ այն ամենին, ինչը նախորդում է, հակադրվում է մի լուրջ առարկություն՝ 1896 թ. կոտորածները: Բայց որպեսզի կարողանանք քննարկել այս առարկությունը, հարկ է մի կողմ թողնել եվրոպացի քաղաքական գործիչների քաղաքական բարոյականությանը հատուկ պարգունակ համոզումները, որոնք այդ կոտորածներում շատ վատ դեր են ունեցել: Հարկ է մաս հրաժարվել այն մոլորությունից, որը քաղաքական ճգնաժամերը մեկնաբանում է սոսկ մեղավորի կուսակցության և զսի կուսակցության գոյությամբ: Մենք, ի դեպ, չենք կարող մանրամասնորեն ծավալվել այս թեմայի շուրջ, որը չի կարող շարադրվել մեկ հոդվածում: Մենք մեր ընթերցողների ուշադրությունը հրավիրում ենք ռուս գեներալ Մասևկու գեկուցագրի վրա, որն այս տարածաշրջաններում հյուպատոս էր: Այս գեկուցագրի ուսումնասիրությունից անառարկելիորեն ի հայտ է գալիս, որ հայերն իրենց թույլ են տվել դիմելու բացառիկ դժնի հեղափոխական գործողությունների: Սուրբան Աբդուլ Համիդն օգտվել է այդ բանից, հայերի դեմ շրջելու համար իր վարչության հրեշայնություններից մոլեգնած մահմեդական բնակչությանը: Նա գտել է կոտորածների պատրաստ հրուսակախմբեր: Այդպիսիք կարելի է գտնել կարևոր չէ, թե ոչ երկրում: Մակայն մա գտել է եվրոպացի դիվանագետների, մի բան, որն ավելի ցավալի է եվրոպական դիվանագիտության համբավի համար, որոնք քաջախերել են և սատարել կոտորածների նրա քաղաքականությունը, որովհետև ցանկություն են ունեցել իրենց համար ստեղծել ազդեցության ոլորտ, խնայել իրենց ուժերն ապագայում տարածքներ նվաճելու համար: Թե՛ման քաջ հայտնի է, որպեսզի անհրաժեշտություն ծագի դրան անդրադառնալու:

Չմայած այս կոտորածներին և այն դժվարին կացությանը, որը հայերի համար ի հայտ եկավ համալայն վարչության ջանքերով այս կոտորածներից հետո, Աբդուլ Մեջլուլի կողմից հայերին շնորհված վարչակարգը, որի օրոք նրանք փոքրիշատե վայելուչ ձևով էին ապրել մինչ այս տխուր իրադարձությունների ժամանակաշրջանը, չհասպոհեց իր պտուղները տալ: Հայ ժողովուրդը մտավոր զարգացման տեսակետից ամառարկելիորեն վեր էր կանգնած կայսրության բոլոր տարրերից: Նրանց դպրոցները լավագույններն էին, ավելի բարձրորակ էին, քան հունական դպրոցները և անհամեմատելիորեն ավելի լավ կազմակերպված, քան կառավարական դպրոցները, որոնք լավագույնս չեն ծառայում մահմեդական բնակչության ինտելեկտուալ կարիքներին: Հայկական առևտուրը բարգավաճում էր, հայ գյուղացիներն ի վիճակի էին ավելի լավ մշակելու իրենց հողերը և հայ բնակչությունն էլ իր հարստությամբ մրցության մեջ էր հույն բնակչության հետ, այնժամ, երբ բոլոր ժողովուրդը գտնվում էր թշվառության մեջ:

Այսպիսին էր իրավիճակը, երբ վրս հասավ հեղափոխությունը: Թուրքիայում հայերի ունեցած տնտեսական և սոցիալական դերը կրկնապատկվեց քաղաքական վճռորոշ դերով: Դաշնակցություն կուսակցությանը պատկանող հայ ահաբեկիչները, որոնք պատասխա-

նատվության իրենց բաժինն ունեն 1896 թ. կոտորածներում (Գարեգին Պաստերմաջյան, Վարդգես և այլք), շարունակում էին բարյացակամ վերաբերմունք վայելել, միասնաբար հանդես գալ «Միություն և առաջադիմության» հետ, գահընկեց անել նախարարներին (Հասարակական աշխատանքների մսխարար Նորատունկյանի անկումը, որը տապալվեց շնորհիվ Պաստերմաջյանի գրոհների), ընտրությունների ժամանակ վանել այն հայերի քեկնածությունները, որոնք իրենց կուսակցությանը չէին անդամագրված, ահաբեկել իրենց սեփական պատրիարքին, համայն կայսրության տարածքում ակումբներ կազմակերպել և մոռացության տալով թուրքերի կողմից քրիստոնյաներին ճնշելու իրենց տեսությունը, օգնել «Միություն և առաջադիմությանը» Թուրքիայի հույներին հնազանդեցնելու հարցում:

Այդուհանդերձ, օսմանյան հեղափոխությունը, որը տեղի ունեցավ Թուրքիայում վայելուչ վարչություն ստեղծելու միտումով, ակնհայտորեն ի վիճակի չէր հաղթանակի հաջորդ իսկ օրն իրականացնելու իր նպատակը: Իշխանության եկած բարենորոգիչների կուսակցությունը, հարկ ունելու մասն ապարարելու իր սեփական անփորձության, այնուհետև՝ իր նոր ենթակաների, կենտրոնի և նահանգների աստիճանավորների դեմ, որոնք չէին կարող, բնականաբար, վարչակարգի պարզունակ փոփոխությամբ դառնալ լավագույն վարչարարներ: Դրա համար անհրաժեշտ էին անխառնության երկար ու ծիզ տարիներ, որը բացակայում էր և որը եվրոպական դիվանագիտությունը ցանկություն չուներ հատկացնել:

Առժամանակ նահանգների (հատկապես հեռավոր) կացությունը, ամենևին էլ չէր բարելավվում և հայերը, ինչպես և այլ տարրերը, շարունակում էին տառապել: Սակայն հայ դեկավարները, ամբողջությամբ կլամված կայսրության քաղաքական նեցուկները լինելու իրենց նոր գործով, ոչնչով չէին հետաքրքրվում: Մտավորականների գանգատները դադարել էին կամ խիստ հազվադեպ էին իրենց զգալ տալիս: Այդ պահին դրության տերը դառնում էր Գաշնակցություն կուսակցությունը: Նա ձեռք էր բերում թուրքական կառավարության վստահությունը, որն օգտագործում էր այն իրենց կուսակցությանը չանդամագրված հայերի դեմ, սպասելով նույնիսկ կառավարության դեմ դա շրջելուն այն իսկ պահից, երբ միջազգային իրադրությունը նման առիթ կրնձեռեր: Առայժմ նա ձևավորվում էր այդ նույն կառավարության օգնությամբ: Դա մի անզգույշ քայլ էր, որը բանկ նստեց «Միություն և առաջադիմության» վրա:

Գաշնակցության կողմից սպասվող առիթը չհասարդեց ներկայանալ: Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, շնորհիվ բալկանյան պատերազմի, հենց նոր ի չիք դարձրին կամ կարծում էին, թե ի չիք են դարձրել թուրքական ազդեցությունը Եվրոպայում: Հայկական հարցը կարգավորելու քողի ներքո, նրանք պատրաստվում էին երկրորդ գործողությանն Ասիայում: Գաշնակցություն կոմիտեն այդ մասին տեղեկացրեց իր ենթաբաժիններին 1913 թ. մարտի 5-ի շրջաբերականով: Խոսքը վերաբերում էր հայկական նահանգների համար հատուկ վարչության հաստատմանը:

Մուսանալով Կովկասի 1500 դաշնակցականների դատավարության, դեպի Սլեբի կատարվող հայերի տեղահանությունների և ռուսական վարչության դեմ ուղղված մյուս բոլոր բողոքների մասին, մուսանալով այն խիստ մեծահոգի աջակցության մասին, որը նա ստացել էր «Միություն և առաջադիմության» ու թուրքական կառավարության կողմից, Գաշնակցություն կոմիտեն գտավ, որ հասել է Ռուսաստանին մերձենալու պահը:

Քաջ հայտնի են այն բանակցությունները, որոնք այնժամ տեղի ունեցան Ռուսաստանի և Թուրքիայի միջև՝ Հայաստանի չարաբաստիկ բարենորոգումների հարցի շուրջ և որոնք ավարտվեցին 1914 թ. գարնանը երկու գլխավոր տեսուչների՝ նորվեգացի Հոֆֆի և հոլանդացի Վեստենենկի նշանակմամբ: Այդ բանակցությունների ընթացքում հայերի հա-

մակրանքները, քնականաբար, հակվում էին դեպի Ռուսաստանը, մի բան, որը միանգամայն հասկանալի է: Մակայն ոչինչ չի կարողանա արդարացնել Դաշնակցություն կոմիտեի կեղծավոր և նենգ դիրքորոշումը, քանզի մի կողմից նա պայմանավորվածություն էր կախացնում Ռուսաստանի հետ, իսկ մյուս կողմից, օգտագործում էր իր կապերը «Մլուխյուն և առաջադիմության» հետ, որպեսզի ազդեցություն գործի բարենորոգումների կենսագործման վրա:

Թուրքական կառավարության դիրքորոշումն այս հարցում բացարձակապես չեզոք էր: Նա չվիճարկեց այն փաստը, համաձայն որի հայկական վիրայեթները վատթար վարչություն ունեին, նույնիսկ խիստ վատթար, և պահանջում էր բարենորոգումների հրատապ անցկացում: Նա բավարարվեց միայն մշերով, որ այն մմանապես վատթար է բոլոր մահանգներում և վնասակար բոլոր՝ ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական տարրերի համար: Նա ցանկացավ, որ Հայաստանի համար առաջարկվող բարենորոգումները ծավալվեն ողջ Անատոլիայում և պահանջեց անգլիական կառավարությունից դրսևորելով բարի կամք՝ իրեն օգնության հասնել այս բանակցությունների ընթացքում՝ ուղարկելով խորհրդատուներ: Անգլիական կառավարությունը մերժեց: Նա կապված էր Ռուսաստանի՝ այն տերության հետ, որն ամենամիավազ ահագործվածությունն ուներ քաղաքական միտումներից զերծ վարչական վերակառուցման հարցում:

Մինչ այդ, սկսվեց եվրոպական պատերազմը: Թուրքիան տեսավ, որ իր համար հնարավոր չի լինելու չեզոքություն պահպանել մի առճակատման ընթացքում, որն, ըստ էության, չի կարող ունենալ որևէ այլ արդյունք, քան քաղաքական կախվածությունը կամ իր տարածքի մասնատումը: Նա կարծեց, որ մասնակցելով պատերազմին, իր համար իրավունքներ կապահովի, որոնք հավասարազոր կլինեն պատերազմող այլ տերությունների իրավունքներին: Եթե հաղթանակի՝ ձեռք կբերի իր անկախությունը, եթե պարտվի՝ հավանաբար կսահեռանա, բայց պատվով: Նա, այսպիսով, մի կողմ դրեց բարենորոգումները և պատրաստվեց պայքարի: Վճռված էր, թե ում կողմն է պետք անցնել. այն տերությունների, որոնք իր իրավունքների հանդեպ մինչ այժմ շատ ավելի փոքրաքիվ ոտնձգությունների էին դիմել, այն է՝ կենտրոնական տերությունների:

Միանգամայն զանազանվող դիրքորոշում ուներ հայ բնակչությունը: Նրա համակրանքներն սմբողջությամբ Ֆրանսիայի և, մասնավորապես, Ռուսաստանի՝ կայսրության ժառանգական թշնամու կողմում էին: Դրանք ամենևին էլ համեստ համակրանքներ չէին, որոնք նրանք ոչ մի առիթ բաց չէին թողնում բացահայտորեն և նույնիսկ շատ աղմկուտ ձևով դրսևորելու համար: Այդ դիրքորոշումը տեղիք տվեց կառավարության անվստահությանը, որը հետագայում դժբախտաբար արդարացվեց իրադարձությունների կողմից:

Այնուամենայնիվ, կառավարության հարաբերությունները Դաշնակցություն կոմիտեի հետ շարունակվում էին մնալ վայելուչ՝ արտաքուստ համենայն դեպս: Այսպես, դաշնակցական առաջնորդ Գարեգին Պաստերմաջյանին Թալեաթ բեյն ուղարկեց Անատոլիա՝ հայ քնակչությանը կառավարության գործի կողմը գրավելու առաքելությամբ: Պաստերմաջյանն իր առաքելությունն ի կատար ածելու փոխարեն փախուստի դիմեց և սկսեց վարել ռուսամետ քարոզչություն: Սա «Մլուխյուն և առաջադիմության» առաջին մեծ իրասրափությունն էր: Այնուհետև՝ հավելվեցին հայերի զանգվածային դասալքությունները, որոնք հրաժարվում էին գորահավաքից և կազմավորում գինված հրոսակալամբեր: Չնայած բոլոր այս նախանշաններին, կառավարությունը շարունակում էր հավատալ, որ եթե իրեն չի հաջողվել հայերին իր կողմը գրավել, ապա նրանք իրենց հանգիստ կպահեն պատերազմի պարագայում: Թուրքիայի և Ռուսաստանի միջև պատերազմ բռնկվեց և դասալքության ու

կողոպուտի դեպքերը վերաձվեցին զինված ապստամբություններ: Հասարակությունն այս փաստերին տեղյակ պահվեց օսմանյան կառավարության հոգածության շնորհիվ այս առթիվ յույս ընծայված գանազան գրքույկների և գեկուցագրերի միջոցով. դրանք էին՝ Վանի և Բիթլիսի միջև հեռագրային հաղորդակցությունների խափանումը, 1915 թ. մարտի 11-ի Ջեյրոմնի ապստամբությունը, Տիմարի ապստամբությունը և Վանի ապստամբությունը: Շարժումը ծավալվում էր և բուրբական բանակի համար վերածվում սպառնալիքի, որը զբաղված էր երկիրն ասպատակող գերակշռող թշնամու դեմ կռվելով: Կայսրության բոլոր շրջաններում կազմակերպվեցին հանցափորձեր:

Կառավարությունը, որը ներգրավվել էր այնպիսի մի զարհուրելի պատերազմի մեջ, որին Թուրքիան երբևէ տեղյակ չէր եղել, չէր կարողանում պատասխանել այդ հանցափորձերին և ապստամբություններին դատական հայցերով: Հավանաբար, դա ավելի բարոյական կլիներ, բայց լատ երևույթին, կարող էր հանգեցնել նույնիսկ երկրի գոյատևման կոյստին: Ջգացվում էր եռանդագին, նույնիսկ անարդարացի միջոցառումների անհրաժեշտությունը: Ժամանակ չկար մեղավորներին անմեղներից զանազանելու համար: Հարկ էր, տուրք չտալով արդարաձիտ խորհրդածություններին, գնալ ուղիղ դեպի նպատակը՝ բանակի փրկությունը: Հալիլ փաշան, որը Վանի գործերի հրամանատարն էր, սկսեց տարածաշրջանի ամբողջ հայ բնակչության դուրս բերումից, բայց այդ միջոցառումն անբավարար էր, քանզի երեք տերությունների կողմից բուրբական ծովափնյա շրջանները գրոհելու հնարավորությունները հարկադրեցին կառավարությանը գրեթե ողջ Թուրքիան դիտել իբրև պատերազմական գոտի, իսկ կայսրության ամբողջ բնակչությանը տեղահանել այնպիսի տարածաշրջաններ, որտեղ նա այլևս չէր կարող վնաս պատճառել:

Մյուս կողմից, քանի որ պատերազմի մոտալուտ ավարտը, և հայերի հնարավոր վերադարձը չէր կանխատեսվում, կառավարությունը հարկադրված եղավ լիկվիդացնել հայերի տիրույթները և փոխանակության կարգով տեղահանվածներին համարժեք տիրույթներ հատկացնել կայսրության այլ տարածաշրջաններում: Ամփոփ ձևով այսպիսին է բուրբական կառավարության պաշտոնական թեզը և այս հարցում բուրբ առաջնորդների անկեղծության հանդեպ մենք կասկած չենք տածում:

Որդեգրված քաղաքականությունն այնպիսի ձևով, ինչպես ներկայացված է, կարող է որակվել իբրև անարդարացի և հիյրավի դժվար կլինի այն հաշտեցնել իրավունքի սկզբունքների հետ: Սակայն Թուրքիան գտնվում է կատարելապես բացառիկ իրադրության պայմաններում, որը նրան պարտավորները համառորեն չեն ընդունում: Թուրքիան պետություն է, որի իրավունքներն ամենից արհամարհվածն են եղել, և եթե այսօր նա ներգրավվել է պատերազմի մեջ, եթե կատարել է զոհաբերություններ, որոնք բացարձակապես համամասնության մեջ չեն գտնվում իր ռեսուրսների հետ, եթե հաշտվել է այս պատերազմի հետ, որը նրա վրա ավելի դաժան ճնշում է գործադրում, քան կռվող մյուս բոլոր կողմերի վրա, ապա այդ արվել է միջազգային քավության նոխազին համապատասխանող այս կացությունից դուրս ելնելու և հավիտյանս հավիտենից գիտենալու համար, թե արդյոք ինքը պետք է գոյատևի, թե մեռնի:

Մյ պետություն, որը գտնվում է այսպիսի ողբերգական վիճակում, համուն անհատների իրավունքներին հարգալից վերաբերվելու, իրավունք չունի կանգ առնել մարդասիրական խորհրդածությունների առջև և վտանգի ենթարկել իր իսկ գոյությունը: Նա շատ թանկ կվճարեր իր մարդասիրության և համբերատարության համար: Մնում է ծայրահեղությունների, կոտորածների, կողոպուտների և այլնի հարցը, որոնց գոհը դարձան հայերը տեղահանության ընթացքում: Հենց այստեղ է, որ հարկ է, մասնավորապես, խիզախել և հայացք

նետել մեր առջև ծառայած իրականության վրա՝ առանց զարհուրելու վայրագության փաստերից: Մենք չենք պատրաստվում ընդօրինակել միամիտ մարդկանց, որոնք հնարավոր են համարել սատարելու բուրբակյան գործը՝ անմիջականորեն ժխտելով այս փաստերը: Մենք նույնիսկ չենք պատրաստվում ջանքեր գործադրել դրանք չափավորելու համար: Վերագրվող փաստերը մեծ մասամբ համապատասխանում են իրականությանը: Օսմանյան կառավարությունն այդ ընդունում է: Ասում են, որ նա նույնիսկ խստորեն պատժել է մեղավորներին, համենայն դեպս նրանցից մի քանիսին: Ի դեպ, զարմանալի կլինեք, եթե այլ կերպ լինեք: Արտակարգ միջոցառումը, որը կիրառվել է արտակարգ հանգամանքներում, պետք է, որ ունենար համապատասխան հետևանքներ՝ անգամ օրինակելի վարչություն ունեցող ժամանակակից երկրներում: Հարկ է արդյոք հիշատակել, օրինակ, ռուսական ռազմական իշխանությունների կողմից իրականացված հրեա բնակչության տեղահանությունը Լեհաստանում և այդ տեղահանվածների կրամ տառապանքները, որոնց մասին ռուսական մամուլը շարունակաբար գրել է:

Այդուհանդերձ, բուրբակյան վարչությունը վատթար է: Այս փաստը բուրբակյան կառավարության կողմից պաշտոնապես ընդունվել է տերությունների հետ ունեցած՝ Հայաստանի բարենորոգումներին նվիրված բանակցությունների ընթացքում: Հնարավորության սահմաններում, ամենամեծ ցանկությունն իսկ չէր կարող մի քանի տարում փոփոխել իրավիճակը մի երկրում, որն այդպիսի փոքրաթիվ ինտելեկտուալ ուժի տեր է: Կարելի է, այսպիսով, պատկերացնել, նկատի ունենալով կարգ ու կանոնի բացակայությունը, որից Թուրքիան տառապում է բազում տարիներ ի վեր, թե ի՞նչ կարող էր տեղի ունենալ հայերի տեղահանության ժամանակ, որն ընթանում էր հետամնաց, հաղորդակցության միջոցներից զուրկ տարածաշրջանների միջով, թշնամաբար տրամադրված, պատերազմի պատճառով մոլեգնամ ժողովրդի միջավայրում, ապաշնորհի աստիճանավորների հսկողության ներքո: Կարելի է պատկերացնել, թե ի՞նչի կարող էին վերածվել հանձնաժողովների կողմից լիկվիդացված հայերի տիրույթները, որոնց անդամները, ինքնին հասկանալի է, ամենքը չէ, որ կարող էին ազնիվ լինել: Այս ամենն անառարկելի է, բայց ինչ կարող էր անել բուրբակյան կառավարությունը, որի գտնվում էր ռազմական աղետի և վարչական փլուզման երկրճտարանքի առջև: Արդյո՞ք նա պետք է իր հավատարմությամբ աչքի չընկած մի ժողովրդի շահերը պաշտպանելու համար լքեր հայրենիքը, հրաժարվեր կայսրության գոյատևումից և բոլրակատար հայերին դուռը բաց անել ռուսների առջև:

Ահա թե ինչպե՞ս պետք է հարցը տրվեր: Խոսքը վերաբերում է ոչ թե փաստերի բննարկմանը կամ ժխտմանը, այլ բացառապես՝ ինչպես հարկն է պատասխանատվության աստիճանների ճշգրտմանը, միմյանց հարցնելուն, թե հայերի դժբախտությունների համար ո՞վ է պատասխանատվություն կրելու: Արդյո՞ք բուրբ կառավարիչները, որոնք պաշտպանվել են, թե դաշնակցական պարագլուխները, որոնք ցանկացել են նրանց քիկունքից հարվածել այն պահին, երբ նրանք պայքարում էին Ռուսաստանի դեմ և օգտագործել դժբախտ հայերին իրենց քաղաքական պատվախնդրությունները բավարարելու և զսպել Հայաստանում դիրքի հասնելու համար: Ռ՞վ է պատասխանատու ճանաչվելու այն ողբերգությունների համար, որոնք հայկական փլույթներում տեղի են ունենում 1896 թ. ի վեր: Արդյո՞ք բուրբակյան կառավարությունը, որը հիսուն տարուց ի վեր պայքարում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անելանելի դժվարությունների դեմ, թե տերությունները, որոնք նրա համար առաջ են բերում այդ դժվարությունները, որոնք նրան մի պատերազմից մյուսն են մղում և որոնք խնամքով ձգում են ներքին երկպառակությունների ու ցավոտ հարցերի այն բոլոր սաղմերը, որոնք երկրում օտար ազդեցությունների միջամտությունից

ի վեր ցնցում են կայսրությունը:

(Ստորագրված է՝) X:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 143-150).

319

Եգիպտոսում բրիտանական Պերագոյն կոմիսար, գեներալ Ռեզինալդ Վինգեյթը՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսին

Կահիրե, 20-ը հունվարի 1917 թ.:

Հունվարի 17-ի թիվ 5 ձեռնարկի հետ մեկտեղ, ես ճեպագիր ստացա Ֆորին Օֆիսից, որն ինձ տեղեկացնում է, թե բրիտանական Նորին մեծությունը որևէ արգելք չի տեսնում, որ Հնդկաստանի հայ գերիներն անգնեն ֆրանսիական ռազմական իշխանությունների տրամադրության ներքո:

Ես հեռագրեցի Հնդկաստանի փոխարքային¹, խնդրելով նրան ինձ տեղյակ պահել նրանց մեկնելու ամսաթվի մասին և ես չեմ զլանա այն հաղորդել:

Ֆրանսիական ռազմական իշխանությունները, անկասկած, կպայմանավորվեն գլխավոր հրամանատարի հետ այս խնդրի շուրջ որևէ այլ միջոցառում կայացնելու հարցում:

(A.M.G., 17 N 496).

320

Հանրապետության նախագահության քաղաքացիական գործերի գլխավոր քարտուղար պ. Մանիսերը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն:

Փարիզ, 22-ը հունվարի 1917 թ.:

(Ստացել են Կար. հունվարի 24-ին,

Զաղ. վարչ. հունվարի 25-ին):

Հանրապետության պ. նախագահն ինձ հանձնարարում է ձեզ փոխանցել սրան կից նամակը², որով Հայաստանի ինքնավարությունը և անկախությունը վերանվաճելու հարցում «Հայաստանի անկախության կոմիտեն» հայցում է ֆրանսիական կառավարության աջակցությունը:

Պ. նախագահը ձեզ խնդրում է բարեհաճել այս կոմիտեին տալու այնպիսի պատասխան, որը դուք նպատակահարմար կհամարեք:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 154).

¹ Լորդ Շելմսֆորդը:

² Արտատպված չէ: Համանման բովանդակության մի նամակ ուղարկվել է պ. Արիստիդ Բրիանին, որը վերն արտատպվել է թիվ 311 փաստաթղթում:

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. քիվ 39:

Կահիրե, 23-ը հունվարի 1917 թ.:
(Ստացել են Կար. փետրվարի 7-ին,
Քաղ. վարչ. փետրվարի 8-ին):

Քանի որ հրամանատար Ռոմիլոն ինձ իր պատրաստակամությունն էր հայտնել ներկայումս ձևավորվող Արևելյան լեգեոնում քուրբական բանակի դասալիք կամ Միջագետքում գերի ընկած որոշ քվով հայերի ընդգրկելուն նպաստելու հարցում, որոնք այժմ կազմավորված են Բոմբեյի արվարձաններում, ես Գեոագոյն կոմիսարին՝ խնդրեցի այս հարցին տեղյակ պահել Հնդկաստանի կառավարությանը:

Այս գերիներին, որոնց քիվը 200-ից ավելի է, նախ՝ այցելել և հարցաքննել է Եգիպտոսի հայ ուղղափառ եպիսկոպոս, Ն {որին սրբազնություն} թորգոմը, որն այժմ հովվական այց է կատարում Հնդկաստանում: Թվում է, թե բոլորն իրենց պատրաստակամությունն են հայտնել Արևելյան լեգեոնում ընդգրկվելու համար:

Հետևաբար, Հնդկաստանի կառավարությունն իր պատրաստակամությունն է հայտնել նրանց Եգիպտոս ուղարկելու հարցում, և Գեոագոյն կոմիսարը մի քանի օր առաջ ինձ տեղյակ է պահել այդ որոշմանը:

Հրամանատար Ռոմիլոն խնդրում էր, որ այս հայերը՝ ֆիզիկապես պիտանի լինելու տեսակետից քննության ենթարկվեն Հնդկաստանի բանակի ռազմական բժշկի կողմից և որ Բոմբեյում գտնվող մեր գլխավոր հյուպատոսին² հանձնարարություն տրվել կամավոր հիմունքներով զինվորագրման պայմանագիր ստորագրելու մասին միայն նրանց հետ, ովքեր ցանկություն կունենան զինվորագրվելու: Իրոք որ, հրամանատարն իրավամբ արգելքներ էր տեսնում Հնդկաստանի բոլոր հայ գերիներին ընդունելու հարցում, որոնցից շատերը կամ իրենց ֆիզիկական վիճակի, կամ զինվորագրվելուց հրաժարվելու պատճառով անգործունյա դառնալու և նրա հոգածության ներքո մնալու վտանգին էին ենթակա:

Սակայն գործելու մնան եղանակը խրթին էր: Ամեն դեպքում այն առաջ էր բերում նախօրոք կայացված համաձայնության և, հետևաբար, բավական երկարատև ժամկետի անհրաժեշտությունը:

Ես կարծեցի, որ քրիտանական ռազմական իշխանությունը կայող է Եգիպտոսում նույնքան լավ, որքան և Հնդկաստանում, պահել հայ գերիներից նրանց, ովքեր այս կամ այն պատճառներով չեն կարող զինվորագրվել Արևելյան լեգեոնին, և լեյտենանտ դը Սեն-Քուենտինը, որին ես խնդրել էի այս գործի մասին տեղյակ պահել շտաբին, ռազմական իշխանությանը որդեկ է ընդունել հետևյալ առաջարկությունը. Հնդկաստանում կազմավորված բոլոր հայ գերիները կբերվեն Եգիպտոս: Հրամանատար Ռոմիլոն կզինվորագրի բոլոր նրանց, ովքեր կհամաձայնվեն կամավոր հիմունքներով զինմառայության ընդունվել և ովքեր նրան պիտանի կրվան լեգեոնում ծառայելու. մյուսները կմնան Եգիպտոսում հիմնադրված գերիների ճամբարներում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 78-78 v).

1 Գեներալ Վինգեյթը:

2 Պ. Բարրեն:

Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը՝ Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանին

Ճ. թիվ 52:

Փարիզ, 26-ը հունվարի 1917 թ.:

Այս ամսի 4-ին թիվ 5 {ճեպագրով}¹, դուք բարեհաճել եք ինձ փոխանցել մի ուղերձի պատճենը, որը ձեզ է հանձնվել Կալիֆոռնիայում՝ Սան Դիեգոյում կազմավորված և «Հաստանի անկախության կոմիտե» անունը կրող կոմիտեի կողմից:

Այս փաստաթուղթը մնանապես հղվել է Հանրապետության պ. նախագահին², պ. Ռազմական նախարարին³, ինչպես նաև անձամբ ինձ⁴: Հետևաբար, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք հավաստել կառավարության կողմից դրա ստացման մասին կոմիտեի քարտուղար պ. Ռ. Հ. Ղազանջյանին: Այս ծրարում դուք, ի դեպ, կգտե՞ք այն մամակի պատճենը, որը ես վերջերս հղել եմ սենատոր պ. Մարտենին և որը նվիրված է հայերի կացությանը⁵: «Տան» թերթում⁷ արտատպված այդ մամակի արտահայտությունները ճշգրտում են այն զգացմունքները, որոնք Հանրապետության կառավարությունն անհրաժեշտ է համարել հավաստելու հայ ժողովրդին այն պահից ի վեր, ինչ տեղեկացել է Թուրքիայում տեղի ունեցած անցքերին:

Վերջերս նախագահ Վիլսոնին հղած պատասխանում, դաշնակիցները հոգ են տարել այդ պահից ի վեր, հայտարարել այն մասին, որ երբ ինչի հատուցումների ժամը, իրենք մոռացության չեն տա Թուրքիայում ռազմական գործողությունների ընթացքում հայերի կրած տառապանքները: Ընդհանրապես հայտնելով Սան Դիեգոյի կոմիտեին այն բանադրությունների համար, որոնք արվել են հանուն Ֆրանսիայի և նրա դաշնակիցների գործի հաղթանակի, դուք բարեհաճեք ևս մեկ անգամ նրան հաղորդել, այդ ձևով, այս հավաստիացումները: Ի դեպ, դուք կարող եք, անհրաժեշտության դեպքում, նրան հայտնել, որ ֆրանսիական կառավարությունը երջանիկ է եղել արտասահմանում գտնվող և ճնշված ժողովուրդների ազատագրության մեր գործում մեզ հետ համագործակցելու ցանկություն ունեցող հայերին միջոցներ տրամադրելու՝ այդ նպատակով մեր դրոշմների ներքո համախմբվելու համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 155-155 v).

1 Ստորագրել է պ. Գուն:

2 Արտատպելն ավելորդ է թվացել: Ամերիկայի հայկական կոմիտեն համանման մամակներ է ուղարկել համապատասխանաբար պ(արոմայ)ք Պուանկարեին, Արիստիդ Բրիանին և զեներալ Լիտտեյին:

3 Արտատպված չէ: Այդ մամակի մասին տե՛ս վերը թիվ 320 փաստաթուղթը:

4 Արտատպված չէ:

5 Վերն արտատպված է թիվ 311 փաստաթղթում:

6 Այդ թղթակցության մասին տե՛ս վերը թիվ 257 փաստաթղթի հավելվածը և թիվ 281 փաստաթուղթը:

7 1916 թ. նոյեմբերի 8-ի. թիվ 20213:

**Արթին փաշան՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ
Պողոս Նուբար փաշային**

Հ. քիվ 543/37:

Կահիրե, 26-ը հունվարի 1917 թ., ժ. 18.30-ին:

Հայկական միության ընդհանուր ժողովը, որն այսօր է գումարվել, խիստ շնորհակալ է ձեր սրտառուչ ուղերձի համար և ձեզ է հայտնում իր խորին երախտագիտությունն այն վերին աստիճանի հայրենասիրական գործի համար, որը դուք դեկավարում եք եռանդով և անսպառ նվիրվածությամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 157).

**Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխանօրենն պ. Ժան
Գուն՝ Ռազմական նախարարի կաբինետի վարիչի տեղակալ
պ. Սորբիե դը Պուզանդորեսին**

Ն: Անձնական:

Փարիզ, 27-ը հունվարի 1917 թ.:

Պ. Սաքատիեն ինձ է փոխանցել այն նամակը, որը դուք նրան եք հղել այս ամսի 21-ին՝ նրան հանձնելու համար Սան Դիեգոյում գտնվող Հայաստանի անկախության կոմիտեի կողմից պ. Ռազմական նախարարին հղված նամակը¹:

Այդ մույն փաստաթուղթը նմանապես հղվել է Հանրապետության նախագահին և Խորհրդի նախագահին²: Դեպարտամենտն, այսպիսով, հանձնարարել է պ. Ժյուսսերանին կառավարության կողմից կոմիտեի քարտուղար պ. Ռ. Հ. Դազանջյանին հավաստել որս ստացումը: Ի դեպ, ես ձեզ եմ փոխանցում սրան կից, Վաշինգտոնում Հանրապետության դեսպանին հղված մեր նամակի պատճենը³: Ես ձեզ կիսնդրեի աչքի անցկացնելու համար այն հանձնել պ. զենեյալ Լիոտեյին, որն, անկասկած, կընդունի, որ մեր ջանքերով արդեն արվել է այն, ինչն անհրաժեշտ է:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 158-158 v).

1 Արտատպված չէ:

2 Վերն արտատպված է քիվ 311 փաստաթղթում:

3 Տես վերը քիվ 322 փաստաթուղթը:

**Ֆրանսիայի գործերի հավատարմատարը Ռ-իո դը Շանեյրոյում՝
Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար
պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. թիվ 8: Գաղտնի:

Ռ-իո դը Շանեյրո, 27-ը հունվարի 1917 թ.:
(Ստացել են Կաթ. փետրվարի 22-ին,
Քաղ. վարչ. փետրվարի 23-ին):

Գեկտեմբերի 13-ի թիվ 94 ճեպագրով¹, որը տեղ է հասել այս ամսի 19-ին, Չերո գերագանցությունն այս առաքելությանը տեղյակ է պահել Կիպրոս կղզում «Արևելյան լեգեոնի» կազմավորման մասին, որը բաղկացած է ֆրանսիացի սպաներով և աստիճանավորներով համալրված՝ օսմանյան հայատակություն ունեցող օժանդակ ուժերից:

Ես չեմ զրացել այդ մասին գաղտնաբար հայտնել մեր հյուպատոսներին Ռ-իոյում, Սեն-Պոլում և Բահիայում: Ինչ վերաբերում է վերջին երկուսին, վստահելի անձանց միջոցով ես նրանց եմ հանձնել իմ ճեպագրերը, որոնց կցված էր բանակի շտաբից ելնող հրահանգը, որն ինձ կոչ էր արվել նրանց փոխանցել: Ես նրանց խնդրեցի ճշգրտաբար կատարել այս փապտաթղթի կարգադրությունները և անձնական միջոցներով իրենց բնակության վայրի հայկական և սիրիական կոմիտեների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ նրանց համար անհրաժեշտ է ձեռնպահ մնալ յուրաքանչյուր հայտարարությունից կամ հրապարակային ցույցից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 83-83 v).

**Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Շյուսերանը՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. թիվ 76:

Վաշինգտոն, 29-ը հունվարի 1917 թ.:
(Ստացել է Քաղ. վարչ. փետրվարի 17-ին):

Կայտոյ եք չկասկածել, որ ես ստացել եմ վերջին ամսի 13-ի Չերո գերագանցության թիվ 643 նամակը¹, որը վերաբերում է Միացյալ Նահանգներում հաստատված այն հայերին, լիբանանցիներին և սիրիացիներին, (որոնք) ցանկություն կհայտնեն զինվորագրվելու վերջերս կազմավորված «Արևելյան լեգեոնին» և որոնց ճանապարհաձախալ մինչ Բորդո՝ զինվորագրման կոմիտեին կվճարենք մենք:

Ինչպես վերջին նոյեմբերի 26-ի և դեկտեմբերի 2-ի իմ հեռագրերով⁴ ես արդեն մատնան-

1 Ստորագրությունն անընթեռնելի է:

2 Վերն արտատպված է թիվ 308 փաստաթղթում:

3 Տես վերը թիվ 308 փաստաթուղթը:

4 Չեն հայտնաբերվել:

շել են, որանք ամերիկյան օրենքներին և, մասնավորապես, քրեական օրենսգրքին հակասող գործողություններ են, ինչպես և այդ մասին հիշեցրել են Միացյալ Նահանգների նախագահի՝ շեզրոքսյանը վերաբերող բազմաթիվ հայտարարությունները:

Ճիշտ է, Դեպարտամենտն ինձ կոչ է անում հանձնարարել մեր հյուպատոսներին ձեռնպահ մնալ յուրաքանչյուր միջամտությունից, բայց նա անձամբ ինձ խնդրում է գործել հակառակ ձևով և հայկական ու սիրիական կոմիտեներին գաղտնաբար տեղյակ պահել ընդունված կարգադրություններին՝ խնդրո առարկա «զինվորագրման կամպանիային ձեռնամուխ լինելու նպատակով»:

Հազիվ թե ես կարիք ունեմ հիշատակելու, որ դեսպանի նման միջամտությունը շատ ավելի վտանգավոր կլինի, քան հյուպատոսինը և որքան էլ ձեռնարկված նախագաղտնադրությունները լայնածավալ լինեն, անիմաստ է հուսալ, որ գաղտնիքը ...¹ կլինի արևելյան ժողովուրդների կողմից, որոնց լռակյացությունը, քվում է, թե ընդգծված առանձնահատկություն չէ և որոնց շրջանում, կարելի է վստահ լինել, գտնվում են գերմանացի կամ քուրք լրտեսներ, որոնք՝ դաշնակիցներին բարեհաճ, իրենց կրքոտ հայտարարություններով հոգում են վստահություն ներշնչելու մասին: Պետք չէ, (այսպիսով), կանխատեսել, որ ի շարս այլ հետևանքների, զինվորագրումների պատճառով հայերի և սիրիացիների դեմ բուրքական վայրագությունների սաստկացումից, որից երկյուղում է Դեպարտամենտը, հնարավոր կլինի խուսափել:

Ես կսպասեմ, ամեն դեպքում, ընդունելու այն հյուրերին, որոնց մասին Դեպարտամենտն ինձ հայտնում է. որևէ զարմանալի բան չի կարող, ի դեպ, լինել, եթե այս բանագնացներին՝ տեղ հասնելու պահից ի վեր՝ մինչ իմ դեսպանության շենը, հետևեն գերմանացիները: Վենիզելական լիազոր ներկայացուցիչները վերջերս էլ, ուր զգում էին, թե իրենք ինչպիսի հսկողության ներքո էին գտնվում, իսկ Բեռլինում Միացյալ Նահանգների դեսպան պ. Ջերարդն իր արձակուրդի ընթացքում չկարողացավ այստեղ, ինչպես ես այդ մասին տեղեկացրել եմ Ջերոլ գերագանցությանը, և ոչ մի քայլ կատարել, առանց գերմանական մի քանի լրտեսների հսկողության, որոնք հետևում էին նրա յուրաքանչյուր տեղաշարժին ու գործողություններին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 84-84 v).

327

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Ռ-ազմական նախարար, գեներալ Լիոտեյին

Ճ. թիվ 364:

Փարիզ, 1-ր փետրվարի 1917 թ.:

Այս ամսի 10-ի թիվ 122 իմ մամակով², ես պատիվ եմ ունեցել տեղեկացնել ձեզ պաշտոնային Հանեմյանի և Սապահգյուլյանի ժամանման մասին Մարսել, որոնց հանձնարարված է մեկնել Ամերիկա՝ հայկական գաղութներում ի նպաստ «Արևելյան լեգեոնի» քարոզչություն կազմակերպելու համար: Երրորդ հայ լիազոր ներկայացուցիչը՝ պ. Դամադյանը,

¹ Բացրողում:

² Տե՛ս վերը թիվ 315 փաստաթուղթը:

նրանց է մխացել մի քանի օր անց Ֆրանսիայում: Այս երեք անձինք ներկայացել են իմ Դեպարտամենտի իրավագոր ծառայության բյուրոներին, ուր նրանց ընդհանուր բնույթի տեղեկություններ են տրվել՝ իրենց առաքելության նպատակի վերաբերյալ: Նրանց, մասնավորապես, խորհուրդ է տրվել իրականացնել այն զգուշությամբ և շրջահայացորեն, որոնք կքելադրեն հանգամանքները: Պ {արունայ}ք Հանենյանը, Սապահգյուլյանը և Դամադյանը պետք է վաղը բողնեն Փարիզը՝ Բորյո մեկնելու համար, որտեղից նրանք դեսյի Նյու Յորք ուղղություն վերցնող նավ կբարձրանան: Ես այդ մասին, ամեն դեպքում, հայտնել եմ այդ քաղաքում գտնվող Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսին: Իրենց այցելության ընթացքում այս լիազոր ներկայացուցիչները հայտնեցին, որ պ. Հ. Սահառջյանը, մի պատվերի հայ մարդ, որը բնակվում է Մարսելում (Լուի-Սալվատորի պողոտա 1), կարող է Մարսելի ռազմական իշխանությունների մոտ ընտրվել իբրև Ֆրանսիայի հարավում գտնվող հայկական գաղութների ներկայացուցիչ՝ «Արևելյան լեզեոնի» համար մեր տարածքում այդին հաստատված հայ կամավորների զինվորագրմանը վերաբերող տեղեկությունների ծանուցում նրանցից ստանալու մտադրությամբ: Ես ձեզ, հետևաբար, երախտապարտ կլինեմ, եթե բարեհաճեք այնպիսի կարգադրություններ անել, որոնք, ըստ ձեզ, ի գորու կլինեն դյուրին դարձնելու, անհրաժեշտության պարագայում, պ. Սապահգյուլյանի համար այն առաքելության ի կատար ածումը, որին նա բարեհաճել է տալ իր համաձայնությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 89-89 v).

328

Պ. Վիետը՝ ոստիկանապետին¹

Փարիզ, 1-ը փետրվարի 1917 թ.:

Ես, մասնավորապես, ձեր բարեհաճ ընդունելությանն են ներկայացնում երեք հայերի, որոնք Ամերիկա են մեկնում այնտեղ մի առաքելություն իրականացնելու նպատակով, որին տեղյակ են մեր Դեպարտամենտը և Ռազմական նախարարը: Այս անձինք քիչ առաջ են ժամանել Եգիպտոսից և երեկ ներկայացել են մեր նախարարին ստանալու իրենց վստահված առաքելությանը վերաբերող հրահանգները:

Նրանցից մեկը՝ պ. Ստեփան Սապահգյուլյանը պարսկական ծագում ունի, մյուս երկուսը՝ պ. Արտավազդ Խաչիկի Հանենյանը և պ. Միհրան Դամադյանը՝ օսմանյան:

Ինչ վերաբերում է առաջինին, պարզապես իմաստ ունի Միացյալ Նահանգներ մուտք գործելու համար բույրավորության կմիք դնել նրա տրամադրության ներքո գտնվող պարսկական անձնագրի վրա, ճշգրտելով, որ նա մեկնում է միայնակ:

Ինչ վերաբերում է մյուս երկուսին, ապա հաշվի առնելով այն դրդապատճառները, որոնց բերումով նրանք Ամերիկա են մեկնում, մեզ համար ցանկալի կլինեն, եթե ոստիկանության պրեֆեկտուրան Միացյալ Նահանգների համար նրանց այնպիսի անձնագրեր հատկացնեն, որոնք վկայեին, որ նրանք «Ֆրանսիական հովանավորության ներքո գտնվող հայեր են»՝ առանց նշելու նրանց հայկական հպատակությունը [sic]:

Քանի որ այս երեք անձինք վաղը կամ վաղը չէ մյուս օրը պետք է մեկնեն Բորյո, այնտեղ նավ բարձրանալու նպատակով, ես ձեզ խիստ երախտապարտ կլինեմ, եթե դուք նրանց կենտրոնական բյուրոյի ձեր գործակալին երաշխավորելու բարեհաճությունն ունե-

¹ Պ. Լորանը:

նաք, որպեսզի, որքան հնարավոր է արագ, ստանան իրենց ճանապարհորդությունն իրականացնելու համար անհրաժեշտ բույրավորյունը և փաստաթղթերը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 90-91).

329

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանը՝ Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանին

Ճ. քիվ 66:

Փարիզ, 2-րդ փետրվարի 1917 թ.:

Հիմնվելով այս ամսի 11-ի իմ նամակի՝ վրա, ես պատիվ ունեմ ձեզ իրազեկ դարձնել, որ պաշտոնայնք Սապահգյուլյանը և Արտավազը Խաչիկի Հանեմյանը, որոնց ուղարկել են Հյուսիսային Ամերիկա Արևելյան լեզեոնի համար կամավորներ զինվորագրելու, Փարիզ են ժամանել Եգիպտոսից եկած երրորդ հայ լիագոր ներկայացուցչի՝ պ. Դամադյանի ուղեկցությամբ, որն անդամագրված է Ռամզիավար [sic]² կոչվող դեմոկրատական խմբին: Այս երեք անձինք ներկայացել են իմ Դեսպարտամենտի բյուրոներին, որ առաքելության նպատակի վերաբերյալ նրանց տրվել են ընդհանուր բնույթի տեղեկություններ: Նրանց, մասնավորապես, խորհուրդ է տրվել այն իրականացնել զգուշությամբ և շրջահայացորեն, որոնք կբեւադրեն հանգամանքները և այն երկրի չեզոքությունը, որ նրանք մեկնում են:

Երեք լիագոր ներկայացուցիչները պետք է այսօր բողոնեն Փարիզը Բորդո մեկնելու համար, որտեղից նրանք դեպի Նյու Յորք ուղևորյուն վերցնող մավ կբարձրանան: Նրանցից մեկը՝ պ. Սապահգյուլյանը պարսկական ծագում ունի, մյուս երկուսը՝ պաշտոնայնք Արտավազը Խաչիկի Հանեմյանը և Միհրան Դամադյանը՝ օսմանյան: Քանի որ առաջինը պարսկական անձնագիր ունի, ոստիկանության պրեֆեկտուրան սահմանափակվել է դրանում բույրավորյան կնիք դնելով, որպեսզի նա Միացյալ Նահանգներ մուտք գործի, իսկ ինչ վերաբերում է մյուս երկուսին, ապա հաշվի առնելով այն շարժառիթները, որոնք նրանց դրդել են մեկնելու Ամերիկա, այս վարչությունը, իմ խնդրանքով, նրանց է հսնձնել անձնագրեր, որոնք վկայում են, որ նրանք «ֆրանսիական հովանավորության ներքո գտնվող հայեր են»՝ առանց հիշատակելու նրանց օսմանյան հպատակության մասին:

Նյու Յորք ժամանելուց անմիջապես հետո, այս երեք անձինք կներկայանան Ֆրանսիայի գլխավոր հյուպատոսին: Հիմնվելով հունվարի 11-ի իմ նամակի վրա, ես ձեզ, հետևաբար, երախտապարտ կլինեմ, եթե դուք պ. Լիբերին կոչ անեք նրանց տրամադրել Արևելյան լեզեոնի համար Ամերիկայում կամավորների զինվորագրման հարցին վերաբերող բոլոր տեղեկությունները: Դուք այս ծրարում կգտնեք, ի դեպ, Ռագմակալան նախարարի նոր հրահանգը՝ երկու օրինակից, որը վերաբերում է Արևելյան լեզեոնի համար նախատեսված օսմանյան հպատակություն ունեցող կամավորներին Ֆրանսիայում ընդունելու պայմաններին: Այս շրջաբերականը համարում է այն, որը ես ձեզ եմ հղել 1916 թ. դեկտեմբերի 13-ին (քիվ 643)¹ և ճշգրտում այն ձևականությունները, որոնց պետք է համակերպվեն լեզեոնին զինվորագրվելու համար Ֆրանսիա ժամանող շահագրգիռ անձինք:

Այս կամավորները Ֆրանսիա կտեղավորվեն զինվորագրող լիագոր ներկայացուցիչ-

1 Տես վերը քիվ 316 փաստաթուղթը:

2 Իմա՝ Ռամզիավար:

3 Տես վերը քիվ 308 փաստաթուղթը:

ների ջանքերով, որոնք տարբեր վայրեր են ուղարկվել զանազան արևելյան կոմիտեներին կողմից: Ժամանելով Ֆրանսիա, նրանք պետք է ներկայանան այն նավահանգստի կայազորի բյուրոյին, որտեղ ափ դուրս կզան (Հավր, Բորյո կամ Մարսել), կնքելու Արևելյան լեզեոնի կազմում կամավոր հիմունքներով ծառայության ընդունվելու պայմանագիրը: Նրանք պետք է ունենան ինքնուրույնը հավաստող փաստաթղթեր և, հնարավորության սահմաններում, բարոյական նկարագրին վերաբերող վկայական՝ տրված մեր հյուպատոսներից մեկի կամ իմ Դեպարտամենտում հավատարմագրված արևելյան կոմիտեներից մեկի նախագահի կողմից:

Ես պատիվ ունեմ, ամեն դեպքում, այս ծրարով ձեզ փոխանցել Կահիրեում Ֆրանսիայի նախարարի նամակից արված քաղվածքներ, որոնք վերաբերում են այն առաջին արդյունքներին, որոնց հասել է Կիպրոսում Արևելյան լեզեոնը կազմակերպելու հանձնարարություն ստացած հրամանատար Ռոմիոն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 99-100).

330

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գնդապետ դը Լա Պանուսը՝ Ռազմական նախարար, գեներալ Լիոտեյին

Հ. թիվ 3913: Գաղտնի:

[Պատճենը]:

Լոնդոն, 2-ը փետրվարի 1917 թ.:

Համաձայն Ռոյ Օֆիսի կողմից սահմանված վերացական քվերի, ահա թե ինչպիսին կարող են լինել Փոքր Ասիայի ռազմաճակատում կոփող թուրքական բանակների անճնակազմերը:

III թուրքական բանակ (Կովկասի ռազմաճակատ)

42500 մարդ

141 թնդանոթ

II թուրքական բանակ (Կովկասի ռազմաճակատ)

61000 մարդ

174 թնդանոթ

VI թուրքական բանակ (Բաղդադի տարածաշրջան)

60000 մարդ

157 թնդանոթ

Պաղեստինի և Արաբիայի ռազմաճակատներ

50000 մարդ

100 թնդանոթ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 857, f. 7).

**Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանը՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիաննին**

Հ. թիվ 127:

Վաշինգտոն, [անթվակիր]:
(*Ստուցել է* Ջադ. վարչ. 1917 թ. փետրվարի 11-ին):

Պատասխան թիվ 643 և 24 մամակներին¹:

Այնժամ, երբ պատերազմն ավելի քան երբևէ հնարավոր է դարձել Միացյալ Նահանգների և Գերմանիայի միջև, բայց դեռևս հավաստի չէ, և երբ մենք խիստ ակնհայտ շահագրգռվածություն ունենք խուսափելու այն ամենից, ինչը կարող է մեզ այստեղ տհաճ կացության առջև կանգնեցնել, ես առանց ամենաձայրահեղ զարմանքի չեմ ծանոթանում այն հրահանգներին, որոնք ինձ կարգադրում են, ինչպես միանգամայն բնականոն մի բան, խախտելու այն երկրի օրենքները, որտեղ ես հավատարմագրված եմ:

Խիստ վնասակար, անզգույշ քայլերը զաղտմաբար իրականացնելուն վերաբերող հրահանգը համարժեք է ոչ այլ ինչի, եթե ոչ անհնարինը պահանջելուն: Հայերի և լիբանանցիների ակումբներն ու միությունները գտնվում են քուրք և գերմանացի լրտեսների հսկողության ներքո, որոնց մենք պարզապես բարենպաստ վիճակում կդնենք, օժանդակելով, անկախ այն բանից, թե ինչ ձևով, ամերիկյան օրենսգրքով արգելվող՝ խնդրո առարկա «զինվորագրման կամ պանիային» այնպիսի վայրերում, որտեղ վարժված չեն զաղտնիք պահելու:

Ինձ անհնար է թվում հայերին այլ խորհուրդներ տալը, քան ինչպիսիք այդքան տրվել են վենիզելականներին* ու սերբերին և այլոց, այն է՝ որ նրանք բարեհաճեն համակերպվել օրենքներին: Եթե պատերազմ բռնկվի, հարցը հետագայում կարող է ենթադրել նոր քննարկում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 110).

**Եգիպտոսում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար,
գեղապետ Բրեմոնը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի
նախարար պ. Արիստիդ Բրիաննին**

Ն: Գաղտնի:

Սուեզ, 12-ը փետրվարի 1917 թ.:
(*Ստուցել են* Կաթ. մարտի 2-ին,
Ջադ. վարչ. մարտի 3-ին):

Ես առիթ ունեցա ներկայումս Եգիպտոսով անցնելու ժամանակ իրագեկ դառնալու այն -

1 Համապատասխանաբար՝ 1916 թ. դեկտեմբերի 13-ի, որը վերը տպագրվել է թիվ 308 փաստաթղթում և հունվարի 11-ի, որը վերև արտատպվել է թիվ 316 փաստաթղթում:

* Խոսքը վերաբերում է հույն պետական խոշոր գործիչ. 1910-1915, 1917-1920 Հունաստանի վարչապետ Էլենիոս Կենիպեդիսի (1864-1936) կողմնակիցներին: - Ծ. թ.:

աշխատանքին, որն իրականացրել է հրամանատար Ռոմիոն: Արդյունքները, որոնք նա ձեռք է բերել, գերազանցում են այն ամենն, ինչ ես երևակայում էի վերջին օգոստոս ամսին, իսկ ապագային վերաբերող խոստումներն ահռելի են:

Հրամանատար Ռոմիոն իր ջանադրության, խորաբախվածության և համառության շնորհիվ կարողացել է հայերի շրջանում միասնականություն հաստատել: Նորակոչիկները ժողովվում են ամեն օր՝ համակված, ինչպես ես կարողացա դրանում համոզվել, գերազանց տրամադրվածությամբ: Դա ամրակազմ, խելացի ժողովուրդ է, որից շատ լավ գործ կկազմավորվի մեր դեկավարության ներքո: Հրամանատար Ռոմիոն շուտով կունենա մի լավ գովաբան, որի ազդեցությունն ահռելի կլինի: Մարտի 1-ից նա կկարողանա իմ կողմից Կաստելյորիգո ուղարկված փոքրաբանակ, հանպատրաստից կազմված ստորաբաժանումը փոխարինել Արևելյան լեգեոնի հիանալիորեն մարզված հետևակային դասակով: Եվ դա միայն սկիզբն է:

Նրա ձեռնարկված՝ քրիստոնյա սիրիացիների զինվորագրումը կկարողանա դրվատելի արդյունքների հանգեցնել, չնայած տարբեր աղանդների միջև առկա խորին տարածայնություններին: Փոխարենը՝ մահմեդականների զինվորագրումը մինչ այժմ ոչնչի չի հանգեցրել և նախքան նրանց կղզում գտնվելն անիմաստ է քվում որևէ լուրջ ակնկալություններ ունենալը: Բացի դրանից, այստեղ հարկ կլինի հանդես բերել մեծ ճարակություն, որով հետև Սիրիայի բոլոր մահմեդականների հայացքները հատվում են դեպի Մեքքա: Անհրաժեշտ կլինի հմտորեն օգտվել Մալիկի* ազդեցությունից՝ խուսափելու համար, երբ պահը հասնի, բացահայտ ձևով աչքի ընկնող ընդդիմությունից: Հարկ կլինի նաև զգուշությամբ վերաբերվել մահմեդական ցեղերի շրջանում և քաղաքներում ներկայումս գոյություն ունեցող կարգի արտաքին տեսքին:

Հրամանատար Ռոմիոն իրականացնում է իրեն վստահված նուրբ հանձնարարություն, որն աչքի է զարնվում: Բոլոր այս վայրերում նա ձեռք է բերել շատ մեծ անձնական ազդեցություն, որն այս պահից իսկ մեր գործունեության համար իրական ուժ է: Ես նպատակահարմար գտա ձեզ հաղորդել այս արդյունքների մասին, որոնք վկայում են, որ նա գտնվում է ճիշտ ուղու վրա:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 111-112).

333

Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուսսերանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Հ. թիվ 169:

Վաշինգտոն, [անթվակիր]:

(*Unugly* է. Քաղ. վարչ. 1917 թ. փետրվարի 20-ին):

Ես հենց նոր փոստով ստացա մի նոր նամակ (թիվ 66)¹, որը կոչում է խախտել ամերիկյան օրենքները և դրանք խախտել Նյու Յորքում գտնվող գլխավոր հյուպատոսի միջոցով,

* Նկատի ունի 1908-1916 Մեքքայի շերիֆ, 1916-1924 թթ. Հեջազի քաղաքի Հուսեյն իբն-Ալիին (1856-1931), որի դեկավարությամբ երիտրոպրերի տիրապետության դեմ 1916 թ. Հեջազում բռնկված արաբական ապստամբությունը գահի էր տվել պարսիզանական շարժման վերելքին Սիրիայում: ~ Ծ. p.:

1 Փետրվարի 2-ի. տե՛ս վերը թիվ 329 փաստաթուղթը:

աջակցելով այն զինվորագրման կամպանիային, որը պետք է կազմակերպեն մի պարսիկ ու երկու հայ և այնպիսի պայմաններում, որոնք մեզ վնասելու տեսակետից ամենանպաստավորն են (մասնավորապես) ցավալի պատահարների հանգեցնելու համար և մի երկրում, որի մասին նրանք ոչինչ չգիտեն:

Ես կարող եմ միայն վկայակոչել նախորդ հեռագրերը և վերջապես թիվ 127 հեռագիրը¹, որով ես Դեպարտամենտին եմ հաղորդել նման բնույթի գործողության հետ կապված իմ տեսակետը:

Ի դեպ, ես արձանագրում եմ, ելնելով մի հաղորդագրությունից, որը Դեպարտամենտն ինձ է փոխանցել, որ անգլիական իշխանությունները, նույնիսկ իրենց ենթակայության ներքո գտնվող մի այնպիսի տարածքում, ինչպիսին Եգիպտոսն է, մեծ հակվածություն չեն ցուցաբերում այդ զինվորագրմանը նպաստելու հարցում: Ես կարող եմ միայն կրկին անգամ հավաստել այն համոզմունքը, համաձայն որի, ներկա հանգամանքներում այն այստեղ կարգելվի: Նվազագույնը, որը մենք կարող ենք անել, սպասելն է, իմանալու համար, ամեն դեպքում, թե արդյո՞ք Գերմանիայի հետ ներկա լարվածությունը կհանգեցնի պատերազմի: (A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 118).

334

Փոքր Ասիայի հարցին վերաբերող ծանուցագիր²

Ծ:

Փարիզ, 21-ը փետրվարի 1917 թ.:

«1916 թ. գարնանը Լոնդոնում և Պետրոգրադում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դաշնակից կառավարությունները հանգել են մի համաձայնության, որը վերաբերում է հետագայում ազդեցության գոտիների բաժանմանն Ասիական թուրքիայում և տարածքային ձեռքբերումներին ու Արաբիայի սահմաններում՝ Արաբիայի անկախ պետության կամ արաբական պետությունների համադաշնության ձևավորմանը:

Իր հիմնական գծերով համաձայնությունն ամփոփվում է հետևյալում.

Ռուսաստանը ձեռք է բերում Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգները, ինչպես նաև Հարավային Բյուստանի տարածքները՝ ըստ Մուշ-Սիիրտ-Իհն-Օմար-Ամալիա՝ պարսկական սահմանագծի: Սև ծովի ափերին Ռուսաստանի ձեռք բերած տարածքների վերջնակետը կսահմանվի հետագայում՝ Տրապիզոնից դեպի արևմուտք:

Ֆրանսիան ստանում է Սիրիայի ծովափնյա գոտին, Ադան գյուղը և մի տարածք, որի սահմանները հարավից նախագծվում են Այնբաբ-Կարսին [sic]³ գծով՝ մինչ ռուսական ապագա սահմանը և հյուսիսից՝ Ալա դագա-Կեսարիա-Ակ-Լադոն-Վիլդիգ-Դագ-Չարա-Օգյուլին-Խարբերոյ՝ գծով:

1 Փետրվարի 11-ի. տե՛ս վերը թիվ 331 փաստաթուղթը:

2 Այս անստորագիր ծանուցագիրը, անկասկած, պատրաստել են, Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծառայությունները:

3 Հարկ է համապատասխանաբար կարդալ՝ Մուշ-Սիիրտ-[Ջիզրե]-իքն Օմար-Ամալիա:

4 Իմա՝ Մարդին:

5 Հարկ է համապատասխանաբար կարդալ՝ Ալա Դադ-Կեսարիա-Ակ Դադ-Յիլդիգ Դադ-Չարա-Ակն-Խարբերոյ:

Մեծ Բրիտանիան՝ ձեռք է բերում Միջագետքի հարավային շրջանը Բաղդադի հետ մեկտեղ և պահպանում է Կալքա [sic] ու դ'Ակկա նավահանգիստները Սյրիայում:

Համաձայն Ֆրանսիայի և Անգլիայի միջև կնքված պայմանագրի, Ֆրանսիական և անգլիական շրջանների միջև ընկած գոտում կկազմավորվի արաբական պետությունների համադաշնությունը կամ Արաբիայի անկախ պետությունը, որի ազդեցության գոտիները կսահմանվեն այս պահին:

Ալեքսանդրետը հռչակվում է ազատ նավահանգիստ:

Դաշնակից տերությունների կրոնական շահերը երաշխավորելու նպատակով՝ Պաղեստինը և Սրբավայրերը դուրս են բերվում թուրքական տարածքից և համաձայն Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև կնքված պայմանագրի՝ դրվում հատուկ վարչակարգի ենթակայության ներքո:

Ընդհանուր առմամբ, պայմանավորվող տերությունները փոխադարձաբար պարտավորվում են ճանաչել իրենց ձեռք բերած շրջաններում՝ նախքան պատերազմը գոյություն ունեցած կոնցեսիաները և արտոնությունները:

Նրանք համաձայնվում են վճարել օսմանյան պարտքի՝ ձեռք բերված տարածքներին համաչափ մասը»:

(A.M.A.E., Papiers d'Agents, *Jean Gout*, tome 7, ff. 1-2).

335

Բեռնոմ Ֆրանսիայի դեսպան պ. Բոն՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 424:

Բեռն, 24-ը փետրվարի 1917 թ.:
(*Ստացել են* Կաբ. փետրվարի 25-ին,
Քաղ. վարչ. փետրվարի 26-ին):

Ես պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը հղել սրան կից թուրքական թերթերից արված որոշ քաղվածքների թարգմանությունը. Հայկական պատրիարքության կանոնադրություն:

(A.M.A.E., *Guerre 1914-1918, Turquie*, tome 888, f. 161).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

1916 թ. օգոստոսի 11-ի «Միլլի» գործակալության պաշտոնական հաղորդագրությունը Հայկական պատրիարքության կանոնադրությունը

Կառավարությունն ընդունել է մի նոր կանոնակարգ, որը փոփոխում է հայկական պատրիարքության կանոնադրությունը: Նախկին կանոնադրություններն ամբողջությամբ տարբերվում էին այլ պատրիարքությունների, մասնավորապես, հունական պատրիարքու-

թյան կանոնադրություններից: Այն դեպքում, երբ հունական պատրիարքությունն ունի սահմանափակ թվով անդամներից բաղկացած կրոնական և համահավաք խորհուրդներ, հայկական պատրիարքությունն ունի կրոնական և աշխարհիկ խորհուրդներ, իսկ այս վերջինիս ընտրության համար ժողովրդի կողմից ընտրվում էր 140 անձից բաղկացած ազգային ժողով, որը, ինչպես խորհրդարանները, գումարվում էր հստակ սահմանված ժամանակաշրջաններում: Այս կանոնադրությունը մշակել էր պատրիարքությունում գումարված ժողովը և 1279 թ.¹ այն ժամանակաշրջանում մեծ վեզիրը հասել էր դրա կայսրական վավերացմանը՝ չներկայացնելով այն ո՛չ պետական խորհրդին և ո՛չ նախարարների խորհրդին: Այս կանոնադրությունը դարձավ հայկական հեղափոխական կազմակերպության հզորության և նրա գործունեության արյունավետության հիմնական պատճառը, քանզի ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր ժողովրդի ընտրած մարդկանցից բաղկացած Ազգային ժողովում, այնպես որ կրոնական հաստատություններն ընկնում էին հեղափոխական կուսակցությունների ազդեցության ներքո, իսկ հոգևորականության բոլոր ներկայացուցիչները դարձել էին կոմիտեների անդամների միջնորդները: Քահանաները, որոնք իրենց կրոնական հողորներով գրավել էին ժողովրդի, մարդկանց սրտերը, օգտագործեցին նույն ազդեցությունը քաղաքական վարդապետությունը միևնույն սրտերում արմատավորելու համար: Հոգևոր ազդեցության շնորհիվ, քաղաքական խղեայր համակեց ողջ հայ երիտասարդությանը: Վերևից եկած հրամանն այս երիտասարդությանը խելահեղորեն նետեց հրի և ալյան մեջ ու նրանց գործիք դարձրեց օտար քաղաքական շահախընդրությունների ձեռքին՝ կամ անգլիացիների, կամ, ինչպես ներկա պարագայում, ռուսներից ակնկալվող օգնության ուտոպիական հույսով: Այս նոր որոշմամբ կայսրական կառավարությունը լուծարել է ազգային ժողովը և հունական պատրիարքության կազմակերպական հիմունքների նմանակմամբ սահմանել եկեղեցական ղեկավարներից բաղկացած կրոնական խորհուրդ, որին վստահվում են կրոնական գործերը և սահմանափակ թվով կրոնական ու աշխարհիկ գործիչներից բաղկացած համահավաք խորհուրդ, որին վստահվում են կրոնական հաստատությունները, ինչպես նաև կրթական և բարեգործական հաստատությունները: Այս խորհուրդների նախագահությունը կառավարությունը վստահել է կաթողիկոսին, որին հենց նոր շնորհվեց պատրիարքի աստիճան: Վարվելով այսպես, կայսրական կառավարությունը ոտնձգությունների չի պիտեղ այն կրոնական արտոնությունների հսնդեպ, որոնք երաշխավորվում են սահմանադրությամբ և միաժամանակ, խանգարել, որ այսուհետև ևս կոմիտեներն ի վիճակի լինեն պատրիարքին իրենց ձեռքին խաղալիք դարձնել:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, f. 162).

II

1916 թ. օգոստոսի 10-ի «Ժուրնալ օֆիսիելը» Հայկական պատրիարքության կանոնադրությունը

Նախնական հոդվածներ:

Հոդ 1/ Սսի և Աղթամարի կաթողիկոսների արժանիատերը միավորվում են և Կոստանդնուպոլսի ու Երուսաղեմի հայկական պատրիարքի տիտղոսները հավելվում են կաթողիկո-

¹ Ոստ գրիգորյան օրացույցի համապատասխանում է 1863 թ.:

սի տխրոսին: Օսմանյան հայերի գերագույն հողերը իշխանությունը պատկանում է այս կաթողիկոսին և պատրիարքին, իսկ նրանց հարաբերություններն Լճմիաձնի կաթողիկոսի հետ մեկընդմիջտ դադարում են: Կաթողիկոսի և պատրիարքի արուամխատը Սրբոց Հակոբյանց վանքն է. Երուսաղեմում: Նրա հողերը իրավասության ոլորտն ընդգրկում է օսմանյան տարածքը:

Հոդ. 2/ Լիազորություններ շնորհող *բերաթի* հիման վրա, պատրիարքն իր իրավասություններն իրականացնում է ներկա կանոնակարգի հրահանգների սահմաններում և կենսագործում կառավարության կարգադրությունները: Նա ենթարկվում է բացառապես Պաշտամունքների նախարարությանը և կարող է բողոքարկել դատարանի որոշումները միայն կրոնական հարցերում:

I բաժին Ընտրություններ, կառուցվածքներ և վավերացումներ

Գլուխ I

Պատրիարքի ընտրության եղանակը և պայմանները:

Հոդ. 3/ Երբ կաթողիկոսի և պատրիարքի արուամխատը թափուր է մնում, կրոնական և համահավաք խորհուրդների անդամները ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հավաքվում են, քեմի՝ *բերաթով* հաստատված առաջնորդներից ընտրում պատրիարքի *փոխանորդ* և Բարձր Դռան համաձայնությամբ *փոխանորդի* ընտրության մասին պաշտոնապես հանդես գալիս համատեղ հայտարարությամբ: Դրանից անմիջապես հետո, *փոխանորդը* ծանուցում է բոլոր քեմերին ընտրությանը ձեռնամուխ լինելու և երկու՝ մեկը եկեղեցական, իսկ մյուսն աշխարհիկ լիազոր ներկայացուցիչներ ուղարկելու մասին: Թեմերը կարող են լիազորել պատրիարքի արուամխատում կամ արվարձաններում բնակվող հողերականների կամ աշխարհիկ անձանց: Այդուհանդերձ, նույն անձը չի կարող հանձն առնել ավելի քան երկու կրոնական տարածքների լիազորությունը: Սկսած փոխանորդի մասին արված ծանուցման օրվանից, ոչ ուշ քան քառասունհինգօրյա ժամկետում, այս եղանակով ընտրված լիազոր ներկայացուցիչները՝ կրոնական և համահավաք խորհուրդների հետ մեկտեղ, *փոխանորդի* նախագահությամբ հավաքվում են պատրիարքարանում և կազմում քեմի պաշտոնական անձանց ցուցակը (սկսած եպիսկոպոսի աստիճանից), ընդգրկելով նաև այլ եպիսկոպոսների, որոնց արժանի են համարում կաթողիկոս և պատրիարք ընտրվելու համար: Այդ ընտրությունը տեղի է ունենում գաղտնի քվեարկությամբ: Այն պաշտոնական անձանց և եպիսկոպոսներին, որոնք ունեն պահանջվող արժանիքները և ստացել են ձայներ, գրանցում են ցուցակում, անկախ այն ընտրական ձայների թվից, որոնք նրանց են տրվել: Ամեն դեպքում, քեկնածուների թիվը պետք է լինի, ավելին քան յոթը: Նշված ցուցակը *փոխանորդը* հանձնում է Պաշտամունքների նախարարությանը: Բարձր Դռան հետ կապ հաստատելուց հետո, Պաշտամունքների նախարարությունը ցուցակից դուրս է բերում, եթե դրա հարկը կա, այն քեկնածուներին, որոնց ընտրությունը քաղաքական պատճառներով չի արժանանում կառավարության հավանությանը և կոչում է *փոխանորդին* ձեռնամուխ լինել ցուցակում մնացած անուններից որևէ մեկի ընտրությանը: Այնուհետև՝ ընտրողների ժողովը միևնույն եղանակով նիստ է գումարում և գաղտնի քվեարկությամբ ու ձայների մեծամասնությամբ ընտրում է կառավարության հավանությանն արժանացած երեք քեկնածուի: Նրանցից մեկը՝ բացառապես կրոնական խորհրդի կողմից, մնանապես գաղտնի քվեարկությամբ ու ձայների բացարձակ մեծամասնությամբ ընտրվում է կաթողի-

կուս և պատրիարք: Այս առիթով ընտրողների ժողովի կազմում արձանագրությունը հանձնվում է Պաշտամունքների նախարարությանը՝ ընտրությունը վավերացնելու խնդրանքով: Այս հարցի շուրջ հրապարակված կայսրական հրովարտակի մասին Պաշտամունքների նախարարության արած ծանուցումից հետո, ձեռնամուխ են լինում ընդունված կրոնական ծիսակատարություններին և կարողվելուս ու պատրիարքը սկսում է իրականացնել իր պարտականությունները:

Հոդ. 4/ Պատրիարքական արտանիստի համար իբրև քեկնածու նախատեսված անձինք պետք է ունենան եպիսկոպոսի կարգավիճակ, ծննդով ու ծագումով լինեն օսմանյան կայսրական, իրենց բարբերով ու գործողություններով արժանացած լինեն պետության և համայնքի վստահությանը, ենթարկված չլինեն քրեական պատասխանատվության, ոչ պակաս քան հինգ տարի գոհացուցիչ ձևով ղեկավարած լինեն քեմը, լինեն նվազագույնը քառասունհինգ տարեկան, իմանան պետության պաշտոնական լեզուն և, հնարավորության սահմաններում, ծանոթ լինեն կայսրության օրենքների ու կանոնակարգերի դրույքներին:

Գլուխ II

Կրոնական խորհրդի կառուցվածքը և իրավասությունը:

Հոդ. 5/ Կրոնական խորհուրդը բաղկացած է տասներկու եպիսկոպոսներից, որոնց կեսն ընտրված է *բերարով*/ հաստատված պաշտոնական անձանցից, իսկ մյուս կեսը՝ այլ եպիսկոպոսներից: Կրոնական խորհրդի նախագահը պատրիարքն է, որը բացակայության կամ դժվարին կացության մեջ գտնվելու պարագայում լրագորությունները հանձնում է անդամներից մեկին: Անդամների պարտականությունների կատարման ժամկետը սահմանվում է երկու տարով: Ամեն տարի նրանք կիսով չափ փոփոխության են ենթարկվում: Սույն կանոնակարգը գործածության մեջ դրվելուն հաջորդած առաջին տարվա ավարտին, այս փոփոխությունը տեղի կունենա վիճակահանությամբ: Թեմի պաշտոնական անձանցից ընտրված անդամների փոփոխությունը տեղի կունենա այլընտրանքային ձևով: Մյուս անդամներն ամեն տարի կընտրվեն խորհրդի կողմից՝ ձայների մեծամասնությամբ, փոփոխության ժամկետից մեկ ամիս առաջ: Ձայների հավասար բաշխման դեպքում, նախապատվությունը տրվում է պատրիարքի քվերակությանը: Բոլոր անդամների պարտականությունների կատարմանը ձեռնամուխ լինելը հաստատում է Պաշտամունքների նախարարությունը: Ընտրված անդամներն իրավունք ունեն վերընտրվելու:

Հոդ. 6/ Կրոնական խորհրդին հանձնարարվում է հսկել համակարգի կրոնական գործերը, համայնքի անդամների շրջանում տարածել, կայունացնել, պահպանել հայկական եկեղեցու վարդապետությունները և ավանդույթները, ապահովել միջոցների հատկացումը եկեղեցիներին և նրանց աշխատակազմերին, աշխատել հոգևորականության վիճակի բարելավման ուղղությամբ, դաստիարակել պահանջվող հատկանիշներ ունեցող քահանաների և եպիսկոպոսների, հսկողություն սահմանել, որ հայկական դպրոցներում կրոնի դասավանդումը տեղի ունենա գոհացուցիչ ձևով, քննության առնել քեմի պաշտոնական անձանց դեմ ուղղված համայնքների զանգատները, քափուր քեմերի համար ընտրել պաշտոնական անձինք և Պաշտամունքների նախարարության միջնորդությամբ նրանց համար *բերար* խնդրել, ուսումնասիրել ու լուծել այն կրոնական հարցերը, որոնք կարող են ծագել համայնքի շրջանակներում՝ եկեղեցու սրբազորված սկզբունքներին համապատասխան:

Գլուխ III

Համահավաք խորհրդի կառուցվածքը և իրավասությունը:

Հոդ. 7/ Համահավաք խորհուրդը բաղկացած է տասներկու անձանցից, որոնցից չորսը կրոնական խորհրդի անդամներից են, իսկ մնացած ութը՝ համայնքի աշխարհիկ պատվարժան անձանցից: Նախագահությունն օրինական հիմունքներով պատկանում է պատրիարքին, որն, այդուհանդերձ, կարող է փոխարինվել կրոնական անդամներից որևէ մեկով: Կրոնական անդամներն ընտրվում են կրոնական խորհրդի կողմից ձայների մեծամասնությամբ: Աշխարհիկ անդամներից մեկն ընտրվում է իբրև մշտական անդամ, պատրիարքության կենտրոնական տարածքում, մյուս յոթը՝ այլընտրանքային կարգով՝ թեմերի տարածքներում, յուրաքանչյուր թեմից մեկ անդամի հաշվարկով: Բոլորի պարտականությունների կատարումը պետք է հաստատի Պաշտամունքների նախարարությունը: Նրանց պարտականությունների կատարման ժամկետը սահմանվում է երկու տարով: Ամեն տարի նրանք կիսով չափ փոփոխության են ենթարկվում: Սույն կանոնակարգը գործածության մեջ դրվելուն հաջորդած առաջին տարվա ավարտին, այս փոփոխությունը տեղի կունենա վիճակահանությամբ: Աշխարհիկ անդամներին կարող են ընտրել կամ այն թեմի բնակիչները, որից նրանք կախում ունեն, կամ պատրիարքի աթոռանիստի և նյս արվարձանների բնակիչները: Փոխարինված անդամները կարող են վերընտրվել իրենց մանդատների լրանալուց երկու տարի անց: Այդուհանդերձ, այն անդամները, որոնք թափուր մնացած պաշտոններում ընտրվել են այն պաշտոնական անձանց մահվան կամ հրաժարականի հետևանքով, որոնց պարտականությունների կատարման ժամկետը չէր լրացել, կարող են վերընտրվել իրենց նախորդի մանդատի ժամկետի լրանալուց հետո:

Հոդ. 8/ Համահավաք խորհրդի իրավասությունների մեջ ևն մտնում պատրիարքության դրամարկդի եկամուտների ու ծախսերի վերահսկողությունը, պատրիարքությունից ուղղակիորեն կախում ունեցող եկեղեցիներին ու վանքերին, ինչպես նաև մասնավոր դպրոցներին և համայնքի կողմից հիմնադրված բարեգործական հաստատություններին հատկացված անշարժ գույքի և դրամական նվիրատվությունների տնօրինման հսկողությունը, այն հաշիվների վերահսկողությունը և վավերացումը, որոնք յուրաքանչյուր տարի ուղարկվում են թեմերի պաշտոնական անձանց կողմից և վերաբերում թեմի սահմաններում գտնվող համանման հաստատությունների ունեցվածքի տնօրինմանը, պետության կողմից ճանաչված կտակների շնորհիվ համայնքին կտակված գումարների և ունեցվածքների ապահովումը (անհրաժեշտության դեպքում դատական միջոցներին դիմելու ճանապարհով) և կտակարարների կողմից նշված նպատակին հասնելու համար դրանց ճիշտ օգտագործումը: Խորհուրդը սովորաբար գումարվում է շաբաթական մեկ անգամ:

Հոդ. 9/ Ինչպես նախատեսված է նախորդ հոդվածներում, կրոնական խորհուրդը կարող է հսկողություն սահմանել համայնքի կողմից հիմնադրված դպրոցներում կրոնական ուսուցման վրա, իսկ համահավաք խորհուրդը՝ վերահսկել այդ դպրոցների եկամուտները և ծախսերը: Բոլոր դպրոցների հիմնադրումը, ուսուցանող անձնակազմի հավաքագրման եղանակը և նախնական, միջնակարգ կամ բարձրագույն ուսուցման կազմակերպումը դրվում են համընդհանուր օրենքների ենթակայության և Հասարակական կրթության նախարարության վերահսկողության ներքո:

Գլուխ IV

Պատրիարքության և խորհուրդների փոխհարաբերությունները:

Հոդ. 10/ Պատրիարքը պարտավոր է հավասար հիմունքներով վերաբերվել կրոնական և համահավաք խորհուրդների բոլոր անդամներին՝ առանց որևէ նախապատվության, որը պայմանավորված է անձնական դրոշմապատճառներով: Նա պետք է ղեկավարի խորհրդակցությունները, խուսափելով կարգ ու կանոնին հակասող յուրաքանչյուր արարքից և ամեն մի բառից: Իրենց հերթին, խորհուրդների անդամները պարտավոր են պատրիարքի հանդեպ միշտ ցուցաբերել հարգալից վերաբերմունք և ինչպես նրա ներկայությամբ, այնպես էլ բացակայությամբ, խուսափել յուրաքանչյուր արարքից կամ ցանկացած խուսակցությունից, որը կարող է հարված հասցնել նրա պատվին ու հարգաբաժանությանը:

Հոդ. 11/ Կրոնական և համահավաք խորհուրդներին արգելվում է զումարվել որևէ այլ վայրում, քան պատրիարքությունում կամ որևէ այլ անձնավորության նախագահությամբ, եթե ոչ պատրիարքի և նրա լիազորների: Այն որոշումները, որոնք կընդունվեն այնպիսի նիստերում, որոնք կգումարվեն ի հեճուկս այս արգելքի, անվավեր են:

Հոդ. 12/ Կրոնական և համահավաք խորհուրդների անդամներից մեկի անհիմն բացակայությունը միմյանց հաջորդող երեք նիստերին, դիտվում է իբրև հրաժարական և հանգեցնում շահագրգիռ անձի փոխարինմանը: Նրանք, ովքեր խոչընդոտող հանգամանք ունեն, պարտավոր են այդ մասին տեղեկացնել պատրիարքին՝ արձակուրդ ստանալու համար: Նրանք, որոնք հիմնավորում են բացակայությանը վերաբերող պատճառները, մեկ տարվա ընթացքում կարող են պատրիարքի կողմից եռամսյա արձակուրդ ստանալ: Ավելի երկարատև արձակուրդ կարող է հատկացվել միայն այն խորհրդի հավանությամբ, որին անդամակցում է այդ անդամը: Այդուհանդերձ, խուսափելու համար, որ խորհուրդների քննարկումները և աշխատանքները չկասեցվեն, արձակուրդի մեջ գտնվող անդամների թիվը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդը:

Հոդ. 13/ Երբ կրոնական և համահավաք խորհուրդների մեկ կամ բազմաթիվ անդամներ թույլ են տալիս կանոնակարգերին հակասող արարքներ, պատրիարքը նրանց կանչում է և դրա համար քաղաքավարի ձևով դիտողություն անում: Եթե այդ դիտողությունները մնում են անարդյունավետ, պատրիարքը կարող է մեղավորներին զրկել առավելագույնը երկու նիստի մասնակցելու հնարավորությունից: Եթե այս ձևով պատժված անդամները կրկին վարվեն նույն կերպ, կրոնական և համահավաք խորհուրդները պատրիարքի խնդրանքով համատեղ նիստ են զումարում առանց այն անդամների մասնակցության, որոնց մեղադրանք է ներկայացվում և կարող են ձայների մեծամասնությամբ վճիռ կայացնել իրավագանցների վտարման կամ փոխարինման մասին: Հատուկ որոշմամբ մնան եղանակով վտարված անդամները չեն կարող վերընտրվել:

Հոդ. 14/ Կրոնական և համահավաք խորհուրդներից յուրաքանչյուրն իրավունք ունի կաթողիկոսի դեմ զանգատ ներկայացնելու: Երբ իրենց իրավասությանն առնչվող հարցերի բերումով պատրիարքից զանգատվում են մեկ կամ բազմաթիվ անդամներ, նրանք գրավոր ձևով այդ փաստին տեղյակ են պահում այն խորհրդին, որին անդամակցում են՝ ներկայացնելով դրոշմապատճառները: Քննարկումից հետո, եթե խորհուրդը ձայների մեծամասնությամբ ընդունում է զանգատի հիմնավորվածությունը, ապա իր որոշման մասին հայտնում է պատրիարքին և բացատրություններ պահանջում: Եթե պատրիարքի գրավոր բացատրությունները, որոնք տրվում են առավելագույնը տասնհինգօրյա ժամկետում, ձայների մեծամասնությամբ՝ համարվում է բավարար, դիպվածին ընթացք չի տրվում: Եթե մե-

ծամասնությունը գտնում է, որ այդ բացատրություններն անբավարար են, շահագրգիռ խորհրդի անդամները կոլեկտիվ գրավոր դիմում են ներկայացնում Պաշտամունքների նախարարությանը. հայցելով նրա բույրավորությունը՝ կրոնական և համահավաք խորհուրդների արտակարգ նիստ գումարելու շուրջ:

Հոդ. 15/ Երբ համաձայն հովված խնդրանքի, ինչպես այդ մասին ասվեց նախորդ հոդվածում, Պաշտամունքների նախարարությունը խորհուրդներին արտակարգ ժողով գումարելու բույրավորյուն է տալիս, այդ մասին, տեղական իշխանությունների միջնորդությամբ, հայտնում են երկու խորհուրդներին, որոնք կրոնական խորհրդի ամենատարեց անդամ եպիսկոպոսի նախագահությամբ հավաքվում են պատրիարքարանում: Եթե զանգատվողի հայտարարությունները, ինչպես նաև պատրիարքի գրավոր բացատրությունները քննության առնելուց հետո ժողովի երկու երրորդը, այն է՝ նվազագույնը տասնչորս անդամ, գտնում են, որ խնդրու առարկա զանգատը հանգեցնում է պատրիարքի գահընկեցությանը, նրանք այդ մասին գրավոր ձևով անմիջապես տեղեկացնում են նախարարին և պատրիարքին: Այդ որոշումից հետո պատրիարքը պարտավոր է հրաժարական ներկայացնել Պաշտամունքների նախարարությանն ու խորհուրդներին և քսանչորս ժամվա ընթացքում բողոքել իր պաշտոնը: Եթե նա չի համակերպվում այդ պարտավորության հետ, ապա անդամների խնդրանքով և Պաշտամունքների նախարարության հրամանով՝ իշխանությունները նրան վտարում են պատրիարքարանից:

Հոդ. 16/ Եթե համաձայն արտակարգ ժողով գումարած կրոնական և համահավաք խորհուրդների, պատրիարքի դեմ ուղղված զանգատն այնպիսին չէ, որը կարող է հանգեցնել նրա գահընկեցությանը, այն է՝ եթե այդ պատիժը չի հաստատվել ձայների երկու երրորդի կողմից, զանգատ ներկայացրած անդամները հարկադրվում են իսկույն կերպով հրաժարական տալու և փոխարինվում ուրիշներով, որոնք ընտրվում են համաձայն սույն կանոնակարգի: Նրանք չեն կարող վերընտրվել, քանի դեռ միևնույն պատրիարքը շարունակում է կատարել իր պարտականությունները:

Քլուխ V

Պատրիարքության վարչությունը:

Հոդ. 17/ Պատրիարքությունն ունի երեք բյուրո. մեկը՝ պատրիարքության գրասենյակի աշխատանքների, երկրորդը՝ կրոնական և համահավաք խորհուրդների աշխատանքների և երրորդը՝ պատրիարքության հաշվապահության համար: Այս բյուրոներից յուրաքանչյուրն ունի ղեկավար և անհրաժեշտ թվով քարտուղարներ: Բացի դրանից, կրոնական գործերի համար կա տեղապահ, որին հոգևորականներից ընտրում է պատրիարքը, իսկ ժամերգության մանրամասների համար՝ կան բավարար թվով պրեկատներ, քահանաներ և սպասավորներ: Պատրիարքն ուղղակիորեն նշանակում է և փոխարինում պատրիարքի տեղապահին, նրա բյուրոյի անձնակազմին, ինչպես նաև պրեկատներին, քահանաներին և սպասավորներին: Պատրիարքը նշանակում է և աշխատանքից հեռացնում նաև մյուս երկու բյուրոների անձնակազմերը՝ կրոնական և համահավաք խորհուրդների ընդունած համատեղ որոշման հիման վրա:

Հոդ. 18/ Պատրիարքությանն ուղարկվող գործառությանը վերաբերող փաստաթղթերը փոխանցվում են իրավասու խորհրդին, որը դրանք քննարկում է ըստ գրանցման հերթակառության, այդուհանդերձ, բացառություն անելով հրատապ հարցերի համար:

Հոդ. 19/ Պատրիարքն իրավասու է հակադրվելու կրոնական և համահավաք խորհուրդ-

ների ընդունած այն հարցերին՝ վերաբերող որոշումներին, որոնք նրանց բննորոշան են ներկայացվել և պահանջելու դրանց վերանայումը՝ հիմնավորելով իր դիրքորոշման դրոշապատճառները: Եթե ընդունված որոշումը ևս մեկ անգամ է վավերացնում նախկինը, և եթե քննարկման ենթակա հարցը չի դասվում կրոնական խորհրդի բացառիկ իրավասության ներքո գտնվող կրոնական հիմնարար հարցերի շարքում, պատրիարքը կարող է գործել իր հայեցողությամբ, անձնական պատասխանատվությամբ և ելնելով անձնական համոզմունքներից, այն պայմանով, որ իր որոշման մասին հայտնի շահագրգիռ խորհրդին: Եթե պատրիարքի նման դիրքորոշումը տեղիք է տալիս գանձատների, հարկ կլինի գործել 14-րդ հոդվածի հրահանգներին համապատասխան:

Հոդ. 20/ Աշխատավարձերը, նպաստները և տեղափոխությունների ծախսերը, որոնք հատկացված են պատրիարքին, կրոնական և համահավաք խորհուրդների անդամներին, ինչպես նաև պատրիարքության այլ պաշտոնյաներին, վճարվում են դրամարկից, լստ այն բյուջեի, որն ամեն տարի կազմում է համահավաք խորհուրդն առկա և Պաշտամունքների նախարարության տնօրինության ներքո գտնվող եկամուտներին համապատասխան՝ պատրիարքի հավանությանն արժանանալուց հետո:

Հոդ. 21/ Պատրիարքության դրամարկը գտնվում է համահավաք խորհրդի վերահսկողության ներքո: Նրա շահույթները գումարվում են. 1/ այն եկամուտներից, որոնք բխում են պատրիարքության և նրանից կախում ունեցող վանքերի կողմից ձեռք բերված կալվածքներից. 2/ համայնքի հոժարական մվիրառություններից. 3/ այն կալվածքներից, որոնք թողել են ժառանգներ չունեցող հոգևորականները. 4/ այն եկամուտներից, որոնք ժողովվում են պատրիարքության արձանատի ենթակայության ներքո գտնվող հայ բնակչության շրջանում տեղի ունեցող ամուսնություններից, մկրտություններից, քաղումներից և այլ կրոնական արարություններից. 5/ պատրիարքական պարիակներից, որոնք յուրաքանչյուր թեմում նախօրոք գանձվում են՝ համահավաք խորհրդի որոշմամբ ամեն տարի ընդունվող բյուջեին համապատասխան:

Այս եկամուտներից գատ, պատրիարքությանն արգելված է համայնքի անդամներից ստանալ որևէ բան, կարևոր չէ, թե ինչ հիման վրա և կարևոր չէ, թե ինչպիսի առիթով:

II բաժին

Թեմերը

Հոդ. 22/ Թեմերի առաջնորդներն ընտրվում են պատրիարքության կրոնական խորհրդի կողմից և նշանակվում պետության կողմից: Իրենց տրված *բերաթի* հիման վրա, նրանք պարտականությունները կատարում են համաձայն առյն կանոնակարգի և իրենց կրոնական տարածքի սահմաններում: Նրանք, ովքեր ծննդով ու ծագումով օսմանյան հայատակներ չեն, դատապարտվել են իրավախախտումների համար, հայտնի են իրենց վնասաբեր բարքերով, որոնց երեսուհինգ տարին դեռևս չի լրացել, որոնք չգիտեն պետության պաշտոնական լեզուն և կայսրության օրենքների ու կանոնակարգերի մասին չունեն անհրաժեշտ գիտելիքներ՝ չեն կարող նշանակվել թեմի առաջնորդներ:

Հոդ. 23/ Թեմերը կկազմավորվեն և կրկին միմյանցից կառանձնանան այնպես, որ լինողրկեն մվագագույնը. տասնհինգ հազար շնչից բաղկացած հայ բնակչություն:

Հոդ. 24/ Կոստանդնուպոլսի թեմի առաջնորդը կունենա պատրիարքի տեղապահի տիտղոս և արքեպիսկոպոսի աստիճան, սակայն այլ թեմերի առաջնորդներից չի տարբեր-

վի ոչ իր *քերասթի* հյուսհանգնելով, ոչ իր իրավասություններով:

Հոդ. 25/ Թեմիքը չի կարող ղեկավարել պաշտոնակատարը: Թեմի այն ղեկավարներին, որոնք օրինական պատճառաբանությամբ կարճ ժամկետով թողնում են իրենց պաշտոնը, բացակայության ընթացքում կարող է փոխարինել թեմի բարձր հոգևորականության անդամներից որևէ մեկը: Եթե արտակարգ հանգամանքների պարագայում թափուր թեմը պետք է ժամանակավորապես ղեկավարի պաշտոնակատարը և եթե դրա անհրաժեշտությունը հավաստել է նաև Պաշտամունքների նախարարը, ապա թեմի կառավարչի կողմից պարտականությունների կատարման ստանձնումը կարող է վավերացվել նախարարության պաշտոնական փաստաթղթով: Բայց թեմը ժամանակավորապես կառավարելու պատճառով, այդ կառավարիչը չի կարող լինել պատրիարքության խորհրդի անդամ:

Հոդ. 26/ Թեմի յուրաքանչյուր առաջնորդին կից գործում են երկու խորհրդակցական մարմին, որոնցից մեկը ձևավորվել է կրոնավորներից, մյուսը՝ թեմի պատվարժան անձանցից և որոնց բանակը չպետք է գերազանցի վեցը: Այս խորհուրդները պաշտոնական բնույթ չեն կրում և որևէ ձևով պատասխանատու չեն, թե ինչպես է ղեկավարվում թեմը: Նրանք պարզապես իրենց օգնությունն են ցուցաբերում առաջնորդին այն հարցերում, որոնք նա, ելնելով հանգամանքների բնույթից, հանձնարարում է նրանցից մեկին կամ մյուսին: Այդ մարմինների ընտրությունը և փոփոխությունը, ինչպես նաև գործունեությունը ճշգրտող կանոնակարգերը մշակվելու են պատրիարքարանի կրոնական և համահավաք խորհուրդների համատեղ ջանքերով և գործաձուրթյան մեջ են դրվելու Պաշտամունքների նախարարության կողմից տրված կարծիքից հետո:

Հոդ. 27/ Թեմի յուրաքանչյուր արտոնախտ ունի դրամարկղ, անհրաժեշտ թվով օժանդակ քարտուղարներ և աշխատակիցներ: Այդ դրամարկղի եկամուտները գումարվում են այն հարկերից, որոնք թեմերը գանձում են այնպիսի կրոնական արարողություններից, ինչպիսիք են ամուսնությունները, մկրտությունները, քաղումները և այլն, հայ բնակչության նվիրատվություններից ու այն գումարներից, որոնք պատրիարքության համահավաք խորհուրդն անհրաժեշտության դեպքում հատկացնում է թեմի ծախսերի համար՝ եկեղեցիների, վանքերի և այլ հաստատությունների եկամուտներից:

Հոդ 28/ Իրենց տարածքում գտնվող վայրերում և միայն կրոնական գործերի համար, բնական առաջնորդները կարող են փոխանորդներ նշանակել՝ այդ մասին տեղական իշխանություններին տեղեկացնելու պայմանով: Այդ փոխանորդները չունեն որևէ պաշտոնական կարգավիճակ:

III բաժին

Տարբեր հարցեր

Հոդ. 29/ Սույն կանոնակարգը գործաձուրթյան մեջ դնելու սկզբնական շրջանում, կրոնական և համահավաք խորհուրդների կազմավորումը տեղի կունենա հետևյալ եղանակով. 1/ պատրիարքն ընտրում է և հրավիրում՝ տեղյակ պահելով Պաշտամունքների նախարարությանը, կրոնական խորհրդի վեց անդամներին, որոնք *քերասթով* նշանակված թեմական առաջնորդներից են. 2/ այս կերպ ձևավորված կրոնական խորհուրդն ընտրում է մյուս վեց անդամներին, որոնց կողմից պարտականությունների ստանձնումը պետք է վավերացվի վերոհիշյալ նախարարության կողմից. 3/ այնուհետև՝ կրոնական անդամներից պետք է առանձնացնել չորս անդամների, որոնք կրնողգրվեն համահավաք խորհրդում: Այս վերջին

խորհրդի վերջին ուր աշխարհիկ անդամները՝ ի քիվս համայնքի պատվարժան անձանց, կընտրվեն պատրիարքի կողմից, որոնցից մեկին հարկ է ընդգրկել պատրիարքի արտա-նխտի բնակիչներից: Եթե այդ ընտրությունն արժանանա կառավարության հավանությանը, ապա Պաշտամունքների նախարարությունը կվավերացնի այդ անդամների կողմից իրենց պարտականությունների ստանձնումը: Եթե այս կանոնակարգի կիրառման սկզբ-նական շրջանում դժվարություններ ծագեն եպիսկոպոսի աստիճան ունեցող հոգևորա-կաններից կրոնական խորհրդի բոլոր անդամներին հավաքագրելու հարցում, կարելի կլի-նի նրանց թիվը համալրել հանձինս բարձր հոգևորականության այլ անդամների, այդու-հանդերձ, պայմանով, որ վերջիններինս թիվը չզերագանցի իննգը:

Հոդ. 30/ Կրոնական և համահավաք խորհուրդները կարող են համատեղ միատեղ գու-մարել միայն այն դեպքերում, եթե դրանք նախատեսված են կանոնակարգում: Նրանց չի թույլատրվում այդ անել ուրևէ այլ շարժառիթով:

Հոդ. 31/ Եթե կաթողիկոսը և պատրիարքը բույլ է տալիս գործող օրենքներին ու կանո-նակարգերին կամ երկրի և պետության շահերին հակասող արարքներ, Պաշտամունքների նախարարությունը նրան է հղում գործած զանցանքների ծանրությանը համապատասխա-նող գրավոր նախազգուշացումներ: Անհրաժեշտության դեպքում, Պաշտամունքների նա-խարարությունից Բարձր Դռանը ներկայացված առաջարկությամբ և նախարարների խորհրդի հատուկ որոշմամբ, նա կարող է հեռացվել կայսրական հրովարտակով: Այս դեպ-քում, համաձայն մեծ վեզիրի դեկրետի, որը կուղարկվի պատրիարքության կրոնական և համահավաք խորհուրդներին, հարկ կլինի ձեռնամուխ լինել *փոխանորդի* ընտրությանը և պատրիարքին փոխարինողի ընտրությանը՝ 3-րդ և 4-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդ. 32/ Եթե 31-րդ հոդվածում նշված արարքները բույլ տրվեն քեմի առաջնորդներից մեկի կամ հոգևորականության որևէ այլ անդամի կողմից, ապա Պաշտամունքների նախա-րարությունը պատրիարքության միջոցով ծանուցումներ կիղի դրանց հեղինակներին նա-խազգուշացումներ և պատիժներ տալու կամ հեռացնելու վերաբերյալ: Յուրաքանչյուր խուսանավում կամ հապաղում, որոնք այս առիթով կարող են բույլատրվել կառավարա-կան ծանուցումների կենսագործման հարցում, կհանգեցնեն կառավարության կողմից մե-ղավոր կրոնական առաջնորդի հեռացմանը պաշտոնից և, բացի դրանից, անհրաժեշտ մի-ջոցներ կձեռնարկվեն պատրիարքի ու կրոնական խորհրդի դեմ՝ օրենքին դիմադրություն ցուցաբերելու պատճառաբանությամբ:

Հոդ. 33/ Եթե պատրիարքության խորհուրդների անդամները միջամտում են այնպիսի հարցերի, որոնք սույն կանոնակարգում թվարկված հարցերի հետ առնչություն չունեն և ցանկանում են դեպի այդ ուղին մղել պատրիարքին կամ կրոնական այլ առաջնորդներին, որդեգրում են այնպիսի վարքագիծ, որը քաղաքական բնույթ է կրում կամ ջանում են դժվա-րություններ հարուցել կառավարության հրամանների կենսագործման ճանապարհին՝ նրանք, ըստ պարագայի, պատժվում են և հեռացվում Պաշտամունքների նախարարու-թյան կողմից: Ըստ բույլ տրված արարքների ծանրության, նրանց հեռացումը կարող է, անհրաժեշտության դեպքում, հանգեցնել նրանց՝ իբրև նշված խորհուրդների անդամների վերընտրության արգելմանը հետագայում:

Հոդ. 34/ Եթե նախորդ հոդվածներում նշված պատժիչ միջոցներ հարուցող արարքների բնույթն այնպիսին է, որ ծագում է նրանց հեղինակներին նաև քրեական օրենսգրքի դրույթ-ներից համաձայն պատժելու անհրաժեշտությունը, ապա այդ պատիժը ևս կիրառվում է:

Հոդ. 35/ Հարկերի՝ որոնք կրոնական առաջնորդներն իրավասու են զանձել համայնքի անդամներից՝ ամուսնությունների, մկրտությունների և կրոնական այլ ծառայությունների

համար, սակացուցակները և գանձման եղանակը սահմանում են պատրիարքության կրոնական և համահավաք խորհուրդները՝ հոգևորականության պահանջներին ու համայնքի ֆինանսական հնարավորություններին համապատասխան, սույն կանոնակարգը գործածության մեջ դնելու պահից ի վեր՝ առավելագույնը երկու տարվա ժամկետում և պատրիարքի կողմից հաղորդվում են Պաշտամունքների նախարարությանը, որը դրանք կհավելի սույն կանոնակարգին այդ նույն տեսքով կամ անհրաժեշտ փոփոխություններով հանդերձ:

Հոդ. 36/ Իբրև կաթողիկոսի և պատրիարքի նստավայր ընտրված Սրբոց Հակոբյանց կրոնական եղբայրության կանոնադրությունը, ինչպես նաև վանքի ու նրա կալվածքների վարչությունը կվավերացվեն հատուկ որոշմամբ, իրերի նոր վիճակից բխող անհրաժեշտություններին համապատասխան, բացառապես կրոնական խորհրդի կողմից, սակայն հաշվի առնելով պատրիարքության համահավաք խորհրդի կարծիքը: Այդ որոշումն ուժի մեջ կմտնի Պաշտամունքների նախարարության հավանությանն արժանանալուն ևեթ:

Հոդ. 37/ Հայկական պատրիարքությանը վերաբերող 1279 թ. ռամազանի 20-ի՝ կանոնակարգը համարվում է ուժը կորցրած:

Հոդ. 38/ Ներկա կանոնակարգը գործածության մեջ է մտնում իր հաստատման պահից ի վեր:

Հոդ. 39/ Պաշտամունքների նախարարությանը հանձնարարվում է հսկել սույն կանոնակարգի կիրառմանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 163-172).

III

1916 թ. օգոստոսի 11-ին «Թանհնում» լույս ընծայված առաջնորդող հոդված

Հայկական պատրիարքությունը

Օսմանյան կառավարությունը մի կողմից նկատի ունենալով պետության բարձրագույն շահերը և մյուս կողմից, հենց իրենց՝ հայերի շահերը, հենց նոր մշակեց պատրիարքության նոր կանոնադրությունը, որը երեկ հրապարակվել է թերթում: Առանց մանրամասների մեջ թափանցելու, մենք ցանկանում ենք փոքր-ինչ քննարկել այդ կանոնադրության հիմնական դրույթները, որոնք կրոնական ասպարեզում հայերի համար հաստատված կարգ ու կանոնում հիմնարար փոփոխություն են մտցնում:

Ներմուծված փոփոխություններն ամփոփվում են երկու հիմնական դրույթներով: Առաջինը պատրիարքի և կաթողիկոսի պարտականությունների միակցումն է, երկրորդը՝ համընդհանուր ժողով անունը կրող՝ պատրիարքության ժողովի վերացումը, որը հայտնի է Ազգային ժողով գռեհիկ անվամբ, և որն, իրականում, հիշեցնում է աշխարհի և ոչ մի շրջանում մնանը չունեցող պատգամավորների պալատ:

Պատրիարքի և կաթողիկոսի պաշտոնների միակցումը պայմանավորող շարժառիթը մանրամասն բացատրություններ չի պահանջում: Հայտնի է, որ լիլիշխան հոգևոր առաջնորդ լինելու համար հարկ ունենալով կաթողիկոսից ստանալու յուրօրինակ ինվեստիտու-

րա, հայ պատրիարքը մշտապես դիմում էր այդ առթիվ Էջմիածնի կաթողիկոսին: Սակայն, քանի որ Էջմիածինը գտնվում է Ռուսաստանում, պատրիարքը, որն օսմանյան հայերի առաջնորդն է, հարկադրված էր, այսպիսով, հաստատուն հարաբերությունների մեջ լինել ռուսական ազդեցության ներքո գտնվող կաթողիկոսի հետ:

Սա մի հարց է, որը հարկ է լավ ըմբռնել: Բացատրենք այն: Հայկական համայնքն ունի կաթողիկոսի երեք աթոռանիստ: Այն է՝ երեք հոգևոր կենտրոն. երկուսն օսմանյան երկրում են՝ Սիսը և Աղթամարը, երրորդը Ռուսաստանում՝ Էջմիածինը: Իբրև Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքներ, ընտրվում են եպիսկոպոսներ, որոնց պատրիարքի պաշտոնը վերստին է պարզունակ պաշտոնական պարտականության, որը նրանց որևէ նոր և իրական հոգևոր իշխանություն չի ընձեռում: Այսպես, օրինակ, միայն կաթողիկոսներն իրավունք ունեն քահանային եպիսկոպոսի աստիճան շնորհելու և օրհներու սուրբ մեռունը: Երբ խոսքը վերաբերում է մնաց բնույթի ծեսերի կամ կրոնական այնպիսի հարցերի, որոնք նրանք ի գորտու չեն լուծելու իրենց սեփական իշխանությամբ, պատրիարքները հարկադրված են դիմելու կաթողիկոսներին կամ նրանց կից սինոդներին: Քանի որ պատրիարքի տիտղոսը բացարձակապես պաշտոնական բնույթ է կրում, որևէ խոչընդոտ չի կարող լինել այն քանում, որ առաջնորդներն ընտրվեն ժողովրդի կողմից, այնժամ, երբ կաթողիկոսի ընտրությունը և ինվեստիտուրան կախված են միմիայն եպիսկոպոսներից բաղկացած սինոդից: Կաթողիկոսական երեք աթոռանիստներից հնագույնը՝ Էջմիածնի աթոռանիստն է, որի առաջնորդը եղել է հայ եկեղեցու հիմնադիր Գրիգորը: Երբ Փոքր Ասիայում տեղի ունեցող ասպատակությունների դարաշրջանում կաթողիկոսը գաղթել է Սիս, այդ աթոռանիստն ասպարեզից վերացել է, այնուհետև՝ վերականգնվել:

Երբ հայերի համար պատրիարքություն է հիմնադրվել, պատրիարքները գերադասել են հաղորդակցվել Էջմիածնի կաթողիկոսի հետ: Այս համակարգը, որը սկզբնավորվել է այն ժամանակ, երբ Էջմիածինը գտնվում էր մեր տիրապետության ներքո, պահպանվել է նաև այնժամ, երբ այդ տեղանքը դարձել է ռուսական քաղաք:

Նման իրավիճակը սկզբում մեծ բարդությունների տեղիք չի տվել, քանզի հայերի դեմ ուղղված՝ Ռուսաստանի որդեգրած կեղեքման և ոչնչացման քաղաքականությունն Էջմիածնում առաջ էր բերել, այդուհանդերձ, ռուստայաց միջավայր: Բայց երբ Արևելյան Անատոլիայում հայանպաստ քաղաքականություն վարելու նպատակով Ռուսաստանը սկսել է ներթափանցել Էջմիածին, համակարգի անպարկեշտությունն անսպասելի ձևով ի հայտ է եկել, որովհետև Ռուսաստանն Էջմիածնում իր մերենայությունների շնորհիվ օսմանյան հայերի շրջանում ձեռնամուխ է եղել տարածելու այնպիսի գաղափարներ, որոնք իր համար շահավետ էին, մի բան, որը նրան ամբողջությամբ հաջողվել է: Կար միայն շատ պարզունակ մի դեղամիջոց, որը հանգում էր պատրիարքության և Էջմիածնի միջև հարաբերությունների խզմանը: Ինչպես մենք այդ մասին ասացինք, կային երեք աթոռանիստ, որոնք հայերի համոզմամբ ներկայացնում էին միևնույն հոգևոր լիցենզիայունը և որոնք, փոխադարձաբար, նույնքան սուրբ էին: Սկզբում՝ հնամենիության պարզունակ նկատառումները, իսկ ավելի ուշ՝ օրեցօր ավելի հզորացող քաղաքական նկատառումները հարկադրել են պատրիարքությանը, ի տարբերություն մյուսների, նախապատվությունը լուրջ Էջմիածնի կաթողիկոսին. բանը նույնիսկ այնտեղ է հասել, որ նա չի ցանկացել ընդունել մյուս երկու կաթողիկոսների ինքնիշխանությունը և պնդել է, որ նրանք գտնվում են իր անմիջական իրավասության ոլորտում: Սակայն հայերի կրոնական կառուցվածքին վերաբերող փաստաթղթերում պատրիարքության այս հավակնությունն արդարացնող ոչինչ չի եղել: Փոխարենը, այն ժամանակաշրջանում, երբ Երևանի տարածաշրջանն ընդգրկված

էր օսմանյան ասհմաններում և Էջմիածնի կաթողիկոսներին տրված *քերասներում* Կոստանդնուպոլսի պատրիարքների խնդրանքով գործածվում էր «հայկական պատրիարքության ոլորտում ընդգրկված» տերմինը, Սսի կաթողիկոս Սկրտչի¹ և պատրիարքության միջև այդ առթիվ մի առճակատում է ծագել, իսկ 1298 թ.² այդ առճակատմանը լուծում տալու համար օսմանյան կառավարության ու պատրիարքության ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով իր զեկուցագրում հայտարարել է, որ Սսի կաթողիկոսը բացարձակապես կախում չունի հայկական պատրիարքությունից և, հետևաբար, պետությունն իրավասու է այդ առթիվ որոշում կայացնել այնպես, ինչպես կամենա: Այսպիսով, որևէ արգելք չկար Էջմիածնի աթոռանիստը մյուս երկուսից որևէ մեկով փոխարինելու համար, երբ ծագեց պատրիարքության և կաթողիկոսի միջև հարաբերությունները վերանայելու անհրաժեշտությունը, քանի որ հայերի համագործակցությամբ՝ Օսմանյան կայսրությունը տրոհելուն վերաբերող Ռուսաստանի ծրագրերի իրականացման ընթացքում Էջմիածնի կաթողիկոսը դարձել էր գործիք: Հենց այս հարցն է, որին նոր կարգավիճակը հենց նոր լուծում տվեց, և վարվելով այսպես, պետությունը հայերի կրոնական հարցերին որևէ հարված չհասցրեց:

Նոր կանոնադրության երկրորդ կարևոր հարցն առնչվում է համընդհանուր ժողովի լուծարմանը, որը նիստեր էր գումարում պատրիարքարանում: Հայտնի են այն արտոնությունները, որոնք օսմանյան կառավարությունը՝ ելնելով խղճի ազատության հանդեպ ամենախորին հարգանքից, նույնիսկ նվաճումների դարաշրջանում, հատկացրել է նրանց, ովքեր մահմեդականներ չեն եղել: Այդ արտոնություններից ամենակարևորները հատկացվել են հունական պատրիարքությանը, իսկ դրանց հիմքում ընկած է ժամերգության կատարման ու դրա հետ կապ ունեցող գործերի տնօրինման կատարյալ ազատությունը:

Եթե հունական պատրիարքության կազմավորումը քննարկենք այս տեսակետից, կտեսնենք, որ այն ընդգրկում է երկու մարմին. մեկը սինոդն է, որը բաղկացած է հոգևորականներից, մյուսը՝ ուր անձից բաղկացած աշխարհիկ խորհուրդը, որի չորս անդամները սինոդից են, իսկ մյուս չորսն ընտրված են դրսից: Այս մարմիններից առաջինը զբաղվում է միայն կրոնական հարցերով, այնժամ, երբ երկրորդը համայնքի այնպիսի գործերով, ինչպիսիք են ֆինանսական հարցերը, բարեգործական հաստատությունները և այլն:

Սակայն բացի դրանից, հայկական պատրիարքությունում կար 140 անդամից բաղկացած համընդհանուր ժողով, որից 120-ը ընտրվում էին ուղղակիորեն ժողովրդի կողմից: Այն հայտ է, որ դա հիշավի ազգային ժողով էր: Այս իրավունքի կիրառումը, որը հատկացվել էր 1279 թ.³, այն ժամանակաշրջանի մեծ վեզիրի կողմից այնպիսի պատճառների բերումով, որոնց ուսումնասիրելն իսկ այստեղ շատ երկար կտևի, չէր կարող, բնականաբար, այլևս շարունակվել, անկախ այն բանից, թե ինչպիսին էին եղել այն դրոպապատճառները, որոնք երբևէ նպաստել էին դրա ճանաչմանը, որովհետև, այդ ոչ այլ ինչ էր, եթե ոչ պետության մեջ պետության ճանաչում: Իրականում, այն օրվանից ի վեր, ինչ այդ իրավունքը հատկացվել է, ազգային ժողովը քաղաքական հաստատության տեսք է ընդունել: Հայերի շրջանում սկսել են ձևավորվել կուսակցություններ, մշակվել են ծրագրեր, ի հայտ են եկել ընտրական քախումներ: Կոչվում էին փողոցներում, աղմկում ժողովի շրջանակներում և մի կողմ թողնելով կրոնական հարցերը՝ եզրավակում միմիայն քաղաքական հարցերի քննարկումով: Այս կուսակցություններից շատերը մշակել էին բացահայտ հեղափոխական ծրագրեր: Ոմանք անգլիոսցիների կողմնակիցներն էին, մյուսները՝ ռուսների, ուրիշները, վերջապես, երագում

1 Ն {որին սրբազնություն} Սկրտչ Բեֆաիզյանը:

2 Շատ գրիգորյան օրացույցի համապատասխանում է 1882 թ.:

3 Շատ գրիգորյան օրացույցի համապատասխանում է 1863 թ.:

էին անկախութեան հասնել իրենց սեփական ուժերով: Այնպէս որ, պատրիարքները, որոնք իրենց աթոռանիստերը պահպանելու համար ստիպուած էին հաշվի նստել այդ կուսակցութիւններին և պատրիարքութեան խորհուրդներին հետ, որոնք ևս ընտրվել էին այդ ժողովի կողմից, պատահում էր, որ երբեմն հարկադրուած էին յինում քաղաքական հարցերով զբաղվելու համար անտեսել իրենց կրօնական պարտականութիւնները: Ի դեպ, ամենքն են հիշում այն ցույցերը, որոնք տեղի ունեցան երկու տարի առաջ, այդ ազգային ժողովի հիմնադրման հիստորիորդ տարեդարձի կապակցութեամբ:

Անիմաստ է այստեղ ասելն իսկ, որ աշխարհում և ոչ մի տեղ մնան ժողով գոյություն չունի: Բայց մեզանում, որ կրօնական հնագույն արտոնությունները սահմանափակվում են այն իրավունքներով, որոնք շնորհվել են հունական պատրիարքութեանը, հայկական պատրիարքութեանն այդպիսի տարօրինակ և անտրամաբանական իրավունք հատկացնելը բացարձակապէս անիմաստ էր: Ի դեպ, բավական է քննութեան առնել արդյունքները, էլ ավելի լավ տեսանելի դարձնելու համար հիսուն տարուց ի վեր հիմնադրուած այդ համակարգի բոլոր թերությունները (ինչպէս պետութեան, այնպէս էլ հե՛նց իրենց՝ հայերի համար): Այն օրվանից ի վեր, ինչ անգլիական և ռուսական մեքենայութիւնները սկսեցին ազդեցություն գործել մի խումբ խանդավառների վրա, մասամբ խորին համոզմունքով և մասամբ էլ շահադիտական նկատառումներով առաջնորդող հայերի շրջանում ձևավորվեցին հեղափոխական ընդարձակ կոմիտեներ և պատրիարքը դարձավ այդ բոլոր մեքենայութիւնների գործիքը, որովհետև, պատրիարքութեանը ենթարկվում էր ոչ թէ պատրիարքներին, այլ յորսի քաղաքագետներին, որոնք ընդունակ էին յուրաքանչյուր բնութի մեքենայութիւնների: Այնպէս որ, մի քանի սաղոյիչներ գործերի ընթացքն իրենց ձեռքը վերցրին և հոգևորականներին հավաքագրելով այն մարդկանցից, ովքեր պատրաստ էին սատարել իրենց նպատակների իրականացմանը, հետամուտ եղան իրենց քարոզչութեանը և իրենց իսկ կազմակերպմանը՝ այլ նույն հոգևորականութեան միջնորդութեամբ:

Արդյունքը հանգեցրեց հետևյալին. անցյալ տարի հեղափոխականների մի խումբ փորձեց հայերի շրջանում մեծ հրդեհ բռնկել, որոնց՝ հիսուն տարի առաջ, նրանց հանդէպ ունեցած վստահութեան պատճառով, հատկացվել էին արտակարգ լայնածավալ իրավունքներ: Եվ հենց հայերն էին, ինչպէս նաև կառավարությունը, որոնք դրա հետևանքով տատապանքներ կրեցին: Ակնառու դարձավ, որ հիսուն տարի առաջ ցուցաբերվել է ճայրահեղութեան հասնող բարյացակամություն: Ուստի, օսմանյան կառավարությունը տատանվելու համար այլևս ոչինչ չուներ: Հարկ էր իրերին տալ բնականոն ընթացք: Կասկածից վեր է, որ այս վերակառուցման ընթացքում կառավարությունն առաջնորդվում էր ելնելով միայն մեկ՝ հայերի և պետութեան շահերի մտահոգությունից, որովհետև, քաղաքագետների մեքենայութիւնների հորձանուտում պատրիարքների ստրկությունը, հարվածում էր ոչ միայն նրանց կրօնական, այլև աշխարհիկ շահերին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 173-176).

Պ. Վիետի ծանուցագիրը¹

Պողոս Նուբար փաշայի հետ Քե դ'Օրսեում կայացած գլուխ

¹ Նախատեսված է պ. Գոի համար:

Փարիզ, 26-ը փետրվարի 1917 թ.:

Պողոս Նուբարը շարաթ օրը եկել էր Դեպարտամենտ ձեզ տեսնելու: Ես նրան ընդունեցի ձեր բացակայությամբ, համառոտակի տեղեկացրի իրավիճակին Արևելյան լեզեոնի հարցում, բնականաբար, առանց որևէ ձևով ակնարկելու Օյուսսերանի հետ կապված միջադեպը: Թվաց, թե հաղորդված տեղեկությունները Պողոս փաշային զոհացրին:

Ինչ վերաբերում է նրա երկու նամակներին, որոնց դուք այսօր պատասխանում եք, ապա նա ծանոթացել է մեր հետաքննության արդյունքներին և ինձ հայտնել, որ հաշվի առնելով եզրակացությունները, ինքը չի համառում: Այնուամենայնիվ, նա ինձ հանձնարարել է խնդրել ձեզ պատասխանելու իրեն, ինչպիսի մտադրություն դուք ունեք, որը նրան կթույլատրի շահագրգիռ անձանց հայտնել, որ նրանց խնդրանքներին որևէ ընթացք տալն անհնար է:

Բացի դրանից, Պողոս փաշան ինձ հետ զրուցեց.

1/ կամավոր հիմունքներով զինձառայություն ստանձնած և արդեն մեր արտասահմանյան զնդերում ծառայող այն հայերի մասին, որոնք հետագայում պետք է անխտրաբար ընդգրկվեն Արևելյան լեզեոնի կազմում (ես նրան պատասխանեցի, որ հարցն արդեն քննարկվել է, բայց որ Ռ-ազմական նախարարությունը ժամանակավրեպ է համարել դրան լուծում տալը: Պողոս փաշան համաձայնվեց, որ այդ որոշումն արդարացված է).

2/ այն հնարավորության շուրջ, որը վերաբերում է աստիճանավոր հայերին, բայց ոչ սիրիացիներին՝ Արևելյան լեզեոնի ստորաբաժանումների կազմավորման համար նկատի ունենալու հարցին (այդ աստիճանավորներն ընտրված են արևելյան կապրալներից և ենթասպաններից, որոնք ծառայության են ընդունվել կամավոր հիմունքներով և վաղուց ի վեր ընդգրկված են մեր արտասահմանյան զնդերում): Ես պատասխանեցի Պողոս փաշային, որ ձեզ այդ մասին կզեկուցեմ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 122-122 v).

337

Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան պ. Պոլ Կամբոնը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ճ. թիվ 241:

Լոնդոն, 28-ը փետրվարի 1917 թ.:

(Ստացել են Կաբ. մարտի 2-ին,

Քաղ. վարչ. մարտի 3-ին):

Ձերդ գերազանցությունը պահանջել էր ինձնից զրուցել բրիտանական կառավարության հետ Կիպրոս կղզում «Արևելյան լեզեոնի» ստեղծման մասին: Վերջինս, սկզբունքորեն տալով իր լիակատար համաձայնությունը ֆրանսիական կառավարության առաջարկություններին, տեղեկացնում է ինձ, որ անգլիական բանակի կարիքները պահանջում են Եգիպտոսում և Կիպրոսում* սեծ թվով մորակոչիկներ ունենալու անհրաժեշտությունը, և որ այս պահին, դժվար է կանխատեսել, թե արդյո՞ք նրանցից պահեստայիններ կունենանք:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 127).

* Պ. Գոլի ձեռագիր ծանոթագրությունը. «Ի՞նչ է սա նշանակում: Մենք Կիպրոսում զինվորագրում չենք անցկացնում, իսկ անգլիացիները թույլատրում են հայերի և մուսլիսկ սիրիացիների զինվորագրումը Եգիպտոսում»:

**Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան պ. Ժյուստերանը՝ Խորհրդի
նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. թիվ 209:

Վաշինգտոն, [անթվակիր]:

(*Ստացել է* Քաղ. վարչ. 1917 թ. մարտի 2-ին):

Իմ թիվ 169 հեռագրի՝ շարունակությունը:

Ես ընդունեցի այն երեք հայերին, որոնց մասին հայտնվում էր Դեսպարտամենտին հղված թիվ 66 նամակում²: Ես նրանց հետ խոսեցի այն ոգով, ինչպես այդ մասին նախօրոք տեղեկացրել էի Ձերո՞ գերագանցությամբ:

Նրանք խոստացան, ինչպես ես այդ նրանցից պահանջում էի, իրենց պահել այնպես, որ խուսափեն ամերիկյան օրենքները որևէ ձևով ոտնահարելուց, որը կարող է դառնալ, ի վնաս մեզ, պացիֆիստների, գերմանա-ամերիկացիների քննարկման նյութ և սահմանափակվել այն հայերի մեկնումը կազմակերպելու հարցով, որոնք ի վիճակի են անձամբ վճարելու իրենց ճանապարհածախսը և մեկնաբանելու իրենց մեկնումն ընտանեկան հանգամանքներով կամ գործերով:

Եթե պատերազմ բռնկվի, հարցի էությունը կփոխվի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 128).

**Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Դեֆրանսը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Հ. թիվ 210:

Կահիրե, 14-ը մարտի 1917 թ., ժ. 16.25-ին:

(*Ստացվել է* ժ. 17.30-ին):

Ես պատասխանում եմ հունվարի 10-ի ձեր թիվ 18 ճեպագրին³:

Հրամանատար Ռոմիոն մարտի 1-ին խնդրել էր Ռազմական նախարարից, որ Արևելյան լեզեոնի զինվորների ամենօրյա աշխատավարձը 2 ֆրանկից բարձրացվի 2 ֆրանկ 50 ցենտի:

Ես ինձ թույլ եմ տալիս սատարել այդ առաջարկությանը, որը Ռազմական նախարարին ներկայացնելու համար, ես ձեզ երախտապարտ կլինեմ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 151).

1 Տե՛ս վերը թիվ 333 փաստաթուղթը:

2 Փետրվարի 2-ի. տե՛ս վերը թիվ 329 փաստաթուղթը:

3 Արտատպված չէ:

Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան՝ պ. Լեոպոլդ Ֆավրին

Ն՛:

[Առանց վայրի], 15-ը մարտի 1917 թ.:

... Հաշվի առնելով այն, որ մենք երբևէ չենք խորհել անկախություն պահանջելու մասին, որն անհրազոթծելի ենք համարում այն էթնիկական պայմաններում, որոնցում գտնվում է Թուրքահայաստանը, մենք նախապատվությունը, ես դա կրկնում եմ, միշտ այդ լուծմանը կտանք: Բայց սկսած այն պահից, ինչ ես ձեզ չեմ տեսել, իրադարձություններն առաջ են ընթացել և մենք գիտենք, որ դրանից ի վեր, ողջ Ասիական Թուրքիայի հարցը դաշնակիցների միջև համաձայնության առարկա է դարձել: Այդ համաձայնությունը, թեպետ մենք անտեղյակ ենք դրա բոլոր պայմաններին, այդուհանդերձ, հայտնի է հանրությանն ընդհանուր գծերով: Հայտնի է, օրինակ, որ բաժանման դեպքում, Ռուսաստանին խոստացվել են Կոստանդնուպոլիսը և Էրզրումի, Բիթլիսի ու Վանի սահմանամերձ վիլայեթները, որ Իտալիային բաժին կհասնեն Ադալիան և Ջմյունուխան (Ադրիանի վիլայեթը), իր հերթին Անգլիան, կստանա Միջագետքը՝ Արաբիայում ազդեցության գոտի ունենալու հետ մեկտեղ, Ֆրանսիան՝ Միրիան և Կիլիկիան, ինչպես նաև հայկական վիլայեթների մի մասը: Հանրությանը հայտնի չեն ճշգրիտ սահմանները, բայց հիմքեր կան կարծելու, որ այդ սահմանները կձգվեն մինչ Սվազը և Դիարբեքիլը ներառյալ: «Նյուս օֆ ուորլդ» թերթին վերջերս տված հարցազրույցում պ. Միլյուկովն այս առթիվ թափանցում է նույնիսկ որոշ ճշգրտումների մեջ:

Ես երջանիկ եմ, քանզի ի վիճակի եմ, յուրև խորին գաղտնիք, ձեզ հայտնելու, որ այդ համաձայնության պայմանները, որոնք մեզ հետաքրքրում են, ինձ են հաղորդվել և որ մեզ որոշակիորեն խոստացել են, որ եթե այդ լուծումը հաշտության վեհաժողովում գերակշռող դիրք ձեռք բերի, ապա Ֆրանսիան մեզ կտրամադրի լայնածավալ ինքնավարություն, և որ այդ ինքնավար Հայաստանը կտարածվի Միջերկրական ծովից՝ Մերսին և Ալեքսանդրետ նավահանգիստներով հանդերձ, մինչ այն նոր սահմանները, որոնք ճշգրտվել են Ռուսաստանի համար: Դուք կնկատեք, որ վերջին տարվա իմ ծանուցագրում ես չէի խոսում Ալեքսանդրետի մասին, բայց դրանից հետո հույս ունեցա, որ մեր ցանկությունը կբավարարվի, և որ այս նավահանգիստը Հայաստանին կթողնվի:

Բայց հանրությունն այս ամենին անտեղյակ է, և ահա թե ինչո՞ւ այն բանախոսները, որոնք կբարեհաճեն մեզ ցուցաբերել իրենց օգնությունը և պաշտպանել մեր գործը, այդ լայն և լիբերալ ինքնավարությունը պետք է մեզ համար պահանջեն այնպիսի ձևով, կարծեք այն մեզ խոստացված չի եղել: Նրանք կարող են հօգուտ իրենց դրույթի առաջադրել բոլոր կովանները, բայց մշտապես առաջին պլան մղել նախ՝ այն լուծումը, որը վերաբերում է միասնական, չեզոք, տերությունների կողմից կոլեկտիվ ջանքերով հովանավորվող Հայաստանին, որի մասին ես վերջը նշել եմ:

Ի դեմս երկրորդ լուծման, նպատակահարմար կլինի, գալիք ինքնավար Հայաստանի համար պահանջել հնարավորության սահմաններում լայնածավալ տարածք, որը ձգվի ոչ միայն ծովափի երկարությամբ՝ սկսած Ալեքսանդրետից մինչ Անամուրի հովանդան, այլև

1 Թվում է, թե հափշտակվել է փոստային վերահսկողության կողմից Բուրգում, 1917 թ. մարտի 22-ին. միայն այս բաղվածքն է ուղարկվել 2-րդ բյուրոյի (R.G. ենթաբաժին) ղեկավարին:

լայնությամբ՝ դեպի արևելք, այնպես, որ ընդգրկի հայկական տարածքների ամենամեծ մասը, որովհետև մենք խիստ շահագրգռված ենք, որ Ֆրանսիայի բաժինը, որտեղ մեր ժողովուրդը կկարողանա վերածնվել լիբերալ վարչակարգի ներքո, լինի այնքան լայնարձակ, որքան այդ հնարավոր կլինի ձեռք բերել: Մեզ վստահություն չեն ներշնչում Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների ճակատագրերը, որոնք Ռուսաստանը կրոնագրավի: Բացի այն, որ մինչ այժմ ես որևէ խոստումներ չեմ ստացել, ձեզ հայտնի են նաև ռուսական գաղութաբնակեցման ծրագրերը, որոնց մասին թերթերը, այդ թվում «Րեչը», խոսել են և շատ հավանական է, որ եթե իշխանության գլուխ կանգնած ծայրահեղ պահպանողական կուսակցությունը հրավեր ստանա մասնակցելու հաշտության ստորագրմանը, ապա մեզ բացահայտ ու անսքող բռնագրավում կսպառնա: Սա ամենևին չի նշանակում, թե մենք հրաժարվում ենք այս վիլայեթների համար Ռուսաստանի հովանու ներքո, ինքնակառավարման իրավունքով, հատուկ վարչակարգ ունենալու պահանջից: Սակայն մենք գիտենք, որ եթե նույնիսկ այն ձեռք բերենք, ապա այդ վարչակարգը երբեք չի ունենա այնպիսի կշիռ, որը մենք հույս ենք տաժում ստանալու Ֆրանսիայից: Ռուսաստանն, իրոք ուր, կցանկանա, անկասկած, գաղութաբնակեցնել, ինչպես նա այդ մասին արդեն հայտարարել է և կունենա այդպես վարվելու բոլոր հնարավորությունները, որովհետև սահմանակից է և ունի բնակչության ավելցուկ, որի տեղահանությանը քաջալերելու հարցում շահագրգռված կլինի: Սկզբնական շրջանում այդ հավանաբար դյուրին ձեռնարկում չի լինի, բայց այն կարող է նշանակալից հաջողությունների հասնել ի վնաս հայերի, որովհետև ռուսական գաղութաբնակներն անխուսափելիորեն կսիրաշահվեն ի վնաս տեղաբնակների: Իրավիճակը բոլորովին այլ է Ֆրանսիայի հարցում, որն իր նոր պրոտեկտորատից շատ հեռու է գտնվելու և որը կջանա օգուտ քաղել միայն այն դիրքից և գործունեությունից, որը կծավալի նախ՝ իր լեզվի և մշակույթի տարածմամբ կրթական և դաստիարակչական բնագավառներում, իսկ այնուհետև՝ տնտեսական, արդյունաբերական ու առևտրական ոլորտներում՝ իր կապիտալների օգտագործմամբ, իր գործունեության համար ի հայտ եկած նոր ասպարեզում: Նա մեծ շահագրգռվածություն կունենա նպաստելու հայկական տարրի զարգացմանը և բարգավաճմանը, որն անհրաժեշտ է Արևելքում՝ այդ երկակի գործունեության համար:

.....
 (A.M.G., 7 N 1649).

341

Փարիզի Հայ ուսանողների միության նախագահ պ. Գուրգեն Թահնազյանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին

Ն:

Փարիզ, 16-ը մարտի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ ձեզ ուղարկել սրան կից իմ բարեկամ կամավորներից մեկի նամակը¹, որը ցանկանում է կցվել Սիրիայի ափերի մոտ գործելու պատրաստվող Արևելյան լեգեոնին:

Ես համոզված եմ, որ Ձերդ գերազանցությունը Ռազմական նախարարին անհրաժեշտ

¹ Արտատպված չէ:

քայլերով կոյնի իրականացնելու համար հայ զինվորի փափագը, որը ցանկանում է կռվել մեր ժողովրդի ժառանգական բշնամու դեմ: Հավանաբար, անիմաստ չէ ասել, որ հայցվորը մաքեմատիկայի գծով ուսանող է եղել Սորբոնում, մասնակցել է պատերազմին ֆրանսիական ռազմաճակատում և հարձակման ժամանակ Շամպայնում ստացած վերքերի հետևանքով ընկրկել է:

Ես օգտագործում եմ առիքը ձեզ տեղյակ պահելու համար այն ջանքերին, որոնք այս պահին ես՝ իբրև Փարիզի կամավորական ծառայության նախկին կազմակերպիչ և վիրավորվելուց հետո զինվորական ծառայությունից ազատ արձակված, գործադրում եմ հայ կամավորների միություն կազմակերպելու համար: Այս պահին մենք փոքրաթիվ ենք, բայց հույս ենք տածում, որ միությունը լավ ընդունելության կարժանանա հայկական բոլոր շրջաններում: Ծրագիրն արդեն մշակված է: Տպագրությունից հետո մեկ օրինակը մենք ձեզ կուղարկենք:

Կանխավ շնորհակալություններիս հետ մեկտեղ, կամեցեք ընդունել, գերազանցություն, հարգալից զգացումներիս հավաստիքը:

Հ. Գ. - Հենց այս արևին ես ստանում եմ Նշան Կահվեջյան անունով մեկ այլ ընկերոջ նամակը, որը կամավոր է Գերիլիում (Հարավային Օրանեում) գտնվող 4-րդ գումարտակի 2-րդ արտասահմանյանում և որը դիմում է միևնույն խնդրանքով, ինչ պ. Սարաֆյանը:

Ես հարգալից ձևով հրավիրում եմ Ձերո՞ գերազանցության ուշադրությունը նրա պարագայի վրա, որը նույնքան հետաքրքրաշարժ է, որքան և մյուսը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 152-152 v).

342

ԱԳԹ-ի բյուրոյի I ենթաբաժնի ծանուցագիրը՝ Կովկասում տիրող կացության վերաբերյալ 1916 թ. դեկտեմբերի 30-ին

Փարիզ, 16-ը մարտի 1917 թ.:

Ռուսական ուժերը Կովկասում կազմված են 2 խմբավորումներից:

Ա/ Հայաստանի խումբ (գեներալ Յուդենիչ), որի ՇԿ-ն Էրզրումում է, ձգվում է Սև ծովից մինչ Ռուսիա լիճը և ընդգրկում՝ 14 հ {տեղակային} դ {իվիզիա} և 2.5 հ {եծելագորային} դ {իվիզիա}:

Բ/ Պարսկաստանի խումբ (գեներալ Բարսբով): 3 հ {եծելագորային} դ {իվիզիա} - 15 գումար {տակ}: Բոլորը գտնվում են մեծ դուքս Նիկոլայի հրամանատարության ներքո (ՇԿ Թիֆլիս):

Հայաստանի խումբ. - Արևմտյան ռազմաճակատում այն տարածությունը, որն ընկած է ռուսական գորաշարքերի և քուրքական գորաշարքերի միջև՝ կազմում է 1-ից 3 կիլոմետր, այնժամ, երբ հարավ-արևմտյան ռազմաճակատում այն շատ ավելի մեծ է (հասնում է մինչ 12 կիլոմետրի): Այս վերջին ռազմաճակատի որոշ հատվածներ պահպանվում են միայն վերահսկող թույլ տարրերի միջոցով (օրինակ, Երզնկայի հարսվում գտնվող զանգվածը):

Հեծելագորի երկրորդ կորպուսը (Չերնոգորով) Վան և Ռուսիա լճերի միջև, ապահովում է կապը Պարսկաստանի ստորաբաժանման հետ: Բացառությամբ Վանա լճի շրջանի, որը պահպանվում է ավելի հուսալի ձևով, միայն գլխավոր հարորդակցության ուղիներն են պահպանվում: Ռուսներն իրենց տիրապետության ներքո ունեն երեք հովիտներ, որոնց հա-

ջորդում են Մոսուլ տանող ճանապարհները: Բարձրության պատճառով լուրջ գործողություններն այս տեղանքում հնարավոր են միայն ամռանը:

(A.M.G., 16 N 3059).

343

**Ռազմական նախարարը՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Արիստիդ Բրիանին**

Ճ. թիվ 2156-9/11: Գաղտնի:

Փարիզ, 17-ը մարտի 1917 թ.:

(Ստացել է պետական փոխքարտուղարությունը
մարտի 18-ին):

Նյու Յորքից պարուն Գաբրիել Սիմբադի, 1917 թ. փետրվարի 9-ի թվակիլը, Ամերիկայում հայկական քարոզչությանը վերաբերող նամակի վերլուծական թարգմանությունը, որը հղված է Փարիզում գտնվող Մ. Չերազին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 156).

ՀԱՎԵԼՎԱԾ

Գոկտոր Գաբրիել Սիմբադը՝ Մ. Չերազին

Ն:

Պատճենը:

9-ը փետրվարի 1917 թ.:

Հայկական մի պատվիրակություն գալու է Ամերիկա՝ ֆրանսիական կառավարության հրամանատարության ներքո կամավորների կորպուս կազմակերպելու նպատակով, որը պետք է մասնակցի առաջիկա գործողություններին Կիլիկիայում (Հարավային Հայաստանում՝ Միջերկրականի ափին):

Ես արդեն հայտնել եմ իմ կարծիքն այդ առթիվ Նուբար փաշային.

1/ Դաշնակիցները հաստատակամորեն ասում են և նույնիսկ իրենց փաստաթղթերում առաջարկում ազատագրել հայերին բուրբական լծից:

2/ Մենք շատ արյուն ենք հեղել, մենք շատ ենք բուլացել և հարկ է ձեռնպահ մնալ անիմաստ զոհաբերություններից:

3/ Մենք վտանգի կենթարկենք ոչ միայն մի քանի հարյուր կամ նույնիսկ 4-ից 5 հազար կամավորների, այլև Կոստանդնուպոլսում և Ջնյուռնիայում բնակվող 150000 մարդկանց՝ երիտրոյքերին առիթ ընձեռելով մեզ կտորելու: Եթե Հունաստանը ցանկություն չի ունենք միանալ դաշնակիցներին, ապա այդ արվել է Թուրքիայի հույներին խնայելու համար:

4/ Եթե դաշնակիցները մեզ ասում են, որ մեզ համար անհրաժեշտ է դիմել այս նոր խիզախմանը, և որ այդ պայմանով մենք իրավունք կունենանք անկախություն պահանջելու

Ռուսաստանից՝ Ֆրանսիայի և Անգլիայի կողմից իրականացվող ձևական բնույթ կրող պարզունակ վերահսկողությամբ, դե լավ, փորձենք:

5/ Միայն թե, ես չեմ կարծում, որ դաշնակիցները մեզինց համանման ինչ-որ բան են պահանջում: Իմ կարծիքով այդ գաղափարը պատկանում է որոշ հեղափոխականների, որոնք դեռևս ցանկություն ունեն սուսերները ձեռքներին եռանդ դրսևորելու, չնայած մահվամբ պասակված հին և նոր այդչափ փորձություններին: Նրանք իրենց գաղափարը ներկայացրել են Նուբար փաշայի դատին, որը, հավանաբար, խորհրդակցել է դաշնակից կառավարությունների հետ. վերջիններս չեն մերժել՝ քաղաքավարությունից դրդված:

(Հասցեատերը, որը խիստ ֆրանկամետ է, Փարիզում ֆրանսերեն տպագրվող «Արմենի» թերթի նախկին տնօրենն է, 1878 թ. Բեռլինի վեհաժողովում եղել է հայկական պատվիրակության քարտուղարը):

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 157-157 v).

344

Ռազմական նախարար պ. Պենլենն՝ Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսին

Ճ. թիվ 2431-9/11:

Փարիզ, 29-ը մարտի 1917 թ.:

Ի պատասխան մարտի 19-ի ձեր թիվ 4420 նամակի¹, ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել. որ ներկայումս Արևմտյան Սուրբեյի՝ քաղուհուն պատկանող քաղաքորական 8-րդ գնդում գտնվող հայազգի Գյուլբենկյանին կարելի է թույլատրել կամավոր հիմունքներով զինվորագրման շուրջ պայմանավորվածություն կայացնել Արևելյան լեզեոնում ծառայելու համար այն պահից, երբ բրիտանական յշխանությունները նրան ազատ արձակեն իր պարտականությունների կատարումից:

Նախատեսվել է, որ արևելյան կամավորներին կարելի է հնարավորություն ընձեռել ստանալու ենթասպաների և մույնիսկ օժանդակ սպաների աստիճաններ՝ մինչ կապիտանը ներառյալ: Գյուլբենկյանը կկարողանա, այսպիսով, ստանալ այն աստիճանը, որը համապատասխանում է իր ունակություններին՝ Արևելյան լեզեոնի հրամանատարի կողմից դրանք բնության առնելուց հետո:

Եթե շահագրգիռ անձր հակված է, այս պայմաններով, ծառայել Արևելյան լեզեոնում, դուք պետք է բարեհաճեք նրան ուղարկել Հավրի կայագորի բյուրո, որպեսզի այնտեղ հատուկ պայմանավորվածություն կայացնի Արևելյան լեզեոնում կամավոր հիմունքներով զինվորագրվելու համար այն պայմաններով, որոնք ես ձեզ համար ճշգրտել եմ ընթացիկ մարտի 3-ին, թիվ 1717-9/11-ում, հայազգի Սիմոնյանի առիթով՝ Լիվերպուլի քաղաքորական գնդից:

(A.M.G., 7 N 1284).

¹ Արտատպված չէ:

Դեպարտամենտի ծանուցագիրը¹

Փարիզ, 30-ը մարտի 1917 թ.:

Սոցիալիստ պ. Լինդիագենը մարտի 23-ին քույրավորությամբ է խնդրել Ստոկհոլմում Արտաքին գործերի նախարարին² դիմելու հետևյալ հարցով.

«Կարելի է արդյոք հո՞ւյս տածել, որ կառավարությունը՝ միայնակ կամ չեզոք այլ կառավարությունների հետ համատեղ, կմիջնորդի նրանց, ում որ հարկն է, որպեսզի հայերն օգտվեն իրենց կյանքը, ունեցվածքը և ազգությունը պաշտպանելու իրավունքից»:

Այս ամսի 29-ին, պ. Լինդիագենի նախագահությամբ տեղի ունեցավ մի հանրահավաք ի նպաստ հայերի: Պ. Բրանթինգն այնտեղ ելույթ ունեցավ երկու հազարի հասնող մարդկանց և Անտանտի բոլոր նախարարների առջև: Ասպատակված բոլոր երկրներում գերմանական վայրագությունները և ցամաքում ու ծովում պատերազմ վարելու նրանց բարբարոսական միջոցներն անարգանքի սյունին գամելուց հետո, նա մերկացրեց հայ ժողովրդի զանգվածային կոտորածը, հանդիմանելով շվեդական կառավարությանն այս բռնություններից և ոչ մեկի առիթով բողոքի ձայն բարձրացնելուց ձեռնպահ մնալու համար: Այնուհետև՝ տ {իկի} ն Մարիկա Սքինդսթրոմը հրապարակային ելույթ ունեցավ Հայաստանի մասին:

Միասնաբար հավանություն տրվեց մի որոշման, որը մարդկության անունից բողոքում էր քույրերի կողմից հայերի նկատմամբ հետևողականորեն գործադրվող ճնշումների դեմ և կոչում շվեդական կառավարությանը՝ կամ միայնակ, կամ չեզոք այլ կառավարությունների հետ համատեղ միջամտելու հանուն հայերի կյանքի, ունեցվածքի և հավատալիքների պաշտպանության իրավունքի ճանաչման:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 888, ff. 184-184 v).

Հոռոմ Ֆրանսիայի դեսպան պ. Կամիլ Բարրերը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Ճ. թիվ 196:

Հոռոմ, 1-ը ապրիլի 1917 թ.:
(*Ստացել են* Կաբ. ապրիլի 12-ին,
Քաղ. վարչ. ապրիլի 13-ին):

Վերջին մարտի 31-ի թվակիր իմ թիվ 195 գեկուցագիրը¹ Դեպարտամենտին հաշվե-

¹ Նախատեսված է Պողոս Նուբար փառալուստի համար:

² Պ. Վալենթերգը:

³ Մենք չկարողացանք, չնայած մեր որոնումներին, գտնել այդ գեկուցագիրը, որն ինչպես բվում է, հետաքրքրության է արժանի:

տվորքուն է ներկայացրել այն գրույցի մասին, որն իմ աշխատակիցներից մեկն ունեցել է Բաղդադի կարմելիտների* առաջնորդի հետ և վերաբերել է Թուրքիայի նախապատրաստությանը պատերազմին՝ սկսած 1914 թ. հուլիսի վերջերից: Այդ նույն գրույցի ընթացքում պատվելի} հայր} Լուի դը Ժեզյուն առիթ է ունեցել հետաքրքիր ակնարկներ անել հայերի կոտորածների վերաբերյալ:

Նա ասել է, որ Հռոմ կատարած իր այցելության ընթացքում, անձամբ ինքը և իր արքեպիսկոպոսը՝ Նոբրին սրբազնություն} Դյուրը, բազմաթիվ անգամներ այցելել են Պրուպագանդա**, որտեղ նրանց ցույց են տվել Կոստանդնուպոլսում գտնվող առաքելական պատվիրակ Նոբրին սրբազնություն} Դուլչիի ամենամանրագին զեկուցագրերը, որոնք ամենահանգամանակից տեղեկություններ են հաղորդում Հայաստանում տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ: Պրուպագանդան, ավելացրել է նա, կատարելապես իրազեկ է այս ամենին, ինչպես նաև այս կոտորածում զերմանացիների ունեցած պատասխանատվությանն առնչվող հարցերին: Իմ աշխատակիցն այնժամ հարցրել է պատվելի} հայր} Լուի դը Ժեզյունին, թե ինչո՞ւ Պրուպագանդան ընթացք չի տալիս այդ փաստաթղթերին, ինչո՞ւ դրանց միջոցով օգուտ չի բերում հանրությանը: Վերջինս պատասխանել է, որ Վատիկանն այս պահին որևէ բան տպագրելու ցանկություն չունի կամ այն պատճառով, որ նա այս տեղեկությունները դեռևս չի պիտու միջոցառել, կամ (ինչն ավելի հավանական է) այն, որ ցանկանում է պատերազմի պատճառով ձեռնպահ մնալ, որքան հնարավոր է երկար, յուրաքանչյուր բացահայտ միջամտությունից:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 1-1 v).

347

Հաշվետվություն պ. Վիենտի և Պողոս Նուբար փաշայի միջև Քեդ՝ Օրսեում կայացած գրույցի մասին

Ծ՛:

Փարիզ, 7-ը ապրիլի 1917 թ.:

Ինձ կատարած այցելության ընթացքում, Պողոս փաշան եկավ ինձ հետ զլուցելու նաև կամավորական հիմունքներով ֆրանսիական բանակում արդեն զինձառայության ընդունված այն հայերի մասին, որոնք ցանկություն կունենան ընդգրկվելու Արևելյան լեգեոնում:

Թվում է, թե որոշ թվով զինվորագրվածների արդեն նախատեսել են Կիպրոս ուղարկել և այդ ժամանակից ի վեր, Պողոս փաշան ստանում է բազմաթիվ հայ զինվորագրվածների՝ իրեն հղած բազում խնդրանքներ, որոնք ևս կբարեհաճեն կցվել Արևելյան լեգեոնին:

Ես միայն կարողացա վերստին տեղեկացնել Պողոս փաշային այն մասին, ինչը նրան նախօրոք հայտնել էի, այն է՝ ...² նախարարը մինչ այժմ գտել է, որ դեռևս չի հասել ներկա-

* Խոսքը վերաբերում է 12-րդ դարում Պաղեստինում հիմնադրված Կարմել միաբանության ամրամների, որի կանոնադրությունը հաստատվել է 1245 թ.: Միաբանությունը հետագայում դարձել է կաթոլիկ եկեղեցու կարևոր սյուններից մեկը: – Ծ. թ.:

** Միաբանություն, որը հիմնադրել է Հռոմի պապ Գրեգուս XV-ը (1554-1623) 1622 թ.՝ անհավատ երկրներում հավատի տարածման նպատակով: – Ծ. թ.:

1 Նախատեսված է պ. Գոսի համար:

2 Սի բառ բաց է բողմված:

յունս մեր դրոշմերի ներքո իբրև կամավոր զինվորագրված բոլոր հայերի և սիրիացիների խմբակային կցումն Արևելյան լեզեոնին նախատեսելու պահը:

Մի բանի օր առաջ ես առիթ ունեցա նույն հայտարարությունն անելու պատերազմական խառնով պարզևատրված մի երիտասարդ մարտնչիտի, որն ինձ դիմեց համանման հարցով: Այս վերջինին ես խորհուրդ տվեցի օգտագործել արձակուրդի շրջանում Փարիզ կատարած իր այցելությունը՝ Ռազմական նախարարությանը (Աֆրիկայի և Արևելքի ենթաբաժին) նամակ գրելու համար: Հիրավի, քվում է, որ մեզ համար դժվարին կլինի հանձն առնել Ռազմական նախարարությանը փոխանցելու այն խնդրանքները (նրանց նրան երաշխավորելով հանդերձ), որոնք կարող են հանգեցնել այդ կարգին պատկանող հայ և սիրիացի բոլոր կամավոր զինվորագրվածներին միևնույն նպատակով ներկայացնելուն: Ի դեպ, ենթակայության տեսակետից Ռազմական նախարարությունը դա ճիշտ գործելած է չի համարի:

Պողոս փաշայի քայլը հավանաբար ձեզ պատեհ կթվա այն բանի համար, որ մեզ կողմի պաշտոնապես գրել Ռազմական նախարարությանը՝ հիշեցնելու համար նրան այն շահավետության մասին, որը կազմավորման ընթացքում գտնվող կորպուսի ստվարացումն է, այնպիսի աճի շնորհիվ, ինչպիսին է օրինակելի վարքագիծ ունեցող և կամավոր հիմունքներով զինվորագրված սիրիացիների և հայերի խմբակային կցումը նոր կազմավորմանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 165-166).

348

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրն Արևելյան լեզեոնի առթիվ

Ծ¹:

[7-ը ապրիլի 1917 թ.]²:

Ինձ թվում է, որ ֆրանսիական բանակում գտնվող բոլոր հայերին և սիրիացիներին խմբովին Կիպրոս ուղարկելու մասին որոշումն ունի շատ ավելի խոցելի կողմեր, քան առավելություններ: Ավելի նպատակահարմար է կարգավորել մասնավոր դեպքերը, ելնելով Ռազմական նախարարության կողմից ընդունված այն սկզբունքից, ըստ որի արևելյան այս բնակիչները հակված են դեպի Արևելյան լեզեոնը: Փորձեք իմանալ, թե ո՞վ է գնդապետ Համելինի մոտ զբաղվում այս զինվորագրումով: Տեսեք վաշտի հրամանատար սպային կամ ուրիշի և նրա հետ պայմանավորվածություն կայացրեք: Դուք նրան կհանձնեք Պողոս փաշայի, Չոպանյանի կամ սիրիացիների կողմից հանձնված պահանջագրերը և Ռազմական նախարարությունը, ելնելով նրանց արժանիքներից, թեկնածուների քանակի շուրջ որոշումներ կկայացնի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 167-167 v).

1 Նախատեսված է այ. Վիետի համար:

2 Մենք պահպանել ենք արխիվների դասակարգման ամսաթիվը:

349

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոն՝
Նյու Յորքում Ֆրանսիայի հյուպատոս պ. Լիեբերին**

Հ. քիվ 240:

Փարիզ, 10-ը ապրիլի 1917 թ., ժ. 24-ին:

Բարեհաճեք փոխանցել Հանենյանին, որը Հաիբենիացուն [sic]¹ է (Բենենթի փողոց 7, Բուստոն), Եգիպտոսի հայկական միության՝ ստորև հաղորդվող հեռագիրը. «Եգիպտոսի կամավորները կազմակերպվել են: Շտապ ուղարկեք ամերիկյան օժանդակ ուժեր»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 170).

350

**Փարիզի հայկական կոմիտեի քարտուղար պ. Արշակ Չոպանյանը՝
Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին**

Ն:

Փարիզ, 14-ը ապրիլի 1917 թ.:

(Ստացել է Քաղ. վարչ. ապրիլի 19-ին):

Դաշնակիցների կողմից Միացյալ Նահանգների պատերազմի մեջ ընդգրկվելն ամենաերջանիկ իրադարձությունն է, և հայերը, որոնց գործը կարող է միայն շահել ազատատենչ ճամբարի ուժերի մեծ բազմապատկումից, դրանից մեծապես հրճվում են: Բայց այդ իրադարձությունը կունենա սարսափելի հետևանք Միջագետք և Սիրիա տեղահանված հայերի համար: Նրանց կացությունն արդեն ողբալի էր. քուրքական կառավարությունն անում էր ամեն ինչ սովի և հիվանդությունների միջոցով նրանց կործանելու համար: Միացյալ Նահանգների հյուպատոսներն այս աղետյալ դժբախտների միակ նեցուկներն ու հովանավորներն էին. նրանք հաճախ էին միջամտում նրանց օգտին: Նրանք նրանց էին բաժանում, որքան այդ հնարավոր էր քուրքական կառավարության կողմից հարուցվող խռչնդոտների պայմաններում, այն դրամական օգնությունները, որոնք Ամերիկայի հումանիտները և ազատ երկրների հայերն ուղարկում էին նրանց գոյության պահպանության համար: Քանի որ Թուրքիան գտնվում է Ամերիկայի հետ իր հարսբերությունների խզման եզրին, նրա հյուպատոսները պատրաստվում են մեկնել և տեղահանվածները կմնան առանց որևէ օգնության: Արդյոք ֆրանսիական կառավարությունը չի՞ ցանկանա բարի գտնվել՝ չեզոք երկրների կառավարություններին դիմել՝ մարդկության անունից խնդրելու համար նրանցից ստանձնելու այսուհետև՝ Թուրքիայի հայության և, մասնավորապես, նրանց, ովքեր տեղահանվել են Միջագետք, հովանավորի դերը: Չեզոք երկրների կառավարություններն այդ հարցում, անշուշտ, չեն մերժի, եթե ֆրանսիան, որի հուժկու ձայնը միշտ հարգանքով է ունկնդրվել, նրանց խնդրեր եռանդուն ձևով կենսագործել այդ

¹ Իմա՝ «Հայրենիք»:

գուտ մարդկային, գրասիրական առաջադրանքը:

Իմ հայրենակիցները ձեզ խիստ երախտապարտ կլինեն, պ. նախագահ, եթե դուք բարեհաճեք, ի շարս ձեր կարևոր և բազմապիսի գործերի, ուշադրության մեկ ակնքարք հատկացնել այս դառնակակիծ հարցին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 2-3 v).

351

Ասիա-Օվկիանիայի փոխվարչության ծանուցագիրը¹

Փարիզ, 21-ը ապրիլի 1917 թ.:

(*Sunugել է* պետական փոխքարտուղարությունն
ապրիլի 21-ին):

Չոսլանյանի նամակն² ուղարկել Վաշինգտոն, հարցնել պ. Ժյուսսերանին, թե ինչպի՞նչին են այն հրահանգները, որոնք Միացյալ Նահանգները, Թուրքիայի հետ խզման պարագայում, նկատի ունեն որդեգրել ի նպաստ հայերի և նրանց վստահեցնել, որ մենք հաճույքով կգնահատենք այն բոլոր քայլերը, որոնք նրանք կձեռնարկեն չեզոք տերությունների նկատմամբ՝ նրանց վստահելու համար հայերի այն բեկորների պաշտպանությունը, որոնք մնում են Թուրքիայում:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 4).

352

Ռազմական նախարար պ. Պենլենն՝ Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսին

Ճ. թիվ 3195-9/11:

Փարիզ, 23-ը ապրիլի 1917 թ.:

Ապրիլի 14-ի թվակիր թիվ 4737 նամակով դուք ինձ տեղեկացրել եք, որ հայազգի Գյուլբենկյանը, որը վերջին մարտի 29-ի իմ թիվ 2431-9/11 ճեպագրի՝ կենտրոնում է, անգլիական քաղաքացիություն է ձեռք բերել և ցանկանում է այն պահպանել:

Դուք, այդուհանդերձ, ինձ հարցրել եք, թե արդյոք այդ մարդը կալո՞ղ է իբրև կամավոր ընդգրկվել Արևելյան լեգեոնում:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ քանզի Արևելյան լեգեոնը ստեղծվել է ընդունելու համար ֆրանսիացի սպաների և ենթասպաների հրամանատարության ներքո գտնվող՝ բացառապես օսմանյան քաղաքացիություն ունեցող կամավորների, ապա չեմ կարծում, որ այսօր բրիտանական քաղաքացիություն ունեցող ոմն Գյուլբենկյանի կարող եմ թույլատրել, նույնիսկ ժամանակավորապես, կամավոր հիմունքներով զինծառայության ընդունվելու շուրջ պայմանավորվածություն կայացնել, իբրև այդ լեգեոնի անդամ:

1 Նախատեսված է պ. Վիետի համար:

2 Տես վերը թիվ 350 փաստաթուղթը:

3 Վերև արտատպված է թիվ 344 փաստաթղթում:

(A.M.G., 7 N 1284).

353

**Ռ-ազմական նախարար պ. Պենկենն՝ Խորհրդի նախագահ,
Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին**

Ն:

Փարիզ, 24-ը ապրիլի 1917 թ.*:
(Ստացել է Քաղ. վարչ. ապրիլի 27-ին):

Ես պատիվ ունեմ միանգամայն գաղտնաբար ձեր բարեհաճ ուշադրությունը հրավիրել այն միջնորդության վրա, որը ձեզ է հղել հայ բանաստեղծ Չոպանյանը՝ ի նպաստ Միջազնոք տեղահանված Թուրքիայի իր հայրենակիցների, որոնք, Միացյալ Նահանգների կողմից պատերազմի հայտարարությամբ հանդես գալու պահից ի վեր, զուրկ են յուրաքանչյուր հովանավորությունից՝ իրենց նկատմամբ կիրառվող հավաքագրմանը ի տես:

Պ. Չոպանյանը, որին ես անձամբ եմ ճանաչում, հուշում է, որ եթե ֆրանսիական կառավարության կողմից մի կոչ հղվի չեզոք երկրներին՝ խնդրելու համար նրանցից հանձնարարել Թուրքիայում գտնվող իրենց ներկայացուցիչներին սատարել դժբախտ հայ տեղահանվածներին և հավաքված գումարները նրանց բաժանել, ապա՝ այն չի հապաղի բարեհաճ ընդունելության արժանանալ:

Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք քննարկել այդ առաջարկությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 5).

354

**Մայրո Գ. Գ. Սիմոնդսը՝ Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ,
գեներալ դը Լա Պանուսին**

Λ/2058. M.I.3.a.

Ուոր Օֆիս, 6-ը մայիսի 1917 թ.:

Կապիտան Ա. Խ. Թորգոմը, որը ռուսական բանակում կամավոր է և Փոքր Ասիայում թուրքերի դեմ գործող բրիտանական ուժերի հետ համատեղ ծառայելու համար՝ Ֆորին Օֆիսի քննարկմանն է ներկայացրել հայկական կամավորական ուժի կազմավորման վերաբերյալ մի նախագիծ (տե՛ս սըր Ջ. Բուշանանի հաղորդումը), լսել է, որ համանման զինված ջոկատ է կազմավորվել Ֆրանսիայում: Նա հարցնում է, թե արդյո՞ք դա ճիշտ է, և եթե դա այդպես է, կարող է արդյո՞ք իբրև կամավոր ընդգրկվել այդ զինված ջոկատում: Նա խոսում է ռուսերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով: Կարո՞ղ եք դուք բարյացակամորեն թույլատրել ինձ պատասխանելու նրա հարցերին:

Հ **

* Նախարարի նախնական ձեռագիր ծանուցագրությունը. «Պատասխանել, որ մենք Միացյալ Նահանգներին] հարցում ենք արել, թե նրանք չեզոքներին ինչպի՞սի քայլերով են պատրաստվում դիմել, որպեսզի նրանց մարդասիրական գործունեությունը հայերի նկատմամբ շարունակվի, և որ մենք հավանության կարծանացնենք այդ քայլերը»:

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուը՝ մայր Գ. Գ. Սիմոնդսին

Թիվ 5007:

7-ը մայիսի 1917 թ.:

Ի պատասխան մայիսի 6-ի ձեր մամակի (Λ/2058. M.I.3.a.)¹, արդյո՞ք դուք այնքան բարյացակամ կլինեք, որպեսզի ինձ հնարավորություն ընձեռեք իրագել դառնալու կապիտան Թորգոմի բուն հպատակությանը:

Եթե, ինչպես այդ թվում է, մա ռուս է, նրա համար հնարավոր չի լինելու զինձառայության ընդունվել Կիպրոսում ֆրանսիական Ռազմական նախարարության կազմավորած Արևելյան լեգեոնում:

Ինչպես ես պատիվ եմ ունեցել ասելու գնդապետ Բուքլեյին, երբ մա ինձ դիմեց հայագ-գի Գյուլբենկյանին զինձառայության ընդունելու հարցով, ֆրանսիական Ռազմական նախարարն ինձ տեղեկացրել է, որ «Արևելյան լեգեոնը կազմավորվել է բացառապես օսմանյան հպատակություն ունեցող զինակոչիկների համար, որոնք կունենան ֆրանսիացի սպաներից և ՄԿԶ-ից բաղկացած հրամանատարական կազմ. որևէ այլ հպատակություն ունեցող մարդիկ չեն կարող ընդունվել դրա [sic] շարքերում»:

(A.M.G., 7 N 1284).

Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուը՝ Ռազմական նախարար պ. Պենկեին

Ճ. թիվ 5037: Գաղտնի:

Լոնդոն, 9-ը մայիսի 1917 թ.:

(Ստացել է Կաթինետը մայիսի 13-ին):

Ես պատիվ ունեմ կից ձեզ ուղարկել երկու զեկուցագիր² այն հաշվետվությունների մասին, որոնք Ուոր Օֆիսին է ներկայացրել Ալեքսանդրետում Միացյալ Նահանգների նախկին հյուպատոս պ. Բրեուսերը՝ Փոքր Ասիայում տիրող իրավիճակի մասին:

Ես գիտեմ, որ Ալեքսանդրետի նախկին հյուպատոսը գրույցներ է ունեցել Բեռնում գտնվող մեր ռազմական կցորդի³ հետ, որոնց ընթացքում մա ակնհայտորեն նրան է տրամադրել այն տեղեկությունների մեծ մասը, որոնք հիշատակված են վերոհիշյալ զեկուցագրերում: Այդուհանդերձ, ես հետաքրքրական եմ համարում այս փաստաթուղթը ձեզ հղելը, որը կհամարվի այն տեղեկությունների, որոնք դուք արդեն ուղղակիորեն ստացել եք:

1 Տե՛ս նախորդ փաստաթուղթը:

2 Չեկուցագրերից մեկից մեներ արտատպում ենք միայն մի թաղվածք, որը վերաբերում է հայերին:

3 Գեներալ Մորիեն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայկական կոտորածների շուրջ պ. Բրեուսթերի՝ Ուոր Օֆիսին ներկայացված հաշվետվությանը վերաբերող գեկուցագիր

Բ[րեուսթերը] հիանալիորեն յրագել էր այս աննախադեպ կոտորածին: Նա գտնում է, որ մոտավորապես 2000000 հայեր են սպանվել, սովամահ եղել կամ մահացել տիֆից և այլ հիվանդություններից: Շուրջ 250000-ը խոնված էին Հալեպի մոտակայքում գտնվող Կատմայում: Մեծամասնությունը հետազայում կամ սպանվել է, կամ մահացել: Եփրատի ափին գտնվող Դերսոսայում [sic] շուրջ 90000-ը կոտորվել են, որոնց մարմինները նետվել են Եփրատ գետը: Չերքեզները և քրդերը երեխաներին ցուցադրում էին և մասնատում:

Հալեպից Ալեքսանդրետ կատարած ճանապարհորդության ընթացքում, Բ[րեուսթերը] մի օր հաշվել է ճանապարհի եզրին ընկած շուրջ 300 դիակ, որոնք դրանից մի փոքր առաջ էին մահացել և որոնց հոշոտում էին գառնանզոդները և շները: Կատմայի մոտակայքում ահռելի փոսեր էին փորվում, որոնցում անփութորեն քաղվում էին մարմինները:

Այս սարսափելի կոտորածի համար ուղղակիորեն պատասխանատու է Թալեաթ բեյը: (A.M.G., 7 N 1254).

357

Պ. Միհրան Գամադյանը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ՛:

Ավաա՛:

Գործերը հիանալի են: Կարող ենք ուղարկել հինգ հազարի հասնող փաթեթներ¹, որոնցից հազարն արդեն պատրաստ են, բայց փոխադրամիջոցները բավարար չեն: Ամերիկայի գործակալը՝ շատ պահպանողական է, նրա հետ հայտարարի գալն անհնար է: Խնդրվում է սոցիալական նստավայրում² հրատապ քայլեր ձեռնարկել, որպեսզի հինգ հարյուր կամ հազար փաթեթից բաղկացած կապոցներում ամփոփված ապրանքն ուղարկելու համար համաձայնություն ստանանք՝ անվտանգության ամենաբարձր երաշխիքներով հանդերձ: Սպասում ենք պատասխանի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 198).

1 Պատճենը Պողոս Նուբար փաշան 1917 թ. մայիսի 14-ին փոխանցել է Արտաքին գործերի նախարարությանը:

2 Սենը պահպանել ենք արխիվների դասակարգման ամսաթիվը:

3 Խոսքը վերաբերում է Արևելյան լեզեռնի համար նախատեսված հայ կամավորներին:

4 Հավանաբար՝ պ. Օյունբերանը:

5 Խոսքն, անկասկած, վերաբերում է Քե-դ՝Օրսեին:

**Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոն՝
Ռազմական նախարար պ. Պենկեին**

Ճ. թիվ 1804:

Փարիզ, 15-ը մայիսի 1917 թ.:

Ապրիլի 24-ի քվակիր ձեր նամակով՝ դուք բարեհաճել եք իմ ուշադրությունը հրավիրել այն միջնորդության² վրա, որով վերջերս ինձ է դիմել պ. Չուպանյանն ի նպատակ Միջազգետր տեղահանված Թուրքիայում բնակվող իր հայրենակիցների, որոնք, այն պահից ի վեր, ինչ Միացյալ Նահանգները հանդես են եկել պատերազմի հայտարարությամբ, կարող են զրկված լինել յուրաքանչյուր հովանավորությունից՝ իրենց նկատմամբ կիրառվող հավաքականքներին ի տես:

Ես պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել, որ հոգ եմ տարել պ. Չուպանյանի նամակը՝ Վաշինգտոնում գտնվող Հանրապետության դեսպանին փոխանցելու համար, որի նվիրվածությունն իր դժբախտ հայրենակիցների գործին, իմ Դեպարտամենտը բարձր է գնահատել: Ես կոչել եմ պ. Ժյուստերանին խնդրել Միացյալ Նահանգների կառավարությանը մեզ տեղյակ պահել այն քայլերին (մեր հնարավորությունների սահմաններում դրանց միանալու մտադրությամբ), որոնցով նա մտադիր է դիմել չեզոքներին, որպեսզի հնարավոր լինի շարունակություն տալ նրա կողմից Թուրքիայում ի նպատակ հայերի իրականացվող մարդասիրական առաքելությանը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 8-8 v).

**Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը՝
Նյու Յորքում Ֆրանսիայի հյուպատոս պ. Լիեբերին**

Հ. թիվ 348:

Փարիզ, 16-ը մայիսի 1917 թ., ժ. 18-ին:

Ես ձեզ երախտապարտ կիմեմ, եթե դուք Պոդոս Նուբար փաշայի կողմից հետևյալ հեռագիրը հանձնեք պ. Սևասիին՝ 751 Օրդ Սաուֆ Բիդլինգ, Բոստոն հասցեով.

«Շատ երջանիկ եմ տեղեկանալու համար ձեր փայտն հաջողությանը, բայց պատվիրակությունը միահամուռ ձևով խակադրվում է մեծաքանակ գորքեր ուղարկելուն, որոնց անցումը չի կարող աննկատ մնալ: Անհրաժեշտ է նրանց ուղարկել փոքրաքիվ խմբերով՝ իբրև ճանապարհորդների: Համաձայն վերջին յուրերի, վտանգն ավելի մեծ է, քան երբևէ: Խորհուրդ ենք տալիս լինել միանգամայն զուսպ և ձեռնպահ մնալ որևէ ցույցից: Այս

1 Տես վերը թիվ 353 փաստաթուղթը:

2 Վերև արտատպված է թիվ 350 փաստաթղթում:

3 Մայիսի 11-ի քվակիր այս նամակը մենք չենք արտատպում:

4 Ստորագրել է պ. դր Սարժերին:

անհրաժեշտությունը հասկացնել տվեք հենց իրենց՝ կամավորներին: Ես համամիտ եմ նախարարության հետ՝ նավ բարձրանալուն վերաբերող միջոցների հարցում:

Տեսեք Սշլիմսկիին՝ Նյու Յորքի ֆրանսիական հյուպատոսությունում, որը հրահանգներ է ստացել: Փոխանցեք լիազոր ներկայացուցիչներին»:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 200).

360

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Հ. թիվ 360:

Կահիրե, 19-ը մայիսի 1917 թ., ժ. 20.10-ին:

(*Ստացել է* Քաղ. վարչ. մայիսի 20-ին):

Եգիպտոսի հայկական միության կողմից Ամերիկա ուղարկված դոկտոր Հանեմյանը հեռագրում է Բոստոնից, որ 5000 կամավորների կարելի է հեշտությամբ զինվորագրել, որ հազարն արդեն պատրաստ են մեկնելու, բայց որ նրանց մեկնումի և տեղափոխության հարցում դժվարություններ են ծառանում: Նա խնդրում է մեր միջամտությունը: Հրամանատար Ռոմիոն և Հայկական միության նախագահը՝ սատարում են այդ խնդրանքը և ձեզ երախտապարտ կլինեն, եթե դուք ապահովեք Միացյալ Նահանգներում գտնվող մեր ներկայացուցիչների միջամտությունը:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 209).

361

Խորհրդի նախագահը, Արտաքին գործերի նախարարը² Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսին

Հ. թիվ 113:

Փարիզ, 20-ը մայիսի 1917 թ., ժ. 23-ին:

Ես պատասխանում եմ ձեր թիվ 360 հեռագրին¹:

Հրահանգներ են տրվել, որպեսզի դոկտոր Հանեմյանի զինվորագրածները, որքան հնարավոր է արագ, տեղափոխվեն:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, f. 218).

1 Դ. {ոկտո}ր Ներուզը:

2 Ստորագրել է պ. դը Մարթերին:

3 Մայիսի 19-ի. տե՛ս նախորդ փաստաթուղթը:

Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանը՝ Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոյին

Ճ. թիվ 246:

Կահիրե, 20-ը մայիսի 1917 թ.:
(Ստացել են Կոսթ. հունիսի 5-ին,
Քաղ. վարչ. հունիսի 6-ին):

Ներկայումս Կահիրեում գտնվող հրամանատար Ռոմիոն հենց նոր ինձ հղեց մի նամակ (որի պատճենը կցվում է), որտեղ համառորեն պնդում է Պոլտ-Սալոյի հայ զաղրականների ճամբարի ղեկավարությունն անհսպաղ ֆրանսիական վարչությանը վստահելու նպատակահարմարության շուրջ:

Այդ հարցն արդեն ներկայացվել է հրամանատար Ռոմիոյի՝ 1916 թ. հոկտեմբերի 28-ի թվակիր զեկուցագրում¹, որը Դեպարտամենտին է փոխանցվել վերջին նոյեմբերի 19-ի իմ թիվ 468 նամակի հավելվածում²:

Ես կարող եմ միայն հավանություն տալ Արևելյան լեգեոնի, որի լավագույն տարրը Մուսա լեռան հայերն են, ղեկավարի դիրքորոշմանը: Մենք, հետևաբար, մեր շահագրգռվածությանը միահյուսվող մի պարտականություն ունենք, այն է՝ անուշաղլուրդյան չմատնել այդ հայ կամավորների ընտանիքները և փոխարենը, նրանց հանդեպ ցուցաբերել մեր հոգատարությունը:

Ես կավելացնեմ, օգտվելով այստեղ պատեհ առիթից, որ հայերի դիրքորոշումը, որը բարեխառաբար անհարիր է սիրիացիների դիրքորոշմանը, ի գորու է ամբողջությամբ մեզ գոհացնել: Նրանք, ովքեր կամավոր հիմունքներով զինվորագրվում են Արևելյան լեգեոնին՝ համեմատաբար մեծ թիվ են կազմում և արժանանում իրենց առաջնորդների զովեստների: Նրանք, ովքեր մնում են՝ ի հայտ են բերում բարձր ոգի: Նրանց տարբեր խմբերը և խմբավորումները համախմբվել են և ինչն ավելի հրաշալի է՝ մնում են համախմբված: Եզգիպտոսում, Ամերիկայում և Հնդկաստանում նրանց երևելի դեմքերն ակտիվ քարոզչություն են մղում հանուն զինվորագրումների: Իրենց հանգանակություններով և նվիրատվություններով նրանք մեծապես նպաստում են կամավորներին և նրանց ընտանիքներին նյութապես օժանդակելու գործին: Այս ամենն արժանի է գնահատվելու և քաջալերանքի: Սակայն ակնհայտ է, որ մի հակասություն գոյություն ունի մեր դրոշի ներքո հայ կամավորների գտնվելու և անգլո-եգիպտական վարչության ենթակայության ներքո այն ճամբարը պահելու միջև, որտեղ այդ կամավորների՝ մեր նավաստիների կողմից բուրբերի ձեռքից դուրս կորզված ընտանիքներն են ապաստանել, որոնք իրենց համար խնդրում են ֆրանսիացի կառավարիչներ, իսկ իրենց երեխաների համար՝ ֆրանսիացի ուսուցիչներ:

Վերջին ամռանը, երբ խոսքը վերաբերում էր Մուսա լեռան հայերի օգտագործման հարցի կարգավորմանը, սրբ Հենրի Մակ Մահոնը, այդ ժամանակաշրջանում Գերագույն կոմիսարը, ինձ ասաց. «Այո, այդ դուք է, որ իրավունք ունեք նրանց օգտագործելու, ուրե՛նձ վերցրեք նրանց. բայց վերցրեք բոլորին՝ մարտունակ տղամարդկանց, ծերունիներին, կանանց և երեխաներին»:

¹ Արտատպված չէ: Այդ զեկուցագրի մասին տես վերը թիվ 296 փաստաթղթի ծանոթագրությունը:

² Վերն արտատպված է թիվ 294 փաստաթղթում:

Մենք շատ ավելի մեծ հոգածություն ենք դրսևորել այն անձանց վերցնելու հարցում, ովքեր կարող էին մեզ ծառայել, քան նրանց, ովքեր մեր կարիքն ունեն: Մարտունակ տղամարդիկ Կիպրոսում են, մյուսները շարունակում են մնալ Պորտ-Սալոյի ճամբարում՝ անգլո-եգիպտական վարչության ներքո:

Այրուհանդերձ, կասկածից վեր է, որ կիսանի այն օրը, երբ անգլո-եգիպտական կառավարությունը մեզնից կպահանջի վճարել այն գումարները, որոնք վատնել է մեր կողմից զինվորազրկված մարդկանց ընտանիքները տեղավորելու և նյութապես ապահովելու համար: Այսպիսով, ի վերջո, մենք պետք է վճարենք: Ինձ ավելի նպատակահարմար կթվար, որ մենք նվազագույնը դրանից օգուտ քաղեինք և այս ժողովրդի շրջանում արմատավորեինք գաղափարներ ու ֆրանսերեն լեզուն, ժողովուրդ, որն այդ է ցանկանում, որն ամեն դեպքում կոչված չէ բրիտանական վարչակարգի ներքո ապրելու համար, և որն, այրուհանդերձ, շարունակում է կառավարվել, դաստիարակվել ու վարժեցվել անգլիացիների կողմից:

Եթե Ձերդ գերազանցությունը բաժաներ այս կարծիքը և հավանության արժանացներ հրամանատար Ռոմիոյի այս առաջարկությունները, ես գտնում եմ, որ այնքան էլ դժվարին չէր լինի ստանալ Գերագույն կոմիսարի համաձայնությունը՝ Պորտ-Սալոյի ճամբարի ներկայիս վարչությունը ֆրանսիական վարչությամբ փոխարինելու հարցում: Ինչ վերաբերում է իրականացման միջոցներին, ապա լավագույն միջոցն այն կլինի, որ անհապաղ Եգիպտոս ուղարկվի ֆրեզատի կապիտան Շարդոնը, որին հենց հրամանատար Ռոմիոն է կանչել և որը, տեղում իրավիճակն ուսումնասիրելուց հետո, Ձերդ գերազանցության հաստատմանը կներկայացնի այնպիսի գործնական միջոցառումներ, որոնք իրեն նպատակահարմար կթվան:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 220-221).

ՀԱՎԵԼՎԱԾ

Եգիպտոս և Կիպրոս գործուղված հրամանատար Ռոմիոն՝ Կահիրեում Ֆրանսիայի նախարար պ. Գեֆրանսին

[Պատճենը]:

Կահիրե, 19-ը մայիսի 1917 թ.:

Ես պատիվ ունեմ խնդրել ձեզ բարեհաճելու Արտաքին գործերի նախարարության ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, թե մեզ համար ուրքան շահեկան կլինի, եթե Պորտ-Սալոյի հայ գաղթականների ճամբարի ղեկավարությունը վստահվի ֆրանսիական վարչության, ինչպես նաև այդ միջոցառման իրականացման նպատակահարմարության վրա:

Դա թե՛ մեր Ռազմածովային նախարարության միջամտության, որին այս ընտանիքները պարտական են իրենց փրկությամբ, թե՛ Արևելյան լեզոնոմ ֆրանսիական դրոշի ներքո բոլոր մարտունակ տղամարդկանց զորակոչելու տրամաբանական շարունակությունն է:

Մուսա լեռան այս գորակոչիկները ներկայումս Կիպրոսում համախմբված հայկական զինված անձնակազմերի ամենաբազմաքանակ և ամենակարգապահ տարրն են: Այս մարդիկ խնդրում են, որ իրենց երեխաներն ունենան ֆրանսիացի ուսուցիչներ: Բացի դրանից, բանի որ ճամբարում նրանց մնալը երկարաձգվում է, նրանք խնդրում են Պորտ-Սալոյի ճամբարում գտնվող իրենց ընտանիքների մոտ գնալու համար մեկ շաբաթվա սահմանում արձակուրդի թույլտվություն:

Ֆրանսերենի ուսուցումը, ինչպես նաև թույլտվությունների և Մուսա լեռան ընտանիքների ճամբարի ու Արևելյան լեզեռնի միջև հարաբերությունների համակարգը դյուրին ձևով կկազմակերպվի, եթե ճամբարի անգլո-եգիպտական վարչությունը հնարավոր լինի փոխարինել ֆրանսիական ղեկավարությամբ: Ես զգուշացրել էի, հոկտեմբեր ամսից ի վեր, որ այդ հարցը շաղկապված է Մուսա լեռան մեր գաղթականների ռազմականացման հետ: Ռազմական նախարարությունն այդ պահին ինձ պատասխանել էր, որ այդ առաջարկությունը քննարկելը և լուծումը գտնելն Արտաքին գործերի նախարարության իրավասության մեջ է: Ի թիվս պահեստային պատասխանատու աշխատակիցների, ես նշել էի ֆրեզատի կապիտան Շարդոնի անունը, որն ի վիճակի է իրականացնել կազմակերպման այս գործը:

Ճամբարի բյուջեն հոկտեմբեր ամսին օրական մոտավորապես 1000 ֆրանկի սահմանում էր: Այն այժմ նշանակալից չափով նվազել է թե՛ գրեթե 500 գուրակչիկների մեկնումի, թե՛ արհեստանոցների գերազանց կազմակերպման հետևանքով, որտեղ աշխատում է ճամբարում գտնվող ողջ բնակչությունը՝ բացառությամբ երեխաների: Այդ բնակչության թիվը հասնում է մոտավորապես 3400 մարդու, որից հազարը երեխաներ են:

Այս ճամբարին ֆրանսիական վարչություն հատկացնելը քվում է, այսպիսով, շահեկան և այս պահից ի վեր՝ իրագործելի:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 891, ff. 221-222 v).

363

Պ{արոնայ}ք Սպենդիարյանը և Քոչարյանը՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային

Հ. թիվ 569/54:

[Պատճենը]:

Թիֆլիս, 10-ը հունիսի [1917 թ.], ժ. 9.25-ին:

Միջազեռք արքայի կացության վերաբերյալ սարսափելի մանրամասներ են տեղ հասնում: Ամեն օր շատերը սովամահ են լինում: Տարածված են հիվանդություններ: Կանանց, աղջիկների նկատմամբ չլված հանցանքներ են իրագործվում, որոնցից շատերն ինքնասպան են լինում: Հայ երեխաներն, ինչպես սովորական ապրանքներ, վաճառվել են շուկաներում: Խնդրում ենք ձեզ կրկին հայցել չեզոքների միջամտությունը:

Ազգային բյուրո:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 18).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար
փաշան՝ Համայնքների պալատի լիբերալ պատգամավոր
Անորին Վիլյամսին**

Հ. քիվ 29898:

Փարիզ, 12-ը հունիսի [1917 թ.], ժ. 19.25-ին:

Ստացա ձեր նամակը: Խնդրում եմ համայն հայության ամենախորին երախտագիտությամբ հաղորդել տիկ {ին} Լլոյդ Ջորջին՝ նրա ազնվաբարո նվիրվածության և բարեգործական նպատակներով՝ հայկական փոքրիկ դրոշմերի վաճառքի հարցում ունեցած անձնական մասնակցության համար:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 19).

**Հայկական ազգային պատվիրակության նախագահ
Պողոս Նուբար փաշան՝ Դեպարտամենտին**

Ավաա:

Ես ինձ թույլ եմ տալիս ձեզ հղել մի գրության օրինակը¹, որի մասին ձեզ հետ օրերս եմ խոսել ու ևս մեկ անգամ ձեզ շնորհակալություն հայտնել այն շահագրգռվածության համար, որը դուք դրսևորել եք Թուրքիայի իմ հայրենակիցների գործի նկատմամբ:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, f. 20).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

**Հուշագիր Հայկական հարցի և Հայաստանի
ազատագրության կապակցությամբ**

Փարիզ, 12-ը հունիսի 1917 թ.:

1/ Թուրքիայի հայերի երկարատև նահատակությունից, սարսափելի հալածանքներից, բռնությամբ նրանց իսլամն ընդունել պարտադրելուց, կոտորածներից և տեղահանություններից հետո, որոնց մույնքան հավաստի, որքան և ողբերգական նկարագրությունը կարելի է գտնել լորդ Բրայսի հրատարակած «Կապույտ գրքում»², հնարավոր չէ հայ ժողովրդին

¹ 1917 թ. հոկտեմբերի 18-ին Պողոս Նուբար փաշան պետք է Քեյ ղ'Օրսեին համձնեք գրեթե համանման բովանդակություն ունեցող երկրորդ հուշագիրը: Երկու բնագրերի նմանության պատճառով, մենք սահմանափակվում ենք արտասովորվ առաջինը: Այդուհանդերձ, հավելվածում ներկայացնում ենք այն բարտեզը, որը կցված է 1917 թ. հոկտեմբերի 18-ի հուշագրին:

² Stéu Viscount Bryce (ed.), *The Treatment of the Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to the Viscount Grey of Fallodon Secretary of State for Foreign Affairs*, New York & London, 1916.

թողնել նրա վրա բռնացող թուրքերի լծի տակ: Դաշնակից տերությունները, որոնք պայքարում են ճնշված ժողովուրդների ազատագրման համար, անշուշտ, այդ չեն քույլատրի և ոչ միայն այն պատճառով, որ առաջնորդվում են մարդասիրության սկզբունքով, այլ նույնչափ և այն, որ կարողանան ապագայում ապահովել խաղաղությունն այս տարածաշրջանում, որը վաղուց ի վեր խախտվել է: Ի դեպ, քանի դեռ այս ժողովուրդները կմնան թուրքական տիրապետության տակ, դա առիթ կտա չարաշահումների, անկարգությունների և առճակատումների, որոնք կհանգեցնեն տերությունների նոր միջամտությունների անհրաժեշտությանը: Այսպիսով, Հայկական հարցին անհրաժեշտ է տալ կենսունակ և վերջնական լուծում:

2/ Բալկանյան պատերազմների ընթացքում, 1913 թ., հայերը խնդրանքով դիմել էին Բեռլինի պայմանագրի ներքո ստորագրած տերություններին, ինչպես նաև հենց Թուրքիային՝ կենսագործելու այն բարենորոգումները, որոնք խոստացել էին այդ պայմանագրի 61-րդ հոդվածով: Նրանք այնժամ տուրք չէին տալիս որևէ անջատողական նկրտումների, սահմանափակվելով այն բարենորոգումների իրականացման պահանջով, որոնք պետք է նրանց ընձեռեն արդարադատության հավասարություն և ունեցվածքի ու գոյության ապահովություն: Նրանք բավարարվեցին 1914 թ. փետրվարի 8-ի բարենորոգումների վավերագրով, և Հայկական հարցն այսօր այլևս գոյություն չէր ունենա, եթե Դուռը եվրոպական պատերազմի հենց սկզբում և նույնիսկ ավելի վաղ, քան Թուրքիայի պատերազմի մեջ ընդգրկվելը, չպատառոտեր այդ նոր համաձայնագիրը և պաշտոնանկ չաներ երկու գլխավոր տեսուչներին¹, որոնք տերությունների համաձայնությամբ ձեռնամուխ էին եղել բարենորոգումները կենսագործելու առաքելությանը:

Այսօր այլևս չի կարող աներկբայելիորեն խոսք լինել պարզունակ բարենորոգումների մասին, և չկա այլևս որևէ այլ հնարավոր լուծում, քան օսմանյան տիրապետությունից հայերի ազատագրումը:

3/ Մյուս կողմից, Ռուսաստանում վարչակարգի փոփոխությունից ի վեր և այն բանից հետո, ինչ նոր կառավարությունը հայտարարել է, որ հակադրվում է յուրաքանչյուր նվաճումին, Հայկական հարցն անխուսափելիորեն փոխել է բնույթը, և Ազգային պատվիրակությունը հարկադրված է եղել ձևափոխելու իր ծրագիրը:

Մինչ այժմ նրա համար անհնար է եղել հստակորեն և անփոփոխ սահմանված ծրագրի որդեգրումը, քանի որ Հայկական հարցի լուծումը կախված է եղել ամենից առաջ այն շրջադարձից, որին ենթակա կլինեին իրադարձությունները և այն համաձայնություններից, որոնք դաշնակիցների միջև կարող էին կայացվել Ասիական Թուրքիայի հարցի շուրջ: Այս պատճառով է, որ պատվիրակությունը հարկադրված է եղել մախատեսել տարբեր լուծումներ, որոնք, եթե մանրամասները շրջանցենք, կարող են հանգել երկու հիմնական լուծման. դրանցից առաջինը նախատեսում էր Հայաստանի բաժանումը երկու մասի, իսկ երկրորդը՝ մեկ պետության մեջ էր միավորում Թուրքիայում գտնվող հայկական բոլոր տարածքները՝ սկսած Կովկասի սահմանից և Պարսկաստանից մինչ Միջերկրական ծով՝ կազմավորելու համար դրանցից միասնական ինքնավար Հայաստան:

Այս լուծումներից առաջինը, որը, բնականաբար, կյանքի էր կոչվել ռուսական կառավարության դարավոր քաղաքականության շնորհիվ և ռուսական բանակի կողմից Թուրքաստանի կարևոր մասի գրավումով՝ Հայաստանի մի մասը կցում էր Ռուսաստանին: Այս լուծումն այսօր ի չիք է դառնում նոր կառավարության քաղաքականության փոփոխության պատճառով, որը հրաժարվում է նվաճողական կամ բռնագրավման յուրաքանչյուր գաղա-

1 Պ (սրոնայ)ք Հոֆֆեր և Վեստենեկը:

փարից:

4/ Մենք գտնվում ենք, այսպիսով, երկրորդ լուծման դեմ հանդիման, որը վերաբերում է միասնական, բուրքական լծից ազատագրված և մեկ կամ բազմաթիվ տերությունների հովանու ներքո գտնվող Հայաստանին:

Ամենաեականն այն է, որ թյուր պատկերացում չառաջանա «միասնական» բառի մեջ դրվող իմաստի շուրջ, որը պետք է օգտագործվի բացառապես Թուրքահայաստանի հայկական տարածքները նկատի ունենալով՝ բացառելով Պարսկաստանի և Ռուսաստանի հայկական տարածքները: Հիրավի, չի կարող խոսք լինել Կովկասի հայերի մասին, որոնք ռուսահպատակներ են, գտնվում են լիակատար բարգավաճման պայմաններում և խնդրում են միայն, որ մնան ռուսահպատակ և որոնք, ինչպես նաև Ռուսաստանի մյուս ժողովուրդները, կօգտվեն նոր վարչակարգի բարերարություններից ու կկարողանան կատարյալ անվտանգությամբ և լիակատար ազատության պայմաններում զարգացնել իրենց ազգությանը բնորոշ ունակությունները:

5/ Ինչ վերաբերում է Թուրքահայաստանին, որը և միայն մեզ պետք է մտահոգի, ապա անդրոշ է մնում միայն մեկ հարց. այն՝ քե արդյոք նա գտնվելու՞ է մեկ, քե բազմաթիվ տերությունների հովանու ներքո: Այս հարցին իրավասու է լուծում տալ խաղաղության վեհաժողովը:

Համաձայն նոր կառավարության անդամների արած խիստ որոշակի հայտարարությունների, հավաստի չէ, որ Ռուսաստանը ցանկություն կունենա իրականացնել այդ հովանավորությունը, որովհետև նվաճում կամ նույնիսկ բռնագրավում չլինելով հանդերձ, այնուամենայնիվ, այն փաստորեն հավասարազոր կլինի ընդլայնման: Ի տարբերություն դրա, եթե Ֆրանսիան իրականացնի Սիրիայի պրոտեկտորատը, հնարավոր կլինի, որ Հայաստանի հովանավորությունը ևս նրան վստահվի: Վերջապես, հարկ է նաև նախատեսել, որ այս շրջաններում առկա միջազգային շահախնդրությունների հետևանքով, տերությունները կարող են համաձայնություն կայացնել ապագա ինքնավար, միացյալ Հայաստանն իրենց կողակտիվ հովանու ներքո վերցնելու շուրջ, որն իրականում հավասարազոր կլինի նրան չեզոք երկրի կարգավիճակ շնորհելուն:

Այս վերջին լուծումը, որը շատ ավելի, քան որևէ մեկ ուրիշը կհամապատասխանի հայերի ձգտումներին, ինչպես նաև պատերազմի դաշտում դաշնակիցների ունեցած նպատակներին, որոնք հռչակել են ազգությունների սկզբունքը և ճնշված ժողովուրդների ազատագրումը, կհանգի Թուրքիայում գտնվող բոլոր հայկական տարածքների, այն է՝ Կիլիկիայի և Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքլի, Մամուրեք-ուլ Ազիզի և Սվազի վիլայեթների միավորմանը:

Այս ձևով կազմավորված Հայաստանը կծգվի ռուսական և պարսկական սահմաններից մինչ Սիջերկրական ծով՝ Մերսին և Ալեքսանդրետ նավահանգիստներով հանդերձ, որոնք նրա բնական ելուստներն են, միայն որոնք և հայերին թույլ կտան վերակազմավորել իրենց ազգային կյանքը, զարկ տալով իրենց երկրի զարգացմանն առևտրական ու տնտեսական ոլորտներում:

6/ Այդ լուծման առավելությունները բազմապիսի են: Հայերին վերաբերող առավելությունները հիշատակելու կարիքը չկա, որոնք նրանց իսկ համար ակնհայտ են: Բայց ինչ վերաբերում է տերություններին, բավական է ասել, որ տերությունների համար հավասար իրավունքների պայմաններում՝ կողակտիվ հովանու ներքո գտնվող այսպիսի Հայաստանը, վեր կաձվի նրանց իսկ առևտրական, տնտեսական և կրթական գոյածուրծության համար մատչելի ասպարեզի: Նրանք կարող են այդտեղ զարկ տալ իրենց դպրոցներին, տարածել

իրենց լեզուն և մշակույթը, շահութաբեր ձևով օգտագործելով միաժամանակ իրենց կապիտալները՝ բնական շատ մեծ հարստություններ ունեցող մի ընդարձակ երկրամասում: Այդ Հայաստանը կդառնա, ի դեպ, բուֆերային պետություն՝ Անատոլիայի թուրքական ապագա կայսրության, Ռուսաստանի, Պարսկաստանի և այն ապագա ինքնավար պետությունների միջև, որը տերությունները հնարավորություն կունենան կազմավորելու պատերազմի ավարտին: Նա կդառնա, այսպիսով, խաղաղության հաստատման միջոց, բացառելով վտանգավոր առճակատումների հնարավորությունները:

Առավելությունները ոչ նվազ կլինեն, եթե հարցին մոտենանք Բաղդադի երկարուղու տեսանկյունից, որին այս լուծումը հնարավորություն կընձեռի Ալեքսանդրետի և Մերսինի նավահանգիստների շնորհիվ ունենալ գլխավոր հանգուցակայաններ, որոնք բոլոր տերությունների համար կապահովեն անարգել փոխադրումներ դեպի Պարսկաստան և Հնդկաստան:

7/ Մյուս կողմից, իմաստ ունի նշել, որ դաշնակիցների կոդեկտիվ պրոտեկտորատը չի իրականացվի համատիրության ձևով, որը, հավանաբար, չի արժանանա կառավարության բարեհաճ ընդունելությանը:

Իրականում, խոսքը տերությունների հարստ և մշտական համագործակցության մասին չի լինելու. նրանց դերը կհանգի պարզապես, ընդհանուր համաձայնությամբ, երկրի ներքին կառավարմանը վերաբերող կանոնադրության մշակմանը: Տերությունները գործուն մասնակցություն չեն ցուցաբերի վարչության և, ըստ էության, կառավարության գործերին ու կսահմանափակվեն իրենց կողմից հաստատված հիմնական օրենքի գործածության հսկողությամբ: Նման վերահսկողությունը որևէ նորամուծություն չէ, քանզի արդեն մեկ այլ համաձայնության հիման վրա, Դոսանը պարտադրվել է 1914 թ. բարենորոգումների վավերագիրը, որի կենսագործմանը տերությունները պարտավոր են վերստեղծել: Այսպիսով, համատիրություն չի կարող լինել, և այն բերությունները, որոնց համատիրությունը կարող է տեղիք տալ, մի կողմ կնետվեն:

Ի դեպ, այն ժամանակաշրջանում, որը սահմանվել է իբրև անցումային, հովանավորի դերն ստանձնած տերությունները կկարողանան լիազորել իրենցից մեկին՝ երկրի վարչական կարգը հաստատելու և նրա սոցիալական կյանքը վերակառուցելու համար, կիրառելով ընդհանուր համաձայնությամբ մշակված կանոնադրությունը: Այդ մանդատը կտրվի մի քանի տարով, որը պետք է սահմանվի, այնպես որ, հնարավորություն ընձեռի այլ վերակառուցման իրականացման համար և որի ժամկետն ավարտվի այն օրը, երբ Հայաստանն ի վիճակի լինի ինքնուրույնաբար կառավարելու ինքն իրեն:

8/ Անիմաստ չէ սկզբից ևեթ հերքել այն փաստարկը, որը թուրքերն օգտագործել են իրենց մամուլում՝ ինքնավարության յուրաքանչյուր նախագծի դիմակայելու համար: Նրանք ցանկանում էին հավատ ներշնչել, որ Թուրքիայում այլևս այնքան հայեր չեն մնացել, որոնցից հնարավոր լինի ինքնուրույն ժողովուրդ ձևավորել: Այս փաստարկը սնանկ է:

Պատերազմից առաջ Թուրքական կայսրության հայ բնակչության թիվը հասնում էր գրեթե 2100000-ի: Այս ամբողջության մեջ Կիլիկիայի բնակչության թիվը կազմում էր 407000, իսկ վեց վիլայեթներինը՝ 1163000: Վեց վիլայեթներում, որտեղ գտնվում են քուրդ բնակչության գերակշռող մասը և շատ այլ ազգություններ, հայերն, այնուամենայնիվ, մեծամասնություն են կազմում, որոնց թիվը հասնում է ընդհանուրի 40%-ին: Եվ նրանք, ամեն դեպքում, ավելի մեծ թիվ էին կազմում, քան թուրքերն ու քրդերը միասին վերցրած: Եթե, մյուս կողմից, հարցը բննարկենք տնտեսական և հոգևոր զարգացման տեսանկյունից, կարելի է հավաստել, որ հայերն իրենց ձեռքում են պահում առևտրի, արդյունաբերության

ճյուղերի և զանազան արհեստների 69-ից 86%-ը: Նրանց դպրոցները, որոնք բոլորը գտնվում են համայնքների կատարյալ հոգածության ներքո, ընդհանուր թվի ավելի քան 80%-ն են կազմում:

Վերջապես, հայերը, որոնց թիվը կայսրության 20000000-ից բաղկացած ողջ բնակչության թվում հասնում է միայն 2100000-ի, իրենց ձեռքում են կենտրոնացնում ներմուծվող ապրանքների առևտրի 60%-ը, արտահանվող ապրանքների առևտրի 40%-ը և ներքին առևտրի ավելի քան 80%-ը:

Չնայած կոտորածների և տեղահանությունների հետևանքով տված մեծ թվով զոհերին, հայերի մեծ մասը կարողացել է խուսափել ոչնչացումից և կենդանի մնալ: Ըստ լուր Բրայսի հրատարակած «Կապույտ գրքի», որի համար հիմք են ծառայել ամենաարժանահավատ փաստաթղթերը, ճշմարտությանը մոտ կլինենք, եթե ենթադրենք, որ վերապրածների թիվը հասնում է 1500000-ի:

9/ Մյուս կողմից, հարկ է մոռացության չտալ, որ համայն աշխարհում հայերի թիվն անցնում է 4000000-ից և որ հետապնդումներից խույս տալով, երեսուն տարուց ի վեր Եվրոպա, Եգիպտոս և Ամերիկա գաղթած մեծ թվով հայեր կշտապեն վերադառնալ իրենց հայրենիքն այն օրը, երբ արդարության և ազատության օրենքների հովանու ներքո՝ ինքնավարությունը նրանց համար կապահովի խաղաղ կյանք և աշխատանք:

Վերջապես, տեղին է հիշեցնել, որ հույների թիվը Հունաստանում հազիվ էր հասնում 400000-ի, երբ այնտեղ թագավորություն հիմնադրվեց, իսկ սերբերինը և բուլղարացիներինը՝ 6-ից 700000-ի, երբ Սերբիան և Բուլղարիան վերածվեցին իշխանությունների:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 889, ff. 20-26).

366

**Մայր Գ. Գ. Սիմոնյանը՝ Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ,
գեներալ դը Լա Պանուսին**

A/2154. M.I.3.a.

Ուր Օֆիս, 19-ը հունիսի 1917 թ.:

Ինչ վերաբերում է վերջին մարտի 19-ի ձեր թիվ 442 նամակին, որը նվիրված էր Արևելյան լեզեոնում ծառայելու շուրջ ցանկություն հայտնած՝ Գյուլբենկյան անունով մի հայազգի երիտասարդի, կարող եք դուք ինձ սիրալիրաբար տեղեկացնել, թե որպես ի՞նչ է նա օգտագործվելու վերոհիշյալ լեզեոնում:

(A.M.G., 7 N 1284).

367

**Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ, գեներալ դը Լա Պանուսը՝
մայր Գ. Գ. Սիմոնյանին**

Թիվ 5580:

23-ը հունիսի 1917 թ.:

Ի պատասխան ընթացիկ {ամսի} 19-ի ձեր նամակի (A/2154. M.I.3.a.)¹, ես պատիվ ունեմ տեղեկացնել, որ Գյուլբենկյանն իմ մոտ՝ դեսպանություն էր կանչվել, որտեղ նրա խնդրին վերաբերող՝ ֆրանսիացիների պատասխանները նրան ներկայացվեցին:

Առաջին նամակում ասվում է, որ Կիպրոսում գտնվող լեզեոնում զինձառայության ընդունված մարդկանց լեզեոնի գլխավոր հրամանատարն օգտագործում է ըստ իրենց ունակությունների, և որ նրանք կարող են աստիճանի բարձրացում ստանալ՝ մինչ կապիտանի աստիճանը ներառյալ:

Երկրորդ նամակում ասվում է, որ քանզի Գյուլբենկյանը ցանկանում է պահպանել բրիտանական իր հպատակությունը, նրա խնդրանքը չի կարող ընդունվել, որովհետև զինվորագրումներն Արևելյան լեզեոնում սահմանափակ են և միայն օսմանյան հպատակություն ունեցող կամավորների համար են:

(A.M.G., 7 N 1284).

368

**Արտաքին գործերի նախարարությունում Ասիայի փոխանօրեն
պ. Ժան Գուն՝ Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն
կոմիսար պ. Ժորժ-Պիկոյին**

Ն: Անձնական:

¹ Տե՛ս նախորդ փաստաթուղթը:

Փարիզ, 28-ը հունիսի 1917 թ.:

Մենք հենց նոր Ռ-ազմական նախարարությանը հաղորդեցինք այս վերջին օրերին Բոստոնից 155 հայերի մեկնելու մասին, որոնք Ֆրանսիա են գալիս Արևելյան լեգեոնում կամավոր զինծառայության ընդունվելու համար:

Ես շտապում եմ ձեզ հայտնել իմ կարծիքն այս տեղեկատվության շուրջ, որը մեզ բույլատրում է որոշ հույսեր տաձել այն կամպանիայի հաջողության հետ, որը ձեռնարկել են հայ լիազոր ներկայացուցիչները:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 36-36 v).

369

Խորհրդի նախագահ, Արտաքին գործերի նախարար պ. Ռիբոն՝ Ռ-ազմական նախարար պ. Պենկեին

Ճ. թիվ 2391: Հրատապ:

Փարիզ, 29-ը հունիսի 1917 թ.:

Ռ-ապալի սյուդոտա 19 հասցեում բնակվող երևելի հայ պ. Ս. Սևաջյանը, որի զրատենյակները գտնվում են Լաֆայետի փողոց 56 հասցեում, իմ Գեպարտամենտի կողմից ոչ հեռավոր անցյալում հավատարմագրված էր Գլխավոր շտաբի Աֆրիկայի ենթաբաժնում՝ Հայկական ազգային դաշնության անունից կարգավորելու համար այն հարցերը, որոնք վերաբերում են Ֆրանսիայում բնակվող՝ Արևելյան լեգեոնում կամավոր հիմունքներով զինծառայության ընդունվելու ցանկություն ունեցող հայերի զինվորագրմանը, ինչպես նաև այն հայերի ընդունմանը Ֆրանսիայում, ովքեր ռազմական այդ կազմավորման մեջ զինծառայության ընդունվելու համար գալիս են Ամերիկայից: Իրեն վստահված առաքելությունն իրականացնելու համար, պ. Սևաջյանը հարկադրված է մեր տարածքում հաճախակի մի տեղից մյուսը տեղափոխվել կամ, անհրաժեշտության դեպքում, հանձնարարել իր քարտուղար պ. Լևոն Բոշնադյանին, որը ևս հայազգի է և բնակվում է Ֆաբուրգ-Պուասսոնիեր փողոց 167 հասցեում, իր փոխարեն մեկնել տարբեր նավահանգիստներ կամ վայրեր, որտեղ իր ներկայությունն անհրաժեշտ է: Հաշվի առնելով, որ իբրև Ամերիկայից հայ կամավորներ տեղափոխող որոշ թվով նավերի ժամանման վայր նախատեսված է Հավրի նավահանգիստը, որն ընդգրկված է բանակների գոտում, ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե դուք բարեհաճեք թե՛ պ. Սևաջյանին, թե՛ պ. Բոշնադյանին հանձնել մշտական անցագրեր, որոնք նրանց կրույատրեն անհապաղ Հավր մեկնել, բոլոր այն դեպքերում, երբ նրանց հայտնի դառնա այդ նավահանգիստ հայ կամավորների տեղափոխող նավերի ժամանման մասին:

(A.M.A.E., Guerre 1914-1918, *Turquie*, tome 892, ff. 37-37 v).

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	5
Նախաբան.....	7
Ծանուցում.....	9
Օգտագործված հասկալումներ և կրճատումներ.....	11
Ներածություն.....	12
Արևելյան Փոքր Ասիայի վարչական բաժանումների քարտեզը ըստ 1914 թ. փետրվարի 8-ի ռուս-թուրքական համաձայնագրի.....	17
Փաստաթղթեր.....	65
1916 թ. ֆրանս-բրիտանական (Սայքս-Պիկոյի) համաձայնագրի քարտեզը	298
Թուրքահայաստանի քարտեզը ըստ Հայկական ազգային պատվիրակության (1917)	480

2600m.

**ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ
(1914-1918)
ՀԱՏՈՐ I
ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՐ
ԱՐԹՈՒՐ ՊԵՅԼԵՐՅԱՆԻ**

**LES GRANDES PUISSANCES,
L'EMPIRE OTTOMAN
ET LES ARMÉNIENS
DANS LES
ARCHIVES FRANÇAISES
(1914-1918)
TOME I**

**DOCUMENTS RÉUNIS ET PRÉSENTÉS
PAR
ARTHUR BEYLERIAN
(en arménien)
ERÉVAN "HAYASTAN" 2005**

**Խմբագիր՝ Ջենմա Պետրոսյան
Համակարգչային շարվածքը՝ Վարուժան Պողոսյանի
Համակարգչային մակեղը՝ Երանուհի Վանոյանի
Ձևավորումը՝ Աննա Սանդոյանի
Տպագրությունը՝ ԵԳԵԱ հրատարակչատան**

Ստորագրված է տպագրության 09.02.2005 թ.:
Չափսը՝ 70x100 1/16: 47.6 հրատ. մամուլ, 39.00 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 300: Գինը՝ պայմանագրային:

«ՀԱՅԱՏԱՆ» հրատարակչություն. Երևան, Իսահակյան 28

ԳԱՍ Հիմնադրադ Գիտ. Գրառ



220090070

A 900 70

«Ժամանակակից պատմության չլուծված հարց». այսպիսին է Արթուր Պեյլերյանի տված գնահատականը Հայկական հարցին՝ այնպիսի տեսքով, ինչպիսին այն հառնում է դարավոր առճակատումների, մասնավորապես, 1915-1916 թթ. սարսափելի ողբերգության բովից:

«Սորբոնի հրատարակչությունը» վճռել է լույս ընծայել փաստաթղթերի այս ժողովածուն բազմաթիվ պատճառներով, որոնք հնարավոր է ամփոփել հետևյալ կերպ:

Նախ՝ Արթուր Պեյլերյանը անդուլ խիզախությամբ և հետևելով ամենամեծ փորձության ենթարկված պատմագիտական մեթոդներին, դարձել է Հայկական հարցի լավագույն մասնագետներից մեկը համաշխարհային ասպարեզում: Նա աշխատել է եվրոպական (ներառյալ Խորհրդային Միության) գրեթե բոլոր արխիվներում և Միացյալ Նահանգներում: Այն ահռելի փաստագրական նյութը, որը նա ի մի է բերել, նրան հնարավորություն է ընձեռել՝ ֆրանսիական արխիվները վերադասավորել չափազանց ընդարձակ շրջանակում և լավագույնս ճշգրտել դրանց կարևորությունը:

Բացի դրանից, այն դեպքում, երբ վաղուց ի վեր գոյություն ունեն մեծ պատերազմի ընթացքում Հայաստանի գործերին վերաբերող անգլիական և գերմանական ժողովածուներ, ֆրանսիական փաստաթղթերին վերաբերող համանման ոչինչ գոյություն չուներ:

Նման փաստաթղթերն արժանի էին դուրս ելնելու ստվերից:

Փ.-Բ. Դյուրոզել